Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բ. ՏԻՊ

ԲԷՅՐՈՒԹ

1958

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ՝ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԱՌԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ



1958

ՏՊԱՐԱՆ ՄԵԱԿ — ԲԷՅՐՈՒԹ

Printed in Beirut, Lebanon

ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՁՆԻՒՐ ՀԱՑՐԵՆԱՍԷՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ,

ՈՐՈՆՔ ՄԱՀԻԱՄԲ ՄԱՀԸ ԿՈԽԵԼՈՎ՝

ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն, բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Այս գիրքը առաջին տպագրութեամբ, լոյս է տեսել 1928 թ· Մայիսին, Հայաստանի անկախութեան տասնամեակի առթիւ եւ մի քանի ամսւայ ընթացքում — 2500 օրինակ — ամբողջապէս սպառւել է։ Եւ այնուհետեւ, 30 տարիներ շարունակ, մէկից աւելի անգամներ, մանաւանդ նոր սերունդի կողմից, ցանկութիւն է յայտնւել, որ գիրքը լոյս տեսնէ նոր տպագրութեամբ, բայց ոչ Հ· Յ· Դ· Ամերիկայի կենտ· կոմիտէն, որին պատկանում էր առաջին հրատարակութեան նախաձեռնութիւնը, ոչ էլ ուրիշ մէկը գործնական կերպով ընդ առաջ չգնաց այդ ցանկութեան։ Հեղինակը ինքը, ի վիճակի չէր նման մեծածախս գործի ձեռնարկելու։

Սակայն, ահա լրանում է Հայաստանի Հանրապետութեան հիմնարկութեան հառասնամեակը։ Հայաստանում, բնականաբար, պատմական այդ թուականը անաչառ յիշատակութեան չի արժանանայ։ Անհրաժեշտ է, որ տարագիր Սփիւռքում գէթ արժանաւոր կերպով ներկայացւի դարերի ստեղծագործութիւնից յետոյ հայ պետականութեան վերահաստատման ճշմարիտ պատմութիւնը։

Դժբախտաբար, կլանւած առօրեայ հոգսերով՝ Սփիւռքի հայ մտաւորականութիւնը ի վիճակի չէ պատմական երկարաշունչ ուսումնասիրութիւններ կատարելու եւ նոր գործեր արտադրելու։ «Հայաստանի Հանրապետութիւն» հատորիս վերահրատարակութիւնը նպատակ ունի որոշ չափով, լրացնելու այդ թերին։

Առաջին տպագրութեան «Երկու խօսք» յառաջաբանում մենք գրում էինք, ի միջի այլոց, հետեւեալը·

«Այս հատորը լոյս է տեսնում Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան տասնամեակի առթիւ։ Հանրապետութեան ամբողջական պատմութիւնը չէ նա։ Նման աշխատանք կատարելու համար ես ոչ բաւականաչափ ժամանակ եմ ունեցել տրամադրութեանս տակ, ոչ էլ, մանաւանդ, պահանջւած աղբիւրները — Երեւանի պետական դիւանները։ Իմ նպատակն էր, տարեդարձի առթիւ, հաւաքել ի մի Հայաստանի Հանրապետութեան ծագման ու կեանքին վերաբերող տեղեկութիւնները, որքան այդ հնարաւոր էր

տարագրութեան պայմաններում, տալ ամփոփ գաղափար Հայաստանի Հանրապետութեան մասին: Գիրքը գրելիս ես չեմ ունեցել միտում՝ անպատճառ արձանագրել լաւը եւ խուսափել վատից: Իմ միակ միտումը եղել է պատմական ճշմարտութիւնը, առարկայական արձանագրութիւնը դէպքերի՝ ջանալով հաւասար պաղարիւնութեամբ ներկայացնել կեանքի բոլոր արտայայտութիւնները:

«Հանրապետութեան հակառակորդների կողմից կայ մի յամառ ձգտում՝ ջնջել մարդկանց մտքից ամէն մի յիշատակ, որ կապուած է Հայաստանի անկախութեան շրջանի հետ, մոռացնել տալ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը, սեւացնել նրան: Աշխատում են մոռայլ ցոյց տալ անցեալը, որպէսզի ներկան երեւայ լուսաւոր: Ձէ՞ որ՝ որքան խաւար է գիշերը, այնքան պայծառ են աստղերը: Այս գրքի կոչումն է՝ յիշեցնել մոռացողներին, ինչ որ չպէտք է մոռանալ, ցոյց տալ նոր սերնդին ինչ կեանք ապրեց Հայաստանի Հանրապետութիւնը:

«Գիրքը գրելիս ինձ համար աղբիւր են ծառայել նախ՝ իմ, տարիների ընթացքում, հաւաքած նիւթերը, երկրորդ՝ Հ.Հ.Փարիզի Պատւիրակութեան «Գործ»-երը, երրորդ՝ Անդրկովկասի Սէյմի արձանագրութիւնները ու վաւերագրերը, չորրորդ՝ կովկասի ու Հայաստանի մամուլը, հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետութեան ևրատարակութիւնները եւ, վերջապէս, վեցերորդ՝ Հանրապետութեան շրջանի գործիչներից ոմանց տւած գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները...

«Պէտք է ցաւով արձանագրել, որ Հայաստանի Հանրապետութեան Պատւիրակութեան «Գործ»-երը բաւական ուշ անցան իմ ձեռքը, երբ արդէն գրքի խոշոր մասը պատրաստ էր, որով մի շարք կարեւոր վաւերագրեր մնացին չօգտագործած: Բացի այդ, գրքի ծաւալի եւ մի շարք ուրիշ պատճառներով պէտք եղաւ սկզբնական ծրագիրը փոփոխել· — Պատմութեան վերջին շրջանը կրճատել եւ մի շարք գլուխներ դուրս թողնել: Յատկապէս, դուրս մնացին ծրագրւած տեսութիւնները Հայաստանի պետական կազմութեան ու զարգացման, քաղաքական կուսակցութիւնների, երկրի տնտեսութեան, մշակոյթի, մամուլի եւ այլնի մասին, որոնց համար հաւաքւած առատ նիւթը մնաց չօգտագործւած: Պէտք եղաւ դուրս թողնել եւ կենսագրականների մասը: Իսկ արտասահմանեան գործունէութիւնը շօշափւեց ամենանեղ սահմաններում:

«Այս գրքի նախաձեռնութիւնը եւ հրատարակութեան ծախսը ամբողջապէս պատկանում է Հ· Յ· Դաշնակցութեան Ամերիկայի կենտր· կոմիտէին»:

*
**

«Հայաստանի Հանրապետութեան» երկրորդ տպագրութիւնը կատարւում է հեղինակի նախաձեռնութեամբ՝ ապաւինելով ընթերցող հասարակու-

թեան բարեմիտ ֆալերացիին: Հեղինակը նիւթական ակնկալութիւններ չունի այս գործից, ինչպէս չէ ունեցած եւ նախորդ հրատարակութիւնից, բայց յոյս ունի, որ հատորի տպագրութեան եւ յարակից ծախսերը կը գոյուին:

Պարտք եմ զգում խոստովանելու, որ մեր այժմեայ պայմանները թոյլ չտուին գիրքը վերամշակելու և լրացնելու այնպէս, ինչպէս ուզում էինք, սրբագրելու համար հապճեպով պատրաստած առաջին տպագրութեան թերիները, բայց եւ այնպէս ներկայ տպագրութիւնը, վերանայուած, լրացուած ու սրբագրուած, մեծ չափով տարբերւում է առաջին տպագրութիւնից: Իր պակասութիւններով հանդերձ այս հատորը կարելի է համարել Հայաստանի Հանրապետութեան ամբողջական պատմութիւնը, — թերեւս ոչ լրիւ ու կատարեալ — բայց իրական պատմութիւնը:

Լրացնելու համար մեր առաջին հրատարակութեան թերի մասերը, մենք օգտուել ենք առանձին մենագրութիւններից: Այսպէս, Արեւելահայոց համագումարի գլուխը լրացրել ենք «Մայիս 28» ժողովածոյի (Փարիզ), ընդարձակ յօդուածից: Հատորի վերջում, մի շարք գլուխներ առնուած են մեր «Հայաստանը Բոլշեւիկեան Մուրճի եւ Թրքական Սալի միջեւ» գրքից: Փետրուարեան ապստամբութեան գլուխը նոր է գրուած, ինչպէս եւ մի քանի ուրիշ մասեր: Վերանայուած եւ լրացուած են նաեւ պատկերները:

Առաջին տպագրութեան «Ցաւելուած»-ի տեղ այժմ տրուած են նոր նիւթեր: Աւելացուած է նաեւ յատուկ անունների ցանկը:

Հատորի տպագրութեան հսկողութիւնը եւ փորձերի առաջին սրբագրութիւնը կատարել է Օննիկ Մելիքսեթեանը: Երկրորդ սրբագրութիւնը արել է վաչէ Փափազեանը: Յատուկ անունների ցանկը կազմել է Արմիկ Ճենտերեենեանը իր մայրիկի աջակցութեամբ: Բոլորին՝ իմ ջերմ շնորհակալութիւնը:

Ս. Վ.

Մայիս 1, 1958

Բէյրութ



ԱՌԱՋԱԻՈՐ ԱՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԺԹ. դարի վերջերին մրցակցութիւնն ու հակամարտութիւնը եւրոպական մեծ պետութիւնների միջեւ, շահաստանների և գաղութների շուրջ, հասան ծայրայեղ աստիճանի: Յաջորդ դարի սկիզբը արդէն ձեւակերպուած էին եւրոպական մեծ պետութիւնների երկու խմբակցութիւնները այսպէս կոչուած Եռեակ Դաշնակցութիւնը յանձին Անգլիայի, Ֆրանսայի ու Ռուսաստանի եւ Եռեակ Զինակցութիւնը՝ Գերմանիա, Աւստրօ-Հունգարիա եւ Իտալիա: Ամերիկայի Միացեալ Նահանգները դեռ անմիջական դերակատար չէին Համաշխարհային մեծ քաղաքականութեան մէջ եւ մեկուսացած երկու ովկեանոսների միջեւ, հետեւում էին Մոնրոյի իրենց աւանդական վարդապետութեան, թէեւ, Հին Աշխարհի վէճերն ու պայքարները հետզհետէ մօտենում էին եւ իրենց ափերին:

Երկու խմբակցութիւնները՝ Եռեակ Դաշնակցութիւն եւ Եռեակ Զինակցութիւն, իրենց աշխարհակալական ձգտումներով բախւում էին երկրագունդի գրեթէ բոլոր մասերում եւ խելայեղ թափով զինւում՝ ուժով լուծելու համար այն հարցերը, որոնց առջեւ դիւանագիտութիւնը անզօր է: Խաղաղասէր, ազատական տարրերը եւ ընկերվարական կուսակցութիւնները ի զուր աշխատում էին պատերազմի հրդեհի առաջը առնել, աշխարհ ակընյայտնի կերպով գնում էր դէպի պատերազմ, թէեւ հանրային կարծիքը, ինչպէս եւ կառավարական շրջանակները ճիգ էին գործ դնում հեռացնելու այդ վայրկեանը:

Եւ ահա, ինչպէս կայծակը անամպ երկնքից, 1914 թւի ամառը, պայթեց համաշխարհային պատերազմը: Ազգեր ելան ազգերի դէմ: Աշխարհ իրար խառնեց: Եւ քաղաքակրթութեան զարգացումն ու մարդկութեան յառաջդիմութիւնը կանգ առան երկար ժամանակով:

Պատերազմը ահաւոր փորձութիւն եղաւ ամբողջ երկրագունդի, բայց, մանաւանդ, հայ ժողովրդի համար: Նա բռնկեց այն պահուն, երբ հայթրքական յարաբերութիւնների լարումը հասել էր ծայրայեղ աստիճանի, երբ հայը Թիւրքիայում նորից դարձել էր «խայրին» ազգ, «պետական դաւա-

ճան», «կոչը դործիք մեծ պետութիւնների ձեռքին»...

Նոր էր ստորագրուել բարենորոգումների ծրագիրը: Օսմանեան սահմանադրութեան յայտորդող հայ–թրքական համերաշխութեան մեղրամիսը կարճ տեւեց: Կիլիկիայի ջարդը, ներքին ճնշումները, կառավարութեան կառկածոտ վերաբերումը դէպի հայ տարրը, հողային հայկործան քաղաքականութիւնը Արեւելեան վիլայէթներում, թիւրք ազգայնամոլութեան յարաճուն զարդացումը Իթթիհատի ծոցում — այս եւ ուրիշ բազմաթիւ պատճառներ վերջնապէս համոզեցին հայերին, որ առանց արտաքին օդնութեան, միա՛յն թիւրքական միջոցներով անկարելի է ձեռք բերել կեանքի բարելաւում: Եւ նորից ամենքի հայեացքը ուղղուեց դուրս՝ դէպի «մարդասէր Եւրոպան»:

Սահմանադրութեան օրերին ամբողջ թիւրքահայութիւնը, չնչին բացառութեամբ, կանդնել էր օսմանեան պետականութեան հողի վրա: Հ. Ը. Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մեծագոյն կուսակցութիւնը՝ գործակցելով Իթթիհատի հետ՝ ձգտում էր իրականացնել համապետական նպատակները: Երեսուն տարիների յեղափոխական մաքառումներից յետոյ, հայը անվերապահ կերպով դառնում էր օսմանեան քաղաքացի, հաւատարիմ տարր օսմանեան «վերածնուող հայրենիքի»: Ի՞նչ աւելի յարմար առիթ թիւրք դործիչների համար՝ օդտադործելու հայ ժողովրդի այս ինքնաբուխ զդացմունքները:

Մարտեան յեղաշրջական օրերին հայ ժողովուրդը, մի մարդու պէս, ոտքի կանդնեց՝ պաշտպանելու համար հասարակաց հայրենիքն ու նոր վարչաձեւը: Եւ երիտասարդ–թիւրքերի յաղթանակը զդալի չափով արդիւնք էր նաեւ հայերի օժանդակութեան:

Երբ Իտալիան յարձակուեց Տրիպոլիի վրա, թրքահայ ժողովուրդը, հակառակ Առանայի արիւնոտ յիշատակների, նորից կառավարութեան կողքին էր՝ անվարան նպաստելով երկրի պաշտպանութեան դործին: Պետութեան ապառնացող վտանգը հայութիւնն ընդունում էր վտանգ եւ իրեն համար:

Եւ, ահաւասիկ, թիւրքերը ո՛չ միայն չդնահատեցին հայ ժողովրդի այս անկեղծ զդացմունքները, ո՛չ միայն չաշխատեցին նրա մէջ խորացնելու եւ ամրացնելու օսմանեան պետականութեան դաղափարը, այլ, կարծես դիտաւորեալ կերպով, թափեցին ամէն ճիդ ու ջանք՝ սառցնելու համար հայերի նման վերաբերումը, յետ մղելու նրանց իրենցից ու Թիւրքիայից: Երբ 1912–ին սկսուեց թիւրք–բալկանեան պատերազմը, հայերի մէջ այլեւս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել: Պատրիարքարան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդա՛կ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխուի: Այս տրամադրութեան հետեւանքով էր, որ, օրինակ, պատերազմի ընթացքին բուլղարահայութիւնը կազմակերպեց Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը:

Նոյն տրամադրութեան հետեւանքով ծնունդ առաւ նաեւ կաթուղիկոսական պատւիրակութիւնը Եւրոպայում՝ Պօղոս Նուպարի դլխաւորութեամբ: Հայերը նորից բռնեցին քաղաքական այն ուղին, որով ընթացել էին



Հ. Յ. Դ. 8ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ, ԿԱՐԻՆ

Բերլինի վեհաժողովից ի վեր — փչոտ, վտանգաւոր, թէ՛ հայերի եւ թէ՛ թիւրքերի համար հաւասարապէս փորձութիւններով հարուստ ուղի: Սակայն, ուրիշ հեռանկար չէր տեսնւում. «վերածնւող» Թիւրքիան էլ, ինչպէս առաջները սուլթանական Թիւրքիան, հայերին մղում էր դէպի ա՛յդ ուղին:

Եւ այս անգամ, կարծես, յաջողութիւնը ժպտում էր հայերին. մեծ պետութիւնների կամ, աւելի ճիշտ, ռուս–գերմանական երկար ու տաղտկալի վէճերից ու սակարկութիւններից յետոյ, որոնց ընթացքին Գերմանիան ոտի ի բուին պաշտպանում էր թիւրքերին, իսկ Ռուսաստանը պնդում էր հայկական բարենորոգումների վրա, վերջ ի վերջոյ, 1914 թ. յունւար 26–ին, մեծ–վեզիր Սայիտ–Հալիմի եւ Ռուսաստանի Պոլսի դործակատար Գուլկեւիչի միջեւ ստորագրւեց բարենորոգումների ծրագիրը: Գերմանիան հրաժարւեց դնել իր ստորագրութիւնը այդ թղթի տակ:

Համաձայն այդ ծրագրի հայկական վեց վիլայէթներին պիտի կցւէր Տրապիզոնի նահանգն էւս եւ այդ ամբողջ չրջանը պիտի բաժանւէր երկու ընդհանուր – քննչութիւնների, կամ, ինչպէս սիրում էին ասել հայերը, մարզպանութիւնների: Առաջին չրջանը պիտի բաղկանար Էրզրումի, Տրապիզոնի եւ Սըվազի վիլայէթներից, երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի եւ Տիգրանակերտի: Ընդհանուր – քննիչները պէտք է լինէին եւրոպացիներ: Նրանց նշանակումը կատարելու էր Բ. Դուռը՝ համաձայն մեծ պետութեանց առաջարկելիք թեկնածուների:

Ընդհանուր–քննիչների հսկողութեան պիտի ենթարկւէին չրջանի վարչութիւնը, արդարադատութիւնը, ոստիկանութիւնն ու ժանդարմերիան: Ի հարկին, տեղական զօրքերն էւս պիտի տրամադրւէին նրանց՝ հանրային անդորրութեան պահպանութեան համար: Նրանք իրաւունք պիտի ունենային նշանակել, հեռացնել եւ դատի ենթարկել պաշտօնեաներին. բարձր պաշտօնեաներ նշանակելիս պիտի առնէին սուլթանի հաւանութիւնը: Հողային վէճերը պիտի լուծւէին քննիչների անմիջական հսկողութեան տակ: Օրէնքներն ու կառավարական կարգադրութիւնները պիտի հրատարակւէին տեղական լեզուներով, եւ ազգարնակութիւնը իրաւունք պիտի ունենար գործածել իր լեզուն վարչութեան ու դատարանի մէջ: Իւրաքանչիւր ազգ պետական բիւդջէից կրթական գործի համար պիտի ստանար որոշ դումար՝ համեմատ իր վճարած հարկի, այլեւ իրաւունք պիտի ունենար նոյն նպատակով նշանակել ազգային տուրք: Չինւորական ծառայութիւնը պիտի կատարւէր իր վայրում: Համիդիէ գնդերը պիտի ցնդւէին: Ժողովուրդների, կրօնների եւ լեզուների իրական փոխյարաբերութիւնները պիտի ճշտւէին մարդահամարով, որը պիտի կատարւէր ընդհանուր–քննիչների հսկողութեան տակ, Վիլայէթներում գոյութիւն պիտի ունենային ժողովրդից ընտրւած ընդհանուր եւ վարչական խորհուրդներ:

Այսպիսով, յուն. 26–ի բարենորոգումների ծրագիրը Հայաստանում հաստատում էր համարեա նոյն դրութիւնը, ինչ որ կար արդէն Լիբանանում, ա՛յն հիմնական տարբերութեամբ, որ Լիբանանի ընդհանուր նահանգապետը

թիւրքահպատակ էր, մինչդեռ այստեղ՝ պէտք է լինէին եւրոպացիներ։*)

Այս ծրագիրը լիովին չէր համապատասխանում հայերի բաղձանքներին։ Նրանք դժգոհ էին հայկական նահանգները երկու շրջանի բաժանելուց։ Բացի այդ, նրանց շատ էր անհանգստացնում ծրագրի շուրջ յարուցած հակամարտութիւնն ու թիւրք կառավարութեան բռնած բացայայտ թշնամական դիրքը, մի փաստ, որի վրա մատնանշում էր եւ Գուլկեւիչը իր կառավարութեան ներկայացրած հաղորդագրութեան մէջ։ «Հայկական հարցի մասին Բարձր Դրան հետ համաձայնութեան յանգելու համար, հեռագրում էր նա ծրագրի ստորագրութեան յաջորդ օրը, յուն. 27-ին, կայսերական դեսպանին պէտք եղաւ յաղթահարել մեծ դժւարութիւններ։ Մի կողմից նա ստիպւած էր հաշւի առնել հայերի բնական ձգտումը, ըստ կարելւոյն, աւելի լայն բարենորոգումներ ստանալու, միւս կողմից՝ Բ. Դրան յամառ դիմադրութիւնը, որով նա աշխատում էր ի չիք դարձնել առաջարկւած բարենորոգումները եւ այդ նպատակով ծառանում էր մեր նախագծի բոլոր էական կէտերի դէմ։ Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային, նա մեզ հետ հայկական հարցի մասին համաձայնութեան մտաւ երկու նպատակով. նախ՝ որպէսզի կարողանայ ասել Բ. Դրան, որ ինքը Թուրքիային չետ է պահել լայն բարենորոգումներից՝ տալով իր համաձայնութիւնը թիւրքիայի համար վտանգ չներկայացնող համեստ ծրագրի. երկրորդ՝ որպէսզի ձեռք բերէ հայերի համակրանքը, հայերի, որոնք շատ թանգ են Գերմանիայի համար, իբրեւ մեծամասնութիւն Կիլիկիայում, որը Գերմանիան համարում է իր ազդեցութեան շրջան։ Այդ պատճառով, Գերմանիայի վարմունքը, ամբողջ ժամանակ, աչքի էր զարնում անկեղծութեան բացակայութեամբ եւ նրա աջակցութիւնն ունէր զուտ ցուցական բնոյթ (հայերի համար)։ Իրապէս, գերման դիւանագէտները թիւրքերի հաւատարիմ խորհրդատուներն էին»։**)

Այս բոլորը տեսնում էին եւ հայերը, եւ նրանցից խորատեսները լուրջ անհանգստութեամբ էին նայում ապագային։ Բայց լայն հասարակութիւնը և, մանաւանդ, բարենորոգումների աշխատանքը տանող շրջանները՝ Փարիզից մինչեւ Էջմիածին՝ համակւած էին յաղթողի զոհունակութեամբ։

1914 թի գարունը եւ ամառը անցան բարենորոգումների գործի կազմակերպման աշխատանքներով։ Պետութիւնների առաջարկած թեկնածուներից, Բ. Դուռը ապր. 2 (15)-ին ընդհանուր քննիչներ ընտրեց Հոլանդացի Վեստենենկին եւ Նորվեգացի Հոֆին ու մայիս 10 (23)-ին ստորագրեց նրանց հետ վերջնական պայմանը։ Եւ նախնական անհրաժեշտ աշխատանքները լրացնելուց յետոյ Հոֆը մեկնեց իր պաշտօնատեղին՝ Վան. կարճ ժամանակից յետոյ պիտի մեկնէր եւ Վեստենենկը։

Ճիշտ է, թիւրք կառավարութիւնը եւ Իթթիհատը չէին ծածկում իրենց դժգոհութիւնը հայերից եւ հակառակութիւնը բարենորոգումների ծրագրից։

---

*) Сборник дипломатических документов . Реформы в Арменіи. Изд. министерства иностр. дѣл. Петроград, 1915.

**) Նոյն տեղը էջ 173—174։

ճիշտ է, ճանապարհին եւ Վանում Թիւրք իշխանութիւններն ու հասարակութիւնը թշնամանքով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում Թիւրք պաշտօնեաները նոյնիսկ հրաժարուեցին նրան ենթարկւելուց, բայց եւ այնպէս «բարենորոգումները սկսել էին գործադրուել», իսկ այս ինքնին արդէն կարեւոր նուաճում էր համարւում: Պատճառ չկար կասկածելու, որ, վերջ ի վերջոյ, Թիւրքերը տեղի կը տան, եւ բարենորոգումները կը մտնեն ույժի մէջ: Հայ ժողովրդի առջեւ բացւում էին նոր, անսահման, հրապուրիչ հորիզոններ...

Այսպէս էր դրութիւնը, երբ յուլիսին, Էրզրումում, բացւեց Հ. Յ. Դաշնակցութեան 8-րդ ընդհանուր ժողովը: Մեծ կարեւորութիւն էր տրւում այդ ժողովին ո՛չ միայն դաշնակցականների, այլ եւ դրսի խաւերի կողմից. բարենորոգումների գործադրութեան նախօրեակին, հայրենի երկրի կենտրոններից մէկում գումարւած հայ կեանքին գոյն եւ բովանդակութիւն տւող կուսակցութեան ընդհանուր ժողովը, անկասկած, ունենալու էր խոշոր նշանակութիւն, մասնաւորապէս բնագաւառի համար: Եւ, յիրաւի, Հ. Յ. Դ. 8-րդ ընդհանուր ժողովը իր ուշադրութեան եւ աշխատանքի գլխաւոր մասը նւիրեց երկրին — նրա ներքին կազմակերպութեան, հողային խնդրին, արտագաղթին, կառավարութեան վարած հակահայ քաղաքականութեան, ինքնապաշտպանութեան, բարենորոգումներին եւ այլն:

Վերջին հարցի մասին ընդունւեց հետեւեալ բանաձեւը.—

«Ընդհանուր ժողովը՝ լսելով բարենորոգումներու մասին տրւած զեկուցումը եւ վիճաբանութեան ենթարկելով, առհասարակ, կուսակցութեան բարենորոգչական գործունէութիւնը, դիւանագիտական եւ քաղաքական ճանապարհով, ընդունեց, որ կուսակցութիւնը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական այդ գործունէութիւնը, իբրեւ նպատակայարմար, սակայն, պարտք կը դնէ ձեռնհաս մարմիններու վրա աւելի քիչ տարւել դիւանագիտական ուղղութեամբ՝ միշտ շարունակելով գերակշռութիւնը տալ կազմակերպական իրական ուժի զարգացման:

«Գալով 1914 Թ. յունուար 26-ի Բարենորոգմանց Ծրագրին, այն ձեւով, որ ընդունւած է Պոլսոյ եւրոպական դեսպաններու, Թիւրք կառավարութեան եւ ընդհանուր քննիչներու կողմէ, կը նկատէ զայն իր ամբողջութեան մէջ անբաւարար եւ օգտակար չի գտներ, որ նոյն ծրագրի գործադրութեան ժամանակ կազմակերպութիւնը կուսակցօրէն աջակցութիւն ցոյց տայ եւ այդպիսով որոշ պատասխանատւութիւն ստանձնէ. կը թելադրէ միջամտութեան գործը թողուլ ազգային պաշտօնական մարմիններու:

«Ասոր հետ միասին, չբացառելով հանդերձ, որ յիշեալ բարենորոգմանց ծրագիրը կը պարունակէ կարգ մը կէտեր՝ համապատասխան մեր նւազագոյն պահանջներուն, եւ որ, իրօք, կառավարութիւնը կը ջանայ իր բոլոր հնարաւոր միջոցներով ջլատել նոյնիսկ այդ համեստ ծրագրին իրագործումը, ինչպէս նախապէս առաջադրւած բարենորոգչական սկզբունքները, ընդհանուր ժողովը կը հրահանգէ, որ կուսակցութիւնը, անհրաժեշտութեան պարագային, ընդդիմանայ կառավարութեան կողմէ նոյն ծրագրին իրագործման դէմ հանւած խափանարար միջոցներուն եւ պաշտպանէ հայ ժողովուրդին իրաւունքները»:

Ինչպէս տեսնում ենք, առանձին խանդավառութիւն չկայ դէպի բարենորոգումների ծրագիրն ու դիւանագիտական գործունէութիւնը: Ընդհանուր ժողովը անհրաժեշտ էր համարում նախ եւ նախ ներքին աշխատանքի ու սեփական ուժերի կազմակերպման:

Օրակարգի հարցերը սպառած չէին դեռ, երբ ստացուեց եւրոպական պատերազմի լուրը, որը արտակարգ եռուզեռ առաջ բերեց թիւրք ղեկավար շրջաններում, որոնց առաջին գործն եղաւ, ի հարկէ, բարենորոգումների խափանումը: Ընդհանուր քննիչ Հոֆը անմիջապէս մեկնեց Վանից: Թիւրքիայում յայտարարուեց ընդհանուր զօրահաւաք, եւ ամէն կողմ սկսուեցին տեսնել շտապ նախապատրաստութիւններ: Թիւրքիան սկսեց տենդագին պատրաստուել պատերազմի:

Այս ընդհանուր կացութեան հանդէպ, այլ եւ աչքի առաջ ունենալով թիւրք իշխանութիւնների կասկածոտ ու բծախնդիր վերաբերումը՝ Հ. Ց. Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը եւ ցրուեց՝ նախօրօք քննութեան առնելով Թիւրքիայի պատերազմի մէջ մտնելու հաւանականութիւնը և այդ առթիւ որոշելով հրահանգել իր մարմիններին եւ ընկերներին մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ եւ կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները: Միաժամանակ, ընդհանուր ժողովը ընտրեց 7 հոգինոց յատուկ մի մարմին, որին եւ յանձնուեց, պատերազմի դէպքում, լուծել ծագելիք բոլոր գործնական խնդիրները: Իրրեւ ընդհանուր հրահանգ, որոշուեց ամէն գնով Թիւրքիան չեզոք պահել պատերազմին մասնակցելուց՝ նկատելով, որ նման քայլը կործանարար կը լինի ո՛չ միայն հայ ժողովրդի, այլ եւ Օսմանեան պետութեան համար:

Ընդհանուր ժողովն արդէն փակուած էր, երբ Էրզրում հասան Իթթիհատի լիազօրներ Բէհաէտտին Շաքիրը եւ Նազիմ բէյը՝ իրենց հետ բերելով մի քանի տասնեակ կովկասցի եւ պարսիկ-ադրբէջանցի գործակալներ ու մարտիկներ: Նրանց նպատակն էր կազմակերպել հակառուս քարոզչութիւն ու պայքար Կովկասում եւ Հիւսիսային Պարսկաստանում, այլ եւ պատերազմական նախապատրաստութիւններ տեսնել Արեւելեան նահանգներում: Նրանց յանձնարարուած էր նաեւ բանակցութիւններ վարել Հ. Ց. Դ. ընդհանուր ժողովի հետ Ռուսաստանի դէմ մէկ ճակատ ստեղծելու համար:

Իթթիհատի լիազօրները առաջարկեցին Հ. Ց. Դաշնակցութեան ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-թիւրքական պատերազմի ընթացքում միանան թիւրքերին՝ աշխատելով ռուսների դէմ ապստամբեցնել կովկասահայերին: Նրանք պնդում էին, որ վրացիք ու կովկասեան թիւրքերը արդէն տուել են իրենց համաձայնութիւնը եւ սկսել են պատրաստուել ապստամբութեան: Եւ, յիրաւի, Իթթիհատական լիազօրների հետ Էրզրում էին եկել եւ կովկասցի թիւրքեր, որոնք հաւաստիացնում էին, թէ գնում են Կովկաս՝ խռովութիւններ եւ ապստամբութիւններ առաջ բերելու եւ, պատերազմի պարագային, ռուս բանակի թիկունքը կազմալուծելու նպատակով:

Բէհաէտտին Շաքիրն ու Նազիմ բէյը համարում էին վայրկեանը հասած, երբ կովկասեան ժողովուրդները պէտք է ազատուեն ռուսական լծից: Նրանց



Հ· Յ· Դ· ԸՆԴՀ· ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԻԼԻՋԱՅՈՒՄ



Հ· Յ· Դ· ՏՐԴ ԸՆԴՀ· ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ
ոտքի՝ Վ· ՄԻՆԱՒՈՐԵԱՆ եւ Ս· ՎՐԱՅԵԱՆ
նստած՝ Ա· ՎՌԱՄԵԱՆ եւ Ռ· ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

տեսլով՝ Թիւրքիան մտադիր չէ գրաւելու Կովկասը, այլ ձգտում է վերածել Թիւրքական հովանաւորութեան տակ գտնւող ինքնավար պետութեան, որ պատւար լինի իր եւ ռուսների միջեւ, մանաւորապէս, հայերին խոստանում էին ստեղծել հայկական ինքնավար մի իշխանութիւն ռուսահայ եւ նաեւ Թիւրքահայ որոշ հողամասերից: Ընդհակառակը, հայերի չմիանալը վրացիներին եւ կովկասեան Թուրքերին կարող է առաջ բերել ծանր հետեւանքներ:

Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ իրենք կտրականապէս դէմ են Թիւրքիայի պատերազմի խառնւելուն, որովհետեւ համոզւած են, որ վերջնական յաղթանակը պատկանելու է դաշնակիցներին, իսկ այդ դէպքում պատերազմող կողմ դարձած Թիւրքիան կարող է չարաչար տուժել: Նրանք ապացուցանում էին, որ Թիւրքիայի շահերը պահանջում են պահպանել չէզոքութիւն. չէզոք Թիւրքիան անհամեմատ աւելի շատ կը շահի, քան պատերազմող Թիւրքիան: Պատերազմի մասնակցել՝ նշանակում է երկիրը նետել աններելի արկածախնդրութեան գիրկը:

Իթթիհատի լիադօրները, սակայն, անդրդուելի էին իրենց առաջարկի վրա: Նրանց համար պատերազմի հարցը որոշւած էր. յանցանք կը լինէր ձեռքից փախցնել յարմար առիթը եւ մէկ անգամ ընդ միշտ չազատւել ռուսական մղձաւանջից: Գերմանիայի յաղթութիւնը կասկածի առարկայ չէր նրանց համար, իսկ յաղթական Գերմանիա՝ նշանակում էր յաղթական Թիւրքիա: Նրանք համոզում էին հայերին եւս միանալ իրենց եւ ձեռք-ձեռքի տւած կռւել հասարակաց թշնամու դէմ: Բայց Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտարարեցին, որ եթէ, այնուամենայնիւ, իրենց կամքի հակառակ, պատերազմը պայթի, Դաշնակցութեան Թիւրքիոյ հատւածի բոլոր անդամները լրիւ կերպով կը կատարեն իրենց պարտքը հանդէպ պետութեան: Ինչ վերաբերում է կովկասահայերին՝ Դաշնակցութիւնը չի կարող յանձնառութիւն ստանձնել նրանց ապստամբեցնելու, մանաւանդ որ Թիւրքերը իրենց վերջին հինգ տարւայ քաղաքականութեամբ Թիւրքահայերի վերաբերմամբ այնպիսի վիճակ ստեղծեցին, որ կարողանային գրաւել ռուսահայերի համակրանքը:

Այս պատասխանը Թիւրքերի ուզածը չէր: Նրանք պահանջում էին աւելի շօշափելի ապացոյցներ «օսմանեան հայրենասիրութեան», մանաւանդ բարենորոգումների ծրագրի առթիւ իրենց եւ հայերի միջեւ առաջ եկած պղտորութիւնից յետոյ: Հայերը չէին կարող խոստանալ աւելին. հոգեբանօրէն, մարդկայնօրէն հնարաւոր չէր այդ: Ո՛չ միայն կովկասահայերին ապստամբեցնել, Թիւրքահայերին իսկ դժւար էր ոգեւորել «օսմանեան հայրենասիրութեամբ» — այնքա՜ն վարկաբեկւած էր Թիւրքական ռեժիմը հայ ժողովրդի աչքին:

Ընդհակառակը, պատերազմի պարագային, աւելի հաւանական էր հակաԹիւրք զգացմունքների պոռթկումը: Այդպէս էլ պատահեց: Դեռ Թիւրք-ռուսական պատերազմը չսկսւած Կովկասում ծայր տւեց ուժեղ, բառի իսկական իմաստով տարերային կամաւորական շարժում, որը կլանեց հայ ժողովրդի համարեա բոլոր խաւերն ու կազմակերպութիւնները: Կարճ ժամա-

նակամիջոցում կազմակերպուեցին 4 կամաւորական խմբեր, որոնց մէջ մըտնել փափագողների թիւը պահանջածից մի քանի անգամ աւելի էր: Աստարէգեան հայդուկային կռիւների մէջ թրծուած խմբապետներ — Անդրանիկ, Վարդան, Քեռի, Համազասպ, Դրօ, Խէչօ եւ շատ ուրիշներ, որոնք կանդնեցին խմբերի գլուխը: Կամաւորական չարժման նախաձեռնող եւ ընդհանուր ղեկավար եղաւ Ազգային Բիւրօն: Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Բիւրոնական ժողովը, 1914, սեպտեմբերին, իւրացրեց եւ գործօն դեր կատարեց կամաւորական չարժման գործադրութեան մէջ (Ա.): Ջուտ վարչական-կազմակերպական գործը ամփոփուեց Կարպադրիչ Մարմնի ձեռքը: Շարժման քաղաքական նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն 6 վիլայէթների եւ նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»: Ռուս դիւանագիտութիւնն ու զօրահրամանատարութիւնը քաջալերում էին այս տրամադրութիւնը եւ ուղղակի կամ անուղղակի կերպով զգացնել էին տալիս, որ հայերի բաղձանքները կը կատարուեն լիովին: Այդ իմաստով արտայայտուեց ցարը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ընդունելութեան միջոցին Թիֆլիսում: Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը նոյն հաւատիացումները տուեց Կաթողիկոսին առանձին մի գրութեամբ:

Կամաւորական խմբերը սկզբում 4 էին — Անդրանիկի, Քեռիի, Դրօի, Համազասպի — որոնց մէջ մտնում էին մօտ 2500 կուռղներ: Ապա՝ աւելացաւ մի նոր խումբ՝ գնդ. Ջամփոլադեանի հրամանատարութեան տակ, Ազգային Բիւրոյից անկախ: 1915-ի գարնանը Քեռիի, Դրօյի եւ Համազասպի խմբերը միացեցին Արարատեան Զօկատի մէջ, Վարդանի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ, որ Վանի գրաւման գլխաւոր ոյժը հանդիսացան: Նոյն 1915-ին կազմակերպուեց Իչխանի — Յովսէփ Արղութեանի խումբը: Ի վերջոյ, հայ կամաւորական խմբերի թիւը հասաւ եօթի: 1916 թուին այդ խմբերը վերակազմուեցին հայկական հրացանաձիգ գնդերի, սպաների հրամանատարութեան տակ եւ մտցուեցին ռուսական կանոնաւոր բանակի մէջ: Ռուս քաղաքականութիւնը փոխուում էր հայերի վերաբերմամբ, եւ հայ կամաւորական խմբերը այլեւս պէտք չէին:

Կամաւորական խմբեր կազմակերպելով՝ Կովկասի հայ ղեկավար շրջանները նպատակ ունէին՝ մի կողմից մասնակցելով պատերազմին թիւրքիայի դէմ՝ արագացնել թիւրքահայերի ազատութիւնը, միւս կողմից՝ դինուած ուժեր ունենալով ռազմաճակատի առաջաւոր մասերում՝ նպաստել այնտեղի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին: Ենթադրւում էր, որ կամաւորական խմբերը արագ չարժումներով կարող էին առաջն առնել կամ մեղմացնել կոտորածները:

Իրականութեան մէջ, կամաւորական խմբերը խաղացին, գլխաւորապէս, դինուորական դեր եւ, այս տեսակէտից, անգնահատելի ծառայութիւն հասցրին ռուս բանակին: Նրանք ո՛չ միայն յառաջապահ-հետախուզական պաշտօններ էին կատարում, այլ եւ մասնակցում էին ընդհանուր ճակատամարտների կամ լուծում էին ռազմական ուրոյն խնդիրներ: Կովկասեան ռուս բանակի տարեգրութեան մէջ հայ կամաւորական խմբերն ունեն իրենց պատուաւոր տեղը թէ՛ կատարած հերոսական գործերով եւ թէ տուած բազմա-

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ















ԱՐՄԷՆ ԳԱՐՕ
Ս· ՎՐԱՑԵԱՆ

ԲԺ· Ց· ՋԱԻԲԵԱՆ
ԹՈՒՏՄԱՐ· ՋՕՐԵԱՆ
Ա· ԳԻՒԼԱՆԴԱՆԵԱՆ

Ց· ԱՐՂՈՒԹԵԱՆ
Ն· ԱՂԲԱԼԵԱՆ

թիւ ու թանգագին զոհերով: Բացի հարիւրաւոր պարզ մարտիկներից, պատերազմի դաշտում ընկան շատ քաջ եւ անուանի խմբապետներ, ինչպէս Քեռին ու Ռէչօն:*) Խմբապետներից ու կամաւորներից շատերը վարձատրուեցին քաջութեան նշաններով: Մի ահագին թիւ հայ երիտասարդների խըմբերի մէջ ճեռք բերեց զինուորական փորձառութիւն եւ յետագային, մանաւանդ, Հայաստանի անկախութեան չրջանում, մեծ չափով օգտակար եղաւ հայ ժողովրդի եւ հանրապետութեան պաշտպանութեան գործին:**)

Կամաւորական խմբերը, սակայն, մի կաթիլ էին համեմատած այն ահագին օժանդակութեան հետ, որ հայ ժողովուրդը բերեց Ռուսաստանին պատերազմի ընթացքին: Ըստ պաշտօնական հաշւի, հայերի 13%-ը զինուոր էր ռուսական ռազմաճակատներում: Ուրիշ խօսքով, 2 միլիոնոց ռուսահայութիւնը աւելի քան 250,000 զինուոր տուեց ռուս բանակին: Բացի այդ, նա իր ուժերը հասցրեց գերագոյն լարման եւ թիկունքում՝ մասնակցելով ռազմաճակատի օգնութեան յատկացուող բազմապիսի ձեռնարկների: Եւ այդ ամենը կատարուում էր մէկ նպատակով. թիւրքահայկական դատի լուծման, Թիւրքահայաստանի ազատագրութեան համար (Բ.):

Պատերազմի սկիզբին հայկական չրջաններում տիրում էր ընդհանուր համոզում. մի քանի ամսւայ մէջ ռուսները կը գրաւեն Վանն ու Էրզրումը, եւ հայկական չրջանները կ'ազատուեն թիւրքական լծից: «Ինչի՞ս պէտք են կօշիկ ու մուշտակ, ասում էր Անդրանիկը պատերազմի սկզբին, զինուորին կուտամ չարուխ ու հալւա — եւ հինգ օրէն Վան եմ...»

Այս հաւատն էր, անշուշտ, պատճառ այն համազգային խանդավառութեան, որ առաջ բերեց կամաւորական չարժումը: Սակայն, օրեր ու ամիսներ անցան, եւ հայկական նահանգները մնացին չգրաւուած: Աւելին դեռ. 1914-ի դեկտեմբերին քիչ մնաց Ռուսահայաստանի մի մասն էլ վրա դնար. Էնվէրի զնդերը հասել էին արդէն Սարըղամիշի բարձունքները, եւ Կովկասի մայրաքաղաքը մատնուել էր խուճապի: Փոխարքան պատրաստւում էր փախչելու դէպի լեռների ա՛յն կողմը, եւ կովկասեան թրքութիւնը ցընծութեան մէջ էր (Գ.):

Հրաչքը միայն, աւելի ճիչտ, արտակարգ ձմեռը, փրկեց Կովկասը թիւրքական ներխուժումից: Ջարդուած Սարըղամիշի տակ՝ Էնվէրն իր զօրքի բովանդակ թոյնը թափեց թիւրքահայ ժողովրդի գլխին: Հայերի բնաջընջման գաւը վաղուց էր նիւթուած Իթթիհատի որջում: Ահիթ էր հարկաւոր — ահա եւ առիթը. հայերն էին թիւրքերի պարտութեան պատճառը: Հարկա-

---

*) Հայ կամաւորական շարժումը դեռ սպասում է իր պատմագրին: Նրա մասին որոշ գաղափար է տալիս զօր. Գ. Ղորղանեանի գիրքը՝ «La Participation des Arméniens à la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914—1918)», Paris, 1927, որ հրատարակուեց նաեւ հայերէն լեզուով «Հայրենիք» ամսագրի 1926—27 թ. համարներում:

**) Այդ օրերին, դեկտեմբերի առաջին կէսին, Կովկաս այցելեց գար Նիկոլայ Բ. եւ ցնծութեամբ ընդունուեց մասնաւորապէս, Թիֆլիսի հայերի կողմից: Ցարը, իրեն ներկայացող Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.-ի միջոցով յայտնեց, թէ Ռուսաստան, պատերազմից յետոյ խոստանում է ապահովել Թիւրքահայաստանի ինքնավարութիւն Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ:

ւոր էր մաքրել ռազմաբեմը այդ վնասակար տարրից: Եւ ահա գործադրութեան է դրւում տեղահանութեան ծրագիրը: Պրուսական ու բելգիական ճակատներում տեղահանութիւն նշանակում էր տնտեսական քայքայում, թիւրքիայում՝ ջարդ ու կոտորած: Եւ 1915 թ. ապրիլից սկսած, ամիսներ շարունակ, թիւրքերը զբաղուեցին հայերի ծրագրւած բնաջնջումով: Ապրիլ 11-ին զանգւածօրէն ձերբակալւելով՝ դէպի մահ քշւեց Պոլսահայ մտաւորականութիւնը: Ապա՝ գիւղեր ու քաղաքներ դատարկւեցին եւ աւարի ենթարկւեցին: Մի միլիոնից աւելի ժողովուրդ մորթոտւեց կամ մեռաւ տեղահանութեան ճանապարհին եւ արաբական անապատների աւազներում: Դարերով կուտակւած անհաշիւ հարստութիւն, տնտեսական ու մշակութային թանգագին նիւթեր կորատեան մատնւեցին (Դ.): Մի ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչ հանւեց ու նահատակւեց վայրագօրէն՝ աշխարհի աչքի առջեւ — ոչ ոք չմբռնուացաւ ու չմիջամտեց: Եւ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ունէր միջամտելու. երկրագունդը խեղդւում էր արեան մէջ: Մարդկութեան խիղճը քար էր կտրել...

Թիւրքահայկական խնդիրը լուծւում էր թիւրքերի ձեռքով: Թիւրքահայաստան առանց հայերի — այս համապատասխանում էր եւ ուսների հաշիւներին: Մինչ թիւրքերը կլանւած էին հայկական տեղահանութիւններով ու ջարդերով, ասդին ռուս զօրավարները կազդրւել էին խաղում թիւրքական ռազմաբեմում: Մէկ քայլ առաջ, երկու քայլ յետ — ռուս բանակը անվերջ յառաջխաղացում եւ նահանջ էր անում, որոնց ընթացքին խապտ քար ու քանդ եղան եւ իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը: Դիտում կա՞ր այդ նահանջների մէջ, թէ՞ նրանք իսկապէս ռազմագիտական անհրաժեշտութիւն էին — մեւնոյնը չէ՞ր հայ ժողովրդի համար: Նա դաղթում, տնաքանդ էր լինում եւ ամէն դաղթի հետ կորցնում էր է՛ւ իր տնտեսական ու բարոյական կորովը, է՛ւ մարդկային հաւաքական կերպարանքը:

Ռուսաստանի հայութիւնը անխտիր բոլոր կազմակերպութիւններով իր բովանդակ ուժերը լարել էր մեղմացնելու համար համազգային այս աղէտը: Առաջին հերթին նիւթական եւ բարոյական ճիգ էր թափւում փրկելու համար պատերազմի թատերաբեմ դարձած վայրերից փախած դաղթականների ֆիզիքական դոյութիւնը, բայց նոյնչափ յուզում էին եւ ազգային-քաղաքական հարցերը. ի՞նչ էր սպասւում եւ ի՞նչ դուրս եկաւ...

1916 թ. սկիզբներին, միաժամանակ, թէ Թիֆլիսում, Ազգային Բիւրոյի չրջանակում, եւ թէ Պետրոգրադի Մոսկուայի հայութեան մէջ, ղգացւեց համազգային խորհրդաժողով գումարելու պահանջը, քննելու համար օրւայ խնդիրները եւ նոր կացութեան համապատասխան քաղաքական ուղղին որոշելու: Ժողովի գումարման նախաձեռնութիւնը ստանձնեց Մոսկուայի Հայկական Կոմիտէն իր կորովի նախագահ Ստ. Մամիկոնեանի դլխաւորութեամբ:

Երկար բանակցութիւններից յետոյ կառավարութիւնը արտօնեց հայկական խորհրդաժողովի գումարումը, Կովկասից հեռու, Պետրոգրադում,



կամաւորական գունդերու հրամանատարներ՝
ՎԱՐԴԱՆ, ՓԵՓԻ եւ ՀԱՄԱՋԱՍՊ



ԻՇԽԱՆ ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ
Հրամանատար կամաւորական Հինգերորդ Գունդի



ՏԻԳՐԱՆ ԲԱԼՃԱՍԱՐԵԱՆ
ԼԵՒՈՆ ՇԱՂՈՅԵԱՆ
ՇԱՏԱԽՅԻ ԽՄԲԱՊԵՏ ԱԶԱՏ

եւ այն պայմանով, որ զուտ գաղթականների օգնութեան հարցից դուրս ազգային կամ քաղաքական բնոյթ կրող որեւէ խնդիր չդրուի ժողովի օրակարգի վրա:

Պետրոգրադի խորհրդաժողովը գումարուեց 1916 թ. մայիսին: Ժողովին մասնակցում էին գաղթականական գործերով զբաղուող կազմակերպութիւնների եւ Ազգային Բիւրոյի ներկայացուցիչները, Պետական Դումայի հայ անդամները եւ հրաւէրով անհատ գործիչներ Թիֆլիսից ու Կովկասի մի ւս հայկական կենտրոններից, Պետրոգրադից, Մոսկուայից, Նոր Նախիջեւանից եւայլն: Բազմանդամ եւ մեծազմուկ ժողով էր, որ, սակայն, լաւ կազմակերպուած չէր եւ, կարելի է ասել, չօշափելի ոչ մի հետեւանք չունեցաւ:

Խորհրդաժողովին նախագահում էր Մոսկուայի Հայկական Կոմիտէի նախագահ Ստ. Մամիկոնեանը, որ եւ պատասխանատու էր կառավարութեան առջեւ: Ժողովականներ էին, ի միջի այլոց, Պետրոգրադի Հայկական կոմիտէն իր ամբողջ կազմով՝ պրոֆ. Ն. Ադոնց, պրոֆ. Վարդանեան, Աբիբէգեան, պետական Դումայի անդամները՝ Մ. Պապաջանեան, Մ. Ալէմեան, Մոսկուայի կոմիտէն նոյնպէս գրեթէ ամբողջ կազմով՝ Ս. Մամիկոնեան, րոֆ. Ճիվելեկեան, Իվ. Ամիրեան, Ց. Թադէոսեան եւայլն, Ազգային Բիւրոյից փոխ-նախագահ՝ Ց. Խունունց, Ն. Ազրաւեան, Խ. Կարճիկեան, Ս. Վրացեան եւ ուրիշներ, Բարեգործական Ընկերութեան նախագահ Ս. Ցարուխիւնեան, Վանից՝ Արամ Մանուկեան, Ա. Թէրզիպաշեան, Օսմանեան երեսփոխան Վահ. Փափազեան եւ շատ ուրիշներ: Ներկայ էր եւ Սոցիալ-դէմոկրատ, ազմկարար մի խմբով՝ Սարգիս Սրապիոնեան (Լուկաշին), Արտ. Կարինեան եւայլն:

Ժողովը զբաղուեց գլխաւորապէս գաղթականական հարցերով, բայց դաղտնի հաւաքոյթներում քննութեան առնուեցին եւ Հայկական հարցի հետ կապուած քաղաքական խնդիրները: Եթէ գաղթականական հարցը պարզ եւ որոշ էր — նպաստամատոյց գործի կազմակերպում, նիւթական օգնութեան համար վարկերի ապահովում կառավարութիւնից եւ ազգային մարմիններից, բժշկական եւ կրթական աջակցութիւն եւայլն — եւ այս հարցի շուրջ սուր տարաձայնութիւններ չկային, թէեւ նկատելի էին անհամաձայնութիւնն ու պայքարը զանազան մարմինների միջեւ. քաղաքական խնդիրները բուռն վէճերի առարկայ եղան: Այս ժողովում էլ, ինչպէս եւ դուրսը, անհամաձայնութիւնը ազգային քաղաքականութեան շուրջ հետեւանք էր ի վաղուց անդի հայ կեանքում գոյութիւն ունեցող երկուութեան. մի կողմից ազատախոհ մտայնութիւնը, որ Նալբանդեան-Արծրունի ուղիղ գծով հասել էր Հ. Ց. Դաշնակցութեան, իրրեւ հայ ժողովրդի մեծամասնութեան ազգային ապրումների արտայայտութիւն, միւս կողմից ծայրայեղ պահպանողական եւ ծայրայեղ ձախակողմեան փոքրամասնութիւնը: Մանաւանդ այս վերջինը, ապազգայ հայ բոլշեւիկները, խորհրդաժողովում խափանարար եւ բեւեռու աստիճան աղմկոտ պայքար մղեցին, առանց որեւէ յաջողութեան:

Ժողովը, իր մեծամասնութեան մէջ, երկու հարցերում էլ — գաղթա-

կանական եւ քաղաքական—միակամ դուրս եկաւ. չարունակել մինչեւ այդ որդեգրուած ազգային-քաղաքական ուղղութիւնը Թիւրքահայ Դատի եւ դաղթականների օգնութեան գործի վերաբերմամբ:

Օրակարգը դեռ չսպառած՝ կառավարութեան կողմից անպաշտօն թելադրութիւն եկաւ չուտով վերջ տալու խորհրդաժողովին: Հապճեպով կատարեցին բոլոր ձեւակերպութիւնները, եւ համագումարը փակուեց արտաքնապէս իր պարտականութիւնը կատարողի գոհունակութեամբ, բայց, ինչպէս ասացինք, առանց որեւէ չօշափելի աղդեցութիւն գործելու հայ կեանքում, որ նորից առարկայ էր դարձել ռուսացման բիրտ քաղաքականութեան:

Թիւրքահայկական նահանջների պարպումից յետոյ հետզհետէ փոխուեց եւ ռուսների վերաբերումը դէպի հայերը: 1916 թուին այլեւս «հայկական ինքնավարութեան» մասին խօսք չէր լսւում. կամաւորական խմբերը լուծուեցին: Կովկասում իշխում էր մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ հակահայ քաղաքականութեան ներշնչողներից մէկը: Մտածւում էր գրաւած վայրերը յանձնելու ռուս դաղթականներին: Ծրագրւում էր Ալաշկերտի ու Եփրատեան կազակութիւն հաստատել: Թիւրքահայ դաղթականների վերադարձը արգելւեց իրենց տեղերը: Ինչ որ մութ, այն օրերին դեռ եւս անհասկանալի դաւ էր լարւում հայ ժողովրդի դէմ: Ցեղապային, ասկային, յայտնի դարձաւ, որ դաչնակից պետութիւնները հայերի դլխին խաղացել էին ամենանենգ խաղերից մէկը:

1916 թուի գարնանը, Լոնդոնում ու Պետրոգրադում կատարւած բանակցութիւնների հետեւանքով, Ֆրանսիան, Մեծ-Բրիտանիան եւ Ռուսաստանը ստորագրել էին Թիւրքիայի անդամահատման գաղտնի համաձայնութիւնը, ըստ որի հայերին խոստացւած հողերը բաժանւում էին երկու մասի. Էրզրումի, Վանի, Բիթլիսի ու Տրապիզոնի վիլայէթները ստանում էր Ռուսաստանը, Սիւրիան ու Կիլիկիան մինչեւ Խարբերդ ստանում էր Ֆրանսիան: Այսպիսով, իրագործւում էր Գալիցիններն ու Լորանով-Ռոստովսկիների երազը — Հայաստան առանց հայերի:

Համաձայն այս նոր պայմանների ու մտայնութեան ձեւակերպւեց եւ ռուսական քաղաքականութիւնը թիւրքահայկական վիլայէթների նկատմամբ. «Հնարաւոր է, դրում էր 1916 թ. 14(27) յունիսին Կովկասի փոխարքային արտաքին գործոց նախարար Սազոնովը, հնարաւոր է տրամադրել հայերին, որոշ շրջանակում, դպրոցական եւ եկեղեցական ինքնուրոյնութիւն, լեզուից օգտւելու իրաւունք, այլեւ քաղաքային ու դիւղական ինքնավարութիւն՝ պայմանով, որ ընտրութիւնների ժամանակ յարգւի աղդաբնակութեան տոկոսային համեմատութիւնը: Ոչ-քրիստոնեայ տարրերի վերաբերմամբ պէտք է կիրառել նոյն սկզբունքները, որքան այդ թոյլ կը տան տեղական պայմաններն ու նրանց մշակութային զարգացման աստիճանը»:

Ի պատասխան այս գրութեան, Կովկասի փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը 3(16) յուլ. նամակով նոյնպէս գտնում է «խիստ ցանկալի, որ մինչեւ պատերազմի վերջը մշակւեն այն դեկավարող սկզբունքները, որոնցով պէտք է Ռուսական կայսրութեան սահմանների մէջ մտցւեն մեր կողմից պատերազ-



ԱՆԴՐԱՆԻԿ

Հրամանատար կամաւորական Առաջին Գունդի

մի իրաւունքով գրաւած թիւրքական հողերը», եւ մերժելով Թիւրքահայաստանի ինքնավարութեան գաղափարը՝ «կատարելապէս համամիտ» է Սազոնովին, որ «կարելի է հայերին տրամադրել զպրոցական ու եկեղեցական ինքնուրոյնութիւն, եկեղեցական գոյքերն ու գրամագլուխները կառավարելու եւ լեզուից օգտուելու իրաւունք, պայմանով, սակայն, որ բոլոր պաշտօնական դէպքերում առաջնութիւնը պատկանի ռուսական բարբառին...»*)

Այս սկզբունքների համեմատ էլ կազմուեց Թիւրքիայից գրաւած վայրերի կառավարութեան ծրագիրը 1916 թ. յունիս 6-ին, որից յետոյ հաստատուեց զօր. Փեչկովի հռչակաւոր ընդհանուր-նահանգապետութիւնը իր հայակեր պաշտօնէութեամբ ու գործելակերպով:

Ահա ձեզ «ինքնավարութիւն վեց վիլայէթների եւ նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»: Ի՞նչ դառն հեգնութիւն...:

Արմատական փոփոխութեան ենթարկուեց ռուսների հայկական քաղաքականութիւնը եւ ներքին կեանքում. հայերն այլեւս բարեհաճ ուշադրութեան առարկայ չէին: Վերականգնուում էր նախապատերազմեան վերաբերումը: Աստացւում էր գրաքննութիւնն ու ոստիկանական հսկողութիւնը քաղաքական կուսակցութիւնների եւ ազգային-բարեգործական կազմակերպութիւնների գործունէութեան վրա: Մասնաւորապէս, անբաղձալի տարր էին դառնում Թիւրքահայ գաղթականները եւ կամաւորական խմբերից հեռացած զինուորները: Ոստիկանութիւնը նրանց դէմ կիրառում էր խիստ միջոցներ — այլեւս պէտք չունէր նրանց:

Եւ, հասկանալի է, հայ ժողովրդին համակում էր դառն հիասթափութիւնն ու վիշտը: Ի՞նչ էր սպասում, ինչ դուրս եկաւ: Թիւրքահայաստանի ինքնավարութեան փոխարէն՝ ահա ռուս բանակի կողմից գրաւուած ու ռուսացման ենթակայ ամայի հողեր: Թիւրքահայ գիւղերն ու քաղաքները՝ աւերակ: Ժողովուրդը կա՛մ ոչնչացուած, կա՛մ տարագիր ու բնաջնջման ենթակայ եւ կամ — աւելի քան 300,000 հոգի — գաղթական վիճակում՝ սպասուած Անդրկովկաս: «Մեծ դաշնակիցները» Հայաստանը բաժանել էին իրենց միջեւ, իբրեւ պատերազմական աւար: Հայերին վերանձնօրէն, չնորհուում էր... «եկեղեցական ինքնուրոյնութիւն»:

Փա՛ռք «մեծ դաշնակիցներին»...

Միեւնոյն դառն ապրումներն ունէր եւ գաղութահայութիւնը, որ նոյնպէս խանդավառուած էր պատերազմից առացւելիք բարիքներով: Ամերիկայի եւ Բալկանների հայերը լայն մասնակցութիւն էին բերել կամաւորական չարժման՝ դրամով ու մարդկային ուժերով եւ սպասում էին, որ, իբրեւ հետեւանք հայերի մատուցած ծառայութեանց, Հայաստանին կը տրւի ինքնավարութիւն:

Արտաքսմանի հայութեան իղձերի թարգմանն եւ քաղաքական գործունէութեան կենտրոն չարունակում էր մնալ Պօղոս Նուպարի պատուիրա-

*) Раздѣл Азіатской Турціи по секретным документам б. мин. ин. дѣл, под. ред. Е. А. Адамова. Изд. Литиздата НКИД, Москва, 1924.

կուֆիւնը, Փարիզում, որ գործում էր Ազգային Պատւիրակութեան անունով։ Նա ներկայացնում էր հայկական դատը պետութիւնների առջեւ եւ յենւած Ամենայն Հայոց Կաթուղիկոսից ստացած լիազօրութեան եւ համահայկական վստահութեան վրա՝ գործում էր ի նպաստ Հայաստանի ինքնավարութեան։ Ինչպէս Ազգ. Բիւրօն Կովկասում, Ազգ. Պատւիրակութիւնն եւս արտասահմանում մեծ պետութիւնների պետական գործիչներից ու կառավարութիւններից ստանում էր խոստումներ ու հաւաստիացումներ, որ հայկական բազձանքները լիովին կը գոհացւեն դաշնակիցների յաղթութիւնից յետոյ։

Այս հաւաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. Պատւիրակութիւնը նախաձեռնեց — Կովկասեան կամաւորական չարժման հաշւեյարդարից յետոյ — հայկական լեգէոնի կազմակերպութեան դաշնակիցների արեւելեան բանակում։ Հայկական լեգէոնը, իր հեղինակների գաղափարով, պէտք է ապագային կազմէր ինքնավար կամ անկախ Հայաստանի բանակի կորիզը։ Եւ ինչպէս կամաւորական խմբերը Կովկասում, հայկական լեգէոնն եւս Պաղեստինի ճակատի վրայ եւ ապա Կիլիկիայում երեւան բերեց մարտական ոգու հերոսական արտայայտութիւններ, մասնակցեց ճակատամարտների, կատարեց պատասխանատու դերեր, չօշափելի կերպով նպաստեց դաշնակից բանակների զէնքի յաջողութեան եւ արժանացաւ անգլիական ու ֆրանսական հրամանատարութեան բարձր գնահատութեան։

Բացի զուտ ազգային ձեռնարկներից՝ հայ կամաւորական խմբեր եւ անհատ մարտիկներ մասնակցեցին պատերազմին եւ ուրիշ ճակատներում՝ դաշնակիցների պանդխտեան զօրամասերի մէջ — ֆրանսական եւ ամերիկեան բանակներում։ Եթէ հաշւելու լինենք բոլոր ճակատներում եւ բոլոր բանակներին մասնակցող հայ զինւորների ու կամաւորների ընդհանուր թիւը, հայ ժողովուրդը, ամենահամեստ հաշւով, մօտ 300,000 կռուող տղամարդիկ դաշնակիցներին պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքին։ Եւ վարձատրութի՞ւնը...

Ռուսաստանում տեսանք այդ վարձատրութիւնը — բացարձակ խաբէութիւն ու զրկանք։ Նոյնը կատարւեց եւ Եւրոպայում։ Մի կողմից Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները հրապարակով յայտարարում էին, որ պատերազմի նպատակներից մէկն էլ Հայաստանի ազատագրութիւնն է, միւս կողմից, դիւանագիտական առանձնասենեակներում, գաղտնի բանակցում էին Հայաստանի բաժանման մասին։ Հայաստանի անդամահատութեան ծրագիրն, ի վերջոյ, հաստատւեց առանց հաշւի առնելու հայ ժողովրդի չահերն ու բազձանքները։

Այսպիսով, թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում հայ ժողովրդի բոլոր յոյսերն ի դերեւ ելան։ Խարւած ու լքւած դաշնակիցներից, աւերւած ու ջարդւած իր հայրենիքում, ծանրաբեռնւած հարիւր հազարաւոր գաղթականներով ու պատերազմի զոհերով, առանց հեռանկարի, հայ ժողովուրդը նմանը չտեսնւած տագնապով ուղ կոխեց 1917 թւականը։ Եւ ով գիտէ ի՞նչ կը լինէր վախճանը, եթէ վրա չհասնէր հրաշքը —

1917 թւի փետրուար 28–ին, անսպասելի կերպով, պայթեց Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը։



ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ
(Մտեբմակաճ շրջանում)



ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽԵՉՕ, ՍԱՐԳԻՍ ԵՒ
ՆԻԿՕԼ ՕՏԱՊԱՇԵԱՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՕԶԱԿՈՄԻ ՕՐԵՐԸ

Յեղափոխութիւնը չրջեց ամէն բան։

Ցարական գահի փլատակների հետ միասին յեղափոխութեան ալիքը սրբեց–տարաւ եւ կովկասեան աստրապներին։ Անխտրութեամբ ու դողալով՝ փախաւ Թիֆլիսից փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը իր բոլոր արբանեակներով ու ռուսացման ծրագիրներով։ Յեղափոխական իշխանութիւնը հետը բերեց նոր դաշափարներ, նոր ոգի, նոր գործելակերպ ու նոր յոյսեր։

Ժամանակաւոր կառավարութեան մարտ 9–ի որոշումով Անդրկովկասի համար կազմուեց յատուկ իշխանութիւն Անդրկովկասեան Առանձին Կոմիտէ, կամ, կրճատուած, Օզակոմ անունով։ Յետագային, սեպտ. 3–ին գրի առնուեցին նրան տրուած ղեկավար «հրահանգները», որոնք հետեւեալն էին.

«1. Իր գործունէութեան մէջ Առանձին Կոմիտէն անմիջապէս ենթարկուելու է ժամանակաւոր կառավարութեան։ 2. Առանձին Կոմիտէի մէջ կենտրոնանում է Անդրկովկասի բոլոր քաղաքական գործերի տեղական բարձրը վարչութիւնը։ 3. Կոմիտէին յանձնուած իշխանութեան էութիւնը բացառապէս գործադիր է։ Առանձին Կոմիտէն չի կարող իր իշխանութեամբ սահմանել ո՛չ մի նոր օրէնք կամ վերացնել գոյութիւն ունեցող որեւէ օրէնք։ 4. Առանձին Կոմիտէի իրաւունքների եւ պարտականութիւնների չրջանը երկրի կառավարութեան գործում որոշւում են կովկասեան փոխարքայութեան օրէնքներով, ա՛յն սահմանափակումով, որ Առանձին Կոմիտէի իշխանութիւնը տարածւում է միայն Անդրկովկասեան նահանգների ու չրջանների վրա»։

Սկզբում, Օզակոմը ունէր աւելի անորոշ ծրագիր. «1. Ապահովել իրականացումը խղճի ազատութեան՝ կազմակերպելով բոլոր դաւանանքների հոգեւոր գործերը. 2. Սահմանել երկիրը կառավարելու կարգ՝ նրա կեանքի բոլոր չրջաններում՝ հայրենիքի ծառայութեան կոչելով տեղական հասարակական ուժերը. 3. Նոր կարգի պահանջների համապատասխան՝ վերակազմել քաղաքային ինքնավարութիւնը եւ միջոցներ ձեռք առնել, որպէսզի անմիջապէս ամենալայն սկզբունքներով դաւառական ինքնավարութիւններ մտցուեն, ընտրովի հաշտարար դատավարութիւն հաստատուի եւ վերակազմուի դիւղա–

կան խիստ թերի դատարանը»։ Այլ եւ միջոցներ ձեռք առնեն՝ կարգաւորելու հողային, աշխատանքի, հաղորդակցութեան եւ այլ խնդիրները։

Այսպիսի լիազօրութիւններով օժտուած՝ Անդրկ. Առանձին Կոմիտէն, մարտ 16–ին, հասաւ Թիֆլիս, ուր գտաւ արտակարգ խանդավառ ընդունելութիւն ազգաբնակութեան բոլոր խաւերի ու կազմակերպութիւնների կողմից։ Նա բաղկացած էր 5 հոգուց. նախագահ՝ Խարլամով, անդամներ՝ Ա. Ձխենկելի, Կիթա Աբաշիձէ, Մ. Ջաֆարով եւ Մ. Պապաջանեան։ Վրացիները ամէն միջոց գործ էին դրել, որպէսզի ունենան աւելի անդամ, մի բան, որ սաստիկ դժգոհութիւն առաջ բերեց բոլորի մէջ։

Հայկական լայն խաւերը գոհ չէին մասնաւորապէս Օզակոմի հայ ներկայացուցչութիւնից։ Մինչ վրացի ու թուրք անդամները հարազատօրէն ներկայացնում էին իրենց ազգի ընկերային–քաղաքական շերտաւորումն ու տրամադրութիւնները, Մ. Պապաջանեանը արտայայտիչ էր հայկական շատ նօսր՝ բուրժուական խաւերի, այն էլ միայն կադետական կուսակցութեան փոքրաթիւ խմբակի։ Այդ պատճառով նա կտրուած էր հայ իրականութիւնից։ Այս փաստը լայնօրէն օգտագործւեց իր վրացի եւ թուրք պաշտօնակիցների կողմից, որոնք Օզակոմի կեանքի առաջին օրերից հէնց բռնեցին ազգային ուղղութիւն եւ համապետական իշխանութիւն լինելուց աւելի՝ ներկայացնում էին իրենց ազգը, աշխատում էին նախ եւ առաջ կարգադրել իրենց ազգին վերաբերւող գործերը։ Աշխատանքի բաժանումն էլ այդ հաշւով էր կատարւած։ Հայ պատգամաւորին տրւել էր արդարադատութեան եւ նման, ա՛յն օրերի համար, անարժէք գործերի ղեկավարութիւնը, մինչ ներքին գործերը վերցրել էր Ձխենկելին, հաղորդակցութիւնը՝ Ջաֆարովը եւ այլն։

Հասկանալի է, որ այս ձեւով կազմւած և նման մտայնութեամբ առաջնորդւող մի իշխանութիւն չէր կարող լինել հեղինակաւոր։ Եւ, յիրաւի, նրա կազմած յանձնաժողովները մնացին մեռած մարմիններ. նրա հրատարակած կարգադրութիւններից քչերն էին կատարւում։ Օր աւուր, նրա ազդեցութիւնն ընկաւ ժողովրդի աչքին եւ, վերջ ի վերջոյ, նրա իշխանութիւնը սահմանափակւեց Թիֆլիսի պալատով։

Դժբախտ կազմ ու տխուր վախճան ունեցաւ Անդրկովկասեան Առանձին Կոմիտէի գործունէութիւնը, բայց սկզբի օրերին նրա հետ մեծ յոյսեր էին կապւում։ Սպասւում էր, որ նա կը դարմանէ հին ռեժիմի բացած վէրքերը, կեանքի կը կոչէ նոր հիմնարկութիւններ, կանցկացնէ բարենորոգումներ, կը մեղմացնէ պարէնաւորման տագնապը, ազգային հակամարտութիւնները, երկրին կը տայ արդարամիտ ու կորովի իշխանութիւն, կ'ուժեղացնէ ռազմաճակատի պաշտպանութեան գործը։ Դրանցից եւ ո՛չ մէկը տեղի չունեցաւ։ Ընդհակառակը, քայքայումն ու կեանքի պայմանների դժւարացումը աճեց ու զարգացաւ անընդհատ։

Յեղափոխութեան առաջին շրջանում կուսակցութիւններն ու կովկասեան ժողովուրդները, ընդհանուր առմամբ, տարբեր էին գալիս համապետական գաղափարներով եւ աշխատում էին իրենց ազգային ձգտումները հաշտեցնել համառուսական պետական շահերի հետ։ Ազգային ուրոյն խըն–

դիրներ յարուցանելուն դէմ էր եւ բանակը: Այսպէս, կովկասեան բանակի համագումարը, որ բացուեց Թիֆլիսում մարտ 5-ին, մերժեց լքաղաւել ազգային հարցով՝ գտնելով, որ «ազգային հարցի լուծումը իր ամբողջութեան մէջ հնարաւոր է միայն Սահմանադիր ժողովում: Այս հարցը լուծելու միւս բոլոր փորձերը մինչեւ Սահ. ժողով վտանգաւոր են եւ անթոյլատրելի»: Իսկ բանուորների եւ գիւղացիների շրջանային ժողովում, յունիսին, Ն. Ժորդանիան հետեւեալ ձեւով էր ներկայացնում ազգային խնդիրը.

Նա ազգային շարժումը համարում էր հետեւանք մի ազգի բուրժուազիայի քաղաքական իշխանութեան տիրանալու ձգտումի, ինչպէս նաեւ աղնւականութեան՝ իր նախկին դիրքերը պահելու ցանկութեան: Բանուորութեան եւ գիւղացիութեան ազգային խնդիրը իր լեզուն ազատ գործածելու ցանկութեան մէջ է: «Մինչդեռ բուրժուազիան եւ աղնւականութիւնը ձգտում են քաղաքական տիրապետութեան, բանուորութիւնն ու գիւղացիութիւնը հետապնդում են զուտ մշակութային նպատակներ: Այս հիման վրա բուրժուա եւ աղնւական կուսակցութիւնները պահանջում են ազգային հարցի լուծումը պետական ինքնօրինութեան իմաստով, իսկ բանուորութիւնը պահանջում է ազգային ինքնավարութիւն»:

«Ազգային ինքնավարութիւնը հնարաւոր է որոշ բնաշխարհի մէջ, եթէ որեւէ ազգ այնտեղ մեծամասնութիւն է կազմում: Անդրկովկասեան երեք խոշոր ժողովուրդներ կան — վրացիներ, հայեր եւ թուրքեր: Այն բնաշխարհների համար, ուր որեւէ ազգ մեծամասնութիւն ունի, կազմւում է ազգայինբնաշխարհիկ ինքնավարութիւն. ազգային տեսակէտով խառն շրջանների մէջ՝ խառն ինքնավարութիւն՝ ամէն ազգի տալով ինքնօրինութիւն մշակոյթի խնդրում:

«Ֆեդերացիան, իբրեւ ազգային հարցի լուծում ընդունելի չէ, որովհետեւ նա չի համապատասխանում տնտեսական եւ հասարակական զարգացման: Ֆեդերացիա նշանակում է պետութիւնների միութիւն, մինչդեռ մի պետութեան կազմաւորումը անջատ պետութիւնների՝ չի համապատասխանում պատմութեան ընթացքին: Ռուսաստանի համար հնարաւոր է մի ճանապարհ — կենտրոնական ռուսական հանրապետութիւն եւ ազգ-շրջանային ինքնավարութիւններ: Այդ ինքնավարութեանց իրաւասութիւնները պէտք է լինեն հետեւեալը:

1) Դպրոց (տորին, միջին, բարձր): 2) Ժողովրդական առողջապահութիւն, անասնաբուժութիւն: 3) Տեղական բնոյթ ունեցող հաղորդակցութեան միջոցներ: 4) Ձկակցութիւն տեղական գիւղատնտեսական եւ առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկների: 5) Հողերի շահագործում: 6) Դատարան: 7) Քաղաքային ձեռնարկներ: 8) Տեղական կարիքների համար հարկեր հաւաքելու իրաւունք: 9) Կառավարութիւն, գործադիր իշխանութիւն: 10) Կենտրոնում հրատարակւած օրէնքների գործադրութիւն: 11) Օրէնսդրական նախաձեռնութիւն»:

Այս ծրագիրը կազմեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի ա՛յն ժամանակւայ գործունէութեան հիմքը: Նա, ըստ ամենայնի, համապատասխանում էր

«յեղափոխական դեմոկրատիայի» ցանկութիւններին: Սակայն, որքան էլ արտայայտում վրաց ժողովրդի իրական բաղձանքները եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի գործնական քաղաքականութիւնը — այդ կարելի է ըմբռնել, եթէ ի նկատի առնենք նրանց ներքին-ազգային աշխատանքը: Թւում է, թէ վրաց ազգի քաղաքական ապրումներն աւելի ճիշտ եւ անկեղծ ներկայացնում էին վրաց ազգային-դեմոկրատները, որոնք իրենց համագումարում, յունիսին, բանաձեւել էին հետեւեալ պահանջները. «1. Վրաստանում պէտք է հաստատուի քաղաքական-հողային ինքնավարութիւն՝ ռամկավար-հանրապետական կազմի սկզբունքներով: 2. Ինքնավար Վրաստանի սահմանադրութիւնը մշակում է Թիֆլիսում գումարւած Ազգային Սէյմը: 3. Վրաց Սահմանադիր ժողովի ընտրութեան մասնակցում են Վրաստանի բոլոր չափահաս քաղաքացիները, առանց սեռի, դաւանանքի եւ ազգի խտրութեան, ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քւէարկութեան սկզբունքով: 4. Վրաց ինքնավար օրէնսդրութեան եւ կառավարութեան են ենթարկւում, Վրաստանի հողի սահմաններում, բոլոր հարցերը, բացառութեամբ հետեւեալների. ա) պատերազմ եւ խաղաղութիւն. բ) արտաքին քաղաքականութիւն եւ պետական բիւջէ:

Սա այն սաղմն է, որից աճեց ու զարգացաւ Վրաստանի անկախութիւնը եւ որին, սկզբում գաղտնի, ամաչելով, իսկ յետոյ բացայայտ կերպով միացան եւ վրաց սոցիալ-դեմոկրատները: Առհասարակ, պէտք է նկատել, որ յեղափոխութեան սկզբի ամիսներին, վրացի սոցիալ-դեմոկրատները վրաց ազգային խնդիրներում, յօժարութեամբ առաջ էին քշում ազգայնականներին, իսկ իրենք՝ պահելով միջազգային ու համառուսական դէմքն ու լեզուն՝ բաւականանում էին ձեռքի տակի օգնութեամբ: Ազգային-դեմոկրատների ջանքերով եւ վրացի սոցիալ-դեմոկրատների աջակցութեամբ, շատ շուտով, յայտարարւեց վրաց եկեղեցու անջատումը համառուսական ուղղափառ եկեղեցուց եւ վրաց կաթողիկոսութեան վերականգնումը:)*

Համապետական ոճ էին գործածում եւ մահմեդականները, թէեւ, վրաց ազգայնականների նման, նոյնպէս դնում էին ազգային կամ, աւելի ճիշտ, համիսլամական պահանջներ: Ռուսաստանի յեղափոխութիւնը նրանց համար երկնքից ընկած պարգեւ էր, որ գալիս էր ազատագրելու մահմեդական ազգին: Այս տրամադրութեան ցայտուն արտայայտիչը հանդիսացաւ կովկասեան մահմեդականութեան ներկայացուցիչների առաջին համագու-

---

*) Քիչ յետոյ, վրաց սոց.-դեմոկրատները դէն շպրտեցին այս թզենու տերեւն էլ: Նոյեմբեր ամսին, Թիֆլիսում գումարւեց վրաց ազգային համագումարը բոլոր դասակարգերի եւ կուսակցութիւնների կատարեալ համերաշխութեամբ: Ն. Ժորդանիան զեկուցում տւեց քաղաքական կացութեան եւ վրաց ազգի քաղաքականութեան մասին: Եւ համագումարը, միաձայնութեամբ ու խանդավառ ծափերով, ընդունեց նրա առաջադրած կէտերը.— 1) Վրաստանը, սեփական հողի վրա, պէտք է լինի ինքնավար եւ ունենայ ազգային օրէնսդրական մարմին. 2) Պէտք է որոշւեն Վրաստանի սահմանները՝ հարեւան երկրների հետ. 3) Վրաստանում ապրող ազգային փոքրամասնութիւններին պէտք է տրւեն մշակութային զարգացման երաշխիքներ. 4) Համառուսական Սահմ. Ժողովի չգումարւելու պարագային հրաւիրել համակովկասեան եւ առանձին ազգային սահմանադիր ժողովներ: Եւ այլն:

Ի՞նչ տարբերութիւն ազգային-դեմոկրատների ու այս ծրագրի միջեւ:



ԳՓՕ

Կամաւորական երկրորդ Գունդի հրամանատար

մարը, որ բացուեց Բագուում, ապր. 15-ին: Այդ համագումարում հանդիսաւորապէս յայտարարուեց մահմետական շիա եւ սիւննի աղանդների միութիւն, որ աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց ժողովականների մէջ: Ձեռք-ձեռքի՝ բեմ բարձրացան Մուֆթին ու Շէյխ-Ուլ-Իսլամը եւ ամենքի աչքի առջեւ հանդիսաւորապէս համբուրուեցին: Արտասանուեցին կրակոտ ճառեր մահմետական ցեղերի եղբայրութեան մասին: Առանձնապէս ուժեղ տպաւորութիւն թողեց համագումարի նախագահ Ալի Մարդան բէգ Թոփչիբաշեւի մահմետականութեան միութիւնը դրւատող ճառը:

Ազգային-քաղաքական հարցի մասին համագումարում զեկուցում ներկայացրեց «Աչըկ Սէոզ» թերթի խմբագիր եւ ապագայ Մուսաւաթի պարագլուխ Մահմէդ Էմին Ռասուլ Զադէն, որ պաշտպանեց Ռուսաստանը դաշնակցային հանրապետութեան վերածելու անհրաժեշտութիւնը: Դաշնակցութեան, իրրեւ հիմք, պէտք է դրւէր ազգային սկզբունքը, ազգային ամենալայն ինքնորոշման իրաւունքը: Ռուսաստանը պէտք է կազմէր ինքնավար ազգերի միութեանց միութիւն, որի կենտրոնական իշխանութեան պէտք է վերապահւէր միայն արտաքին քաղաքականութիւնը, երկրի պաշտպանութեան գործը, հաղորդակցութեան միջոցները:

Ռասուլ-Զադէի զեկուցման վրա՝ համագումարը միաձայնութեամբ որոշեց. «1. Ռուսաստանի ապագայ պետական-քաղաքական կազմը պէտք է լինի ամկավար հանրապետութիւն՝ հողային-պաշնակցային սկզբունքներով, որպիսի կազմով միայն հնարաւոր է լայնօրէն ապահովել մահմետական ժողովուրդների ազգային շահերը: 2. Ընդունելով, որ մահմետական կրօն դաւանող բոլոր ժողովուրդները կապուած են իրար հետ հոգեւոր-մշակութային կեանքով՝ մահմետականների համագումարը անհրաժեշտ է համարում ամբողջ Ռուսաստանում առաջ բերել ընդհանուր մահմետականութեան կենտրոնական մի մարմին՝ օրէնսդրական իրաւասութիւններով՝ պաշտպանելու համար վերեւ առաջադրուած նպատակները»:

Պատերազմի խնդրում համագումարը որոշեց. «ամբողջութեամբ յարել Ռուսաստանի դեմոկրատիային, որը պահանջում է պատերազմը վերջացնել առանց հողագրաւումի եւ ռազմատուգանքի»:

«... Կովկասեան ազգութիւնների նկատմամբ համագումարը անհրաժեշտ է դատում սերտ ու համերաշխ յարաբերութիւն ստեղծել ամենքի հետ՝ նպատակ դնելով իրականացնել կեանքում փոխադարձ համերաշխութեան եւ յարգանքի վրա հիմնուած ամկավար իդէալները»:

Կովկասեան ժողովուրդների մէջ, ըստ էութեան, ամենից աւելի համապետական հողի վրա կանգնած էին հայերը: Յեղափոխութեան սկզբին երկու խնդիր էր դրաղեցնում նրանց. թիւրքահայկական հարցի լուծումը եւ Անդրկովկասի վարչական վերաբաժանումը՝ ազգագրական սկզբունքով:

Առհասարակ, վարչական նոր սահմանագծման խնդիրը կովկասեան ժողովուրդներին ամենից շատ դրաղեցնող ու փոխադարձ դժգոհութիւն պատճառող խնդիրներից մէկն էր: Տակաւին հին ռեժիմի օրով, փոխարքայութեան կից դումարուած դեմոուոյական խորհրդակցութիւնների միջոցին,

1916 թ. ապր. 26 — մայիս 7-ին, հայ ներկայացուցիչները դրել էին նոր «գիւղատնտեսական շրջաններ» կազմելու առաջարկը, բայց մնացել էին փոքրամասնութեան մէջ. վարչական նոր բաժանման թաքուն ծրագիր էր այդ։ Յեղափոխութիւնից յետոյ, երբ զեմստւօ մտցնելու հարցը ստացաւ գործնական նշանակութիւն, հայերը նորից առաջ քաշեցին վարչական վերաբաժանման պահանջը, առանց որի նոր զեմստւոյի մէջ հայերը, գրեթէ ամէն տեղ, պիտի կազմէին փոքրամասնութիւն։ Յեղափոխութիւնը պարտաւոր էր սրբագրել հին իշխանութեան գործած չարիքները՝ վերացնելով կամայականօրէն գծուած անարդար սահմանները։ Օզակոմի հայ անդամի կողքին կազմուած միջկուսակցական մարմինը, գիւղատնտեսներ Յ. Փիրալեանի, Ս. Կամսարականի եւ Ալ. Շահխաթունեանի ու Գ. Խատիսեանի աշխատանքով, մշակել էր Անդրկովկասի վարչական բաժանման նոր ծրագիր, որ եւ Ալ. Շահխաթունեանի միջոցով ուղարկւեց Պետրոգրադ պատշաճ իշխանութիւններին ընդունել տալու համար։

Յեղափոխութիւնից յետոյ Պետրոգրադում կազմւել էր Սահմանադիր Ժողովի գումարման նախապատրաստական աշխատանքները կատարող մի յանձնախումբ, որի մէջ ներկայացուցիչներ ունէին Ռուսաստանի բոլոր ազգերը։ Հայերի կողմից այդ աշխատանքներին մասնակցում էր Գ. Խատիսեանը։ Նոյն ժամանակ ներքին գործոց նախարարութեան կից գործում էր տեղական ինքնավարութիւնների յանձնախումբը Բ. Վեսելովսկիի նախագահութեան տակ։ Օգտւելով առիթից՝ Բ. Վեսելովսկին հրաւիրեց խորհրդակցութեան Պետրոգրադ գտնւող անդրկովկասցի գործիչներին՝ Անդրկովկասի զեմստւոյական հարցը քննելու նպատակով։ Հայերից այդ խորհրդակցութեան մասնակցեցին Ալ. Շահխաթունեանը եւ Գ. Խատիսեանը, որոնք կարողացան համոզել, զեմստւօ մտցնելուց առաջ, Անդրկովկասը ենթարկել վարչական նոր բաժանման։ Քննութեան առնւեց Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցչի առաջարկած նախագիծը, որը, երկու խօսքով, հետեւեալն էր.—

Արեւելեան Անդրկովկասը բաժանւում էր երկու մասի՝ թրքական եւ հայկական։ Հայկական մասի մէջ մտնելու էին Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր եւ Շուշի գաւառների լեռնային հայաբնակ մասերը եւ ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի թուրք գիւղական հասարակութիւններից, որոնք միացւելու էին Կարեադինի թրքական գաւառին։ Գանձակ քաղաքը բաժանւելու էր երկու մասի՝ թրքական եւ հայկական։ Ախալքալաքը, Լոռին եւ Ծալկայի հայկական մասը պէտք է միացւէին նոր կազմւելիք Ալեքսանդրապոլի նահանգին։

Այսպիսով, ստեղծւելու էր հոծ հայ ազգաբնակութիւն ունեցող մի շրջան՝ բաժանւած 4 նահանգի՝ Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի եւ Կարսի։ Համապատասխան ձեւով կազմւելու էր եւ հոծ թրքական շրջան։

Այս ծրագրի դէմ յանձնախմբում, ըստ էութեան, առարկեցին միայն վրացի ազգային-դեմոկրատները, որոնք գտնում էին, որ Ախալքալաքն ու Լոռին, իբրեւ վրացական սեփականութիւն, պէտք է մտնէին Վրաստանի



ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԴԷՊԻ ԷՐԶՐՈՒՄ

սահմանների մէջ։ Թուրք ներկայացուցիչները յայտարարեցին, թէ իրենք լաւ ուսումնասիրած չեն խնդիրը, համապատասխան լիազօրութիւն չունեն եւ, հետեւաբար, չեն կարող մասնակցել հարցի լուծման։ Յանձնախումբը, իր ամբողջութեան մէջ, հաւանութիւն տուեց հայկական նախագծին, որը յետոյ նախարարութեան կողմից ընդունուեց իբրեւ հիմք կառավարական օրինագծի։ Այս վերջինը ուղարկուեց Թիֆլիս՝ Օզակոմին, որը, մի ամսւայ ընթացքում, իր կարծիքի հետ միասին պէտք է վերադարձնէր նախարարութեան։ Օզակոմը նախագծի քննութիւնը յանձնեց միջազգային մի յանձնախմբի, որը ունեցաւ երկար խորհրդակցութիւններ, բայց կարելի չեղաւ յանգել ընդհանուր եզրակացութեան։ Առանձին ազգերի ներկայացուցիչների դիրքը յանձնախմբում լիովին երեւան բերեց քաղաքական այն ձգտումները, որոնցով առաջնորդուած էին այդ ազգերը։ Հայերը, բացի հայ սոցիալ-դեմոկրատներից, որոնք ինքնուրոյն կարծիք չունէին, պաշտպանում էին կառավարական նախագիծը. վրացի սոցիալ-դեմոկրատները, յանձին Ժորդանիայի եւ Ռամիշվիլիի, համաձայն էին հայկական ծրագրին. միւս կուսակցութիւնները չարունակում էին պնդել Ախալքալաքն ու Լոռին Վրաստանին միացնելու պահանջի վրա։ Թուրքերը հիմքից մերժում էին նախարարական նախագիծը. նրանք առաջարկում էին Անդրկովկասը բաժանել աւելի մանր վարչական — զեմստուոյական միութիւնների՝ այդ միջոցով կամենալով ապահովել մահմեդական տարրերի գերակշռութիւնը Կովկասում։ Այս տարակարծութիւններն ու վէճերը մինչեւ վերջ էլ մնացին չլուծուած եւ, ի վերջոյ, ճակատագրական դեր կատարեցին կովկասեան ժողովուրդների կեանքում։

Պէտք է նկատել, որ թէ՛ վարչական սահմանագծման եւ թէ այլ հարցերում, հէնց սկզբից, նկատելի դարձաւ թուրք-վրացական ընդհանուր հասկացողութիւն ու գործակցութիւն։ Բոլոր կարեւոր խնդիրներում, երբ հրապարակ էր գալիս կովկասեան ժողովուրդներին վերաբերուող ընդհանուր մի խնդիր, թուրք ու վրացի ներկայացուցիչները դուրս էին գալիս համերաշխ ու միացեալ ճակատով։ Յեղափոխութեան առաջին օրերից սկսած մինչեւ վերջ, թուրք-վրացական ընդհանուր ճակատը հայերի հետ առընչութիւն ունեցող բոլոր դէպքերում մնաց իրողութիւն, եւ այս հանգամանքը դարձաւ անդրկովկասեան կեանքի կարեւոր գործօններից մէկը։ Այդ դաշնի թէ բացայայտ գործակցութիւնը ունեցաւ չափազանց աղէտաւոր հետեւանքներ կովկասեան ժողովուրդների համերաշխ մէկ ընտանիք կազմելու տեսակէտից։ Վրաց-թրքական գործակցութիւնը, մասնաւորապէս այլանդակ ձեւերով արտայայտուեց անդրկովկասեան դիւղացիական համագումարում, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները եւ թուրք բէգերն ու ազալարները, ձեռք-ձեռքի տուած, պայքար մղեցին սոցիալիստ-յեղափոխականների եւ Հ. Յ. Դաշնակցութեան հողային բանաձեւի դէմ եւ կամենում էին հայ դիւղացութեան պարտադրել սոցիալ-դեմոկրատական հողային ծրագիրը։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՐԵՒՄՏԱՀԱՑՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Ասացինք արդէն, որ յեղափոխութիւնը չրջեց ամէն բան: Նոր դարաշրջան էր բացւում:

Կովկասը, ինչպէս եւ ամբողջ Ռուսաստանը, խելայեղ ոգեւորութեամբ ողջունեց բռնապետութեան անկումը: Հանդէսները, թափօրները, ժողովներն ու համագումարները իրար էին յաջորդում: Մամուլը արբեցած էր ազատութիւնից: Եւ ապագան ամենքին թւում էր այնպէս վարդագոյն: «Երբե՛ք, երբե՛ք, գրում էր «Հորիզոն»ը մայիս 1-ի խմբագրականում, ապագան չի թացել մեզ այնպէս գեղեցիկ, յաղթութիւնը՝ այնքան մօտ, ինչպէս այսօր՝ յոյսի ու յոյզի այս երազ օրերին...Գահեր են խորտակւում ու չղթաներ քանդւում, եւ թագակիր աւազակները դողում են աշխարհ անողոք դատաստանի առջեւ»:

«Յոյսի ու յոյզի օրեր» էին, մանաւանդ, մահւան տագնապում գալարուող արեւմտահայութեան համար:

Ապրիլ 27-ին ժամանակաւոր կառավարութիւնը, յատուկ կարգադրութեամբ, որոշեց Թիւրքահայկական դրաւած վայրերի վիճակը, որ կատարելապէս համապատասխանում էր հայերի այն ժամանակւայ բաղձանքներին: Այդ կարգադրութիւնը, որ լոյս տեսաւ «Ժամ. կառավարութեան Լրատու» պաշտօնաթերթի մէջ, հետեւեալն էր.

ժամանակաւոր կառավարութեան կարգադրութիւնը Թիւրքահայաստանի մասին

Ժամանակաւոր կառավարութիւնը, համաձայն յօդ. 42 եւ 43-ի Լահէյի հոկտ. 5/18 կօնվէնցիայի ցամաքային պատերազմի օրէնքների եւ սովորոյթների մասին, մինչեւ խաղաղութեան դաշնագրով Թիւրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը՝ կարգադրեց.

Յօդ. 1.— Թիւրքահայաստանի հողը՝ Ռուսաստանի զօրքերի դրաւած քաղաքացիական կառավարութեան տեսակէտից՝ վերացւում է կովկասեան իշխանութիւնների, այլ եւ կովկասեան ռազմաճակատի զինուորական իշխանութիւնների տնօրինութիւնից եւ անմիջապէս ենթարկւում է ժամ. Կառավարութեան:



ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽՈՒՄԲ ՄԸ ՊԵԿԱՎԱՐՆԵՐ ԻԳՏԻՐԻ ՄԷՋ



ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՄԵԼԻԹԱՆԳԵԱՆ
Առաջնորդ Ատրպատականի



ԻՒՂ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԳԱԼՈՒՍՏ ԱԼՈՅԵԱՆ
(Սպանուած՝ Բայազէդի մէջ)

Յօդ. 2.— Առաջին յօդուածում յիշուած լիազօրութեանց, ինչպէս եւ Թիւրքահայաստանի շրջանների կառավարութեան 5 յունիս 1916 թ. ժամանակաւոր օրէնքով այս շրջանների ընդհանուր նահանգապետին յանձնուած իրաւունքների իրագործումը ժամ. կառավարութեան կողմից վստահւում է իր նշանակած Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարին:

Յօդ. 3.— Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարի մօտ դրնւում է քաղաքացիական մասի օգնականը:

Յօդ. 4.— Ընդհանուր կոմիսարը, իր քաղաքացիական մասի օգնականի զեկուցման համաձայն, անմիջապէս ներկայացնում է ժամ. կառավարութեան իր նկատումները Թիւրքահայաստանի շրջանների կառավարութեան 5 յունիս 1916 թ. ժամանակաւոր օրէնքի յանկալի լրացումների եւ փոփոխութիւնների մասին:

Ստորագրեցին՝ Նախարարապետ Լվով
Արտաքին գործերի նախարար Պ. Միլիւկով
ժամ. կառավարութեան գործերի վարիչ Վլադ. Նաբօկով

26 ապր. 1917 թ.

Այսպիսով, Թիւրքահայաստանի խնդիրը նորից դրւում էր միջազգային հողի վրա, հանւում էր կովկասեան միջգեղային կրքոտ փոխյարաբերութիւնների միջավայրից եւ կապւում ուղղակի կենտրոնական կառավարութեան հետ: Սա ինքնին մեծ յաջողութիւն էր հայերի համար:

Բացի այդ, նախատեսւում էր, որ ընդհանուր կոմիսարի օգնականը լինելու էր հայ եւ, ուրեմն, զբաւած վայրերի վարչական կազմակերպումը եւ, մանաւանդ, փաստական կառավարութիւնը ընթանալու էր ըստ ամենայնի հայկական ցանկութիւնների համաձայն:

Այդպէս էլ եղաւ: Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսար նշանակւեց մի պարկեշտ ռուս պիւրոկրատ՝ զօր. Աւերիանովը, իսկ նրա քաղաքացիական մասի օգնական՝ բժ. Ց. Զաւրեանը — մէկը այն լուսամիտ ու զգաստ պետական գործիչներից, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրել էին հայկական դատին: Զաւրեանը աչքի ընկնող դեր էր կատարել եւ 1913–14 թ. բարենորոգումների շրջանում, գործակցել էր Պօղոս Նուպարին պատերազմի ընթացքին, աշխատել ռուս դիւանագիտութիւնը չահագրգռել հայկական հարցով եւ լայն ծանօթութիւններ ու կապեր ունէր, ջերմ համակրանք էր վայելում ռուս քաղաքական շրջաններում: Նա մտերիմ կապերով կապւած էր ռուսական յեղափոխութիւնը անձնաւորող Ա. Քերենսկիի հետ: Նրա նշանակումը զբաւած վայրերի վարչութեան զեկավարութեան պաշտօնին պրաւական էր, որ այս անգամ խօսքը կարող է վերածւել գործի:

Եւ գործը չուշացաւ: Արագ կերպով մշակւեց Թիւրքահայաստանի զբաւած վայրերի վերաբնակեցման ծրագիրը, նշանակւեց վարչութեան նոր կազմ, մեծ մասամբ հայերից, յատկացւեցին մեծագումար վարկեր եւ ձեռք առնւեցին միջոցներ, որ գաղթականութիւնը վերադառնայ իր տեղերը:

Ասենք, առանձին միջոցների պէտք էլ չկար, քանի որ ժողովուրդը ինքը, երբ վերացան կապանքները, տարերային թափով մղուեց դէպի երկիր:

Կարճ ժամանակամիջոցում, Թիւրքահայաստանը, մանաւանդ, Վասպուրականի եւ Տարօն–Տուրուբերանի շրջանները վերակենդանացան: Ամէն տեղ բռնել էր հայ ազգաբնակութիւնը: Գիւղերը վերաշինւում էին: Մշակւած արտերը ծածկւում էին կանաչով: Աշխատանքը եռում էր: Մի ձեռքը հրացան, միւսում մաճ ու բահ՝ հայ գիւղացին ողողում էր քրտինքով հայրենի հողը եւ անօրինակ ոգեւորութեամբ ու եռանդով վերաշինում այն, որ քանդել էր բարբարոս թշնամին կամ պատերազմի դաժան չաստւածը:

Բացի կառավարական հիմնարկութիւններից, դրաււած վայրերում աշխատում էին եւ բարեգործական ու մշակութային մարմիններ՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան Կոմիտէն, Քաղաքների Միութիւնը, Գաղթ. կենտր. կոմիտէն, Մոսկւայի Կոմիտէն, զանազան հայրենակցական ընկերութիւններ, որոնց ներկայացուցիչներն ու գործակալները դրաււած էին զանազան վայրերում: Բազմաթիւ գործիչներ հետզհետէ անցան դրաււած վայրերը՝ լծւելով աշխատանքի՝ պետական ու հասարակական ասպարէզներում: Նրանց մէջ էին Ա. կաթ. կարճիկեանը, Ռ. Տէր Մինասեանը, բժ. Ա. Պօղոսեանը, Կ. Համբարձումեանը, Վ. Քրմոյեանը, Կ. Սասունին, Տ. Զօրեանը, Սասունցի Մանուկը, Սասունցի Մուշեղը, Սիրական Տիգրանեանը, Վահան Փափազեանը, Յովսէփ Թաղէոսեանը, Մ. Դարմանեանը, Մ. Տէր Գրիգորեանը, Բ. Արոյեանը, Տ. Ադամալեանը, Հ. Մակարեանը եւ շատ ուրիշներ՝ բժիշկներ, դիւղատնտեսներ, դեղագործներ, պետական քոյրեր, որբահաւաքներ ու որբ խնամողներ, վարչական պաշտօնեաներ, մարտիկներ:

1918 թւի սկսւը Վան—Մուշ—Բասէն տարածութիւնը բնակեցւած էր հայ ազգաբնակութեամբ, հարկաւ, ոչ խիտ դիւղերով, եւ հայկական վիլայէթները դարձել էին իսկական մօքով Հայաստան: Մօտաւոր հաշւով, դրաււած վայրերի բնակչութիւնը դասաւորւած էր հետեւեալ ձեւով. Բայազէտ եւ շրջակայքը՝ 10,000 մարդ, Դիադին՝ 5,000, Ալաշկերտ՝ 30,000, Բասէն՝ 22,000, Խնուս՝ 28,000, Կարին եւ դաշտը՝ 6,000, Դերջան՝ 4,000, Երզրնկա՝ 3,000, Ճորոխի հովիտը՝ 3,000, Բուլանըխ–Մանազկերտ՝ 4,500, Տրապիզոն՝ 1,500, Վանի նահանգ՝ 25,425 — ընդամէնը՝ 142,425 մարդ*): Տեղական վարչութիւնը կրում էր զրեթէ զուտ հայկական կերպարանք. տեղ-տեղ զոյութիւն ունեցող ռուս պաշտօնէութիւնը ձեւական դերք ունէր եւ շատ քիչ էր ազդում գործերի վրա: Բացի վարչութիւնից, կային ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք պահակի դեր էին կատարում: Ժողովուրդն ինքն էլ զինւած էր եւ իւ վիճակի պաշտպանելու իրեն: Բացի այդ, Վանում, Մուշի շրջանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումի եւ Երզնկայի կողմերը գործում էին զուտ հայկական զօրամասեր: Որոշ վայրերում հիմնւած էին որբանոցներ, որոնց մէջ հաւաքւում ու խնամւում էին որբերը: Կարեւոր կէտերում կային բազմաթիւ աննդակայաններ, հիւանդանոցներ, բուժարան-

*(Տես՝ «Հորիզոն», 1917 թ. յուն. 1.

ներ: Մի խօսքով, Թիւրքահայաստանը յարութիւն էր առնում մոխիրների տակից, եռանդով վերաշինւում ու պատրաստւում էր նոր կեանքով ապրելու համար*):

Այս առթիւ հետաքրքրական են Թիֆլիսի այն օրերի հայ թերթերի հաղորդած տեղեկութիւնները: Այսպէս, «Հորիզոն»ում կարդում ենք. «Երկրի մէջ այս տարի կրթական-կուլտուրական կեանքը աւելի փայլուն չրջան ունեցաւ, քան անցեալ տարիներուն: Վանի մէջ գոյութիւն ունեն մօտ 16 դպրոցներ: Դպրոցներ կան նաեւ երկրի ամէն մէկ անկիւնը: Կան նաեւ որբանոցներ: Դպրոցական-որբանոցային հսկողութիւնը կը գտնւի Արեւմտահայ Մորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են դլխաւորաբար, որ կը վարեն դործը: Երկրի որոշ վայրերու մէջ բացւած են նոյնպէս դրադարան-ընթերցարաններ: Մէկ-մէկ կը պատահեն նոյնպէս երեկոյթներ, ներկայացումներ եւ այլն»:

1917 թւի վերջերին, Թիֆլիսի «Ազատամարտ»-ում դրաււած վայրերից վերադարձած մի ճանապարհորդ դրում էր. «Տասնեակ վերստերով ճամբայ կտրեցինք, թխմարի ամբողջ երկարութեամբ եւ չդտանք ո՛չ մէկ թիզ հող առանց վարելու. միայն մէկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ, սակայն, քիչ ետք նկատեցինք, որ հեռուէն հայ ծեր դիւղացին խոիք ձգած էր հողին մէջ եւ սկսած էր վարել միակ անհերկ հողը»:

Նոյնն էր պատկերը, ընդհանրապէս, եւ միւս չրջանների համար: Հ. Գիւղատնտ. Ընկերութիւնը եւ Հայաստանի Կոմիսարիատը դերմարդկային ճիգ դործ դրին ժողովրդին սերմացու ու լծկան հասցնելու համար, եւ երկիրը ծածկուեց կանաչ արտերով:

Ռուսական իշխանութիւններն ու զօրահրամանատարներն էլ օժանդակում էին հայերին: Առաջւայ թշնամական վերաբերումը հետզհետէ չքանում էր: Դեռ պատահում էին անհատ պաշտօնեաներ կամ հրամանատարներ, որոնք խէթ աչքով էին նայում այս «Հայաստանի կառուցման» վրա, բայց ընդհանուր քաղաքականութիւնը հայանպաստ էր: Հրամանատարութեան համար հայերի ներկայութիւնը ուսւ բանակի թիկունքում օգտակար էր թէ ռազմավիտական տեսակէտով եւ թէ, մանաւանդ, այն պատճառով, որ հայերի մշակած արտերից զօրքը կը ստանար պարէն եւ անասուններին կեր: Հաղորդակցութեան միջոցների խանդարումով՝ Ռուսաստանից հացահատիկ ու խոտ հասցնելը դառնում էր աւելի եւ աւելի դժւար: Հայերի մշակած հողերը, մասամբ, կը լրացնէին այդ պակասը:

Առհասարակ, զարմանալի կենսունակութեան եւ ձեռներէցութեան ոդի յայտնաբերեց արեւմտահայ ժողովուրդը: Ամենատաժանելի պայմաններում, Նիկոլայ Նիկոլայեւիչի ռեժիմի տակ, նա պահեց իր հոգեկան արիութիւնը եւ կազմակերպեց իր հասարակական կեանքը: Յեղափոխութիւնից յետոյ, նա փութաց ամբողջապէս իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը: Այդ

*) Թիւրքահայ գրաււած հողերի մասին տեղեկութիւններ կարելի է ստանալ Կ. Սասունեի «Ցաճկահայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ» (1914—1918), Բոստոն 1927 գրքից:

տեսակէտից ահագին դեր կատարեց Արեւմտահայ Առաջին Համագումարը, մայիս 2—11-ին, Երեւանում։

Համագումարը հրաւիրուեց միջկուսակցական կազմակերպիչ մարմնի կողմից եւ բաղկացած էր 80 պատգամաւորներից ու խորհրդակցական ձայնի իրաւունք ունեցողներից, որոնցից 15 հոգին Թիւրքահայաստանից, 27 Կովկաս ապաստանած գաղթականներից, 14 ընկերութիւններից ու միութիւններից, 8 կուսակցութիւններից, 3 Թիւրքահայ մամուլից, 6 հրաւիրեալներ եւ 11 խորհրդակցական ձայնով կանչուածներ։ Համագումարին ներկայացուցիչ էր ուղարկել եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Հանդիսաւոր բացումը կատարեց Անդրանիկը, իսկ բացման խօսքը ասաց Արամը, որի ճառը թողեց խորունկ տպաւորութիւն ամենքի վրա։

Համագումարը հրաւիրուած էր միայն գաղթականական խնդիրներ լուծելու նպատակով, բայց անհրաժեշտօրէն տարաւ նաեւ քաղաքական գունաւորում։ Նրա հանած որոշումներն ու, մանաւանդ, ստեղծած մարմինը յետագային խաղացին խոշոր գործնական դեր արեւմտահայերի կեանքում։

Համագումարը երկարօրէն զբաղուեց գաղթականական ու նպաստաբաշխման գործի քննութեամբ եւ ապագայ գործունէութեան ծրագրի մշակումով։ Ի վերջոյ, ընդունեցին հետեւեալ երկու բանաձեւերը, որոնցից երկրորդը, դէպքերի բնական զարգացումով, դարձաւ մի տեսակ սահմանադրութիւն։

Առաջին բանաձեւը, որ առաջարկեց Վահ. Փափազեանը եւ ընդունեց 51 քուէով 8-ի դէմ, արտայայտում էր համագումարի վերաբերումը դէպի գաղթականական կամ, ինչպէս այն ժամանակ ասում էին, փախստականական մարմինների անցեալ գործունէութիւնը։

Բանաձեւը ասում էր. «Թիւրքահայ համագումարը լսելով պատգամաւորներու զեկուցումները եւ փախստականական ազգային մարմիններէ ոմանց ներկայացուցիչներու բացատրութիւնները փախստականներու օգնութեան գործի կազմակերպման եւ վիճակի մասին, կը նկատէ, որ փախստականներու օգնութեան գործը վարող ազգային մարմիններու գործունէութիւնը՝ չնայած անոնց նպատակներու եւ միջոցներու բացարձակ համանմանութեան՝ չէ ունեցած մէկ ընդհանուր ուղեգիծ եւ գործելակերպ, ինչպէս նաեւ միջոցներու ու գործերու կենտրոնացում եւ ներդաշնակութիւն։

«Որ օգնութեան գործին մէջ տեղի են ունեցած խոշոր թերութիւններ, ինչպէս՝ անմեթոդ գործելակերպ, իրական քօնթրօլի բացակայութիւն, պաշտօնական կազմի անփոյթ ընտրութիւն, փախստականներու իրաւական մասնակցութիւնը չէ յարգուած, կանոնաւոր հաշուետուութեան բացակայութիւն, որոնք առիթ տուած են բազմաթիւ բողոքներու եւ կասկածներու։

«Որ փախստականներու օգնութեան գործը ընդհանուր առմամբ նկատուած է իբր սոսկ մարդասիրական ձեռնարկ եւ տարուած է ըստ այնմ՝ ղեկավարուելով գլխաւորապէս նպաստ տալու սկզբունքով, փոխանակ աշխատանք տալու, մինչդեռ հալածական Թրքահայութեան գոյութեան պահպանման



ԲԱՍԵՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ



ՍԱՓՕ ՅԱԿՈԲԵԱՆ
Բասէնի գաւառապետ



ԼԵՒՈՆ ԷՍԷՑԵԱՆ
«Մահուան Գունդ»ի սպայ

գործը պիտի նկատուէր զերազանցապէս ազգային–հասարակական նշանակութիւն ունեցող գործ։

«Միւս կողմէ, սակայն, բոլոր յիշեալ թերութիւններով հանդերձ թրքահայ համագումարը փախստականական կազմակերպութիւններու դոյութիւնը օգտակար կը համարէ հետեւեալ նկատումներով.

«Որ անոնք ցարդ ձեռք բերած են գործին անհրաժեշտ փորձառութիւնը, հաստատած են կապեր եւ մօտէն ծանօթ են ուս միջավայրին ու պայմաններուն։

«Որ արդէն ստեղծած եւ ընթացք տուած են որոշ հիմնարկութիւններու։

«Որ փախստականներու դոյութիւնը պահելու գործը համագումարը կը նկատէ իբր համազգային գործ. հետեւաբար անոր օգնութիւնը պիտի կատարւի բոլոր հատուածներու կողմէ հաւասարարար, եւ

«Թրքահայութիւնը ստատնդական եւ տնտեսական քայքայման այս վիճակին մէջ չատ տեսակէտներով հնարաւոր եւ ցանկալի չէ համարեր միայնակ վարելու իրերօգնութեան գործը առանց փախստականներու մարմիններու գործակցութեան։

«Գործակցութեան սոյն հիմերու համաձայն ծրագրի մը պատրաստութեան համար համագումարը այդ խնդիրը կը յղէ համապատասխան յանձնաժողովին»։

Երկրորդ բանաձեւը ընդունեց միաձայնութեամբ եւ ձեւարկերպում էր յետագայ անելիքները.—

«Համաչխարհ. պատերազմի հետեւանքով մեր քայքայուած ժողովրդի վերածնունդին նուիրուած աշխատանքը նպատակ պիտի ունենայ՝ 1) Թրքահայ ժողովրդի ֆիզիքական դոյութեան պահպանումը եւ անոր քայքայուած տնտեսութեան վերականգնումը. 2) Հայրենիքի վերաշինութիւնը. 3) Նոր սերնդի կրթական, ֆիզիքական եւ քաղաքացիական դաստիարակութիւնը։

«Այդ նպատակներուն իրագործման համար համագումարը նկատի ունի հետեւեալ երեք հիմնական սկզբունքները. 1) Տեղական կազմակերպութիւններ յառաջացնել գրաւուած վայրերու հայութեան, ինչպէս նաեւ Ռուսաստան եւ Պարսկաստան ապաստանած հայ փախստականութեան մէջ. 2) Փախստականական գործերու մէջ իրագործել արեւելահայերու և արեւմտահայերու սերտ համագործակցութիւնը. 3) Օգնութեան գործի վերկալարութիւնը եւ դրամական միջոցները կենտրոնացնել մէկ կենտրոնական մարմնի ձեռք։

«Սոյն սկզբունքներու իրագործման գործօններն են՝ համագումար եւ կեդրոնական խորհուրդ։

«Կեդր. խորհուրդի անդամներու կէսը կընտրւի թրքահայ համագումարի կողմէ, իսկ միւս կէսը ռուսահայ փախստականական պէսպէս մարմիններու եւ կամ ռուսահայ համագումարի կողմէ։ Այժմ խորհրդի համար կընտրւի 15 անդամ եւ 10 փոխանդամ։ Իսկական անդամներու թիւի վերջնական ճշտումը կը թողնւի ռուսահայ մարմիններու ընտրութեան ժամանակ։

«Խորհուրդը փախստականական ընթացիկ գործերը կը վարէ իրմէ ընտրուած բիւրօի միջոցով, որու անդամները վճարովի պիտի ըլլան:

«Խորհուրդը իրեն կից կը կազմէ կրթական, որբանոցային, առողջապահական, պարենաւորման, իրաւաբանական, աշխատանքի եւ տեղեկատու բիւրօներ եւ յանձնաժողովներ:

«Թիւրքահայ համագումարը կընտրէ վերստուգիչ յանձնախմբի երեք անդամներ՝ առաջարկելով կեդր. խորհրդին ռուսահայ անդամներ տուող մարմիններուն եւ կամ ռուսահայ համագումարին՝ լրացնել զայն երկու կամ երեք անդամներով:

«Վերստուգիչ մարմինը պիտի հսկէ խորհրդի դրամական գործառնութեանց վրայ՝ համաբաւու ըլլալով համագումարին»:

Միաձայնութեամբ ընտրուեցին խորհրդի 15 անդամներ՝ Անդրանիկ, Սմբատ Բօրոյեան, Հրանտ Գալիկեան, Արտակ Դարբինեան, Զապէլ Եսայեան, Աւ. Թէրզիպաշեան, Գ. Հայկունի, Հմ. Մանուկեան, Լ. Շանթ, Վարդ. Պապիկեան, դր. Պոնափարթեան, Կարօ Սասունի, Սեպուհ, Յակ. Տէր-Զաքարեան, Վահան Փափազեան:

Վերստուգիչ յանձնախումբ՝ Սերովբէ Կիւլպէնկեան, Արշակ Սաֆարեան, Եղնիկ Քաջունի:

Համագումարի վակումէ յետոյ Արեւմտահայ Խորհուրդն իր մէջէն ընտրեց 5 հոգինոց բիւրօ, որ եւ առանձնեց համագումարի որոշումներուն իրագործումն ու արեւմտահայ գործերուն վերաբերութիւնը: Բիւրօի անդամներ ընտրուեցին Վահ. Փափազեանը, Արտ. Դարբինեանը, Յ. Տէր-Զաքարեանը, Կ. Սասունին եւ Հ. Գալիկեանը: Հետզհետէ ղրկուած վայրերի եւ Անդրկովկասի զանազան կեդրոններուն մէջ կազմուեցին Արեւմտահայ Բիւրօյի մասնաճիւղեր, որոնք դարձան արեւմտահայութեան իրական ներկայացուցիչները: Մի տեսակ արտահողային պետութիւն էր ստեղծուում՝ կեդրոնական եւ տեղական իշխանութիւններով: Ապագային, երբ Թիւրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդէն պատրաստ էր:

Բիւրօին յաջողուեց համախմբել դաղթականների օգնութեան գործով զբաղուող մարմինները եւս — Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Գաղաքների Միութիւնը, Մոսկուայի Կոմիտէն, Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան Կոմիտէն, Կենտրոնական Նպաստամատոյցը եւ այլն, որոնց գործունէութիւնը կենտրոնացուեց եւ դրուեց ընդհանուր հակակշռի տակ: Այս մարմինները ահագին ծառայութիւն մատուցին արեւմտահայ ժողովրդին:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԵՒԵԼԱՀԱՑՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Իրերի բերումով, արեւմտահայերի եւ արեւելահայերի կեանքը յեղափոխութիւնից յետոյ զնաց տարբեր ճանապարհներով: Արեւմտահայերը ապրում էին սեփական, ազգային–տեղական կեանքով. նրանց հետաքրքրութիւնը ամփոփւած էր Թիւրքահայաստանի եւ զաղթականական գործերի սահմաններում: Արեւելահայութիւնը, ընդհակառակը, ամբողջապէս տարւեց համապետական ընդհանուր հարցերով եւ ընկերային զաղափարներով: Յեղափոխութեան մրրիկը յափշտակեց նրան և մի պահ մոռացնել տւեց զուտ ազգային ցաւերը:

Արեւելահայոց ակնկալութիւնները յեղափոխութիւնից ամբողջապէս տեղաւորւում էին Ռուսաստանի համապետական հարցերի մէջ — նոր՝ ժողովրդական իշխանութեան հաստատում, հին վարչաձեւի մնացորդների վերացում, ընդհանուր ներում, քաղաքացիական ազատութիւններ, ռազմաճակատի ամրացում ու պատւաւոր հաշտութիւն եւայլն. այս վերջին պահանջի մէջ հասկացւում էր նաեւ Թիւրքահայաստանի ինքնավարութիւնը: Եւ, իրրեւ ազգային պահանջ, մանր ազգերին եւս տալ այն իրաւունքները, որոնք մինչեւ այդ վերապահւած էին միայն տիրող ցեղին:

Նոյն ոգին տեսնում ենք եւ մայիս ամսի ընթացքին դումարւած զաւառական ու նահանգային ուսուցչական եւ զիւղացիական բազմաթիւ համագումարների մէջ — Երեւանում, Կարսում, Ալեքսանդրապոլում եւ այլուր: Ամէն տեղ դրւում էին ընդհանուր–պետական խնդիրներ, իսկ տեղական–ազգային պահանջները դուրս չէին գալիս լեզւի եւ տեղական մշակոյթի համեստ սահմաններից:

Նմոյշի համար՝ ահա Երեւանի նահանգային զիւղացիական համագումարի մայիս 12–ի նիստում, Ա. Շահխաթունեանի զեկուցումից յետոյ ընդունւած բանաձեւը, որ տիպար կարող է համարւել եւ միւս համագումարների բանաձեւերի համար եւ որը լուսին արտայայտում է արեւելահայերի ա՛յն օրերի քաղաքական ապրումները.

«Երեւանի Նահանգի Գիւղացիական Համագումարը՝ քննելով Ռուսաս–

ռանի ապագայ կարգերի խնդիրը, գտնում է.

«Ռուսաստանում վերջնականապէս ոչնչացած է հին կարգը եւ նրա տեղ պէտք է հաստատուի հանրապետութիւն: Այդ հանրապետութիւնը պէտք է լինի դաշնակցային, որովհետեւ միայն դաշնակցային հանրապետութեան մէջ կարող է աշխատաւոր ժողովուրդը իր շահերը պաշտպանել:

«Այդ դաշնակցային հանրապետութիւնը պէտք է լինի դաշնակցային, որպիսին միայն կարող է համապատասխանել Ռուսաստանի պէս բազմազգու մի երկրի եւ նպաստել պետութեան բոլոր տարբեր մասերի տնտեսական ու մշակութային զարգացմանը:

«Անդրկովկասը պէտք է կապուած լինի Ռուսաստանի հետ դաշնակցային կերպով: Ինքը Անդրկովկասը պէտք է ներկայացնի մի դաշնակցային հանրապետութիւն՝ բաժանուած կանտոնների՝ տեղագրական ու մշակութային պայմանների համաձայն:

«Գիւղացիական Համագումարը գտնում է, որ մինչեւ Սահմ. ժողով՝ կենտր. կառավարութիւնը եւ նրա կովկասեան ներկայացուցիչները պարտաւոր են.

«Նախապատրաստել Սահմ. ժողովի գործը, նոր նահանգական ու գաւառական բաժանումներ մտցնել Անդրկովկասում, այնպէս, որ նրանք համապատասխանեն աշխարհագրական եւ տնտեսական պայմաններին եւ հաւասար ու արդար պայմանների մէջ դնեն բոլոր ազգերին:

«Անմիջապէս մտցնել տեղական լեզուները բոլոր վարչական եւ դատական հիմնարկութիւնների մէջ, որի համար անհրաժեշտ է փոխել պաշտօնեաների կազմը:

«Սեպտեմբերից տարրական դպրոցները կատարելապէս ազգայնացնել, միջնակարգ դպրոցները՝ նոյնպէս: Որտեղ այդ հնարաւոր չի լինի ամբողջովին, ազգայնացնել դէթ ստորին դասարանները:

«Նոր վարչական բաժանումները մտցնելուց յետոյ, տալ երկրին ղէմստուային ինքնավարութիւն եւ երդւեալների դատարան:

«Այս գործը թեթեւացնելու համար նահանգի գիւղացիների համագումարը արտակարգ կոչ է ուղղում Ռուսաստանում ցրուած բոլոր կովկասցի ինտելիգենտ հայրենակիցներին՝ վերադառնալ հայրենիք եւ հեշտացնել դպրոցների ու այլ հիմնարկութիւնների ազգայնացման գործը»:

Նոյն այդ տրամադրութիւնները տեսնում ենք եւ քաղաքային ինքնավարութիւնների, ապա եւ Սահմանադիր ժողովի ընտրութիւնների ժամանակ: Այս վերջինին արդիւնքը խիստ բնորոշ է Անդրկովկասի քաղաքական ուժերի դասաւորութեան տեսակէտից:

Սահմանադիր ժողովի ընտրութիւններին, Անդրկովկասում իրար հետ մրցող ու պայքարող կողմերն էին սոցիալ-դեմոկրատները (№ 1), որոնք դեռ գործում էին համառուսական կուսակցութեան անունով եւ բացի Վրաստանի քէչներից ստացան նաեւ հայ, ռուս, թուրք եւ այլ քէչներ, ինչպէս նաեւ զօրամասերի սոց.-դեմոկրատ զինուորների ու սպաների



Ա· Ֆ· ՔԵՐԵՆՍԿԻ



ԲԺ· Ց· ՋԱԻՐԵԱՆ



Մ· ՊԱՊԱՋԱՆԵԱՆ



Ց· ՓԻՐԱԼԵԱՆ



Գ· ՆԱՏՍԵԱՆ



ՌՈՒԻՍ ԲԱՆԱԿԻ ՄԻՔԻՆԿ՝ ԵՐԶՆԿԱՑՈՒՄ



ՀԱՑ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԻՐԶՐՈՒՄՈՒՄ

(ձախ կողմինը՝ ՇԱՀ – ԱՐՄԻՆ)

ձայները, Մուսաւաթին ու Թուրք անկուսակցական խմբակը (№ 10), որ ներկայացնում էր մահմետական աղգայնական խաւերը, եւ Հ. Ց. Դաշնակցութիւնը (№ 4): Ընտրութեան հետեւանքը եղաւ հետեւեալը. սոցիալ-դեմոկրատները ստացան 661,934 քւէ եւ տուին 12 պատգամաւոր, մուսաւաթականները՝ 615,816 քւէ — 10 պատգամաւոր եւ Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ 558,400 քւէ — 9 պատգամաւոր: 62,044 քւէն տալիս էր մէկ պատգամաւոր: Հ. Ց. Դաշնակցութեան ցանկով ընտրուած պատգամաւորներն էին՝ Ռոստոմ Զօրեան, Մ. Յովհաննիսեան (Մ. Վարանդեան), Հ. Օհանջանեան, բժ. Ց. Չաւրեան, Կ. Համբարձումեան, Աւ. Շահխաթունեան, Ց. Քաջազնունի, Սիր. Տիգրանեան, Կ. Ղազարեան: Այսպիսով, առանց չափազանցութեան, Անդրկովկասի հայ ժողովրդի աւելի քան 95% իր քւէն տւեց, հետեւաբար եւ վստահութիւն յայտնեց Հ. Ց. Դաշնակցութեան:

Այս համապետական տրամադրութիւններին ու լաւատեսութեան զուգընթաց զգացւում էր եւ ներքին անհանգստութիւն կատարուող դէպքերի հանդէպ: Որքան եւ յեղափոխութիւնը արբեցրած լինէր ամենքին, անկարելի էր չնկատել, որ որոշ խաւերում աճում էր ձգտումը յեղափոխութիւնը օգտագործելու ռազմաճակատի գործերը ի նպաստ Թիւրքիայի չրջելու համար: Դիտւում էր ճակատի պահանջների հանդէպ խիստ անփոյթ վերաբերում վրացական չրջաններում եւ քօղարկւած հակառուս աշխատանք մահմետականների կողմից: Բայուի Մահմետական Բարեգործական Ընկերութիւնը բազմապատկել էր իր գործակալների եւ նիւթական յատկացումների քանակը Կարսի նահանգում եւ Էրզրումի ու յարակից չրջաններում: Պաշտօնապէս նրանք զբաղւած էին մահմետական որբերի ու գաղթականների հոգատարութեամբ. իրապէս՝ ռուս բանակի թիկունքում գործում էին յօգուտ Թիւրք զէնքի:

Այս աշխատանքը, ուրիշներից աւելի, տեսնում էին հայերը, եւ յեղափոխութեան առաջին օրերից հէնց ճակատի պաշտպանութեան, ազգային ինքնապաշտպանութեան եւ հայկական ներքին ուժերի համախմբման պահանջը չատերի համար դարձաւ լուրջ մտահոգութեան առարկայ: Այս պահանջի հետեւանքով առաջ եկաւ ազգային ներքին կազմակերպութեան անհրաժեշտութեան գիտակցութիւնը:

Ապրիլ 10—13, Թիֆլիսում, Ազգային Բիւրոյի հրաւէրով գումարւեց միջկուսակցական մի խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Ազգային Բիւրոյի եւ կամաւորական խմբերի կարգադրիչ Մարմնի անդամները, նախկին կամաւորական խմբերի հրամանատարները, գաւառական բիւրոների եւ կոմիտէների ներկայացուցիչները, Թիֆլիսի Միջկուսակցական Մարմինը, Արեւմտահայ Խորհրդի անդամները եւ այլն — Թիֆլիսից 75 եւ գաւառներից 20 գործիչ: Այդ ժողովում ներկայացւեցին մանրամասն զեկուցումներ ընդհանուր եւ ազգային-քաղաքական կացութեան, ինչպէս եւ ռազմաճակատի ու գաւառների վիճակի մասին: Եւ անհրաժեշտ տեսնւեց, երկու ամսից ոչ ուշ, հրաւիրել ազգային համագումար՝ արեւելահայերի կեանքին վերաբերուղ խնդիրների լուծման համար: Որոշւեց, որ համագումարը կազմւի քառանդամ ընտրական եղանակով՝ երկու սեռերի մասնակցութեամբ. 10,000 հո-

գիւն՝ մէկ պատգամաւոր։ Ընտրութիւններին մասնակցելու էին միայն արեւելահայերը։ Համագումարը պէտք է գումարուէր Երեւանում։ Ընտրութիւնների կազմակերպումն ու ղեկավարումը, համագումարի օրակարգի մշակումը եւ այլ խնդիրների կարգադրութիւնը յանձնեց Թիֆլիսի Միջկուսակցական Մարմնին, որը իրաւունք պիտի ունենար իր կազմը ուժեղացնել նոր անդամներով։

Այս որոշումը, սակայն, ժամանակի ընթացքում, ենթարկւեց որոշ փոփոխութեան, եւ համագումարը հրաւիրւեց կէս ընտրական, կէս-նշանակովի սկզբունքով։ Նախապատրաստական բոլոր աշխատանքները կատարելուց յետոյ, սեպտ. 28-ին, Թիֆլիսի առաջնորդարանի սրահում, տեղի ունեցաւ Համագումարի անդամների եւ Միջկուսակցական Մարմնի խորհրդակցական մի ժողով, ուր պարզւեց Համագումարի վերջնական կազմը.— 113 Դաշնակցականներ, 43 Ժողովրդականներ, 23 Սոցիալիստ-Յեղափոխականներ, 9 Սոցիալ-Դեմոկրատներ (մէնշեւիկ, բոլշեւիկ եւ հնչակեան) եւ 7 անկուսակցականներ, ընդամէնը 203 հոգի։ Համագումարին մասնակցեց առանձին ներկայացուցչութիւն եւ Արեւմտահայ Խորհրդի կողմից (Անդրանիկ, Վահան Փափազեան, Ա. Թերզիպաշեան եւլն.)։ Նոյն ժողովում որոշւեցին եւ Համագումարի բացման ու ղեկավարութեան գործնական խնդիրները — չընտրել պատւոյ նախագահներ, չարտասանել ողջոյնի ճառեր։ Երկար վէճից յետոյ, Համագումարի բացման պարտականութիւնը թողնւեց Միջկուսակցական Մարմնին։ Բուռն վէճեր տեղի ունեցան եւ նախագահութեան կազմի մասին. ի վերջոյ որոշւեց համեմատական սկզբունքով ընտրել 7 նախագահ եւ 5 քարտուղար։ Թէեւ ըստ պատգամաւորների քանակի նախագահների կէսից աւելին պէտք է լինէր Դաշնակցական, բայց Դաշնակցականները համաձայնեցին ունենալ 3 տեղ եւ մի տեղ տալ անձնապէս Մոսկւայի ներկայացուցիչ անկուսակցական Ստ. Մամիկոնեանին։

Համագումարի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ սեպտ. 29-ին ժամը 12-ին, Արտիստական Թատրոնի ընդարձակ սրահում, խուռն բազմութեան ներկայութեամբ։ Հ. Օհանջանեանի յանուն Միջկուսակցական Կոմիտէի արտասանած բացման ճառից յետոյ, եօթը նախագահներ ընտրւեցին.— Յ. Քաջազնունի, Ալ. Խատիսեան եւ Ա. Ահարոնեան (Դաշն.), բժ. Այվազեան (Ժող.), Լ. Աթաբէգեան (Ս.-Յ.), Ղ. Տէր-Ղազարեան (Ս.-Դ.), Ս. Մամիկոնեան (անկս.) եւ 5 քարտուղարներ — Յ. Տէր-Յակոբեան ու Ա. Զոհրաբեան (Դաշն.), Ս. Մալխասեանց (Ժող.), Յ. Ստեփանեան (Ս.-Յ.) և Ս. Յովեան (Հնչ.)։

Նիստի նախագահութիւնն ստանձնելով Ս. Մամիկոնեանը՝ նկարագրեց հայ ժողովրդի համար ստեղծւած տարապայմանօրէն ծանր դրութիւնը եւ ջերմագին կոչ ուղղեց Համագումարին՝ հրաւիրելով համերաշխ ու ներդաշնակ գործունէութեան։ Ապա լուծւեցին ժողովավարութեան գործնական հարցերը, կազմւեց պատգամաւորների լիազօրութիւնները քննող յանձնախումբ և որոշւեց Համագումարը բաժանել 4 հատւածների, որից իւրաքանչիւրի մէջ մտնեն 5 դշնկց., 5 ժող. 3 սոց.-յեղ., 2 սոց.-դէմ.։ Դաշնակցա-

կանները իրենց մէկ ձայնը բոլոր հատուածներում ղիջեցին սոց.–դէմ–երին ու հնչակեաններին:

Համագումարի 2–րդ նիստը, սեպտ. 30–ին, նւիրւում է ընդհանուր քաղաքականութեան հարցին: Դաշնակցութեան կողմից «Քաղաքական Մոմենտի մասին» զեկուցում է ներկայացնում Ս. Վրացեան, որ մասնակցելով Մոսկվայի «Պետական Խորհրդակցութեան», իրրեւ Անդրկովկասի Յեղափոխական կենտրոնի ներկայացուցիչ, մօտէն ծանօթ էր Ռուսաստանի ներքին կացութեան: Շեշտելով այն խանգարւածութիւնը, որով ամբողջ Ռուսաստանը ընդունեց յեղափոխութիւնը՝ նա մանրամասն կանգ է առնում երկրում տիրող անկերպարան վիճակի վրա — ընդհանուր հիասթափութիւն երկրի ներսում եւ ճակատներում: Ռուսաստանը կանգնած է սուր ճգնաժամի առաջ: Պատճառները զօրեղ են եւ բազմազան: Նա՛խ խանգարւած է պետական մեքենան. չկայ հեղինակաւոր իշխանութիւն. անւանապէս գոյութիւն ունեցող պետական մարմինների ազդեցութիւնը կեանքի վրա չնչին է: Մայրաքաղաքներում ու գիւղերում տիրում է անիշխանութիւն: Երկիրը չարժւում է տարերային կերպով: Վարիչ ձեռք չկայ:

Երկրորդ՝ խանգարւած է երկրի տնտեսական կեանքը: Կանգ է առել արդիւնաբերութիւնը: Օր աւուր զարգանում է քայքայումը: Պարենաւորման ճգնաժամը եւ ապրուստի թանգութիւնը անտանելի են: Այդ հողի վրա տեղի են ունենում բազմաթիւ խռովութիւններ եւ ընդհարումներ:

Երրորդ՝ պակաս յուսահատական չեն եւ երկրի ֆինանսները: Պատերազմը կլանում է միլիարդներ: Պետական եկամուտները պակասում են: Ներմուծում եւ արտածում կանգ են առել. եկամուտի միակ աղբիւրը մնացել է փոխառութիւնը: Սակայն արտաքին փոխառութիւն չի կարելի, որովհետեւ պետութիւնը դուրսը վարկ չունի: Ներքին փոխառութիւնն էլ յաջողութիւն չունի, որովհետեւ բնակչութեան ունեւոր մասը չի վստահում յեղափոխական կառավարութեան: Կառավարութեան առաջ մնում է միակ վստահելուր եւ անյոյս ճանապարհը — հեղեղել երկիրը թղթադրամով, որը աւելի է ծանրացնում կեանքը:

Չորրորդ՝ նոյն քայքայումը տիրում է եւ ռազմաճակատներում: Զօրքը լքումի է մատնւած: կարգապահութիւնն ընկած, բանակի տոկունութիւնը խորտակւած. զինւորը մերկ է, անօթի եւ անղէն: Զմեռը գալիս է, բայց ո՛չ մի պատրաստութիւն չի արւում: Վտանգի մէջ է ոչ թէ լոկ յեղափոխութիւնը, այլ եւ բուն պետութիւնը:

Ի՞նչ անել: Եւ զեկուցանողը արծարծում է երկու միջոց:

Առաջին՝ երկրում պէտք է ստեղծել զօրեղ իշխանութիւն, որը պէտք է լինի կօալիցիօն: Յեղափոխութեան յարած բոլոր տարրերը պէտք է կազմեն կուռ ճակատ ոչ միայն կենտրոնում, այլ եւ ամենայետին գիւղում: Դէմոկրատիան է իշխանութեան նեցուկն ու հիմքը:

Երկրորդ՝ պէտք է աշխատել հաշուեյարդարի ենթարկել պատերազմը, որը աղբիւրն է բոլոր չարիքների: Ներկայ պայմաններում, երբ երկրի բոլոր ուժերը քայքայման վերջին ծայրն են հասել, պնդել թէ պատերազմը

պէտք է չարունակել մինչեւ յաղթական վախճանը, անհեռատեսութիւն է: Սակայն, ի՞նչպէս վերջացնել պատերազմը: Հնարաւո՞ր է մերձ անջատ հաշտութիւն կնքել: Եթէ հնարաւոր է, այդ կը լինէր լաւագոյն ելքը. բայց այդ յոյսը դժուար իրագործելի է, որովհետեւ միայն Ռուսաստանից չէ կախուած: Ռուսաստանը համեւրոպական ընդհանուր չղթայի մի օղակն է եւ անջատ հաշտութիւնը մի ճակատում, կարող է պատճառ դառնալ նոր պատերազմի մի ուրիշ ճակատում: Հաշտութիւնը կարող է լինել կամ Դաշնակիցների հետ միասին եւ կամ նրանց համաձայնութեամբ: Ռուսաստանը պէտք է ձգտի հաշտութեան՝ եւրոպական դէմօկրատիան էլ ոտքի հանելով յանուն հաշտութեան: Իսկ մինչ այդ պէտք է վարել ոչ թէ յարձակողական, այլ պաշտպանողական պատերազմ՝ ամուր պահպանելով գրաւած դիրքերը: Այս հանգամանքը առանձին նշանակութիւն ունի մասնաւորապէս մեզ՝ Հայերիս համար: Հասկանալի է, թէ ինչ կը լինի մեր վիճակը, երբ թշնամու առջեւ ռազմաճակատը մերկանայ: Մենք ուրիշներից աւելի ուժ պիտի տանք ճակատի ամրացման եւ միջոց չխնայենք ճակատի կայունութիւնն ու զինուորների ֆիզիքականն ու բարոյականը բարձրացնելու համար: Ճակատի պաշտպանութիւն եւ հաշտութիւն — այս ձեւով կարելի կը լինի ապահովել մեր նուաճումները Թրքահայաստանում: Նոյնպէս պէտք է նպաստենք ուժեղ իշխանութեան կազմութեան եւ երկրի քաօսային վիճակի դէմ կռւելու: Դրա համար նախ մեր մէջ եղած հոսանքները պէտք է ըմբռնեն պետութեան եւ մեր ազգային շահերի ներդաշնակութիւնը եւ իրագործեն համերաշխութիւն. նոյն ղգացումով առաջնորդած պէտք է լինին հայ, թուրք եւ վրացի աշխատաւոր զանգուածները:

Հոկտ. 1–ի նիստում քննութեան է առնւում Վրացեանի զեկուցումը: Իրար յետեւից խօսում են հոսանքների ներկայացուցիչները, որոնք համաձայն են գտնւում զեկուցանողի հիմնական մտքերին եւ ըստ իրենց աշխարհահայեացքի՝ պարզաբանում ու հիմնաւորում են հիմնական դրութիւնները:

Դաւիթ Անանուն (ս.–դ.) — բուրժուազիան չունի քաղաքակրթուած սեփականութիւն, հետեւաբար եւ չի կարող դառնալ իրականութեան տէրը. նա պէտք է ընդառաջ գնայ դէմօկրատիայի նւազագոյն պահանջներին եւ կօալիցիայի մէջ մտնի առանց յետին մտքերի: Կօալիցիան պէտք է լինի իսկական եւ չպիտի կասկածել դէպի ձախը. կասկած կարող է լինել միայն աջ թեւի վերաբերմամբ: Գալով հայ ազգային քաղաքականութեան՝ մենք չպէտք է ասենք, թէ մեր խրճիթը դիւղի ծայրումն է, մենք մեզանով զբաղւենք, ուրիշները ինչ ուզում են անեն. ընդհակառակը, մենք պէտք է միանանք ռուս դէմօկրատիայի ծովին եւ լինինք ռուսից էլ աւելի ռուս:

Լեւոն Աբաբէկեան (ս.–յ.) — խօսում է սոցիալիզմի մասին: Սոցիալիզմը միայն դասակարգային պայքար կամ արդիւնաբերական միջոցների համայնացում չէ, սոցիալիզմը մի ամբողջ կուլտուրա է, որից տակաւին հեռու է Ռուսաստանը: Ռուսաստանի յեղափոխութիւնը սոցիալիստական չէ. դասակարգային հակամարտութիւնը ներկայ պայմաններում վնասակար է Ռուսաստանի պետականութեան շահերին: Մեր նպատակը պէտք է լինի պաշտ-

պանել պետականութեան չահերը եւ իշխանութեան կազմակերպման խնդրում ամբողջապէս ընդունել կառավարութեան դեկլարացիան: Պատերազմի նըկատմամբ պէտք է տոկունութեամբ պահել ճակատը: Ազգային քաղաքականութեան հարցում մենք մեր երկրում պէտք է դարբնենք մեր բախտը մեր հարեւանների հետ միասին: Մեր բախտը չպէտք է յանձնել կենտրոնին, որովհետեւ մենք կենտրոնի հետ չատ թոյլ թելերով ենք միացած եւ եթէ վաղը մի ձեռք կտրի այդ թելը, մենք կը մնանք մեր երկրում բոլորովին մենակ: Մենք պէտք է միանանք մեր հարեւաններին եւ հողային մաքսիմալ ծրագրի իրականացումը այդ գեղեցիկ միջոցն է, որը պիտի իրար հետ կապի Հային եւ Թուրքին: Մեր համերաշխութիւնը մեր հարեւանների հետ պիտի տեղի ունենայ ոչ թէ վերին շերտերում միայն, այլ նախ եւ առաջ ժողովրդի ստորին խաւերում:

Աւետիք Շահխաթունին (դաշ.) — գտնում է, որ բուրժուազիան ստիպւած է ընդառաջ գնալ դէմօկրատիային: Դա իսկական կօալիցիա, ուժերի ներկայացուցչութիւն չէ, այլ թոյլի դիջում: Այդ դիջումը կարելի է երկու կերպ բացատրել. կամ բուրժուազիան ենթադրում է, որ այդ բոլոր ծրագիրները ի չիք պիտի դառնան եւ կամ իր դասակարգային չահերը զոհաբերում է հայրենիքի չահերին: Հայ բուրժուազիան այդ տեսակէտից աւելի դիջում պիտի անի հայ դէմօկրատիային, որովհետեւ մեր ազգային գոյութեան խնդիրն է այստեղ վտանգւած: Ընդունելով կառավարութեան ծրագիրը՝ մենք պիտի համախմբւենք մեր իրականութեան մէջ, գործենք համերաշխ, աչքի առաջ ունենալով պետութեան եւ մեր ազգային չահերը:

Քրիստափոր Վէրմիշեանը (ժող.) — խօսում է ռուսերէն, որի դէմ ժողովը բողոքում է. Նա ճգնում է ապացուցանել, որ հայ ժողովրդականները «բուրժուազիա» չեն, այլ ապաղասակարգային կուսակցութիւն, որը միակն է, որ կանգնած է պետական տեսակէտի վրա: Նա ողջունում է իսկական կօալիցիայի գաղափարը, բայց կօալիցիա չէ, երբ միայն բուրժուազիայից են դիջում պահանջում. դա զերութիւն է: Հրաւիրում է իսկական համերաշխութեան եւ զգուշացնում ծայրայեղ պահանջներից: Դէմ է հողային մաքսիմալ ծրագրին, որը կովկասում կարող է առաջ բերել միայն անկարգութիւններ եւ ջարդեր:

Ապա յետագայ վիճաբանութիւններին մասնակցում են Ս. Արարատեանը, բժ. Ազաջանեանը, Ա. Խոնդկարեանը, Վ. Նաւասարդեանը, Ց. Քաջազնունին, Հ. Առաքելեանը եւ Մ. Ղարաբէկեանը: Բացի վերջինից, բոլորը պաշտպանում են կօալիցիայի սկզբունքը եւ կառավարութեան օգնելու անհրաժեշտութիւնը: Հ. Առաքելեանը ճառում իր միտքը պաշտպանելու համար վկայութեան է բերում Քրիստ. Միքայէլեանին ու Զաւարեանին, որոնց անւանում է «իմ ընկերները»:

Վրացեանը (վերջին խօսք) բողոքում է Հ. Առաքելեանի յայտարարութեան դէմ, որ Զաւարեանին եւ Քր. Միքայէլեանին իրեն ընկերներ անւանեց: Ապա առանձին–առանձին պատասխանում է եղած հակաճառութիւններին եւ չեչտում, որ Հայ Ժողովրդական կուսակցութիւնը հայ բուրժուա–

գիայի կուսակցութիւնն է եւ պաշտպանում է բուրժուական գաղափարախօսութիւն։ Մեզ մօտ բուրժուազիան դեռ եւս գիտակից ու դասակարգօրէն կազմակերպուած չէ, դրա համար էլ ամաչում է, երբ իրեն բուրժուա են ասում, մինչդեռ պէտք է ողջունել, որ, վերջապէս, մեր բուրժուազիան էլ սկսում է հասունանալ ու կազմակերպուել։ Անցնելով Լ. Աթարբէգեանի յայտարարութեան, թէ այսուհետեւ Սոց.-Յեղափոխականները հայ կեանքի պատասխանատու գործի մի մասը իրենք են վերցնելու, ողջունում է այդ յայտարարութիւնը, բայց պնդում է, որ, վերջին հաշւով, հայ էսէրներն էլ անելու են այն, ինչ որ մինչեւ այժմ արել է Հ. Յ. Դաշնակցութիւնը, որովհետեւ հայ միջավայրի մէջ ուրիշ անելիք չկայ։

Ապա կարդում է իր բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ ռուսական ներկայ դէմօկրատական յեղափոխութեան ապահովութիւնն ու յաղթանակը կախուած է նրանից, թէ ինչ ուղղութեամբ կընթանայ դէմօկրատիայի կազմակերպումն ու զարգացումը եւ ինչպիսի փոխյարաբերութիւններ կստեղծուին յեղափոխութեան մղում տուող հասարակական խաւերի միջեւ.

«Որ պետութեան ռազմաճակատում ու թիկունքում տիրող տնտեսական, քաղաքական, ռազմական եւ կուլտուրական աննպաստ պայմանների շնորհիւ մեծապէս դժւարանում է պատերազմը վարելու եւ երկրի ներսում անդորրութիւն հաստատելու գործը.

«Որ իշխանութեան կազմակերպման խոչընդոտները յեղափոխութեան եօթն ամիսների ընթացքում աճելով եւ սուր կերպով դրւած լինելով երկրի առջեւ՝ չարունակ յուզել են հանրային կեանքը.

«Որ կառավարական մարմինների ֆունկցիաների մի խոշոր մասը պատւաւոր կերպով տարել են յեղափոխական օրգանները եւ դէմօկրատիկ խորհուրդները, զինուորական կոմիտէները եւ այլն.

«Որ օրէ օր աճող տնտեսական ու քաղաքական անիշխանութիւնն ու քայքայումը եւ յեղափոխութեան շահերը հրամայական պահանջ են դարձնում ուժեղ իշխանութեան կազմակերպումը կենտրոնում ու բովանդակ երկրում եւ բոլոր յեղափոխական դասակարգերի եւ ժողովուրդների համագործակցութիւնը։

«Այլ եւ աչքի առաջ ունենալով Անդրկովկասի եւ հայ իրականութեան բացառիկ պայմանները, ազգային ու դասակարգային յարաբերութիւնների աննորմալութիւնը, հասարակական խաւերի թոյլ կազմակերպուած լինելն ու համագործակցութեան բացակայութիւնը, ինչպէս նաեւ արտակարգ տագնապալի հեռանկարը պատերազմի անյաջողութեան դէպքում կովկասեան ռազմաճակատի վրա,

«Ազգ. Խորհրդաժողովը որոշում է.

«1. Ողջունել կազմակերպումը նոր իշխանութեան, որն իր յայտարարած դէկլարացիայով խոստանում է իրագործել այն բոլոր պահանջները, որ դէմօկրատիան ձեւակերպել էր օգոստ. 14-ի դէկլարացիայի մէջ, եւ անպայման վստահութիւն յայտնել եւ աջակցութիւն ցոյց տալ նրան։

«2· Հաւանելով կառավարութեան ձգտումը փութացնելու հաշտութեան կնքումը Դաշնակիցների հետ եւ Ռուսաստանի պարտութիւնը համարելով մահ նաեւ յեղափոխութեան՝ համախորհուրդը անհրաժեշտ է գտնում նպաստել նաեւ զօրքի վերակազմութեան, ճակատի ու թիկունքի ամրացման, որպէսզի ռուսական բանակները պահեն գրաւած դիրքերը եւ պաշտպանեն երկիրը թշնամու ներխուժումից:

«3· Ձեռք առնել վճռական միջոցներ երկրի տնտեսական կեանքը եւ պարենաւորման գործը բարեկարգելու, նշանակել պետական կօնտրօլ արտադրութեան եւ բաշխման վրա: Բարձրացնել արդիւնաբերութեան արտադրութիւնը՝ առողջ փոխյարաբերութիւն ստեղծելով արդիւնաբերող եւ դործաւոր դասակարգերի միջեւ: Արտադրութեան եւ բաշխման գործում լայն տեղ տալ համագործակցական հասարակութիւններին: Հասարակութիւնները նշանակել գիւղի եւ քաղաքի արտադրած ապրանքների վրա: Պարենաւորման գործի կազմակերպութեան հրաւիրել տեղական ուժերը՝ յանձին քաղաքային եւ գաւառական ինքնավարութիւնների ու կօօպերատիւների: Ընդունել առաջին կարգի անհրաժեշտ առարկաների համար մենաւաճառի սկզբունքը:

«4· Պետութեան եկամուտն աւելացնելու նպատակով ընդունել պարտադիր փոխառութեան սկզբունքը: Հարկ դնել եւ եղածներն աւելացնել պերճանքի առարկաների եւ ժառանգութեան վրա: Կրճատել պետութեան ծախսերը խիստ խնայողութեան միջոցով:

«5· Ազգային եւ հողային հարցի վերջնական լուծումը վերապահելով Սահմ. ժողովին՝ ճանաչել ազդերի կուլտուրական ինքնորոշման եւ լեզուի իրաւունքները պետական բոլոր հաստատութիւնների մէջ: Հարեկարգել յարաբերութիւնները հողատէրերի եւ գիւղացիների միջեւ: Օրէնդրական նիւթ պատրաստել ազգային եւ հողային հարցերի մասին Սահմ. ժողովի համար:

«6· Մինչեւ պետական ռամկավար օրգանների վերջնական կազմակերպումն ու ամրացումը ճանաչել դէմօկրատական խորհուրդների իրաւասութիւնները եւ ապահովել նրանց անկաշկանդ գործունէութիւնը:

«Անցնելով Անդրկովկասի եւ հայ իրականութեան, որ մասն է կազմում ընդհանուր պետութեան, եւ ընդունելով, որ վերոյիշեալ պահանջները տարածելու են այստեղ, խորհրդաժողովը հարկ է համարում շեշտել հետեւեալը.

«1· Անհրաժեշտ է ուժեղ թափով առաջ տանել հայ դէմօկրատիայի կազմակերպումը:

«2· Գիտակցելով, որ Անդրկովկասի խաղաղութիւնն ու բարգաւաճումը հնարաւոր է միայն բոլոր ազգերի, մանաւանդ նրանց աշխատաւոր մասերի հաւաքական ջանքերով ձեռք բերել իրականացնել հայ, վրացի, թուրք եւ այլ աշխատաւորութեան համերաշխութիւնը եւ բոլորի հետ միասին եղբայրական ձեռք մեկնել համառուսական դէմօկրատիային:

«3· Շտապեցնել Անդրկովկասում մտցնել զէմստուոյական հաստատութիւններ՝ նախօրօք կատարելով նահանգների վարչական բաժանում՝ զեկա-

վարելով տեղակագրական, ազգագրական եւ տնտեսական սկզբունքներով:

«4. Հայկական ներքին կեանքում առաջ բերել բոլոր կազմակերպած եւ իրական արժէք ներկայացնող հոսանքների համագործակցութիւն՝ փութացնելով քառանդամ եղանակով ընտրած ազգային ժողովի դումարումը»:

Բանաձեւեր են առաջարկում եւ միւս կուսակցութիւնները, որոնք բոլորն էլ կօալիցիայի կողմնակից են: Բոլշեւիկները միայն բանաձեւ չեն առաջարկում եւ դէմ արտայայտւում կօալիցիայի: Դժբախտաբար, միւս բանաձեւերը ձեռքի տակ չունինք, այլապէս շատ հետաքրքրական կլինէր հրատարակութեան տալ: Ներկայացած բանաձեւերը հաշտեցնելու եւ մի ընդհանուր բանաձեւ կազմելու համար ընտրւում է 10 հոգինոց յանձնաժողով երկուական հոգի ամէն մի կուսակցութիւնից. Աբարատեան, Վրացեան, Լ. Աթաբէկեան, Ց. Տէր Օհանեան, Մ. Պապաջանեան, Ֆ. Վէրմիշեան, Ց. Մանանդեան եւ բժ. Խաչատեան:

Հոկտ. 2-ի նիստում համագումարը միաձայնութեամբ ընդունում է քաղաքական մօմենտի մասին յանձնաժողովի մշակած հետեւեալ բանաձեւը.—

«Նկատելով, որ ժամանակաւոր կառավարութիւնը այժմ աւելի քան երբեք կարիք ունի Ռուսաստանի բոլոր ժողովուրդների անվերապահ աջակցութեան եւ որ յեղափոխական 7 ամիսների ընթացքում տեղի ունեցած իրադարձութիւնները ցոյց են տալիս, թէ անհնար է ստեղծել երկրի մէջ ուժեղ պետական իշխանութիւն առանց այդպիսի աջակցութեան. նաեւ ի նկատի ունենալով, որ նոր կառավարութեան սեպտ. 25-ի հրատարակած դեկլարացիան իր բովանդակութեամբ համապատասխանում է ստեղծած իրական պայմաններին, ընդգրկում է իր մէջ ներկայ քաղաքական վայրկեանի հրամայական պահանջները եւ իր յայտարարած սկզբունքներով գոհացուցիչ պատասխան է տալիս նաեւ հայ ժողովրդի մինչեւ Սահմ. ժողովն ունենալիք պահանջներին՝ — Ռուսահայ Ազգային խորհրդաժողովը, ռուսական մեծ յեղափոխութեան հետեւանքով առաջին անգամ դումարւած ազատ պայմաններում, յայտնում է իր բացարձակ վստահութիւնը ժամանակաւոր նոր կառավարութեան եւ իր կատարեալ աջակցութիւնը բոլոր տրամադրելի միջոցներով»:

Ձեւակերպութեան չեն մասնակցում մէնշեւիկները, որոնք արձանագրութեան մէջ են մտցնում իրենց առանձին բանաձեւը: Նոյն նիստում կարդացւում է նաեւ բոլշեւիկների յայտարարութիւնը, որով նրանք յայտնում են, թէ իրենք բոյկոտի են ենթարկել համագումարը եւ ո՛չ մի ներկայացուցիչ չունեն այնտեղ:

Համագումարի 4-րդ նիստում քննութեան է առնւում վերաբերումը դէպի Անդրկովկասի Առանձին Կոմիտէն, որի մասին զեկուցումներ են ներկայացնում Հ. Առաքելեանը եւ Ն. Ադրալեանը: Անդրկ. Առանձին Կոմիտէն նշանակւել էր Ժամ. կառավարութեան կողմից 1917-ի մարտին եւ անմիջապէս ենթարկւելով կենտրոնական կառավարութեան՝ հանդիսանում էր Անդրկովկասի տեղական բարձրագոյն գործադիր իշխանութիւնը. ուրիշ խօս-



Ա· ԱՀԱՐՈՆԵԱՆ



Լ· ԱԹԱԲԵԳԵԱՆ



Ց· ՓՈՁԱՐԵԱՆ



Տ· ԲԵԳԶԱՏԵԱՆ

քով՝ նա կատարում էր փոխարքայի դերը: Առանձին Կոմիտէի կազմն էր. երկու վրացի՝ Ա. Չխէնկելի եւ Ք. Աբաշիձէ, 1 ռուս՝ Խարլամով, 1 Թիւրք՝ Ջաֆարով եւ 1 հայ՝ Մ. Պապաջանեան: Անջիղ, անգոյն եւ ներքին հակասութիւններով ու ազգային էնթրիկներով հարուստ մարմին էր այդ:

Հ. Առաքելեանը (ժող.) գտնում է, որ Անդրկովկասի Առանձին Կոմիտէն չարդարացրեց իր վրայ դրուած յոյսերը: Նրա անշնորհք գործունէութեան հետեւանքով երկրի չփոթ վիճակը սաստկացաւ: Անօրինականութիւնները սովորական երեւոյթների կարգն անցան: Երկրում մի՛լիցիա չկազմւեց: Նրա լիազօրներն ու հրահանգիչները դաւառում աչքի ընկնող գործ չկատարեցին: Պատճառը ոչ Թէ Առանձին Կոմիտէի անկարողութիւնը կամ չկամենալն էր, այլ որովհետեւ պետութեան կենտրոնական իշխանութիւնն էլ Թոյլ է: Միւս կողմից՝ Առանձին Կոմիտէն կազմւելով ազգային սկզբունքով՝ չկարողացաւ իր շուրջն համախմբել բնակչութիւնը. իւրաքանչիւր ազգ խմբւեց իր ներկայացուցչի շուրջը: Առաջ եկաւ մի քանի իշխանութիւն, յաճախ, իրար հակասող ու տարբեր գործելակերպով: Պէտք է Առանձին Կոմիտէն կազմել 7 անդամից. 4 դրսից (սօցիալիստ ու կադէտ) եւ 3 տեղական ազգերի ներկայացուցիչներից:

Ն. Աղբալեան յիշում է ընդհանուր խանդավառութիւնը Առանձին Կոմիտէն ընդունելիս և առաջացած հիասթափութիւնը: Կովկասեան ազգերից իւրաքանչիւրը համախմբւեց Առանձին Կոմիտէի կազմի մէջ ունեցած իր ներկայացուցչի շուրջը՝ ծառայելով նրան զօրեղ յենարան: Ամենից Թոյլ յենարանը գտաւ հայ ներկայացուցիչը, որովհետեւ նա չէր պատկանում այն հոսանքին, որ ամենից զօրեղն է հայ կեանքում: Յուտով երեւաց, որ կովկասեան կառավարութիւնը վարում է ոչ Թէ պետական, այլ ազգային քաղաքականութիւն, որ Առանձին Կոմիտէի ամեն մի անդամը վարում է իր ազգային քաղաքականութիւնը՝ պետական իշխանութիւնը իր ազգի շահերին ծառայեցնելով: Այդտեղ էլ մեր ներկայացուցիչը ամենից Թոյլը գտնւեց, որովհետեւ նա իր քայլերը կատարում էր ոչ ազգի բազմութեան ձայնը ներկայացնող հոսանքների խորհրդատւութեամբ: Կովկասեան կառավարութեան դրութիւնը աւելի եւս խախտւեց, երբ Պետրօգրադում լուծւեց առաջին ժամանակ. Կառավարութիւնը, ուրեմն Առանձին Կոմիտէն զրկւեց եւ այդ յենարանից: Հետեւանքը եղաւ այն, որ մենք այդ վեց ամսւայ ընթացքում ունեցանք կառավարիչներ, բայց ոչ կառավարութիւն: Երկրի վիճակը գնալով աւելի եւս վատթարացաւ, ազգերի մրցակցութիւնը զօրացաւ: Դրա մի գլխաւոր պատճառն էլ այն էր, որ կառավարութեան մէջ դերիշխանութիւն ձեռք բերեց վրացական սօցիալ-դեմօկրատիան. սա իր կուսակցական դրօշակի տակ յաճախ առաջ էր մղում ազգային խնդիրներ, գերիշխանութեան այժ տալով վրացական ազգին, մեկուսացնելով հայ ժողովուրդը եւ յանձին Դաշնակցութեան՝ հեռու պահելով նրան իշխանութիւնից:

Կառավարութեան Թուլութեան մի պատճառն էլ այն էր, որ նա չունէր գործակալներ, որ ենթարկւէին նրան, կատարէին նրա հրամաններն ու կարգադրութիւնները:Կարծէք նա մի յանձնախումբ էր, որ կարգադրութիւններ էր անում չկատարելու, Թղթի վրա մնալու համար: Այս կարգադրու–

թիւններէ մէջ էլ մեր ժողովուրդը ամենից թոյլ մասնակցութիւն ունէր: Պատճառը հայ ներկայացուցչի անձնական թուլութիւնը չէ, այլ հայ ժողովրդի ինքնագլխացման թուլութիւնը: Բազմաթիւ են հայ ինքնագլխացման թուլութիւնը առաջացնող պատճառները, որոնցից թեենք մի քանի կարեւորագոյնները.

1) Որ հայ ժողովուրդը մեր երկրում միապաղաղ տարր չի ներկայացնում. նա ամէն տեղ ապրում, չփւում է այս կամ այն օտար ազգի հետ, որոնցից իւրաքանչիւրն ունի իր ազգային տենչերն ու ձգտումները, որոնց հետ ընդհարւելով հայ ժողովուրդը՝ նախ յետ է մնում իր յառաջդիմութեան մէջ. երկրորդ՝ թուլանում է ազգային ինքնագլխացումը: Ուրիշ խօսքով ասած՝ հայ ժողովրդի ինքնագլխացման թուլութեան մի պատճառը պայքարի բազմաճակատութիւնն է:

2) Որ մենք դեռ ԺԱ. դարից սկսած հեռու ենք եղել իշխանութիւնից, չենք ունեցել իշխանական դասակարգ, իշխելու տենչ եւ ունակութիւն ունեցող խաւ. մինչդեռ մեր հարեւան Թուրքերն ու Վրացիները մինչեւ այսօր էլ ունին այդպիսին, որին ռուս կառավարութիւնը ձեռք էր մեկնում եւ հաճութեամբ իշխանութեան այս կամ այն բաժինը յանձնում: Սա պատմական մի փաստ է, որի հանդէպ չպէտք է աչք փակել:

3) Որ մենք ոչ միայն չենք ունեցել, այլ եւ միշտ խուսափել ենք իշխանութիւնից, որովհետեւ հայը չարունակ օտար իշխաններ է տեսել՝ մէկը միւսից վատ եւ այլանդակ: Եւ եթէ մի հայ պետական պաշտօնեայ է դարձել, հայ ժողովուրդը նրան վերաբերւել է բոլորովին այլ տրամադրութիւններով: Այն ինչ, մեր հարեւանները իշխանութեան մասնակցել են գօրեղ չափով, մանաւանդ վրացիները, եւ թէ վաղը Վրաստանը կամենայ ինքնավարութիւն ստեղծել եւ ամբողջ իշխանութիւնը վրացիներով վարել, առանձին դժւարութեան չպէտք է հանդիպի: Ուրիշ խօսքով, հարեւանների ինքնագլխացումը տիրողի է, մերը՝ հպատակի:

4) Որ հայ մտաւորականութեան գլխաւոր ուշադրութիւնը դարձած է եղել ոչ թէ մեր երկրի, այլ Տաճկահայաստանի վրա, որով մենք տեղական հարցերը լուծելու ունակութիւնից զրկւած ենք մնացել: Մեր մտաւորականութիւնը մեծ մասով ազգային կրթութիւն ունենալով՝ իր չարքերում քիչ է ունել ընդհանուր ցցուն դէմքեր. եղածներն էլ գլխաւորապէս կապւած են եղել Տաճկահայաստանի հետ:

5) Սրանց կողքին, հայ ժողովրդի վրա չատ խոշոր ազդեցութիւն ունեցաւ նաեւ Թրքահայերի վերջին կոտորածն ու դաղթականութիւնը, որը զրաւեց մեր ամբողջ ուշադրութիւնը, մեր բոլոր ուժերը եւ հեռու պահեց նրանց իշխանութեան մէջ ունենալիք հնարաւոր մասնակցութիւնից: Կոտորածն ու դաղթականութիւնը փշրեցին հայ ժողովրդի թեւերը: Միւս կողմից այն ծանր կացութիւնը, որի մէջ ապրում է այժմ հայ ժողովուրդն ազգովին, թուլացնում է մեր ազգային ինքնագլխացումը եւ չեղում մեր ազգային կամքը, որի հետեւանքով մենք ստիպւած ենք զբաղւելու ոչ թէ իշխանութեան յեղափոխութեան խնդիրներով, այլ մեր Ֆիզիքական գոյութեան հարցով:

Կոռնիլովեան ապստամբութիւնից յետոյ, Անդրկովկասում եւս կազմւեց յեղափոխական իշխանութիւն, որի մէջ տիրող դերը ստանձնեց վրացական սօց-դէմօկրատիան։ Հայ ժողովուրդն զրկւեց այնտեղ, յանձին Դաշնակցութեան, մասնակցութեան հնարաւորութիւնից, որովհետեւ յայտարարւեց նախօրօք, որ այդ իշխանութիւնը պէտք է կազմւած լինի սօցիալիստական տարրերից, իսկ Դաշնակցութիւնը, որի ետեւից գնում է հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը՝ աշխատաւորութիւնը, յայտարարւեց ոչ-սօցիալիստ։

Այս երեւոյթը անբնական է եւ անարդար. իշխանութիւնը չպէտք է թողնել բախտի խաղին. Նրա մէջ պէտք է վերականգնել ուժերի հաւասարակշռութիւն, որովհետեւ առանց դրան իշխանութիւնը չի կարող լինել օգտակար եւ արդար։ Այս տեսակէտով, անհրաժեշտ է մի չէզոք, ղեկավար տարր կովկասեան իշխանութեան մէջ, որը սանձէր ուժերի ոտնձգութիւնը եւ պաշտպանէր թոյլի իրաւունքները։ Կովկասեան ապագայ կառավարութիւնը պէտք է լինի կօալիցիօն, 7 հոգուց. 4 կենտրոնից, ոչ տեղական ազգերից, 3 կովկասեան երեք գլխաւոր ազգերից, մէկ-մէկ հոգի իւրաքանչիւր ազգից եւ անպայման այն հոսանքից, որը ամենաազդեցիկն է այդ ազգի մէջ։ Ազգային ներկայացուցիչներից իւրաքանչիւրը իր կողքին կունենայ ազգային խորհուրդ՝ կազմւած իր ազգի մէջ եղած բոլոր հոսանքներից։

Հինգերորդ նիստում վիճաբանութեան են դրւում նախորդ զեկուցումները.

Սիմ. Փիրումեանը (մենշեւիկ) խօսում է ռուսերէն, որի դէմ ամէն կողմից բողոքներ են լսւում։ Նա քննադատում է Առանձին Կոմիտէի ազգային հիմքը, կողմնակից է կօալիցիայի եւ դէմ դրսից «վարեագ»ներ բերելուն։ Իր ճառի մէջ մի շարք փողոցային հայհոյանքներ է ուղղում դաշնակցականների հասցէին (բանդիտներ եւն.)։ Պոռթկում է ընդհանուր բողոք ու դայրոյթ։ Նախագահ Լ. Աթաբէգեանը յանդիմանում է Փիրումեանին եւ պահանջում ներողութիւն խնդրել։ Ժողովը խառնւում է եւ քշում ճառախօսին ամբիոնից։

Ա. Երզնկեանը սոց.-դէմոկրատական Փրակցիայի կողմից ներողութիւն է խնդրում Փիրումեանի խօսքերի համար։ Ապա քննադատում է Առանձին Կոմիտէի ազգային բնոյթը։ Մօտ լինելով Առանձին Կոմիտէին, նա վկայում է, որ կոմիտէի անդամների առանձնասենեակները մի-մի դաւադրական վայրեր են, ուր դաւեր են նիւթում ո՛չ միայն իրար դէմ, այլ եւ ազգերի դէմ։ Մի դժբախտ պատահականութեամբ Ջաֆարովի եւ Պապաջանեանի սենեակները գտնւում են իրար մօտ եւ դռները բացւում են իրար մէջ, կարծէք միմիանց գործողութիւնները դիտելու համար։ Եւ պէտք է տեսնել, թէ ինչե՛ր են տեղի ունենում այնտեղ։ Պէտք է վերակազմել իշխանութիւնը սօցիալիստական հիմքերով։ Կովկասի կառավարութիւնը պէտք է կազմել միայն սօցիալիստներից, եւ Դաշնակցութիւնը, իբրեւ ազգային եւ ոչ-սօցիալիստական կուսակցութիւն, տեղ չպիտի ունենայ այնտեղ։ Կարիք չկայ դրսից չէզոք տարրեր հրաւիրելու, սօցիալիստ լինելու հանգամանքը բաւական

է, որ իշխանութիւնը կովկասում տարւի ազազգային, պետական ուղղութեամբ: Եւ յետոյ մի շարք մեղադրանքներ է ուղղում դաշնակցականների հասցէին, որոնք իբրեւ թէ, «վարում են թիկունքի քաղաքականութիւն»:

Ս. Ցարուքիւնեանը (Ժող.) Առանձին կոմիտէի թուլութեան պատճառը գտնում է ոչ թէ նրա ազգային կազմի, այլ ազգայնական բնոյթի եւ ընդհանուր պետական պայմանների մէջ: Կովկասի իշխանութիւնը պէտք է հիմնել ազգային սկզբունքներով. ազգերի ինքնորոշումը յեղափոխութեան նուաճումներից մէկն է: Նա եւս հակառակ է դրսից չէզոք մարդկանց հրաւիրելու մտքին: Կովկասի կառավարութիւնը պէտք է կազմւի մի ընդհանուր կոմիսարից (ոչ-կովկասցի) եւ երեք օգնականներից՝ հայ, վրացի, թիւրք:

Առանձին կոմիտէի հարցի քննութիւնը չարունակւում է եւ վեցերորդ նիստում, ուր, ի միջի այլոց, մի ուժեղ ճառ է արտասանում Խ. Կարճիկեանը, որ հերքում է Դաշնակցութեան դէմ եղած մեղադրանքները: «Ասում են, որ մենք գործում ենք կովկասեան դէմօկրատիայի թիկունքում եւ այդ է հայ ժողովրդի մեկուսացման պատճառը: Ճի՞շտ է այդ: Փաստ է, որ թիւրք դէմօկրատիա գոյութիւն չունի. հայ դէմօկրատիան ինքն իր թիկունքում գործել չի կարող: Նշանակում է, մնում է վրաց դէմօկրատիան — սոցիալ-դէմօկրատիան: Եւ մեղանից պահանջում են, որ մենք նրա յետեւից գնանք: Բայց մի՞թէ հնարաւոր է այդ: Ո՛չ, յետեւից գնալու մասին խօսք լինել չի կարող. խօսք կարող է լինել միայն հետը գնալու մասին, եւ այդ բանն է, որ վրաց սոցիալ-դէմօկրատիան չի ուզում ընդունել: Պահանջում են, որ Դաշնակցութիւնը լինի ստորադասեալի կամ խնդրողի դերում: Դա ե՛ւ անպատւաբեր է, ե՛ւ աննպատակայարմար, որովհետեւ անկարելի է, որ մի ամբողջ ժողովրդի դէմօկրատիայի կազմակերպութիւնը խնդրողի դեր ստանձնի մի հարեւան ժողովրդի դէմօկրատիայի հանդէպ»:

Մի շարք ուրիշ ճառախօսներից յետոյ, յուզած կերպով պաշտպանում է Առանձին կոմիտէի անդամ Մ. Պապաջանեանը, որ կոմիտէի թուլութեան պատճառը տեսնում է պետական իշխանութեան ընդհանուր թուլութեան մէջ: Եւ երկար կանգ է առնում իր հրաժարականների վրա — «Իմ պաշտօնավարութիւնը եղել է հրաժարականների մի շարք»: Վրդովւած հերքում է Երզնկեանի պնդումը, թէ իր «առանձնասնեակը եղել է դաւադրութիւնների վայր»: Դէմ է արտայայտւում դրսից չէզոք տարրեր բերելուն, «որովհետեւ մենք եւ մեր հարեւանները ձգտում ենք ինքնավարութեան, իսկ այստեղ ուրիշին են ուզում յանձնել մեր իշխանութիւնը: Կառավարութիւնը պէտք է յանձնել սոցիալիստներին, որովհետեւ միայն սոցիալիստական իշխանութիւնը կարող է հեղինակութիւն ունենալ լայն զանգւածների մէջ»:

Ն. Աղբալեանը, իբրեւ վերջին խօսող, մի ոգեշունչ ճառով մէկիկ-մէկիկ հերքում է հակառակորդների ամբաստանութիւնները: Ժողովը լարւած հետեւում է նրա հիանալի ճառին, որը յաճախ ընդհատւում է պատգամաւորների եւ հանդիսականների խանդավառ ծափերով: Վերջացնում է մի տպաւորիչ պատկերով, որի մէջ Դաշնակցութիւնը նմանեցնում է վարպետ դարբնին, որ փոքրիկ մուրճը ձեռքին վարում է աշխատանքը, իսկ մեւս կու-

սակցութիւնները՝ մուրճ խփող աշկերտի: Հէնց որ աշկերտներից մէկը սխալմամբ մուրճը փոխանակ երկաթին խփելու՝ խփի վարպետի ձեռքին, սա իր մուրճով կը զարնէ նրա գլխին եւ կը հրաւիրէ կարգի: Ճառի այս համեմատութիւնը ծայր աստիճանի ջղայնացնում է ասց.—յեղափոխականներին եւ ասց.—դէմօկրատներին, որոնք աղմկով հեռանում են ժողովից եւ խորհրդակցելուց յետոյ որոշում են, իբրեւ բողոք, չմասնակցել այս նիստին:

Ճաշորդ նիստը, հոկտ. 5–ին, գրեթէ ամբողջապէս զբաղւում է այս միջադէպով: Արտ. Չիլինգարեանը կարդում է դաշնակցականների կողմից մի պատճառաբանուած բանաձեւ, որով պարզում է Դաշնակցութեան դերը համագումարում: Կուսակցութեան նպատակն է «հայ ժողովրդի բոլոր դրծօն տարրերի հետ համաձայնութեան գալ այն գործնական միջոցների վերաբերմամբ, որոնք իրապէս պիտի ապահովեն ազգամիջեան համերաշխութիւնը Կովկասում եւ գործակցութիւնը համառուսական դէմօկրատիայի հետ, յանուն հայ աշխատաւոր ժողովրդի կենսական շահերի եւ ռուսական մեծ յեղափոխութեան յաղթանակի»:

Ժողովրդական կուսակցութեան կողմից Մ. Պապաջանեանը բողոքում է, որ ժողովից հեռացողները արդէլք են լինում համագումարի բնականոն պարապմունքներին եւ դատապարտում է նրանց քայլը: Անկուսակցականների կողմից Ց. Մանանդեանը նոյնպէս բողոքում է կուսակցական պայքարի դէմ եւ հրաւէր է կարդում համերաշխութեան:

Այս յայտարարութիւններով միջադէպը համարւում է փակւած:

Հոկտ. 6–ի նիստում քննւում է վարչական բաժանումների հարցը, որի մասին զեկուցում է ներկայացնում Ս. Կամսարականը (անկ.). — «Անդրկովկասի վարչական սահմանները, ասում է նա, ռուսական տիրապետութեան տակ մի քանի անգամ են փոխւել: Ներկայ սահմանները մտցւած են 60–ական թւականների վերջում: Նահանգների, գաւառների եւ դիւղական հասարակութիւնների սահմանները դծելիս ռուս կառավարութիւնը զեկավարւել է ոչ թէ տնտեսական, ցեղագրական ու վարչական նկատումներով, այլ բոլորովին մութ հաշիւներով: Վերջերս ձգտում էր, որ քրիստոնեայ եւ դլխաւորապէս հայ ազգաբնակութիւնը մի վայրում մեծամասնութիւն չկազմի: Դրա համար ժողովուրդը միշտ յարուցել է սահմանափոխման հարցը, բայց միշտ էլ մերժւել է: Վերջին անգամ հին կառավարութեան օրով, յունւարից 1916–ին, երբ զէմսուվօ մտցնելու խնդիրը դրւեց»: Ապա փաստերով եւ թւերով ցոյց է տալիս գոյութիւն ունեցող սահմանների վնասակարութիւնը եւ առաջարկում է նոր բաժանումներ կատարել ազգային սկզբունքով, վերագծել նահանգների, գաւառների եւ դիւղաշրջանների սահմանները, որով կստեղծւի հայկական մի շրջան՝ Երեւան կենտրոնով, որ անտեսական եւ քաղաքական մէկ միութիւն կը կազմէ: Այդ շրջանը կը կազմւի ամբողջ Երեւանի նահանգից, Կարսի երկու հարեւան գաւառներից, Թիֆլիսի երկու գաւառներից եւ Գանձակի լեռնային շրջանից — 15 գաւառ, որից 10–ի մէջ կը լինի հայկական մեծամասնութիւն 2,330,000 ազգաբնակութեամբ, որից 1,220,000 հայ — 60%:

Գ. Խատիսեանը (դաշ.), անում է լրացումներ, առանձնապէս շեշտում է տնտեսական գործօնների դերը եւ դէմ է արտայայտւում մէկ նահանգ ստեղծելուն: Նա առաջարկում է կազմել հայկական երեք նահանգ մեկնելով գործնական նկատումներից:

Ղ. Տէր-Ղազարեան — Սօց.-Դէմօկրատների կողմից ընդունում է սահմանադրաժամման համար առաջարկուած սկզբունքը եւ առաջարկում է հարեւանների հետ համաձայնութեան գալ, միասին կատարել սահմանադրաժամումը: Դէմ է մէկ կամ երեք նահանգի. դա կարող է հարեւանների մէջ կռիւներ առաջ բերել: Պէտք է դաւառային միութիւններ կազմել, կանոնադրել սիստէմով: Անդրկովկասի կենտրոնը պէտք է լինի Թիֆլիսը:

Ա. Խոնդկարեանը (ս.-յ.), անհրաժեշտ է դտնում սահմանադրումը վարչական տեսակէտով: Պէտք է հայերը, թիւրքերը եւ վրացիները միասին կատարեն այդ աշխատանքը: Կանոնադրել սիստէմը աւելի առաւելութիւններ ունի, բայց հարիւր թէ կառավարութիւնը համաձայնի: Ցամենայն դէպս, պէտք է կանգնել կանոնադրել սիստէմի վրա, եթէ այդ չանցնի — նահանգային:

Ռ. Վէրմիշեանը յայտնում է, որ Հայ. Ժող. Կուսակցութիւնը սահմանափոխման վրայ նայում է զուտ վարչական-տնտեսական տեսակէտից եւ ընդունում է 3 նահանգի դրութիւնը. մի նահանգ կազմելու դէպքում հարեւանները կարող են դայթակղել, թէ հայերը քաղաքական ձգտումներ ունին:

Ա. Շահխաթունի (դաշ.) մանրամասն պատմութիւնն ու վերլուծութիւնն է անում սահմանադծման հարցի եւ պաշտպանում է Կամսարականի առաջարկած նախագիծը: Գործնական նկատումներով դէմ է կանոններին: Պէտք է պահել նահանգային սկզբունքը: Դէմ է Թիֆլիսը ամբողջ Անդրկովկասի կենտրոն դարձնելուն:

Ա. Երզնկեանը (ս.-դ.) նորից բուռն կերպով յարձակւում է Դաշնակցութեան վրա, որը այս խնդրում էլ վարում է թիկունքային քաղաքականութիւն. մէկ կամ երեք նահանգ պահանջելով, նա ուզում է հայկական տէրիտորիա ստեղծել, որ չօվինիզմ է: Դրա համար իրենք պնդում են կանոնների վրա:

Ապա ընդում է յանձնախումբ հաշտեցնող բանաձեւ կազմելու համար: Յանձնաժողովն ընդհանուր դծերով իւրացնում է Կամսարական-Շահխաթունու ծրագիրը, որը եւ վաւերացւում է համագումարի կողմից:

Հոկտ. 8-ի նիստում քննւում է դպրոցական խնդիրը: Հիմնաւորած զեկուցում է կարդում Ս. Տիգրանեանը (դաշն.) պաշտպանելով դպրոցների ազգայնացման, եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման տեսակէտը: Զեկուցման մտքերն ընդունւում են ընդհանուր ժողովի կողմից:

Հոկտ. 9-ին, նիստի նախագահ Ղ. Տէր-Ղազարեանը յայտնում է, որ աւագների խորհուրդը երէկ դիշեր մինչեւ ժամի 2 եւ այսօր մինչեւ ժողովի բացումը խորհրդակցելով՝ եկել է հետեւեալ համաձայնութեան համագումարի կողմից ընտրելիք խորհրդի եւ Գործադիր Մարմնի կազմի մասին.

1) Մեծ Խորհուրդը կամ Խորհրդաժողովը պէտք է ներկայացնի համագումարի պատկերը. իւրաքանչիւր հոսանք ներկայացուցիչ պիտի ունե-

նայ իր թեւի համեմատ: Խորհրդակցական ձայնով կը հրաւիրուին ներկայացուցիչներ մի քանի քաղաքներից եւ հաստատութիւններից:

2) Գործադիր Մարմինը կամ Ազգային Խորհուրդը բաղկանալու է 6 դաշնակցականներից, 2-ական հոգի ազգ.-դէմ., ազգ.-յեղ. եւ ժող. եւ 3 չէզոքներ անձնական ընտրութեամբ, ընդամէնը 15 հոգի:

Հոկտ. 9-ի երեկոյեան նիստը զբաղւում է Մեծ Խորհրդի եւ Գործադիր Մարմնի իրաւասութիւնների որոշումով եւ յանձնում է Աւագների Խորհրդին պատրաստել մի բանաձեւ:

Ս. Ցարուքիւնեանը (ժող.), զեկուցում է պարենաւորման տագնապի մասին:

Ցաջորդ նիստերի մասին, դժբախտաբար, նիւթ չունինք ձեռքի տակ, բայց այսքանն էլ բաւական է պարզ պատկեր կազմելու համար համագումարի աշխատանքների եւ որոշումների մասին: Նա քննութեան առաւ եւ որոշումներ տւեց օրւայ բոլոր հրատապ հարցերի մասին: Նա, կարելի է ասել, ապառիչ ամբողջութեամբ արտայայտեց այն ապրումները, որ ա՛յն օրերին ունէր արեւելահայ ժողովուրդը: Եթէ ներկայացւէր համագումարի եւ ծխական կողմը — ողջոյնի հեռագիրներ ուրիշ ժողովրդների եւ կազմակերպութիւնների կողմից, ժողովրդական համակրական ցոյցերը եւն. — պատկերը կը լինէր աւելի տպաւորիչ:

Համագումարը վերջացաւ Գործադիր Մարմնի կազմութեամբ, որը ստացաւ Հայոց Ազգային Խորհուրդ անունը: Ազգային Խորհուրդը ունեցաւ հետեւեալ կազմը. Արամ Մանուկեան, Ա. Ահարոնեան, Ն. Աղբալեան, Խ. Կարճիկեան, Ռ. Տէր Մինասեան, բժ. Ա. Բարալեան (դշն.), Ա. Ստամբոլցեան, Ց. Տէր-Օհանեան (ա.-յ.), Մ. Ղարաբէկեան, Ղ. Տէր-Ղազարեան (ա.-դ.), Ս. Ցարուքիւնեան, Մ. Պապաջանեան (ժող.), Ս. Մամիկոնեան, Տ. Բէդզատեան եւ Պ. Զաքարեան (ան.): Նախագահ ընտրուեց Ա. Ահարոնեանը: Ցետագային, այս կամ այն կէտի մէջ տեղի ունեցան որոշ փոփոխութիւններ. կուսակցութիւնները իրաւունք ունէին իրենց մէկ անդամին յետ կանչել եւ տեղը նշանակել ուրիշին: Այդ ձեւով Ազգային Խորհուրդի կազմի մէջ առնուեցան Ար. Երզնկեան (ա. դ.), Ս. Վրացեան (դաշն.) եւ ուրիշներ:

Համագումարի որոշումով Ազգային Խորհուրդը պէտք է լինէր սոսկ գործադիր մարմին: Դէպքերի բերումով նա դարձաւ ազգային գերագոյն իշխանութիւն, մի տեսակ հայկական կամ արեւելահայոց կառավարութիւն. Կովկաս ապաստանած արեւմտահայերի համար՝ նոյն դերը կատարում էր Արեւմտահայ Բիւրօն, յետոյ՝ Ազահովութեան Խորհուրդը: Ընդհանուր բնոյթ կրող բոլոր կարեւոր հարցերում Ազգային Խորհուրդը եւ Արեւմտահայ Բիւրօն գործում էին համախոհ ու համերաշխ, մանաւանդ, ճակատի պաշտպանութեան գործում:

Խորհրդաժողովի փակումից անմիջապէս վերջը, Ազգային Խորհուրդը հայ ժողովրդին ուղղեց հետեւեալ կոչը:*)

Հայրենակիցնե՛ր,

Սեպտ. 27-ին, Թիֆլիսում դումարուած հայոց ազգային խորհրդաժողովի որոշման համաձայն, կազմուած է 1) Ազգային Ժողով, որի քննութեան եւ վճռահատութեան ենթարկւում են հայ կեանքի առաջադրած խնդիրները եւ 2) Ազգային Խորհուրդը, որ ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագոյն ղեկավարութիւնը, որպէս գործադիր մարմին:

Թէ մէկը եւ թէ միւսը կազմակերպուած են ազգային խորհրդաժողովի ղծած սահմաններում եւ բոլոր գործօն կուսակցութիւնների ու չէզոք տարրերի մասնակցութեամբ՝ համագործակցութեան սկզբունքով:

Ազգային խորհուրդը պատասխանատու եւ հաշուետու է Ազգային Ժողովի առաջ, որ պարբերաբար պիտի դումարւի Թիֆլիսում իր հրահանգիչ եւ վերահաս ֆունկցիան իրագործելու համար:

Ազգային Խորհուրդը իր գործունէութեան կէտ նպատակ ունենալով հայ ժողովրդի կենսական շահերը՝ միաժամանակ պիտի ճգնի այդ շահերը ներդաշնակել ռուսական մեծ դեմոկրատիայի եւ մեր բոլոր հարեւանների նոյնպիսի շահերի հետ՝ միշտ առաջնորդ ունենալով մի կողմից առողջ պետականութեան եւ միւս կողմից ժողովուրդների եղբայրութեան եւ ազատութեան բարձր սկզբունքները:

Խորապէս գիտակցելով իր յանձն առած պարտքի բոլոր լրջութիւնն ու ծանրութիւնը՝ Ազգային Խորհուրդը վստահ է, որ հայ ժողովրդի բոլոր խաւերի անվերապահ ու հզօր աջակցութիւնը նրան երբեք չի պակասի:

Հայրենակիցնե՛ր, փորձութիւններով հարուստ ու տագնապալից այս օրերում, երբ ամէն օր դաժան անակնկալներ կարող են ի դերեւ հանել ստեղծագործական լաւագոյն իղձերն ու ճիգերը, հայ ժողովրդի բոլոր կենդանի ուժերի համերաշխ գործակցութիւնը դառնում է գերագանցապէս հրամայական:

Պատրանքների տեղ չկայ: Մեր կեանքի կարիքը, աղէտն ու ւերը անսահման է, պէտք է որ անսահման լինի նաեւ մեր զոհաբերութեան պատրաստակամութիւնը:

Այս դժուարին օրերին, Ազգային Խորհուրդը դիմում է հաւատով հայ ժողովրդի առողջ բնազդին, քաղաքական խմաստութեանը եւ հինաւուրց կորովին եւ նոյն խորունկ հաւատով է, որ նա առանց վարանումի ու տարակուսանքի վճռապէս ձեռնարկում է շինարարական աշխատանքի՝ յենուած գիտակից հայութեան վստահութեան, ինչպէս եւ նրա բարոյական ու նիւթական կուռ աջակցութեան վրա:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

*) Կոչի հեղինակն է Նիկոլ Ադբալեանը:

ԵՐԿՈՒՆՔ

ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՑԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՑԵՏՈՑ

Հոկտեմբերեան յեղաշրջումը հիմնովին փոխեց դէպքերի ընթացքը ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս եւ Կովկասում: Եւ ամենից առաջ անդրադարձաւ պատերազմի եւ խաղաղութեան վրա:

Ժամանակաւոր Կառավարութիւնը պատերազմի վերաբերմամբ ընդունել էր միանգամայն որոշ ուղղութիւն — ընդհանուր եւ պատուաւոր հաշտութիւն: Մարտ 14–ին, Բանւորական եւ Զինուորական Խորհուրդը դիմելով ամբողջ աշխարհին՝ յայտարարել էր, թէ ազատ Ռուսաստանը հրաժարւում է ցարիզմի նւաճողական քաղաքականութիւնից: Իսկ մարտ 27–ին, ժամ. Կառավարութիւնը ձեւակերպել էր իր քաղաքական դաւանանքը. «Ազատ Ռուսաստանի նպատակը չէ տիրել ուրիշ ժողովուրդներին, խլել նրանց ազգային արժէքները, ուժով գրաւել օտար երկրներ, այլ հաստատել տեւական խաղաղութիւն՝ հիմնւած ժողովուրդների ինքնորոշման վրա: Ռուս ժողովուրդը չի ձգտում ուժեղացնել իր ներքին կազմը ի հաշիւ ուրիշ ժողովուրդների. նրա նպատակի մէջ չկայ նւաստացման ու ստրկացման եւ ո՛չ մի հակում»:

Ժամ. Կառավարութիւնը այս ուղեգծին հետեւեց իր յետագայ բոլոր քայլերում: Նոյն ոգով գործեց եւ Պետրոգրադի Բանւորական ու Զինւորական Խորհուրդը՝ ժամ. Կառավարութեան ներշնչողն ու յենարանը եւ յեղափոխական դեմոկրատիայի կամքի արտայայտիչը: Խորհուրդը, հակառակ բոլշեւիկների բուռն դիմադրութեան, ապրիլ 26–ին որոշեց չէզոք մի վայրում գումարել միջազգային ընկերվարական խորհրդաժողով եւ այնտեղ լուծել պատերազմի եւ խաղաղութեան հարցը միջազգային ծաւալով: Այս որոշումը միանգամայն համապատասխանում էր եւ Եւրոպայում, մանաւանդ, պատերազմին չմասնակցող երկրներում տիրող տրամադրութեան: Այնտեղ էլ հերթի էր դրւած նման խորհրդաժողովի գումարումը եւ կազմւած էր,

այսպէս կոչուած, Հոլանդ–Սկանդինաւական կոմիտէն, որ կատարում էր հա–մագումարի հրաւիրման նախապատրաստական աշխատանքները:

Ընդհանուր համաձայնութեամբ, խորհրդաժողովը նշանակուեց 1917 թ. յուլիս 8–ին Սթոկհոլմում: Օրակարգի վրայ դրուում էին պատերազմի հետ կապ ունեցող բոլոր հարցերը, որոնց շարքում եւ հայկական խնդիրը: Հա–յաստանի կողմից խորհրդաժողովին պիտի մասնակցէր Հ. Ց. Դաշնակցու–թիւնը, որի լիազօր ներկայացուցիչ Ռոստոմ Զօրեանը Թիֆլիսից մեկնել էր Սթոկհոլմ՝ նախօրօք մասնակցելով Պետրոգրադի խորհուրդների եւ ընկեր–վարական շրջանների նախապատրաստական աշխատանքներին: Պետրոգրադի Բանւ. եւ Զինւ. Խորհուրդը իր պատւիրակութեան համար մշակած հրա–հանգներում դրել էր եւ Թիւրքահայաստանի ինքնավարութեան պահանջը:

Հ. Ց. Դաշնակցութիւնը կազմակերպիչ մարմնին ներկայացրեց մի ընդարձակ յուշագիր, որի մէջ մանրամասնօրէն նկարագրում էր հայերի վիճակը պատերազմի նախօրեակին ու պատերազմի ընթացքին, հայկական տեղահանութիւնները ու կոտորածները, եւ ձեւակերպում հայկական պա–հանջները — «Ռուսահայաստանը Վրաստանի եւ Թաթարստանի (Ատրպէյ–ջանի) հետ պէտք է լինի ինքնավար՝ դաշնակցային ու հանրապետական Ռու–սաստանի ծոցում». Թիւրքահայաստանը պէտք է ազատագրւի թիւրքական տիրապետութիւնից. «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական 6 վիլայէթները եւ Կիլիկեան. ի բաց առեալ 1877–78 թուականների պատերազ–մից յետոյ հայկական նահանգներին միացած մահմետական շրջանները». «Հայաստանի չէզոքութիւնը պէտք է երաշխաւորւի միջազգայնօրէն», «Թիւր–քական կառավարութիւնը պէտք է հատուցանի հայերի վնասները» եւ այլն:

Ինչպէս յայտնի է, Սթոկհոլմի խորհրդաժողովը դաշնակից պետու–թիւնների բացասական վերաբերումի եւ Ռուսաստանի ներքին դէպքերի հե–տեւանքով չգումարուեց: Հետաքրքրական է, որ իթթիհատական Թիւրքիան էլ ներկայացուցիչներ էր ուղարկել Սթոկհոլմ՝ Ն. Մաղլիա էֆ. եւ դր. Հիւսէյին Ջազէ Ալի բէյ, որոնք իրենց յուշագրի մէջ, առանց որեւէ ակնարկ անելու հայկական խնդրի մասին, «յանուն Թիւրք դեմոկրատիայի», պա–հանջում էին «ազգերի ինքնորոշման իրաւունք՝ առանց խորութեան ապի–ատակ, դեղին ու սեւ ցեղերի միջեւ», «դաշտնի դիւանագիտութեան վերա–ցում» եւ այլն*):

Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ խաղաղութեան գործը առաջաւ նոր ընթացք. բոլշեւիկները դիմեցին անջատ հաշտութեան՝ յայտարարելով «ելրայլրացման» սկզբունքը ռազմաճակատի հակառակորդ դինւորների հետ եւ պատերազմող կողմերին առաջարկելով անցնել անմիջական բանակցու–թիւնների: Այս քաղաքականութեան, ինչպէս եւ երկրի ներսը բռնկուած ա–նիշխանութեան ու քաղաքացիական կատաղի կռիւների հետեւանքով՝ սկսուեց համատարած քայքայումը ռազմաճակատում. զօրամասերը թողնում էին

*) Սթոկհոլմի խորհրդաժողովին վերաբերւող ամբողջ նիւթը հրատարակուած է առանձին հատորով. «Stockholm», Ed. Tidens Förlag, Stockholm, 1918, որի մէջ ամբողջովին գետեղուած է եւ Հ. Ց. Դաշնակցութեան յուշագիրը:

դիրքերը եւ հրացանը առած՝ չուապում դէպի տուն, որպէսզի օր առաջ բաժին ստանան բոլշեւիկների խոստացած «հողից ու բուրժուաների գոյքից»։ Եւ Բալթիկ ծովից մինչեւ Ֆիրմանչահ, ամբողջ տարածութեան վրա, միլիոնաւոր զինուած մարդիկ՝ խուժեցին դէպի թիկունք։

Այս զանգուածային դասալքութիւնը առանձնապէս հիւանդագին անդրադարձում ունեցաւ կովկասեան ճակատում, ուր ընդհանուր պատճառներից զատ՝ ուժեղ էին եւ ազգային հակամարտութիւնները եւ Թիւրքիայի ու կովկասեան մահմեդականների իւրայատուկ փոխյարաբերութիւնները։

Հոկտեմբերեան յեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերումի։ Բացի ընդհանուր պատճառներից, որով բոլշեւիկեան կոմունիզմը նկատւում էր ցնորական մի ճիգ պատմութիւնը դիտական ընթերվարութիւնից դէպի ուտոպիա տանելու եւ, հետեւաբար, աշխատաւոր մարդկութեան բնաշրջումը առողջ ճանապարհից չեղելու, Անդրկովկասում կային եւ յատուկ պատճառներ. վրացի սոցիալ–դեմոկրատ մենշեւիկների համար բոլշեւիզմը, նախ եւ առաջ, կուսակցական հակառակորդ էր։ Այն յարատեւ պայքարը, որ սոցիալ–դեմոկրատ մենշեւիկ ու բոլշեւիկ հատուածները վարել էին միմեանց դէմ դաղափարական ձեւերով, այժմ փոխադրւում էր գործօն քաղաքականութեան ասպարէզ։ Շատ խոշոր տեղ էին գրաւում այս պայքարում եւ անձնական համակրանքներն ու հակակրանքները, երէկւայ վէճերն ու սրացումները։ Հայերի համար հոկտեմբերեան յեղաշրջումը անընդունելի էր, ամենից առաջ, բոլշեւիկների դէպի պատերազմն ու ճակատի պաշտպանութեան դործը բռնած դիրքի պատճառով. բոլշեւիկների մէջ նրանք տեսնում էին քայքայող ոյժ, մինչդեռ վայրկեանը պահանջում էր Թուրքիայի հզօրութիւնը։ Մահմեդականների աչքին բոլշեւիզմը դասակարդային թշնամի էր. մահմեդական ներկայացուցիչների մեծ մասը խաներ ու բէդեր էին։

Այսպէս թէ այնպէս, Անդրկովկասը հէնց առաջին օրից բացասական դիրք բռնեց խորհրդային իշխանութեան վերաբերմամբ։ Եւ քանի որ Սահմ. ժողովի գոյութիւնը դառնում էր խնդրական, կապը կենտրոնի հետ վերացած էր, եւ, միւս կողմից, Անդրկովկասի Առանձին կոմիտէն խստատ կորցրել էր հեղինակութիւնը ժողովրդի աչքին, իսկ կորնիլովեան յետաշրջական փորձից յետոյ ստեղծւած ինքնապաշտպանութեան մարմինը համայք չունէր լայն զանգւածների մէջ, բնական կերպով, առաջ էր գալիս տեղական իշխանութիւն ունենալու պահանջը։ Այդ նպատակով, նոյեմբ. 27–ին, հրաւիրւեց մի խորհրդակցութիւն Անդրկովկասի Բանւորական, Զինւորական եւ Գիւղացիական խորհուրդների, Թիֆլիսի Բանւ. ու Զինւորական խորհրդի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի, Հանրային Ապահովութեան կոմիտէի, Անդրկ. Առանձին կոմիտէի, քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների ու Սահմ. ժողովի անդամների, որը մանրապնդին քննութեան առնելով տիրող կացութիւնը՝ որոշեց Անդրկովկասի համար ստեղծել տեղական իշխանութիւն՝ Անդրկովկասեան Սէյմ եւ Անդրկովկասեան Կոմիսարիատ, իբրեւ Սէյմի գործադիր մարմին։ Սէյմի կազմութեան հիմք ընդունւեց Սահմ. ժողովի համար ընտրւած պատգամաւորների քանակը. որոշւեց եռա–

պատկել կուսակցական ցանկերով ընտրված պատգամաւորների թիւը:

Անդրկովկասեան կոմիսարիատը կազմուեց ազգային-կուսակցական ներկայացուցչութեան սկզբունքով: Կոմիսարիատի մէջ մտան. — Ե. Գեգեչկորի՝ նախագահ եւ արտաքին գործոց կոմիսար, Ն. Ռամիշվիլի՝ ներքին, Դ. Դոնսկոյ՝ զինուորական, Խ. Կարճիկեան՝ ելեւմտական, Հ. Օհանջանեան՝ խնամատարութեան, Ներուչեւ՝ երկրագործութեան, Մելիք-Ասլանով՝ հաղորդակցութեան, Յան-Յոյսկի՝ արդարադատութեան, Լ. Բերութով՝ պետական վերահսկիչ: Զինուորական կոմիսարի օգնականներ նշանակուեցին Գոբեչեան եւ Պ. Լեւոնեանը: Երկրագործութեան կոմիսարի օգնականներ՝ Աւ. Շահխաթունեանը եւ Պ. Գելէյզվիլին:

Բայց Անդրկովկասեան կոմիսարիատն եւս չդարմանեց դրութիւնը: Ընդհակառակը, նա ինքը հէնց դարձաւ կուսակցական պայքարի թատերաբեմ եւ բոլշեւիկների ձեռքին՝ պայքարի ուժեղ զէնք:

Ժողով. կոմիսարների Յորհուրդը Ստ. Շահումեանին նշանակել էր Անդրկովկասի կոմիսար, եւ սա աշխատում էր յեղաշրջում առաջ բերել Թիֆլիսում: Բոլշեւիկները ձգտում էին օգտագործել զօրքը, որի մէջ նրանց ազդեցութիւնը օրէցօր աւելանում էր եւ որին դրդում էին Անդրկ. կոմիսարիատի դէմ, որը, իբր թէ, Անդրկովկասը անջատել էր Ռուսաստանից: Փոխանակ բանակի մէջ վայելած համակրանքից օգուտ քաղելով՝ թիւրքերի դէմ պատուար կանգնեցնելու՝ Շահումեանը եւ իր ընկերները ճգնում էին զինուրութիւնը մասնակից դարձնել Անդրկ. կոմիսարիատի դէմ մղած իրենց պայքարին եւ աստիճանաբար ճակատից յետ էին քաշում զօրամասերը: Այս հողի վրա, հոկտ. 20-ին, մերկացնելով ճակատը, դէպի Թիկունք խուժեց հուժկաւոր 39-րդ դիվիզիան: Ձէ՞ որ ռազմական կոմիսար Տրոցկին հրամայել էր ռուս բանակին հեռանալ պարսկական եւ թիւրքական ճակատներից:

Ասենք, բանակը առանց այդ էլ չէր հետաքրքրւում ռազմաճակատով: Նրա ուշն ու միտքը Ռուսաստանն էր, ուր «հող էին բաժանում»: Ուստի առանց սպասելու վերին հրամանատարութեան սահմանած կարգին, մասմաս, հազարներով ու տասնեակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստութիւններ, ռազմամթերքի ու պարէնի անհաչիւ պաշար, մթերքներով լիքը պահեստներ եւ հրացանը դրկած՝ նետւում վագոններըը, շտապում «դէպի տուն»՝ ճանապարհին, մորեխի պէս, աւերելով ու խժռելով ամէն բան:

Ահա մի-երկու փաստաթղթեր, որոնք ցոյց են տալիս, հոկտեմբերեան յեղաշրջման հետեւանքով, կովկասեան ռազմաճակատում առեղծուած դրութիւնը: Կովկասեան բանակի հրամանատարը հեռագրում է ճակատի ընդհանուր հրամանատարին, դեկտ. 25-ին. «Հակառակ առաջին կորպուսի նահանջի համար ճշտորոշուած ժամանակամիջոցին, վերջինս ինքնագլուխ թողնում է դիրքերը, եւ այս նահանջը սպառնում է ճակատը խոպոտ մերկացնել: Այս հանգամանքներում հայկական զօրամասերի ճակատ ուղարկելու յապաղումը եւ, իրրեւ հնարաւոր հետեւանք, երզնկայի դրաւումը ոչ միայն թիւրքերի, այլ եւ քիւրդերի կողմից ինձ կը հարկադրէ, հաւանաբար, պարպել ամբողջ շրջանը, որով մենք անխուսափելիօրէն կը կորցնենք Թիւրքահայաստանը»:

1918 թ. յունուար 8–ին կովկասեան բանակի սպայակոյտը տեղեկագրում է. «6–րդ կորպուսը լքեց իր դիրքերը եւ ամբողջապէս քաշուեց դէպի Սարըղամիշ: Այս պահուն, վերջին դունդն է հեռանում եւ յուն. 13–ին ոչ մի զինուոր չի լինի Շէյթան–Դաղից դէպի հարաւ, եւ այս կողմից ճակատը բոլորովին կը մերկացւի: Առաջին կորպուսն էլ մեծ մասով սկսել է չարժուել դէպի թիկունք. ես վախենում եմ, որ կորպուսի վերջին զօրամասերը կը թողնեն երզնկան նշանակուած ժամանակից առաջ: Եւ մեր զօրամասերի հեռացումը այս կէտից եւ դրաւումը քիւրդերից ճակատագրական կերպով առաջ կը բերեն զինադադարի խախտում թիւրքերի կողմից եւ ընդհանուր յառաջխաղացում ամբողջ ճակատում: Կասկածից վեր է, որ Երզնկայի չըրջանի թիւրքական գրաւման հետեւանքը կը լինի այն, որ մենք կը պարպենք ամբողջ արեւմտեան ռազմաճակատը: Թուրքեստանեան 2րդ կորպուսը եւ կովկասեան 5րդ կորպուսը նոյնպէս ճակատից մեկնելու հարց են յարուցել: Մեր զօրքերի հեռանալը արեւմտեան ճակատից, աչքի առաջ ունենալով կովկասեան բանակի ներկայ վիճակը, անխուսափելի կերպով առաջ կը բերէ մեր գրաւած թիւրք հողամասերի պարպումը: Ուրիշ խօսքով, Երզնկայի չըրջանի պարպումը հաւասար է ամբողջ թիւրքահայաստանի պարպումին, այսինքն՝ նշանակում է կորցնել այն ամենը, որ մենք ձեռք ենք բերել թիւրքիայի դէմ մղած երեքամեայ յաղթական կռիւներով: Այս պարագան իրաւունք է տալիս ինձ մի անգամ եւս խնդրելու, որ չտապով ուղարկէք հայկական զօրամասեր, որոնք հնարաւոր կը դարձնեն կայունացնել մեր դրութիւնը»:

Յունւ. 10–ին Ալաշկերտի կոմիսար Գէորգեանը Ալէքսանդրապոլի քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, ուղիղ հեռագրաթելով, հետեւեալ ձեւով է պատկերացնում կացութիւնը. «Ղարաքիլիսան Թողնում է Բշնամու յարձակումից առաջ դատարկուած քաղաքի տպաւորութիւն: Ճակատից հեռացող վերջին գունդը իր հետ տանում է չրջանի բոլոր հիմնարկութիւնները, անգամ փոստն ու հեռագիրը: Հրամանատարական կազմ չկայ. կան միայն 150 անկանոն ձիաւորներ. տեղական բնակչութիւնն է պահում պարէնի պահեստները, զինուրական դոյքերը, հրետանու, ինժեներական եւ ռազմամթերքի պահեստներն ու վառօդարանները: Ճանապարհների կայանները վերացած են: Դժւարութեամբ, մեր տեղական ուժերով պահւում է հեռագրական կապը: Կոմիսարիատն ընդունել է 4րդ կորպուսի եւ հասարակական հիմնարկութիւնների անհաչիւ գոյքը: Միայն ձիեր ընդունած են մի քանի հազար հատ: Մենք անզօր ենք տեղաւորել Թողնուած հարստութիւնները: Խիստ վախենում ենք արիւնոտ ընդհարումներից եւ աւազակութիւններից: Քիւրդերն սկսեցին իրենց յարձակումներն ու թալանները դիւղերի, պահակախմբերի եւ Մակուի երկաթուղու վրա, որը հազիւ չնչում է: Հեռագրական հաղորդակցութիւնը Երեւանի հետ կտրուած է»:

Զորրորդ կորպուսի հրամանատարը հեռագրում է յուն. 13–ին. «Կորպուսի փոխադրական մասերը, կայանների զօրքերը, զինուրները, հիմնարկութիւնները հեռանում են անկարգ կերպով: Անկարգութիւնները սաստկանում են օրէց օր: Հայկական զօրամասերը ուժասպառուած են հիմ–

նարկութիւնների եւ կայանների պահակութիւնից: Առանց թիկունքից թարմ ուժերի առաքման կարելի չէ պատասխանատու լինել հետեւանքների համար»:

«Ռուս զինուորները ահաբեկում են տեղացիներին (հայերին) եւ բռնութեամբ ստիպում հեռանալ իրենց հետ», հեռագրում է կովկասեան բանակի սպայակոյտը:

Յունե. 16-ին սպայակոյտից գրում են զօր. Նազարբէգեանին. «Ճակատի դրութիւնը ողբերգական է. ամբացած շրջանների լքումը առաջ է բերում առանձնապէս ողբալի կացութիւն եւ ինձ հարկադրում է տալ հետեւեալ հրահանգները ամրութիւնների պետերին. «Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը հրամայում է ձեզ, որ, աչքի առաջ ունենալով ռուս սպաների եւ զինուորների հեռանալը ճակատից՝ ամրացած շրջանների պահակութիւնը յանձնէք ազգային զօրամասերին»:

Կարս-Մերդենեք երկաթուղագծի վարչութիւնը հեռագրում է յունե. 21-ին. «Երկաթուղային բրիգադի Կարս-Մերդենեք դծի վրա ծառայող ռուս զինուորները լքում են միլիոնաւոր ռուբլիներ արժող նիւթերը և կանգնեցնում շարժումը: Ինդրում ենք կազմել հայկական երկաթուղային դումարտակ եւ նրան փոխանցել այս բրիգադի եւ Կարս-Մերդենեք երկաթուղագծի դոյքը»:*)

Սրանք պատահական օրինակներ են լոկ ա'յն օրերի ռազմաճակատի քայքայումը պատկերացնող ծառատ նիւթից: Իրապէս դրութիւնը անհամեմատ աւելի մռայլ էր: Ռազմաճակատը հալչում էր արեւից տաքացած ձեան պէս. ռուս զօրքը խելայեղ՝ խուժում էր դէպի թիկունք, կովկասեան լեռնաշղթայի միւս կողմը:

Այս խուժումը տեղի էր ունենում ցաւագին պայմանների մէջ, մասնաւորապէս մահմետական շրջաններում: Անկասկած, թիւրքերի ներշնչումով, կովկասեան մահմետականները աշխատում էին մի կողմից արագացնել ռուս զօրքերի փախուստը, միւս կողմից՝ խլել նրա դէնքն ու ռազմամթերքը: Զինուորութեան հողի վրա պատահում էին արիւնոտ ընդհարումներ ու ճակատամարտներ նահանջող ռուս զօրամասերի ու թուրք ազգաբնակութեան միջեւ: Այդ կարգի արիւնոտ դէպքերից առանձնապէս մեծ չուգում առաջ բերեց Շամքորի կոտորածը, յունե. 8-10-ին:

Յունե. 8-ին, ճակատից հեռացող բազմաթիւ զինուորական գնացքներ եկան-կանգնեցին Շամքոր կայարանի մօտ: Ճանապարհը կտրուած էր եւ առաջ երթալը անհնար: Գնացքները բերնէ բերան լեցուած էին զինուորներով, ձիերով, կանանցով ու երախաներով, ինդանօթներով, ռազմամթերքով, մեծաքանակ փամփուշտով ու մթերքով: Զինուորները հարուստ աւար էին տանում իրենց հետ:

Եւ, յանկարծ, դիշերւայ մթութեան մէջ, ամէն կողմից սկսուեց հրայանաձգութիւն: Գնացքները ենթարկուեցին թնդանօթային կրակի: Առաջ

*) Կովկասեան ճակատի այդ ժամանակւայ վիճակի մասին տես՝ ի միջի այլոց, եւ զօր. Ղորղանեանի գիրքը:



ՋՕՐ· Թ· ՆԱԶԱՐԲԵԳՅԱՆ



ՋՕՐ· ԱՆԴՐԱՆԻԿ



ՋՕՐ· Գ· ՂՈՐՂԱՆԵԱՆ



ՋՕՐ· Բ· ԱՐԱԲԱՏԵԱՆ



ևկաւ աննկարագրելի իրարանցում։ Զինուորներն էլ, իրենց հերթին, գրաւեցին դիրքեր եւ գործի դրին դնդացիրները։ Տեղի ունեցաւ յուսահատական կռիւ։ Ցարճակուղներին յաջողուեց վառել դնացքների մի մասը։ Զինուորները անձնատուր եղան։

Պարզուեց, որ յարճակողները եղել են վրացի Աբխազաւայի զրահապատ գնացքը, զօր. Մաղալովի «Վայրենի դիվիզիան» եւ հազարաւոր զինուած թուրք խուժան Գանճակի Մահմ. Ազգային Խորհրդի ղեկավարութեամբ։

Բոլոր գնացքները խուզարկուեցին ու թալանուեցին։ Զինուորներից խլուեց ամէն ինչ — զէնք, ռազմամթերք, պարէն, մասնաւոր դոյքը. անգամ վրանների հագուստը հանեցին թուրք հրոսախմբերը։ Գրաւուած գնդացիրներն ու բոլոր զէնքերը սեփականացրեց Գանճակի Մահմ. Ազգային Խորհուրդը։ Մեծ չուքով աւարը տարուեց Գանճակ։ Թուրք սոց.-յեղափոխական պարագլուխ Ասլան բէգ Սաֆիբէյլուդսկին, հեծած առջեւի գնդացիրը՝ յաղթական մուտք գործեց Գանճակ։

Ցետադային յայտնի դարձաւ, որ այդ յարձակմանը անմասն չէին եւ վրացի վարիչներից ոմանք։ Յուն. 6-ին Ն. Ռամիշվիլին զեկուցանում էր այդ մասին Անդրկ. Կոմիսարիատի նիստին, թէ՝ «Անհրաժեշտ էր դինաթափել Ցարսկի Կոլոդցից մեկնած զօրամասը եւ զէնքը յանձնել վրացական կորպուսին։ Ուղարկուեց մի զրահապատ եւ մի զօրամաս... Բոլոր միջոցները ձեռք են առնուած»։ Իսկ Ջուղելին մատնանշում էր «Աբխազաւայի եւ իր զօրամասի կատարած տխուր դերը։ Զինաթափում չէր, այդ, այլ զինուորների թալան։ Դժբախտ ու տանջուած, իրենց տան կարօտը քաշող մարդկանցից խլում էին ամէն ինչ, անգամ կօշիկները։ Եւ հէնց տեղն ու տեղն էլ ծախում էին։ Աւազակախմբերը ծախում էին զէնքերը։ Ինչ որ զարշելի բան էր տեղի ունենում»։)

Յուն. 26-ին, Երկրային կենտրոնում, նոյն Ջուղելին յայտարարեց. «Իսկ ինչ վերաբերում է Շամքորի դէպքերին, ես յայտարարում եմ, որ ընկ. Նոյ Ռամիշվիլին որոշ կապ ունի նրանց հետ։ Միայն մի քանի օր այդ տխուր դէպքերից առաջ ընկ. Ռամիշվիլին, ինձ հետ ունեցած խօսակցութեան միջոցին, ասում էր, որ զինաթափութեան համար ամենայարմարը ինքը համարում է Աբխազաւայի զօրամասը։ Իմ ցուցմունքները, թէ Աբխազաւան այդ նպատակի համար պահանջած վարկը չունի, ըստ երեւոյթին, չօգնեցին, եւ մենք տեսնում ենք, որ Աբխազաւան իր զօրամասով ուղարկուել է այդ նպատակով։ Ըստ երեւոյթին, այդ ուղարկելը չի եղել առանց ընկ. Ռամիշվիլիի մասնակցութեան»։

Ռուս զօրքերի փախուստի հետեւանքով ամէն կողմից պահանջում էին հայկական զօրամասեր։ Պարզ էր դառնում, որ ճակատի պահպանութեան գործում այսուհետեւ առաջին տեղը բռնելու էին հայերը։ Կարո՞ղ էին նը-

---

*) «Заря Востока», 1927г. янв. 8, № 6.

բանք կատարել այդ պատմական դերը: Ի՞նչ վիճակ ունէին հայերը զինուրական տեսակէտից:

Դեռ հոկտեմբերեան յեղաշրջումից առաջ, Թիֆլիսի եւ Պետրոգրադի հայկական կազմակերպութիւնները հարց էին յարուցել, որ ժամ. կառավարութիւնը հրահանգէ արեւմտեան ճակատի զօրամասերում գտնուող հայ զինուորներին փոխադրել կովկասեան ճակատ եւ կազմակերպել հայկական զօրամասեր: Արեւմտեան ճակատում, այն ժամանակւայ հաշուով, կար չուրջ ութսուն հազար հայ զինուոր: Այդ քանակութիւնը՝ միացած Կովկասում գտնուղ զրեթէ նոյնչափ հայ զինուորների հետ, լաւ կազմակերպւած ու մարզւած, տրւած հմուտ հրամանատարութեան ձեռքը, կարող էր վճռական դեր կատարել Թիւրքիայի դէմ:

Զինուրական նախարարն ու բարձր հրամանատարութիւնը ընդառաջ գնացին այս առաջարկութեան եւ կարգադրեցին հայ զինուորներին համախմբել Թիւրքական ռազմաբեմում, իսկ յուլիս 2 ու 11 հրամաններով կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատարը արտօնեց հայկական հրացանաձիգ գումարտակները վերածել գնդերի: Կարճ ժամանակում կազմեցին վեց հայկական գնդեր՝ իւրաքանչիւրը բաղկացած 2 գումարտակից:

Արագ թափով զարգացող դէպքերը, սակայն, անհրաժեշտ դարձրին հայկական աւելի խոշոր զինուրական միութիւնների ստեղծումը, եւ հոկտեմբերին Հայոց Ազգային Մորհուրդը նոր դիմում արաւ՝ խնդրելով հայկական զօրագնդերի թիւը հասցնել 8-ի, իւրաքանչիւր դունդը դարձնել 3 գումարտակից, եւ այդ 8 գնդերը բաժանել չորսական գնդանոց երկու դիվիզիայի, մէկ բրիգադ այրուձիով, 15 մարտկոց հրետանիով ու յարակից տեխնիկական մասերով:

Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ բաւարարել այդ դիմումը, քանի որ ռազմաճակատի փլուզումը ստանում էր աղէտաւոր ձեւեր, եւ հայկական զօրամասերը կարող էին որոշ չափով մեղմացնել դրութիւնը: 1917 թ. դեկտ. 13-ին, կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը N°136 հրամանով արտօնեց կազմել հայկական կորպուս՝ հրամանատար նշանակելով ռուսական բանակի լաւագոյն զինուորականներից մէկին՝ զօր. Թովմաս Նազարբէգեանին եւ սպայակոյտի պետ՝ զօր. Վիշնեւսկիին:

Սկսուեց կազմակերպական եռուն աշխատանք: Ազգային Մորհուրդը իր միջից կազմեց առանձին մի մարմին Ստ. Մամիկոնեանի գլխաւորութեամբ, որ զբաղւում էր կորպուսի գործերով: Զօր. Նազարբէգեանի մօտ զինուրական նախարար Կոնովկոյի կողմից նշանակւեց յատուկ կոմիսար՝ Դրօն եւ վերջինիս օգնական՝ Սարգիս Մանասեանը: Հետզհետէ հաւաքւեցին ռուս բանակի հայ սպաներն ու զինուորները եւ իրար յետեւից վերակազմեցին հին մասերն ու կազմեցին նորերը: Ազգ. Մորհրդին եւ կորպուսի հրամանատարութեան գլխի օժանդակութիւն էր ցոյց տալիս եւ Հայ Զինուրական Միութիւնը սպայ Արսէն Շահմազեանի նախագահութեամբ եւ մի շարք եռանդուն սպաների անդամութեամբ — Գ. Տէր-Օհանեան, Տ. Անիեան եւ այլն:

Հայկական կորպուսի կազմակերպութեան գուղընթաց զօրահաւաքման ու զինուորական ուժերի կազմակերպումի գործով զբաղւած էր եւ արեւմտահայութիւնը, որը, աւելի քան ուրիշը, տարտափում էր կազմալուծումից եւ միջոցներ էր խորհում ճակատի փլուզումի առաջն առնելու համար:

Արեւմտահայ Բիւրօի նախաձեռնութեամբ, 1917 թ. դեկտեմբերի ընկերներին, Թիֆլիսում, գումարուեց արեւմտահայութեան մարմինների ու քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից ու գործիչներից կազմւած մի խորհրդակցութիւն, որը մանրամասն քննութեան առնելով ճակատի պաշտպանութեան խնդիրը որոշեց իր վրա առնել արեւմտահայկական մարտական ուժերի կազմակերպումը: Այդ նպատակով ընտրուեց յատուկ մի մարմին՝ Ապահովութեան Մորհուրդը, որի մէջ մտան՝ Վահ. Փափազեանը (նախ.), Սեպուհը, Ա. Թերզիպաշեանը, Ց. Տէր-Զաքարեանը, եւ Ժ. Միրզախանեանը: Խորհրդակցութիւնը որոշեց նաեւ յայտարարել պարտադիր զօրակոչ բոլոր արեւմտահայերի համար: Կազմելու էր արեւմտահայկական առանձին դիվիզիա: Ենթադրւում էր ստեղծել 15–20 հազարնոց մի զօրամաս:

Պէտք է ասել, որ դեռ այս որոշումից առաջ, զանազան վայրերում, արդէն գոյութիւն ունէին զուտ արեւմտահայկական զօրամասեր: Վանում կար Վանի գունդը՝ Տ. Բաղդասարեանի հրամանատարութեան տակ՝ Գրիգոր Բուլղարացու ու Լեւոն Շաղոյեանի անմիջական գործակցութեամբ: Խնուս-Մուշ շրջանում գործում էր Սասունի գունդը Մանուկի եւ Մուշեղի գլխավարութեամբ: Ալաշկերտում կազմւած էին տեղական զօրամասեր Սմբատի ջանքերով: Երզնկայի շրջանում էր Մուրատը իր գործակիցների հետ, Բաբերդում՝ Սեպուհը եւ այլն:

Ապահովութեան Մորհրդի առաջին աշխատանքը եղաւ՝ համախմբել այս բոլոր ուժերը եւ կապել իր հետ: Այդ նպատակով մարդիկ ուղարկւեցին շրջանները, եւ մասամբ յաջողւեց ցաք ու ցրիւ եղած զօրախմբերի միջեւ հաստատել որոշ կապ:

Ապահովութեան Մորհուրդը ձեռնարկեց արեւմտահայ դիվիզիայի կազմութեան: Այդ գործին ջերմ աջակցութիւն ցոյց տւին կովկասի բարձր հրամանատարութիւնը, յանձին զօր. Լեբեդինսկու, գնդ. Զեննկեւիչի, զբաւած վայրերի ընդհանուր նահանգապետութիւնը, մասնաւորապէս բժ. Ց. Զաւրեանը եւ դաշնակից պետութեանց Թիֆլիս գտնուղ ներկայացուցիչները: Այս վերջիններս Ապահ. Մորհրդին տրամադրեցին եւ որոշ գումար, կազմակերպչական նախնական կարիքների համար:

Ապահ. Մորհուրդը անմիջապէս դիմեց զօրահաւաքի, ամէն կողմ ուղարկեց գործակալներ, կարճ ժամանակում կարողացաւ առաջ բերել կեանքի ոգեւորութիւն եւ հիմքը դրեց մի չարք զօրամասերի, որոնց համար ստացաւ պահանջւած հագուստը, զէնքը, պարենաւորումն ու նիւթական միջոցները:

Ապահ. Մորհուրդը իր բոլոր կարեւոր ձեռնարկները կատարում էր

համախորհուրդ Ազգային Ժողովրդի հետ: Երկու Ժողովուրդների միջեւ տիրում էր կատարեալ ներդաշնակութիւն, եւ Ապահ. Ժողովուրդն ու Ազգ. Ժողովրդի զինուորական մարմինը գործում էին ձեռք ձեռքի տուած: Որոշ անհամաձայնութիւն առաջ եկաւ արեւմտահայ դիվիզիայի հրամանատար նշանակելիս. Ապահ. Ժողովուրդը կամենում էր այդ պաշտօնին կոչել Անդրանիկին՝ օգտուելու համար նրա թէ՛ հայերի մէջ եւ թէ՛ դուրսը վայելած հմայքից: Ազգ. Ժողովուրդը դէմ էր արտայայտւում այդ թեկնածութեան՝ առարկելով, որ Անդրանիկը չի կարող կառավարել դիվիզիայի պէս մի խոշոր զօրամաս, որի համար, բացի անձնական քաջութիւնից, պահանջւում էր եւ մասնագիտական պատրաստութիւն, որից զուրկ էր Անդրանիկը: Սակայն, Ապահ. Ժողովրդի պնդումի վրա Ազգ. Ժողովուրդը տեղի տւեց, եւ Անդրանիկը նշանակւեց արեւմտահայ դիվիզիայի պետ՝ առաջուց, բժ. Զաւրեանի միջնորդութեամբ եւ Պ. Լեւոնեանի ջանքերով ստանալով զաւրեպետ-զօրավարի աստիճան:

Արեւմտահայ դիվիզիան մտւեց Հայկական Կորպուսի մէջ, իբրեւ նրա մի մասը, եւ այսպիսով, ի վերջոյ, Հայկական Կորպուսը ձեւակերպւեց ու ստացաւ հետեւեալ կազմը.

Կորպուսի հրամանատար՝ զօր. Թ. Նազարբէկեան, սպայակոյտի պետ՝ Վիշինսկի:

Առաջին դիվիզիա*) — 4 գունդ՝ իւրաքանչիւրը 3-ական մարտկոցով եւ 1 հրետանիի բրիգադ 6 մարտկոցով. հրամանատար՝ զօր. Արեշեան:

Երկրորդ դիվիզիա — նոյն կազմով, հրամանատար՝ գնդ. Սիլիկեան:

Այրուձիի բրիգադ — երկու գունդ չորսական հարիւրեակով եւ մէկ ձիաւոր հրետանի. հրամանատար՝ գնդ. Ղորղանեան:

Արեւմտահայ դիվիզիա. Ա. բրիգադ — Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, Երզնկայի գունդ՝ 2 գումար., 2 լեռնային մարտկոց, ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ: Բ. բրիգադ — Ժնուսի գունդ՝ 2 գումար., Ղարաքիլիսայի գունդ՝ 2 գումար., 2 լեռնային մարտկոց: Գ. բրիգադ — առաջին Վանի գունդ՝ 2 գումար., 2 լեռնային մարտկոց, Չէյթունի ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ: Դիվիզիայի հրամանատար՝ զօր. Անդրանիկ, սպայակոյտի պետ՝ գնդ. Զեննիւիչ:

Տեղական զօրամասեր.— Լոռիի, Շուշիի, Ախալքալաքի եւ Ղազախի գնդերը՝ 2-ական գումարտակներով եւ Նուխիի, Ախալցխայի, Լոռիի, Իգդիրի եւ Ջանասարի գումարտակները:

---

*) Ցետոյ, Հայաս. Հանրապետութեան դիվիզիան բաղկացած էր 3 հետեւակ, 1 ձիաւոր եւ 1 բնդաւնօրածիգ գնդերից: Իւրաքանչիւր հետեւակ գունդ ունէր 1500–1800 գինւոր՝ մէջը հաշուելով կապի եւ գնդացիրային վաշտերը: Վաշտը բաղկացած էր 4 դասակից (50 հոգի): Դասակը ունէր 2 ձիաւոր գնդացիր: Զինւորները զինուած էին ռուսական նոր ձեւի (մոսին) հրացաններով: Գունդը ունէր 4 լեռնային բնդաւնօր, 8–12 գնդացիր՝ մախսի եւ կոլտ: Ձիաւոր գունդը ունէր 6 էսկադրոն (5–600 հոգի) իւրաքանչիւր էսկադրոնը ունէր 2 կոլտ ու մախսի եւ 4 ձեռի գնդացիր: Ամբողջ գունդն ունէր 4 լեռնային բնդաւնօր, 2 էսկադրոն նիզակաւոր դասակներ, 25 հոգի յառաջապահ հետախոյզներ, 2 ձեռի գնդացիրով եւ հակազազային դիմակներով: Բնդաւնօրածիգ գունդը ունէր 8 մարտկոց իւրաքանչիւրը 4 բնդաւնօրով: Ընդամէնը 32 բնդաւնօր, որից 16 լեռնային:

Յարակից մասեր.— *բերդային մասեր, բերդային հրետանի, կապի ու հաղորդակցութեան մասեր, պայթուցիկ, առողջապահական, պարենաւորման, հրետանիի, երկաթուղային եւ այլ մասեր**):

Այս զօրամասերին անցաւ ուուս բանակի ժառանգութիւնը հայկական ճակատում, այլ եւ, ապագային, հայ հանրապետական բանակի կորիզը կազմելու պատիւը:

---

*) Հայկական կորպուսի մասին տե՛ս զօր. Ղորղանեանցի վերեւ յիշուած գիրքը, այլ եւ **A. Poidebard «Rôle Militaire des Arméniens», 1920 Paris.** եւ **Commandant M. Larcher, «La Guerre Turque dans la Guerre Mondiale», 1926, Paris.**

ԳԼՈՒԽ Ջ.

ՋԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ «ՄՈՒԹ ՁԵՌՔԻ» ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուս բանակի քայքայումը եւ թիկունքում կատարուող դէպքերը, բնականաբար, չէին կրող վրիպել թիւրքերի ուշադրութենէն: Թիւրք հրամանատարութիւնը այժմ բոլորովին այլ հեռանկարի առջեւ էր կանգնած. ռուս բանակը պատրաստւում էր, 1918 թւի սկզբին, անցնելու ընդհանուր յարձակման՝ անգլիացիներին միանալու ծրագրով, եւ թիւրքերը ոյժ չունէին դիմադրելու: 1917 թւի տարեվերջին թիւրքերի արեւելեան բանակը բոլորովին կազմալոյծ ու բարոյալքւած վիճակի մէջ էր՝ անընդունակ ռազմագիտական լուրջ խնդիրներ լուծելու: Եւ, յանկարծ, ոչ միայն յարձակումըն է կանգնեցւում, այլ եւ ճակատը սկսում է արագօրէն մերկանալ: Թիւրք զեկավարների առջեւ բացւում էին նոր, արբեցնող հորիզոններ:

Նոյեմբ. 17–ին կովկասեան ռուս բանակի հրամանատարը թիւրքական 3րդ բանակի հրամանատար Ֆերիկ–Վեհիբ փաշայից նամակ ստացաւ դինադադար կնքելու առաջարկութեամբ: Նոյն օրերին, բոլշեւիկների նախաձեռնութեամբ, դինադադարի բանակցութիւններ էին սկսւած եւ ռուս–աւստրեւղերման ռազմաճակատում: Անդրկ. Կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի ու հրամանատարութեան համաձայնութեամբ, ընդունեց թիւրքական առաջարկը եւ ռազմաճակատ ուղարկեց 5 հոգինոց մի յանձնախումբ — 2 ռուսներ հրամանատարութեան կողմից եւ Ա. Ջամալեան, վրացի Թեւզայա եւ ռուս Սմիրնովը, որպէս Անդրկ. Կոմիսարիատի ներկայացուցիչներ: Հանդիպումը երկու պատուիրակութիւնների միջեւ տեղի ունեցաւ դեկտ. 2–ին, Երզնկայում, իսկ դեկտ. 5–ին ստորագրուեց դինադադարի համաձայնութիւնը, ըստ որի դինւորական գործողութիւնները վերջ էին գտնում կովկասեան ամբողջ ռազմաճակատի վրայ՝ Սեւ ծովից մինչեւ Վանի լճի հարաւային եզերքը, կողմերը պարտաւորւում էին դինւորական բնոյթ կրող որեւէ գործողութիւն չանել, զօրքերի տեղափոխութիւն կամ լրացում չկատարել եւ մնալ դինադադարի պայմաններով նախատեսուած դիրքերում: Եթէ կողմերից մէկն ու մէկը, մինչեւ հաշտութեան կնքումը, վճռէր դինա–

զինադադարը խախտել, պարտաւորւում էր մէւս կողմին իմաց տալ 14 օր առաջ: Իսկ եթէ զինադադար կնքէր նաեւ կենտրոնական պետութիւնների եւ Ռուսաստանի միջեւ, նրա բոլոր պայմանները պէտք է լինէին պարտադիր կովկասեան ճակատի համար եւս: Եւ որովհետեւ դեկտ. 5–ին լուր էր ստացւել, որ նախորդ օրը զինադադար էր կնքւել եւ Ռուսաստանի ու կենտրոնական պետութիւնների միջեւ, պատերազմական գործողութիւնները կանգ առին ոչ միայն կովկասեան, այլ եւ ամբողջ պարսկական դծի ու Սեւ ծովի վրա: Հաստատւեցին 5 հատուկ մարմիններ՝ հսկելու համար զինադադարի պայմանների գործադրութեան վրա: Անդրկ. կոմիսարիատը իր քայլի մասին անմիջապէս տեղեկացրեց եւ Միջպետքի անդլիական հրամանատարութեան ու Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչներին:

Զինադադարի կնքման պահուն, ռուս–թիւրքական ռազմաճակատը տարածւում էր աւելի քան 500 կիլոմետր երկարութեամբ — Սեւ–ծով—Քեալքիթ—Երզնկա—Մնուս—Վան ուղղութեամբ: Ճեռապատին, Ուիլսընի իրաւարարութեամբ եւ Սեւրի դաշնագրով հայերին յանձնւելիք ամբողջ Հայաստանը գտնւում էր ռուս բանակի գրաւման շրջանում:

Զինադադարի կնքումից յետոյ, 1918 թ. յունւ. 1–ին, կովկասեան բանակի հրամանատար զօր. Օղիշելիձէն վեհիր փաշայից ստացաւ մի նոր նամակ, որով, յանուն թիւրքական բանակի սպարապետ Էնվեր փաշայի, հարցւում էր, թէ ի՞նչ միջոցով կարելի է վերականգնել յարաբերութիւնները Կովկասի կառավարութեան հետ ու հաշտութիւն կնքել երկու երկիրների միջեւ: Յունւ. 15–ին վեհիր փաշան հաղորդեց, որ կենտրոնական պետութիւնների Բրեստ–Լիտովսկ հաւաքւած պատգամաւորները պատրաստ են ճանաչելու Անդրկովկասի անկախութիւնը, եւ որ վերջինս, ամենայն վստահութեամբ, կարող է ուղարկել իր ներկայացուցիչները:

Անդրկ. կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի եւ ազգային խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին, քննելով վեհիր փաշայի առաջարկը՝ պատասխանեց, թէ ինքը պէտք ունի խորհրդակցելու Ռուսաստանի ուրիշ ինքնավար շրջանների հետ եւս եւ 3 շաբաթից կը յայտնէ իր վերջնական որոշումը: Միաժամանակ կոմիսարիատը թիւրքերի առաջարկութեան մասին իմացրեց խորհրդային իշխանութիւնը չճանաչող Ուկրաինայի եւ Հարաւ—Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւններին՝ հրաւիրելով նրանց խորհրդաժողովի, փետր. 1–ին, Թիֆլիսում: Սակայն, Ուկրայնական կենտրոնական Ռադայից պատասխան չստացւեց, իսկ Հարաւ Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւնը թէեւ խորհրդաժողովի մտքին վերաբերւեց համակրանքով, բայց ներկայացուցիչ չուղարկեց, որով Անդրկովկասը ստիպւած էր մենակ վճռել պատերազմի եւ խաղաղութեան հարցը: Եւ փետր. 1–ի նիստում, Անդրկ. կոմիսարիատը, համաձայնութեան յեղափոխական կենտրոնի, ազգային խորհուրդների եւ բանակի հրամանատարութեան հետ, որոշեց տեղեկացնել վեհիր փաշային, թէ ինքը պատրաստ է սկսելու հաշտութեան բանակցութիւնները եւ խնդրում է հաղորդել տեղն ու վայրը, ուր կարող են հանդիպել իրար երկու կողմերի

պատերազմական գործողությունների համար: Պարզ էր. թուրքերը մտածում էին օգտվել նպաստավոր դրությունից՝ իրականացնելու համար դեռ պատերազմի սկզբին նախագծված ծրագրերը. կովկասի դռները լիքնաբերաբար բացվում էին նրանց առջև:

Այս ծրագրերը կովկասի ազգաբնակության որոշ մասի կողմից էլ դիտվում էին խանդավառությամբ. կովկասեան մահմեդականությունը պատրաստ էր զրկարաց ընդունելու թուրքական բանակը: Հին ռեժիմի օրերի զսպված ու լուռ թուրքասիրությունը այժմ առանում էր հրապարակային արտայայտություն, եւ կովկասեան մահմեդականների ու թուրքերի եղբ ոչ պաշտօնական գործակցությունը, զէթ փոխադարձ համակրանքը այլ եւս անհերքելի փաստ էր ամենքի համար: Այդ փաստն երեւան էր գալիս ո՛չ միայն յեղափոխական ու կառավարական հիմնարկությունների մէջ, ժողովներում ու մամուլում, այլ եւ չօշափելի գործերով, որոնց շարքին, առաջին տեղը բռնում էին, անկասկած, այն լայն մահմեդական շարժումները, որոնք յեղափոխության յաջորդ օրն իսկ ծայր տուին գրաւած վայրերի եւ Անդրկովկասի զանազան կողմերում եւ յարաճուն զարգանալով՝ անիշխանութեան ու քաոսի մատնեցին ամբողջ երկիրը: Այդ շարժումները ներշնչած էին թուրքերի կողմից, առաջ էին բերում ու հրահրում թուրք գործակալների միջոցով եւ նպատակ ունէին դժուարութիւններ հանել ռուսական, իսկ յետոյ՝ հայկական զօրքերի առջեւ:

Մահմեդական խռովութիւնները, աւազակային յարձակումները զինուորական գնացքների, պարենակիր խմբերի, խաղաղ հայ ազգաբնակության եւ իրենց ծննդավայրը վերադարձող գաղթականների վրա՝ սկսեցին յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ եւ աստիճանաբար, մանաւանդ, մայիս ամսին: «Ինչ որ մի մութ ձեռք, գրում էր «Հորիզոն»-ը մայիս 19-ին, պատերազմի ու խռովութեան սերմեր է փորձում ցանել հայ եւ թուրք ժողովուրդների մէջ... Երբ օդը յագեցած է գազերով, հարկաւոր է ծայր աստիճան զգոյշ լինել եւ կայծ չձգել այնտեղ, թէ չէ պայթումը անխուսափելի կը դառնայ»:

«Մութ ձեռքին» ,այսինքն թուրքիային ձեռնտու էր խռովութիւնը: Եւ ահա նրա գործակալների ջրդումով, այստեղ ու այնտեղ, սկսում են ա-

ռաջ գալ խռովություններ։ Շարժումներ են տեղի ունենում Կարսի, Երևանի, Գանձակի, Էրզրումի շրջաններում։ Խռովությունների ալիքը տարածւում է ամէն կողմ։ Երկրի բոլոր ծայրերից ու ճակատից Թիֆլիս են տեղում հեռագրեր կատարւող անկարգությունների և հակապետական քայլերի մասին։

Մայիս 9-ին Ալեքսանդրապոլի զինուորական գործադիր կոմիտէի նախագահ Գրեգիրովը հեռագրում է Օզակոմի նախագահ Խարլամովին, որ թուրքերը գողացել են պահակախմբի զէնքերը, և այդ պատճառով մի վաշտ զինուորներ խուզարկել են թուրքական թաղը։

Մայիս 13-ին Ալեքսանդրապոլի գաւառական կոմիսարը 101րդ երկրապահ հարիւրեակի զինուորների ու միլիցիոների հետ խուզարկում է Կարսի շրջանի Օղչի–Օղլի գիւղը և բռնում 2 սայլ՝ 7 արկղ պետական հրացան ու փամփուշտ։ Թուրք գիւղացիք կրակում են և վիրաւորում մի զինուոր։

Մայիսի առաջին երկու-երեք շաբաթների ընթացքում բազմաթիւ յարձակումներ եղան Օղուտ—Երզնկայի շրջանի և Բասէնի հայ գիւղերի վրա։ Յարձակման ու թալանի զոհերը, մեծ մասամբ, գաղթականները կամ զինուորական պահեստներն ու կայաններն էին։

Մայիս 29-ին քիւրդերը յարձակւեցին Սոուք Սուի զօրակայանի վրա. եղաւ բուռն կռիւ։

Յունիս 1-ին յարձակման ենթարկւեց Գաւրէշամիի կառավարական պարենաւորման խումբը։ Յունիս 8-ին քիւրդերը յարձակւեցին կառավակների վրա Բայազէտի մօտ։ Յարձակումներ եղան Արագածի շրջանում, Նոր-Բայազէտում, Սուրմալուում...

Յունիս 1—2-ին, Գեաւրէշամիի մօտ սպանեցին 3 հայեր, վիրաւորեց մէկը, քշեց 80 բեռնակիր եզ, 2 ձի։

Յունիս 2-ին, Արհաճ գիւղի մօտ Վան վերադարձող 50–60 գաղթականներ կողոպտւեցին քիւրդերից, սպանեց մի մարդ, քշեց 60 եզ և 40 այլ անասուններ։

Յունիս 6-ին Արծափի և Մոսունի միջև քիւրդերը մորթեցին 6 հայեր։

Յունիս 15-ին 300 քիւրդեր քշեցին Իգդիրցիների անասունները՝ սպանելով մէկ և վիրաւորելով 9 մարդ։

Յուլիս 14-ին քիւրդերը քշեցին Ղամարլուցիների տաւարը՝ սպանելով ու վիրաւորելով մի քանի հայեր։

Զանազան տեղեր յարձակման էին ենթարկւում երկիր վերադարձող գաղթականները կամ թիկունք մեկնող զինուորները։

«Օգտւելով ժամ. կառավարութեան թուլութիւնից և պրովոկացիոն մութ ուժերի դրդումից, գրում էր յունիս 8-ին «Հորիզոն»-ը, Սուրմալուից Հայոց Ձոր ու Հայոց Ձորից մինչև Մամախաթուն քրդական աւազակաբարոյ, մինչև ատամները զինուած հրոսախմբերը յարձակւում են խաղաղ բնակչութեան վրա, կողոպտում են, վիրաւորում ու սպանում... Չեն քաշւում անգամ զինուորների ու պարենատար զօրամասերի վրա էլ յարձակւելուց»։

Ի հարկէ, կարելի է ասել, որ քրդական աւազակութիւնները առաջ էլ սովորական երեւոյթ էին եւ թիւրքական սադրանքներով չպէտք է բացատրել, բայց փաստը ցոյց է տալիս, որ աւազակութիւններն ու յարձակումները կատարւում էին, մեծ մասամբ, ռազմավարական նշանակութիւն ունեցող վայրերում, զաղթականների վերապարձի ճանապարհների վրա, զօրքի թիկունքում: Դժւար չէր տեսնել, որ այդ շարժումներն ունեն նրբքին ծրագիր եւ ուղղած են, ամենից առաջ, պատերազմին ջակցող ուժերի, եւ կազմակերպութիւնների դէմ»:

Նման դէպքերը յուզում էին հանրային միտքն ու կառավարական շրջանները: Տարածւում էին հազար տեսակ լուրեր, որ, իբր թէ, Կովկասի թուրքերը շտապով պինւում են, որ նրանք պատրաստւում են միանալու թիւրքերին, որ թիւրքերն արդէն որոշել են գրաւել Կովկասը եւ այլն եւ այլն: Իշխանութիւնը անզօր էր իրական դարման հասցնելու: Նա, աւելի շուտ, աշխատում էր ծեփել աւելի ու աւելի բացւող ճեղքը կամ չտեսնել ձեւանալ օրը ցերեկով կատարւող դէպքերը:

Ապրիլ 24-ին, Անդրկ. Առանձին կոմիտէն քննեց թուրքերի պինման լուրերը եւ լսելով թուրք ներկայացուցիչներին՝ եկաւ այն եզրակացութեան, որ դրանք անհիմն բաներ են ու որոշեց այդ մասին հաղորդել հատուկութեան: Որոշեց նաեւ ռուս-հայ-վրացի-թուրք խառն պատւիրակութիւններ ուղարկել այն վայրերը, ուր տեղի կ'ունենան միջցեղային խռովութիւններ: Բացի այդ, կարգադրեց արգիլել քաղաքացիներին զինւորական զէնք կրել:

Նոյն հարցը, քիչ յետոյ, մայիս 12-ին, քննեց եւ Առանձին կոմիտէին կից գործող խորհրդակցութեան եւ զինւորական ու բանւորական խորհուրդների պատգամաւորների խառն նիստում, Թարլամովի նախագահութեամբ: Այս վերջինը հաղորդեց, որ զանազան վայրերից յուզումնալից լուրեր են հասնում ազգաբնակութեան զինելու մասին եւ որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել երկիրը միջցեղային կռիւների սպառնալիքից փրկելու համար: Խորհրդակցութիւնը, այս անգամ, հատուկ զինման փաստը եւ որոշեց՝ 1) հրատարակել ռուսերէն եւ տեղական լեզուներով կոչեր՝ բացատրելով ժողովրդին զինման վնասակարութիւնը, 2) շրջաններն ուղարկել պատգամաւորներ եւ պրովոկացիայի առաջն առնել. 3) հրատարակել օրէնք՝ զէնք կրելու իրաւունքի մասին. 4) հիմնել հաշտարար մարմիններ՝ հատուկութեան մէջ առաջ եկող թիւրիմացութիւնները վերացնելու համար. 5) արգիլել ինքնակամ խուզարկութիւնները. 6) պատժել ուտ լուրեր տարածողներին. 7) հիմնել յատուկ մարմին ազգային հողի վրա ծագող վէճերը քննելու համար:

Նշանակում է պաշտօնապէս հաստատւում էր, որ թուրքերը զինւում են: Հաստատւում էր նաեւ, որ արգելած միջոցներով պետական զէնք են ձեռք բերում ու փոխադրում. այդ նպատակով յարձակումներ են կատարում պետական պահեստների ու կայանների վրա: Նման մատնանշումները սաստիկ վրդովում էին մահմեդականներին: Նրանք պնդում էին, որ այսպէս գործում է հայկական պրովոկացիան: Կատարւող խռովութիւններն ու հա-

կապիտալական շարժումները բարդում էին հայերի, մանաւանդ Թիւրքահայ գաղթականների վրայ:

Այսպէս, Բաքւի Մահմետական կոմիտէն, մայիսին, հեռագրեց Մոսկւա, համառուսական մահմետական համագումարին, թէ՝ «վերջերս Բաքւում, Կարսում, Երեւանում եւ Կովկասի այլ քաղաքներում եռանդուն պրովոկացիա է արւում մահմետականների դէմ եւ զրոյցներ տարածւում, որ, իբր թէ, մահմետականները փութով զինւում են կառավարութեան եւ քրիստոնեայ բնակչութեան դէմ ոտնձգութիւններ անելու մտադրութեամբ: Ոբոչ ծրագրով կազմակերպւած եւ գործադրւող դրգռումի հետեւանքով՝ մի քանի զօրամասեր Երեւանում, Ախալցխայում, Կարսում եւ Թիւրքիայից գրաւած վայրերում ոտնձգութիւններ են կատարել խաղաղ մահմետականների նկատմամբ: Բաքու քաղաքն եւս գտնւում է պրովոկատորների զզւելի գործունէութեան սպառնալիքի տակ: Այդպիսի խառնակիչ գործունէութիւնը կարող է տալ վատ հետեւանքներ թէ՛ մահմետականների եւ թէ՛ Կովկասի ու Նոր Ռուսաստանի բոլոր այլ ազգութիւնների համար: Շուտափոյթ պէտք է ձեռք առնել ամենավճռական միջոցներ չարամիտ պրովոկացիայի դէմ»:

Նոյն իմաստով մի բողոք էլ կոմիտէն ուղարկեց Անդրկ. Առանձին Կոմիտէին, ուր, ի միջի այլոց ասւում էր. «Կոմիտէն համարում է իրեն անպարտ, որ պրովոկացիան արտասւորում է մահմետականներին, որոնք կողմնակից են ներկայի եւ ապագայի ռամկավար իշխանների եւ համակարծիք են բոլոր բանւորական կուսակցութիւնների հետ: Միութիւնը պահանջում է վերջ տալ պրովոկատորական խայտառակութեան»:

Իսկ Բաքւի «Ենի Իկբալ» թերթը, մայիս 3–ին, շտապում էր բանալ փակագծերը՝ յայտարարելով, թէ մահմետականների դէմ դաւեր լարողը հայերն են. «Պրովոկացիա սարքողը կովկասեան ազգերից մէկն է... Եթէ ուզենանք իմանալ, թէ ո՞րն է այդ ազգը, ցաւելով պէտք է ասենք, որ այդ ազգը մեր մօտիկ հարեւան ազգայնամոլ հայերն են»:

Որ հայերի կողմից էլ բռնութիւններ ու կամայականութիւններ տեղի էին ունենում, այդ, ի հարկէ, անհերքելի է: Մանաւանդ, Թիւրքական սրածութիւնից ու կոտորածներից հրաշքով ազատւած արեւմտահայ գաղթականները երբեմն փորձում էին վրէժ լուծել մահմետականներից: Տեղ–տեղ թուրքերին հալածում ու ճնշում, երբեմն նաեւ սպանում էին եւ կամաւորական խմբերը: Պատերազմի եւ իթթիհատական վայրագութեանց առաջ բերած դժբախտ երեւոյթներ էին սրանք, որոնք, յաճախ, ստրերային ձեւ էին ստանում եւ որոնց առաջն առնելը վեր էր մարդկային կարողութիւնից: Սակայն, անճիշտ կը լինէր ասել, որ 1917 եւ յաջորդ 1918 թւի մահմետական շարժումները Կովկասում արդիւնք էին հայկական պրովոկացիայի կամ հայ գաղթականների ու խմբերի առաջացրած անկարգութիւնների: Ո՛չ, այդ այդպէս չէ: Երեւոյթն աւելի խորն էր. նրա բացատրութիւնը պէտք է որոնել Թիւրք քաղաքականութեան եւ կովկասեան մահմետականների ա՛յն ժամանակւայ տրամադրութիւնների մէջ: Անպայման, դէպքերի պատճառը Թիւրքական «մութ ձեռքն» էր, որ պղտորում էր մաքերը եւ խռովութիւն առաջ բերում այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր գտնում իր շահերի համար:

Այդ «մութ ձեռքը» գործակալներ ունէր և՛ Թիֆլիսում, և՛ Կովկասի ուրիշ կենտրոններում, որոնք չատ անգամ պրովոկացիոն խաղեր էին խաղում հանրային անդորրութիւնը խանգարելու համար:

Այսպէս, մայիս 23–ին Թիֆլիսի Բանւ. եւ Զինւ. Պորհուրդների պաշտօնաթերթում, ինչպէս եւ ուրիշ թերթերում հրատարակուեց Բասէնի շրջանի ժամանակաւոր կոմիսար եւ զինւ. գործ. կոմիտէի նախագահ Սպերանսկու մի գրգռիչ հեռագիրը, թէ՝ «Վերջին երկու–երեք շաբաթւայ ընթացքին Բասէնի հովտի գիւղերը գաղթում են թիկունքից բազմաթիւ փախստական հայեր, մեծ մասամբ ռուսահպատակներ, որոնք ինքնակամ կերպով գրաւում են թիւրք բնակիչների տները՝ դուրս քշելով տեղական բնակչ թիւրքերին: Հայերին բնակեցնում են Հասան–Ալայի շրջանում առանց շրջանային կոմիսարիատի գիտութեան՝ արդելք լինելով Սղնուտ—Երզնկայի շրջանից տեղահանուող ժողովրդի գաղթեցման ծրագրին: Ինդրում եմ չուտով կարգադրել՝ գաղարեցնել հայկական մասնաւոր ընկերութիւնների կազմակերպած այդ գաղթը՝ տալով ինձ այդ մասին ղեկավարող ցուցմունքներ»:

Ինդիրը ինքնին պարզ էր. արեւմտահայ կազմակերպութիւնները, թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարութեան գիտութեամբ ու հաւանութեամբ եւ զինւորական ու քաղաքացիական իշխանութիւնների աջակցութեամբ կատարում էին գաղթականների տեղաւորում, որի ժամանակ տարաւոր էր, որ բռնութիւններ էլ կատարուած լինեն Բասէնի շրջանում: Բայց պէտք էր տեսնել, թէ ի՞նչ աղմուկ բարձրացրին մահմեդական շրջանները, ի՞նչ ծանր մեղադրանքներ ուղղեցին հայերի հասցէին:

Մայիս 23–ին Թիֆլիսի Բանւ. եւ Զինւ. Պորհուրդը Գանձակից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Գանձակ քաղաքում մահմեդականներն ու հայերը բաժանուել են երկու մասի. մէջտեղը կանգնած է զօրքը. Արջեւանիձէ»: Ինականաբար հասարակութեան ու կառավարական շրջաններում առաջ եկաւ ահասթիկ իրարանցում: Անմիջապէս հեռախօսով հարցում արուեց Գանձակ, եւ քաղաքագլուխ Պամամեդովը զարմանքով պատասխանեց, թէ քաղաքում ոչինչ չի պատահել, հայերն ու թիւրքերը ապրում են հաշտ, եւ զօրքը մնում է իր տեղը: Ո՞ւմ էր հարկաւոր այդ չարամիտ խաղը.— մնաց չպարզուած:

Անհանդարտ, ջղագրգիռ վիճակ էր տիրում ամէն տեղ. մութ ձեռքը գործում էր անարգել եւ ոչ մի ճիգ, կառավարական կամ հասարակական ո՛չ մի ոյժ չկարողացաւ զսպել կամ առաջն առնել մահմեդական շարժումների: Նրանք հետզհետէ ծաւալւեցին, ստացան յարաւեւ բնոյթ եւ 1917 թւի վերջերին արդէն գարձել էին կովկասեան կեանքի ամենաաղէտաւոր երեւոյթը: Մահմեդական հոծ զանգւածներ ունեցող շրջաններում, յաճախ, կտրւում էր երկաթուղային հաղորդակցութիւնը, եւ պէտք էր լինում դիմել արտակարգ միջոցների՝ զինւորական ուժի ու զրահապանաերի օգնութեան, որպէսզի բացւի ճանապարհը: Քրդական շարժումները նոր թափով բռնկւեցին 1918 թ. յունւարի կէսերին, երբ ճակատի զանազան մասերում

ուղղակի ճակատամարտներ մղեցին քիւրդ հրոսախմբերի եւ կանոնաւոր զօրքերի միջեւ: Միայն յունւ. 15—16–ին, եւ միայն Երզնկայի շրջանում, պաշտօնական հաղորդագրութեամբ, քիւրդերի ձեռքով սպանուեց շուրջ 200 մարդ:

Այս ամենը, ի հարկէ, անդնահատելի ծառայութիւն էր թիւրքերին: Երբ կովկասեան արդէն բաւական խառնուել էր ներքին խնդիրներով, իսկ, միւս կողմից, թիւրք բանակն արդէն վերստացած էր նախկին ռազմունակութիւնը, թիւրք հրամանատարութիւնը դիմեց վճռական քայլերի. դեկտ. 16–ին կովկասեան բանակի հրամանատարը վեհիր փաշայից ստացաւ մի նամակ, որի մէջ ասւում էր, թէ սպարապետ ինվէր փաշան նկատել է, որ դրաւած վայրերում բռնութիւններ են գործադրւում թիւրքահպատակների վերաբերմամբ եւ պահանջում է վերջ տալ դրանց: Մի քանի օր յետոյ, յունւ. 23–ին, վեհիր փաշայից ստացուեցին մի քանի հեռագիրներ, որոնք նորից բողոքում էին թիւրքահպատակների նկատմամբ գործադրուող բռնութիւնների դէմ եւ պահանջում էին խիստ պատժի ենթարկել յանցաւորներին: Զօր. Օդիշելիձէն, յունւ. 31–ին եւ փետրուարի սկզբին, երկու անգամ, պատասխանեց, որ վեհիր փաշայի ստացած տեղեկութիւնները խիստ չափազանցուած են, որ ճիշտ է, Երզնկայի ու Տրապիզոնի շրջաններում տեղի են ունեցել մի քանի բռնութիւններ, բայց նրանք արդիւնք են քրդական հրոսախմբերի յարձակումների եւ բնաւ չեն համապատասխանում թիւրք հրամանատարութեան ցոյց տուած չափերին: Ի պատասխան սրան, փետր. 6–ին Օդիշելիձէն ստացաւ վեհիր փաշայից մի նոր հեռագիր, որով թիւրք հրամանատարը յայտնում էր, թէ ինքը՝ երկու կողմերի համար պատուաւոր, հաշտութեան երկրպագու լինելով հանդերձ՝ ստիպւած է, մահմետական բնակչութեան պաշտպանութեան նպատակով, առաջ շարժել իր զօրքերը մինչեւ ռուս զօրամասի հետ շփման մտնելը:

Ուրիշ խօսքով, վերսկսւում էր պատերազմը:

ԳԼՈՒԽ Է.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԷՅՄԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բայց ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Անդրկովկասը։ Որքա՞ն ընդունակ էր նա դիմադրելու Թիւրքերին։

Տեսանք արդէն, որ նոյեմբեր 27-ին Անդրկ. Առանձին Կոմիտէն փոխարինուեց Անդրկ. Կոմիսարիատով։ Այս փոփոխութիւնը, սակայն, իրական բարելաւում չբերեց։ Ճակատի ու Թիկունքի քայքայումը շարունակեց անարգել՝ միշտ ընդարձակուելով ու խորանալով։ Գրեթէ ամբողջ ժամանակ կառավարութիւնը զբաղուած էր բանակի նահանջի ու մահմետական շարժումների հետ կապուած խնդիրներով, պարենաւորման ու ելեւմտական տագնապի դէմ կռուելով, պատերազմի հաշուեյարդարին վերաբերող եւ նըման հարցերով։ Կազմակերպական եւ շինարար աշխատանք կատարելու հնարաւորութիւն չէր մնում։ Միակ «շինարար» աշխատանքը եղաւ անդրկովկասեան բոնների հրատարակութիւնը փետր. 6-ին, որ մասամբ մեղմացրեց դրամական սովը։

Անդրկ. Կոմիսարիատը ներքնապէս էլ ներդաշնակ ու հաշտ չէր։ Ազգային ներհակութիւնները մաշում էին նրա հիմքը։ Իշխանութեան իրական ոյժը աւելի եւ աւելի տեղափոխւում էր ազգային խորհուրդների մէջ, որոնցից իւրաքանչիւրը իր ազգի շահերն էր պաշտպանում։ Դրան մեծապէս նպաստում էր եւ կովկասեան ժողովուրդների քաղաքական հակումի՝ օրիէնտացիայի տարբերութիւնը։ Մինչ հայերը եւ, որոշ չափով, վրացիները համարւում էին հակաթիւրքական կողմ, մահմետականները շեշուած Թիւրքասէրներ էին եւ Թիւրքիայի գործերը շատ մօտ էին ընդունում իրենց սրտին։ Հակումի ներհակութիւնից առաջ էին գալիս եւ Անդրկ. Կոմիսարիատի ներսում աճող սուր անհամաձայնութիւնները պատերազմի խնդրում. Կոմիսարիատի մահմետական անդամները ամէն գնով աշխատում էին արագացնել հաշտութիւնը Թիւրքերի հետ՝ Թիւրքիայի համար նպաստաւոր պայմաններով, նոյնիսկ Կովկասի շահերին ի վնաս։

Այսպիսի հանգամանքներում գործող մի իշխանութիւն, ի հարկէ,

չէր կարող երեւան բերել ոյժ ու հեղինակութիւն, իսկ նրա կառավարած երկիրը չէր կարող լինել խաղաղ ու բարգաւաճ: Եւ, իրօք, երկիրը ներկայացնում էր քաօսային մի վիճակ:

Սէյմի փետր. 13-ի նիստում Գեղեչկորին այսպէս էր բնորոշում Անդրկովկասի դրութիւնը դեկտեմբեր-յունուար ամիսներին. «Մեր ընդարձակ եւ բազմացեղ երկրի բոլոր կէտերում, բոլո՛ր շրջաններում առաջ էին գալիս թիւրիմացութիւններ ու բռնութիւններ թէ ազգային հողի վրայ եւ թէ հեռացող զօրքերի ու տեղական բնակչութեան միջեւ պատահող ընդհարումների պատճառով: Այստեղ ու այնտեղ բռնկւում էին հրդեհներ, որ ստիպւած էինք հանգցնել մեր փոքրիկ ուժերով, որովհետեւ Անդրկ. Կոմիսարիատը, պնդում եմ, չունէր այն, որ կազմում է հիմքը իւրաքանչիւր իշխանութեան — հարկադրող ոյժ: Անդրկ. Կոմիսարիատը հնարաւորութիւն ու միջոց չունէր անյապաղ եւ անչեղ գործադրել տալու իր պահանջները, որովհետեւ թէեւ զօրութիւն ունէին ազգային զօրամասեր, բայց նրանք ո՛չ մի ոյժ չէին ներկայացնում: Մի մասը բռնւած էր ճակատում, միւս մասը անկազմակերպ էր, իսկ երրորդը՝ զօրութիւն ունէր միայն թղթի վրա»:

Ի՞նչ կարելի էր պահանջել այսպիսի իշխանութիւնից: Շատ քիչ բան: Աւելի եւս անյոյս էր, որ նա ի վիճակի կը լինի կազմակերպելու եւ վարելու պատերազմի գործը: Այդ պատճառով, վեհիր փաշայի դիմումը հաշտութեան բանակցութիւններ սկսելու մասին, Թիֆլիսում նկատւեց իբրեւ մի ելք ստեղծւած անտանելի կացութիւնից: Փետր. 1-ին, թիւրքերի հաշտութեան բանակցութիւնների առաջարկն ընդունելուց յետոյ, Անդրկ. Կոմիսարիատը կազմեց մի յանձնախումբ՝ հաշտութեան խորհրդաժողովի համար նիւթեր պատրաստելու նպատակով: Եւ միաժամանակ միջոցներ ձեռք առաւ՝ արագացնելու Սէյմի գումարումը:

Անդրկ. Սէյմը գումարւեց փետր. 10-ին հետեւեալ կազմով.—

Ամենամեծ ֆրակցիան սոցիալ-դեմոկրատ մենշեւիկներինն էր — 32 անդամ, որից 25ը վրացի, 4 հայ (Ա. Ջոհրաբեան, Ց. Բէգզատեան, Ղ. Տէր Ղազարեան, Ս. Փիրումեան), 2 ռուս եւ 1 գերմանացի: Այս ֆրակցիան հարուստ էր փորձւած քաղաքական գործիչներով, որոնցից շատերը աչքի ընկնող դեր էին կատարել Պետական Դումաներում եւ համառուսական քաղաքական կեանքում — Ծերեթելի, Գեղեչկորի, Ջոհրաբեան, Սկոբլեւ, Չխենկելի, Ժորդանիա եւ այլն:

Պատգամաւորների թւով երկրորդ տեղը գրաւում էր «Մուսաւաթ եւ անկուսակցականների խմբակ» ֆրակցիան՝ 30 անդամ, որի մէջ մտնում էին Ազրբէջանցի ամենաազդեցիկ գործիչները — Թոփչիբաշեւ, Ջաֆարով, Ռասուլ-Զադէ, Ուսուպբէկով, Ագայեւ, դր. Սուլթանով, Խան-Խոյսկի, Մելիք-Ասլանով:

Հ. Ց. Դաշնակցութեան ֆրակցիան ունէր 27 պատգամաւոր — Ռոստոմ Զօրեան, Մ. Ցովհաննիսեան, Կ. Համբարձումեան, Հ. Օհանջանեան, բժ. Ց. Զաւրեան, Աւ. Շահխաթունեան, Ց. Քալաշեանի, Ս. Տիգրանեան,

Կ. Ղազազեան, Ս. Վրացեան, Ա. Խատիսեան, Ա. Նալչաճեան, Գ. Խատիսեան, Ս. Խաչատրեան, Գ. Զամոյեան, Խ. Կարճիկեան, Մ. Ճարուխիւնեան, Հ. Եաղջեան, Խ. Համասփիւռ, Հ. Զոլախեան, Ա. Զիլինգարեան, Գ. Տէր-Ճարուխիւնեան, Վ. Խորէնի, Մ. Արզումանեան, Տ. Աւետիսեան, Ա. Սահակեան, Պ. Լեւոնեան, Գ. Մանդալեան: Առաջին երեքը, ինչպէս եւ Ա. Զիլինգարեանը, բացակայ էին Թիֆլիսից, ոչ մի նիստի չմասնակցեցին եւ յետագային փոխարինուեցին ուրիշներով:

7 պատգամաւոր ունէր մահմեդական ընկերվարական բլոկը, 5՝ Սոց. Յեղափոխականների կուսակցութիւնը, 4՝ Սոց.-Դեմ. Հումմէթը, 3՝ Ռուսաստանի մահմեդականութեան Իթթիհատ-իսլամ կազմակերպութիւնը, 1՝ Ռուս ժողովրդ. Ազատութեան կուսակցութիւնը, 1՝ վրացի սոց.-Ֆեդերալիստները, 1՝ վրացի ազգային-դեմոկրատները:

Սէյմի երրորդ (15 փետր.) նիստում կուսակցութիւններն արին իրենց յայտարարութիւնները: Հ. Ց. Դաշնակցութեան բաղձանքներն արտայայտեց Ց. Քալաշնունին, հետեւեալ յայտարարութեամբ. «Հ. Ց. Դաշնակցութիւնը ողջունում է հայ դեմոկրատիայի կողմից Անդրկովկասեան Սէյմը:

Սերունդների երազը — Համառուսական Սահմանադիր ժողովը մի օրւայ համար դարձաւ իրական փաստ: Ժողովրդի ընտրեալները հաւաքւեցին արդէն, որպէսզի իրականացնեն նրա վեհ կամքը եւ դնեն պետական եւ ընկերային կեցութեան նոր հիմքերը: Բայց, ընդհանրապէս, բոլոր ընկերային-քաղաքական խորունկ շարժումներին յատուկ անխուսափելի հիւանդային թեքումը պատակաւում մտցրեց յեղափոխական շարժման առողջ ընթացքի մէջ եւ բռնութեամբ ընդհատեց Սահմ. ժողովի աշխատանքը հէնց սկզբից: Քանի որ կենտրոնական համապետական իշխանութիւնը բացակայ է, ժողովուրդներն ու երկիրները հարկադրւած են տեղերում սեփական ուժերով լուծելու կեանքի հրամայական ընթացքով առաջ եկած ամենէն անյետաձգելի խնդիրները: Կարդաւորելով իրենց կեանքը տեղերում՝ ժողովուրդներն ու երկիրները դրանով հէնց դնում են ամուր հիմքը մեծ ամբողջի՝ մէկ համառուսական ռամկավար դաշնակցային հանրապետութեան կառուցման: Նման կազմակերպող կենտրոններից մէկը պէտք է դառնայ Անդրկովկասեան Սէյմը:

Կանգնած լինելով անդրկովկասեան դեմոկրատիայի մէկ եւ ընդհանրական շահերի պահպանութեան տեսակէտի վրա եւ յենւելով նրա յեղափոխական մարմինների՝ դինւորական, բանւորական ու գիւղացիական խորհուրդների վրա՝ Անդրկ. Սէյմը կոչւած է, մի կողմից, վերականգնել երկրի կարգն ու անդորրութիւնը, դուրս բերել նրան յարաճուն, քայքայող անիշխանութեան չրջանից եւ դնել յեղափոխական նւաճումների ամրապընդման ճանապարհի վրա, միւս կողմից՝ յենարան տալ Ռուսաստանի հանրապետութեան, որի մէջ Անդրկովկասը, իբրեւ մասնիկը հզօր ամբողջութեան, պէտք է զանի արժանաւոր տեղ:

Մեկնելով Անդրկ. Սէյմի նպատակների նման հասկացողութիւնից՝

Դաշնակցութեան Ֆրակցիան դնում է հերթից դուրս պատերազմը վերջացնելու եւ Ռուսաստանի յեղափոխական դեմոկրատիայի աղղարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը — հաշտութիւն առանց բռնագրաւումի եւ ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքներով: Մեր ճակատում այս սկզբունքը պէտք է յանգի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծման:

Պատերազմի հաշւեյարդարի խնդրի հետ միասին անյապաղ պէտք է լուծւի Անդրկովկասի կենտրոնական իշխանութեան եւ տեղական իշխանութիւնների կազմակերպման հարցը, իշխանութիւնը պէ՛տք է լինի միատարը — ընկերվարական, որովհետեւ միայն այդպիսի՛ իշխանութիւնը կարող է իրականացնել աշխատաւոր ժողովրդի ակնկալութիւնները եւ անհնար դարձընել քաղաքական պատեհապաշտութեան եւ ընկերային ճահճացման սկզբունքների վերադարձը: Եւ հաշւի առնելով օրւայ ամենաանյետաձգելի պահանջները՝ երկրի իշխանութիւնը պէտք է ձեռք առնէ շտապ եւ իրական միջոցներ՝ վերականգնելու հաղորդակցութիւնը, լուծելու պարենաւորման ու ելեմտական տագնապը:

Վաղուց ի վեր հասունացած հողային խնդիրը պէտք է լուծում ստանայ հողային մասնատիրութեան իսպառ վերացումով եւ բոլոր հողերը անյապաղ եւ անվճար աշխատաւոր ժողովրդին յանձնելով՝ հողից հաւասարաբար օգտւելու սկզբունքով (ծափեր):

Ցետոյ, նոյն ընկերային օրէնսդրութեան ասպարէզում, Դաշնակցութեան Ֆրակցիան ձգտելու է իր նւազագոյն ծրագրի իրականացման նրա բովանդակ ծաւալով՝ առաջին հերթին դնելով օրէնսդրական կարգով 8 ժամւայ աշխատանքի օրւայ հաստատումն, աշխատանքի պետական հովանաւորութեան եւ բանւորների ապահովութեան պահանջը (ծափեր):

Քաղաքա-տնտեսական բարենորոգումների բնագաւառում Ֆրակցիան պահանջելու է պետական նշանակութիւն ունեցող եւ ընկերվարական արտադրելակերպի համար բաւականաչափ հասունացած խոշոր ֆինանսական, արդիւնաբերական եւ առեւտրական ձեռնարկութիւնները հասարակութեան սեփականութիւն դարձնել, այլ եւ արդիւնաբերութեան վերահսկողութեան եւ ընդհանուր աշխատաւորական պարտաւորութեան հաստատում:

Վերոյիշեալներին զուգընթաց, օրւայ մեծագոյն քաղաքական խընդիրն է հանդիսանում Անդրկովկասի ճիշտ սահմանադաժանումը, ժողովուրդների ինքնուրոյն կանոնների ստեղծումը եւ նրանց միացումը Անդրկովկասեան ընդհանուր դաշնակցութեան մէջ: Նոր կարգի ամրութիւնն ու կայունութիւնը, երկրի ներքին խաղաղութիւնն ու բովանդակ բարեկեցութիւնը ամենասերտ կերպով կապւած են այս բարդ խնդրի բաւարար լուծման հետ, ուստի եւ պահանջւում է նրա հանդէպ առանձնապէս ուշադիր վերաբերում:

Ցիշեալ խնդիրների իրականացման Հ. Ց. Դաշնակցութիւնը կը նւիրի իր բոլոր ուժերը՝ երկրի բոլոր դեմոկրատների հետ կատարեալ համերաշխութեան եւ բարեկամական գործակցութեան մէջ:

Միաժամանակ Դաշնակցութիւնը, իբրեւ միջազգային ընկերվարական ընտանիքի անդամներից մէկը, անյողդողդ հաւատ ունի, որ Անդրկովկասեան Սէյմը իր յետագայ զարգացման ընթացքին կը դառնայ ընկերվարական մտքի ու ստեղծագործութեան հնոց եւ միջոց Անդրկովկասեան Ընկերվարական միջազգայինի (ծափեր)»:*)

Այսպիսով, Դաշնակցութիւնը առաջադրում էր օրւայ հրատապ նշանակութիւն ունեցող չորս խնդիրներ. 1) Ինքնուրոյն Անդրկովկասը համարւում է մասնիկը Ռուսաստանի. 2) պատերազմը վերջացնելու պայման դըրւում է Թիւրքահայաստանի ինքնավարութիւնը. 3) Անդրկովկասի վերաբաժանումը ազգային կանտոնների եւ 4) միատարր–ընկերվարական իշխանութեան կազմակերպումը:

Այս չորս պայմաններն էլ հանդիպեցին Ազրբէջանի ներկայացուցիչների բուռն դիմադրութեան: Նրանց կողմից յայտարարութիւն անող Աղայեւը գտնում էր, որ Սէյմը պէտք է լինի Սահմանադիր Ժողով՝ լուծելու համար Անդրկովկասի ճակատագիրը, որը կտրւած է Ռուսաստանի ընդհանուր ճակատագրից: Ճիշտ է, Աղայեւը դեռ խօսում էր «ազատ ժողովուրդների Ռուսաստանի», «դաշնակցութեան», «Ազրբէջանի ազգային–քաղաքական ինքնավարութեան» մասին, բայց այդ, աւելի շուտ, տուրք էր օրւայ ընդհանուր տրամադրութիւններին:

Պատերազմի խնդրում Աղայեւն եւս պահանջում է «ռամկավար հաշտութիւն, առանց բռնագրաւումների եւ ռազմատուգանքի, ժողովուրդների ինքնորոշման հիմունքով», բայց եւ շտապում է աւելացնել, թէ «չպէտք է խառնւել հարեւան պետութիւնների ներքին գործերին», այսինքն՝ ձեռք քաշել Թրքահայկական դատից:

Կառավարութեան կազմութեան հարցում Աղայեւը դնում է «խիստ կօալիցիայի պահանջը՝ հաշւի առնելով «ազգային խմբերի իրական համեմատութիւնը»: Միատարր–ընկերվարական իշխանութիւնը անընդունելի է միանգամայն: Պատճառը հասկնալի է. մահմեդականների մէջ տիրող տարրը բէկերն ու կալւածատէրերն էին:

Անդրկովկասի վարչական բաժանման վրայից Աղայեւը անցնում է լռութեամբ, բայց ազրբէջանցիների ընդհանուր քաղաքականութիւնից դատենք, որ նրանք վճռականապէս հակառակ էին հայկական ծրագրին, որի դէմ պայքարում էին 1916–ի դէմատոյական խորհրդակցութիւններից սկըսած:

Վրաց բաղձանքները արտայայտեց Ժորդանիան, որ իր առաջադրած խնդիրներով աւելի մօտենում էր ազրբէջանցիներին, թէեւ խօսքերով աշխատում էր ցոյց տալ հակառակը:

Ռուսաստանի հարցում նա, ըստ էութեան, կանգնեց Աղայեւի տեսակէտի վրա. «Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած հաշտութեան

---

*)Закавказскій Сеймъ. Стеногр. отчет. Сессія первая, засѣданіе третье. 1918. Тифлис, стр. 15.

վերջին պայմանները, որոնք ամբողջ Ռուսաստանը մատնեցին գերման իմպերիալիստների քաղաքական ու անտեսական գերութեան, է՛լ աւելի կըտրեցին մեզ Ռուսաստանի հետ կապող թելերը: Եւ մեր Սէյմը այժմ իրեն համար հիմնական նպատակ պէտք է դնէ սեփական ուժերով այս երիտասարդ երկիրը՝ Անդրկովկասը վերածել իրաւականօրէն կազմակերպուած Անդրկովկասեան Հանրապետութեան»: Ա՛յս կէտում տարբերութիւն չկար Ժորդանիայի եւ Ազայեւի միջեւ:

Ցետոյ, Անդրկ. Հանրապետութեան Սէյմը, առաջին հերթին, պէտք է հաշտութիւն կնքէր թիւրքերի հետ, բայց ո՛չ այնպիսի հաշտութիւն, որ պիսին ստորագրեցին բոլշեւիկները. «Մենք այդպիսի հաշտութիւն չենք ստորագրի եւ կարծում ենք, որ աւելի լաւ է մեռնել պատուով դիրքերում, քան խայտառակուել եւ ստրուկների անէծքին ենթարկուել»: Այս կէտում, Ժորդանիան ջաջազնուհու հետ է. նա պահանջում է «պատուաւոր հաշտութիւն» թէեւ յետագայ դէպքերը ցոյց տուին, որ Ժորդանիայի «պատուաւոր հաշտութիւնը» շատ քչով է տարբերւում Ազայեւի «անպատիւ» հաշտութիւնից:

Իշխանութեան կազմութեան խնդրի վրայից Ժորդանիան անցաւ լռութեամբ. փափուկ դրութիւն էր. եթէ պահանջէր միատարր–ընկերվարական կառավարութիւն, ինչպէս պահանջում էր յեղափոխական խորհուրդների կենտրոնում, դժգոհ կը լինէին ազգբէջանցիները. եթէ պահանջէր կօալիցիոն կառավարութիւն, ինչպէս դործնականօրէն անց էր կացնում Սէյմի կուլիսներում, դժգոհ կը մնային յեղափոխական խորհուրդները: Ահա մի տեղ, որտեղ լռութիւնը իսկապէս ոսկի էր:

Անդրկովկասի ահմանների վերաբաժանման հարցում Ժորդանիան պաշտպանում էր Դաշնակցութեան տեսակէտը. «յենելով հողային սկըզբունքների վրա՝ մենք պէտք է դոյութիւն ունեցող ազգերը ահմանաբաժանենք այնպէս, որ միմեանց չխանգարեն, ընդհակառակը, որ նրանք կարողանան աջակցել միմեանց եւ միացեալ ու ընդհանուր ջանքերով դուրս բերեն մեր երկիրը քաղաքակրթութեան եւ ազատութեան ճանապարհի վրա»: Բայց ահմանների վերաբաժանումը Ժորդանիան հասկանում էր բոլորովին հակառակ Դաշնակցութեան պաշտպանած ծրագրից այնպէ՛ս, որ Կովկասում միայն Վրաստանն էր դառնում ազգային միութիւն. «Մենք ստիպուած պիտի լինենք Անդրկովկասի հողից ձեւել ահմանափակ մեծութիւն ունեցող ազգային հողային միաւորներ, այսինքն, թերեւս, պէտք լինի, որ մի ազգ, (օրինակ, հայերը, վրացիները կամ թաթարները), կարաւանն մի քանի ինքնավար միաւորների եւ որ այդ ազգը ապրի իր ազգային շատ կանոններում: Եթէ առնենք Արեւելեան Անդրկովկասը, կը տեսնենք, որ այստեղ այդպէս պէտք պիտի լինի վարուել, որովհետեւ ոչ մի կերպ կարելի չէ ձեւել այնպիսի միապաղաղ ազգային–հողային միաւոր, որը ընդդրկէր մէկ ազգութիւն եւ չընդդրկէր մեծ քանակութեամբ ուրիշ ազգութիւն»:

Այսպիսով, Սէյմի դոյութեան առաջին իսկ օրից երեւան եկաւ Անդրկովկասի երեք դլխաւոր ժողովուրդների մտածողութեան ու ձգտումների ներհակութիւնը: Եւ այն անհամաձայնութիւնները, որ կային Սէյմից առաջ, Անդրկ. կոմիսարիատի մէջ, վէճի ու պայքարի բոլոր առարկաները,

կիրքն ու նախանձը, չհամաձայնութիւնն ու թշնամանքը մեքենայօրէն մուտք գործեցին եւ Սէյմ: Յետագայ դէպքերը եւ միացեալ աշխատանքը Սէյմում ո՛չ միայն չմեղմացրին, այլ աւելի եւս սաստկացրին հակամարտութիւնը:

Տարակարծութեանց հրատապ առարկաներից մէկն էր Անդրկովկասի քաղաքական կազմակերպութեան՝ անկախութեան խնդիրը, որով Սէյմը զբաղուեց փետր. 22–ի նիստում:

Այդ առթիւ երկար ճառեր արտասանեցին վրացիների կողմից Ն. Ժորդանիան, ազրբէջանցիներից Խան–Խոյսկին: Երկուսն էլ անվերապահ վճռականութեամբ պաշտպանում էին Անդրկովկասը անկախ յայտարարելու պահանջը: Ժորդանիան չեշտում էր, որ Ռուսաստանը ինքն է հեռացել Կովկասից, եւ կովկասեան ժողովուրդները պէտք է իրենք տնօրինեն իրենց ճակատագիրը, որի համար ուրիշ ելք չի մնում, բայց եթէ անկախութիւն յայտարարելը, այլապէս կը գան Թիւրքերը եւ կը գրաւեն Անդրկովկասը: Թիւրքերի հետ հաշտութիւն կնքելու միակ միջոցը Անդրկովկասը անկախ հռչակելն է, պնդում էր եւ Խան Խոյսկին: Նրանց պատասխանեց ռուս Սեմեոնովը. «Անդրկովկասը Ռուսաստանից անջատելով՝ դուք կ'երթաք աւելի առաջ, դուք ստիպուած կը լինէք Արեւելեան Անդրկովկասը՝ Ազրբէջանը եւ Վրաստանը անջատել Անդրկովկասից, Հայաստանը անջատել Անդրկովկասից, իսկ յետոյ, դուցէ, Վրաստանն էլ բաժանել մասերի՝ Իմերեթիայի, Քարթալինիայի եւ կը վերադառնաք 13րդ դարին... Անկախութիւն յայտարարելուց յետոյ, դուք կը մտնէք Թիւրքական օրիէնտացիայի մէջ, ակամայ կը դառնաք Թիւրքիայի մէկ մասը կամ՝ նրանից կախուած, նրա հովանաւորութեան տակ... Թիւրքական օրիէնտացիա ընդունելով՝ դուք կընկնէք պետութիւնների այն խմբի մէջ, որը պատերազմում է Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դէմ»:

Սեմեոնովը ճիշտ էր արտայայտում իրերի ընթացքը: Անդրկովկասը արագ քայլերով շարժւում էր դէպի Թիւրքիայի գիրկը: Հայերը պայքարում էին դրա դէմ, եւ նրանց ընդդիմութեան պատճառով անկախութեան հարցի լուծումը յետաձգւեց:

ԳԼՈՒԽ Ը.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Տարակարծութեանց եւ պայքարի միւս լուրջ աղբիւրը պատերազմի եւ խաղաղութեան հարցն էր, որը, ինչպէս արդէն բազմիցս նկատեցինք, անդրկովկասեան ժողովուրդներին բաժանել էր տարբեր, յաճախ, միմեանց թշնամի հատուածների: Այս հարցում կովկասեան ժողովուրդների տեսակէտը բաւական տարբեր էր իրարից. վրացիք եւ, մանաւանդ, հայերը ձգտում էին «պատուաւոր հաշտութեան»: «Այնպիսի հաշտութեան, որպիսին ստորագրեցին բոլշեւիկները, մենք չե՛նք ստորագրի. աւելի լաւ է պատւով մեռնել դիրքերում, քան թէ խայտառակւել եւ սերունդների անէծքին մատնւել», — Ն. Ժորդանիայի այս յայտարարութիւնը ընդունւեց բուռն ծափերով Սէյմի կողմից, փետր. 15-ի նիստում:

Նոյնքան եւ աւելի վճռական էին հայերը: Սէյմի նոյն նիստում Յ. Քաջազնունին Հ. Յ. Դաշնակցութեան Ֆրակցիայի անունից յայտարարեց. «Դաշնակցութիւնը հերթից դուրս գնում է պատերազմը վերջացնելու եւ Ռուսաստանի յեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը — հաշտութիւն առանց բռնագրաւումի եւ ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքով: Մեր ճակատում այս սկզբունքը պէտք է յանգի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծման»: Այսպիսով, հայկական տեսակէտը անհամեմատ աւելի որոշ էր, քան վրացիների անորոշանդակ «պատուաւոր հաշտութիւն» խօսքը:

Աւելի կտրուկ էր ադրբէջանցիների բանաձեւը. նրանք պահանջում էին անմիջապէս վերջ տալ պատերազմին, բաւականանալ 1914 թւի սահմաններով եւ չխառնւել Թիւրքիայի ներքին գործերին. Թրքահայկական խնդիրը, նրանց համար, Թիւրքիայի ներքին գործ էր:

Ադրբէջանցիների կողմից յայտարարութիւն անող Աղայեւը դեռ վարանոտ ու չափազանց զգոյշ արտայայտութիւններով էր ձեւակերպում այս տեսակէտը. «Խիստ կերպով անցկացնել հարեւան պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը»: Բայց հետզհետէ լեզուները բացւեցին, եւ Ադրբէջանի գործիչներն այլեւս պէտք չէին զգում ծածկելու, որ իրենց

համար «եղբայրական Թիւրքիայի» շահերը աւելի թանդ են, քան իրենց հարեւան հայերի ազգային բաղձանքները:

Յաջորդ նիստում, փետր. 16-ին, Սէյմը արդէն դործնականօրէն ղբաղուեց հաշտութեան խնդրով: Յանձնախմբի զեկուցաբեր Ն. Ռամիշվիլին մանրամասն պարզեց այն սկզբունքները, որոնք պէտք է հիմք կազմէին Թիւրքերի հետ կնքելիք դաշնադրի: Այդ սկզբունքներն են. հաշտութիւնը պէտք է լինի վերջնական, դաշնադիրը կողմերի միջեւ պէտք է պահէն 1914 թւի սահմանները, Արեւելեան Անատոլիայի ժողովուրդներին — հայերին, ասորիներին, լազերին — պէտք է տրւի ինքնավարութիւն Թիւրքիայի վերհսկողութեան ներքոյ: Հայկական հարցի մասին Ռամիշվիլի ասաց. «Առաջին հարցը, որ կը կանգնի մեր պատւիրակութեան առջեւ եւ այժմ կանդնած է Անդրկ. Սէյմի առջեւ, Թիւրքահայաստանի բարեկարդութեան հարցն է: Չպէտք է այստեղ երկար խօսինք, թէ այդ ժողովուրդը ինքնորոշման ի՞նչ իրաւունքներ ունի: Ես կարծում եմ, որ այդ իրաւունքները ամրապընդւած են հայ ժողովրդի մղած զարաւոր պայքարով այն ճնշումների դէմ, որոնց այդ ժողովուրդը ենթարկւած էր Թիւրքական կայսրութեան սահմաններում, եւ մենք պէտք է յայտարարենք, որ Թիւրքահայկական հարցը մի հարց է, որի լուծումով չհագրզուած է ո՛չ միայն Թիւրքական կայսրութիւնը, այլ եւ անպայման ոչ պակաս չափով նաեւ անդրկովկասեան ժողովուրդները: Զեղ յայտնի է, որ հայ ժողովրդի ամէն մի շարժում Թիւրքիայում լիովին արձագանք էր ստանում եւ արտասահմանում, եւ այստեղ, Անդրկովկասում: Եւ այդ, քաղաքացի պատգամաւորնե՛ր Սէյմի, միանգամայն բնական է: Արիւնակից եղբայրներ՝ այստեղ գտնուղները չէին կարող այս կամ այն ձեւով չարաչայայուել Թիւրքիայի սահմաններում ապրող իրենց ցեղակիցների վիճակի մասին: Այդ դեռ քիչ է. այդ հարցի ամէն մի խճողում Թիւրքիայում միշտ առաջ է բերել միջպետական յարաբերութիւնների բարդացում այստեղ, Անդրկովկասում: Արժէ յիշել այդ տեսակէտից մի փաստ. 1895 թւի ապստամբութիւնը, որը այստեղ այս կամ այն ձեւով արձագանգ գտաւ: Մեկնելով այս դրութիւնից, բոլորովին բնական է, որ ի պաշտպանութիւն Թիւրքա-հայկական իրաւունքների դուրս է եկել ո՛չ թէ բռնապետական Ռուսաստանը, ո՛չ այն երկիրը, որը ինքն էլ ոչ պակաս չափով ճնշում էր հպատակ ժողովուրդներին, այլ ահա դուրս է գալիս ամբողջովին մի երկիր եւ ամբողջովին երկրի ներկայացուցիչը՝ Անդրկովկասեան Սէյմը: Թիւրքական կայսրութեան շահերը թեղադրում են լուծել մէկ անդամ ընդմիշտ այդ բարդ ու ցաւոտ հարցը: Եւ մենք կարծում ենք, որ Թիւրքիայում էլ կան հասուն պետական գործիչներ — մենք կուզէինք, խիստ կուզէինք հաւատալ, որ կան — որոնք իրենց հէնց միջոցներ ձեռք կառնեն, որ մէկ անդամ ընդմիշտ լուծւի հայ ազգարնակութեան եւ Թիւրքական կայսրութեան միջեւ մշտական կուտակւող եղող այդ հարցը: Եւ մենք կարծում ենք, համաձայն Դաշնակցութեան յայտարարութեան, որ եթէ այդ հարցը լուծւի, բախումները մէկ անդամ ընդմիշտ կը սպառուեն եւ կը վերջանան»:

Եւ Սէյմի ֆրակցիաների ներկայացուցիչների արտայայտւելուց յետոյ,

միաձայնութեամբ ընդունեցին հետեւեալ «հիմնական պայմանները».

«1. Ստեղծած պայմաններում Անդրկ. Սէյմը իրեն համարում է իրաւատէր՝ կնքելու հաշտութիւն Թիւրքիայի հետ:

2. Սկսելով հաշտութեան բանակցութիւնները՝ Անդրկ. Սէյմը նպատակ է դնում կնքել Թիւրքիայի հետ հիմնական հաշտութիւն:

3. Կնքելիք հաշտութեան դաշնագրին իրրեւ հիմք պէտք է դրւի 1914 թւին, պատերազմի յայտարարութեան վայրկեանին, Ռուսաստանի եւ Թիւրքիայի միջեւ գոյութիւն ունեցող պետական սահմանների վերականգնումը:

4. Պատւիրակութիւնը կանգնում է ձեռք բերել Արեւելեան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրաւունք եւ, ի մասնաւորի, Թիւրքահայաստանի համար ինքնավարութիւն՝ Թիւրք պետականութեան շրջանակներում»:

Հայերի համար առանձնապէս ծանր էր վերջին կէտը. այնքա՞ն յոյսերից յետոյ նորից մնալ «Թիւրք պետականութեան շրջանակներում» — սարսափելի էր: Բայց այդքան համեստ պահանջն էլ մեծ դժւարութեամբ կարելի եղաւ մտցնել հաշտութեան «հիմնական պայմանների» մէջ: Ուժերի փոխյարաբերութիւնը շատ էր փոխւած....

Սէյմի հինգերորդ նիստում, փետր. 17–ին, միաձայնութեամբ հաստատւեց յանձնախմբի մշակած հաշտարար պատւիրակութեան կազմը, ինչպէս նաեւ պատւիրակութեան ներքին կանոնագիրը: Պատւիրակութեան անդամ նշանակւեցին Արաշիձէ (սոց.–դեմ.), Հայդարով (մահմ. սոց. բլոկ.), Գվազաւա (վրացի ազգ.–դեմ.), Գաջինսկի (մուս.), Քաջազնունի (դաշն.), Լասխիշվիլի (վրացի սոց.–ֆեդ.), Մեհթիեւ (Ռուս. մահմ. կուս.), Խաս-Մամեդով (մուս.), Ա. Խատիսեան (դաշն.), Զիկալին (սոց.–յեղ.), Զխենկելի (սոց.–դեմ.), Շէյխ-Իւլ-Իսլամով (Հումմէթ): Պատւիրակութեան նախագահ՝ Զխենկելի:

Բացի այդ, պատւիրակութեան մէջ մտան բազմաթիւ խորհրդականներ, մասնագէտներ, քարտուղարներ, այլ եւ այլ պաշտօնեաներ: Հայերից՝ պատմաբան Լէօն, Ռ. Տէր-Մինասեանը եւ ուրիշները:

Իրրեւ պատւիրակութեան ղեկավարող կանոններ, Սէյմի կողմից հաստատւեց հետեւեալ բանաձեւը.

«1. Պատւիրակութիւնը հանդէս է գալիս, որպէս մէկ ամբողջութիւն իր նախագահի կամ իւրաքանչիւր առանձին ղէպքի համար յատուկ լիազօրւած անձի միջոցով, Սէյմի ընդունած հիմնական պայմանների սահմանում, եւ ո՛չ մի անջատ քայլ չի թոյլատրւում:

2. Պատւիրակութիւնը մանրամասն կերպով հաղորդում է Սէյմին բանակցութիւնների ընթացքի մասին՝ նախօրօք առնելով Սէյմի ցուցմունքները բոլոր կարեւոր հարցերի համար»:

Ըստ որոշման, փետր. 17–ին պատւիրակութիւնը պէտք է մեկնէր Թիֆլիսից, բայց նոյն օրը ստացւեց մի անթել հեռագիր Բրեստ-Լիտովսկի բոլշեւիկեան պատւիրակութեան քարտուղար Կարախանից, որը ասում էր.

«Համեմատած փետր. 21*) վերջնագրի հետ նոր առաջարկը պարունակում է վերջնագրի ժամանակակէտ: Այդ պատճառով, այլ եւ որովհետեւ զեմանացիները մերժեցին մինչեւ դաշնագրի ստորագրութիւնը դադարեցնել պատերազմական գործողութիւնները, մենք վճռեցինք ստորագրել դաշնագիրը, որի քննութեան մէջ ենք դեռ, եւ ստորագրելուց յետոյ՝ մեկնել: 21 փետր. պայմանների ամենալուրջ կէտն է՝ Արդահանի, Կարսի, եւ Բաթումի անջատումը Ռուսաստանից՝ ինքնորոշման ձեւի տակ»:

Այս հեռագիրը խորին զարմանք ու վրդովում առաջ բերեց Սէյմի շրջաններում: Նոյն օրն իսկ դումարուեց բոլոր ֆրակցիաների եւ կոմիսարիատի անդամների արտակարգ մի ժողով, որը միաձայնութեամբ ընդունեց բողոքի հետեւեալ հեռագիրը, որ եւ ուղարկուեց անմիջապէս. «Բրեստ-Լիտովսկ՝ հաշտութեան խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սովնարկոմին, Լոնդոն, Փարիզ, Վաշինկթոն, Հռոմ, Թոքիո, Կ. Պոլիս, Բերլին, Վիէննա՝ արտաքին գործոց նախարարներին, Բիւր՝ կենտրոնական Իադայիին, Օդեսա՝ Սովդեպին. — Համաձայն Սէյմի վճռի, անդրկովկասեան կառավարութեան Անդրկովկասին եւ նրա սահմաններին վերաբերուող ամէն մի դաշնագիր, որ կնքւում է առանց իր դիտութեան ու մասնակցութեան, համարում է զուրկ մի ջաղպային արժէքից եւ պարտաւորեցուցիչ ուժից իրեն համար: Այսու յայտնւում է նաեւ ի դիտութիւն հանրութեան, որ Անդրկ. Սէյմը արդէն ընտրել է հաշտութեան պատւիրակութիւն, որը, ըստ Թիւրքիայի հետ կայացած նախնական համաձայնութեան, պատրաստւում է մեկնել Տրապիզոն վերջնական հաշտութիւն կնքելու նպատակով»:

Որոշ վարանումից ու սպասումից յետոյ, պատւիրակութիւնը մեկնեց Թիֆլիսից եւ փետր. 23-ին արդէն Տրապիզոնի նաւահանգստում էր: Տեղ հասնելուն պէս հաղորդեց Պոլիս, որ սպասում է Թիւրքական պատւիրակութեան, սակայն, մի քանի օր պատասխան չեկաւ, եւ Անդրկ. պատւիրակութիւնը մնաց նաւի վրա, առանց ցամաք իջնել կարողանալու, անորոշ վիճակի մէջ, բոլորովին կտրւած աշխարհից:

Միայն փետր. 27-ին, Տրապիզոն հասաւ Թիւրքական պատւիրակութիւնը, որ բաղկացած էր 5 անդամից, նախկին ծովային նախարար Ռաուֆ բէյի նախագահութեամբ, եւ նոյն օրը անդրկովկասեան պատւիրակութիւնը նաւից իջաւ ցամաք: Մի քանի նախնական բանակցութիւններից յետոյ, հաշտութեան խորհրդաժողովը բացւեց մարտ 1-ին եւ հէնց առաջին նիստում պարզուեց, որ կողմերը եկել էին ներհակ ծրագիրներով եւ խօսում տարբեր լեզուներով: Բանալով նիստը՝ Ռաուֆ բէյը արտասանեց ողջոյնի հետեւեալ ճառը. «Երախտապարտ եմ երկնքին, որ ինձ առիթ ընծայեց իմ երկրի եւ իմ պաշտօնակիցների անունից դիմելու բարեմաղթական խօսքերով անդրկովկասեան ժողովուրդների յարգելի ներկայացուցիչների դա-

*) Պէտք է նկատել, որ Անդրկովկասում դեռ գործում էր հին տոմարը եւ Անդրկ. Սէյմին ու կոմիսարիատին վերաբերուող ժամանակագրութիւնը նշանակւած է հին տոմարով. այստեղից է եւ կարախանի հեռագրի մէջ յիշւած ժամանակի տարբերութիւնը: Նոր տոմարն ընդունւեց Սէյմի 13 ապր. օրէնքով:

լրատեան առթիւ, Անդրկովկասի՛, որը, ցարիզմի անկումից յետոյ, հետզհետէ չարժուում է անկախութեան ճանապարհով. պատիւ ունեմ դիտել այս թանգագին դէպքը, իբրեւ իմ կեանքի ամենահաճելի ուրախութիւններից մէկը: Ողջունելով այսօր յանձին ձեզ, ձեր երկիրը, բնաւ ո՛չ միայն ծիսակատարութեան եւ դիւանագիտութեան աւանդութիւններին հետեւելու անհրաժեշտութիւնից դրդուած, ես աւելի շուտ ոգեւորուած եմ յարգանքի զգացմունքներով եւ ակնկալելու բաղձանքով ա՛յն սրբազան դործին, որի ներկայացուցիչն էք հանդիսանում դուք: Քանի որ 200 տարուց ի վեր ցարիզմի դէմ մղած բոլոր մեր պատերազմները մեր երկրների համար ինքնապաշտպանողական պատերազմներ էին, ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագրները աւելի եւ աւելի էին կապւում միմեանց այդ ընդհանուր փառաւոր պատմութեան ընթացքին: Ձեր ապրած վերջին շրջանը, որը, դժբախտաբար, արդելք եղաւ մեզ չօչափելի կերպով կատարել մեր պատմական պարտքը օգնելու ձեզ, մի շարք ծանր փորձութիւններով ապացուցեց մեր ճակատագրների այդ միութեան ամբողջ կարեւորութիւնը: Ճամենայն դէպս, ես համոզուած եմ, որ մենք ամենքս այստեղ մեզ բաժանող արդելքի խորտակումը համարում ենք մեզ համար աւելի կարեւոր երեւոյթ, քան ամենամեծ դիւանագիտական յաջողութիւնները, որովհետեւ մեզ շաղկապող կապերը հանդիսանում են ո՛չ միայն սոսկ պատմական ու աշխարհագրական յարաբերութիւններ, այլ, աւելի շուտ, մեր ընդհանուր անցեալից բխող ազգակցական կապեր: Եւ հէնց այդ պատճառով կովկասեան եւ թիւրքական ժողովուրդները այժմ կազմւած են միեւնոյն կրօններից ու միեւնոյն ազգերից եւ ունեն գրեթէ միեւնոյն պատմութիւնը: Ոգեւորւած այս զգացմունքներով՝ ես մաղթում եմ բախտաւոր վախճան մեր խորհրդակցութիւնների համար եւ յայտարարում առաջին ընդհանուր ժողովը բացւած»:

Այս, արեւելեան չողոքորթութեամբ համեմւած, ճոռոմ ու մանուածապատ, բայց յստակ մտքեր պարունակող ճառին անդրկ. պատւիրակութեան նախագահը պատասխանեց ընդհանուր, խուսափողական խօսքերով: Այնուհետեւ Ռէուֆ բէյը դիմեց աւելի կարուկ միջոցի: Նա դրեց Անդր. պատւիրակութեան առջեւ հետեւեալ հարցումը. «Օսմանեան պատւիրակութիւնը խնդրում է անդրկովկասեան պատւիրակութեան անել ստոյգ յայտարարութիւններ յիշեալ հանրապետութեան էութեան, ձեւի, քաղաքական ու վարչական կազմակերպութեան մասին եւ հարցնում է, թէ արդեօք վերջինս կատարե՞լ է այն պայմանները, որոնք պահանջւում են միջազգային իրաւունքով պետութիւն կազմելու համար»:

Այս հարցումին անդրկովկասեան պատւիրակութիւնը պատասխանեց, յաջորդ, մարտ 2-ի նիստին, թէ՝ «Անդրկովկասի էութեան, կառավարութեան ձեւի, քաղաքական եւ վարչական կազմակերպութեան հարցը հերթի է դրւած այդ հարցերը լուծելու մի՛ակ իրաւազօր մարմնի՝ Անդրկ. Սէյմի մէջ, որը ստեղծւած է ժողովուրդների ազատ համարտայայտութեամբ եւ ընդհանուր ընտրական իրաւունքի սկզբունքով: Բոլշեւիկեան յեղաշրջումից սկսած Անդրկովկասի հողի վրա դաղարեց կենտրոնական ռուսական իշխա-

նութեան գործունէութիւնը, եւ մի նոր, ինքնուրոյն կառավարութիւն ծագեց, որը այժմ պատասխանատու է Սէյմի առջեւ: Անդրկովկասի այս կառավարութիւնը մտել է միջազգային յարաբերութիւնների շրջանը՝ ընդունելով օսմանեան կառավարութեան առաջարկը՝ սկսելու իր հետ ինքնուրոյն բանակցութիւններ հաշտութիւն կնքելու նպատակով: Ցեռազային, Սէյմն ու Անդրկ. կառավարութիւնը այս ուղղութեամբ արին մի նոր քայլ եւս՝ ուղարկելով պատերազմող պետութիւնների արտաքին գործոց նախարարներին հեռագրական բողոք Բրեստ-Լիտովսկի դաշնագրի Անդրկովկասին վերաբերող մասի դէմ եւ յայտարարելով, որ առանց իրենց դիտութեան եւ հաւանութեան կնքւած դաշնագիրը միջազգային իրաւունքի տեսակէտից զուրկ է որեւէ արժէքից եւ պարտադիր չէ իրենց համար: Սակայն, այս խաղաղութեան խորհրդաժողովը Տրապիզոնում նոյնպէս հանդիսանում է միջազգային-իրաւական կեանքի մի ակտ: Այսպիսով, Անդրկովկասը de facto իրապէս արդէն պետութիւն է, թէեւ դեռ չի յայտարարել ու չի տեղեկացրել պետութիւններին իր անկախութիւնը»:

Այս պատասխանի մէջ էլ որոշութիւն չկար. թիւրքերը ձգտում էին առանալ յստակ պատասխան, թէ Անդրկովկասը անկախ պետութիւն է. անդրկովկասցիք այդ պատասխանը չէին տալիս: Այդ պատճառով Ռէուֆ բէյը սկսեց Անդր. պատւիրակութեան դնել մի շարք հարցումներ վերջինիս պատասխանի զանազան կէտերի մասին եւ երբ միւս օրւայ, մարտ 3-ի նիստում ստացաւ պատասխանները, արաւ հետեւեալ յայտարարութիւնը. «Օսմանեան կայսերական պատւիրակութիւնը, անդրկովկասեան պատւիրակութեան նախագահի արած յայտարարութիւններին ծանօթանալուց յետոյ, հաստատում է, որ այդ պատւիրակութիւնը բաղկացած է Սէյմի պատւիրակներից, որ յիշեալ պետութեան կազմակերպութիւնը չի համապատասխանում միջազգային հանրային իրաւունքին եւ որ այդ պետութիւնը դեռ յայտարարութիւն չի արել իր անկախութեան մասին: Օսմանեան կայսերական կառավարութիւնը անկեղծօրէն բաղձալով Անդրկովկասի ժողովուրդների ազատ զարգացումը եւ կամենալով բարի հարեւանական յարաբերութիւնների մէջ մտնել այդ ժողովուրդների հետ՝ խնդրում է անդրկովկասեան կառավարութեան որոշել ու պաշտօնապէս յայտարարել ձեւը այն կառավարութեան, որի կազմութեան մասին խօսում է ինքը, հողի սահմանները, պետական լեզուները եւ կրօնը, այլ եւ ճշտորոշել յիշեալ կառավարութեան վիճակն ու դիրքը օսմանեան կայսրութեան նկատմամբ»:

Մարտ 7-ին, Գրդ նիստում, Չխենկելին նորից յայտարարեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտաւորեցուցիչ եւ ընդունելի չէ Անդրկովկասի համար՝ կրկնելով արդէն մի անդամ արած յայտարարութիւնը Անդրկովկասեան Սէյմի եւ կառավարութեան մասին՝ աւելացնելով նաեւ, որ «ամենայն հաւանականութեամբ Անդրկովկասը կը լինի ռամկավար, դաշնակցային հանրապետութիւն»: Անդրկովկասի հողը բաղկացած է Բաթումի, Գանձակի, Երեւանի, Թիֆլիսի, Քութայիսի, Բաքուի ու Կարսի նահանգներից եւ Սուխումի ու Զաքաթալայի շրջաններից: Դաղստանի եւ Սեւծովեան շրջանի մերացումը Անդրկովկասին կախւած է իրենցից: Պետա-

կան լեզուն առ այժմ ռուսերէնն է, բայց պիտի դառնան վրացերէնը, հայերէնն ու թուրքերէնը. կրօնական տեսակէտից՝ Անդրկովկասում տիրում է խղճի ազատութիւն: Միջազգային տեսակէտից Անդրկովկասը բանակցութիւնների մէջ է Թիւրքիայի հետ եւ պատրաստւում է կնքել տեւական հաշտութիւն:

Այս յայտարարութեան ի պատասխան Ռէուֆ բէյը նորից կրկնեց, որ օսմանեան պատւիրակութիւնը պնդում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի վրա: Լենինի կառավարութիւնը՝ տապալելով նախկին կառավարութիւնը՝ կատարած փաստի զօրութեամբ իսկ բռնել է նրա տեղը: Սահմ. ժողովը աւելի կամ պակաս հետաքրքրական միջադէպ է լոկ, որ մի աւելորդ անգամ ապացուցանում է Լենինի կառավարութեան ոյժը: Այն հանգամանքը, որ Անդրկովկասը չի ճանաչում այդ կառավարութիւնը, ունի ներքին պետական նշանակութիւն եւ չի կարող անդրադառնալ արտաքին յարաբերութիւնների վրա, քանի երկրի որեւ է մի մաս չի անջատւել եւ միջազգային իրաւունքի սկզբունքներով չի յայտարարել իր անկախութիւնը եւ չի ստացել ուրիշ պետութիւնների ճանաչումը: Ներկայ բանակցութիւնները միայն մէկ նպատակ ունեն. պատրաստել եւ ընդունել տնտեսական, առեւտրական եւ ուրիշ տեխնիկական մանրամասնութիւններին վերաբերւող եւ Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող պայմանները — մի դաշնագիր, որը պարտադիր է և Անդրկովկասի համար: Միաժամանակ Ռէուֆ բէյը աւելացրեց, որ բանակցութիւնները սկսելուց առաջ Անդրկովկասը պէտք է յայտարարէ իր անկախութիւնն ու կառավարութեան ձեւը:

Հինգերորդ նիստում, մարտ 8-ին, Չխենկելին նորից ու նորից պընդեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտաւորեցուցիչ չէ Անդրկովկասի համար եւ հաղորդեց Սէյմի փետր. 22 նիստի որոշումը, թէ «սկզբունքով հնարաւոր է» Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը, որից յետոյ Ռէուֆ բէյը վճռական կերպով յայտարարեց, որ կովկասեան հանրապետութեան անկախութեան ճանաչումը հնարաւոր կը լինի միայն մի առանձին կէտով Անդրկովկասի եւ Թիւրքիոյ միջեւ կնքւելիք դաշնագրի մէջ, իսկ նման դաշնագիր կնքելու համար բանակցութիւնները կարող են սկսւել ա՛յն ժամանակ միայն, երբ անդրկ. պատւիրակութիւնը հրաժարւի Բաթումի, Կարսի, եւ Արդահանի սանջակների վրա ունեցած յաւակնութիւններից: Իսկ ինչ որ վերաբերւում է Աճառոլիայի ժողովուրդների ինքնորոշման եւ Թիւրքահայաստանի ինքնավարութեան հարցին, այդ Թիւրքական ներքին խնդիր է եւ չի կարող քննութեան առնւել. օսմանեան պատւիրակութիւնը պատրաստ չի տալ միջամտելու իր ներքին գործերին:

Սրա վրա երկու պատւիրակութիւնները որոշեցին դիմել իրենց կառավարութիւններին նոր հրահանգներ ստանալու համար, եւ բանակցութիւնները մի աւ ժամանակ կանգ առին:

Ստեղծւած փակուղուց դուրս գալու նպատակով անդրկովկասեան պատւիրակութիւնը իր անդամներից մի քանիսին, որոնց մէջ եւ Ֆաջաղնուն, ուղարկեց Թիֆլիս՝ բերանացի զեկուցում տալու եւ նոր հրահանգներ բերելու համար: Միեւնոյն ժամանակ պատւիրակութիւնը հարց յարուցեց,

որ նախագահին տուեն արտակարգ լիազօրութիւններ՝ ազատ եւ ինքնուրոյն քայլեր անելու համար: Այս պահանջը հիմնաւորւում էր նրանով, որ պատւիրակութիւնը շատ բազմանդամ է, դանդաղաշարժ եւ դժւարացնում է գործը: Իրօք, պատճառը ուրիշ էր. այդ միջոցով ուզում էին առաջը առնել այն դրութեան, որ Թիւրքերը միշտ իրազեկ էին անդրկ. պատւիրակութեան մէջ անցած-դարձածներին, եւ այդ բացատրւում էր նրանով, որ ազրբէջանցի պատւիրակները գաղտնի կերպով տեղեկութիւններ էին տանում նրանց: Յետագային յայտնի դարձաւ, որ այդ «արտակարգ լիազօրութիւնները» հարկաւոր են եղել եւ վրացիների համար:

Սէյմը իր մարտ 13 նիստում քննութեան առաւ Տրապիզոնից բերւած տեղեկութիւնները եւ Չխենկելիին «արտակարգ լիազօրութիւններ» տալու առաջարկը եւ ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Լսելով զեկուցումը Թիւրքիայի հետ վարւող հաշտութեան բանակցութիւնների ընթացքի մասին եւ կանգնած մնալով իր 1918 թ. փետր. 16 որոշման վրա ի մասին հաշտութեան պայմանների Թիւրքիայի հետ, բայց կամենալով հասնել պատւաւոր հաշտութեան՝ ընդունելի Անդրկովկասի եւ Թիւրքիայի համար, Սէյմը վճռում է. տալ հաշտարար պատւիրակութեան նախագահ եւ Անդրկովկասի արտաքին գործոց նախարար Ա. Ի. Չխենկելիին արտակարգ լիազօրութիւններ՝ ինքնուրոյն կերպով այդ ուղղութեամբ անհրաժեշտ քայլեր անելու համար»:

Այս լիազօրութիւնը անմիջապէս ուղարկեց Տրապիզոն:

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՅ — ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թողնենք մի առ ժամանակ Տրապիզոնի բանակցութիւնները եւ նայենք, թէ այդ օրերին ի՞նչ էր կատարւում ռազմաճակատում։

Տեսանք արդէն, որ թիւրքերի գրգռումով, դեկտեմբեր ու յունւար ամիսներին, Անդրկովկասի ամբողջ տարածութեան վրա եւ գրաււած վայրերում տեղի էին ունենում մահմեդական շարժումներ, իսկ յունւարի կէսերին Վեհիբ փաշան բողոքեց «հայկական գազանութիւնների» դէմ՝ հաղորդելով, թէ ինքը հրամայել է իր բանակին շարժւել մինչեւ ռուս զօրքի հետ շփման մէջ մտնելը։

Փետր. 25-ի երեկոյեան, Անդրկովկասեան Կոմիսարիատը Վեհիբ փաշայից ստացաւ մի նոր հեռագիր, որ ասում էր. «Թիֆլիս, գլխաւոր հրամանատարին, պատճէն Անդրկ. կառավարութեան նախագահին։ — Հաղորդում եմ բառացի հէնց հիմա ստացւած երկու ֆրանսերէն հեռագիրները։ Առաջինը՝ կովկասեան ռուս բանակի գլխաւոր հրամանատար զօր. Լեբեդինսկիին։ Ձերդ գերազանցութիւն, Ռուսաստանի փառապանծ հանրապետութիւնը՝ համաձայնելով պարպել Բաթումի, Կարսի եւ Արդահանի շրջանները՝ հէնց նոր այդ մասին ստորագրեց հաշտութեան դաշնագիր։ Ի հետեւանս այդ բանի պատիւ ունեմ հաղորդել ձերդ գերազանցութեան, որ ես այս պահուս ստացայ իմ սպարապետից մի հրաման, որի հիման վրա խնդրում եմ ձեզ ամենակարճ ժամանակում դատարկել յիշեալ շրջանները։ Սպասելով ձերդ գերազանցութեան պատասխանին՝ խնդրում եմ ընդունել ամենախորին յարգանացս հաւաստիքը. Վեհիբ Մէհմէտ»։

Երկրորդ հեռագիր. «Կովկասեան ռուս բանակի հրամանատարին։ Ձերդ գերազանցութիւն, հիմնւելով ձեր ներկայութեան վրա էրզրումում՝ ես ենթադրում էի, որ հայերը յանդգնութիւն չեն ունենայ գործելու դաժանութիւններ այդ քաղաքում ու շրջակայ գիւղերում եւ սկզբում հրամայեցի կանգնեցնել մեր զօրքերի յառաջխաղացումը յիշեալ գծերի վրա։ Այսօր ստացւած տեղեկութիւնների հիման վրա, ձերդ գերազանցութեան հեռանալուց յետոյ էրզրումում եւ քաղաքի շրջակայքում տեղի են ունեցել ան-

հաչիւ դաշանութիւններ հայերի կողմից, այդ պատճառով ես ինձ պարտաւորւած եմ զգում հաղորդելու ձերդ ազնւութեան, որ մենք հարկադրանքի տակ ենք, ըստ կարելւոյն չուտ, ազատելու սպառնալիքի ներքոյ գտնւող շրջանները: Այդ առթիւ խնդրում եմ, ձերդ գերազանցութիւն, այս կամ այն ձեւով յայտարարել այդ բռնաւորներին, որ նրանց դիմադրութիւնը կարող է ունենալ իրրեւ հետեւանք խիստ ճնշումներ եւ անսպասելի արդիւնք: Օգտւում եմ առիթից, ձերդ գերազանցութիւն, տեղեկացնելու ձեզ, որ մեր զօրքերի վերադարձը Տրապիզոն ձեր զօրքերի կողմից ընդունւեց անկեղծ ուրախութեամբ: Ես երջանիկ էի վկայ լինելու այդ հազւադիւտ պատմական տեսարանին: Տրապիզոնի պայթիւնը, որ, անկասկած, տեղի է ունեցել չնորհիւ պատահականութեան, մեծ ցաւ պատճառեց ինձ, եւ ես չտատպում եմ ներկայացնել ռուս բանակին իմ ցաւակցութիւնները ու խնդրել ձերդ գերազանցութեան ընդունել իմ բարձր յարգանաց հաւաստիքը: Վեհիբ Մէհմէտ»:

Այսպէս, ուրեմն, անդրկովկասեան կառավարութիւնը վեհիբ փաշայից էր լսանում, որ Տրապիզոնը դրաւած է թիւրքերի կողմից եւ որ, բացի այդ, թիւրք հրամանատարութիւնը նոր պատրւակներ է որոնում, որով-հետեւ «հայերի դաշանութիւնները» նորութիւն չէին նրա համար:

Նոր տեղեկութիւնները հաստատում էին, որ թիւրքերը չարունակում են արագօրէն ուժեղացնել ռազմաճակատը: Անդրկ. բանակի ընդհանուր հրամանատար զօր. Օդիշելիձէն Սէյմի փետր. 26-ի նիստում հաղորդեց, որ «վերջին երկու-երեք օրւայ ընթացքին Տրապիզոնի շրջանում թիւրքերի վերաբերումը դէպի մեզ փոխւած է: Մեր զօրքերը թողել էին ռազմամթերքի ու պարէնի ահագին պաշար: Թիւրքերի առաջարկով կազմւել էր մի յանձնաժողով, որը պէտք է պահակներ դնէր, և հետզհետէ ամբողջ պաշարը պիտի փոխադրւէր: Ստացւած տեղեկութիւններից այժմ դուրս է գալիս, որ թիւրքերը ներս չեն թողնում մեր ընդունողներին եւ ամէն կերպ արգելք են հանում մեր ստացւածքը դուրս տանելուն: Դրանից զատ, մեզ հաղորդում են, որ բացի Տրապիզոնը դրաւող 37 դիւիզիայի մասերից Եւրոպական Թուրքիայից հասնում են 42րդ դիւիզիայի մասերը: Տեղեկութիւններ կան, որ այնտեղ երեւացող զնդերը բոլշեւիկեան կազմ չունեն. լաւ եւ առոյգ որամադրութեան տէր մարդիկ են: Երեւացել են ռազմամթերք կրող բազմաթիւ առագաստանաւեր»:

Միաժամանակ սաստկանում էին մահմեդական չարժումները Կարսի եւ Արդահանի շրջաններում. Մերդենեքն ու Արդահանը պաշարւել էին զինւած ամբոխի կողմից. Կարս, Արդահան, Օլթի հաղորդակցութիւնը կտրւել էր, աւազակախմբեր էին երեւացել Կարս-Ալեքսանդրապոլ ճանապարհի վրա, Զըղըրում, Գէօլում եւ ուրիշ կողմեր: Կարսից, Արդահանից ստացւած էին պաշտօնական հեռագրներ, որոնք ամենամռայլ գոյներով էին ներկայացնում կացութիւնը: «Դրութիւնը չափից աւելի տագնապալից է, հեռագրում էին Արդահանի քաղաքային ու զաւառական գործադիր կոմիտէի նախագահ Սալարիձէն եւ կոմիսար Շագալովը: Կազմակերպւած ու համաչափ գործող հազարաւոր հրոսակների կողմից իրար յետեւից կողոպտւում ու զինաթափւում է քրիստոնեայ բնակչութիւնը: Երէկ նոյնիսկ թալանւեց

ու հրացանի բռնեց Մերդենեքը, ուր հաւաքւել է շրջանից 6 գիւղերի ողջ քրիստոնեայ բնակչութիւնը: Արդահանի շուրջ հաւաքւում է քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որ երկու անգամ որոշել է արտագաղթել, բայց չի կարողանում իրականացնել, որովհետեւ պահակ չունի եւ վստահ չէ, թէ կը կարողանայ ճեղքել–անցնել: Քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ տիրում է կատարեալ խուճապ»:

Նոյն շրջանի յունական Ազգ. Խորհրդի նախագահ Կորխանիդին հեռագրում էր, որ «Արդահանի բոլոր քրիստոնեայ գիւղերը աւերւած ու թալանւած են քրդերի եւ Թուրքերի ձեռքով, տաւարը քշւած–տարւած է, բնակչութիւնը խպառ մերկացւած, արտագաղթին արգելք են լինում քիւրդ հրոսախմբերը… Շրջանի յոյն բնակչութիւնը դատապարտւած է մահւան՝ սովից ու ցրտից»:

Ի վերջոյ, Արդահանը գրաւեց զինւած Թուրք խուժանի կողմից, քրիստոնեայ եւ, մասնաւորապէս, հայ տարրը մասամբ ջարդւեց, մասամբ կարողացաւ փրկւել փախուստի միջոցով:

Արդահանի շրջանի այդ դէպքերը բուռն վէճերի առիթ տւին Սէյմի մարտ 5 նիստում: Հայերը եւ վրացիների մի մասը մեղադրում էին մահմետականներին, որ զէնք են ծառայում «մութ ուժի» ձեռքին, որը ձգտում է կործանել Կովկասը: Մահմետական պատգամաւորները ջղայնացած պաշտպանւում էին եւ, իրենց հերթին, յարձակւում Դաշնակցութեան վրա, որը, իբր թէ, պատճառ է դառնում մահմետական շրջանների աւերումին:

Նոյն օրերին Սէյմում քննութեան նիւթ եղան եւ Գանձակի ընդհարումները, որոնք միեւնոյն աստառն ունէին — թիւրքական պրովոկացիան:

Փետրւարին Թուրքերը յարձակւեցին կայարանից հայկական մասը անցնող մի խումբ պատերազմի դաշտից վերադարձող, հայ զինւորների վրա եւ նրանցից 12ին սպանեցին: Զինւորները դիմեցին ինքնապաշտպանութեան եւ նոյնպէս սպանեցին մի քանի Թուրքեր: Իսկոյն, Գանձակում հայ եւ Թուրք թաղերը դիրքեր բռնեցին միմեանց դէմ, եւ քաղաքը ստացաւ պատերազմական բանակի կերպարանք: Անդրկ. Սէյմը ուղարկեց պատւիրակութիւն՝ խնդիրը տեղն ու տեղը կարգադրելու համար: Պատւիրակութեան մէջ մտան Գեր. Մախարաձէն, Աւ. Սահակեանը, Շահթախտինսկին եւ Խորէն Համասփիւռը, իբրեւ գանձակեցի գործիչ: Մարտ 2–ին մի խառն պատւիրակութիւն էլ ուղարկեցին Բագուի Հայոց եւ Մահմ. Ազգ. Խորհուրդները՝ բաղկացած Բեհբուդ Ջիւանշիրից ու բժ. Ռաֆիեւից եւ Հայկ Տէր–Միքայէլեանից, Գ. Եւանգուլեանից, Գեր. Շահնազարեանից, Ցակ. Մանանդեանից ու Մարտին Շաթիրեանից:

Պատւիրակութեան առջեւ բացւեց այսպիսի պատկեր. յունւարի կէսից սկսած, ինչպէս որ երկաթուղիներով երթեւեկութիւնը հայերի համար կտրւած էր, բոլորովին կտրւել էր եւ Գանձակի հայերի եւ Թուրքերի փոխյարաբերութիւնը, որովհետեւ կայարանում, շուկայում եւ, առհասարակ, Թուրքական թաղում (որ քաղաքի մեծ մասն է) բոլոր պատահած հայերին անխտիր Թուրքերը սպանում էին: Դրանից յետոյ թէ Թուրքական եւ թէ

հայկական մասերը դարձել էին երկու թշնամի բանակներ, որոնք պաշտպանում էին խրամատներով սահմանի ամբողջ երկարութեամբ, մշտական պահակներով եւ պատերազմական օրէնքներով: Կայարանը եւ երկաթուղին թուրքերի մասումն էին, ուստի վերջիններս ազատ կապուած էին արտաքին աշխարհի հետ եւ օգտւում էին ամէն յարմարութիւնից՝ սառնալով դինամիթերք եւ ուտեստ: Իսկ հայերը, պաշարուած բերդի նման, սպառում էին իրենց վերջին մթերքը. նրանք չափազանց դժւար եւ պատահական կապ կարող էին պահպանել լեռների հայկական դիւղերի միջով Դիլիջանի եւ Շուչիի հետ»:*)

Բացի ընդհանուր պատճառից, Գանձակում կար ընդհարումների եւ մի յատուկ առիթ. Թիֆլիսի կենտրոնական դինուորական իշխանութեան որոշումով թուրքերը պէտք է տաներին ռուսական 269րդ գնդի ամբողջ զոյքը, որի մի մասը — ռումբ ու փամփուշտ — պահւում էր թուրքական թաղում եւ թուրքերն արդէն առել էին, իսկ միւս մասը — մի քանի հազար հրացան, բազմաթիւ հազուստ, վրաններ, պայտ ու մեխ եւ այլն — հայկական թաղում էր, եւ հայերը չէին ուզում յանձնել: Այս հողի վրա բուռն վէճ ու կռիւ էր առաջացել երկու կողմերի միջեւ:

Պատւիրակութիւններին մեծ դժւարութեամբ յաջողւեց հաշտեցնել կռւող կողմերը:

Մահմետական չարժումների տեսակէտից, ինչպէս կը տեսնենք յետոյ, դրութիւնը անհամեմատ աւելի վատ էր Երեւանի նահանգում, ուր արիւնահեղ ճակատամարտներ էին տեղի ունենում թուրք դինւած խուժանի եւ հայկական կանոնաւոր զօրքերի միջեւ:

Վեհիբ փաշան ու կովկասեան մահմետականները շատ լաւ դիտէին, թէ ինչ են անում: Նրանք ձգտում էին խառնափնթորել Կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը եւ այդպիսով հեշտացնել թիւրք զօրքերի յառաջխաղացումը, որը սկսւեց յունւարի վերջերին:

Մօտ երկու ամսւայ դինադադարից յետոյ, նորից հայկական նահանգները դառնում էին թատերաբեմ պատերազմի, այս անգամ փաստօրէն Թիւրքիայի եւ հայերի միջեւ. ռազմաճակատում այլեւս ռուսական մասեր դրեթէ չէին մնացել, եւ նրանց թողած դիրքերը գրաւել էր Հայկական Կորպուսը:

1918 թ. տարեգլխին կովկասեան ճակատը ներկայացնում էր հետեւեալ պատկերը.

Վանում կանգնած էր հայկական 5րդ հրացանաձիգ գունդը եւ Վանի երկու գնդերը՝ կազմւած տեղական բնակչութիւնից:

Խնուսում՝ հայկական 2րդ հրացանաձիգ գունդը, Ծնուսի եւ Ղարաքիլիսայի գնդերը՝ նոյնպէս տեղացիներից:

Էրզրումում՝ Էրզրումի հետեւակ գունդը, հայկական առաջին հրացանաձիգ գունդը եւ 4րդ հրացանաձիգ գնդի մէկ գումարտակը, ինչպէս նաեւ բերդային մասեր:

---

*) Մ. Շաքիրեան, «Դրւագներ Մօտիկ Անցեալից», «Հայրենիք» ամս. 1923թ. N° 7:

Երզնկայում՝ Երզնկայի հետեւակ գունդը՝ 3 գումարտակներով եւ կամաւորական խմբեր՝ Մուրատի ղեկավարութեամբ:

Քեալֆիքում՝ Սեպուհի կամաւորները:

Տրապիզոնի շրջանում դեռ մնացել էին ռուսական վոխտ զօրամասեր, որոնք աստիճանաբար հեռանում էին Ռուսաստան: Գլխաւոր հրամանատարութեան կարգադրութեամբ Գիւմիւշխանէ–Տրապիզոն գիծը պէտք է գրաւէին վրացական զօրամասերը, բայց չգրաւեցին:

Բացի այս մասերից, զանազան վայրերում ցրւած էին նաեւ փոքրիկ կամաւորական խմբեր, որոնք օժանդակ դեր էին կատարում եւ օգնում էին ժողովրդի եւ քիկունքային հիմնարկութիւնների ու հաղորդակցութեան գծերի պաշտպանութեան:

Հայկական կորպուսի մի մասը գտնւում էր Քիկունքի զանազան քաղաքներում: Երեւանում՝ հայկական 3րդ եւ 6րդ հրացանաձիգ գնդերը եւ 4րդ գնդի մէկ գումարտակը. Կարսում՝ բերդային մասերը, որոնք կազմակերպման վիճակում էին դեռ. Ալեքսանդրապոլում՝ հայկական 7րդ եւ 8րդ հրացանաձիգ գնդերը եւ բերդային կազմակերպւող մասերը: Այլ եւ, զանազան կէտերում, կազմակերպւում էին այրուձիի, հրետանիի եւ տեխնիկական որոշ մասեր: Կարսի բերդապետ նշանակւած էր զօր. Դէյեւը, որ համարւում էր Կարսի բերդային ամրութիւնների ամենից լաւ ծանօթ դիմադրականներից մէկը: Նրա կողքին կոմիսար էր Մ. Արզումանեանը*):

Ճակատի ընդհանուր հրամանատարութիւնը մնում էր նախկինը. ընդհանուր հրամանատար էր զօր. Օդիշելիձէն, որ նստում էր Էրզրումում: Կովկասեան բանակի հրամանատարն էր՝ զօր. Պրժեւալսկին: Բանակի կազմակերպութեան ու հրամանատարութեան ձեւը պահւել էր անփոփոխ, բայց, ըստ էութեան, ռուսական բանակ այլեւս գոյութիւն չունէր. կար, համեմատաբար կազմակերպւած հայկական կորպուսը, կիսակազմակերպ վրացական կորպուսը եւ անւանական, տակաւին սաղմային վիճակի մէջ՝ մահմետական զօրամասը:

Թէ այս ուժերին ի՞նչ էին հակադրում թիւրքերը, դժւար է ասել: Ըստ գնդ. Լարշէի, 1918 թ. սկզբին Վեհիբ փաշայի հրամանատարութեան տակ կային (3րդ բանակը) հազիւ 10,000 կուռղներ, որոնց թիւը մարտին հասաւ 25,000–ի: Նոյն Լարշէի հաշւով, զօր. Նազարբէգեանը Վեհիբ փաշայի բանակի դէմ ունէր ոչ աւելի, քան 17,000 զինուոր՝ Կարս–Սարըղամիշ ճակատի վրա: Բացի թւականից, թիւրքերն ունէին եւ մի շարք ուրիշ խոշոր առաւելութիւններ. նախ նրանք շատ լաւ ծանօթ էին մեր ճակատի ու քիկունքի վիճակին. մերձաւոր եւ հետաւոր քիկունքում ունէին մահմետականների համակրանքն ու աջակցութիւնը: Թիւրք բանակի կորովը բարձր էր, մինչդեռ մեր զօրամասերի մէջ դեռ թարմ էին ռուս բանակի քայքայման հիմքերը:

---

*) 1918 թւի կովկասեան ճակատի կազմի, դասաւորութեան եւ պատերազմական գործողութիւնների մասին ամփոփ տեղեկութիւններ կարելի է գտնել զօր. Գ. Ղորղանեանի արդէն յիշւած գրքում եւ ֆրանսացի գնդ. Լարշէի վերեւյիշւած մեծահատոր ուսումնասիրութեան մէջ:

վերջապէս, թիւրք զօրքը ունէր հմուտ հրամանատարութիւն ու մէկ կամք, մինչդեռ Կովկասում տիրում էր բազմիշխանութիւն կամ անիշխանութիւն եւ չկար միացնող ու ղեկավարող ուժեղ ձեռք: (Ռազմաճակատի քարտէսը տես էջ 94):

Այս դրութեան մէջ, խախտելով զինադադարի պայմանները, յունուարի վերջերին թիւրքերը անցան յարձակման Երզնկայի ճակատում, որը ունէր աւելի քան 70 կիլոմետր երկարութիւն, Էրզրումից կտրուած էր մօտ 150 կիլոմետր տարածութեամբ եւ բռնուած էր հայկական ցանցառ զօրամասերով, որոնք ստիպուած էին պաշտպանել նաեւ ճանապարհները քիւրդ հրոսախմբերի յարձակումներից: Մեր զօրքերը ցոյց տուին կատաղի դիմադրութիւն: Միաժամանակ բարձր հրամանատարութիւնը բողոքեց զինադադարի խախտման դէմ, բայց Վեհիբ փաշան պատասխանեց, թէ ինքը ստիպուած է առաջ չարժւել միայն մահմետականների կեանքը հայերից պաշտպանելու նպատակով: «Ես կարող եմ ձեզ վստահացնել, աւելացնում էր նա, որ Երզնկայի զինադադարի համաձայնութիւնը ամբողջապէս մնում է իր ոյժի մէջ. իր արժէքը կորցրել է միայն երկու կողմերը բաժանող գիծը, իբրեւ հետեւանք ռուս զօրքերի հեռացման»:

Թիւրքերի կողմից գործում էին 36րդ դիվիզիայի մասերը — 2 հետեւակ գունդ, 2 հարիւրեակ հեծելազօր եւ 2 լեռնային թնդանօթ՝ ունենալով օգնական քրդական հրոսախմբեր: Այս ուժերի դէմ հայերը ունէին հազիւ 1000 սուին, 120 ձիաւոր եւ 6 թնդանօթ. միւս ուժերը ստիպուած էին զբաղուել թիկունքի եւ ճանապարհների պաշտպանութեամբ: Մի քանի օրւայ յամառ կռիւներից յետոյ, յունւ. 31-ի երեկոյեան, հայկական զօրքերը հայ ազգաբնակութեան հետ պարպեցին Երզնկան եւ, անհնարին դժւարութիւններով նահանջեցին Էրզրումի ուղղութեամբ: Թիւրքերը կրնկակոխ հետեւում էին նրանց. քիւրդերը յարձակւում էին աջից ու ձախից, եւ դժւարացնում հայերի նահանջը, որը, աւելի շուտ, անընդհատ ճակատամարտների մի շարք էր: Եւ միայն դնդ. Հասան-Փաշայեանի ու Մուրատի քաջութեան շնորհիւ թշնամին յաջողութիւն չունեցաւ: Ճանապարհին միացան եւ Մամախաթունի եւ միւս շրջանների հայկական կուռ ուժերն ու գաղթականները: Եւ այս բազմահազար զանգւածը, սարսափելի ցրտի ու սառնամանիքի մէջ, ահագին զոհեր տալով, շարժւեց դէպի յետ: Զօրքի մօտ 40%-ը եւ գաղթականների կէսը վերնասւեց ցրտից. որի ձեռքն էր սառել, որի ոտքը կամ մարմնի ուրիշ անդամը: Սպանւածների ու վիրաւորների թիւը հաշււում էր հարիւրներով: Հասկընալի է, որ դաղտնած բազմութիւնը, իր հերթին, ինչով կարող էր վնասում էր ճանապարհին պատահած մահմետականներին: Եւ Երզնկայից մինչեւ Էրզրում ո՛չ մի մահմետական դիւղ կանգուն չմնաց. այրւեցին ու քար ու քանդ եղան, բնակչութիւնը փախաւ կամ կոտորւեց:

Նոյն ձեւով նահանջը տեղի ունեցաւ, փետր. 3-ին, եւ Բաբերդի շրջանից, Սեպուհի անմիջական ղեկավարութեան տակ:

Հայերի արած փոխվրէժի քայլերը աւելի եւս գրգռեցին թիւրքերին, եւ պատերազմը փաստօրէն ստացաւ հայ-թիւրքական կոտորածի կերպարանք: Գերիներ չէին առնւում. երկու կողմն էլ իրենց ձեռքն ընկած հակա-

ռակորդին ոչնչացնում էր: Ինայել չկար: Պատերազմական օրէնքները չէին յարգւում: Մարդը մարդուն իսկական մտքով դարձել էր դազան:

Փետր. 11–ին Երզնկայի զօրքն ու ժողովուրդը հասաւ Էրզրում: Թիւրքերը աւելի եւ աւելի զարդացնում էին իրենց դործողութիւնները եւ տարածւում ուրիշ ճակատների վրա:

Նոյն փետր. 11–ին Թիւրքերը մտան Տրապիզոն եւ դրաւեցին ռուսների Թողած անհաշիւ ապրանքները, ռազմամթերքը, պարէնը, նաւահանգստի դոյքերը, երկաթուղային նիւթերը — տասնեակ միլիոնների արժողութեամբ հարստութիւններ:

Փետր. 18–ին Հայկ. կորպուսի սպայակոյտի պետ զօր. Վիչինակին հեռագրում էր գլխաւոր հրամանատարութեան. «Կորչմայի զօրամասը հասաւ Իլիջա. ժամը 16–ի մօտերը, Կորչմայի կողմից, երեւացին ձիաւոր քիւրդեր, որոնք, մեր առաջապահների հետ հրացանաձգութիւն ունենալուց յետոյ, չուռով քաշուեցին: Ինուսի ուղղութեամբ, Սուլուխի կամուրջի մօտ, Թիւրք ներկայացուցիչը կանչեց մեր սպային եւ հարցրեց, թէ ինչո՞ւ չենք հեռանում Թիկունք: Թիւրք ներկայացուցչի ասելով՝ Թիւրքերն արդէն բոլշեւիկների հետ կնքել են հաշտութիւն, որով մենք պէտք է քաշուենք մինչեւ Սարըղամիշ՝ յանձնելով Թիւրքերին ամբողջ պաշարն ու զէնքը»:

⁂

Երզնկայի անկումը, լախտի հարուածի պէս, ցնցեց ամենքին: Վերահաս վտանգը բացայայտ էր: Այնքա՛ն ճիգով եւ արիւն–քրտինքով բնակեցուած Թիւրքահայաստանը նորից դառարկւում էր: Երզնկայից մինչեւ Վան տեղահան եղած ժողովուրդը՝ պաղթում էր. փախստականների չարանը սկսել էր հասնել Երեւան ու Թիֆլիս: Նորից՝ աւեր ու թշուառութիւն ամէն կողմ: Թիւրքահայաստանը մահացու վտանգի առջեւ: Աւելին. Թշնամին մօտենում էր Ռուսահայաստանի դռներին: Եւ ամենքի աչքերը յառած էին Էրզրումին: Էրզրումը դարձել էր հայութեան յոյսի փարոսը: Աղդային Ինորհրդի եւ Ազահովութեան Ինորհրդի ջանքերը ամբողջապէս ուղղուած էին այդ կողմը:

Բայց իրապէս ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Էրզրումը: Այնտեղ համախմբուած էին հայկական կորպուսի առաջին բրիգադի հետեւեալ զօրամասերը. —Էրզրումի դունդ՝ 2 դումարտակ, 600 ուին, Երզնկայի դունդ 3 դումարտակ, 1400 ուին, 2 լեռնային մարտկոց 8 Թնդանօթով, առաջին հրացանաձիգ դունդը՝ 2 դումարտակ, 500 ուին, 4րդ հրացանաձիգ գնդի մէկ դումարտակը 300 ուինով, Էրզրումի դումարտակը 300 ուին, 3 խումբ կամաւորներ՝ 400 ձիաւոր: Ընդամէնը, ուրեմն, 9 դումարտակ, 3 խումբ՝ 3100 ուինով ու 400 ձիաւորով եւ 2 մարտկոցով՝ 8 Թնդանօթով:

Բացի այս ուժերից, Էրզրումի ամրութիւնները ունէին բաւական ուժեղ հրետանի 400 բերդային եւ դաշտային Թնդանօթներով, որոնց մեծագոյն մասը, սակայն, անդործածելի վիճակի մէջ էր՝ լքուած ու Թալուած խորունկ ձիւնի տակ. հազիւ մի–երկու տասնեակ Թնդանօթներ պահել էին իրենց ռազմունակութիւնը: Էրզրումի հրետանին վարում էին 40 ռուս սպաներ եւ

400 զինուորները, որոնց մարտական ոգին ու բարոյականը այնքան էլ բարձր չէին: Ռուսական սպայակոյտը փետր. 12–ին Էրզրումից տեղափոխել էր Սարըղամիշ եւ բերդի պաշտպանութիւնն ու զօրքերի հրամանատարութիւնը անցել էր հայերի ձեռքը:

Էրզրումի ամրացուած շրջանի պետ նշանակւել էր Անդրանիկը: Քաջ հայդուկ, հիանալի խմբապետ, պարտիզանական կռիւների հմուտ վարիչ՝ Անդրանիկը, զօրավարի ուսադիրներ դնելուց յետոյ, մեծ չափով կորցրեց իր հմայքը: Ուսադիրները չէին արդելում, որ ռուսական բանակի սպաները չարունակէին համարել նրան խմբապետ՝ անձնունհաս վարելու խոշոր զօրամասեր եւ բերդի պաշտպանութեան բարդ գործը: Անդրանիկը ինքն էլ, իր հերթին, լաւ չէր զգում իրեն նոր դերում. ո՛չ խմբապետ էր, ոչ զինուորական: Խմբապետութիւնից հրաժարւել, զօրավար չէր դարձել: Այդ պատճառով, մինչեւ վերջ էլ չկարողացաւ կենտրոնացնել իր ձեռքը բերդի եւ զօրամասերի ղեկավարութեան գործը: Այս պարագան քիչ չնպաստեց Էրզրումի արագ խորտակումին:

Բայց առանց այդ էլ Էրզրումի օրերը հաշւուած էին: Նրա դէմ գործում էր ո՛չ միայն վեհերը փաչայի օր աւուր աճող բանակը, ո՛չ միայն հակառակորդի հրամանատարութեան առաւելութիւնը, ո՛չ միայն շրջակայ քիւրդական հրոսախմբերը, այլ եւ ուժերի անհամաչափութիւնը — թիւրքերը գերակչռում էին թւով, թիկունքի մահմետական պանդուխտները օգնում էին նրանց եւ Էրզրումի աւելի քան 20,000 թիւրք ազգաբնակութեան համակրանքն ու զաղտնի օժանդակութիւնը նրանց հետ էր: Ճիշտ է, Անդրանիկը փորձեց ձեռք առնել կարուկ միջոցներ յայտնապէս թշնամու օգտին ծառայող «Մահմետական Ազգային Կոմիտէի» դէմ, բայց հիմնական չարիքը դրանով չվերացւեց:

Փետր. 14–ից Էրզրումը դարձաւ թիւրքերի զինուորական գործողութիւնների անմիջական թիրախ, եւ հայկական առաջապահ մասերը, նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ, կռւով քաշւեցին մինչեւ Իլիջա: Համախմբելով իր ուժերը Իլիջայի դէմ՝ փետր. 26–ին թշնամին դիմեց բուռն յարձակման: Սկսւեցին կատաղի կռիւներ, որոնք հետզհետէ տարածւեցին եւ ուրիշ շրջաններ: Թշնամու յախուռն գրոհի առջեւ մերոնք նահանջեցին՝ տալով ահագին գոհեր: Անդրանիկը ցոյց տւեց անձնական մեծ քաջութիւն եւ անվեհերութիւն, բայց բանակն ու բերդի պաշտպանութիւնը ղեկավարող չունէր: Որոշ զօրամասեր կռւեցին հերոսաբար, ուրիշներ՝ չկատարեցին իրենց պարտականութիւնը: Երեկոյեան դէմ արդէն պարզ էր, որ կացութիւնը անյոյս է: Անդրանիկի հրաւէրով գումարւեց զինուրական արտակարգ խորհրդակցութիւն, որը որոշեց պարպել քաղաքը եւ նահանջել:

Յաջորդ օր, փետր. 27–ի վաղ առաւօտից, սկսւեց էրզրումի պարպումը, ամենաողբերգական պայմաններում: Զինուորներով ու զաղթականներով լեցւած գնացքներ ու հետիոտն բազմութիւններ շարժւեցին դէպի Հասան-Ղալա: Ժամը 9–ին թիւրքերն արդէն քաղաքում էին: Վերջին հեռացողը այստեղից էլ, ինչպէս եւ Երզնկայից, Մուրատն էր իր ձիաւորներով, որ պաշտպանում էր զաղթականութիւնը: Թիւրքերի ձեռքն ընկաւ անհաչիւ ռազ-

մամբերք, պարենաւորում, հագուստ եւ ուրիշ հարստութիւններ: Քաղաքում մնացած հարիւրից աւելի հայերը կոտորուեցին: Իրենց հերթին, նահանջող հայերն էլ էրզրումում ու Ճանապարհին կոտորեցին պատահած թիւրքերին:

Ճանապարհին իրենց միացնելով նաեւ Խնուսի կուռղների մի մասն ու պաղթականութիւնը՝ էրզրումի ուժերը մարտ 2–ին հասան Սարըղամիշի ուժերին:

Էրզրումի անկումով փաստօրէն ամբողջ Թիւրքահայաստանը նորից անցաւ թիւրքերի ձեռքը: Ճիշտ է, Ալաշկերտ–Խնուս–Վան տարածութիւնը դեռ գրաւած չէր, բայց նրա ճակատագիրն էլ որոշած պէտք էր համարել: Թիւրքահայկական գաւառները նորից դարձան աւերակ եւ անմարդաբնակ:

Պատերազմը փոխադրուում էր ռուսահայկական հողերի վրա: Բնաջնջման սպառնալիքը կախուում էր եւ հայութեան երկրորդ հատուածի դլխին: Կռիւը ո՛չ միայն ըստ էութեան, ձեւականօրէն էլ առանում էր հայ–թիւրքական պատերազմի բնոյթ: Այսուհետեւ բացառապէս հայ ժողովրդից էր կախուած պատերազմի վախճանը: Անդրկովկասեան իշխանութիւնը ո՛չ միայն չէր նպաստում պատերազմին, այլ եւ իր վարանոտ ու հակասական քայլերով ու ներքին հակամարտութիւններով աւելի եւս թուլացնում էր ճակատի պաշտպանութեան գործը: Թիֆլիսում տիրող բարքերն ու միջնեղային բախումները, մանաւանդ, աստիճ ազդում էին բանակի կազմութեան ու տրամադրութեան վրա: Հայերը՝ Թիֆլիսում ու գաւառներում պահանջում էին յայտարարել նոր զօրակոչ, մինչ Անդրկ. Կոմիսարիատը, մահմեդական անդամների ճնշման տակ եւ վրացիների յեղյեղուկ դիրքի պատճառով, ձգձգում էր: Բանը հասաւ այնտեղ, որ հայկական շրջանների մի քանի ազգային խորհուրդներ ստիպուած եղան յայտարարել տեղական զօրահաւաք, որ ահապին իրարանցում ու դժգոհութիւն առաջ բերեց Թիֆլիսում: Եւ միայն հայերի ստիպումով, անվերջ ու ջլայնացնող յետաձգումներից եւ երկու ամիս զինադադարական յանձնախմբում պահելուց յետոյ, չատ ուշ, մարտ 24–ին Սէյմը ընդունեց զօրահաւաքի օրինագիծը, որով զինուորական նախարարութեան իրաւունք էր տրւում զէնքի տակ առնել, առաջին հերթին, մինչեւ 28 տարեկան զինապարտները, իսկ յետոյ, ի հարկին, նաեւ մինչեւ 32 տարեկանները:

Մարտի 2–ին Հայկական կորպուսի հրամանատար զօր. Նազարբէգեանը նշանակուեց ճակատի հրամանատար՝ Օլթիից մինչեւ Մակու ընկած տարածութեան վրա: Օլթի–Բաթում դիրքը պէտք է պաշտպանէին վրացիները: Հայ եւ վրացական ճակատների հրամանատարութիւնը կենտրոնացուեց զօր. Լեբեդինսկիի ձեռքը:

Զօր. Նազարբէգեանի տրամադրութեան տակ կար, միջին հաշուով, 36 դումարտակ զօրք, թերի կազմերով — մօտ 15,000 զինուոր, որով պէտք է դրաւէր աւելի քան 250 կիլոմետր երկարութիւն ունեցող ռազմաճակատ եւ պահպաներ թիկունքը:

Հայկական ճակատի դէմ, համաձայն հետախուզական տեղեկութիւնների, գործում էին հետեւեալ թիւրքական ուժերը. 5րդ, 11րդ եւ 36րդ դի-

վիզիաները Էրզրում–Սարըղամիշ շրջանում, 1 դիվիզիա Ալաշկերտում եւ 1 դիվիզիա Վանի լճի շուրջը: Թէ թւով եւ թէ, մանաւանդ, կազմակերպութեամբ ու ներքին կռուի տեսակէտից թիւրք բանակը աւելի բարձր էր, քան հայկականը:

Բայց եւ այնպէս, հայերը ցոյց տւին ուժեղ դիմադրութիւն: Կարաուրգանից այս կողմ թիւրքերը իւրաքանչիւր թիզ հողը գրաւում էին կռւով եւ զոհեր տալով:

Ընդհարումները սկսւեցին մարտի առաջին կէսերին՝ Կարա–Ուրգանի շրջանից: Թիւրքական գործողութիւնների հետ մէկտեղ գլուխ բարձրացրին եւ քրդերը թիկունքում, մանաւանդ երկաթուղու շրջանում: Մարտի 10–ին,



ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ 1918 Թ. յունուարին

թիւրքերի ճնշող գրոհի տակ՝ հայ զօրքերը քաշւեցին դէպի Խան–Դերէ: Մարտ 20–ին թիւրքերը, մօտ 6 գումարտակով, լայն տարածութեամբ, շարժւեցին դէպի Կարաքուրուտ, Բարդուս եւ այս կէտերը գրաւելուց յետոյ, յարձակւեցին Խան–Դերէի վրա: Այս կէտի պաշտպանութիւնը յանձնւեց Դրոյին, որ այդ օրերին Սարըղամիշ էր եկել: Սկսւեց արիւնահեղ ճակատամարտների մի շարք, որ տեւեց մի քանի օր: Մարտ 23–ին, Կարսից կտրւելու վտանգի տակ, զօր. Արեշեանը տւեց նահանջի հրաման, եւ մարտ 23 լոյս 24–ի գիշերը հայկական զօրքերը պարպեցին Սարըղամիշը՝ նախօրօք պայ–

թեցնելով, այրելով ու փշացնելով պահեստներն ու ռազմական նշանակութիւն ունեցող կէտերը:

Սարըղամիշի անկումով՝ մաքրուեց եւ Ալաշկերտի հովիտը: Հայկական զօրքեր մնացին միայն Վանում, որոնք մինչեւ ապրիլի կէսերը չարունակեցին պաշտպանել թիւրքերի դէմ եւ ապա, կռուով, նահանջեցին դէպի Պարսկաստան, ուր սպանուեց Կոստեա Համբարձումեանը՝ «Պարոն Կոստին», ժողովրդական գաղափարական գործիչներից մէկը:

ԳԼՈՒԽ Ժ.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽԶՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԱՆԿԱԽ

Դառնանք, սակայն, Տրապիզոնի բանակցութիւններին եւ Անդրկովկասի ներսը կատարուող դէպքերին:

Ընթերցողը կը յիշէ, որ մարտ 13-ին Սէյմը տուեց «արտակարգ լիազօրութիւններ» հաշտարար պատուիրակութեան նախագահ Չխենկելիին: Այդ լիազօրութիւնը ստանալուց յետոյ, պատուիրակութիւնը, խորհրդաժողովի 6րդ նիստում, մարտ 23-ին յայտարարեց, որ Անդրկովկասեան կառավարութիւնը զիջում է Թիւրքերին ամբողջ Օլթիի շրջանը, Արդահանի շրջանի հարաւային մասը, Կարսի շրջանի հարաւ-արեւմտեան մասն ու Կաղզուանի շրջանի արեւմտեան մասը եւ պատրաստակամութիւն է յայտնում Թիւրքերի հետ միասին Թիւրքահայկական խնդրի լուծման համար գտնել օսմանեան կայսրութեանը ընդունելի մի ձեւ, որը միաժամանակ հնարաւորութիւն տար Թիւրքահպատակ հայերին եւ ուրիշ ժողովուրդներին վերադառնալու իրենց տեղերը եւ ստանալու ապահովութեան որոշ երաշխիքներ:

Այսպիսով, Թիւրքահայկական ինքնավարութեան խնդիրը կովկասեան պատուիրակութեան առաջարկութիւնների մէջ դառնում էր զուտ գաղթականական մի հարց՝ զուրկ գործնական որեւէ արժէքից: Բայց Թիւրքերը դրա դէմ էլ խիստ կերպով բողոքեցին:

Չխենկելիի այս յայտարարութիւնը լսելուց յետոյ, Ռէուֆ բէյը պատասխանեց, թէ ինքը պէտք ունի կառավարութիւնից նոր հրահանգներ ստանալու եւ առաջարկեց ընդմիջում անել: Միւս օրը, փետր. 24-ին, Սարըղամիշի անկման յաջորդ օրը, երեկոյեան ժամը 9-ին Թիւրքերից ստացուեց հետեւեալ վերջնագիրը. «Պարոն նախագահ, Օսմանեան կայսերական կառավարութիւնը պնդում է 1918 թ. 21 մարտ յայտարարութեան վրա եւ խնդրում է յարգելի Անդրկ. Պատուիրակութեան այդ առթիւ 48 ժամուայ ընթացքում, տալ վերջնական պատասխան», այսինքն՝ ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ Անդրկովկասը յայտարարել անկախ: Մարտ 25-ի առաւօտեան Չխենկելիի յայտարարութիւնն ու վերջնագիրը հեռագրուեց Թիֆլիս: Մարտ

26-ին ստացւեց կառավարութեան պատասխանը, որով համաձայնութիւն էր տալիս զիջելու Կարսի նահանգը եւ Արդւինի շրջանը՝ մերժելով զիջել Բաթումը: Պատւիրակութիւնը նոյն օրն իսկ, աչքի առաջ ունենալով ռազմաճակատի վիճակը եւ Թիւրքերի սպառնական դիրքը, միաձայն որոշումով հեռագրեց Թիֆլիս՝ պնդելով Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու անհրաժեշտութեան վրա: Եւ որովհետեւ մինչեւ մարտ 28-ի երեկոյեան ժամը 8-ը, Թիւրքերի կողմից երկարաձգւած նոր 48 ժամւայ ընթացքում էլ Թիֆլիսից պատասխան չստացւեց, Չխենկելին, ի գործադրութիւն պատւիրակութեան միաձայն որոշման, մարտ 28-ին (10 ապր.) հաղորդեց Ռէուֆ բէյին հետեւեալ պատասխանը. «Անդրկովկասեան հաշտարար պատւիրակութիւնը, ի պատասխան Օսմանեան կայսերական պատւիրակութեան 6 ապր. 1918 թ. նամակի, պատիւ ունի յայտարարելու, որ ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ պատրաստ է շարունակելու բանակցութիւնները՝ հիմնւելով նրա վրա»: Պատւիրակութեան հայ անդամներն էլ՝ Յ. Քաջազնունին ու Ա. Խատիսեանը հեռագրեցին Սէյմի դաշնակցական ֆրակցիային, թէ՝ «Անհրաժեշտ ենք նկատում հրաւիրելու Հ. Յ. Դաշնակցութեան ամենալուրջ ուշադրութիւնը այն բանի վրա, որ ստեղծւած պայմաններում Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը պէտք է համարել փոքրագոյն չարիք»:

Երեք օր յետոյ Ռէուֆ բէյը պատասխանեց հետեւեալ գրութեամբ. «Տրապիզոն, 13 ապր. 1918 թ. Պարոն Նախագահ. Օսմանեան կայսերական կառավարութիւնը տեղեկացաւ Անդրկովկասեան Պատւիրակութեան 10 ապր. գրութեան, որ ստորագրւած էր արտաքին գործոց նախարար եւ Անդրկ. Պատւիրակութեան նախագահ պարոն Չխենկելիի կողմից: Բայց որպէսզի կարողանայ մասնակից դարձնել իր դաշնակիցներին եւս բարեկամութեան դաշինքի բանակցութիւններին, որ ինքը պատրաստ է քննելու, անհրաժեշտ է ամենից առաջ, որ Անդրկովկասը յայտարարէ իր անկախութիւնը: Ընդունեցէ՛ք, պարոն նախագահ, ամենաբարձր յարգանացս հաւաստիքը. Ռէուֆ»:

Յաջորդ օրը, ապր. 1-ին (ապր. 14) Անդրկ. Կոմիսարիատի նախագահ Գեգեչկորիից ստացւած հեռագրով պատւիրակութիւնը յետ էր կանչւում Թիֆլիս, որովհետեւ Անդրկովկասի եւ Թիւրքիայի միջեւ «կարելի չէր եղել կայացնել խաղաղ համաձայնութիւն Անդրկովկասի սահմանային հարցի մասին»: Պատւիրակութիւնը զգալով ինքզինքը անել կացութեան մէջ եւ վախնալով ապագայ աղէտներից՝ հաղորդեց Թիւրքական պատւիրակութեան, թէ ինքը պարտաւորւած է մեկնել Թիֆլիս եւ որ այդ մեկնումը պէտք է նկատել ոչ թէ խզում, այլ բանակցութիւնների ժամանակաւոր ընդհատում: Եւ նոյն օրը հեռացաւ Տրապիզոնից: Չխենկելին, որ միաժամանակ իրեն պահում էր եւ իբրեւ վրաց ժողովրդի ներկայացուցիչ եւ, ինչպէս յետոյ պարզւեց, միւս պատգամաւորների թիկունքում վարում էր վրացական քաղաքականութիւն, Տրապիզոնում թողեց ազգային-դեմոկրատների պարագլուխ Վեշապելիին՝ գործելու համար յօգուտ վրաց ազգային շահերի: Մնաց նաեւ ազգային-դեմոկրատ միւս պարագլուխ Գվազաւան:

Իսկ ինչ՞ը էին կատարում այդ միջոցին Թիֆլիսում. ինչո՞ւ, յանկարծ, պատւիրակութիւնը յետ կանչւեց:

Պատուիրակութեան հեռագիրները եւ, մանաւանդ, Թիւրքերի ներկայացրած վերջնագիրը սաստիկ յուզում առաջ բերին անդրկովկասեան ղեկավար շրջաններում: Մարտ 31-ին գումարուեց Սէյմի նիստը, ուր կառավարութեան նախագահը զեկուցում տուեց Տրապիզոնի բանակցութեանց ընթացքի մասին: Այդ զեկուցումից պարզուեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ճանաչման յայտարարութիւնից յետոյ Բաթումի ճակատում, մարտ 29-ին, կնքուել էր զինադադար, որից յետոյ Բաթումի բերդապետի մօտ եկել էր Թիւրք առաջապահ զօրամասի կողմից մի սպայ եւ պահանջել՝ մինչեւ մարտ 31-ի կէսօրը, քաղաքը յանձնել Թիւրքերին՝ հակառակ պարագային սպառնալով գրաւել զէնքի ուժով: Եւ որովհետեւ բերդապետը պատասխանել էր, թէ առանց կառավարութեան հրամանի չի կարող կատարել ներկայացուած պահանջը, իսկ կառավարութիւնն էլ բերդապետի հեռագիրը ստացել էր միայն մարտ 31-ին ժամը 11-ին, Բաթումի ճակատում վերսկսուել էին կռիւները, եւ Թիւրքերը շարժուել էին Բաթումի վրա:

Տալով այս տեղեկութիւնները՝ վարչապետ Գեգեչկորին յայտարարեց, որ կառավարութիւնը չի կարող կատարել Թիւրքերի պահանջը. «Կառավարութիւնը կարծում է, որ անդրկովկասեան դեմոկրատիայի ազատատենչ ոգին տակաւին մարած չէ, որ դեռ «չոր է վառօդը վառօդամանում» եւ որ թէեւ մենք թոյլ ենք, բայց դեռ այնքան թոյլ չենք, որ դառնանք ստրուկ. (Ձայներ՝ «ճիշտ է», ծափեր): Ուստի եւ կարծում ենք, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելը պիտի նշանակէր, որ Անդրկովկասը, իբրեւ անկախ հանրապետութիւն, դադարի գոյութիւն ունենալուց եւ պիտի դառնայ Թիւրքական Կայսրութեան մէկ նահանգ (ձայներ՝ «ճիշտ է», «ճիշտ է»): Ես կարծում եմ, թէ այն կառավարութիւնը, որ վայելում է անդրկովկասեան դեմոկրատիայի իրաւատէր ներկայացուցչութիւնը հանդիսացող Սէյմի վստահութիւնը, չի կարող ընդունել այդպիսի խայտառակութիւն. (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր): Ես պէտք է ասեմ, որ կառավարութիւնը ձեռք կառնէ բոլոր միջոցները, կը թափէ ամէն ճիգ, կը հաւաքէ բոլոր ուժերն ու բովանդակ զօրութիւնը, որ տայ արժանաւոր հակահարուած այն բռնատենչ յաւակնութեան, որ գալիս է Թիւրք կառավարութեան կողմից. (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր):

Կառավարութեան ռազմաշունչ յայտարարութիւնները ջերմ արձագանգ գտան Սէյմի դահլիճում: Գեգեչկորիից յետոյ, յանուն սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի, մի ռազմաշունչ ճառ էլ խօսեց Ծերեթելին. Նա եւս հրաւէր կարդաց դիմադրութեան, կռուի «Թիւրքական իմպերիալիզմի» դէմ. «Բրեստ-Լիտովսկում թելադրուեց յեղափոխական Ռուսաստանի մահավճիռը, եւ այդ մահավճիռը մենք չենք ստորագրի մեր հայրենիքի համար. (բուռն, երկարատեւ ծափեր)»: «Թիւրքիան ուզում է խեղդել անդրկովկասեան դեմոկրատիան: Եւ ահա հասնում է ժամը, երբ մենք զէնքով պէտք է պաշտպանենք անդրկովկասեան ժողովուրդների ազատ զարգացումն ու գոյութիւնը»: Եւ «մենք համոզուած ենք, որ այդ կռւում մենք կարող ենք յաղթել միայն այն ժամանակ, եթէ թիկունքից չլինեն դաւադիր հարուածներ. (երկարատեւ ծափեր)»:

Ակնարկը պարզ էր․ Թիկունքից «դաւադիր հարուածը» կարող էր գալ միայն կովկասեան մահմեդականներից։ Եւ Մուսաւաթի ներկայացուցիչը վերցրեց Ծերեթելիի նետած ձեռնոցը։ «Պատերազմի հարցում, ասաց նա, դուք ինքներդ էլ լաւ գիտէք, մահմեդական դեմոկրատիայի դիրքը բացառիկ է՝ նախ, որովհետեւ մինչեւ այժմ նա զինուորական պարտականութիւններ չի կատարել, երկրորդ՝ ի հետեւանս Թիւրքիայի հետ ունեցած կրօնական կապի, որը թոյլ չի տալիս նրան գործօն մասնակցութիւն ունենալ Թիւրքիայի դէմ վարուող պատերազմական գործողութիւններին։ Այս խնդրի վրա էլ մենք չենք նայում լաւատեսութեամբ։ Մենք տեսնում ենք այն ներքին քայքայումը, ներքին միութեան բացակայութիւնը, որն, անկասկած, արգելք է հանդիսանում պատերազմական գործողութիւնների բարեյաջող ընթացքին։ Մենշեւիկների ներկայացուցիչ քաղաքացի Ծերեթելին մատնանշեց, նոյնպէս, որ այս պատերազմում մենք կարող ենք յաղթել միայն, եթէ լինենք բոլորովին միացած ու համերաշխ։ Մենք կասկածում ենք, որ կարելի կը լինի հասնել այդպիսի միութեան, եթէ սկսուեն պատերազմական գործողութիւնները»։

Ուրիշ խօսքով, մահմեդականութեան ներկայացուցիչները բարձրաձայն յայտարարում էին, որ իրենք հակառակ են պատերազմին Թիւրքերի դէմ եւ որ չեն երաշխաւորում մահմեդական զանգուածների համակրանքն ու աջակցութիւնը պատերազմի դէպքում։ Ճիշտ է, իրենց առաջարկած բանաձեւի մէջ նրանք խոստանում էին «բոլոր մատչելի միջոցներով ցոյց տալ հնարաւոր օժանդակութիւն միւս ժողովուրդներին», բայց այդ սոսկ տուրք էր ճարտասանութեան։ Ցետագայ դէպքերը հաստատեցին, որ Մուսաւաթականների յայտարարութիւնն աւելի անկեղծ էր եւ աւելի համապատասխան իրերի վիճակին։

Այնուամենայնիւ, ռազմաշունչ ճառերը շարունակեցին։ Նոյն ոգով խօսեցին եւ Ջուղելին, Ժորդանիան, Լորդկիպանիձէն, Սեմենովը։ Մ․ Ցարութիւնեանը յանուն Դաշնակցութեան յայտարարեց, որ «մենք եւ բոլոր այն զանգուածները, որոնք իրենց քւէն տուել են մեզ, ես կարող եմ ասել աւելին՝ ամբողջ հայ ժողովուրդը համոզուած է, որ իրեն համար չկայ ուրիշ փրկութիւն, քան այս մարտահրաւէրն ընդունելը եւ զէնքը ձեռքին ճակատ մեկնելը՝ հայրենի հողը պաշտպանելու համար։ Մենք համոզուած ենք, որ այս միակ ճանապարհն է, որը կարող է փրկել մեր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը։ Մենք հաւատացած ենք, որ ժողովրդի միակ փրկութիւնը զէնքի մէջ է… Մենք կը շարունակենք պայքարը Թիւրքիայի դէմ, որովհետեւ մեզ համար զէնքից բացի ուրիշ փրկութիւն գոյութիւն չունի»…

Ռուսատմբէզովից յետոյ ամենից անկեղծ եւ իր ժողովրդի տրամադրութիւնները ճիշտ արտայայտող պատգամաւորը, այդ օր, անշուշտ, Մ․ Ցարութիւնեանն էր։ Եւ հայ ժողովուրդը, որ յուսահատական կռիւ էր մղում Վեհիբ փաշայի զօրքերի դէմ, կենդանի ապացոյց էր Դաշնակցութեան յայտարարութեան ճշմարտութեան Սէյմում։

Ի վերջոյ, բուռն վէճերից յետոյ, Սէյմը միաձայնութեամբ ընդունեց Ժորդանիայի առաջարկած բանաձեւը սոց․-դեմ․ Ֆրակցիայի կողմից․ «Որով-

հետեւ Թիւրքիայի եւ Անդրկովկասի միջեւ չի կայացել խաղաղ հաշտութիւն Անդրկովկասի սահմանների մասին, անդրկովկասեան պատւիրակութեան առաջարկւում է անյապաղ մեկնել Թիֆլիս»: Այս բանաձեւն էր, որ ուղարկւեց Տրապիզոնի պատւիրակութեան:

Ապա Ժորդանիան բացատրեց, որ այս որոշումով «մենք, ուրեմն, պաշտօնապէս մտնում ենք պատերազմի ասպարէզ, այսինքն՝ Անդրկովկասը պատերազմ է վարում Թիւրքիայի հետ: Այդ պատճառով, Սէյմը պէտք է երկրում զինւորական վիճակ յայտարարէ»: Ւէյարկութեամբ եւ նոյնպէս միաձայն ընդունւեց այս առաջարկն էլ: Միաձայնութեամբ հաստատւեց Ժորդանիայի եւ երրորդ առաջարկը՝ կազմել արտակարգ լիազօրութիւններով օժտւած 3 հոգիանոց յատուկ մարմին՝ վարելու համար պատերազմի գործը: Մարմնի անդամներ ընտրւեցին վարչապետ ու զինւորական նախարար Ե. Գեգեչկորին, ելեմտական նախարար՝ Ա. Կարճիկեանը եւ ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլին: Ի վերջոյ, Սէյմը, վաւերացրեց նաեւ — միշտ միաձայնութեամբ — Ժորդանիայի ներկայացրած նախագիծ-կոչը անդրկովկասեան ժողովուրդներին: Առաջ ենք բերում այդ մարդկային վաւերագիրը ամբողջութեամբ, իբրեւ արտայայտութիւն այն ժամանակւայ տրամադրութիւնների:

Անդրկովկասեաց Սէյմից՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին:

Անդրկովկասի՛ քաղաքացիներ:

Հնչել է ժամը, երբ վճռւում է բախտը մեր ընդհանուր հայրենիքի:

Դուք գիտէք, թէ ինչ պահանջներ է ներկայացրել մեզ Թիւրք կառավարութիւնը:

Մեզանից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որ կնքւել է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան, մի դաշնագիր, որը այժմ Ռուսաստանում չի ճանաչում ոչ մի մարդ, որին թանգ է հայրենի երկրի ազատութիւնն ու պատիւը:

Մեզանից պահանջում էին մեր լաւագոյն բերդը՝ Կարսը եւ մեր ամենալաւ նաւահանգիստը՝ Բաթումը:

Մեզանից պահանջում էին պարպումը մեր երեք շրջանների՝ Կարսի, Արդահանի եւ Բաթումի:

Մենք արինք ամէն ինչ, որ խաղաղ ճանապարհով, բանակցութիւնների միջոցով ստիպենք Թիւրք կառավարութեան՝ հրաժարւել այդ յաւակնութիւններից: Զգտելով խաղաղութեան պահպանման՝ մենք յանձն առինք մեծ զոհեր ու զիջումներ: Մենք յայտնեցինք Թիւրքիային, որ պատրաստ ենք զիջել համարեա բոլոր բաներում: Բայց մենք չէինք կարող հրաժարւել Բաթումից, մեր միակ ծովային ելքից, միակ ճանապարհից: Եւ մեր բոլոր ճիգերը՝ վէճը լուծելու խաղաղութեամբ՝ խորտակւեցին Թիւրքիոյ յամառութեան առջեւ:

Թիւրքիան պնդում է իր սկզբնական պահանջների վրա: Նրա նպատակը է՝ կտրել Անդրկովկասը արտաքին աշխարհից, խեղդել ու ստրկացնել նրան: Ճանուն այդ նպատակի են առաջ շարժւում թիւրք զօրքերը: Կանգնեցնել նրանց կարող ենք միայն զէնքի ուժով:

Մեր առջեւ հարց է դրւած շարունակե՞լ բանակցութիւնները Թիւրքիայի հետ ա՛յն միջոցին, երբ նրա զօրքերը մտնում են մեր երկրի խորքերը, թէ՞ ընդհատել եւ զէնքին յանձնել Անդրկովկասի ազատութեան պաշտպանութիւնը:

Թիւրքիայի հետ վարած մեր բանակցութիւնների սկզբին մենք ասում էինք. Անդրկովկասի ժողովուրդները ծարաւի են հաշտութեան, բայց չեն համաձայնւի գնել հաշտութիւնը ստրկութեան ու խայտառակութեան գնով:

Այժմ մենք ստիպւած ենք ընտրել՝ խայտառակ հաշտութիւն ու ստրկութի՞ւն, թէ՞ պատերազմ:

Մեծ պատասխանատուութեան գիտակցութեամբ հայրենիքի եւ գալիք սերունդների առջեւ՝ մենք առանց տատանւելու արինք ընտրութիւն.

Մենք չստորագրեցինք խայտառակ հաշտութիւնը:

Հաշտութեան բանակցութիւնները Թիւրքիայի հետ խզւած են:

Այսուհետեւ վէճը լուծւում է զէնքի զօրութեամբ, պատերազմի դաշտում:

Եւ այս ժամին մենք դիմում ենք ձեզ, որովհետեւ ձեզանից, ձեր արիութիւնից, ձեր զրկանքի ու զոհաբերութեան պատրաստակամութիւնից է կախւած ձեր եւ ձեր զաւակների ապագան:

Քաղաքացինե՛ր: Ռուսաստանի հետ մէկտեղ ցարիզմը տապալեցիք ա՞յն նպատակով, որ դառնաք Թիւրքիայի ստրկացած մի նահանգը:

Գիւղացինե՛ր: Ցեղափոխութիւնը նրա համա՞ր ձեզ հող տւեց, որ նւաճողը այդ հողի վրա բնակեցնէ նոր կալւածատէրեր:

Բանւորնե՛ր: Արդեօք ա՞յն նպատակով բարձրացրիք յեղափոխութեան դրօշը, որ նրան ցեխի մէջ կոխկրտէ յաղթողի ոտքը:

Խայտառակութիւն ու ստրկութիւն կամ պատերազմ — ուրիշ ընտրութիւն չկայ մեր առջեւ: Թո՛ղ, ուրեմն, մեր երկրի բոլոր ժողովուրդների զըլխին սպառնացող ահաւոր վտանգի հանդէպ լռեն բոլոր վէճերը, վերջանան թշնամանքն ու պառակտումը, որոնք մինչեւ այսօր քայքայում էին մեր շարքերը:

Ցաւիտենական ստրկութեան պարանը ձգւած է մեր երկրի բոլոր ժողովուրդների վրին. թո՛ղ, ուրեմն, թշնամու դրոհը խորտակւի՝ զարնւելով մեր վճռականութեան՝ մինչեւ վերջ պաշտպանելու այնքան սերունդների արիւնով ողողւած մեր հողը:

Ի զէ՛ն ամենքդ:

Դէպի ճակա՛տ ամենքդ:

Ամենքդ՝ ի պաշտպանութիւն ազատութեան ու հայրենիքի»:

Այս կոչը տպւեց բոլոր լեզուներով եւ տարածւեց ժողովրդի մէջ:

Իսկապէս, Սէյմի որոշումը պատերազմը շարունակելու մասին նորութիւն էր միայն վրացիների համար, որովհետեւ հայերն արդէն իսկ պատերազմի մէջ էին: Այդ պատճառով, վրացի զեկավարները դիմեցին աղմկոտ աշխատանքի: Շատերը նրանցից, որոնց մէջ եւ Ժորդանիան ու Մերեթելին, հրացան առած, մեկնեցին ռազմաճակատ: Մի պահ Թիֆլիսում ստեղծուեց պատերազմական բարձր տրամադրութիւն:

Սակայն, այս ոգեւորութիւնը տեւեց շատ կարճ. հազիւ ծովի փրփուրի կեանք ունեցաւ: Դեռ նոր էին լուել ռազմատենչ ճառերը Թիֆլիսի պալատի կամարների տակ, երբ ստացուեց Բաթումի անկման գոյժը: Ապրիլ 1-ին, առանց դիմադրութեան հանդիպելու, թիւրքերը գրաւել էին Բաթումի ամրութիւնները, քաղաքն ու նաւահանգիստը: Վրաց զօրքերի մի մասը փախել էր խուճապահար, մի ահագին բազմութիւն էլ մնացել էր գերի:

Ցայտնի դարձաւ նոյնպէս, որ թիւրքերին միացել է ամբողջ Ալարիայի եւ Ախալցխայի մահմեդականութիւնը, որ Աբաս-Թումանն էլ գրաւած է թշնամու կողմից:

Այս ամենը չէր նպաստում վրացիների մարտական ոգու յարատեւութեան: Մի անգամ միայն նրանք ունեցան զինուորական յաջողութիւն՝ Զոլոքի մօտ: Բայց այդ փոքրիկ ճակատամարտը պատահական մի ջղէպ էր: Իրապէս վրացիները նահանջում էին անընդհատ. նրանց մէջ արագ զարգանում էր դասալքութիւնը, քայքայումն ու բարոյալքումը: Պարզ էր, որ վրացի ժողովուրդը չէր ուզում կուել, թէեւ թիւրքերն արդէն մտել էին բուն Վրաստանի ներսերը՝ Գուրիան եւ գրաւել Օզուրգետին: Վրացի գործիչները շատ շուտով հասկացան, որ ժողովուրդը չի հետեւում իրենց եւ շտապեցին փաստից հանել տրամաբանական եզրակացութիւնները:

Դրան նպաստեց եւ ապր. 3-ին Տրապիզոնից վերադարձած պատուիրակութիւնը, մասնաւորապէս Ջխենկելին, որը ոգի ի բուին աշխատում էր համոզել իր ընկերներին, թէ միակ փրկութիւնը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու, Անդրկովկասը անկախ յայտարարելու եւ հաշտութեան բանակցութիւնները վերսկսելու մէջ է: Եւ քանի ճակատի պարտութիւններն աւելանում էին, այնքան մեծանում էր Ջխենկելիի կողմնակիցների թիւը:

Վրաց անյաջողութիւնները սուր ցաւ էին պատճառում հայերին, որոնք սարսափով էին դիտում թիւրքերի յառաջխաղացումը: Նրանց ուշադրութիւնը ամբողջապէս բեւեռուած էր Կարսի շրջանում. թշնամին ինքնավստահ քայլերով մօտենում էր Կովկասի անպարտելի ամրութեան: Կարսի անկումը մահ էր հայ ժողովրդի համար, որը, փակուած ծուղակի մէջ, չունէր փրկութեան ո՛չ մի ճանապարհ:

Էրզրումի աղէտը անասելի խուճապ առաջ բերեց հայ ժողովրդի մէջ: Մայր տուեց դասալքութիւնը, որին ի պատասխան զինուորական մարմինները Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում եւ ուրիշ վայրերում կատարեցին մի շարք ահաբեկումներ, որոնք ցնցող տպաւորութիւն արին հասարակութեան վրա: Աղ. Խորհուրդն էլ, ճառերից ու կոչերից յոգնած, վերջապէս շարժուեց տեղից, եւ նախագահ Ա. Ահարոնեանը, անդամներ՝ Ս. Մամիկոնեանը, Տ.

Բէգզադեանը, Ն. Աղբալեանը, ինչպէս նաեւ Թիֆլիսի զինուորական մարմինը, անցան ռազմաճակատ: Ազգ. Խորհրդի անդամները այցելեցին Ալեքսանդրապոլ, Կարս, Սարըղամիշ, ամէն տեղ չփոում ունեցան զօրքի ու ժողովրդի հետ եւ իրենց ներկայութեամբ սիրտ տուին ամենքին: Խորհրդակցութիւններ ունեցան բանակի բարձր հրամանատարութեան եւ հասարակական ներկայացուցիչների հետ:

Ազգ. Խորհրդի անդամները Սարըղամիշում էին դեռ, երբ սկսուեց թիւրքական յարձակումը Կարաուրգանից: Սարըղամիշի անկումից եւ թիւրքական վերջնագիրը ստացուելուց յետոյ, Հ. Ց. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրօի նախաձեռնութեամբ, ապր. 7–8–ին, Ալեքսանդրապոլում դումարուեց, մի տեսակ, համազգային խորհրդաժողով, որին մասնակցեցին Ազգ. Խորհրդի եւ Ազահովութեան Խորհրդի անդամները, Սէյմի եւ Տրապիզոնի պատուիրակութեան հայ պատգամաւորները, քաղաքական կուսակցութիւնների, տեղական ազգային խորհուրդների, հասարակական կազմակերպութիւնների, Երեւան, Ալեքսանդրապոլ ու Կարս քաղաքների ու բանակի ներկայացուցիչները, և մի շարք հասարական գործիչներ: 1917 թ. սեպտեմբերի ազգային խորհրդաժողովից յետոյ հայկական ամենապատասխանատու հաւաքոյթն էր այս, որ պէտք է որոշէր հայերի վարքագիծը պատերազմի եւ խաղաղութեան հարցում: Ներկայ էին բազմաթիւ պատասխանատու գործիչներ — Աւետը, զօր. Նազարբէկեանը, զօր. Սիլիկեանը, Դրօն, Ա. Ահարոնեանը, Ս. Ճարուխիւնեանը, Մ. Պապաջանեանը, Ց. Քալջաղնունին, Ա. Խատիսեանը, Ս. Վրացեանը, Ա. Սահակեանը, Ղ. Տէր-Ղազարեանը, Ա. Երզընկեանը, Ս. Մանասեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Վահ. Փափազեանը, Ստ. Մամիկոնեանը, Տ. Բէգզադեանը, Ն. Աղբալեանը, Երեւանի ու Կարսի քաղաքագլուխները եւ այլն:

Պատերազմի եւ խաղաղութեան մասին գլաւոր զեկուցում կարդաց Ց. Քալջաղնունին, որը, իբրեն յատուկ տրամաբանական կուռ բանաւարութիւններով, աշխատում էր համոզել՝ թիւրքական պայմաններին համակերպուելու անհրաժեշտութիւնը: Զեկուցումը առաջ բերեց յուզումնալից ու երկարատեւ վիճաբանութիւններ: Հաշտութեան կողմնակիցների թիւը մեծ չէր — Ց. Քալջաղնունի, Մ. Պապաջանեան, Ղ. Տէր-Ղազարեան եւ մի քանի ուրիշներ: Ահագին մեծամասնութիւնը ժողովականների, բանակի ներկայացուցիչներն ու հրամանատարութիւնը ոչ ի բուն պաշտպանում էին թիւրքական պահանջները մերժելու եւ պատերազմը շարունակելու անհրաժեշտութիւնը*):

Թիֆլիսից ստացուող լուրերը, սակայն, քիչ էին ներդաշնակւում Ալեքսանդրապոլի տրամադրութիւններին: Հաղորդում էին, որ Անդրկ. Կառավարութեան թուրք նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով անյապաղ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները եւ կնքել հաշտու-

*) Այս ժողովին մասնակցեց եւ հայ բոլշեւիկ Պ. Մակինցեանը, որը, Արամի յանձնարարութեամբ, երեւանից գնում էր Մոսկուա՝ յաջողացնելու համար վերջինիս աջակցութիւնը հայ ժողովրդին: Մակինցեանը անցաւ Ռուսաստան եւ փոխանակ կատարելու իր խոստումը՝ պաշտօնի մտաւ Չէկայի մէջ եւ միւս հայ բոլշեւիկների հետ սկսեց կատաղի պայքար մղել Հայաստանի Հանրապետութեան դէմ:

թիւն, այլապէս իրենք կը հեռանան Սէյմից ու կառավարութիւնից: Չխենկելին, կատարուղ դէպքերի օգնութեամբ, յաջողւել էր համոզելու իր ընկերներին՝ ընդունել թիւրքերի պայմանները: Այդ պատճառով, Ալեքսանդրապոլի խորհրդակցութիւնը, առանց որոշ վճիռ հանելու, թէեւ մեծամասնաբար դէմ էր թիւրքերի պահանջներն ընդունելուն, ցրւեց՝ յանձնարարելով իր անդամներին լուծել խնդիրը Թիֆլիսում, ուր կացութիւնը աւելի պարզ էր:

Թիֆլիսում, սակայն, ամէն բան արդէն որոշւած էր. վրացիներն ու թուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել թիւրքական վերջնագիրը եւ յայտարարելով Անդրկովկասի անկախութիւնը՝ վերսկսել հաշտութեան բանակցութիւնները: Այս քայլն անելիս վրացիները որոշ յոյսեր էին կապում Գերմանիայի հետ, որոնց ներկայացուցիչներին, Տրապիզոնում, Չխենկելին տեսել էր միւս պատգամաւորներից գաղտնի, իսկ կովկասեան թիւրքերի համար՝ թիւրքիան ցանկալի բարեկամ էր:

Այսպիսով, հայերի համար ստեղծւում էր ահաւոր կացութիւն. մեկնել վրացիներին ու թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ո՛չ միայն ամբողջ Թիւրքահայաստանից, այլ եւ Ռուսահայաստանի մի երրորդ մասից, եւ դեռ հարց էր՝ կը դոհանայի՞ն արդեօք թիւրքերը միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով: Չմիանալ՝ նշանակում էր անջատւել հարեւաններից, մնալ մենակ, կտրւած ամբողջ աշխարհից, շրջապատւած մահմետական ծովով, թիւրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտւած ստոյգ մահւան: Պէտք էր ընտրել չարիքներից փոքրագոյնը, եւ հայերը միացան հարեւանների որոշման:

Կային մարդիկ, որոնք, այդ օրերին, ցոյց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի ճամբան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշեւիկներին, որոնց առաջապահները դեռ մնում էին Բագւում ու Սուխումում: Այդ տրամադրութեան որոշ չափով նպաստում էին Թիֆլիսում ստացւող աղօտ լուրերը, որ, իբր թէ, Լենինը առանձին դեկրետով յայտարարել է Հայաստանի անկախութիւնը: Սակայն, այդ մտքի անհեթեթութիւնը այնքան էր ակներեւ, որ նոյնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր չարին այդ ուղղութեամբ: Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշեւիկների ոյժը՝ աւելի քան խնդրական:

Ուրիշ ճանապարհ չկար: Ապրիլ 9-ին գումարւեց Սէյմի 22րդ նիստը, ուր դրւեց Անդրկովկասի անկախութեան յայտարարութեան հարցը: Մեռելատան էր նմանւում այդ օր Սէյմի դահլիճը: Մենակ հայերը չէին ազատւորվրացիներն էլ լաւ չէին զգում իրենց: Նրանց առաջնակարգ հռետորներից ոչ ոք ամբիոն չբարձրացաւ այդ օր: Մենշեւիկների կողմից անգոյն ու անհամ ճառեր արտասանեցին մի քանի որ Օնիաշվիլի, Գէորգաձէն, Արսենիձէն, որոնք բոնապրօսիկ ոգեւորութեամբ ու հակասական բացատրութիւններով աշխատում էին հիմնաւորել Անդրկովկասի անկախութեան անհրաժեշտութիւնը: Ռուս Սեմեոնովի եւ սոց.-յեղափոխական Լ. Թումանեանի համար դժւար չէր ջախջախել նրանց խախուտ փաստերը եւ մերկացնել անկախութեան խո-

կական չարժառիթները։ Մանաւանդ, ապանիչ էր վերջինիս ճառը, «Ձեզ համար պէտք է պարզ լինի, ասում էր նա՝ դիմելով վրաց մենշեւիկներին, որ Անդրկովկասի ներկայ պայմաններում յայտարարուած անկախութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ դառնալ կատարեալ սորուկ Թիւրքիային... Անկախ Անդրկովկասը ո՛չ միայն չի տայ մեզ հաշտութիւն Թիւրքերի հետ, ո՛չ միայն չի բարելաւի մեր դրութիւնը, այլ աւելի եւս կը վատթարացնի, կը կապէ մեր ձեռքն ու ոտքը»։

Նոյն տեսակէտն էր պաշտպանում եւ Սեմենովը. «Ձեր անկախութիւնը կը փրկէ՞ ձեզ Թիւրք եւ դերման զօրքերից, հարցնում էր նա։ Եւ ի՞նչ եւրաչիք էք սպասում դուք... Անկախութեան յայտարարութիւնից յետոյ, երկրորդ քայլը կը լինի՝ բանակցութիւններ Թիւրքիայի հետ դաշնակցութիւն կնքելու մասին, եւ դուք հարկադրւած կը լինէք քայլ առ քայլ անել այն, ինչ որ հրամայեն ձեզ Թիւրքերը... Դուք Թիւրք զօրքերի օգնութեամբ կերթաք նւաճելու Բագուն եւ երբ Թիւրք զօրքերը անցնեն Անդրկովկասով, տեղի կունենայ Անդրկովկասի գրաւումը Թիւրք-գերմանական միութեան կողմից։ Եւ երբ Թիւրք-գերմանական զօրքերը գրաւեն ամբողջ Անդրկովկասը, դուցէ, ա՞յդ ժամանակ կարող կը լինէք խօսել յեղափոխութեան յաղթանակի մասին»...

Տօնական տրամադրութիւն ունէին միայն վրացի ազգայնականները, բայց, մանաւանդ, Թուրքերը։ Ռասուլ-Զադէն ցնծում էր։ Մուսաւաթական ֆրակցիան իրեն զգում էր նոր-փեսայի դերում։ Չէ՞ որ իրականում էր իրենց ներքին տենչը՝ մի քայլ դէպի Ռուսաստանի քայքայումը, մի քայլ դէպի «Թուրք ազգերի դաշնակցութիւնը»՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքեստան եւ Թուրքեստանից՝ Անատոլիա։

Իսկական ապի մէջ էին հայերը։ Սիրտ չկար խօսելու։ Եւ ի՞նչ խօսել. բոլոր խօսքերն արդէն ասւած էին։ Ներանց ապրումները արտայայտեց՝ Ե. Քաջազնունին։ Ելոյթած, մաղերը ցրիւ՝ բարձրացաւ ամբիոն ու կարդաց. «Պարոնայք, Սէյմի անդամներ։ Դաշնակցութեան ֆրակցիան՝ դիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատուութիւնը, որ առնում է իր վրա այս պատմական վայրկեանին, միանում է ինքնուրոյն Անդրկովկասեան պետութեան յայտարարութեան»։

Եւ ուրիշ ոչինչ։ Եւ այս մի քանի խօսքերը անհամեմատ աւելի տպաւորիչ էին, քան միւս պատգամաւորների երկարապատում հռետորական մարդանքները։

Վիճաբանութիւնից յետոյ Սէյմը ընդունեց Օնիաշվիլիի առաջարկած հետեւեալ բանաձեւը. «Անդրկովկասեան Սէյմը որոշեց՝ յայտարարել Անդրկովկասը ամբողջովին դաշնակցային հանրապետութիւն»։

Ապա Ձհենկելին, հաշտարար պատւիրակութեան կողմից, զեկուցեց Տրապիզոնի բանակցութիւնների վերջին շրջանի իրադարձութիւնները։ Այդ զեկուցման մէջ առանձնապէս հետաքրքրական էր մի կէտ, որ շատ բնորոշ էր, առհասարակ, բոլոր վրացի գործիչների համար։ Խօսելով պատերազմական անյաջողութիւնների մասին՝ նա նկատեց, որ «Անդրկովկասեան պե-

տուքիւնը, իբրեւ մէկ մխաւոր, չէր կարող դուրս գալ զէնքի ուժով պաշտպանելու Անդրկովկասը»: Խօսքը մահմետականների բռնած թշնամական դիրքի մասին էր: Ու չտապեց աւելացնել: «Թէ ինչու մահմետականները չէին կարող համաձայնուել պատերազմելու Թիւրքիայի դէմ, կան ու կային բոլորովին առարկայական պատճառներ. նոյնը կարելի է ասել և քրիստոնեայ ժողովուրդների մասին, որոնք նման պարագաներում չէին պատերազմի Ռուսաստանի դէմ: Հիմքերը միևնոյնն են: Եթէ այժմ խօսքը մահմետականների մասին է, նշանակում է ուրիշ ելք չկար նրանց համար»:

Խուժանավարութիւնը մահմետականների առջեւ ակներեւ էր: Զխենկելին շատ լաւ գիտէր, որ մահմետականները կովկասում, ոչ թէ չէին կռւում Թիւրքերի դէմ, այլ դաւաճանում Անդրկովկասի միութեան, փորում էին նրա հիմքերը: Բայց... կովկասեան մահմետականների տեսակարար կշիռը օրէցօր բարձրանում էր, նրանք բարեկամ էին Թիւրքերին — եւ Զխենկելիները քծնում ու սիրաշահում էին:

Զեկուցումն ըստ էութեան առարկութիւն չէր վերցնում. պատասխանատու ֆրակցիաները նախօրօք համաձայնուել էին բոլոր կէտերի մասին. Սէյմի կատարածը ծէս էր միայն: Նա հաւանութիւն տուեց պատւիրակութեան կատարածին եւ յանձնարարեց «չարունակել բանակցութիւններն ու միջոցներ ձեռք առնել հաչտութեան չուտափոյթ կնքման համար»:

Նոյն նիստում ընդունուեց Գեղեչկորիի «ռազմասէր» կառավարութեան հրաժարականը եւ նոր կառավարութիւն կազմելը յանձնուեց Զխենկելիին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԿԱՐՍԻՑ — ՂԱՐԱՓԻԼԻՍԱ

Անդրկովկասը դարձաւ անկախ հանրապետութիւն եւ Զխենկելին՝ նրա կառավարութեան նախագահ: Այս հանգամանքը հայերի համար ունեցաւ ճակատագրական հետեւանքներ:

Կառավարութիւնը կազմուեց հետեւեալ անձերից. վարչապետ եւ արտաքին գործոց նախարար՝ Զխենկելին, ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլի, զինուորական՝ Գ. Գէորգաձէ, ելեւմտական՝ Ա. Խատիսեան, հաղորդակցութեան՝ Ի. Մելիք-Ասլանով, արդարադատութեան՝ Ֆ. Խան-Ջոյսկի, երկրագործութեան՝ Ն. Խոմերիկի, հանրային կրթութեան՝ Ն. Ուսուպբէկով, առեւտրի եւ արդիւնաբերութեան՝ Հ. Գաջինսկի, պարենաւորման՝ Աւ. Սահակեան, խնամատարութեան՝ Ց. Քալանթարի, աշխատանքի՝ Ա. Երզնկեան, պետական վերահսկիչ՝ Ի. Հայդարով:

Այս կազմով Զխենկելին ներկայացաւ Մէյմի 13 ապր. նիստին, կարդաց կառավարական յայտարարութիւնը, որի հիմնական միտքն էր Թիւրքիայի հետ հաշտութիւն կնքելու անհրաժեշտութիւնը, եւ ստացաւ Մէյմի վաւերացումը: Զխենկելիի յայտարարութեան առթիւ խօսեցին կուսակցութեանց ներկայացուցիչները — Ծերեթելի, Ռասուլ-Զադէ, Կարճիկեան եւ ուրիշներ: Ծերեթելին նորից վեր հանեց անկախութեան եւ կովկասեան ազգերի համերաշխութեան գաղափարը, «եթէ քայքայւի անդրկովկասեան ժողովուրդների ներքին միութիւնը, մենք ոտքի տակ կերթանք, այլեւս տեղ չի մնայ, ուր հնչի անդրկովկասեան դեմոկրատիայի ազատ ձայնը»: Ռասուլ Զադէն չնչեց, որ Թաղստանն էլ մտնում է անդրկովկասեան հանրապետութեան մէջ, եւ պահանջեց որ Հիւսիսային Կովկասն էլ մտցւի: Թուրքերը շատ էին մտահոգւած մահմետական երկրների ազատութեամբ ու հաւատքումով...:

Հայերին յուզողը զէխաւորապէս պատերազմի ու հաշտութեան, թիւրքական վտանգի հարցն էր: Եւ այդ մտահոգութիւնները արտայայտեց Կարճիկեանը: Անդրկովկասի անկախութիւնը նրա աչքին արտաքին ուժերից բռնադատւած մի քայլ էր. «Այդ արտաքին ուժերի դոյութիւնը փաստ է՝ Ռուսաստանի եւ արտաքին թշնամու (թիւրքերի) կողմից, եւ այդ արտաքին ուժերը հարկադրեցին յայտարարել Անդրկովկասի անկախու-

թիւնն ու տատանում մտցրին անդրկովկասեան ժողովուրդների մէջ: Մինչև որ անդրկովկասեան ժողովուրդները չմիանան ու համերաշխ չգործեն, ոչ մի ոյժ չի փրկի նրանց, եւ կառավարութեան խոստումներն էլ կը մնան դատարկ հնչիւններ»:

«Կառավարութեան առջեւ կանգնած երկրորդ կարեւոր խնդիրը հաշտութիւն կնքելն է: Այն հանգամանքը, որ նոր կառավարութեան գլուխը նախկին հաշտարար պատւիրակութեան նախագահն է՝ ինքնին ասում է, որ նոր կառավարութեան կը ներկայացուեն շատ խիստ պահանջներ: Տրապիզոնից վերադարձած պատւիրակութիւնը լի էր հաւատով, թէ կարելի է կնքել հաշտութիւն, որը կը փրկէ Անդրկովկասը: Պատւիրակութիւնը ոչ միայն հաւատով վերադարձաւ, այլ իր այդ հաւատը ներշնչեց նաեւ զանգւածներին: Այդ պարտաւորեցնում է ոչ միայն պատւիրակութեան, այլ եւ կառավարութեան. այդ մտրհակով կառավարութիւնը ստիպւած կը լինի հաշիւ ներկայացնել»:

Հայերը համոզւած էին, որ թիւրքերի հետ անկարելի է տանելի հաշտութիւն կնքել, եւ այդ համոզումն էր կարճիկեանի խիստ զգոյշ ճառի իմաստը: Նա չէր հաւատում, որ Չխենկելիին կը յաջողւի կատարել իր խոստումը, մանաւանդ որ տեսնում էր շուրջը դանւող մահմետական գործիչների մտայնութիւնը: Չէ՞ որ նոյն նիստում սոց.-յեղափ. Լորդկիպանիձէն, Սէյմի ամբիոնից, յայտարարում էր, թէ՝ «ոմանք այստեղ, ա՛յս դահլիճում, Սէյմի պատգամաւորների շարքերում ու լրագրողների օթեակում, արդէն խօսում են այն մասին, թէ՝ քանի որ անկախութիւնը յայտարարւած է, պէտք է օգնութեան կանչել թիւրքական զօրքերին եւ թիւրք սուիններով պաշտպանել Անդրկովկասի անկախութիւնը հիւսիսից արշաւող բոլշեւիկների դէմ»:

Այո՛, խօսում էին, եւ հէնց Ռասուլ Զադէն իր ճառում շատ թափանցիկ ակնարկներով հրաւիրում էր Սէյմի ուշադրութիւնը Սուխումի եւ Բաքուի վրա, որոնք «տատապում էին ինքզինքը խորհրդային իշխանութեան զաղափարների ջատագով համարող աւազակների լծի տակ»:

Այսպէս, ուրեմն, պաշտօնապէս Չխենկելիի կառավարութիւնը սկսեց գոյութիւն ունենալ ապր. 13–ից, բայց ապր. 9–ից արդէն Գեգեչկորիի դահլիճը, բոլորովին ապօրինի կերպով եւ աննեղելի անփութութեամբ, քաշւել էր գործից եւ իշխանութեան ղեկը փաստօրէն անցել էր Չխենկելիի ձեռքը: Այս վերջինը անմիջապէս անցաւ գործի եւ արաւ մի շարք ինքնագլուխ քայլեր:

Ապր. 10–ին Չխենկելին հեռագրով իմացրեց բոլոր պետութիւններին Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը: Ապա Փոթիի ու Բաթումի գծով նոյնը հեռագրեց եւ Վեհիր փաշային՝ աւելացնելով, որ Անդրկ. Սէյմը ընդունել է Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը եւ որ ինքը կարգադրել է բոլոր ճակատների հրամանատարներին՝ կանգնեցնել պատերազմական գործողութիւնները եւ նոյնը խնդրում է նաեւ թիւրք հրամանատարութիւնից: Չխենկելին աւելացնում էր, որ ինքը հրաման է տւել, որ կարսի պարպման պայմանները մշակելու համար բերդապետը պատւիրակներ ուղարկէ թիւրք հրամանատարութեան մօտ, եւ խնդրում էր տալ բաւարար ժամանակ, որպէսզի կարելի լինի պարպել բերդը:

Ցետոյ, հայկական եւ վրացական կորպուսների պետերին, զինուորական նախարարի պաշտօնակատար զօր. Օդիշելիձէի միջոցով, տրուեց հետեւեալ հեռագրական հրամանը. «Հաղորդում եմ ի գիտութիւն ձեր, որ Անդրկ. Սէյմը իր 9 ապրիլ նիստում յայտարարեց Անդրկովկասի կատարեալ անկախութիւնը: Կազմուած է նոր կառավարութիւն Չխենկելիի գլխաւորութեամբ, որը լիազօրուած է շարունակելու հաշտութեան բանակցութիւնները Թիւրքերի հետ: Կառավարութիւնը հրամայում է ձեզ՝ անմիջապէս հասկացողութեան գալ ձեր առջեւը գտնւող թիւրք զինուորական իշխանութիւնների հետ դադարեցնելու համար պատերազմական գործողութիւնները ամբողջ ճակատի վրա՝ սկսած այսօրուայ ժամը 17-ից: Հեռագրեցէք անմիջապէս ինձ այս հրամանի գործադրութեան ու թշնամութեանց դադարեցման մասին եւ մի պատճէն էլ ուղարկեցէք ընդհանուր հրամանատարին: Այս հեռագրից յետոյ անմիջապէս կուղարկեմ ձեզ մի հեռագիր Վեհիբ փաշայի անունով, որը զօր. Նազարբէկեանը պէտք է հաղորդէ ըստ պատկանելոյն անթելի միջոցով եւ զօր. Գաբայեւը մի ներկայացուցչի միջոցով՝ հեռագրաթելով՝ Բաթումից Տրապիզոն»:

Այս հեռագրին յաջորդեց Օդիշելիձէի մէկ ուրիշ հեռագիրը, որը «անյապաղ» պէտք է հաղորդուէր թիւրք հրամանատարութեան. «Կովկասեան ճակատի թիւրք բանակների ընդհանուր հրամանատար Ֆերիկ Մէհմետ Վեհիբ փաշային. — *Պատիւ ունեմ ծանուցանելու ձերդ գերազանցութեան, որ համաձայն վարչապետ Չխենկելիի 1918 թ. ապր. 10-ին Փոթիի եւ Բաթումի վրայով ձեզ ուղարկուած եւ հաւանօրէն արդէն ստացուած հեռագրի, ես հաճոյքն ունեցայ հաղորդելու Անդրկովկասի գործող զօրքերին անդրկովկասեան նոր կառավարութեան հրամանը՝ 10 ապրիլ ժամը 17-ից սկսած ամբողջ անդրկովկասեան ճակատի վրա դադարեցնել պատերազմական գործողութիւնները՝ համաձայնութեան գալով հանդիպակաց թիւրք իշխանութիւնների հետ: Ցոյս ունեմ ձերդ գերազանցութիւն, որ յանուն հաշտութեան յառաջիկայ բանակցութիւնների յաջողութեան եւ մեր երկու ժողովուրդների ապագայ բարեկամութեան, դուք եւս կը հրամայէք ձեր զօրքերին անմիջապէս դադարեցնել պատերազմական գործողութիւնները»:*

Այս բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները կատարեցին կովկասեան բանակի ընդհանուր հրամանատար Լեբեդինսկիից անկախ, Սէյմից եւ հրաւիրուած նոր նախարարներից գաղտնի, միայն Չխենկելիի անձնական պատասխանատուութեամբ: Ոչ ոք տեղեկութիւն չունէր Չխենկելիի արած քայլերի մասին: Եւ, ինչ որ պակաս տարօրինակ չէ, հեռագրական սովորական կապն էլ հայկական կորպուսի եւ Հայոց Ազգ. Խորհրդի միջեւ կտրուած էր, եւ Թիֆլիսում ոչ ոք չգիտէր, թէ ինչ էր կատարւում հայկական ռազմաճակատում, մինչ այնտեղ զարգանում էին հայ ժողովրդի համար ողբերգական հետեւանքներ ունեցող դէպքեր:

Ապրիլ 10-ին հայկական զօրամասերը բռնում էին հետեւեալ ռազմական դիրքերը. Սամսաւաթ-Հարամ Վարդան-Բէոյիւք Թեփէ բարձունքը — Գիւնէյ բարձունքը — Աղբաբա բարձունքը — Կանը Քէոյ գիւղը: Բերդային

հրետանին կազմ ու պատրաստ վիճակի մէջ էր: Զօրքի ոգին ու բարոյական կորովը բարձր էր: Հայկական բանակը պատրաստ էր դիմադրութեան, եւ հրամանատարութիւնը վստահ էր, թէ կարսը ցոյց կը տայ յամառ դիմադրութիւն, կը դիմանայ առնուազն երկու շաբաթից մէկ ամիս: Թիւրքերը աւելորդ զոհեր չտալու համար՝ ստիպուած պիտի լինէին դիջումներ անել Անդրկ. կառավարութեան՝ բերդը առանց կռիւ առնելու համար:

Այսպէս էր կացութիւնը, երբ իրար յետեւից սկսան հասնել Զեննկելիի հեռագիրները, որոնք խիստ բարոյալքող տպաւորութիւն արին դէրքերում կանգնած զինուորների վրա: Թանի որ որոշած է կնքել զինադադար, էլ ի՞նչու կռւել — այս բնական միտքը կայծակի արագութեամբ տարածւում էր ամէն կողմ, եւ զօրաշարքերը արագօրէն քայքայւում էին: Հայկ. կորպուսի պետ զօր. Վիչինսկին, ապր. 11-ին, ընդհանուր սպայակոյտին արած հաղորդագրութեան մէջ, զօր. Նազարբէգեանի յանձնարարութեամբ, հետեւեալ բնորոշումն էր տալիս ստեղծուած դրութեան. «Բէդլի-Ահմեդի զօրամասի կողմից դրաւուած առաջաւոր դիրքի բախտը որոշել էր երէկ զօր. Օղիչելիձէի կարդադրութեամբ՝ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու եւ բանագնացներ ուղարկելու մասին: Այդ կարգադրութիւնը բացասական տպաւորութիւն արաւ զօրքերի վրա: Սակայն, կարսի բերդապահ զօրքին չչօշափեց. հասկանալի է, որ կարսը դիմանար երկու շաբաթից ոչ պակաս, գուցէ եւ ամբողջ ամիս: Եթէ ժամանակին մերժէին թիւրքական պայմանները այսօր առաւօտ ընդունելու առաջարկը, այդ դեռ կարող էր փրկել կացութիւնը, եւ կարսի բերդը, անտարակոյս, յետ կը մղէր թիւրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ լաւ պաշտպանւում էր, մինչեւ որ առաջուց վարչապետ Զեննկելիի եւ զօր. Օղիչելիձէի կարգադրութիւնը, որ բանագնացներ ուղարկուեն՝ ճշտելու համար բերդի դատարկման պայմանները: Այս բանը բերդապետին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց: Զօրքերը՝ ենթարկւելով հրամանի՝ հեռացան Աղաջ-Աղբաբա-Հարամ վարդան առաջաւոր դիրքերից»:

Այսպիսով, Զեննկելիի կարգադրութիւնը կոտրեց հայկական բանակի դիմադրական թափը եւ պատճառ դարձաւ սարսափելի աղէտի:

Զեննկելիի հրամանը առանալուց յետոյ, զօր. Նազարբէգեանը եւ Ս. Մանասեանը ապարդիւն կերպով աշխատեցին ուղիղ հեռագրաթելով կապւել Թիֆլիսի Ազգ. Խորհրդի հետ. կապը խզուած էր: Դրանից յետոյ, Նազարբէգեանը հրամայեց Էջմիածնի շրջանում գործող հայկական 2րդ դիվիզիայի պետ զօր. Սիլիկեանին եւ Կարսի բերդապետ զօր. Դէյեւին 10 ապրիլ ժամը 17-ից սկսած դադարեցնել պատերազմական գործողութիւնները, եւ թիւրք հրամանատարութեան հետ սկսեցին բանակցութիւններ երկու կողմերը զատորոշող գիծը ճշտելու համար: Թիւրք առաջաւոր մասի հրամանատարը յայտնեց հայերի բանագնաց զնդ. Մորելին, որ ինքը զինադադարի կարգադրութիւն չի ստացել, հայերի դիմումը կուղարկէ բարձր հրամանատարութեան, բայց մինչ այդ, վեհիր փաշայի հրամանի վրա, ապր. 11-ին պիտի չարունակէ յառաջխաղացումը, ուստի առաջարկում է, որ ի գուր ընդհա-

րումներ չունենալու համար, հայկական զօրքերը քաշւեն բերդային ամրութիւնների մօտ։

Յաջորդ առաւօտ թիւրք առաջաւոր զօրքերի հրամանատարից ստացւեց մի նամակ, որով հաղորդւում էր, որ զինադադարի առաջարկը ընդունւած է, թիւրք պատւիրակներն արդէն նշանակւած են, բայց մինչեւ բանակցութիւնների սկսւելը հայկական զօրքերը պէտք է նահանջեն ու կանգնեն բերդի ամրութիւններից երկու վերստի վրա։ «Մեր զօրքերի մօտենալու միջոցին ձերոնք չպէտք է կրակեն, հակառակ դէպքում մենք ոյժ կը գործադրենք»։ Եւ, իրօք, ապր. 11-ին, թիւրքերը դիմեցին ընդհանուր յարձակման եւ աշխատում էին գրաւել Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը՝ հայերի նահանջի ճանապարհը կտրելու նպատակով, բայց բերդի մարտկոցներից բացւած ուժեղ կրակը կանգնեցրեց նրանց, թէեւ կռիւները չդադարեցին։

Նոյն օրը Թիֆլիսից ստացւեց եւ զօր. Օդիշելիձէի հեռագրական հրամանը՝ «ընդունելու թիւրքերի պայմանները եւ դադարեցնելու պատերազմական գործողութիւնները՝ համաձայն այդ պայմանների»։ Այս հրամանը հաւասար էր բացարձակ անձնատուութեան, որովհետեւ բերդի ամրութիւններից 2 վերստի վրա կեցած, այն էլ բարոյալքւած ու զաղզաղած զօրքը անկարող պիտի լինէր պաշտպանւել թշնամուց, եւ Կարսը, բոլոր զօրքերով ու ժողովրդով, պիտի անցնէր թիւրքերի ձեռքը։ Այդ պատճառով, հայկական հրամանատարութիւնը նորից փորձեց զինադադարի աւելի նպաստաւոր պայմաններ ստանալու։

Ապր. 11-ին եւ 12-ին կռիւները չարունակւեցին անընդհատ։ Թիւրք զօրամասերն ու քրդական հրոսախմբերը աշխատում էին կտրել դէպի հիւսիս տանող երկաթուղին ու խճուղին եւ անվերջ յարձակումներ էին գործում հայկական զօրքերի վրա։ Թնդանօթները դոռում էին բերդի ամրութիւններից։ Հայ զօրքը ցոյց էր տալիս կատաղի դիմադրութիւն։ Իսկ նոյն այդ ժամանակ հայերի բանագնաց զնդ. Մորելը իրար յետեւից գնում-գալիս էր թիւրքական հրամանատարի մօտ, բանակցութիւններ վարում Կարսի յանձնւելի պայմանների մասին։ Թիւրք զօրքերի հրամանատար Քեազիմ բէյը Վեհիբ փաշայի կողմից դրեց ու մինչեւ վերջն էլ պնդեց հետեւեալ երեք պայմանի վրա. 1. Մինչեւ ապր. 12-ի կէսօրը թիւրքերին յանձնել Կարս գետի ձախ ափին գտնւող բերդային ամրութիւնները, իսկ մնացեալ ամրութիւնները յանձնել մինչեւ նոյն օրւայ երեկոն։ 2. Ապրիլ 12-ի ընթացքին անդրկովկասեան զօրքերը պէտք է հեռանան Կարսից։ 3. Բերդից դուրս գալուց յետոյ, 3 օրւայ ընթացքում, այդ զօրքերը պէտք է անցնեն Ախուրեան գետի միւս ափը։

Զնդ. Մորելը պնդում էր պայմանաժամի երկարաձգման վրա, բայց թիւրքերը մնացին մինչեւ վերջ անզիջող եւ սպառնում էին, որոշեալ ժամանակը լրանալուց յետոյ, բերդը գրաւել զէնքի ուժով։ Միւս կողմից էլ Թիֆլիսի կառավարութիւնն էր չտապեցնում թիւրքական պայմանների ընդունումը. ապրիլ 11-ի դիշերը զօր. Նազարբէգեանը ստացաւ ընդհանուր հրամանատարի հետեւեալ հեռագրական կարգադրութիւնը, թէ՝ քանի որ Կարսի «պարպման խնդիրը բացարձակ կերպով որոշւած է կառավարութեան կող-

մից, հրամայում եմ ձեզ իրաւունք տալ բերդապետին զօրքերը փոխադրելու Ալեքսանդրապոլի կողմը»:

Այս հեռագրի վրա, հայկական հրամանատարութիւնը մի անգամ էլ — չորրորդ անգամ — ուղարկեց դնդ. Մորելին թիւրք հրամանատարի մօտ՝ խնդրելով պայմանաժամը ղէթ մէկ օրով երկարաձգել: Պատասխանը եղաւ կտրուկ մերժում: Եւ մինչեւ 12 ապր. ժամը 2 կարսը պարպուեց: Հեռացան զօրքերը: Հեռացաւ բնակչութիւնը — մօտ 20,000 մարդ՝ նախօրօք այրելով քաղաքի լաւագոյն շէնքերը: Բերդում մնացին միայն բերդապետ զօր. Դէյեւը, կոմիսար Մ. Արզումանեանը, դնդ. Մորելը եւ սպայակոյտի ու վարչական հիմնարկութեանց սպաների ու պաշտօնէութեան մի մասը... բերդի դոյքերը փոխադրելու համար: Զինենկելին միամտօրէն հաւատում էր, որ թիւրքերը թոյլ կը տան իրեն բերդի պաշարն ու ռազմամթերքը տեղափոխելու Թիֆլիս...

Ապր. 12–ին, երեկոյեան ժամը 9–ին կարս մտաւ թիւրքական 11–րդ դիվիզիայի առաջապահ մասը:

Կարսից հեռանալու պահուն զօր. Նազարբէկեանը Թիֆլիսից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Ցայտնում եմ ձեզ ի գիտութիւն, որ կարսի նահանգը մինչեւ Ախուրեան գետի երկարութեամբ անցնող սահմանը պէտք է պարպւի մեր զօրքերից: Ալեքսանդրապոլի՝ Ախուրեանի աջ ափին գտնուղ ամրութիւնները պէտք է աւերւեն: Կառավարութիւնը հարց է յարուցել, որ թիւրքիան մէկ ամիս ժամանակ տայ մեզ՝ դուրս տանելու համար կարսի բերդի ամբողջ դոյքը եւ մէկ չարաթ՝ մեր զօրքը կարսի նահանգից հեռացնելու համար: Անդրկովկասի վարչապետ՝ Զխենկելի: Պատերազմ. նախարարի պաշտօնակատար՝ Օդիշելիձէ»:

Սակայն, հակառակ, որ թիւրքերի բոլոր պայմաններն ընդունել էին, թիւրք բանակը չդադարեցրեց ղինւորական գործողութիւնները, եւ մեր զօրքերը կռւով նահանջեցին մինչեւ Ալեքսանդրապոլ: Ապր. 15–ին, հայկական բանակը ամբողջովին անցաւ Ախուրեանի ձախ ափը՝ նախօրօք պայթեցնելով աջ ափի ամրութիւնները:

Քիչ յետոյ, ապր. 17–ին, կարսից հեռացաւ եւ զօր. Դէյեւը իր ընկերների հետ, ինչպէս նաեւ մնացած բնակչութիւնը: Թիւրքերը վճռականօրէն մերժեցին կարսի գոյքից որեւէ բան յանձնել: Զինւորականներին ազատ թողին — դրա համար էլ պէտք էր չնորհակալ լինել...

Կարսի կռիւներում ընկան շատ քաջ մարտիկներ: Ապր. 9–ին, խիզախ գրոհի ժամանակ, սպանուեց սպայ Սուրէն Թադէոսեանը՝ յայտնի հասարակական գործիչ Արշակ Թադէոսեանի որդին. ապր. 12–ին, Մաղրայի մօտ, նահանջի ճանապարհը պաշտպանելիս, հերոսի մահով մեռաւ Կարսի քաղաքագլխի որդին՝ կամաւոր Գէորգ Նոհրատեանը:

Կարսի ղէպքերի լուրը Թիֆլիսում ստացուեց միայն ապր. 11–ի կէսօրից յետոյ: Հայկ. Կորպուսի կոմիսար Ս. Մանասեանին մեծ դժուարութեամբ յաջողւել էր ուղիղ հեռագրաթելի մօտ կանչել Սէյմի անդամ Ս. Վրացեանին

ու հաղորդել Զեննկելիի հեռագիրների եւ ստեղծած կացութեան մասին, ինչպէս նաեւ խնդրել, որ Ազգ. Ժողովուրդը միջոցներ ձեռք առնի՝ երկարաձգելու կարսի պարպման ժամանակամիջոցը:

Այս տեղեկութիւնը ռումբի պէս պայթեց հայկական շրջաններում: Ազգային Ժողովուրդը դումարեց արտակարգ նիստ: Ժաչ. Կարճիկեանը եւ Ստ. Մամիկոնեանը անմիջապէս հեռագրաթելով կապուեցին զօր. Նազարբէգեանի հետ՝ կամենալով փրկել կարսը: Նազարբէգեանի պատասխանը եղաւ կարճ. այլեւս ուշ է: «Ես զինուորական նախարար Օդիշելիձէի միջոցով ստացայ կառավարութիւնից բացորոշ հրաման՝ դադարեցնել կարսի մօտ պատերազմական գործողութիւնները եւ թոյլ տալ, որ թիւրքական զօրամասերը մինչեւ երկու վերստ մօտենան կարսի ամրութիւններին. այժմ տեղի են ունենում բանակցութիւններ կարսը պարպելու մասին»:

Կարսի պարպումի լուրը ահագին փոթորիկ առաջ բերեց եւ Սէյմի ու նորակազմ կառավարութեան շրջաններում: Դաշնակցական նախարարներ Ա. Սահակեանը, Քաջազնունին ու Ջամալեանը՝ բողոքելով Զեննկելիի ապօրինի վարմունքի դէմ՝ հրաժարական տուին: Դաշնակցական Ֆրակցիան պահանջեց հեռացնել Զեննկելիին վարչապետութիւնից: Նրա արարքը համաբուում էր դաւաճանութիւն. անհանդուրժելի էր դաւաճանի վարչապետութիւնը:

Սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիան, երկար խորհրդակցութիւններից յետոյ, Ժորդանիայի ու Մերեթելիի բերանով, պատասխանեց, որ ինքն եւս վրդովուած է պատահածից, դատապարտում է Զեննկելիի վարմունքը, պատրաստ է վերացնել Զեննկելիի թեկնածութիւնը, բայց այդ դէպքում վարչապետութիւնը պէտք է ստանձնէ հայերից մէկը, օրինակ, Քաջազնունին:

Այս առաջարկի անհեթեթութիւնը պարզ էր ամենքի համար: Ստեղծուած պայմաններում ի՞նչ կարող էր անել հայ վարչապետը: Նման քայլ միայն կը փութացնէր Անդրկովկասի քայքայումը, եւ Դաշնակցութիւնը, բնականաբար, հրաժարուեց այդ «պատուից»: Հանգամանքները ստիպեցին նորան համակերպուել նաեւ Զեննկելիի վարչապետութեան, որովհետեւ վրացիները բացէ ի բաց մերժեցին ուրիշի թեկնածութիւն առաջ քաշել. կա՛մ Զեննկելին, կա՛մ մենք կը հրաժարուենք կառավարութիւն կազմելուց:

Զեննկելին մնաց կառավարութեան ղլուխը եւ շարունակեց սկսած գործը: Սէյմի որոշման հիման վրա նա մտաւ թիւրքերի հետ նոր բանակցութիւնների մէջ, եւ, փոխադարձ համաձայնութեամբ, որոշուեց հաշտութեան նոր խորհրդաժողովը նշանակել Բաթումում: Կազմուեց անդրկովկասեան նոր պատուիրակութիւն, այս անգամ փոքրաթիւ կազմով: Պատուիրակութեան մէջ մտան՝ Ա. Զեննկելին՝ նախագահ, Ն. Նիկոլաձէն, Ա. Ջամալեանը, Ց. Քաջազնունին, Մ. Գաջինսկին, Յան-Յոյսկին եւ մի շարք խորհրդականներ ու քարտուղարներ — զօր. Օդիշելիձէ, զօր. Ղորղանեան, Ռասուլ-Զադէ, Սաֆիքիւրդսկի, Մ. Բունեաթեան, Ս. Վրացեան, Զ. Աւալով եւ ուրիշները:

Պատուիրակութիւնը Թիֆլիսից մեկնեց մայիս 5-ին*) եւ յաջորդ օրը,

*) Սէյմի ապր. 13-ի օրէնքով, ապր. 17 լոյս 18-ի գիշերուանից մտցուեց նոր տոմար, եւ յետագայ ժամանակագրութիւնը այլեւս հաշուած է նոր տոմարով:

ուշ երեկոյեան, արդէն Բաթումում էր։ Մայիս 11–ին տեղի ունեցաւ Բաթումի խորհրդաժողովի հանդիսաւոր բացումը։

Ներկայ էին անդրկովկասեան պատւիրակութիւնը իր ամբողջ կազմով, Թիւրքերի կողմից՝ Խալիլ բէյը, Վեհիբ փաշան, Նուսրէթ բէյը, Օրխան բէյը եւ այլն, Գերմանիայի կողմից՝ զօր. Ֆոն–Լոսովը, կոմս Շուլենբուրգը եւ Օ. Ֆոն–Վեզենդոկը։ Նիստի սկզբում դրւեց և Լեռնականների հանրապետութեան մասնակցութեան հարցը, եւ Հայդար–բէգ Բամմատը ընդունեց իբրեւ նրա պատւիրակ։

Ստանձնելով նախագահութիւնը՝ Խալիլ բէյը արտասանեց թիւրքերէն լեզուով մի ճառ, որով ողջունում էր «ազատութեան դեղեցիկ աստղի» ծագումը Կովկասի գլխին։ Զխենկելին պատասխանեց համապատասխան արտայայտութիւններով։

Նիստի գործնական մասում Զխենկելին անդրկովկասեան պատւիրակութեան անունից յայտարարեց, որ բանակցութիւններին իբրեւ հիմք ընդունում է Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը։ Հայց Խալիլ բէյը վճռական կերպով մերժեց այդ տեսակէտը. Տրապիզոնի բանակցութիւնների խզումից ի վեր նոր դէպքեր էին պատահել, պատերազմ էր եղել Թիւրքիայի եւ Անդրկովկասի միջեւ, արիւն էր հոսել, հետեւաբար, անկարելի էր այլեւս գոհանալ Տրապիզոնում ներկայացած պայմաններով։ Թիւրքիան իրաւունք էր համարում դնել նոր պահանջներ, որոնք ամփոփւած են հաշտութեան նոր նախագծում։ Եւ որպէսզի բանակցութիւնները չձգձգւեն, Խալիլ բէյը տեղն ու տեղը յանձնեց Զխենկելիին կնքւած մի ծրար, որի մէջ գտնւում էր նախագիծը «հաշտութեան եւ բարեկամութեան դաշնագրի Թիւրքիայի եւ Անդրկովկասեան Հանրապետութիւնների համադաշնակցութեան միջեւ»։ Սրանով էլ վերջացաւ խորհրդաժողովի առաջին — եւ վերջին — նիստը։

Հաշտութեան նախագիծը բաղկացած էր 12 յօդւածներից եւ 3 յաւելւածներից եւ սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Կովկասի, մանաւանդ, Վրաստանի, բայց աւելի եւս Հայաստանի համար։ Վրաստանից առնւում էր Բաթումի չրջանը՝ նաւահանգստով հանդերձ, Ախալցխայի գաւառը։ Հայաստանից խլւում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակի եւ Էջմիածնի գաւառի մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ–Կարս եւ Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղագիծը։ Հայաստան փաստօրէն չէր մնում. հայերին թողնւում էր հազիւ 11,000 քառ. վերստ լեռնոտ տարածութիւն Արագածի եւ Սեւանի լճի միջեւ։ Հողային պայմաններից զատ դրւում էին եւ չափազանց ծանր տնտեսական, առեւտրական, ռազմագիտական եւ այլ պահանջներ։

Այսպիսով, Թիւրքիան յախուռն թափով մուտք էր գործում Կովկաս եւ իր ազդեցութեան տակ առնում Կովկասեան Լեռնաշղթայից հարաւ գտնւող բոլոր հողամասերը։ Կարս–Սուրմալու–Նախիջեւան–Զանգեզուր–Ղարաբաղի վրայով միանում էր Պարսկական եւ Ռուսական Աղրբէջաններին, եւ Բաղուից նրա առջեւ բացւում էին չչմեցնող հեռանկարներ դէպի Անդրկասպեան Թիւրք–

թուրանական ցեղերն ու Կենտրոնական Ասիայի իսլամական աշխարհը։ Էնվերների համիսլամական ցնորքները իրականութիւն էին դառնում…

Թիւրքական պահանջները զարմանք ու զայրոյթ առաջ բերին ո՛չ միայն վրացիների ու հայերի, այլ եւ գերմանացիների մէջ։ Մայիս 12-ին զօր. Ֆոն-Լոսովը հեռագրում էր իր կառավարութեան. «Թիւրքական ամէն չափ ու սահման անցած պահանջները՝ անջատելու զուտ հայկական գաւառները, որպիսիք են Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը եւ Երեւանի նահանգի մասը, աղաղակող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում։ Այսօր երեկոյեան թիւրքերը վերջնագիր ներկայացրին, որ թոյլ տրուի իրենց զօրքերին Ալեքսանդրապոլի վրայով անցնելու Ջուլֆա եւ այդ մասին ոչինչ չհաղորդեցին ինձ։ Ես բողոքեցի նման ընթացքի դէմ»։*)

Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը իրենց տրամադրելու պահանջը թիւրքերը հետապնդում էին շատ խիստ կերպով։ Եւ մինչ երկու պատուիրակութիւնների միջեւ սկսեց օրեր տեւող գրաւոր վէճ Բրեստ-Լիտովսկի շուրջ, երկու կողմից կազմուած մի յատուկ զինուորական յանձնախումբ քննում էր այս պահանջը։ Թիւրքերը պնդում էին, որ երկաթուղին տրուի իրենց, որպէսզի օր առաջ զօրք հասցնեն անգլիացիների դէմ. Անդրկովկասի ներկայացուցիչները՝ զօր. Օդիշելիձէն եւ զօր. Ղորղանեանը հակառակում էին՝ առարկելով, որ այդ հարցը կարող է վճռել միայն ընդհանուր դաշնագրի ստորագրութեամբ։

Յուսահատուած խաղաղ միջոցով երկաթուղին ստանալու մտքից՝ մայիս 14 լոյս 15-ի գիշերը թիւրքերը ներկայացրին վերջնագիր, որ մայիս 15-ի առաւօտեան ժամը 7-ին Ալեքսանդրապոլը յանձնուի իրենց, եւ հայկական զօրքերը քաշուեն 25 կիլոմետր դէպի արեւելք։ Եւ առանց պատասխան ստանալու, մայիս 15-ի առաւօտեան ժամը 2-ին, Ալեքսանդրապոլի դէմ գործող թիւրք զօրքերի հրամանատարը վերջնագրի թիւրքերէն պատճէնը ուղարկեց Ալեքսանդրապոլի հրամանատարին՝ պահանջելով մինչեւ ժամը 6 դատարկել քաղաքը։ Հազիւ մինչեւ ժամը 6 ու կէսը կարելի եղաւ թարգմանել թուղթը, այն ինչ ժամը 6-ից սկսեց քաղաքի ռմբակոծումն ու թիւրքերի յարձակումը։ Հայկական բանակը յանկարծակիի եկաւ եւ շտապով նահանջեց։ Ալեքսանդրապոլն անցաւ թիւրքերի ձեռքը։

Հայկական զօրքերի նահանջը, զօր. Նազարբէկեանի կարգադրութեամբ, կատարուեց երկու ուղղութեամբ. հայկական առաջին դիվիզիան եւ 2րդ դիվիզիայի 7րդ եւ 8րդ գնդերը անցան դէպի Գէօք-Եողուշ-Բեքեանդ-Աւդիբէկ-Փամբ գիւղագիծը։ Ձիաւոր բրիգադը, իբրեւ յետապահ, մնաց Ջրախլու գիւղում։ Առաջին եւ երկրորդ բրիգադները 2րդ ձիաւոր գնդի հետ շարժուեցին Սարդարապատի ուղղութեամբ՝ զօրացնելու համար Երեւանի զօրամասը։ Անդրանիկին, որ մայիս 1-ից ի վեր գրաւում էր Գիւլլի Բուլաղը, հրամայուեց պահպանել Ախալքալաք եւ Վորոնցովկա տանող ճանապարհները, սակայն, նա չմնաց այնտեղ եւ քաշուեց-գնաց Ջալալ-Օղլի։

---

*) I. Lepsius, Deutschland Und Armenia, Berlin, 1919.

Այսպիսով, տարածուած լայն ճակատով, հայ զօրքերը պաշտպանում էին հայկական չրջանները: Թիւրքերը քայլ առ քայլ յառաջանում էին եւ մայիս 22–ին դրաւեցին Համամլու կայարանը, որով բացւում էր Երեւանի ճանապարհը: Երեւանից չտապով նրանց դէմ Բաշ–Աբարան ուղարկւեց մի զօրամաս Դրոյի դլխաւորութեամբ: Բացի այդ, միլոցներ ձեռք առնւեցին ամրացնելու Ղարաքիլիսայի ճակատը: Զօր. Նազարբէգեանը մի կոչ ուղղեց զօրքին, որով դիմում էր նրա հայրենասիրական զգացմունքներին եւ հրաւիրում կատարել իր պարտականութիւնները ժողովրդի հանդէպ: Կարելի եղաւ կանգնեցնել ու կարգի բերել նահանջող զօրամասերը: Ցուսալքումը տեղ տւեց ոգեւորութեան:

Զօր. Նազարբէգեանը օգտագործեց այս տրամադրութիւնը եւ մայիս 24–ին տւեց յարձակման հրաման: Նոյն օրը Ղարաքիլիսայի մօտ տեղի ունեցաւ յաջող ճակատամարտ. Թիւրքերը ջարդւած՝ խուճապով քաշւեցին դէպի Համամլու: Սակայն, թշնամին սպառնում էր մեր աջ թեւին. Անդրանիկը հեռացել էր Ջալալ–Օղլիից դէպի Դսեղ՝ բանալով ահագին տարածութիւն Թիւրքերի առջեւ:

Տաք եւ մեզ համար յաջող յարձակողականը շարունակւեց եւ մայիս 25 ու 26–ին: Այդ երկու օրւայ ընթացքին տեղի ունեցան յամառ եւ արիւնահեղ ճակատամարտներ: Մայիս 26–ի երեկոյեան թշնամին քշւած էր Գեադա–Սայմեխ սարից. հայերը դրաւել էին Հաչի–Ղարա դիւղը, Բեզոբդալը: Թիւրքերը տւին ահագին զոհեր:

Ստանալով օժանդակ նոր ուժեր ու թնդանօթներ՝ մայիս 27–ին թիւրքերը դիմեցին հակայարձակման եւ արիւնահեղ կռիւներից յետոյ նորից գրաւեցին Բեզոբդալը: Այդ թեւից սպառնացող հարւածի պատճառով՝ ստիպւած նահանջեցին եւ հայերի կենտրոնական ուժերը ու մայիս 28–ին դիրքեր բռնեցին Բոլիդիւղ եւ Նիկիտինօ դիւղերի մօտ՝ փակելով Երեւանի ճանապարհը: Անդրանիկը մայիս 30–ին Դսեղից անցաւ Դիլիջան:

Ղարաքիլիսայի ճակատամարտներում հայ զինւորը երեւան բերեց ռազմական բարձր կարողութիւն եւ անսահման հայրենասիրութիւն: Բազմաթիւ զոհեր տւեց նա: Շատերը ընկան հերոսական մահով: Դրանց մէջ էր թնդանօթային մարտկոցի հրամանատար հերոս Տէր–Մովսիսեանը: Դրանց մէջ էր և Հայաստանի ապագայ վարչապետ Հ. Օհանջանեանի անդրանիկ զաւակը՝ Մոնիկը, որ մի խումբ պաշտպարական ուսանողների հետ գտնւում էր առաջաւոր դիրքերում, մասնակցել էր բազմաթիւ ճակատամարտների, ստացել քաջութեան նշան եւ որ անհետ կորաւ Ղարաքիլիսայի կռիւներում:

Ղարաքիլիսայի ճակատամարտը եւ նոյն օրերին Սարդարապատ–Բաշ Աբարանում տեղի ունեցող կռիւները ահագին տպաւորութիւն թողեցին բաթումում: Դրանից յետոյ էր, որ Վեհիբ փաշան, էնվէր փաշայի կողմից պինակցութիւն առաջարկեց հայ պատգամաւորներին:



Ղարաքիլիսան դրաւելուց յետոյ, թիւրքերը արշաւեցին դէպի հիւսիս՝ Թիֆլիսի ուղղութեամբ: Միաժամանակ ոտքի ելաւ և Սադախլու–Սանդարի չրջանի մահմետականութիւնը, որ կտրեց երկաթուղային հաղորդակցութիւնը եւ թալանում ու կոտորում էր փախստական հայերին: Մայիս 22–ին Անդրկ. կառավարութիւնը որոշեց խնդրել Հ. Ց. Դաշնակցութեան եւ Մուսաւաթին՝ ուղարկել երեքական ներկայացուցիչներ այդ չրջանի թուրքերին հանդստացնելու համար, բայց ալեկոծւած տարերքը զսպելու հնարաւորութիւն չէր մնացել այլեւս: Հարաւից ջարդում ու կոտորում էին թիւրք ասկեարները, հիւսիսից՝ դինւած թուրք գիւղացիները: Հայ գաղթականութիւնն ու նահանջող զօրամասերը թալանւում ու կոտորւում էին ամէն կողմ:

Թիւրքերի հիւսիս չարժւելու հետեւանքով անասելի իրարանցում առաջ եկաւ եւ Թիֆլիսում՝ վրաց եւ հայկական չրջաններում: Վրացիները սկսեցին պատրաստւել դիմադրութեան: Թիֆլիսը յայտարարւեց պաշարման վիճակում. զօրաչարժի ենթարկւեց կարմիր դւարդիան: Քաղաքի չուրջը, բարձունքների վրա, դիրքեր փորւեցին, նշանակւեցին պահակներ:

Անտանելին, սակայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խռնւած կարսեցի, չիրակեցի, արեւմտահայ բազմահազար գաղթականութեան վիճակն էր: Մանաւանդ, շատ էին չղայնանում արեւմտահայերը, որոնք, հասկնալի պատճառներով, աւելի էին սարսափում թիւրքական արշաւից: Նրանց դրութիւնը ահռելի էր: Ի՞նչ անել: Ո՞ւր գնալ: Եւ ահա ծայր տւեց մի խուճապային փախուստ դէպի Հիւսիսային Կովկաս: Հազարաւոր մարդիկ, ծեր ու երեխայ, գիւղացի ու քաղաքացի, աշխատաւոր ու մտաւորական, — ով ինչով կարող էր — խուժեցին դէպի ռազմավիրակական ճանապարհը: Հոսանքի մի ծայրը հասել էր արդէն Վլադիկաւկազ ու Արմաւիր, մինչ միւսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից: Օրեր անընդհատ, Թիֆլիսից չարժւում էին հազարաւոր սայլեր, կառքեր, ինքնաչարժներ, դրաստներ, ֆուրգոններ՝ բեռնաւորւած տնային իրերով, կանանցով ու երեխաներով: Շատերը իրենց ունեցւածքը չնչին գնով ծախում էին Թիֆլիսի փողոցներում — գորգ, կապերտ, բարձ, անկողին, վերմակ, կարասիներ, samանեղէն... Վլադիկաւկազ գնացող փոխադրութեան միջոցների սակագինը բարձրանում էր տասնեակ ու հարիւրաւոր անգամներ: Մի մարդու տեղը ֆուրգոնում արժէր մինչեւ 10,000 րուբլի: Մարդիկ վերջին կոպէկն էին տալիս, միայն թէ կարողանային հեռանալ:

Թիֆլիսից Հիւսիսային Կովկաս մեկնեց եւ Ազգ. Խորհուրդը ամբողջ կազմով: Այս պարագան աւելի եւս սաստկացրեց ընդհանուր խուճապը: Գաղթը կատարւում էր անկազմակերպ, տարերային կերպով: Պարենաւորման գործը ճանապարհին չափազանց անբաւարար էր, տպահովութիւն չկար, եւ յարձակումները գաղթականների վրա սովորական էին: Այսպէս, մայիս 23–ին Լարսից հեռագրում էին Հ. Ազգ. Խորհրդին. «Այսօր ինգուշները Նոր–Լարս կայարանում պահեցին աւելի քան 10,000 գաղթականներ, թոյլ չտւին գնալու Վլադիկաւկազ եւ վերադարձրին կազբէք, ուր նրանց սպասում է սովն ու ցուրտը»:

Մայիս 25–ին Ազգ. Խորհրդի ներկայացուցիչը հեռագրում էր Դուշէթից. «Հարիւր հազար սոված ու մերկ գաղթականներ հաւաքւել են Մցխեթի, Դուշէթի միջեւ եւ աւելի հեռուները: Ո՛չ մի օգնութիւն եւ ո՛չ մի տեղից: Փախստականների մէջ սկսւում են հիւանդութիւններ: Կան մահւան դէպքեր: Գիշերելու տեղ չկայ, եւ ամենքը գիշերում են բաց երկնքի տակ, ցրտին: Ձկայ ո՛չ հաց, ո՛չ եռացրած ջուր. չկան աննդատու կայաններ — ամենքը թողնւած են ճակատագրի կամքին: Բժշկական օգնութիւն էլ չկայ: Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնութեան որեւ է յոյսի... կացութիւնը յուսահատական է»:

Թէ ինչ կը լինէր հետեւանքը այս տնաքանդ փախուստի, դժւար է ասել, եթէ մէջտեղ չգար արտաքին միջամտութիւն. մայիս 24–ից Թերեքի ժողովրդական կառավարութիւնը փակեց գաղթականների առջեւ Հիւսիսային Կովկասի ճանապարհը, որով հոսանքը կանգ առաւ, եւ գաղթել ցանկացողների մեծ մասը մնաց Անդրկովկասում: Թիւրքական եաթաղանից ազատւածները, Հիւս. Կովկասում, ընկան բոլշեւիկեան դժոխքը. այնտեղ նրանց սպասում էին նոր զրկանքներ, նոր տառապանքներ ու նոր հիասթափութիւններ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔԵՒ

Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական զօրքերի մի մասը նահանջեց դէպի Սարդարապատ, Երեւանի ուղղութեամբ: Այստեղը քիչ վերջն, տեղի էին ունենալու դէպքեր, որոնք բախտորոշ դեր էին կատարելու հայ ժողովրդի կեանքում: Նախ քան այդ դէպքերին անցնելը, սակայն, անհրաժեշտ է կանգ առնել ընդհանրապէս Արարատեան դաշտի անց ու դարձերի վրա — Արարատեան դաշտի, որը, շատ չանցած, կազմեց Հայաստանի Հանրապետութեան պատւանդանը:

Ռուսական յեղափոխութիւնը Երեւանում էլ ընդունեց ցնծութեամբ: Հին իշխանութիւնը փոխարինւեց նորով, եւ նահանգի կառավարութիւնը անցաւ Նահանգական Գործադիր Կոմիտէին՝ նախագահութեամբ առաջին շրջանում՝ Սմբ. Խաչատրեանի, ապա՝ Սահ. Թորոսեանի, եւ Զինւորական Խորհրդի Գործադիր Կոմիտէին — նախագահ Ստարցեւ: Առաջինը գերազանցապէս զբաղւում էր քաղաքացիական գործերով, երկրորդը՝ զինւորական: Քանի ճակատը կայուն էր, գերակշռող դերը պատկանում էր Զինւ. Խորհրդին: Այս երկու մարմինները գործում էին համերաշխ՝ աշխատելով ամուր պահել յեղափոխական կարգն ու ազգամիջեան խաղաղութիւնը եւ նպաստելով միաժամանակ ռազմաճակատի ուժեղացումին: Յունիս ամսին կազմւեց եւ Հայ Զինւորական Միութիւնը, բժ. Յ. Մելիքեանի նախագահութեամբ, որ բաւական կարեւոր դեր կատարեց յետագային:

Յեղափոխութեան առաջին ամիսներին Երեւան քաղաքի եւ նահանգի կեանքը ընթանում էր, համեմատաբար, խաղաղ): Տիրում էր համերաշխութիւն հայերի եւ Թուրքերի միջեւ. երկու ազգերի մտաւորական ներկայացուցիչները գործում էին ձեռք-ձեռքի: Սակայն, հետզհետէ դրութիւնը սկսեց փոխւել. Թիւրքերի եւ Թուրք ազգայնականների գրգռումով այստեղ*

---

*) Առ 1 յունւ. 1916թ., պետական վիճակագրութեան համաձայն, Երևանի նահանգում ապրում էր 1.120.242 բնակիչ, որից հայեր՝ 669.871, թուրքեր՝ 373.582, քրդեր՝ 36.508, ռուսներ՝ 16.103, եզիդիներ՝ 12.624 և այլն: Երևան քաղաքում հաշւում էր 51.286 բնակիչ, որից 37.204 հայ, 12.557 թուրք, մնացածը՝ ռուս, վրացի, հրեա և այլն («Кавк. Календарь», 1917г., стр. 214—221):

ու այնտեղ սկսեցին գլուխ բարձրացնել քրդերը, յարձակուել ու թալանել երկաթուղին եւ խճուղիներով անցնող պարենակիր սայլերը, կողոպտել ու ըսպանել հայերին: Սկսեցին չարժուել եւ թուրք գիւղերը, մանաւանդ ռազմաճակատ տանող ճանապարհների եւ հանգուցային կէտերի վրա:

Միւս կողմից, բոլշեւիկների քարոզչութեան ազդեցութեան տակ ծայր տուին զինուորական անկարգութիւններ ճակատում ու թիկունքում: Յունիս ամսին Երեւանի զինուորները փորձ արին կողոպտելու քաղաքի շուկան. թալանեցին մի քանի խանութներ, եւ հազիւ յաջողուեց ազէտի առաջն առնել: Նման, տեղական բնոյթ կրող խռովութիւններ եղան եւ ուրիշ վայրերում:

Սակայն, դրութիւնը սկսեց սրուել եւ սպառնական բնոյթ ստանալ 1917 թի աշնանը, մանաւանդ, հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, երբ բոլշեւիկները քայքայեցին ռազմաճակատը եւ ռուս զօրքը քաշեցին դէպի թիկունք, որի պատճառով ճակատի պաշտպանութեան հոգսը ամբողջապէս ծանրացաւ հայերի վրա: Իրրեւ հետեւանք այս դրութեան, իշխանութիւնը Երեւանի նահանգում հետզհետէ անցաւ հայերին, ռուս զօրամասերին փոխարինեցին հայկական մասեր, զանազան կէտերում սկսուեցին կազմուել նոր զօրամասեր եւայլն: Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփուեց Երեւանի Հայկ. Ազգային Խորհրդի ձեռքը, իսկ զինուորական գործերը վարում էր Անդրկովկասեան կոմիսարիատի կողմից նշանակուած հայկական զօրքերի կոմիսար Դրօն, որի դլխաւոր հոգսն էր զօրամասերի առողջացումն ու մարտունակութեան բարձրացումը:

Երեւանի Ազգ. Խորհուրդը, որ կազմուած էր Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհրդի ձեւով՝ կուսակցութիւնների ներկայացուցիչներից, իր գոյութեան սկզբի չրջանում, անգոյն և անջիղ մի մարմին էր, որ գնում էր դէպքերի հոսանքի յետեւից: Ինքնուրոյն նախաձեռնութիւնից զուրկ՝ չարժուում էր Թիֆլիսից եկած հրահանգներով: Նրա մէջ մտնում էին թեմական առաջնորդ Խորէն եպ.–ը, Մ. Մուսինեանը (անկ.), Գր. Տէր–Յակոբեանը (ժող.), Գ. Զուրեանը (ս.–յ.), բժ. Գր. Տէր–Յակոբեանը (ս.–յ.), Մ. Յարութիւնեանը (դաշն.), Ա. Աստուածատրեանը (դաշն.), Թ. Նիկողոսեանը (դաշն.) եւայլն:

Երեւանի Ազգ. Խորհուրդը կեանք ստացաւ միայն 1917 թ. դեկտեմբերի վերջերին, երբ Թիֆլիսից եկաւ Հայ Ազգ. Խորհրդի լիազօր ներկայացուցիչ Արամը: Ազգ. Խորհրդի առաջին իսկ նիստում նա տուեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրութեան ու Թիֆլիսում տիրող մտայնութեան մասին եւ յայտարարեց, որ ո՛չ մի տեղից չկայ եւ ո՛չ մի յոյս. պէտք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը: Եւ առաջարկեց անմիջապէս վերակազմել Ազգ. Խորհուրդը, ընտրել փոքրաքանակ ու դիւրաշարժ մի մարմին՝ տալով նրան արտակարգ իրաւունք գործելու Ազգային Խորհրդի դծած սկզբունքների սահմանում:

Ազգ. Խորհուրդը միաձայնութեամբ ընդունեց Արամի առաջարկը եւ ընտրեց Ազգ. Խորհրդի իրաւունքներով մի մարմին՝ Յատուկ Կոմիտէ՝ տալով նրան երեք ամսով գործելու կատարեալ ազատութիւն: Երեք ամսից յետոյ նա զեկուցում էր ներկայացնելու Ազգ. Խորհրդին, եւ վերջինս, ի հար-



ԱՐԱՄ

կին, կարող էր երկարաձգել նրա լիազօրութիւնները կամ լուծել: Յատուկ կոմիտէի մէջ ընտրեցին Երեւանում մեծ յարգանք վայելող հասարակական գործիչ Մկրտիչ Մուսինեանը, որ այն ժամանակ ո՛չ մի կուսակցութեան չէր պատկանում եւ միայն 1919 թուին մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, Աբշալոյս Աստուածատրեանը, Սահակ Թորոսեանը, իբրեւ նահանգական կոմիտաբ, Հ. Ձինե. Միութեան ներկայացուցիչը եւ Արամը ի պաշտօնէ: Յատուկ կոմիտէի նախագահ ընտրուեց Մ. Մուսինեանը, քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Սարգ. Օհանջանեանը: Յատուկ կոմիտէն զարձաւ Երեւանի փաստական իշխանութիւնը:

Յատուկ կոմիտէի, ինչպէս եւ նրա հետ համերաշխ գործող զինուորական կոմիտաբ Դրօյի ու Երեւանի նահանգի հայկական զօրքերի ընդհանուր հրամանատար զօր. Սիլիկեանի գլխաւոր մտահոգութիւնը ռազմաճակատի ամրացումն ու թիկունքի անդորրութեան պահպանումն էր: Այդ նպատակով, հէնց առաջին նիստում, Յատուկ կոմիտէն որոշեց զէնքի տակ առնել մինչեւ 28 տարեկան բոլոր զինապարտներին: Այդ իմաստով Արամը գրեց մի կոչ, որ եղաւ Յատուկ կոմիտէի N° 1 կոչը: Նրա մէջ բացատրւում էր կացութեան լրջութիւնը եւ, յանուն Ազգ. Խորհրդի, հրաւէր ուղղւում զինապարտներին՝ երէք օրւայ պաշարով ներկայանալ տեղական զինուորական կենտրոնները: Ժողովուրդը արտակարգ վստահութեամբ արձագանգ տւեց իրեն ուղղւած կոչին, եւ, հակառակ ծննդեան տօներին, ամէնքը չտատիպեցին ներկայանալ իշխանութեան:

Միաժամանակ, Յատուկ կոմիտէն կազմակերպում էր թիկունքը, աշխատում էր ապահովել ճանապարհները եւ հաղորդակցութեան միջոցները, ինչպէս նաեւ կարգադրել ինքնապաշտպանութեան գործը: Այս նպատակով կազմւում եւ որոշ վայրերում դասաւորւում էին մարտական խմբեր ու ռազմամթերք եւ ջանք էր թափւում, խաղաղ միջոցներով, առաջն առնելու հանրային անդորրութեան խանգարման: Այս տեսակէտից, խոշոր նշանակութիւն էր տրւում հայ եւ թուրք ղեկավարների համերաշխութեան եւ հարեւան երկու ժողովուրդների խաղաղ կենակցութեան: Թէ՛ Յատուկ կոմիտէի, թէ՛ նահանգական կոմիտաբի և թէ զինւ. կոմիտաբի գործունէութիւնը զարգանում էր այդ ուղղութեամբ, մի բան, որ շատ էր դժւար ա՛յն ժամանակւայ պայմաններում: Անասատողների դէմ առնւում էին կտրուկ ու խիստ միջոցներ:

Հեշտ չէր եւ ռազմաճակատի պաշտպանութեան եւ հայկական զօրամասերի կազմակերպութեան ու առողջացման գործը: Դրօն նոր էր նշանակւած հայկական զօրքերի կոմիտաբ, երբ ճակատի հայկական զօրամասերից սկսան Թիֆլիս հասնել պատւիրակներ՝ խնդրելու, որ իրենց մասերը չետ քաշեն թիկունք. չէին ուզում մնալ առաջաւոր դիրքերում: Զօրամասերի ներկայացուցիչները իրենց պահանջը պատճառաբանում էին նախ՝ ընդհանուր բարոյալքումով եւ երկրորդ նրանով, որ միայն հայկական ուժերով անհնար է պաշտպանել ռուս բանակի լքած ընդարձակ ճակատը: Եւ, իրօք, նրանց ասածի մէջ կար որոշ իմաստ. հայկական ռազմաճակատը այդ օրերին երկարում էր Սեւ ծովից մինչեւ Վասպուրական, որի վրա 1917 թ. վերջերին, կանգնած

էին 200,000 հետեւակ զինուորներ եւ 30 գունդ ճիաւոր համապատասխան հրետանիով եւ մօտ 120,000 հոգինոց թիկունքային մասերով: Այդ ուժերը այժմ պէտք է փոխարինէին հայկական նորակազմ փոքրաթիւ մասերով:

Դրօն գործի անցնելուց առաջ, կազմել էր մի ծրագիր, որով առաջարկում էր կարճեցնել ռազմաճակատը. գրաւած վայրերի ժողովուրդը եւ պաշարից այն մասը, որ հնարաւոր է, տեղափոխել Կովկաս, մնացած պաշարը ոչնչացնել եւ զօրքերը յետ քաշել ու գրաւել մօտաւորապէս Ջիւին—Կարաղերբենտ–Գլըչ Գեադուկ—Թափառիղ գիծը, ծայրայեղ դէպքում եւ Մակուն՝ Ալաշկերտի երկաթուղին պահելու նպատակով: Դրօն համոզուած էր, որ դրանով առաջը կառնուի ճակատի զօրամասերի քայքայման եւ օր աւուր աճող դասալքութեան, իսկ միւս կողմից, կուժեղացնի Կարսը: Բացի այդ, նա առաջարկում էր կազմել մի բրիգադ Դիլիջանի ուղղութեամբ, որպէսզի ապագային, երբ ճակատի գործերը անյաջող դնան, կարելի լինի շարժուել Գանձակի եւ Ղարաբաղի ուղղութեամբ եւ միանալով Բաղուին՝ ապահովել հայ ժողովրդի դէմ մարդկային դոյութիւնը:

Այս առաջարկութիւնների շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ Ազգային Խորհրդի եւ Ապահովութեան Խորհրդի նիստերում: Դէմ արտայայտուեցին, ո՛չ միայն քաղաքացիական գործիչները, ինչպէս Սո. Մամիկոնեան, Ն. Աղբալեան, Ա. Ահարոնեան, Ռ. Տէր Մինասեան եւայլն, այլ եւ զօր. Նազարբէգեանի ու զօր. Ղորղանեանի նման զինուորական հեղինակութիւններ, որոնք կարծում էին, թէ էրզրումի յանձնումը հոգեբանական ահազին հարուած կը լինի հայ ժողովրդի ու հայկական բանակի համար: Դրօն առարկում էր, թէ էրզրումի յանձնումը անխուսափելի է, թշնամին զէնքի ուժով կը խլի մեզանից, եւ այդ աւելի վատ հետեւանքներ կունենայ:

Թիֆլիսից Դրօն անցաւ Երեւան, ուր այդ օրերին կազմակերպւում էր Հայկական Կորպուսի մէկ դիվիզիան, որի հրամանատար նշանակուած էր զօր. Սիլիկեանը: Վերջինիս օգնական եւ բրիգադային հրամանատար էր զօր. Դանիէլ բէգ Փիրումեանը: Երեւանի նահանգում էին գտնւում եւ Պարսկաստանից քաշուած 4րդ գունդը հրամանատարութեամբ գնդ. Յովսէփեանի (Էջմիածնում), 6րդ գունդը՝ հրամ. գնդ. Մելիք–Մուրադեանի (Աշտարակ), 3րդ գունդը՝ հրամանատարութեամբ գնդ. Յովսէփեանի (եղբայրը) Դիլիջանում: Այս վերջինս յետոյ փոխադրուեց Թիֆլիս: Գնդերում իշխում էին զինուորական կոմիտէները. բոլշեւիկեան ոգին տիրող էր նրանց մէջ: Ամէն օր պահանջներ էին ներկայացնում:

Թէ զօրամասերի մէջ տիրող անիշխանական տրամադրութեան վերջ տալու եւ թէ նահանգում ծայր տուած անկարգութիւնները զսպելու նպատակով Արամն ու Դրօն անհրաժեշտ դատն սեղծել առողջ զինուորական մի կորիզ, որի վրայ յենուած կարողանային երկրի մաքրագործման ու խաղաղութեան գործը դնել իրական հիմքերի վրա: Այդ նպատակով Դրօյին յանձնարարուեց կազմել մի հետեւակ բրիգադ եւ մի ճիաւոր դիվիզիոն: Դրօն խնդրի գործի կանչեց հմուտ խմբապետներ Բաչ Գառնեցի Մարտիրոսին, Խոսրով Եղիազարեանին եւ յանձնարարեց նրանց՝ ստանձնելով ռուսների թողած 800

ձիերը՝ ձեռնարկել կամաւորների հաւաքման: Երկու օրւայ ընթացքում հաւաքեցին աւելի քան 200 զինուորներ, մեծ մասամբ կամաւորական 2րդ գնդի նախկին մարտիկներից: Միաժամանակ կոչ ուղղեց սուրմալուցիներին, եւ ահա դէպի Երեւան չարժուեցին զինուորներ ու սպաներ սպայ Սահակեանի ու սպայ Շաւարշեանի ղեկավարութեան տակ: Մի չաբթայ մէջ կազմուեց 6 վաշտ հետեւակ՝ պարտիզանական գնդի, իւրաքանչիւր վաշտը 200 մարդ, եւ երկու ձիաւոր հարիւրեակ՝ Նոսրովի ու Մարտիրոսի, որոնցից առաջինը ուղարկուեց Դաւալու, վերջինը՝ Ալի Ղըզըլ, իսկ վաշտերը յատկացուեցին երկաթուղու պաշտպանութեան:

Գնդ. Զալինեանին յանձնարարուեց՝ ընդունելով 2րդ սահմանապահ գնդի ֆանաքեռում թողած զոյքը, ձիերն ու ռուս սպաների մի մասին՝ կազմակերպել մի ձիաւոր գունդ: Այդ ռուս սպաների մէջ էր եւ գնդ. Կորոլկովը, որը նշանակուեց պարտիզանական գնդի ձիաւոր դիվիզիոնի հրամանատար եւ կարգադրութիւն ստացաւ կազմելու 3րդ հարիւրեակը սպայ Փիրումեանի հրամանատարութեան տակ: Մի ուրիշ սպայ՝ փոխ–գնդ. Պերեկրեստովը նշանակուեց հրամանատար պարտիզանական հետեւակ գնդի, որի մէջ պաշտօն ստացան եւ իրենց քաջութեամբ թիւրքական ճակատում աչքի ընկած ուրիշ 10 ռուս սպաներ: 1918 թ. յունւարի կէսին ջոկատը արդէն պատրաստ էր՝ 3 դումարտակներով:

Մինչ այսպէս, Ազգ. Խորհուրդն ու զինուորական իշխանութիւնները կազմակերպում ու կարգաւորում էին իշխանութիւնն ու հայկական զօրամասերը, կացութիւնը հետզհետէ սկսում էր բարդանալ ու խճճուել: Մի կողմից՝ բոլշեւիկների գործունէութիւնը, միւս կողմից՝ ռազմաճակատի մերկացում, երրորդ կողմից՝ կովկասեան մահմեդականների հակապետական չարժումներ: Եւ, վերջապէս, թիւրք գործակալներ, որոնք վխտում էին ամէն կողմ եւ ուժի հանում Կովկասի մահմեդականներին՝ ռուսների եւ հայերի դէմ՝ նպատակ ունենալով փակել ռազմադիտական ճանապարհները, կտրել հաղորդակցութեան միջոցները եւ այդպիսով դիւրացնել թիւրք բանակի յառաջանակը: Արդէն 1918 թ. յունւարից սկսած Երեւանեան նահանգը դրեթէ ամբողջապէս թաւեերաբեմ էր դարձել մահմեդական խռովութիւնների: Զուրընթացարար թրքական չարժումներ էին տեղի ունենում եւ Կարսի, Թիֆլիսի ու Գանձակի նահանգներում՝ բոլոր այն վայրերում, որոնք որեւէ կապ ունէին ճակատի պաշտպանութեան հետ:

Պարզելու համար ա՛յն օրերի դժոխային կացութիւնը՝ առաջ բերենք մի քանի նմոյշներ բազմաթիւ նիւթերից: Այսպէս, յուն. 14–ին Իգդիրից հեռագրում են, որ քրդերը յարձակուել են ռազմաճակատ գնացող պետական պարենատար խմբի վրա՝ Կարս—Օրդով ճանապարհին, տարել են մեծ քանակութեամբ հացի պաշար՝ բարձած ուղտերով: Սպանուած են չատ զինուորներ: Բայազէտ—Մուսուն—Էջմիածին ճանապարհները փակուել են. ամէն օր տեղի էին ունենում յարձակումներ, սպանութիւն ու կողոպուտ: Ալի–Ղըզըլ գիւղը տեղափոխուում է Ղամարլու՝ ապաւինելու համար պաշարող թրքական ու քրդական հրոսախմբերից:

*Յունե. 20–ին Ջուլֆայից հեռագրում են Անդրկ. կոմխարհատին. «Դրուքիւնը Ջուլֆայում սպառնական է. աւերի ու արիւնի են ենթակայ ամենքը. երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքների կեանքը: Ամէն օր հրացանաձգութիւն է տեղի ունենում. կան սպանուածներ ու վիրաւորներ: Ազգային թշնամութիւնը սուր բնոյթ է ստացել: Ամենքը ենթակայ են վտանգի: Ռուս զինուոր համարեա չկայ. բոլորը դնացել են: Շուտափոյթ կարգադրութիւն պէտք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս փոխադրելու համար, հակառակ դէպքում բոլոր ծառայողները կը փախչեն»:

*Յունե. 29–ին հեռագրում են Երեւանից. «Կացութիւնն օր ըստ օրէ վատթարանում է, որովհետեւ քրդերն ու Թուրքերը, առաջ այ պէս, խիստ պրպռիչ կերպով են պահում իրենց: Հրացանազարկ են անում դնացքները: Յարձակւում են պարենակիր խմբերի եւ անհատ ճամբորդների վրա: Ներկայումս նրանք փորձում են չրջապատել Ռևհանլու գիւղը, որի չուրջը փորւում են խրամատներ: Ջօրքի եւ հրոսախմբերի միջեւ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ առ այժմ սպանւած են 2 սպայ եւ 11 զինուոր, վիրաւորւած են 7 հոգի, անհետ կորած 3: Բնակիչներից սպանւած է 34 հոգի, վիրաւորւած՝ 10: Շահթախթից եկող 400 փուրգոնոց պարենակիր խումբը Յանլուխալարի մօտ ենթարկւեց յարձակման, կան սպանւածներ եւ վիրաւորներ: Քրդերն ու Թուրքերն, ըստ երեւոյթին, ձգտում են անզործութեան մատնել երկաթուղին: Այս օրերս փորձ է եղել Արարատ կայարանի մօտ կամուրջն այրելու: Դրուքիւնը երթալով բարդանում է չրջանում»:

*Փետր. 2–ին մօտ 3000 զինւած Թուրքեր կանդնեցրին Նորաչէնից Շահթախթ դնացող փոստատար դնացքը: Գնացքում եղած 11 հայ զինուորները դուրս թռան վագոնից եւ անցնելով չոգեչարժի վրա՝ պահանջեցին առաջ չարժւել: Զինուորների եւ Թուրքերի միջեւ սկսւեց տաք հրացանաձգութիւն: Նոյն միջոցին Ղամարլուից դէպի Նորաչէն դուրս եկաւ հայ զինուորներով բեռնաւորւած մի դնացք, որ անտեղեակ էր Նորաչէնում կատարւող դէպքին: Նորաչէնի մօտ Թուրքեր առաջ բերին դնացքի խորտակում. չոգեչարժն ու վեց վագոններ ջարդւեցին: Թուրք խուժանը յարձակւեց երկու դնացքների վրա եւ սկսեց թալանել: Եղան բազմաթիւ վիրաւորներ ու սպանւածներ: Գնացքում եղող ուսներին ու վրացիներին ձեռք չտւին: Խորտակւած դնացքից Թուրքերը տարին 1000 հրացան, մեծ քանակութեամբ փամփուշտ: Գերի առնւեցին 5–600 հայեր: Յաջորդ օրը, փետր. 3–ին հազարաւոր զինւած Թուրքեր Նորաչէնում չրջապատեցին Արաղայեան կայարանից եկող N° 25 մարդատար դնացքը, թալանեցին ամբողջը, կողոպտեցին կայարանի պետի զրասենեակն ու ճանապարհի վերաքննիչին եւ մորթոտեցին դնացքում ու կայարանում եղող բոլոր հայերին:

*Փետր. 7–ին հաղորդակցութեան պետ Վեքիլովը հեռագրում է Թիֆլիս, որ ինքը Շահթախթ է եղել եւ վերադարձել է մեծ դժւարութեամբ՝ զինւորական դնացքի հետ: Ճանապարհի վրա հեռագիրը չի գործում, կամուրջները քանդւած են, դիծը բռնւած է քրդերով ու Թուրքերով, Ուլուխանլուում

բոլոր տներն ու չինուհիները այրում են:

Նոյն մասյլ տեղեկութիւնները եւ Ալեքսանդրապոլից, փետր. 4–ին. «Ջուլֆա—Երեւան գծի բոլոր գնացքներն անխափ կերպարկւում են թալանի, հայ ճանապարհորդներին սպանում կամ մորթում են: Թուրքերը շատ լաւ զինուած, կազմ ու պատրաստ են. Ալեքսանդրապոլից Երեւան, Նախիջեւան կամ թէ այն կողմից դէպի Ալեքսանդրապոլ ո՛չ մի գնացք չեն թողնում: Զկայ ո՛չ մի զինուորական ոյժ, իսկ խուժանի անճարձակութիւնը քանի գնում է մեծ չափերի է հասնում: Քաղաքում ժողովուրդը խիստ զրգռուած, յուզուած է այս բոլորի դէմ. անասելի իրարանցում է տիրում հէնց կայարանում: Եկել են եւ դալիս են բազմաթիւ զինուորականներ, որոնք անցնելու են Նախիջեւան, Երեւան, բայց ճանապարհ չլինելու պատճառով մնում են կայարանում»:

Փետր. 15–ին Ալեքսանդրապոլի մօտի Մոլլա–Մուսա գիւղի բնակիչները յարձակուեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրա, սպանեցին զինուորական խորհրդի ներկայացուցիչ՝ համակրելի հասարակական գործիչ Աւրիքէդեանին (ազգ.–դեմ.) եւ ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգի: Այս դէպքը ահագին յուզում առաջ բերեց. Մոլլա–Մուսա գիւղը ենթարկուեց քնդանօթաձգութեան, կայարանում գտնուող 60 թուրքերը տարուեցին քաղաքից դուրս ու կոտորուեցին, Թրքական թաղը պաշարուեց զրգռուած ամբոխի կողմից եւ փրկուեց միայն Դաշնակցականների ջանքերով:

Փետր. 19–ին Երեւանի նահանգային կոմիսար Ս. Թորոսեանը ուղիղ հեռագրաթելով տեղեկացրում է Թիֆլիս. «Պաշտօնապէս ինձ հաղորդել են հետեւեալը. փետր. 16–ին քրդերը Սուրմալուի պաշտի ջալալցիների եւ տեղական թուրքերի հետ յարձակուեցին Ղամարլուի վրա, որտեղ կանգնած են հայկական զօրամասեր: Փետր 17–ի առաւօտեան այնտեղ տեղի ունեցաւ ընդհարում: Աղղեցիկ թուրքերից կազմակերպեցի հաչտարար պատւիրակութիւն: Նրանք մեկնեցին Ղամարլու, բայց 17–ի գիշերը պատասխանի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի եւ հայ զինուորների միջեւ տեղի է ունենում հրացանաձգութիւն. երկու կողմից էլ շատ զոհեր կան: Նոյն գիշերը Դատլուից ստացուել են հեռագիրները, որոնք յայտնում են, որ Ռեւազլու գիւղը շրջապատուած է թուրքերով... Պատգամաւորները տեղ չհասան, որովհետեւ Աղհամզալուի մօտ գինուած թուրքերը կտրել էին ճանապարհը եւ թոյլ չէին տուել առաջ գնալ: Աղհամզալուի մօտ կանգ էին առել նաեւ զօրամասեր, որոնք առաջ էին շարժուում շտաբի հրամանով: Երկկ Երեւանից Ղամարլուի ուղղութեամբ մեկնեցին զօրամասեր: Աղհամզալուի մօտ նրանց կանգնեցրել էին խճուղուց քիչ հեռու խրամատներ մտած թուրքերը: Այդտեղ զօրամասերը բռնեցին կռիւ: Թուրքերը Ուլուխանլուից օգնութիւն ստացան: Զօրամասը շարժուեց առաջ եւ փախցրեց նրանց ու ստիպուած եղաւ իր գործողութիւնները ուղղել Ուլուխանլուի դէմ»:

Մահմեդական շարժումները ստացել էին տարերային բնոյթ. ամէն տեղ կռիւ էր. յարձակում էին թուրքերն ու քրդերը. պաշտպանւում՝ հայ զօրամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը: Երկաթուղին հայերի համար կտրուած էր. գնացքից հանում էին հայ ճամբորդներին եւ ամենքի աչքի

առջեւ մորթում: Դաւալուն կտրել էր Երեւանից. յուն. 20-ին, մի ճակատամարտում, այնտեղ սպանել էր Խոսրովը, եւ հարիւրեակն ու գիւղի բընակչութիւնը պաշարել էին: Ալի Ղըզըլը նոյնպէս շրջապատուած էր թշնամիներով, եւ Մարտիրոսի հարիւրեակը կտրել էր կենտրոնից: Շարուր—Նախիջեւանի ամբողջ գաւառում կռիւներ էին տեղի ունենում թուրքերի եւ հայերի միջեւ: Փակւեց նոյնիսկ Ելենովկա—Նոր-Բայազէտ ճանապարհը, ուր հազիւ 6–7 թուրք գիւղ կար, եւ Շուշու գնդի մասերը, Հաջի-Մուխան գիւղի մօտ ենթարկւեցին յարձակման դարանամուտ թուրքերի կողմից, որոնք սպանեցին 70 հայ զինուորներ ու մասնաւոր ճամբորդներ: Սուրմալուի խճուղին կտրուած էր, եւ կապը Երեւանի հետ պահւում էր հին ճանապարհով, Էվջիլարի վրայով: Գնացքները յարձակման էին ենթարկւում: Եւ Սարդարապատ—Ալագեօզի շրջանում, ապրանքատար մի գնացքի պաշտպանութեան ժամանակ, հերոսական մահով մեռաւ սպայ Շաւարշեանը մի խումբ զինուորների հետ:

Խռովութիւնները նահանգից աստիճանաբար մօտենում էին եւ քաղաքին. Զանգիբասարը, 7–10 կիլոմետր Երեւանից, դրդումի եւ ըմբոստութիւնների, աւազակային յարձակումների հնոց էր: Ուլուխանլու կայարանում հայերին դուրս էին բերում վագոններից ու գնդակահարում: Այս ամենը բարձրացնում էր եւ քաղաքի մահմեդական խուժանի տրամադրութիւնը: Եւ ահա, փետր. 20-ին, Երեւանն եւս դարձաւ թատերավայր յուզումնալից դէպքերի: Ժամը 3-ին, առանց մի պատճառի, սկսւեց տաք հրացանաձգութիւն հայերի եւ թուրքերի միջեւ, որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 7-ը եւ շարունակւեց յաջորդ օր առաւօտեան էլ: Միայն երկու կողմերի ներկայացուցիչների պաղարիւնութեան եւ Արամի ու Դրոյի ջանքերին շնորհիւ կարելի եղաւ փրկել քաղաքը անդարմանելի աղէտից. փետր. 21-ին նահանգի զօրքերի հրամանատար Փիրումեանի նախագահութեամբ գումարւեց երկու ազգի ներկայացուցիչներից եւ քաղաքի ու զօրամասերի պատգամաւորներից մի ժողով, որը միաձայնութեամբ որոշեց քաղաքը յայտարարել պատերազմական դրութեան մէջ, կազմել ռազմա-յեղափոխական դատարան քաղաքացիների եւ զինուորների համար առանձին-առանձին, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազմաճակատ եւայլն: Նիստի վերջին, Մահմեդ. Ազգ. Խորհուրդը պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը անկարող է զսպել թուրքերին նահանգի մի քանի մասերում եւ խնդրում է հայ զինուորական մասերի աջակցութիւնը: Վճռւեց, զինուորական մասեր փոխադրելիս, հետները ուղարկել մահմեդական պատւիրակներ՝ համոզելու համար թուրքերին, որ բանան ճանապարհները, եւ միայն չենթարկւելու դէպքում գործադրել զէնքի ույժ:

Այս առթիւ, հայ եւ թուրք ներկայացուցիչները միասին, հեռագրեցին Անդրկ. Կոմիսարիատին, թէ —

Երեւանի նահանգի դէպքերի համար հայ եւ մահմեդական ազգային խորհուրդներն ու պատասխանատու գործիչները խորհրդակցութիւն գումարեցին եւ միաձայնութեամբ որոշեցին ձեռք առնել ամէն միջոց՝ վերջացնելու

համար անկարգութիւնները։ Խորհրդակցութեան մասնակցում էին Արամը, նահանգային կոմիսար Սահակ Թորոսեանը, նահանգային դործադիր կոմիտէի նախագահը, Երեւանի քաղաքագլուխ Թ. Թոշեանը, նահանգային ախունդ Կազիեւը, Միրզա Հիւսէին Զադէն, Սէյիդ Քեազումովը, Միրզա Ալաքպէր Ախունդ զադէն, Երեւանի Մահմ. Ազգ. ժողովի անդամներ Ալաբաբէդովը, Միր Սադըկովը, Ֆիլուլլաբէդովը։ Կողմերը համաձայնեցին՝ թուրքերը՝ բանալ ճանապարհները, Երեւան—Զուլֆա երկաթուղին, իսկ հայերը խոստացան՝ վերջ տալ զօրամասերի դործողութիւններին։

Քաղաքի համաձայնութիւնը, սակայն, ո՛չ մի նշանակութիւն չունէր դաւառի համար։ Այնտեղ դէպքերը ընթանում էին իրենց ճանապարհով. թուրքերի սանձարձակութիւնները օր օրի վրա սաստկանում էին։ Անհրաժեշտ էր ձեռք առնել վճռական միջոցներ։ Արամը, զօր. Սիլիկեանը, զօր. Փիրումեանը եւ Դրօն խորհրդակցութիւն արին եւ որոշեցին, օրինակ տալու համար, պատժել Ուլուխանլուն եւ բանալ երկաթուղային հաղորդակցութիւնը։ Խորհրդակցութեան միջոցին լուր ստացուեց, որ կողքը պաշարուած է, Դաշքուռունի վիճակը շատ ծանր է, եւ Իգդիրի Ազգ. Խորհուրդը օգնութիւն է խնդրում։

Յաջորդ օր, փետրուար 22–ի առաւօտեան, 6–րդ եւ պարտիղանական գնդերից մի–մի դումարտակ եւ 2 թնդանօթ կլիճի մարտկոցից շարժուեցին դէպի Ուլուխանլու եւ դիրքեր բռնեցին դիւղի մօտ։ Արամի առաջարկութեամբ, զործողութեան դիմելուց առաջ՝ փաստարան Գ. Ենգիբարեանից ու Երեւանի յայտնի վաճառական Հաջի Ռիզայից բաղկացած մի պատւիրակութիւն ուղարկուեց մի անգամ եւս համոզելու համար ուլուխանլուեցիներին, որ խաղաղութեամբ բանան ճանապարհը։ Չինած թուրքերը ահագին բազմութեամբ ու դրօշակներով դրաւել էին դիրքերը եւ թիւրքական ազգային քայլերդն էին երդում։ Նրանք մերժեցին ընդունել պատւիրակութիւնը։

Այն ժամանակ Դրօն տուեց յարձակման հրաման։ Որոտացին թնդանօթները։ Սկսուեց տաք կռիւ։ Նոյն ժամանակ արիւնահեղ կռիւներ էին տեղի ունենում Սուրմալուում, Ղամարլուում, Իւվայի շրջանում։

Մինչեւ երեկոյեան ժամը 5–ը թուրքերը ցոյց տուին կատաղի դիմադրութիւն։ Ժամը 5–ին հայկական զօրամասերը դիմեցին ընդհանուր գրոհի։ Հակառակորդը չդիմացաւ ու ջարդուած փախաւ, ցիր ու ցան եղաւ։ Ուլուխանլու գիւղը մատնուեց կրակի։ Ուլուխանլուեցիները յայտնեցին հպատակութիւն եւ այնուհետեւ մինչեւ վերջ մնացին հաւատարիմ Հայաստանի պետականութեան ու ո՛չ մի դրկանքի չենթարկուեցին։

Ուլուխանլուի դէպքի մասին Դրօն տուեց հետեւեալ հեռագիրը.

«Զօրամասը գնում էր Ղամարլու միանալու համար Ղամարլուի զօրամասին եւ բանալու Դաւալուում փակուած 4րդ գնդի մէկ դումարտակի ճանապարհը։ Մէկ օրւայ հրացանաձգութիւնից յետոյ Աղհամզալուում, ուղարկուած հայ–թրքական պատւիրակութիւնը, որ թուրքերը յետ քաշուեն ու չխանգարեն զօրքերին առաջ անցնելու, արդիւնք չունեց։ Թուրքերը օգնութեան

հասած քրդերի հետ դիմեցին յարձակման՝ կամենալով ջարդել մեր զօրամասը եւ գրաւել հրետանին: Թուրքերը ունէին ձեռքի ռումբեր: Այն ժամանակ մենք որոշեցինք վերջ տալ այդ ամենին եւ օգնութիւն հասցրինք գնդ. Դոլուխանեանին՝ հրամայելով յարձակուել ու գրաւել Ուլուխանլուն, որ եւ կատարուեց: Ուլուխանլուն գրաւուած է, չրջանը մաքրուած: Մեր զոհերն են՝ 9 սպանուած, 32 վիրաւոր, որոնցից երկուսը՝ սպայ: Թուրք պատգամաւորները մեղադրում են իւրայիններին, որի համար կան փաստեր, եւ խնդրում են հաշտութիւն: Մեր դրած պայմաններն են. բանալ ճանապարհները, չկոտրել հեռագրական թելերը եւ հրացանի չրռնել գնացքները: 22 փետր.»:

Ուլուխանլուի գրաւումից յետոյ՝ բացուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ալեքսանդրապոլի հետ, բացուեց եւ Ղամարլուի ճանապարհը: Ապա զօրեցին Կողբի, Սուրմալուի, Ղամարլուի թուրքերը, ազատուեցին Ալի Ղըզըլի բնակիչները, պատժուեցին Ալագեազի եւ Նոր-Բայազէտի թուրքերը:

Առանձնապէս ուժեղ կռիւներ տեղի ունեցան Դաւալուի չրջանում, ուր, Խոսրովի մահից յետոյ, ձիաւոր հարիւրեակի հրամանատար էր նշանակուել սպայ Կուռո Թարխանեանը, իսկ Դաւալուի զօրամասի — 1 դումարտակ, 1 հարիւրեակ — պետ՝ գնդ. Տէր. Սարգիսեանը: Դաւալուն չրջապատուած էր թշնամիներով եւ բոլորովին կտրուած երեւանից: Շարաթներ չարունակ պաշտպանւում էր 3000-ից աւելի չելալցի քրդերից եւ Շարուրի, Վեդիբասարի, Արալըխի ու Բաչքենդի թուրքերից, որոնք կատաղի յարձակումներով՝ աչքատում էին գրաւել Դաւալուն եւ դերի առնել հերոսական դիմադրութիւն ցոյց տուող հայերին:

Այդ դէպքերի ընթացքին էր, որ Պարսկաստանից նահանջող կուրանեան 2րդ դիվիզիան — 2 գնացքով, ձիաւորներով ու թնդանօթներով — կըռւով ակել-հասել էր Սաղարակ, ուր եւ չրջապատուել էր թուրքերի եւ քրդերի կողմից, որոնք մի վերջնագրով պահանջ էին ներկայացրել, որ կազակները յանձնեն իրենց զէնքերն ու ձիերը եւ այնպէս հեռանան: Կազակները մերժել էին եւ կռւում էին նրանց դէմ:

Թնդանօթների ու գնդացիրների ձայնը առնելով՝ Կուռո Թարխանեանը դուրս եկաւ հետախուզութեան եւ փողի հնչիւններով ու համաձարկներով նշաններ էր անում: Երեկոյեան դէմ, թշնամու չղթան ճեղքելով, Արարատ կայարանը հասաւ մի զրահապատ ինքնաչարժ՝ մի սպայով եւ գնդացիրներով ու ռումբերով զինուած 6 կազակներով: Ռուս զօրքերի հրամանատարը մի նամակով առաջարկում էր յաջորդ օրը միասին յարձակում գործել թշնամու վրա:

Միւս օր առաւօտեան ժամը 7-ին, գնդ. Տէր-Սարգիսեանի հրամանով, 2 վաշտ ու ձիաւոր հարիւրեակը չարժուեցին դէպի Սաղարակ: Սկսուեց կատաղի կռիւ: Քրդերն ու թուրքերը պաշտպանւում էին ճակատից ու թիկունքից, բայց երկու կրակի մէջ առնուած՝ չդիմացան ու փախան՝ մի մասը Դարալագեազի ուղղութեամբ, միւսը՝ Արաքսի միւս ափը: Կէսօրւայ մօտ հայ եւ ռուս զօրամասերը «կևցցէ»-ներով միացան իրար: Գրոհի ժամանակ երկու ոտքից վիրաւորուեց հարիւրեակի հրամանատար Թարխանեանը: Դաւալուի



Մ. ՄՈՒՍԻՆԵԱՆ



Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ



ԲԺ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ



Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԻ



Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ







ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն արաւ կազակներին, որոնք հայերին տուին մի քանի վագոն հաց, զարկ, ռազմամթերք:

Յաջորդ օր, Դաւալուի բնակչութիւնը եւ հայկական զօրամասերը կազակների հետ միասին մեկնեցին դէպի Երեւան:

Ղամարլուի եւ Դաւալուի շրջանի դէպքերի առթիւ Երեւանից Թիֆլիս ուղարկուեցին բազմաթիւ հեռագիրներ. մահմեդականները մեղադրում էին հայերին, հայերը՝ մահմեդականներին: Հայերի կողմից հետեւեալ ձեւով էր ներկայացւում կացութիւնը:

Փետր. 21–ին Երեւանի զօրքերի հրամանատար գնդ. Փիրումեանը հեռագրեց ներքին գործերի նախարարին. «Մահմեդականների անընդհատ յարձակումները զինուորական, մարզատար, բեռնակիր եւ սանիտարական գնացքների վրա չեն դադարում՝ չնայած ձեռք առնւած միջոցների: Աւազակային յարձակումները մեծ չափերով տեղի են ունենում երկաթուղու, խճուղու, հեռագրային գծերի վրա, կայարանները կողոպտւել են, կամուրջները քանդւել, որի պատճառով կտրւած ենք ամբողջ աշխարհից. առանձնապէս ահաբեկւած է ռուս ազգաբնակութիւնը, որը թողնելով ամէն բան՝ հեռանում է Կովկասի սահմաններից: Թուրքերը յարձակւել են Ղամարլուի վրա, ուղարկւեց պատգամաւորութիւն, որը ենթարկւելով հրացանաձգութեան՝ յետ դարձաւ: Թուրքերը իրենց ուժերը կենտրոնացրել են Ալուխանլու եւ Աղհամզալու կայարաններում, ուր եւ զինաթափ են անում զինուրական գնացքները: Երեւանի նահանգային կոմիսարիատը ստիպւած էր զինւած ուժերով վերականգնել կարգը նաեւ հեռագրային եւ երկաթուղային գծերի վրա: 48 ժամ ժամանակ է տրւած կապ հաստատելու համար Դաւալուի կայարանի հետ, որտեղ գտնւում է մի զօրամաս. այս պահանջը չկատարելու դէպքում զօրք կուղարկեմ: Մի քանի օրւայ կռիւներում կորցրել ենք երկու սպայ, ինը զինուոր. վիրաւորւած են 2 սպայ եւ 37 զինուոր»:

Փետր. 27–ին Երեւանից Զինւ. Մխիթեան նախագահ բժ. Յ. Մելիքեանը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Թիֆլիս. «Կացութիւնը նահանգում յուզումնալից է: Դաւալուից 70 զինուորներ ճանապարհւեցին Ղամարլու. ճանապարհին հրացանի բռնւեցին թուրքերի կողմից. 10 հոգի վերադարձան վիրաւորւած. մնացած 60–ը կորել են յայտնի չէ թէ ուր. ենթադրւում է, որ սպանւած են: Այդ բանից Ղամարլուի մեր զօրամասերը սարսափելի ելեկտրականացած են եւ պահանջում են անյապաղ գնալ մաքրել Ղամարլու—Դաւալու ճանապարհը: Այսօր այնտեղ ուղարկւեց հայ–թրքական մի պատգամաւորութիւն, բայց Օվչարի գիւղում թուրքերը բռնել են պատգամաւորներին, զինաթափել նրանց պահակներին եւ ամենքին յետ դարձրել: Դաւալուն եւ Ռեհանլուն շրջապատւած են թուրքերով, եւ խիստ հրացանաձգութիւն է տեղի ունենում... Այս առաւօտ եկաւ Թիֆլիսի պատգամաւորութիւնը եւ վաղը մեկնում է Ղամարլու ու Դաւալու ղրահապատ գնացքով, իսկ այսօր ցերեկը Ղամարլու մեկնեց կոմիսար Դրօն զինուորներին հանդարտացնելու համար, որովհետեւ նրանք վերջնագիր են ներկայացրել, որ եթէ զօրամասերին թոյլ չտրւի յարձակման դիմելու, զինուորները ինքնագլուխ

կենթարկեն հրամանատար գլխապետ Թարվերդեանին: Դրութիւնը շատ լուրջ է»:

Թիֆլիսում Երեւանից ստացւող լուրերը առաջ էին բերում ահագին իրարանցում: Անդրկ. Կոմիսարիատը ուղարկել էր մի պատուիրակութիւն՝ տեղն ու տեղը քննելու հայ-թուրքական ընդհարումների պատճառը: Պատուիրակութեան անդամներ Խ. Կարճիկեանի եւ Ջաֆարովի բերած զեկուցումները բուռն վիճաբանութիւնների նիւթ դարձան Սէյմի փետր. 19–20-ի նիստերում: Մահմետական պատգամաւորները մեղադրում էին հայերին, թէ նրանք մաքրում են Երեւանի նահանգը մահմետական ազգաբնակութիւնից՝ հայկական հող պատրաստելու նպատակով: Հայերն, ընդհակառակը, ընդհարումների պատճառ էին ցոյց տալիս թուրքերին, որոնք արգելք էին յարուցանում ռազմաճակատ մեկնող զօրամասերի առջեւ: Այս առթիւ էր, որ Խ. Կարճիկեանը Սէյմում արտասանեց իր պատմական մէկ ճառը՝ հանգամանօրէն ներկայացնելով հայ-թրքական կռիւների էութիւնը:

«Երբ Անդրկ. Կոմիսարիատը, ասաց նա, լուրեր ստացաւ, որ Երեւանի նահանգի ու Բորչալուի գաւառի որոշ մասերում կատարւում են դէպքեր, որոնք ոչ միայն խանգարում են նահանգի ու գաւառի խաղաղ կեանքը, այլ եւ բոլորովին անդամալուծում են երկաթուղային հաղորդակցութիւնը. երբ լուր հասաւ, որ Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղամասի վրա մի շարք անկարգութիւններ ու քրդական յարձակումներ կանգնեցրել են հաղորդակցութիւնը, երբ յայտնի դարձաւ, որ այնտեղ գնացքների արհեստական խորտակումներ են արւում, թալանւում են զէնք փոխադրող ամբողջ գնացքներ. երբ տեղեկութիւն եկաւ, որ գնացքներից մարդիկ են դուրս հանւում ու սպանւում. միւս կողմից, երբ լուր ստացւեց, որ երկաթուղագծի վրա այս ու այն կողմ փոխադրւող հայ զօրամասերը գնդակահարում են խաղաղ բնակիչներին, — Անդրկ. Կոմիսարիատի համար պարզ դարձաւ, որ կացութիւնը խիստ սպառնական է եւ անհրաժեշտ է ձեռք առնել անմիջական միջոցներ»: Եւ ահա ուղարկւեց յատուկ պատուիրակութիւն, որի վրա դրւեց պարտականութիւն բանալու Սանդար—Սադախլու երկաթուղին, որ փակել էին թուրքերը, եւ խաղաղացնել Երեւանի նահանգը:

«Արդ՝ ի՞նչ է տեսնում, ի՞նչ է անում պատուիրակութիւնը:

«Սանդարում պատուիրակութեան ներկայանում են գիւղերի պատուիրակները, որոնք «միաբերան յայտնեցին, թէ աւելի համբերել այլեւս չեն կարող, թէ այն, ինչ որ կատարւում է Բորչալուի գաւառում, այլեւս անտանելի է: Ջարդերը, կողոպուտն ու թալանը, սպանութիւնները, քայքայումը, հրկիզումները տեղական մահմետական ազգաբնակութեան հասցրել են այնպիսի մի վիճակի, որ նրանք է՛լ չեն կարող համբերել: Եւ պահանջեցին Անդրկ. Կոմիսարիատի պատուիրակութիւնից ձեռք առնել ամենախիստ ու շտապ միջոցներ. պահանջում էին հաստատել ժողովրդական ռազմա-յեղափոխական դատարան, որ նա դիմէ կտրուկ միջոցների եւ նոյնիսկ մահապատժի»:

Ուլուխանլուում պատուիրակութեան առջեւ պարզւում է այսպիսի պատ-

կեր. «Ուլուխանլուն ներկայացնում է պատերազմական մի բանակ: Նախ՝ պատւիրակութեան դիմաւորից այդ կայարանի զինւած պահակախումբը՝ մի քանի հարիւր զինւած զուլացիներ, մի քանի հարիւր հոգի ձիաւորներ, ամենքը զինւած: Այս մեծ հանդուցային կայարանը բոլորովին այրւած է, այնպէս որ հեռագրաթելը վերականգնելու նպատակով էջմիածին կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար տեղաւորելու: Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետեւ կայարանի վրա յարձակւել էին քրդերը, այրել, քար ու քանդ արել ու կողոպտել ամէն ինչ, կրակի մատնել կայարանի բոլոր չէնքերը: Մահմետականների ներկայացուցիչները յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ, որ պատերազմից մնացած պետական ստացւածքը բաժին հասնի քացառապէս հայերին կամ վրացիներին. նրանք պահանջում էին, որ այդ ստացւածքը հաւասարապէս բաժանւի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջեւ: Մասնաւորապէս, պահանջում էին, որ մահմետականներին տրւի այն քանակութեամբ ղէնք, ինչ քանակութիւն որ համապատասխան է իրենց ազգաբնակութեան թւին: Ցետոյ, մահմետականները յայտնեցին, որ իրենք թոյլ չեն տայ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը, մինչեւ որ իրենց հիմնական պահանջը չգոհացւի. եթէ հայերը կամենում են խաղաղութեամբ կարգադրել այս բանումը, նրանք պարտաւոր են անյապաղ լուծել իրենց զօրապնդերը եւ ղէնքերը յանձնել Թուրքերին, այլապէս իրենք թոյլ չեն տայ կարգի վերականգնումը...

Պատւիրակութիւնը ընդունում է նաեւ քրդերի ներկայացուցիչներին: Նրանք յայտնում են, թէ, ճիշտ է, իրենք թալանում ու քանդում են եւ կը շարունակեն քանդել ու թոյլ չեն տայ, որ երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնի, որովհետեւ քիւրդ բնակչութիւնը բոլորովին մատնւած է անուշադրութեան եւ դատապարտւած է սովի: Մթերք ու նպաստ ստանում են մահմետականներն ու հայերը, բայց ոչ քրդերը: Եւ, հետեւաբար, քանի որ երկաթուղին գոյութիւն ունի միայն մահմետականների ու հայերի համար, իրենց ուրիշ ոչինչ չէ մնում, բացի թալանից եւ ճանապարհին հանդիպած ամէն բան փշացնելուց»:

Ապա պատւիրակութիւնը հասնում է Երեւան, ուր իրար հետ կռւող հայերն ու Թուրքերը նոր էին հաշտւել, իրրեւ նախապայման ընդունելով հայ-մահմետական խառն զօրապնդերի կազմութիւնը: «Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները յայտնեցին, որ ամէն բան, որ կատարւում է այժմ Անդրկովկասում, յանգում է որոշ մտքի: Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրա, ուր ապրում են մահմետականները, համարեա միաժամանակ տեսնում ենք որոշ բնոյթ կրող յուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցութեան խանգարումով: Մատնանշում են Սանդար—Սաղախլու երկաթուղագիծը, Ուլուխանլու դիծը: Ցետոյ, նրանք յայտնեցին, որ բոլոր խռովութիւնները տեղի են ունենում երկաթուղու մօտ երկաթուղային հաղորդակցութեան չուրջը... Նրանք կարծում էին, որ այս ամենը պատահական բան չէ, որ կան ինչ որ մութ տարրեր, որոնք առաջ են

բերում այդ ամենը եւ գործում որոշ նպատակով, որպէսզի խանգարեն հաղորդակցութեան միջոցները, արգելք հանդիսանան ռազմաճակատի պաշտպանութեան, եւ որ այս բանում թէ՛ մահմեդական ու հայ եւ թէ ամբողջ Անդրկովկասի ազգաբնակութիւնը գործիք է այդ մութ ուժերի ձեռքին... Երեւանի նահանգի արեւելեան մասը, ուր ազգաբնակութիւնը խառն է, արդէն համարեա անծանօթ մի երկիր է. յայտնի չէ, թէ ինչ է կատարւում այնտեղ. ոչ ոք ոչ մի լուր չի ստանում եւ այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնար է:

«Միւս կողմից հայ հասարակութեան վիճակը չափազանց ծանր էր այնտեղ: Նախ, ինչպէս ձեզ յայտնի է, այնտեղ կազմակերպւում են հայկական զօրամասեր, որոնք պէտք է ուղարկէին ռազմաճակատ: Այդ զօրամասերը մի քանի շաբաթ սպասեցին ուղարկուելու օրին: Որոշ մասեր առաջ չարժուեցին, երկաթուղագծի վրա, դիծն ու պահեստները պահպանելու համար: Եւ ահա ստեղծուեց այնպիսի դրութիւն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահթախթում, Դաւալուում եւ, կարծեմ, Նախիջեւանում կանգնած զօրամասերին օգնութիւն հասցնել: Նրանք կտրուեցին իրարից եւ ո՛չ մի հնար չկար նրանց միջեւ կապ հաստատելու: Հայ զօրամասերը չէին կարող հանդուրժել նման դրութիւն, չէին կարող հանդուրժել, որ շաբաթներով մնան նստած ու չկարողանան մեկնել ռազմաճակատ: Ինձ յայտնեցին հայ գործիչները, որ նրանք թափեցին ամէն ճիգ, որպէսզի զսպած պահեն այդ զօրամասերը. նրանք զգում են, որ մութ ուժերը ղրկում են նրանց յարձակուելու մահմեդական բնակչութեան վրա: Ես տեսել եմ հայ զօրամասերը թէ այստեղ եւ թէ ուրիշ տեղեր եւ պէտք է ասեմ, որ Երեւանում նրանք բաւական կարգապահ են, բայց նրանց ա՛յս վիճակում պահելը կը լինի դրեթէ անհնար...

«Մեր գլխաւոր նպատակն էր երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը Ալեքսանդրոպոլի եւ Ջուլֆա կայարանների միջեւ: Մենք այդ չկարողացանք կատարել, որովհետեւ չկարողացանք անցնել այնտեղ: Մեր ստացած տեղեկութիւններով կամուրջներն ու գիծը այնտեղ բոլորովին փչացած են եւ եթէ մենք ուզենայինք գնալ, պէտք է մեզ հետ առնէինք շինուածանիւթերի մի ամբողջ գնացք, որպէսզի վերականգնէինք ճանապարհը: Մեզ ասում էին, թէ մեզ կը ձերբակալեն եւ թոյլ չեն տայ առաջ անցնելու: Պատուիրակութիւնը վերադարձաւ առանց որեւէ բան անելու»:

Աւելի մռայլ պատկեր դժուար էր գծել: Երկու ժողովուրդներ՝ կոկորդ-կոկորդի՝ յօշոտում են միմեանց, իսկ երկրի կենտրոնական իշխանութիւնը դատարկ խօսքերից զատ ոչինչ չունի նրանց ասելիք: Այս պայմաններում մեծ պատասխանատուութիւն ու կամք պէտք էր տեղական գործիչներին՝ «մութ ուժերի» սադրանքին չենթարկուելու համար: Եւ դրա վրա էր հրաւիրում կարճիկեանն իր զեկուցման վերջում՝ պատասխանելով միաժամանակ թուրք պատգամաւորների աղմկարար ու գրգռիչ ճառերին. «Ես մտնում եմ հայ ու մահմեդական տեղական գործիչների դրութեան մէջ. այնտեղ հրդեհն արդէն սկսած է, իսկ մենք չենք տալիս ոչ մի օգնութիւն եւ ոչ մի միջոց հանգցնելու հա-

մար այդ հրդեհը: Բայց, քաղաքացի պատգամաւորներ Անդրկովկասեան Սէյմի, մի՛ խանգարէք նրանց, թո՛յլ տւէք, որ նրանք իրենք հանգցնեն հրդեհը — մենք նրանց օգնել չենք կարող այժմ: Մի՛ հանէք փոթորիկ հրդեհի ժամանակ: Մենք չպէտք է կորցնենք մեր պաղարիւնութիւնը: Քաղաքական ղեկավար մարմինը, այսպիսի ահաւոր վայրկեանին, երբ ամենքս կանգնած ենք անդունդի եղերքին, իրաւունք չունի կորցնելու հաւասարակշռութիւնը, իրաւունք չունի զրաղւելու միմեանց դէմ ամբաստանագրեր պատրաստելով: Մեզանից ամէն մէկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլ եւ հայերի, մահմեդականների ու վրացիների — մենք պատասխանատու ենք ամբողջ ազգաբնակութեան համար: Մենք չպէ՛տք է դուրս դանք, իբրեւ միմեանց մեղադրողներ. մենք հանդէս պէտք է դանք, որպէս դաղափարական քաղաքական մի մարմին, որը այս յուզումնալից վայրկեանին կոչւած է փրկելու երկիրը: Ես կոչ եմ անում պաղարիւնութեան ու սեփական պարտքի գիտակցութեան»:

Ի՞նչ ազնիւ խօսքեր, որոնք, սակայն, հնչում էին անապատի մէջ: Գազանական տարերքը խցել էր ամենքի ականջները:

Ուլուխանլուի եւ Ղամարլուի դէպքերի վրա, երեւան մեկնեց մի ուրիշ պատւիրակութիւն, այս անդամ Սէյմի կողմից, որի նախագահ Գէորգաձէն Սէյմի մարտ 7-ի նիստում ներկայացրեց մանրամասն զեկուցում, որի մէջ, ի միջի այլոց, ասում էր. «Երեւակայեցէք երկաթուղին, որի վրա մի ժամանակ եռում էր կեանքը, սուլում էին շոգեշարժները, դործում էին արհեստանոցները, տրւում էին հեռագիրները, ժողովուրդը օգտւում էր քաղաքակրթութեան պտուղներից: Իսկ այժմ այդ երկաթուղու վրա ոչի՛նչ չէք գըտնի. չկան կայարաններ, չկան չէնքեր, ամէն ինչ թալանւած է, ամէն բան փշացած, կայարաններում չէք տեսնի ո՛չ մի կենդանի էակ, ո՛չ մի ծառայող— ամէն ոք հեռացել-կորել է, ոչինչ չի մնացել: Այս վիճակում են դտնում Ուլուխանլու, Արարատ եւ ուրիշ կայարանները: Պատւիրակութեան ունեցած տեղեկութիւններով դէպի Ջուլֆա տանող դծի վրա կանգուն է մնացել միայն Ղամարլու կայարանը, ուր կանգնած է հայկական մի հարիւրեակ: Այս վիճակում դտնուղ երկաթուղու վրա, որեւէ շարժում, զօրամասերի որեւէ փոխադրութիւն — ինչ զօրամաս էլ ուղում է լինի՝ ռուս, թէ հայ — բոլորովին անհնար է: Ճիշտ է, երկաթգծերը դեռ հանւած չեն, փայտեղէն մասը դեռ իր տեղումն է, բայց կատարելապէս անմարդաբնակ են եւ ճիշդ է թափւում, որ այդպէս էլ մնան: Եթէ այդ ճանապարհով անցնելու լինէք, ճանապարհի երկու կողմը կը տեսնէք փորւած դիրքերում նստած քրդեր կամ մահմեդականներ: Երբ մենք մօտենում էինք մի աւերւած ու քար ու քանդ արւած կայարանի, կայարանում եւ ուրիշ չէնքերում նկատեցինք ինչ որ գինւած մարդկանց: Մահմեդականների պատւիրակութիւնը իջաւ վագոնից, մօտեցաւ այդ գինւած անձանց եւ հարցրեց. ի՞նչ կայ, ինչո՞ւ են նստած այստեղ: Գինւած մարդիկ սկզբում հեռացան մի կողմի, ապա յետ եկան եւ բացատրեցին, որ իրենք քրդեր են և եկել են տանելու մնացած զերաններն ու իրերը: Եւ երբ քիչ հեռու տեսանք գինւած մի հրոսախումբ, պատւիրակութիւնը ստիպ-

ւած էր դառնալ յետ, բայց այդ զինուած ամբոխը սպիտակ դրօշակը ձեռքին հասաւ ու յայտնեց, որ այդ կամուրջները այրել են ոչ թէ իրենք՝ մահմետականները, այլ քրդերը»:

Սակայն, «Պատւիրակութիւնը լսեց եւ այլ կարգի դանդատներ. հայկական զօրամասերը ճակատ են գնում. ճակատում թողնւած է հսկայական, բազմամիլիոն արժէք ունեցող գոյք. այդ գոյքը սեփականութիւն է կազմում Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդների — եւ՛ հայերի, եւ՛ մահմետականների ու վրացիների, այդ պատճառով, հայ զօրամասերը, որոնք գրաւում են այդ գոյքը եւ յայտարարում են իրենց սեփականութիւն, չպէ՛տք է թոյլատրւեն անցնելու ռազմաճակատ»... Այն օրը, որ մեր պատւիրակութիւնը հասաւ Երեւան, չուտպով հայերից ու մահմետականներից բաղկացած մի ուրիշ պատւիրակութիւն էր ուղարկւած: Մերձաւոր մի գիւղում հայերի եւ մահմետականների միջեւ ընդհարում էր սպասւում, եւ այդ պատւիրակութիւնը որոշ ժամանակից յետոյ վերադարձաւ ու յայտնեց, որ մահմետականները դուրս են եկել պատւիրակութեան առջեւ, խլել են նրանցից հրացաններն եւ ուրիշ զէնքերը: Այս ամենը կատարւեց մեր ներկայութեամբ, ձեր պատւիրակութեան աչքի առջեւ, եւ կարելի է թւել շատ դէպքեր, երբ հայ գինուորները սպանել են թուրքերին եւ, ընդհակառակը, թուրքերը սպանել են հայերին: Միւս կողմից տեղի են ունենում մասնաւոր ընդհարումներ ու սպանութիւններ: Ահա այսպիսի հանգամանքներում, երբ ոչ միայն ազատ հաղորդակցութիւն չկայ երկաթուղիներով, այլեւ փակւած է երթեւեկը գիւղերի միջեւ — ա՛յս դրութեան մէջ հայկական զօրքերի կոմիսար Դրօն յայտարարեց, որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակւած են հայկական զօրամասերի առջեւ: Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրւի որեւէ ճանապարհ, թէկուզ շատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանանցանելի մի ճանապարհ: Այդ պահանջին նրան պատասխանւեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակւած են ռազմաճակատ գնացող հայ զօրամասերի առջեւ: Մահմետականների ներկայացուցիչները չառարկեցին»:

«Երբ մի կողմից, գիւղերում, կանգնած են կանոնաւոր գնդեր ու գումարտակները, իսկ միւս կողմից կանգնած են զինւած անկազմակերպ մահմետական զանգւածները, — ստեղծւում է այնպիսի յարձեցած մթնոլորտ, որ ամենաաննշան առիթն իսկ բաւական է, որպէսզի բռնկւի ազգային հրդեհը: Եւ ահա այդ ազգային հրդեհը տեղի ունեցաւ փետր. 17–21–ին: Եթէ դուք նայէք Ղամարլու մեծ գիւղի վրա, որի բնակիչները բաղկացած են մահմետականներից ու հայերից, կը տեսնէք, որ այդ գիւղի մահմետական մասը չկայ, անհետացել է. չէք գտնի նրան, գոյութիւն չունի, բնաջնջւած է. իսկ հայկական մասը կանգուն է, չի վնասւել: Եթէ առնէք մի ուրիշ գիւղ՝ Աղհամզալուն, այդ գիւղում էլ բնակիչ չկայ. հեռացել, թաղնւել են, մի մասն էլ դուրս, բնաջնջւած է: Ուղուխանլուն, աւելի մեծ ու հարուստ մի գիւղ, նոյնպէս դատարկւած է: Դաւալու գիւղից մահմետական բնակչութիւնը, տեսնելով յուսահատական վիճակը, հեռացել է յօժարակամ, յայտնի չէ թէ

ուր: Այսպիսի դրութեան մէջ են հայերի ասելով 18, իսկ մահմետականների տեղեկութիւններով 21 դիւղեր: Ամենացաւալին այն է, որ գիւղերի մաքրադործումը, այս, եթէ կարելի է ասել, գիւղերի ջարդ ու փչուր անելը կատարւել է մասնակցութեամբ հայկական կանոնաւոր զօրամասերի, որոնք այս հրդեհի ժամանակ օդնութեան են կանչւած Երեւանից եւ, փոխանակ օգնելու, իրենք էլ մասնակցել են այդ հրդեհին՝ գործի մէջ մտցնելով գնդացիրներ ու հրետանիներ: Երեւան քաղաքի դէպքերը արձագանգ եղան Դաւալուի դէպքերի: Երեւանում սկսւել է հրացանաձգութիւն ու կոտորած: Հետեւանքը՝ 36 մահմետական դերեզման եւ 56՝ հայկական... Հայ ու մահմետական խանութները բոլորովին ջարդւած ու թալանւած են եւ եթէ չլինէին մի քանի հասարակական գործիչներ մահմետականների ու հայերի կողմից, Երեւանում ահաւոր ջարդ ու կոտորած տեղի կունենար: Բայց, ինչպէս վկայեց պատւիրակութիւնը հայ ու մահմետական ներկայացուցիչների առջեւ Երեւանում, չնորհիւ Դրոյի, Արամ փաշայի եւ Երեւանի պարետ Շահխաթունեանի եռանդուն միջամտութեան, կոտորածը լայն ծաւալ չի ստացել: Նրանք ամբողջ օր չրջում էին քաղաքում, հանդարտեցնում թշնամի կողմերը եւ, վերջ ի վերջոյ, փակեցին այդ դժբախտ դէպքը»:

Այս զեկուցումը բուռն փոթորիկ առաջ բերեց Սէյմում, յատկապէս, մահմետական պատգամաւորների կողմից: Նրանք իրար յետեւից բարձրանում էին ամբիոն եւ արտասանում ցասումով լի, կրքոտ ճառեր՝ ուղղւած հայերի ու Դաշնակցութեան դէմ: Ամբողջ պատասխանատուութիւնը, նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրա, որոնք բռնի միջոցներով ձգտում էին ստեղծել «հայկական հողամաս»: Հայկական զօրամասերը չեն ենթարկւում կենտրոնական իշխանութեան եւ փոխանակ ռազմաճակատ մեկնելու՝ կռւում են խաղաղ աղգարնակութեան դէմ: Երեւանի դէպքերի հեղինակները Դրօն, գնդ. Փիրումեանն ու մի չարք ուրիշ հայ պինւորականներն ու գործիչներն են: Անհիմն է այն ամբաստանութիւնը, թէ մահմետականները փակում են ճանապարհը հայ զօրամասերի առջեւ եւայլն եւայլն:

Ի վերջոյ, Սէյմը ընդունեց մի բանաձեւ, որի հիմնական միտքն այն էր, թէ անմիջապէս պէտք է ձեռք առնւեն վճռական միջոցներ, որպէսզի զօրամասերը կարողանան առանց արգելքի անցնել դէպի սահմանագլուխ: Սակայն, ի՞նչ արժէք ունէր նման բանաձեւը, երբ Անդրկովկասի իշխանութիւնը զուրկ էր ամենատարրական գործադիր միջոցներից: Ուրիշ անգամների պէս, այս բանաձեւն էլ մնաց մեռած տառ, իսկ կեանքը դնաց իր ճանապարհով: Մահմետական չրջանները չարունակեցին յուզել եւ ըմբոստանալ՝ ներպաստելով թիւրքական ռազմական ծրագիրներին: Հաշտարար պատւիրակութիւնները ոչ մի օգուտ չէին տալիս, բացի աւելորդ գոհեր պատճառելուց: Թիւրքերի մօտ ուղարկւած խառն պատւիրակութիւններից մէկի մէջ սպանւեց Երեւանցի հասարակական գործիչ փաստաբան Լեւոն Մուշեղեանը:

Դրութիւնը ծանրանում էր եւ նրանով, որ նահանգը ապրում էր արտակարգ պարենաւորման տագնապ: Խանութների եւ պահեստների առջեւ կանգնած երկար «պոչեր»-ը յուզում էին ժողովրդին, խռովում նրա միտքը:

Մարդիկ դեռ սովոր չէին մեծ զրկանքների եւ պահանջում էին հաց, նաւթ, շաքար...

Մարտ 12–ին նահանգային կոմիսար Ս. Թորոսեանը հեռագրում էր Թիֆլիս. «Պարենաւորման հարցը Երեւանի նահանգում ահաւոր բնոյթ է ըստացել. Երեւանում հացի բաշխումը հասցուած է անտանելի փոքր չափի: Ո՛չ մի պաշար չկայ: Նոր–Բայազէտ, Նախիջեւան, Օրդուբաթ քաղաքները մնացել են առանց հացի, նաւթի, շաքարի եւ առաջին անհրաժեշտութեան այլ կարգի նիւթերի, իսկ Նախիջեւանի եւ Նոր–Բայազէտի գաւառները գտնւում են սոված խռովութիւնների ու բունութիւնների նախօրեակին»:

Եւ խռովութիւններն ու բունութիւնները չուշացան: Այստեղ ու այնտեղ սկսան կատարուել յարձակումներ պետական պահեստների եւ մասնաւոր խանութների ու հացի փուռերի վրա: Դրութիւնը գառնում էր սպառնական: Անհրաժեշտ էր ուժեղ եւ արագ գործող, վճռական ու միակամ իշխանութիւն: Այդ իշխանութիւնը Արարատեան դաշտը ունեցաւ յանձին Արամին:

Այս պահանջի դիտակցութեամբ, Երեւանի ազգաբնակութիւնն ու պինւորականութիւնը, Էրզրումի անկման լուրի տպաւորութեան տակ, մի բազմամարդ ժողովում որոշեցին Արամին յայտարարել դիկտատոր եւ ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել նրա ձեռքը: «Մեր Հայրենիք» երգելով հազարաւոր բազմութիւնը չարժւեց դէպի Արամի բնակարանը եւ յուզիչ հանդիսաւորութեամբ հռչակեց նրան դիկտատոր: Վրա հասան քաղաքի զօրամասերը եւ երդուեցին հնազանդ լինել նորընտիր դիկտատորին: Այդ քայլին իր անվերապահ հաւանութիւնը տւեց եւ Ազգ. Խորհուրդը: Այսպիսով, մարտի առաջին օրերից սկսած՝ Երեւանի բուռանդակ իշխանութեան մարմնացումը դարձաւ Արամը, որ իր զարմանալի նրբամտութեան ու տակտի շնորհիւ կարողացաւ չաղկապել շրջանի բոլոր գործօն տարրերը, աշխատանքի լծել ամենքին: Ձեռք–ձեռքի տւած Դրօյի, զօր. Սիլիկեանի ու Փիրումեանի, նահանգական կոմիսար Ս. Թորոսեանի, քաղաքական կուսակցութիւնների եւ կառավարական ու հասարակական մարմինների հետ՝ նա երեսն բերեց արտակարգ եռանդ եւ, ամենատաղնապալի վայրկեանին, ձեռնհասութեամբ վարեց Արարատեան դաշտի հայ ժողովրդի ճակատագիրը:

Ըստ ձեւի, Արամի դիկտատոր նշանակելուց յետոյ էլ իշխանութիւնը մնաց Ազգ. Խորհրդի ձեռքին: Յատուկ կոմիտէի փոխարէն այժմ գործում էր առանձին մի մարմին, որի անդամները կոչւում էին վարիչներ: Այս մարմինը փաստօրէն Արարատեան դաշտի կառավարութիւնն էր, որի նախագահն ու պինւորական գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսեանը, պարենաւորմանը՝ Մկ. Մուսինեանը, երեսմտականը՝ Յովհ. Մելիքեանը, ինքնապաշտպանութեանը՝ Արշ. Աստուածատուրեանը: Իւիչ վերջը, մարմնի կազմի մէջ մտան նոր անձեր՝ Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Ց. Տէր–Միքայէլեանը (Օվին) եւայլն. եղան եւ ուրիչ փոփոխութիւններ: Դրօն, իրրեւ պինւորական կոմիսար, մարտական ուժերի ոգին էր եւ պինւորական ծրագիրների գործադրողը՝ համախորհուրդ



ՋՕՐ· ՍԻԼԻԿԵԱՆ



ՋՕՐ· ԳԱՆԻԼ ԲԷԳ ՓԻՐՈՒՄԵԱՆ



ԿՈՒՐՕ ԹԱՐԽԱՆԵԱՆ



ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ· ՅՈՎՍԷՓԵԱՆՑ



ՋԻՄԼԻԿԱԿ

Արամի հետ: Այս մարմինը մնաց իշխանութեան գլուխ մինչեւ Հայաստանի Խորհրդի ու կառավարութեան ժամանումը Թիֆլիսից:

Երեւանի կառավարութեան, ի վերջոյ յաջողեց, բանալ ռազմավարական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, մաքրել խռովութիւնների բոյն ծառայող մահմետական վայրերը եւ որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում: Նա միջոցներ ձեռք առաւ դաստիարակութեան եւ աւազակութիւնների դէմ: Նրա տրամադրութեան տակ կային 10—12,000 մարզած ու բաւական կարգապահ զինուորներ: Դրամական դրութիւնը կարգաւորելու համար պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրա, որը տալիս էր անտրտունջ, անգամ սիրով: Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնն ու հասարակութիւնը այնպիսի համերաշխ միութիւն չէին կազմել, քան 1918 թւի գարնան եւ ամառւայ պատմական ամիսներին, Արարատեան դաշտում, Մասիսի հովանու ներքեւ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ — ԲԱՇ ԱԲԱՐԱՆ

Այսպէս էր կացութիւնը Արարատեան դաշտում, երբ, Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական բանակի մի մասը նահանջեց Երեւանի ուղղութեամբ եւ կռուով հասաւ Սարդարապատ, մայիս 19–ին: Թիւրքերը նրանց հետապնդեցին երկու ճանապարհով՝ երկաթուղու ուղղութեամբ եւ Արագածի հիւսիս–արեւելեան փէչերով:

Դրանից առաջ արդէն, Արարատեան դաշտում համախմբւած էին եւ վանի ու Ալաշկերտի չրջաններից նահանջած զօրամասերը: Ապրիլի կէսերին երեւանեան նահանգում, հայկական 2րդ դիվիզիայի պետ զօր. Սիլիկեանի հրամանատարութեան տակ, գտնւում էին 5րդ եւ 6րդ գնդերը, 4րդ գնդի մէկ գումարտակը եւ վանի առաջին ու 2րդ գնդերը, 28 թնդանօթով:

Վանի երկու գնդերը, որոնք զբաւում էին Բարթողեան բարձունքները, ապր. 27–ին ենթարկւեցին յարձակման թիւրքերի կողմից, որոնք, հակառակ կնքւած զինադադարի, փորձեցին ա՛յս կողմից խուժել Արարատեան դաշտը: Հայկական զօրքերը ցոյց տւին ուժեղ դիմադրութիւն: 2րդ գունդը նահանջեց մինչեւ Օրգով եւ Արհաջ, բայց յաջորդ օր անցաւ հակայարձակման եւ արիւնահեղ ճակատամարտից յետոյ՝ յետ չպրտեց թշնամուն: Սակայն, թիւրքերը առատ օգնական ուժեր եւ յետ մղեցին հայկական զօրամասը, որը ամբացաւ Խալֆալու–Սուլթանապատ գծի վրա: Կռիւները տեւեցին մօտ երկու չաբաթ: Այս կռիւներում մերոնք ունեցան մի քանի տասնեակ սպանւած եւ 80 վիրաւոր: Մայիս 9–ի ճակատամարտում, հերոսական մահով մեռաւ եւ վանի 2րդ գնդի հրամանատար սիրւած գնդ. Լեւոն Զարուխեանը՝ հայ լաւագոյն զինւորականներից մէկը:

Ի վերջոյ, անդրկովկասեան կառավարութեան եռանդուն բողոքի վրա թիւրքերը նորից քաշւեցին Զինդիլի միւս կողմը: Հայկական զօրքերը տեղաւորւեցին Իգդիրում՝ Օրգովում ունենալով առաջապահներ: Միւս թեւը Սարդարապատ կայարանում էր՝ կողրի առաջապահներով: Մի մաս էլ գրւած էր Արաքս կայարանում: Այսպէս մնաց դրութիւնը մինչեւ մայիս 15, երբ թիւր-

քերը դիմեցին ընդհանուր յարձակման Ալեքսանդրապոլի եւ, Զինգիլի վրայից, Երեւանի ուղղութեամբ եւ յետ մղեցին մեր զօրքերը Իգդիրից ու Կողբից մինչեւ Արաքս: Միաժամանակ, ոտքի ելան տեղական թուրքերն ու քրդերը, եւ 1918 թ. մայիսի կէսերին Արարատեան դաշտը ամէն կողմից շրջապատուեց թշնամիներով:

Կացութիւնը առանձնապէս ծանրանում էր եւ ընդհանուր դժոխային պայմաններով. Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, երկիրը բոլորովին կտրուած արտաքին աշխարհից՝ խճողուած էր բազմահազար գաղթականներով, որոնք թափուած էին գիւղերում ու քաղաքներում եւ ճանապարհների վրա: Էջմիածին–Երեւան, Երեւան–Դիլիջան խճուղու վրա խռնւում էին աննպատակ շարժուող գաղթականներ, սայլեր եւ անասուններ: Երկաթուղին չէր գործում: Պարենաւորման տագնապը օրէց օր սրւում էր. հացն ու ապրուստի այլ միջոցները դժուարութեամբ էին ճարւում: Այստեղ ու այնտեղ երեւում էին համաճարակ հիւանդութիւններ: Ժողովրդի եւ զօրքի հոգեկան վիճակը ընկճուած էր անսահման:

Այսպիսի դրութեան մէջ, թիւրքերի ընդհանուր յարձակումը մի պահ Երեւանում առաջ բերեց անասելի իրարանցում ու սարսափ: Դիմադրութիւնը չատերին թւում էր անհնար եւ անիմաստ: Ցաղթութեան վստահութիւն չէին ներշնչում եւ մինչեւ այդ բանակից հասնող տեղեկութիւնները. զօր. Սիլիկեանի հաղորդագրութիւնները մոայլ գոյներով էին ներկայացնում զօրամասերի դիմադրական կարողութիւնը: Բնակչութիւնը պատրաստւում էր փախուստի:

Բայց ո՞ւր փախչել: Ճանապարհները դէպի Թիֆլիս ու Բաղու փակուած էին ամուր: Պարսկաստան տանող երկաթուղին չէր գործում. Շարուր-Նախիջեւանը մահմեդականների ձեռքին էր: Իսկ հարաւից եւ արեւմուտքից թիւրքն էր գալիս՝ կոտորելով հանդիպող հային: Փախուստը այս պայմաններում հաւասար էր մահուան, ինչպէս եւ անձնատուր լինելը: Ելք չկար: Ելքը դիմադրութիւնն էր, կռիւը. քանի որ մահը անխուսափելի է, դէթ պատուով մեռնել: Մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ փրկութիւն չկայ: Եւ ահա կատարւում է հրաշքը՝ մէկը այն հրաշքներից, որոնք գալիս են բոլորովին չսպասուած եւ փրկում անյոյս համարուած կացութիւնները: Ժողովուրդը, նրա առաջնորդները, զօրքը, ամենքը համակւում են մէկ դիտակցութեամբ. — յաղթել կամ մեռնել:

Եւ Արարատեան դաշտի ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում: Գործում են ամենքը: Ազգային Խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը: Հրամանատարութիւնը կարգաւորում ու բարձրացնում է զօրքի մարտական ոյժը: Զօր. Սիլիկեանը մի շարք հրամաններով ու կոչերով խրախոյս է ներշնչում զինւորների ու հասարակութեան: Ամենքը լծւում են թիկունքային աշխատանքի: Կանայք, օրիորդներ՝ ուտելիք, ծխախոտ, վիրակապներ են պատրաստում: Հոգեւորականութիւնը խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու զօրքի մէջ: Գարեգին եպ. Յովսէփեանը չրջում է մի մասից միւսը եւ իր հրաշունչ ճառերով

բարձրացնում է զօրքի տրամադրութիւնը: Կրկնւում էին Վարդանանց պատմական օրերը...

Երբ մայիս 21-ին երկաթուղու ընթացքով շարժւող թիւրքերը երեւացին Սարդարապատի մօտ, այլեւս իրենց առջեւ դաշտ յաղթելու վճռականութեամբ տոգորւած հայ զինւորին: Մօտաւոր հաշւով, զօր. Սիլիկեանի զօրքի քանակը, այդ օրերին, հասնում էր 10,000 հոգու՝ բաղկացած հետեւեալ մասերից. 4րդ դիւնդը, 1,500 ուխն, 5րդ դիւնդը՝ 800, պարտիզանական առաջին դիւնդը՝ 1,200, Երզնկայի դիւնդը՝ 700, Մակուի դիւնդը՝ 300, սպայակոյտի պարէտի դումարտակը՝ 200, վանի առաջին եւ երկրորդ գնդերը՝ 2,500 ուխն, 2րդ ձիաւոր դիւնդը՝ 700, Զէյթունի ձիաւոր դիւնդը՝ 500, պարտիզանական ձիաւոր դիւնդը՝ 800, յատուկ ձիաւոր դիւնդը՝ 500, Սըմբատի, Դալի Ղազարի, Մուրատի խմբերը՝ 500 ձիաւոր, եւ 4 մարտկոց 16 թնդանօթներով*):

Այս ուժերը բաժանւած էին երկու մասի. մի մասը Դրոյի հրամանատարութեան տակ Բաշ-Աբարանի ճակատում, միւսը՝ զօր. Դանիէլ բէդ Փրումեանի հրամանատարութեան տակ Սարդարապատի դաշտում: Զօրքերի ընդհանուր հրամանատարն էր զօր. Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը, որ եւ գծել էր կռւի ընդհանուր յատակագիծը:

Թիւրքերի կողմից, Սարդարապատի ճակատում, գործում էր 5րդ դիվիզիան եւ բազմաթիւ անկանոն խմբեր, իսկ Բաշ-Աբարանի ուղղութեամբ՝ 3րդ դիվիզիան:

Կռիւները սկսւեցին Սարդարապատում, ուր մեր զօրքերը գրաւել էին Ղարախանլու-Քեօրփալու-Զէյվա դիւղերի գիծը: Մայիս 21-22-ին տեղի ունեցան մասնակի ընդհարումներ. թշնամին որոնում էր հակառակորդի թոյլ տեղը՝ վճռական դրոհի դիմելու համար: Մայիս 23-ին զօր. Սիլիկեանը տւեց յարձակման հրաման: Հայկական ուժերը նետւեցին առաջ: Բռնկւեց կատաղի ճակատամարտների երկար մի շարք: Թիւրքերը ցոյց տւին յամառ դիմադրութիւն՝ անցնելով բազմաթիւ հակայարձակումների: Ամբողջ օր, առաւօտից մինչեւ երեկոյ, որոտում էին թնդանօթները, որոնց գոռոցը հասնում էր մինչեւ Երեւան, ուր նոյնպէս սիրում էր տենդոտ եռուզեռ: Թիկունքից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կռւողներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր... Բազմաթիւ կամաւորներ՝ ծեր ու երիտասարդ, որոնց թւում էր եւ էջմիածնի միաբան դիանական Գարեգին եպս. Յովսէփեանցը, իրրեւ՝ նոր ժամանակների Ղեւոնդ Երէց, ոգեշնչում էին շտապում: Ճակատի դիմացը չէր միայն — ամբողջ երկիրը մի մարդ, մի չունչ դարձած՝ կռւում էր թշնամու դէմ՝ «ազատութիւն կամ մահ» վճռական կամքով:

Մայիս 24-ին թիւրքերը դիմեցին փախուստի: Մերոնք հալածեցին ոգեւորւած: Թշնամին յուսահատական դիմադրութիւն էր ցոյց տալիս եւ աշխատում զէրքեր գրաւել, բայց մերոնց չեշտակի հարւածների տակ չդիմա-

*) Ց. Մելիքեան, «Արեան ճանապարհով», «Հայրենիք» ամս., 1925 թ. մայիս:

կեց փախուստը: Ցաղթութիւնը մերն էր:

Այդ յաղթանակի առթիւ, նոյն օրը երեկոյեան, ղօր. Սիլիկեանը ժողովրդին ուղղեց հետեւեալ սրտառուչ կոչը.

«Հայե՛ր, չտապեցէ՛ք հայրենիքն ազատելու:

«Հասել է րոպէն, երբ իւրաքանչիւր հայ՝ մոռնալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկութեան եւ իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պէտք է դործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարւածելու համար:

«Մենք չէինք ուզում կռւել. յանուն խաղաղութեան ու հաշտութեան՝ պատրաստ էինք ընդառաջ դնալու ամէն տեսակ զոհողութիւնների, սակայն, մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երեւոյթին, սորկացնել է ուզում մեզ, բայց, իրօք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Բայց քանի որ պիտի ոչնչանանք, աւելի լաւ չէ՞, որ զէնքը ձեռներիս փորձենք պաշտպանել մեզ: Գուցէ, յաջողւի մեզ կռւով ձեռք բերել ապրելու իրաւունքը:

«Իսկ որ մենք կարող ենք պաշտպանւել, այդ ցոյց տւին վերջին կռիւները մեր ճակատում, ուր մեզանից թւով վերապահոց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական դրոհի առաջ:

«Հարկաւոր է մի ճիգ եւս, եւ թշնամին վռնտւած կը լինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արիւն-քրտինքով աշխատել են դէթ մի կերպ հայթայթել իրենց օրւայ ապրուստը:

«Հայե՛ր, ժամանակ չէ դանդաղելու: Մինչեւ յիսուն տարեկան ունեցող բոլոր ազամարդիկ պարտաւոր են զէնքի տակ դալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց զէնքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար:

«Հայուհինե՛ր, յիշեցէ՛ք հինգերորդ դարու փառիկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին զէպի Մեծ Գործը, անմահ Վարդանի կռիւների ժամանակ. հետեւեցէ՛ք նրանց օրինակին. եթէ չէք ուզում, որ ձեր պատիւը ոտնակոխ լինի, խրախուսեցէ՛ք այն վախկոտներին, որոնք զանազան պատրւակներով խուսափում են ճակատ դնալուց: Հաւաքեցէ՛ք ոսկեմամիերք, հաց, հագուստ եւ ուրիշ մթերքներ...

«Ես խորապէս համոզւած եմ, որ իմ այս կոչը անարձագանդ չի մնայ, եւ երկու-երեք օրւայ ընթացքում կը կազմակերպւի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաջողւի վռնտել թշնամուն հայրենի հողի սահմաններից եւ ապահովել հայ ժողովրդի դոյութիւնը:

«Ցանո՛ւն բազմաչարչար ժողովրդի ֆիզիքական դոյութեան,

«Ցանո՛ւն ոտնակոխ եղած ճշմարտութեան —

«Ոտքի՛ կանդնեցէ՛ք: Դէպի՛ սրբազան պատերազմ:

«Բոլոր զէնքի ընդունակ ազամարդիկ պարտաւոր են ներկայանալ երեւանում զօր. Բէժանբէկին, իսկ բոլոր հաւաքւած մթերքները պէտք է յանձնել տեղական Ազգ. Մարմիններին»:

Իսկապէս որ հինգերորդ դարը յիշեցնող այս կոչը անարձագանդ չը-

մնաց․ զօր․ Սիլիկեանը ստացաւ իր պահանջածը։

Մայիս 23-ին, Թշնամին, խոշոր ուժերով, յարձակման դիմեց եւ Բաշ-Ապարանի ճակատում։ Սկսուեցին արիւնահեղ կռիւներ։ Դրոյին յաջողուեց կանգնեցնել նրա յառաջխաղացումը՝ զգալի կորուստ պատճառելով նրան։

Ստանալով օժանդակ ուժեր, Թիւրքերը նորից անցան յարձակման՝ հանդիպելով մերոնց յամառ դիմադրութեան։ Կռիւները տեւեցին մի քանի օր։ Այստեղ էլ մեր զօրքերը երեւան բերին արտակարգ տոկունութիւն ու քաջութիւն։ Դրոյի հմուտ ղեկավարութեան տակ նրանք յետ շպրտեցին Թշնամու բոլոր գրոհները եւ մայիս 28-ին, մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեցին Թշնամուն։ Այդ ճակատամարտում հերոսական մահով ընկաւ հայ լաւագոյն հայդուկներից մէկը՝ ձիաւոր խմբի հրամանատար Ջիմլեակը։

Մայիս 28-ին ամբողջ ճակատի վրա, Թիւրքերը նահանջում էին անկարգ։ Մեր սպայակոյտի այդ օրւայ հաղորդագրութիւնը ասում է այդ մասին․ «Թիւրքերը երեք օրւայ կռիւներից յետոյ, ջարդուած են եւ նահանջում են հապճեպով։ Նրանց զօրամասերը բաժանուած են երեք խմբերի։ Առաջինը՝ Ալագեազ կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղըրմըզլու եւ երրորդը՝ Աղջա-Կալա։ Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց։ Ոգեւորութիւնը աններեւակայելի է»։

Եւ, իրօք, ոգեւորութիւնը շատ մեծ էր։ Զօր․ Սիլիկեանն այլեւս մտածում էր աւելի լայն գործողութիւնների մասին — շարժուել դէպի Ալեքսանդրապոլ։ Իր մտքում նա օրօրում էր ուրիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր յայտնում․ մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը եւ յարձակուել Կարսի վրա։ Եւ համոզուած էր, որ կը գրաւէ Կարսը, իսկ Կարսի գրաւումով անխուսափելիօրէն կը գրաւուէր եւ Ալեքսանդրապոլը․ Թիկունքից կտրուած Թիւրքերը չէին մնայ Շիրակում։

Սարդարապատի յաղթութեան յաջորդ օրը, մայիս 29-ին, զօր․ Սիլիկեանը, դիմեց հայ ժողովրդին հետեւեալ կոչով․

«Հայե՛ր։ Մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը շարունակւում է, եւ Թիւրք զօրքերը նահանջում են։

«Մենք պէտք է յետ առնենք Ալեքսանդրապոլը, որը այնպէս նենգօրէն գրաւեցին Թիւրքերը։

«Մեր բոլորիս մտքերը ամբողջովին պէտք է սեւեռած լինեն դէպի Ալեքսանդրապոլը․ մենք պէտք է յետ առնենք այն եւ ապա միայն Թիւրքերի հետ բանակցութեան մէջ մտնենք հաշտութիւն կնքելու համար։

«Մեզ բոլորիս շատ լաւ պէտք է յայտնի լինի, Թէ որ սահմանի գըրգռել է անկուշտ եւ միաժամանակ Թոյլ Թիւրք կառավարութեան ախորժակը։ Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի եւ Էջմիածնի գաւառները՝ Էջմիածին վանքի հետ միասին եւ Երեւանի, Նախիջեւանի գաւառների մեծ մասը։

«Միթէ՞ մենք պէտք է տանենք այդպիսի անարգանք։ Միթէ՞ հեշտ ու հանգիստ սրտով պէտք է տանք Թշնամուն մեր հայրենի հողերը, որ կերակրել, կերակրում են եւ պիտի կերակրեն մեզ, եւ մեր սրբատեղին՝ Սուրբ Էջ-

միածինը:

«Ո՛չ, երբեք, հա՛յ ժողովուրդ, դու չպիտի թոյլ տաս այդպիսի անարգանք:

«Եւ այդ անարգանքը տեղի չի ունենայ, եթէ մենք հասնենք մինչեւ Ալեքսանդրապոլ:

«Քի՛չ է մնացել մինչեւ Ալեքսանդրապոլ. հարկաւոր է միայն օգնել խրամատներում գտնուղ մեր քաջերին, եւ մի երեք–չորս օրից յետոյ մենք կը հասնենք մեր նպատակին:

«Արդ, ուրեմն, մի՛ զանդազէք, հայե՛ր. չտապով խմբուեցէք խիտ ու համերաշխ շարքերով, վռնտեցէ՛ք թշնամուն մեր հայրենի արիւնաներկ հողից, եւ թո՛ղ ձեզ հետ լինի ձեր յետնորդների օրհնութիւնը:

«Դէպի՛ զէնք բոլորդ:

«Դէպի՛ Ալեքսանդրապոլ»:

Դէպի՛ Ալեքսանդրապոլ... Այս մարտակոչը հարազատ էր ամենքի սրտին — եւ՛ յաղթական ու հպարտ զօրքին, եւ՛ անխուսափելի մահից ազատուած ժողովրդին: Ոգեւորուած՝ ամենքն ապրում էին Ալեքսանդրապոլը վերապրաւելու հեռանկարով: Եւ մինչ զօր. Սիլիկեանը պատրաստւում էր ընդհանուր յառաջխաղացման, հեռագիրը ստացուեց, որ Բաթումում ստորագրուել է հաշտութեան դաշնագիրը. զօր. Նազարբէգեանը հրամայում էր կնքել զինադադար...

Կարելի է երեւակայել, թէ այս լուրը ի՛նչ ոգեւորութիւն ստեղծեց երեւանում ու բանակի մէջ. յուսահատութիւնը անյոյսների էր. Ազգային Խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացութեան չէր կարողանում յանգել. մեծամասնութիւն չէր կազմւում: Արամը դրեթէ չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփուել էր իր մէջ եւ սպասում էր զօր. Նազարբէգեանին: Ազգ. Խորհուրդն ալեկոծւում էր առանց նրան– ոմանք առաջարկում էին հաշուել կացութեան հետ եւ ընդունել Բաթումի դաշնագրի պայմանները, ուրիշներ — ղէմաւորապէս, դաշնակցականները — պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէգեանի հեռագիրը հաշտութեան մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին եւ շարունակել պայքարը: Այս առաջարկի կողմնակիցներին թեւ էր տալիս եւ զօրքի խիստ բացասական վերաբերումը դէպի Բաթումի դաշնագիրը. առաջաւոր դիրքերից հեռագիրներ էին տեղում, որոնք բողոքում էին այդ դաշնագրի դէմ եւ խնդրում էին Ազգ. Խորհրդին՝ շարունակել պատերազմը: Այս տրամադրութեան ոյժ էր տալիս, մանաւանդ, այն հանգամանքը, որ, ըստ դաշնագրի պայմանների, երկրի ամենահարուստ մասերը յանձնում էին Թուրքիային, եւ Ղամարլուն, որ դեռ չէր գրաւուած թիւրքերի կողմից, բայց դաշնագրով պիտի անցնէր նրանց, հարիւրաւոր ներկայացուցիչներ էր ուղարկել Երեւան, որոնք ցոյց պիտի տային Ազգ. Խորհրդի առջեւ՝ պահանջելով մերժել Բաթումի դաշնագիրը: Ցուցարարները — կանայք ու օրիորդներ — դրօշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգ. Խորհրդի շէնքի առջեւ եւ ներկայացուցիչների բերանով յայտարարում, թէ իրենց չրջանը ամբողջ ունեցուածքն ու

կռուող ուժերը տրամադրում է Ազգ. Խորհրդին, միայն թէ թշնամու պայմանները չընդունեն։

Վճիռ տալը անչափ դժուար էր. վտանգը շատ էր մեծ։ Հայկական զօրքերի ընդհանուր քանակը այդ օրերին հասնում էր 30 ոչ լրիւ գումարտակների, մինչդեռ Թիւրքիան շարժման մէջ էր դրել 5 դիվիզիա (3րդ, 5րդ, 9րդ, 11րդ եւ 36րդ), այսինքն՝ 50 գումարտակ եւ ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու։ Հայ զինուորների թիւը 12,000ը չէր անցնում. թիւրքերն առաջ էին քշել 35,000 կռուող։

Ազգ. Խորհուրդը չկարողացաւ միակամութիւն երեւան բերել, եւ զօր. Սիլիկեանին մնաց ենթարկել զօր. Նազարբէգեանի հրամանին։ Պատերազմը վերջացաւ։ Ղամարլուի շրջանի բնակչութեան մի մասը անմիջապէս գաղթեց. միւսը հեռացաւ թիւրքերի գալուց յետոյ։

Բաթումի դաշնագրի հետ կապուած խնդիրները կարգադրելու համար Ազգ. Խորհուրդը Ալեքսանդրապոլ ուղարկեց յատուկ պատուիրակութիւն՝ բաղկացած Մ. Մուսինեանից, Թամամշեանից, բժ. Յ. Մելիքեանից, զօր. Տէր-Յակոբեանից, դնդ. Քիշմիշեանից եւ դնդ. Վեքիլեանից։ Պատուիրակութեան յանձնարարուեց բանակցել թիւրք հրամանատարութեան — Քեազիմ Կարաբէքիրի հետ Բաթումի դաշնագրից բխող հետեւեալ հարցերի մասին. 1) Գաղթականութեան վերադարձը իրենց տեղերը. 2) Գերիների փոխանակումը. 3) Թիւրքական զօրքի Հայաստանից անցնելու պայմանները. 4) Երկաթուղու փոխանցման խնդիրը. 5) Ղարաքիլիսայի պարպումը եւ յանձնումը հայերին։

Պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլում ընդունուեց պատշաճ քաղաքավարութեամբ. սկսուեցին բանակցութիւնները, բայց հայերի դրած հարցերից եւ ո՛չ մէկը չընդունուեց թիւրքերի կողմից։ Նրանց զբաղեցնողը Հայաստանի վրայով զօրք փոխադրելու իրաւունքն էր եւ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագծի անմիջական փոխանցումը։ Եւ ա՛յս պահանջներին էր, որ ամենից աւելի հակառակում էին հայերը։

Տեսնելով հայերի յամառութիւնը, առանց ընդհատելու Ալեքսանդրապոլի բանակցութիւնները, յուլիս 7-ին, թիւրքերն անցան յառաջխաղացման Սարդարապատի ճակատում։ Զօր. Սիլիկեանը հրամայեց մեր զօրքերին թողնել երկաթուղին և դիրքեր գրաւել Էջմիածնի շրջանում։ Յուլիս 8-ին թիւրքերը մեծ ուժերով յարձակեցին Քեօրփալու—Զէյվա գծի վրայ, բայց յետ շպրտուեցին 5րդ գնդի եւ կամաւորական խմբերի ուժգին հակահարուածով։ Թողնելով այս կէտում պահակ զօրամաս՝ թիւրքերը շարժուեցին դէպի արեւելք. յուլ. 8-ին գրաւեցին Խաթունարխ գիւղը Էջմիածնից 10 կիլոմետրի վրայ. յուլիս 9-ին մտան Զորանքարա, Նէջիլու, Թագաքենդ եւ Աղհամզալու գիւղերը։ Այսպիսով հաստատուեց Բաթումի դաշնագրի սահմանագիծը։

Թիւրքերը դիրքեր գրաւեցին Երեւանից 7 կիլոմետր հեռու՝ թնդանօթների բերաններն ուղղելով դէպի Հայաստանի մայրաքաղաքը։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՑԿԱՑՈՒՄԸ. — ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսպէս, Հայոց աշխարհը արեան ու կրակի մէջ էր: Իսկ ի՞նչ էր կատարւում այդ միջոցին Բաթումում ու Թիֆլիսում:

Մայիս 11–ին, Թիւրքերի պայմաններն առանալուց յետոյ, Անդրկ. Բաթումի պատւիրակութիւնը գրաւոր պնդեց Բրեստ–Լիտովսկի պայմաններն վրա, եւ այս առթիւ սկսւեց թղթերի փոխանակութիւն Թիւրք եւ անդրկովկասեան պատւիրակութիւնների միջեւ. անդրկովկասցիք անշեղ կանգնած էին Բրեստ–Լիտովսկի պայմանների վրա, բողոքում էին այդ դաշնագրի սահմաններից դուրս ընկնող շրջանների գրաւման դէմ եւ պահանջում էին, բանակցութիւններին մասնակցեն նաեւ Թիւրքիայի զինակիցները. Թիւրքերը հակաճառում ու սպառնում էին:

Այս բանակցութիւնների ընթացքին, մայիս 14–ին, Թիւրքերը պահանջեցին անմիջապէս Թոյլ տալ Թիւրք զօրքերին Ալեքսանդրապոլի վրայով անցնել դէպի Ջուլֆա: Եւ դեռ պատասխանը չստացած, ինչպէս տեսանք, յարձակւեցին Ալեքսանդրապոլի վրա:

Բանակցութիւններն արագացնելու նպատակով, մայիս 19–ին Գերմանիայի ներկայացուցիչ զօր. Ֆոն Լոսովը առաջարկեց անդրկ. պատւիրակութեան իր միջնորդութիւնը: Անդրկովկասեան պատւիրակութիւնը, հակառակ աղբէջանցիների վարանումին, ընդունեց ուրախութեամբ:

Յաջորդ օր, մայիս 20–ին, Բաթում հասան Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ բժ. Համ. Օհանջանեանն ու Արշ. Զոհրաբեանը՝ դերման կառավարութեան հովանաւորութիւնը խնդրելու առաքելութեամբ: Մայիս 22–ին այդ իմաստով պաշտօնապէս դիմում արւեց զօր. Ֆոն Լոսովին, եւ այս վերջինը իսկոյն հեռագրեց Պոլսի գերման դեսպանին այդ դիմումի մասին՝ աւելացնելով միաժամանակ, որ հայ ժողովրդի վիճակը ողբերգական է եւ որ Թիւրքերը ձգտում են գրաւել հայկական գաւառներն ու բնաջնջել հայերին:

Մայիս 24–ին զօր. Ֆոն Լոսովը հաղորդեց անդրկովկասեան պատւիրակութեան, որ Թիւրքերը մերժեցին միջնորդութեան իր առաջարկը, իսկ

մայիս 25-ի երեկոյեան, մի առանձին նամակով, յայտնեց, թէ իր ստացած ստոյգ տեղեկութիւնների համաձայն Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայման նախօրեակին է գտնւում, որով իր ներկայութիւնը դառնում է այլեւս աւելորդ, եւ ինքը նոյն օրն եւ եթ մեկնելու է Բաթումից:

Եւ ճիշտ որ, Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դէպի քայքայում: Օր օրի վրա սաստկանում էին հակամարտութիւնները կովկասեան ժողովուրդների միջեւ, որոնցից վրացիները գաղտնի, բայց տենդագին որոնում էին գերմանացիների հովանաւորութիւնը, ադրբէջանցիները բռնել էին թիւրքերի փեշից եւ քաշում էին դէպի Բագու, որը այդ օրերին բոլշեւիկների ձեռքն էր. հայերը մնացել էին մենակ եւ օրհասական կռիւ էին մղում մահ ու աւեր սփռելով առաջ շարժւող թիւրքական զօրքերի դէմ:

Հայ ներկայացուցիչները Բաթումում փորձեցին համաձայնութեան գալ ադրբէջանցիների հետ, բայց հանդիպեցին խիստ անզիջող վերաբերումի. ադրբէջանցիները պահանջում էին ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շարուր-Նախիջեւանը, այլ եւ Երեւանի ու Էջմիածնի գաւառների մեծ մասը՝ Երեւան քաղաքով հանդերձ: «Հայաստանի մայրաքաղաք կարող է լինել Էջմիածինը», ասում էր չնականօրէն Ուսուպբէկովը Խան-Խոյսկու եւ Ռասուլ Զադէի հաւանութեամբ: Եւ սրանք համարւում էին դեռ չափաւորները: Անդին գործում էր դր. Սուլթանովը Գանձակի ու Բագուի Ազգ. Խորհուրդների խան ու բէգ անդամների հետ, որոնցից 30 հոգինոց մի պատւիրակութիւն եկել էր Բաթում եւ համոզում էր թիւրքերին օր առաջ շարժւել դէպի Անդրկովկասի խորքերը՝ ազատելու համար Բագուի մահմեդականներին բոլշեւիկների եւ հայերի ձեռքից: Ադրբէջանցի Թուրքերը անդրկ. պատւիրակութեան մէջ անվերապահ կերպով պաշտպանում էին թիւրքերին եւ իրենց քայլերը յարմարեցնում վերջիններիս ծրագրերին:

Ըստ էութեան, աւելի լաւ չէր եւ վրաց ներկայացուցիչների դիրքը: Ինչպէս պարզեց յետոյ, Չխենկելին եւ իր ընկերները՝ պատւիրակութեան միւս անդամներից թաքուն, բանակցութիւններ էին վարում Գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանաւորութեան տակ դնելու նպատակով:

Յաճախ Բաթումում երեւում էին վրացի գործիչներ, որոնք նոյնպէս գաղտագողի խորհրդակցութիւններ էին անում, տեսնւում էին մերթ թիւրքերի, մերթ գերմանացիների հետ եւ հայերի թիկունքում ինչ որ մութ հաշիւներ կարգադրում: Յետագայում յայտնի դարձաւ, որ նրանք Վրաստանի անկախութեան յայտարարութիւնն էին նախապատրաստում: Վրաց պատւիրակութեան անդամներից մէկը՝ պրոֆ. Զ. Աւալովը հետեւեալ ձեւով է ներկայացնում այդ դաւերը.

«Գերմանական պատւիրակութեան հետ ունեցած բաց ու անկեղծ զրոյցների ընթացքում պատրաստւեց Վրաստանի նշւող դիրքը՝ անդրկովկասեան միութեան անխուսափելի քայքայման նախատեսութեան հետեւանքով: Միայն մի քանի մարդ տեղեակ էր գաղտնիքին: Թիֆլիսից եկած Ն. Ժորդանիան Վրաց Ազգ. Խորհրդի նախագահի եւ Սէյմի ու Վրաստանի Սոց.-Դեմոկրատական կուսակցութեան պարագլուխի իր դիրքով հանդիսացաւ այն

անձը, որին վիճակուեց Թիֆլիսում հիմնական ակտերը (Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը եւ Անդրկ. Սէյմի ինքնավերացումը) անցկացնելու դժուարին գործը: Նա, ըստ երեւոյթին, տատանւում էր՝ միանգամայն հասկանալի եւ օրինական պատճառներով. Վրաստանի անկախութիւնը քիչ էր կապւում իր նախկին գործունէութեան ու հաւատամքի եւ Ռուս. Սոց.-Դեմ. կուսակցութեանը պատկանելու հետ: Բայց մի անգամ որ «հաւատաց», այլեւս ճարպիկ ձեռքով սկսեց անցկացնել նոր ծրագիրը:

«Մայիս 22-ին Ժորդանիան վերադարձաւ Թիֆլիս: «Գերման-վրացական» աշխատանքը ամբողջ թափով ընթանում էր «անդրկովկասեան-թրքական» աշխատանքին զուգընթաց*):

Նոյն Աւալովը այդ օրերի դէպքերը հետեւեալ ձեւով է արձանագրում իր յուշատետրի մէջ.

«Բաթում, 21 Մայիս 1918.— Առաւօտեան Ն. Ժորդանիայի եւ Նիկոլաձէի հետ քննում ենք քարտէզի վրա մեզ անհրաժեշտ սահմանները, ծայրայեղ դէպքում պատրաստ ենք «տալու» Ջաքաթալայի չրջանը: Բօղուա Ազրբէջանի սահմանային ուրիշ որեւէ սրբագրութիւն չենք անի: Թիւրքերը դանակը կոկորդներիս դրած՝ պահանջներ են անում, բայց Ախալցխան, Ախալքալաքը Վրաստանին պէտք է մնան:

«Ճերմակը՝ խորհրդակցութիւն վրացիների ու թաթարների միջեւ սահմանների մասին: Մի կողմից՝ Նիկոլաձէ, Ժորդանիա, Սուրգուլաձէ եւ ևս. միւս կողմից՝ Խան-Խոյսկի, Խասմամեդով, Սաֆիքբեկով, Պեպինով, Ումուդբէգով, Ջաֆարով: Հայերը հրաժարւել են Գանձակի նահանգի մասերից (Ղարաբաղ), իսկ մահմեդականները... համաձայն են կազմել Անդրկովկասում առանձին հայկական կանտոն (օրինակ, զեմստուոյական «Ալեքսանդրապոլի նահանգ»-ի ձեւով): Մեզանից էլ ուզում են դրաւել Սրղնախ, Թիֆլիս եւ Բորչալու գաւառների մասերը, բայց համաձայնութիւնը հնարաւոր է. նրանք կը զիջեն: Ախալցխայի խնդրի առթիւ Պեպինովը առաջ է քաշում ինքնորոշման պահանջը (հասկանալով կցումը Թիւրքիային):

«Ընդհանուր առմամբ, մեր բարեկամ մահմեդականները հաւատացնում են, որ ամէն կերպ պաշտպանելու են «երկեակ» Անդրկովկասը. բայց, ասում են, ի՞նչ անել, եթէ թիւրքերը չհրաժարւեն իրենց պահանջներից, եւ ծրագրուող «կանտոններից» մէկը բացակայի: Նրանց փափաքն է, այդ դէպքում, պահպանել Անդրկովկասը դէթ որպէս «երկեակ միութիւն»:

«Մայիս 22.— Աչքի առաջ ունենալով «Անդրկովկասին սպառնացող վերջուզումը՝ վճռական խորհրդակցութիւն եղաւ Վրաստանի անկախութիւնը յայտարարելու անհրաժեշտութեան մասին: Ծրագիրն այն է, որի վրայ վաղուց է վեր, իբրեւ «խորհրդական», պնդում եմ այստեղ եւ որին Ջիհանկելին եւ ուրիշները համաձայն են: Վրաստանի անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը երաշխաւորւում է Գերմանիայի կողմից: Արեւելեան Անդրկով-

*) З. Авалов. «Независимость Грузіи в международной политикѣ» 1918—21 г. Парижъ, 1924 г., стр. 5.

կասը ստանում է գործելու ազատութիւն եւ կազմակերպւում է թիւրքերի օգնութեամբ: Հայերն էլ պարտաւորւած պիտի լինեն յայտարարել իրենց անկախութիւնը...

«Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարութեան նախագիծը — ժամանակն է ճշտորոշել, գործել: Չխենկելին, Նիկոլաձէն, Ժորդանիան, Սուրգուլաձէն հաւանութիւն տուին: Ժորդանիան այդ նախագիծն իր հետ տարաւ Թիֆլիս: Մնաս բարովի ժամանակ մենք առանձնապէս սեղմում էինք նրա ձեռքերը: Նա ստիպւած պիտի լինի բեմադրել մի շատ լուրջ թատերախաղ: Մտածեցէ՛ք միայն զանազան կազմակերպութիւնների, խորհուրդների եւ է՛լ աւելի թանձր նախապաշարումների մեծութեան մասին: Բայց նա, եւ բեւի, արդէն նախապատրաստել է վերջին գործողութիւնը. մնում է քաշել թելը»:

«Մայիս 23....Այսօր, ի միջի այլոց, կարդում ենք համաձայնութեան նախագիծը, որով վրաց ժամանակաւոր կառավարութիւնը Գերմանիային իրաւունք է տալիս օգտւելու Վրաստանի նաւահանգիստներում գտնուղ բոլոր նաւերից»:

«Մայիս 24.— Լաւած աշխատանք: Վեղենդոնքի հետ կարդում եմ վերջնական նախագծերը: Շատերն սկսում են դլխի ընկնել, որ բեմի յետեւը կատարւում է խուլ աշխատանք, որ բեմասարքը փոխւում է: Ուշ գիշերը կազմում են հետեւեալ հեռագիրը, որ մայիս 25–ի գիշերը ուղարկւում է Չխենկելիի առորագրութեամբ.

«Թիֆլիս, զօրավար Քվիճիքաձէին.

«Հաղորդեցէ՛ք Վրաստանի Ազգային Խորհրդի նախագահութեան հետեւեալը. անկախութեան յայտարարութեան յետագայ յապաղումը կունենայ անուղղելի հետեւանքներ: Գերմանական միջնորդութեան փորձը չյաջողւեց: Մնում է մէկ բան. թիւրք արշաւին հակադրել Գերմանիայի աջակցութիւնը վայելող անկախ Վրաստան: Նրա ներկայացուցիչը վրաց կառավարութեան մօտ կը լինի կոմս Շուլենբուրգը, որին պէտք է անմիջապէս ճանաչել հէնց որ յայտարարութիւն արւի... Արդէն առորագրութեան համար պատրաստւած են մի շարք ժամանակաւոր համաձայնութիւններ Գերմանիայի հետ... Սպասում ենք չուտափոյթ հաղորդագրութիւն ակտի մասին»:

«Զօր. Ի. Օդիշելիձէն սեփական ձեռքերով ծածկագրեց այս հեռագիրը»:

«Մայիս 25.— Ամբողջ թափով աւարտում ենք յետկուլիսային աշխատանքը... Ուշ գիշերով Չխենկելիի ու Նիկոլաձէի հետ խօսում ենք մեր հաւանականութիւնների մասին: Թիֆլիսից հեռագիր ստացւեց. անկախութիւնը կը յայտարարւի վաղը, մայիս 26–ին: Հարցը անց է կացւած բոլոր ատեաններով: Միայն թուրքերը խնդրում են մի քիչ սպասել»):*

Եւ մայիս 26–ին, Ասլոյը գոհունակութեամբ արձանագրում է. «Մեր

---

*) Այստեղից երեւում է, որ վրացիք միայն հայերից էին գաղտնի պահում իրենց ծրագիրները. թուրքերին, ընդհակառակը, մասնակից էին դարձնում իրենց անելիքներին...

անդրկուլիսային աշխատանքը անցաւ աննկատելի: Ոչ ոք, կարծես, չի կասկածում, թէ ի՞նչ է կատարուելու այսօր եւ վաղը... Մենք անկախութիւն ենք կազմակերպում: Գերմանիան բռնելու է Թիւրքերի փեշը. դրա փոխարէն մեզանից բան-ման կառնէ: Ադրբէջանը մի առ ժամանակ կը լինի Թիւրքիայի ազդեցութեան ներքոյ: Հայաստանը կը մնայ Թիւրքերի ճնշման տակ, որ կը մեղմացւի գերմանացիների ներկայութեամբ»*):

Այսպէս, ուրեմն, ադրբէջանցիները Թիւրքերի հետ կարգադրում են իրենց ազգային խնդիրները. Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահ Չխենկելին Ժորդանիայի ու Նիկոլաձէի հետ, գերմանացիների փեշից բռնած, գաղտագողի դաւադրութիւն են սարքում Անդրկովկասեան միութեան դէմ եւ նախապատրաստում Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը: Հայերն են միայն մէջտեղը՝ մենակ, անբարեկամ, անպաշտպան, ամենքից լքած, զոհ հարեւանների դաւաճանութեան...

Աւելի զարհուրելի վիճակ դժուար էր երեւակայել: Մի աղօտ լոյս էր մնացել միայն հայերի համար՝ գերմանացիների պաշտպանութիւնը, բայց Ֆոն Լոսովը մէկից աւելի անգամներ յայտնել էր, որ Թիւրքերը չեն լսում իրենց եւ, հակառակ Բերլինից եկած պահանջների, անում են իրենց գիտցածը: Հետեւաբար ի՞նչ անել: Ո՞ւմ դիմել: Ո՞ւր որոնել փրկութիւն: Ֆոն Լոսովի խորհրդով Հ. Ազգ. Խորհրդի ներկայացուցիչներ Օհանջանեանն ու Զոհրաբեանը որոշեցին մեկնել Բերլին. Ֆոն Լոսովը խոստացաւ տանել նրանց իր նաւով, վրաց ներկայացուցիչների հետ միասին, Փոթիից:

Մայիս 25-ին գերման պատուիրակութիւնը հեռացաւ Բաթումից, իսկ միւս օրը, մայիս 26-ի երեկոյեան ժամը 8-ին, օսմանեան պատուիրակութիւնը Անդրկ. պատուիրակութեան յանձնեց հետեւեալ վերջնագիրը.

Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահին.

«Ցաւով հաստատում եմ, որ տակաւին ոչ մի որոշ պատասխան չի տրուած այն առաջարկութիւններին, որ ես պատիւ ունեցայ օսմանեան կայսերական կառավարութեան կողմից յանձնելու Անդրկովկասեան Դաշնակցային Հանրապետութեան պատուիրակութեան Բաթումի խորհրդաժողովի առաջին նիստում, մայիս 11-ին, չնայած որ բաւական երկար ժամանակ, այսինքն՝ երկու շաբաթ է անցել այն օրից, երբ նրանք ձեւակերպուեցին: Մինչդեռ ինչպէս յայտնի է ձերդ գերազանցութեան, Կովկասի վիճակը աւելի քան տագնապալի է ու երկդիմի եւ առանց յապաղելու պէտք է լուսաբանուի:

«Հարիւր հազարաւոր Թուրքեր եւ մահմեդականներ Բագւում ու շրջակայքում տառապում են անխիղճ հրոսակների, այսպէս կոչուած յեղափոխականների արիւնոտ լծից, եւ անուղղելի աղէտը, որ սպառնում է այդ դժբախտներին, դառնում է աւելի ու աւելի անխուսափելի: Թուրք եւ մահմեդական բնակիչների ճակատագիրը Կովկասի միւս մասերում էլ, ուր թալանիչների ու չարագործների բազմաթիւ կազմակերպուած հրոսախմբեր նրան պատճառում են անվերջ ու յարաճուն կերպով ամէն կարգի բռնութիւններ,

*) Աւալովի նոյն գիրքը, էջ 57—61:

աւելի հանդուրժողական չէ ու չի կարող չհրաւիրել ամենալուրջ ուշադրութիւն։ Դուք կ'ընդունէք, սակայն, պ. նախագահ, որ այդ անունին արժանի եւ ո՛չ մի կառավարութիւն չի կարող դիտել անտարբեր աչքով, որ իր երկրին սահմանակից մի հողի վրա անպատիժ կերպով ահեղ նման ոճրագործութիւններ, եւ կը դիտակցէք, անշուշտ, որ օսմանեան կայսերական կառավարութեան դրութիւնը առանձնապէս փափուկ է Կովկասը ծաւալող անիշխանութեան հանդէպ, որովհետեւ այդ վերաբերութեամբ է նոյնպէս եւ առաւելաբար ապահովութեանը մի աղգաբնակութեան, որ ցեղի ու կրօնի ամենասերտ աղգակցութիւնն ունի կայսրութեան բնակչութեան հետ։ Միւս կողմից, ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները կայսերական կառավարութիւնը դրնում են Կովկասի վրայով, երկաթուղիներով, ըստ կարելւոյն չուտ, դէպի պատերազմի ուրիշ ռազմաբեմ զօրքի ազատ փոխադրութիւնը ապահովելու անհրաժեշտութեան առջեւ։ Այդ եւս պահանջում է, որ անյապաղ վերջ տրւի ներկայ երկդիմի կացութեան։

«Այս բոլոր պատճառներով, օսմանեան կայսերական պատւիրակութիւնը պարտք է համարում պահանջել, որ անմիջապէս հաղորդւի իրեն անդրկովկասեան պատւիրակութեան պատասխանը առաջ արւած առաջարկութիւններին, այլ եւ սահմանների սրբագրութեան վերաբերւող նոր առաջարկին, որի բնագիրը պատիւ ունեցայ ընդ սմին ուղարկելու ձերդ գերազանցութեան։

«Այսպիսով, իմ կառավարութիւնը՝ ընդունելով, որ միայն վերոյիշեալ առաջարկութիւնների ճշտիւ եւ արագ ընդունումը Անդրկովկասեան Դաշնակցային Հանրապետութեան կառավարութեան կողմից կարող է Կովկասը հասցնել գոհացուցիչ դրութեան եւ որ միայն այդ ընդունումը ի վիճակի է ստեղծել կայուն դրութիւն եւ համարւում է բաւարար երաշխիք թուրք եւ մահմեդական բնակչութեան ապահովութեան եւ անդորրութեան համար, — յանձնարարել է ինձ խնդրելու ձերդ գերազանցութեան՝ հաղորդել ինձ, այս օրւայ երեկոյեան ժամը 8–ից սկսած, 72 ժամւայ ընթացքում ընդունո՞ւմ է արդեօք հանրապետութեան կառավարութիւնը օսմանեան առաջարկութիւնները իրենց բովանդակ ծաւալով։

«Ես պէտք է աւելացնեմ նաեւ, որ այդ երեք օրւայ ընթացքում յարաբերութիւնները մեր երկու կառավարութիւնների միջեւ կարող են պահել բարեկամական բնոյթ, ա՛յն անտարակելի պայմանով, որ թուրք զօրքերի դրծողութիւնները Կովկասի հարաւում որեւէ դիմադրութեան չհանդիպեն։ Ընդունեցէք եւայլն. Խալիլ»։

«Սահմանային սրբագրութիւն» կոչւածը հողային նոր պահանջ էր. թուրքերն այժմ պահանջում էին Նախիջեւանի ու Ախալցխայի գաւառները, անշուշտ, ազրբէջանցիների բացայայտ թելադրանքով։

Իսկ ի՞նչ էր կատարւում այդ միջոցին Թիֆլիսում։

Նոյն օրը, մայիս 26–ին, գումարւեց Սէյմի վերջին, ողբերգական նիստը, որի մէջ վրաց սոցեալ–դեմոկրատ կուսակցութեան պարագլուխներից Ի. Ծերեթելին արաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. նրանից անջատւել են հայերը եւ կամովին՝ թուրքերը: Անդրկովկասի կեղծ անկախութիւնը խանդարում է նրան վաբւելու ազատօրէն եւ իր լիազօր ուժերը գործադրելու իր անկախութիւնը պաշտպանելու համար:

«Այս հանգամանքներում մեր պարտքն է ասել վրաց ժողովրդին.— Դու մնացել ես մենակ, չունես պետական կազմ, չունես քո պատւիրակութիւնը եւ, որքան էլ ծանր լինի խոստովանել, դու ապրում ես պատրանքներով. չկա՛ն նրանք, չկա՛յ Անդրկովկասի միութիւնը եւ, ուրեմն, եթէ ուզում ես փրկել քեզ, պաշտպանել քո շահերը, ինչպէս եւ քո հարեւանների շահերը, պէտք է ունենաս քո ինքնուրոյն պետական կազմը:

«...Դժբախտաբար, դոյութիւն չունի այլեւս անդրկովկասեան միութիւնը եւ փաստօրէն չկայ մի ընդհանուր ներկայացուցչական կենտրոնական մարմին, ուստի Սէյմը պէտք է յայտարարէ, թէ ինքը հրաժարւում է իր վրա դրւած լիազօրութիւններից ու ցրւի»:

Նախընթաց դէպքերի ուշադիր հետեւողը կը տեսնէ առանց դժւարութեան, թէ Ծերեթելիի յայտարարութիւնը սկզբից մինչեւ վերջ մտացածին փաստերի վրա է հիմնւած. ո՛չ հայերն էին «անջատւել» վրացիներից եւ ո՛չ էլ վրացի ժողովուրդը մնացել էր մենակ: Անդրկովկասի անկախութեան «կեղծութիւնը» կամ միութեան դոյութիւն չունենալը նոր երեւոյթ չէր. նա նոյնն էր, ինչ որ եւ անկախութեան սկզբում: «Կեղծը» Ծերեթելիի մտայնութիւնն էր, այսինքն՝ վրաց վարիչ շրջանների մտայնութիւնը: Նրանք որոշել էին դուրս գալ Անդրկովկասեան միութիւնից եւ պատրւակ էին փնտռում՝ իրենց ազեղ վարմունքը արտաքին աշխարհի աչքին արդարացնելու համար:

Վրացիների պնդումի վրա Սէյմը ընդունեց մի բանաձեւ, որը ասում էր. «Ի նկատի ունենալով, որ պատերազմի եւ խաղաղութեան խնդրում եղեան եկան հիմնական տարակարծութիւններ Անդրկովկասի անկախ հանրապետութիւնը կազմող ազգերի միջեւ, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակաւոր իշխանութեան դոյութիւնը, Սէյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը եւ յայտարարում չեղեալ իր լիազօրութիւնները»:

Մայիս 26-ի, կէսօրին, ցրւեց Սէյմը, իսկ հինգ ժամ վերջը, նոյն սրահում գումարւեց Վրաց Ազգային Խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահութեամբ, որ եւ բեմադրեց Վրաստանի անկախութեան յայտարարութեան ծիսակատարութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան, Բաթումում տեղեկացան Անդրկովկասի Հանրապետութեան քայքայման եւ Վրաստանի անկախութեան յայտարարութեան լուրը: Ն. Ժորդանիան ու Ն. Ռամիշվիլին հեռագրում էին Զիմենկելին. «Այսօր, կէսօրից յետոյ ժամը 5-ին, Ազգային Խորհուրդը Վրաստանը յայտարարեց անկախ հանրապետութիւն: Վարչապետ է Ռամիշվիլին, արտաքին գործոց նախարար՝ Զիմենկելին: Անդրկովկասեան Սէյմը յայտարարեց իրեն լուծւած, եւ Անդրկովկասի միութիւնը վերջացաւ»:

Ռալիլ բէյը անմիջապէս՝ մայիս 26–ի իր վերջնագիրը ուղարկեց առանձին–առանձին վրաց, հայկական եւ ադրբէջանեան պատուիրակներին:

⁂

Վրացիների վարմունքը սարսափելի կացութիւն ստեղծեց հայերի համար: Հայ հասարակութեան վրդովումը անսահման էր: Հայերը, ո՛չ առանց իրաւունքի, նեղդատութիւն ու դաւաճանութիւն էին տեսնում վրացիների վարմունքի մէջ: Նրանք զգում էին, որ մի վատ խաղ է խաղացել իրենց գլխին: Եւ մայիս 26–ի երեկոյեան, Հայոց Ազգային Խորհուրդը, բուռն վիճաբանութիւններից յետոյ, ձայների ճնշիչ մեծամասնութեամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի եւ Վրաստանի անկախութեան դէմ: Այդ որոշումը, սակայն, չգործադրուեց յետագայ դէպքերի զարգացման հետեւանքով:

Հայ գործիչների մէջ միաձայնութիւն չկար այդ օրերին: Մայիս 26–ի նիստին մասնակցող Հ. Ազգ. Խորհրդի եւ Սէյմի անդամները՝ Ա. Ահարոնեան, Ստ. Մամիկոնեան, Տ. Բէգզադեան, Ա. Բաբալեան, Ռ. Տէր–Մինասեան եւ սոցիալիստ–յեղափոխականները վճռական կերպով դէմ էին արտայայտւում անկախութեան: Խ. Կարճիկեանը, Ս. Յարութիւնեանը, Ա. Շահխաթունեանը, Ս. Վրացեանը, Ա. Երզնկեանը եւ ուրիշներ այլ ելք չէին տեսնում, բայց եթէ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը եւ, առանց ուշացնելու, հայկական իշխանութեան կազմակերպումը: Բնորոշ է, որ հայ սոց.–դեմոկրատները, անշուշտ, վրացի սոց.–դեմոկրատների թելադրանքով, թունդ պաշտպաններ էին անկախութեան եւ չտապեցնում էին Ազգ. Խորհրդին օր առաջ կատարել անկախութեան յայտարարութիւնը: Նրանք անկախութեան մէջ էին տեսնում հայ ժողովրդի փրկութիւնը:

Այս հարցում էլ առաջին վճռական խօսքն ասողը եղաւ Հ. Ց. Դաշնակցութիւնը, նրա չարքային ուժերը:

Սէյմի լուծման օրն իսկ, մայիս 26–ի երեկոյեան, տեղի ունեցաւ Հ. Ց. Դաշնակցութեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու քաղաքային կոմիտէների արտակարգ նիստը: Ս. Վրացեանի դեկուցումից յետոյ, տեղի ունեցան բուռն վիճաբանութիւն եւ ձայների ճնշիչ մեծամասնութեամբ ընդունուեց հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով այն, որ Անդրկ. Սէյմի ինքնալուծումից եւ Վրաստանի անկախութիւն յայտարարելուց յետոյ լուծուելու է Անդրկ. կառավարութիւնը, եւ հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին՝ ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային Խորհուրդը՝ ուժեղացնելով իր կազմը՝ անցնի գործելու հայութեան կենտրոնում՝ ստանձնելով կառավարական ֆունկցիաները, օժտուած դիկտատորական իրաւունքներով հայ կեանքի բոլոր երեւոյթների եւ գործերի նկատմամբ»:

Շատ ճիշտ էր վայրկեանի գնահատութիւնը.— դէպի՛ ինքնորոշում, դէպի՛ ինքնակազմակերպում, դէպի՛ հայրենի երկիր, ժողովրդի դերկը:

Մայիս 27–ին ազգ. Խորհուրդն էլ որոշեց յայտարարել Ազրբէջանի անկախութիւնը. վարանումը այլեւս անիմաստ էր: Դէպքերը գահավէժ՝ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականութիւնը յամառօրէն աշխատում էր խուսափել:

Անկախութեան յայտարարութեան վրա պնդում էին եւ Բաքուից վերադարձած ներկայացուցիչները՝ Քաջազնունին, Խատիսեանը, Պապաջանեանը, որոնք մայիս 27–ի երեկոյեան մանրամասն զեկուցում տուին բանակցութիւնների ընթացքի եւ Վրաստանի քայլերից յետոյ ստեղծուած կացութեան մասին: Յաջորդ օր, մայիս 28–ին Ազգային Խորհուրդը որոշեց Բաքում ուղարկել Ալ. Խատիսեանից, Մ. Պապաջանեանից եւ Ց. Քաջազնունուց բաղկացած հաշտարար պատուիրակութիւն՝ տալով նրան բացարձակ լիազօրութիւն բանակցելու եւ հաշտութիւն կնքելու յանուն անկախ Հայաստանի: Անկախութեան յայտարարութիւնը, սակայն, եղաւ աւելի ուշ, մայիս 30–ին, աւելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգ. Խորհրդի յօժար կամքով:

Մայիս 29–ին գումարուեց Հ. Ց. Դ. Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների, Հ. Ց. Դ. Թիֆլիսի Կենտր. Կոմիտէի եւ Սէյմի ու Ազգ. Խորհրդի դաշնակցական հատուածների միացեալ նիստը, ուր մի անգամ եւս քննութեան առնուեց քաղաքական կացութիւնը եւ որոշուեց Հայաստանը յայտարարել անկախ հանրապետութիւն, կազմել կառավարութիւն միջկուսակցական հիմքերով, մինչեւ օրէնսդրական ժողովի գումարումը Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը տեղափոխել Երեւան, որը պէտք է դառնար Հայաստանի հանրապետութեան մայրաքաղաք: Նոյն ժողովում Ց. Քաջազնունին նշանակուեց վարչապետի թեկնածու:

Այս ժողովից յետոյ միայն Ազգ. Խորհուրդը արաւ վճռական քայլ եւ մայիս 30–ին հրատարակեց հետեւեալ յայտարարութիւնը, որը, թէեւ իսկական առումով անկախութեան հռչակում չէր, բայց դէպքերի բերումով դարձաւ այդպիսին:

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի fաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրբէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ, Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով դողնելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն, Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր փունկցիաները՝ հայկական գաւառների fաղաքական եւ վարչական դեկը վարելու համար:*)

Հայոց Ազգ. Խորհուրդ

1918 թ. մայիս 30
Թիֆլիս.

---

*) Այս բանաձեւի հեղինակը Նիկոլ Ադրալեանն էր:

Այսպիսով, Հայաստանի անկախութեան յայտարարութեան օրը իսկապէս պէտք է համարուէր մայիս 30ը: Հակառակ դրան, համարւում է մայիս 28ը, այսինքն, այն օրը, երբ Ազգ. Ժողովրդը վճռեց հաշտութեան պատւիրակութիւն ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարւել անկախութեան սկզբնաւորութիւն, որովհետեւ հաշտութեան բանակցութիւններ վարելու համար նախապայման էր անկախութեան յայտարարութիւնը: Ընդունելով թիւրքերի այդ պայմանը՝ Ազգ. Ժողովրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախութեան փաստը:

Այսպէս թէ այնպէս, Հայաստանի Հանրապետութեան ծագման օրը եղաւ մայիս 28ը: Այդ օրը դարձաւ նիւթական հայ ժողովրդի համար եւ մտաւ ազգային տօնացոյցի մէջ, իբրեւ սրբազան օրերից մէկը:

Մայիս 30–ին, Բաթումում, սկսուեցին բանակցութիւնները օսմանեան եւ հայկական պատւիրակութիւնների միջեւ: Մի շարք նիստերից յետոյ, կողմերը եկան համաձայնութեան, եւ յունիս 4–ին, օսմանեան եւ հայկական պատւիրակութիւնները, հանդիսաւոր նիստում, ստորագրեցին հաշտութեան դաշնագիրը Թիւրքիայի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ: Առաջին միջազգային վաւերաթուղթն էր այս, որ ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները:

Բաթումում ստորագրւած վաւերագրերն էին. — «Խաղաղութեան եւ բարեկամութեան դաշինքը Օսմանեան կայսերական կառավարութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ» եւ 3 յաւելւածներ, որոնցից առաջինը վերաբերւում էր Թրանզիտին, երկրորդը՝ առեւտրին սահմանակից շրջաններում եւ երրորդը՝ կրօնական ազատութեան պայմաններին: Մի համաձայնութեամբ էլ կարգաւորւում էր դերիների փոխանակութեան հարցը: Նոյն օրը Հայաստանի պատւիրակութիւնը մի համաձայնագիր էլ ստորագրեց թիւրքերի եւ ադրբէջանցիների ու վրացիների հետ երկաթուղային գոյքերի բաշխման մասին՝ ըստ երկաթուղագծի երկարութեան:

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 յօդւածներից: Երկրորդ յօդւածը գծում էր սահմանը Թիւրքիայի ու Հայաստանի միջեւ: Պէտք է նկատել, որ մայիս 26–ի վերջնագրի համեմատութեամբ, այստեղ կայ որոշ տարբերութիւն. հայ պատւիրակութեան պնդումի վրա թիւրքերը զիջեցին Համամլու—Աչտարակ խճուղին, որով մօտ 1000 քառ. կիլոմետր տարածութիւն աւելացւեց հայերին թողնւած հողերի վրա:

Հայ–թիւրքական սահմանը որոշւում էր հետեւեալ կերպով. «Դեւդիրեան լեռների գագաթներով անցնելով՝ սահմանագիծը փոխում է իր ուղղութիւնը դէպի հարաւ՝ անցնելով Ապրիքար, Բաչքերան, Նուռնահման լեռների գագաթներով: Նուռնահման գագաթից յետոյ շարունակւում է հարաւային ուղղութեամբ եւ անցնելով շարունակ գագաթների գծով՝ հանդիպում է Ալեքսանդրապոլ–Թիֆլիս երկաթուղուն Աղբուլաղ ւոանից հինգ կիլոմետր դէպի արեմուտք: Այստեղից գալիս է գագաթների գծով մինչ Յանւալի ւոանը, որտեղից դրեթէ ուղիղ գծով հասնում է մինչեւ Ալագեոզի ամենաբարձր գագաթը եւ հետեւելով, դարձեալ ուղիղ գծով, կտրում է էջմիածին–

Սարդարապատ խճուղին Էջմիածնից 7 կիլոմետր դէպի արեւմուտք դառնում կէտում: Ցետոյ, պատյտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածութեան վրա, շարունակում է զուգահեռական ուղղութեամբ Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղու գծին մօտ վեց կիլոմետր տարածութեան վրա այդ երկաթուղուց եւ 16 կիլոմետր դէպի հարաւ–արեւմուտք Բաշքեանդան աւանից՝ կտրում է այդ աւանից դէպի երկաթուղու գիծը դնացող ճանապարհը: Ցետոյ, շրջում է դէպի հարաւ–արեւելք, անցնում է Աչաղի–Կարաբաղլար դիւղից մի կիլոմետր դէպի արեւմուտք Շաղարլու, Ղարախաչ, Աչաղի–Զանախչի աւաններով եւ հասնում է մինչեւ Էլփինչայը, որով շարունակում է մինչեւ Արփա աւանը: Այս վերջին աւանից խառնւում է Արփաչայի հովտի հետ, հասնում է մինչեւ Կայալու աւանը եւ հետեւելով Կայիդ գետի ընթացքին՝ հասնում է մինչեւ Աղտարան լերան գագաթը. յետոյ անցնում է Ղարատարնա, Ալաջին, Ղարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչեւ Ռիլիանչայի իջնելը, հետեւում է նրա հովտին, մինչեւ որ հասնում է Աղա աւանից դէպի Հարաւ՝ ռուս–պարսկական նախկին սահմանագծի վրա դտնւող Ալիջին աւանը»:

Չորրորդ յօդւածով «Օսմ. կայսերական կառավարութիւնը պարտաւորւում էր դէնքի ուժով օդնութիւն հասցնել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ա՛յն դէպքում, երբ վերջինս կը խնդրէր նրան այդ մասին՝ երկրում կարգը եւ անդորրութիւն ապահովելու համար»:

Վեցերորդ յօդւածը տնօրինում էր Հայաստանում ապրող մահմետականների կրօնական եւ սովորոյթի խնդիրները. սուլթանի անունը պէտք է յիշւէր մահմետականների հասարակական աղօթքների մէջ:

Եօթներորդ յօդւածը վերաբերւում էր հիւպատոսական եւ առեւտրական համաձայնութիւնների կնքման:

Ութերորդ յօդւածում խօսւում էր երկաթուղային, իններորդում՝ պոստ–հեռագրական, իսկ տասներորդում՝ մի երկրի սահմանամերձ բնակիչների միւս երկիրն անցնելու իրաւունքների մասին:

Ցօդւած 11րդով «Հայկական Հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում էր դործ դնել իր բոլոր ջանքերը, որպէսզի սոյն պայմանները ստորագրելուց անմիջապէս յետոյ հեռացնի Բաքու քաղաքից այնտեղ դտնւող հայկական ուժերը եւ ապահովէ, որ այդ հեռացումը ո՛չ մի ընդհարման առիթ չտայ»:

12րդ յօդւածը չօչափում էր Բրեստ–Լիտովսկի դաշնագրից բղխող իրաւունքները:

13րդ յօդւածի համաձայն ներկայ պայմանագրի սահմաններից դուրս եղող եւ դրաւած հողերը պէտք է անմիջապէս պարպւէին:

Ըստ յաւելւածների, Թիւրքերն իրաւունք էին ստանում, պատերազմի դէպքում, Հայաստանի վրայով զօրք փոխադրել, Թիֆլիս–Երեւան–Ջուլֆա երկաթուղով ապահովւում էր ազատ երթեւեկութիւնը Թիւրքերի եւ հայերի համար, հայ գերի զինուորները իրաւունք պիտի ունենային վերադառնալու Հայաստան, Կարսի եւ Բաթումի շրջանների հայ գաղթականները կարող էին

մի ամսւայ ընթացքում վերադառնալ իրենց տեղերը, մինա վայրերի գաղթականները՝ դաշնագիրը ստորագրելուց անմիջապէս յետոյ, իսկ թիւրքահայերի վերադարձի խնդրի լուծումը յետաձգւում էր ընդհանուր պատերազմից յետոյ:

Այսպիսով, ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետութիւն: Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցութեան մէջ, իրրեւ ազատ անձնաւորութիւն միջազգային իրաւունքի: Նրա հողի տարածութիւնը, մօտաւորապէս, 12,000 քառակուսի կիլոմետր էր, բնակչութեան թիւը, գաղթականներով միասին՝ մօտ մէկ միլիոն: Եւ... մայրաքաղաքից եօթը կիլոմետր հեռու՝ երեւում էին թիւրքական թնդանօթները...

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ (*)

Հայաստանի Հանրապետութեան նախապատմութիւնը վերջացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել եւ Բագուի դէպքերի վրա, որոնք թէեւ Հայաստանի հետ անմիջական առընչութեան մէջ չէին գտնւում, բայց առաջին նշանակութիւն ունեցան նրա ճակատագրի համար. առանց Բագւի Հայաստանի դէպքերը կարող էին բոլորովին այլ ընթացքստանալ:

Թիֆլիսի Հ. Ազգային Խորհրդի օրինակով, 1917 թ. վերջերը, Բագւում էլ կազմւեց Ազգային Խորհուրդ, որի մէջ մտան Աբր. Գիւլխանդանեան, Խանասորի Վարդանը, Կ. Պարոնակեանը (դաշնակցականներ), Լեւոն Աթաբէգեանը (սոց.-յեղ.), Նար. Տէր-Ղազարեանը (ս.-դ.), Հայկ Տէր-Միքայէլեանը եւ Ս. Տէր-Ղազարեանը (ժողովրդականներ): Առաջին նիստում, դեկտ. 30-ին, նախագահ ընտրւեց Ա. Գիւլխանդանեանը, փոխ-նախագահ՝ Լ. Աթաբէգեանը: Ազգ. Խորհրդին, ձայնի իրաւունքով, մասնակցում էին նաեւ Ռոստոմը, Ց. Քաջազնունին եւ բժ. Իսախանեանը: Ազգ. Խորհուրդը գործադիր մարմին էր, որ ենթարկւում էր Ազգ. Ժողովին՝ բաղկացած կուսակցութիւնների 32 ներկայացուցիչներից: Ցետագային, Անդրկասպեան երկիրը մեկնած Կ. Պարոնակեանի տեղ անցաւ Ս. Արարատեանը, իսկ Լ. Աթաբէգեանին փոխարինեց Ց. Տէր-Օհանեանը եւ, իբրեւ փոխ-նախագահ, յաջորդեց Ն. Տէր-Ղազարեանը: Լ. Աթաբէգեանը Ազգ. Խորհրդի աշխատանքներին շարունակեց մասնակցել որպէս հրաւիրւած անդամ: Արեւմտահայերի կողմից Ազգ. Խորհրդի նիստերին, փոփոխակի, ներկայ էին լինում Ռ. Քաջբերունին եւ Ջ. Եսայեանը: 1918 թ. սեպտեմբերին Ազգ. Խորհրդի մէջ մտան եւ առաջնորդ Բագրատ եպ.-ը, Ստ. Թաղիանոսեանը, Աս. Վաչեանը եւ Աբր. Դաստակեանը:

Ազգային Խորհուրդներ ունէին եւ Բագւի միւս ժողովուրդները — մահ-

---

*) Այս գլուխը կազմելիս օգտւել եմ Աբր. Գիւլխանդանեանի «Բագուի Հերոսամարտ»ը փաստերով ու վաւերագրերով հարուստ աշխատութիւնից, որը, դժբախտաբար, դեռ մնում է չհրատարակւած: Աչքի առաջ եմ ունեցել նաեւ զօր. Գ. Ղորղանեանի եւ Բաշխի իշխանեանի ծանօթ գրքերը, ինչպէս նաեւ մի շարք անտիպ նիւթեր ու վաւերագրեր:

մեռականները, ռուսները, վրացիները եւայլն, որոնք բոլորն էլ, սկզբի չըբ-
ջանում, կատարում էին սահմանափակ դեր. իրական իշխանութիւնը պետա-
կան հիմնարկութիւնների եւ բանակային խորհրդի մէջ էր, ուր տիրող ոյժը
սոցիալիստ-յեղափոխականներն էին:

1918 թուի յունուարի կէսերին, Շամքորի արիւնոտ դէպքերից յետոյ, ընդհատուեց երկաթուղային կապը, եւ Բագուն կտրուեց Թիֆլիսից ու Ղարա-
բաղից: Բագու-Գանձակ ճանապարհը մնաց թուրքերի ձեռքը: Պատահաբար անցնող գնացքներով հայերը չէին կարող ճամբորդել. նրանց հանում էին վագոնից ու տեղն ու տեղը սպանում: Այդ պատճառով, Բագուում կուտակ-
ւում էին աւտորեւզեմանական ճակատից տուն վերադարձող հազարաւոր հայ զինուորներ, որոնք անպործ թափառում էին փողոցներում, չատ թշուառ վիճակի մէջ: Նրանց ղեկավարում էին Ղարաբաղից, Գանձակից եւ հայա-
բնակ ուրիշ վայրերից հասնող լուրերը հայ-թրքական ընդհարումների մա-
սին: Բագուում նրանք պայթուցիկ նիւթ էին, որ հեշտութեամբ կարող էին դործիք դառնալ բոլշեւիկ եւ ուրիշ անիշխանական տարրերի ձեռքին: Ուստի, Սպ. Խորհուրդը իր վրա առաւ նրանց հոգատարութիւնն ու կազմակերպու-
մը՝ նպատակ ունենալով պատրաստել կանոնաւոր զինուորական մասեր եւ ու-
ղարկել ռազմաճակատ:

Հայկական զօրամասերի կազմակերպման դործը յանձնուեց խմբապետ Համազասպին: Որոշուեց կազմել 1200 հոգինոց մի դումարտակ: Այս քայլը առաջ բերեց արտակարգ ոգեւորութիւն: Արձանագրուել ցանկացողների թիւը այնքան մեծ էր, որ չուտով առնղծուեց 3 դումարտակից բաղկացած 3000 հո-
գինոց մի զօրամաս, այսպէս կոչուած, Համազասպի բրիգադը: Բացի այդ, Սպ. Խորհուրդը կազմակերպեց 2րդ հայկական պահեստի դունդը գնդ. Ս. Եղիազարեանի հրամանատարութեան տակ: Այդ գնդի կարիքների համար, մեծ դժուարութեամբ, ստացուեց, ռուսական նախկին 279րդ գնդի պոյքերի մնացորդը: Զօրամասերի հագուստը, սարքաւորումը, ուտելիքը եւ այլն հայթայթում էր Սպ. Խորհուրդը:

Միաժամանակ, Բագուի Սպ. Խորհուրդը իր վրա առաւ հայկական ներ-
կայացուցչութեան դերը դաշնակիցների, Ռուսաստանի ու Պարսկաստանի նկատմամբ: Ապր. 20-ին նա Մոսկուա ուղարկեց Ստ. Զիլինդարեանին եւ Սիմ. Յակոբեանին՝ յանձնարարելով, որ առաջինը, Լիպ. Նազարեանի հետ միասին, յարաբերութեան մէջ մտնէ Բեռլինի հետ, իսկ երկրորդը աշխատէ Ռուսաստանում: Նպատակն էր՝ ապահովել խորհրդային իշխանութեան ա-
ջակցութիւնը՝ կազմակերպելու համար հայկական զօրամասերը, օժտելու նրանց նիւթական միջոցներով ու ռազմամթերքով, ճանաչել Սպ. Խորհրդի իրաւասութիւնը, ի հարկին, Թոյլ տալ անգլիացիների մուտքը Բագու եւ, առհասարակ, օժանդակել Կովկասի ինքնապաշտպանութեան դործին:

Խորհ. իշխանութիւնն ընդառաջ գնաց այս պիտումին. Ստալինը մի հրամանով արտօնեց հայերի զօրաշարժ կատարել եւ տուրք դնել հայ հա-
րուստների վրա. խոստացաւ ռազմամթերք եւ անպաշտօն կերպով համաձայ-
նութիւն տուեց, որ անգլիացիները մտնեն Բագու: Սակայն, քիչ յետոյ, այս

բարեացակամ վերաբերումը փոխուեց, եւ յունիսին արդէն, նոյն Ստալինը, Լենինի անունից, հեռագրում էր Շահումեանին, որ Խորհրդ. Ռուսաստանի սահմանները պէտք է հասնեն մինչեւ Գանճակ եւ Բազուն պաշտպանուի թիւրքերի արշաւից եւ որ, պարտութեան դէպքում, բոլշեւիկները պէտք է այրեն հանքերն ու հեռանան*):

Բազի Ազգ. Խորհրդի հիմնական նպատակներից մէկն էլ հայ-թրքական յարաբերութիւնների բարւոքումն էր: Ճակատից փախչող ռուս զօրամասերի ու ռուս զաղթականների վրա գործուած յարձակումներին զուգընթաց՝ թուրքերը ասպատակում ու աւերում էին եւ հայկական շրջանները, թալանում, կոտորում ու գերում հայերին: Դեկտեմբերին աւերի ու աւարի մատնեցին մի շարք հայաբնակ վիլայեր Նուխիի ու Շամախիի գաւառներում: Յուն. 2-ին սպանեցին Գանճակի թրքական մասից անցնող 14 հայեր: Ընդհարումներ տեղի ունեցան եւ ուրիշ վայրերում: Շատ շրջաններում ճանապարհները փակուեցին, եւ հայերը զրկուեցին շարժուելու հնարաւորութիւնից: Մթնոլորտը օրէցօր ելեկտրականանում էր:

Ազգ. Խորհուրդը, մի շարք խորհրդակցութիւններից յետոյ, որոշեց բանակցութիւնների մէջ մտնել Մահմետական Ազգ. Խորհրդի հետ: Այդ նպատակով ընտրուեց 6 հոգինոց յանձնախումբ — Ց. Քաջազնունի, Ա. Չիլինգարեան, Հ. Տէր-Միքայէլեան, Ս. Տէր-Ղազարեան, Լ. Աթարէկեան եւ Տ. Իսահակեան — եւ յանձնարարուեց սկսել բանակցութիւնները:

Յուն. 15-ին գումարուեց Հայ եւ Մահմ. Ազգ. Խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցական առաջին նիստը: Թուրքերի կողմից մասնակցում էին Մահմ. Ազգ. Խորհրդի նախագահ Ալի Մարդան բէգ Թովչիբաշեանը, Մահմետ Հասան Գաջինակին, Ռեհրութ խան Զիւանշիրը, Իբրահիմ բէգ Հայդարովը, Ա. Ի. Վեզիրովը եւ Բ. Ա. Բաբայեւը: Մի շարք նիստերում քննութեան առնուեցին հետեւեալ խնդիրները. ընդհանուր՝ 1) Վերաբերում

---

*) Առաջ բերնիմ այստեղ այդ ուշագրաւ գրութեան էական մասերը: Նամակը գրած է Ցարիցինից, օգ. 8-ին եւ ուղղուած է Շահումեանին: Ստալինը գրում էր. «...Մեր ընդհանուր քաղաքականութիւնը Անդրկովկասի խնդրում այն է, որ ամրապնդ ենք դերմանացիներին պաշտօնապէս ճանաչել, որ վրացական, հայկական եւ ազրբէջանական հարցերը Ռուսաստանի համար ներքին հարցեր են, որոնց լուծմանը դերմանացիները չպէտք է մասնակցեն: Հենց այդ պատճառով մենք չենք ճանաչում Վրաստանի անկախութիւնը, որ ճանաչուած է դերմանացիների կողմից:

2. Հնարաւոր է, որ մենք ստիպուենք զիջելու դերմանացիներին Վրաստանի հարցում, բայց այդ զիջումը կանենք միայն ա՛յն պայմանով, որ Գերմանիան չխառնուի Հայաստանի եւ Ազրբէջանի գործերին:

4. Ձեր յայտարարութիւնները ուրախացնում են մեզ, բայց մենք կը կամենայինք, որ, դերմանացիների հետ բարդութիւններ ունենալուց խուսափելու համար, դուք Գանճակից աւելի հեռու չգնաք, այսինքն՝ չմտնէք Վրաստանի սահմանները, որի անկախութիւնը պաշտօնապէս ճանաչուած է Գերմանիայի կողմից»:

Եւ աւելի այժ տալու համար իր խօսքերին, Ստալինը աւելացնում է. «Այս ամբողջ մտածը ընդունեցէք ո՛չ իբրեւ իմ անձնական կարծիք, այլ որպէս առաջարկ Լենինից, որի հետ երէկ խօսեցի ուղիղ հեռագրաթելով բոլոր չօշափուած հարցերի մասին» (С. Шаумян, «Статьи и речи», 1924, Баку, стр. 224—5):

դէպի ռուս կառավարութիւնը, 2) Անդրկովկասի ապագայ քաղաքական կազմը, 3) Բաղմաճակատի հարցը եւ պատերազմը վերջացնելու միջոցները, 4) Կովկասի վարչական բաժանումը: Տեղական՝ 1) Բաքւի իշխանութեան կազմակերպումը, 2) Երկաթուղու եւ միւս ճանապարհների բացումը, 3) Գաւառների անիշխանութիւնը: Եւայլն:

Նիստերի ժամանակ պարզուեց, որ կողմերը շատ են հեռու իրարից եւ ընդհանուր լեզու չունեն. նրանց բաժանում էին եւ ազգային ներհակ ձգտումները, եւ տարբեր վերաբերումը դէպի պատերազմը, դէպի Թիւրքիան ու Թուրաստանը, եւ փոխադարձ անվստահութիւնը: Խորհրդակցութիւններն ընդհանուր արդիւնք չտուին: Եւ որովհետեւ չուտով բացւելու էր Անդրկ. Սէյմը եւ խորհրդակցութեան մասնակցող մահմեդական ներկայացուցիչներն էլ Սէյմի անդամներ էին ու պիտի մեկնէին, վճռուեց այդ բոլոր հարցերի քննութիւնը տեղափոխել Թիֆլիս: Միակ գործնական օգուտը եղաւ այն, որ որոշուեց մի քանի խառն պատւիրակութիւններ ուղարկել Գանձակ, Նուխի, Ղաչմազ, որոնք մի պահ մեղմացրին սրւած դրութիւնը, բայց, կարճ ժամանակից յետոյ, կրքերը բռնկուեցին աւելի սուր մոլեգնութեամբ:

Հետապնդելով հանդերձ հաշտասէր ու բարեկամական վերաբերում Թուրքերի նկատմամբ՝ Ազգ. Խորհուրդը ձեռնարկեց շրջանների ինքնապաշտպանութեան կազմակերպման գործին: Այդ նպատակով զէնք ու ռազմամթերք էր հայթայթւում, հայարնակ վայրերին հրահանգիչներ ու մարտական ղեկավարներ էին տրւում, կազմակերպւում ու մարզւում էին զէնքի ընդունակ ուժերը: Հիմնական նպատակն էր՝ որեւէ բախումի տեղիք չտալ եւ Թուրքերի զործած յարձակման դէպքում պաշտպանւել:

Միեւնոյն ժամանակ, Ազգ. Խորհուրդը ճիգ էր թափում բանակցութիւնների՝ Բաքւում հաւաքւած զօրամասերը ռազմաճակատ ուղարկելու նպատակով, բայց այս ուղղութեամբ կատարւած բոլոր քայլերը անցան ապարդիւն: Ապր. 13–ին Ազգ. Խորհուրդը վերջին անգամ եւս փորձեց Պարսկաստանի ճակատից եկած 500 հայ եւ վրացի զինուորներին ուղարկել Թիֆլիս: Ալեաթ կայարանից հայերը յետ դարձուեցին. Թուրքերը ճանապարհ տւին միայն վրացիներին...

Այդ առթիւ, Ազգ. Խորհուրդը մի անգամ էլ դիմեց Մահմ. Ազգ. Խորհրդին՝ բացատրելով, թէ ի՞նչ վտանգ է սպառնում մեծաքանակ զինուորների խռնելը Բաքւում: Այս դիմումն էլ մնաց անհետեւանք: Նոյն հարցով դիմում արւեց եւ Սէյմին—արդիւնքը եղաւ նոյնը: Ազգ. Խորհուրդը զգում էր, որ հազարաւոր հայրենաբաղձ հայ զինուորների արդելափակումը Բաքւում կարող է տալ աղէտաւոր հետեւանքներ հէնց Բաքւի համար, գերմարդկային ոյժ էր թափում այդ զինուորներին հեռացնելու համար, բայց չէր յաջողում: Այդ պայմաններում, զինուորների ներկայութիւնը Բաքւում նպաստաւոր կարող էր լինել միայն բոլշեւիկներին. Թուրքերը կուրօրէն բռնութք էին պատրաստում հէնց իրենց գլխի համար: Նրանց հաշիւն էլ, սակայն, այն էր, որ թոյլ չտան մի քանի հազար հայ զինուորների մեկնումը ռազմաճակատ՝ Թիւրքերի դէմ:

Ի տես այս անտանելի կացութեան եւ ճակատից հասնող աննպաստ



Ա. ՖԻԼԼԱՆՊԱՆԵԱՆ



Պ. ՇԱՀՈՒՆԵԱՆ



ԹՈՍՏՈՄ



Մ. ՅԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ



ՄՈՒՐԱՏ

լուրերի, մարտ 3–ի նիստում, Ռոստոմը Ազգ. Ժողովի առջեւ դրեց հետեւեալ խնդիրները.— ի նկատի ունենալով, որ մեր դրութիւնը օրէցօր ծանրանում է, որ թուրքերը խաղում են մեզ հետ եւ աշխատում ժամանակ չտալ, անհրաժեշտ է կանխել եւ նախաձեռնութիւնը առնել մեր ձեռքը: Այդ նպատակով հարկաւոր է. 1) անել ընդհանուր զօրակոչ մինչեւ 45 տարեկանները, 2) կարուկ քայլերով ապահովել զրամական միջոցները, 3) ռազմաճակատ ուղարկել մեր ուժերի մեծ մասը, 4) ապահովել թիկունքը՝ մեր ձեռքն առնելով իշխանութիւնը Բագուում եւ Գանձակում, որոնք գլխաւոր բանալիներն են եւ ամենակարեւոր կէտերը թիկունքի:

Ազգ. Ժողովը, հանդամանօրէն քննելով ստեղծած դրութիւնը եւ թուրքերի բացայայտ թշնամական դիրքը՝ ընդառաջ գնաց դրած հարցերին, յայտարարեց զօրաշարժ եւ մարտ 5–ին ընտրեց գերագոյն զինուորական մարմին՝ բաղկացած Վարդանից, դնդ. Բախտամեանից եւ գնդ. Ղազարեանից, որոնց դերն էր լինելու վարել տեղական ինքնապաշտպանութիւնը, զինուորական ուժերի մարզանքը, դեկավարութիւնն ու փոխադրութիւնը ուրիշ վայրեր: Լուրջ մտահոգւած ժողովրդի ապահովութեան հարցով՝ Ազգ. Ժողովը աշխատում էր պատրաստ լինել ամէն անակնկալի առջեւ. նա տեսնում էր, որ թուրքերը օրէցօր զառնում են սանձարձակ: Փաստեր ունէր իր ձեռքին, որ Թիֆլիսում կայացել էր Թուրք–վրացական դաշտնի համաձայնութիւն, եւ վրացիները օգնում էին թուրքերին:

Բագուի հայերի համար անվիճելի էր, որ վրացիներն ու թուրքերը Թիֆլիսում գործում էին համերաշխ եւ, հակաբոլշեւիկեան պայքարի անունով, նեղ ազգային շահեր էին հետապնդում: Այս հաստատում էր եւ մուսաւաթականների գործունէութիւնը Բագուում ու գաւառներում, ուր մի կողմից նրանք ձգտում էին դրաւել իշխանութիւնը, միւս կողմից՝ քար ու քանդ անել հայկական շրջանները: Այսպէս, փետրուարին կոտորեցին Արէշի 4 հայաբնակ գիւղերը, տեղահանեց Ղաշմազի եւ Լենքորանի հայ բնակչութիւնը, ճգնաժամային դարձաւ Ղուբայի հայութեան վիճակը: Մարտին թուրքերը աւերեցին Շամախիի հայկական թաղը եւ 20–25 հայ գիւղեր, որոնց մօտ 25,000 մերկ ու անօթի բնակիչները թափուեցին Մաղրա եւ միւս ռուսական գիւղերը: Շամախիի եւ Գեօքչայի հայ ազգաբնակութիւնը բոլորովին կտրուեց արտաքին աշխարհից:

Այս առթիւ Ազգ. Ժողովը բազմաթիւ դիմումներ արաւ Մահմ. Ազգ. Ժողովին եւ Մուսաւաթին, բայց ի զուր: Մուսաւաթը իր ծրագիրներն էր առաջ քշում եւ սուր ընդհարման մէջ էր բանւորական խորհրդի հետ, ուր, Սէյմի գումարումից յետոյ, ազդեցութիւնը բոլորովին անցել էր բոլշեւիկների, յատկապէս, Շահումեանի եւ Ջափարիձէի ձեռքը: Մուսաւաթը, յենւած «վայրի դիվիզիա»յի վրա, մեղադրում էր բանւ. խորհրդին ռուսական վերապետական ձգտումների մէջ, աշխատում էր քշել «եկւորներին» եւ պահանջում էր, որ իշխանութիւնը յանձնւի «տեղական տարրին», այսինքն՝ թուրքերին: Իր հերթին, բանւ. խորհուրդը մուսաւաթականներին ամբաստանում էր բէգ–կալւածատիրական, բուրժուական, հակայեղափոխական եւ

համիսլամական մեղքերի մէջ։ Կրքերը լարուեցին ծայր աստիճանի ու բախումը զարձաւ անխուսափելի։ Փոթորիկը պայթեց մարտին։

Առիթը մի հասարակ դէպք էր։ Թրքական «վայրի դիվիզիայի» զինուորների 120 հոգինոց զինուած մի խումբ եկել էր Բազու թուրք մելիոնատէր եւ յայտնի բարեգործ Թաղիեւի զինուոր որդու յուղարկաւորութեանը մասնակցելու։ Յուղարկաւորութիւնից յետոյ խումբը նաւով վերադառնում էր Լենքորան։ Բանւ. խորհուրդը բռնութեամբ զինաթափ արաւ նրան, որի առիթով, մարտ 17–ին, սկսուեցին արիւնահեղ ընդհարումներ։ Հայոց Ազգ. Խորհուրդը այդ դէպքերի ժամանակ մնաց բացարձակապէս չէզոք եւ աշխատեց հանդցնել աւերիչ հրդեհը՝ միջնորդ հանդիսանալով կուռղ կողմերի միջեւ։

Դէպքերը, սակայն, տարերային մղումով կուի մէջ մտցրին որոշ հայ զօրամասեր, որոնք Բանւ. Խորհրդի կողմից ուղղուեցին մուսաւաթական զինուած խմբերի դէմ։ Դէպքերը դասաւորուած էին այնպէս, որ կա՛մ Բանւ. Խորհուրդը պէտք է յաղթէր, կամ Մուսաւաթը։ Վերջինս չարժուում էր թիւրք գործակալների ծրագրով եւ անմիջական աջակցութեամբ, որով Մուսաւաթի յաղթանակը պիտի նշանակէր Թիւրքիայի, այսինքն՝ հակայեղափոխութեան յաղթանակ։ Եւ հասկանալի է, որ Մուսաւաթի դէմ մղուած պայքարում միանդամայն զիտակցօրէն համերաշխ էին բոլոր կուսակցութիւնները։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, սակայն, հաշւի առնելով հայ–թրքական յարաբերութիւնների փափուկ խնդիրը, գործօն մասնակցութիւն չունէր այդ պայքարում, իսկ Հ. Ազգ. Խորհուրդը ջանք չէր խնայում խաղաղութեան հաստատման համար։

Առանց մանելու մարտեան արիւնոտ դէպքերի մանրամասնութիւնների մէջ, առաջ բերենք մի քանի քաղուածքներ Հ. Ազգ. Խորհրդի ա՛յն օրերի նիստերի արձանագրութիւններից, որոնք բաւարար յստակութեամբ պատկերացնում են թէ ընդհարումների բնոյթը եւ թէ Հ. Ազգ. Խորհրդի քաղաքականութիւնն ու խաղացած դերը։

«Մարտ 17–ի երեկոյեան ժամը 8–ին սկսուեց հրացանաձգութիւն, «վայրի դիվիզիա»–յի զինուորների եւ «կարմիր գւարդիա»–յի միջեւ։ Այդ առթիւ Ազգ. Խորհուրդն իր արտակարգ նիստն ունեցաւ եւ որոշեց միջամտել՝ դադարեցնելու համար արիւնահեղութիւնը։ Ստեղծուած բախումը լուծելու համար որոշեց առաջարկել հակամարտ կողմերին հետեւեալը. «վայրի դիվիզիա»–յի զինուորները յանձնում են իրենց զէնքերը թուրք ընկերվարական կուսակցութիւններին, իսկ Բանւ. եւ Զինւ. Խորհուրդը հրաժարւում է «վայրի դիվիզիա»–յի զէնքերը դրաւելու ցանկութիւնից։ Յանձնարարուեց բժ. Լ. Աթաբէկեանին գնալ Զինւ.–Յեղափոխական կոմիտէն եւ յայտնել Ազգ. Խորհրդի որոշումը։

«Բացի այդ, Ազգ. Խորհուրդը որոշեց յանձնարարել բժ. Լ. Աթաբէկեանին յայտնելու, որ կուռղ կողմերից ո՛չ մէկը չի կարող յոյս ունենալ Հայոց Ազգ. Խորհրդի գործօն աջակցութեան վրա, որովհետեւ մեր խորհուրդը դէմ է որեւէ ընդհարումի եւ կամենում է, որ փոխադարձ իրաւախոհութեամբ լուծւի դժւարութիւնը»։

«Ազգ. Խորհրդի մարտ 19-ի նիստում զեկուցւում է գիշերւայ դէպքերի մասին. բախումը թէեւ յաջողւեց երէկ հարթել Թուրքերի զիջումով, բայց այսօր մեծ խլրտում կայ Թուրքերի մէջ. քաղաքի զանազան մասերում Թուրքերը կազմակերպել են միտինգներ, որոնց հանած բանաձեւերը բնաւ հաշտարար չեն: Թուրքերը վերջնագիր են ներկայացրել Զինւ.-Ցեղափ. Մարմնին՝ պահանջելով յետ տալ գրաււած զէնքերը: Դրութիւնը շատ լուրջ է, եւ ընդհարումը անխուսափելի է թւում, եթէ ձեռք չառնւեն արտակարգ միջոցներ»:

«Ազգ. Խորհուրդը երկար քննութիւնից յետոյ որոշեց. 1) Ձեռք առնել բոլոր միջոցները, որ ընդհարում տեղի չունենայ՝ ազդելով երկու կողմերի վրա: 2) Եթէ անհնար եղաւ ընդհարման առաջն առնել, ձեռք առնել բոլոր ինքնապաշտպանողական միջոցները, որ հայ ազգաբնակութիւնը ընդհարման ժամանակ չտուժէ:

Երեկոյեան դէմ, ժամը 6-ին, չնայած ձեռք առնւած բոլոր միջոցների, սկսւեց հրացանաձգութիւն: Կռիւը սկսողը եղան Թուրքերը Շեմախինկայում*), ուր յարձակւում գործեցին կարմիր գւարդիայի մի խմբի վրա: Այդ ազդանշան եղաւ կռւի՝ ամբողջ քաղաքում: Շուտով սկսեցին կրակել եւ թնդանօթները նաւերից: Նկատի ունենալով, որ սկսւած արիւնահեղ կռիւը անխուսափելիօրէն կարող է աղէտաւոր հետեւանքներ ունենալ ամբողջ քաղաքի համար, Խորհուրդը իր արտակարգ նիստում որոշեց մի անգամ եւս միջամտել՝ ազդելու համար երկու կողմերի վրա, որ դադարեցնեն կռիւը:

Որոշւեց յանձնարարել նախագահին (Ա. Գիւլխանդանեան), Ս. Արաբատեանին եւ Ն. Տէր-Ղազարեանին՝ անմիջապէս խօսելու այդ նպատակով Զինւ.-Ցեղափ. Կոմիտէի հետ, իսկ բժ. Լ. Աթաբէգեանին, Տ. Իսախանեանին, Հ. Տէր-Միքայէլեանին եւ Ա. Զիլինգարեանին խօսել Թուրքական կոմիտէի հետ»:

«Յաջորդ (մարտ 20-ի) նիստում զեկուցւում են ընտրւած երկու պատւիրակութիւնները իրենց առաքելութեան անյաջողութեան մասին: Պարզւում է արդէն, որ Ցեղափ. Կոմիտէի զօրքերը ամբողջ գծի վրա առաջ են շարժւում, եւ Թուրքերը նահանջում են սարսափահար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքում հաւաքւած շատ հայ անկազմակերպ զինւորներ եւ մասամբ Ազգ. Խորհրդին ենթակայ որոշ հայ զինւորներ տարերային կերպով մղում ունեն մասնակցելու կռւին, որոշեց ամենակտրուկ միջոցները ձեռք առնել, որ Ազգ. Խորհրդին ենթակայ ո՛չ մի զինւոր չմասնակցի կռւին, եւ բոլոր հայկական զօրամասերը մնան ինքնապաշտպանողական դերի մէջ:

2) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կռւի ժամանակ բազմաթիւ անմեղ Թուրքեր ենթարկւում են յարձակման եւ որ այդ կատարւում է հայկական թաղամասում, յաճախ, հայ զինւորների կողմից, որոշեց կտրուկ միջոցներ ձեռք առնել հայ թաղամասերում ապրող կամ ապաստանած Թուրքերին Խորհրդի հովանաւորութեան տակ առնելու: Այդ նպատակով

*) Բագուի թրքական մէկ թաղը:

որոշեց նշանակել Գ. Անանունին ընդհանուր հոգաբարձու եւ լիազօրութիւն տալ նրան հաւաքելու թուրքերին որոշ ապահով տեղերում ու խնամել նրանց, մինչեւ որ վտանգը կը վերանայ, որից յետոյ բոլորն էլ կը փոխադրուեն թուրքական մասը: Այդ նպատակով պէտք եղած դինուորական ուժը Ազգ. Խորհուրդը որոշեց տրամադրել հոգաբարձուին: Եթէ պատսպարուած թուրքերի վրա որեւէ յարձակում լինի, որոշուեց դիմել ծայրայեղ միջոցների՝ կանգ չառնելով նոյնիսկ զէնքի գործածութեան առաջ»:

«Ցերեկուայ ժամը 3–ին թուրքերը ընդունեցին Զինւ.–Ցեղափ. կոմիտէի վերջնագիրը: Հաշտութեան նպաստելու համար որոշուեց յանձնարարել Ս. Արարատեանին գնալ Զինւ.–Ցեղափ. կոմիտէ, ներկայ լինել հաշտութեան կնքման ժամանակ եւ հարկ եղած աջակցութիւնը ցոյց տալ հաշտութեան գործը դիւրացնելու համար: Որոշուեց տալ Արարատեանին լիազօրութիւն, եթէ պէտք լինէր, յայտնելու, որ Հայոց Ազգ. Խորհրդի Բագուի մասնաճիւղն եւս պատրաստ է ընդունել թուրքերին ներկայացուած վերջնագրի այն կէտը, որ վերաբերւում է ազգային զօրամասերին»:

«Խորհուրդը երկարօրէն զբաղուեց հրացանաձգութիւնը, թալանը եւ կոտորածը կանգնեցնելու խնդրով: Չնայած հաշտութեան կնքման եւ յայտարարման, հրացանաձգութիւնը շարունակւում է եւ թալանը ստանում ահաւոր չափեր: Դրութիւնը չափազանց վտանգաւոր կերպարանք կը ստանայ, եթէ Խորհուրդը գործ չդնի հերոսական ջանքեր՝ թալանի եւ հրացանաձգութեան առաջն առնելու համար: Որոշուեց հրացանաղարկ անել այն բոլոր դինուորներին, որոնք, հակառակ բոլոր նախազգուշացումներին, կը շարունակեն զբաղուել թալանով կամ հրացանաձգութեամբ: Որոշուեց կուին վերջ դնելու համար յանձնարարել նախագահին եւ Համազասպին գնալու առաջաւոր դիրքերը եւ անմիջապէս ազդելու դինուորների վրա, որ դադարեցնեն կրակը, եթէ նոյնիսկ թուրքերի կողմից հատ ու կենտ հրացանաձգութիւն լինի: Որոշուեց հրատարակել մի կոչ, որով Ազգ. Խորհուրդը հրաւիրում էր հայ թաղամասերում ապրող բոլոր քաղաքացիներին ամենախիստ կարգապահութեան՝ ըստանալով ամենածանր պատասխանատուութեան ենթարկել զանցառուներին: Որոշուեց կարգը պահպանելու համար քաղաքի հայկական մասի վրա նշանակել մի ընդհանուր հսկիչ, այդ պաշտօնը յանձնուեց Լ. Քալանթարեանին, իսկ վերջինիս հրաժարուելուց յետոյ՝ Գ. Բալայեանին: Այդ նպատակով նշանակուեցին հայկական բոլոր թաղամասերի վրա եւս յատուկ հսկիչներ»:

Բագուի Ազգ. Խորհրդի նախագահը եւ Համազասպը ամբողջ գիշերը զբաղուած էին Խորհրդի որոշումներն իրագործելով — դադարեցնել անիշխանութիւնը, կռիւը եւ հրդեհը: Ի մի կենտրոնացուեցին Բագուում գտնուած Հ. Ց. Դաշնակցութեան լաւագոյն մարտիկները՝ թուով մի քանի հարիւր հոգի. Համազասպի զօրամասից առնուեցին մի քանի վստահելի եւ կարգապահութեան ենթարկուած վաշտեր: Գիշերը ժամը 4–ին այդ զօրամասերը բռնելու էին այն տեղամասերը, ուր կռիւ էր տեղի ունենում խորհրդային իշխանութեան եւ Մուսաւաթի միջեւ: Այդ զօրքերը թոյլ չպիտի տային զինուած մարդկանց մի մասից միւսը անցնելու. Թրքական մասից եղած հրացանաձգութեան չպիտի պատասխանէր:

Այդպէս, էր արւեց: Հայկական զօրամասերը բռնեցին դիրքեր կռւող երկու կողմերի միջեւ: Այս դրութիւնը տեւեց գիշերւայ ժամը 4–ից մինչեւ 21 մարտի ցերեկւայ ժամը 12–ը:

Երբ երկու կողմերը վերջ տւին հրացանաձգութեան, Թրքական մասը ամբողջապէս ծածկւած էր ծխով. աստիճանաբար սկսեցին դուրս գալ կանայք, երեխաներ, երիտասարդներ, պառաւներ՝ իւրաքանչիւրը ձեռքին բռնած փայտի կտոր՝ վրան սպիտակ լաթ՝ ի նշան հաշտութեան: Այսպիսով, Թրքական համարեա ամբողջ մասը դուրս եկաւ եւ յայտնեց իր հնազանդութիւնը: Հայ զինւորները չարժւեցին նրանց ընդառաջ, խառնւեցին իրար, եւ մի օր առաջւայ հրացանաձգութեան տեղ այժմ լսւում էր լաց ու հառաչ, արցունք ու համբոյր:

Այսպիսով, վերջ դտաւ մի քանի օր տեւող մղձաւանջը, եւ քաղաքը խաղաղեց:

Այս կռիւներում, Թուրքերի գնդակով, սպանւեց Լ. Աթաբէգեանը, որ, իբրեւ անդամ Ազգ. Ժողովրդի պատւիրակութեան, գնում էր Թրքական Թաղը՝ բանակցելու համար: Լ. Աթաբէգեանի մահով Բագուի Բանւորական Ժողովուրդը եւ Հ. Ազգ. Ժողովուրդը կորցնում էին իրենց ամենաճեռնհաս ու գործօն անդամներից մէկին:

Մարտեան դէպքերի առթիւ Հ. Ազգ. Ժողովուրդը հրատարակեց մի ընդարձակ հաղորդագրութիւն, որի մէջ տալիս էր դէպքերի մանրամասն նկարագրութիւնը:

Այս հաղորդագրութիւնից երեւում էր, որ Ազգ. Ժողովուրդը ազատեց բազմաթիւ մահմեդականներ, որոնց պահեց մի քանի օր, կերակրեց եւ ապահով վերադարձրեց իրենց տները: Այդ մահմեդականները դեռեղւած էին հեռաւոր վայրերում. Մայիլեանների Թատրոնում՝ 3500 հոգի, որոնցից 70 պարսկահպատակներ. Ռևկորդ Թատրոնում՝ 2690, Ռամզէյ Թատրոնում՝ 579, Եֆիմովի կրկէս–Թատրոնում՝ 800, Վոկզալնայա եւ Տելեֆոննայա փողոցի անկիւնի տանը՝ 58, Բուդագեանի դպրոցի շէնքում՝ 218, Միրոնովի բաղնիքում՝ 306, Մոսկովեան բաղնիքում՝ 263, ութերորդ միլիցիատանը՝ 117, ինններորդ միլիցիատանը՝ 72, Մալայա–Մորսկայա փողոցի N° 15 տանը՝ 95, երրորդ Գիմնազիայում՝ 201, Հայոց Կուլտուրական Միութեան տանը՝ 18, քաղաքային սայլանոցում՝ 2530, իններորդ միլիցիատանը՝ 200, Հայկաւանում՝ 79 — ընդամենը 11,726 հոգի: Մօտ 1500 մարդ էլ ապաստանել էր հայերի մասնաւոր տներում: Առհասարակ, Բագուի հայութիւնը ցոյց տւեց արտակարգ հոգատարութիւն: Նա, կարելի է ասել, փրկեց Բագուի Թուրքերի ամբողջ մտաւորականութիւնը: Եւ... վարձատրութիւնը ստացաւ վեց ամիս յետոյ, սեպտեմբերեան օրերին:

Մուսաւաթի ողնաշարը ջարդելուց յետոյ, Բանւ. Ժողովուրդը ձեռք առաւ եւ գլուխ Թիւրք–մուսաւաթական դաւերի ամենահարման գործը: Մարտ 27–ին Շամախի ուղարկեց մի զօրամաս Թագ. Ամիրեանի գլխաւորութեամբ, որի երեւալը հիմնովին փոխեց դրութիւնը Շամախիում: Ամիրեանը զսպեց քաղաքի Թուրքերին. կռւի ժամանակ հիմքից այրւեց Թրքական Թաղը:

Հայ գաղթականները վերադարձան իրենց տեղերը, իսկ Թուրքերը հեռացան: Խաղաղեց նաեւ Գէօքչայի գաւառը, որտեղի Բրքուքիւնը նոյնպէս հեռացաւ:

Մարտի դէպքերի վրա, Բագուն գրաւելու փորձեր արին եւ լեռնականները, որոնք փետրուարից սկսած՝ կտրել էին Բագու—Պետրովսկ երկաթուղին եւ առատ զէնք ու ռազմամթերք խլելով վերադարձող ռուս զօրամասերից՝ անվերջ յարձակումներ էին գործում իրենց չրջապատի վրա: Մարտ 21ին նրանց դինուած խմբերը հասան մինչեւ Բալաջարի, իսկ նրանց պետ Իմամ Գոճինսկին Պետրովսկից ուած հեռագրներով սպառնում էր պատժել հայերին: Ապրիլի սկզբներին, սակայն, հայկական զօրամասերը ջարդեցին ու քշեցին նրանց խմբերը: Այս յաջողութիւնը խիստ բարձրացրեց հայ զինուորների մարտական ոգին:

Ազգային Խորհուրդը որոշեց համախմբել ու կազմակերպել բոլոր հայ զօրամասերը, ենթարկել նրանց մէկ հրամանատարութեան եւ այդ որոշումը իրագործելու համար յարաբերութեան մէջ մտաւ Զինւ.—Ցեղափ. կոմիտէի հետ, սակայն, մարտի յաջողութիւններից արբեցած՝ բոլշեւիկներն արդէն այնքան էին երես առել, որ մտածում էին Ազգ. Խորհուրդն ու Հ. Ց. Դաշնակցութիւնն էլ մէջտեղից վերացնելու մասին: Ի պատասխան Ազգ. Խորհրդի դիմումի, Զինւ.—Ցեղափ. կոմիտէն, ապր. 8–ին յայտարարեց բոլոր ազգային զօրամասերը եւ հայկական Ազգ. Խորհուրդը լուծուած: Վերջինս մերժեց ենթարկուել այդ կարգադրութեան, բայց, ի վերջոյ, ստիպուած եղաւ տեղի տալ, եւ ապր. 14–ին Զինւ.—Ցեղ. կոմիտէի ու Ազգ. Խորհրդի միջեւ ստորագրուեց մի համաձայնութիւն, որով՝

«1. Հայկական 2րդ ազգ. հետեւակ գունդը կազմալուծւում է. նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակների մէջ, իսկ մնացածը Խորհրդի կարմիր գումարտակների մէջ.

2. Համազասպի գումարտակները վերակազմւում են՝ ամբողջովին ենթարկուելով Խորհրդի իշխանութեան եւ մտնում են կարմիր բանակի մէջ «16րդ եւ 17րդ գումարտակներ» անուան տակ.

3. 16րդ եւ 17րդ գումարտակների հրամանատար է նշանակւում Համազասպը, իսկ օգնական՝ Սերգօ Մանուչարեանը...

4. Համազասպի գումարտակները նպատակ ունեն մօտիկ ապագայում գործողութիւններ սկսելու արեւմտեան ուղղութեամբ, այսինքն՝ Դէպի Գանձակ—Երեւան»:

Համաձայնագիրը ստորագրեցին Ս. Շահումեանը, Մ. Կորկոնեանը, Ա. Գիւլխանդանեանը, Ն. Տէր–Ղազարեանը եւ Ց. Տէր–Օհանեանը:

Այսպիսով, հայկական զօրամասերը ապր. 14–ից անցան բոլշեւիկների ձեռքը: Նրանց թիւը հասնում էր 10–12 հազարի, 50–ի չափ թնդանօթներով: Նրանց մէջ էին հաշւում եւ Հ. Ց. Դաշնակցութեան ու սոց.–յեղափոխական մարտական խմբերը, որոնք փաստօրէն գտնւում էին այդ կուսակցութիւնների ղեկավար մարմինների ձեռքին եւ հրապարակ էին բերում միայն արտակարգ դէպքերում: Դաշնակցական զօրամասը բաղկացած էր 6—700 ընտիր

մարտիկներից՝ Գ. Բալայեանի հրամանատարութեան տակ:

Ապր. 25ին իշխանութիւնը վերջնականապէս անցաւ բոլշեւիկներին: Այդ օր բանւորական, զինւորական եւ նաւաստիական խորհուրդների համագումարը կազմեց Բագուի ժողովրդական Գործավարների Խորհուրդ՝ Ստ. Շահումեանի նախագահութեամբ: Միւս կուսակցութիւններն ու ազգային խորհուրդները յետ մղուեցին, թէեւ, անուղղակի կերպով, Հ. Ազգային Խորհուրդը չարունակում էր ազդեցութիւն ունենալ գործերի եւ հայկական զօրամասերի վրա: Առհասարակ, զօրքի կազմն ու զեկավարութիւնը հիմնական փոփոխութեան չենթարկուեց. զինւորական գործավար եւ ընդհանուր հրամանատար էր բոլշեւիկ Ղորղանեանը, նրա սպայակոյտի պետ՝ դնդ. Աւետիսեանը, հայկական զօրամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ դնդ. Ղազարեանը, բանակի մատակարարման մասի վարիչ՝ Մ. Տէր-Պօղոսեանը եւայլն:

Հայկական զօրամասերի վրա ձեռք դնելուց յետոյ, բոլշեւիկները ձեռնարկեցին զինւորական ուժերի վերակազմութեան ու լրացման: Բայց այդ միջոցին հանդիսա նատած չէր եւ թշնամին: Նաւրի փաշան Գանձակում կազմակերպում էր հռչակաւոր «իսլամական բանակը»՝ թիւրք սպաների զեկավարութեան տակ՝ նպատակ ունենալով դրաւել Բագուն եւ առաջանալ դէպի հիւսիս ու արեւելք: Յունիսի սկզբներին Գանձակ հասան եւ թիւրք-կանոնաւոր զօրամասեր: Ադրբէջանի կառավարութիւնը, դեռ Թիֆլիսից, ուժեր էր հաւաքում Բագուի դրաւման համար. ոտքի էին հանուած բոլոր զօրամասերն ու զինուած խմբերը եւ ուղղուած Բագուի վրա: Նրանց առաջաւոր մասերն արդէն սկսել էին երեւալ Հաջի-Կաբուլի մօտերը. մի ուրիշ թեւ շարժւում էր դէպի Շամախի: Անհրաժեշտ էր չտապել՝ նախաձեռնութիւնը թշնամուն չտալու համար: Եւ Զինո.-Ցեղափոխ. կոմիտէն որոշեց անցնել վճռական գործողութիւնների — յետ չպրտել թիւրքերին Հաջի-Կաբուլից եւ դրաւել ռազմական տեսակէտից կարեւոր Ադսու-Խիւրդամիր դիծը՝ մօտ 160 կիլոմետր տարածութեամբ:

Յունիս 5-ից Բագուի զօրքերը անցան յարձակման եւ մի շարք տաք ու յաջող ճակատամարտներից յետոյ, մինչեւ յունիս 26, դրաւեցին մի կողմից Կարամարդիան—Խիւրդամիր—Զուրովկա եւ միւս կողմից՝ Զուրովկա-Պետրոպաւլովսկ գծերը, այսինքն՝ աւելի, քան նախորոշուած էր արշաւանքի սկզբին: Թիւրք-ադրբէջանեան ուժերը, ծանր կորուստներով, քաշուեցին յետ: Բագուեցիների ձեռքը անցաւ հարուստ աւար-թնդանօթներ ու գնդացիրներ, հրացան ու փամփուշտ: Կուի դաշտում մնացած դիակների թիւը հաշււում էր հարիւրներով:

Յունիս 25-ին յայտնի դարձաւ, որ թիւրքական մի դիվիզիա շարժւում է դէպի Գէոքչայ, մի ուրիշն էլ՝ Եւլախի ուղղութեամբ եւ որ իսլամ բանակի սպայակոյտը փոխադրուում է Ուջարի կայարանը՝ աւելի վճռական գործողութիւնների դիմելու համար: Բագուի հրամանատարութիւնը որոշեց շեշտակի հարւածով խանգարել այդ ծրագիրը, եւ յունիս 27-ին շարժւեց Ուջարին ու Գէոքչայը դրաւելու դիտաւորութեամբ: Սկսուեցին կատաղի կռիւներ:

Յունիս 27–28–ին թիւրքերը մեծ զոհեր տալով՝ նահանջեցին եւ յունիս 29–ին անցան հակայարձակման: 3 օրւայ արիւնահեղ կռիւների մէջ յոգնած, անօթի ու ծարաւ՝ դերպանց ուժերի ճնշման տակ՝ Բագուի զօրամասերը սկսեցին նահանջել դէպի Կարամարդեան՝ իրենց հետ տանելով եւ Գէօքչայի հայ ազգաբնակութիւնը:

Այդ օրւանից նախաձեռնութիւնը անցաւ թիւրքերի ձեռքը: Բագուի ուժերը օր աւուր հալչում էին. յունիս 10–ից սկսած նրանք կորցրել էին 7 սպայ եւ 265 զինւոր սպանուած, 16 սպայ եւ 534 զինւոր վիրաւոր: Անառողջ կլիման, ջրի պակասութիւնը, անբաւարար սնունդն ու հագուստը զարգացնում էին հիւանդութիւններ ու դասալքութիւն: Մարտիկների թիւը, որ արշաւանքին սկզբին 4,400 էր, իջել էր 2,400–ի: Այդ պատճառով, յուլիս 1–ից սկսած տեղի ունեցաւ անընդհատ նահանջ, որի ընթացքին թշնամին յարձակումներ էր գործում, աշխատում անցնել թիկունքը, կուի էր բռնւում բագուեցիների հետ: Յուլիս 6–ին Բագուի ուժերը կանգնեցին Շամախի—Կարաստախկալ—Ֆիւրդամիր գծի կրա:

Յուլիս 5–ին Պարսկաստանից Բագու հասաւ գնդ. Բիչերախովը իր զօրամասով եւ նշանակւեց Բագուի պաշտպանութեան պետ, որ խիստ բարձրացրեց մարտիկների տրամադրութիւնը: Յուլիս 8–ին Բիչերախովի զօրամասը յայտ կռիւներ ունեցաւ Ֆիւրդամիրի ճակատում: Նոյն օրը թիւրքերը յարձակւեցին Շամախիի վրա, բայց հանդիպեցին սաստիկ դիմադրութեան: Յուլիս 9–ին, բագուեցիները անցան հակայարձակման, եւ թիւրքերը լուրջ կորուստներ կրելով եւ խոշոր աւար թողնելով՝ նահանջեցին: Յուլիս 11–ին բագուեցիները զաղարեցրին հետապնդումը՝ վերադրաւելով Շամախիի դիրքերը: Նոյն ժամանակ կռիւներ սկսւեցին եւ Բագուի զօրքերի ձախ թեւում ու կենտրոնում: Երեք օր տեւող ճակատամարտներից յետոյ՝ բագուեցիները չդիմացան ու յետ քաշւեցին՝ բռնելով կերար կայարանը: Յուլիս 20–ից սկսւեցին մի շարք նոր արիւնահեղ կռիւներ. Բագուի ուժերը նահանջեցին Շամախիից էլ. զօրքի հետ հեռացաւ եւ շրջանի ամբողջ հայ բնակչութիւնը: Քայլ առ քայլ, անվերջ կռիւներով՝ յուլիս 26–ին զօրքն ու ժողովուրդը հասան մինչեւ Խուրդալան, իսկ կենտրոնի ուժերը՝ մինչեւ Ալեաթ՝ ճանապարհին ոչնչացնելով ամէն ինչ:

Յուլիս 26–ին խարէութեամբ, լքելով իր դիրքերը, Դերբենտի շրջանը փախաւ գնդ. Բիչերախովը՝ տանելով հետը իր զօրամասը: Նոյն օրը Հայոց Ազգ. Խորհուրդը թիւրքերի արեւելեան ճակատի պետ Մուրսել փաշայից ըստացաւ մի գրութիւն, որով առաջարկում էր վերջ տալ կռիւն եւ քաղաքը յանձնել իրեն:

Միւս կողմից, անյաջողութիւնները ճակատում չարունակւում էին: Յուլ. 27–28–ին թիւրքերն արդէն քաղաքի տակ էին՝ Բիբի–Հէյբաթում ու Բալաջարիում: Մի գրոհ եւս, եւ Բագուն կընկնէր: Յուլ. 28–ի գիշերը ժողովրդի մէջ ծայր էր տւել խուճապը. հայերից եւ օտարներից ոմանք պատրաստւում էին յանձնել քաղաքը:

Դրութիւնը դառնում էր յուսահատական: Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել:

Ռուսաստանից յոյս չկար. Ստալինն ինքը, դեռ յունիսին, Թախանձագին խնդրում էր Շահումեանից «ամէն կերպ (զէնքով, մարդով) օգնել Թուրքեստանին, որի գլխին անգլիացիները, Բուխարայի եւ Աւղանիստանի վրայով, աշխատում են վատ խաղ խաղալ»: Մնում էր աղօտ հաւանականութիւն օգնութիւն ստանալ «երրորդ ուժից»՝ անգլիացիներից, Պարսկաստանի վրայով: Եւ այդ հարցը դրուեց բանւ., զինւ., նաւաստ. և գիւղացիական խորհուրդների պատգամաւորների եւ շրջանային խորհուրդների, նաւային կոմիտէների ու կովկասեան կարմիր բանակի Ռազմա.—Ցեղափոխ. Կոմիտէի արտակարգ նիստում, յուլ. 27-ին: Շահումեանը մի ընդարձակ ճառով աշխատեց համոզել, որ անգլիացիներին հրաւիրելը հաւասար է յեղափոխութեան պարտութեան, որ, աւելի լաւ է հաշտութիւն կնքել Թիւրքերի հետ, բայց անգլիացիներին հրաւիրելու մտքից յետ կենալ: Սակայն եւ այնպէս, ժողովը միաձայնութեամբ, ընդդէմ բոլշեւիկների, որոշեց օգտուել անգլիական ուժերից: Փաստօրէն այդ որոշումը խորհրդային իշխանութեան վերջն էր, բայց Ժող. Գործ. Խորհուրդը մի քանի օր էլ չհրաժարուեց եւ, ամենքից գաղտնի, սկսեց տենդագին փախուստի պատրաստութիւններ տեսնել: Յուլիս 28-ից մինչեւ 30, գիշերները, նաւերի վրա փոխադրեցին ռազմամթերքը, պարէնը, բանկերի ամբողջ դրամը, զանազան ապրանքներ, ամէն ինչ, որ արժէք ունէր: Յուլիս 30-ին նաւերի վրա փոխադրուեցին բոլշեւիկ զօրքերն ու բոլշեւիկ պարագլուխների ընտանիքները: Ապա, հապճեպով խորհրդի արտակարգ նիստ գումարեցին, ուր Շահումեանը մի տգեղ ճառով անյաջողութիւնների ամբողջ պատասխանատւութիւնը ձգեց մենշեւիկ-էսէրների եւ Հ. Յ. Դաշնակցութեան ու Հ. Ազգ. Խորհրդի վրա եւ յայտարարեց, որ Ժող. Գործ. Խորհուրդը հրաժարւում է իշխանութիւնից ու հեռանում Աստրախան...*)

---

*) Իրենց դաւաճանութիւնը արդարացնելու նպատակով Շահումեանը կազմեց մի կոչ՝ ուղղուած «Բագուի բանւորներին», որի մէջ գրում էր. «Յուլիս 30-ին Թիւրք զօրքերը բոլորովին մօտեցան քաղաքին: Խորհրդային զօրքերի հրամանատար գնդ. Աւետիսեանը յայտնեց Ժող. Գործ. Խորհրդի նախագահին, որ քաղաքի բախտը արդէն որոշուած է: Ճակատը մերկացել է. «Բիչերախովը՝ մերկացնելով ճակատը՝ իր զօրամասի հետ հեռացել է Սումգայիտ եւ շարժւում է դէպի հիւսիս»: Նոյնը հաղորդեց եւ բնկ. Ղորղանեանը (զինւ. գործավար), որ վերադարձել է Սումգայիտից: Ալեաթից յետ քաշուած զօրքերը ցրուել են. 1600 կռւողից ճակատում մնացել է միայն 200 մարդ: Այդ 200-ից զատ, աջ թեւում կանգնած է եւս 200 մարդ Պետրովի զօրամասից: Իսկ հայկական զօրամասերը, թւով աւելի քան 3000 հոգի, հագուստ չունենալու պատրւակով, մինչեւ այդ էլ մերժում էին դուրս գալ դիրքերը քաղաքի շուրջ: Այսպիսով, 32 վերստ երկարութիւն ունեցող ճակատը պահում են միայն 400 կռւողներ, մինչդեռ օդային հետախուզութիւնը ցոյց է տալիս, որ Թիւրք կանոնաւոր զօրքերից բաղկացած թշնամու մեծ ուժեր են առաջ շարժւում: Եւ բանակի հրամանատար Աւետիսեանը իրաւունք էր խնդրում, որ ժողովուրդը սպիտակ դրօշ բարձրացնէ ու սկսէ բանակցութիւններ: Հակառակ պարագային, յայտարարեց Աւետիսեանը, դուք կը լինէք պատճառ, եթէ ուժով ներս խուժած թշնամին ոչնչացնէ 160 հազարնոց քրիստոնեայ բնակչութիւնը:

Նոյն երեկոյեան հայկական զօրամասերի հետ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ ...ի մօտ: Զօրամասերի պետեր Համազասպն ու Ղազարեանը յայտնեցին իրենց համաձայնութիւնը Աւետիսեանի հետ եւ վկայում էին, թէ անհրաժեշտ է քաղաքի յանձնումն ու պատուիրակներ ուղարկելը:

Նոյն գիշեր Դաշնակցութիւնը իր մօտ ժողովի հրաւիրեց հայ բուրժուազիային, նրա հետ միասին վճռեց առաւօտեան սպիտակ դրօշ բարձրացնել եւ նշանակեց հաշտարար պա-

Եւ նոյն օրն էլ հեռացան։ Փախչողների մէջ էին, բացի Շահումեանից, եւ մի շարք ուրիշ հայ կոմունիստներ՝ Սմբ. Մարգարեանը, Արտ. Կարինեանը, Գ. Ղորղանեանը, Ս. Տէր-Գաբրիէլեանը, Աշ. Յովհաննիսեանը եւ ուրիշներ։

Բոլշեւիկների փախուստից յետոյ ստեղծւեց նոր իշխանութիւն — Բագւի դիկտատուրա, — որի մէջ մտան սոց.-յեղափ. Վելունցն ու Լ. Ումանսկին, դաշն. Ալ. Առաքելեանն ու Ս. Մելիք-Եօլչեանը եւ 3 նաւաստիներ կասպից նաւատորմիղից։ Դիկտատուրայի առաջին գործը եղաւ ռազմանաւեր ուղարկել ու յետ բերել փախստական բոլշեւիկներին եւ նրանց տարած աւարը, որը եւ կատարւեց յաջողութեամբ. նաւերը վերադարձւեցին եւ բոլշեւիկները բանտարկւեցին. նրանց դէմ յարուցւեց դատական հետապնդում։

Դիկտատուրայի գլխաւոր մտահոգութիւնը, սակայն, ճակատն էր, ուր դրութիւնը օր օրի վրա վատանում էր։ Պատերազմի ծանրութիւնը առանձնապէս ընկած էր հայերի եւ մանաւանդ, Հ. Յ. Դաշնակցութեան վրա, որ լարել էր ուժերը ճակատը պահելու համար։ Յուլիս 30-ի գիշերւայ նիստում Հ. Յ. Դ. Բագւի Կենտր. Կոմիտէն քննեց ստեղծւած աճարկու կացութիւնը։ Ելք չէր գտնւում։ Նոյնիսկ Ռոստոմը, որ, սովորաբար, յուսահատւել չգիտէր, շւարել էր։ Յանկարծ, պատմում է Ս. Մելիք-Եօլչեանը իր յուշերի մէջ,*) «Դուռը բացւեց եւ սոց.-յեղ. Միքայէլ Տէր-Պօղոսեանը ներս մտաւ՝ խնդրելու, որ Ռոստոմը դուրս գնայ։ Հարեւան սենեակում Տէր-Պօղոսեանը յանձնել էր Ռոստոմին Պարսկաստանի Էնզելի քաղաքից ստացւած նոր ռա-

---

ւիրակութեան կազմը, որի մէջ պէտք է մտնէր, ի միջի այլոց, եւ չէզոքական հիւպատոսը, որ հրաշխաւորում էր հայ ազգաբնակութեան անձեռնմխելիութիւնը քաղաքը յանձնելու պարագային։ Ժող. Գործ. Խորհուրդը վճռական կերպով արտայայտւեց բանակցութիւնների դէմ՝ քաղաքում գտնւող բոլոր զօրամասերը հրաւիրելով մեկնել ճակատ, յուլ. 30-ի գիշերը մի կոչ ուղղեց բանւորներին՝ հրաւիրելով զէնք առնել ու պաշտպանել քաղաքը, եւ պահանջում էր հայկական զօրամասերի պետերից ճակատ տանել իրենց մասերը»։ Վերջիններս, Շահումեանի ասելով, խոստացել էին տալ 1300 մարդ. «Դաշնակցութեան ներկայացուցիչը յուլ. 31-ի գիշերը ժամը 3-ին հաղորդեց Ժող. Գործ. Խորհրդի նախագահին, որ յոյս ունի յուլ. 31-ին մինչեւ 3000 մարդ հասցնել ճակատ», բայց, իբր թէ, խոստացւած ուժերից հազիւ 320 մարդ է տեղ հասել, որի վրա Աւետիսեանը յայտնել է, որ «քաղաքի յանձնումը անխուսափելի է մի քանի ժամից»։ «Եթէ չարտօնէք սպիտակ դրօշ բարձրացնել, հարիւր հազարաւոր դիակերի տերինը կընկնի ձեր խղճի վրա — յայտարարում էր վճռական կերպով բանակի հրամանատարը»։

«Նոյն միջոցին եկան Հ. Ազգ. Խորհրդի նախագահ Ա. Գիւլխանդանեանը եւ գնդ. Ղազարեանը, որոնք յայտարարեցին, թէ Ազգ. Խորհրդի «հէնց նոր կայացած ժողովը հաստատել իր վերջնական «վճիռը՝ սպիտակ դրօշ բարձրացնել եւ յանձնւել յաղթողի գութին»։

Եւ միայն այս «դաւաճանութիւնից» յետոյ, «Ժող. Գործ. Խորհուրդը որոշեց հրաժարւել իշխանութիւնից և Խորհրդ. Ռուսաստանի զինւորական ուժերն և պետական գոյքը փոխադրելով նաւերի վրա» հեռանալ Աստրախան;'(С. Шаумян, «Статьи и речи», 1924, Баку, стр. 137—8)։

Այս որոշումն, ի հարկէ, Շահումեանի եւ ընկերների կողմից փախուստ ու դաւաճանութիւն չէր… Առհասարակ, Շահումեանի չփմեղանքն ու արդարացումը շատ էին վրան բաց, իսկ դաշնակցականների հասցէին ուղղւած մեղադրանքը՝ ակներեւ զրպարտութիւն։ Պատմական փաստերը բոլորովին հակառակ դեր են վերագրում դաշնակցականներին ու բոլշեւիկներին։

*) «Հայրենիք», ամս. 1925 թ. № 9, էջ 71։

դիւ–հեռագիրը, որով յայտնւում էր, թէ անգլիական հինգ հազարնոց մի զօրամաս այնտեղ պատրաստ է նաւեր նստելու եւ Բագուին օգնութեան հասնելու, եթէ միայն քաղաքը երկու օր պաշտպանւի եւ պահւի: Թոստոմը վերադարձաւ բոլորովին փոխւած: Նա, կարծես, նորէն յարութիւն էր առել...»:

Հ. Ազգ. Խորհրդի ներկայացուցիչ Ս. Արարատեանի ջանքերի արդիւնքըն էր այդ: Հ. Ազգ. Խորհուրդը Արարատեանին ուղարկել էր Պարսկաստան՝ անգլիացիների հետ բանակցելու եւ Բագու բերելու համար: Ներան յաջողւել էր համոզել անգլիական հրամանատարութեան՝ Բագու ուղարկել անգլիական զօրամասեր: Այդ լուրն էր աւետում ռադիօ–հեռագիրը, որ աներեւակայելի ոգեւորութիւն առաջ բերեց Բագուում: Հ. Յ. Դաշնակցութիւնը մի յատուկ կոչով զօրակոչ յայտարարեց եւ ճակատ ուղարկեց մի քանի հազար կուռղներ: Առաջաւոր դիրքեր գնացին եւ Մուրատն ու Սեպուհը, որոնք, յուլիսի վերջերին, Վոլգայի ափերից, հասել էին Բագու: Եւ սկսւեց յամառ դիմադրութիւն:

Օգոստոս 2–ին թիւրքերը նորից անցան կատաղի յարձակման, այս անգամ Գայլի Դրունքի շրջանում, եւ յամառ կռիւներից յետոյ առաջացան մօտ 500 քայլ: Յաջորդ օր, թնդանօթները որոտում էին ամբողջ ճակատի վրա: Թիւրքական զրոհները իրար էին յաջորդում: Բագուեցիները պաշտպանում էին արտակարգ քաջութեամբ. մէկը միւսի յետեւից ընկնում էին լաւագոյն մարտիկները՝ Մուրատը, 16րդ դիւմարատակի հրամանատար Արամ Դովլաթեանը, հնձելազօրի պետ Իսակը: Վիրաւորների թիւը չատ մեծ էր...

Օգոստ. 4–ին թիւրքերը սկսեցին կենտրոնացնել իրենց ուժերը, և Հ. Ազգ. Խորհուրդը ստացաւ Մուրսել փաշայի երկրորդ, այս անգամ սպառնական, նամակը՝ քաղաքը յանձնելու պահանջով: Նոյն օր Բագու հասաւ գնդ. Մոկսը մի քանի տասնեակ անգլիացի զինուորներով եւ լուր բերեց, որ իր յետեւից գալու են 5000 անգլիացիներ: Այս լուրը Բագուի պաշտպաններին նոր ոյժ ներշնչեց: Եւ կռիւը չարունակւեց յուսահատ վճռականութեամբ:

Օգոստ. 4–ի գիշերը, թիւրքերը փորձեցին պատռել բագուեցիների շղթան եւ օգոստ. 5–ի լուսաբացին արդէն գրաւել էին Բիբի–Հէյբաթը: Նրանց թնդանօթների ռումբերը ընկնում էին Բայիլով քաղաքամասում: Արիւնահեղ կռիւներ էին տեղի ունենում եւ միւս ճակատների վրա: Բագուեցիները լարում էին իրենց վերջին ճիգը: Հ. Յ. Դաշնակցութիւնը ճակատ ուղարկեց իր բոլոր ուժերը: Թոստոմը չրջում էր դիրքից դիրք եւ քաջալերում կուռղներին: Հ. Ազգ. Խորհուրդը իր բոլոր անդամներով աշխատում էր առանց դադարի: Հրամանատարները անձնական քաջութեամբ թիւ էին տալիս մարտիկներին: Անգնահատելի ծառայութիւն էր մատուցանում եւ նաւերի հրետանին: Օրհասական վայրկեան էր. մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ ելք չկար:

Առաւօտեան ժամը 10–ին բագուեցիների մի զօրամաս յաջողեց անցնել Բշնամու թիկունքը. միաժամանակ հակայարձակում սկսւեց եւ ճակատից ու թեւերից: Թիւրքերը առնւեցին երկու կրակի մէջ եւ, 3 ժամ յետոյ, արդէն փախչում էին դլխակորոյս՝ թողնելով մօտ 1000 դիակ, 16 գնդացիր եւ մեծ քանակութեամբ աւար: Շատ լուրջ էին և բագուեցիների զոհերը. 14 սպայ

եւ 415 զինուոր սպանած ու վիրաւոր: Սպանուեց եւ Համազասպի օգնականը՝ Սերգօն, Բագուի հերոսամարտի ամենափայլուն մարտիկներից մէկը: Նրանք վիրաւորուածների մէջ էր Մարտին Շաֆիրեանի որդին՝ ուսանող Ռուբէնը, որ քնդանօթաձիգ էր եւ ռումբի պայթիւնից կորցրեց մէկ ոտքը, մէկ աչքը, ծնօտը, բայց եւ այնպէս փրկուեց եւ ապագայում չարունակեց ծառայել Հայաստանի բանակում:

Օգոստ. 5–ին, երբ Թշնամին արդէն փախել էր, Բագու հասան եւ անգլիացիները, եւ մինչեւ օգոստ. 19 իրենց ուժերը հասցրին 2,700–ի, որոնցից 200–ը յետ դնաց, իսկ 150—200 հոգին կռիւներում սպանուեց կամ գերի ընկաւ: Անգլիացիների գալը առաջ բերեց խիստ դժգոհութիւն Բագուի մահմեդական եւ, մասամբ, ռուս ազգաբնակութեան ու բոլշեւիկների մէջ: Քաղաքում սկսեցին երեւալ ռուսերէն կոչեր ու թռուցիկներ՝ «Կորչե՛ն հայերը», «մա՛հ հայերին», «կեցցէ՛ Թիւրքիան եւ Թուռանստանը» եւ այլ նշանաբաններով:

Օգոստ. 5–ի կռիւներից յետոյ, աւելի քան 3 շաբաթ, տիրեց խաղաղութիւն. Թիւրքերը սպասում էին օգնական նոր ուժեր՝ պատրաստելով վճռական գործողութեան: Սկսեցին վերակազմել ու համախմբել իրենց ուժերը եւ բագուեցիները: Օգոստ. 5–ին Դիկտատուրայի կողմից ընդհանուր հրամանատար նշանակուեց զօր. Դոկուչայեւը. զինուրական գործերի վարիչ՝ զօր. Բադրատունին: Սակայն, անգլիացիների հետ կարելի չեղաւ ուժերի ներդաշնակութիւն եւ ընդհանուր ղեկավարութիւն առաջ բերել. նրանք, զօր. Դընստերվիլի հրամանատարութեան տակ, գործում էին բոլորովին անկախ: Նրանք բռնեցին աջ ճակատի «Ցնխոտ հրաբուխ» մասը: Զօր. Դընստերվիլը, առհասարակ, մոայլ աչքով էր նայում յաղթանակի հնարաւորութեան եւ հէնց սկզբից իրեն պահում էր այնպէս, որ ամենքը զգում էին, թէ առաջին իսկ լուրջ վտանգի դէպքում պիտի թողնի ու հեռանայ:

Օգնական ուժեր ստանալուց եւ վերակազմուելուց յետոյ, օգոստոս 29–ին, Թիւրքերը անցան յարձակման, անգլիացիների գրաւած ճակատում: Վերջիններս ուժգին դիմադրութիւնից յետոյ՝ թողին զիրքերի մի մասը: Սեպտ. 1–ին Թիւրքերի համար յաջող յարձակումներ սկսուեցին եւ աջ թեւում: Զօր. Դընստերվիլը յայտնեց Դիկտատուրային, որ դրութիւնը անյոյս է եւ պէտք է Թիւրքերի հետ բանակցութիւններ սկսել՝ պատերազմը վերջացնելու համար: Դիկտատուրան միաձայնութեամբ մերժեց այդ առաջարկը եւ պահանջեց, որ անգլիացիք մեկնեն ճակատ՝ սպառնալով, հակառակ պարագային, Քնդանօթի կրակի բռնել նրանց նաւերը: Անգլիացիները համակերպուեցին: Կռիւները չարունակուեցին անընդհատ. Թշնամին դանդաղ, բայց հաստատուն քայլերով մօտենում էր քաղաքին:

Սեպտ. 13–ի առաւօտեան, մօտ 3000 Թիւրքեր ու տեղացի մահմեդականներ՝ ձիաւոր ու հետեւակ՝ գրոհ տուին Սուրուխանիի չրջանում եւ մինչեւ կէս գիշեր աշխատում էին ճեղքել բագուեցիների ճակատը: Սեպտ. 13–14–ի գիշերը յարձակումները սկսուեցին ամբողջ ճակատի վրա, եւ լուսաբացին Թիւրքերը գրաւեցին Գայլի Դրունքի զիրքերը:

Արիւնոտ վախճանը մօտենում էր:

Սեպտ. 14-ի առաւօտից անգլիացիք սկսեցին թողնել դիրքերը եւ նաւ նստել. պատրաստւում էին հետեւելու բոլշեւիկների օրինակին. իրենց կաշին աւելի թանգ էր, քան Բագուն ու Բագուի ժողովուրդը: Ժամը 5-ին նրանք յայտնեցին Դիկտատուրային, որ հեռանում են եւ առաջարկեցին քաղաքը յանձնել թիւրքերին: Հ. Ազգ. Խորհուրդը խնդրեց նրանց թախանձագին, որ դէթ 3 օր էլ մնան, մինչեւ որ կարելի լինի դաղթեցնել ժողովուրդը. զօր. Դընստերվիլը պատասխանեց. «2 ժամից յետոյ պիտի մեկնենք. սպիտակ դրօշակ բարձրացրէ՛ք»: Եւ երեկոյեան ժամը 8-ին անգլիական նաւերը հեռացան Պարսկաստանի ուղղութեամբ:

Հայերը մնացին մենակ: Դիկտատուրան սկսեց պատրաստել հաշտութեան բանակցութիւնների համար: Մի կողմից, նաւերն էին թափւում ժողովուրդն ու պինդ բեռները. զօրամասերը քայլ առ քայլ նահանջում ու հաւաքւում էին ծովափին: Որոշ մասեր, սակայն, չկարողացան հեռանալ դիրքերից եւ մինչեւ վերջին փամփուշտը կուելուց յետոյ՝ կոտորուեցին կամ գերի ընկան:

Սեպտ. 15-ի առաւօտեան, Ազգ. Խորհրդի անդամները, ինքնապաշտպանութեան կազմակերպիչներն ու ղեկավարները, պինդ բեռներն ու բնակչութեան մի մասը, նաւերով, հեռացան Բագուից՝ ոմանք դէպի Պարսկաստան, ոմանք դէպի Պետրովսկ, ոմանք Կրասնովոդսկի կողմը: Վերջին նաւ նստողն էր Բագուի հերոսամարտի ոգին՝ Թոռոսոմը՝ մառայլ, ընկճուած ու յուսաբեկ...

Իսկ քաղաքում, այդ մինչեւ, սկսւում էր Մեծ Եղեռնը: Մահմետական խուժանը թափւում էր ամէն կողմից: Հասան Ազրբէջանի կառավարութեան ներկայացուցիչներն էլ: Եւ երեք օր չարունակ, ամէն կողմ, կատարուեց սպանութիւն, թալան, բռնաբարութիւն եւ աննկարագրելի դաղանութիւն. էնվէրի ու Թալէաթի աշակերտները սերտում էին իրենց վարպետների տուած դասը...

Թիւրք կանոնաւոր զօրքը քաղաք մտաւ միայն սեպտ. 16-ի երեկոյեան, եւ այդ ժամից դանգւածային թալանն ու կոտորածը վերջ դտաւ: Անհատական սպանութիւնները, սակայն, ձերբակալութիւններն ու կողոպուտը, այնուհետեւ էլ չարունակւեցին. հայերը Ազրբէջանում դրւեցին օրէնքից դուրս:

Որքա՞ն էր Բագուի զոհերի դումարը: Ազգ. Խորհրդի նախագահ Ա. Գիւլխանդանեանը այդ մասին տալիս է հետեւեալ թիւերը. սպանուածներ՝ 5,248 հոգի, անյայտացածներ՝ 3,572, գերուածներ՝ 3,396, բանտարկուածներ՝ 253, առեւանգուածներ՝ 571, բռնաբարուածներ՝ 288:

Բ. Իշխանեանը իր կատարած վիճակագրութեան վրա յենւելով՝ հաղորդում է ուրիշ թիւեր.*) սպանուածներ՝ 9,029, անյայտացածներ՝ 3,586, գերուածներ՝ 4,246, բանտարկուածներ՝ 253, առեւանգուածներ՝ 1,142, բռնաբարուածներ՝ 572: Բացի այդ, Իշխանեանը հաստատում է, որ Բագուի 32,000 փախստականներից 10,235 հոգին մնում է դանազան վայրերում:

*) Բ. Իշխանեան, «Բագուի Մեծ Սարսափները», 1920 թ. Թիֆլիս. էջ 184—185, 187:

եղել են եւ այլ կարգի մահացութիւններ: Զոհերի համապատասխանը Իշխանեանը ցոյց է տալիս 29,060, բազուի 89,541 հոգի հայ բնակչութեան 32,45%: Հայերի նիւթական կորուստը Իշխանեանը հաշւում է 945,724,017 րուբլի:

«29,060 հոգի մարդկային զոհեր եւ 945,724,017 կամ մօտ մի միլիարդ րուբլու նիւթական վնասներ ու կորուստներ — ահա թիւրք-թաթարական բարբարոսութեան եւ արիւնռուշտ քաղաքականութեան արդիւնքը սեպտեմբերեան մեծ սարսափների օրերին» — եզրափակում է Բ. Իշխանեանը:

Ահա ա՛յս «քաղաքական հասունութեան վկայականով» Ազրբէջանը սկսեց իր պետական անկախ կեանքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՓՕՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ
Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութեան առթիւ 1919 թ. Մայիս 28-ին



Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇԻՆԸԸ

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Այսպէս ուրեմն, ընդ հուր եւ ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչւեց անկախ կեանքի: Ցնծութեան աղաղակներով ու ծափերով չընդունւեց հանրապետութեան ծնունդը: Ընդհակառակը, շատերի համար նա նկատւում էր անժամանակ ծնունդ: Հիւանդ երեխայ աշխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգաւոր՝ չընջալով. «Դու իմ եւ ուրախութիւնն ես, դու՝ դժբախտութիւնը իմ...»

Այո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնւեց Հայաստանի անկախութիւնը: Ոմանք չէին հաւատում նրան. անկախութիւն ու հանրապետութիւն բառերը դնում էին չակերտի մէջ: Եւ այդպէս վարւելու հիմքերը շատ էին զօրաւոր. իրօք որ, զարհուրելի էին պայմանները, եւ անկախութիւնը այդ պայմաններում թւում էր հեղնանք:

Փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիւ 12,000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկւած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնւած զաղթականներով ու որբերով, շրջապատւած առամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու թշուառութիւն, կոտորածի սարսափ: Իսկ միւս կողմ՝ էնվէրի բանակը յաղթական՝ համաթրքական երազներով տոգորւած, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դէպի Ադրբեջան ու Թուրքեստան:

Այսպէս էր դրութիւնը Հայաստանում, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարեալ շփոթ: Մայիս 26-ից յետոյ, հայ-վրացական յարաբերութիւնները լարւել էին ծայր աստիճանի. վրացիները՝ արբեցած իրենց անկախութեամբ ու գերմանական հովանաւորութեամբ՝ թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դաւադիր, դաւաճան, իրենց բարեկեցութիւնը հայ ժողովրդի գլխակների վրայ հաստատող, հայ ժողովրդի գոյութեան թշնամի...

Անկախութեան առաջին իսկ օրից, վրաց կառավարութիւնն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրոյթ արտայայտել, որ «գերիչ-

խան Վրաստանին» հողի վրա չարունակում է մնալ օտար պետութեան մի իշխանութիւն: Հայերին ուղղուում էին աներկդիմի խօսքեր, թէ նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երեւանը: Եւ այդ այն պահուն, երբ ամէն հաղորդակցութիւն Երեւանի հետ կտրուած էր եւ Լոռիի ու Փամբակի ձորերում թիւրքերն ու տեղական մահմեդականները մաքրադործում էին հայկական գիւղերը:

Ծանր էր կացութիւնը: Եւ հէնց որ հաշտարար պատւիրակութիւնը Բաթումից վերադարձաւ, Հ. Ազգ. Խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարութեան կազմակերպման՝ հրաւիրելով վարչապետութեան Ց. Քալաջեանին. այստեղ էլ բացուեց անակնկալ դժւարութիւն. ժողովրդական կուսակցութիւնը, Մ. Պապաջանեանի դլխաւորութեամբ, կտրականապէս մերժեց Քալաջեանի առաջարկը՝ մտնելու նախարարութեան մէջ: Ժողովրդականները բաց արին կատաղի պայքար Հ. Ց. Դաշնակցութեան դէմ՝ պահանջելով, որ սա քաչւի ասպարէզից, եւ իշխանութիւնը յանձնի իրենց: Երկու հիմնաւորում էին առաջ քաչում նրանք՝ մամուլի ու հրապարակային ժողովների մէջ. նախ՝ Դաշնակցութիւնը, իր վարած քաղաքականութեամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղէտների համար. երկրորդ՝ թիւրքերի հետ ընդհանուր լեզու դտնելու համար անհրաժեչտ էր նոր ոյժ հրապարակ հանել եւ այդ նոր ոյժը ժողովրդական կուսակցութիւնն էր, որին եւ պէտք էր յանձնել կառավարութիւն կազմելը:

Դժւար չէր տեսնել, որ նման խնդիրներ յարուցանելիս՝ ժողովրդականների մէջ խօսում էր, ասելի չուտ, կիրքը, կամ, պատասխանատու վարկեանին, գործից խուսափելու ցանկութիւնը, որովհետեւ վերջին 10–15 տարւայ ազգային–քաղաքական բոլոր կարեւոր գործերում Հ. Ց. Դաշնակցութեան կողքին, իսկ չատ անգամ եւ նրանից առաջ, քայլում էին հէնց իրենք ժողովրդականները:

Բայց վերջին տեսակէտը, անչուչտ, որոչ ճշմարտութիւն պարունակում էր իր մէջ: Ի հարկէ, ասելի լաւ կը լինէր, եթէ այդ բոպէին մէջտեղ դար ազգային մի նոր ոյժ, որ կարողանար, առաւել կամ պակաս ձեռնհասութեամբ, փոխարինել Հ. Ց. Դաշնակցութեան: Այդպիսի ոյժ գոյութիւն չունէր, դժբախտաբար. Հայ ժողովրդական կուսակցութիւնը — Թիֆլիսցի սահմանափակ թւով մտաւորականների ու քաղքենիների մի խմբակցութիւն — այդ ոյժը չէր:

Քալաջեանի բոլոր ջանքերը՝ միջկուսակցական կառավարութիւն ստեղծելու՝ ի դերեւ ելան. ժողովրդականները յամառ կերպով մնացին իրենց տեսակէտի վրա: Նրանց հաստատակամութեան նպաստում էր եւ այն հանդամանքը, որ Ազգ. Խորհուրդը չիւրացրեց Երեւանի ու Թիֆլիսի համար ջոկ ջոկ կառավարութիւններ կազմելու ծրագիրը. ժողովրդականները չէին ուզում հեռանալ Թիֆլիսից:

Ի վերջոյ, երկար բանակցութիւններից յետոյ, Քալաջեանին յաջողւեց կեանքի կոչել հետեւեալ կազմով կառավարութիւն, վարչապետ՝ ինքը, Քալաջեանին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսեան, ներքին գործերի՝ Սրամ, եկեղեցական՝ Խ. Կարճիկեան, պիւռօրական՝ Ց. Հախվէրդեան;

վերջինը միայն անկուսակցական էր, միւսները անդամ էին Հ. Յ. Դաշնակ-ցութեան:

Կառավարութիւնը կարգաւորեց մի շարք ընթացիկ խնդիրներ. Վրաս-տանի կառավարութեան մօտ դիւանագիտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Ջամալեանին. յուլիս 2-ին վրաց կառավարութեան հետ կնքեց համաձայնու-թիւն 200 միլիոն անդրկովկասեան նոր բոնէր բաց թողնելու մասին, որից 120 միլիոնը պէտք է տրուէր Հայաստանին, իսկ ութսունը՝ վրացիներին. դրեց հայկական կորպուսի գոյքերը Երեւան փոխադրելու, ինչպէս նաեւ անդր-կովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, կապեր հաստատեց գերման, աւստրիական եւ թիւրքական ներկայացուցիչների հետ. նշանակեց Պոլսի խորհրդաժողովի անդամներ եւայլն:

Բաթումի խորհրդաժողովից յետոյ, Գերմանիայի ներկայացուցիչ զօր. Ֆոն-Բրեսը յայտնեց, որ յունիս 25-ին Պոլսում պէտք է գումարուի մի խոր-հրդաժողով՝ մասնակցութեամբ Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի, Բուլղարիայի, Թիւրքիայի եւ կովկասեան հանրապետութիւնների ներկայա-ցուցիչների՝ լուծելու համար Կովկասի եւ Թիւրքիայի միջեւ առկախ մնա-ցած բոլոր խնդիրները: Հայ. Ազգային Խորհրդի կողմից այդ խորհրդաժողո-վին պատուիրակներ նշանակուեցին՝ Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը եւ Մ. Պապաջանեանը: Այս վերջինը, որ մերժում էր դաշնակցականների հետ մտնել կառավարութեան մէջ, դաշնակցականների հետ գնաց Պոլիս, իսկ ապագա-յին, ինչպէս կը տեսնենք, նաեւ Փարիզ: Յունիս 14-ին պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիսից:

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարութեան մեկնու-մը, որ ջղայնութիւն էր առաջ բերում ո՛չ միայն վրացիների, այլ եւ հայ հասարակութեան մէջ: Երեւանից պահանջում էին փութացնել մեկնումը: Այդ նպատակով նոյնիսկ պատուիրակներ եկան Թիֆլիս: Թիֆլիսի մամուլն ու հանրային կարծիքը դատապարտում էին Հ. Ազգ. Խորհրդի ցոյց տուած դան-դաղաշարժութիւնը. մեղադրում էին, որ Ազգ. Խորհրդի անդամները չէին ուզում բաժանուել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտութիւնից:

Այս մթնոլորտում Ազգ. Խորհուրդը չէր կարողանում երեւան բերել մէկ վճռական կամք: Իրար յաջորդող նիստերում տեղի էին ունենում բուռն վիճաբանութիւններ, որոնցից պարզ նկատւում էր որ շատերի համար Երեւան գնալը անձնապէս անհանդուրժելի խնդիր էր, որ անձնական նկատումները քօղարկւում էին սկզբունքային առարկութիւններով:

Ի վերջոյ, Երեւան փոխադրուելու հարցը կտրուկ կերպով դրուեց Ազգ. Խորհրդի եւ կառավարութեան յուլիս 13-ի միացեալ նիստում, ուր կուսակ-ցութեանց ներկայացուցիչներն արին իրենց յայտարարութիւնները. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ամբողջ կազմով անմիջապէս մեկնեն Երեւան: «Մեր տունը վերադառնանք», ասում էին նրանք: Հայ Ժողովրդական կուսակցութիւնը առաջարկում էր Երեւան ուղարկել մի պատուիրակութիւն եւ կազմել տեղական կառավարու-թիւն, իսկ Հ. Ազգ. Խորհուրդը, որպէս համազգային մարմին եւ իշխանու-

թեան աղբիւր, պահել Թիֆլիսում: Հայ բուրժուազիայի համար Թիֆլիսն էլ, ինչպէս ամբողջ աշխարհ, «մեր տունն» էր: Սոցիալիստ-յեղափոխականները առաջարկում էին, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը գնան Երեւան, կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանութիւն, ապա Ազգ. Խորհուրդը վերադառնայ Թիֆլիս ու մնայ, իբրեւ ընդհանուր ազգային իշխանութիւն: Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երեւան փոխադրուելուն, այժմ յետ առին իրենց առաջարկը եւ տատանւում էին անվճռականութեան մէջ:

Այս բոլոր կարծիքները լսելուց յետոյ, Քաջազնունին յայտարարեց, որ եթէ Ազգ. Խորհուրդը մնայ Թիֆլիսում կամ կազմուեն երկու Ազգային խորհուրդներ, ինքը կը հրաժարւի վարչապետութիւնից: Որի վրա, 7 քւէով ընդդէմ 5-ի, որոշուեց Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը փոխադրել Երեւան: Հայը շատ ամուր էր նստել Թիֆլիսում ու դժուարութեամբ էր պոկ գալիս...

Երկար ձգձգումներից ու վարանումներից յետոյ, յուլիս 17-ին, Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը, վերջապէս, մեկնեցին Երեւան: Թիֆլիսից մեկնելուց առաջ, Ազգ. Խորհուրդը, Քաջազնունիի հետ համաձայնուրդ, նշանակեց ներկայացուցիչներ՝ Վրաստանի կառավարութեան մօտ՝ Արշ. Ջամալեանին, Ռուս. կամաւորական բանակի մօտ՝ Ե. Սաղաթելեանին, Կոլչակի բանակի մօտ, Սիբիրում, Գր. Զամոյեանին, Կուբանի եւ Դոնի կառավարութիւնների մօտ՝ Ս. Վրացեանին եւայլն:

Ալեքսանդրապոլով անցնելը վտանգաւոր էր. Սանահնից սկսած երկաթուղին գտնւում էր թիւրքերի ձեռքը: Պէտք էր անցնել Ազստաֆա-Դիլիջանով:

Մեկնողների մէջ էին՝ կառավարութեան անդամները՝ Քաջազնունին, Ա. Կարճիկեանը, զօր. Հախվերդեանը, Ազգ. Խորհրդի կողմից՝ Ա.ւ. Սահակեանը, Ս. Տիգրանեանը, Ստ. Մալխասեանը, Գ. Զաքարեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Ա. Խոնդկարեանը, բժ. Ա. Բաբալեանը, Հ. Ազատեանը, Ա. Մխիթարեանը եւ ուրիշներ, այլ եւ զօրապահակ՝ Դալի Ղազարի գլխաւորութեամբ: Նրանց հետ գնում էին եւ երկու գերմանացի սպաներ՝ լէյտենանտ Յոն Մոմսենը եւ օբեր-լէյտենանտ Այզենմանը՝ զօր. Յոն-Քրեսի ներկայացուցիչները, եւ մի թիւրք սպայ Վեհիբ փաշայի կողմից:

Մեկնումը կատարւեց շատ տխուր պայմաններում: Վրացիները, որոնք, առհասարակ, երեւելի վարպետներ են հանդիսաւոր ընդունելութիւններ ու «բարի երթ»-եր կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամէն բան, որպէսզի վիրաւորեն հայերի ինքնասիրութիւնը: Հակառակ նախօրօք հայերի կողմից արուած դիմումի, վրաց կառավարութիւնը ո՛չ մի քայլ չէր արել դիւրացնելու համար «քոյր հանրապետութեան» կառավարութեան ճանապարհորդութիւնը: Վրաց կառավարութեան կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայարան: Երկաթուղային վարչութիւնը, իր հերթին, անփափկանկատ բծախնդրութիւններով, դժուարութիւններ էր հանում, տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անյարմար վագոն, կարծես զաղթական-

ներ լինէին ճամբորդողները: Մեծ դժուարութեամբ կարելի էր եղել արտօնութիւն ստանալ՝ մի երկու կիսախարխուլ ինքնաշարժ տանելու: Նեաստացած, դառն զգացումներով մեկնեցին Թիֆլիսից Հայաստանի վարիչները: կարծես, Թշնամի երկրից էին հեռանում: Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նոյնիսկ խուզարկել Հայաստանի կառավարութեան վագոնը, եւ միայն դերման սպայի միջամտութիւնը ազատեց այդ խայտառակութիւնից:

Ընդհակառակը, ինչքա՜ն տարբեր էր վերաբերումը Ազրբէջանում: Սահմանի վրա հայկական կառավարութիւնը ընդունեց պինւորական պատիւներով. ընդառաջ էին եկել նահանգապետը եւ Ազրբէջանի կառավարութեան ներկայացուցիչները: Ազատաֆայում եւ Ղազախում արւեց պաշտօնական ընդունելութիւն. ճաշ էր պատրաստուած ի պատիւ հիւրերի: Թուրք պիւղացիները համակրանքով էին դիմաւորում հայ ներկայացուցիչներին, որոնք մինչեւ Հայաստանի սահմանը անցան բաբեկամական ցոյցերի միջից:

Հայաստանում, ճանապարհին, ամէն տեղ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ընդունեցին անվերապահ համակրանքով:

Առաջին հանդիսաւոր ընդունելութիւնը Հայաստանի հողի վրա տեղի ունեցաւ Դիլիջանում: Հակառակ անձրեւոտ եղանակին, ճիւաւոր մի հարիւրեակ սպասում էր հիւրերին պիւղից դուրս: Եարալեանի ամառանոցի առաջ, որը յատկացուած էր հիւրերին պիշերելու, դրւած էր պատւոյ պահակ: Ազգ. Խորհրդի նախագահի բարեւի վրա պինւորները պատասխանեցին հայերէն. «բարե՛ւ, հազար բարի՛»: Դիլիջանցիները պատրաստել էին հիւրասիրութիւն եւ յաջորդ օր, հանդիսաւորութեամբ ճանապարհ դրին Երեւան: Ձօրքերը բռնել էին ճանապարհի երկու կողմերը: Ժողովուրդը բարեմաղթութիւններ էր անում:

Սեմեոնովկայում աղ ու հացով ընդառաջ եկան ռուս ազգաբնակութեան ներկայացուցիչները եւ գնդ. Սամարցեանը իր գնդով: Ա.. Սահակեանը ընդունեց աղն ու հացը, դիտեց զօրքերը եւ ողջոյնի խօսք ասաց հաւաքւածներին:

Ելենովկայում խռնւած էր ահագին բազմութիւն մերկ ու թշւառ գաղթականների: Ռուս բնակիչները հեռացել էին Հիւսիսային Կովկաս եւ նրանց տները բռնել էին կարսի, Շիրակի, Ղարաքիլիսայի հայ փախստականները: Երեւանի Ազգ. Խորհուրդը այստեղ բաց էր արել մի ճաշարան եւ ձրի կերակուր էր տալիս աւելի քան 5,000 մարդու:

Յուլիս 9–ին, երեկոյեան դէմ հասան Ախուռա: Երեւանից եկել էին դիմաւորելու Արամը եւ տեղական կառավարութեան անդամները: Փողոցի դըլխին կանգնած էին զօրքն ու պինւորական նւագախումբը: Ա.. Սահակեանը ընդունեց հրամանատարի վեկուցումը. ապա զօրամասերը, կանոնաւոր շարքերով, դրօշակները պարզած ու երաժշտութեամբ, անցան Ազգ. Խորհրդի ու կառավարութեան անդամների առջեւից: Տեսարանը յուզիչ էր:

Հայկական Կորպուսի սպայակոյտը զօր. Նազարբէգեանի գլխաւորութեամբ հիւրերին ընդունեց Քանաքեռում, ուր պատրաստուած էր քէյֆասե-

ղան, որի միջոցին արտասանեցին հանդիսաւոր ճառեր:

Ուշ երեկոյեան հասան Երեւան: Քաղաքը զարդարուած էր դրօշակներով, գորգերով եւ կանաչով: Աղստաֆեան փողոցը լեցուած էր բազմութեամբ: Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին զօրքերը՝ Սարդարապատի ու Բաշ-Աբարանի հերոսները: Հրամանատարի զեկուցումից յետոյ հնչեց երաժշտութիւնը եւ խանդավառ «կեցցէ՛»-ն հազարաւոր բերաններից:

Հասարակութիւնը առանձնապէս ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց գերմանացի սպաներին:

Երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որին ներկայ էին Թիֆլիսի եւ Երեւանի Ազգ. Խորհուրդների եւ կառավարութեան անդամները, ռուս, ուկրայինցի ու մահմետական ազգաբնակութեանց ներկայացուցիչները, պարսկական հիւպատոսը, գերմանական եւ թիւրք սպաները: Արտասանեցին բոլորի կողմից ողջոյնի ճառեր, որոնց պատասխանեց Ց. Քալանթարեանը. «Մեր պետութիւնը, ասաց նա, ի միջի այլոց, կոչւում է ո՛չ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն: Այդ ցոյց է տալիս, որ մեր պետութիւնը հայրենիք է նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդների համար»:

Հանդէսը տեւեց մինչեւ ուշ գիշեր:

Յաջորդ օր սկսեցին պետական աշխատանքները: Կառավարութիւնը հայրենի հողի վրա անցաւ գործի:

⁂

Իսկ գործ շատ կար: Վերից վար պէտք էր կառուցանել պետական մեքենան: Երկիրը կատարեալ քաոսի եւ անիշխանութեան մէջ էր — պէտք էր կարգ ու օրէնք հաստատել: Գաղթականութիւնը անունդ ու բնակարան էր պահանջում — պէտք էր տալ: Պէտք էր կարգադրել պարենաւորման ու դրամական հարցերը: Սահմաններին վրա ընդհարումներ էին տեղի ունենում, մահմետական խռովութիւնները երկրում չէին վերացած խսպառ — պէտք էր հաշտութիւնը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ: Մի խօսքով, պէտք էր ոչնչից պետութիւն ստեղծել:

Եւ Թիֆլիսից եկած գործիչները երեւանում գտնուողների հետ համերաշխ եւ համախորհուրդ՝ լծուեցին աշխատանքի:

Թիֆլիսի եւ Երեւանի Ազգ. Խորհուրդների մի շարք խառն նիստերում վերջնական ձեւ ստացան Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւն: Որոշուեց, հակառակ ժողովրդականների քէֆի, եռապատկել Ազգ. Խորհրդի անդամների թիւը եւ հրաւիրել այլազգիների՝ թուրքերի, եզիդների ու ռուսների ներկայացուցիչներին: Այս ձեւով կազմուեց Հայաստանի առաջին օրէնսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդ անունով:

Կառավարութեան կազմը պահուեց նոյնը, ինչ որ նշանակուած էր Թիֆլիսում: Քիչ յետոյ հրաւիրուեց միայն մի նոր նախարար արդարադատութեան համար՝ տեղական անկուսակցական գործիչներից մէկը՝ Գ. Գեւորգեանը:

Հաստատուեց Հայաստանի ազգային դրօշակը՝ հորիզոնական կարմիր, կապոյտ ու ճարճի դոյներով: Դրօշակի ձեւի եւ դոյների շուրջ եղան բաւական երկար խորհրդակցութիւններ. ի նկատի առնուեցին հայոց պատմական դրօշակները, լուեց հայկարան Մտ. Մալխասեանի հիմնաւորած գեկուցումը հայկական դրօշակի մասին եւ, ի վերջոյ, որոշուեց ընդունել վերոյիշեալ երեք դոյները՝ պայմանով, որ վերջնական հաստատումը կատարւի Սահմանադիր Ժողովի կողմից, որը պէտք է դումարուէր Հայաստանի երկու հատուածների միացումից յետոյ:

Ի՞նչ բովանդակութիւն կամ խորհուրդ էր դրւում այդ դոյների կամ դրօշակի ամբողջութեանը մէջ:

Առանձին պատգամաւորներ իրենց մտքում ունէին, անշուշտ, որոշ բացատրութիւն, ոմանք ճառով էլ արտայայտեցին, բայց Հայ. Ժողովրդը այդ մասին որեւէ որոշում չտւեց, եւ դրօշակն իր ամբողջութեան մէջ, դոյների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շուտ, արդիւնք էր քւէարկութեան պատահականութեան:

Պատգամաւորների մի մասի կողմից մասնաւոր առարկութիւն էր լսւում — գլխաւորապէս գործնական տեսակէտից — նարնջագոյնի դէմ — Հայաստանում դժւար էր այդ գոյնի կտոր գտնել: Առաջարկւում էին փոխարէնը դնել կանաչ գոյն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գոյներից մէկն է: Բայց նարնջի գոյնը առանձնապէս պաշտպանում էր Քաջաղնունին, որ ղեկավարւում էր սոսկ գեղասիրական նկատումներով. կարմիրի, կապոյտի եւ նարնջագոյնի ներդաշնակութիւնը դիւր էր գալիս նրա ճաշակին:

Կային, սակայն, հայկական եռագոյնի մէջ եւ գաղափար ու խորհուրդ գնողներ: Այդ գոյները, կարծես, բխում էին մեր կեանքից, խորհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան: Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր. կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գոյնը՝ խաղաղումը աշխատանքի: Հայ ժողովուրդը, որ արիւնով էր ձեռք բերել իր ազատութիւնը, հայրենի կապոյտ երկնքի տակ, իր համբաւաւոր աշխատասիրութեամբ՝ պիտի վերաշինէր երկիրը եւ ապրէր ազատ ու երջանիկ...

Հայաստանի Խորհրդի պաշտօնական բացումը նշանակւեց օգոստոս 1-ին:

Երկու օր առաջ, յուլիս 30-ին, Երեւան եկան դերմանական ներկայացուցիչ զօր. Ֆոն-Կրեսը եւ աւստրիական ներկայացուցիչ բարոն Ֆրանկել-Չէյնը Վրաստանի մեր դիւ. ներկայացուցիչ Ջամալեանի եւ մի քանի սպաների ուղեկցութեամբ: Կայարանում նրանց ցոյց տրւեց հանդիսաւոր ընդունելութիւն: Երեկոյեան տրւեց հացկերոյթ քաղաքագլխի կողմից:

Յաջորդ օր նրանք այցելեցին վարչապետին ու Հայաստանի Խորհրդի նախագահին, ապա մեկնեցին Էջմիածին՝ տեսնելու համար կաթուղիկոսի հետ: Ժամը 5-ին վերադարձան Էջմիածնից եւ ընդունեցին Հայաստանի Խորհրդի նախագահի ու վարչապետի փոխայցելութիւնը եւ ունեցան նրանց

հետ երկար խօսակցութիւն՝ հայկական գործերի մասին։ Ներանց այցելեցին եւ միւս նախարարները։ Երեկոյեան կառավարութիւնը հացկերոյթ տուեց ի պատիւ հիւրերի, որին ներկայ էին եւ երեւանում գտնուղ թիւրք սպաները։ Արտասանուեցին ճառեր։ Գիշերը Ֆոն-Կրեսը մեկնեց Թիֆլիս, իսկ բարոն Ֆրանկենշտէյնը մնաց Հայաստանի Յորհրդի բացմանը ներկայ գտնուելու համար։

Առաջին դիւանագիտական ընդունելութիւնն էր այս Հայաստանի հողի վրա։

Թիֆլիս վերադառնալիս, գնացքում, Ջամալեանը մտերիմ խօսակցութիւն է ունենում զօր. Ֆոն-Կրեսի հետ։ Զօրավարը ցոյց է տալիս իր կառավարութեան ուղարկելիք հեռագիրը։ «Այդ հեռագրում, հաղորդում է Ջամալեանը Երեւանի կառավարութեան, նա պարմանալի համոզութեամբ խոստացել է այն մտահոգութիւնները, որ դուք արտայայտեցիք մեր առանձին ունկնդրութեան ժամանակ, եւ ներկայացնում է այդ մտահոգութիւնները ոչ թէ ձեր, այլ իւր անունից։ Միայն հեռագրի վերջում նա մեր կառավարութեան անունից յայտնում է, որ վերջինս դէմ չի լինի, եթէ աւստրօ-հունգարական զօրքերը գան Հայաստան։ Ես խնդրեցի, որ գեներալը հեռագրի մէջ մոցնի նաեւ Ղարաբաղի դինաթափութեան խնդիրը, որ եւ նա կատարեց։ Այդ հեռագրի մէջ գեներալը խօսում է ամենայոռի արտայայտութիւններով թիւրքերի մասին՝ նրանց քաղաքականութիւնը բնորոշելով երկու խօսքով՝ վրդովեցուցիչ թալան եւ հայ ժողովրդին սովամահ անելու ձգտում»։

Նոյն տեսակցութեան ժամանակ Ֆոն-Կրեսը Ջամալեանին ասել է, ի միջի այլոց, նաեւ, որ՝

«Մեր յարաբերութիւնները տաճիկների հետ բաւական վատացան չնորհիւ մեր միջամտութեան Անդրկովկասեան գործերին։ Թիւրքերը այս երկիրը իրենցն են համարում ռուսների հեռանալուց յետոյ եւ, յանկարծ, մենք ասում ենք՝ « halt! » (կեցիր), բնական է, որ պէտք է լարուեն մեր դէմ»։

«Թիւրքերը չեն ենթարկուում ընդհանուր հրամանատարութեան պահանջներին և իրենց գլխու դասաւորում զօրքը սահմանաճակատներում...»*)

⁂

Օգոստ. 1-ին, երեւանի քաղաքային ակումբի դահլիճում, հանդիսաւոր չքով բացուեց Հայաստանի Յորհրդի անդրանիկ նիստը։ Քաղաքը ընդունել էր տօնական կերպարանք։ Փողոցները բռնուած էին բազմութիւններով։ Ակումբի առջեւ երկկարգ շարուած էր զօրքը։

Ակումբի սրահը յարմարեցուած էր Յորհուրդի նիստերին։ Մէջտեղը դրուել էին պատգամաւորները. բեմի վրա՝ նախագահութիւնը։ Ներկայ էր կառավարութիւնը ամբողջ կազմով։ Ձախ օթեակը բռնում էին Գերմանիայի, Աւստրիա-Հունգարիայի, Թիւրքիայի ներկայացուցիչները, պարսից հիւպա-

---

*) Կ. Ղազարեան եւ Մ. Ներսիսեան, «Առաջին Մասսայական—Յեղափոխական շարժումները Հայաստանում», 1932, երեւան, էջ 222-223։



ԱԼ. ՍԱՀԱԿԵԱՆ
Հայաստանի խորհուրդի նախագահ



Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
Հայաստանի անդրանիկ վարչապետ



Մ. ԲԵՐԲԵՐԵԱՆ
Հայաստանի անդրանիկ պետական վերահսկիչ



ԶՕՐ. Ք. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Զինուորական նախարար

տոսը եւ ռուս ու մահմեդական ազգ. խորհուրդների ներկայացուցիչները: Ալ օթեակում նստած էին բանակի հրամանատար զօր. Նազարբէգեանը, զօր. Սիլիկեանը եւ ուրիշ զինուորականներ: Մամուլի ներկայացուցիչներին յատկացուած էր առանձին տեղ: Դահլիճի յետեւի մասը եւ վերնայարկը բերնէ բերան բռնուած էին հասարակութեամբ:

Հայաստանի Խորհրդի պատգամաւորները դասաւորուած էին նախօրօք սահմանուած կարգով. ալ կողմը նստած էին Հայ Ժողովրդական կուսակցութեան անդամների եւ մահմեդականների, եզիդների ու ռուսների ներկայացուցիչները: Կենտրոնում եւ ձախ կողմի մի մասում՝ դաշնակցականները, իսկ ձախակողմում՝ սոց.—դեմոկրատներն ու սոց.—յեղափոխականները:

Հայաստանի անդրանիկ օրէնսդրական մարմնի առաջին նիստը բանալու պատիւը վիճակուեց Հ. Ազգ. Խորհրդի նախագահ Ա. Սահակեանին: Խօրին լռութեան մէջ բեմ ելաւ նա եւ արտասանեց բացման ճառը, որը տեղն ու տեղը թարգմանուեց ռուսերէն ու թուրքերէն լեզուներով:

«Բաղաքացինե՛ր, պատգամաւորներ Հայաստանի Խորհրդի:

Գերագոյն Հայոց Ազգային Խորհրդի կողմից ես պատիւ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի եւ յայտարարել, որ այսուհետեւ սա՛ է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան:

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական եւ կը բանայ մի նոր լուսաւոր դարաշրջան մեր երիտասարդ պետութեան կեանքում, ինքնուրոյն քաղաքական եւ տնտեսական զարգացման:

Այս օրը կը մնայ միշտ յիշատակելի եւ ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազանքն ու նեւրական տենչը ինքնորոշման, թէեւ անհնարին դժուարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին չատերը ձեզանից լաւատեղեակ չեն՝ ես յոյժ կարեւոր եմ դատում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչեւ իր վերջին ճեւակերպումը անկախ պետութիւնների դաշափարը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս եւ մեւսները, հանդէս եկան իբրեւ անկախ պետութիւններ ա՛յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կազմալուծւած. վրաց սոցիալ-դեմոկրատ Փրակցիայի նախաձեռնութեամբ եւ առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ:

Անդրկովկասի ամրողջութիւնը փլւելուց յետոյ մեր երկիրը թողնւած էր իր բախտին, ուստի Հայոց Ազգային Խորհուրդը չտապեց իր վրա վերցնել կառավարութեան բոլոր ֆունկցիաները:

Հէնց այդ ժամանակն էր, որ ստացւեց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնագիրը նոր հոդային գրաւումների մասին եւ պահանջւում էր պատասխան 48 ժամւայ ընթացքում: Գերագոյն Խորհրդի կողմից անմիջապէս առանձին պատւիրակութիւն ուղարկւեց Բաթում յանձինս Ց.

Քաջազնունու, Մ. Պապաջանեանի եւ Ա. Խատիսեանի՝ տալով նրանց արտակարգ լիազօրութիւններ բանակցութիւններ վարելու տաճիկ պատուիրակութեան հետ:

Մեր պատուիրակութիւնը յաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց եւ այնպէս ստիպւած էր ընդունել վերջնագիրը եւ խաղաղութեան դաշինք կնքել վեհիր փաշայի եւ Խալիլ բէյի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային Ժողովրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչեցին իրրեւ ներկայացուցիչներ անկախ Հայաստանի եւ ստորագրեցին յունիս 4-ի դաշինքը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային, Բուլղարիային: Պոլսում է մեր երկրորդ պատուիրակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը եւ Մ. Պապաջանեանը, որոնք ուղեւորւել են այնտեղ օսմանեան կառավարութեան հրաւէրով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը եւ այն հանգամանքները, որոնց մէջ գտնւում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից՝ քաղաքական եւ տնտեսական ստեղծւած դրութիւնը, Հայոց Ազգային Ժողովուրդը սկզբից իր սիրտը եւ անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենադնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հաւատում եմ, որ մեր երկրի սահմանները կրնդարձակւեն կեանքի երկաթէ ուժով, մեր արդար եւ անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ դրաււած հողամասերի վերաբերմամբ եւ նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնութեան եւ խաղաղութեան ուղին, եւ ուղում եմ յուսալ, որ չենք սխալւում:

Մինչ այդ, մենք կը կատարենք սրբութեամբ եւ անչեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բխում են խաղաղութեան դաշինքից: Թողնե՛նք ապագայ հեռանկարները, յամենայն դէպս, այսօր այստեղ առանց տատանումների եւ լիակատար վճռականութեամբ մենք դնում ենք խարիսխը մեր պետական նաւի եւ դնում ենք հիմքը պետական չէնքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իրրեւ պատկների մէկ հարազատ մայր հայրենիքի»:

Սահակեանի ճառը լսւեց խորը յուզումով: Պատգամաւորներն ու հասարակութիւնը, յաճախ, ընդհատում էին նրան բուռն ծափահարութիւններով:

Երբ, իր խօսքն աւարտելուց յետոյ, Սահակեանը արտասանեց՝ «Ցայ-

տարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացուած», — դուրսը, Խորհրդարանի շէնքի գլխին, բարձրացաւ Հանրապետութեան եռագոյն դրօշակը եւ հազարաւոր բերաններ որոտացին՝ «կեցցէ՛»։ Ծափահարութիւնները թնդացրին օդը։ Հնչեց «Մեր Հայրենիք»–ը։ Զօրքը պատուի կեցաւ։

Հայաստանի Խորհրդի անդամների ցանկը յայտարարելուց յետոյ, սոց.–դեմ. պատգամաւորների ձեռնպահութեամբ, նախագահ ընտրուեց Ա. Սահակեանը (դաշն.), փոխ–նախագահներ՝ Դր. Տէր–Յակոբեանը (ժող.) եւ Դ. Զուրեանը (ս.–յ.)։ Քարտուղար՝ Պ. Զաքարեանը (անկ.), երկրորդ քարտուղար՝ Ե. Սարգսեանը (դաշ.)։

Խորհրդի նիստից յետոյ, զօր. Նազարբէկեանի գլխաւորութեամբ, տեղի ունեցաւ զօրահանդէս, որին ներկայ էին օտար ներկայացուցիչները, Խորհրդի եւ կառավարութեան անդամները եւ խուռն բազմութիւն։ Զօրքերը, երաժշտութեամբ ու կանոնաւոր շարքերով, անցան հանդիսատեսների առջեւից եւ բարձրացան Աստաֆեան պողոտայով, հասարակութեան աննկարագրելի ցնծութեան ու ծափերի մէջով։

Տեսարանը յուզիչ էր։ Շատերի աչքից արցունք էր հոսում։ Հայաստանի Խորհրդարան, հայոց կառավարութիւն, հայկական բանակ... Երազ չէ՞ր արդեօք։

Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, օգոս. 3–ին, վարչապետ Քալանթարին կարդաց կառավարական յայտարարութիւնը.

«Բացառիկ ծանր պայմանների մէջ է դործի անցել իմ կազմած կառավարութիւնը։ Նա կոչուած է իրականացնելու դործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել եւ տակաւին դուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից։ Կառավարութիւնը չունի ո՛չ մի յենարան անցեալում. նա չի՛ յաջորդում նախկին կառավարութեան՝ շարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ։ Նա հարկադրուած է սկսելու ամէն բան սկիզբից. անձեւ քաոսի եւ աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ եւ աշխատունակ մի մարմին։

Մի կողմից, կառավարութիւնը դտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆիկ։

Զորս տարի տեւող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ռուսական զօրքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնները, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետութիւնների — այս խորին ցնցումները չէին կարող չքայքայել իրենց ետեւից ահռելի հետքեր։ Տնտեսական կեանքի ու ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, դաղարում ապրանքների արդիւնաբերութեան եւ փոխանակութեան, զինամթերքի ծայր աստիճանի պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանդութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթեւեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարիւր հազարներով հաշուող անտուն

եւ անանուն դաղթականութիւն, անապահով կացութիւն սահմաններուն վրա եւ որպէս անխուսափելի հետեւանք այս բոլորի — անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմաններուն մէջ կանչուել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիւ գործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր եւ սահմանափակուելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անյետաձգելի խնդիրներով:

Կատեցնել քայքայման պրոցէսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից ու ստեղծել պետական շինարարութեան համար պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետեւեալ խնդիրները.

Ա. Ներքին գործերի սահմաններում.

1. Հաստատել երկրում տարրական իրաւակարգ, կեանքի ու գոյքի ապահովութիւն:

2. Բանալ հաղորդակցութեան ճանապարհները անարգել երթեւեկութեան համար:

3. Վերականգնել պուտա–հեռագրական նորմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ եւ թէ հարեւան պետութիւնների հետ:

4. Եռանդուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տագնապը:

5. Տնօրինել գաղթականների եւ փախստականների վիճակը, մասամբ վերադարձնել իրենց տեղերը, մասամբ տեղաւորել նոր վայրերում:

6. Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր Ժողովի հաւաքումը կարելոյն չափ շուտ:

Բ. Ֆինանսների սահմաններում.

Հող պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովւի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը եւ ապրանքների փոխանակութիւնը, ինչպէս նաեւ մշակւի հարկերի առողջ սիստեմ:

Գ. Արդարադատութեան սահմաններում.

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւահասկացման եւ իրաւական սովորոյթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրէական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ. Զինւորական գործերի սահմաններում.

Վերակազմել երկրի զինւորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թւով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե. Արտաքին գործերի սահմանումներում.

1. Ամրացնել օսմանեան կառավարութեան հետ հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Մասնաւորապէս ջանալ կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք առել օսմանեան կայսրութեան հանդէպ ու հետեւել, որ օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ: Մասնաւորապէս լուծել օսմանեան գործերի մեր երկրից դուրս բերելու հարցը եւ գաղթականների վերադարձը:

2. Ազրբէջանի եւ Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան գալով՝ լուծել Հայաստանի եւ այլ պետութիւնների սահմանների հարցը՝ հիմք ունենալով ազգագրական սկզբունքը, իբրեւ միակը, որ համապատասխանում է ամենաւար պետութիւնների ոգուն ու նպատակներին:

3. Լիկվիդացիայի ենթարկել, համաձայնութեան գալով Ազրբէջանի եւ Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկութիւնները եւ գոյքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետութիւնից:

Այս է կառավարութեան ծրագիրը: Սա կարելի է անուանել պետութեան գոյութիւնը ապահովող ամենաանհրաժեշտ գրաւականների ծրագիրը: Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջութեամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի չարք կարեւոր եւ արդէն հասունացած խնդիրներ: Բայց կառավարութիւնը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետեւ նրանց լուծումը այսօրւայ պայմանների մէջ համարում է անկարելի: Կառավարութիւնը չի ուզում սխալների մէջ գցել երկիրը լայն հեռանկարներով եւ անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականութիւններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից: Կառավարութիւնը համոզուած է, որ իր առաջադրած ծրագիրը մաքսիմումն է այսօրւայ հնարաւորութեան: Կառավարութիւնը լարելու է իր ամբողջ ոյժն ու կարողութիւնը այդ մաքսիմումին հասնելու եւ յոյս ունի յաջողութեամբ լուծելու դրւած խնդիրների գոնէ մի մասը, եթէ իր կողմն ունենայ Ժողովրդի անվերապահ վստահութիւնն ու գործօն աջակցութիւնը»:

Քաղաքնունիի յայտարարութիւնից յետոյ, անմիջապէս խօսք առաւ Հ. Ց. Դաշնակցութեան ներկայացուցիչ Սմբ. Ոսկանեանը, որ, ընդհանուր առմամբ, կառավարութեան ծրագիրը գտաւ ընդունելի եւ խոստացաւ իր կուսակցութեան վստահութիւնը:

Երկրորդ ճառախօսը՝ սոց.-յեղ. Ա. Ջոնդկարեանը՝ կառավարութեան յայտարարութիւնը գտաւ ընդհանուր եւ անբովանդակ, անհամապատասխան անդրանիկ կառավարութեան կոչումին. վարչապետը ոչինչ չասաց կառավարական դրութեան եւ քաղաքացիական ազատութիւնների մասին: Ա. Ջոնդկարեանը առանձնապէս խիստ քննադատեց յայտագրի արտաքին քաղաքականութեան մասը՝ զարմանք յայտնելով, որ նրա մէջ ոչ մի խօսք չի ասւած Ռուսաստանի մասին: Եւ եզրափակեց, թէ կառավարական յայտագիրը սոց.-յեղափոխականներին չի գոհացնում, ուստի նրանք որոշել են սպասել գործի:

Ընդհակառակը, Հայ Ժող. կուսակցութեան կողմից գրաւոր ճառ կար-

դացող Ա. Մխիթարեանը գտնում էր կառավարական համեստ ծրագիրը միանգամայն գոհացուցիչ։ Աւելին, տիրող պայմաններում, կարելի չէր պահանջել։

Ծրագրից գոհ էին եւ մահմեդականների ներկայացուցիչն ու ռուս պատգամաւոր Ա. Զօրինը։ Վերջինս, սակայն, անհրաժեշտ էր գտնում առաջ բերել աւելի սերտ գործակցութիւն ռուսների հետ։

Սոց.-դեմոկրատների կողմից խօսեցին երկու հոգի՝ մենշեւիկ Հ. Ազատեանը եւ բոլշեւիկ Ա. Մելիքեանը։ Երկուսն էլ դէմ արտայայտեցին Հայաստանի անկախութեան եւ կառավարական ծրագրին)։*

Օգոստ. 6-ի նիստում Ց. Քաջազնունին պատասխանեց եղած քննադատութիւններին։ Նա յայտնեց, որ ինքը գիտակցաբար խուսափել է լայն ու անիրագործելի խոստումներից եւ կառավարական ծրագրի մէջ դրել է միայն օրուայ հրատապ կարեւորութիւն ունեցող հարցեր։ Իր քաղաքականութեան հիմքը կազմելու են քաղաքացիական ազատութիւններն ու ռամկավար սկզբունքները։ Արտաքին քաղաքականութեան ասպարէզում մնալու է Բաթումի դաշնագրի տեսակէտի վրա եւ դրանից մազաչափ չեղում չի թոյլատրելու։ Ապա իբրեւ եզրափակում, դրեց վստահութեան պահանջ։

Այդ պահանջին ընդառաջ գնացին միայն դաշնակցականներն ու մահմեդականները. միւս պատգամաւորները դէմ եղան։ Այսպիսով, դեռ գործի չսկսած, ծագեց կառավարական տագնապ։

Փափուկ դրութիւնից դուրս գալու համար յայտարարուեց ընդմիջում, որից յետոյ ժողովրդականների մի մասն էլ միացաւ դաշնակցականների բանաձեւին, եւ կառավարութիւնը ստացաւ վստահութեան քուէ։ Յօգուտ կառավարութեան քուէարկեցին դաշնակցականները, 4 ժողովրդականներ, մահմեդական եւ ռուս պատգամաւորները. ձեռնպահ մնացին 5 սոց.-դեմ., 3 սոց.-յեղ., 2 ժողովրդական եւ 1 անկուսակցական՝ Գ. Ղազարեանը, որը յետագային, համարեա միշտ, ընթացաւ սոց.-դեմոկրատների հետ միասին։

Այսպիսով, իր կեանքի առաջին իսկ օրից, Հայաստանի Խորհուրդը դուրս եկաւ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնութիւն չունեցող, հակամարտութիւններով եւ անակնկալներով հարուստ մի մարմին։ Նրա այս հիւանդութիւնը բնածին էր եւ մինչեւ վերջ էլ կարելի չեղաւ դարմանել։

*) Այստեղ պէտք է յիշել, որ սոց.-դեմոկրատ պատգամաւորները Հայաստանի Խորհրդի անդամ էին նշանակւել դեռ եւս համառուսական անունը պահող, բայց փաստօրէն վրաց Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան կողմից. Հ. Ազատեանի լիազօրագիրը ստորագրել էր Նոյ Ռամիշվիլին։ Սոց.-յեղափոխական պատգամաւորները նշանակւած էին իրենց կուսակցութեան Անդրկովկասեան կազմակերպութեան կողմից։

ԳԼՈՒԽ ԺԷ.

«ԱՆՁԵՒ ՔԱՕՍԻ» ՄԻՋԻՑ

Աբսահարդ դժուար պարտականութիւն էր դնում պատմութիւնը Հայաստանի դործիչների վրա: Իսկապէս որ, «անձեւ քաոսի եւ աւերակների կոյտ էր» Հայաստանը այդ օրերին: Եւ սարսափելին այն էր, որ չէր երեւում ոչ մի հեռանկար: Թիւրքերը ծեծում էին արդէն Բագուի դռները: Գերմանացիք՝ յաղթական արեւմուտքում: Ռուսաստանում քաղաքացիական կռիւն էր ծաւալւում իր բոլոր արհաւիրքներով: Դրսից պաշտպանութիւն, ապրուստի միջոց, դրամական օժանդակութիւն չէր դալիս: Ինչ որ արւելու էր՝ պէտք էր անել սեփական ուժերով:

Հայաստանը, աւելի շուտ, դաղթականական կայան էր. ամբողջ երկրում շուրջ 450,000 դաղթական էր թափւած, որից մօտ 40,000ը՝ Երեւանում, շատերը՝ փողոցների եւ աւերակ շէնքերի մէջ: Հաց չէր ճարւում, ժողովուրդն ապրում էր ինչով որ պատահեց: Գետնախնձորով կամ լորիով խառն հացի փունրը քաղաքում, սկզբի օրերին, արժէր 5 րուբլի եւ այն էլ ճարւում էր դժւարութեամբ:

Սարսափելի էր որբերի վիճակը: Երեւանի «Զանգ» թերթը գրում էր օդոստ. 3–ին «Տասնեակ հազարաւոր որբեր այսօր ցրւած Հայաստանի Հանրապետութեան սահմաններում, մոռացած ամէնքից՝ ենթակայ են ցրտի, քաղցի և համաճարակ հիւանդութիւնների... Մահացողներին վերջ չկայ. մեռնում են ամէնքը եւ ամէնուրեք, գիւղերում թէ քաղաքներում, բացօդեայ ամէնքի աչքի առաջ»:

Հացի, բնակարանների, հագուստի եւ դեղերի պակասն ու դաղթականութեան խռնուածութիւնը առաջ բերին ու զարդացրին համաճարակ հիւանդութիւնները, սկզբում քոլերան, ապա բծաւոր տիֆը, որի դերանդին առատ հունձ էր անում ամէն կողմ: Տուն չկար, որ հիւանդ չունենար: Հիւանդները թափւած էին և՛ փողոցներում ու հրապարակներում: Միայն յունիս ամսի 12–18–ին Երեւանի գինւորական հիւանդանոցը ընդունել էին 370 հիւանդներ, որից մեռել էր 142 հոգին, առողջացնել 25: Օդոստ. 28–29–ին հիւանդանոցում կային 197 հիւանդներ, մեռան 17 հոգի: Զինւորական հիւանդանոցից դուրս,

մասնաւոր բժիշկների տեղեկութիւններով օգոստ. 12–29-ին, Երեւանում մնացել էր 56 մարդ եւ հիւանդացել 157: Այս դեռ սկիզբն էր երկանց: Հապճեպով պատրաստուած հիւանդանոցներն անզօր էին իրական դարման հասցնելու. դեղ չկար, վառելիք չկար, անուշդ չկար, սպիտակեղէն չկար: Եւ մարդիկ մնում էին անմասունչ, հարբուրներով, հազարներով: Ժողովուրդը ըսպառում էր վառուող մոմի պէս:

Սովի ու համաճարակի հետ, երկրում խախտուած էր եւ ապահովութիւնը: Դասալիք զինուորներ, ապրուստի միջոց չունեցող զաղթականներ ու տեղացիներ, խմբերով եւ անհատ-անհատ, յարձակւում էին ճամբորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրութիւնը: Հասարակական չարիք էր դարձել, այսպէս կոչուած «մասուղերիզմը» — մասուղերով զինուած մարդիկ շահատակութիւններ էին անում նոյնիսկ մայրաքաղաքի փողոցներում, եւ խաղաղ բնակչութիւնը ստատպում էր նրանց ձեռքին:

Դրութիւնը քանի գնաց ծանրացաւ: Մինչեւ հոկտեմբեր դրեթէ վերջացաւ Հայաստանի սահմաններում գտնուած հացի պաշարը: Դրսից ոչինչ չէր գալիս: Պետական եւ հասարակական ամբարները պարապ էին: Ստեղծուեց սարսափելի կացութիւն: Ո՛չ միայն զաղթականութիւնը, այլ եւ տեղացիները մատնուեցին սովամահութեան: Եւ այս զարհուրելի վիճակը տեւեց մինչեւ 1919 թ. գարունը, երբ հասաւ ամերիկեան ալիւրը: Սովը առանձնապէս ահռելի ձեւեր ընդունեց Սուրմալուի եւ Ալեքսանդրապոլի շրջաններում:

Վեց ամսուայ ընթացքում, սովից ու հիւանդութիւններից, Հայաստանում մեռաւ մօտ 180,000 մարդ: Թիւրքերը գտել էին կոտորածի նոր ձեւ՝ աւելի իրական եւ աւելի անաղմուկ: Մի վեց ամիս եւս եւ Թուսահայաստանն էլ կը հասնէր Թիւրքահայաստանի օրին: Արժէ՞ր այդ պայմաններում կռիւ անել, զօրամասեր զրաղեցնել, ի զուր տեղը արիւն թափել: Հայաստանի զորձը յանձնելով սովին ու տիֆին՝ Թիւրքերն իրենց գլխաւոր ուժերը ուղղել էին Բագուի դէմ:

Թիւրքիայի ներկայացուցիչը Երեւանում՝ Մեհմէտ Ալի փաշան «մարդասիրաբար» օգնում էր կառավարութեան՝ մերթ ընդ մերթ «նեփրելով» կամ ծախելով Հայաստանին մի քանի վագոն ցորեն հայերից յափշտակուած պահեստներից: Եւ միաժամանակ, միջոցներ էր ձեռք առնում Հայաստանում ապրող մահմեդականութիւնը փոխադրելու Սուրմալուի ու Սարդարապատի շրջանները՝ ձգտելով մի կողմից սովից ու հիւանդութիւններից ազատել մահմեդական զանգուածները եւ միւս կողմից՝ նախկին հայկական վայրերը բնակեցնել մահմեդականներով:

Եւ, հակառակ այս դժոխային պայմաններին, հայ ժողովրդին ու նրա ղեկավարներին յաջողուեց յաղթահարել դժուարութիւնները եւ, ճիշտ է մեծ զոհերով, կենդանի դուրս գալ օրհասական պայքարից:

Հայաստանի Հանրապետութեան առաջին գործը եղաւ լարել ու գործի դնել կառավարական մեքենան: Կազմակերպուեցին նախարարութիւնները: Վերակազմուեցին բանակն ու վարչական հիմնարկութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ
Արտաքին գործոց նախարար



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Արդարադատութեան նախարար



Ա. ԷՆՖԻԱՃԵԱՆ
Ելեւմտական նախարար



Մ. ԱԹԱԲԷԿԵԱՆ
Կրթական նախարար

կանոնաւորեց զինուորականների ու պետական պաշտօնեաների ռոճիկը: Միջոցներ ձեռք առնուեցին դատարանների բարեկարգութեան ու դպրոցների բացման: Խոշոր գումարներ յատկացուեցին գաղթականների խնամատարութեան եւ աշխատանքի գործի կազմակերպութեան, որբերի հաւաքման ու պահպանման, պարենաւորման մթերքների հայթայթման համար: Մի առ ժամանակ, մինչեւ սեփական օրէնսդրութեան իրականացումը, Հայաստանի սահմաններում ընդունեցին նախկին ռուսական օրէնքները՝ ժամանակաւոր կառավարութեան, Անդրկ. Կոմիսարիատի ու Սէյմի եւ Հայաստանի Խորհրդի փոփոխութիւններով ու լրացումներով:

Առաջ բերենք այստեղ մի քանի օրինակներ Հայ. Խորհրդի առաջին շըրջանի օրէնքներից ու կարգադրութիւններից, որոնք որոշ գաղափար կը տան այն ժամանակուայ պայմանների մասին:

Օգոստ. 8-ին յատկացուեց 6 միլիոն ռուբլի գաղթականական, պարենաւորման ու զօրքի վերակազմութեան համար:

Օգոստ. 21-ին ամբողջ Հայաստանը յայտարարուեց քոլերայի կողմից վտանգուած եւ Հայ. Խորհրդի բժշկա-սանիտարական մասնաժողովը վերածուեց վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառող բոլոր հիմնարկութիւնների վրա հսկող ամենաբարձր մարմնի:

Օգոստ. 29-ին հրատարակուեց օրէնք մասնաւոր սեփականութիւն կազմող զէնքի ու զինամթերքի պետականացման մասին: Այս օրէնքի շուրջ, Խորհրդում տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ. առանձնապէս ծառացան սոց.-դեմոկրատ պատգամաւորները, որոնք համարում էին անթոյլատրելի ժողովրդի զինաթափութիւնը եւ պահանջում էին ժողովուրդը թողնել զինուած: Օրինագիծը ընդունուեց 15 քուէով ընդդէմ 7-ի:

Սեպտ. 11-ին յայտարարուեց բամբակի մենավաճառ. կառավարութիւնն իր ձեռքը առաւ բամբակի առեւտրի մենաշնորհը՝ որոշ գնով*) պետականացնելով երկրի ամբողջ բամբակը, որ, այն օրերին, միակ աղբիւրն էր կառավարական հասոյթի: Այս օրէնքն էլ կրքերի սաստիկ գրգռում առաջ բերեց Խորհրդի նիստերում եւ առատ նիւթ մատակարարեց կառավարութեան քննադատութեան համար:

Նոյն սեպտ. 11-ին հաստատուեց դպրոցական օրէնքը, որով «իւրաքանչիւր հասարակական կամ համայնական կազմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ինչպէս եւ առանձին անհատ, իրաւունք ունէին անարգել դպրոց բանալու եւ անկախօրէն վարելու սեփական միջոցներով»: Պետութեան վերապահւում էր ընդհանուր հակակշիռը:

Սեպտ. 28-ին ընդունուեց կարիք ունեցող գաղթականներին հող եւ աշխատանք հայթայթելու օրէնքը. կառավարութիւնը պարտաւոր էր ապրուստի միջոց չունեցող գաղթականներին տալ աշխատանք կամ հող կամ, հակառակ պարագային, բաց թողնել պետական նպաստ:

*) Յետագային, դեկտ. 3-ին, Հայ. Խորհուրդը պետականացուած բամբակի համար գին նշանակեց 49ռ. 50կ. փութը:

Հոկտ. 8–ին որոշուեց. կարիքաւոր զաղթականների, առաւելապէս կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ՝ առաջին հերթին գործի դնելով 1,500 դաղդահ եւ 20,000 ճախարակ: Այդ նպատակին յատկացուեց 6,691,200 րուբլի:

Հոկտ. 11–ի օրէնքով, «բոլոր զաղթական որբերի խնամատարութեան ու դաստիարակութեան գործը պետութիւնը վերցրեց իր վրա եւ անմիջական վարումը յանձնեց հանրային խնամատարութեան նախարարին»: Ինքնավարութիւններին, հասարակական կազմակերպութիւններին ու մասնաւոր անհատներին թողնւում էր իրաւունք բանալու եւ պահելու որբանոցներ, միայն պետութեան հսկողութեան տակ:

Դարձեալ հոկտ. 11–ին յատկացուեց 12,736,250 ր. որբերի, անճար եւ աննեցուկ զաղթականների օգնութեան եւ զաղթականներին տրամադրելիք բնակարանների վերաշինութեան համար:

Ժորհուրդը արձակեց նաեւ մի շարք վճիռներ աշխատաւորութեան ու պաշտօնէութեան, հաշմանդամների եւ հասարակական պարտականութիւններ կատարելիս մեռածների ընտանիքների վիճակը բարելաւող, հարկային ու պարենաւորման դրութիւնը կարգաւորող: Վարկեր յատկացուեցին մթերքների գնման, ոստիկանութեան ու նոր զօրամասերի կազմակերպման, քաղաքային ինքնավարութիւնների ու կօօպերատիւների օգնութեան եւ համանման ուրիշ կարիքների համար:

Պէտք է նկատել, որ Հայ. Ժորհրդի աշխատանքը ամբողջապէս ուղղուած էր երկրի ընթացիկ սուր կարիքների մեղմացմանը: Հիմնական շինարարութեան մասին, ի հարկէ, խօսք լինել չէր կարող: Նոյնը եւ կառավարութեան գործունէութեան մէջ. նա գերազոյն ճիգ էր թափում, գլխաւորապէս, օրւայ հրամայական պահանջներին բաւարարելու համար. հաց, դեղ եւ անդորրութիւն — այս երեք խնդիրներով կարելի էր սպառել այն ժամանակւայ «պետական շինարարութիւնը»:

Իր խզճուկ միջոցներից Հայաստանը ստիպուած էր բաժին հանել եւ երկրից դուրս դանուղ կարօտեալներին: Հոկտ. 26–ին, Հայ. Ժորհուրդը կէս միլիոն րուբլի յատկացրեց Բաղուի հայ աղէտեալներին, նոյ. 4–ին 5 միլիոն րուբլի քւէարկեց՝ Վրաստանի Հայոց Ազգային Ժորհրդին միանուագ նպաստ տալու համար, դեկտ. 3–ին 300,000 ր. վարկ բաց արաւ Պարսկաստանի հայ փախստականների օգնութեան եւ այլն: Փշրանքներ էին սրանք տիրող ծով կարիքի համեմատութեամբ, բայց Հայաստանի սեղանի վրա էլ փշրանքից զատ բան չկար, հայ ժողովուրդը չուննեցածից էր տալիս:

⁂

Հոկտ. 5–ին Ժալիլ փաշան Երեւանում յայտնեց, որ ինքը հրաման է ստացել դատարկելու Լոռի–Փամբակի շրջանը: Անմիջապէս հայ եւ թիւրք հրամանատարութիւնները գծեցին այդ շրջանը հայերին փոխանցելու ծրագիրը, եւ Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան–Լոռիի զօրամասի պետ Դրոյին՝ բռնել հեռացող թիւրք զօրքերի տեղը:

Դիլիջան–Լոռիի զօրամասը, այդ միջոցին, բաղկացած էր հետեւեալ ուժերից· պարտիզանական հետեւակ գունդ՝ գնդ· Մխրխմանեանի հրամանատարութեան տակ, պարտիզանական ձիաւոր գունդ՝ հրամանատար գնդ· կորոլկով, 4րդ լեռնային մարտկոցը (4 թնդանօթ) եւ նոր կազմուող Ղազախի միլիցիոն գունդը՝ ապայ Թ· Մնացականեանի գլխաւորութեամբ: Դրօն զօրամասի հրամանատար էր նշանակուած օդոստոսին: Քաղաքացիական մասի օգնականն էր Ս· Մանասեանը:

Զօրքերը դասաւորուած էին հետեւեալ կերպով· Ղազախի զօրամասի պետ գնդ· Կորոլկովը, ունենալով իր հրամանատարութեան տակ մի ձիաւոր հարիւրեակ, 4րդ հետեւակ գունդը եւ Ղազախի միլիցիոն գունդը՝ բռնում էր ամբողջ հայ–վրացական սահմանագիծը (Կողբ–Քարվանսարա), ուր կարգը մինչեւ 1918 թիւը բնաւ չխանգարուեց:

Ղարաքիլիսայում դանուող թիւրքերի դէմ — Բոզիքենդ — Վոսկրեսենովկա—Վարդանլու (Վարդանլուն չէզոք վայր էր)—կանգնած էին 2րդ ձիաւոր գնդի երկու հարիւրեակները՝ ապայ կուռո Թարխանեանի հրամանատարութեամբ:

Ընդհանուր պահեստը, գնդ· Մխրխմանեանի գլխաւորութեամբ, բաղկացած էր 4րդ գնդի 2 դումարտակներից՝ Դիլիջանում եւ 1 դումարտակից՝ Նիկիտինոյում:

Ստացած հրամանի վրա, հոկտ· 18–ին Դրօն կարգադրեց կուռո Թարխանեանին, 2 հարիւրեակ ձիաւորներով չտապ գնալ գրաւել Դսեղ—Քոլաղերան—կաչական գիծը, իսկ Բաչ Աբարանի զօրամասը — առաջին ձիաւոր գունդ, 5րդ հետեւակ գունդ, 1 մարտկոց — հրամանատարութեամբ գնդ· Ղորղանեանի՝ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ գնաց բռնել Ջալալ–Օղլի—Գերգեր—կուրթան գիծը: Կարգադրութիւնը կատարուեց չատ արագ, և հոկտ· 21–ին արդէն շրջանը ամբողջութեամբ հայերի ձեռքին էր, գրեթէ առանց միջադէպի:

Մի–երկու աննշան միջադէպեր պատահեցին հայ եւ վրացի զօրամասերի միջեւ Ջալալ–Օղլիի եւ Դսեղի շրջաններում: Առաջինում, հակառակ մերոնց նախազգուշացման, վրացիները հետախոյզների մի խումբ ուղարկեցին կաչականի կողմը, բայց մեր ձիաւորների կրակով յետ շպրտուեցին: Դսեղի կողմը վրացիները առաջ քաշեցին զէրմանացի գինուորների մի խումբ, որ մոտաւ հայերի գրաւած Քարինջ գիւղը եւ ձերբակալուեց ու գինաթափուած յետ ուղարկուեց՝ մեր զօրամասի կողմից: Երկու օր յետոյ, վերից եկած հրամանով, զէնքերն էլ վերադարձուեցին զերմանացիներին: Այս միջադէպը առիթ ծառայեց զօր· Ցոն–Քրեսի միջամտութեան: Առհասարակ, Լոռի–Փամբակի դրաւումը ահագին խլրտում առաջ բերեց Թիֆլիսում:

Հոկտեմբերից սկսած, արտաքին աշխարհում տեղի ունեցան արտակարգ դէպքեր: Բուլղարիան պարտուած՝ դուրս էր եկել պատերազմողների շարքից: Աւստրեւհունգարական կայսրութիւնը ճարճատում էր փլուզումի նախօրեակին: Ամերիկայի մուտքը պատերազմի մէջ նախորոշում էր պատերազմի վախճանը: Եւ որքան ընդհանուր հաշւեյարդարի օրը մօտենում էր,

այնքան փոխուում էին տրամադրութիւնները եւ Հայաստանում ու Հայաստանից դուրս գտնուող հայկական շրջանների մէջ: կասկածն ու յոռետեսութիւնը սկսում էր տեղի տալ լաւատեսութեան:

Հայաստանի Հանրապետութեան կեանքի առաջին ամիսներում չատ ուժեղ էր թերահաւատութիւնը: Մանաւանդ, Թիֆլիսում, Հայաստանի մասին խօսելիս ու գրելիս «հանրապետութիւն», «անկախութիւն» բառերը արտասանւում էին հեղնանքով ու չակերտների մէջ էին առնւում: Հայ սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-յեղափոխականները, հակառակ որ մասնակցում էին Հայ. Ազգ. Խորհրդի աշխատանքներին, ըստ էութեան բացասական դիրք ունէին եւ պայքարում էին անկախութեան դէմ: Ժողովրդականները սկզբունքով ճանաչում էին անկախութիւնը, բայց Հայ. Ազգ. Խորհրդում, համաբերա միշտ, ընթանում էին ձեռք-ձեռքի սոց.-դեմոկրատների եւ սոց.-յեղափոխականների հետ, իսկ Թիֆլիսում նրանց կուսակիցները ջանք չէին խնայում՝ վարկաբեկելու Հայաստանի կառավարութիւնը, որով, անուղղակի կերպով, հարուածում էին եւ Հայաստանի պետականութեան: Բացի դաշնակցականներից — այն էլ ո՛չ բոլորը — չատ քչերն էին հաւատում, որ հանրապետութիւնը կապրի ու կամրանայ:

Արեւմուտքում զարգացող դէպքերը, սակայն, հետզհետէ փոխեցին տրամադրութիւնները ե՛ւ հայկական շրջաններում, եւ, մանաւանդ, հայ բուրժուական մտաւորականութեան մէջ: Նրանք կամաց-կամաց փոխեցին իրենց վերաբերումը դէպի Հայաստանը եւ, երկւոյ անհաչտ հակառակորդները, սկսեցին հասկացողութեան գալին որոնել՝ արծարծելով Հայաստանի իշխանութեան վերակազմութեան ծրագիրը կօալիցիոն հիմունքներով: Այդ նպատակով, հոկտեմբերի վերջերին Երեւան հասան Հայ Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչները՝ Սամ. Յարութիւնեանի եւ Մին. Բերբերեանի գլխաւորութեամբ՝*) Հ. Յ. Դաշնակցութեան հետ բանակցելու՝ կօալիցիոն կառավարութիւն կազմելու նպատակով: Թիֆլիսի ժողովրդականների տրամադրութիւնը համապատասխանում էր եւ Երեւանի ժողովրդականների ձգտումներին, որոնք աւելի ամուր կանգնած Հայաստանի հողի վրա՝ ջերմօրէն պաչտպանում էին համերաչխութեան ու գործակցութեան դաղափարը:

Հ. Յ. Դաշնակցութեան չարքերում էլ կօալիցիայի հարցը դրւած էր հերթի: Հոկտեմբերի վերջերին սկսւել էր կառավարական սուր տագնապ. ընդդիմադիրների անվերջ քննադատութիւններից ու յարձակումներից զգւած

---

*) Հոկտեմբերին վերադառնալով Հիւս. Կովկասից, Կուբանի եւ Դոնի կառավարութիւնների մօտ Ազգ. Խորհրդի յանձնարարութիւնները կատարելուց յետոյ, Թիֆլիսում, ժողովրդականների մօտ ես տեսայ բոլորովին փոխուած տրամադրութիւն, դէպի Հայաստանի անկախութիւնն ու կառավարութիւնը: Այժմ նրանք ուզում էին մտնել կառավարութեան մէջ: Կօալիցիոն կառավարութեան ջերմ չատագով էր մասնաւորապէս իմ հայրենակից Միհրս Բերբերեանը, որի հետ մենք համոզւեցինք ժողովրդական միւս պարագլուխներին եւ միասին մեկնեցինք Երեւան: Ինձ էլ էր թւում, որ կօալիցիան կենսական անհրաժեչտութիւն էր Հայաստանի համար:

Ս. Վ.

ինչ որ խնդրի առթիւ ստանալով անվստահութեան քուէ՝ Քաջազնունին հրաժարական էր ներկայացրել։ Առհասարակ, Հայ․ Խորհրդում ստեղծւել էր անշնչելի մթնոլորտ, եւ այդ դրութեան վերջ տալու համար Հ․ Յ․ Դաշնակցութիւնը մտածում էր առաջ բերել կուսակցութիւնների գործակցութիւն։

Գործակցութիւնը ներկայացւում էր երկու ձեւով· ոմանք կողմնակից էին բոլոր կուսակցութիւնների մասնակցութեամբ կառավարութիւն կազմելուն, բայց կային եւ զուտ ընկերվարական նախարարութեան կողմնակիցներ։ Այս վերջին միտքը մէկ կողմ թողնւեց, որովհետեւ Հ․ Յ․ Դաշնակցութեան կողմից արւած առաջարկի վրա սոց․-դեմ․ եւ սոց․-յեղ․ ֆրակցիաները դրին ակնյայտնի կերպով անիրագործելի պայմաններ· առաջինները պահանջեցին երկու տեղ եւ անպայման ներքին կամ արտաքին գործոց նախարարութիւնը· վերջինները իրենց համար առանձին պահանջներ չունէին, բայց վճռականապէս դէմ էին, որ արտաքին գործոց նախարարութիւնը յանձնւի ժողովրդականներին եւ ներքինը՝ սոց․-դեմոկրատներին։ Այսպիսով, ընդհանուր կոալիցիայի խնդիրը մէկ կողմ էր ընկնում· միակ հնարաւորութիւնը մնում էր դաշնակցական-ժողովրդական գործակցութիւնը։ Այս հողի վրա եւ սկսեցին բանակցութիւնները։

Բանակցութիւնների ընթացքում ժողովրդականներին աւելի հետաքրքրում էր նախարարական աթոռների թիւը, քան քաղաքական սկզբունքային հարցերը։ Նրանք պնդում էին, որ իրենց յանձնւեն արտաքին, ելեւմտական, դատական եւ հանրային կրթութեան նախարարութիւնները, իսկ զինւորական նախարարը լինի անկուսակցական մէկը։ Վերջին չորս կէտերը Դաշնակցութիւնն ընդունեց, իսկ արտաքին գործոց նախարարութիւնը վերապահեց իրեն։

Ընդհանուր-սկզբունքային խնդիրներից ժողովրդականները մինչեւ վերջ պնդեցին մէկ կէտի վրա — որ հողային հարցի լուծումը յետաձգւի մինչեւ Սահմ․ ժողով կամ համաժողովրդական քւէով ընտրւած խորհրդարանի գումարումը։ Դաշնակցութիւնը այս հարցում զիջեց։

Ժողովրդականները առարկում էին Ս՛ւ Արամին ու Ա․ Խատիսեանի կառավարական կազմի մէջ մտնելու դէմ․ այս պահանջը Դաշնակցութիւնը մերժեց։

Ի վերջոյ, կոալիցիան գլուխ եկաւ եւ Հայ․ Խորհրդի նոյ․ 4-ի նիստում՝ դաշնակցական ու ժողովրդական պատգամաւորների քւէներով ընդունեց Յ․ Քաջազնունիի կառավարութեան հրաժարականը եւ Դ․ Զուրեանի ու Հ․ Աղատեանի կրքոտ քննադատութիւններից յետոյ յանձնարարեց նոյն Քաջազնունիին կազմել նոր կառավարութիւն։ Նոյն նիստում հէնց Քաջազնունին յայտարարեց նոր կառավարութեան կազմը· անպորտֆէյլ վարչապետ՝ Յ․ Քաջազնունի (դաշն․), արտաքին գործոց նախարար՝ Ս․ Տիգրանեան (դաշն․) օգնական՝ Գ․ Մելիք-Ղարագէօզեան (ժող․), ներքին գործոց՝ Արամ (դաշն․) զինւորական՝ զօր․ Յ․ Հախվերդեան (անկ․), ելեւմտական՝ Ա․ Էնֆիաջեան (ժող․), արդարադատութեան՝ Ս․ Յարութիւնեան (ժող․), հանրային կրթութեան՝ Մ․ Աթաբէգեան (ժող․), պարենաւորման՝ Լ․ Ղուլեան (ժող․),

խնամատարութեան՝ Ս. Կարճիկեան (դաշն.):

Պետական վերահսկիչ Հայ. Ազգ. Խորհրդի կողմից, սոց.-յեղ. եւ սոց.-դեմ.-ների ձեռնպահութեամբ, ընտրուեց Մինաս Բերբերեանը (ժող.):

Ինչպէս ցոյց են տալիս անունները, կառավարութիւնը բաւական ուժեղ կազմ ունէր: Բոլոր նախարարները զարգացած ու հեղինակաւոր գործիչներ էին: Ժողովրդականների մէջ կենտրոնական անձը Ս. Յարութիւնեանն էր՝ Թիֆլիսի յայտնի փաստաբաններից մէկը, պատրաստուած, Հայաստանի պայմաններն ու հայ իրականութիւնը լաւ ճանաչող, աշխատունակ ու հայ բուրժուական խաւերում մեծ ազդեցութիւն ունեցող մի գործիչ: Հայկական ու ռուսական շրջաններում լայն կապեր ունեցող, գրական ու հասարակական ջղի տէր, հայրենասէր ու ձեռնհաս մարդ էր եւ պետական վերահսկիչ Մ. Բերբերեանը:

Նոր կառավարութիւնը Հանրապետութեան կողմից ընդունուեց, իբրեւ մի քայլ դէպի աջ, դիմում բուրժուական խաւերի. «Հայաստանի Ազգ. Խորհրդի ղեկավար կենտրոնը մի քիչ թեքուեց դէպի աջ, դրում էր «Հորիզոն»-ը*), եւ այդ բանում մեծապէս պատասխանատու են սոց.-դեմ. եւ սոց.-յեղափ. ֆրակցիաները... Ստեղծուած դրութիւնը իսկական կօալիցիան է մեր իրականութեան, ուր հայ դեմոկրատիայի կուսակցութիւնն է Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ հայ բուրժուազիայի դրօշակիրը՝ ժողովրդական կուսակցութիւնը: Հայ դեմոկրատիայի եւ բուրժուազիայի կօալիցիան է, որ ստեղծուեց»:

Հասկանալի է, որ նոր կառավարութեան հետ կապւում էին մեծամեծ յոյսեր: Ենթադրւում էր նաեւ, որ Թիֆլիսից դէպի Հայաստան կը սկսի թարմ ուժերի, մտաւորական նոր գործիչների կենդանի հոսանք: Եւ, առաջին օրերին, նոյեմբ. 20-ին Երեւան փոխադրուելով, ժողովրդական նախարարներն իրենք էլ գործի կպան մեծ ոգեւորութեամբ: Ս. Յարութիւնեանը պատրաստւում էր հիմքից վերակազմել արդարադատութեան գործը, պաշտօնի կոչել հմուտ իրաւագէտներ ու դատաստանական գործիչներ: Մ. Ալթաբէգեանը հրապարակ դրեց աշխարհիկ ընդհանուր կրթութեան խնդիրը, խոստացաւ այժ տալ տեխնիկական դպրոցների բացման, էջմիածնի ճեմարանը տեղափոխել Երեւան ու հետզհետէ վերածել համալսարանի, կրթութիւնը աստիճանաբար ազգայնացնել, պետական թատրոն, թանգարան ու գրադարան հիմնել, համախմբել մտաւորականութիւնը Հայաստանում: Մ. Բերբերեանը ձեռնարկեց պետական վերահսկողութեան գործի կազմակերպման՝ պետական վերահսկողութեան իբրեւ հիմք ընդունելով նախնական կամ փաստական հսկողութեան սկզբունքը: Ա. Ենգիբարեանը յայտարարեց, թէ նոր տարւանից ներկայացնելու է կայուն պետական բիւդջէ եւ միջոցներ է ձեռք առնելու՝ ստեղծելու սեփական դրամ:

Ոգեւորութիւնը, սակայն, երկար չտեւեց — հազիւ մի քանի շաբաթ: Եւ ահա սկսուեց ժողովրդական նախարարների փախուստը Երեւանից, ուր կեանքի պայմանները չատ էին ծանր սեւ հացի, յատակի վրա քնելու եւ ոջիլի

*) Ս. Մասուրեան, «Հորիզոն», 10 Նոյ., 1918 թ.:

չվարժւած մարդկանց համար: Կառավարութեան կազմութիւնից երկու շաբաթ չանցած, կուսակցական ինչ որ ներքին տարաձայնութեան հետեւանքով, հրաժարական տւեց ու հեռացաւ հանրային կրթութեան նախարար Մ. Աֆաբէգեանը. նրա տեղը անցաւ Գ. Մելիք-Ղարագէոզեանը: Ինչ վերջը, պաշտօնական գործով, մեկնեց պարենաւորման նախարար Լ. Ղուլեանը եւ այլեւս չվերադարձաւ. Թիֆլիսում պաշտօն ստացաւ հայկական պարենաւորման հիմնարկութեան մէջ: Ղուլեանի նախարարութիւնն էլ ստանձնեց Ս. Յարութիւնեանը, որը չուտով նոյնպէս գնաց Թիֆլիս՝ իր տեղին պաշտօնակատար նշանակելով Գ. Մելիք-Ղարագէոզեանին: Այսպիսով, ստեղծւեց մի դրութիւն, երբ Հայաստանը ունէր երեք պարենաւորման նախարար եւ ո՛չ մի պարենաւորում: Մի հանգամանք, որ ի հարկէ, վնասում էր կառավարութեան հմայքին:

Կօալիցիոն կառավարութեան համար անուղղելի հարւած եղաւ եւ Խաչ. կարճիկեանի եղերական մահը նոյեմբ. 14-ին: Նա սպանւեց իր կուսակցական ընկերոջ՝ սպայ Եգոր Տէր-Մինասեանի ձեռքով, երբ նախարարական առանձնասենեակում զբաղւած էր գաղթականների տեղաւորման ու հոգատարութեան խնդիրներով:

Կարճիկեանի մահով ո՛չ միայն Հայաստանն էր զրկւում իր ամենախոշոր պետական մի գործչից, այլ եւ բովանդակ Կովկասը: Նա եղաւ վերջին տասնամեակի կովկասեան իրականութեան այն սակաւաթիւ դէմքերից մէկը, որոնք կեանքի ամենախռովայոյզ օրերին անդամ կարողացան պահել մտքի պայծառութիւնն ու հոգեկան հաւասարակշռութիւնը: Արամից յետոյ, առաջինն էր՝ կոչւած կերտելու Հայաստանի պետական չէնքը: Եւ մոլեռանդի կոյր դնդակը խլեց հայ ժողովրդից այդ թանգագին կեանքը: Հասկանալի է, թէ ինչո՞ւ նրա մահը ցնցեց ամենքին: Կարճիկեանի յուղարկաւորութիւնը իսկական համաժողովրդական սուգ էր*):

Սպանիչը վրէժ էր լուծում Կարճիկեանից, իրրեւ մէկից, որ իր վարած քաղաքականութեամբ դէպի կործանում էր առաջնորդել հայ ժողովրդին, որ գործիք էր ծառայել վրացի ազգայնականների ձեռքին, որ պատճառ էր եղել կարսի անկման ու յետագայ աղէտների: Անարդար էին այդ մեղադրանքները: Կարճիկեանին վերագրւող յանցանքների համար աւելի պատասխանատու էին այն մարդիկ, որոնց ուղղակի կամ անուղղակի ներշնչումով ոճիր էր գործում դժբախտ եղորը:

⁂

Կօալիցիոն կառավարութիւնը գործի անցաւ այն պահուն, երբ արդէն դաշնակիցների յաղթութիւնը փաստ էր, եւ հայ ժողովրդի առջեւ բացւում էին նոր հորիզոններ: Նոյեմբ. 17-ին հաղու էր մտել անգլիական մի զօրա-

*) 1919 թ. յունւ. 17-ին Հայ. Խորհուրդը յատկացրեց 75,000 ռ. ե. Կարճիկեանի ընտանիքին նպաստ եւ զաւակներին կրթութիւն տալու նպատակով:

մաս զօր. Թոմսընի գլխաւորութեամբ։ Նոյեմբ. 20-ին վերադարձել էին հաշտարար պատուիրակութեան անդամները՝ Ահարոնեանը, Խատիսեանը, Պապաջանեանը, որոնք Պոլսից դուրս էին եկել նոյեմբ. 1-ին՝ բերելով իրենց հետ Մուտրոսի զինադադարի եւ արեւմտեան ճակատի դէպքերի մանրամասնութիւնները։ Նոյն օրերին, Թեհրանից՝ Ս. Արարատեանից, Ներսէս արքեպ. Մելիք-Թանգեանի միջոցով, ստացւեց մի հեռագիր, որ չափազանց վարդագոյն հեռանկարներ էր բանում հայ ժողովրդի առջեւ. Պօղոս Նուպարը աւետում էր դաշնակիցների յաղթութեան լուրը և այն ոգեւորութիւնը, որ տիրում էր հայկական բոլոր խաւերի մէջ։

Շուտով բացւելու էր Խաղաղութեան Վեհաժողովը։ Պէտք էր շտապել պատուիրակութիւն ուղարկել Եւրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները։ Հայ. Խորհուրդը մի քանի դռնփակ նիստերում քննեց պատուիրակութեան տալիք հրահանգները։ Մանաւորապէս լուրջ ու բազմակողմանի քննութեան առնւեց Հայաստանի սահմանների հարցը։ Կար մի քանի տեսակէտ. վարչապետ Քաջազնունին գոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնւելով ծովային ելք էլ չունենալ։ Ժողովրդականները՝ Ս. Յարութիւնեանն ու Մ. Պապաջանեանը պնդում էին ծովից-ծով Հայաստանի վրա՝ Տրապիզոնի եւ Ալեքսանդրէտի ելքերով։ Դաշնակցականների մէջ էլ քիչ չէին ծովից-ծով Հայաստանի կողմնակիցներ, բայց մեծ մասը կանգնած էր միայն Սեւ ծովի ելք ունենալու տեսակէտի վրա։ Նկատողութեան առնւեց եւ մանդատի հարցը. բացի սոց.-յեղափոխականներից ու սոց.-դեմոկրատներից, որոնք պաշտպանում էին միութիւնը Ռուսաստանի հետ, Հայ. Խորհուրդը առաջին տեղը տւեց Ամերիկայի հոգատարութեան, ապա՝ Անգլիայի, յետոյ՝ Ֆրանսայի, եւ վերջը միայն՝ Ռուսաստանի։ Հայ. Խորհրդի դեկտ. 3-ի նիստում կազմւեց պատուիրակութիւնը — Ա. Ահարոնեան՝ նախագահ, Մ. Պապաջանեան եւ Հ. Օհանջանեան անդամներ։ Այս վերջինը՝ դեռ Բերլինում էր։ Հրահանգների վերջնական ձեւակերպումը թողնւեց կառավարութեան, որ եւ յանձնարարեց պատուիրակութեան պաշտպանել Սեւ ծովի ելքը՝ առանց դնելու Կիլիկիայի պահանջը։ Միեւնոյն ժամանակ հրահանգւեց Ա. Ահարոնեանին՝ սերտ գործակցութիւն հաստատել Պօղոս փաշա Նուպարի հետ։ Նոյեմբեր 9-ին պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիս։

***

Դարձեալ հրաշքն էր փրկում հայ ժողովրդին։

Նոյեմբերի կէսերին, Հայաստանի զինւորական նախարարը Երեւանի թիւրքական ներկայացուցիչ Մէհմէդ Ալի փաշայից ստացաւ հետեւեալ գրութիւնը. «Պ. Նախարար, օսմանեան կայսրութեան գլխաւոր սպայակոյտի պետը հրամայում է ինձ հաղորդելու ձեզ, որ Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս մնացող եւ թիւրք զօրքերի կողմից գրաւած հողամասերը պէտք է դատարկւեն վեց շաբաթւայ ընթացքում՝ հաշւելով 1918 թ. հոկտ. 24-ից»։



ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓԷՈՐԳ Ե· ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Եւ հետզհետէ սկսաւ թիւրքերի նահանջը ու նրանց պարպած հողերի գրաւումը հայերից: Նոյ. 18–ին հայկական զօրքերը մտան Ղարաքիլիսա եւ իրենց ձեռքը առին չրջանի կառավարութիւնը: Ահռելի տեսարան բացուեց նրանց առջեւ. գաւառը բառիս բուն նշանակութեամբ աւերուած ու կողոպտուած էր: Գիւղացիութեան 98% թալանուած էր մինչեւ չտակի կոճակը: Ամէն ինչ տարել էին թիւրքերը — տաւարը, երկրագործական գործիքները, սայլերը, կահկարասիքը, անկողինները, անգամ ճրագները: Մարդկային կմախքները թափթփուած էին չորս կողմը: Ղարաքիլիսայի ու Ղըշլախի միջեւ նետուած էին 400 դիակներ, Ղըշլախի մօտ՝ մեծ կիրճում մարդիկ հաշուել էին 500 դիակ: Հաղարաւոր դիակներ, զանգեր ու մարդկային ոսկորներ թափուած էին Ալթուն Թախտում ու Վանանց ձորում... Երկաթուղին քար ու քանդ էր արուած, կողոպտուած մինչեւ դռներն ու պատուհանները: Երկիրը հասել էր քայքայման վերջին աստիճանին:

Զարհուրելի պատկեր էր նկարում «Զակ. Սլովո»ի թղթակիցը (1918 թ. նոյ. 22), որ անմիջապէս թիւրքերի հեռանալուց յետոյ, եղել էր Լոռի–Փամբակում:

«Ղալթախչի կայարանից մինչեւ Քոլագերան թիւրքերը տարել են չըպալները, պահեստի երկաթուղագծերը, կայարանների կարասիները, չոգեչարժները, վագոնները, հեռախօսներն ու հեռագիրը... Կայարանի չէնքերը թողնում են աւերակների տպաւորութիւն. դռների եւ պատուհանների փայտեղէն մասերը հանուած են, կոուրները պոկուած, պատերը քանդուած... Համաճարակները շարունակում են հնձել ժողովրդին: Զկայ բժշկական օգնութիւն: Դեղատները թալանուած են: Հիւանդները մեռնում են առանց դեղի ու բժշկական օգնութեան: Փամբակի գիւղերում կան բազմաթիւ սոված ու բոկոտն որբեր, առանց որեւէ խնամքի: Շրջանի դպրոցական կեանքը մեռել է: Բոլոր դպրոցները թալանուած են: Ղըշլախի գնդեցիկ դպրոցի ամբողջ կահկարասիքը այրել են ասկեարները... Բոլոր 8–10 կօօպերատիւները կողոպտուած են»:

Նոյնքան սարսափելի էր դրութիւնը եւ միւս վայրերում: Նոյեմբեր 22–ից թիւրքերը սկսեցին դատարկել Ալեքսանդրապոլը: Դեկտ. 2 եւ 3–ին, Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Յոյեցեանի նախագահութեամբ կազմուած մի յանձնախումբ ընդունեց քաղաքն ու բերդը: Դեկտ. 4–ին առաւօտեան ժամը 5–ին Ղալթախչիից չարժուեց մի հայկական զումարտակ գնդ. Նեստերովսկիի հրամանատարութեան տակ եւ գրաւեց Ալեքսանդրապոլը: Բերդապետ նշանակուեց գնդ. Դիտիմովը:

Այստեղ եւս՝ ընդհանուր աւեր ու խեղճութիւն. թիւրքերը տարել էին ամէն ինչ, որ կարելի էր եղել չարժել — չոգեչարժ, վագոն, ցորեն, ժողովրդից խլուած պարէնը, բամբակը, տնային իրեր, կայանների բոլոր գոյքը՝ հեռագրական ու հեռախօսային գործիքներից սկսած մինչեւ դռներն ու պատուհանները: Բերդը պայթեցրել էին եւ շատ բան այրել: Քաղաքն ու չրջակայ գիւղերը կողոպտուած էին մինչեւ վերջին ասեղը: Անյատակ թշուառու-

թիւն էր տիրում ամէն կողմ: Հակառակ Մեհմեդ Ալի փաշայի Հայաստանի կառավարութեան տուած պաշտօնական հաւաստիացումներուն, թէ դեկտ. 6-ի առաւօտեան ժամը 9-էդ սկսած՝ Բրեստ-Լիտովսկի դաշնադրի սահմաններէդ այս կողմ ո՛չ մի թիւրք սակեաը չի մնալու եւ թէ կարգադրւած է, որ հեռացող սակեաները ո՛չ մի թալան ու աւերածութիւն չանեն, թիւրքերը հեռանում էին՝ իրենց յետեւը թողնելով մահ ու քայքայում...

Աւարը կենտրոնացւում էր Կարսում, ուր հաւաքւած էր հարիւր հազարաւոր փութ բամբակ, 65,000 փութ չաքար, մի քանի տասնեակ հազար եղջիւրաւոր անասուններ, մեծ քանակութեամբ հայահատիկ, կաշեղէն, բուրդ, կերպասեղէն, կահ-կարասիք, պատուհաններ ու դռներ...

Ալեքսանդրապոլ-Երեւան երկաթուղագիծը, որ յանձնւեց Հայաստանին դեկտ. 5-ին, մերկացւած էր ամէն բանից. կայարանների չէնքերը՝ աւերակ եւ անբնակելի, ջրակայարանները՝ փչացած, հեռախօսն ու հեռագիրը՝ քանդւած, կամուրջներից չատերը հրոյ ճարակ...

Նոյն տեսարանը ե՛ւ Երեւան—Ջուլֆա երկաթուղագծի վրա եւ Երեւանի, Էջմիածնի ու Սուրմալուի գաւառների թիւրքերից դրաււած մասերում: Պարսկաստանից դէպի Կարս ու Էրզրում քաշւող թիւրք զօրամասերը, խուժանացած, ճանապարհին, ահ ու սարսափ էին տարածում, գործում էին բռնութիւններ, կողոպտում ու փչացնում էին հայերի գոյքերը: Երկաթուղային կամրջածքի պակասի պատճառով Նախիջեւանում, Ալուխանլուում, Սարդարապատում, Ալեքսանդրապոլում կուտակւում էին հազարաւոր սակեաներ, որոնք թալանում էին ժողովրդին, մտնում շրջակայ գիւղերը, խլում ինչ որ պատահի, կոտրում-փչացնում կայարաններն ու երկաթուղային կամրջածքը: Մորեխի պէս, այս ամբոխը սրբում-ոչնչացնում էր ճանապարհին ամէն բան:

Դժւար է տալ իրական պատկերը թիւրքերի գործած աւերի ու քայքայման իրենց ուղնամսեայ տիրապետութեան շրջանում եւ հեռանալու ժամանակ: Մեր ձեռքի տակ կայ «Համաշխարհային Պատերազմից Հայ Ժողովրդի Կրած Վնասների Ճշտիչ Յանձնաժողովի» մէկ պաշտօնական զեկուցումը Փամբակ-Լոռի շրջանում թիւրքերի հասցրած վնասների մասին: Այդ զեկուցումը կազմւած է 1918 թ. դեկտեմբերի առաջին կիսին, թիւրքերի հեռանալուց անմիջապէս յետոյ, տեղն ու տեղը, բոլոր դիւղերում կատարւած քննութեան ու հաւաքւած նիւթերի հիման վրա: Ահա մի քանի քաղւածքներ այդ զեկուցումից, որոնք տալիս են աղօտ պատկերը սոսկ իրականութեան, որը անհամեմատ աւելի մռայլ էր:

«Թիւրք զօրքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918 թ. մայիս 20-ին: Այդ զօրքը Ջաւիդ բէյի 11րդ դիվիզիան էր, որի շարքերում մեծ թիւ էին կազմում քիւրդ դինւորները»: Ղարաքիլիսա հասնելուն պէս, նրանք սկսում են կոտորել հայերին. «կոտորածները բնաւ անկարդ, պատահական բնոյթ չեն կրել, այլ եղել են ծրագրւած ու կազմակերպւած և տեւել են պաշտօնապէս երեք օր»:

«Ղարաքիլիսայում թէ բռնութեամբ եւ թէ զանազան խորամանկ մի-

ջոցներով հարիւրաւոր մարդկանցից բաղկացած խմբեր են հաւաքել եւ գիւղից դուրս հանելով՝ զնդակահարել կամ ուինահարել են: Ղարաքիլիսայում սպանւել են բոլոր հայ սպաներն ու զինուորները, որոնք պարտութիւնից յետոյ կամ գերի են ընկել, կամ կամովին ապաւինել յաղթողների մեծահոգութեան: Նոյն տեղում կոտորած են, բացի տեղացիներից, բազմաթիւ գաղթականներ կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջաններից: Ընդհանուր առմամբ, Ղարաքիլիսայի շրջակայքում զնդակահարուած են մի քանի հազար մարդ — ճիշտ թիւը պարզելու հնարաւորութիւն չկայ: Պէտք է կարծել, որ այդ թիւը 3000–ից պակաս չէ, թէեւ ոմանք հասցնում են մինչեւ 7000–ի: Այս թւի մէջ չեն մտնում սպանուած տեղացիները՝ 1470 հոգի: Այս ձեւի կոտորածներ տեղի են ունեցել նաեւ Համամլուում, Հաջիղարայում, Դարբազում, Ղշլաղում եւ Եղաբլուում: Միւս գիւղերում սպանութիւնները զանգուածային բնոյթ չեն կրել, սակայն, մարդկային զոհերը պակաս չեն եղել եւ այս գիւղերում. այստեղ թիւրքերը իրենց ծրագիրը իրագործել են մեղմ ձեւով: Արեւմտեան Փամբակի գիւղերից գերի են առել հարիւրաւոր երիտասարդներ, որոնք գրեթէ բոլորը ոչնչացել են քաղցից, ծեծից եւ ուժից վեր աշխատանքներից՝ Էրզրումի շրջանում: Սակաւաթիւ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլ եւ այլ տաժանելի աշխատանքներից, լծում էին սայլերին եւ քշում երկաթէ ճիպոտներով: Էրզրում քշուած 8000 գերիներից — Շիրակից ու Փամբակից — վերադարձել են միայն մօտ 600 հոգի:

«Թէ մեր շրջանում եւ թէ ամենուրեք առանձնապէս հետամտել են թիւրքահայերին եւ ճանկը ընկածներից ոչ մէկը չի խուսափել մահից:

«Բռնաբարութիւնները կրել են բաւի ամենալայն իմաստով զանգուածային բնոյթ. կան գիւղեր, որոնք, հէնց իրենց գիւղացիների խոստովանութեամբ, ենթարկուել են լիակատար բռնաբարութեան (Նալբանդ գիւղը): Եղել են դէպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գիւղից եւ կանանց բռնաբարել: Բռնաբարութեան ենթարկուել են եւ ջահիլ աղջիկները՝ սկսած 8–10 տարեկանից, եւ նորատի հարսները, սակայն, սակաւ չեն դէպքեր, երբ բռնաբարել են պառաւ կանանց: Հաստատուում են նաեւ սրունամոլութեան բազմաթիւ դէպքեր, բռնաբարութիւններին մասնակցել են նաեւ հրամանատարութիւնը, նոյնիսկ բժիշկները, օրինակ, դիվիզիայի բժիշկ Քեամիլ Բէյը:

«Թալանի ենթարկուել է ամէն ինչ, որ կարելի է թալանել — դրամ, թանգարժէք իրեր, կահ–կարասի, հագուստեղէն, մթերքներ եւայլն: Որովհետեւ Փամբակի տղաբնակութիւնը յանկարծակիի եկաւ, նա գրեթէ ոչինչ չթաղցրեց եւ ամէն ինչ կորցրեց: Դրամը եւ թանգարժէք իրերը անցել են ասկեարների ձեռքը շատ դէպքերում որպէս փրկանք կամ մահից ու բռնաբարութիւնից ազատուելու եւ կամ «օրէնքի» խստութիւնից խուսափելու համար»:

«Թալանի են ենթարկուած ամբողջ շրջանի անասունները. ջոկել տարել են ջահել եւ առոյգ անասունները՝ թողնելով վատիներին: Տարել են գրեթէ բոլոր ձիերն ու էշերը... Ճանքաների մեծ մասը տրորուեցին ձիերի ոտքերի

տակ, մի մասը արածացրին, իսկ ինչ փրկւեց, սրա երեք–ութերորդ մասն էլ, իբրեւ բաժրա, թիւրք իշխանութիւնը դուրս տարաւ երկրից տասնեակ վագոններով: Փամբակի լեռնաշղթայի ձոր խոտահարքերը հնձել ուին հէնց գիւղացիներին, նրանց սայլերով կրել ուին կայարանները եւ բառնալով վագոնները՝ նոյնպէս դուրս տարին: Նոյն վիճակին ենթարկւեց եւ գետնախնձորը... Մեղւաբուծութիւնը վերջնականապէս ոչնչացած պէտք է համարել, եթէ հաշւի չառնենք մէկ մեղւանոց, որ փրկւել է ամբողջովին, եւ հատ ու կենտ փեթակներ՝ մնացած այս կամ այն մեղւապահի մօտ: Շրջանում ոչընչացւած է մօտ 6500 մեղւի ընտանիք, բոլորը շրջանակաւոր փեթակներով:

«Հիմնաւորապէս ոչնչացած է բոլոր դպրոցական գոյքը, գրադարանները, կօօպերատիւները. քիչ բացառութեամբ թալանւած են եւ վառթար ձեւերով սրբապղծւած բոլոր եկեղեցիները: Ներկայումս Փամբակում չի գործում ո՛չ մի դպրոց, ո՛չ մի կօօպերատիւ:

«Ասկեարները ամբողջ հինգ ամիս ապրել են գիւղերի հաշւին եւ բառի բնական իմաստով ոչնչացրել են ոչխար, հաւ, ձու, իւղ, պանիր, կաթ եւ այլ մթերքներ: Եւ այսօր հայ շինականի չէն օջախը կատարեալ ամայութիւն է ներկայացնում:

«Ինչ որ ասւեց Փամբակի մասին, նոյնը կարելի է կրկնել Լոռիի մասին»:

Լոռի–Փամբակի նիւթական կորուստը, խիստ մօտաւոր թւերով, հաշււած է, մօտ 45 միլիոն բուբլի — շուրջ 15 միլիոն դոլար:

Եւ այս դեռ մի շրջանում, որը, օրինակ, Շիրակի կամ Սուրմալուի համեմատութեամբ, աւելի քիչ էր վնասւած: Կարելի է երեւակայել, թէ ինչ էր կատարւում միւս շրջաններում: Իրօք որ, «այստեղից թիւրքն էր անցել»...

ԺԸ.

ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԷՃԸ

Կօալիցիոն կառավարութեան օրով կատարուած ամենախոշոր դէպքը եղաւ, անշուշտ, հայ–վրացական բախումը, որ ահագին անդրադարձում ունեցաւ երկու երկրների ճակատագրի վրա:

Ինչպէս տեսանք նախընթաց գլուխներում, հայ–վրացական յարաբերութիւնները լաւ չէին: 1918 թ. ամառը, հայերն ու վրացիները Թիֆլիսում, արդէն երկու թշնամի կողմեր էին: Դրութիւնը չմեղմացաւ և՛ Հայաստանի կառավարութեան Երեւան մեկնելուց յետոյ: Ընդհակառակը, աւելի եւս սրեց:

Նախկին հակամարտութիւնների, դժգոհութիւնների եւ սրտցաւութիւնների վրա, այժմ, երբ Վրաստանն ու Հայաստանը այլեւս անկախ պետութիւններ էին, աւելացաւ և՛ սահմանային վէճը, և՛ անդրկովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, և՛ մի շարք ուրիշ ցաւոտ հարցեր:

Առանձնապէս սխտաւոր ձեւեր ստացաւ սահմանային խնդիրը: Վրացիները, որ անկախութիւնից առաջ, բոլորովին համամիտ էին հայերին եւ մէկից աւելի անգամներ պաշտօնապէս յայտարարել էին, որ Ախալքալաքի գաւառն ու Բորչալուի շրջանի լեռնային մասը՝ Լոռին համարում են հայկական հողամաս, այժմ, յանկարծ, պահանջ դրին, որ Ախալքալաքն ու Լոռին մտնեն Վրաստանի սահմանների մէջ: Մերթընդմիշտ այս պահանջը հիմնաւորում էր Վրաստանի համար «ռազմավարական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտութեամբ. Ախալքալաքի գաւառը եւ Լոռին մինչեւ Շահլաի անհրաժեշտ էին վրացիներին իրենց պետութեան ապահովութեան համար: Իսկ Ժորդանիան առաջ էր քաշում եւ տնտեսական նկատումներ ու պատմական իրաւունքներ:

1918 թ. յունիսի սկզբին,*) Վրաց Ազգ. Խորհրդի նախագահ Ժորդանիան եւ Վրաստանի վարչապետ Ռամիշվիլին այցելեցին Հայոց Ազգային Խորհուրդը եւ առաջարկեցին Ա. Ահարոնեանին, Յ. Քաջազնունիին ու Ա.

*) Армяно-грузинскій вооруженный конфликт, 1919 г. Баку.

Խաւխեանին՝ Բորչալուի բաժանումը կատարել ազգային սկզբունքներով՝ խնդրելով նշանակել ներկայացուցիչներ այդ նպատակով։ Ախալքալաքի մասին խօսք չկար, որովհետեւ նա գրաւած էր Թիւրքերի կողմից։ Հ. Ազգ. Խորհուրդը նշանակեց Յ. Կարճիկեանին, Գ. Խաւխեանին եւ զօր. Գ. Ղորղանեանին, որոնց Ի. Մերեթելին, յանուն Վրաց Ազգ. Խորհրդի յայտարարեց, որ Վրաստանի սահմանների մէջ են մտնելու ամբողջապէս, Ախալքաքի, Ղազախի ու Բորչալուի գաւառները եւ Ալեքսանդրապոլի գաւառի Փամբակի շրջանը։ Մերեթելին բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհրաժեշտ է վրաց ժողովրդի կենսական շահերի համար, որ, ռազմավարական տեսակէտից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի–Փամբակի։ Միւս կողմից, հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետեւ այդպիսով յանձին Վրաստանի, կուվկասում կը ստեղծւի կենսունակ ու հզօր քրիստոնեայ պետութիւն, որը գերմանացիների աջակցութեամբ կը պաշտպանէ եւ հայերին։

Այս յայտարարութիւնը յանկարծակիի բերեց հայերին։ Նա բոլորովին հակասում էր վրացիների մինչեւ այդ ասածներին եւ տարօրինակ էր հնչում, մանաւանդ, Մերեթելիի բերանում։ Հայերի կողմից Յ. Կարճիկեանը վրդովւած՝ բողոքեց նրա դէմ՝ ասելով, որ Մերեթելիի առաջարկածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Հայաստանը Թիւրքիայի, Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ բաժանելու ծրագիրը, որ այդ առաջարկը տրամագծօրէն հակառակն է Ժորդանիայի եւ Ռամիշվիլիի Հայոց Ազգ. Խորհրդին արած հաւաստիացումների։

Պէտք է այստեղ նկատել, որ Թիւրքերի յառաջխաղացման հետեւանքով վրաց–գերմանական զօրամասերը դրաւել էին Բորչալուն. Հ. Ազգ. Խորհրդի դիմումի վրա վրաց ներկայացուցիչները՝ Ժորդանիան ու Ռամիշվիլին վստահացրին Ա. Ահարոնեանին, Ա. Խաւխեանին եւ Ց. Քալանթարեանին, որ այդ գրաւումը ժամանակաւոր է, միայն պաշտպանողական նպատակներով, եւ, հէնց որ Թիւրքերը հեռանան, կը հեռանան եւ վրաց զօրքերը։

Հայերի պատասխանը լսելուց յետոյ, Մերեթելին՝ առաջարկեց մի քիչ էլ մտածել եւ ինքն էլ խոստացաւ խնդիրը նորից քննութեան առնել ընկերների հետ։ Բայց, մի քանի օր անցած, առանց հայերին իմացնելու, Վրաստանի կառավարութիւնը յայտարարեց Վրաստանի սահմանները՝ մըտցնելով նրանց մէջ եւ վիճելի համարւող շրջանները։ Հայաստանի կառավարութիւնը անմիջապէս բողոքեց այդ յայտարարութեան դէմ, սակայն, վրացիները շարունակեցին մնալ իրենց որոշման վրա եւ Բորչալուում վարւում էին այնպէս, կարծես այդ շրջանը անվիճելի վրացական հող լինէր։ Ծանր տուրքեր էին դնում հայերի վրա, հեռացնում էին Հայաստանի կողմնակից պաշտօնեաներին եւ տեղը նշանակում իրենց մարդկանց, հարկադրում էին հայ դիւղացիներին համախօսականներ ուղարկել Թիֆլիս, որ, իբր թէ, ուզում են մնալ Վրաստանի սահմաններում, իսկ յետոյ յայտարարեցին եւ զօրահաւաք։

Իսկ վերջը, օգոստ. 26–ին, Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալեանը Վրաստանի արտաքին գործոց նախարարին յանձնեց

հետեւեալ բողոքագիրը. «Ներկայացնելով ընդ սմին Ալլահվերդիի շրջանի կոմիսարի սոյն տարւոյ յուլ. 27 N° 35 գրութիւնը՝ ուղղած Լերուքի գիւղական կոմիսարին ի մասին 1895—1899 թ. ծնւածների զօրակոչի Վրաստանի կողմից, իմ կառավարութեան յանձնարարութեամբ յայտնում եմ ամենավճռական բողոք այն մասին, որ Վրաստանի կառավարութիւնը զօրակոչ է անում Բորչալուի վիճելի շրջանում, որի սեփականութեան իրաւունքի մասին Հայաստանի Հանրապետութիւնը երբեք չի կասկածել եւ պարոնայք նախարարներ Ժորդանիան եւ Ռամիշվիլին դեռ սոյն տարւոյ յունիս ամսին յայտարարեցին Քաջաղնունիին, Ահարոնեանին ու Խատիսեանին, որ յիշեալ շրջանը ժամանակաւոր կերպով զբաււած է վրաց զօրքերի կողմից՝ թիւրքերի ճանապարհը դէպի Թիֆլիս կտրելու նպատակով»:

Վրացիները դէպքը բացատրեցին «թիւրիմացութեամբ» եւ խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց ընթացքը չարունակեցին անփոփոխ: Սեպտ. 29-ին Ջամալեանը մի նոր «ամենավճռական բողոք» եւս ուղարկեց վրաց կառավարութեան՝ յայտնելով թէ՝ «մինչեւ այսօր էր շարունակում եմ ստանալ տեղեկութիւններ վիճելի գօտու բնակիչների կողմից, որոնք դանգատւում են, որ վրաց իշխանութիւնները զօրակոչ են անում»: Այս բողոքն էլ ունեցաւ նախկինի հետեւանքը. սիրալիր խոստում եւ որդեգրած գործելակերպի չարունակութիւն:

Յարաբերութիւնները աւելի եւս լարւեցին հոկտեմբերին, երբ, Հայաստանի կառավարութեան բազմաթիւ դիմումների հետեւանքով, թիւրքերը սկսեցին պարպել Լոռի-Փամբակի շրջանը եւ հայ զօրքերը Դրօյի գլխաւորութեամբ, գրաւեցին նրանց թողած հողերը: Վրաց կառավարութիւնը հայերի այդ քայլը գտաւ ապօրինի: Հոկտ. 19-ին Վրաստանի արտաքին գործոց նախարարը ուղարկեց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ջամալեանին հետեւեալ բողոքագիրը. «Վրաստանի Հանրապետութեան կառավարութիւնը տեղեկացաւ, որ Թիֆլիս նահանգի մէկ մասը՝ Բորչը կայարանից սկսած մինչեւ սահմանակից կամուրջը, այլ եւ Սանահինի մօտի շրջանները, սոյն հոկտ. 18-ին, գրաւել են հայկական կանոնաւոր զօրքերի առաջին եւ չորրորդ հրացանաձիգ գնդերի կողմից: Վրաց կառավարութիւնը, որ մինչ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնութեան միջոցով կարգաւորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետութեան հետ, իր պարտականութիւնն է համարում յայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնութիւն չի կայացել, հայկական զօրամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս վրաց կառավարութեան կողմից կը դիտուի որպէս Հայաստանի կողմից արւած ակներեւ մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»:

Իսկ յաջորդ օրը, հոկտ. 20-ին, Սանահնում կանգնած զրահապատ գնացքների պետ Գոդուաձէն ստացաւ պինդ հրամանը՝ պահանջել հայ զօրամասերից, որ անմիջապէս հեռանան Լոռիից եւ ամբողջ տարածութիւնը, մէջը լինելով եւ Շահալին, յանձնեն վրացիներին: Եւ նոյն օրն եւ եթ Գոդուաձէն հայ սահմանապահ վաշտի հրամանատարի միջոցով հա-

յաստանի կառավարութեան ուղարկեց հետեւեալ հեռագիր–վերջնագիրը. «Հիմնուելով Վրաստանի Հանրապետութեան դիւանագիտական նախարարի N° 672 հեռագրի վրա՝ յանձնարարում եմ ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղեկացնել ձեր կառավարութեան, որ դուք պէտք է հեռանաք ձեր այժմ գրաւած տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին մինչեւ 22 հոկտ. ժամը 2 կէսօրից յետոյ»:

Յաջորդ օրը, հոկտ. 21–ին, Գոգուաձէն ստացաւ դիւանագիտական նախարարութեան հետեւեալ հեռագիրը. «Վաղը, հոկտ. 22–ին ժամը 12–ին, երկաթուղով ձեզ մօտ են գալիս նահանգային դումարտակի 250 զինուորներ, դէպի Վորոնցովկա է չարժւում զօր. Ցիցիանովի զօրամասը՝ բաղկացած մարտկոցներից եւ հետեւակներից: Զօր. Ցիցիանովի գալուց յետոյ, նա կ'ընդունէ բոլոր զօրքերի հրամանատարութիւնը: Ամբողջ Բորչալուի գաւառի մաքրագործման եւ մինչեւ Թիֆլիսի նահանգի սահմանները հեռանալու պահանջը անպայման է»:

Իսկ մէկ օր վերջը, հոկտ. 22–ին, զինւ. նախարար Գէորգաձէն հեռագրեց նոյն Գոգուաձէին, թէ՝ «քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանը, իր կառավարութիւնից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ չտապով գրաւել այն գիծը, որ մենք բռնում էինք թիւրքերի հեռանալուց առաջ եւ ոչ ոքի թոյլ չտալ անցնելու ա՛չ այդ գծի այն կողմը, ա՛չ այս կողմը: Մեր զօրքերը դեռ չպէտք է անցնեն այդ գիծը»: Եւ մի լրացուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ «առանց վրաց կառավարութեան արտօնութեան Հայաստանից ոչ ոքի թոյլ չտալ մտնելու Վրաստան»:

Այսպէս, ուրեմն, վրաց կառավարութիւնը պատրաստւում էր զէնքի ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին յանձնելով եւ Շահալի կայարանը: Ի՞նչ է այս, եթէ ոչ պատերազմի որոշում, որովհետեւ վրաց զինւորականները չէին կարող չհասկնալ, որ հայերը յօժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը: Նրանց թեւ էր տալիս Գերմանիայի հովանաւորութիւնը: Անշուշտ, նրանք հաւատում էին, որ զինուած բախումի դէպքում, գերմանացիները կը միջամտեն ու կը ստիպեն հայերին կատարել վրացական պահանջը:

Եւ, յիրաւի, մինչ Գէորգաձէն պատերազմի պատրաստութիւններ էր տեսնում, Գերմանիայի դիւանագիտական ներկայացուցիչ Ֆոն–Քրեսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանին ընդունել վրացիների վերջնագիրը եւ առանց արիւնահեղութեան գատարկել «վրացական» հողը: Ջամալեանի հարցումին, թէ՝ արդեօք Գերմանիան կը խաւնի՞ հայ–վրացական սահմանային վէճին, Ֆոն–Քրեսը պատասխանեց դրական մտքով. Գերմանիան, որպէս Վրաստանի դաշնակից, պարտաւորւած է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցոյց կը տայ վրաց կառավարութիւնը: Այսպիսով, պարզ էր դառնում վրաց կառավարութեան լայն ախորժակն ու վճռական դիրքը:

Ի՞նչ կարող էին անել այս պայմաններում հայերը:

Վրացիների վերջնագիրը Երեւանում ստացւեց հոկտ. 21–ի գիշերը եւ



ԵՐՎԱԹՈՒՂԻՆ ԼԱՐՈՒՄԻՄ



ԲԱՄԲԱԿԻ ՁՈՐՈՒՄԻՄ

անհամման գայրոյթ ու վրդովում առաջ բերեց բոլոր շրջաններում: Հայաստանի Կորհրդի հոկտ. 22-ի նիստում վարչապետ Ֆաֆլաղնունին արաւ հետեւեալ զեկուցումը.—

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրաւուած էր թիւրքական զօրքերով: Կառավարութիւնը մի քանի անդամ պաշտօնական բողոքներ է ներկայացրել թիւրքաց կառավարութեան, ինչպէս նաեւ գերմանական եւ աւստրիական միսիաներին ու գերմանական կառավարութեան եւ միշտ մի պատասխան է ստացել, որ գրաւումը ժամանակաւոր է: Հոկտեմբեր 5-ին Կալիլ փաշան Երեւանում յայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերադիշեալ երկրամասերը: Անմիջապէս մեր եւ թիւրքաց շտաբները գծեցին այդ դործողութեան ծրագիրը, որը սկսուեց հոկտ. 18-ին եւ տասնց որեւէ միջադէպի չարունակուեց մինչեւ հոկտ. 21-ը, երբ գիշերուայ ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրօշից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչեւ Շահալի՝ ու չարժացին կոբերի վրայով»: Նա խնդրում է կարդադրութիւն անել: Կառավարութիւնը որոշեց չընդունել վերջնագիրը, չյանձնել Շահալի կայարանը եւ պինաած ուժի դիմելու պարագային՝ ցոյց տալ դիմադրութիւն:

«Ստացանք Դիլիջանից եւս երեք հեռագիր. առաջին, որ մերոնք գրաւել են կոբերը, երկրորդ, որ պարպել են կոբերը գերմանացի լէյտենանտի պահանջով եւ երրորդ, որ մերոնք նորէն եկել են կոբեր: Մեր կառավարութիւնը Թիֆլիս ուղարկեց մի հեռագիր ժորդանիային, որով առաջարկւում է պինաած ընդհարում չառաջացնել, այլ աշխատել վէճը լուծել խաղաղ ճանապարհով:

«Ջամալեանից ստացանք երկու ռադիո-հեռագիր. առաջինով յայտնում է, որ ինքը յուշագիր է ստացել՝ դատարկելու Թիֆլիսի նահանգի այն մասը, որ բողնում են թիւրքական զօրքերը. երկրորդով, որ նա տեսակցել է վրաց արտաքին գործոց նախարարի հետ ու վերջինս առաջարկել է թողնել գրաւուած շրջանները եւ ապա բանակցութիւններ սկսել հարցը խաղաղութեամբ վերջացնելու համար. կառավարութիւնը կանգնած է այն տեսակէտի վրա, որ հարցը պէտք է լուծել խաղաղ ճանապարհով եւ պահել բարի-դրացիական յարաբերութիւնները»:

Այս արտակարգ յայտարարութիւնից յետոյ ընդմիջում արւեց, որի միջոցին ստացուեց մի նոր հեռագիր, թէ՝ հայկական զօրամասերը բռնել են թիւրքերի թողած ամբողջ շրջանը եւ որ դրութիւնը խաղաղ է: Միջնարաբերին ֆրակցիաները ունեցան խորհրդակցութիւններ, եւ երբ նիստը վերսկսուեց, ամենքի որոշումն արդէն պատրաստ էր:

Կառավարութեան յայտարարութեան առթիւ արտայայտուեցին բազմաթիւ պատդամաւորներ, որոնք բոլորն էլ չեշտում էին միջադէպը խաղաղ ճանապարհով հարթելու անհրաժեշտութիւնը, բայց եթէ վրացիները դիմեն պինաած ուժի, անհրաժեշտ էր ցոյց տալ դիմադրութիւն: Ի վերջոյ, ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Լսելով կառավարութեան յայտարարութիւնը՝ Հայաստանի Կորհուրդը հաւանութիւն է տալիս կառավարութեան բռնած քա-

ղաքականութեան ու արած քայլերին եւ առաջարկում է նոյն ուղղութեամբ շարունակել»:

Ստանալով Հայ. Խորհրդի հաւանութիւնը՝ Յ. Քաջազնունին հեռագրեց Թիֆլիս, Ա. Ջամալեանին, թէ՝ «Հայաստանի Խորհուրդը լսելով իմ զեկուցումը վրացական N° 4303 դիմումի եւ Շահալին պարպելու մասին արուած վերջնագիր–պահանջի, այլ եւ կառավարութեան ձեռք առած միջոցների մասին՝ որոշեց 1) հաւանութիւն տալ կառավարութեան գործողութիւններին եւ առաջարկեց նրան յետագայում էլ հետեւել ընդունած ուղղութեան. 2) պարտք դնել կառավարութեան վրա՝ ամէն ջանք թափել բախումը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ ա՛յն յոյսով, որ Վրաստանն էլ յետ կը կենայ յարձակողական քայլերից եւ չի անցնի իր գրաւած գիծը: Խնդրեմ հաղորդել այդ մասին վրաց կառավարութեան»:

Մի ուրիշ հեռագիր էլ տուեց Ժորդանիային, պատճէնը՝ Ջամալեանին. «Դիլիջանի զօրամասի պետը հաղորդում է, որ վրաց հրամանատարութիւնը վերջնագիր է ներկայացրել՝ դատարկելու Շահալի կայարանը: Ես հրաման տուի՝ չդատարկել կայարանը, եւ եթէ վրացիները անցնեն յարձակման — պաշտպանել: Ի խուսափումն բարդութիւնների, որոնք կարող են առաջ բերել նոր աղէտներ, յանուն պատերազմից տառապած ու յօշոտուած Վրաստանի եւ Հայաստանի բարիքի, յանուն իրաւունքի եւ արդարութեան խընդրում եմ յետ կենալ յարձակողական գործողութիւններից, պահել վրաց զօրքերը նրանց կեցած այժմեայ գծի վրա, իսկ սահմանների հարցը լուծել խաղաղ համաձայնութեան ճանապարհով: Յիշեցնում եմ ձեզ ձեր սեփական հանդիսաւոր յայտարարութիւնը, յունիսին, Նոյ Ռամիշվիլիի, Ահարոնեանի եւ Խատիսեանի ներկայութեամբ, թէ՝ Վրաստանը աչք չունի Լոռիի վրա եւ գրաւում է նրան ժամանակաւոր կերպով երրորդ պետութեան գրաւման առաջը առնելու նպատակով»:

Թէ ինչով կը վերջանար բողոքագրերի ու հեռագրների այս փոխանակութիւնը, դժուար չէր գուշակել. վրաց կառավարութիւնը մի կողմից պահանջներ էր անում, սպառնալիքներ կարդում, միւս կողմից տենդագին զինուորական պատրաստութիւնների մէջ էր, ուժեր էր հաւաքում Սանահնի ու Վորոնցովկայի շրջանում եւ պատրւակ փնտռում, որպէսզի հնարաւոր ընդհարման պատասխանատուութիւնը ձգէ հայերի վրա: Վերջին իմաստը ունէր Ն. Ռամիշվիլիի 23 հոկտ. նամակը Ջամալեանին, որի մէջ վրաց արտաքին գործոց նախարարը հաղորդում էր. «Քննելով ստեղծուած դրութիւնը՝ Վրաստանի կառավարութիւնը յանձնարարեց ինձ հաղորդելու ձեզ, որ եթէ հայկական զօրամասերը անյապաղ չպարպեն Քորինջ—Ցաթեր գիծը կամ եթէ յետագային գրաւեն որեւէ հողամաս Թիֆլիսի նահանգի սահմաններում, վրաց կառավարութիւնը կը համարէ այդ պատերազմի յայտարարութիւն Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից, որի վրա կընկնի երկու հանրապետութիւնների համար ստացւելիք կործանարար հետեւանքների բովանդակ պատասխանատուութիւնը»:

Եւ զինուորական գործողութիւնները սկսեցին էլ. զօր. Ցուլուկիձէի

հրամանով, հոկտ. 23–ին, Գոգուաձէի զրահապատը ռմբակոծեց Ըընիխ գիւղը, եւ վրացի զինուորները ընդհարում ունեցան հայ գիւղացիների եւ այդ շրջանում գտնուող հայկական փոքրիկ զօրամասի հետ: Հոկտ. 26–ին Գոգուաձէն իր զրահապատով անցաւ մինչեւ Հայրում եւ պահանջեց հայ գիւղացիներից ճանաչել Վրաստանի իշխանութիւնը: Մանր դէպքեր տեղի ունեցան եւ ուրիշ կողմեր:

Մթնոլորտը խտացած էր՝ պատրաստ պայթելու: Դրան նպաստում էր վրաց զեկավարների յոխորտ դիրքը: Հայ–վրացական սահմանային վէճը դարձաւ նաեւ Վրաստանի Խորհրդարանի հարցապնդման նիւթ, եւ արտաքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին «բոլոր թիւրիմացութիւնները վերացնելու նպատակով» յայտարարեց, թէ «Թիֆլիսի նահանգը անվիճելիօրէն համարւում է Վրաստանի հող», իսկ զինուորական նախարար Գէորգաձէն աւելացրեց, որ ինքը «զէնքի ուժով կը ճնշէ ապստամբութիւնը»:

Այդ ժամանակ, վրա հասան գերմանացիների արեւմուտքում կրած պարտութիւնների լուրերը, զօր. Ցոն–Քրեսի հետ կապւած յոյսերը սկսեցին թուլանալ, եւ վրաց վարիչները խոհեմութիւն համարեցին զսպել իրենց ոգեմաշունչ եռանդը:

Մի ուրիշ դէպք նոյնպէս իւղ լեցրեց հայ–վրացական փոխյարաբերութիւնների խարոյկի վրա: Հոկտ. 17–ին Վրաստանի արտաքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին Հայաստանի, Ազրբէջանի եւ Լեռնականների կառավարութիւններին ուղղեց հետեւեալ դիմումնագիրը.

«Արդէն հասել է այն վայրկեանը, որ Անդրկովկասի եւ Կովկասի կառավարութիւնները, լցւած փոխադարձ վստահութեան ոգով, իրար օգնութեան գալու պատրաստակամութեամբ եւ միմեանց անկախութիւնը ընդունելով՝ հանդէս գան փոխադարձ օգնութեամբ եւ համերաշխութեամբ իրականացնելու ապագայ վեհաժողովին ստեղծւած հանրապետութիւնների ճանաչումն ու փոխադարձ չահերի պաշտպանութիւնը, ինչպէս եւ լուծելու բոլոր վիճելի հարցերը, դրանց թւում եւ սահմանների հարցը՝ չհակադրւած պետութիւնների համաձայնութեամբ կամ, եթէ այդ անցնի ապարդիւն, իրաւարարութեան միջոցով, եւ մշակելու փոխադարձ այնպիսի պարտաւորութիւններ, որոնց ուժով ոչ ոք իրաւունք չունենայ որեւէ պետութեան հետ համաձայնութեան մէջ մանել՝ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող ժողովուրդներից որեւէ մէկի:

«Այս նպատակով վրաց հանրապետութեան կառավարութիւնը առաջարկում է Ազրբէջանի եւ Հայաստանի հանրապետութիւններին ու Հիւսիսային Կովկասի Լեռնական ժողովուրդների Միութեան կառավարութեան՝ անհրաժեշտ լիազօրութիւններով երկուական ներկայացուցիչ ուղարկել Թիֆլիս, սոյն թւի նոյեմբեր 10–ին, ցերեկւայ ժամը 12–ին՝ արտաքին գործոց նախարարութեան չէնքում կայանալիք խորհրդաժողովին մասնակցելու համար:

«Վրաց հանրապետութեան կառավարութիւնը որոշել է խորհրդաժողովի քննութեան դնել հետեւեալ հարցերը.

«1· Խորհրդաժողովին հրաւիրուած պետութիւնների անկախութեան ճանաչումը փոխադարձաբար:

«2· Վիճելի խնդիրների, որոնց մէջ եւ սահմանավէճերի լուծումը՝ փոխադարձ համաձայնութեամբ կամ իրաւարարութեամբ:

«3· Փոխադարձ պարտաւորութիւն՝ չկայացնելու համաձայնութիւն որեւէ պետութեան հետ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող պետութեանց:

«4· Համերաշխ եւ փոխադարձ վստահութեամբ հանդէս գալ համաշխարհային վեհաժողովում հանրապետութիւնների անկախութիւնը ճանաչել տալու եւ ընդհանուր շահերը պաշտպանելու նպատակով»:

Այս դիմումը տարօրինակ էր թէ՛ ըստ ձեւի եւ թէ բովանդակութեամբ. վրաց կառավարութիւնը որոշել էր խորհրդաժողովի օրակարգը, կազմը, տեղն ու ժամը եւ ուղարկում էր իր հարեւան պետութիւնների կառավարութիւններին ի գործադրութիւն: Այդպէս կարող էր վարուել մի նահանգապետ իր ստորադաս գաւառապետի հետ, բայց անհանդուրժելի էր անկախ պետութիւնների փոխյարաբերութիւնների մէջ*): Եւ հասկանալի է, որ այդ դրութիւնը Երեւանում ընդունեց զարմանքով ու վրդովումով:

Հայերը ունէին դժգոհելու եւ ուրիշ պատճառ. Թամիշվիլին ինքնագլուխ օրակարգի մէջ էր դրել եւ «սահմանավէճերի լուծումը»: Երեւանում համարում էր կասկածից դուրս, որ վրացիներն ու Թուրքերը միացած, ինչպէս վարւում էին անցեալում, Հայաստանին կը պարտադրեն անընդունելի սահմանագիծ, մինչդեռ սահմանային խնդիրը իր էութեամբ այնպէս էր, որ կարող էր լուծուել միայն շահագրգռուող կողմերի միջեւ առանձին–առանձին:

Հայաստանի Խորհրդի նոյեմբ. 8–ի նիստում քննուեց Թամիշվիլիի դիմումնագիրը, եւ առաջին անգամը Հայաստանի Հանրապետութեան կեանքում Խորհրդի բոլոր կուսակցութիւնները, առանց բացառութեան, կանգնեցին միեւնոյն տեսակէտի վրա՝ ցասումով և բուռն կերպով դատապարտելով Վրաստանի կառավարութեան մենատիրական ձգտումները: Եւ որ հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ–դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական կապեր պահել վրաց սոցիալ–դեմոկրատների հետ: Սոցիալ–դեմոկրատ պատգամաւոր Ա. Մալխասեանը բուռն կերպով բողոքեց խորհրդաժողովը հրաւիրելու տարօրինակ ձեւի դէմ, որը այս դէպքում համազօր էր բովանդակութեան. իր քայլով Վրաստանի կառավարութիւնը խախտում էր հաւասարութեան սկզբունքը, կամենում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը: Նա ինքնագլուխ կերպով որոշել է խորհրդաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Նման դրութիւն կարելի չէ հանդուրժել:

Անհանդուրժելի գտաւ եւ «ըստ ձեւի ու ըստ էութեան դէմ» արտայայտուեց նաեւ սոցիալիստ–յեղափոխական Փրակցիան: Նոյն պատճառաբա-

*) «Թամիշվիլիի ստորագրած «հրաւիրագրի» ոգին, բնորոշում է Աւալովը, մի քիչ··· Ներքին գործոց նախարարի շրջաբերականն էր յիշեցնում»:

նութիւններից մեկնելով՝ բացասաբար վերաբերուեցին եւ դաշնակցական ու ժողովրդական ֆրակցիաները: Եւ դրեթէ միաձայնութեամբ Խորհուրդը որոշեց չմասնակցել նոյեմբ. 10-ի խորհրդաժողովին եւ յանձնարարել կառավարութեան, որ աշխատի «հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրօք համաձայնութեան գալով նրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ»: Միաժամանակ Խորհուրդը որոշեց, որ հայ-վրացական սահմանային վէճը առընչութիւն չունի այդ խորհրդաժողովի հետ եւ «պէտք է վճռուի միայն երկու հանրապետութիւնների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնութեամբ»:

Եւ Թամիշվիլիի ծրագրած խորհրդաժողովը չեռաձգուեց:

Քիչ չէին եւ ուրիշ առիթներ, որոնք բարդացնում էին հայ-վրացական փոխյարաբերութիւնները: Հայաստանը կտրուած էր ամբողջ աշխարհից, խեղդւում էր իր լեռներում եւ, իրաւամբ, սպասում էր, որ հարեւան Վրաստանը մի քիչ մարդկային վերաբերում կունենայ իրեն հանդէպ: Ընդհակառակը, վրացիները, կարծես դիտմամբ, խնդիրներ էին ստեղծում, վիրաւորում էին հայերի արժանապատուութիւնը, դժուարացնում հաղորդակցութիւնը ղրսի հետ, նոյնիսկ փակում էին իրենց սահմանները հայերի առջեւ: Պատրուակ բռնելով Թրանզիտային համաձայնութեան չդոյութիւնը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ, վրաց կառավարութիւնը արգելքներ էր հանում հայերի առջեւ: Սովի եւ հիւանդութիւնների ճիրաններում զալարուող Հայաստանի համար այս վերաբերումը համարւում էր անխիղճ, տմարդի, թշնամական:

Բազմաթիւ օրինակներից առաջ բերենք միայն մէկը. նոյեմբերի կէսերին Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում դիմեց վրաց արտաքին գործոց նախարարին՝ խնդրելով արտօնել Բագւում գնած 40 ցիստերն նաւթն ու 9 ցիստերն բենզինը Վրաստանի վրայով փոխադրել Հայաստան: Իբր փոխարինութիւն այդ արտօնութեան Ջամալեանը համաձայնութիւն էր յայտնում ապրանքների 20% յանձնել Վրաստանի կառավարութեան: Մեծ դժուարութեամբ ու ձգձգումներով կարելի եղաւ ստանալ իրաւունք, բայց ահա Վրաստանի հաղորդակցութեան նախարարը յայտնում է Հայաստանի դիւանագիտ. ներկայացուցչին, որ գինուորական նախարարի կարգադրութեամբ հարաւային երկաթուղագծի վրա գինուորական դրութիւն յայտարարուած լինելու հետեւանքով, բացի թիւրքական կառավարական գործերից, ո՛չ մի գնացք չի թողնւելու հայ-վրացական սահմանից դէպի հարաւ: Ի հարկէ, բազուի նաւթն ու բենզինը Հայաստան չգնաց: Նման պատճառներով Հայաստանը բոլորովին ի վիճակի չէր արտաքին աշխարհից որեւէ ապրանք, ուտելիք ու դեղօրայք ներմուծելու: Կարելի է երեւակայել, թէ վրացիների այս ընթացքը ինչպիսի տրամադրութիւն էր առաջ բերում սովահար Հայաստանում:

Այսպիսի պայմաններում ծնունդ առաւ այն բախումը, որը վերջ ի վերջոյ, վերածուեց հայ-վրացական արիւնոտ պատերազմի: Այդ պատերազմի անմիջական առիթը վրաց զօրամասերի գործած բռնութիւններն էին Լո-

ռիի հայ գիւղերում եւ Ախալքալաքի գրաւումը թիւրքերի հեռանալուց յետոյ:

Ամբողջ նոյեմբեր ամսին եւ դեկտեմբերի սկիզբներին Հայաստանի կառավարութիւնը անվերջ գանգատներ ու բողոքներ էր առանում լոռեցիներից վրաց զօրքերի գործած կամայականութիւնների, թալանի ու բռնութիւնների դէմ: Վրաց զինուորները ապրում էին հայկական գիւղերում. ուտելիքը առանց վճարումի առնում էին գիւղերից. խուզարկութիւնների պատրւակով մտնում էին տները եւ տանում ինչ որ պատահեց: Ձեռք էին տալիս կանանց, հարբում, ամէն տեսակ խայտառակութիւններ գործ դնում. իշխանութիւնները բռնագրաւում էին գիւղացիների ցորենը, անասունները, գինին, խոտը, իւղը, պանիրը, գետնախնձորը, հաւը, հաւկիթը. պահանջում էին զէնք ու ռազմամթերք: Երբեմն ամբողջ գիւղեր ինչպէս, օրինակ, Շուլաւերը, խուզարկութեան ու կողոպուտի էին ենթարկւում: Վրացիները պահում էին իրենց այնպէս, կարծես թշնամի երկրում լինէին: Ենիչէրիական կարգեր էին սահմանւել Լոռիում, ուր վրացին ամէն ինչ էր, հայը՝ ճնշւած ռայեա:

Առանձնապէս ծանր էր Ուզունլար գիւղի բնակիչների վիճակը. վրացիները մասնաւոր ուշադրութիւն էին դարձնում «ըմբոստ» Ուզունլարի վրա եւ նրանց զինուորները ի՞նչ սանձարձակութիւն ասես չէին գործում ուզունլարցիների դէմ: Այսպէս, Վորոնցովկայի շրջանի վրաց զօրքերի հրամանատար գնդ. Ռամազովը, նոյեմբ. 21-ին, տեղեկագրում էր զօր. Ցուլուկիձէին. «Հաղորդում եմ ձեզ, որ այսօր, ժամը 3-ին, հրացանաձգութիւն էր լսւում Ուզունլարի ուղղութեամբ: Ես ուղարկեցի պահակներ տեղակալ Շուբլաձէի հետ՝ բանի էութիւնը հասկնալու եւ հրացանաձգութեան վերջ տալու համար: Տեղ. Շուբլաձէի երեւալով՝ հրացանաձգութիւնը վերջ է գտնում: Պարզւեց, որ պահակային հարիւրեակի զինուորները եւ Ուզունլարի բնակիչները հրացանաձգութեան են բռնւել, որի ժամանակ սպանւել է Ուզունլարի պահակը եւ վիրաւորւել է ձին, այլ եւ զինուորների ձեռքից սաստիկ ծեծ կերել գիւղի կոմիսարը... Երեւում է, որ զինուորները յանցաւոր են եղել, բայց գիւղացիների յանդուգն քայլը եւ զինւած չղթաներով յարձակւելը առիթ է տալիս մտածելու, որ գիւղում շատ զէնք կայ: Անհրաժեշտ է խիստ խուզարկութիւն անել գիւղի բոլոր տներում եւ միեւնոյն ժամանակ հարկաւոր է վռնտել այստեղի երկու հարիւրեակները եւ փոխարինել ուրիշ զօրամասերով, որովհետեւ զինուորները սաստիկ երես են առած եւ թալաններով յուզում են տեղական բնակչութիւնը»:

Երբ ուզունլարցիները ներկայացուցիչներ ուղարկեցին Սանահին՝ բողոքելու համար զինուորների գործած չհատուկութիւնների դէմ, զօր. Ցուլուկիձէն ձերբակալեց նրանց եւ Ուզունլար պատժիչ զօրամաս ուղարկեց՝ գնդացիրներով ու թնդանօթներով: Դեկտ. 8-ին այս զօրամասը ճանապարհ ընկաւ մի զրահապատի ուղեկցութեամբ: Ուզունլարցիները դիմաւորեցին հրացաններով: «Զրահապատից, տեղեկագրում էր նրա պետ Յունչիան, պատասխանեցինք թնդանօթներով ու գնդացիրներով: Մեր հետեւակները չկարողացան բարձրանալ սարը եւ նահանջեցին թողնելով մի գնդացիր: Մեր հետեւակները շատ վնասւեցին: Հայերը մեծ քարեր էին նետում կայարանի

վրա, որի հետեւանքով պայթեցրին ռազմամթերքով բեռնաւորուած երեք թիւրքական վագոններ: Կայարանը ջարդուած է»: Իսկ վրաց հաղորդակցութեան նախարարութիւնը դեկտ. 9–ին հաղորդեց, թէ՝ «Դեկտ. 9–ին, Սանահինի մօտի կիւներում, վրացիներից սպանուել են 3 հոգի, ծանր վիրաւորուել՝ 1, թեթեւ վիրաւորուել՝ 1, անհետ կորել՝ 2: Արձակուած է 3,600 գնդակ»:

Երկու օր յետոյ, դեկտ. 11–ին, Գոգուաձէն զեկուցանում էր գինուորական նախարարին. «Այսօր, վաղ առաւօտեան, Ալլահվերդի եւ Սանահին կայանների միջեւ, 102րդ վերստի վրա, ուղին քանդուած է հայերի ձեռքով: № 3 զրահապատը թնդանօթաձգութիւն ունեցաւ: Ես կարգադրել եմ նորոգել ճանապարհը»:

Վրացիներն ամբողջ երկու օր թնդանօթի բռնեցին Ուզունլար գիւղը: Դեկտ. 10–ին Ուզունլարի ներկայացուցիչներ Տադեանն ու Ղարաքեչիչեանը հետեւեալ աղերսալի հեռագիրը տուին Երեւան, գինուորական նախարարին. «Իմացնում ենք, որ դեկտ. 8–ին վրաց զօրքերը ուղեցին զրաւել Ուզունլար գիւղը: Միջոց չունէինք նրանց տեղաւորելու, եւ հասարակութիւնը մերժեց ընդունել: Զօրքերը վճռեցին զրաւել ուժով: Երկու օր է Ուզունլարը գտնւում է թնդանօթների կրակի տակ: Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին: Հազար տուն ենք եւ խնդրում ենք անել չտապ կարգադրութիւն՝ օգնութիւն հասցնելու կորչող ժողովրդին»:

Հայաստանի կառավարութիւնը, որ ահագին նիւթ ունէր Լոռիի ծանր կացութեան մասին, նոյն օրն եւ եթ, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանի առորագրութեամբ Թիֆլիս ուղարկեց հետեւեալ հեռագիր–բողոքը. «Ղարաքիլիսա—Լոռիի զօրամասի պետը հաղորդում է, որ ուզունլարցիները երկրորդ օրն է գտնւում են վրաց զօրքերի թնդանօթային եւ գնդացիրային կրակի տակ, որ Լոռիի հիւսիսային մասի հայկական գիւղերը մատնւում են թալանի ու բռնութիւնների նոյն զօրքերի կողմից: Հայաստանի կառավարութիւնը վճռական կերպով բողոքում է վրաց զօրքերի սանձարձակութիւնների դէմ մի չրջանում, որը կազմում է Հայաստանի հողամասը եւ բռնութեամբ գրաւած է վրաց զօրքերով: Եթէ անմիջապէս միջոցներ ձեռք չառնէք վերջ տալու, հետեւանքների պատասխանատուութիւնը կառավարութիւնս վերցնում է իր վրայից»:

Շուտով յայտնի դարձաւ, նոյնպէս, որ միայն Ուզունլարը չէր վրաց զօրքերի սխրագործութեանց զոհը. Աղրի, Ամուշ, Ախորի եւ մի շարք ուրիշ գիւղեր էլ ենթարկւել էին հարստահարութիւնների, կողոպուտի ու բռնութեանց: Եւ նման երեւոյթները ընդհանուր էին Լոռիի բոլոր վայրերում, ուր կանգնած էին վրաց զօրամասերը:

Մինչ հայ–վրացական սահմանի վրա տեղի էին ունենում այս դէպքերը, Երեւանում կատարւում էին դիւանագիտական բանակցութիւններ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Նոյեմբերի սկիզբներին Երեւան էր եկել Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ հայ–վրացական սահմանային վէճը լուծելու նպատակով: Նոյ. 29–ին նա գրաւոր կերպով հաղորդեց Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան, որ ինքը «լիազօրուած է վերջնա-

կանապէս լուծելու սահմանային հարցը եւ կայացուելիք վճիռը ներկայացնելու Վրաստանի կառավարութեան ի վաւերացումն»: Եւ նոյն գրութեան մէջ որոշում էր վրացիների սահմանային պահանջները. «վրաց հանրապետութեան կառավարութեան պահանջով սահմանագիծը Հայաստանի եւ Վրաստանի հանրապետութիւնների միջեւ պէտք է անցնի Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ այն գծով, որը այժմ բաժանում է Ախալքալաքի ու Բորչալուի գաւառները նախկին Երեւանի նահանգի նախկին Ալեքսանդրապոլ գաւառից՝ հարաւում, իսկ արեւելքից՝ այն գծով, որ բաժանում է Բորչալուի գաւառը նախկին Գանձակի նահանգի նախկին Ղազախի գաւառից»:

Ի պատասխան այս գրութեան, Ս. Տիգրանեանը հաղորդեց, նոյնպէս գրաւոր, որ սահմանը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ որոշուած եւ հայ ու վրաց ներկայացուցիչների միջեւ մէկից աւելի անգամներ հաստատուած է 1917 թւի ընթացքին: Այդ սահմանը, որ հիմնուած է ազգագրական սկզբունքի վրա, Հայաստանի կառավարութեան համար ի զօրու է եւ այժմ: Ըստ 1917 թ. հայ-վրացական համաձայնութեան «Ախալքալաքի գաւառը ամբողջովին եւ Բորչալուի գաւառի մեծ մասը, ուր հայ ազգաբնակութիւնը կազմում է բացարձակ մեծամասնութիւն, անկապտելի կտորն են Հայաստանի: Միաժամանակ Բորչալուի գաւառի հիւսիսային մասը եւ Թիֆլիսի գաւառի հիւսիսային մասը մինչեւ Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս մասում հայ բնակչութիւնը աւելի է վրացականից, մտցուած են Վրաստանի կազմի մէջ՝ այն հաշուով, որ Վրաստանի հայերը կունենան ազգային-մշակութային ինքնորոշման երաշխիքներ»: Եթէ, սակայն, վրաց կառավարութիւնը պնդում է նոր սահմանագծի վրա, այն ժամանակ սահմանային խնդիրը պէտք է քննուի բովանդակ ծաւալով՝ ոչ միայն Ախալքալաքի եւ Լոռիի, այլ եւ «այն չրջանների (Բորչալուի ու Թիֆլիսի գաւառների) վերաբերմամբ, որոնք կարող են առանց վէճի միացուել Վրաստանին միայն այն դէպքում, երբ Վրաստանի եւ Հայաստանի հողային բաժանման ամբողջ նախկին ծրագիրը պահպանուի»:

Վրաց ներկայացուցիչը չարունակից պնդել իր տեսակէտի վրա, իսկ այդ միջոցին Վրաստանի կառավարութիւնը, օգտուելով Թիւրքերի հեռանալուց, հակառակ Հայաստանի կառավարութեան կտրուկ բողոքների, գրաւեց Ախալքալաքի գաւառը. դեկտ. 5-ին վրաց զօրքերը, զօր. Մակայեւի գլխաւորութեամբ, մտան Ախալքալաք եւ յայտարարեցին միացած Վրաստանին: Վրաց կառավարութիւնը պատասխանեց Հայաստանի կառավարութեան, թէ՝ «Ախալքալաքի գաւառի նւաճման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական եւ ո՛չ էլ բարոյական տեսակէտից վիճելի չէ»: Եւ այդ «անվիճելի» իրաւունքը իրականացնելու համար դեկտ. 8 ու 9-ին, վրաց զօրքերը զէնքի ուժով ստիպեցին սակաւամարդ հայ զօրամասին թողնել Ախալքալաքի գաւառի Եֆրեմովկա եւ Ցրոյեցկոյէ գիւղերը, որ հայերը գրաւել էին Թիւրքերի հեռանալուց յետոյ:

Ախալքալաքի ու Լոռիի դէպքերը մեծ յուզում առաջ բերին Երեւանում: Կուսակցութիւնները, Հայաստանի Կորհուրդը, կառավարութիւնը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների ընթացքը: Հայ-



ՋՕՐ· ՄԵԼԻՔ ՄՈՒՐԱՏԵԱՆ



ՍՊԱՅ Մ· ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ՍԵՓՈՒՀ



ՖՆՖ· ԿՈՐՆԻԼՈՎ



ՕԼԻՎԸՐ ՊՈԼՏՈՒՒՆ

Խորհուրդը մի չարք դռնփակ նիստերում քննելով դրութիւնը՝ կառավարութեան տւեց գործելու ազատութիւն՝ պարտաւորեցնելով նրան դիմել ամէն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրաւունքը Ախալքալաքի, բայց, մանաւանդ, Լոռիի վերաբերմամբ: Այս հարցում տարակարծութիւն չկար. բոլոր կուսակցութիւնները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մաս: Հայ ժողովրդի բոլոր խաւերի զգացմարն էր արտայայտում, երբ սահմանավէճի առթիւ պատմաբան Լէօն գրում էր. «Երկու հազար տարւայ պատմութիւնը տանում հասցնում է այն եզրակացութեան, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երեւակայել Հայաստան: Ներկայումս այս բանն աւելի եւս աներեւակայելի պիտի համարել, քանի որ կորել Լոռին Հայաստանի մարմնից կը նշանակէ յօշոտել նրա ամբողջ անցեալը եւ նրա կուլտուրական դանձերը — դարերի եւ հարիւրաւոր սերունդների մեծագործութիւնը թալանի տալ»*):

Մերեթելիի համար Լոռին «ռազմապիտական սահման» էր, հայերի համար՝ հայկական մարմնի մի մաս: Եւ այդ մարմինն էր, որ յօշոտւում էր չարաչար վրաց զօրախմբերի կողմից: Դեկտ. 9–ին եւ ապա 12–ին Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց վրաց կառավարութեան՝ խնդրելով, յանուն երկու ժողովուրդների բարիքի, վերջ տալ հարստահարութիւններին, դուրս բերել վրաց զօրքերը Լոռիից եւ սահմանի խնդիրը կարգադրել խաղաղ բանակցութիւններով: «Մերժման պարագային, գրում էր Քաջազնունին իր դեկտ. 12 դիմումնագրի մէջ, Հայաստանի կառավարութիւնը ստիպւած պիտի լինի ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիներին վրաց զօրքերի բռնութիւններից ու չհատուցութիւններից»:

Վրաց կառավարութեան պատասխանը եղաւ բացասական. Թիֆլիսի կառավարութիւնը չարունակում էր պնդել իր «անվիճելի» իրաւունքների վրա, առանց հաշւի առնելու հայերի նոյնպէս «անվիճելի» համարւող իրաւունքները: Հայերի պահանջը նա համարում էր «միջամտութիւն վրաստանի ներքին գործերին»: Բախումը դառնում էր անխուսափելի, եւ դեկտ. 13–ին բռնկւեց հայ–վրացական զինւած ընդհարումը:

Պատերազմը սկսւելուց յետոյ էլ Հայաստանի կառավարութիւնը աշխատեց գտնել խաղաղ միջոցներ՝ վէճի լուծման:

Դեկտ. 14–ին արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը Թիֆլիս ուղարկեց մի նոր դիմումնագիր, որով, ի միջի այլոց, գրում էր. «Վրաց կառավարութիւնը ո՛չ միայն ընդառաջ չգնաց մեր փափաքին՝ սահմանների հարցը խաղաղութեամբ լուծելու, այլ եւ կամենալով ամրապնդել օտար հողի գրաւումը՝ ձեռնարկեց արշաւանքի խաղաղ բնակչութեան դէմ՝ ենթարկելով արիւնահեղ ու դաժան բռնութիւնների, մինչեւ իսկ հայկական գիւղերը թնդանօթների կրակի մատնելով: Հայաստանի կառավարութիւնը չի կարող մնալ անկարեկից դիտողի դերում, որովհետեւ հարեւան պետութեան զօրքե-

*) Լէօ, «Սահմանավէճեր», 1919 թ., Թիֆլիս, էջ 24:

րը սխրագործութիւններ են անում Հայաստանին պատկանող հողի վրա եւ գնդակահարում են Հայաստանի քաղաքացիներին: Իմ կառավարութիւնը՝ ջերմօրէն ձգտելով առաջն առնել ապագայ բարդութիւնների՝ ուզում է հաւատալ, որ ձեր կառավարութիւնը՝ յարգելով ժողովրդի բաղձանքն ու Հայաստանի իրաւունքը՝ կը փութայ սեփական նախաձեռնութեամբ դուրս հանել զօրքերը, հնարաւորութիւն կը տայ ձեր պատգամաւորութեան յարաբերութեան մէջ մտնել մերինի հետ, կը վերականգնէ հեռագրական կապը եւ դրանով կամրացնէ երկու հարեւան հարազատ պետութիւնների խաղաղ կենակցութիւնը»:

Այս դիմումն էլ մնաց ձայն բարբառոյ յանապատի:

Զինուած ընդհարման առաջին իսկ օրերին միջամտեց, այդ պահուն Ղարաքիլիսայում գտնուող, անգլիական սպայ կապիտան Գրինը, որ առաջարկեց՝ հայ-վրացական խորհրդակցութիւն կազմել եւ վէճը լուծել խաղաղ ճանապարհով: Հայաստանի կառավարութիւնն ընդունեց առաջարկը եւ Ղարաքիլիսա ուղարկեց մի պատուիրակութիւն, որի մէջ մտան՝ Մ. Յարութիւնեանը (նախագահ), Ս. Խաչատրեանը, Ս. Մամիկոնեանը, Ա. Խոնդկարեանը եւ Գ. Տէր-Խաչատրեանը: Միեւնոյն ժամանակ, դեկտ. 18-ին, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը հեռագրեց Վրաստանի կառավարութեան. «Խորհրդի որոշումով կառավարութիւնն այսօր պատուիրակութիւն է ուղարկում կապ. Գրինի եւ Վրաստանի լիազօրների հետ միասին, եթէ վերջինները գան, պատերազմական գործողութիւնները վերջացնելու պայմանները մշակելու համար: Մի պայման Խորհուրդը համարում է միանգամայն անհրաժեշտ. Հայաստանի կառավարութիւնն իր զօրքերը Բորչալուի գաւառից կարող է հանել միայն այն դէպքում, երբ երաշխիք ստանայ, որ այս, ինչպէս եւ Ախալքալաքի գաւառը կպահուին Վրաստանի նոր յարձակումներից... Մեր պատգամաւորութիւնը ուրախ կը լինի հանդիպելու ձեր լիազօրների հետ, որպէսզի համերաշխաբար աշխատեն լուծել պատմական աւանդութիւններով կապուած եւ ընդհանուր մշակութային տենչերով համակուած երկու հարեւան ժողովուրդների բարօրութեան համար»:

Այս դիմումն էլ անմիջական գործնական հետեւանքներ չունեցաւ. վրացիները պահանջեցին, որ հայերը հեռանան Լոռիից, իսկ իրենք մնան Լոռիում եւ Ախալքալաքում: Բնականաբար, հայերը չէին կարող ընդունել հարցի նման միակողմանի լուծում. հայ պատուիրակները երկար սպասեցին Ղարաքիլիսայում, վրացիները պատուիրակներ չուղարկեցին: Կապ. Գրինը գնաց զօր. Թոմսընին զեկուցանելու համար, եւ այլեւս ձայնը չլսեց:

Երկու ժողովուրդների զինուած ընդհարման առաջն առնելու փորձեր արաւ եւ Վիրահայոց Ազգ. Խորհուրդը: Դեկտ. 11-ին նրա պատուիրակութիւնը — Ա. Երզնկեանը, Ա. Բոչարեանը, Տէր-Օհանեանը եւ Արովեանը — վրաց կառավարութեան արտօնութեամբ, մեկնեց Թիֆլիսից՝ կամենալով Վորոնցովկայի ու Ջալալ-Օղլիի վրայով հասնել Ղարաքիլիսա եւ համոզել հայերին, որ դադարեցնեն կռիւը եւ վէճը լուծեն բանակցութիւնների միջոցով: Դեկտ. 15-ին պատուիրակութիւնը հասաւ Եկատերինֆելդ, ուր պահեց մի

քանի օր, ապա վերադարձուեց Թիֆլիս, իբր թէ, կառավարութեան հրամանով: Պատւիրակութեան անդամներ Երզնկեանն ու Աբովեանը ննջարկուեցին հայհոյանքի եւ անարգանքի, իսկ Քոչարեանը ծեծուեց ժողովրդական գլարդիականների ձեռքով: Երեքին էլ փակեցին սենեակի մէջ եւ պաշտօնը կրծքներին ուղղած՝ սպառնում էին սպանել: Զօդնեց եւ այն փաստը, որ Ա. Երզնկեան Վրաստանի Գորհրդարանի անդամ էր. նրան համարում էին հայկական լրտես:

Պատերազմի առաջն առնելու մի փորձ արաւ եւ Վրաստանի ներկայացուցիչը Հայաստանում՝ Ս. Մդիվանին, որը դեռ ընդհարումներից առաջ մեկնել էր Երեւանից եւ գտնւում էր Ղարաքիլիսայի շրջանում: Զօր. Ցուլուկիձէի հետ ուղիղ հեռագրաթելով խօսելուց յետոյ, նա յորդորեց Հայաստանի կառավարութեան կանգնեցնել առաջ շարժւող զօրքերը, պարպել Լոռիի դրաւած վայրերը եւ հայ-վրացական խառն պատւիրակութեան միջոցով՝ համոզել Լոռիի հայ գիւղացիութեան, որ համակերպւի եւ ճանաչէ վրաց իշխանութիւնը, իսկ սահմանների հարցը լուծել բանակցութիւնների միջոցով: Մի ձեւ, որ, ի հարկէ, անհնար էր ընդունել ստեղծւած պայմաններում:

Եւ դէպքերն ընթացան իրենց ճանապարհով. խօսքը մնացել էր դէնքին:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 13–ին Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան–Լոռիի զօրամասի պետ Դրոյին՝ մաքրել Լոռին վրաց զօրքերից: Յաջորդ օրը զօրամասը դիմեց յառաջխաղացման Վորոնցովկա—Պրիվոլնոյէ—Օփրեթ—Հայրում գծով:

Գործողութեան սկսող զօրամասի մէջ մտնում էին հետեւեալ միաւորները. աջ թեւում՝ փոխ–գնդ. Կորոլկովը 6րդ գնդի 2րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարիւրեակ ձիաւորով եւ միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխ–գնդ. Նեստերովսկին 4րդ գնդի 2 դումարտակով, 4 գնդացիրով, 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Ձախ թեւում՝ գնդ. Տէր–Նիկողոսեանը 5րդ գնդի 3 դումարտակով, 12 գնդացիրով, 4րդ լեռնային մարտկոցի 3 թնդանօթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդ. Մխիթարեանը 4րդ գնդի 3 վաշտով, 4րդ գնդի ձիաւոր հետախոյզներով եւ 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթներով: Զօրամասի ուժերի համագումար թիւն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանօթ, 4 հարիւրեակ ձիաւորներ: Այս համեստ ուժերով սկսեց հայ–վրացական պատերազմը:

Պէտք է նկատել նոյնպէս, որ պարէնաւորման, սարքաւորման, հագուստի ու մատակարարման տեսակէտից էլ հայկական զօրամասերը աննախանձելի վիճակ էին ներկայացնում: Օր–կուշա, օր–սոված, ցնցոտիներ հագին, բայց, դուցէ, հէնց այդ պատճառով, յաղթելու վճռակամութեամբ լի՝ հայ զինուորը կուի դաշտ նետուեց արտակարգ աշխոյժով:

Առաջին օրն իսկ, գնդ. Տէր–Նիկողոսեանի զօրամասը, դիշերային խիզախ գրոհով, գրաւեց Վորոնցովկան ու Պրիվոլնոյէն: Գերի առնուեցին 5 վրացի սպաներ, 45 զինուոր, 3 լեռնային թնդանօթ, 1 մաքսիմի գնդացիր, առատ փամփուշտ եւ մեծ քանակութեամբ ձիեր: Մեր կորուստներն էին՝ սպանուած տեղակալ Զարաֆեանը, վիրաւոր՝ 8 զինուոր եւ տեղակալ Ազատեանը, որը մինչեւ կուի վերջը զօրամասից չհեռացաւ: Գնդ. Նեստերովսկու զօրամասը գրաւեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 չոգեշարժ եւ գերի առնուեցին 15 զինուորներ: Վրացիները ունեցան

ժեծ կորուստ: Մեր կողմից վիրաւորուեց մի զինուոր: Վրացիների 3 զրահապատ գնացքները յամառ դիմադրութիւն ցոյց տուին, բայց Հայրումի կողմից կորոլկովի զօրամասը քանդել էր երկաթուղագիծը եւ կտրել նրանց նահանջի ճանապարհը: Գիշերային զրոհով, զլխապետ Թարվերդևանը 4րդ գնդի մէկ դումարտակով յետ շպրտեց վրաց զօրքերը Հախպատի եւ Ախտավայի միջեւ եւ գրաւեց 2 գնդացիր: Ռոտմիստր Փիրումեանի հարիւրեակը քշեց վրացիներին եւ գրաւեց Լալւար սարը՝ գրաւելով 2 գնդացիր եւ դերելով 15 վրացիներ: Գիշերւայ ժամը 2–ին հայ կամաւորները ռումբերով պայթեցրին զրահապատներից մէկը: Լուսաբացին գնդ. Տէր–Նիկողոսեանը գրաւեց Միխայլովկա գիւղը եւ առաջ ուղարկեց խուզարկուներ:

Դեկտ. 14–ին եւ 15–ին հայ զօրքերի յառաջխաղացումը անցաւ չատ յաջող: Նրանց ճնշման տակ վրացիները պարպեցին եւ Ալլահվերդին: Դեկտ. 16–ին, լուսաբացին, գնդ. Տէր–Նիկողոսեանի ուժերը անցան յարձակման՝ գրաւելու համար Բոլնիս–Խաչէն–եկատերինֆելդը: Նոյն օրը, առաւօտեան, կորոլկովի Հայրումի ջոկատը, մի խիտ յաղող չարժումով, աչնչացրեց վրացական մի գունդ եւ գրաւեց Հայրում կայարանը: Վրացիներից գերի ընկան 12 սպաներ գնդ. Վաչնաձէի գլխաւորութեամբ եւ 300 զինուորներ: Մօտ 200 հոգի սպանուեցին ու վիրաւորուեցին, միւսները փախան: Մեր կողմից սպանուեցին տեղակալ Մուկուչ Տէր–Ծովհաննիսեանը եւ մի զինուոր, վիրաւորուեցին 7 հոգի: Տէր–Նիկողոսեանի եւ Նեստերովսկիի զօրամասերը չարունակեցին ճնշել վրացիներին դէպի հիւսիս: Վրաց կողմից սկսեցին երեւալ Թիֆլիսից հասած թարմ ուժեր:

Դեկտ. 17–ին արեւելքից զլխապետ Թարվերդևանի ու արեւմուտքից Փիրումեանի խիտ զրոհով ջարդ ու փշուր եղան 5րդ եւ 6րդ վրացական գնդերը եւ զվարդիայի ու սահմանապահ դումարտակները: Գրաւեցին 2 հաուբիցներ, 2 դաշտային թնդանօթ, 25 գնդացիր եւ Ախթալա կայարանի մօտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը զօրաշարժութեան դրեցին հակառակորդի դէմ: Վրացիները ցոյց տուին կատաղի դիմադրութիւն եւ կուի դաշտը թողին 60 դիակ: Վրաց հակատի հրամանատար զօր. Ծուլուկիձէն, բոլորովին չախչախուած, հապճեպով փախաւ Հայրում—Սադախլու գիծը՝ հայերի ձեռքը թողնելով նոյնիսկ իր սալոն–վագոնը մէջի իրերով:

Մերոնք չարունակեցին յառաջխաղացումը. կորոլկովի զօրասիւնը մօտեցաւ Սադախլուին եւ կուի բռնուեց թշնամու հետ: Դեկտ. 18–ին, առաւօտեան, գնդ. Տէր–Նիկողոսեանը գրաւեց Բոլնիս–Խաչէնը: Կուի պայմանները չատ ծանր էին. ձիւն, ցուրտ, հագուստի ու սնունդի պակասութիւն: Բայց եւ այնպէս զօրքի տրամադրութիւնը բարձր էր: Երբեմն ճակատամարտները տանում էին արիւնահեղ բնոյթ, տեղի էին ունենում կատաղի սւինամարտներ: Ախթալա կայարանի մօտ, ուր դրաւեցին զրահապատները՝ 4րդ գնդի առաջին եւ երրորդ վաշտերը արագ ու վճռական հարուածով խփեցին թշնամուն եւ սւիններով խուճապային փախուստի մատնեցին: Զախ թեւի վրա, օգնական ուժեր առանալով, վրացիները դիմեցին հակագրոհի Բոլնիս–Խա–

չէնի վրա, բայց մերոնց սպանիչ կրակի տակ՝ փախան դէպի Արուխլու գիւղը։

Մինչեւ դեկտ. 18-ը վրաց զօրամասերը նահանջեցին ու կենտրոնացան Սաղախլուի շրջանում։ Հետզհետէ Թիֆլիսից հասան նոր ուժեր։ Հայկական ճակատ էր ուղարկուել ժողովրդական գւարդիան։ Ամբողջ Վրաստանը ոտքի էր հանուած, զօրահաւաք էր կատարւում։ Թիֆլիսում, խորհրդարանի նիստերում սպառնական ճառեր էին արտասանւում, մամուլը կրակ ու շանթ էր թափում հայերի գլխին. հայութիւնը դրուած էր օրէնքից դուրս. տղամարդիկ հարիւրներով ձերբակալւում եւ Քութայիս էին աքսորւում։ Առհասարակ, ազգային կրքերը սրուել էին անասելի աստիճանի։

Դեկտ. 18-ին Սաղախլու եկաւ եւ Վրաստանի զինուորական նախարարը, 1000 թարմ զինուորներ, մի հարիւրեակ ձիաւոր, 3 լեռնային մարտկոց եւ վերջին զրահապատ գնացքը։ Զօր. Ցուլուկիձէն պատրաստւում էր ուժեղ հակայարձակման։

Հայկական ուժերը սկզբից մինչեւ այժմ մնացել էին նոյնը. Թիկունքից համարեա ո՛չ մի լրացում չէր գալիս. ճանապարհները փակուած էին, եւ կառավարութեան ուշադրութիւնը զբաղուած էր Շարուրի ճակատում սպառնացող բարդութիւններով։ Պարսկաստանից ու Նախիջեւանից հայրենիք վերադարձող բազմահազար թիւրք զինուորները՝ անկարգ ու բոլշեւիկացած՝ ա՛հ ու դողի էին մատնել մերձակայ շրջանների հայերին, եւ կառավարութիւնը ճիգ էր լարում այդ փորձանքից ազատուելու։ Վրաց ճակատը գրեթէ ամբողջապէս մնացել էր Դիլիջան—Լոռիի զօրամասին եւ Ղազախի ու Լոռիի կամաւորներին։

Այդ ուժերով Դրօն որոշեց շրջապատել ու ջարդել Ցուլուկիձէի զօրամասը։ Գնդ. Տէր-Նիկողոսեանին նա հրամայեց Բոլնիս-Խաչէնից մի գումարտակ առաջ քաշել դէպի արեւելք՝ երկաթուղու կողմը եւ ցուցական շարժումներով օժանդակել Կորոլկովի զօրասիւնին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանօթ եւ 3 վաշտ թողնել Հայրումում եւ մնացած ուժերով, Բարդաձորի եւ Գիւլրէգիի վրայով, անցնելով Դամիա գիւղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրութիւն դարձնելով Շուլաւերից Օփրէթ տանող ճանապարհի վրա։ Դեկտ. 19-ին փոխ-գնդ. Կորոլկովին միացաւ եւ միլիցիոն գունդը 350 զինուորներով ու 2 գնդացիրներով, որին հրամայեց գրաւել Շուլաւերը։

Երեկոյեան դէմ, 4րդ գնդի 6րդ վաշտը փոխ.գնդ. Ցիյերկովսկիի հրամանատարութեամբ եւ առանձին ձիաւոր գնդի 2րդ դիվիզիոնի 2րդ հարիւրեակը տեղակալ Տէր-Մարտիրոսեանի գլխաւորութեամբ, սեփական նախաձեռնութեամբ յարձակման դիմեցին եւ գրաւեցին Սաղախլուն։ Վրացիները սպիտակ դրօշ բարձրացրին։ Բայց հէնց այդ միջոցին, վրա հասաւ վրաց զրահապատը եւ մօտենալով կայարանին՝ սպանիչ կրակ բացեց հայերի վրա։ Զրահապատի օգնութեամբ վրաց զինուորները շրջապատեցին 6րդ վաշտի եւ 2րդ հարիւրեակի զինուորներին, շատերին սպանեցին եւ գերի առին Ցիյերկովսկիին ու Տէր-Մարտիրոսեանին մօտ 30 զինուորներով։

Այդ ժամանակ, 6րդ գնդի մէկ հարիւրեակը փոխ-գնդ. Մանեանի հրա-

մանատարութեամբ հասաւ Հայրում եւ հրաման ստացաւ ճոճկանի զօրախումբը ուժեղացնելու նպատակով 60 հոգի հետախոյզներ ուղարկել ճոճկան, փոխ–գլխ. Պետրոսեանի տրամադրութեան տակ, իսկ մնացած ուժերով անցնել յարձակման ու գրաւել Լամբալու դիւղը՝ Հայրումում թողնելով պահեստի մի վաշտ:

Դեկտ. 20–ին տեղի ունեցան յամառ եւ արիւնահեղ կռիւներ: Կուռո Թարխանեանի հարիւրեակը մի կողմ շպրտելով թշնամուն՝ գրաւեց Շուլաւերը: Իսկ նոյն ժամանակ, հաղարիւ աւելի վրացիներ, զրահապատ գնացքի աջակցութեամբ, համախմբուում էին Սաղախլուի շրջանում:

Շուլաւեր—Սաղախլուի շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրօն հրամայեց գնդ. Տէր–Նիկողոսեանին, դեկտ. 21–ին 1 դումարտակ ու 2 թնդանօթ թողնել Մեծ–Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժուել Արախլուի վրա: Սկսուեց տաք կռիւ: Մերոնք յարձակուում էին անվերջ, վրացիները յուսահատական դիմադրութիւն էին ցոյց տալիս: Գլխ. Մնացականեանի Շուլաւերի զօրամասը կուի բռնուեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սաղախլու—Մամայ երկաթուղագիծը՝ կարելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռո Թարխանեանը յանդուգն յարձակումներ գործելով Աչաղա–Սարայլի ուղղութեամբ՝ գրաւեց մի թնդանօթ եւ մի գնդացիր: Այդ կուում վիրաւորուեց ինքը՝ Թարխանեանը եւ սպանուեց նրա ձիաւորներից մէկը:

Ճակատամարտը Սաղախլուի մօտ չարունակուեց անընդհատ: Վրացիները համարեա չրջապատուած էին եւ դրաւում էին միայն կայարանը, դիւղը եւ արեւմտեան բարձունքը: Դեկտ. 22–ին, հակառակ թշնամու հրացանի ու գնդացիրների մրրկայոյզ կրակի, ճոճկանի զօրախումբը փոխ–գլխ. Պետրոսեանի գլխաւորութեամբ, արհամարհելով գնդակների տեղատարափը, չարժուեց Սաղախլուի վրա եւ յամառ ու երկարատեւ կուից յետոյ գրաւեց կայարանն ու դիւղի հարաւային մասը, բայց օդնական ուժեր չստանալով՝ վրացիների հակայարձակման ու թեւից սպառնացող վտանգի տակ՝ քաշուեց նախկին դիրքերը՝ տալով մօտ 40 զոհեր: Փոխ–գլխ. Պետրոսեանը գրաւեց 2702 բարձունքը, փոխ–գնդ. Կորոլկովը՝ Դամիան, գլխ. Մնացականեանը՝ Շուլաւերը, փոխ–գնդ. Մանիեանը՝ Քերփիլի — 2660 բարձունք դիծը: Վրացիները չարունակում էին նոր ուժեր բերել ու կենտրոնացնել Բոլնիս–Խաչէնի մօտ:

Դեկտ. 23–ին մեր ուժերը վերադասաւորուեցին՝ նորից յարձակման անցնելու համար: Եւ նոյն օրը, երկարատեւ ու բուռն ճակատամարտից յետոյ, 4րդ գնդի 12 վաշտերը, փոխ–գլխ. Աւետեանի հրամանատարութեան տակ, գրաւեցին Սաղախլուն: Մերոնց ձեռքը դերի ընկան 6 սպայ, 126 զինուոր, 2 կոլտի գնդացիր, աւելի քան 100 վագոն պարէն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 չոգեշարժ եւ ուրիշ պաշարներ: Մեր կորուստները էին. փոխ–գլխ. Ալեքսանդրովը վիրաւոր, 7 զինուոր սպանուած եւ 11 վիրաւոր: Տաք կռիւներ տեղի ունեցան եւ Եկատերինֆելդի ուղղութեամբ, ուր վրացիները գրաւեցին Դաղէթ–Խաչէն դիւղը, և՛ Շուլաւերի չրջանում, Սարաչլու դիւղի ճակա–

ուժեմ, ուր մերոնք յետ մղեցին վրացական մի չարք կատաղի գրոհներ: Այսպիսով, վերջնականապէս ջարդ ու փշուր եղաւ զօր. Յուլուկիձէի զօրամասը, եւ Յուլուկիձէն ինքն էլ փախաւ մաղապուրծ՝ չրջակայ թուրքերի օգնութեամբ:

Դրանից յետոյ, վրաց հրամանատարութիւնը փոխեց. Յուլուկիձէի փոխարէն նշանակեց զօր. Մազնիևը: Վրացիները չարունակեցին չտապով հասցնել նոր զօրքեր ու թնդանօթներ եւ պատրաստուել ընդհանուր յարձակման:

Դեկտ. 24-ին փոխ-զնդ. Կորոլկովը հրաման ստացաւ չարժուելու Շուլաւերի վրա, որը ենթարկուել էր վրացիների յարձակման. միլիցիոն գունդը երկու օր է դիմադրում էր հակառակորդի ասստիկ գրոհներին: Դեկտ. 25-ին, երբ հասան Կորոլկովի ուժերը, վրացական 5 գրոհ յետ մղուեց՝ մեծ կորուստներով թշնամու համար: Սարաչլու դիւղից դէպի խճուղին տանող տարածութեան վրա բոլոր վրացական դիրքերը մաքրուեցին. վրացիները կուի դաշտում թողին 86 դիակ:

Ցերեկւայ ժամը երկսի մօտերը, վրացիները, Թիֆլիսից հէնց նոր հասած ու վագոններից դուրս եկած մօտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցութեամբ, դիմեցին յարձակման Շուլաւերի խճուղու չրջանում, Աչաղա-Սարայլ կայարանի մօտ: Շուլաւերի վրա թռչում էին վրաց ասւառնակները եւ նետում ռումբեր: Մերոնց հակայարձակումով թշնամին յետ շպրտուեց եւ Աչաղա-Սարայլը տուեց մեր թնդանօթների կրակին: Այս կռիւներում ռումբի կտորներով երեք տեղից վիրաւորուեց անվեհեր տեղակալ Կուռօ Թարխանեանը եւ սպանուեց միլիցիոն գնդի սպայ Տէր-Գրիգորեանը:

Այս ձեւի կռիւները, գրոհներն ու հակագրոհները չարունակուեցին անընդհատ, մինչեւ դեկտ. 28:

Մինչ ճակատում հոսում էր արիւնը, Թիֆլիսում դաշնակիցները միջոցներ էին փնտռում՝ վերջ տալու համար արիւնահեղութեան: Դեկտ. 25-ին անգլիական զօրավար Ռայկրոֆտի, ֆրանսական գնդապետ Շարդինիի եւ ժորդանիայի կողմից ատրաշդրւեց մի համաձայնագիր, որով «պատերազմական գործողութիւնները վրացիների եւ հայերի միջեւ պէտք է անմիջապէս դադարեցուն եւ բրիտանական ու ֆրանսական բանակների սպաներից բաղկացած մի յանձնաժողով՝ ուղեկցութեամբ վրաց կառավարութեան ներկայացուցիչների՝ կը մեկնի ճակատ՝ բացատրելու համար համաձայնութեան մանրամասնութիւնները եւ հսկելու նրանց իրականացման վրա՝ համաձայն ներքոյ ատորագրեալների կողմից Երեւան ուղարկուած հեռագրի»:

Այս համաձայնութիւնը կնքելիս ներկայ էր եւ Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալեանը, որը մերժեց ատորագրել՝ բողոքելով, մասնաւորապէս, Ախալքալաքի գաւառին վերաբերուող մասի դէմ: Այդ պատճառով համաձայնագրի տակ, Ռայկրոֆտն ու Շարդինին աւելացրին, թէ՝ «Պ. Ջամալեանը համաձայն չէ Ախալքալաքի գաւառը Վրաստանի կողմից գրաւելու կէտին»:

Նոյն օրը Երեւան ուղարկուեց հետեւեալ հեռագիրը. «Ներկայումս



ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԴԷՊԻ ՏՈՒՆ



Դ· ԴԱՒԻԹԵԱՆԵԱՆ
Հ· Հ· Խնամատարութեան
ներկայացուցիչ Թիֆլիսում



ԲԺ· Ա· ԲԱՐԱԼԵԱՆ
Խնամատարութեան նախարար

Թիֆլիսում գտնուղ մեծ–բրիտանական զօրավար Ռայկրոֆթը եւ Ֆրանսական առաքելութեան պետ գնդ. Շարդինին, Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիայի հետ ունեցած խորհրդաժողովում, պ. Ջամալեանի ներկայութեամբ, որոշեցին, որ պատերազմական գործողութիւնները անյապաղ պէտք է վերջացուեն:

«Ձնայած պ. Ջամալեանի բողոքներին, զօր. Ռայկրոֆթը, գնդ. Շարդինին եւ Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիան որոշեցին, որ՝

«Անգլիական, Ֆրանսական, վրաց ու հայկական ներկայացուցիչներից բաղկացած մի խառն յանձնախումբ, ըստ կարելւոյն չուտ, պէտք է մեկնի ճակատ, որպէսզի կեանքում իրականացնի հետեւեալ պայմանները.

«Յանձնախումբը որոշում է քանակը այն զօրքերի, որ վրացիները պէտք է թողնեն Բորչալուի գաւառի հիւսիսային մասում, իսկ հայերը՝ հարաւային, այլ եւ վրացիները՝ Ախալքալաքի գաւառում: Զօրքերը պէտք է լինեն սակաւաթիւ:

«Վրաց զօրքերը պէտք է մնան իրենց գրաւած այժմեայ գծի վրա, հայ զօրքերը պէտք է նահանջեն Դսեղ—Ջալալ-Օղլի թիւրքական գիծը:

«Վրացական եւ հայկական զօրքերի գրաւած տարածութեան միջեւ, երկաթուղու վրա, կը գտնուեն բրիտանական պահակներ. վարչութիւնը այս վիճելի մասում կը լինի խառն:

«Ախալքալաքի գաւառի վրացական վարչութեան վրա հսկում է դաշնակիցների մի յանձնախումբ, որի մէջ մտնում են ներկայացուցիչներ եւ տեղական հայ ու մահմեդական բնակիչներից:

«Երկու պետութեան՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները շուտով կուղարկուեն Եւրոպա, ուր սահմանների վերաբերող ամբողջ հարցը կը լուծուի մեծ պետութիւնների կողմից:

Իսկականը ստորագրեցին Ռայկրոֆթ, Շարդինի, Ժորդանիա: Թիֆլիս, 25 դեկտ. 1918 թ.»:

Յանձնախումբը՝ բաղկացած 2 անգլիացի, 1 ֆրանսացի ու 1 վրացի սպաներից, անգլիական կապիտան Դըվլէզ Վիցերսի գլխաւորութեամբ, դեկտ. 28–ին հասաւ Ղարաքիլիսա եւ հայկական հրամանատարութեան ներկայացրեց վերեւի համաձայնութիւնը: Հայերը բողոքեցին ու պահանջեցին որոշ կէտեր փոխել, բայց, ի վերջոյ, անգլիացիների ճնշման տակ ստիպուած եղան համակերպուել: Հայկական կառավարութիւնը, սակայն, համաձայնութեան մի քանի կէտեր համարում էր մութ եւ բացատրութիւն էր պահանջում, որի վրա յանձնախմբի նախագահը համաձայնուեց իր հետ Թիֆլիս տանել հայերից երկու ներկայացուցիչ՝ մութ կէտերի վերջնական պարզաբանման համար: Բանակցութիւններից յետոյ, դեկտ. 30–ին, որոշուեց, միւս օրը, դեկտ. 31–ի ցերեկուայ ժամը 12–ին, վերջ տալ պատերազմական գործողութիւններին, որից յետոյ հայկական պատուիրակութիւնը պէտք է մեկնէր Թիֆլիս՝ հաստատման բանակցութիւնների համար:

Յանձնախմբի Ղարաքիլիսա հասնելու օրն իսկ, դեկտ. 28–ին վրացի–

ներն ամբողջ ճակատի վրա անցան ընդհանուր յարձակման: Նրանց ուժերը աւելացել էին, մատակարարման գործը հնչտացել էր. նրանց միացել էին եւ Բորչալուի թուրքերը, որոնք կուի դաշտ էին հանել կամաւորական խմբեր: Ռազմավարական տեսակէտից նահանջը վրացիներին օգտակար էր եղել. նրանք դուրս էին եկել թշնամաբար տրամադրուած հայկական շրջաններից, կարճացրել հաղորդակցութեան գիծը, վերակազմել իրենց բարձր հրամանատարութիւնը, ռազմաճակատ ուղարկել գործիչների ու ժողովրդական գործիչ նոր խմբեր, վրաց ժողովրդի ուշադրութիւնը լարել, ամբողջապէս կենտրոնացրել ճակատի վրա:

Ընդհակառակը, հայերի համար՝ երթալով՝ ստեղծւում էր աւելի անյարմար վիճակ: Երկու շաբաթ շարունակ առաջ շարժւող, կռիւներից դուրս չեկող, վատ հագնւած ու վատ պաշարուած զօրքը սաստիկ յոգնել էր, պահեստի մասերը սպառւել էին, իսկ նոր ոյժ դրսից չէր գալիս. կառավարութիւնը զրաղւած էր ուրիշ ոչ պակաս ծանր հոգսերով եւ պատերազմին բաւարար ուշադրութիւն չէր կարող դարձնել: Թիկունքից պարէնաւորում ու ռազմամթերքներ չէին առաջւում. զօրքը կերակրւում էր վրացիներից առած հացով եւ կռւում վրացական ռազմամթերքով:

Դրութիւնը դժւարացնում էր եւ մի ուրիշ հանգամանք. քանի կռիւները տեղի էին ունենում հայկական շրջաններում, լոռեցիները՝ զէնքը ձեռներին մասնակցում էին պատերազմական գործողութիւններին՝ միշտ բանակի առաջին շարքերում: Հէնց որ ամբողջ Լոռին զրաււեց, եւ պատերազմը սկսեց տեղափոխւել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով, հեռացան իրենց տները, եւ կուի դաշտում մնացին զէթաւորապէս կանոնաւոր զօրամասերը: Այս պարագան, ի հարկէ, վատ անդրադարձաւ եւ մնացած զինւորների հոգեկան վիճակի վրա: Հայկական բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, աւելանում էր արագօրէն: Ուժերի համամտութիւնը փոխւում էր ի նպաստ թշնամու:

Դեկտ. 27–ին վրացական առաջաւոր խմբերը երեւացին 2660 բարձունքի մօտ: Սարաչլուի կողմից, 3–400 վրացիներ աշխատում էին անցնել փոկունդ. Կորոլկովի ձախ թեւի թիկունքը: Շարժումներ սկսեցին եւ միւս ճակատներում, բայց գլխաւոր ուժերը Շուլաւերի շրջանում էին, ուր զօր. Մազնիեւի զօրամասը — 3 ու կէս հազար մարդ ու 12 թնդանօթ — մեր դիրքերի թնդանօթային փոթորկայոյզ ռմբակոծումից յետոյ, ժամը 5–ին անցաւ ուժեղ յարձակման Կորոլկովի ճակատի ամբողջ լայնութեամբ:

Հակառակ թշնամու ուժերի խիստ գերակշռութեան եւ մեր զօրքերի արտակարգ յոգնածութեան ու սակաւութեան, մի քանի օր անընդհատ մղեցին կատաղի կռիւներ, եւ մերոնք մեծ կորուստներ պատճառելով՝ յետ էին մղում բոլոր գրոհները:

Միաժամանակ վրացիները, մօտ 1000 հոգով, հետները ունենալով եւ Բորչալուի թուրքերի կամաւորական խմբերը, Ֆասումլու եւ Ահմամաղլու գիւղերի կողմից, յարձակւեցին մեր աջ թեւի վրա, ուր գործում էր փոկունդ. Իշխանեանը 6րդ գնդի 1 գումարտակով ու 2 գնդացիրով: Թէ Շուլաւե-

րից եւ թէ այս կողմը, մեր զօրքերը, չստանալով ո՛չ մի օգնութիւն, թշնամու օր աւուր աճող ուժերի ճնշման տակ, դիմեցին նահանջի մինչեւ Գեաւուր Արխ եւ Սիոն գիւղերը: Մեր կորուստներն էին այս կռւում. մօտ 200 հոգի սպանուած ու վիրաւոր: Սպանուեց տեղակալ Տէլիչէյեւը, գերի ընկան փոխ-գլխ. Յակորեանը եւ 2րդ թնդեւ մարտկոցի պետ տեղակալ Բազրատունին: Թշնամու ձեռքն անցան 7րդ թնդեւ մարտկոցի 2 թնդանօթները, որոնց վարիչները մինչեւ վերջ ցոյց տուին հերոսական դիմադրութիւն եւ հեռացան թնդանօթները անդործածելի դարձնելուց յետոյ:

Դեկտ. 29-ին օգնութեան հասաւ գնդ. Տիմչենկօն, որ ընդունեց այդ թեւի ընդհանուր հրամանատարութիւնը՝ խնդիր առանալով հսկողութեան տակ առնել N° 2660 եւ Ղըզըլ-կայա բարձունքներից դէպի հիւսիս դառնող տարածութիւնը եւ, եթէ վրացիները Շուլաւերի դիրքերից հեռանան, արեւելքից անցնել նրանց թիկունքը, չարժւելով դէպի Աչաղա-Սարայլ ու սերտ կապ պահելով Կորոլկովի հետ՝ ապահովել այդ թեւը: Կենտրոնի՝ Կորոլկովի զօրամասին՝ բաղկացած 4րդ գնդի 10 վաշտից, մելիցիոն գնդի 4 վաշտից, 2րդ դիվիզիոնի 2 հարիւրեակից, 2րդ գնդի 1 դումարտակից, 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթից ու 1 զրահապատ գնացքից՝ հրամայւեց յամառ կերպով պաշտպանել Դամխա—Սադախլու գիծը՝ Ռոժդոնիում կենտրոնացնելով 4րդ գունդը, առաջաւոր մասերը պահելով Դամխա գիւղում եւ այդից կապ ունենալով Տիմչենկոյի թեւի հետ: Վերջինիս նոր հրաման տրւեց՝ ամուր կերպով պահել Սադախլուի մօտի երկաթուղագծից 2660 բարձունք — Քերփելի գիւղ գիծը: 2րդ գնդի մէկ դումարտակը թողնւեց պահեստում ճոճկան գիւղի մօտ:

Մինչ կենտրոնում եւ այդ թեւում կատարւում էին այս դէպքերը, ձախ թեւից երեք օր շարունակ լուր չստացւեց. գնդ. Տէր-Նիկողոսեանը բոլորովին կտրւել էր ընդհանուր հրամանատարութիւնից: Յետոյ պարզւեց, որ 5րդ գունդը բռնւած էր բծաւոր տիֆով, հիւանդացել էին եւ գնդ. Տէր-Նիկողոսեանը ու իր սպայակոյտի սպաները: Այդ պատճառով կարելի չէր եղել կատարել ստացւած հրամանը, որով կարգադրւում էր գրաւել Եկատերինֆելդ—Բոլնիս-Խաչէն գիծը եւ 4րդ գնդի հետ միասին չարժւել դէպի Արախլու: Հակառակ պարագային, եթէ կռիւները գնան անյաջող, ամուր պահել Մեծ-Դումանիս—Բոլնիս-Խաչէն ճակատը: Այս հրամանը գնդ. Տէր Նիկողոսեանը չէր կարողացել կատարել, եւ այդ ծանր անդրադարձում ունեցաւ յետագայ գործողութիւնների վրա:

Դեկտ. 30-ի առաւօտեան վրացիները փորձեցին մօտենալ Սադախլու կայարանին ու Լամբալու գիւղին, բայց մեր հրետանիի կրակով յետ չպըրտւեցին: Նորից անցնելով յարձակման՝ մօտ 500 հոգով մտան Սադախլու, իսկ մի ուրիշ զօրամաս գրաւեց 2660 բարձունքը: Մեր զրահապատը կրակի բռնեց Սադախլուն, ուր սկսել էր հաւաքւել թուրք զինւած խուժանը: Վրացիներն ու թուրքերը հեռացան Սադախլուից եւ սկսեցին քաշել իրենց թնդանօթներն ու ռմբակոծել մեր զրահապատը, որը, փոխ-տեղակալ Սուլթան-Շահի հրամանատարութեան տակ յանդուգն յարձակումներ էր գործում եւ ահագին վնաս պատճառում հակառակորդին: Մերոնք քանդեցին Սադախ-

լուից հիւսիս գտնուող երկաթուղու կամուրջը: Շուլաւերից առաջացող վրացիները եւ Թուրքերը այրեցին Դամիա գիւղը:

Երեկոյեան դէմ վրացիները նորից փորձեցին գրաւել Սադախլուն, փոքրիկ խմբերով առաջ անցան, մոտ 2660 բարձունքը: Մեր դրահապատը կրկին գործողութեան դիմեց նրանց դէմ: 2րդ գնդի մէկ դումարտակը դէպ. Զերդեչաովի հրամանատարութեամբ բռնեց 2702 բարձունքը: Կռիւներ տեղի ունեցան եւ Կորոլկովի ու Տէր-Նիկողոսեանի ճակատներում: Վերջինում, երկու օրւայ կատաղի գրոհներից յետոյ, վրացիները գրաւեցին Բոլնիս-Խաչէն գիւղը:

Նոյն օրը, երկար ու յամառ պահանջներից յետոյ, Դրօն, վերջապէս, ստացաւ փոքրիկ օժանդակութիւն. 4րդ եւ 6րդ գնդերի համար հասան մօտ 600 թարմ զինուորներ: Դրօն մի կողմից յետ էր մղում թշնամու յարձակումները, միւս կողմից պատրաստւում դեկտ. 31-ի վճռական կռւի համար. երկու կողմերն էլ աշխատում էին զինադադարի վայրկեանին իրենց համար նպաստաւոր դիրքեր ապահովել:

Դեկտ. 31-ի առաւօտեան հայկական զօրամասերը դասաւորւած էին հետեւեալ ձեւով. աջ թեւում կանգնած էր գնդ. Տիմչենկօն 6րդ գնդի 2 դումարտակով (մօտ 1100 ութին) եւ 6րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Նրա ճակատն էր Գիւնաչթափա լեռ—Քերփիլին մինչեւ երկաթուղի: Կենտրոնում՝ 2րդ գնդի 3 դումարտակներ (մօտ 600 ութին) դէպ. Ցուվհաննիսեանի հրամանատարութեամբ եւ 7րդ լեռնային մարտկոցի երկու թնդանօթ՝ երկաթուղուց մինչեւ Բարդաճորից ձոճկան տանող ճանապարհը: Ձախ թեւի վրա՝ փոխգնդ. Կորոլկովը՝ Բարդաճորի ճանապարհից մինչեւ Օփրեթի ճանապարհը: Նրա մասերը դասաւորւած էին. Գիւլ-Գափիում մի լիցիոն գունդը, Բարդաճորում 4րդ գնդի մէկ դումարտակը, 2 դումարտակ Ցուժոռնիում, 50 ձիաւոր Աղբեորփիում: Պահեստը գտնւում էր Ճոճկանում՝ 2րդ գնդի 2 դումարտակներ եւ 7րդ մարտկոցի 2 թնդանօթներ:

Վրացիները դեկտ. 31-ի առաւօտեան Սադախլուում հաւաքել էին մօտ 3 եւ կէս հազար կռւող*), Դամիա—Սադախլուում 12 թնդանօթ եւ մօտ 800 հոգի էլ Քասումլու Թրքական շրջանում: Նրանց առաջապահ մասերը, մօտ 2 վաշտ, գրաւում էին 2660 բարձունքը:

Հայկական հրամանատարութեան ծրագիրն էր՝ գրաւել Սադախլուն եւ ոչնչացնել զօր. Մազնիեւի զօրամասը: Այդ նպատակով տրւել էր հետեւեալ հրամանը.

Աջ թեւը, ժամը 2-ին, սկսում է յարձակման, գրաւում 2660 բարձունքը եւ, եթէ ձախ թեւը առաջանայ յաջողութեամբ, Մամայում կապւում նրա հետ: Կենտրոնական զօրամասը՝ զբաղում է ճակատից եւ զրաղեցնում Սադախլուի թշնամուն: Ձախ թեւը չարժւում է կենտրոնի հետ միաժամանակ եւ գրաւելով Սիոն—Դամիա շրջանը՝ Մամայում միանում է աջ թեւին: Այսպէս-

*) Զօր. Մազնիեւի յետագայ յայտարարութիւնների համաձայն, վրացիները մտքում հայկական ճակատի վրա ունէին 8,000 կռւող:

սով թշնամին առնելու էր օղակի մէջ եւ ջախջախելու:

Սակայն, ճակատամարտը տեղի ունեցաւ նախատեսուածէն մի քիչ տարբեր ձեւով: Հետախոյզային կապ չլինելու պատճառով՝ կորոլկովը մի քանի ժամ ուշ ստացաւ հրամանը, եւ նախաձեռնութիւնը նրա ճակատում անցաւ թշնամու ձեռքը: Ժամը 8–ին վրացիները, սպայական դումարտակի գլխաւորութեամբ, դիմեցին ուժեղ յարձակման, Գիւլ–Գազիի մօտ պատռեցին մերոնց շղթան եւ շարժուեցին դէպի Գնդեք–Բուռուն լեռը: Ժամը 1–ին թշնամու յառաջխաղացման մասին լուր ստացուեց զօրամասի սպայակոյտում, եւ Դրօն չտապեց պահեստից օգնութեան հասցնել 2րդ գնդի 2րդ դումարտակը, որը կանգնեցրեց վրացիների արշաւը:

Ժամը 2–ին ուժգին յարձակման անցաւ 6րդ գունդը՝ շարժուելով դէպի 2660 բարձունքը: Կենտրոնական ճակատից անընդհատ տեղեկութիւններ էին ստացուում, որ վրացիները 2660 բարձունքի կողմերից, Մամայից ու Դամխայից Սաղախլու էին քաշում իրենց ուժերը եւ շարժւում դէպի Գիւլ–Բաղի: Եւ որովհետեւ ձախ թեւը չէր շարժւում, Դրօն հրամայեց աջ զօրասիւնին ցոյց տալ վճռական գործունէութիւն եւ մի զօրասիւն ուղարկել դէպի Սաղախլու՝ Գիւլ–Բաղիի ուղղութեամբ գործող վրացիներին թիկունքից հարուածելու համար:

6րդ գունդը յառաջացաւ երկու թեւով. մէկը՝ 1 դումարտակ՝ Գիւնաչթափայից 2660 բարձունքի լանջերով շարժւեց դէպի Լամբալու եւ Սաղախլու: 6րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթը կրակ բաց արին Սաղախլուի վրա. 2660 բարձունքի վրա դրւեց մի պահակ: Միւս դումարտակը գործում էր Բասումլուի եւ Կաչաղանի շրջանում:

Միաժամանակ, Սաղախլուի վրա կրակ բաց արեց եւ 7րդ լեռնային մարտկոցը, եւ 2րդ գնդի 3րդ դումարտակը 2702 բարձունքից սկսեց հարուածից իջնել դէպի Սաղախլու: Զրահապատը, առաջ անցնելով, օգնում էր 3րդ դումարտակի էջքին:

Ձախ թեւի վրա չարունակւում էին կատաղի կռիւները. վրացիները տարածւում էին Գնդեք–Բուռուն ուղղութեամբ:

Ժամը 3–ի մօտերը, 6րդ գնդի 2րդ դումարտակը սկսեց մօտենալ 2660 բարձունքի կատարին: Վրացիները բաց արին ուժեղ գնդացիրային կրակ, բայց մերոնք առաջ չարժւեցին գնդակների տարափի տակ՝ պատրաստ անցնելու սուինամարտի: Վրացիները խուճապի մատնուեցին սուինակուից եւ ժամը 4 ու կէսին փախան: 2660 բարձունքը անցաւ հայերի ձեռքը, որոնց առաջաւոր մասերը սկսեցին իջնել դէպի Մամայ՝ կտրելով Սաղախլուի ճակատում գործող վրացական զօրքերի թիկունքը: Երեկոյեան 6րդ գնդի ձախ զօրասիւնը դրաւեց Լամբալուն, իսկ 2րդ գնդի 3րդ դումարտակը նետուեց խուժեց Սաղախլուի հարաւային մասը:

Գիշերը կռիւը դադարեց: Թիկունքից կտրուած՝ վրացիները կանգնեցին Գիւլ–Բաղիի շրջանում եւ սկսեցին կամաց–կամաց յետ քաշուել: Մեր ձախ զօրամասը բռնեց բարձունքները Խոժոռնիի, Գիւլ–Բաղիի ու Բարդաձորի գլխին:

Ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդէն ժամը 12 էր, եւ կուռող կողմերը կանգ առին իրենց դրաւած տեղերում: Պատերազմը վերջանում էր:

Ո՞վ էր յաղթողը այս պատերազմում: Վրացիները պնդում են, որ դեկտ. 31-ի ճակատամարտը վերջացաւ իրենց յաղթանակով: Եթէ պայմանաժամը չլրանար, ասում են նրանք, վրաց զօրքը առաջ կ'երթար յաղթական, եւ հայկական բանակի կատարեալ պարտութիւնը կը դառնար անխուսափելի: Ո՛չ, պատասխանում են հայերը, եթէ պայմանաժամը չլրանար, հայ զօրքերը յաջողութեամբ կ'իրականացնէին չրջափակման ծրագիրը, եւ զօր. Մազնիևի զօրքերը ամբողջովին գերի կ'ընկնէին հայերի ձեռքը:

Վրացիները ասում են՝ մենք յաղթեցինք, հայերը ասում են՝ մենք յաղթեցինք: Ո՞ւմ է իրաւունքը: Պատասխանը թո՛ղ ռազմագէտները տան. ճակատամարտի դաշտի քարտէսը երկու կողմին էլ հիմք է տալիս մնալու իր համոզման մէջ:

Եւ, իրօք, ուշադրութիւն դարձրէ՛ք ճակատամարտի քարտէսին — ուժերի ի՛նչ տարօրինակ դասաւորութիւն: Հայ ու վրացի զօրամասերը խառնուել են իրար. վրացիները մտել են շատ խորունկ հայկական չրջանը, հայերը սպառնական՝ անցել են վրացիների թիկունքը: Կը դիմանայի՞ն կորոլկովի զօրամասերը վրացական գրոհին, կը կարողանայի՞ն վրացիները մաքրել թիկունքը հայկական խուժումից. կը կարողանա՞ր Մազնիևը տոկալ Դրոյի հարուածին: Այս հարցեր մնում են անպատասխան*):



*) Ինչո՞ւ էր մարդկային կորուստը պատերազմում — դժուար է ասել: Մեր ձեռքը ընկած պատահական տեղեկութիւններից երեւում է, որ միայն 4-րդ գնդից սպանուել էր 41

Այսպէս թէ այնպէս, հայ-վրացական պատերազմը վերջացաւ: Բանակները կատարեցին իրենց պարտականութիւնը: Խօսքը անցնում էր քաղաքագէտներին:

***

Քաղաքագէտների գործը, սակայն, հեշտ չէր լինելու. պատերազմն ու յարակից դէպքերը չափազանց շատ էին լարել կրքերն ու խառնափնթորել կացութիւնը: Մանաւանդ, վրաց կառավարութիւնը եռանդ չէր խնայել այդ ուղղութեամբ. պատերազմի ընթացքում հայերի վիճակը Վրաստանում ոչընչով չէր տարբերւում այն վիճակից, որ ստեղծւել էր Թիւրքիայում, պատերազմի օրերին: Հայաստանի դրամները բանկերից եւ հայկական պետական գոյքերը գրաւեցին:

Հայաստանի ներկայացուցչութիւնը փակեց: Վրահայոց Ազգ. Խորհուրդը փակեց: Գաղթականական ու որբախնամ մարմինները փակեցին: «Աշխատաւոր», «Նոր-Հորիզոն», «Կաւկ. Սլովօ» եւ մի շարք ուրիշ թերթեր փակեցին: Բազմաթիւ հայ գործիչներ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դաշնակցական անդամները ձերբակալեցին: Հայ միլիցիոներները արձակեցին պաշտօնից: Սկսեց մի այլանդակ հալածանք բոլոր հայերի դէմ անխտիր, զզւելի հայորսութիւն Թիֆլիսի փողոցներում: 1918 թ. յունւ. 8-ին, Վրահայոց Ազգ. Խորհուրդը Վրաստանի կառավարութեան ներկայացրեց մի յուշագիր, որ ահռելի մանրամասնութիւններ էր տալիս հայերի նկատմամբ գործադրւող կամակայականութիւնների եւ բռնութիւնների:

«Պատերազմական գործողութիւնների սկսելով, ասում էր այդ յուշագիրը, հանրապետութեան կառավարութիւնը Վրաստանի հողի վրա ապրող բոլոր հայերին յայտարարեց ռազմագերի՝ կիրառելով նրանց վերաբերմամբ ճնշումներ՝ բանտարկութիւնների, Քութայիսի նահանգն աքսորելու եւ այլ ձեւերով... Հպատակութեան Օրէնքի թերութիւնների պատճառով, պատերազմի հէնց առաջին օրից ստեղծւած թշնամական մթնոլորտը խուզարկութիւններ, ձերբակալութիւններ եւ աքսորումներ կատարող միլիցիայի եւ յատուկ զօրամասի պաշտօնեաների առջեւ, բաց արաւ լայն հեռանկարներ ամէն կարգի ապօրինութիւնների հայերի նկատմամբ՝ ակներեւ կերպով չձերբակալւելիք անձերի ձերբակալութիւնից սկսած մինչեւ բաց ու անպատիժ դրամաշորթութիւն: Հայերի վիճակը է՛լ աւելի վատացաւ, երբ հրապարակւեցին ընդհանուր-նահանգապետի պարտադիր որոշումները, որոնք,

---

զինւոր, անհետ կորել 62 եւ վիրաւորւել 60. 5րդ գնդից՝ սպանւել էր 19 զինւոր, անհետ կորել 44 եւ վիրաւորւել 14, 6րդ գնդից սպանւել էր 8, անհետ կորել 11 եւ վիրաւորւել 18: Կռիւներում սպանւեցին հետեւեալ սպաները՝ Վահան Դանիէլեան, Լեւոն Գաբրիէլեան, Յովսէփ Գրիգորեան, Արշակ Մելիք-Շահնազարեան, Մարտիրոս Խոջայեան, Թէոդոր Թան, Կոլոձէյչիկ, Գրիգոր Սափարեան, Մկրտիչ Տէր-Յովհաննիսեան, Մատթէոս Տէր-Մատթէոսեան, Մկրտիչ Տէր-Պօղոսեան: Վէրքերից մեռան սպաներ Սուրէն Տէր-Ղուկասեանը, Գէորգ Սուլթան Շահը, Թիլիչէյեւը, Տէր-Գրիգորեանը: Վիրաւորւեցին սպաներ Ալեքսանդր Մամեանցը, Սմբատ Չէրքէզեանը, Ալեքսանդր Անդրաբատովը, Արամայիս Բաքլաչեան-Բաքլումեանը, Տիգրան Ակիզեանը, Լեւոն Վերմիշեանը, Նիկ. Թարխանեանը (կուռօ), Դարբինեանը եւ զին. Պաշտօնեայ Վախտանգ Դաւթեանը:

վարչական օրէնսդրութեան կարդով, ընդարձակում էին ռազմագերիների տեսակները՝ մտցնելով նրանց մէջ Հայաստանի Հանրապետութեան զօրքերով գրաւուած Բորչալուի շրջանն էլ»:

«Այս բոլորի հետեւանքով վրաց իշխանութեան տակ ապրող կէս միլիոն հայ ազգաբնակութիւնը զրկուեց ամէն իրաւունքից, նրա պատիւը, ունեցուածքը, ազատութիւնն ու գոյքերը դարձան միլիցիայի եւ յատուկ զօրամասի պաշտօնեաների ազատ քմահաճոյքի առարկայ»: «Այն պատրւակով, որ, իբր թէ, Արամեանի չէնքում, ուր Հայ.Ազգ. Խորհրդին կից տեղաւորւած էին եւ մի շարք ուրիշ հիմնարկութիւններ, կատարւում է կամաւորների արձանագրութիւն յօդուտ Հայաստանի, կնքեցին Հայ. Ազգ. Խորհրդի տոմարները եւ գրաւեցին նրա բոլոր նիւթական միջոցները եւ դաղթականներին յատկացուած դեղերն ու գրամները»: Եւ Ազգ. Խորհուրդը փաստօրէն դադարեց գոյութիւն ունենալուց:

«Ահա երկու շաբաթ է, որ Թիֆլիսի հայ բնակչութիւնը ենթակայ է վարչական իշխանութեան ամէն տեսակ կամայականութեանց: Զինւած միլիցիոներները դիշերները այցելում են, առանց հպատակութեան ու դիրքի խտրութեան, հայերի տները, բռնութիւններ են գործ դնում, առնում-տանում են թանգարժէք իրեր, ձերբակալում են ոչ միայն ոչ հայահպատակ, այլ եւ վրացահպատակ անձանց. ցերեկով չուրջկալներ են կատարում եւ հայերին հարիւրներով քշում են բանտ ու Քութայիսի նահանգը՝ առանց նոյնիսկ հնարաւորութիւն տալու զէթ մնաս-բարեւ ասելու իրենց հարազատներին ու անհրաժեշտ իրեր առնելու. հազարաւոր հայ բանւորներն ու մտաւորականները, որոնց հանում են գործից եւ ուղարկում Մեթեխի բերդը կամ՝ միջնադարեան բանտերի վատագոյն կարգերով գերիների կայանի վերածւած Ներսիսեան դպրոցի չէնքը — սովորական երեւոյթներ են դարձել Թիֆլիսի հայերի կեանքում: Այդ բոլորին զուգընթաց, տեղի են ունենում բոլորովին անմեղ մարդկանց ձերբակալութիւններ՝ դրամ կորզելու նպատակով. մերժման կամ իշխանութեան յայտնելու պարագային սպառնում են գնդակահար անել: Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները եւ յատուկ զօրամասի պաշտօնեաները, հաստատել են փրկագնի որոշ սակ՝ 50-ից սկսած մինչեւ 50,000 ռուբլի, եւ սակաւ չեն դէպքերը, երբ միեւնոյն անձին հերթով դիմում ու դրամ են պահանջում երկու հիմնարկութեան ներկայացուցիչներն էլ, եւ եթէ միամիտը յայտնի, թէ ինքը արդէն տուել է, այդ փաստն ինքնին ամրացնում է նոր պահանջողի իրաւունքը»:

Այս բոլորի թագ ու պսակ եղաւ յունւ. 5-ի այլանդակ դէպքը, երբ, կնքւած զինադադարից յետոյ արդէն, Թիֆլիսում տեղի ունեցան հայերի զանգւածային ձերբակալութիւններ: «Միլիցիայի գործակալները, դրում էր վ. Ազգ. Խորհուրդը, վայրենիների պէս, բառիս բուն նշանակութեամբ, որսի ելան հայերի դէմ. մի քանի ժամւայ մէջ ձերբակալեցին 6000 հոգի եւ ազատ թողին այն մի քանի հարիւր բախտաւորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջեւ, կարողանում էին վճարել պահանջւած գումարը կամ, հնարաւորութիւն էին ստանում, միլիցիոներների ուղեկցութեամբ գնալ տուն



Ա· ԽԱՏԻՍԵԱՆ
վարչապետ



Ս· ԱՐԱՐԱՏԵԱՆ
Ելեւմտական նախարար



Ա· ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆ
Արդարադատութեան նախարար



Ն· ԱՂԲԱԼԵԱՆ
Կրթական նախարար



եւ աւելի մեծ գումար վճարելով՝ ազատուել բռնակալների ձեռքից»:

«Եւ եթէ այս ամենը կատարւում էր Թիֆլիսում, դժուար չէ երեւակայել հայերի վիճակը Վրաստանի գաւառներում, որոնք Թողնւած են սեփական ճակատագրին եւ վրաց մամուլի հակահայ քարոզչութեան ոգով տոգորւած տեղական վարչութեան ողորմածութեանն»:

Անկասկած, գաւառներում, աւելի վատ էր, քան Թիֆլիսում: Ապրինութիւններից, թալանից ու բանտարկութիւններից զատ այնտեղ տեղի էին ունենում եւ լկումներ ու սպանութիւններ, մանաւանդ ժողովրդական գւարդիականների կողմից, որոնք, սովորաբար, մնում էին անպատիժ իրենց արարքների համար: Անտանելի էր հայերի դրութիւնը, մանաւանդ, հայկական սահմանին մօտ գտնւող վայրերում, ուր ճնշումներն ու կամայականութիւնները պատերազմից յետոյ էլ չվերջացան: Այսպէս, Բոլնիս-Խաչէն գիւղը վրաց զօրքի կողմից դրաւելու ժամանակ, բնակիչները Թողին-հեռացան՝ չկարողանալով տանել որեւէ բան: Գիւղում մնացին մի քանի չքաւոր ընտանիքներ, ծերեր ու որբեւայրիներ: Գիւղը գրաւելուց յետոյ կարմիր գւարդիականները անցան թալանի ու բռնութիւնների: Թալանեցին ամէն ինչ, ուտելեղէնը տարին կազմակերպւած կերպով: Տարին հաց, ցորեն, դարի, գետնախնձոր, լոբի, ընկոյզ, հագուստ, կարի մեքենայ, պղնձեղէն, երկրագործական պիտոյքներ, արծաթ եւ ոսկի իրեր, կահ-կարասիք, նոյնիսկ բարձերի փետուրը Թափեցին եւ կտորը տարին: Ինչ որ չկարողացան տանել, ոչնչացրին: Փշացրին անների դռները, պատուհանները, կարասիքը, մեղրի փեթակները: Տարին կենդանիները՝ կով, ձի, եզ, դոմէշ, ոչխար, հաւ, սագ: Զինւորներն ու սպաները խմում էին գինի եւ օղի, քէֆ էին անում. բռնաբարում էին գիւղում մնացած կանանց եւ աղջիկներին: Յետոյ, բոլոր գիւղացիներին, առանց սեռի եւ հասակի խտրութեան, հաւաքեցին մի նկուղ եւ պահեցին իրբեւ գերի: Կանանց մի քանի օրից յետոյ բաց Թողին, իսկ այր մարդկանց պահեցին երկու չաբաթ եւ ազատ արձակեցին միայն յունւ. 13-ին: Այդ երկու չաբաթւայ ընթացքում գիւղը մաքուր կերպով Թալանեցին ու հաւաքւած իրերը փոխադրեցին Եկատերինֆելդ, այնտեղից էլ Թիֆլիս:

Յունւ. 18-ին Բելիյ-Կլիւչ մտաւ վրացական 2րդ հեծեալ գունդը, որից յետոյ սկսեցին բռնութիւններն ու Թալանը: Զինւորները զանազան պատրւակներով մտնում էին գիւղացիների տները եւ առնում աչքը տեսածը: Ամենից առաջ Թալանեցին բոլոր հայ դաղթականներին. բռնաբարում էին կանանց: Գիւղացիները դանդաւեցին չրջանի կոմիսարին եւ զօրամասի պետին—ապարդիւն: Բելիյ-Կլիւչից Թալանը տարածւեց եւ չրջանի գիւղերը՝ Սամդրէթ, Վայխուն, Շամչուղա, ուր տեղի ունեցան ծեծ ու բռնութիւն:

Սակայն, ամենազզւելի դէպքը պատահեց Բելիյ-Կլիւչի կենտրոնը գրաւող ամառանոցում. դիչերւայ ժամը 1-ին մի խումբ զինւորներ մտան որբանոց եւ կին պահանջեցին իրենց համար: Որբանոցի ծառայող չափահաս կանայք փախան: Զինւորները սկսեցին ծեծել որբերին եւ պահանջել, որ ցոյց տան փախածների տեղը: Ապա բռնաբարեցին 10-12 տարեկան երկու որբուհիներ ու հեռացան: Երկու օր յետոյ կրկնւեց նոյն պատմութիւնը. դարձեալ

ծեծ ու բռնաբարութիւն: Որբանոցի վարչութիւնը դիմեց տեղական իշխանութեան, բայց այդ դիմումը թողնուեց անհետեւանք»:

Այսպիսի քստմնելի տեսարաններով լեցուն են Թիֆլիսի ա՛յն օրերի մամուլի էջերը, բայց գիրքը չծանրաբեռնելու համար՝ սահմանափակենք այսքանով: Այս անտանելի դրութիւնը ստիպեց Վրաստանի Մորհրդարանի հայ պատգամաւորներին հարցապնդում ուղղել կառավարութեան: Եւ ի՞նչ. «Առանց կուսակցական խտրութեան, հայ պատգամաւորների մօտ հարցապնդումը Վրաստանի Մորհրդարանում՝ ազգային հալածանքների մասին, կառավարական կուսակցութեան լուռութեան հետ մէկտեղ այնպիսի թշնամական վերաբերումի հանդիպեց միւս կուսակցութիւնների կողմից, որ, բնականաբար, բարոյական նւիրագործում էր գործուղ խայտառակութիւնների: Իսկ ներքին գործոց նախարարի բացատրութիւնը, որը այդ ազգային հալածանքը վերածեց մի քանի անհատ պաշտօնեաների աննշան զեղծումի, չէր կարող հայ հասարակութեան վրա չթողնել ծայր աստիճանի ճնշիչ տպաւորութիւն, մանաւանդ որ այդ բացատրութեան հետեւում էր վերջերս այնքան սովորական դարձած խօսքը դէպի հայ ժողովուրդը տածած յարգանքի մասին, մի խօսք, որ միայն վիրաւորում է ամենալկտի հալածանքների պայմաններում ապրող ժողովրդի զգացմունքները:»:

Հայերի դէմին թափուղ ապօրինութիւնների, հարստահարութիւնների ու ճնշումների մասին բազմաթիւ արձանագրութիւններ ու բողոքագրեր է կազմել Ռուսական Ազգային Մորհուրդը, որ ամենամոտալ դոյներով է ներկայացնում Թիֆլիսի հայերի այն ժամանակուայ վիճակը: Մենք զանց ենք առնում ուրիշ բազմաթիւ փաստերն ու վկայութիւնները եւ սահմանափակւում ենք հետեւեալ երկու պերճախօս վաւերագրերով: Առաջինը Թիֆլիսի ընդհանուր նահանգապետի տւած վկայականն է ոմն Արտուշ Քէոսայեանին: Այդ վկայականով Քէոսայեանին իրաւունք է տրւում ազատ ապրելու Թիֆլիսում. նա «իրրեւ հայ, ենթակայ չէ ձերբակալութեան կամ բանտարկութեան»: (Տես նկար երես 235): Ուրեմն, վկայական չունեցող բոլոր հայերը կարող էին և՛ ձերբակալւել և՛ բանտարկւել:

Երկրորդը՝ 56 Թիֆլիսաբնակ հայ քաղաքացիների մէկ գրութիւնը, որ լոյս տեսաւ Թիֆլիսի մամուլում: «Մենք, գրում են նրանք, չարունակ լոյսալ եւ անպայման հանդուրժելի ենք մնացել տեղական նոր իշխանութեան վերաբերմամբ, բայց չնայած դրան, Հայաստանի եւ Վրաստանի միջեւ բախում ծագելիս՝ փաստօրէն օրէնքից դուրս եւ ազատութիւնից զրկւած յայտարարւեցինք նրա կողմից... Մենք չէինք կարող ռազմագերիներ լինել այն պարզ պատճառով, որ զինւորականներ չէինք: Բացի այդ՝ մենք Հայաստանի հպատակներ չենք: Մեզնից չատերը ընկնում են վրաց պարլամենտի հրատարակած հպատակութեան օրէնքի տակ եւ, հետեւաբար, հանդիսանում են Վրաստանի հպատակներ: Ուրիշները ռուսահպատակ էին եւ չարունակում են իրենց համարել իբր այդպիսին: Վերջապէս, ձերբակալւածների եւ աքսորւածների մէջ կային եւ Պարսկաստանի, Թիւրքիայի եւ այլ հպատակներ: Մեր մէջ կային մտաւորականներ, հիւանդներ, թեւազուրկներ, ոտազուրկներ,

կոյրեր․ կային եւ մինչեւ 75 տարեկան ծերունիներ ու 15—16 տարեկան երեխաներ։

«Մեզ ո՛չ մի մեղադրանք չներկայացվեց ձերբակալելիս եւ ձերբակալութիւնից յետոյ։ Մեզ հարցրին միայն՝ «Դուք հա՞յ էք» — եւ այդ բաւական էր։ Մեզ, առաջին հանդիպող պատահական անձերիս, որ մտել էինք կոմիսարիատ՝ մեծ մասամբ այլ գործով — տուրքեր վճարելու, զանազան տեղեկութիւններ ու թոյլտւութիւններ ստանալու համար — խլեցին մեր ընտանիքից եւ պարապմունքներից եւ թոյլ չտալով հրաժեշտ տալ մերձաւորներին, կամ վերցնել ամենից անհրաժեշտ առարկաներն ու որեւէ կարգադրութիւններ անել — ուղարկեցին յայտնի չէ՝ ինչ պատճառով, յայտնի չէ՝ ուր, յայտնի չէ՝ ինչ պայմանաժամով...

«Երբ մեզ տանում էին, կայարաններում՝ վագոնների շուրջը հաւաքւում էր բազմութիւն։ Նրանց ասւում էր, որ ճակատից հայ ռազմագերիններ

საქართველოს რესპუბლიკა

ტფილისის და მისი მიდამოების

გენერალ-გუბერნატორის

კანცელარია

„3“ Января 1919 г.

№ 40

ქ. ტფილისი

ვერის ქუჩა ქ. № 8 ტელეფ. №

№ 11.

УДОСТОВѢРЕНІЕ.

Дано сіе Келабаяну Арутюну в томъ, что Тифлисскимъ Генералъ-Губернаторомъ разрѣшено ему свободное проживаніе въ г. Тифлисѣ и что онъ какъ армянинъ задержанію или аресту не подлежитъ, что подписью и приложені печати удостовѣряется.

Управляющій канцеляріей [signature]

Дѣлопроизводитель [signature]

են բերում: Մեզ ստիպեցին պինւորական քայլով անցնել Քութայիսի փողոցներով՝ շրջապատած պահակախմբով ու ժողովրդի բազմութեամբ: Մեզ դարձրին ծաղրանքների ու վիրաւորանքների առարկայ: Մեզ քաղցած պահեցին: Ջերթակալութիւնից մեայն երեք օր յետոյ մեզ տուին եղիպտացորենի հաց եւ մի ղուելի կերակուր: Մեզ դատապարտեցին երկու շաբաթ ապրել բանտերում ամենից հակասանիտարական պայմաններում, կեղտոտ յատակի վրա, առանց անկողնի, առանց Ջրի...

«Մեզ հետ վարւում էին, որպէս ոճրագործների: Մեզնից ոչ նւազ քան 75%ը այժմ հիւանդ է: Մի քանիսը հիւանդացան բծաւոր տիֆով ու մեռան (երդ.—Հաւատ. Պապովեանը, Իսախանեանը, հարմոնիք նւագող Գէորգ — Լէքան): Քութայիսում հիւանդները զուրկ մնացին բժշկական օգնութիւնից: Թախանձագին խնդրանքից յետոյ՝ մի քանիսը զետեղեցին բանտի հիւանդանոցում բծաւոր տիֆով հիւանդների եւ այլ ոճրագործների կողքին, որոնցից ամէն օր մի քանի հոգի մեռնում էր խնամքի բացակայութեան պատճառով: Բանտի հիւանդանոց տեղաւորւած հայերից մեռան մօտ 10 հոգի, որոնց անունները յայտնի է Քութայիսի հայ քահանային: Բոլոր այդ օրերի ընթացքին՝ մեզնից իւրաքանչիւրը չէր դադարում կախում ունենալ այս կամ այն պաշտօնեայի կամ պինւորի քմահաճոյքից ու կամայականութիւնից: Մեզ տանում էին՝ ատրճանակների փողը մեզ վրա ուղղած, մեզնից չատերին ենթարկում էին պահակապետների եւ պինւորների ծեծին: Շատերին կողոպտեցին, խլեցին դրամները. չատերի վրայից հանեցին քիչ թէ չատ լաւ զգեստը (ուանող Շամոյեանի, վատման Ալեքսանեանցի, Սարգիս Մուրադեանի, Գ. Պաչատրեանցի եւ ուրիշների): Մեզ յայտնի չէ ձերբակալւածների եւ Քութայիս տարւածների որոշ թիւը. յամենայն դէպս, այդ թիւը հասնում է երկու հազարի: Դրանցից, իրօք, ճակատից բերւած ռազմագերիները 3—4 տասնեակ մարդկանցից աւելի չէին, որոնց նկատմամբ մենք վկայ եղանք առանձնապէս վայրագ վերաբերմունքի: Զինւորները զրկեցին տաք հագուստից ու կօշիկից: Սպաներից խլում էին լաւ կօշիկներն ու փոխարինում տրեխներով (չտ.—կապ. Տէր-Ղազարեան): Մի ռազմագերի պինւորի դաշոյնով վիրաւորեց պահակ պինւորը, եւ նա մեռաւ՝ առանց բժշկական օգնութեան: Թիֆլիսում այդ ռազմագերիներից մի քանիսը մարակով ծեծեցին՝ բորչալուի թաթարներից առնւած ձիւաւոր պահակների կողմից*): Ներկայացւած փաստաթղթերը, յայտարարութիւնները, հարցաքննութիւն կատարելու մասին խնդիրները, պաշտօնատարների նկատմամբ գանգատները ո՛չ մի արդիւնք չունեցան: Մենք չենք բերում մեր կրած վնասները...

«Մեզնից ոմանք, ձերբակալւած դեկտ. 23-ին եւ աքսորւած Քութայիս, յետոյ գանգատ պատճառներով վերադարձած, — Թիֆլիսի ճանապարհին ու հազիւ Թիֆլիս հասած նորէն ձերբակալւեցին եւ մինչեւ անգամ յետ ուղարկւեցին Քութայիս: Եղան դէպքեր, երբ մեւնոյն անձը ձերբակալւեց

*) «Աչխատաւոր», 30 յունւար, 1919 թ.:

մինչև չորս անգամ»*):

Այս ամենից հեշտ է տեսնել, թէ ի՛նչ լարւած յարաբերութիւններ էին ստեղծւած հայերի և վրացիների միջև — մի բան, որ, ի հարկէ, շատ դժւարացրեց երկու ժողովուրդների մերձեցման ու բարի հարևանական համակեցութեան գործը: Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ: Ճիշտ է, նա մասամբ մաքրեց անառողջ մթնոլորտը Հայաստանում, բարձրացրեց հայ ժողովրդի կորովը, հայերին տւեց երկաթուղային ու զինւորական թանգարժէք նիւթեր, մասամբ թուլացրեց վրացիների յարձակողական ազգայնամոլութիւնն ու հարկադրեց, որ, որոշ չափով, Հայաստանի շահերն էլ հաշւի առնեն, բայց տւեց և շատ ծանր հետևանքներ, որոնց մէջ, առաջին շարքում, անկասկած, այն չափազանց աննպաստ անդրադարձումն էր, որ ունեցաւ արտաքին աշխարհում. երկու նորաստեղծ պետութիւնների պատերազմը, իրենց ինքնուրոյն կեանքի արշալոյսին, չէր կարող նկատւել բարենիշ նրանց համար:

***

Զինադադարի յաջորդ օրն իսկ, հայկական հաշտարար պատւիրակութիւնը Ղարաքիլիսայից հասաւ Թիֆլիս, և մի շարք նախապատրաստական աշխատանքներից յետոյ, յունւարի կէսերին, բացւեց հայ-վրացական խորհրդաժողովը, որը զբաղւեց ո՛չ միայն պատերազմի հաշւեյարդարով, այլ և երկու երկրների փոխյարաբերութիւններին վերաբերւող բոլոր կարևոր խնդիրներով: Հայերի կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկւած պատւիրակութեան ամբողջ կազմը՝ լրացւած զինւորական մասնագէտ զօր. Ղորղանեանով: Վրացիների պատւիրակութեան անդամներն էին Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին և զօր. Գեդևանովը:

Օրակարգի հարցերն էին. 1) փոխադարձ անկախութեան ճանաչումն ու դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնումը. 2) հաղորդակցութեան և երթևեկութեան պայմանների կարգաւորումը. 3) թրանզիտ. 4) փոստ-հեռագրական համաձայնութիւն. 5) Հայկական կորպուսի գրաւած գոյքերի վերադարձը. 6) հայկական կառավարութեան պատկանող և վրացիներից գրաւած 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիր:

Խորհրդաժողովը տևեց շատ երկար, մօտ 3 ամիս: Վրացիները ակընյայտնի կերպով աշխատում էին ձգձգել՝ քաջ գիտակցելով, որ ինչքան ժա-

---

*) Չենք կարող այստեղ չյիշել, որ վրացի գերիները Հայաստանում բոլորովին այլ վերաբերումի էին արժանացել. նրանք պահւում էին առանձին զորանոցներում, ստանում էին նոյնքան ուտելիք, որքան և զինւորները. սպաների համար տւել էին յատուկ յարմարութիւններ. նրանք ստանում էին սպայական ռոճիկ: Վրացական 4րդ և 5րդ գնդերի գերի ու վիրաւոր զինւորները «Բորբա»-յի խմբագրութեան ուղղած մի նամակով գրում էին, որ իրենք «հայերի կողմից հանդիպել են ամենաջերմ ու սրտակից վերաբերումի: Թէ քաղաքացական և թէ զինւորական իշխանութիւնները գործ են դնում ամէն ջանք, որ դիւրացնեն մեր վիճակը: Իսկ մեզ գերի առնող զինւորների վերաբերումը ամենաեղբայրականն է, որից լաւը կարելի չէ ցանկանալ»:

մանակ անցնի, այնքան դրութիւնը Հայաստանում կը ծանրանայ, հետեւաբար, եւ այնքան հայ պատգամաւորները կը լինեն զիջող: Վէճի դժխաւոր նիւթը սահմանների հարցն էր, որի վերաբերմամբ կողմերը մինչեւ վերջ էլ համաձայնութեան չեկան:

Տեսնելով վրացիների դիւանագիտական ձգձգումը՝ Հայաստանի կառավարութիւնը փետր. 10–ին հրահանգեց իր պատուիրակութեան՝ մինչեւ մարտ վերջացնել բանակցութիւնները եւ մեկնել Երեւան: Մի պահ դադարից յետոյ, խորհրդաժողովը վերսկսեց փետր. 28–ին եւ այնուհետեւ աշխատանքները ընթացան աւելի արագ: Ընդունեց փոխադարձ անկախութիւնների ճանաչման եւ դիւանագիտական յարաբերութիւնների վերականգման դաշինքը: Մշակեց Լոռիի չէզոք գօտու վարչութեան առանձին կանոնագիր: Մարտ 1–ին ստորագրեց եւ ուժի մէջ մտաւ փոստ–հեռագրական համաձայնութիւնը: Մարտ 4–ին վերականգնեց երկաթուղային հաղորդակցութիւնը. վերացրեցին ճամբորդական արտօնագրերը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ, բացի զաղթականներից: Մարտի սկզբին բացեց Թիֆլիսի հայկական դիւանագիտական ներկայացուցչութիւնը՝ Մ. Թումանեանի պաշտօնակատարութեամբ. քիչ յետոյ պաշտօնի կոչեց Լ. Եւանգուլեանը: Մարտ 8 թուակիր յայտարարութեամբ Վրաստանի կառավարութիւնը ճանաչեց Հայաստանի անկախութիւնը, որին ի պատասխան Հայաստանի կառավարութիւնը ուղարկեց հետեւեալ յայտագիրը, որ մարտ 24–ին Թիֆլիսի ներկայացուցչի ձեռքով յանձնեց վրաց արտաքին գործոց նախարարին.

«Մեր կառավարութեան դիւանագիտական ներկայացուցիչը Վրաստանի կառավարութեան մօտ ուղարկել է ընձ 1664, մարտ 8 թուակիր յայտագիրը, որի մէջ Դուք, պ. Նախարար, Ձեր կառավարութեան յանձնարարութեամբ, յայտնում էք ի դիտութիւն Հայաստանի կառավարութեան, թէ նա ճանաչում է Հայաստանի Հանրապետութիւնը իբրեւ ինքնօրէն անկախ պետութիւն: Հայաստանի կառավարութիւնը լիովին համակիր է այն նկատառումներին, որոնց համաձայն Վրաստանի կառավարութիւնը հարկ է դտել յիշեալ յայտագրի մէջ ծանուցանելու, որ ճանաչում է Հայաստանի Հանրապետութեան պետական ինքնօրէնութիւնն ու անկախութիւնը:

«Մորագէս դիտակցելով Անդրկովկասի հողի վրա կազմուած հանրապետութիւնների չահերի ընդհանրութիւնն ու միութիւնը մի շարք խնդիրներում, որոնք էական նշանակութիւն ունեն նրանց գոյութեան եւ ապահով բարգաւաճման համար, Հայաստանի կառավարութիւնը ուրախ է վրաց կառավարութեան այդ ակտը նկատելու իբրեւ ապացոյց համերաշխութեան եւ փոխադարձութեան դիտակցութեան այդ տեսակէտից:

«Իր կողմից Հայաստանի կառավարութիւնը իր պարտքն է համարում հաստատել Ձեր կառավարութեան, որ ինքը ճանաչել է եւ ճանաչում է վրաց դեմոկրատական հանրապետութիւնը իբրեւ անկախ եւ ինքնօրէն պետութիւն: Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարար՝ Ս. Տիգրանեան»:

Այսպիսով, վերականգնեցին հայ–վրացական յարաբերութիւնները:

ԳԼՈՒԽ Ի.

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

1919 թւի սկզբից, Հայաստանը հետզհետէ սկսեց դուրս գալ այն դժուարին վիճակից, որի մէջ ընկել էր թիւրքական արշաւանքի հետեւանքով:

Ճիշտ է, կացութիւնը դեռ շատ էր ծանր: Թիւրքերի գործած աւերը զգացւում էր չափազանց սուր: Սովն ու հիւանդութիւնները, որոնք առատ հունձ էին անում 1918 թ. վերջերին, շարունակում էին կոտորել եւ այժմ: Մանաւանդ, բծաւոր տիֆը, որ փոխարինել էր քոլերային, ամէն օր խլում էր հարիւրաւոր կեանքեր. մարդիկ մեռնում էին հիւանդանոցներում, հանրակացարանների մէջ, տներում ու փողոցներում, ամենքի աչքի առջեւ: Մեռնում էին զաղթականներն ու տեղացիները, աղքատներն եւ ունեւորները: Մահը խտրութիւն չէր դնում*): Բազմաթիւ թանզադին կեանքեր խլեց նաեւկտ. 2-ին մեռաւ հին յեղափոխական, ներքին գործոց նախարարութեան կարեւոր յանձնարարութիւնների պաշտօնեայ Սարգիս Օհանջանեանը (Ջարհատը), յունւ. 5-ին՝ Հանրապետութեան բժշկա-առողջապահական մասի վարիչ՝ բժ. Զ. Անդրէասեանը, յունւ. 11-ին՝ Հայաստանի անդրանիկ պետական վերահսկիչ Մ. Բերբերեանը, յունւ. 23-ին՝ Երեւանի արքունական պալատի վարիչ Գ. Կամսարականը, յունւ. 30-ին՝ խճուղիների առաջին մասի պետ ինժ. Թորգոմ Նիկողոսեանը: Մեռաւ Երեւանի քաղաքային վարչութեան անդամ՝ Յակ. Յարութիւնեանը, երիտասարդ գործիչ Փառնակ Յակոբեանը: Բծաւոր տիֆին զոհ գնաց եւ Հայաստանի Հանրապետութեան կերտողն ու մեծագոյն գործիչը՝ Արամը, որ քառասունօրեայ տաժանելի տառապանքներից յետոյ, յունւ. 26-ին փչեց վերջին շունչը: Նրա մահը անդարմանելի հարուած էր Հայաստանի համար, եւ հասկնալի է այն խորունկ վիշ-

*) Պաշտօնական ցուցակագրութեան համաձայն, 1919 թւին, 5 ամսւայ ընթացքին, միայն Երեւանում 3,972 մահւան դէպք էր պատահել: Ըստ ամիսների այդ մահերը դասաւորւում էին այսպէս. ապրիլ 742, մայիս 764, յունիս 899, յուլիս 766, օգոստ. 801: Եթէ Երեւանի այն ժամանակւայ բնակչութիւնը, միջին թւով, հաշւենք 60,000 մարդ, իւրաքանչիւր հազարին կընկնի 161,2 մահ: 1913 թւին Եւրոպական Ռուսաստանում իւրաքանչիւր հազար մարդուց մեռնում էր 27,9 մարդ:

տը, որ պատեց ամենքին. Արամի յուղարկաւորութիւնը փետր. 1–ին համաժողովրդական սուգի օր էր:

Հիւանդութիւնների պակաս Թողածը լրացնում էր սովը: Մինչեւ արտասահմանից ալիւր ստացւելը, երկրի բոլոր կողմերից աղեկտուր կոչ ու հեծկլտանք էր լսւում. «Հա՛ց, հա՛ց հասցրէք, մեռնում ենք»...

«Գիւղը ապրում է սովի ճիրաններում, գրում էին Վերին–Ղարանլուխից «Հայաստանի Աչխատաւոր»–ին (25 ապր.): Սրանից մի քանի օր առաջ մի գաղթական սովածութիւնից մեռաւ տեղացի Խաչատուրի դռանը: Շատերը, տեղացի թէ գաղթական, հապճեպ փախչում են էս կողմ–էն կողմը, որպէսզի մի կտոր հաց ճարեն: Սրանից 3 օր առաջ 3 հոգի գաղթական սովածութիւնից ճանապարհին մեռել են, այնպէս որ սովը հնձում է: Գիւղում ապրում է 1000—1200 չունչ գաղթական, իսկ բնակիչ գիւղացիք 2300 չունչ են: Հացի գինը բարձրացել է՝ 1 փութ ցորենը 300—400 ռուբլու, գարին՝ 200 ռ., ձուն հատը 1 ռ. 20 կ., միւս մթերքները կրկնապատիկ եւ եռապատիկ գին են ստացել, այն էլ ձեռք չի բերւում»:

Նոր–Բայազէտի Ֆէօլդոան գիւղից հեռագրում էին նոյն թերթին (27 ապր.). «Ժողովուրդը ապրում է սոսկալի պայմաններում: Սովամահութեան դէպքերը տասնեակների են հասնում. օր օրի վրայ աստիճանում է: Խնդրում ենք հաց: Ի սէր Աստուծոյ, մի՛ թողէք մեռնինք»:

«Ախտայի չրջանի տեղացի եւ փախստական հայութիւնը ծայր աստիճանի սոված է, հեռագրում էին Ներքին–Ախտայից, անհամար դիմումներ կը լինեն: Սովամահութեան դէպքերը բազմաթիւ են: Եթէ անմիջապէս նպաստ եւ սերմացու չհասնի, ուշ կը լինի»:

Ֆեչիչքենդից գրում էին նոյն թերթին (9 մայիս). «Սոսկալի տեսարաններ... Գաղթականութիւնը նորից գաղթի ճանապարհը բռնած՝ չուում է դէպի Երեւան: Մերկ, ոտաբոբիկ կամ զանազան ցնցոտիներով իր մարմնի մի մասը ծածկած եւ ծանրաբեռնւած իր փոքրիկներով՝ գիւղից–գիւղ թափառում, հաց է մուրում, բայց հաց չի գտնում: Հացի փոխարէն կանաչով անուղղ գաղթականութեան մէջ յաճախ թունաւորման դէպքեր են պատահում եւ կամ դժւածի նման թափառում են փողոցները՝ անկապ եւ կցկտուր խօսքեր արտասանելով: Շրջանիս գաղթականութեան մի մասը դեռ մինչեւ օրս էլ բացօդեայ է անցկացնում իր օրերը ձիւնի, անձրեւի տակ եւ ցեխերի մէջ: Լինում են դէպքեր, որ սոված, ուժասպառ եղած գաղթականները թաղւում են ցեխերի մէջ եւ առանց կողմնակի օգնութեան չեն կարողանում ազատւել այդ դրութիւնից: Աւելի սոսկալի եւ անելանելի դրութեան մէջ գտնւողների մեծ մասսը կազմում է Նախիջեւանի ժողովուրդը... Սովն ու ցաւը մէջք մէջքի տւած հնձում են 17,000 խեղճ գաղթականութիւնը... Պատահում են, յաճախ, մեռելներ, որոնք 6—7 օրով մնում են տների մէջ, առանց թաղւելու»:

«Կորը սովի ճարակ է դարձել, ճչում էին ազահանքից («Հ. Աչխ» 21 մայիս): Հացի գրւանքան 15 ռ. է: Նպաստ չստանալու պատճառով սովից մեռնում են օրական 20 մարդ: Օգնեցէ՛ք մեզ»:



ՆՈՎԱՑԻՆ ՑԳԱՑ ԿԱՐ· ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
Սեւանի ճառաչինարարանի պետ



ՋՕՐ· ՂԱՄԱՋԵԱՆ
(Հրետանու պետ)



ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ



ՋՕՐԱՀԱՆԴԻՍ
(Ձախ, սրով՝ Զօր· Ֆ· Արարատեանը)



ՄԱՐՋԱՆՔ

«Ժողովուրդը սովամահութիւնից բնաջնջուեց, նորից աղաղակում էին Ներքին-Ախտայից: Կմախքացած մարդիկ խոտ են ճարում, սատկած լէշեր ուտում դիւղերում: Հարիւրաւորներ մեռնում են: Երջանը ձեռքից գնաց»:

«Քէօսամահմատ դիւղի մեծ մասը, հեռագրում էին մայիս 19-ին Նոր-Բայազէտից, կանաչով է կերակրւում: Կանայք եւ երեխաները նման են ուրւականների: Ի սէր Աստծոյ, փրկեցէ՛ք մեզ մեռնելուց. հաց հասցրէք»:

«Գաւառի եւ քաղաքի ազգաբնակութեան վիճակը անտանելի է, հաղորդում էր Հայաստանի Հեռ. Գործակալութիւնը մայիս 20-ին: Սովամահութեան դէպքեր են եղել: Ամերիկեան կոմիտէն 10 օրից ի վեր ոչինչ չի ստանում: Ալիւր չլինելու պատճառով ի զուր է մօտ ապագայում ամերիկացիներից որեւէ օգնութիւն սպասել»:

Եւ այսպէս անվերջ ու ամէն կողմից:

Դրութիւնը յուսահատական էր: Մայիսի վերջերին Երեւանի հացաբաժինը իջեցուեց մէկ քառորդ Ֆունտի, իսկ գաւառի ժողովուրդը արածում էր դաշտերում: Սով Արքայի ուրուականը սաւառնում էր Հայաստանի դլխին:

Կառավարութիւնը նախատեսնում էր այդ վտանգը եւ զերագոյն ճիգ թափում առաջն առնելու: Սակայն, նրա բոլոր դիմումներն ու թախանձանքները արձագանգ չգտան ոչ մի կողմից: Անդլիացիք միայն յունուարին կարսից Ալեքսանդրապոլ բերին 6 դնացք ցորեն եւ ալիւր եւ մի քանի վագոն էլ՝ Շաբուրից: Աննշան քանակութեամբ ալիւր եկաւ եւ Թիֆլիսից եւ այնուհետեւ մինչեւ ապրիլի վերջերը Հայաստան դրսից մխերք չմտաւ. ապր. 28-ին խնամատարութեան նախարարութիւնը ստացաւ 15 վագոն ալիւր:

Յունս. 22 նիստին, վարչապետ Յ. Քաջազնունին բերեց հետեւեալ առաջարկը. «Երկրին սպառնացող սովի առաջն առնելու համար անհրաժեշտ է դիմում անել դաշնակից պետութիւններին, մասնաւորապէս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին, օտար չուկաներից (առանձնապէս Ամերիկայից) Հայաստան խոշոր քանակութեամբ հաց ներմուծելու համար: Սպառնացող աղէտի ծաւալը պահանջում է, որ այս դիմումը անի Հայաստանի Խորհրդի եւ կառավարութեան յանձնարարութեամբ անձամբ ինքը՝ վարչապետը, իբրեւ երկրի ամենաբարձր պաշտօնեան՝ ունենալով ուղեկիցներ պարենաւորման նախարարին եւ ելեմտական նախարարութեան կողմից մի ձեռնհաս խորհրդատու: Բացի հացի խնդրից, նպատակայարմար եւ կարեւոր է յանձնարարել սոյն անձնաւորութիւններին ա) համաձայնութեան գալ պետութիւնների կամ մեծ առեւտրական տների հետ ներմուծելու Հայաստան երկրին պակասող առաջին անհրաժեշտութեան ապրանքներ եւ բ) հնար եղած դէպքում բանակցութիւններ վարել եւ պարզել, թէ ինչ պայմաններով Հայաստանի Հանրապետութիւնը կարող կը լինէր դրամական փոխարինութիւն անել արտասահմանում»:

Կառավարութիւնն ընդունեց առաջարկի կարեւորութիւնն ու նպատակայարմարութիւնը եւ յանձնարարեց վարչապետին կազմել զեկուցում, նախահաշիւ եւ օրինագիծ Հայաստանի Խորհրդին ներկայացնելու համար:

Յունս. 27-ին վարչապետը ներկայացրեց զեկուցումը, նախահաշիւն

ու օրինագիծը, որը ընդունեց եւ չտապ կարդով մտցուեց Հայաստանի Ժողհուրդ։ Այս վերջինն էլ, փետր. 4–ին, որոշեց. «Յանձնարարել վարչապետին ուղեւորուել Եւրոպա եւ Ամերիկա, դիմել Հայաստանի Ժողհրդի անունից դաշնակից պետութիւնների եւ Հիւս. Ամեր. Միաց. Նահանգների կառավարութիւններին եւ խնդրել նրանց օգնութիւնը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարէնը եւ առաջին անհրաժեշտութեան ուրիշ ապրանքներ։ Ուղեւորութեան ծախսերը ծածկելու համար բաց անել վարչապետին 550,000 ռուբլու վարկ»։

Փետր. 15–ին վարչապետի պաշտօնակատար նշանակուեց Ա. Ժամհարեանը, իսկ Յ. Քալանթարեանին մեկնեց Թիֆլիս։ Սակայն, անդլիական հրամանատարութիւնը երկար ժամանակ արտասահման անցնելու արտօնութիւն չտուեց, այնպէս որ Քալանթարեանին ստիպուած եղաւ վերադառնալ Երեւան, ապր. 2–ին նորից ստանձնեց վարչապետի պաշտօնը եւ միայն ապր. 16–ին կարողացաւ մեկնել՝ հետը առնելով ելեւմտական նախարար Ա. Էնֆիաջեանին, դիւանապետ Ց. Փիրալեանին եւ սպայ Ս. Մելիքեանին։

Նոյն նպատակով, մարտ 12–ին Թիֆլիս գնաց եւ Հայաստանի Ժողհրդի նախագահ Ա. Սահակեանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին՝ պարէնի ու սերմացուի խնդրանքով։

Հայաստանի Ժողհրդի ու կառավարութեան դիմումները, ինչպէս նաեւ արտասահմանում կատարուած աշխատանքները, վերջապէս, լաւերին, եւ օգնութիւնը շատ չուշացաւ։ Այս անգամ օգնութեան հասնողը Ամերիկան էր՝ Միացեալ Նահանգների պարենաւորման դիկտատոր Հուվէրը, Եւրոպայի փրկիչը յետպատերազմեան սովից։ Հուվէրը եղաւ եւ Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը։ Ինչ եւ լինի մեր վերաբերումը դէպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկեան մարդասիրական նպատակն ու պարէնը երբեք չենք մոռանայ, չկ՛ուզէ՛ք մոռանանք։

Մայիսի քսանին Բաքուում եկաւ ամերիկեան առաջին նաւը 125,000 փութ ալիւրով, մի շարաթ անցած, հասաւ եւս 600,000 փութ։ Այդ մթերքը Հայաստան փոխադրելու համար վրաց կառավարութիւնը հայկական կառավարութիւնից պահանջեց 579 վագոն եւ 14 չոգեշարժ, մ՛ին ժամանակ, երբ Հայաստանի ունեցած վագոնների ընդհանուր թիւը 520 էր եւ չոգեշարժներինը՝ 16։ Պէտք եղաւ ամերիկացիների եւ անգլիացիների միջամտութիւնը, 4 օրով կանգնեցուց Հայաստանի երկաթուղային մարդատար հաղորդակցութիւնը եւ բոլոր միջոցները յատկացուեցին ալիւրի փոխադրութեան։

Ամերիկեան ալիւրի հասնելով՝ կամաց–կամաց սովը մեղմացաւ, երկիրը սկսեց մտնել բնականոն հունի մէջ, եւ ժողովուրդն ու կառավարութիւնը կարողացան նուիրուել երկրի վերաշինութեան ու պետութեան կազմակերպման գործին։ Բունխին կառավարութիւնը հնարաւորութիւն ստացաւ Ախալքալաքի ժողովրդին էլ հաց հասցնել. վրաց կառավարութիւնը, որ այնքան եռանդ էր թափում Ախալքալաքը առանալու համար, սովից կոտորուող ախալքալաքցիներին օգնելը իր պարտականութիւնը չէր համարում*)։

*) 1919 թի ընթացքում Հայաստանը Ամերիկայից ստացաւ 1,295,243 փութ ալիւր,

***

Որքան էլ դժուար լինէր կացութիւնը, սովն ու հիւանդութիւնները չէին այլեւս հայ ժողովրդին զբաղեցնող գլխաւոր ցաւերը: Կառավարութեան առջեւ կանգնած էին մի շարք պետական ու ազգային լուրջ խնդիրներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում էին սահմանների ընդարձակման եւ ներգաղթի հարցերը: Հարցեր, որոնց վերաբերմամբ Անդրկովկասի անգլիական հրամանատարութեան բռնած վարանոտ կամ անբարեացակամ դիրքը արդար դժգոհութիւն էր պատճառում հայերին: Մարտ 26-ին Հայաստանի կառավարութիւնը զօր. Թոմսընին ներկայացրեց՝ մի ընդարձակ յուշագիր, որով պահանջում էր անյապաղ լուծել Ղարաբաղի, Կարսի ու Շարուրի եւ ներգաղթի խնդիրները, ինչպէս նաեւ պարենաւորման, հաղորդակցութեան, տնտեսական ու զինուորական մի շարք հարցեր:

Մանաւանդ սուր վրդովում էր առաջ բերում անգլիացիների գործելակերպը Զանգեզուր—Ղարաբաղի եւ Կարսի հարցերում: Կարսը այդ ժամանակ կառավարւում էր Թիւրքերի նշանակած տեղական կառավարութեան՝ Շուրայի ձեռքով, որը խիստ թշնամական էր տրամադրուած դէպի հայերը եւ աշխատում էր Կարսում պահել Թիւրքիայի տիրապետութիւնը կամ, եթէ այդ անհնար է, ստեղծել Կարսի, Բաթումի եւ Ախալցխայի շրջաններից առանձին անկախ պետութիւն՝ Հարաւ-Արեւմտեան Անդրկովկաս անունով: Անգլիացիք չէին ուզում զրկել մահմետականներին եւ զանազան պատրւակներով արգելք էին լինում, որ հայերը գրաւեն Կարսը: Հայաստանի կառավարութեան յամառ պնդումների վրա, 1919 թ. յուն. 8-ին, Արեւմտեան Անդրկ. բրիտանական ուժերի հրամանատար զօր. Ֆորեստիէ-Ուօկերի եւ Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանի միջեւ կնքւեց Կարսի մասին մի համաձայնութիւն, որով, մինչեւ հաշտութեան դաշնագրի ստորագրումը, Կարսում պիտի նշանակւէր անգլիական զինուորական նահանգապետ, քաղաքացիական իշխանութիւնը պիտի կազմւէր հայերից եւ զինուորական նահանգապետի ենթակայ՝ վարէր պիտի քաղաքի ու նահանգի քաղաքացիական գործերը: Հայկական պաշտօնէութիւնը պէտք է պատրաստ լինէր Ալեքսանդրապոլում եւ յուն. 12-ին զին. նահանգապետի հետ պիտի անցնէր Կարս: Համաձայնագրի մէջ մանրամասն նշանակւած էին երկաթուղու եւ հեռագրի ու փոստի Թուրքերից փոխանցելու աստիճանները ու կառավարութեան եղանակը. — մինչեւ Կարս բոլորովին հայ պաշտօնեաներ, Կարսում՝ խառն, սահմանում՝ Թուրք-անգլիական՝ զին. նահանգապետի հսկողութեան տակ:

Համաձայնագրի 10րդ եւ 11րդ կէտերում ամփոփւած էր ոչ-հայ տարրի

256,758 փ. ցորեն, 125,000 փ. լոբի, 68,563 փ. բրինձ, 20,000 փ. կորեկ, 8,010 փ. եգիպտացորեն, 10,738 փ. վարսակ, 5,950,000 տուփ խտացւած կաթ, 12,000 փ. կակաօ, 44,000 փ. շաքար, 5,000 փ. ճարպ, 1,500 փ. թէյ: Համաձայն կնքւած պայմանի, 1920 թւի սկզբին էլ գալու էր 2,170,000 փ. ալիւր: Ամերիկայից ստացւող ալիւրից 238,449 փութ ուղարկւեց Ախալքալաք: Ալիւրի մի մասն էլ գրաւեց վրաց կառավարութիւնը, իբրեւ փոխադրութեան վարձագին:

կառավարութեան ձեւը. յիշւում էր, որ «մահմետականները վախենում են հայկական վարչութիւնից, հետեւաբար, անհրաժեշտ է գործել զգուշութեամբ եւ ցրւել ամէն վախ ցոյց տալու համար, որ հայերը ընդունակ են մոռնալու ցեղային նախապաշարումները, երբ որ իշխանութեան գլուխ են կանգնում»: Մասնաւորապէս հրահանգւում էր խիստ լինել ժանդարմաների գործած ճնշումների եւ բռնութիւնների դէմ. «Սա կը լինի հնարաւոր յաջողութիւն հայկական իշխանութիւնների համար եւ կառավարութիւնը արժանի կը լինի դաշնակից պետութիւնների չնորհաւորութեան, եթէ մինչեւ Անդրկովկասի ապագայի որոշումը հաշտութեան խորհրդաժողովի կողմից, անդորրութիւնը չխախտւի»: (10րդ կէտ):

12րդ կէտում ասւում էր, որ այս համաձայնութիւնը արգելք չէ, որ հայերը հետապնդեն իրենց պահանջները հաշտութեան վեհաժողովի առջեւ:

Այս համաձայնութեան հիման վրա, անգլիական զինւորական նահանգապետն ու հայկական գլխաւոր պաշտօնէութիւնը մեկնեցին Կարս: Բայց հայկական իշխանութեան երեւալը Կարսում Շուրայի կողմից ընդունւեց թշնամութեամբ ու սպառնալիքներով, եւ անգլիական նահանգապետի խորհրդով հայերը հեռացան Ալեքսանդրապոլ: Այսպիսով, անգլիացիները, մի առնակ, ճանաչեցին Շուրայի իշխանութիւնը:

Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանների մահմետականները դիմեցին Փարիզի Խորհրդաժողովին, Ուիլսընին, Պուանկարէին ու Լոյդ Ջորջին՝ բողոքելով իրենց շրջանները հայերին եւ վրացիներին յանձնելու դէմ եւ պահանջելով ճանաչել իրենց անկախութիւնը: Նրանք յայտնում էին, որ հայերը կոտորել են հարիւր հազար մահմետականներ:

Այս դէպքը, ինչպէս եւ ուրիշ առիթներով անգլիացիների ցոյց տւած թրքասիրութիւնը սաստիկ յուզում ու զայրոյթ պատճառեց հայկական շրջաններում: Մարտ 6-ին, Հ. Հ. Պատւիրակութեան գրած մի նամակում, որտ. գործոց նախարար Ս. Տիգրանեանը երկարօրէն, կանգ է առնում այն օրերի անգլիացիների հետեւած քաղաքականութեան վրա: «Կարսի դէպքը, գրում է նա ի միջի այլոց, շատ վատ եւ ընդարձակ հետեւանքներ ունեցաւ, ինչպէս եւ սպասում էին: Թուրքերը տեսան, որ բաւական է ցուցադրել որեւէ հակառակութիւն եւ բողոք հայերի, Հայաստանի կառավարութեան դէմ, եւ Անգլիան իսկոյն եւ եթ հանդէս կը գայ զսպելու, կասեցնելու մեր կառավարութեան ամէն մի ներգործական քայլն ու ծրագիրը: Բրիտանական զօրահրամանատարութիւնը Անդրկովկասի մի շարք ակտերով աւելի եւ աւելի ոտ է տալիս թուրքերի այդ համոզմանը:

«Մեր զօրամասերը առաջ էին ընթանում դէպի Շարուր, Նախիջեւան, Ջուլֆա՝ օսմանեան զօրքերի դատարկած այդ վայրերը գրաւելու. թուրքերը դիմադրում էին: Վօլչի Վարօտայից (Երեւանի եւ Շարուրի ուեզդների սահմանակից) մեր զօրամասը յետ եկաւ մինչեւ Դաւալու (հայ-վրացական պատերազմի ժամանակ), յետոյ պատրաստւեց նորից առաջ գնալ: Եկան Շարուրի եւ Նախիջեւանի թուրքերի ներկայացուցիչները. մեր կառավարութեան հետ բանակցեցին. համաձայնեցինք, թէ 8—10 օր մեր զօրքը Դաւալուից ա-

ռաջ չի շարժւի, մինչեւ որ նրանք կերթան կը պատրաստեն խաղաղ ժողովուրդը, թէ հայոց զօրքը իրենց որեւէ վնաս չի հասցնելու, եւ կը գան ընդառաջ հայ զօրքն ու հայ ադմինիստրացիան խաղաղ եւ հաշտ ընդունելու. բայց վրա հասաւ անգլիական կապիտան Լօռէնը, անցաւ Նախիջեւան տեսնելու՝ ինչ կայ, ինչ չկայ... եւ իր զեկուցման հետեւանքով նշանակւեց Նախիջեւանի բրիտանական զօրական նահանգապետ եւ փոխ-ընդապետ, յետոյ եկաւ Երեւան պահանջելու, որ մեր զօրքերը յետ քաշւեն նոյնիսկ Դաւալուից հիւսիս... Ոչ առանց դժւարութեան համաձայնութեան եկանք երիտասարդ փոխ-ընդապետի հետ, որ մինչեւ Վօլչի Վարօտան մնայ մեր ադմինիստրացիան, բայց մեր զօրքը յետ կը բերենք այդ շրջանից՝ թողնելով մի փոքրիկ խումբ (50 հոգի) Դաւալուում. բրիտանական մի զօրամաս կը լինի այդ տեղը, որը կը պաշտպանէ կարգը եւ խաղաղութիւնը: Ուրեմն, Շարուրն ու Նախիջեւանն էլ մեր ձեռքից գնաց (թո՛ղ ժամանակաւորապէս), դառաւ բրիտանական զօրական նահանգապետութիւն (Կարսի օրինակով), եւ մենք պարտաւորւեցինք նոյնիսկ դրան սահմանակից մեր տերիտորիայում (Վէդի Բասար) զօրք չպահել:

«Նոյն խաղը խաղալու լուրջ պատրաստութիւններ են տեսնում թուրքերը այժմ Սուրմալուում...

«Ղարաբաղը բրիտանական հովանաւորութեան տակ Ազրբէջանի գեներալ-նահանգապետութեան մէջ է գցւում:

«Ախալցխան, Ախալքալաքը Բաթում—Կարսի թրքութեան ձեռքն են անցել ռազմական եղանակով՝ վրացիների զօրքերը պարտւելով:

«Այսպիսով, Անդրկովկասի թրքութիւնը բրիտանական զօրահրամանատարութեան օրով աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնւում, քան գերման-օսմանեան յաղթական օկուպացիայի ժամանակ:

«Փաստեր ու հանգամանքներ են սրանք, որոնք լուրջ մտածմունքների եւ ծանր մտատանջութիւնների տեղիք են տալիս մեզ...

«Անշուշտ, գլխաւորագոյն պատճառը անգլիական զինւած ուժերի թուլութիւնն է այստեղ: Ինչպէս Գերմանիան ամառն ու աշնանը տեղի էր տալիս թիւրք հրամանատարութեան պահանջների ու քմահաճոյքների առաջ, այնպէս էլ այժմ անգլիական գեներալներն են նահանջում օսմանեան օֆիցերների այս նւաճողական ծրագիրների եւ գործունէութիւնների առաջ... Որովհետեւ արձանագրածս փաստերը հայերի յաղթահարումը չէ միայն, այլ աւելի եւս Անգլիայի պարտութիւնը: Բրիտանական զօրական նահանգապետութիւնները լոկ մի քօղ են, նուրբ ու թափանցիկ, որի տակից պարզ երեւում է իրական թուրքական իշխանութիւնն ու ոյժը:

«Սակայն, թւում է թէ մի ուրիշ պատճառ էլ կայ: Անգլիացին չէ հաւատում հային, աւանդաբար համարելով սրան անուղղելի ռուսասէր, ռուսական օրիէնտացիայի անյողդողդ հետամուտ... Բնորոշ է, որ գեն. Ֆօրէստիէ Ուօկկերի պահանջով Կամաւորական Զօրաբանակի ներկայացուցիչը հեռացաւ Երեւանից դէպի Եկատերինոդար. այդ մի նոր փաստ է ապացուցանելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դէպի Ռուսիայի ներկայութիւնը

Անդրկովկասում: Այն համարումն ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զօրահրամանատարութեան չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը եւ զօրեղացմանը Թուրքութեան դէմ Անդրկովկասում, որովհետեւ Թուրքն է նրա աչքում ամենավտանգելի պատուարը Ռուսիայի դէմ այստեղ: Նա գիջում էր մեզ կարսը, բայց հէնց որ տեսաւ, որ այնտեղ աւելի վտանգելի եւ ոչ աննշան հակառուսական ոյժ կայ յանձին Թրքութեան, խոկոյն չտապեց ուղղել իր այդ սխալը. կարսը տուեց Թուրքերին... եւ ոչ միայն կարսը:

«Կարսի նահանգի համար բրիտ. զօրահրամանատարութիւնը մինչեւ 1000 հոգուց բաղկացած միլիցիա է կազմակերպում. հաւաքում է տարրեր, որոնք կը ծառայեն իրեն ոռճիկի համար, առանց քաղաքական ձգտումների (օրինակ, օսեր, ռուս հին ստրաժնիկները). հայի չեն ընդունում «առ այժմ», որովհետեւ տեղական Թուրքերը գրգռուած են հայերի դէմ (այս է պաշտօնական պատճառաբանութիւնը), բայց Թուում է, թէ Անգլիան չէ ուզում յենուել որեւէ հայ ուժի վրա, որովհետեւ իր կարծիքով (եւ, դժբախտաբար, ոչ միայն իր կարծիքով) հայն աւելի է ռուս, քան ռուսն ինքը, եւ չէ կարելի յենուել հայի վրա, երբ Ռուսիայի դէմ բան է ծրագրուում:

«Մեր հաւատարիմ վերաբերմունքը դէպի Ռուսիան գիտէք թէ ինչ չափով է գնահատուել եւ մեզ օգուտ բերել. գիտէք, որ ներկայիս այդ վերաբերմունքը չէ կարող սոսկ պզատոնական սիրոյ չնմանուել, որը ունայն է եւ անիրական փոխադարձաբար. սակայն, անօգուտ լինելով՝ վնասակար է այսօր եւ վաղը, իսկ վաղը չէ միւս օրը թէ ինչ է լինելու, ոչ ոք չի իմանում:

«...Ամէն կողմից մեզ շրջապատել է Թուրքական վտանգը, սպառնական եւ յանդուգն. մեր քաղաքական ծրագրին հակառակ Թուրքիան առաջ է տանում իր ծրագիրները Հայաստանի վերաբերմամբ, որոնց մէջ հայ տարրի ֆիզիքական բնաջնջումը էական եւ հիմնական կէտն է հանդիսանում, եւ մենք ոչինչ գրաւական եւ վստահութիւն չունենք, թէ անգլիական զօրահրամանատարութիւնը ցանկութիւն ու կարօտութիւն ունի մեզ փրկելու այդ վտանգից, որը, կրկնում եմ ու պնդում. — այսօր էլ իրական է եւ սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առաջ:

«Բրիտանական զօրահրամանատարութիւնը արգելեց մեզ դրաւել Հայաստանում որոշ կարեւոր վայրեր, կարեւոր թէ ստրատեգիական, թէ ռազմամթերքի (կարսի պահեստները) տեսակէտով. այդ բոլորը մնաց Թուրքերի ձեռին. մեր քայլերն ու ընթացքը կաշկանդուած են, Թուրքերինը՝ ազատ. մեզ օգնող չկայ, Թուրքերին աջակից են եւ ղեկավար Թիւրքիան իր օֆիցէրներով (նոյնիսկ բարձրաստիճան), ռազմամթերքով եւ ռազմական ամէն տեսակ դործիքներով...

«Կառավարութեան կողմից ձեր յատուկ ուշադրութիւնը հրաւիրելով այս փաստերի եւ հանգամանքների վրա՝ խնդրում եմ, որ ամենալուրջ դիմումներով ում հարկն է յայտնեցնէք, որպէսզի.

«1) Անդրկովկասից եւ Թիւրքիայի նախկին վիլայէթներից հեռացնեն չուտափոյթ Թիւրքական ուժերն ու զօրականները սպառնալով, որ այդ ու-

ժերը կողմից որեւէ զինուած գործառնութեան դէպքում պատիժ եւ պատասխանատուութիւն կը կրի Թիւրքիան:

«2) Թկուզ փոքր զօրամասեր (անգլիական, ֆրանսիական, ամերիկեան) ուղարկուեն Տրապիզոն–Էրզրում–Սարիղամիշ–Կարս–Նախիջեւան–Ջուլֆա–Շուչի. Կարսում եւ այլ տեղերում եղած անգլիական զօրախմբերը դէմօրիլիզացիայի են ենթակայ եւ հեռանում են):

«3) Ակնկալեն մեր զօրքերի կազմակերպմանը եւ սպառազինմանը (փամփուշտ, հրացան, զնդացիր...):

«4) Հայաստան փոխադրեն հայ զօրամասերին եւ զօրականներին զանազան երկիրներում ներկայումս գտնուող՝ օժտելով նրանց հարկ եղած ռազմական միջոցներով եւ նիւթերով:

«Այս մասին Ձեզ նաեւ հեռագրում ենք՝ խնդրի ստիպողականութիւնը աչքի առաջ ունենալով»:

Իսկ խնդիրը, իրօք որ, ստիպողական էր: Հայաստանը խեղդւում էր՝ կծկուած նեղ լեռներում ու ձորերում: Գարունը վրա էր հասնում. պէտք էր գաղթականութիւնը վերադարձնել իր տեղերը, ցանքս անել յաջորդ տարւայ համար, կառավարութիւնը ազատել խնամատարի ու որբապահի դերերից: Այդ էր պատճառը, որ հայկական ներկայացուցիչները ամբակոծում էին դաշնակիցներին հեռագրներով ու յուշագրերով՝ պահանջելով անմիջական կարգադրութիւն Հայաստանի սահմանների ընդարձակման համար:

Ապրիլ ամսից սկսած, Անդրկովկասի անգլիական հրամանատարութեան քաղաքականութիւնը զգալի կերպով փոխուեց յօգուտ հայերի, եւ Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիրը ուռացաւ նոր մղում: Հայկական կառավարութեան եւ անգլիական բարձր հրամանատարութեան համաձայնութեամբ, որոշուեց հայ–անգլիական ուժերով գրաւել Կարսը: Կարսի զինուորական նահանգապետ կարգուեց գնդ. Թեմբըրլէյը, ապր. 12–ին քաղաքացիական նահանգապետ նշանակուեց Ստ. Ղորղաննանը եւ հայկական գրաւող զօրամասի պետ՝ զօր. Ծովսէփեանը: Հայ եւ անգլիական զօրքերը, երկաթուղով ու ճանապարհով չարժուեցին առաջ եւ, առանց դիմադրութեան հանդիպելու, ապր. 24–ին, մտան Կարս: Շուրան, Շիւքրի փաշայի դրդումով, փորձեց հակառակութիւն ցոյց տալ, բայց անգլիացիք ձերբակալեցին Շուրայի անդամներին եւ ուրիշ աչքի ընկնող Թուրքերին, մօտ 150 հոգի, եւ արտակարգ գնացքով ուղարկեցին Մալթա կղզին: Շիւքրի փաշան յաջողեց փախչել:

Առաջին օրերը, իշխանութիւնը եւ քաղաքի ու բերդի պահակութիւնը անում էին անգլիական զինուորները. ապր. 28–ին իշխանութիւնն ամբողջապէս փոխանցուեց հայերին. անգլիական զինուորներին փոխարինեցին հայերը. բերդապետ նշանակուեց փոխ–գնդ. Մատվէյեւը:

Մայիս 2–ին հայերի ձեռքն անցաւ Արփաչայ—Սարիղամիշ երկաթուղին, եւ մայիս 4–ից սկսուեց կանոնաւոր երթեւեկութիւնը:

Մայիս 9–ին հայկական զօրքերը գրաւեցին Մերդենեկը, մայիս 13–ին,

առանց կռւի, մտան Օլթի եւ կաղզւան: Քրդերն ու թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով:

Մայիս 10–ին կարս հասան եւ մեծ հանդիսաւորութեամբ ընդունեցին վարչապետ Յատիսեանը եւ զօր. Դեւին: Մայիս 11–ին համաժողովրդական մաղթանք եղաւ պատմական Առաքելոց եկեղեցում, ուր Յատիսեանն իր ճառում յայտարարեց. «Մինչեւ մայիս 15 մեր զօրքերը պէտք է գրաւեն Ալաշկերտի հովիտը եւ Բասէնը»:

Եւ, իրաւի, հայ ժողովրդի հայեացքը յառած էր սա՛յն կողմ: Այդ ուղղութեամբ էր շարժւում եւ զաղթականութիւնը:

Նոյն ձեւով, առանց միջադէպի, տեղի ունեցաւ եւ Նախիջեւանի գրաւումը: Ապր. 9–ին, կառավարութիւնը որոշեց Շարուր–Նախիջեւանի վարչական ձեւը. չրջանը պիտի բաժանուէր 3 գաւառի. 1) Զողթան՝ կենտրոնը Ազուլիս, 2) Նախիջեւան՝ Նախիջեւան քաղաքը, եւ 3) Շարուր՝ Բաշ–Նորաշէն: Մայիս 3–ին Նախիջեւանի ընդհանուր նահանգապետ նշանակուեց իրաւաբան Գէորգ Վարշամեանը եւ գրաւող զօրքերի հրամանատար՝ Երեւանի զօրամասի պետ Դրօն: Գրաւման ծրագիրը կազմուեց զօր. Դեւիի, զօր. Հախվերդեանի եւ Դրոյի կողմից:

Նոյն օրը, մայիս 3–ին, հրատարակուեց զօր. Դեւիի եւ Դրոյի ստորագրութեամբ մի հրաման՝ուղղուած Նախիջեւանի ազգաբնակութեան, որով Նախիջեւանը յայտարարւում էր կցուած Հայաստանին, պարտք էր դրւում ժողովրդի վրա՝ ապրել խաղաղ ու համերաշխ եւ կառավարութեան կողմից խոստացւում էր օրէնքի յարգանք ու հաւասար վերաբերում դէպի բոլոր բնակիչները՝ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան:

Ապա, հայկական զօրքերը ճանապարհ ընկան եւ մի քանի օրից արդէն Դաւալուում էին, ուր գտան խանդավառ ընդունելութիւն: Զօրքին դիմաւորելու համար դուրս էր եկել գիւղի ամբողջ բնակչութիւնն ու զաղթականութիւնը: Ժողովրդի առջեւից գնում էին Սասունի դիվիզիոնի ձիաւոր հրիւրեակը Մուշեղի զլխաւորութեամբ, տեղական վաչտը եւ եպոնը մի քանի ձիաւորներով: Ապա զալիս էին որբերը՝ հայկական եւ ամերիկեան դրօշակներով: Որբերին հետեւում էր հոգեւորականութիւնը՝ խաչ ու խաչվառով եւ աղ ու հացով: Տեսարանը վերին աստիճանի սրտառուչ էր. հրդեհի ու փոթորիկների բովից անցած ժողովուրդը ընդունում էր իր հարազատ իշխանութիւնը...

Մայիս 12–ին զօրքերն առաջ շարժւեցին դէպի Շարուր–Նախիջեւան: Նոյն օրը, փոխ–վարչապետ Յատիսեանը, զօր. Դեւին, Դրօն եւ Գ. Վարշամեանը առաջին գնացքով Երեւանից մեկնեցին Նախիջեւան: Նախիջեւանցիները, սկզբում, մերժեցին ճանաչել Հայաստանի իշխանութիւնը, բայց զօր. Դեւիի կտրուկ պահանջի վրա տեղի տուին եւ ընդունեցին Գ. Վարշամեանի ընդհանուր նահանգապետութիւնը: Մայիս 20–ին Նախիջեւան մտան եւ հայկական զօրքերը:

Այսպիսով, ապրիլ–մայիս ամիսներին կատարւեց Ռուսահայաստանի



Վ. ՎԻԼՍՈՆ



ՀՈՒՎԵՐ



Զ. ՋԵՐԱՐԴ



ԳՆԴ. Վ. ՀԱՍԿԵԼ

ամբողջացման գործը. հայկական զօրքերը կանգնած էին Ջուլֆայում, Զինգիլում եւ Կարաուրգանում:

Հայկական չրջանների գրաւման հետ եւ դեռ առաջ տեղից չարժուեց եւ դաղթականութիւնը: Թիւրքերի հեռանալու լուրը ելեկտրական արագութեամբ տարածուեց երկրի բոլոր մասերում եւ աննկարագրելի ցնծութիւն առաջ բերեց ամէն տեղ: Սկսուեց տարերային մի չարժում: Առանց սպասելու կառավարութեան կարգադրութեան, առանց նոյնիսկ ճշտելու լուրի ճշտութիւնը, դաղթականութիւնը ուղղուեց թափով դէպի սահման: Էջմիածնում ու Ղարաքիլիսայում կուտակուեցին ահագին բազմութիւններ: Եւ որովհետեւ դանդաղում էին պարպել գրաւած վայրերը, դաղթականութեան համար առեղծուեց անտանելի կացութիւն — չաբաթներով մնում էին բաց երկնքի տակ, ենթակայ սաստիկ ցրտերի կամ անձրեւների: Եւ չնայած դրան, ամէն օր հասնում էին նորանոր խմբեր՝ սայլերով, եզներով, ֆուրգոններով, ոտով: Մասնաւորապէս անհամբեր էին սուրմալուեցիները, դամարլուեցիներն ու սարդարապատցիները: Միայն Էջմիածնի չրջանում խռնուել էր մօտ 140,000 դաղթականութիւն:

Կառավարութեան ճիգերը՝ կազմակերպելու եւ ծրագրուած ձեւ տալու այդ հոսանքին՝ առանձին յաջողութիւն չունեցան: Տարերքը աւելի ուժեղ էր: Բայց եւ այնպէս, կարելի եղաւ, որոշ չափով, մեղմացնել դաղթականութեան տառապանքը եւ, հնարաւորութեան սահմաններում, կազմակերպւած ձեւ տալ վերադարձի գործին: Ներքին գործոց նախարարութիւնը, առաջին հերթին, յատկացրեց մէկ միլիոն ռուբլի դաղթականութեան անունդ ու դեղօրայք հասցնելու համար, իսկ Հայաստանի Ժողհուրդի դաղթականական յանձնաժողովը հանեց հետեւեալ որոշումները.

«1. Հէնց այստեղ եւ այժմեանից նշանակել վերադրաւած վայրերի համար դաւառական, դաւառակային եւ գիւղական կոմիսարներ՝ հաշւելով դրանց պետական պաշտօնեաներ, ներկայացնել նախահաշիւ եւ խնդրել Ժողհրդից վարկ այդ ծախքերը դոցելու համար:

«2. Հէնց այստեղ եւ այժմեանից կազմակերպել իւրաքանչիւր գաւառի համար ձիաւոր միլիցիայի կադրեր՝ 100—200 մարդ ամէն մի գաւառի համար:

«3. Աղմինիստրացիան նախօրօք, կամ դաղթականութեան առաջին հոսանքի հետ միասին գնում է գիւղերը եւ կարգաւորում դաղթականներին ընդունելու եւ տեղաւորելու գործը:

«4. Գլխաւոր ճանապարհների վրա ունենալ աննպատակ կայաններ բժշկա-ֆելդշերական բաժիններով միասին, նախ՝ դաղթականութեան դիւրութիւն տալու համար եւ երկրորդ՝ դաղթականական հոսանքը մի ճանապարհով տանելու նպատակով, որպէսզի նա չփուի ամէն կողմ եւ հակողութիւնից ազատ լինելով՝ զանազան անարխորժութիւններ չառաջացնի:

«5. Ճանապարհների վրա, որոշ կէտերում, ունենալ չրջիկ ձիաւոր պահակներ՝ ճանապարհների ապահովութեան համար:

«6. Ժամանակաւորապէս արգելել ոչ-տեղացի դաղթականներին գնալ

այս կամ այն գաւառը: Օրինակ, ոչ-սուրմալուեցի գաղթականը ժամանակաւորապէս իրաւունք չունի Սուրմալու գնալու, մինչեւ որ տեղացիները գնան ու տեղաւորուեն: Երբ սրանք գնացին ու տեղաւորուեցին եւ երեւաց, որ ազատ գիւղեր ու տեղեր էլի մնում են, այդ դէպքում կարող են եւ ոչ-տեղացի գաղթականներն եւս գնալ Սուրմալու եւ այնտեղ տեղաւորուել:

«7. Զօրքի հետ միասին եւ միաժամանակ վերագրաւած վայրերն են գնում եւ պարենաւորման գործի ներկայացուցիչները՝ տեղերում պարենաւորման խնդիրը լուծելու համար:

«8. Գաղթականութեան վերադարձի ու տեղաւորման գործի բարձրագոյն ղեկավարութիւնն ամէն մի գաւառում իրենց վրա են վերցնում Խորհրդի մէկ-մէկ անդամները, ի հարկէ, նոյն գաւառից՝ պարլամենտական կոմիսար անունով»:

Այս ձեւով էլ տարուեց գործը:

Մայիսի վերջերին արդէն Թիւրքիոյ պարպած բոլոր շրջանները՝ Շիրակ, Կարս ու Կաղզւան, Կողբ ու Սարդարապատ, Սուրմալու ու Վեդի Բասար՝ բնակեցւած էին վերադարձած հայերով, որոնք ագահութեամբ կպան վերաշինական աշխատանքի: Կազմակերպուեց, այդ վայրերում, եւ վարչութիւնը, պարենաւորման գործը, եւ կեանքը կամաց-կամաց սկսեց բարելաւուել:

⁂

Արտաքին քաղաքականութեան մէջ գլխաւոր տեղը գրաւում էր, ի հարկէ, հայ-վրացական պատերազմը եւ դիւանագիտական ու տնտեսական յարաբերութիւնների կարգաւորումը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Մարտից սկսած Հայաստանի համար բացուեց Եւրոպայի եւ Ռուսաստանի ճանապարհը Թիֆլիս—Բաթումի վրայով:

Երեւանում հաստատուեցին անգլիական ու ֆրանսական ներկայացուցչութիւններ: Ֆրանսիայի ներկայացուցիչն էր կապ. Պուադեբարը, անգլ. ներկայացուցիչ կապիտան Գրէյսին որ մինչեւ վերջն էլ մնաց հայերի ու Հայաստանի բարեկամ: Հետզհետէ ներկայացուցիչներ ունեցան եւ Իտալիան, Կամաւորական Բանակը, Վրաստանը, Ադրբէջանը եւայլն:

Դիւանագիտական յարաբերութիւնները Հայաստանի ու Ադրբէջանի միջեւ սկսուեցին մարտի կէսերին, երբ Երեւան եկաւ վերջինիս դիւանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկին: Պարսից կառավարութիւնը իր Երեւանի ընդհանուր-հիւպատոսին պաշտօն տուեց ներկայացնելու Պարսկաստանը Հայաստանի կառավարութեան մօտ: Ապր. 29-ին Երեւան եկաւ Անգլիայի Մերձաւոր Արեւելքի ուժերի ընդհանուր հրամանատար զօր. Միլնը՝ զօր. Թոմսընի եւ ուրիշների հետ. տեսնուեց կառավարութեան հետ, ապա գնաց Էջմիածին՝ կաթողիկոսին այցելութեան: Մայիս 19-ին Երեւան հասաւ Պարսկաստանի ելեւմտական նախարարութեան ներկայացուցիչը՝ Հայաստանի հետ մաքսային ու թրանզիտային համաձայնութեան նախապատրաստական բանակցութիւններ վարելու համար:

Իր հերթին, Հայաստանն էլ դիւանագիտական ներկայացուցիչներ նշանակեց օտար կառավարութիւնների մօտ. յունւ. 18–ին որոշեց Ռուս. կամաւորական բանակում ունենալ ներկայացուցիչ, առանց քաղաքական լիազօրութիւնների, եւ այդ պաշտօնին կոչեց Պետ. Դումայի նախկին անդամ Ց. Սաղաթելեանը: Ապրիլ 11–ին Սաղաթելեանը ներկայացուցիչ կարգուեց եւ Կուբանի կառավարութեան մօտ. Փետրուարին մի պատուիրակութիւն ուղարկուեց Թաւրիզ՝ Պարսկաստանի հետ սերտ բարեկամական յարաբերութիւններ մշակելու նպատակով: Մարտին Բագուում դիւանագիտական ներկայացուցիչ նշանակուեց Տ. Բէգզադեանը, Թիֆլիսում՝ Լ. Եւանգուլեանը:

Ներքին աշխատանքների չարքում, սահմանների ընդարձակումից եւ գաղթականների տեղաւորումից յետոյ, առաջին տեղը բռնում էր բանակի կարգաւորումն ու որբերի խնամատարութիւնը: Հայաստանի Ժողհրդի յունւ. 7–ի որոշումով կատարուեց զօրացրում, եւ զէնքի տակ պահուեցին միայն հինգ տարւայ — 1894 յունւ. 1—1899 յունւ. 1 — ծնունդները: Հայաստանը Ժողհուրդը յատկացրեց խոշոր գումարներ՝ բարելաւելու համար զօրքի նիւթական ու տեխնիկական վիճակը:

Երկրի բազմաթիւ վայրերում բացուեցին որբանոցներ ու աշխատանոցներ: Այդ նպատակով եւս յատկացուեցին խոշոր գումարներ եւ գործի կանչուեցին ձեռնհաս վարիչներ: Հայաստանից դուրս գտնուող որբերին ու գաղթականներին օգնելու համար՝ մարտ 27–ին Թիֆլիսում խնամատարութեան ներկայացուցիչ նշանակուեց Դ. Դաւիթխանեանը: Մայիսի սկզբին 3 միլիոն ռուբլի յատկացուեց Ախալքալաքի սովեալներին նպաստ բաշխելու, եւ 7,400,000 ռ.՝ նոյն շրջանում սերմացու բաժանելու համար: Մարտ 11–ին պայման կնքուեց եւ Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէին յանձնուեց 15,000 որբերի 2 տարւայ հոգատարութիւնը: Ըստ կազմած նախահաշիւի, Նպաստամատոյցը այդ նպատակով պիտի ծախսէր 90 միլիոն ռուբլի:

Մարտ 15–ին հաշուեյարդարի ենթարկուեց բծաւոր տիֆի դէմ պայքարող արտակարգ յանձնախումբը. համաճարակը այլեւս վերջացած էր:

Կառավարութեան յատուկ ուշադրութեան առարկայ էր երկաթուղու բարեկարգման գործը, որի համար դրսից հրաւիրուեցին ձեռնհաս մասնագէտներ. բացուեցին խոշոր վարկեր, ձեռք բերուեցին անհրաժեշտ նիւթեր: Փետր. 15–ին Հանրապետութեան երկաթուղիների ընդհանուր կառավարիչ նշանակուեց յայտնի մասնագէտ ինժ. Միքայէլ Օգանէզեանը, սպասարկութեան պետ՝ ինժ. Մ. Ալիբէգեանը, ուրիշ պաշտօնների՝ ինժ. Արշ. Պիչիկեանը, ինժ. Բ. Փիրումեանը: Մարտից սկսած երկաթուղային վարչութեան կենտրոնը փոխադրուեց Ալեքսանդրապոլ: Ապր. 29–ին յատկացուեց 11,230,537 ռ. երկաթուղիները, կայարանները եւ երկաթուղային շէնքերը վերանորոգելու համար:

Համեմատաբար, թոյլ էր ընթանում պարենաւորման գործը: Պարենաւորման նախարարութեան մէջ ստեղծուել էր բազմիշխանութիւն. նախարար Լ. Ղուլեանը եւ պաշտօնակատար Ս. Ճարութիւնեանը Թիֆլիսում եւ Ս. Ճարութիւնեանի պաշտօնակատար Գ. Մելիք–Ղարագէոզեանը՝ Երեւանում

մի ժամանակ կարգադրութիւններ էին անում, որոնք, յաճախ, խաչաձեւում էին իրար եւ առաջ էին բերում իրաւացի դժգոհութիւն ու գանգատներ Գ. Մելիք-Ղարագէոզեանի կողմից: Վերջինս փետր. 2-ին նախարարական խորհրդի նիստում հարց յարուցեց, թէ պէտք է միջոցներ ձեռք առնել՝ վերացրնելու համար բազմիշխանութիւնը: Յայտարարուեց, թէ պարենաւորման նոր նախարար է հրաւիրուած եւ շուտով գալու է Ք. Վերմիշեանը, սակայն, Վերմիշեանը դեռ երկար չերեւաց Երեւանում, իսկ պարենաւորման գործերը երթալով՝ աւելի եւ աւելի խճողւում էին: Փետր. 25-ին Մելիք-Ղարագէոզեանը նորից դանգատ ներկայացրեց Ս. Յարութիւնեանի քայլերի դէմ եւ հարց դրեց, թէ՝ արդեօք ինքը պարտաւո՞ր է ենթարկուել նրա հրահանգներին. կառավարութիւնը որոշեց, որ պարենաւորման նախարարութեան վերաբերմամբ Մելիք-Ղարագէոզեանից զատ ուրիշ ոչ ոք կարգադրութիւններ անելու իրաւունք չունի: Այսպէս տեւեց դրութիւնը, մինչեւ որ մարտ 1-ին պարենաւորման նախարար նշանակուեց Ք. Վերմիշեանը: Պարենաւորման տագնապի դէմ պայքարելու նպատակով, մարտ 26-ին, յատկացուեց 50 միլիոն ռուբլի դիւղացիութեան սերմացու հայթայթելու համար:

Կառավարութեան կազմի մէջ եղան եւ ուրիշ փոփոխութիւններ. մարտ 27-ին զինուորական նախարարի պաշտօնից հրաժարուեց զօր. Ց. Հախվերդեանը եւ նոյն օրը նրա փոխարէն նշանակուեց գնդ. Ք. Արարատեանը՝ բարձրացնելով միաժամանակ զօրավարի աստիճանի: Զինուորական նախարարի օգնական նշանակուեց Դրօն: Ապր. 25-ին կազմուեց զինուորական խորհուրդ, որի նախագահ կարգուեց զօր. Թ. Նազարբէգեանը, անդամներ՝ զօր. Ց. Հախվերդեանը եւ զօր. Ց. Բաղրամեանը: Զօր. Նազարբէգեանին յանձնուեց եւ Հայաստանի բանակի ոպարապետութիւնը:

Առհասարակ, կառավարութիւնը իրեն կայուն չէր զգում. ժողովրդական նախարարների աչքը աւելի Թիֆլիս էր, քան Երեւան: Դրանից դժգոհ էին ամենքը, որոնց թւում եւ Երեւանի ժողովրդականները: Հայաստանի Խորհրդի ժողովրդական պատգամաւորները, որոնք սկզբում ոյժ էին տալիս կառավարութեան, կամաց-կամաց կրկին անցան ընդդիմադիրների կողմը, եւ Խորհրդի ամբիոնը նորից դարձաւ կուսակցական կրքոտ վէճերի տեղ. կառավարութիւնը ստիպւած էր լինում՝ բան ու գործ թողած՝ օրերով զբաղուել հարցումներով ու հարցապնդումներով եւ քննադատութիւններին պատասխանելով:

Նման քննադատութիւններն ու յարձակումները յուզում էին հանրային միտքը: Հայաստանի Խորհրդի նիստերին ներկայ եղող հասարակութիւնը յաճախ արտայայտում էր իր դժգոհութիւնը, երբեմն նոյնիսկ անթոյլատրելի ձեւերով: Այս հողի վրա, փետր. 28-ին տեղի ունեցաւ մի դէպք, որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Հայաստանի Խորհրդի համար:

Քննւում էր Սուրմալուի գաւառում զինուորական դրութիւն յայտարարելու առաջարկը: Կառավարութիւնն այդ առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ գաւառի թուրք ազգաբնակութիւնը բացայայտ թշնամական դիրք էր բռնել դէպի Հայաստանի պետականութիւնը, զինւած յարձակումներ

էր գործում հայ բնակչութեան եւ պաշտօնէութեան վրա, կտրել էր ճանապարհները, մշտական վտանգի տակ էր պահում էջմիածին—Իգդիր խճուղին եւայլն: Ընդդիմադիրները, բնականաբար, դէմ էին օրինագծին: Խորհրդի նիստի միջոցին, ներկայ գտնուղ ամբոխը, հաւանաբար, ո՛չ առանց որոշ պատգամաւորների դրդումի, խուժելով ժողովասրահը՝ յարձակուեց ընդդիմադիր պատգամաւորների վրա: Տեղի ունեցաւ վէճ ու կռիւ, եւ նիստը խանգարուեց:

Այս դէպքից յետոյ, Խորհուրդը, կարելի է ասել, կանոնաւոր աշխատանք չունեցաւ: Կուսակցութիւնները երկար բանակցութիւններից յետոյ, որոշեցին ձեռնարկել խորհրդարանի ընտրութեան. երկիրն արդէն մտնում էր բնականոն դրութեան մէջ եւ ժամանակն էր նշանակուվի Խորհուրդը ընտրուած Խորհրդարանով փոխարինելու:

Ի վերջոյ, ապր. 27–ի նիստում, Հայաստանի Խորհուրդը որոշեց. «1. Խորհրդի պարապմունքները դադարեցնել մէկ ամսուայ ժամանակամիջոցով. 2. Դադարի միջոցին Խորհրդի բոլոր իրաւունքները յանձնել կառավարութեան. 3. կառավարութեան յանձնարարել արտակարգ կարեւորութիւն ունեցող դէպքում հրաւիրել Խորհրդի արտակարգ նիստ»:

Այս որոշումով փաստօրէն վերջ գտաւ Հայաստանի Խորհուրդը, որ հայոց պատմութեան ամենախռովայոյզ շրջանում հանդիսացաւ երկրի գերագոյն իշխանութիւնը:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիս 28-ի ակտը

1919 թ. գարնան Հայաստանի կեանքի կարեւոր երեւոյթներից մէկն էր եւ Արեւմտահայ երկրորդ համագումարը:

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան սկզբի չրջանում, արեւմտահայութիւնը իրեն մեկուսացած էր պահում պետական կեանքից: Այդ արտայայտւում էր շատ բաներում. պետական հիմնարկութիւններում, համեմատաբար, քիչ արեւմտահայ պաշտօնեաներ կային. արեւմտահայ երիտասարդութիւնը պարտադիր զինւորակոչից խուսափում էր: Ուրիշ պետական պարտաւորութիւնների հանդէպ էլ արեւմտահայութիւնը վերապահ էր եւ, առհասարակ, հարազատ չէր զգում իրեն հանրապետութեան մէջ: Անդրանիկը, որ Բաքուի դաշնագրից յետոյ իր զօրամասով ու զաղթականներով հեռացել էր Հայաստանից եւ ապա ամրացել Զանգեզուրում՝ թշնամական դիրք բռնելով «Թիւրքերի ձեռքով ստեղծած» հանրապետութեան վերաբերմամբ, զգալի չափով արտայայտիչ էր արեւմտահայերի այն ժամանակւայ մտայնութեան: Ազգային Պատւիրակութիւնը Փարիզում Պօղոս փաշա Նուպարի գլխաւորութեամբ աւելի հեղինակութիւն էր վայելում արեւմտահայերի մէջ, քան Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: «Հայաստանի Հանրապետութիւն» խօսքն էլ ընդունելի չէր շատերի համար — եղածը առակ «Արարատեան Հանրապետութիւն էր»:

Ընդհակառակը, «Արարատեան Հանրապետութեան» կառավարութիւնը ամէն կերպ աշխատում էր վերացնել այդ խորթութիւնը եւ, առհասարակ, հատւածական խնդիրը Հայաստանում — մի գործ, որ, ի հարկէ, հեշտ չէր այն ժամանակւայ պայմաններում: Տաճնեակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակւել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միւս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում, եւ, յանկարծ, բոլորովին չսպասւած տեղից՝ մէջտեղը բանում է ինչ

որ մի «Հայաստանի Հանրապետութիւն» — մարսելի՞ բան էր այդ։ Եւ այդ «Հանրապետութեան» մէջ դեռ չատ բանից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչեւ ներքին կարգերը, մինչեւ հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում։ Արեւմտահայութեան մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ։

Ուստի եւ զարմանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հէնց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին։ Այդ նպատակին ծառայեց Արեւմտահայ Երկրորդ Համագումարը, Երեւանում, փետր. 6—13-ին։

Համագումարը ծրագրւեց միջկուսակցական մի չարք խորհրդակցութիւնների մէջ, ուր դեկտ. 19-ին կազմւեց համագումարի կազմակերպիչ կոմիտէ։ Այս վերջինիս դիմումի վրա՝ Հայաստանի Խորհուրդը դեկտ 28-ին տրամադրեց 35,000 ռ. համագումարի կարիքների համար։ Համագումարը ներթադրւում էր բանալ յունւ. 25-ին, բայց շրջանների պահանջով՝ յետաձգւեց տասն օրով։ Խորհրդակցութիւնների մէջ կազմւել էր հետեւեալ օրակարգը.

«1. Արեւմտեան Հայաստանի գաղթական հայութեան քաղաքական նպատակներու ձեւակերպումն ու արտայայտութիւնը։

2. Արեւմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներգաղթի խնդիրը եւ կազմակերպութիւնը։

3. Արեւմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներկայացուցչական եւ հաշւեյարդարի մարմնի ընտրութիւնը»։

Համագումարը կազմւեց ժողովրդական քւէարկութեամբ՝ երկաստիճան ընտրական սկզբունքով։ Համագումարը ներկայացնում էր հետեւեալ կազմը*)։

Երեւան՝ 31,700 գաղթական — 8 պատգամաւոր. Հ. Կոսոյեան, Զ. Կորկոտեան, Հ. Հայրապետեան, Հ. Կարինեան, Ռ. Շաուրեան, Ե. Ալիքսանեան, Մ. Մալոյեան, Ա. Աւետիսեան։

Էջմիածին՝ 46,600 գաղթական — 3 պատգ. Եղնիկ վարդ. Ներկարաբեան, Ց. Մուշեղեան, Վ. Համբարձումեան։

Աշտարակ՝ 12,880 գաղթական — 2 պատգ. Գ. Ոսկերիչեան, Ռ. Թերլեմեզեան։

Ծաղկաձոր՝ 23,750 գաղթական — 5 պատգ. Տ. Ղիմոյեան, Շ. Բասենցեան, Տ. Թերլեմեզեան, Մ. Մանուկեան, Հ. Աբրահամեան։

Կոտայք՝ 17,570 գաղթական — 5 պատգ. Ա. Մանուկեան, Շ. Շարաբխեան, Ա. Ղուկասեան, Ս. Գալուստեան, Ց. Շահբազեան։

Սուրմալու՝ 25,700 գաղթական — 4 պատգ. Ա. Մխրզոյեան, Օ. Ղորղանեան, Թէյմուր բէգ եւ Թեմուր աղա։

Միլի Ջոր՝ 10,670 գաղթական — 1 պատգ. Ա. Մխիթարեան։

---

*) Բոլոր բաղադրիչները առնում ենք «Համառօտ տեղեկագիր Արեւմտահայ Երկրորդ Համագումարի, 1919 թ. Թիֆլիս. հրատ. Արեւմտահայ Գործադիր Մարմնի» գրքոյկից։

Ալեքսանդրապոլ՝ 10,000 գաղթական — 1 պատգ. Մ. Խալոյեան։

Դիլիջան՝ 12,000 գաղթական — 2 պատգ. Վ. Առաքելեան, Ղ. Յովսէփեան։

Բաշ-Գեաուռի՝ 5000 գաղթական — 1 պատգ. Մ. Դարմանեան։

Նոր-Բայազէտ՝ 27,973 գաղթական — 7 պատգ. Վ. Քրմոյեան, Բ. Աբոյեան, Ա. Խաչիկեան, Մ. Գրիգորեան, բժ. Մուրատեան, Ա. Խոջայեան, Գ. Ալանեան։

Կազմակերպիչ կոմիտէ՝ Գրիգոր Բուլղարացի, Սմբատ, Վ. Տէրոյեան, Ռ. Դրամբեան, Ա. Սասունի, Վ. Յոխիկեան, Յ. Մխիթարեան, Ա. Կիտուր, Ն. Բուռնուքեան։

Արեւմտահայ խորհրդի անդամներից՝ բժ. Պոնապարթեան, Վան-Փուշ։

Հայաստանի խորհուրդ՝ Մ. Վրացեան։

Եղբայրական Օգնութեան կոմիտէ՝ Կորիւն վարդ. Սահակեան։

Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութիւն՝ Ե. Յարութիւնեան։

Լորդ Մէյըրս կոմիտէ՝ Մ. Թումալեան։

«Աշխատաւոր», «Վան-Տոսպ» թերթերից՝ Ա. Գալանճեան, Յ. Վարդապետեան։

Այսպիսով, համագումարին մասնակցում էին 55 պատգամաւորներ։ Պատգամաւոր չէին ուղարկել Սիսիանի, Ղամարլուի եւ Դարալագեազի գաղթականները։ Բացակայում էին նաեւ Ղարաքիլիսայի 2 պատգամաւորները։ Հրաւիրուած էին նաեւ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ներկայացուցիչը, Անդրանիկը եւ ուրիշներ։ Անդրանիկի մօտ ուղարկուել էր յատուկ մարդ՝ խնդրելով, որ անպատճառ ներկայ գտնուի համագումարին, բայց նա չէր համաձայնուել մասնակցել մի ժողովում, որը գումարուելու էր «թիւրքերի ձեռքով ստեղծած Հայաստանի» մայրաքաղաքում։ Իր պաշտօնական նամակում (յունւ. 25) նա գրում էր. «մտածելով, որ չեմ կրնար այդ համագումարին մասնակցելովս օգտակար դառնալ եւ թեթեւացնել ձեր աշխատանքները, ուստի հրաժարւում եմ ներկայ լինել այդ համագումարին»։ Կաթուղիկոսը ուղարկել էր օրհնութեան կոնդակ եւ Գ. եպ. Զէորէքչեանին՝ ներկայացուցիչ իր կողմից։ Շնորհաւորական նամակներ էին ուղարկել Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Հայաստանի կենտր. կոմիտէն եւ Հայ Ռամկավար կուսակցութեան Երեւանի Շրջանային վարչութիւնը։

Փետր. 4-ին եւ 5-ին տեղի ունեցած նախապատրաստական նիստերում կազմուեց համագումարի նախագահութիւնը — 3 նախագահներ՝ Գր. Բուլղարացի, Վ. Տէրոյեան եւ Վ. Քրմոյեան, երկու քարտուղարներ՝ Ա. Կիտուր եւ Յ. Վարդապետեան, լիազօրութիւնները քննող մարմին եւ 4 յանձնաժողովներ — շրջանների զեկուցումների, քաղաքական, ներգաղթի եւ հաշւեյարդար կազմակերպչական։

Համագումարի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հայաստանի Խորհրդի սրահում, փետր. 6-ին, Գր. Բուլղարացիի նախագահութեամբ։ Կաթուղիկոսական կոնդակի ընթերցումից յետոյ, աղջոյնի ճառեր խօսեցին Յ. Քաջազնունին, որ յայտնեց կառավարութեան ցանկութիւնը՝ այս համա-



Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՍԵՊՈՒՀ



Կ. ՍԱՄՈՒՆԻ



Յ. ԱՐԱՔՈՒՆԻ



ՊԱՐՈՑ ԼԵՒՈՆԵԱՆ

գումարով վերացած տեսնել հայութեան հաւաւածական բաժանումը, Մ. Վրացեանը, Կորիւն վարդ.–ը, Ս. Թոփալեանը, Ե. Ցարուքիւնեանը, Ա. Տէր-Ցակոբեանը եւ Խաչիկեանը: Վ. Տէրոյեանը կարդաց մի զեկուցում համագումարի աշխատանքների մասին: Վ. Քրմոյեանը յարդանքի խօսք ուղղեց նահատակուած զոհերի յիշատակին: Հասարակութիւնը, որ խռնուած էր սրահում, ջերմ վերաբերմունք ցոյց տուեց համագումարին: Բազմաթիւ կազմակերպութիւններ, հիմնարկութիւններ եւ գործիչներ գրաւոր ողջունել էին համագումարը:

Համագումարի աշխատանքները անցան համերաշխութեան մթնոլորտում. միայն քաղաքական բանաձեւի չուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ ու բախումներ: Եւ հէնց այդ հարցն էր կազմում համագումարի առանցքը: Բժ. Պոնապարթեանի զեկուցումից յետոյ երկարօրէն քննութեան առնուեցին առաջարկուած բանաձեւի յատկապէս 1, 2 եւ 5 կէտերը: Ցօդուած առ յօդուած քննելուց եւ մաս-մաս ընդունելուց յետոյ, ամբողջական բանաձեւը երրորդ քէչարկութեան դրուեց փետր. 12-ին եւ ընդունուեց միաձայնութեամբ ու ջերմ ծափահարութիւններով: Արեւմտահայութեան քաղաքական կամքի ձեւակերպումն էր այդ: Բանաձեւն ասում է.

«Արեւմտահայ Երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

1. Սրտագին կողջունէ եւ կը յայտարարէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

2. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պօղոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին*):

3. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մէկ միութիւն համազգային հաւաւածներու եւ երկրամասերու միաւորութեամբ:

4. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմնին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

5. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած Գործադիր Մարմնին՝ գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար:**)

---

*) Այդ օրերին երեւանում լուր էր շրջում, թէ Փարիզում Պօղոս Նուպարը յայտարարել է Հայաստանի անկախութիւնն ու միութիւնը եւ կազմել Միացեալ Հայաստանի կառավարութիւն:

**) Այս կէտին դէմ արտայայտուեցին ամենավար 5 պատգամաւորները եւ պատճառաբանուած յայտարարութիւն ներկայացնելով՝ նիստից հեռացան:

6. Կը պահանջէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան հրաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութեամբ եւ աջակցութեամբ։

7. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ եւ պատասխանատու ճիւաղներուն՝ Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Նազըմի, Պէհաէտտին—Շաքիրի եւ ընկեր նահանգապետներու, կառավարիչներու եւ բոլոր ղեկավարներու զինուորական դատարանով պատժուիլը։

8. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիւ օսմանեան կառավարութեան»։

Թէեւ ակնարկն իսկ բաւական է հասկնալու համար, թէ ի՛նչ սուր պայքար է տեղի ունեցել բանաձեւի շուրջ. նա մեքենայական միացումն է երկու՝ բոլորովին անհաշտելի տեսակէտների — մի կողմից «լիակատար վըստահութիւն... Պօղոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին», միւս կողմից՝ «գործնական քայլեր Արարատեան Հանրապետութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» եւայլն։ Անկասկած, ռամկավար պատգամաւորները աւելի հետեւողական էին իրենց հակաարարատեան տրամադրութիւններով։ Պէտք էր կանգնել կա՛մ Հայաստանի, կա՛մ Փարիզի տեսակէտի վրա. ռամկավարները ընտրեցին վերջինը. համագումարի մեծամասնութիւնը դեռ տատանւում էր Արարատի եւ Փարիզի միջեւ։

Այս տեսակէտից, բնորոշ էին նաեւ համագումարի կողմից «Հայկական պատուիրակութեան նախագահ Նորին Վսեմափայլութեան Պօղոս Նուպար փաշային» եւ «Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» տրուած ողջոյնի հեռագիրները։ Առաջինում ասւում էր, թէ համագումարը «իր սրտագին ողջոյնները կուղղէ Ձերդ Վսեմութեան եւ իր լիասիրտ վստահութիւնը կը յայտնէ, որ Ձեր կարող եւ արդիւնաւէտ գործունէութեամբ պէտք է վերջնականապէս ձեւակերպւին հայ բնաշխարհի պետական հիմքերը եւ հայ բազմաչարչար ժողովրդին հնարաւորութիւն տրուի աշխատել եւ վերստեղծել իր հայրենի տունը։ Համագումարը տեսնելով Ձեր մէջ իր իղձերու եւ ցանկութիւններու լաւագոյն արտայայտիչը՝ յոյս ունի, որ իր քաղաքական եւ ազգային ձգտումները կը ջանաք լուծել հայ ժողովրդի արհեստականօրէն անջատուած հատուածներու միաւորութեամբ եւ մէկ պետական-քաղաքական իրաւակարգի ստեղծմամբ»։

«Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» ուղղուած հեռագրում համագումարը «ողջունելով հայութեան մէկ հատուածի կառավարութիւնը՝ լիայոյս է, որ ան եւս կը միացնէ իր ձայնը Արեւմտահայ Համագումարի վճռին՝ ունենալ մէկ հայրենիք եւ մէկ միացեալ ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւն։

Համագումարը գտնելով սոյն խնդիրը հայութեան համար պատմական մէկ կարեւոր խնդիր՝ հաւատացած է, որ Արարատեան Հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը եւ գործնական քայլեր առնել՝ միացումը իրակա-

նացնելու համար կեանքի մէջ»։

Այս վերջին միտքը չեշտւում է «Արարատեան Հանրապետութեան Խորհրդարանին» ուղղւած հեռագրում. «Արեւմտահայ Բ. Համագումարը՝ ողջունելով Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանը՝ վստահ է, որ ան եւս իր հեղինակաւոր ձայնը պիտի միացնէ հայութեան ամենէն չատ տանջւած եւ զոհաբերած խոշոր հատւածի ձայնին՝ ունենալ մէկ հայրենիք, Միացեալ Անկախ Հայաստան, մէկ պետական կազմակերպութեամբ։ Համագումարը հաւատացած է, որ Խորհրդարանը չի ուչանար իր որոշումը տալու հայութեան համար խիստ կարեւոր այս խնդրի մասին»։

Համագումարը բանաձեւեր հանեց եւ արեւմտահայ նախկին մարմինների հաշւեյարդարի ու ներգաղթի մասին։ Առաջինը ասում էր.

«Արեւմտահայ Բ. Համագումարը՝ լսելով հաշւեյարդար յանձնաժողովի զեկուցումը արեւմտահայ նախկին մարմիններու մասին եւ տեսնելով, որ անոնք կազմալոյծ վիճակի մը մէջ կը գտնուին շնորհիւ այն հանգամանքին, որ 1918 Թ. մայիս ամսէն ի վեր ոչ մի տեղ չեն յաջողած մեծամասնութիւն կազմել, իրենց ընտրողներուն հաւաքել եւ իրենց տնտեսական-բարոյական գործունէութեան հաշիւը ներկայացնել, ինչպէս նաև շնորհիւ այն հանգամանքին, որ ոչ միայն իրենց ընտրողներու մօտ չեն վերադարձած եւ Բ. Համագումարին չեն ներկայացած, մի բան, որ ըստ ամենայնի անոնք հնարաւորութիւն ունէին, այլ եւ միայն 2—3 հոգիի համաձայնութեամբ յանձն են առած արեւմտահայ փախստականութեան հանդէպ այնպիսի պարտականութիւններ կատարելու, որ երբեք իրենց վրա դրւած չէ եղած, անոնց գումարները անձնական պատասխանատւութեամբ զանազան գործերու յատկացնելով, մի բան, որ ո՛չ համագումարը, ո՛չ կոնֆերանսը եւ ոչ ալ խորհուրդները չէին թոյլատրած։ Արեւմտահայ Բ. Համագումարը, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ ապաստանած փախստական ներկայացուցչութիւնը՝ կը յայտարարէ նախկին խորհուրդները լուծւած՝ պահանջելով բարոյական եւ նիւթական հաշւետւութիւն իրենց ամբողջ գործունէութեան վերաբերմամբ թէ՛ հաւաքականօրէն եւ թէ՛ անձնապէս»։

Ներգաղթի համար «Համագումարը կը հրահանգէ ընտրւելիք մարմնին այժմէն անհրաժեչտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մօտ եւ դաշնակիցներու ներգործօն միջամտութեամբ եւ աջակցութեամբ պետականօրէն ապահովել ներգաղթող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը եւ պարենաւորման անհրաժեչտ պայմանները, ինչպէս նաեւ անոր հետեւող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեչտ ուեալները հաւաքել»։

Ի վերջոյ, փետր. 13-ի նիստում, գաղտնի քւէարկութեամբ ընտրւեց «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող արեւմտահայ հատւածի Գործադիր Մարմին՝ բաղկացած հետեւեալ 9 անձերից։ Սմբատ Բօրոյեան, Խաչ. Գոնափարթեան, Ար. Սասունի, Գր. Բուլղարացի, Վար. Տէրոյեան, Թուր. Դրամբեան, Վահագն Քրմոյեան, Վաղ. Ցոխիկեան եւ Արս. Կիտուր։ Գործադիր Մարմնի համար մշակեցին հետեւեալ հրահանգները.

«1. Նա կիրականացնէ համագումարի որոշումները:

2. Կը չարունակէ մնալ իր առանձնած պարտականութիւններու եւ իշխանութեան մէջ մինչեւ Միացեալ Ազատ Հայաստանի պետական–օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը՝ հայութեան միւս հատուածներու՝ Պօղոս Նուպարի կարիննահ, Արարատեան Հանրապետութեան կառավարութեան եւ Խորհրդարանի գործակցութեամբ եւ համաձայնութեամբ:

3. Բացառիկ եւ համազգային արժէք ներկայացնող ունէ դէպքի առթիւ կը հրաւիրուի սոյն համագումարն իր լրիւ կազմով՝ Գործադիր Մարմնի անդամներուն մէկ երրորդին կամ համագումարի անդամներու կէսէն աւելիի պահանջմամբ:

4. Գործադիր Մարմինը հաշուետու եւ պատասխանատու է համագումարի առաջ իր գործունէութեան համար:

5. Համագումարի 2րդ նստաշրջանը կը հրաւիրուի մայիս 1–ին, եթէ մինչ այդ ներդաշնը չէ կատարուած եւ եթէ հնարաւոր է պատգամաւորներու կէսէն աւելին հաւաքել:

6. Գործադիր Մարմնի օրէնսդրական գործունէութիւնը կը սահմանափակուի միայն այն չափով, որ չափով որ չի հակասեր համագումարի որոշումներուն եւ բանաձեւերուն:

7. Գործադիր Մարմինը կաշխատի միւս շրջաններէն եւս, որոնք զանազան պատճառներով ներկայ կազմէն կը բացակայեն, պատգամաւորներ ընտրելով՝ լրացնել իւր կազմը»:

Այսպիսով, ստեղծուում էր մի նոր կառավարութիւն՝ «Արարատեան կառավարութեան» կողքին: Գործադիր Մարմինը կազմակերպուեց պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարութեան բնոյթ. իր նախագահին եւ անդամներին տուեց նախարարական դեր: Անգամ նիւթական կողմով չէր զիջում կառավարութիւնից. նախագահին նշանակեց վարչապետական ռոճիկ, անդամներին՝ նախարարական՝ դրամը, ի հարկէ, ստանալով «Արարատեան Հանրապետութեան» դանձարանից:

Այս դրութիւնը, սակայն, երկար չտեւեց. կեանքը ստիպում էր գնալ միակ հնարաւոր ճանապարհով՝ հատուածական տարբերութիւնների վերացման ուղիով: Եւ ամենից շատ արեւմտահայութիւնն էր զգում այդ պահանջը: Գործադիր Մարմինը ընդառաջ գնալով հանրային չէչուած տրամադրութեան՝ մի շարք ժողովներում քննութեան առաւ համագումարի որոշումը՝ «Մէկ հայրենիք, Միացեալ Անկախ Հայաստան» ունենալու մասին եւ եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է օր առաջ յայտարարել Հայաստանի երկու հատուածների միացումը: Եւ այդ իմաստով պաշտօնական դիմում արաւ կառավարութեան:

Արեւմտահայ Գործադիր Մարմնի դիմումը միանգամայն համապատասխան էր այն օրերին Հայաստանի զրեթէ բոլոր խաւերում տիրող տրամադրութեան: Փետր. 25–ին կառավարութիւնը քննութեան առաւ Գործադիր Մարմնի դիմումը եւ միաձայնութեամբ համաձայնելով առաջարկին՝ յանձնարարեց արտաքին գործոց նախարարին պատրաստել մի դեկուցում Հայաս-

տանի Ժողովուրդ մտցնելու համար: Նման քայլի անհրաժեշտությունը չէր մերժում կառավարության ո՛չ մի անդամի կողմից:

Այնուհետեւ կատարեցին նախապատրաստական աշխատանքները Հայաստանի անկախության եւ միության յոյտարարությունը հանդիսաւորապէս կատարելու համար: Այդ նպատակով կազմուեց մի յանձնախումբ հանրային կրթության եւ արուեստի նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանի նախագահության տակ: Գ. Մելիք-Ղարագէոզեանը յանուն յանձնախմբի մի կոչ հրատարակեց, որով հրաւիրում էր ժողովրդին արժանաւոր վայելչությամբ տօնել Մայիս 28-ը. «Թո՛ղ Մայիս 28-ի օրը լինի զոհերի յիշատակին, բայց եւ համազգային մեծ ուրախության օր, — օ՛ր նոր պետության ստեղծման բիւրլիսական Արարատի չուրջը, օ՛ր ազգային բարձր իղձերի եւ համաչխարհային արդարության յաղթանակի»:

Նախարարների Ժողովրդի մայիս 27-ի նիստում, որին ներկայ էին Ա. Ջամալեանը, զօր. Արարատեանը, Ս. Մանասեանը, Քր. Վերմիշեանը, Ս. Թորոսեանը, Գ. Մելիք-Ղարագէոզեանը, Ց. Ջմշկեանը եւ ուրիշներ, լսուեց վարչապետի զեկուցումը այն բոլոր ձեռնարկների մասին, որոնք կատարուել էին Հայաստանի անկախության տարեդարձի օրը միության յայտարարությունը անելու համար եւ կարդացուեց յայտարարության նախագիծը: Կառավարությունը հաւանություն տուեց արուած աշխատանքին, որոշեց, Հայաստանի Ժողովրդի ապր. 27 օրէնքի հիման վրա, հաստատել յայտարարության նախագիծը եւ յանձնարարեց վարչապետին հրապարակել: Որոշեց նաեւ «հրաւիրել Հայաստանի Ժողովրդի նիստերին մասնակցելու, որպէս Ժողովրդի անդամներ, Արեւմտահայ Գործադիր Մարմնի 12 անդամներին»*):

Նոյն նիստում քննուեց հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանի առաջարկը՝ Հայաստանի անկախության եւ միության յայտարարությունը յաւէրժացնելու համար 1) մայրաքաղաքում յուշարձան կանգնեցնել հայ ազատամարտում ընկած հերոսներին ի յիշատակ եւ այդ նպատակով կազմել հիմնադրամ՝ կառավարության կողմից յատկացնելով 100,000 ռ. եւ 25,000 ռ. էլ արձանի մրցանակաբաշխության համար. 2) հրատարակել հայկական ազատագրության վերջին շրջանի պատմությունը, որի համար տրամադրել 285,000 ռ., 3) բաց թողնել առանձին չքանչան «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» մակագրությամբ: Այս առաջարկն եւս հաստատուեց միաձայնությամբ:

Երկու օր վերջը, մայիս 28-ին, Հայաստանի Ժողովրդի հանդիսաւոր նիստում կատարուեց Հայաստանի միության եւ անկախության յայտարարությունը:

Այդ օրը Երեւանը առացել էր չքեղ, տօնական կերպարանք: Ամբողջ քաղաքը զարդարուած էր դրօշակներով, զորքերով, կանաչներով ու ծաղիկներով: Վաղ առաւօտեանից փողոցները լիքն էին բազմութիւններով: Շրջակայ գիւղերից քաղաք էին գալիս խումբ-խումբ գիւղացիներ, պատգամաւո-

*) Գաղուածք նախարարների խորհրդի 1919 թ. մայիս 27-ի նիստի արձանագրությունից:

բութիւններ դրօշակներով՝ հանդէսներին մասնակցելու համար:

Առաւօտեան, քաղաքային ինքնավարութեան չէնքի ընդարձակ հրապարակում տեղի ունեցաւ հոգեհանգիստ հայրենիքի ազատութեան համար զոհուածների յիշատակին, ապա՝ մաղթանք եւ զօրահանդէս: Հրապարակն ու մօտակայ փողոցները բռնուած էին ծովածաւալ բազմութեամբ, զօրքով, դրօշակներով, արիներով, օրբերով: Մէջտեղը տեղաւորուած էին Հայաստանի Խորհրդի ու կառավարութեան անդամները, բարձր հրամանատարութիւնը՝ զօր. Նազարբէգեանի գլխաւորութեամբ, զօր. Դեւէն, Պարսկաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի ներկայացուցիչները, Ամերիկեան կոմիտէի անդամները եւ ուրիշներ: Պատուոյ պահակախմբի ուղեկցութեամբ էջմիածնից եկել էր Ամենայն Հայոց կաթուղիկոսը, որ նախագահում էր հոգեհանգստի եւ հացամաղթանքի արարողութեան:

Հոգեհանգստից ու մաղթանքից եւ վարչապետի՝ բանակին ուղղած խօսքից յետոյ, սկսւեց զօրահանդէսը՝ հազարաւոր ներկաների ծափերի ու ցնծութեան աղաղակների մէջ: Զօրամասերը՝ հետեւակ, հրետանի, այրուձի, պինւորական նաւատի ընկերակցութեամբ, անցնում էին խրոխտ շարքերով՝ յուզելով ու ոգեւորելով հանդիսատեսներին:

Զինւորներից յետոյ սկսւեց աշակերտների, որբերի, արիների, արհեստակցական միութիւնների ու ժողովրդի շքերթը:

Հանդէսից յետոյ, տեղի ունեցաւ յայտարարութեան արարողութիւնը: Հայաստանի Խորհրդի մուտքն ու դահլիճը նոյնպէս զարդարուած էին շքեղ՝ դրօշակներով, զորգերով ու ծաղիկներով: Օթեակները բռնուած էին օտար պետութեանց ներկայացուցիչներով: Մի օթեակ յատկացուած էր կաթուղիկոսին եւ իր շքախմբին: Բեմի վրա տեղաւորուած էին Խորհրդի եւ կառավարութեան անդամները: Դահլիճի առջեւի մասում երեւում էր զօր. Նազարբէգեանի պատկառելի դէմքը, միւս կողմը՝ նստած էր զօր. Փիրումեանը: Սրահը բերնէ բերան լեցուած էր հիւրերով ու հանդիսականներով:

Հանդէսին նախագահում էր հանրային կրթութեան եւ արուեստի նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանը, որ մի գրաւոր ճառով բացատրեց հանդէսի նշանակութիւնը, որից յետոյ նւագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիք»-ը, որ լսուեց յոտնկայս: Մի պահ տիրեց խորհրդաւոր լռութիւն, ապա վարչապետ Քաջազնեան արտասանեց մի փոքրիկ ճառ եւ ժողովականների խանդավառ ծափերի մէջ, կարդաց հետեւեալ յայտարարութիւնը.

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրւանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իրր անկախ պետական միութիւն:

«Ուղիղ մի տարի առաջ, ռուսահայերի համագումարից ընտրուած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ բաղաքական ասխի մասին պաշտօնապէս պետութեանց

ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ, այս մի տարուայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գաւառներում:

«1919 թ· փետրուար ամսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացնել եւ անկախ է ճանաչում:

«Այժմ, Անդրկովկասում եւ օսմանեան կայսրութեան սահմաններում գտնուած պապենական հայկական երկիրների միացման եւ անկախութեան այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձեւն է ռամկավար հանրապետութիւն եւ որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը:

«Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն տէրն ու տնօրէնը, եւ Հայաստանի պարլամենտն ու կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնը:

«Հայաստանի կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919 թ· ապրիլի 27-ի պարլամենտի որոշմամբ կառավարութեանը տրուած յատուկ լիազօրութիւնների հիման վրա»:*)

Մինիստրների խորհրդի նախագահ եւ արտաքին գործերի մինիստր — Ալ· Խատիսեան
Ներքին գործերի մինիստր պաշտօնակատար — Ս· Մանուսեան
Զինուորական մինիստր գեներալ մայոր — Ֆ· Արարատեան
Արդարադատութեան մինիստրի պաշտօնակատար — Յ· Ջամշկեան
Հանրային կրթութեան մինիստր — Գ· Մելիք Ղարագէոզեան
Ինամատարութեան մինիստր — Ս· Թորոսեան
Պարենաւորման մինիստր — Ֆ· Վերմիշեան
Ֆինանսների մինիստրի պաշտօնակատար — Գ· Զաղէքեան
Գործերի կառավարիչ — Գ· Խատիսեան

1919 թ· մայիսի 28-ին, Երեւան քաղաք.

Յայտարարութեան ընթերցումից յետոյ, համաձայն նախօրօք եղած որոշման, բեմ բարձրացան եւ նստեցին Հ· Խորհրդի անդամների շարքում, Արեւմտահայ Գործադիր Մարմնի ընտրած 12 պատգամաւորները՝ Հմ· Մանուկեան, վ· Քրմոյեան, Զ· Կորկոտեան, վ· Ռոսթիկեան, Վան-Փուչ, վ· Առաքելեան, Ա· Մաքսապետեան, Ա· Մխրպոյեան, Ա· Կիտուր, Հ· Կոսոյեան, Ա· Յասունի, Հ· Հայրապետեան: Երկու հաւաժողների միացման յայտարարութեան առաջին գործնական արտայայտութիւնն էր այս, որ հաստատութիւնը ողջունեց ոգեւորուած ծափերով:

Այնուհետեւ կառավարութեան կողմից յայտարարուեց ընդհանուր նեբում վարչական կարգով բանտարկուածների համար, իսկ քրէական յանցա-

*) Այս ակտը կազմել էին Նիկոլ Ադբալեանը եւ Գէորգ Խատիսեանը:

գործների պատիժը կրճատուեց կէս առ կէս: Եւ նախագահի՝ յուշարձանի, չքանչանի ու հրատարակութիւնների մասին կառավարական որոշումները յայտարարելուց յետոյ, յաջորդաբար ողջոյնի ճառեր խօսեցին Հ. Ցորհրդի նախագահ Ա. Սահակեանը, արեւմտահայերի ներկայացուցիչ Վ. Քրմոյեանը, կաթուղիկոսը, Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչ հարիւրապետ Էլդերը, Պարսկաստանի, Վրաստանի եւ Ազրբէջանի ներկայացուցիչները, Հ. Ց. Դ. Բիւրոյի կողմից՝ Ս. Աբարատեանը, Հ. Ց. Դ. Երեւանի եւ Վրաստանի Կ. Կ.–ի կողմից՝ Վ. Ցորէնին, յանուն Ղարաբաղի հայութեան՝ Գ. Բալայեանը, Ամերիկահայ գաղութի կողմից՝ Ա. Միքայէլեանը, պետական ծառայողների կողմից՝ Վ. Ահարոնեանը, Ուսուցչական Միութեան կողմից՝ Ա. Տէր-Թումասեանը, Կանանց Միութեան կողմից՝ օր. Լ. Տէր-Սարգիսեանը, Երեւանի քաղաքային ինքնավարութեան կողմից՝ Մ. Մուրինեանը եւ ուրիշներ:

Առանձնապէս տպաւորիչ էր Գէորգ Ե. կաթուղիկոսի ճառը, որ անգլիական դիւանագէտների ներկայութեամբ հրաւէր էր կարդում հայ ժողովրդին «յոյս չդնել օտարի վրա, որովհետեւ մեր ժողովրդի բարօրութիւնն ու յառաջդիմութիւնը մեզանից է կախուած բացառապէս: Այժմ, երբ Մասիսը մաղնիսի պէս քաշեց ու միացրեց հայութեան երկու հատուածները, երբ ստեղծուեց Միացեալ Հայաստան, այժմ պէտք է լարենք մեր ազգային բոլոր կարողութիւնները՝ փրկելու եւ դաստիարակելու համար մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի»:

Վ. Քրմոյեանը Արեւմտահայ Գործադիր կոմիտէի կողմից կարդաց հետեւեալ յայտարարութիւնը. «Կանգնած մնալով Արեւմտահայ Բ. Համագումարի ընդունած քաղաքական բանաձեւի տեսակէտին վրա՝ Արեւմտահայ Գործադիր Մարմինն իբրեւ Հայկական Հանրապետութեան սահմաններու մէջ ապրող արեւմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարութեան յայտարարութիւնը Հայաստանի միացման եւ անկախութեան մասին, սրտագին կողջունէ կառավարութեան կատարած աքթը և իր լիակատար պատրաստակամութիւնը կը յայտնէ Հայաստանի Ցորհրդարանի եւ կառավարութեան մէջ իր գործօն մասնակցութիւնը բերել՝ իրագործելու Միացեալ Հայաստանի գաղափարը եւ ամրապնդելու հայ ժողովրդի ազատութիւնն ու բարգաւաճումը»:

Ճառերից յետոյ, կարդացուեցին բազմաթիւ շնորհաւորական գրութիւններ ու հեռագիրներ Հայաստանի զանազան կողմերից եւ արտասահմանից: Շնորհաւորում էին Վրաստանի Սահմանադիր ժողովն ու վարչապետը, Ազրբէջանի Ցորհրդարանն ու կառավարութիւնը, Լեռնականները, Վրահայոց Ազգ. Ցորհուրդը, Անդրկովկասեան Ատրական Ազգ. Ցորհուրդը, երիտասարդ գրողներ Ստ. Զօրեանը, Մ. Մանուէլեանը, Լէյլին, եւ շատ ուրիշներ:

Ժողովը խորունկ լռութեան մէջ, յոտնկայս, յարգեց Արամի յիշատակը եւ խանդավառ ոգեւորութեամբ, ցոյցեր արաւ հայկական բանակի ներկայացուցիչներ զօր. Նազարբէգեանին, զօր. Փիրումեանին ու Դրոյին:

Հանդէսը փակուեց «Մեր Հայրենիք»–ով, որից յետոյ վարչապետը պաշտօնական անձերով շրջապատուած՝ դուրս եկաւ Ցորհրդարանի պատըշ-



ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ



Ա· ԱՀԱՐՈՆՅԱՆ



ՓՐՈՖ· Ա· ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ



ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՅԱՆ

գամբը եւ ժողովրդին ու պինդորութեան կարդաց Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը, որ ընդունեց որոտագին «կեցցէ»ներով եւ բնդանօթի 30 հարուածներով:

Ժողովուրդը մինչեւ ուշ գիշեր, չքերթներով, երաժշտութեամբ, երգ ու պարով տօնում էր օրւայ մեծ դէպքը:

Յաջորդաւոր հանդիսաւորութիւններ տեղի ունեցան եւ Հայաստանի գաւառներում ու գաղութահայութեան մէջ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ. ԿՕԱԼԻՑԻԱՅԻ ԽԶՈՒՄԸ

Հայաստանի խորհրդարան

Մայիս 28-ի հանդէսները անցան ընդհանուր ոգեւորութեան ու համերաշխութեան մթնոլորտում:

«Կեցցէ՛ Միացեալ, Անկախ եւ Ազատ Հայաստանը» գրում էր մեծատառ՝ ժողովրդականների «Ժողովուրդ» պաշտօնաթերթը, իսկ մէկ օր վերջը, Մայիս 28-ի աքտը անւանում էր «պետական յեղաշրջում», արդիւնք միներսական կազմի պատահական մեծամասնութեան»: «Այդ աքտը կունենար խոշոր բարոյական նշանակութիւն, գրում էր թերթը, եթէ նա յայտարարէր պարլամենտի կողմից»: Ուրեմն, աքտի էութիւնը չէր կարեւորը, այլ՝ ձեւը — մի ձեւ, որ մշակւել էր եւ իրենց՝ ժողովրդականների մասնակցութեամբ ու հաւանութեամբ:

Մի քանի օր անցած, երեւան վերադարձաւ Մ. Ճարուխիւնեանը, որ Թիֆլիսումն էր եւ մայիսեան հանդէսներին չէր մասնակցել: Եւ այդ ժամանակ մէջտեղ եկաւ ժողովրդականների բողոքը ընդդէմ Մայիս 28-ի աքտի, որը, իբր թէ, չէր համապատասխանում հայ ժողովրդի շահերին: Մ. Ճարուխիւնեանը հիմնաւորում էր իրենց տեսակէտը նրանով, որ Մայիս 28-ի աքտը կրում է միակողմանի բնոյթ, չունի Գողտ Նուպար փաշայի հաւանութիւնը, չի բխում հայկական հարցի միջազգային կացութիւնից, եւ հետեւաբար, պէտք է յայտարարւի չեղեալ: Նրան պատասխանում էին, որ յայտարարութիւնը պատրաստուած ու կատարւած է ամբողջ կառավարութեան, հետեւաբար եւ ժողովրդական նախարարների հաւանութեամբ, որ Մայիս 28-ի յայտարարութեան տակ յօժար կամքով ստորագրել են եւ կառավարութեան ժողովրդական անդամները, որ հանդէսին նախագահողը ժողովրդական նախարար էր եւ որ, այդ բոլորից յետոյ, անտեղի է ինչ որ առարկութիւններ առաջ քաշելը: Բայց ժողովրդականները պնդեցին իրենց պահանջի վրա, որը նրանց պաշտօնաթերթի «Ժողովուրդ»-ը (յունիս 4) հետեւեալ կերպով էր ձեւակերպում. «Միացեալ Հայաստանի պետական իշխա-

նութիւնը պիտի կազմակերպւի Փարիզի դործադիր մարմնի եւ Հայաստանի հանրապետական կառավարութեան փոխադարձ համաձայնութեամբ: Պիտի ստեղծւի մի ժամանակաւոր խառն կառավարութիւն, որը պիտի դումարի Միացեալ Հայաստանի հիմնադիր ժողով, կամ պարլամենտ, եթէ մինչ այդ մշակւած լինի երկրի սահմանադրութիւնը: Ուրիշ կերպ լուծել միացեալ Հայաստանի իշխանութեան պրոբլեմը անկարելի է, քանի որ Հայաստանի երկու մասերը մինչեւ այժմ դտնւել են տարբեր քաղաքական եւ տնտեսական պայմաններում եւ ապրել են տարբեր կուլտուրական կեանքով»:

Եւ երբ կառավարութիւնը մերժեց ընդունել այս պահանջը, յունիս 24–ին նախարարական կազմից դուրս եկան Ս. Յարութիւնեանը, Ս. Ինֆիաջեանը, Գ. Մելիք–Ղարագէոզեանը եւ Ք. Վերմիշեանը, որով եւ վերջ դրաւ կօալիցիան: Նրանց տեղը նշանակւեցին՝ ելեմտական նախարար՝ Գ. Ջաղէթեանը, պարենաւորման՝ Ս. Թորոսեանը, հանրային կրթութեան՝ Ս. Տիգրանեանը եւ արդարադատութեան՝ Յ. Ջմշկեանը: Այս վերջինը անդամ էր ժող. կուսակցութեան, բայց Ս. Յարութիւնեանի քայլից յետոյ բողոքեց ու հեռացաւ կուսակցութիւնից*): Ս. Տիգրանեանի հանր. կրթ. նախարար նշանակւելով՝ արտաքին գործոց նախարարութիւնը անցաւ փոխ–վարչապետ Ա. Խատիսեանին: Այս փոփոխութիւնը որեւէ անդրադարձում չունեցաւ կառավարական քաղաքականութեան վրա:

Ժողովրդականների վարմունքը, սկզբի շրջանում, դժւար էր բացատրել. վերջ ի վերջոյ, ի՞նչ էր կատարւածը Մայիս 28–ին, ինչո՞վ կարող էր վնասել Հայաստանի միջազգային դիրքին, ի՞նչ տարօրինակ հետեւանքներ կարող էր տալ ներքին կեանքում: Ոչի՛նչ: Լաւագոյն դէպքում, նա կարագրեր Երեւանի ու Փարիզի մերձեցումը ու կը համախմբէր բովանդակ հայ ժողովրդի կամքը Հայաստանի շուրջ, վերջ կը տար ներքին պատակոտումին, կը բարձրացնէր հայ ժողովրդի հոգեկան կորովը եւ կամրացնէր Հայաստանի դիրքը հարեւանների աչքին. վատ դէպքում — կը մնար մեռած տառ: Ի՞նչ պատճառ կար այդքան յուզւելու, իրար անցնելու եւ, նոյնիսկ, կառավարութիւնից դուրս գալու:

Շատ չանցած, սակայն, առեղծւածը լուծւեց, եւ լուծումը գալիս էր բոլորովին չսպասւած կողմից: Շուտով յայտնի դարձաւ, որ ժողովրդականների քայլը թելադրւած էր Փարիզից: Յայտնի դարձան նաեւ շատ ուրիշ բաներ, որոնց մասին Հայաստանում, այն ժամանակ, ոչ ոք ոչինչ չգիտէր: Հաշտութեան պատւիրակութիւնը Եւրոպա ուղարկելուց յետոյ, Հայաստանի գործիչները այնքան էին ծանրաբեռնւել ու կլանւել երկրի ներքին աշխատանքներով, որ ո՛չ ժամանակ ունէին, ո՛չ էլ տրամադրութիւն զբաղւելու փարիզեան անց ու դարձերով: Պէտք է ասել, որ հնարաւորութիւն էլ չունէին. Փարիզը շատ էր հեռու ու կտրւած Երեւանից: Ի՞նչ էր կատարւում

*) Խորհրդայնացումից յետոյ, Յ. Ջմշկեանը մնաց Թիֆլիսում եւ հոգեկան ու ֆիզիկական ծանր տանջանքների ենթարկւեց բոլշեւիկների կողմից: Եւ չկարողանալով տոկալ անհնարին զրկանքներին՝ հիւանդացաւ հոգեկան հիւանդութեամբ ու մեռաւ 1928 թի սկզբներին: Ջմշկեանը շնորհալի փաստաբան էր, լուսամիտ ու եռանդուն հասարակական գործիչ:

այնտեղ — Երեւանում գրեթէ ոչինչ յայտնի չէր: Այն ինչ, Թիֆլիսը աւելի արագ եւ անմիջական յարաբերութեան մէջ էր Փարիզի հետ եւ աւելի էր իրազեկ այնտեղի դէպքերին: Եւ Հայ ժող. Կուսակցութեան կենտրոնական կոմիտէն, Թիֆլիսում, աւելի շատ ականջ էր դնում Փարիզին, քան թէ Երեւանին: Իսկ Փարիզում այդ օրերին հետաքրքրական դէպքեր էին տեղի ունենում:

Ինչպէս յայտնի է, զինադադարից մօտ 3 շաբաթ վերջը, 1918 թ. նոյեմբեր 30–ին, Պօղոս Նուպար փաշան հրատարակել էր հետեւեալ յայտարարութիւնը. «Հայկական Ազգային Պատւիրակութիւնը, պատասխանելու համար հայ ազգին միակամ իղձին, որուն մէկ մասը արդէն իսկ իրրեւ անկախ հանրապետութիւն կազմւած է, կը յայտարարէ ամբողջական Հայաստանի անկախութիւնը, կիլիկիայով միասին, Համաձայնական պետութիւններու եւ Միացեալ Ազգերու Դաշնակցութեան տակ, կամ Ազգերու Դաշնակցութեան, երբ ան կազմւի»:*)

Ապա, Ազգ. Պատւիրակութիւնը, շարունակելով հանդերձ, յանուն հայ ազգի, քաղաքական հետապնդումներ Եւրոպայում, ծրագրել էր հրաւիրել ազգային մի համագումար՝ որոշելու համար «հայ ազգին միակամ իղձերը»: Համագումարի նախապատրաստութիւնները զուգադիպեցին Հայաստանի Հանրապետութեան Պատւիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանի Եւրոպա հասնելուն, փետր. 4–ին: Այս վերջինի երեւալը Փարիզում առաջ բերեց լուրջ դժգոհութիւն Ազգ. Պատւիրակութեան շրջանակներում, որոնք Հայաստանի Հանրապետութեան անունն իսկ դժկամակութեամբ էին լսում եւ աւելի սիրով փոխարինում էին «Արարատեան Հանրապետութիւն» դարձւածքով. Արարատը հօ Հայաստան չէ՞ր, եւ ի՞նչ իրաւունք ունէին Երեւանի այդ ինչ որ անյայտ մարդիկ Հայաստանի կառավարութիւն կոչելու իրենց եւ ինչ որ պատւիրակութիւն ուղարկելու պետութիւնների մօտ: Չէ՞ որ «ազգին միակամ իղձը» արտայայտող պատւիրակութիւնն արդէն կար և ներկայացւած էր ո՛չ թէ զաւառացի վարժապետ–բանաստեղծով, այլ տիտղոսաւոր եւ հանրահռչակ մի անձով, որի հօր արձանը կանգնած էր խրդիւնների երկրում, իսկ իր առջեւ բաց էին Եւրոպայի բոլոր դռները:

Մեւս կողմից, Հ. Հ. Պատւիրակութեան ներկայացուցիչն էլ՝ համակւած իր դերքի ու պաշտօնի վեհութեան գիտակցութեամբ՝ չէր պիջանում լիաբուռն յարդանքի տուրքը մատուցանել փաշայական եւ էֆենդիական անապարծութեան:

---

*) Միաժամանակ Ազգ. Պատւիրակութիւնը ձեռնարկել էր ամբողջական Հայաստանի սահմանների ճշտորոշման: «Թայմզ»–ի 31 դեկտ. համարում հրատարակւեց Պօղոս Նուպարի յայտարարութիւնը Հայաստանի անկախութեան եւ սահմանների մասին. նոյնտեղ դրւած էր եւ անկախ Հայաստանի քարտէսը, որի վրա Թուսահայաստանի սահմանները ցոյց էին տրւած խիստ համեստ չափերով, մինչդեռ Թիւրքահայաստանի մէջ մտցւած էին ոչ միայն վանը, Բիթլիսը, Մուշն ու կարինը, այլ եւ Սվազը, Ադանան, Ալեքսանդրետը, Դիարբեքիրը եւ մի ահագին կտոր Սեւ ծովի եզերքից՝ Սամսոնի ու Բաթումի միջեւ: Ազգ. Պատւիրակութեան նախազգաիր հաւատացած էր, որ Հայաստանը, նման սահմաններում, կարող էր իրականութիւն դառնալ մի քանի ամիսների ընթացքում: Առհասարակ, սահմանների հարցը ընդհանուր զբաղումի առարկայ էր արտասահմանում: Շատերը նոյնիսկ Պօղոս Նուպարի գծած սահմանները գտնում էին անբաւարար եւ պահանջում էին նորանոր զաւառներ մտցնել Հայաստանի մէջ:

Այդ պատճառով, Ազգային եւ Հանրապետական Պատւիրակութիւնների ջուրը հէնց սկզբից միեւնոյն տուով չգնաց: Առաջին իսկ օրից սեւ կատու անցաւ նրանց միջեւ, եւ թէեւ, ժամանակի ընթացքում, կարելի եղաւ տանել ձեւական գործակցութիւն եւ աշխատանքի ընդհանուր ճակատ, հոգեկան մօտիկութիւնը, անկեղծութիւնն ու յարաբերութիւնների ջերմութիւնը մինչեւ վերջ էլ բացակայեցին: Մ՛վ էր մեղաւորը, կամ, աւելի ճիշտ, ո՞ր կողմն էր աւելի մեղաւորը այդ հիւանդոտ դրութեան համար — մինչեւ այսօր էլ մէկը ամբաստանում է միւսին: Եւ քանի երկու պատւիրակութեանց գործունէութեան մանրամասն տեղեկագրերն ու վաւերագրերը չեն հրատարակուած, անկարելի կը լինի ճշտել պատասխանատուներն ու պատասխանատուութեան չափը, ինչպէս, առհասարակ, պատմութեան մ՛յս փուլի մէջ եւ ներկայ տեսակներով դժուար է պատասխանատուութիւնների ճշտումը: Բայց մեր գործի համար այդ այնքան կարեւոր էլ չէ. էականը փաստի արձանագրութիւնն է — եղրակացութիւնը թող ուրիշներն անեն: Իսկ փաստը՝ մթնոլորտը Փարիզում լաւ չէր:

Ազգային Համագումարը կոչուած էր մաքրելու այդ մթնոլորտը եւ ազգային գործերը դնելու առողջ հիմքի վրա, բայց յաջողութիւն չունեցաւ. նա ոչ իր կազմով, ոչ էլ մտայնութեամբ կարող էր նման դեր կատարել:

Նախ կազմը: Համագումարը ներկայացուած էր հետեւեալ ձեւով. Պոլիս՝ Եղիշէ արք. Դուրեան, փրոֆ. Ա. Տէր-Յակոբեան, դոկտ. Ա. Բարսեղեան, Գ. Մինասեան, Պօղոս բէյ Մարը, Կովկաս՝ (արեւմտահայ փախստականների կողմից) Վ. Փափազեան, Ա. Թէրզիպաշեան, Լ. Շանթ, Եգիպտոս՝ դոկտ. Նեվրուզ, Վ. Թէքէեան, Բուլգարիա՝ դոկտ. Սայեան, Ս. Հինդլեան, Պարսկաստան՝ Յ. Խան Մասեհեան, Մ. Վարանդեան, Անգլիա՝ Գ. Յակոբեան, Գ. Ֆնտքլեան, Հնդկաստան եւ Ճաւա՝ Պօղոս փաշա Նուպար, Զուիցերիա՝ Գ. Նորաւունկեան, Իտալիա՝ դոկտ. Ն. Տէր-Ստեփանեան, Վենետիկ՝ Յովհ. վարդ. Թորոսեան, Ռումանիա՝ Մ. Տէրպէտէրեան, Ֆրանսիա՝ Ն. խան Ներսէսեան, Տ. խան Քելէկեան, Ամերիկա՝ Ե. Աղաթօն, Մ. Համբարձումեան, Զ. Մաթիկեան, Ա. Մխայէլեան, Միջագետք՝ Ե. Տէրվիչեան, փրոֆ. Ա. Խաչատրեան, Հալէպ եւ Այնթապ՝ դոկտ. Ալթունեան, Յունաստան՝ Յ. Մոսուիչեան, անդամ Ազգ. Պատւիրակութեան՝ Ճ. Մալքոմ, Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Ամերիկայի ներկայացուցիչ՝ Գ. Փաստրմաճեան, հրաւիրուածներ՝ Մ. Տամատեան, Ա. Զոպանեան, Ա. Հանըմեան, Մ. Ս. Դաւիթ բէգ, փրոֆ. Կ. Թումանեան, Հ. Հ. Պատւիրակութիւնից՝ Ա. Ահարոնեան, Հ. Օհանջանեան՝ խորհրդակցական ձայնով:

Այս 4 տասնեակ անձերից քչերը կարող էին ասել, թէ իրենք, որոշ չափով, արտայայտում էին Հայաստանի ժողովրդի բազձանքները. մեծ մասը վաղուց պաղութիներում ապրող մարդիկ էին՝ բոլորովին անծանօթ երկրի պայմաններին եւ հայ ժողովրդի կացութեան: Նրանցից շատերը — անգամ ամենապատասխանատու դիրքեր գրաւողները — Հայաստանի երեսն անգամ չէին տեսել, Հայաստանի աշխարհագրութեան, տնտեսական կարողու-

թիւններին, ազգագրական կազմին ու չրջապատին իսկ տեղեակ չէին, եւ Հայաստանի մասին ունէին ազօտ պատկերացում:

Ճետոյ, տարօրինակ «ազգային» ներկայացուցչութիւն էր այդ. Զիւրիխ, Իտալիա, Հնդկաստան, Միջագետք, Եդիպտոս — այդտեղի դաղութները պակաս էին «հայ ազգին միակամ իղձը» արտայայտելու. ի՞նչ իրաւունքով: Ո՞վ էր տուել նրանց լիազօրութիւն խօսելու բովանդակ Հայաստանի եւ հայ ժողովրդի անունից:

Աւելին. հազիւ մէկ-երկու հարիւր ցաք ու ցրիւ հայեր ունեցող Իտալիան կամ Զիւրիխերիան «տուել էին» մէկական պատգամաւոր, 30—40,000 հայ ունեցող Ռումանիան էլ՝ մէկ. Անգլիայի երկու զոյգ մէկ կէսը տեւտրականները ուղարկել էին 2 մարդ, 2 մարդ էր «ուղարկել» եւ 100,000 անդամ ունեցող պարսկահայ դաղութը, այն ինչ նոյնքան հայ հաշուող Ամերիկան տուել էր 4 պատգամաւոր:

Ժողովուրդ, աշխատաւորութիւնից ընտրուած մարդ այդ համագումարում չատ չկար. բէյ, փաշա, էֆէնդի, եպիսկոպոս, հարուստ վաճառական, արհեստով ազգային գործիչ — ահա ովքեր էին հաւաքւել «ազգին միակամ իղձը» արտայայտելու: Լաւագոյն դէպքում, եթէ մի պահ հրաժարւելու լինենք բոլոր ժողովրդապետական նախապաշարումներից, այդ հաւաքոյթը կարող էինք կոչել «գաղութահայ» համագումար, բայց ոչ «ազգային»: Առաւելաբար գաղութահայութիւնն էր խօսում նրա մէջ՝ անպատասխանատու, գառանցող, անհոգ ու անապարհ: Որպէս անհատ, անոր բոլոր ժողովականներն էլ յարգելի եւ հայրենասէր մարդիկ էին, ի հարկէ, բայց այդքան միայն:

Առաջ բերենք Համագումարի արդիւնքները այնպէս, ինչպէս որ ներկայացած են պաշտօնական հրատարակութեամբ*):

«Ամսաւասիկ Համագումարի նախապատրաստական հինգ նիստերուն եւ պաշտօնական բացումէն մինչեւ փակումը, այն է փետրուար 24-էն մինչեւ ապրիլ 22 դումարուած 38 նիստերուն, ընդամենը 43 նիստի մէջ կատարուած աշխատութեանց համառօտ մէկ ամփոփումը:

«1. Ընտրութիւն Համագումարի դիւանին: Ընտրեցան՝ նախագահ վանա. Գ. Նորատունկեան, դեր-նախագահներ ՊՊ. փրոֆ. Տէր-Ճակոբեան եւ Ա. Զոպանեան, տեղապահներ՝ ՊՊ. Վ. Թէքէեան եւ Ն. Տէր-Մատթէոսեան. այս վերջնոյն հրաժարեցաւ յետոյ՝ Պ. Գ. Ֆինդլեան:

«2. Քննութիւն եւ վաւերացում Համագումարի ներքին կանոնագրին:

«3. Քննութիւն եւ վաւերացում ժողովի իրաւասութեան եւ աշխատութեանց ծրագրին:

«4. Վաւերացում նախապէս պատրաստուած եւ Խաղաղութեան վեհաժողովին ներկայացուած Հայկական Պահանջներու Յիշատակագիրին:

«5. Զեկուցում Ազգ. Պատւիրակութեան նախագահ վանա. Պօղոս Նուպար փաշայի՝ Պատւիրակութեան ի սկզբանէ մինչեւ այժմ կատարած աշ-

*) Ամփոփում Հայ Ազգային Համագումարի Աշխատութեանց եւ որոշմանց (փետր. 24-էն մինչեւ ապր. 22):

խատութիւններուն եւ ստացած արդիւնքներուն վերաբերմամբ։

«6․ Քննութիւն եւ վաւերացում հայ ազգին Թիւրքիոյ եւ Կովկասի մէջ այս պատերազմի ընթացքին կոտորածներու, տեղահանութեան եւ այլ աղէտներու հետեւանօք կրած վնասներուն հատուցման վերաբերող Ցիշատակագիրին, որ ներկայացուեցաւ Խաղաղութեան Վեհաժողովին եւ որուն համաձայն վերոյիշեալ վնասուց ամբողջական գումարը կը յանգի 19 միլիառ 130 միլիոն 982 հազար ֆրանքի։ Այս գումարին 14 միլիառ 598 միլիոն 510 հազարը արեւմտեան հայոց պահանջներուն եւ մնացեալ 4 միլիառ 532 միլիոն 472 հազարը արեւելեան հայոց պահանջներուն համար։

«7․ Քննութիւն եւ վաւերացում ելեւմտական յանձնաժողովին կողմէ Ազգ․ Պատուիրակութեան յառաջիկայ վեց ամսուան գործունէութեան համար պատրաստուած ելեւմտացոյցին, որուն համաձայն ազգային զանազան պէտքերու համար նուազագոյն 15 եւ առաւելագոյն 30 միլիոն ֆրանքի ծախուց գումար մը կը նախատեսուի, հաւոյթի զանազան եղանակներու առաջարկութեամբ, որոնց յարմարագոյն գործադրութիւնը յանձնուած է Նոր Ազգային Պատուիրակութեան։

«8․ Քննութիւն եւ վաւերացում յատուկ յանձնաժողովի մը կողմէ պատրաստուած նոր Ազգ․ Պատուիրակութեան տրուելիք ուղեցոյցներու (ափրէքթիվ) ծրագրին, որուն մէջ մանրամասնուած են պետութեանց հետ բանակցութիւններու ընթացքին Պատուիրակութեան հետեւելիք ուղղութիւնն ու դնելիք պահանջները՝ հիմնուած Ցիշատակագիրի գլխաւոր սկզբունքներուն վրայ։

«9․ Քննութիւն եւ վաւերացում Հայկական Լեգէոնի ներկայ վիճակին, կամաւորներու վերստին յանձնառագրումին եւ Լեգէոնի ապագայ գործածութեան հարցերուն մասին յատուկ յանձնաժողովի մը կողմէ բերուած առաջարկներուն։

«10․ Քննութիւն Պատուիրակութեան տրուելիք ուղեցոյցներու աղթիւ վերապահուած յաւելուածական մասի մը, որով կը փափաքէր Համագումարի ընթացքին իսկ կարելի դարձնել Թրքական եւ ռուսական Հայաստաններու միացումը՝ միակ ներկայացուցչութեան մը եւ միակ կառավարութեան մը ստեղծմամբ․ յետ բազմաթիւ խորհրդակցութեանց որոշուեցաւ սոյն խնդրոյն իրականացումը յանձնել Նորընտիր Պատուիրակութեան՝ ըստ ուղեցոյցներու տրամադրութեան։

«11․ Ընտրութիւն ապրիլ 2-ի նիստին մէջ Հայ Ազգային Պատուիրակութեան՝ բաղկացած վեց անդամէ, որ, համաձայն նոր Պատուիրակութեան համար ընդունուած ուղեցոյցներուն, Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան հետ կը կազմէ «Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը» եւ անոր հետ միասին պիտի աշխատի ձեռք բերել Ցիշատակագիրով բանաձեւած հայկական պահանջներու գործադրութիւնը եւ պիտի հետապնդէ ազգային դատին յարակից բոլոր հարցերուն բարւոք լուծումը։ Նորընտիր Պատուիրակութեան անդամ ընտրեցան՝ վսեմ․ Պօղոս փաշա Նուպար, ՊՊ․ փրոֆ․

Տէր-Յակոբեան, Ա. Զոպանեան, Գ. Փաստրմաճեան, դոքտ. Յ. Նեվրուզ, վ. Թէքէեան:

«12. Քննութիւն Հայկական Վնասուց Հատուցման Յիշատակագիրին վրա աւելցեալ նոր յուշադրի մը՝ վնասուց պատասխանատուութեան եւ դանձման վերաբերեալ: Սոյն յուշադրին ամբողջացումն ու առաքումը յանձնուեցաւ Պատւիրակութեան:

«13. Ընտրութիւն, համաձայն Համագումարի իրաւասութիւնն ու գործունէութիւնը ճշտող ծրագրին, յանձնաժողովի մը, որուն պաշտօնն է մօտաւոր փոխանցման շրջանին համար Հայաստանի վարչական կազմը ճշտող առժամեայ ծրագիր մը կազմել եւ զայն ենթարկել Համագումարի վաւերացման, երբ Համագումարը վերսին ի նիստ հրաւիրւի Պատւիրակութեան կողմէ, ինչպէս պարտաւոր է ընել այն ատեն, երբ Հայաստանի քաղաքական բախտին մասին խորհրդաժողովն իր որոշումը տայ, կամ երբ Պատւիրակութիւնը հարկ տեսնէ Համագումարին դիմել ուրիշ ոեւէ անակնկալ հարկեցուցիչ պարագայի առջեւ»:

Օրակարգի նիւթ կազմող եւ վերեւ թուած այս խնդիրներէն զատ, Համագումարը իր նստաշրջանի միջոցին զբաղեցաւ նաեւ կարգ մը խնդիրներով, որոնցմէ յիշենք՝ հայկական հոգեմասերու զինուորական գրաւման, Կիլիկիոյ եւ Սիւրիոյ մէջ սպրող տարագիր հայ ժողովուրդին ապահովութեան, Արեւելեան Հայաստանի սովաբեկ հայ ժողովուրդին պարենաւորման, Կիլիկիոյ համար բժշկական միսիոնի մը, հիւանդանոցի կազմածներու, դեղօրէից եւ զգեստեղէնի, ինչպէս նաեւ Արեւելեան Հայաստանի համար դեղօրէից առաքման խնդիրները: Ասոնցմէ վերջիններուն Համագումարը յաջողեցաւ մասամբ գոհացում տալ Պատւիրակութեան տրամադրելի միջոցներով:

Համագումարը իր նստաշրջանին միջոցին դժբախտութիւնն ունեցաւ լսելու Հալէպի մէջ հայերու վրա գործադրուած կոտորածի մը դոյժը, ինչպէս նաեւ Իսկենտէրուն եւ Ատանա գտնուղ Հայկական Լեգէոնի վաշտերուն մէջ պատահած յոյժ ցաւալի դէպքերը: Համագումարը թէ՛ Հալէպի կոտորածին եւ թէ՛ միւս պատահարներուն կրկնութեան առաջքը առնելու համար հնարաւոր միջոցները խորհեցաւ եւ անոնց գործադրութիւնը յանձնարարեց Պատւիրակութեան:

Ի բաց առեալ Հայաստանի տնտեսական եւ քաղաքական կացութեան մասին Պատւիրակութեան հասած կարեւոր տեղեկագրերու ընթերցումը, Համագումարը լսեց, իր նստաշրջանի տեւողութեան միջոցին, Ազգային Պատւիրակութեան նախագահին եւ Հայկ. Հանրապետութեան ներկայացուցչին Խաղաղութեան Վեհաժողովին կողմէ ունկնդրութեան ղեկուցումը, Թիւրքիայէն եւ Կովկասէն հասնող պատգամաւոր եւ ոչ-պատգամաւոր ձեռնհաս հայրենակիցներու բերանացի եւ գրաւոր ընդարձակ ղեկուցումները, ինչպէս նաեւ զաղութներէ եկած պատգամաւորներուն՝ զաղութներու հայկ. կեանքին եւ գործունէութեան վերաբերմամբ ըրած մանրամասն տեղեկութիւնները:

Համագումարը ստիպուեցաւ նաեւ նկատի առնել երուսաղէմի Ս. Ջա-



ՓԱՐԻԶԻ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԻՐԱԿՆԵՐ

կովբեանց վանուց միաբանութենէն հասած հեռագրական դիմումները, եւ յանձնարարեց յիշեալ վանուց համար մատակարար մարմնի մը կազմութիւնը՝ համաձայն Երուսաղէմի ընդհանրական կառավարչին կատարած կարգադրութեան՝ նկատելով, որ Գոլսոյ Պատրիարքութիւնը այս միջոցին ի վիճակի չէր այս հարցով զբաղելու:

Այս առաջին նստաշրջանի փակման առթիւ, Համագումարը պարտք համարեց իր եղբայրական ջերմ ողջոյնները ուղղել Հայկական Հանրապետութեան՝ անոր մէջ տեսնելով վեց հարիւր տարիէ ի վեր առաջին անգամ վերազարթնող հայ պետականութեան հրճւատիք պատկերը, եւ յոռնկայս իր խորին յարգանքն ու պաշտամունքը յայտնեց մեր ցեղի բազմաչարչար նահատակներուն եւ այն բիւրաւոր մարտիկներուն յիշատակին, որոնք իրենց հերոսական պայքարներով պատրաստեցին հայկական դատին յաղթանակը:

Համագումարը որոշեց նոյնպէս, որ Դիւանը սոյն առթիւ ղրկէ Համագումարի զգացումները յայտնող ուղերձներ՝ նախագահ Ուիլսընի, Պ. Քլէմանսոյի, Լոյտ Ճորճի եւ Օրլանտոյի, կոչ մը ղրկելով ազգերուն՝ լրագրաց մէջ հրատարակելու համար եւ հեռագիր մը Հայ Հանրապետութեան, Երեւան:

«Այն պահուն երբ Համագումարը իր աշխատութեանց գլխաւոր մասը կատարելէ ետք՝ կը ղադրեցնէ իր Ա. նստաշրջանը, նորընտիր Ազգ. Պատւիրակութիւնը՝ Հայկական Հանրապետութեան հետ ձեռնարկած է արդէն իրմէ սպասուած աշխատութեան, եւ, ուղեցոյցներու տրամադրութեան համաձայն, չուտով ամբողջացնելով իրեն գործակցիլ կոչուած Ներգաղթի, Ելեմտական, Պրոպագանդի եւ այլ գլխաւոր յանձնաժողովներու կազմութիւնը՝ պիտի պատկէ, անշուշտ, Համագումարին իր վրա դրած յոյսերը»:

Փակուելուց առաջ, Համագումարը դաշնակից ազգերին ուղղեց մի կոչ, որով, «կը հռչակէր անգամ մը եւս հայ ազգին կամքը իր ազատ հայրենիքն ունենալու՝ անկախ տէրութեան մը մէջ իր բոլոր հողամասերուն միացմամբ կազմուած» եւ կը խնդրէր դաշնակից ազգերից՝ «իրենց ձայնը մերինին միացընեն պահանջելու համար հաշտութեան վեհաժողովէն, որ փութացնէ լուծումը հայկական հարցին»:

Ապա մի հեռագիր էլ ուղղեցին Հայաստանի Հանրապետութեան. «Փարիզ համախմբուած Հայ Համագումարը, իր առաջին նստաշրջանի փակման առթիւ, Հայկական Հանրապետութեան կուղղէ իր եղբայրական խանդաղատագին ողջոյնը: Սրտագին կը մաղթենք, որ ընդհուպ իրականանայ Միացեալ Հայաստանի Հանրապետութեան կազմակերպութիւնը եւ լիայոյս ենք, որ ձեր եւ մեր ջանքերով պիտի պսակուին մեր իղձերը՝ ընդհանուր խաղաղութեան կնքման պահուն՝ ազգային դատին կատարեալ յաղթանակովը»:

Համագումարի պաշտօնական բանաձեւերի մէջ, կարծես, ոչինչ արտակարգ բան չկար. ըստ էութեան նրանք նոյնն էին, ինչ որ եւ Երեւանի արեւմտահայ համագումարի որոշումները: Աւելին. նրանք, շատ կողմերով, յիշեցնում էին եւ ա՛յն օրերին Հայաստանում տիրող տրամադրութիւնները: Սակայն, համագումարում արտայայտած ոգին, Ազգ. Պատւիրակութեան

եւ պատգամաւորներից չատերի բռնած դիրքը Հայաստանի Հանրապետութեան հանդէպ եւ Ազգ. Պատւիրակութեան ու Հ. Հ. Պատւիրակութեան միջև առեղծուած փոխյարաբերութիւնները, վերջ ի վերջոյ, առաջ բերին այնպէսի մթնոլորտ, որ Ազգ. Պատւիրակութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն ու Պատւիրակութիւնը դարձան, մի տեսակ ներհակ, մրցակից կողմեր: Համագումարի մէջ լսւում էին ուղղակի թշնամական ձառեր, որոնք Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը համարում էին վնասակար հայկական գործի համար. «Արարատեան Հանրապետութեան» հարցը զուտ ռուսական հարց է, ասում էին նրանք, մինչդեռ հայկական խնդիրը վերաբերւում է Թիւրքահայաստանին: Ազգ. Համագումարը պէտք է Ռուսահայաստանը թողնէ իր ճակատագրին եւ ամբողջապէս նուիրւի Թիւրքահայոց գործին՝ պահանջելով, ի հարկին, «Արարատեան Հանրապետութեան» կցումը Հայաստանին: Հ. Հ. Պատւիրակութիւնը, երկուութիւն չստեղծելու համար, պարտաւոր է քաշւել ասպարէզից կամ ենթարկւել Ազգ. Պատւիրակութեան:

Իր հերթին, Հ. Հ. Պատւիրակութիւնը մեկնում էր իրական վտանգից. Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը իրողութիւն է, Հայաստանում ապրում է մէկ միլիոն ժողովուրդ. Երեւանում կայ Մորհրդարան, կառավարութիւն, բանակ. երկիրը հետզհետէ կազմակերպւում է պետականօրէն: Մինչդեռ, Թիւրքահայաստանը ամայի է. ո՛չ ժողովուրդ ունի, ո՛չ կառավարութիւն: Հետեւաբար, անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետութեան վրա, իբրեւ հայկական պետութեան կորիզի, եւ հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատուածների միացման ձեւով:

Կողմերը խօսում էին տարբեր լեզուներով եւ իրար չէին հասկանում: Այս տրամաղրութիւնից օգտւում էին չարամիտ մարդիկ՝ թունաւորելու համար գաղութահայ ազգայինների միտքը նրանով, որ, իբր թէ, դաշնակցականներն են միայն այդպէս մտածողները, դաշնակցական պարագլուխները, որոնք «Արարատեան Հանրապետութիւնը» գործիք են դարձրել իրենց կուսակցական նպատակների, ձգտում են բռնագրաւել*) Թիւրքահայաստա-

---

*) Արժէ արձանագրել մի պատմութիւն, որ տեղի էր ունեցել Արմէն Գարօի: Ազգ. Համագումարի ժամանակ, երբ քննւում էր Թիւրքահայկական գաւառների գրաւման հարցը, Արմէն Գարօն ասում է, թէ չուտով Հայաստանի կառավարութիւնը կը գրաւէ Էրզրումը:

— Ինչպէս թէ կը գրաւէ, զարմանում է Գօդոս Նուպարը՝ յանկարծակիի եկած:

— Հէնց այնպէս, գործ կուզարկէ ու կը գրաւէ, պատասխանում է Արմէն Գարօն: Իմ եղբայրն էլ հայկական բանակում է. յոյս ունեմ առաջին էշելրում մտնողներից մէկն էլ ես կը լինի:

— **Mais c'est une occupation !** (բայց այդ բռնագրաւում է) վրդովւած բացականչում է փաշան:

Եւ տեսնելով Արմէն Գարօյի չսրած գէմքը՝ ձեռքը զարնում է ճակատին ու —

— Այո՛, այո՛, բռնագրաւում է այդ, եւ ես կը բողոքե՛մ դրա դէմ... Ես կը բողոքե՛մ...

Հայաստանի գործը պիտի գրաւէր էրզրումը, եւ Ազգ. Պատւիրակութեան նախագահը սպառնում էր բռնոթել...

նը, խլել Պօղոս փաշա Նուպարից ազգային գործերի ղեկավարութիւնը եւ այլն: Քաղաքական ընդհանուր տեսակէտների տարբերութիւնը, կուսակցական նեղմտութիւնը եւ անձնական նախանձն ու քէնը Փարիզում առաջացրին խեղդիչ մթնոլորտ, որի թունաւոր հոսանքները հետզհետէ սկսեցին հասնել եւ Երեւան:

Մայիս 28-ի յայտարարութիւնը բոլորովին անսպասելի էր Ազգային Պատւիրակութեան համար: Պօղոս Նուպարն ու իր գործակիցները սկզբունքով դէմ չէին նման քայլի: Ընդհակառակը, ինչպէս տեսանք, դեռ նոյեմբ. 30-ին նրանք յայտարարել էին «ամբողջական Հայաստանի անկախութիւնը»: Եւ այժմ էլ գործում էին այդ ուղղութեամբ, բայց նրանց զայրացնողը այն էր, որ յայտարարութիւն անողը Երեւանն էր եւ ոչ իրենք, երկրորդ՝ որ Երեւանի կառավարութիւնը ինքգինքը հռչակում էր միացեալ Հայաստանի կառավարութիւն, այն ինչ բոլոր մարդկային եւ աստուածային օրէնքներով միացեալ Հայաստանի կառավարութիւնը պէտք է կազմէր Փարիզում եւ անպայման Պօղոս փաշա Նուպարի նախագահութեան տակ:

Եւ հասկանալի է այն անսահման վրդովումը, որ Մայիս 28-ի աքսոր առաջ բերեց Փարիզում, ուր նա ընդունեց, իբրեւ բռնաբարում Ազգ. Պատւիրակութեան իրաւունքների: Պօղոս Նուպարը, անմիջական մղումով, ուղեց հրապարակային յայտարարութեամբ՝ բողոքել այդ աքսոր դէմ, սակայն, Հ. Հ. Պատւիրակութեան ներկայացուցիչների եւ ուրիշ աւելի պաղարիւն մարդկանց սոխպումով յետ կեցաւ այդ մտադրութիւնից: Եւ սկսեցին բանակցութիւններ նրա եւ Ահարոնեանի միջեւ, որոնք տեւեցին երկար: Այդ բանակցութիւնների համար Ա. Ահարոնեանը լիազօրութիւն չունէր իր կառավարութիւնից, բայց, ընդհանուր առմամբ, ճիշտ էր ներկայացրել Երեւանի տրամադրութիւնները: Բանակցութիւնների առարկայ էին ամբողջական Հայաստանի կառավարութեան, խորհրդարանի եւ պատւիրակութեան կազմութեան հարցերը: Պօղոս Նուպարը պահանջում էր կազմել միացեալ խորհրդարան՝ կէսը ռուսահայերից, կէսը թիւրքահայերից եւ միացեալ կառավարութիւն՝ նոյնպէս կէս առ կէս: Կառավարութեան թիւրքահայ անդամները պիտի նշանակէին Ազգ. Պատւիրակութեան կողմից, ռուսահայերը՝ Հայաստանի օրւայ կառավարութիւնից: Նախարարական տեղերը պէտք է բաժանուէին փոխադարձ համաձայնութեամբ, բայց վարչապետ պէտք է լինէր անպայման Պօղոս Նուպարը՝ մնալով միանգամայն եւ Պատւիրակութեան նախագահ: Արտաքին գործոց եւ զինուորական նախարարները պէտք է լինէին ոչ-դաշնակցական: Քանի որ վարչապետը պիտի ապրէր Փարիզում, Երեւանում պիտի նշանակէր փոխանորդ: Ժամանակաւոր կառավարութեան կազմութիւնից յետոյ Խորհրդարանին դադար պիտի տրւէր անորոշ ժամանակով, մինչեւ միացեալ խորհրդարանի գումարումը: Միացեալ Պատւիրակութիւնը պիտի կազմէր Փարիզում՝ երկու կողմից հաւասարական կամ երեքական անդամով: Թիւրքահայ անդամները պիտի նշանակէին Պօղոս Նուպարից, միւսները՝ կառավարութիւնից: Պօղոս Նուպարի նշանակած անդամները պէտք է լինէին անփոփոխելի, եւ նոյնիսկ միացեալ

կառավարութիւնը իրաւունք չպիտի ունենար նրանց հրաժարեցնելու մինչեւ հայկական հարցի լուծումը: Նոր պատւիրակութեան նախագահ պէտք է լինէր Գօղոս Նուպարը, որին պիտի տրէին արտակարգ լիազօրութիւններ:

Այս պահանջներից Հ. Հ. Պատւիրակութիւնը ընդունում էր, որ կառավարութիւնն ու խորհրդարանը կազմուեն կէս առ կէս թիւրքահայերից ու ռուսահայերից, բայց վարչապետը անպայման պէտք է ապրէր Հայաստանում, որ երկու Պատւիրակութիւնները կարող են ձուլուել Գօղոս Նուպարի դէխաւորութեամբ՝ պայմանով, որ նոր պատւիրակութիւնը ենթարկուի եւ պատասխանատու լինի կառավարութեան, որ պատւիրակութեան թիւրքահայ անդամները կարող են նշանակուել Գօղոս Նուպարի կողմից, զինւորական նախարարը կարող է լինել անկուսակցական եւայլն:

Ինչպէս տեսնում ենք, տարաձայնութիւնը երկու տեսակէտների միջեւ բաւական լայն էր:

Ի վերջոյ, երկու Պատւիրակութիւնների նախագահների ստորագրութեամբ հեռագիր տրուեց Երեւան, որով առաջարկւում էր չձեռնարկել կառավարութեան եւ խորհրդարանի վերակազմութեան եւ սպասել Փարիզից ուղարկուելիք պատգամաւորներին, որոնք այլ տիպի նոր առաջարկութիւններ էին բերելու: Հայաստանի կառավարութիւնը սիրով ընդառաջեց այս առաջարկութեան:

⁂

Մինչ Փարիզում պատւիրակութիւնները յուզւում ու բանակցութիւններ էին վարում, Հայաստանում տեղի էին ունենում խորհրդարանական ընտրութիւններ, որոնք ձեռնարկուեցին Հայաստանի Հորհրդի փետր. 28-ի միջադէպից յետոյ: Մարտ 12-ին կառավարութիւնը որոշեց Հորհրդարանի ընտրութիւնների համար հիմք ընդունել համառուսական Սահմ. Ժողովի ընտրական օրէնքը Անդրկ. Առանձին կոմիտէի մտցրած փոփոխութիւններով, ամբողջ երկիրը դարձնել մէկ ընտրական շրջան, թիւրքահայերին տալ ընտրական իրաւունք եւայլն: Այս որոշման հիման վրա մշակուեց «Օրէնք Հայաստանի Պարլամենտի Ընտրութեանց», որով իւրաքանչիւր 20 տարին լրացրած քաղաքացի, առանց սեռի, կրօնի ու ցեղի խտրութեան իրաւունք ունէր մասնակցելու ընտրութիւններին, որոնք պիտի կատարուէին ընդհանուր, գաղտնի, հաւասար, ուղղակի եւ համեմատական քւէարկութեամբ: Հորհրդարանի անդամների թիւը սահմանւում էր 80: Ընտրութիւնները վարելու համար ստեղծւում էին կենտրոնական պատառական, շրջանային, քաղաքային, գիւղական եւ թաղամասային ընտրական յանձնաժողովներ. կենտրոնական յանձնաժողովը նշանակւում էր Հայաստանի Հորհրդից, իսկ մնացածները՝ իրենցից գերադաս յանձնաժողովներից:

Հայաստանի Հորհուրդը նշանակեց ընտրական կենտրոնական յանձնաժողով եւ այս վերջինն անցաւ գործի: Նշանակեց պատառական ընտրական յանձնաժողովներ, յանձնաժողովների նախագահներ ու ընտրական հրահանգիչներ եւ դաւառներն ուղարկեց ժողովրդական քերթիկներ՝ մանրամասն հրահանգներով: Ապր. 25-ից Հայաստանի բոլոր վայրերում սկսուեց ընտրող-

ների ցուցակագրութիւնը. քւէի իրաւունք ունեցողների ընդհանուր թիւը դուրս եկաւ, առանց կարսի եւ Շարուր-Նախիջեւանի, 365,780 հոգի: Խորհրդարանի ընտրութիւնների համար կազմուեց հետեւեալ ժամանակացոյցը.

Մայիս 12 — ընտրողների ցուցակների յայտարարման վերջնական ժամանակը:

Մայիս 22 — թեկնածուների ցանկը ներկայացնելու վերջին օրը:

Մայիս 29 — ներկայացած թեկնածուների ցանկի յայտարարութեան վերջին պայմանաժամը:

Յունիս 6 — վերջնական ժամանակը թեկնածուների ցանկ ներկայացնող ընտրողների յայտարարութեան՝ ցանկերը միացնելու մասին:

Յունիս 11 — ընտրողների ցանկերի երկրորդ յայտարարութեան վերջին օրը:

Յունիս 21, 22, 23 — ընտրութիւններ Հայաստանի բոլոր վայրերում:

Խորհրդարանի ընտրութիւնների համար ներկայացուեց թեկնածուների հօթը ցուցակ.

N° 1.	Հ. Յ. Դաշնակցութիւն	120 թեկնածու
N° 2.	Հայ ժողովրդական կուս.	65 թեկնածու
N° 3.	Սոց.-Յեղափոխ. կուս.	35 թեկնածու
N° 4.	Քրդական ցանկ	2 թեկնածու
N° 5.	Ասորական ցանկ	3 թեկնածու
N° 6.	Անկուսակց. Գիւղաց. Մխութիւն	
N° 7.	Թրքական ցանկ	

Նախընտրական պայքարն սրդէն սկսած էր, երբ Բիֆլէսցիների եւ երեւանցիների միջեւ ծագած կուսակցական ներքին անհամաձայնութիւնների հետեւանքով՝ ժողովրդական կուսակցութիւնը, թեկնածուների ցանկը ներկայացնելուց եւ ընտրական աշխատանքներին ձեռնարկելուց յետոյ, սնոտի պատրւակներով, հրաժարուեց մասնակցելուց, յունիս 20-ին յետ պահանջեց իր ցուցակը եւ սկսեց պայքար մղել խորհրդարանական ընտրութիւնների դէմ: Այդ պայքարում նա յենւում էր, գլխաւորապէս, Գօդոս Նուպարի բռնած բացասական դիրքի վրա: Գօդոս Նուպարը դժգոհ էր, որ Հայաստանում խորհրդարանական ընտրութիւններ էին կատարւում. Հայաստանը նրա աչքին մի գաւառ էր սոսկ, ուր կարող էր գոյութիւն ունենալ տեղական իշխանութիւն եւ ոչ թէ խորհրդարան:

Նախընտրական պայքարը եղաւ բաւական տաք. ժողովներ, թռուցիկներ, ընտրական ցուցատախտակներ, կոչեր, անհաշիւ յօդւածներ թերթերում: Կուսակցական գործիչները չրջում էին գիւղից գիւղ ու քաղաքից քաղաք եւ աշխատում ժողովրդականացնել իրենց թեկնածուների ցանկը — ճիշտ եւ ճիշտ Եւրոպայի եւ Ամերիկայի օրինակով:

Ամենից լայն ժողովրդականութիւն վայելողը, բնականաբար, Հ. Յ. Դաշնակցութեան ցանկն էր եւ նրա նշանախօսքերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր «Միացեալ եւ Անկախ Հայաստան», «Ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդին», «Հողը աշխատաւորին», «Գործը՝ գործաղուր-

կին», «Հաց ժողովրդին», «Ժողովուրդների համերաշխութիւն եւ եղբայրութիւն»:

Ընտրութիւնները տեղի ունեցան նշանակուած ժամանակին եւ արդիւնքը եղաւ.

Հ. Յ. Դաշնակցութիւնը ստացաւ	230,272 քւէ	— 72 պատգամաւոր
Սոց.–յեղափոխականները՝	13,239 քւէ	— 4 պատգամաւոր
Թուրքերը՝	8,187 քւէ	— 3 պատգամաւոր
Անկուսակց. Գիւղաց. Միութիւնը՝	4,224 քւէ	— 1 պատգամաւոր
Ռուսական ցուցակը՝	1,305 քւէ	— ո՛չ մէկ
Ժողովրդականները՝	481 քւէ	— ո՛չ մէկ
Ասորիները՝	178 քւէ	— ո՛չ մէկ

Նորընտիր Ժողհրդարանի բացումը տեղի ունեցաւ օգոստոս 1–ին: Բացումից առաջ Ժողհրդարանի շէնքում տիրում էր եռ ու զեռ: Կուսակցական ֆրակցիաները կատարում էին նախապատրաստական աշխատանքներ: Բոլորի ուշադրութիւնը, բնական կերպով, կենտրոնացած էր դաշնակցական ֆրակցիայի վրա, որ ամէն օր գումարում էր երկարատեւ նիստեր, ուր քննութեան էին առնւում բազմաթիւ ընդհանուր–սկզբունքային եւ ընթացիկ–գործնական հարցեր: Ամենից շատ զբաղեցնող խնդիրը երկրի ներսը եւ ճակատներում տիրող լարւած դրութիւնն էր, որի մեղմացման համար մշտածւում էին մի շարք միջոցներ:

Այդ խորհրդակցութիւնների ժամանակ լուծւեց եւ ֆրակցիայի ու կառավարութեան փոխյարաբերութեան հարցը. վարչապետը նշանակելու էր ֆրակցիայից՝ կուսակցական բարձրագոյն մարմնի հաւանութեամբ. կառավարութիւնը պէտք է լինէր պատասխանատու Ժողհրդարանի եւ ֆրակցիայի առջեւ. ֆրակցիան իր հրահանգները պիտի ստանար կուսակցութեան բարձրագոյն մարմնից: Նշանակւեցին թեկնածուներ Ժողհրդարանի նախագահութեան հինգ անդամների — մէկ նախագահ, երկու փոխ–նախագահ, աւագ ու կրտսեր քարտուղարներ: Քննւեց եւ հաստատւեց կառավարութեան յայտարարութեան նախագիծը, որից յետոյ որոշւեցին վարչապետութեան եւ նախարարութեան թեկնածուները: Կառավարութեան վերակազմութիւնը յանձնարարւեց Ա. Ժամհարեանին, որը իր հրաւիրելիք նախարարների ցանկը պիտի ներկայացնէր ֆրակցիային ի հաստատութիւն: Կազմւեց խորհրդարանական ֆրակցիայի նախագահութիւն՝ Ա. Ջամալեան, Վ. Ժորէնի եւ Ս. Վրացեան:

Բացումը եղաւ հանդիսաւոր, Ժողհրդարանի աւագ անդամ Ա. Սահակեանի նախագահութեամբ, նախարարական ամբողջ կազմի, օտար ներկայացուցիչների եւ բազմաթիւ հիւրերի ու հանդիսականների ներկայութեամբ: Ժողհրդարանի դահլիճը, ենթարկուած հիմնական վերանորոգութեան, զարդարւած էր դրօշակներով ու գորգերով:

Ա. Սահակեանի բացման հակիրճ ճառը ընդմիջւում էր բուռն ծափահարութիւններով: «Քաղաքացինե՛ր, Միացեալ Հայաստանի ներկայացու-

ցիչները, սկսեց նա, ուղիղ մի տարի սրանից առաջ, օգոստ. 1-ին, մեր երկիրը շրջապատված էր տաճկական զօրքերի երկաթէ օղակով, թշնամու սուրը կախած էր մեր գլխին, մեր հայրենիքը դարձել էր բանտ: Ես, որպէս նախագահ դերագոյն Ազգային Ժողովի, առաջին նիստին, անխախտ հաւատով եւ խորը համոզմունքով յայտարարեցի, որ մեր Հանրապետութեան նեղ հորիզոնը, որի սահմանները խեղդում էին նրան, պէտք է ընդարձակւի, մեր հերոս ու մարտիրոս ժողովուրդը պէտք է լինի տէրը իր փայփայած ու զուրգուրած հայրենիքի (ծափեր): Այսօր երջանիկ եմ վկայելու, որ իմ դուշակութիւնը ոչ միայն արդէն կատարուած փաստ եւ իրականութիւն է դարձել, այլ եւ մեր ժողովրդի կամքը սրբագան, հայութեան երկու կէսերը դրկաբաց միացել են եւ յայտարարել մի պետութիւն, միացեալ, անկախ եւ ազատ Հայաստան, որի պաշտպանութեան համար մենք երդւել ենք զոհել մեր կեանքը եւ կուել մինչեւ վերջին չունչ (ծափեր): Մենք հպարտանում ենք մեր նորածին պետութեամբ. նա թոյլ է, հեռու է կատարեալ լինելուց, բայց միացնում է իր ամբողջ հողամասը: Ժողովուրդը սիրում է իր երիտասարդ Հանրապետութիւնը. նրա մէջ արմատացել է անկախութեան գաղափարը. նա երբեք չի բաժանւի նրանից եւ երբեք չի դիջի: Ճիշտ է, մեր առջեւ, Տաճկահայաստանի փակ դռների յետեւ, մեր թշնամին չարունակում է կատարել իր մութ գործերը եւ ինտրիգներ է սերմանում այս կողմը, մեր Հանրապետութեան սահմաններում: Բայց ես չեմ կասկածում, որ մենք կը ճեղքենք այդ դուռը մեր մեծ դաշնակիցների հետ միասին, կը տիրենք մեր երկրին, որ ցօղւած է անհամար մարտիրոսների եւ հերոսների արիւնով: Հայ ժողովրդի արեան դատը, անկասկած, պէտք է ստանայ իր նպաստաւոր եւ արդար լուծումը. այդ դատը մարդկութեան խղճի, պատւի եւ իրաւունքների դատն է, մարդկային գոյութեան հարցն է, որ ոչ ոք չի կարող ժխտել... Երջանիկ եւ ոգեւորւած եմ ողջունելու մեր առաջին ընտրւած Ժողովրդարանը այս պատմական վայրկեանին»:

Ապա ողջունեց դաշնակիցներին ու հարեւան պետութիւններին, յանձին նրանց ներկայացուցիչների, եւ «մեր փառապանծ բանակը, որ հայրենասիրութեան անսահման անձնազոհութեամբ կռւում է՝ պաշտպանելով մեր հայրենիքը արտաքին եւ ներքին թշնամիներից»: Ժողովրդարանը խանդավառ ծափերով ու յոռնկաչս ցոյց արաւ հայ զօրքին:

Երկրորդ նիստում Ժողովրդարանը կազմեց իր նախագահութիւնը: Փարիզից եղած դիմումի վրա, ձեւական նախագահ նշանակւեց Ա. Ահարոնեանը, իսկ իրական նախագահներ — փոխ-նախագահներ — ընտրւեցին Լ. Շանթը եւ Ս. Արարատեանը: Քարտուղարներ՝ Ց. Տէր-Յակոբեանը (աւագ) եւ Արամ Սաֆրաստեանն ու Ա. Տէր-Միքայէլեանը:

Երրորդ նիստում, օգոստ. 7-ին, 40 քւէով ընդդէմ 8-ի վարչապետ կարգւեց Ա. Ահարոնեանը: Կազմւեցին խորհրդարանական 12 յանձնաժողովները, որոնց մէջ մտան բոլոր պատգամաւորները: Որոշւեց Ժողովրդարանի նիստերը դումարել շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի եւ ուրբաթ օրերը:

Չորրորդ նիստում, օգ. 10–ին, Ց. Արղութեանի նախագահութեամբ*), վարչապետը յայտարարեց նոր կառավարութեան անդամների ցանկը — վարչապետ եւ արտաքին գործոց նախարար՝ Ա. Խատիսեան, ներքին գործոց եւ արդարադատութեան՝ Ա. Գիւլխանդանեան, պարենաւորման եւ ելեմտական՝ Ս. Արարատեան, խնամատարութեան եւ աշխատանքի՝ Ա. Սահակեան, հանրային կրթութեան եւ արուեստի՝ Ն. Աղբալեան, գիւղատնտեսական՝ զօր. Ֆ. Արարատեան: Ցանկը վաւերացուեց 37 քւէով 2–ի դէմ, որից յետոյ վարչապետը կարդաց կառավարական յայտարարութիւնը:

Ներկայացնելով Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքական բարդ դրութիւնը, Թիւրք–ադրբէջանեան դաւերը, պարենաւորման ու ելեմտական անկայուն վիճակը, անգլիական զօրքերի մեկնումը Կովկասից, հայկական հարցի ընթացքը Հաշտութեան Վեհաժողովում՝ յայտարարութիւնը երկարօրէն կանգ էր առնում կառավարութեան անելիքների եւ վարելիք քաղաքականութեան վրա. «կառավարութիւնը պիտի ձգտէ ստեղծել ամենամատչելի պետական վարկ շահագործելու եւ մտցնելու մի շարք տնտեսական ձեռնարկութիւններ, ցոյց տալ պետական օգնութիւն կարկտից, հեղեղից, մրեխից եւ այլ արհաւիրքներից տնտեսապէս քայքայուած աշխատաւոր դասակարգին, ամէն կերպ պիտի խրախուսի մասնաւոր կապիտալի մուտքը մեր երկրի սահմանները, պիտի ապահովի նրա տարածումը եւ բնականոն զարգացումը, հեռացնելու համար մեր երկրի ծանր ֆինանսական դրութիւնը: Կառավարութիւնը պիտի ջանայ կարգաւորել հարկային սիստեմը, կիրարկելով եկամտային հարկի պրոգրեսիւ սիստեմը՝ ուժեղացնելով ուղղակի հարկերը ի հաշիւ անուղղակի հարկերի: Կնքելով արտաքին փոխառութիւններ՝ պիտի փութացնի սեփական բոնների հրատարակութիւնը: Աշխատանքի ապահովութեան եւ պաշտպանութեան համար կառավարութիւնը մտադիր է հրատարակել ազատ բանւորական օրէնսդրութիւն, կիրարկել վարձատրութեան կենսական նորմաները, հիմնել աշխատանքի եւ արդիւնաբերութեան տեսչութիւններ, հաշտարարատեաններ, աշխատանքի բորսաներ, նպաստել բանւորական կազմակերպութիւնների ուժեղացման, կուռել անգործութեան դէմ տնտեսական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւնների միջոցով:

«Ժողովրդական լուսաւորութեան գործի մէջ կառավարութիւնը պիտի ղեկավարւի հետեւեալ սկզբունքով. — ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթութիւն: Ժողովրդական լուսաւորութեան գործը պիտի հիմնուած լինի աշխատանքի հիմունքների վրա: Կառավարութիւնը առանձնապէս պիտի զարկ տայ պրոֆեսիոնալ կրթութեան:

Արտաքին քաղաքականութեան մէջ կառավարութիւնը հաւատարիմ պիտի մնայ նոյն քաղաքականութեան, որին յարած է եղել մինչեւ այժմ հայ ժողովուրդը, եւ այն հաւատին, որ նա տածում է դէպի դաշնակից պետութիւնները. միաժամանակ կառավարութիւնը պիտի ջանայ ստեղծել բա-

---

**) Ս. Արարատեանը նախարար նշանակուելով՝ հրաժարուել էր, իսկ Լ. Շանթը դեռ չէր հկել Եւրոպայից:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳ. ՊԱՏՄԻՒԹԵԱՆ
ԵՒ Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵԻ



ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ



Ա. ՆԱՏՍԵՆ



ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ



ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

բնակամական փոխյարաբերութիւններ հարեւան պետութիւնների հետ եւ փոխադարձ համաձայնութեամբ կարգաւորել Հայաստանի սահմանների հարցը, որ հանդիսանում է միակ պատճառը շարունակական զժգոհութեան եւ թիւրիմացութեան: Ոչ մի դէպքում սահմանային վէճերը Հայաստանի եւ հարեւան պետութիւնների միջեւ չպիտի լուծուեն զէնքի ուժով:

«Կառավարութիւնը մեր երկրի ներսում ձգտում է Հայաստանի Հանրապետութեան դեմոկրատական նպատակներին, աշխատելով իրականացնել բոլոր քաղաքական ազատութիւնները. այդ բանի համար կառավարութիւնը ենթարկում է հիմնական բարենորոգութիւնների վարչական ամբողջ կազմը՝ ձգտելով ազգայնացնել այն, մարդկանց լեզուն գործածութեան մէջ մըտցընելով, պիտի փութացնի դեմստուօն (դաւառային ինքնավարութիւնը) եւ քաղաքային ինքնավարութիւնները:

«Մեր երիտասարդ պետութեան կազմակերպման համար ազատութիւն պիտի տայ լայն հասարակական քաղաքական խաւերին, պիտի կիրառուի ազգային կուլտուրական լայն ինքնավարութեան սկզբունքը օտարացեղ ժողովուրդների վերաբերմամբ, առանց որի մեր երկիրը դոյութիւն ունենալ չէ կարող:

«Հողային հարցի վերաբերեալ՝ կառավարութիւնը պիտի իրականացնի կալուածատիրական, եկեղեցապատկան, վանքապատկան եւ մասնաւոր գինեդործական բոլոր հողերի ազգայնացումը, պիտի բաժանի այդ հողերը սակաւահող գիւղացիութեան ըստ աշխատանքի նորմայի եւ կարիքի:

Ժողովրդի տնտեսութիւնը բարձրացնելու համար կառավարութիւնը պիտի աշխատի զարկ տալ արդիւնաբերական ուժերի զարգացմանը՝ ցոյց տալով պետական աջակցութիւն քաղաքային ինքնավարութեան հիմնարկութիւններին եւ նրանց միութիւններին՝ իրենց քաղաքային եւ տնտեսական ձեռնարկութիւնների մէջ:

«Կառավարութիւնը ամէն կերպ պիտի աջակցի կօօպերատիւներին, ամէն տեսակի միութիւններին՝ այս ձեւով խրախուսելով ժողովրդական նախաձեռնութիւնը գիւղատնտեսութեան եւ տնայնագործական արդիւնաբերական վարկի չրջանում:

«Արդարադատութեան դործը ամուր հիմքի վրա դնելու համար կառավարութիւնը մտցնում է դատարաններում ընտրական սկզբունքը: Դատավարութիւնը պէտք է հանրամատչելի լինի դատական ծախսերի տեսակէտից: Գործավարութիւնը դատարանում պէտք է տարւի պետական լեզուով, դատավարութիւնը՝ մայրենի:

«Երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու համար պիտի յենւի որոշ հաստակի պարտադիր զինուորական ծառայութեան վրա: Կազմակերպում է ժողովրդական միլիցիա մշտական զօրքի փոխարէն: Զօրքը պիտի ազգայնացւի: Միջոցներ պիտի ձեռք առնւեն զօրանոցների բարելաւման եւ զինուորների կեանքի առողջապահական պայմանների կարգաւորման վերաբերեալ:

«Կառավարութիւնը ամէն միջոցներ ձեռք պիտի առնի Հայաստանի

սահմաններից դուրս մնացած հայերի վերադարձը իրենց հայրենիքը փութացնել՝ նախօրօք երկրի ներսում ապահովելով նրանց գոյութիւնը եւ ըստեղծելով յարմարութիւններ նրանց համար:

«Առանձնապէս կառավարութիւնը պիտի ջանայ մինչեւ ձմեռ դադթեցնել նախկին տաճկահայ գաղթականներին իրենց հայրենիքը, հակառակ դէպքում ամէն կերպ պիտի ապահովէ նրանց:

«Վերջապէս, հերթական հարց է դառնում վերականգնումը Հայաստանի աւերակների: Այս գործի մէջ պիտի երեւան գայ դաշնակիցների աքտիւ գործունէութիւնը:

«Առաջադրելով ապագայ գործունէութեան այս ծրագիրը, որի հիմունքներն ու կէտերը ես այստեղ ընդգծեցի, նոր կառավարութիւնը յայտարարում է, որ նա յամառօրէն պիտի ձգտի իրականացնել այն՝ հիմնուելով օրինականութեան վրա»:

Յաջորդ նիստերում, այս յայտարարութիւնը առնուեց քննութեան եւ ընդունուեց հակառակ սոց.—յեղ. եւ անկուսակցական դիւղացիական պատգամաւորների քէֆերի: Ընդդիմադիրների կողմից Ա. Յովնդկարեանը երկար ու մանրակրկիտ վերլուծութեան ենթարկեց կառավարութեան յայտարարութիւնը՝ կանգ առնելով Հայաստանի պետականութեան թերի կողմերի վրա:

Ապա, Ներկրդարանն ու կառավարութիւնն անցան իրենց հերթական աշխատանքներին:

⁂

Ազգ. Պատւիրակութեան առաքելութիւնը Երեւան հասաւ հոկտեմբերի կէսերին: Նա բաղկացած էր Վ. Թէքէեանից (նախագահ) եւ դր. Ն. Տէր Ստեփանեանից ու Սամ. Ճարութիւնեանից: Այս վերջինի մասնակցութիւնը Ազգ. Պատւիրակութեան առաքելութեան՝ զարմանք ու տհաճութիւն առաջ բերեց Երեւանում:

Քանի որ նոյն օրերին Երեւանում գումարւած էր Հ. Յ. Դ. 9րդ Ընդհ. ժողովը, Ազգ. Պատւիրակութեան հետ բանակցելու հարցն էլ յանձնուեց նրա քննութեան: Ընդհ. ժողովը որոշեց, որ կառավարութիւնը սկսէ բանակցութիւնները, եւ մշակեց այն պայմանները, որոնք հիմք պիտի ծառայէին, կնքելիք համաձայնութեան: Որից յետոյ կառավարութիւնը նշանակեց իր պատւիրակութիւնը — Ս. Վրացեան (նախագահ), Շ. Միքաէլեան եւ Մ. Ճարութիւնեան, եւ հոկտ. 29–ին սկսեցին բանակցութիւնները, որոնք տեւեցին մինչեւ նոյեմբ. 16: 9 նիստեր գումարեցին, եղան եւ անպաշտօն հանդիպումներ: Կողմերը չատ ջանք թափեցին՝ գտնելու համար համաձայնութեան մի եղր, բայց յաջողութիւն չունեցան*):

---

*) Բանակցութիւնների մանրամասնութիւնները հրատարակւած են առանձին գրքոյկով՝ Ս. Վրացեան. «Բանակցութիւններ Ազգ. Պատւիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ», 1920, Պոսթըն: Բանակցութեանց նիստերի արձանագրութիւնները «Հայ-հայկական բանակցութիւններ» վերնագրով, հրատարակւած են «Վէմ» երկամսեայ հանդիսում:

Բանակցութիւնների հիմք կազմեց Վ. Թէքէեանի հոկտ. 21-ին Հայաստանի վարչապետին ներկայացրած հետեւեալ գրութիւնը.

«Մրագիր Հայ Ազգային Պատւիրակութեան ամբողջական Հայաստանի վարչական առժամեայ կազմի մասին. — *Անդրկովկասեան Հայաստանի մէջ ներկայիս իրականապէս* (de facto) *դոյութիւն ունեցող Հայ Հանրապետական կառավարութեան եւ նախկին Օսմանեան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային Պատւիրակութեան միջեւ կը կնքւի համաձայնութիւն մը հետեւեալ հիմունքներուն վրա.*

«Ա. Կառավարութիւն.— 1. *Կը կազմւի առժամեայ կառավարութիւն մը, որու նախարարական խորհուրդը կը բաղկանայ 9–13 անդամէ:*

«2. *Նախարարական խորհուրդին մէջ կը մտնեն 4–6 արեւելահայ եւ 4–6 արեւմտահայ նախարարներ, իւրաքանչիւր կողմին համար հաւասար թիւով. պատերազմական նախարարի անձնաւորութիւնը այս նկատողութենէն դուրս կը մնայ:*

«3. *Նախարարական խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմւի՝ առաջին կէսը դաշնակցական եւ երկրորդ կէսը ժողովրդական եւ ռամկավար անդամներէն: Պատերազմական նախարարը անկուսակցական է եւ կանանւի երկու կողմերու համաձայնութիւնով:*

«4. *Վարչապետը կըլլայ արեւմտահայ մը, որ կը ներկայացւի Ազգ. Պատւիրակութեան կողմէ. Հանրապետութեան ներկայ Մորհրդարանը կը վաւերացնէ անոր Վարչապետի պաշտօնը:*

«5. *Ըստ որում վարչապետը Փարիզ կը մնայ իբրեւ նախագահ Խաղաղութեան Համաժողովին մեր Հայկական Պատւիրակութեան* (տե՛ս յետագայ գլուխը), *նախարարական խորհուրդին մէջ իր անձնաւորութիւնը հաշւի կառնւի՝ թէ, հաւասածի եւ հոսանքի տեսակէտներէն:*

«6. *Վարչապետին Փարիզ մնալու պատճառաւ Հանրապետութեան Մորհրդարանը կընտրէ դեր-վարչապետ մը* (vice-president), *ով եւ ինչ հաւասածէ ու հոսանքէ որ ինքը ուզէ: Դեր-վարչապետին ներկայացուցած հաւասածն ու հոսանքը հաշւի կառնւին նախարարական խորհուրդի կէս առ կէսի կազմին մէջ:*

«7. *Նախարարական միւս թղթապանակները կը բաշխւին կողմերու փոխադարձ համաձայնութեամբը: Անոնց յատկացումը կը մտնէ կնքւելիք վերջնական համաձայնագրի մէջ:*

«8. *Եթէ ոեւէ պատճառով նախարար մը պակսի, իր յաջորդը կը նշանակւի միեւնոյն հաւասածէն եւ հոսանքէն եւ միեւնոյն եղանակով, որով նշանակւած էր պակսող անդամը:*

«9. *Նախարարական խորհուրդի անդամներուն մէջ Դաշնակցական հոսանքի պատկանող կէս մասը կը նշանակւի ներկայ Մորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող նոյն կուսակցութեան բաժինէն* (fraction), *կամ ուրիշ ոեւէ պատասխանատու մարմինէ մը՝ թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ դաշնակցական նախարարներու վերաբերմամբ. գալով միւս կէսը կազմող մասին՝ անոնցմէ արեւմտահայ նախարարները կը ներկայացւին Ազգա-*

յին Պատւիրակութեան կողմէ եւ արեւելահայ նախարարները՝ Ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

«10· Նախարարական խորհուրդը արտաքին թէ ներքին քաղաքականութեան վերաբերեալ եւ բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումներ տալու ժամանակ — ինչպէս պատերազմի յայտարարութիւն եւ հաշտութեան կնքում, խորհրդարանական ընտրութիւններ, ընկերային բարենորոգումներ եւայլն — կը փնտռէ բոլոր անդամներու թիւին վրա 7–ի, եթէ 9 է այդ թիւը, եւ 10–ի, եթէ 13 է, մեծամասնութիւնը:

«11· Եթէ նախարարական խորհուրդը պէտք ունենայ հրահանգներ տալու Պատւիրակութեան, այդ հրահանգները քւէարկւած կը համարւին միայն այն ժամանակ, երբ նախարարներու երկու–երրորդը միաբանած են որոշման վրա: Այս պարագային կը դիմւի նաեւ արտասահման կամ այլուր բացակայ գտնւող վարչապետին եւ ուրիշ նախարարներու ձայնին:

«Բ· Պատւիրակութիւն·— 1· Ամբողջական Հայաստանի միացեալ կառավարութիւնը կունենայ միակ Պատւիրակութիւն մը, որ կը ներկայացնէ հայ ազգը Խաղաղութեան Համաժողովին մօտ:

«2· Պատւիրակութիւնը կը բաղկանայ 7 անդամէ, որոնց 4–ը արեւմըտահայ եւ 3–ը արեւելահայ:

«3· Պատւիրակութեան նախագահն է Հանրապետութեան կառավարութեան վարչապետը:

«4· Պատւիրակութեան կազմին մէջ՝ մէկ կողմէ Դաշնակցական կուսակցութիւնը եւ միւս կողմէ ոչ–դաշնակցականները ներկայացւած կըլլան հաւասար թւով, այսինքն 3 առ 3· նախագահ վարչապետը, իբրեւ անկուսակցական դուրս կը մնայ ուժերու այս յարաբերութենէն:

«5· Պատւիրակութիւնը, նման կառավարութեան, կը մնայ անփոփոխելի մինչեւ Ամբողջական Հայաստանի Խորհրդարանի դումարումը: Անդամներու պակասման պարագային՝ անոնց յաջորդները կորոշւին նոյն հատւածէն եւ հոսանքէն եւ նոյն եղանակով, ինչպէս եղած էր պակսած անգամին համար:

«6· Պատւիրակութեան արեւմտահայ անդամները կառնւին Արեւմտահայ Ազգային Համագումարին կողմէ ընտրւած ներկայ Ազգային Պատւիրակութեան անդամներու մէջէն՝ պահելով հոն ներկայացւած հոսանքներուն համեմատութիւնը· այն է՝ 2 ոչ–դաշնակցական եւ մի դաշնակցական· իսկ փոխարէն 3 արեւելահայ անդամները կորոշւին Հանրապետութեան ներկայ Խորհրդարանի կողմէ· այսպէս՝ 2 դաշնակցական եւ մի ժողովրդական·— սոյն վերջինը կընտրւի եւ ցոյց կը տրւի Ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

«7· Պատւիրակութիւնը լայն իրաւասութիւն կունենայ բանակցելու Համաձայնական Պետութեանց եւ Խաղաղութեան Համաժողովին հետ եւ հետապնդելու՝ Համաժողովին ներկայացւած Բիչատակագրին սահմաններուն մէջ հայկական դատի լուծումը:

«8· Պատւիրակութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյի-

չեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ կառավարութիւնը պէտք ղգայ նոյն պետութեանց մօտ քաղաքական առաքելութիւններ ղրկելու, նախապէս կը ստանայ այդ մասին Պատիւրակութեան հաւանութիւնը:

«9. Պատիւրակութիւնը, նման կառավարութեան, իր գործունէութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանին:

«Գ. Խորհրդարան. — 1. Հանրապետութեան ներկայ Ժողովրդարանը սոյն համաձայնագիրը վաւերացնելէ ետք, երբ անոր հիման վրա կազմուած նոր առժամանակեայ կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինք լուծուած կը հռչակէ՝ տալով իր օրէնդրական իրաւունքները առժամանակեայ կառավարութեան եւ պարտք դնելով անոր վրա չուտով մշակել ընտրութեանց հրահանգը եւ ընտրել տալ Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանը:

«2. Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանը, որը իսկապէս նախաԺողովրդարան (Pré-Parlement) մըն է, կը գործէ մինչեւ Սահմանադիր ժողովի (Constituante) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն եւ հայկական հողամասերու գրաւումէն ետք:

«3. Ժողովրդարանը կը բաղկանայ ընդամէնը 80 անդամէ, որոնց կէսը կընտրեն արեւմտահայերը եւ միւս կէսը՝ Արեւելեան Հայաստանի ժողովուրդը:

«4. Նկատելով, որ Թիւրքահայաստանը գրաւուած չէ տակաւին, եւ արեւմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արեւմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ եւ այլուր գտնուող բոլոր արեւմտահայերու կողմէ, ուր որ հնար է: Արտասահմանի մէջ գտնուող արեւմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարուի կանխաւ, Հայաստանի քաղաքացիներ դառնալու:

«5. Ժողովրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ, երբ ընտրուած արեւմտահայ ներկայացուցիչներու առնուազն երեք-չորրորդը եւ Արեւելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքուած ըլլան:

«Դ. Վաւերացում եւ հրապարակում ներկայ համաձայնագրի.— Ներկայ համաձայնագիրը այժմու Ժողովրդարանին կողմէ վաւերացուելէ եւ երկու կողմէ լիազօրներու առորագրութիւնը ստանալէ ետք՝ կը ստանայ օրէնքի ոյժ եւ կը հրատարակուի:

«Հրատարակութիւնը կը կատարուի բանաձեւով մը, որուն մէջ կը նշուի թէ նախկին Թիւրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարութիւնը եւ անոր միացած է Անդրկովկասի մէջ իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Արեւելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, թէ երեւանը ընդունուած է իբրեւ առժամեայ մայրաքաղաք եւ թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թիւրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մին»:

Այս ծրագիրը տարօրինակ էր թէ՛ իր ոգիով եւ թէ՛ մանաւանդ էութեամբ. նրա ամէն մի տողից անսահման արհամարհանք էր բուրում դէպի

«իրականապէս դոյութիւն ունեցող Հայ Հանրապետութիւնն» ու նրա վարիչները, եւ, ընդհակառակը, ամէն բան տարուում–կենտրոնացուում էր Փարիզի մի խումբ ազգայինների ձեռքը: Ըստ Վ. Թէքէեանի ծրագրի, Ցողոս փաշա Նուպարը, որ լինելու էր միաժամանակ ե՛ւ վարչապետ, ե՛ւ Պատւիրակութեան նախագահ՝ օժտուած արտակարգ լիազօրութիւններով՝ Փարիզից պիտի վարէր Հայաստանի քաղաքական բախտը, իսկ Երեւանում նստած նախարարները պիտի կազմէին տեղական կառավարութիւն, մի տեսակ «ազգային գաւառական խորհուրդ»:

Ցողոս Նուպարի պայմանները մանրակրկիտ քննութեան առնուեցին մի շարք նիստերում, եւ նոյ. 4–ին կառավարական պատւիրակութիւնը տուեց հետեւեալ պատճառաբանուած պատասխանը.—

«1. Փարիզի Պատւիրակութիւնը կազմել առանց հատուածական եւ կուսակցական խտրութեան. ցանկալի է, որ արեւմտահայերը այնտեղ մեծամասնութիւն լինեն, իսկ կուսակցական տեսակէտից Դաշնակցութիւնը կարող է լինել փոքրամասնութիւն: Այսպէս, եթէ Պատւիրակութիւնը կազմուած է երեք անդամից, Դաշնակցութիւնը կը տայ մէկ անդամ, իսկ եթէ հինգից՝ երկու անդամ: Երկու դէպքումն էլ Պատւիրակութեան մէկ անդամը պիտի լինի անկուսակցական: Համաձայն ենք, որ պրն. Ցողոս Նուպարը լինի Միացեալ Պատւիրակութեան նախագահ, սակայն, Պատւիրակութիւնը պիտի գործէ Հայաստանի Հանրապետական կառավարութեան հրահանգներով:

«2. Կառավարութեան կազմի մէջ Դաշնակցութիւնը պիտի ունենայ կէսից մէկ անդամ աւելի: Պատւիրակութեան նախագահը եւ վարչապետը պիտի լինեն տարբեր անձեր. թէ վարչապետը եւ թէ բոլոր նախարարները պէտք է մնան երկրում եւ մեր երկրում գործեն: Անընդունելի է Ազգային Պատւիրակութեան ներկայացուցիչների առաջարկը, որ Ցողոս Նուպարին տրւի վարչապետութիւն, թէկուզ իբրեւ լոկ տիտղոս:

«3. Ներկայ Պարլամենտի լուծման մասին խօսք լինել չի կարող, նա պէտք է շարունակէ իր գործունէութիւնը: Անհնարին է նաեւ նրան զրկել մինչեւ Հանրապետութեան առաջին բիւդջէի քննութեան աւարտումը: Համամիտ ենք, եւ դա մեր փափաքն է, որ Պարլամենտի արեւմտահայ անդամների թիւը հաւասարեցւի արեւելահայերին: Կրճատել պատգամաւորների այժմեան թիւը իրաւական հիմունքներով հնարաւոր չէ: Արեւմտահայ նոր պատգամաւորների մուտքը Պարլամենտի մէջ պէտք է կատարել լրացուցիչ ընտրութեամբ: Մենք կարծում ենք, որ ընտրութիւններ պիտի նշանակուեն Հայաստանի այն մասերում, ուր դեռեւս ընտրութիւն չի եղել, ինչպէս, օրինակ, Կարսի շրջանը, Կիլիկիա, եւ արտասահմանեան գաղութներում, այսինքն՝ Պոլիս, Բալկաններ, Եգիպտոս, Ամերիկա, Սեւ Ծովի ափերը եւ այլ տեղեր, ուր հնարաւոր է: Ընտրութիւնները պիտի լինեն Հայաստանի օրէնքներով, որոնք պէտք է յարմարեցուեն տեղական պայմաններին: Արեւմտահայերի վերաբերմամբ կարելի է ընդունել, որ մի պատգամաւոր ընտրւի ոչ թէ 20,000–ից, ինչպէս եղել է Հայաստանի Պարլամենտի ընտրութիւնը,

այլ աւելի պակաս ազդարարակութիւնից: Նկատելով Պարլամենտի անդամների այժմեան կազմը հաւասարական տեսակէտից, անհրաժեշտ կը լինի ընտրել եւս 51 պատգամաւոր, որով հաւասարները թիւով կը հաւասարուեն իրար, իսկ Պարլամենտի անդամների ընդհանուր թիւը կը դառնայ 131:

«4· Գալով Ազգային Պատւիրակութեան վերջին առաջարկին, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն միացած յայտարարի անկախ թիւրքայ Հայաստանին, սկզբունքային որեւէ տարակութիւն չունենք, սակայն, չենք տեսնում այն ձեւը, որ քաղաքական ստեղծուած պայմաններում կարող էր հնարաւոր դարձնել այդ ակտը: Ընդհակառակը, քաղաքական դէպքերի դասաւորումով, Հայաստանի ներկայ Հանրապետութիւնը դարձել է յենարանը, որի վրա կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի չարունակէ Հայաստանի ամբողջացման գործը: Մենք չենք կարողանում երեւակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Ռուսահայաստանի»:

Ինչպէս տեսնում ենք, ո՛չ միայն ոգւով, այլ հիմնական մտածելակերպով էլ տարբեր բեւեռներ էին ներկայացնում այս երկու «ծրագիր»-ները. մէկը ձգտում էր Հայաստանը փոխադրել փարիզ դէպի գաղութահայութիւնը, միւսը կառչել էր մայրենի հողին ու չէր ուզում պոկուել նրանից: Մի մտածելակերպ, որ տիրական մնաց մինչեւ վերջ:

Նոր բանակցութիւններից, մի շարք պաշտօնական եւ անպաշտօն նիստերից ու փոխադարձ դիմումներից յետոյ, կողմերն, ի վերջոյ, յանգեցին հետեւեալ եզրակացութեան: Հանրապետական պատւիրակութիւնը, իրրեւ վերջին պայման, ընդունում էր, որ

Ա· Ներկայ Պարլամենտը պետական բիւդջէն քննելուց եւ վաւերացնելուց յետոյ 1–2 ամսով արձակուրդ կը ստանայ:

Բ· Անմիջապէս կը ձեռնարկւի լրացուցիչ ընտրութիւնների· կընտրուեն 51 արեւմտահայ պատգամաւորներ եւս:

Գ· Ընտրութիւնները կը կատարուեն Հայաստանի ընտրական օրէնքներով՝ տեղական պայմաններին յարմարցնելով:

Դ· Ընտրական գործի կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը կը ստանձնէ Գօղաս Նուպարի Պատւիրակութիւնը:

Ե· Միացեալ կառավարութիւնը կը կազմւի անմիջապէս, բայց եթէ պահանջվեն, կարելի է կազմել եւ բիւդջէի քննութիւնը վերջացնելու ու Պարլամենտի դադար ստանալու ժամանակ:

Զ· Կառավարութիւնը կը կազմւի 9 նախարարներից — 5 դաշնակցական, 4 ոչ–դաշնակցական: Վարչապետը դաշնակցական: Համաձայն ենք, որ արտաքին գործոց նախարարը լինի Գօղաս Նուպարը:

Է· Երաշխաւորում ենք, որ միացեալ կառավարութիւնը կը մնայ մինչեւ լրացած Պարլամենտի գոյութիւն ունենալը:

Ը· Համաձայն ենք, որ Միացեալ Պատւիրակութեան նախագահը լինի Գօղաս Նուպարը: Համաձայն ենք, որ Միացեալ Պատւիրակութեան մէջ դաշնակցականները լինեն փոքրամասնութիւն:

Բ. Համաձայնութեան ակտը կը յայտարարենք այն մտքով, որ Ճահկահայաստանն ու Ռուսահայաստանը միացել են միմեանց հետ:

Գօղտս Նուպարի առաքելութեան վերջնական պայմանները.

Ա. Միացեալ Պառլիրակութիւն Գօղտս Նուպարի նախագահութեամբ:

Բ. Միացեալ կառավարութիւն 9 կամ 11 նախարարներից, որոնցից պատերազմական նախարարը չէզոք, իսկ մնացեալները՝ կէս առ կէս — 4 արեւելահայ, 4 արեւմտահայ, 4 դաշնակցական ու 4 ոչ-դաշնակցական: Սակայն, «մենք կրնանք նաեւ ընդունիլ 10 անձէ կազմուած կառավարութիւն մը դաշնակցական մեծամասնութեամբ» — 5 դաշնակցական, 4 ոչ-դաշնակցական եւ պատերազմական նախարարը չէզոք՝ «պայմանաւ, սակայն, որ այդ կառավարութիւնը ամէն բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումները — արտաքին քաղաքականութեան եւ ընկերային բարենորոգումներու վերաբերեալ որոշումները, ինչպէս եւ պատերազմի տրեւելիք հրահանգները — կայացնէ երկու-երրորդի մեծամասնութեամբ, կամ լաւ եւս՝ ձայնով տասնի վրայ»:

Գ. Գօղտս Նուպարին տալ արտաքին գործոց նախարարի պաշտօն կամ Հանրապետութեան դեսպանի ներկայացուցչի դիրք:

Դ. Ներկայ Մորհրդարանը պէտք է արձակի մինչեւ արեւմտահայ պատգամաւորների ընտրութիւնը եւ նրանց երեք քառորդի ներեան հասնելը: կարելի է արձակուրդ տալ բիւդջէի քննութիւնից յետոյ, բայց կօալիցիոն կառավարութիւնն էլ գործի պիտի սկսէ Մորհրդարանի արձակուրդից յետոյ:

Ե. Արեւմտահայ պատգամաւորների ընտրութեան նախաձեռնութեան եւ ընտրական օրէնքի որոշման իրաւունքը պատկանում է Ազգ. Պառլիրակութեան եւ կամ կօալիցիոն կառավարութեան:

Զ. Ներկայ Մորհրդարանը արձակուրդի ընթացքին կարող է վերստին նիստ գումարել բացառիկ խնդիրների առթիւ՝ պայմանաւ, որ նշանակուած հարցից զատ ուրիշ որեւ է բանով չզբաղուի:

Է. Համաձայնութիւնը կը յայտարարուի այն մտքով, որ Ռուսահայաստանն է միացել Թիւրքահայաստանին:

Նկէ ուշի ուշով քննենք երկու կողմի տեսակէտները, կը տեսնենք, որ անհամաձայնութեան գլխաւոր առարկան մնացել էր Մորհրդարանի արձակուրդի ժամանակը. երեւանցիք համաձայնւում էին Մորհրդարանին տալ ժամանակաւոր արձակուրդ, փարիզցիք պնդում էին, որ արձակուրդը լինի անորոշ ժամանակով: Եւ հակառակ երեւանցիների ծայրահեղ հաշտասիրութեան եւ զիջումների, Փարիզը մնաց անյողդողդ: Ց-րդ նիստում Վ. Թէքէեանը յայտարարեց. «Եզրակացնելով մեր բոլոր առաջած պատասխանները դրուած առաջարկներուն՝ ես պէտք է հաստատեմ, որ համաձայնութեան ո՛չ մէկ կէտ չկայ վերջին առաջարկներուն վրա, եւ կը մնայ, որ մենք դրաւոր կերպով արձանագրենք այդ: Ես այլեւս ոեւէ հնարաւորութիւն չեմ տեսնար միութիւն կայացնելու»:

Պարզ էր եզրակացութիւնը. բանակցութիւնները խզում էին: Եւ նոյ. 6-ին, վերջին նիստում, «դրաւոր կերպով արձանագրուեց» խզումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՆ



Ա· ՍԱՀԱԿԵԱՆ
(Նախագահ)



Լ· ՇԱՆԹ
(Փոխ նախագահ)



Ս· ՏԻԳՐԱՆԵԱՆ
(Փոխ նախագահ)



Յ· ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ
(Ազգ քարտուղար)

Ջուտ պատմական տեսակէտից մօտենալով խնդրին՝ պէտք է ասել, որ Հայաստանի կառավարութիւնն ու ղեկավար շրջանները իրենց մեծամասնութեան մէջ անկեղծօրէն ուզում էին համաձայնութեան գալ Ազգ. Պատւիրակութեան հետ: Մասնաւորապէս հանրապետական պատւիրակութիւնը բոլոր հնարաւոր եւ անհնար միջոցները ի գործ դրեց՝ համոզելու համար Հ. Ց. Դ. Ընդհ. Ժողովին, Խորհրդարանի ու կառավարութեան անդամներին՝ անելու մի շարք կարեւոր զիջումներ, որոնց մասին, ուրիշ պայմաններում, խօսելն իսկ անմտութիւն կը լինէր: Բայց Պօղոս Նուպարի մարդիկ չըմբռնեցին վայրկեանի լրջութիւնը եւ մասամբ էլ զոհ դնացին Երեւանի ընդդիմադիր շրջանների սխալ ներշնչումներին: Մի քանի տարի յետոյ, երբ իշխանութեան գլուխ ոչ թէ դաշնակցական ընկերվարականներն էին, այլ Լենինի աշակերտները, նրանք փորձեցին Երեւան մտնել շատ աւելի համեստ պայմաններով — «լորձնաշուրթն դեռնաքարշութեամբ», ինչպէս անողոք կերպով բնորոշեց նոյն ինքն Վ. Թէքէեանը — բայց նրանց երեսին նայող չեղաւ:

Հակառակ Վ. Թէքէեանի խզումի յայտարարութեան ու մեկնումին, վարչապետ Ա. Խատիսեանը դեկտ. 9-ին Պօղոս Նուպարին ուղարկեց մի ընդարձակ նամակ՝ պարզելով բանակցութիւնների ընթացքն ու վախճանը եւ աշխատելով համոզել, որ Ազգ. Պատւիրակութիւնն ընդունէ կառավարութեան պայմանները: «Ես ուզում եմ հաւատալ, գրում էր Խատիսեանը, որ Ազգ. Պատւիրակութեան առաքելութեան մեկնումը Երեւանից դեռ եւս բանակցութիւնների վերջնական խզումը չի նշանակում: Սիրում եմ յուսալ, որ հարցի մանրամասնութիւններին ծանօթանալուց յետոյ, դուք բաւարար կը համարէք մեր կողմից առաջարկուած պայմանները եւ գործնական քայլ կառնէք երկուստեք ցանկալի համաձայնութիւնն իրականութիւն դարձնելու համար: Եւ ինչ էլ լինի ձեր վճիռը, դուք միջոցներ ձեռք կառնէք ձեր հեղինակաւոր ազդեցութեամբ թոյլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որ արտաքին աշխարհում այնպիսի տպաւորութիւն կը թողնէ, որ, իբր թէ, մեր մէջ գոյութիւն ունի էական անհամերաշխութիւն ու պայքար ազգային-քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ: Ընդհակառակը, մօտիկ ծանօթութիւնը ձեր ներկայացուցիչների հետ ցոյց տուեց, որ Հայաստանի քաղաքական այսօրուայ ճակատագրին վերաբերուող գլխաւոր հարցերի նկատմամբ մեր մէջ հայեացքների նոյնութիւն է տիրում եւ նկատուող անհամաձայնութիւնը, աւելի շուտ, արդիւնք է փոխադարձ անվստահութեան, ինչ որ դժուար չպիտի լինի վերացնել դործի ընթացքում»:

Այսպիսով, Վ. Թէքէեանի «խզումի» յայտարարութեան Հայաստանի կառավարութիւնը պատասխանում էր «դաղար»-ով եւ առաջարկում բանակցութիւնները շարունակել: Եւ այս Խատիսեանի անհատական կարծիքը չէր միայն. այդպէս էր մտածում եւ բանակցող պատւիրակութիւնը, որի նախագահի ձեռքով էր ղրւած Խատիսեանի ուղարկած նամակը: Այդպէս էին մտածում եւ Խորհրդարանի ու կառավարութեան ղեկավար անդամները:

Երեւանում այն յոյսն ունէին, որ հէնց որ Թէքէեանի առաքելութիւ-

նը վերադառնար Փարիզ ու զեկուցանէր Հայաստանի դէպքերի ու տրամադրութիւնների մասին, Ազգ. Պատուիրակութիւնը կը փոխէր իր անհաշտ ընթացքը եւ կը շտապէր ընդունել կառավարութեան պայմանները: Դէպքերը չարդարացրին այս յոյսերը: Պօղոս Նուպարի առաքեալները Պոլիս հասան թէ չէ՝ սկսուեց մի կրքոտ ու թունաւոր պայքար Երեւանի բանակցութիւնների շուրջ, որ լայն ալիքներով տարածուեց բովանդակ գաղութահայութեան մէջ: Ազգ. Պատուիրակութիւնն էլ տարուեց այդ թունաւոր մթնոլորտով, եւ Հայաստանի կառավարութեան պարզած ձեռքը մնաց կախուած օդի մէջ:

Հետզհետէ, սակայն, դէպքերը սկսեցին դասաւորուել յօգուտ «Արարատեան Հանրապետութեան». յուն. 19-ին Գերագոյն Խորհուրդը ճանաչեց Հայաստանի կառավարութեան դէ ֆակտօ գոյութիւնը. Երեւանը սկսեց դառնալ քաղաքական հետաքրքրութեան առարկայ: Աւելի եւ աւելի սկսեց ակնյայտնի դառնալ, որ թիւրքահայկական խնդիրը կարող է լուծուել միայն որոշ կապակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան հետ: Գուցէ կային եւ ուրիշ պատճառներ, որոնք առաջ բերին յանկարծական փոփոխութիւն Ազգ. Պատուիրակութեան տրամադրութեան մէջ. փետր. 18-ին, ուրեմն, Երեւանի բանակցութիւնների վերջանալուց երեք ամիս յետոյ, Հայաստանի կառավարութիւնը Պօղոս Նուպարից ստացաւ մի հեռագիր, որով փաշան յայտնում էր, թէ ինքը ընդունում է այն պայմանները, որ Վ. Թէքէեանը մերժել էր: Միեւնոյն հեռագրում Պօղոս Նուպարը առաջարկում էր անյապաղ միացնել Փարիզի Պատուիրակութիւնները եւ իմացնում էր, թէ ինքը ներկայացուցիչ է նշանակել Ս. Յարութիւնեանին ու Ա. Մխիթարեանին, որոնք Հանրապետութեան կառավարութեան հետ պիտի կազմէին միացեալ կառավարութիւն:

Երեւանում հաշտուել էին արդէն այն մտքի հետ, որ Ազգ. Պատուիրակութիւնը մերժել է կառավարութեան պայմանները: Հիմա ի՞նչ պատահեց, որ, յանկարծ, ընդունում է: Եւ եթէ արեւմտահայ ու արեւելահայ խառն կառավարութիւն պիտի կազմուէր, ինչո՞ւ են Ս. Յարութիւնեանն ու Ա. Մխիթարեանը — երկուսն էլ ռուսահայ ծանօթ հակադաշնակցականներ ու կառավարութեան դէմ աղմկայոյզ պայքար մղողներ: Պարզ էր, որ մէջտեղը ինչ որ անշիտակ խաղ էր խաղացւում, բայց թէ ի՞նչ — Երեւանում չէին հասկանում: Միակ բացատրութիւնը այն էր, որ Հայաստանի Հանրապետութեան իրական ճանաչումից յետոյ Պօղոս Նուպարի քաղաքական բաժնեթղթերը սկսել էին ընկնել, եւ նա շտապում էր ա՛յդ ձեւով փրկել դրութիւնը:

Մարտ 25-ին տեղի ունեցաւ հանդիպում Ս. Յարութիւնեանի եւ հանրապետական պատուիրակութեան նախագահ Ս. Վրացեանի միջեւ վարչապետ Ա. Խատիսեանի ներկայութեամբ: Ս. Վրացեանը բացատրեց, որ հոկտեմբերից ի վեր կացութիւնը մեծ չափով փոխուել է. նախ՝ հայկական անկախութեան ճանաչման փաստով նոր կացութիւն է ստեղծուել արտաքին ճակատում. երկրորդ՝ Ազգ. Պատուիրակութեան յարուցած պայքարը այնքա՛ն է յուզել կրքերը, որ Հայաստանում կօալիցիայի գաղափարը բոլորովին վարկաբեկուել է: «Պէտք է ցաւել, որ հոկտեմբերին սկսուած բանակցութիւն-

ների պատասխանը միայն փետրուարին տուեց, մինչդեռ Ազգ. Պատւիրակութիւնն ամէն հնարաւորութիւն ունէր աւելի առաջ ասելու իր վերջնական խօսքը: Ներկայ պայմաններն աւելի քան երբեք պահանջում են, որ Հայաստանն ունենայ ուժեղ եւ ժողովրդական վատահութիւնը վայելող կառավարութիւն: Այն մթնոլորտը, որ ստեղծել են Ազգային Պատւիրակութեան կուսակիցները, այն, եթէ ոչ թշնամական, առնւազն պաղ վերաբերումը, որ նրանք ցոյց են տալիս դէպի Հանրապետութիւնը, աւելի եւս դժւարացնում է հոկտեմբերին առաջարկւած կօալիցիոն ձեւով հեղինակաւոր կառավարութեան կազմակերպումը. հոկտեմբերից ի վեր կացութիւնը մի չարք տեսակէտներից փոխւել է»: Եւ առաջարկում էր սպասել մինչեւ Հ. Ց. Դաշնակցութեան մօտերս գումարելիք խորհրդաժողովը, որը քննելու էր եւ այս հարցը:

Ս. Ցարութիւնեանը, ընդհակառակը, այդ բոլոր մտահոգութիւնները համարում էր հարցից խուսափելու մի միջոց: Նրա համար դրութիւնն ու անելիքը պարզ էր. «Այժմ մեզ հարկաւոր է փոխադարձ համաձայնութեամբ որոշել միայն երեք հարց. նախարարական պաշտօնների բաժանումն, նախարարական թեկնածուների որոշումն եւ արտաքսահմանեան մեր 2 պատւիրակութիւններից կազմել մէկ պատւիրակութիւն»: Ս. Ցարութիւնեանը ամէն կերպ աշխատեց համոզել, որ Պօղոս Նուպարի առաջարկն ընդունելի անայլայլ, սակայն, այս անգամ էլ հակառակ կողմը մնաց անդրդւելի: Եւ պէտք է ասել, որ կառավարութիւնը եթէ ուզենար էլ, չէր կարող ուրիշ կերպ վարւել. Ազգ. Պատւիրակութեան կատարած հակահանրապետական աշխատանքների մասին այնպիսի մռայլ տեղեկութիւններ էին ստացւում Փարիզից, Ազգ. Պատւիրակութեան կուսակից մամուլը այնպիսի թունաւոր լեզու էր բանեցնում, որ «կօալիցիայի» գաղափարին ոչ մի տեղ չէր մնացել Հայաստանում:

Այսպէս վերջ գտան անառողջ պայմաններում անառողջ մտայնութեամբ սկսւած «Հայ–Հայկական» բանակցութիւնները, եւ Ազգ. Պատւիրակութիւնը շարունակեց մնալ խռովածի եւ ընդդիմադիրի դիրքում Հայաստանի Հանրապետութեան հանդէպ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԳՆԴԱՊԵՏ ՀԱՍԿԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1919 Թւականի Հայաստանի ներքին կեանքի ամենացաւոտ երեւոյթը մահմետական հակապետական շարժումներն էին՝ կազմակերպւած Թիւրքիայի եւ Ազրբէջանի ձեռքով՝ Հայաստանի անկախութիւնը խորտակելու դիտաւորութեամբ։

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան առաջին օրից իսկ երկրի ներսը ապրող եւ Ազրբէջանի ու Թիւրքիայի մահմետական տարրը թշնամական դիրք բռնեց դէպի հայ պետականութիւնը։ Ներքին թրքութիւնը չէր ուզում հաշտւել Հայաստանի անկախութեան հետ եւ ձգտում էր միանալ կա՛մ Ազրբէջանին, կամ Թիւրքիային։ Ազրբէջանն ու Թիւրքիան էլ, իրենց հերթին, աշխատում էին միմեանց ձեռք մեկնել, միանալ Հայաստանի վրայով։ Միութեան կամուրջ պէտք է լինէր Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջեւանի շերտը, թերեւս, եւ Սուրմալուն ու Կարսը։

Թիւրքերի պարտութիւնից ու Կովկասից հեռանալուց յետոյ, թիւրք հրամանատարութեան դրդումով, Հայաստանում ու Վրաստանում, ամէն տեղ — Ալջաիա, Ախալցխա, Կարս, Սուրմալու, Շարուր—Նախիջեւան եւ այլն — կազմւեցին տեղական «անկախ հանրապետութիւններ» իրենց կառավարութիւններով՝ «չուրա»–ներով եւ սկսեցին պայքարել Հայաստանի ու Վրաստանի տիրապետութեան դէմ։ Հայաստանի հողի վրա կային «Արեւմտեան Կովկասի Հանրապետութիւնը» Կարսի «չուրա»–յով եւ Արեւելեան Կովկասի կամ «Արաքսեան Հանրապետութիւնը», որի մէջ մտնում էին Սուրմալուն, Զանգի եւ Վեդի բասարները, Մլիին, Շարուրն ու Նախիջեւանը՝ Նախիջեւան կենտրոնով։ Այս «հանրապետութիւն»ներից իւրաքանչիւրը, իր հերթին, բաժանւում էր աւելի փոքր, պաւառակ միութիւնների՝ իրենց տեղական «չուրա»–ներով։ Այդ «հանրապետութիւնները» պահում էին սեփական «բանակներ»՝ զինւած թիւրքական ենդանօթներով, զնդացիրներով ու հրացաններով, թիւրք սպաների ու չաւուշների հրամանատարութեան տակ։ Ազրբէջանը հայթայթում էր նրանց դրամը։ Թիւրքիան եւ Ազրբէջանը ուղղութիւն էին տալիս նրանց գործունէութեան։

Հայաստանը ներսից պայթեցնելու համար մասնաւորապէս մեծ ճիգ էր թափում Ազրբէջանը, որը 1919 թ. մարտին դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնով Երեւան ուղարկեց իր մոլեռանդ համաթիւրքապաշտ գործիչներից մէկին՝ Խան Թեքինսկիին՝ պաշտօն տալով նրան՝ Հայաստանի ներսում մահմեդական խռովութիւններ կազմակերպելու*):

Խան Թեքինսկին Երեւան հասաւ մարտ ամսի քսաններին: 22-ին նա այցելեց էջմիածին կաթուղիկոսին, եւ ահա թէ ինչ է հեռագրում իր կառավարութեան. «Նա (կաթուղիկոսը) չեշտեց հայերի եւ մահմեդականների բարեկամութեան անհրաժեշտութիւնը եւ խոստացաւ կոչ ուղղել հայ ժողովրդին՝ հաշտ ապրել մահմեդականների հետ: Կաթուղիկոսը ինձ պահեց ճաշի եւ մինչեւ վերջին րոպէն չհեռացաւ ինձնից: Նաւթ չլինելու պատճառով էջմիածին վանքն ու կաթուղիկոսարանը զրկւած են ելեկտրական լոյսից: Ես խոստացայ մեքենաների համար նաւթ տալ, ուստի խնդրում եմ չուտով տակառներով նաւթ ուղարկէք կաթուղիկոսի համար»: Ու նոյն հեռագրում, ծածկագրով, իբրեւ չարունակութիւն, գրում է. «Ուղարկեցէ՛ք միայն 200 փութ նաւթ. աւելին կարող է կառավարութիւնը օգտագործել... Մարտ 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացաւ 14 միլիոն րոն, բայց եթէ դրամական տեսակէտից դժւարութիւններ հանէք, չուտով կընկնի ծանր դրութեան մէջ: Հացի բացակայութեան պատճառով Հայաստանը չի կարող ապրել ինքնուրոյն կեանքով: Հնդիկ զինւորները ուղեւորւեցին դէպի Նախիջեւան: Եթէ անհրաժեշտ գտնէք, կարող կառավարութեան հետ կապ կը հաստատեմ»:

Ուրեմն, առաջին իսկ քայլից, Հարեւան «քոյր հանրապետութեան» ներկայացուցիչը «դժւարութիւններ հանելու» մասին է մտածում:

Ապրիլ 10-ին Թեքինսկին մանրամասն տեղեկութիւններ է հեռագրում Բաղու հայկական բանակի մասին, իսկ ապր. 16-ին, թէ՝ «Լուրերի համաձայն անդլիացիք կարող յանձնել են հայերին. պատրաստւում են յանձնել նաեւ Շարուր—Նախիջեւանը: Խնդրում եմ ստուգել եւ հարցնել անգլիացիներին. եթէ ճիշտ է, կարծում եմ, անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աւղանիստանի, Մալայեան կղզիների եւ Կովկասի ողջ մահմեդականութեան, նոյնպէս եւ Հաշտութեան Վեհաժողովին ընդդէմ անգլիացիների այն ցանկութեան, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թուով կէս միլիոն հայերին»:

Ապա, մի շարք հեռագիրներով, հաղորդում է Նախիջեւանի գրաւման նախապատրաստական աշխատանքների մանրամասնութիւնները եւ ապրիլ 29-ին N° 72 հեռագրով չտապ հարցնում է. «Եթէ Նախիջեւանը դիմադրութիւն ցոյց տայ հայկական զօրքերին, կառավարութիւնը ի՞նչ օգնութիւն կը

*) Խան Թեքինսկիի երեւան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ծանօթ էր նրա ծածկագրին. Խան Թեքինսկիի ուղարկած եւ ստացած բոլոր հեռագիրները, նախ քան իրեն հասնելը, յայտնի էին դառնում Հայաստանի կառավարութեան: 1920 թ. մայիսին, Ազրբէջանի խորհրդայնացումից յետոյ, այդ հեռագրները հրատարակեցին առանձին գրքոյկով — «Փաստաթղթեր» (Ազրբէջանի դաւադրական գործունէութեան մէջ էջ), 1920 թ. Երեւան, հրատ. «Ռազմիկ»-ի:

հասցնէ եւ զօրքեր կուղարկէ՞, թէկուզ կամաւորների անուան տակ»:

Ապր. 30-ին, հետները մեծ գումարներով, Երեւան են հասնում Ադրբէջանի գործակալներ Նախիջեւանսկին եւ Մակինսկին՝ Նախիջեւան գնալու համար: «Զօր. Թոմսընը Երեւանում, հեռագրում է մայիս 1-ին Թեքինսկին, արգելեց Մակինսկիին անցնել Նախիջեւան՝ այն պատճառաբանութեամբ, թէ այդ շրջանը գտնւում է Հայաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ: Մակինսկին դրամները յանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թէ ինչպէ՞ս գործադրեմ Նախիջեւանին յատկացւած գումարները: Նախիջեւանսկին հարկադրւած է վերադառնալ: Անգլիացիք գրաւեցին Մակինսկիի վագոնը»:

Ու երեք օր վերջը, մայիս 4-ին, իրար յետեւից քաշում է 2 հեռագիր: Առաջինով հաղորդում է. «Հայկական գնդերը ուղեւորւեցին դէպի Նախիջեւան: Հայաստանի վրա ճնշում գործ դնելու համար անհրաժեշտ եմ գտնում, որ անյապաղ հայկական սահմանների վրա կենտրոնացւեն մեր գնդերը: Նախիջեւանի ազգաբնակութիւնը պատրաստ է ցոյց տալու դիմադրութիւն... Դիլիջանում կանգնած է միայն 4րդ գունդը՝ թերի կազմով»: Երկրորդ հեռագրով խնդրում է. «Շտապ պատասխանեցէ՛ք 29 ապրիլ № 72 հեռագրիս: Նախիջեւանցիները ինձ հարցնում են՝ ինչպէ՞ս վարւել, եւ արդեօք Ադրբէջանը օգնութեան կը գա՞յ, եթէ իրենք հայերին դիմադրութիւն ցոյց տան»:

Մայիս 5-ին Բագուի կառավարութիւնը պաղ ջուր է լցնում Խան Թեքինսկիի գլխին. արտ. գործ. նախ. պաշտօնակատար Ջիաթխանովը հեռագրում է. «Դէպի Նախիջեւան զօրամասեր եւ կամաւորներ ուղարկելու մասին ներկայումս խօսք լինել չի կարող. այդ հարցը եռանդուն կերպով քննւում է կառավարութեան եւ (խորհրդարանի) աւագների խորհրդի մէջ: Հետեւանքը կը հաղորդեմ: Եռանդագին բողոքեցէք Նախիջեւանը գրաւելու նպատակով ձեռնարկւող ամէն տեսակ գործողութիւնների եւ Ադրբէջանի ինքնիշխան իրաւունքների նսեմացման դէմ»:

Իսկ մի օր յետոյ, մայիս 5-ին, վարչապետ Խան Խոյսկին հրամայում է. «Անյապաղ կապ հաստատեցէք Կարսի կառավարութեան հետ: Ցոյց տւէք նրան ամէն տեսակ աջակցութիւն. իմացէ՛ք, թէ ի՞նչ կարիք ունի. հեռագրեցէք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք»:

Թեքինսկին Նախիջեւան է ուղարկում իր զինւորական կցորդին ու գործավարին, որ ոտքի հանեն մահմետականներին: Եւ մայիս 9-ին հեռագրում է. «Մինչեւ ապր. 27-ը զինւորական կցորդն ու գործավարը պէտք է Նախիջեւան լինէին, բայց նրանցից դեռ տեղեկութիւն չի ստացւած»:

Մայիս 12-ին Թեքինսկին դրամ եւ իր ռոճիկն է պահանջում վրդովւած. «Ես պարտական չեմ առանց ռոճիկի ծառայելու եւ ստանալու աւելի քիչ, քան միւս դիւանագիտական ներկայացուցիչները: Գործի օգուտը նկատի առնելով՝ չպէտք է սահմանափակէք իմ ծախքերը: Եթէ իմ ծախքերը մեծ էք համարում, խնդրում եմ ինձ յետ կանչէք եւ փոխարինէք ուրի-

չով, մանաւանդ որ ես Յոյսկիի հետ պայմանաւորուել եմ Երեւանում մի ամսից աւելի չմնալ»:

Մարդը եկել էր մի ամսում Հայաստանը տակն ու վրա անելու եւ հեռանալու նպատակով:

Թեքինսկիի պնդումների վրա Բագուի կառավարութիւնը մայիս 18ին նորից պատասխանում է, որ «հանգամանքների բարդացման հետեւանքով՝*) նախիջեւանցիները մօտ ապագայում չեն կարող մեզանից ապասել զինուորական իրական օգնութիւն: Եթէ տեղական բնակչութիւնը կարող է կանգնեցընել հայկական զօրքերի յառաջխաղացումը, այդ ուրախութեամբ կընդունւի Ազրբէջանի կողմից, մանաւանդ որ Ղարաբաղի հայերը, հակառակ մեզ աջակցելու համար Ղարաբաղ եկած անգլիացիների ներկայութեան, կտրականապէս ընդդիմանում են Ազրբէջանի իշխանութեան հաստատմանը այնտեղ»:

Այնուամենայնիւ, հակառակ Թեքինսկիի թափած ջանքերի, հայկական զօրքերը, ինչպէս տեսանք, առանց դիմադրութեան հանդիպելու, դրաւեցին Կարսն էլ, Շարուր—Նախիջեւանն էլ: Դրանից յետոյ, սկսւեց ազրբէջանեան զորձակալների դաւերի մի նոր շրջան:

Մայիս 10–ին Թեքինսկին խորհուրդ է տալիս իր կառավարութեան. «Բոլշեւիկների կողմից Բագուին վտանգ սպառնալը պատրւակ բռնեցէք եւ խնդրեցէք անգլիացիներին, որ կարսի թնդանօթները փոխադրեն Բագու»:**) Յունիս 4–ին, թէ՝ «Որեւէ պատճառ բռնելով՝ յետաձգեցէ՛ք Հայաստանի երկաթուղիների համար նաւթ ուղարկելը, որովհետեւ Նախիջեւանի շրջանում դէպքեր են սպասւում»: Եւ նոյն օրը, N° 130 հեռագրով. «Կամաւորական բանակի յառաջխաղացումը հայերին ուրախութիւն է պատճառում... եթէ մեր յարաբերութիւնը կամ. բանակի հետ լաւ, հայերը թշնամական դիրք կը բռնեն դէպի մեզ, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ ստեղծել Շարուր–Նախիջեւանում: Գործը կազմակերպելու համար անյապաղ պէտք է դրամ բաց թողնէք: Իմ ձեռք առած միլիոնների չնորհիւ Շարուրը, Նախիջեւանը եւ Օրդուբաթը արդէն միացել են մէկ ազգային խորհրդի մէջ, որը մշտական յարաբերութեան մէջ է ինձ հետ»:

Յունիս 8–ին արտ. գործ. նախ. Ջաֆարովը հեռագրում է կառավարութեան հաւանութիւնը. «Պատասխան N° 130 հեռագրի: Հաւանութիւն եմ տալիս Շարուր—Նախիջեւանի հետ կապ հաստատելու նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն եմ դրամ տալ զինուորական կազմակերպութեան համար: Հաղորդեցէք ի՞նչպէս եւ ում բաց թողնել դրամը: Հաղորդեցէք, թէ ի՞նչ միջոցներով պիտի իրագործւեն մատնանշած ծրագիրն ու կազմակերպութիւնները»:

Յունիս 11–ին Թեքինսկին պատասխանում է. «Շարուր—Նախիջեւանի

---

*) Այդ ժամանակները Ազրբէջանը ապրում էր զօր. Դենիկինի կամաւորական բանակի սպառնալիքի տակ:

**) Կարսը գրաւելուց յետոյ, անգլիացիները բերդի թնդանօթների ու ռազմամթերքի մի մասը փոխադրեցին կամաւորական բանակին:

չրջանը ունի մօտ 6000 կիսականոնաւոր զօրք՝ ձիաւորով, թնդանօթով ու դնդացիրներով: Ռազմունակութեամբ յետ չեն մնում հայերից, որոնց օժանդակում են անգլիացիները: Պատերազմական գործողութիւնների ժամանակ զինուած ուժերի թիւը կարող է հասնել մինչեւ 10,000: Կարծում եմ, որ մենք պէտք է պահենք միայն 6000 ասկեար՝ հին հրամանատարական կազմի հետ միասին՝ տեղաւորելով նրանց այն վայրերում, ուր գտնւում էին մինչեւ հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանզեղուրի սահմանի վրա՝ լեռներում: Մախքերի ստուգումը լիովին երաշխաւորել դժւար է: Գործի կարեւորութիւնը ստիպում է, որ հաշտւենք մի քանի հնարաւոր զեղծումների հետ: Դրամը հրամանատարներին բաց կը թողնեմ մաս-մաս, բացի այդ, վերահսկիչներ կը նշանակեմ: Վաղը մեկնում է զինուորական կցորդը. լսեցէք նրա զեկուցումը եւ միասին քննեցէք: Այսօր սուրհանդակ ուղարկեցի Նախիջեւան»:

Ու նոյն օրը նոր հրահանգ Բագու. «Ո՛չ մի փունտ նաւթ ու մազութ բաց չթողնէք Հայաստանին»:

Յունիս 22-ին Թեքինսկին հեռագրում է. «Թւում է, որ այժմ Ազրբէջանը Հայաստանից բացի՝ ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրութիւն դարձնել: Պէտք է քիւրդ Սմկոյին քաշել մեր կողմը, որի համար լիազօրութիւն եմ խնդրում ինձ. զինուորական կցորդին հարց ու փորձ արէք Սմկոյի մասին»:

Յուլիս 21-ին. նորից պահանջ, որ Ազրբէջանը զօրք ուղարկէ դէպի Հայաստանի սահմանները. «Մեր զօրքերի երեւալը սահմանների վրա խուճապ կը ձգէ հայերի մէջ, կուժեղացնէ դասալքութիւնը եւ կը բարձրացնէ մահմեդականների ոգին... Եթէ ուզում էք օգտւել բոպէից, ձեռք առէք չտապ եւ վճռական միջոցներ»: Ու կրկին. «Սպասւում են խոշոր դէպքեր: Հայաստանը լարում է իր բոլոր ուժերը»:

Եւ, իրօք, Հայաստանը լարում էր իր բոլոր ուժերը: Մահմեդականութիւնը ոտքի էր ելել հայ ժողովրդի ու Հայաստանի գոյութեան դէմ: Վերջապէս, յունիս 14-ին, Փարիզի վեհաժողովը օսմանեան պատւիրակութեան յանձնել էր հաշտութեան պայմանները, յոյները դրաւել էին Իզմիրը, մէջտեղը դրւած էր Մեծ Բունաստանի ու ծովից-ծով Հայաստանի ծրագիրը: Եւ մահմեդական աշխարհը յուզւում էր զայրացած: Սկսւում էր քէմալական շարժումը, որի ազդեցութեան տակ կովկասի մահմեդականները համախոհականներով ու հեռագրներով ռմբակոծում էին Հաշտութեան վեհաժողովն ու դաշնակիցների անդրկովկասեան ներկայացուցիչներին՝ բողոքելով Հայաստանի տիրապետութեան դէմ եւ պահանջելով իրենց կցումը Թիւրքիային կամ Ազրբէջանին:

Միւս կողմից, յունիս ամսից սկսած, հայկական հետախուզութիւնը նկատում էր Թիւրքերի կողմից զինուորական չտապ պատրաստութիւններ Հայաստանի ուղղութեամբ: «Թիւրքահայաստան ուղարկւած գործակալները, կարդում ենք Հայաստանի Գլխաւոր Սպայակոյտի յունիս 17 դաշտնի զեկուցման մէջ, վկայում են Թիւրք կանոնաւոր զօրամասերի ներկայութիւ-

նը Օլթիի եւ Սարըղամիշի ուղղութեամբ եւ Ալաշկերտի շրջանում։ Կատաբելապէս ստոյգ կերպով հաստատուած է, որ թիւրքական 12րդ դիվիզիան գտնւում է Խորոսան-Զիւինում՝ կենտրոնն ունենալով Խորոսանում... Բաղդշութիւնը Թիւրքիայի եւ Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է։ Այդ նպատակով մեծ քանակութեամբ թիւրք գործակալներ են ուղարկուած Հայաստանի ներսերը, մահմեդական գիւղերը, եւ ամէն տեղ յայտնաբերւում են մեր վարչութեան եւ հակահեղափոխութեան կողմից։ Մասնաւորապէս զօրաւոր է թիւրք գործակալների ազդեցութիւնը Արդահան—Օլթիի եւ Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով զինուած քրդական հրոսախմբեր։ Նոյն պատրաստութիւնը կատարւում է Եւ Սարըղամիշ—Կաղզւան տարածութեան վրա եւ աւելի հեռուները՝ Բարթողեան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում մինչեւ Արարատ»։

Նախապատրաստելով ներսից ու դրսից՝ թիւրք-ադրբէջանցիները անցան գործի, որը հեշտանում էր եւ նրանով, որ անգլիացիք պաշտօնապէս յայտարարել էին, թէ շուտով հեռանալու են Կովկասից. մինչեւ մայիս 15 Կարսում եւ մայիս 30 Նախիջեւանում արդէն ոչ մի անգլիական զինուոր չէր մնացել։ Հայերը մնացել էին միայն իրենց ուժերով։ Այդ օրերին Հայաստանը ունէր երեք հետեւակ բրիգադ՝ իւրաքանչիւրը երկու գնդից եւ գունդը՝ երեք գումարտակից, երկու ձիաւոր գունդ՝ իւրաքանչիւրը վեց հարիւրեակով, 12 մարտկոց՝ ամէն մէկը 4 թնդանօթով, 3 զրահապատ գնացք եւ մի քանի տեղական զօրամասեր։ Այս ուժերը ցրուած էին երկրի բոլոր կողմերում, ունէին թերի կազմ, չնչին քանակութեամբ ռազմամթերք, վատ հագուստ ու պարենաւորում։

Այսպիսի թոյլ եւ ուժացրիւ վիճակում շատ դժուար պիտի լինէր դրութիւնը, եթէ մահմեդական խռովութիւնները վերածւէին ընդհանուր ապստամբութեան։ Այդպէս էլ պատահեց։ Անգլիացիների հեռանալուց յետոյ, Օլթիից մինչեւ Օրդուբաթ, ամբողջ տարածութեան վրա, բռնկեց մահմեդական ապստամբութիւնը։

Շարժումը սկսեց Բէյուք-Վեդի գիւղից, որը վաղուց կէս-ապստամբ վիճակի մէջ էր, եւ հարեւան գիւղերի հետ ունէր մօտ 4000 կուողներ։ Սերտ կապ պահելով Արաքսի միւս ափի՝ Արալըխի քրդութեան հետ՝ նա մշտական սպառնալիք էր Շարուր-Նախիջեւանի հայկական զօրքերի եւ երկաթուղային հաղորդակցութեան համար։ Բէյուք-վեդիցիները բազմաթիւ յարձակումներ էին գործում, թալանում ու սպանում էին հայերին եւ, առհասարակ անհանգիստ հակապետական տարր էին։ Յուլիս 1-ին, Դաւալուի մօտերը նրանք սպանեցին 9 հայ զինուորներ եւ 12 գիւղացիներ։ Այդ դէպքը առիթ դարձաւ, որ հայկական հրամանատարութիւնը, համաձայնութեամբ անգլիական ներկայացուցչի, վճռէ գրաւել Բէյուք-Վեդին։ Այդ նպատակով, դէպքի վայրը ուղարկւեց մի զօրամաս՝ հրամանատարութեամբ գնդ. Ապրեսեանի, որը իր մօտ կանչելով գիւղի կոմիսարին եւ օգնականին՝ պահանջեց՝ յանձնել յանցաւորներին, վերադարձնել սպանուածների զէնքերն ու գոյքերը եւ վարձատրել սպանուածների ընտանիքներին։ Կոմիսարն ու օգնա-

կանը համաձայնեցին կատարել պահանջը, եւ յուլ. 4–ին գնդ. Ապրեսեանը իր զօրամասով, Բէօյիւք–Վեդիի ներկայացուցիչների ուղեկցութեամբ, մօտեցաւ գիւղին եւ բանակ դրեց: Եւ երբ Բէօյիւք–Վեդիի ներկայացուցիչները գնացին գիւղ, վերջնական պատասխան բերելու, այնտեղից, յանկարծ, հայերի վրա բացուեց հրացանային ու գնդացիրային սաստիկ կրակ: Յանկարծակիի եկած հայերը՝ աւելի ծանր զոհեր — սպանուեց 5 սպայ եւ 30 զինուոր, վիրաւորուեց 7 սպայ եւ 120 զինուոր — եւ անկարգ նահանջեցին: Յուլ. 8–ին հայկական հրամանատարութիւնը փորձեց ուժով գրաւել Բէօյիւք–Վեդին, բայց յաջողութիւն չունեցաւ: Եւ այնուհետեւ սկսեց ուժեր հաւաքել ու պատրաստուել վճռական գործողութիւնների:

«Բէօյիւք–Վեդիի դրութիւնը լուրջ է, հեռագրում է 14 յուլ. Թեքինսկին: Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ուժերը: Քահանաներն իրենց քարոզներում կոչ են անում յարձակուել Բէօյիւք–Վեդիի վրա՝ սրբազան արշաւանք համարելով այդ: Մահմետականներին կարող է ազատել Ադրբէջանի զինուած միջամտութիւնը... Մահմետականների դիմումին՝ օգնութեան համար՝ յայտարարեցի, որ առ այժմ Ադրբէջանը չի կարող զօրքով օգնել, բայց մահմետականների բոլոր ծախքերն ու վնասները անմիջապէս կը վերադարձուեն Ադրբէջանի կողմից: Սպասւում են մեծ դէպքեր ամբողջ Շարուր—Նախիջեւան—Օրդուբաթում եւ կարսի շրջանում: Առանց մի օր կորցընելու — ուղարկեցէք խոշոր գումար զինուորական կազմակերպութիւնների համար»:

Եւ, յիրաւի, Բէօյիւք–Վեդիի ազդանշանի վրա գլուխ բարձրացրին եւ Շարուրի ու Նախիջեւանի թուրքերը: Յուլիսի կէսերին չտապով Շահթախթ հասաւ թիւրքական բանակի գնդապետ Խալիլ բէյը, թիւրք սպաների ու 2–3 հարիւր ասկեարների հետ եւ անցաւ մահմետական շարժման գլուխը: Եւ յուլիս 20–21–ին, միաժամանակ, ապստամբութիւն ծագեց Շարուր–Նախիջեւանի բոլոր կողմերում: Հայկական սակաւաթիւ զօրամասերը Ջուլֆայում, Նախիջեւանում, Շահթախթում ու Բաշ–Նորաշէնում շրջապատուեցին թուրք զինուած բազմութիւններով: Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ, յուլ. 25–ին, Նախիջեւանի հայկական զօրքերը, իրենց հետ առնելով եւ հայ ազգաբնակութեան որոշ մասը, նահանջեցին դէպի Զանգեզուր: Անգլիական զինուորական առաքելութիւնը եւ ամերիկեան նպաստամատոյցի պաշտօնեաները անցան Թաւրիզ: Շարուրի զօրքերի մի մասը երկաթուղով քաշուեց Հիւսիս, իսկ միւս մասը, Բաշ–Նորաշէնի շրջանում, յուլ. 25–26–ին, գնդ. Կարաքեշիշեանի գլխաւորութեամբ՝ ճեղքելով թշնամու ամուր շղթան՝ նահանջեց դէպի Զանախչի ու Զինջիրլու գիւղերը: Մի քանի օրից, այս գիւղերն էլ, Ղարախաչ, Ուլուխանլու, Էլփին գիւղերի բնակիչների ու զօրքի հետ միասին, կուռվ նահանջեցին Զիւնիի վրայով, դէպի Արաջան:

Թուրքերը հետեւեցին հայերին Նախիջեւանից Զանգեզուրի ուղղութեամբ Նախիջեւան գետի կիրճով և Շարուրից՝ դէպի Դարալագեաղ՝ Արփա գետի ձորով, բայց Յաչիկ–Նորս գծից յետ մղուեցին:

Այս յաջողութիւններից արբեցած, օգ. 1–ին, Թեքինակին հեռագրում է Բաքու. «Բէօյիւք–Վեդիի, Շարուրի եւ Նախիջեւանի շրջաններում կռիւներ են տեղի ունենում: Հայկական դնդերը փախչում են կամ ոչնչանում: Հաղորդեցէք, թէ ես ի՞նչ պէտք է անեմ: Մահմետականները դեռ չեն ցանկանում դրաւել Երեւանը»: Ու նորից. «Վերջապէս, թղթի յայտարարներից բացի մենք պէ՛տք է անենք իրական քայլեր... պէ՛տք է անյապաղ պատերազմ յայտարարենք»: Միաժամանակ, «մեր կառավարութիւնը պէտք է վճռական առաջարկ անէ անդլիացիներին, որ մեզ յանձնեն Ջուլֆա—Շահթախթ երկաթուղին՝ Ալեաթ—Ջուլֆա գծով՝ Պարսկաստանի հետ առեւտուր սկսելու համար: Յանձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչեւ Դաւալու դիւղը» (28 յուլ.):

Իսկ երկու օր վերջը, օգ. 3–ին, ռազմաչունչ խանը հեռագրում է վարչապետ Յան Յոյսկիին. «Անհրաժեշտ է, որ Ադրբէջանը երկու շաբաթեայ ընթացքում մաքրէ Զանգեզուրի հաշիւը եւ գործերը առաջ քաշէ մինչեւ Ղամարլու: Այժմ ամենայարմար ժամանակն է: Հայաստանի կոմիսար ամերիկեան դնդապետի ժամանումից յետոյ ուշ կը լինի: Եթէ իմ առաջարկը կընդունեի ձեր կողմից, իրագործեցէք առանց պատերազմ յայտարարելու: Շատ եմ խնդրում, որ օգտուէք րոպէից եւ ժամանակ չկորցնէք»:

Օգ. 4–ին Թեքինակին Յան Յոյսկիին տեղեկութիւններ է հաղորդում հայկական զինուորական տեղափոխութիւնների մասին, եւ սրանով վերջանում է նրա դաւադրական գործունէութիւնը Հայաստանում. հայկական կառավարութեան պահանջով անդլիացիք քշեցին նրան Երեւանից, եւ ի հատուցումն իր մատուցած ծառայութիւնների նա նշանակուեց Ադրբէջանի արտ. գործ. նախարարի օգնական: Նրա տեղը Երեւան եկաւ Ադրբէջանի «ազգային բանաստեղծ» Հախվերդովը, որ անշեղ շարունակեց իր նախորդի քաղաքականութիւնը:

Բէօյիւք–Վեդիի եւ Շարուր–Նախիջեւանի դէպքերը մեծ յուզում առաջ բերին Երեւանում եւ Հայաստանի բոլոր կողմերում: Կառավարութիւնը ձեռք առաւ արտակարգ միջոցներ. յուլ. 23–ին Երեւանի, Էջմիածնի եւ Սուրմալուի գաւառներում յայտարարուեց 26, 27 եւ 28 տարեկանների զօրակոչ (օգ. 18–ին այս որոշումը տարածուեց ամբողջ Հայաստանի վրա): Յուլ. 24–ին մտցուեց մահապատիժ պետական դաւաճանութեան եւ դասալքութեան համար: Նոյն օրը որոշուեց ապստամբնակութիւնից հարկադրական միջոցներով գէնք ու ռազմամթերք հաւաքել եւ սահմանել զինային պարտադիր տուրք: Յուլ. 25–ին հաստատուեց զինաժողովի կոմիսարի պաշտօնը եւ Աբշ. Ջամալեանը նշանակուեց զինաժողովի կոմիսար: Յուլ. 28–ին գէնքի տակ առնուեցին մինչեւ 40 տարեկան բոլոր սպաները: Յուլ. 30–ին կազմուեց երեք հոգուանոց Ապահովութեան Կոմիտէ՝ վարչապետից եւ ներքին գործոց ու զինուորական նախարարներից: Ապահովութեան Կոմիտէն պիտի վարէր երկրի պաշտպանութեան գործը՝ լիազօրութիւն ունենալով դիմելու արտակարգ միջոցների նոյնիսկ առանց նախարարական խորհրդի որոշման:

Այս միջոցներն ինքնին բաւական են տեսնելու համար, թէ ի՛նչ վը-

տանդաւոր կացութիւն էր ստեղծւել Հայաստանում: Կառավարութիւնն ու ժողովուրդը զգում էին, որ միայն իրենցից է կախւած փրկութիւնը եւ լարում իրենց բոլոր ուժերը: Կառավարութեան կոչի վրա, մի քանի օրւայ մէջ, Երեւանի բնակչութիւնը մեծ քանակութեամբ փամփուշտ ու հրացան յանձնեց զինուրական իշխանութիւններին: Ժողովուրդը իր տրամադրութիւնն արտայայտում էր բազմաթիւ ժողովներով ու բանաձեւերով:

Կառավարութիւնը դիմեց եւ դաշնակիցներին՝ զինուրական աջակցութիւն հասցնելու խնդրանքով:

Յուլ. 26–ին Երեւան հասան անգլիական ու ֆրանսական հրամանատարութեան ներկայացուցիչները մի քանի հարիւր հնդիկ զինուրների հետ, եւ օգոստ. 2–ին հանդիպում ունեցան ապստամբների պետ Խալիլ բէյի հետ, որը յայտարարեց, թէ եղածը ապստամբութիւն չէ բնաւ, այլ ազգային իրաւունքների պաշտպանութիւն. Շարուր—Նախիջեւանի թրքութիւնը մինչեւ Փարիզի Վեհաժողովի վերջնական վճիռը, ուզում է կառավարւել սեփական ազգային խորհրդով, ինչպէս Ղարաբաղը կառավարւում է հայկական ազգային խորհրդով:

Անգլիական ու ֆրանսական սպաների փորձերը ո՛չ մի արդիւնք չունին: Այդ պատճառով, օգ. 10–ի առաւօտեան, հայկական զօրքերը դիմեցին նոր յարձակման Բէյոյիւք–Վեդիի վրա եւ մի շարք յաջող ընդհարումներից յետոյ, երեկոյեան դէմ գրաւեցին Բէյոյիւք–Վեդիից 2 վերստ հեռու գտնւող կոթուղի բարձունքները եւ Գիլջա, Շերապլու, Կարալար, Ջաթղան եւ Ռեհանլու գիւղերը: Թուրքերը դիմադրում էին կատաղի կերպով, ռազմագիտական արհեստով փորւած դիրքերից, հրացանների ու գնդացիրների սպանիչ կրակով: Մի քանի օր տեւեցին արիւնահեղ կռիւներ, որոնց ամբողջ երկիրը լարւած հետեւում էր: Ամենքը զգում էին, որ պարտութիւնը Բէյոյիւք-Վեդիի տակ ճակատագրական հետեւանքներ կունենար Հայաստանի համար:

Օգոստ. 15–ին, Խորհրդարանում, փոխ–վարչապետ Ա. Սահակեանը զեկուցում տւեց մահմետական չարժումների մասին: «Մենք, ասաց նա, հետզհետէ չրջապատւում ենք երկաթէ օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը... Կառավարութիւնը բաւարար չգտնելով ներկայ զինուրական ոյժը՝ կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գոյքն ու կեանքը: Այժմ կառավարութիւնը դիմելով այս բարձր ժողովին՝ յայտնում է, որ կարիք ունի հեղինակաւոր գործիչների եւ պատգամաւորներից օգնութիւն ստանալու յոյս ունի»:

Խորհրդարանը ընդառաջ գնաց կառավարութեան դիմումին եւ որոշեց 1) յայտարարել հայրենիքը վտանգի մէջ եւ հրաւիրել ժողովուրդը՝ լարել բոլոր ուժերը երկրի պաշտպանութեան համար, 2) բժ. Ց. Տէր–Դաւթեանից, Լ. Թադէոսեանից, Ց. Արղութեանից եւ Հ. Մանուկեանից բաղկացած խորհրդարանական մի յանձնախումբ ուղարկել զօրաճակատ՝ ողջունելու համար զօրքին եւ բանակի բարելաւման ծրագիր բերել, 3) կոչ ուղղել դաշնակից երկրների խորհրդարաններին:

Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ, հայկական զօրքերը

ամրացան գիւղերում Բէոյիւք-Վեդիի առջեւ եւ վերջ տուին գործողութիւն-ներին. գրութիւնը սկսել էր լրջանալ երկրի միւս մասերում էլ*)։

Շարուր-Նախիջեւանի դէպքերը, ամենից առաջ, արձագանգ գտան եւ Սուրմալու—Կողբի շրջանում, ուր հայկական իշխանութիւնը հաստատուել էր մայիս 27-ին։ Օգոստ. 7-ին յարձակումներ սկսեցին Կողբից հարաւ կանգնած հայկական զօրամասի վրա։ Առաջին յարձակումը յետ մղւեց, բայց օգոստ. 18-ին Թուրքերը գրոհ տուին նոր թափով։ Ապստամբեցին եւ հայ զօրքերի թիկունքում գտնուող Ղամըշլու, Ագարակ եւ Արաս Գէօլ գիւ-ղերը, եւ հայկական զօրամասը ստիպուած եղաւ թողնել Կողբն ու քաշուել Ա-րաքսի ափը։ Նրանց հետ հեռացան եւ մօտ 5000 հայ ու եզիդի բնակիչներ։

Օգոստ. 23-ին Թուրքերը սկսեցին սպառնալ եւ Էջմիածնի կայարանին ու սպանեցին շրջակայ գիւղերից 8 հայ։ Օգոստոս 24-ին, Ներքին Ղարխուն գիւղի մօտ ընդհարում տեղի ունեցաւ ապստամբ Թուրքերի եւ մի հայկա-կան վաշտի միջեւ. վիրաւորուեցին 5 հայ զինուորներ եւ 1 սպայ։ Օգոստ. 25-ին Շօռլու գիւղի բնակիչները հրաժարուեցին ճանաչել Հայաստանի իշ-խանութիւնը։ Օգոստ. 26-ին Թուրքերը կրակ բաց արին Էջմիածնից Ղար-խուն մեկնող ամերիկացիների վրա։ Օգոստ. 29-ին Ուլուխանլու—Էջմիա-ծնի ճանապարհին սպանուեցին հիւանդանոցից իրենց զօրամասը վերադար-ձող 4 զինուորներ։ Ամբողջ Զանգիբասարը յայտարարեց իրեն ապստամբ եւ մերժեց ճանաչել հայկական իշխանութիւնը։ Զանգիբասարցիներին ղեկա-վարում էր Խալիլ բէյի համհարզ Մահմէդ բէյը եւ մի շարք Թիւրք չաւուշ-ներ։

Ընդհարումների եւ կռիւների թատերաբեմ դարձաւ եւ Կարսի նահան-գը։ Օգոստ. 18-ին մօտ 1500 զինուած քրդեր ու Թուրքեր յարձակւեցին Կաղ-զըւանի վրա, բայց յետ մղւեցին։ Օգոստ. 21-ից սկսուեցին մի շարք ընդհա-րումներ քիւրդերի եւ հայկական կանոնաւոր ուժերի միջեւ։ Օգ. 22-ին 400 Թուրքեր գրաւեցին Բայքարա գիւղը, Սելիմից 15 վերստի վրա՝ կամենալով փչացնել երկաթուղին Բէգլի-Ահմէդի մօտ եւ կտրել Սարըղամիշի հայկական զօրամասի հաղորդակցութեան գիծը։ Դեւէկի մօտ քրդերը գնդակահարեցին անգլիական մի ինքնաշարժ եւ վիրաւորեցին մի զինուոր**)։ Հայկական հո-ղերի վրա երեւացին եւ Թիւրքական ուժեր։

Օգոստ. 30-ին, Սարըղամիշի հայկական զօրամասերը անցան հակա-յարձակման եւ յաջող կռիւներով յետ շպրտեցին Թշնամուն ու գրաւեցին

*) Բէոյիւք-Վեդիի կռիւների ժամանակ, հայ կոմունիստները Երեւանում բաց թողե-ցին կառավարութեան դէմ ուղղուած մի թռուցիկ, որով դաւաճանութեան էին հրաւիրում զին-ուորներին։ Թռուցիկի հեղինակները ձերբակալուեցին եւ արտաքսուեցին Հայաստանից։

**) Հակառակ Մուդրոսի զինադադարի, Թիւրքերը շարունակում էին թշնամութիւնը անգլիացիների դէմ։ Այսպէս, յուլիսին անգլիացիք իրենց ձեռքն էին առել Էրզրումը, զինա-թափել էին քաղաքը եւ յուլիսի վերջերին սկսել դուրս տանել բերդի զէնքն ու ռազմամթեր-քը։ Երբ Էրզրումից դուրս եկաւ առաջին գնացքը՝ բեռնաւորուած 15 թնդանօթով, 500 հրա-ցանով եւ մէկ միլիոն փամփուշտով, քաղաքից ոչ հեռու, մի խումբ Թիւրք զինուորներ յար-ձակուեցին նրա վրա, զինաթափ արին անգլիացի պահակներին եւ գնացքը դարձրին Էրզրում։ Անգլիացիք մարսեցին այս անպատուութիւնը, ինչպէս մարսեցին եւ շատ ուրիշ, աւելի ծանր անպատուութիւններ։

նրա դիրքերը կարաքուրդի չրջանում: Օգոստ. 31–ին Դեւիկի հայկական մասերը գրաւեցին Վերիչան, Բաչքէոյ, Բէգքէոյ, Բողդուտ եւ Մեխրետ գիւղերը. քրդերը փախան՝ չարդուած: Նոյն օրը կարաքուրդի զօրամասը գրաւեց Բաչքէոյի դիրքերը եւ մինչեւ 1914 թ. սահմանը մաքրեց քրդերից: Անյաջող անցաւ նոյնպէս թշնամու փորձը՝ գրաւելու Կաղզուանը. մեծ զոհեր տալով՝ փախաւ խուճապահար:

Սեպտ. 1–ին քրդերն ու թուրքերը չրջապատեցին Կոնզ եւ Դորդ Կիլիսա գիւղերը եւ Մերդենեկի զօրամասի պետից պահանջեցին՝ մաքրել անյապաղ Մերդենեկի չրջանը եւ զօրքերը հեռացնել Կարս: Պատասխանը եղաւ՝ յարձակում Մերդենեկի զօրքերի կողմից եւ թշնամու փախուստը դէպի Կանջուրետի լեռները: Սեպ. 2–ին Սարըղամիշի հայկական զօրամասը կուռվ գրաւեց Գումրի սարն ու Ղզըլ Կիլիսա գիւղը: Ապատամբների դեկավար էյուր փաշան փախաւ Օլթիի չրջանը, իսկ մի ուրիշ դեկավար անձնատուր եղաւ:

Այսպիսով, իրրեւ հետեւանք հայկական զէնքի յաջողութեան, մահմեդական չարժումը Կարսի նահանգում վերջ գտաւ: Դրան նպաստեցին եւ այն զգոյշ ու հաշտասէր քաղաքականութիւնը, որ վարում էր այստեղ հայկական իշխանութիւնը: Այնուհետեւ, եթէ չհաչուենք 1920 թ–ի սկզբի Զարուշատի դէպքերը, Կարսի չրջանում լուրջ հակապետական դէպքեր տեղի չունեցան:

***

Մահմեդական չարժումների ամենատաք չրջանին Հայաստան հասաւ Հաչտութեան վեհաժողովի Հնդի Մորհրդի կողմից նչանակուած՝ Հայաստանի կոմիսար գնդ. Ուիլիամ Հասկելը: Նրա ժամանումը մեծ ոգեւորութիւն առաջացրեց հայերի մէջ: Բաթումից մինչեւ Երեւան, ամէն տեղ, նրան ցոյց տուեց խանդավառ ընդունելութիւն: Ընդունելութիւնը չատ ջերմ էր, նամանաւանդ, Հայաստանում:

Օգոստ. 20–ին գնդ. Հասկելը իր չքախմբով հասաւ Ղարաքիլիսա:

Գնացքը կանգ առաւ ծաղիկներով զարդարուած կամարի տակ: Հասկելի վագոնի առջեւ դրեցին պատուոյ պահակներ: Կայարան էր հաւաքուած ահագին բազմութիւն: Քաղաքացիական եւ զինուորական պատգամաւորները ներկայացան Հասկելին, որը դուրս եկաւ վագոնից եւ ժողովրդի ոգեւորուած ծափերի ու «կեցցէ»–ների տակ դիտեց չարուած զօրքը, հարց ու փորձ արաւ զինուորներին, հետաքրքրուեց նրանց վիճակով: Որբերի կողմից մի աղջիկ ծաղկեփունջ ներկայացրեց տիկ. Հասկելին:

Նոյն հանդիսաւորութեամբ Հասկելը անցաւ եւ Ալեքսանդրապոլից եւ օգոստ. 21–ի առաւօտեան հասաւ Երեւան: Քաղաքն ամբողջ զարդարուած էր դրօշակներով, դորգերով ու կանաչով: Բոլոր խանութները փակ էին: Փողոցներում տիրում էր արտակարգ եռուզեռ: Ամէնքը դուրս էին եկել վեհաժողովի ներկայացուցչին ընդունելու: Վարչապետը, բոլոր նախարարները, Մորհրդարանի նախագահը, զինուորական հրամանատարական կազմը, քա-

ղաքապետը, քաղաքագլուխը, Թեմակալ առաջնորդը, ամերիկեան, անգլիական եւ ֆրանսական ներկայացուցիչները — ամենքը կայարանում էին, ուր շարքով կանգնած էին զինուորները իրենց նուագախմբով: Ընդունելութեան ծիսական մասը վարում էր մայրաքաղաքի պարետ Ա. Շահխաթունին:

Ընդունելութեան արարողութիւնից — վարչապետ Խատիսեանի ողջոյնի խօսքից, Հայկելի պատասխանից ու պատուոյ պահակի ընդունելութիւնից յետոյ, շքերթը մեկնեց քաղաք: Առջեւից գնում էին Սասունի եւ Շատախի ձիաւորները՝ ազգային տարազով եւ դաշնակից պետութիւնների դրօշակներով: Նրանց հետեւում էին Հայկելի ու վարչապետի եւ միւս դիմաւորողների ինքնաշարժները: Քաղաքային ինքնավարութեան շէնքի առջեւ կանգնած էին որբերը թարմ պսակներով: Աբովեան պողոտան լիքն էր անհաշիւ բազմութեամբ: Հայկելին յատկացուած էր Երեւանի լաւագոյն տներից մէկը, որի առջեւ կանգնած էին քաղաքազօրը, անգլիական հնդիկ զինուորները, համքարութիւնները իրենց դրօշակներով:

Հայկելի հասնելուն պէս նուագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիք»-ը: Հասարակութիւնը ողջունեց որոտընդոստ ծափերով ու «կեցցէ»-ներով: Հայկելը դիտեց զօրքը, հարց ու փորձ արաւ զօրքի սպառազինութեան եւ հագուստի մասին: Զօրամասերը հանդիսաւոր քայլերով անցան նրա առջեւից:

Ապա, բնակարանում, Հայկելը ընդունեց կառավարութեան, բանակի, քաղաքի եւ օտար պետութեանց ներկայացուցիչներին ու շնորհակալութիւն յայտնեց իրեն ցոյց տրուած ջերմ ու սրտաբաց ընդունելութեան համար: Ժողովուրդը, խռնուած նրա բնակարանի առջեւ, երկար չէր ցրւում: Վերջապէս, մեզ էլ յիշեց Վեհաժողովը...

Նոյն օրն եւ եթ Հայկելը երկար տեսակցութիւն ունեցաւ կառավարութեան նախագահի հետ: Յուսատու էին նրա խօսքերը. նա հաղորդեց, որ ինքը Վեհաժողովից յանձնարարութիւն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր եւ գտնուեն նրանք՝ Հայաստանում, Ազրբէջանում, Թիւրքիայում թէ Վրաստանում: Զինուորական օգնութիւն առ այժմ չի կարող տալ, բայց արդէն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապէս զօրք հասցնել Հայաստան, այլ եւ խնդրել է, որ անգլիական զօրքերի մի մասը թողնեն Հայաստանում: Ինքը ամէն միջոց ձեռք կառնէ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները եւ կը պահանջէ, որ Ազրբէջանի կառավարութիւնը վերջ տայ գրգռիչ գործունէութեան Հայաստանի մահմետականների մէջ: Ձեռք կառնէ նաեւ կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանայ զէնք ու ռազմամթերք եւ որ վրաց կառավարութիւնը արգելք չլինի նրանց փոխադրութեան: Մասնաւորապէս, կաշխատէ ապահովել Հայաստանի պարենաւորման գործն ու մթերքի հայթայթումը: Դրա համար նա Բաթումում թողել է իր սպաներից մէկին՝ Հայաստանի համար ստացուող ապրանքները փոխադրելու համար: Շուտով Բաթում կը հասնի 7000 թոն ալիւրով բեռնաւորուած մի նաւ, ապա կը ստացուեն պահածոներ, մանգէն, դեղօրայք, երկրագործական գործիքներ ու մեքենաներ եւայլն: Դրամական օժանդակութիւն Ամերիկան չի

ուշ, քանի հոգատարութեան հարցը որոշուած չէ, բայց ինքը յոյս ունի, որ Նպաստամատոյցը կը տրամադրէ մինչեւ 50 միլիոն դոլար: Ըոյս ունի նոյնպէս հայթայթել զօրքի, որբերի եւ գաղթականների հագնելիքը, այլ եւ բանակի համար 150 ջորիներ՝ իրենց սարքով միասին: Մինչեւ ձմեռ թիւրքահայերի ներգաղթը անհնար է, բայց դարնանից նրանք կարող են վերադառնալ իրենց տեղերը: Հայկական հարցի լուծումը վերահաստատուած չի յարուցանում. վճռուած–վերջացած խնդիր է. մնում է միայն որոշել սահմանները եւ հոգատար պետութիւնը:

Յաջորդ օր, օգոս. 22–ին Հասկելը ներկայ գտնուեց Ռորհրդարանի նիստին, ուր նախագահող Ը. Արզուեանը ողջունեց նրան ջերմ խօսքերով: Հասկելը պատասխանեց հետեւեալ ճառով.

«Ես հասկանում եմ, որ ձեզ բոլորիդ զբաղեցնում է երկրի ապահովութեան եւ դաշնակիցների օգնութեան հարցը: Գուցէ տարօրինակ թւայ, թէ ինչու այսքան երկար է ձգձգւում հայկական խնդրի լուծումը: Ամերիկացիները ընդհանրապէս ծանր են շարժւում: Մենք դանդաղ սկսեցինք պատերազմը, դանդաղ վարեցինք այն, բայց աւարտեցինք ամենայն թափով: Դանդաղ ենք շարժւում նաեւ հաշտութեան խնդրում: Մինչեւ որ չվաւերացւի հաշտութեան պայմանագիրը, չընդունւի Ազգերի Լիգան, չի՛ կարող լուծւել Հայաստանի մանդատի խնդիրը: Սակայն, այդ չի կարող բաւարարել ո՛չ ձեզ եւ ո՛չ ինձ: Հարկաւոր է այժմէն իսկ մտածել՝ ի՞նչպէս օգնել հայ ժողովրդին: Կասկած չկայ, որ մեզ անհրաժեշտ է զինուած ոյժ, ո՛չ թէ նրա համար, որ խլենք Վրաստանից կամ Ազրբէջանից նրանց պատկանող անվիճելի հողերը, այլ՝ ապահովելու համար հայ ժողովրդի գոյութիւնը: Մեզ հարկաւոր է զօրք պաշտպանելու համար այն ժամանակաւոր սահմանները, որոնք ցոյց են տրւած մեզ: Փարիզում դեռ եւս մանրամասնօրէն ծանօթացած չլինելով իրերի դրութեանը՝ ես անհրաժեշտ չի համարում զինւորական ոյժի ներկայութիւնը Հայաստանում: Դրա համար ես իմ Հայաստան գալուն իսկոյն պայման դրի առ այժմ անգլիական զօրքերի թողնելը Հայաստանում, մինչեւ որ մի երրորդ ոյժ գայ նրանց փոխարինելու: Երբ ես Գոլսում լսեցի անգլիական զօրքերի կովկասից հեռանալու մասին՝ հեռագրով բողոքեցի Փարիզ Ջէմսոյին եւ Վեհաժողովին այդ որոշման դէմ: Այժմ այդ հարցը քննւում է Փարիզում, եւ ես յոյս ունեմ, որ անգլիական զօրքերը կը մնան այստեղ: Իսկ եթէ նոյնիսկ հեռանան էլ, մեր գործը պէտք է լինի գտնել դրանց փոխարինող ուրիշ զօրքեր:

«Երկրի պաշտպանութեան, զինման, ելեւմուտքի կարգաւորման եւ այլ խնդիրների մասին ես արդէն կարգադրութիւններ արել եմ, սակայն, նայում եմ դրանց վրա, իբրեւ երկրորդական խնդիրների: Անկասկած է, որ Ազրբէջանի կառավարութիւնը խախտել է անգլիական իշխանութիւնից ստացած հրահանգները, եւ այդ խնդիրն է այս րոպէիս ինձ զբաղեցնում: Ես մեկնում եմ Թիֆլիս եւ կը պահանջեմ, որ Ազրբէջանը վերջ տայ այդ բանին, հակառակ դէպքում Ազրբէջանի կառավարութեան անդամները կենթարկւեն անձնական պատասխանատուութեան:

«Թիֆլիսում ես կը հանդիպեմ զօրավար Հարբօրտին, որը Ֆրանսայում գործող ամերիկեան բանակի սպայակոյտի պետն է: Ես նրա հետ պիտի խորհրդակցեմ այն հարցի մասին, թէ ի՞նչ ձեւով պէտք է օգնել Հայաստանին: Այս վայրկեանիս Փարիզից ճանապարհ են ընկել մի խումբ սպաներ — մասնագէտներ՝ զինուորական եւ այլ ճիւղերի վերաբերմամբ: Եթէ տարածութիւնը խանգարի իմ յարաբերութիւններին Փարիզի հետ, ես ինքս անձամբ կը մեկնեմ Սեւ ծովում գտնուող ամենաարագընթաց ականակիրով Մարսէյլ — Փարիզ՝ զեկուցանելու համար Վեհաժողովին եւ խնդրելու Վեհաժողովից եւ ամերիկեան ժողովրդից շուտափոյթ օգնութիւն հասցնել հայ ժողովրդին: Միեւնոյն ժամանակ հայ ժողովրդի եւ կառավարութեան վերաբերմունքը դէպի իր հարեւանները պէտք է լինի բարեացակամ, որպէսզի հարեւանները պարենաւորման եւ այլ խնդիրներում դժուարութիւններ չյարուցանեն: Ես միանգամայն կախուած եմ ժողովրդի եւ կառավարութեան աջակցութիւնից: Այժմ քաղաքական վէճերի ժամանակը չէ: Պէտք է մտածել ժողովրդի փրկութեան մասին:

«Ո՛չ մի նշանակութիւն չպէտք է տալ այն բանին, որ այս կամ այն երկիրը խլում է միւսից մի քանի վերստ հողամաս: Այդ հանգամանքը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ այս կամ այն երկրի սահմանները վերջնականապէս որոշելու համար Փարիզում. ինչպէս որ եղաւ Բէլգիայի եւ Լուքսեմբուրգի վերաբերմամբ:

«Այսպիսով, հայ ժողովրդին մնում է սպասել դաշնակիցների օգնութեանը: Շնորհակալ եմ ինձ ցոյց տրուած ջերմ ընդունելութեան համար եւ ցանկանում եմ ձեզ եռանդ եւ ոգեւորութիւն»:

Օգոստ. 23-ին Հասկելը շտապով մեկնեց Թիֆլիս եւ այնտեղից Բաքու՝ Ազրբէջանի կառավարութեան հետ կարգադրելու համար Շարուր—Նախիջեւանի հարցը: Եւ օգոս. 29-ին, Ռուսուլբէգովի հետ ստորագրեց մի պայմանագիր, որ բոլորովին հակասում էր Երեւանում տուած խոստումներին:

Այդ պայմանագրի համաձայն «Շարուր-Դարալագեազի եւ Նախիջեւանի գաւառներում պիտի հաստատուի չէզոք շրջան», որի կառավարութիւնը պիտի յանձնւի զնդ. Հասկելի նշանակած ընդհանուր-նահանգապետին: Երկու կողմերն այդ շրջանից հանում են իրենց զօրքերին ու գործակալներին, եւ կազմակերպւում է տեղական իշխանութիւն:

Այսպիսով, Շարուր—Դարալագեազ—Նախիջեւանի շրջանները յայտարարւում էին վիճելի, որով զնդ. Հասկելը իւրացնում էր ազրբէջանեան տեսակէտը:

Աւելին դեռ. պայմանագրի 3րդ կէտը ասում էր. «Հայաստանի կառավարութիւնը պիտի գործադրէ իր ամբողջ ազդեցութիւնը հանգստացնելու համար հայ ազգաբնակութիւնը չէզոք շրջանում եւ Զանգեզուրում»: 12րդ կէտով «Ազրբէջանի կառավարութիւնը համաձայնւում է ամէն կերպ դիւրացնել Ամերիկեան Նպաստամատոյցի պարենաւորման եւ անունդ տալու գործը Շուշիի եւ Զանգեզուրի շրջանների ազգաբնակութեան»: 13րդ կէտով «Բաքու—Ջուլֆա շինուող երկաթուղագիծը պիտի լինի բացառապէս Ազրբէջանի

կառավարութեան իշխանութեան տակ եւ ոչ ոք չպիտի խառնուի նրա կառուցման գործում»: 16րդ կէտ. «Հայաստանի եւ չեզոք գօտիների սահմանը պիտի լինի այն տեղը, որը կոչւում է Գայլի Դրունք»:

Այսպիսով, «Հայաստանի Գերագոյն Կոմիսարը» Ղարաբաղ—Զանգեզուրն էլ տալիս էր Ադրբէջանին: Ու հասկանալի է այն զարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երեւանում, երբ ստացուեց Հասկելի կարգադրութիւնը՝ «առանց դանդաղելու ստորագրել եւ յետ ուղարկել» պայմանագիրը: Զգամութիւն ու թշնամանք փնտռելը Հասկելի քայլի մէջ անտեղի էր, ի հարկէ, այնքան վրան բաց էր կատարուած խաղը: Մարդը պարզապէս զոհ էր իր անգիտութեան ու դիւրահաւատութեան եւ խաղում լրւած մեքենայութիւններին: Նրան ամէն կողմից ներկայանում էին թուրք պատգամաւորութիւնները՝ դանդաղով ու բողոքով Հայաստանի իշխանութեան դէմ. Ադրբէջանի կառավարութիւնը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թւեր, եւ խեղճ մարդը չգիտէր՝ ո՞ւմ հաւատալ, ի՞նչ անել:

Այսպէս, սեպտ. 9–ին Հասկելին ներկայացան «Հարաւ–Արեւմտեան Ադրբէջանի» ներկայացուցիչները եւ յանձնեցին 10 կէտից բաղկացած մի յուշագիր, որի մէջ գրում էին.

«Նկատի ունենալով, որ ամէն ազգ իրաւունք ունի անկախութեան եւ իր ձեռքն առնելու իր իրաւունքներն ու ճակատագիրը, Սուրմալուի, Վեդիբասարի, Միլիստանի, Շարուրի, Նախիջեւանի եւ Օրդուբադի շրջանները իրենց համարում են անբաժանելի մասն Ադրբէջանի»: Այդ շրջանների ժողովուրդը «պահանջում է թէ Ադրբէջանի կառավարութիւնից եւ թէ Անդրկովկասի դերագոյն կոմիսարից, որ այլեւս նրան չենթարկուեն Հայաստանի հպատակ լինելու դրութեան», այլապէս՝ նա «կը նախազգաստ ձեռքը ձեռքին պատուով մեռնել, քան անպատիւ կերպով ոչնչանալ դաշնակցական աւազակների ձեռքից»: Ցուշագիրը համաձայնւում էր, որ, մինչեւ Փարիզի վճռաժողովի վերջնական կարգադրութիւնը, հաստատւի ժամանակաւոր մի դրութիւն դերագոյն կոմիսարի հակակշռի տակ, պայմանով, որ վերոյիշեալ շրջանները չանջատուեն Ադրբէջանից: Միեւժամանակ, յուշագրի հեղինակները պահանջում էին կազմել «մի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներից» քննելու համար «հայ աւազակ դաշնակցականների կատարած բռնութիւնները Երեւանի վիլայէթի ազրբէջանցիների դէմ»:*)

Ցուշագրի պատճէնները ուղարկուեցին եւ անգլիական ներկայացուցիչ Օ. Ուօրդրոպին եւ Ադրբէջանի կառավարութեան: Ներկայացուցիչները տեսակցութիւն ունեցան եւ Ադրբէջանի վարչապետի եւ Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետ Սուլթանովի հետ, որոնք այդ միջոցին Թիֆլիսում էին:

Մի քանի օր յետոյ դնդ. Հասկելին յուշագիր ներկայացրին եւ «երեւան նահանգի վաղեմի բնակիչ թուրքերը», որոնք գանգատւում էին հայերի դէմ եւ խնդրում ամերիկացիների միջամտութիւնը: Ցուշագրին կցւած էր մի ցուցակ, որի համաձայն հայերը Երեւանի նահանգում աւերել էին 88 մահմե-

*) Բազուի «Ազրբէջան», 1919 թ. N° 176:

տական գիւղեր, այրել 1920 տուն եւ սպանել 131,970 մարդ։

Ազրբէջանի կառավարութիւնը հաղորդում էր, որ «1918 թ. յունուարից սկսած, նախ քան Թիւրքերի Երեւանի նահանգը գալը՝ հայերը քանդեցին աւելի քան 300 գիւղեր՝ կոտորելով այդ գիւղերի մահմետականների մեծ մասը... Թիւրքերի Երեւանի նահանգից հեռանալուց յետոյ, 1918 թւի դեկտեմբերին Սասունի զունդը զինաթափեց Երեւանի գաւառի Ղարախաչի եւ Վեդի-Չայի գիւղական համայնքների մահմետականներին եւ քանդեց Ղադլու, Շահաբլու, Ղարախաչ, Դահնագ, Ղարաբէգլեար, Աղասի-Բէգլի եւ այլ գիւղերը՝ կոտորելով յիշեալ համայնքների բոլոր մահմետականներին։ Նոյն ճակատագրին ենթարկեցին Միլլի Դարասի շրջանի մի շարք գիւղերի մահմետականները։ Համարեա միաժամանակ, հայ զօրքերը շրջապատեցին Բասար-Գեչարի աւաններն ու կոտորեցին Կըզըլ-Վան, Սուրաթան, Զագալու, Շահար եւ այլ գիւղերի մահմետականներին՝ բռնաբարելով կանանց եւ Շահար գիւղի բազմաթիւ երեխաներին այրեցին թոնիրներում։ Բնաջնջեցին եւ էջմիածնի ու Սուրմալուի գաւառների մահմետականներին... Օգոստ. 17-ին հայկական վարչութիւնը հայկական միլիցիայի անմիջական մասնակցութեամբ սկսեց բնաջնջել էջմիածնի, Սուրմալուի, Երեւանի եւ Նոր-Բայազէտի գաւառների մահմետականներին... Հայկական վարչութիւնը օգոստ. 17—31-ի կարճատեւ միջոցում կարողացել է ջարդել ու կոտորել էջմիածնի, Սուրմալուի, Երեւանի եւ Նոր-Բայազէտի գաւառների մինչեւ 50 գիւղ մահմետականներին»։*)

Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդէին ամերիկացի Հասկելի վրա, որը ո՛չ ծանօթ էր կովկասեան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժութիւնն ունեցող անգլիացու խորագիտութեամբ էր օժտուած։

Հասկելի գրութիւնը քննեց Խորհրդարանում ու կառավարութեան մէջ եւ որոշեց Հասկելի մօտ ուղարկել մի յանձնախումբ՝ պարզելու համար դրութիւնը։ Սեպտեմբերի կէսերին Թիֆլիս մեկնեցին Ա. Խատիսեանն ու Ռ. Տէր-Մինասեանը, որոնց բացատրութիւնները լսելուց յետոյ՝ Հասկելը չեղեալ համարեց Ուսուպբէգովի հետ կնքած պայմանագրի Ղարաբաղին ու Զանգեզուրին վերաբերող կէտերը։ Բայց այս անգամ էլ Ազրբէջանը մերժեց ընդունել այդ համաձայնութիւնը։

Երկար բանակցութիւններից ու ձգձգումներից յետոյ, սակայն, Հասկելը պնդեց իր տեսակէտի վրա եւ Նախիջեւանի ամերիկացի նահանգապետ նշանակելով՝ կարգադրեց մտցնել այնտեղ ամերիկեան իշխանութիւն։

Հոկտ. 16-ին նրա ներկայացուցիչ գնդ. Ջէյմս Ռէյը Նախիջեւանի զօրամասի հրամանատարին ու մահմետական ազգային խորհրդին ուղղեց մի նամակ, որով, ի միջի այլոց, ասում էր. «իբրեւ ներկայացուցիչ դաշնակիցների գերագոյն կոմիսարի, նրա բացակայութեան ժամանակ, պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ Նախիջեւանի եւ Շարուրի շրջաններում խաղաղութիւն

*) «Աշխատաւոր», 27 սեպտ. 1919 թ.։

հաստատելու նպատակով Ազրբէջանի եւ Հայաստանի կառավարութիւնները համաձայնութեան են եկել, որ այդ երկու շրջանները յառաջիկայում եւս մնան դաշնակցական վարչութեան շերտում, ամերիկեան նահանգապետի վարչական իշխանութեան ներքեւ: Միացեալ Նահանգների բանակի երկրաչափ գնդ. Էդմոնդ Լ. Դէյլին նշանակուած է նահանգապետ: Նրա իր պարտականութիւններին անցնելը ենթադրւում է հոկտ. 23–ին Նախիջեւանում: Միաժամանակ ենթադրւում է շրջանի կառավարութեան վերաբերեալ Ազրբէջանի եւ Հայաստանի՝ դաշնակիցների գերագոյն կոմիսարի հետ կապուած համաձայնութեան յայտարարումը: Մի խումբ մարդիկ, որոնց թւում են եւ սպայակոյտի սպաները, գնդ. Դէյլին ու իր սպայակոյտը եւ Ազրբէջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, Նախիջեւան կը ժամանեն հոկտ. 23–ին՝ յիշեալ արարողութեան մասնակցելու համար: Հրաւիրում ենք Նախիջեւանի մահմետական ազգային խորհրդին, այլ եւ զինուորական ու քաղաքացիական ներկայացուցիչներին նոյնպէս ներկայ լինել»:

Ազրբէջանի եւ Հայաստանի կառավարութիւնները խոստացել էին նշանակել երեքական ներկայացուցիչներ՝ գնդ. Դէյլիի հետ Նախիջեւան գնալու համար, բայց Ազրբէջանի կառավարութիւնը, վերջին րոպէին, մերժեց նշանակել: Գնդ. Դէյլին իր գործակիցներով Երեւանից դուրս եկաւ հոկտ. 24–ին եւ Նախիջեւանում ընդունուեց պատշաճ ձեւով: Նրա նահանգապետութիւնը, սակայն, իրական փոփոխութիւն չմտցրեց դրութեան մէջ. Նախիջեւանը վաստօրէն մնաց ինքնավար, մինչեւ 1920 թւի ամառւայ դէպքերը:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ*)

Շարուր—Նախիջեւանի դէպքերին զուգընթաց Ազրբէջանը գործօն քայլերի դիմեց եւ ղարաբաղցիներին ընկճելու համար:

Ղարաբաղը բռնում է Հայաստանի հիւսիս-արեւելեան մասը եւ իր աշխարհագրական ու բնական պայմաններով, իր ազգագրական կազմով հանդիսանում է Հայկական Բարձրաւանդակի անմիջական շարունակութիւնը: Ցարական իշխանութեան օրով նա մտցուած էր Թըֆլիսի նահանգի մէջ, որի գաւառները ձեւուած էին այնպէս, որ ամէն տեղ հայերը կազմում էին փոքրամասնութիւն: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ Շուշիի, Ջիւանշիրի եւ Ջիբրայիլի լեռնային մասերը — Խաչէն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ — կազմում են մի ամբողջութիւն՝ հայ հոծ ազգաբնակութեամբ:

Ղարաբաղի ազգային կազմի մասին Դ. Անանունը հետեւեալ տեղեկութիւններն էր տալիս «Հայաստանի կօօպերացիա»-յի 1920 թ. սեպտեմբերի համարում.

«Ղարաբաղի լեռնաստանում 1917 թ. տեւալներով ապրում էին՝ հայեր՝ 150,000 (70%), մուսուլմաններ՝ 58,000 (27%), մնացած ազգեր՝ 5000 (3%): Այժմ ազգութիւնների թուական յարաբերութիւնը միանգամայն փոխուած է: Ուրիշ ազգերից ոուսները հեռացել են Ռուսաստան: Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գիւղերից հեռացել են նաեւ թուրքերը: Դրա դիմաց լեռնցիներն են ապաստանել տափաստանում եղած հայ գիւղերի բնակիչները (Զիվանչիր գաւ.): Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Ջրաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը աւելի է ամրացել թուով: Իսկ եթէ սրան աւելացնենք նաեւ, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գիւլիստանը վերջին տարիների ընթ ու զարձի մէջ վերականգնեց իր կապը նախկին միաւորի

---

*) Այս գլխի համար, բացի տպուած նիւթերից, օգտուել եմ նաեւ Ղարաբաղ-Զանգեզուրի գործիչների, 1922 թ. յուլիսին, Թաւրիզում, կազմած գեկուցումից եւ Հ. Հ. Պատուիրակութեան ու Հ. Հ. Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան «Դործ»-երից:

հետ եւ ընթացաւ հայկական քաղաքականութեան հունով, պատկերն աւելի կատարեալ կը լինի»:

Ռուսական յեղափոխութիւնը Ղարաբաղում եւս ընդունեց խանդավառութեամբ: Յեղափոխութեան առաջին օրերից Շուշիում կազմւեց հայ–թրքական միջկուսակցական մի բիւրօ, որի կողմից նշանակւեց չրջանային գործադիր կոմիտէ, որը պէտք է վարէր Ղարաբաղ–Զանգեզուր միացեալ չրջանի կառավարական գործերը, բայց, իրօք, գործաւ միայն Ղարաբաղի իշխանութիւնը: Հայերն ու թուրքերը համերաշխ էին. գաւառի հայկական մասերում գերակշռում էին հայերը, թրքականում՝ թուրքերը: Անգամ հոկտեմբերեան յեղաշրջումից եւ Երեւանի, Կարսի, Գանձակի ու Բաքուի թրքական չարժումներից յետոյ էլ անդորրութիւնը Ղարաբաղում չխանգարւեց:

Այսպէս տեւեց դրութիւնը մինչեւ 1918 թւի ամառը, երբ լուծւեց Անդրկովկասի միութիւնը, կովկասում երեւացին թիւրքերը, եւ Նուրի փաշան Գանձակում ձեռնարկեց իսլամական բանակի կազմակերպութեան: Միջկուսակցական բիւրօն՝ չկամենալով ենթարկւել նորաստեղծ Ազրբէջանին՝ որոշեց կազմել տեղական ինքնուրոյն իշխանութիւն եւ իր տեղը նշանակեց կոմիսարների խորհուրդ անունով մի մարմին, խառն՝ հայերից ու թուրքերից: Իսկ մի ամիս անցած էլ այս մարմինը փոխարինւեց ազատ Ղարաբաղի ժողովրդական կառավարութեամբ:

Սակայն, թիւրք–ազրբէջանեան սադրանքների հետեւանքով հետզհետէ Ղարաբաղի կեանքն էլ խառնափնթորւեց: Անիշխանութիւնը սկսեց գլուխ բարձրացնել ամէն կողմ: Ելիսաւետպօլի ճանապարհը փակւեց հայերի առջեւ: Մի շարք վայրերում թուրքերի կողմից տեղի ունեցան հայերի թալան ու սպանութիւններ: Իրենց հերթին, հայերն էլ պատասխանում էին նոյն ձեւով. ռուսական ռազմաճակատից վերադարձած զինուորները կամ սովահար գիւղացիք, յաճախ, յարձակւում էին քոչւորների վրա՝ թալանի եւ կողոպուտի նպատակով: Բայց եւ այնպէս, հայ եւ թուրք ղեկավարների ջանքերով, մինչեւ 1918 թ. ամառը ընդհանուր խաղաղութիւնը չխախտւեց: Շուշի քաղաքում իրար յետեւից հրաւիրւեցին երեք խառն համագումարներ, որոնք նպաստեցին հայ–թրքական բարիհարեւանական յարաբերութիւնների պահպանման:

Դրութիւնը փոխւեց արմատապէս, երբ Ղարաբաղի հորիզոնի վրա երեւացին թիւրքերը: Թիւրքական մի բրիգադ, Ջէմիլ Ջահիդ բէյի հրամանատարութեան տակ եւ տեղական թուրք բէգերի առաջնորդութեամբ, Ելիսաւետպօլից, ուղղւեց դէպի Շուշի՝ ճանապարհին ոմբակոծելով ու զինաթափելով հայկական գիւղերը: Միաժամանակ յարձակման ենթարկւեց ու ոչնչացւեց Շուշիից դէպի Զանգեզուր տանող ճանապարհին ընկած Ղարադլաղ հայկական մեծ գիւղը, որը չաղկապի դեր էր կատարում Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ:

Համաղարաբաղցիական երրորդ համագումարը, որ տեղի ունեցաւ սեպտ. 18—20–ին, Շուշիում, թիւրքերի յառաջխաղացման առթիւ, որոշեց չդիմադրել եւ ընդունել Ազրբէջանի իշխանութիւնը: Սեպտ. 26–ին թիւրքերը առանց կռւի մտան Շուշի եւ անմիջապէս զինաթափ արին հայերին: Այս բանը

սաստիկ գրգռեց հայերին, եւ երբ թիւրքերը տեղափոխում էին գրաւած զէնքերը, նրանք յարձակուեցին ու գրաւեցին, որի պատճառով թիւրքերը կախեցին երեք հայեր– Հոկտ. 1–ին, դինադադարութեան յաջորդեցին ձերբակալութիւններ. բազմաթիւ հայ գործիչներ բռնուեցին ու նետուեցին բանտ:

Ղարաբաղի գիւղացիութիւնը՝ վրդովուած քաղաքացիների փոքրոգութիւնից ու դաւաճանութիւնից՝ սկսեց պատրաստուել դիմադրութեան: Երջանը բաժանուեց 4 զինուորական մասերի՝ իւրաքանչիւրի դլխին ընտրելով մի–մի ժողովրդական հրամանատար: Ամէն կապ գաւառի ու քաղաքի միջեւ խզուեց: Միաժամանակ Դիզակի ու Վարանդայի գործիչները մարդ ուղարկեցին Զանգեզուր, Անդրանիկի մօտ՝ թախանձելով նրան օգնութեան հասնել:

Թիւրքական հրամանները գիւղերում չէին գործադրւում. թիւրքերի իշխանութիւնը Շուշիից եւ խճուղուց այն կողմ չէր տարածւում: Այս դրութեան վերջ տալու նպատակով թիւրքերը որոշեցին դիմել զէնքի եւ միաժամանակ վերջնագիր ուղարկեցին զանգեզուրցիներին: Հոկտ. 18–ին թիւրքական մի զօրամաս, տեղական թիւրքերի եւ մի քանի հայերի առաջնորդութեամբ, մտաւ Վարանդայի Մամնա գիւղը, բայց հանդիպեց հայ մարտիկների ուժեղ դիմադրութեան, ջարդուեց եւ ամօթահար փախաւ յետ՝ հայերին թողնելով 2 թնդանօթ ու մեծ քանակութեամբ պատերազմական աւար: Ու քիչ յետոյ, հոկտ. 31–ին, դաշնակիցների պահանջով, թիւրքերը թողին Ղարաբաղն ու հեռացան:

Անդրանիկը լսելով Ղարաբաղցիների խնդիրը՝ չտապով պատրաստուեց եւ նոյեմբ. 16–ին շարժուեց դէպի Շուշի ու հասաւ Աւդալլար գիւղը՝ Շուշիից 40 վերստ վրա: Անդրանիկի հրամանի համաձայն, Դիզակի զինուած ուժերի հրամանատար Սոկրատ բէգ Մելիք–Շահնազարեանը պէտք է գրաւէր Քիրսի ու Սաղսաղանի դաղաթներն ու Թիռ ջուրը, բայց փոխանակ այդ հրամանը կատարելու՝ նա անցաւ քաղաքի մօտի Քարին–Տակ գիւղը եւ յարաբերութեան մէջ մտաւ քաղաքագլուխ Գեւրասիմ Մելիք–Շահնազարեանի հետ, որը հակառակ էր Անդրանիկի արշաւանքին: Մելիք–Շահնազարեանը իր եւ Սոկրատ բէգի կողմից նամակ ուղարկեց Անդրանիկին եւ կանգնեցրեց նրա յառաջխաղացումը: Նոյն ժամանակ հեռագիր հասաւ զօր. Թոմսընից, որը հրահանգում էր Անդրանիկին դադարեցնել կռիւները: Դրա վրա Անդրանիկը առաւ իր ուժերն ու քաշուեց Զանգեզուր: Նրա հեռանալուց յետոյ, թուրքերը ոչնչացրին Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ ընկած Հարար, Սպիտակաշէն եւ Գետրոսաշէն հայկական գիւղերը՝ աւելի եւս դժուարացնելով Ղարաբաղի եւ Զանգեզուրի յարաբերութիւնը:

Դեկտեմբերի սկզբին Շուշի հասաւ անգլիական զինուորական առաքելութիւնը: Այդ առթիւ ղարաբաղցիք որոշեցին յարաբերութեան մէջ մտնել անգլիացիների հետ: Գաւառի 4 երջանների եւ քաղաքի մէկական ներկայացուցիչներից կազմուեց Ղարաբաղի Ժամ. Խորհուրդ, որը բանակցութեան մէջ մտաւ անգլիացիների հետ՝ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրութիւնը: Անգլիացիք խուսափեցին այդ հարցից՝ պատասխանելով, թէ իրենք

քաղաքական լիազօրութիւններ չունեն, թէ այդ հարցով կը զբաղուեն զօր. Թոմսընից հրահանգ ստանալուց յետոյ, բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին՝ ընդունել Ազրբէջանի իշխանութիւնը:

Անգլիացիների համար Ղարաբաղի, ինչպէս եւ Զանգեզուրի ճակատագիրը որոշուած էր. նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ազրբէջանին: 1919 թ. յունւ. 15–ին, Ազրբէջանի կառավարութիւնը զօր. Թոմսընի հաւանութեամբ, Ղարաբաղ—Զանգեզուրի ընդհանուր–նահանգապետ նշանակեց դր. Խոսրով բէգ Սուլթանովին, որը հայերի աչքին հայատեացի եւ ջարդարարի համբաւ էր վայելում: Այդ լուրն առնելուն պէս, յունւ. 26–ին, Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը վճռական բողոք ուղարկեց Ազրբէջանի կառավարութեան՝ յայտարարելով, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են:

Այս բողոքին Ազրբէջանի կառավարութիւնը պատասխանեց, որ խնդրի առարկայ եղող «չրջանները Ազրբէջանի անվիճելի եւ անխախտ մասն են կազմում» եւ որ «ընդհանուր–նահանգապետութիւն հաստատելու որոշումը ոչ մի դէպքում չի խախտում Հայաստանի հողային իրաւունքները: Ընդհակառակը, Հայաստանի կառավարութեան բողոքը մենք համարում ենք խախտում մեր դերիշխանութեան եւ մեր ներքին գործերին միջամտելու փորձ»:

Մի քանի շաբաթ յետոյ, փետր. 24–ին, Հայաստանի կառավարութիւնը ստացաւ բրիտանական գերագոյն կոմիսարի Երեւանի ներկայացուցիչ զօր. Վ. Աբրիից զօր. Ֆորեստիէ–Ուօկերի մէկ գրութիւնը, որով հաղորդում էր զօր. Թոմսընի կողմից, թէ, «դր. Սուլթանովը գնում է Շուշի, իբրեւ ընդհանուր–նահանգապետ Զանգեզուրի, Շուշիի եւ Ղարաբաղի չրջանների: Նա այդ անում է առանց դնելու որեւէ պահանջ Ազրբէջանի ապագայ վարչութեան վերաբերմամբ. նա գնում է այնտեղ միայն օրէնքը եւ կարգը պահպանելու համար»: Արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը անմիջապէս պատասխանեց զօր. Ֆորեստիէ Ուօկերին, թէ՝ «Հայաստանի կառավարութիւնը չի կարող զօր. Թոմսընի հեռագրի հաղորդելու փաստը համարել արտայայտութիւն նոյնիսկ անուղղակի ճանաչման Ազրբէջանի կառավարութեան թէկուզ ժամանակաւոր դերիշխանութեան իրաւունքի դր. Սուլթանովի իշխանութեանը ենթարկուելիք գաւառների վիճելի չրջանների վրա»:

Զօր. Թոմսընի կարգադրութեան հետ չէր կարող հաշուել եւ Ղարաբաղի ազգաբնակութիւնը: Կամենալով անգլիացիների ներկայութեամբ հանդէս բերել ղարաբաղցիների հաւաքական կամքը՝ ժամ. Խորհուրդը, փետր. 12–ին, հրաւիրեց համազարաբաղցիական 4րդ համագումարը, որը մի անգամ եւս որոշեց՝ Ղարաբաղը համարել Հայաստանի անբաժան մաս, ո՛չ մի դէպքում չճանաչել Ազրբէջանի իշխանութիւնը եւ մերժել ազրբէջանեան կառավարութեան պահանջը՝ ուղարկելու խորհրդարանի պատգամաւորներ: Բացի այդ, համագումարը ընտրեց ազգային խորհուրդ եւ յանձնեց նրան որոշումների գործադրութիւնը:

Փետրուարի վերջերին Շուշի եկաւ անգլիական նոր ներկայացուցիչ մայոր Մաք Մեղենը 400 զինուորներով: Նրա հետ եկան եւ զօր. Թոմսընի եւ

ՂԱՐԱԲԱՂ



Գ· ԲԱԼԱՅԵԱՆ



ԼԵՒՈՆ ՋԱՐԱՖԵԱՆ



ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ



ԵՂ· ԻՇԽԱՆԵԱՆ



Ա· ՄԻՔԱՅԵԼԵԱՆ



Խ· ՄԵԼՔՈՒՄԵԱՆ

ազրբէջանեան կառավարութեան համաձայնութեամբ Բագուի Հայոց Ազգ. խորհրդի եւ Հ. Ց. Դաշնակցութեան կենտ. կոմիտէի ներկայացուցիչներ Գ. Բալայեանը եւ Լ. Զարաֆեանը: Սկսուեցին բանակցութիւններ Մաք Մեղենի, դր. Սուլթանովի եւ երկու հայ ներկայացուցիչների միջեւ: Մաք Մեղենը առաջարկեց Բագուից եկած հայ ներկայացուցիչներին ստորագրել մի յայտարարութիւն, որ Ղարաբաղը մինչեւ Զաբուղ ժամանակաւորապէս յանձնւում է Ազրբէջանին: Պատասխանը եղաւ կտրուկ մերժում: Այն ժամանակ Մաք Մեղենը զրահապատ ինքնաշարժ նստեցրեց Գ. Բալայեանին ու Լ. Զարաֆեանին եւ հեռացրեց Ղարաբաղից: Հայ ազգաբնակութիւնը վրդովուած՝ փակեց խանութները եւ բողոքի ցոյց արաւ անգլիական ներկայացուցչութեան առջեւ:

Անգլիացիների բոլոր ջանքերն անցան ապարդիւն. ղարաբաղցիները մերժեցին ճանաչել դր. Սուլթանովի իշխանութիւնը:

Ի պատասխան Հայաստանի կառավարութեան բողոքների եւ ղարաբաղցիների հակառակութեան, Բագուի անգլիական զօրքերի հրամանատար գնդ. Շատելվորտը, ապր. 3-ին, հրատարակեց հետեւեալ յայտարարութիւնը.

«Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է իր գործադրութիւն Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ եւ Ջիվանշիր գաւառների բովանդակ ազգաբնակութեան, որ՝ 1) Ազրբէջանի կառավարութեան 1919 թ. յունւ. 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ եւ Ջիվանշիր գաւառների ընդհանուր-նահանգապետ եւ վայելում է անգլիական հրամանատարութեան աջակցութիւնը: 2) Գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն, ամբողջ ազգաբնակութեան կարիքների գոհացման համար, ընդհ.-նահանգապետին կից կազմակերպւում է հայ ու մահմետական վեց իրաւունք ներկայացուցիչներից մի խորհուրդ: 3) Անգլիական հրամանատարութեան ներկայացուցչի հանդամանքով կարող է խորհրդի մէջ մտնել անգլիական առաքելութեան սպաներից մէկը: 4) Ընդհ.-նահանգապետութեան սահմաններում ծառայող բոլոր պաշտօնեաների ռոճիկը եւ միւս ծախսերը հոգացւում են ազրբէջանեան դանձարանից: 5) Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կը ստանան Հաշտութեան վեհաժողովում: 6) Ընդհ.-նահանգապետութեան սահմաններում կատարւող բոլոր զինւորական տեղափոխութիւնների մասին նախօրօք տեղեկացւում է անգլիական առաքելութեան: 7) Սոյն հաղորդագրութեամբ անգլիական հրամանատարութիւնը ուզում է մատնանշել, որ ընդհ.-նահանգապետի վրա դրւած պարտականութիւնների գործադրութիւնը՝ իր մասին ընդհ.-նահանգապետութեան մէջ կարգի եւ անդորրութեան պահպանման, ընդհ.-նահանգապետից եւ նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները պէտք է իրագործւեն առանց առարկութեան, եւ անգլիական հրամանատարութիւնը աջակցութիւն է ցոյց տալիս ձեռք առնւած բոլոր օրինական միջոցներին»:

Այս յայտարարութիւնը հանդիպեց Հայաստանի կառավարութեան եւ ղարաբաղցիների բուռն բողոքին ու դիմադրութեան: Հայաստանի արտ. գործ. նախարարը, ապր. 16-ին, բրիտանական կովկասեան հրամանատարութեան քաշեց հետեւեալ հեռագիրը. «Ապր. 3-ին Բագուի բրիտանական ուժե-

րի հրամանատար գնդ. Շատելվորթի ստորագրութեամբ անգլիական զինուորական առաքելութեան կողմից յայտարարութիւն է տրուած, որով Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ, եւ Ջիվանշիր գաւառների ազգաբնակութիւնը պարտադրւում է «առանց հակաճառելու՝ կատարել» Ազրբէջանի կառավարութեան նշանակած ընդհանուր-նահանգապետ դր. Սուլթանովի եւ իր պաշտօնեաների «հրամաններն ու ձեռնարկները»: Դեռ եւս յունուար ամսին Հայաստանի կառավարութեան կողմից բողոքուել էր Ազրբէջանի կառավարութեան առաջ Զանգեզուրը եւ Հայկական Ղարաբաղը Ազրբէջանի կողմից նշանակած ընդհանուր նահանգապետութեան սահմանների մէջ յայտարարելու դէմ: Բրիտանական հրամանատարութեան ուղղուած մի քանի գրութիւններով Հայաստանի կառավարութեան կողմից, ես պատիւ եմ ունեցել յայտարարել, որ թէ տեղական բնակչութիւնը եւ թէ մեր կառավարութիւնը չեն կարող հաշտուել, որ Զանգեզուրն ու Հայկական Ղարաբաղը ենթարկուեն Ազրբէջանի կառավարութեան կողմից կարգուած իշխանութեան, բայց յօժարութեամբ խնդրում են, որ բրիտանական հրամանատարութիւնը գործադրէ իր հեղինակաւոր եւ հաշտարար միջամտութիւնն ու ազդեցութիւնը այդ շրջանում: Հայաստանի կառավարութեան յատուկ յանձնարարութեամբ պարտք ունեմ հաղորդելու ձերդ գերազանցութեան, որ մեր կառավարութիւնը մնում է նոյն կարծիքին եւ հայեցակէտին»:

Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը, անգլիական բարձր հրամանատարութեան հաւանութեամբ, Շուշի ուղարկեց ներկայացուցիչ Մ. Արղումանեանին: Մաք Մեղենը սրան էլ առաջարկեց յայտարարել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը ենթարկւում են Ազրբէջանին: Մերժելով՝ Արղումանեանն եւս արժանացաւ Բալայեանի ու Զարաֆեանի բախտին. արտաքսեց Ղարաբաղից: Ղարաբաղից հեռացուեց նաեւ Ազգ. Խորհրդի նախագահ Աւան Շահնազարեանը:

Այս բոլոր անյաջող փորձերից յետոյ գնդ. Շատելվորթը, ապրիլի վերջերին, մեկնեց Ղարաբաղ՝ անձամբ պարտադրելու ազրբէջանեան իշխանութիւնը: Այդ առթիւ, ապր. 23-ին, Շուշիում, գումարուեց Ղարաբաղի հինգերորդ համագումարը, որի առաջին նիստում Շատելվորթն ու դր. Սուլթանովը աշխատեցին համոզել ժողովականներին՝ ենթարկուել Ազրբէջանին: Համագումարի պատգամաւորները բուռն ցասումով բողոքեցին ու մերժեցին համակերպուել Շատելվորթ—Սուլթանովի պահանջներին: Համագումարը միաձայն ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը, 1919 թ. ապր. 23-ին (ն. տ.) իր անպաշտօն նիստում լսելով անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչ գեներալ Շատելվորթի Ղարաբաղի ժամանակաւոր իշխանութեան վարչական ծրագիրը եւ քննելով նոյն համագումարի ապր. 24-ի պաշտօնական նիստում՝ որոշեց.

1. Միանգամայն կողմնակից եւ ծարաւի լինելով կարգի եւ խաղաղութեան վերահաստատմանը Ղարաբաղում.

2. Բոլոր ցանկութեամբ եւ անկեղծութեամբ ընդառաջ գնալով անգլի-

կան հրամանատարութեան առաջարկին՝ խաղաղ բարեկամական յարաբերութիւններ պահպանել հարեւան թուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրագործել է Ղարաբաղի հայութիւնը.

3. Ի նկատի առնելով, որ Ղարաբաղի վերաբերեալ տերիտորիալ եւ սահմանային հարցերը պէտք է վերջնական լուծում ստանան խաղաղարար կոնֆերանսում, ինչպէս եւ ինքը դէն. Շատելվորտը յայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամաւորներ ուղարկող Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկութեան եւ կենսական շահերին, ինչպիսի համախոհականներ եւ գրաւոր իմպերատիւ մանդատներ տուել է նա իւր ընտրած պատգամաւորներին:

Համագումարը անընդունելի է համարում Ազրբէջանի հետ առընչութիւն ունեցող որեւէ վարչական ծրագիր եւ այդ ծրագրի բռնի իրականացումը կեանքի մէջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջեան լուրջ խռովութիւններ ու արիւնահեղութիւններ, որի պատասխանատուութիւնը իր վրա վերցնել ո՛չ մի դէպքում չի կարող Ղարաբաղի հայութեան 5րդ համագումարը»:

Այս բանաձեւը դիւանի ամբողջ կազմի եւ 48 պատգամաւորների ստորագրութեամբ յանձնուեց Շատելվորտին, որը դժգոհ ու զայրացած վերադարձաւ Բագու: Դրանից յետոյ, դր. Սուլթանովը, անգլիացիների օժանդակութեամբ սկսեց զօրքեր եւ զինուորական պատրաստութիւններ տեսնել, որպէսզի բռնի ուժով հնազանդեցնի ղարաբաղցիներին: Մայիսի վերջերից ազրբէջանեան զօրքերը շրջապատում էին քաղաքը եւ ամուր դիրքեր գրաւում:

Յունիս 3–ին մայոր Մաք Մեղենը իր մօտ կանչեց Ազդ. Խորհրդի նախագահ՝ Եղիշէ Իշխանեանին եւ անդամներ Յ. Թումանեանին եւ Ա. Տէր–Ասատուածատրեանին եւ ուրիշներին — 7 հոգի — եւ ստորագրութիւն առաւ, որ այլ օրուանից այլեւս քաղաքականութեամբ չպիտի զբաղուեն: Նոյն օրը ազրբէջանեան զօրքերը դիրքեր գրաւեցին հայկական թաղում: Հայերի մէջ սկսուեց խուճապ: Փակուեցին խանութներն ու արհեստանոցները եւ հաւաքուեցին անգլիական ներկայացուցչութեան առջեւ՝ պահանջելով ձեռք առնել չտապ միջոցներ, որպէսզի տեղի չունենայ արիւնհեղութիւն: Մաք Մեղենը վստահացրեց, թէ ոչինչ չի պատահի, բայց նոյն ժամին տեղեկութիւն ստացուեց, որ դր. Սուլթանովը պահանջում է իրեն յանձնել վերոյիշեալ 7 գործիչներին՝ սպառնալով, հակառակ դէպքում, քաղաքը ռմբակոծել թնդանօթներից: Մաք Մեղենի խորհրդով, 7 գործիչները հեռացան քաղաքից, անգլիական զինուորների հսկողութեան տակ: Սուլթանովի ուզածն էլ այդ էր:

Յաջորդ օր, յունիս 4–ին, թրքական թաղից սկսուեց հրացանաձգութիւն ու յարձակում հայերի վրա: Քաղաքում գտնուող հայ ինքնապաշտպանողական խմբերը դիմեցին հակայարձակման եւ գրաւեցին հայկական դիրքերը, որ մի օր առաջ բռնել էին թուրքերը: Ամբողջ օր տեւեց հրացանաձգութիւնը, եւ քաղաքի հայ բնակչութիւնը ապրեց տագնապալի ժամեր: Տեսնելով, որ ընդհարումը կարող է խորանալ, Մաք Մեղենը հրամայեց թուրքերին

եւ հայերին վերջ տալ հրացանաձգութեան եւ մաքրել դերքերը. հայերը հնազանդեցին, եւ նրանց դերքերը գրաւեցին անգլիական զինուորները. թուրքերը դուրս չեկան իրենց դերքերից: Թուրքերի գնդակով սպանուեց անգլիական մի զինուոր եւ վիրաւորուեց մէկ ուրիշը:

Յունիս 5-ին, անգլիական ներկայացուցչութեան եւ ազգբէջանեան հրամանատարութեան աչքի առջեւ, թուրք ու քիւրդ զինուած խուժանը կոտորեց Շուշիից 2 վերստ հեռու գտնուող Ղայրալիքենդ հայկական մեծ գիւղը: Անլուր բռնութիւններ գործուեցին անպաշտպան կանանց ու երախաների վրա: Մի քանի հարիւր մարդ սպանուեց, գիւղը աւարի տրուեց ու քար ու քանդ եղաւ:

Ղայրալիքենդի կոտորածից յետոյ, մօտակայ Կրկըժան գիւղի հայ բնակիչները սպիտակ դրօշ բարձրացնելով՝ ուղեւորուեցին Ղանքենդ դիվիզիայի պետի մօտ՝ պաշտպանութիւն խնդրելու նպատակով: Ղանքենդից ուղարկուեց մի զօրամաս սպայի գլխաւորութեամբ, որը առաջարկեց հայ գիւղացիներին իրենց զէնքը յանձնել ի պահ հարեւան թուրքերին եւ տեղափոխուել Ղանքենդ: Այդպէս էլ արուեց, բայց Կրկըժանը այնուամենայնիւ աւերուեց ու թալանուեց յուլ. 7-ին. բոլոր հայերի տները հրդեհուեցին զօրքերի աչքի առջեւ, զինուորական չտարբեց մի վերստ հեռաւորութեան վրա:

Նոյն պայմաններում, զօրքի աչքի առջեւ, յաջորդ օրը, աւերուեց ու թալանուեց եւ Փահլիւլ հայաբնակ գիւղը, որի աւերածութեան մասնակցեցին եւ ասկեարները:

Ղանքենդից ոչ հեռու, իր կալւածում, թուրք պահակների ներկայութեան սպանուեց Նաւաւլիա Աթաբէկեանն ու իր աղախինը. դիակները կորան անհետ:

Թուրք ամբոխը, մասնակցութեամբ քրդական հեծելազօրքի, յարձակուեց Դաշալթի գիւղի վրա, որը փրկուեց միայն անգլիացիների միջամտութեամբ: Յարձակում եղաւ եւ Դաշքենդ գիւղի վրա, որի բնակիչները ցոյց տուին դիմադրութիւն: Սուլթանովը պատժելու համար գիւղացիներին՝ զէնքը ուղարկեց նրանց դէմ:

Ասկերանի կիրճի մօտի Նախիջեւանիկ եւ ուրիշ հայ գիւղերը տառացի իմաստով դրուեցին պաշարողական վիճակի մէջ: Գիւղական տների դէմ հանդիման կանգնեցուեցին կանոնաւոր զօրքեր, որոնք նեղում էին գիւղացիներին, թալանում ու փչացնում նրանց այգիները, բռնութիւններ գործ դնում, կանանց յետեւից ընկնում եւ հրացանաձգութեամբ վախի տակ պահում ամենքին:

Անզօր որեւէ իրական դարման հասցնելու, յունիս 12-ին մայոր Մաք Մեղնը անգլիական ներկայացուցչութեան եւ զինուորների հետ հեռացաւ Ղարաղից՝ տանելով իր հետ հայ ժողովրդի անաչառման աւետարանը, որին այնպէս արժանի էր: Սուլթանովի ձեռքերն այլեւս բոլորովին ազատ էին:

Ղարաղի կոտորածները սաստիկ յուզում առաջ բերին Կովկասի հայութեան բոլոր խաւերում: Առաջին արձագանգը լսուեց Էջմիածնից: Ամենայն Հայոց Կաթուղիկոսը զօր. Փորիին ուղղեց հետեւեալ հեռագիրը. «Մենք համոզուած ենք, որ դաշնակիցների հովանաւորութեան չնորհիւ մեր հօտի համար հասել է փրկութիւնը երկար տանջանքներից ու չարչարանքներից: Բայց

եւ այնպէս, Ղարաբաղում հոսում է անմեղ արիւնը կանանց, երեխաների եւ նրանց հերոսական պաշտպանների, որոնց ոգին ու աղաղակը հասնում է մինչեւ մեր պատրիարքական աթոռը: Մենք չենք կարող մնալ անկարեկից դիտող կատարուող սարսափների եւ ձայն չբարձրացնել ի պաշտպանութիւն անմեղ զոհերի: Այդ պատճառով դիմում ենք ձեզ, իբրեւ Մեծն Բրիտանիայի ներկայացուցչի եւ խնդրում պաշտպանել նոր բնաջնջման նախօրեակին գտնուող մեր հոգեւոր զաւակներին եւ վերացնել վիճելի խընդիրը: Կատարելապէս հաւատում ենք, որ հզօր Մեծն Բրիտանիայի ներկայացուցիչը կիրագործէ մեր օրինական բաղձանքները»:

Յունիս 16–ին Երեւանում տեղի ունեցաւ հրապարակային մեծ ժողով, ուր կրակոտ ճառեր խօսեցին Դ. Անանունը, Ա. Յովհաննիսեանը, Վ. Տօրէնին, Դրօն եւ ուրիշները: Ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Յունիս 16–ի հրապարակային ժողովը խորը յուզումով լսեց այն լուրը, որ Ղարաբաղում, անգլիական մխիթարի աչքերի առջեւ Ազրբէջանի զօրքը Սուլթանովի դլխաւորութեամբ աւերել է հայկական վեց գիւղեր, կոտորել է աւելի քան 600 կին ու երեխաներ, սպառնում է շարունակել կոտորածը եւ ստիպել Հայկական Ղարաբաղը արեան մէջ ողողելու: Մենք համոզուած ենք, որ այս չարունակութիւնն է Ենվեր–Թալէաթեան քաղաքականութեան: Այնտեղ, Թիւրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքերի առջեւ կոտորածի ենթարկուեց մի լիմոնաւոր հայ ժողովուրդը. այստեղ, Ազրբէջանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջեւ աշխատում են ոչնչացնել Ղարաբաղի հայ ազգաբնակութիւնը եւ հաստատել իրենց արիւնոտ կարգերը այս երկրում: Յորը դիտակցելով մեր պարտականութիւնը՝ վճռականապէս բողոքում ենք այն բարբարոսութեան դէմ, որ գործադրում է Ազրբէջանը: Պահանջում ենք անյապաղ հեռացնել Ղարաբաղի սահմաններից Սուլթանովի աւազակախումբը: Մենք յայտարարում ենք, որ Ղարաբաղի իրաւունքների պաշտպանութեան հարցում մեր կառավարութիւնը լիակատար անկախութիւն կարող է գտնել մեր կողմից: Բա՛ւ է, որքան կոտորուեց հայ ժողովուրդը Թիւրքիայում, Ղարաբաղում, Ազրբէջանում: Մենք այլեւս չենք կարող թոյլ տալ, որ եւրոպական մեծ ժողովուրդների ներկայացուցիչների աչքերի առջեւ մեր կանայք ու երեխաները ենթարկուեն կոտորածի: Պահանջում ենք, որ դաշնակից պետութիւնների կովկասում գտնուող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի եւ աւերի քաղաքականութեան: Պահանջում ենք հայկական կառավարութիւնից բոլոր կերպով բողոքել դաշնակից ներկայացուցիչներին եւ յանուն քաղաքակրթութեան ու մեր ժողովուրդի ֆիզիքական գոյութեան պաշտպանել հայ ժողովուրդը ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով: Մենք բողոքում ենք եւ մեր հիացմունքն ենք յայտնում Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռւում են Սուլթանովի բռնակալութեան դէմ յանուն ժողովուրդների ինքնորոշութեան ու քաղաքակրթութեան»:

Ապա, հազարաւոր բազմութիւնը ցոյց արաւ Յորհրդարանի ու կառավարական շէնքի առջեւ եւ նւագախմբի ուղեկցութեամբ շարժւեց դէպի անգլիական ներկայացուցչութիւնը, որի առջեւ նոյնպէս արտասանուեցին ճառեր եւ յանձնուեց բանաձեւը:

Թիֆլիսում տեղի ունեցան երկու բազմամարդ հրապարակային ժողովներ — յունիս 8-ին եւ 22-ին: Վերջինին մասնակցում էին քառասունից աւելի ազգային ու հայրենակցական կազմակերպութիւններ ու հազարաւոր ներկաներ: Նախագահում էր Յովհ. Թումանեանը: Ընդունուած բանաձեւը պահանջում էր դաշնակիցների միջամտութիւնը, դր. Սուլթանովի վտարումը Ղարաբաղից, կոտորածի հեղինակների ձերբակալութիւնն ու պատժելը եւ Ղարաբաղի միացումը Հայաստանին:

Բողոքի ձայն բարձրացրին եւ Հայաստանի կառավարութիւնը, Ադրբէջանի Խորհրդարանի հայ պատգամաւորներն ու Ղարաբաղի Ազգ. Խորհուրդը: Վերջինս, Ղայբալիքենդի կոտորածից անմիջապէս յետոյ մի ընդարձակ հաղորդագրութեամբ դիմեց դաշնակից հրամանատարութեան ու հանրային կարծիքին՝ պնդելով, որ պատահած դէպքերի միակ պատասխանատուն դր. Սուլթանովն է: Ղարաբաղի հայ ազգաբնակութիւնն ու Ազգ. Խորհուրդը միշտ խուսափել են ընդհարումների առիթներ տալուց. Նրանց գլխաւոր պահանջը եղել է՝ Ղարաբաղը նկատել վիճելի շրջան եւ այնտեղ հաստատել անգլիական չէզոք իշխանութիւն, մինչեւ որ սահմանների հարցը վերջնականապէս որոշուի: Հակառակ ծանր պայմանների, Ազգ. Խորհրդին յաջողուել է պահել հայ-թրքական խաղաղութիւնը եւ խուսափել բախումներից: Սուլթանովը Ղարաբաղ գալով՝ ձեռնարկում է յարձակողական քայլերի՝ որոշելով զէնքի ուժով հնազանդեցնել հայկական շրջանները: Հանդիպելով դիմադրութեան՝ դիմում է բռնութեան եւ պրովոկացիայի, հայերի դէմ գրգռում է մահմեդական տգէտ զանգուածներին ու քոչւորներին եւ գործիք դարձնում քիւրդ հրոսախմբերը: 580 հայ է սպանուել Ղարաբաղում, եւ այդ արեան պատասխանատուութիւնն ամբողջապէս ընկնում է Սուլթանովի վրա: Մանրամասնօրէն թւելով Ղարաբաղի դէպքերը՝ Ազգ. Խորհուրդը հաւաստիացնում է, որ Շուշին դրաւելը դեռ եւս Ղարաբաղի նուաճում չի նշանակում եւ որ ո՛չ մի համաձայնութեան չի կարելի հասնել Սուլթանովի հետ: Յայտնում է նոյնպէս, որ շուտով գումարուելու է Ղարաբաղի հայութեան 6րդ համագումարը, որը նորից քննութեան կառնէ իր եւ Ադրբէջանի փոխյարաբերութեան հարցը:

Նոյն իմաստով զեկուցում բերեց եւ Շատելվորտի ներկայացուցիչ գնդ. Գլատերբերգը, որը ուղարկուել էր Ղարաբաղ ծանօթանալու համար կոտորածների մանրամասնութիւններին: Նա եւս պնդում էր, որ կոտորածի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է Սուլթանովի վրա, որը նախօրօք քաղաքի եւ Ղայբալիքենդի մօտերը դրել էր քրդական խմբեր եւ նրանց միջոցով ջարդել հայերին: Եթէ Սուլթանովը կամենար, կոտորած չէր լինի եւ անդորրութիւնը Ղարաբաղում չէր խանգարուի: Գնդ. Գլատերբերգը առաջարկում էր պատասխանատուութեան ենթարկել Սուլթանովին:

Միեւնոյն պահանջի վրա պնդում էին եւ Ադրբէջանի Խորհրդարանի հայ պատգամաւորները, որոնց կողմից պատգամաւոր Գ. Զուրաբը գնացել էր Ղարաբաղ, տեղն ու տեղը ուսումնասիրել դէպքերը եւ նոյնպէս յանգել այն եզրակացութեան, որ պատահածների ամբողջ պատասխանատուն Սուլթանովն էր: Խորհրդարանում արտասանած իր ընդարձակ ճառով Զուրաբը բազմաթիւ

փաստերով ու պաշտօնական վաւերագրերով հաստատեց, որ Ղայբալիքէնդի եւ միւս գիւղերի կոտորածը Սուլթանովի գործն էր։ Խորհրդարանը, սակայն, գտաւ, որ Ղարաբաղի «տեղական իշխանութեանց եւ, ի մասնաւորի, ընդհանուր-նահանգապետի գործողութիւնների մէջ չկայ ապօրինութեան եւ ոչ մի փաստ»։

Ղայբալիքէնդի կոտորածների եւ անգլիացիների հեռանալու տպաւորութեան տակ, Սուլթանովի հրաւէրով, յունիս 28-ին, Վարանդայի Շօշու գիւղում (Շուշիից 4 վերստի վրա) հաւաքուեց Ղարաբաղի 6րդ համագումարը, որին մասնակցում էին եւ Բաքուի ղարաբաղցիների ներկայացուցիչներն ու Ազրբէջանի կառավարութեան ներկայացուցիչ Ռուստամբէգովը։ Օրակարգի հարցն էր՝ Ազրբէջանի իշխանութեան ճանաչումը։ Սուլթանովը կանչած էր Բաքու․ անգլիացիք էլ ներկայացուցիչ չէին ուղարկել։ Այդ պատճառով համագումարը ընտրեց 3 հոգինոց մի մարմին — Ռուբէն Շահնազարեան, Արամայիս Տէր-Դանիէլեան, Գերասիմ Խաչատրեան — տալով նրան Ղարաբաղի կողմից Ազրբէջանի կառավարութեան հետ բանակցելու լիազօրութիւն եւ ինքը ցրուեց։

Ընտրուածները մեկնեցին Բաքու՝ տանելով իրենց հետ համաձայնութեան մի նախագիծ։ Ճանապարհին Գեր․ Խաչատրեանը սպանուեց Թուրքերի ձեռքով, իսկ միւս երկուսը հասան Բաքու եւ ղարաբաղցիների հայրենակցական Միութեան ու Ազգ․ Խորհրդի հետ խորհրդակցելուց յետոյ՝ բանակցութեան մէջ մտան Ազրբէջանի կառավարութեան ու Սուլթանովի հետ եւ յանգեցին որոշ համաձայնութեան։

Նախնական համաձայնութիւն կայացնելուց յետոյ, Ղարաբաղի ներկայացուցիչները եւ Սուլթանովը վերադարձան Ղարաբաղ։ Սուլթանովը արտաքնապէս փոխեց իր վերաբերումը․ շատ սիրալիր էր դէպի հայերը եւ ամէն կերպ աշխատում էր գրաւել նրանց համակրանքը։ Հաստատուեց հայկական թաղում, մի հայի տանը եւ յայտարարեց, որ Շուշի—Եւլախ ճանապարհը այլեւս բաց է, եւ հայերը ազատ են ճամբորդելու․ նրանց գլխից մի մազ իսկ չի ընկնի։ Հայերն էլ, իրենց հերթին, աշխատում էին առիթ չտալ դժգոհութեան ու բողոքութիւնների։

Այս երեւութական խաղաղութեան տակ, սակայն, կրքերը շարունակում էին եռալ, եւ երկու կողմերն էլ տենդագին պատրաստութիւնների մէջ էին։ Հայերը պատրաստւում էին 7րդ համագումարին, որը պէտք որոշէր Բաքւում կնքուած համաձայնութեան ճակատագիրը․ ղարաբաղցիները պէտք է ասէին, թէ ի՞նչ է իրենց վճիռը՝ ընդունել Ազրբէջանի իշխանութի՞ւնը, թէ շարունակել պայքարը։ Այս հողի վրա սուր տարակարծութիւններ կային քաղաքացիների եւ գիւղացիների միջեւ․ վերջինները մեղադրում էին քաղաքացիներին, որ նորից դաւաճանել են Ղարաբաղին՝ համաձայնելով համակերպուել Ազրբէջանի պայմաններին։

Միւս կողմից պատրաստութիւններ էր տեսնում եւ Սուլթանովը․ մի կողմից աշխատում էր կողմնակիցներ որսալ հայերի մէջ՝ պառակտելով նրանց, միւս կողմից շտապում էր գրաւել ռազմագիտական կարեւոր կէտերը,

աւելացնել զօրքերի թիւը, մարզել եւ ամրացնել նրանց: Հաւաքում էր սպառնական բռունցք, ազդելու համար համագումարի վրա:

Օգոստ. 12–ին, Շուշու գիւղում, բացուեց 7րդ համագումարը: Սուլթանովը չներկայացաւ նրան եւ ուղարկեց առաջնորդ Վահան եպ.–ին մի քանի քաղաքացիների հետ: Համագումարը մերժեց լսել սրանց եւ մի խիստ բողոք ուղղեց Սուլթանովին՝ Գ. Խաչատրեանի եւ ուրիշների ազատութեան դէմ: Ի պատասխան, օգոստ. 14–ին, Սուլթանովը ներկայացրեց համագումարին մի վերջնագիր՝ պահանջելով 48 ժամուայ ընթացքում ընդունել Բագուում մշակուած համաձայնագիրը՝ սպառնալով, հակառակ պարագային, «դիմել զինուորական ոյժի»:

Համագումարը երկարօրէն քննեց ստեղծուած դրութիւնը եւ համոզուելով, որ դրսից ոչ մի օգնութիւն չի կարող ստանալ — անգլիացիները պաշտպանում էին ազրբէջանցիներին, իսկ Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի չէր լուրջ օգնութիւն հասցնելու — այլ եւ կշռելով սեփական ուժերը՝ խոհեմութիւն համարեց զիջելու եւ օգոստ. 15–ին որոշեց ընդունել Բագուի համաձայնագիրը: Յաջորդ օր, օգոստ. 16–ին նրա 16 ներկայացուցիչները դնացին Շուշի, Սուլթանովի մօտ եւ օգոստ. 22–ին ստորագրեցին հետեւեալ համաձայնագիրը.

«Նկատելով, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը լուծելու է Հաշտութեան Վեհաժողովում, որ ամէն մի ընդհարում վնասակար է Ղարաբաղի ազգաբնակութեան համար, որ Ղարաբաղի հարցը ինչ ձեւով էլ լուծուելու լինի, հայերն ու մահմետականները ապրելու են միասին, Ղարաբաղի Հայոց 7րդ համագումարը իր 1919 թ. օգոստ. 15–ի առաւօտեան նիստում որոշեց կանգ առնել Ազրբէջանի Հանրապետութեան կառավարութեան հետ կայացած համաձայնութեան հետեւեալ կէտերի վրա.

1. Սոյն ժամանակաւոր համաձայնութիւնը կողմերն ընդունում են մինչեւ որ այդ հարցը վճռուի Հաշտութեան Վեհաժողովում, որպիսի լուծումը հաւասարապէս պարտադիր է երկու կողմերի համար էլ:

2. Ղարաբաղի Շուշի, Ջիվանշիր եւ Ջիրքայիլ գաւառների հայերով բնակեցուած լեռնային մասը (Դիպակ, Վարանդա, Խաչէն, Ջրաբերդ) ժամանակաւորապէս իրեն համարում է Ազրբէջանի Հանրապետութեան սահմաններում:

3. Շուշիի, Ջիվանշիրի եւ Ջիրքայիլի գաւառները մնում են իրրեւ առանձին վարչական միաւոր Ղարաբաղի ընդհանուր–նահանգապետութեան եւ նրա ներքին կազմակերպութիւնն այնպէս է, որ լեռնային հայկական մասում վարչութիւնը նշանակւում է հայերից՝ փոքրամասնութեան իրաւունքների բաշխաւորութեամբ:

4. Ղարաբաղի լեռնային մասում (Դիպակ, Խաչէն, Վարանդա եւ Ջրաբերդ) վարչական պաշտօնատար անձինք նշանակւում են խորհրդի հայ անդամների առաջարկութեամբ:

5. Ղարաբաղի ընդհանուր–նահանգապետութեան կից հիմնւում է 6 հոգինոց մի խորհուրդ — 3 հայ եւ 3 մահմետական:



ՎԱՀԱՆ ԽՈՐԻՆԻ



Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ



Գ. ԽԱՏԻՍԵԱՆ



Ե. ՍԱՐԳՍԵԱՆ



ՄԱԼԽԱՍ



Հ. ՍԱՐԳՍԵԱՆ

6· Խորհրդի հայ անդամները ընտրում են Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակութեան համագումարից: Համագումարն իրաւունք ունի վերընտրելու:

7· Միջնեղային բնոյթ ունեցող սկզբունքային բոլոր հարցերը չեն կարող կիրառուել կեանքում առանց նախօրօք խորհրդում քննելու:

8· Խորհուրդն ունի նախաձեռնութեան իրաւունք ընդհանուր-նահանգապետութեան կարդաւորման ու կառավարութեան վերաբերուող հարցերում:

9· Խորհուրդն ունի ընդհանուր-նահանգապետութեան վարչութեան վրա հսկելու ու հակակշռելու իրաւունք՝ առանց վարչութեան գործողութիւններին խառնուելու իրաւունքի:

10· Հաստատւում է ընդհանուր-նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտօն, որպիսի պաշտօնին նշանակւում է հայ:

11· Քաղաքացիական մասի օգնականի պաշտօնի համար հայկական համագումարը ներկայացնում է Ազրբէջանի կառավարութեան երկու թեկնածու, որոնցից մէկը հաստատւում է:

12· Ղարաբաղի հայերը վայելում են մշակութային ինքնավարութեան իրաւունք:

13· Մշակութային ինքնավարութեան իրաւունքը կիրառւում է Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի կողմից, որը ընտրւում է Ղարաբաղի հայերից պարբերաբար հրաւիրուող համագումարներում: Համագումարը հրաւիրում է Ազգ. Խորհուրդը:

14· Ազրբէջանի Հանրապետութեան կառավարութիւնը հակակշռում է Հայոց Ազգային Խորհրդի գործունէութիւնը հայ լիազօրների միջոցով:

15· Զօրամասերը կենում են Յանքենդում եւ Շուշիում, խաղաղ ժամանակւայ կազմով:

16· Զօրամասերի ամէն տեղափոխում Ղարաբաղի, Շուշի, Ջիվանշիր եւ Ջիրայիլ գաւառների լեռնային հայաբնակ մասերում կարող է կատարուել խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնութեամբ:

17· Քաղաքական համոզումների համար ոչ ոք չի կարող հետապնդման ենթարկուել ոչ դատական, ոչ էլ վարչական կարգով:

18· Քաղաքական պատճառներով մեկնելու հարկադրուած բոլոր հայերը իրաւունք ունեն վերադառնալու իրենց տեղերը:

19· Ղարաբաղում դադարեցւում է հայ եւ մահմետական բնակչութեան զինաթափումը մինչեւ Ղարաբաղի հարցի որոշելը Հաշտութեան Վեհաժողովում:

Յանիօթութիւն· Քանի որ ամբողջ Ազրբէջանում յայտարարւած է զինաթափութիւն, խօսք կարող է լինել միայն դադարեցման մասին:

20· Ազրբէջանի Հանրապետութեան կառավարութիւնը ցոյց է տալիս նիւթական եւ բարոյական աջակցութիւն Ղարաբաղի ազգաբնակութեան՝ մահմետական ու հայ քանդւած գիւղերը չուտով վերականգնելու համար:

21· Միջնեղային յարաբերութիւնները աւելի լաւ կարգաւորելու նպա-

տակով խորհուրդը պարբերաբար հրաւիրում է հայ-մահմեդական ընդհանուր եւ տեղական համագումարներ:

22· Միութիւնների, խօսքի ու մամուլի կատարեալ ազատութիւն: Իսկ ժողովները, քանի որ ամբողջ Ազրբէջանում տիրում է զինուորական դրութիւն, արուում են վարչութեան կողմից:

23· Մասնաւոր եւ պաշտօնատար անձանց բոլոր յանցագործութիւնները հետապնդւում են դատական եղանակով, բացի Պետական Պաշտպանութեան Կոմիտէի 1919 թ· յունիս 11-ի պարտադիր որոշումով ընդհանուր դատաստանական ենթակայութիւնից հանւած յանցանքներից:

24· Մինչեւ այժմ տեղի ունեցող միջցեղային ընդհարումներին մասնակցելու համար ոչ ոք չի ենթարկւում պատասխանատուութեան:

25· Սոյն համաձայնութիւնը ուժի մէջ է մտնում Ղարաբաղի Հայոց 7րդ համագումարի ընդունած վայրկեանից:

26· Սոյն համաձայնութիւնը իր ուժի մէջ է մնում բոլոր դէպքերում՝ պաշարողական, զինուորական եւ այլն:

Ղարաբաղի 7րդ համագումարի նշանակած պատւիրակները լիազօր են՝ ստորագրելու համագումարի բոլոր անդամների ընդունած վերջնական ժամանակաւոր համաձայնութիւնը Ազրբէջանի կառավարութեան հետ, ընտրելու 2 թեկնածու Ղարաբաղի ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետի օգնականի պաշտօնի համար եւ Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետի կից գտնուող խորհրդի 3 անդամներ ու լուծելու բոլոր այն տեխնիկ հարցերը, որոնք կապւած են Ղարաբաղի կառավարութեան հետ՝ ընդունւած ժամանակաւոր համաձայնութեան հիման վրա:

1· Դանիէլ Առաքելեան, 2· Աբրամ Գեսիրէդեան, 3· Սիմօն Պօղոսեան, 4· Հիւանդ է, 5· Սմբատ Բալայեանց, 6· Բենիամին Բարաքէոխվեանց, 7· Խարայէլ Գիւլիքէոխվեանց, 8· Աբրամ բէգ Իշխանեան, 9· Բաշխի Մուրատեան, 10· Յովհաննէս Աբրամեան, 11· Ստեփան Ստեփանեան, 12· Յակոբ Բալասաննեան, 13· Տիգրան Մելիք-Գասպարեան, 14· Աւանէս Գասպարեան, 15· Լեւոն Վարդանեան, 16· Արսէն Յովհաննիսեան»:

Այս համաձայնագրի բոլոր կէտերի ամփոփումը նոյն օրն եւ ել, օգ· 22-ին, Սուլթանովը հրատարակեց առանձին յայտարարութեամբ եւ հանդիսաւորապէս պարտաւորութիւն ստանձնեց՝ կատարելու կեանքի մէջ: «Այսուհետեւ, ասում էր նա այդ յայտարարութեան մէջ, նոր դարաշրջան է բացւում Ղարաբաղի աղդարնակութեան կեանքում»:

Նոր դարաշրջան, դժբախտաբար, չբացւեց, բայց Սուլթանովը իրաւունք ունէր հպարտանալու, որովհետեւ, թէեւ ժամանակաւոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ազրբէջանի մաս: «Ժամանակաւորը» «մշտական» դարձնելը ապագայի հարց էր, եւ ազրբէջանցի գործիչները չէին հրաժարւում այդ մտքից: Մի ուրիշ յայտարարութեան մէջ, յետագային, Սուլթանովը աւելի ցայտուն կերպով արտայայտեց այդ տրամադրութիւնը· «Ներանք, որ երազում են Ղարաբաղի հայկական լեռնային մասը բաժանել նրա մահմե-

տական մասից, ասում էր նա, կարող են համարել կամ ցնորամիտներ եւ կամ իրենց ժողովրդի թշնամիներ: Ղարաբաղի դաշտավայրից պոկած լեռնամասի աղգաբնակութիւնը սովից կը կոտորւի. դաշտավայրի բնակչութիւնն էլ, առանց լեռների, կը կործանւի թէ տնտեսապէս (անասնաբուծութիւն) եւ թէ ֆիզիքապէս (մալարիա): Իսկ եթէ մի անգամ ընդունենք իբրեւ անժըխտելի ճշմարտութիւն, որ Ղարաբաղը տնտեսապէս եւ քաղաքականապէս անբաժան է, հեշտ կը լինի լուծել այն հարցը, թէ ո՞ր պետութեան է պատկանելու նա: Եւլախից սկսած մահմետական հոծ բնակչութեան շրջանն է տարածւած: Մօտենալով լերան ստորոտին՝ տեսնում ենք հայ-մահմետական խառն բնակչութեան շրջան: Բարձրանալով լեռները՝ գտնում ենք համարեա բացառապէս հայ աղգաբնակութիւն: Այդ վերջին շրջանի յետեւը դարձեալ մահմետական շրջաններ են՝ Զանգեզուրը եւ աւելի հեռուն՝ Նախիջեւանը, որից յետոյ սկսւում է Հայաստանի հողը: Այսպիսով հայկական շրջանը շրջապատւած է մահմետական շրջաններով: Բացի այդ, պէտք է նկատել, որ ձմեռւայ երեք ամիսների ընթացքում ճանապարհը Նախիջեւանից Զանգեզուր, ուրեմն, եւ Հայաստանից Զանգեզուր բոլորովին կտրւում է:

Այսպիսով, Ղարաբաղը, իբրեւ տնտեսական մի ամբողջութիւն, ճըն-չիչ մեծամասնութեամբ բաղկանալով մահմետական աղգաբնակութիւնից եւ հայկական շրջանը լինելով շրջապատւած մահմետական շրջաններով, իր ո՛չ մի մասով կապ չունի Հայաստանի հետ եւ ֆիզիքական հնարաւորութիւն չունի յարաբերութիւն պահելու նրա հետ: Միւս կողմից Ղարաբաղը գըտնւում է տնտեսական եւ, այսպէս ասենք, բնախօսական սերտ կապակցութեան մէջ Աղբէջանի հետ եւ միացումը այս վերջինի հետ պահանջում են Ղարաբաղում ապրող երկու աղգութիւնների շահերը»:

Պարզ ու կտրուկ. Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Աղբէջանին կցելու խնդիր չէ, այլ եւ Զանգեզուրն ու Նախիջեւանը Աղբէջանին միացնելու:

Օգոստ. 22-ի համաձայնութիւնը ցնծութեամբ ընդունւեց ամբողջ Աղբէջանում: Մուսաւաթի պարագլուխ Ռասուլ Զադէն թարգմանը եղաւ ընդհանուր ուրախութեան:

«Ղարաբաղը, գրում էր նա,*) մեր հայրենիքի այդ սիրուն վայրը ազատւեց մեր յամառ դրացիների ոտնձգութիւններից, որոնք չլսւում էին մեր տնտեսական կեանքը, եւ մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրութեան մատնել: Առանց տեղի տալու աւելորդ արիւնհեղութեան՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը եւ ընդունեց Աղբէջանի գերիշխանութիւնը:

Նախիջեւանը, որ իր բնական պայմաններով իսկապէս «Նախշը-Ջիհան» (աշխարհի զարդանկար) է եւ անբաժան մասը Աղբէջանի, չնորհիւ իր հերոս ու անձնուէր զաւակների հայրենասիրութեան, օգուտից ապստամբելու իրաւունքից՝ միանալու համար հայրենիքին, որից բաժանւել էր խաբելով:

*) «Աղբէջան (թուրքերէն), Բագու, 28 օգ. 1919 թ.:

Նախիջեւանը իր սահմանից դուրս չպրտեց բռնագրաւող Հայաստանի բանակը:

Գալով Զանգեզուրին, որ ցաւ է դարձել մեզ համար եւ մէջտեղը կանգնած է սպառնալով մեր նպատակներին, — կարող ենք յոյս ունենալ, որ նա էլ մօտ ժամանակում կը դրւի անվնաս դրութեան մէջ, եւ որ Առտաթա գետից եւ Սամուրի կամուրջից սկսած մինչեւ Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կը բացւի անարգել մի ճամբայ: Այդ նշանակում է, որ այս կերպով Ազրբէջանի հոզային պահանջների կարեւոր մասը լուծում է ստացել»:

Եւ, իրօք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» յետոյ, Ազրբէջանը սկսեց տենդագին պատրաստութիւններ տեսնել Զանգեզուրն էլ «անվնաս դրութեան մէջ» դնելու համար:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԶԱՆԳԵԶՈՒՐ — ԳՈՂԹՆ*)

Ղարաբաղից յետոյ Զանգեզուրը...

1919 թ. սեպտ. 7-ին, Ադրբէջանի Գլխաւոր Սպայակոյտի պետը հետեւեալ գաղտնի մտքերն էր թելադրում Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետ դր. Սուլթանովին.— «Ղարաբաղի հարցի խաղաղ կարգադրութիւնը հարկադրում է մտածել, որ Զանգեզուրի գաւառի կցումը տեղի կունենայ առանց զինուած կռուի, որովհետեւ նրա հայ ազգաբնակութիւնը, Նախիջեւանի փլուզումից յետոյ, դրուած է երկու կրակի մէջ եւ հազիւ թէ համարձակուի դիմադրելու մեզ, առանց թիկունքում նախկին աջակցութիւնն ունենալու: Սակայն եւ այնպէս, Ղարաբաղի անդորրութեան ապահովումը եղել է ու կը լինի մեր մշտական մտահոգութիւնը՝ Կամաւորական Բանակի եւ նրա բնական ու մնայուն դաշնակից Հայաստանի հետ ընդհարելու պարագային: Գործերի ներկայ վիճակում Հայաստանը մեզ համար վտանգաւոր չէ, բայց նման բարենպաստ կացութիւնը չի կարող երկար տեւել, եւ մենք պէտք է պատրաստենք աւելի վատ դրութեան համար:

Ղարաբաղի վերջնական կորուստի հետ հայերը չեն կարող հաշտուել և, անկասկած, կաշխատեն օգտագործել ամէն յարմար առիթ կորուստը յետ դարձնելու նպատակով: Այդ բոլորը մեզանից կը պահանջէ, զօրաշարժի դէպքում, զօրքեր թողնել Խանքենդում, իսկ ապագային նաեւ Գորիսում՝ հայերի վրա հսկելու համար: Այդպիսով, Ղարաբաղը կարող է մեր ոչ մեծ բանակից բաւական զգալի ուժեր գրաւել ճակատից: Սակայն, կան միջոցներ Ղարաբաղի պաշտպանութեան համար ո՛չ միայն դաշտային զօրքերը չթուլացնելու, այլ ճակատի համար կենդանի ույժ էլ հանելու նրա խորքերից՝ թողնելով բաւականաչափ զօրամասեր Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետութեան շրջանի կարգի ապահովութեան համար:

---

*) Այս գլուխը կազմելիս աղբիւր եմ ունեցել՝ «Кавказскій Календарь». 1917 г.», А. Шахатунянъ. «Административный передѣлъ Закавказскаго Края». 1917. Тифлисъ.

Այն լայնօրէն օգտուել եմ զանգեզուրցի ծանօթ գործիչ Ց. Տէրունիի «Կառավարական Օրգանները Զանգեզուրում» ձեռագիր աշխատութիւնից ու Հ. Հ. Պատւիրակութեան դիւանի նիւթերից:

Այդ նպատակով հարկաւոր է օգտագործել քրդական հիանալի մարտական ոյժը, կազմակերպել նրանցից հետեւակ ու ձիաւոր մասեր «Համիդիէ» գնդերի օրինակով, որոնց գործնական օգտակարութիւնը փորձւած է թիւրքերի կողմից վերջին պատերազմի ընթացքին: Քրդական գնդերի անվեհեր գործունէութեան մասին փոքր-ասիական, պարսկական եւ Միջագետքի ռազմաճակատներում՝ միաձայն խօսում են պատերազմին բոլոր մասնակցողները:

Ինքդ զօրամասերի խաղաղ ժամանակի շարքեր ստեղծելու համար ենթադրւում է կազմակերպել քրդական ձիաւոր գունդ եւ մի հրացանաձիգ դումարտակ, որը պատերազմի ժամանակ կը վերածւի 4 դումարտակի: Զինապարտ տարիքի քրդերը զինւորական պարտականութիւն կը կատարեն իրենց մասերում, իսկ պատերազմի դէպքում կը կազմւեն նոր մասեր էլ (երկրորդ եւ երրորդ հերթի գնդեր ու դումարտակներ), որոնց մի մասը կը յատկացւի ռազմաճակատին, միւսները կը մնան Ղարաբաղում:

Քրդական զօրամասերի կազմակերպութիւնը հանգամանօրէն մշակելու համար անհրաժեշտ է առ այժմ պարզել, թէ որքան հետեւակ ու ձիաւոր մարտիկներ կարող են տալ քրդերը: Հաղորդելով ձեզ այս մասին՝ խնդրում եմ ձերդ գերազանցութեան՝ յայտնել ձեր կարծիքը եւ հաղորդել խնդրւած թւերը»:

Այս նամակը կատարեալ յստակութեամբ պարզում է, թէ ի՞նչ ուղղութեամբ էր զարգանում Ազրբէջանեան պետական միտքը, որի համար թիւրքական «Համիդիէ» գնդերը համարւում էին իդէալ: Ցոյց է տալիս նաեւ, որ ազրբէջանցիների համար հերթի էր դրւում Զանգեզուրի կցումը, որպէսզի Սամուրից մինչեւ Արաքս հաստատւի Ազրբէջանի իշխանութիւնը:

Զանգեզուրը, ցարական իշխանութեան օրով, կազմում էր Ելիզաւետպոլի (Գանձակի) նահանգի մէկ գաւառը՝ Ղարաբաղի ու Պարսկաստանի միջեւ՝ արեւմուտքից ունենալով Նախիջեւանն ու Դարալագեազը, իսկ արեւելքից Կարեապինի գաւառը: Զանգեզուրի գաւառը բռնում էր 6743 քառ. վերստ տարածութիւն եւ 1916 թ. ունէր 226,398 բնակիչ, որից հայ՝ 95,054, թուրք շիա՝ 110,637, թուրք սիւննի՝ 8,966, քիւրդ՝ 3,638, ռուս՝ 1,709 եւայլն:

Զանգեզուրի վարչական սահմանները էլ արհեստական կերպով գծած էին այնպէս, որ ո՛չ մի ժողովուրդ նրա մէջ զգալի մեծամասնութիւն չէր կազմում: Ըստ հայկական վարչական վերաբաժանման ծրագրի Զանգեզուրից պէտք է զատւէին մի շարք գուտ թրքարնակ շրջաններ ու կցւէին Կարեապինի թրքական գաւառին, որով Զանգեզուրը կը դառնար հայ մեծամասնութիւն ունեցող (65%) մի գաւառ՝ 136 հազար բնակչութեամբ, որից 88 հազարը հայ, 46ը թուրք եւ 2ը՝ ուրիշ ազգութիւններ:

Ռուսական յեղափոխութեան լուրը Զանգեզուրում էլ առաջ բերեց ընդհանուր ոգեւորութիւն: Հետզհետէ ամէն կողմ կազմւեցին յեղափոխական կոմիտէներ՝ փոխարինելու համար հին իշխանութեանը: Դէպքերի բերումով՝ գաւառը կտրւեց նահանգական կենտրոն Գանձակից եւ իր գործերը վարում էր ինքը՝ Գորիսի ու Հանքերի խառն կոմիտէների միջոցով: Այստեղ

էլ հայերն ու Թուրքերը սկզբի շրջանում ապրում էին հաշտ ու համերաշխ:

Մարտի սկիզբներին Ղարաբաղն ու Զանգեզուրը միացւեցին եւ կազմըւեց Գանձակից անկախ մի առանձին շրջան՝ Շրջանային Գործադիր կոմիտէի գլխաւորութեամբ: Այս վերջինի ջանքերով կազմւեց Գորիսի գործադիր կոմիտէ, որին ենթարկւում էին բուն Զանգեզուրն ու Սիսեանը, իսկ Ղափան-Մեղրիի շրջանը մնաց Հանքերի կոմիտէի իշխանութեան տակ:

Սակայն, շրջանային նոր կազմակերպութիւնը յաջողութիւն չունեցաւ. փաստօրէն Ղարաբաղն ու Զանգեզուրը ապրում էին առանձին, իրարից կտրւած, եւ Զանգեզուրի կացութիւնը երթալով վատանում էր: Մի կողմից նիւթական ու պարենաւորման սուր տագնապը, միւս կողմից՝ հողային վէճերը, հայ-թրքական յարաբերութիւնների լարւելը — այս ամենը անհրաժեշտ դարձրին աւելի ուժեղ իշխանութեան ստեղծումը: Օգոստ. 15-ին գումարւեց համազանգեզուրեան գործադիր կոմիտէի նիստը՝ բաղկացած 31ական հայ ու Թուրք պատգամաւորներից, որոնք ընտրւել էին Օզակոմի ներկայացուցիչների ղեկավարութեամբ, գաւառի 31 գիւղախմբերից: Հայ պատգամաւորներից 24ը դաշնակցականներ էին, մնացած 7ը՝ սոց.-դեմոկրատ, սոց.-յեղափոխական եւայլն: Թուրքերից՝ 28 մուսաւաթական եւ 3ը՝ սոց.-դեմոկրատ:

8 օրւայ նիստերի ընթացքում լուծւեցին գաւառին վերաբերւող խընդիրները եւ ընտրւեց 4 հոգինոց մի դիւան, 7 անդամներից հողային կոմիտէ, գաւառապետ, օգնական, շրջանների ոստիկանապետներ, որոնք և կազմեցին գաւառի իշխանութիւնը՝ դիւանի վերին հսկողութեան տակ: Դիւանի նախագահ ընտրւեց Նազար բէգ Սուլթանովը, փոխ-նախագահ՝ Ց. Տէրունին, հողային կոմիտէի ղեկավար՝ Արշ. Շիրինեանը եւ Մ. Հ. բէգ Խոջահանեկին, գաւառապետ՝ Մեսրոպ բէգ Սարատիկեանը, օգնական՝ Խանլար բէգը:

Գործադիր կոմիտէի նիստերի ժամանակ տեղի ունեցաւ կրքոտ պայքար, մասնաւորապէս, մուսաւաթականների կողմից, որոնք աշխատում էին իշխանութիւնը առնել իրենց ձեռքը: Այդ պայքարը, Ջալիլ բէգ Սուլթանովի գլխաւորութեամբ, շարունակւեց դուրսն էլ եւ ծայր-աստիճան սրեց հայ-թրքական յարաբերութիւնները: Դրան նպաստում էին եւ բախումները Թուրք քոչւորների եւ տեղական հայ ու ռուս գիւղացիների միջեւ: Տեղական Թուրքերը բռնում էին քոչւորների կողմը, որից առաջ էին գալիս ընդհարումներ եւ տեղական հայերի ու Թուրքերի միջեւ: Սեպտեմբերին աղուդի-վաղուդեցի Թուրքերի ձեռքով սպանւեցին մի քանի սիսեանցիներ: Երթեւեկութիւնը խանգարւեց. ճանապարհները դարձան վտանգաւոր:

Գործերը է՛լ աւելի խճճւեցին, երբ Թուրքերը Զանգեզուրի Թրքական մասը յայտարարեցին Գորիսից անկախ, եւ Դոնդարլու գիւղում կազմեցին առանձին կառավարութիւն՝ Մահմեդական Կոմիտէ անունով՝ Ջալիլ բէգի նախագահութեամբ: Թրքական շրջանների հայերը տեղափոխւեցին հայկական վայրեր. Գորիսից Թուրքերը քաշւեցին Թրքական շրջանները: Փաստօրէն Զանգեզուրը բաժանւեց երկու, իրարից անկախ մասերի: Նոյեմբեր ամսից լուծւեց եւ Գործադիր Կոմիտէի դիւանը, պետական հիմնարկութիւն-

նները փակուեցին, գաւառապետը քաշուեց գործից, եւ ամէն բան խառնուեց իրար:

Այսպէս տեւեց դրութիւնը մինչեւ 1918 թ. յունուարի վերջերը: Յունու. 25–ին Գորիսում կազմուեց 18 հոգիանոց միջկուսակցական մի խորհուրդ — 9 դաշնակցական եւ 9 միւս կուսակցութիւններից — որը աշխատեց կազմակերպել հայկական շրջանների իշխանութիւնը, բայց նիւթական միջոցների ու պետական մեքենայի բացակայութեան պատճառով յաջողութիւն չունեցաւ:

Գարնան բացւելով՝ անիշխանութիւնը աւելի եւս սաստկացաւ: Մայիսին սկսուեց քոչը. թուրք քոչւորները պատրաստւում էին իրենց հօտերով բարձրանալ Զանգեզուրի սարերը: Յաջողութեան դէպքում այդ պիտի նշանակէր ստոյգ մահ զանգեզուրցիների համար: Եւ ահա, ինքնաբերաբար, իրարից անկախ, Սիսեանում, Գորիսում, Ղափանում ու Մեղրիում կազմուեցին տեղական մարմիններ, որոնք իրենց ձեռքն առին ինքնապաշտպանութեան գործը: Նշանակեցին շրջանապետներ եւ անցան կազմակերպական աշխատանքի:

Մայիսի վերջերին Զանգեզուր հասաւ եւ Ենուսի, Սասունի ու Վանի դաշնակցականների մի մասը՝ զինուած ուժերով: Ենուսցիների մի հարիւրեակը եղոյի գլխաւորութեամբ եւ վանեցիների մի վաշտը իրենց դրին Սիսեանի մարմնի տրամադրութեան տակ, իսկ Սասունցի Մանուկը, Մուշեղը եւ Զօլոն երեք հարիւրեակով անցան Գորիս: Այդ ուժերը կազմեցին այն կորիզը, որի շուրջ համախմբուեցին զանգեզուրցի մարտիկները:

Յունիսի սկզբներին, հազարաւոր զինուած քոչւորներ խռնուեցին Հադարի գետի ափին՝ պատրաստ ջնջի ուժով բանալու սարերի ճամբան: Նրանց օգնութեան էին եկել եւ Հաջի–Սամլուի ու Մուսուլմանլարի թուրքերը: Հարամի Դիւզ վայրում տեղի ունեցան թուրքերի եւ հայերի միջեւ արիւնահեղ ճակատամարտներ, եւ թուրքերը պարտուած՝ դիմեցին փախուստի՝ կուի դաշտում թողնելով բազմաթիւ դիակներ: Կարճ ժամանակ յետոյ, Հաջի–Սամլուի թուրքերը յարձակուեցին Սիսեանի վրա՝ կամենալով միանալ Թրքական Ջուլ շրջանին եւ այդպիսով Զանգեզուրը կտրել Դարալագեազից, բայց ջարդուած քշուեցին այստեղից էլ: Ընդհարումներ եղան եւ Զէյվա–Հադարակ գծի վրա, Մեղրիում. այստեղ եւս թուրքերը չդիմացան ու փախան Օրդուբաթի կողմերը:

Այսպիսով, Զանգեզուրն ազատուեց քոչի մղձաւանջից: Յուլիսին Սիսեան եկաւ Շուշիի զնդի սպայակոյտը՝ զնդապետ Մելիք–Շահնազարեանի գլխաւորութեամբ: Իսկ, յուլիսի վերջերին, զանգեզուրցիների կողմից Երեւան ուղարկուեց մի յատուկ պատւիրակութիւն՝ յայտնելու համար Հայաստանի կառավարութեան, որ Զանգեզուրը վճռել է մնալ Հայաստանի մաս եւ պատրաստ է մինչեւ մահ կուել, եւ խնդրելու, որ Հայաստանի կառավարութիւնը Զանգեզուր ուղարկէ 8–10 ձեռնհաս սպայ ու զրամական մի–ջոց. Հայաստանի կառավարութեան վիճակն այն օրերին այնպէս էր, որ ի հարկէ, չօշափելի օգնութիւն չէր կարող հասցնել. վարչապետ Ե. Քալանտարեանին սահմանափակուեց միայն բարոյական քաջալերանքով: Ըստ էութեան,



Ա· ՄԵԼԻՔ – ՄՈՒՍԵԱՆ



Գ· ՆՓԴԵՏ



ՂԱԶԱՐ ՓՈՉԱՐԵԱՆ



ԲԺ· Մ· ՄԻՆԱՍԵԱՆ



Գ· ՏԷՐ – ՄԻՆԱՍԵԱՆ



Ց· ՏԷՐՈՒՆԻ



Մ· ԳԻՒՆԱԶԱՐԵԱՆ



Զ· ԵՕԼԵԱՆ





աւելի դրական չեղաւ եւ Ներքին գործոց նախարար Արամի արածը, բայց նա խոստացաւ կենդանի կապ պահել Զանգեզուրի հետ եւ մօտիկ ապագայում ուղարկել մի ձեռնհաս հրամանատար ու սպաներ:

Յուլիսի վերջերին Զանգեզուր մտաւ Անդրանիկը եւ հրամանատարի պահանջը այդպիսով որոշ ժամանակի համար լուծուեց*):

Օգոստոսի սկզբներին, Կարսի ու Շարուր-Նախիջեւանի հետ միաժամանակ, Թուրքերն ընդհանուր յարձակման անցան եւ Զանգեզուրի վրա, բայց նորից հանդիպեցին յամառ դիմադրութեան: Զանգեզուրցիների խնդրանքով ինքնապաշտպանութեան գլուխն անցաւ Անդրանիկը, որ ընդհանուր զօրահաւաք յայտարարեց եւ յետ շպրտեց Թրքական բոլոր գրոհները՝ գրաւելով եւ ամրանալով Զաբուղի բերանում:

Նոյեմբերին Թուրքերը նորից դիմեցին գործողութիւնների Զանգեզուրի դէմ: Կռիւները տեւեցին մինչեւ դեկտեմբեր: Անդրանիկը, որ ստացել էր ղարաբաղցիների օգնութեան կոչը, ջարդեց Թշնամուն եւ շարժուեց դէպ Շուշի, բայց, ինչպէս տեսանք արդէն, կէս ճանապարհին անգլիացիների կողմից կանգնեցուեց ու վերադարձուեց Զանգեզուր: Ճանապարհները բացուելուն պէս Անդրանիկը, անգլիական սպայ Գիբբնի ուղեկցութեամբ անցաւ Էջմիածին, ուր մի առ ժամանակ մնալուց յետոյ, զէնքերն ու ռազմամթերքը կաթողիկոսին յանձնելով՝ անցաւ Թիֆլիս եւ այնտեղից, մայիս 6-ին, արտասահման**):

---

*) Բաթումի դաշնագրից յետոյ, Անդրանիկը՝ ունենալով իր հետ մօտ 3000 հետեւակ. 700 ձիաւոր, 150 թնդանօթաձիգներ, 80 գնդացիրաւորներ, 1 դաշտային եւ 3 լեռնային թնդանօթ, 40 ուղտ, 15 սայլ եւ մի քանի տասնեակ հազար գաղթականներ՝ Նոր-Բայազէտի, Դարալագեազի ու Ջուլֆայի վրայով անցել էր Խոյ՝ անգլիական բանակի հետ միանալու յուսով: Յունիս 21-ին, Սէյդավար գիւղի մօտ թիւրքերի հետ կռուի բռնուելով ու մօտ 150 հոգի սպանուած ու գերի տալով՝ նահանջել էր Ջուլֆա, ապա Նախիջեւան, ուր փորձել էր կազմակերպել հայկական ինքնապաշտպանութիւնը: Այստեղից էլ, սովից, հիւանդութիւններից ու թիւրքերից նեղուած՝ Օխչի չայի հովտով, անցել էր Ղափան:

**) Արժէ այստեղ արձանագրել եւ հետեւեալ փաստը: *Ապրիլին Անդրանիկը մտաւ Երեւանի գաւառը: Հայաստանի կառավարութիւնը նրան ընդառաջ ուղարկեց Ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին եւ Երեւանի զօրամասի պետ Դրոյին՝ բարի գալուստ մաղթելու եւ Երեւան հրաւիրելու համար: Անդրանիկը ջղայնացած եւ լուտանքներ թափելով կառավարութեան գլխին՝ մերժեց մտնել «տաճիկների ձեռքով ստեղծուած Հայաստանի» մայրաքաղաքը եւ, ինչպէս գրուած է իր հրատարակած «Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութեան» մէջ (էջ 137),* «առանց Երեւան մտնելու եւ դաւաճաններու երեսները տեսնելու», *անցաւ Էջմիածին:*

Ապր. 19ը Զատկի նախօրեակ էր, եւ Երեւանի շուկան լիքն էր գիւղացիներով, քաղաքի բնակիչներով, զինուորներով: Մէկ էլ, կէսօրի տակ, ինչ որ վէճ ու կռիւ է սկսւում Անդրանիկի կամաւորների եւ երեւանցի զինուորների միջեւ: Անդրանիկի զինուորներից մէկը վիրաւորւում է, մէկ ուրիշը շտապում է Էջմիածին՝ հաղորդելու «փաշային», թէ՝ Երեւանի կառավարութիւնը հրաման է տուել կոտորելու կամաւորներին, որոնցից մի քանիսն արդէն սպանուած են Երեւանի շուկայում:

Անդրանիկը կրակ է կտրում: Հրամայում է անմիջապէս հաւաքել բոլոր զինուորներին, դասաւորում է նրանց եւ հետեւակով, ձիաւորով, թնդանօթով ու գնդացիրով արշաւում Երեւանի վրա: Կէսօրին Երեւանի բլուրներին, այգիների յետեւը, երեւում են Անդրանիկի առաջապահները: Շուտով հասնում է եւ ինքը: Բլրի գլխին տնկւում է դաշնակիցների դրօշակները, Թնդանօթների բերանները ուղղւում մայրաքաղաքի վրա, դիրքեր բռնում եւ պատ-

Անգլիացիների երեւալը Զանգեզուրում առաջ բերեց անխառն ուրախութիւն, որը, սակայն, շուտով պղտորուեց անգլիացիների բռնած երկդիմի դիրքով. «մեր մեծ դաշնակցի» ներկայացուցիչներն էլ աշխատում էին Զանգեզուրը դնել Ադրբէջանի իշխանութեան տակ: Զանգեզուրցիք ցասումով բողոքեցին եւ ըմբոստացան այդ ծրագրի դէմ: Այդ առթիւ Զանգեզուր գնաց գօր. Թոմսընի տեղակալ գօր. Շատելվորդըն եւ Հայաստանի ներկայացուցիչ Յ. Արղութեանը: Զանգեզուրցիք Շատելվորդին էլ ընդունեցին զայրոյթով ու միակ պահանջով՝ միացնել Զանգեզուրը Հայաստանին: Շատելվորդի սպառնալիքների վրա՝ զանգեզուրցիները զինուած ցոյց արին նրա ինքնաշարժի շուրջ եւ քիչ էր մնում ձերբակալէին նրան: Շատելվորդը հեռացաւ ձեռնունայն, իսկ Յ. Արղութեանը, որ Ղարաբաղի հարցում կուսակից էր փոխադարձ զիջումի, զեկուցում տարաւ Երեւան, թէ, ստեղծուած պայմաններում, ո՛չ միայն Զանգեզուրը, այլ եւ Ղարաբաղն էլ չի կարելի թողնել Ադրբէջանի տիրապետութեան տակ:

Թիւրքերի պարտութիւնից յետոյ, կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների փոխադարձ համաձայնութեամբ որոշուեց կեանքի կոչել Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդը, 9 անդամներով, որոնք պիտի ընտրուէին շրջաններից: Ընտրուեցին Սիսիանից Մ. Զաքարեան, Յ. Տէրունի եւ Գ. Տէր-Մկրտչեան, Բուն Զանգեզուրից՝ Տ. Սաղանդարեան, բժ. Մ. Գարոնեան, Ն. Յովսէփեան, Ղափան-Մեղրիից՝ Ս. Մ.-Քարամեան, Ա. Շիրինեան, Ս. Մ.-Ստեփանեան: Խորհուրդը գործի անցաւ դեկտեմբերի սկզբին եւ այդ օրից լուծուած համարուեցին բոլոր հին մարմինները:

Ազգային Խորհուրդը ձեռնարկեց գաւառի իշխանութեան հիմնական կազմակերպութեան: Ամէն ինչ նորից պէտք էր սկսել: Խորհրդի նախագահ եւ միանգամայն գաւառապետ ընտրուեց Մ. Գարոնեանը, որին, երկու ամիս անցած, գաւառապետի պաշտօնում փոխարինեց Ն. Յովսէփեանը: Նշանակուեցին շրջանային կոմիսարներ: Վերընտրուեցին գիւղական կոմիսարները: Ստեղծուեց գաւառական պարենաւորման կոմիտէ. շրջաններում նշանակուեցին պարենաւորման կոմիսարներ: Գորիսում հիմնուեց շրջանային դատարան: 1919 թ. յունուարին յայտարարուեց 20–22 տարեկան զանգեզուրցիների զօրահաւաք եւ ստեղծուեց տեղական մնայուն զօրամաս: Պետական կարիքների համար հարկ դրուեց ազգաբնակութեան վրա:

Յունուարի վերջերին Ազգ. Խորհրդի կողմից Երեւան ուղարկուեց Ա. Շիրինեանը՝ ստանալու համար դրամ ու ռազմամթերք եւ խնդրելու, որ

դամաւորների միջոցով կառավարութիւնից բաւարարութիւն ու յանցաւորների պատիժ է պահանջում, հակառակ պարագային սպառնալով ռմբակոծել քաղաքը....

Կարելի է երեւակայել, թէ ինչ զայրոյթ ու վրդովում առաջ եկաւ կառավարական ու զինուորական շրջաններում ու քաղաքի բնակչութեան մէջ: Զօր. Նազարբէգեանն ու Հախվերդեանը արտօնութիւն խնդրեցին՝ զէնքի ուժով վերջ տալու խայտառակութեան, կառավարութիւնը, սակայն, տատանւում էր. չէր ուզում տեղիք տալ եղբայրասպան ընդհարումների: Եւ միայն ամերիկեան ներկայացուցչին եւ հայ հոգեւորականներին միջնորդ ձգելով, երեկոյեան դէմ, Երեւանի «պաշարումը» վերացուեց, եւ Անդրանիկը իր զօրքով վերադարձաւ Էջմիածին:

Հայաստանի կառավարութիւնը փութացնէ Զանգեզուրի նահանգապետի առաքումը: Վերջինիս գալը անհրաժեշտ էր, որովհետեւ, ձիւնը հալելուն պէս, Անդրանիկը պիտի հեռանար եւ նրան պէտք է փոխարինէր մէկ ուրիշը:

1919 թ. մարտ 6-ին, Գորիս հասաւ Հայաստանի կառավարութեան նշանակած Զանգեզուրի ընդհանուր կոմիսարը՝ փոխ-գնդ. Արսէն Շահմազեանը, որից յետոյ Զանգեզուրն այլեւս կապուեց Երեւանի հետ: Շահմազեանի պաշտօնը կէս գաղտնի էր. Ղարաբաղ-Զանգեզուրը Ադրբէջանին կցել աշխատող անգլիացիների ճնշման տակ, Հայաստանի կառավարութիւնը պաշտօնական ձեւ չէր տալիս իր գործունէութեան Զանգեզուրում: Հակառակ դրան, Զանգեզուրը, երկրի միւս մասերին հաւասար, օգտւում էր Հայաստանի պետական միջոցներից:

Մարտ 31-ին Գորիսում հրաւիրուեց համազանգեզուրեան մի համագումար, ուր Ազգ. Խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Եւ նրա տեղ, ընդառաջ գնալով ժողովրդի միահամուռ փափագին, ընտրուեց Զանգեզուր-Ղարաբաղի Երջանայինի Խորհուրդ անունով մի մարմին՝ այդ ձեւով հանդիսաւորապէս նւիրագործելով Ղարաբաղ-Զանգեզուրի միութիւնը եւ այս երկսի կցումը Մայր-Հայաստանին: Երջ. Խորհրդի անդամներ ընտրուեցին Ա. Շիրինեանը, Մ. Զաքարեանը, Ց. Տէր-Ունին, Խ. Դանիէլեանը (չորսն էլ դաշնակցական), Եր. Բագունց, Սահ. Տէր-Հայրապետեան (բոլշեւիկ) եւ Ս. Մ.-Ստեփանեան (անկուս.): Ղարաբաղի կողմից խորհրդի մէջ մտան՝ Գեր. Բալայեանը, Եղիշէ Իշխանեանը, Մելիք-Եսայեանը, Աւ. Աստուրեանը եւ Արս. Բագունցը: Վերջիններս այդ ժամանակ՝ խուսափելով անգլիացիների հալածանքներից՝ գտնւում էին Գորիսում, որտեղից եւ հետեւում էին Ղարաբաղի անց ու դարձերին:

Վերակազմուեց երկրի ինքնապաշտպանութեան գործը: Երջ. Խորհրդի անդամներից կազմուեց զինւորական խորհուրդ, իսկ սպաներից՝ դլխաւոր սպայակոյտ: Երջաններում նշանակուեցին զինւորական հրամանատարներ՝ Սիսիանում Պօղոս Տէր-Դաւթեանը, Տաթեւում՝ Խ. Մալինցեանը, Տեղ-Խնձորեսկում՝ Մ. Հիւսէյնեանը, Ղափանում՝ Ց. Տէր-Պետրոսեանը, Մեղրիում՝ Շահպազեանը: Կարգուեցին նաեւ ճակատապետներ՝ Զարուղում, Զէյվա-Հագարակում, Բազարչայում, Նորս-Գոմբրիում:

Զուգընթացաբար տարւում էր նաեւ քաղաքացիական մասի կազմակերպական աշխատանքը: Գաւառապետ նշանակուեց Ն. Ծովսէփեանը, օգնական եւ միլիցիապետ՝ Սաքօն: Միլիցիայի Բիւրօ կրկնապատկուեց: Բացուեցին փոստատները եւ կանոնաւորուեց փոստային յարաբերութիւնը Երեւանի հետ: Վերաբացուեց Գորիսի պետական դանձարանը: Հիմնուեց պետական վերահսկողութիւն: Վերաբացուեցին Գորիսի եւ Հանքերի հիւանդանոցները, բուժական կայաններն ու դեղատները: Սկսեց գործել զինւորական առեանը:

Մինչեւ յուլիսի վերջերը կազմակերպական աշխատանքներն արդէն վերջացած էին: Օգոստոսին Երջանայինի Խորհուրդը աշխատանքների բաժանում կատարեց իր անդամների միջեւ՝ հիմնելով հետեւեալ վարչութիւնները. վարչապետ եւ ներքին գործերի վարիչ՝ Ա. Շիրինեան, օգնական՝ Ս. Մ.-

Մտեփանեան, հաղորդակցութեան՝ ինժ. Ա. Բագունց, կրթական՝ Ց. Տէրունի, առողջապահութեան եւ խնամատարութեան՝ Ա. Աւետիսեան, օգն. Յ. Դանիէլեան, երկրագործական՝ Մ. Զաքարեան, արդարադատութեան՝ Եր. Բագունց: Զանգեզուրի կառավարութիւնն էր այս, որ, այնուհետեւ, ձեռք-ձեռքի ընդհանուր կոմիսարի հետ՝ տարաւ երկրի կազմակերպութեան ու կառավարութեան գործը: Յորհրդի միւս անդամները զբաղուում էին Ղարաբաղի հարցերով: Շրջանային Յորհուրդն իր ամբողջութեան մէջ վարիչների գործունէութեան վերին հսկողի դերում էր եւ շաբաթը մի անգամ նիստ գումարելով՝ լսում էր վարիչների զեկուցումները:

Պէտք է աւելացնել եւ այն, որ այդ բոլոր աշխատանքները կատարւում էին գրեթէ պատերազմական պայմաններում: Ապր. 15-ից սկսած մինչեւ նոյեմբերի վերջը տեղի ունեցան մի շարք լուրջ բախումներ հայերի եւ թուրքերի միջեւ Երիցաթումբի, Զէյվա-Հադարիի, Ներքին Հանդի-Նիւադիի, Նորս-Գոմրիի, Մազրայի, Բազարչայ-Ղուչչի-Բիլադի, Մինքենդ-Յոզնաւուրի եւ այլն: Ամէն անգամ կռիւներին մասնակցում էին երկու կողմից 1500-3000 զինուած ուժեր: Համարեա բոլոր դէպքերում էլ նախայարձակը թուրքերն էին. նրանք էին եւ չարաչար պարտուողը: Թուրքերի ձգտումն էր միացնել Զանգեզուրը Ադրբէջանին:

Այս բանին ոյժ էին տալիս եւ անգլիացիները: Այսպէս, մայիս 2-ին Շուշիից Գորիս եկաւ անգլիական միսիայի պետ մայոր Մաք Մհզենը եւ հրաւիրելով Զանգեզուր-Ղարաբաղի Շրջանային Յորհրդի անդամներին՝ տարաւ հետեւեալ յայտարարութիւն-պահանջը.

1. Ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը՝ երկրում կարգ, իշխանութիւն հաստատելու, ճանապարհները բանալու եւ ժողովրդին պարէն հասցընելու համար:

2. Ցարմարութիւններ տալ քոչւորներին բարձրանալու Զանգեզուրի լեռները:

Շրջանային Յորհուրդը մայիս 3-ին տուեց հետեւեալ գրաւոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին դիւղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան երկրամաս Զանգեզուրի դէմ կատարած իւրաքանչիւր յարձակողական գործողութիւն կը հանդիպի ամենայամառ եւ կատաղի դիմադրութեան Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից:

Հայաստանի Հանրապետութեան երկրամասում չապրող քոչւորներին ո՛չ մի դէպքում եւ ո՛չ մի պայմանով չի թոյլատրւում բարձրանալ Զանգեզուրի սարերը:

Ինչ վերաբերւում է իշխանութիւն հաստատելուն, պէտք է ասենք, որ ո՛չ միայն այժմ, այլ եւ համատարած անիշխանութեան օրերին Զանգեզուրում միշտ թագաւորել է օրինակելի իշխանութիւն, եւ այժմ հարկ չկայ իշխանութիւն հաստատելու այնտեղ, ուր անիշխանութիւն չկայ:

Ուղիղ երկու տարի է ինչ Զանգեզուրը կտրւած է քաղաքակիրթ աշխարհից, նրա առաջ փակւած են հաղորդակցութեան ճանապարհները: Զան-

գեղուրը հաչտւել է այդ հանգամանքի հետ՝ գտնելով, որ իր ազատութիւնը վեր է ամէն տեսակ յարմարութիւններից եւ կուլտուրական բարիքներից:

Համաչխարհային Խաղաղարար կոնֆերենցիայի յայտարարութիւնը պարզորոշ թելադրում է ամէնքին՝ պահպանելու եղած դրութիւնը, մինչեւ վերջնական որոշման յայտարարութիւնը:

Թիւրք–ազրբէյճանեան աւանտիւրայի ամբողջ ընթացքում Զանգեզուրը եղել է միշտ ինքնուրոյն, եւ դաշնակից հրամանատարութիւնը այդպէս էլ տեսել է Զանգեզուր մտնելիս:

Ամէն մի ոտնձգութիւն մեր ինքնուրոյնութեան դէմ ում կողմից էլ որ երեւան գայ, այդ ատատուս կուօի խանգարումն է եւ մեր կողմից կը հանդիպի ամենաուժեղ դիմադրութեան»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ անգլիական ներկայացուցիչը չտապեց հեռանալ: Եւ գործի անցաւ Ազրբէյճանը:

Ղարաբաղի խնդիրը փակելուց եւ Հայաստանը մահմեդական ապստամբութիւնների վայր դարձնելուց յետոյ, Ազրբէյճանի կառավարութիւնը սկսեց ուժեր հաւաքել Զանգեզուրի չուրջը զօրավար Ալի Ագա Շիխլինսկիի գլխաւորութեամբ: Հոկտեմբերին, Շուշիի եւ Կարեւագինի ուղղութեամբ համախմբուեցին 3 հետեւակ ու 2 ձիաւոր գնդեր, 8 թեթեւ ու 4 ծանր թնդանօթներ եւ 400 քիւրդ կամաւորներ: Նախիջեւանի եւ Շարուրի կողմից չարժման մէջ դրուեցին աւելի քան 3000 կռւողներ: Ազրբէյճանը ուզում էր 3 ծայրերից օղակել եւ արագ ու կտրուկ հարուածներով գրաւել Զանգեզուրը:

Վճռական գործողութիւնների անցնելուց առաջ, դր. Սուլթանովը մի կոչ ուղղեց զանգեզուրցիներին, որով համոզում էր հետեւել զարաբաղցիների օրինակին եւ յօժարակամ ճանաչել Ազրբէյճանի իշխանութիւնը: «Ես դիմում եմ, գրում էր նա, Զանգեզուրի ազգաբնակութեան, բանւորներին ու գիւղացիներին... ապացուցէ՛ք, որ դուք կապ չունէք անիշխանական եւ արկածախնդիր տարրերի հետ: Ես ապահովում եմ ձեր անձի ու գոյքի անձեռնմխելիութիւնը, իսկ ես միշտ յարգում եմ իմ խօսքը: Իսկ եթէ դուք շարունակէք օգնել անիշխանական տարրերին, ես այնքան ոյժ կունենամ, որ ստիպեմ ձեզ ճանաչել Ազրբէյճանի հանրապետութեան իշխանութիւնը, բայց այն ժամանակ արիւնահեղութեան պատասխանատուութիւնը կընկնի ձեր վրա»:

Զանգեզուրցիք ականջ չդրին Սուլթանովի յորդորներին, եւ նոյեմբ. 1–ին ազրբէյճանեան զօրքերը Զարուղից, Կարեւագինի կողմից, Նախիջեւանից ու Դարալագեազից անցան ընդհանուր յարձակման: Ամբողջ 6 օր Զանգեզուրի լեռներում որոտում էին թնդանօթներն ու գնդացիրները: Առաջին օրերը թշնամին գրաւեց Խնածախ, Ծղնավար, Բայանդուր, Կոռնձոր գիւղերն ու Քաչալ Դաղը եւ սպառնում էր Գօրիսին: Նոյ. 4–ին զանգեզուրցիները, Ա. Շահմազեանի հրամանատարութեամբ, կանգնեցրին թշնամու յառաջխաղացումը եւ կատաղի հակագրոհներով ու հարուածներով, նոյ. 6–ին, փախուստի մատնեցին ազրբէյճանեան բանակը, որը թողեց բազմաթիւ դիակներ, աւելի քան 150 գերի, մէկ թնդանօթ, 20 գնդացիր եւ հարուստ աւար:

Ադրբէջանեան 2րդ ճիւաւոր դունդը ամբողջապէս ոչնչացաւ։ Զանգեզուրը, չնորհիւ իր զաւակների հերոսական ճիգերի, մի անգամ էլ փրկուեց մահացու վտանգից։

Զանգեզուրի դէպքերը ահագին յուզում առաջ բերին դուրսը։ Գնդ. Հասկելի փոխանորդ գնդ. Ռէյը եւ բրիտանական ներկայացուցիչ Ուօրդրոպը շտապեցին պահանջել Հայաստանի ու Ադրբէջանի կառավարութիւններից՝ վերջ տալ արիւնհեղութեան եւ փոխադարձ համաձայնութեամբ լուծել Զանգեզուրի հարցը։ Մինչ Հայաստանը անմիջապէս տուեց իր համաձայնութիւնը, Ադրբէջանը սկզբում բաւական անղիջող դիրք բռնեց. «Զանգեզուրում պատերազմական գործողութիւններ չկան Ադրբէջանի կառավարութեան կողմից, պատասխանեց գնդապետ Ռէյին վարչապետ Ուսուպբէկովը, Զանգեզուրը Ադրբէջանի անբաժան մասն է... Ադրբէջանի կառավարութիւնը հարկադրուած էր զինուորական օգնութիւն ուղարկել Ղարաբաղի ընդհ.-նահանգապետին՝ կարգը վերականգնելու եւ հայ ապստամբների անիշխանական-բոլշեւիկեան հրոսախմբերը ճնշելու նպատակով»։ Սակայն, պարտութեան լուրը առնելուց յետոյ փուքսը բաւական իջաւ, եւ նոյն Ուսուպբէկովը փութաց ընդունել գնդ. Ռէյի առաջարկը՝ նոյ 20-ին, իր մօտ հանդիպում ունենալու Հայաստանի վարչապետի հետ։

Նոյեմբ. 20-ին տեղի ունեցաւ Խատիսեանի եւ Ուսուպբէկովի տեսակցութիւնը գնդ. Ռէյի առանձնասենեակում։ Երկու կողմերի բանակցութիւնները յանգեցին նոյեմբ. 23-ի համաձայնութեան, ըստ որի՝

«1. Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են դադարեցնել տեղի ունեցող ընդհարումները եւ նոր ընդհարումների չդիմել։

2. Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնները համաձայնւում են ձեռք առնել իրական միջոցներ բանալու եւ նորոգելու Զանգեզուր տանող ճանապարհները՝ խաղաղ երթեւեկի համար։

3. Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են լուծել բոլոր վիճելի հարցերը, մէջը լինելով եւ սահմանավէճերը, խաղաղ համաձայնութիւնների ճանապարհով, մինչեւ յաջորդ յօդուածում նախատեսուած խորհրդաժողովի վճիռը։ Այն դէպքում, երբ կարելի չլինի հասնել խաղաղ համաձայնութեան, երկու կողմերը պարտաւորւում են իրաւարար ընտրել մի չէզոք անձնաւորութիւն, որի վճիռը պիտի լինի պարտադիր երկու կողմերի համար էլ։ Ներկայումս այդ անձը համարւում է Միացեալ Նահանգների բանակի գնդ. Ջէյմս Ս. Ռէյը։

4. Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են իսկոյն եւ եթէ հաւասար թուով պատգամաւորներ նշանակել, չորեքշաբթի, նոյ. 20-ին, Բաքւում դումարելիք խորհրդաժողովի համար, որը պէտք է տեղափոխւի Թիֆլիս դեկտ. 4-ին, ուր կը շարունակուեն խորհրդաժողովի նիստերը, եթէ փոխադարձ համաձայնութեամբ պէտք չնկատուի այլ վայր փոխադրելու։ Այդ խորհրդաժողովը պիտի քննէ բոլոր այն հարցերը, որոնք վէճ ու բախում են առաջ բերում երկու կառավարութիւնների միջեւ, եւ

լիազօրութիւն կունենայ լուծել այդ հարցերը համաձայնութեան կամ իրաւարարութեան միջոցով:

5. Սոյն համաձայնութիւնը համարւում է իրական ատորագրութեան օրից եւ մնայուն ոյժ կը ստանայ երկու պետութիւնների խորհրդարանների վաւերացումից յետոյ»:

Այս համաձայնութեամբ վերջ գտաւ Զանգեզուրի արիւնհեղութիւնը, որ քիչ մնաց պատճառ դառնար հայ-ադրբէջանեան պատերազմի: Ճիշտ է, կռիւները փաստօրէն չարունակւեցին, բայց այս անգամ արդէն նախկայարձակը զանգեզուրցիներն էին: Նոյեմբերի վերջերին, զափանցիները, Երևանից նոր հասած Գ. Նժդեհի գլխաւորութեամբ, մաքրեցին Օխչի չայի ապստամբ շրջանը: Դեկտեմբերի սկզբին մաքրեցին Գեղւայ ձորի մօտ 40 թրքաբնակ գիւղերը: Այդ դէպքերը նորից բողոքի ու սպառնալիքի նիւթ դարձան զնդ. Իէյլի եւ Ուօրդրոպի կողմից: Ադրբէջանի կառավարութիւնը ցասկոտ հեռագրեր տւեց ու պատասխաններ ստացաւ, բայց կեանքը գնաց իր ճանապարհով. Զանգեզուրն այլեւս մաքրւած էր ներքին թշնամուց:



Թիւրքիայի եւ Ադրբէջանի միացման մէկ օղակն էլ Գողթն*) գաւառակն է՝ հպիւ 20–25 գիւղ**) ունեցող հայկական մի շրջան՝ կծկւած Ալանդեղ ու Ղազանդէղ բարձրաբերձ լեռների եւ Արաքսի միջեւ: Գողթնը եւ Արեւիքը (Մեղրի) գաւում են Ադրբէջանը Նախիջեւանից. վերացնել մէջտեղից այս հայկական շրջանները՝ նշանակում է բանալ ուղիղ ճանապարհ Բագուի, Անդորայի եւ Պոլսի միջեւ: Ուստի, տարօրինակ չպիտի թւայ այն յամառութիւնը, որով թիւրք-ադրբէջանցիները, ամէն առիթով, աշխատում էին գրաւել Գողթնը:

Երբ, Բաթումի դաշնագրից յետոյ, թիւրքերը եկան Նախիջեւան, նրանց առաջին գործը եղաւ Գողթնի նուաճումը. 1918 թ. յուլ. 25-ին թիւրք զօրքերը մտան Ագուլիս:

Օգոստ. 8-ին, կովկասեան իսլամական կառավարութեան կողմից Օրդուբաթ քաղաքի եւ շրջանի զինուորական կառավարիչ նշանակւեց թիւրքական բանակի սպայ Խալիլ բէյը, որը իր ձեռքի տակ ունէր 5–6 թիւրք սպաներ, 12 թնդանօթ, 20–22 գնդացիր եւ հազարի չափ տեղական թաթար զինուորներ: Օրդուբաթ հասնելուն պէս նա հրատարակեց հետեւեալ յայտարարութիւնը՝ ռուսերէն եւ թիւրքերէն լեզուներով.

«Կովկասեան իսլամական կառավարութեան կողմից ես նշանակւած եմ Օրդուբաթ քաղաքի եւ շրջանի զինուորական կառավարիչ եւ Ատծու օգնութեամբ այսօրուանից ստանձնեցի իմ պարտականութիւնների կատարումը:

Կովկասեան իսլամական կառավարութիւնը ցանկանում է, որ իր բոլոր

---

*) Գողթան շրջանի դէպքերը գրելիս՝ օգտւել եմ նաեւ Գոյտարեանի ձեռագիր յուշերից եւ Ագուլիսի հաշտարար դատաւոր Ց. Տէր-Ամատունեանի զեկուցումից:

*) Որից 10ը գտնւում են լեռնային շրջանում:

հպատակները, առանց կրօնի եւ ազգութեան խտրութեան, ապրեն խաղաղ, անդորր կեանքով եւ արիւնհեղութիւն չլինի:

Մեր սահմաններում գտնուող հայ գիւղերը, եթէ կը ցանկանան հպատակուել մեզ, պէտք է յանձնեն զէնքերը, որովհետեւ բոլոր մահմետական գիւղերը, մինչեւ այժմ ենթարկուել են եւ ենթարկւում են հայերի յարձակման: Այն օրւանից, որ ես Նախիջեւանի շրջանումն եմ, ամբողջ Անդրկովկասում, իմ հաւաքած ստոյգ տեղեկութիւններով, աւերուած են 300 մահմետական գիւղեր, այն ինչ հայկական գիւղեր, միայն 3-ից մինչեւ 5:

Այսպէս, ուրեմն, փաստերը ցոյց են տալիս, որ հանգիստը եւ խաղաղութիւնը խանգարող հանդիսանում են ոչ թէ մահմետականները, այլ հայերը, որի պատճառով մենք, այսինքն՝ Կովկասեան Իսլամական կառավարութիւնը, չենք կարող կատարելապէս հաւատալ հայերին:

Զէնքերը յանձնող հայերը կը լինեն մեր թանգագին հպատակները, որոնց պատիւը, կեանքն ու գոյքը կը գտնուեն մեր հովանաւորութեան տակ. նրանց վերաբերմամբ ամենափոքրիկ ցոյցն իսկ չի թոյլատրի: Զէնքեր չյանձնող հայ գիւղերը կը համարուեն կառավարութեան թշնամի եւ նրանց դէմ ձեռք կառնուեն խիստ միջոցներ»:

Շնորհիւ իրենց ճկուն բնաւորութեան, գողթնեցիք կարողացան գլուխ պահել «Իսլամական կառավարութեան» իշխանութեան տակ:

1919 թ. մայիսին, Նախիջեւանի գրաւումից յետոյ, Գողթնը դարձաւ նրա երեք գաւառներից մէկը՝ Ագուլիս կենտրոնով: Ընդհ.-նահանգապետ Գ. Վարշամեանը Գողթնի գաւառապետ նշանակեց Աշոտ Մելիք-Մուսեանին, իսկ միլիցիապետ՝ երիտասարդ ու քաջ սպայ Մովսէս Գիւլնազարեանին: Սրանք նոր էին հասել իրենց պաշտօնավայրը, երբ տեղի ունեցաւ մահմետական ապստամբութիւնը Նախիջեւանում, եւ Գողթնը նորից կտրուեց Հայաստանից:

Օգոստ. 3-ին, Ա. Մելիք-Մուսեանն ու Մ. Գիւլնազարեանը, Վերին Ագուլիսից, «Հայաստանի Խորհրդարանին, Հայաստանի կառավարութեան, Գորիսի, Ղափանի, Գենուազի պետական ներկայացուցիչներին, Ազգային Խորհուրդներին եւ ի լուր համայն հայութեան արին հետեւեալ դիմումը.

«Նախիջեւանն ընկաւ. շրջանի հայութեան բաւական խոշոր մասը որ է քաշուած, Արաքսի մէջ նկատուած են մեծ թւով դիակներ: Նախիջեւանի մեր զօրքերը, ըստ Թուրքական լուրերի, կոտորածից ազատուած հայութեան մնացորդների հետ նահանջել են դէպի Դարալագեազ: Նոյն աղբիւրներից իմանում ենք, որ Նեհրամում հազարից աւելի հայ գերեալներ կան: Ջուլֆայում ու Ջուղայում խոշոր դէպքեր տեղի չեն ունեցել — ժողովրդի մեծագոյն մասը եւ մեր փոքրաթիւ զօրքը անցել են Պարսկաստան: Ազա եւ Դեր գիւղերը անվնաս գաղթեցին Ցղնա: Երնջակի ձորում, ականատեսների պատմելով, տեղի են ունեցել սոսկալի կոտորածներ: Ղազանչիից ազատուել եւ Գողթն են ապաւինել մօտ 500 հոգի: Մի օր տեւող կռիւներից յետոյ Գեազը, Փորադաշտը եւ Շուռութը շատ քիչ զոհեր տալով՝ քաշուել են Գողթն:

Յուլ. 25-ից Գողթնում ուժեղ կռիւներ են տեղի ունեցել: Վերին գիւղերում (Փառակա-Բիստ) յաջողութիւններն առ այժմ մերոնց կողմն են:



Լ. ԹԱԴԷՈՍԵԱՆ



ԲԹ. Յ. ՏԷՐ – ԴԱՒԹԵԱՆ



ՎԱՀԱՆ ՄԻՆԱՒՈՐԵԱՆ



ԴՐ. Ա. ԱՒԵՂԵԱՆ









Ճանակերտը 8 օր է պաշարման վիճակի մէջ է. այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիւներ: Պաշարած կարելի է համարել վերին եւ ներքին Ադուլիանները: Թուրքերը խոշոր պատրաստութիւններ են տեսնում մաքրելու Գողթնը հայութիւնից: Ժողովուրդը աննկարագրելի նեղութեան մէջ է հացի կողմից: Արտաքին աշխարհից կտրուած ենք բառի ամենալայն իմաստով: Մի քանի անգամներ սուրհանդակներ ենք ուղարկել Գենուազ օգնութիւն եւ լուր ստանալու համար, բայց մինչեւ օրս չեն վերադարձել: Գողթնը լքւած իր հարազատներից եւ կտրուած արտաքին աշխարհից, իր անելիքների մասին ճիշտ հաշիւ տալ իրեն չի կարող: Ապաւինել Թուրքերի ողորմածութեանը՝ ներկայ հանգամանքներում անհնարին է: Ի սէր Աստծոյ, ցոյց տուէք մեզ փրկութեան ճանապարհ: Սեփական միջոցներով ամենաշատը 10–15 օր եւս հազիւ կարողանանք պահպանել ներկայ դրութիւնը: Սարսափելի չէ մահը... երկրորդ տարին է, որ մենք արդէն հաշտւել ենք այդ մտքի հետ: Գողթնը կը մեռնի հերոսի մահով, սակայն, Թո՛ղ ամբողջ աշխարհը իմանայ, որ այս անգամ մեզ մահուան դուռ հասցնողը Երեւանի մեր կառավարութիւնն է: Փրկւած է Գողթնը, եթէ մօտ օրերում գոնէ 400 արտցաւ ընդուր մեզ օգնութեան հասնի»:

Ցուսահատի ճիչ էր այս: Գողթնում չգիտէին, որ Երեւանը ինքն էլ օրհասական ժամեր էր ապրում և նոյնպէս ճչալով՝ օգնութիւն սպասում արտաքին աշխարհից:

Բայց եւ այնպէս, կառավարութիւնը չուսպեց կազմակերպել Գողթնի օգնութեան գործը. մի կողմից նիւթական միջոց ու պարէն փութացրեց, միւս կողմից՝ յանձնարարեց Գ. Նժդեհին ու բաշդասնեցի յայտնի խմբապետ Ղազար Քոչարեանին կազմել մի զօրամաս՝ Գողթն ուղարկելու համար: Մի քանի շարաթից զօրամասը արդէն պատրաստ էր, եւ սեպտ. 4–ին, Ղազարի հրամանատարութեան տակ, դուրս եկաւ Երեւանից ու հոկտ. 2–ին, Դարալագեազի ու Զանգեզուրի վրայով, հասաւ Գողթն:

Տխուր էր այնտեղի կացութիւնը: 6 լեռնային գիւղերը միայն մնացել էին ազատ, միւսները կամ տեղահանւել ու կոտորւել էին, կամ ապրում էին Ջարդի մղձաւանջի տակ: Ազատ մնացած գիւղերն էին Բիստ, Ալահի, Նասըրաւ (Մեսրոպաւան), Փառակա, Ցղնա եւ Ռամիս, որոնք գտնւում էին պաշարւած վիճակում: Ադուլիանները համակերպւել էին Թրքական իշխանութեան, հեռացրել էին իրենց միջից կռւող ուժերը եւ դրանով էին ուզում պահել իրենց գոյութիւնը: Տիրում էր պարէնի անասելի տագնապ. յարաբերութեան եւ մթերք ստանալու միակ ճանապարհը Ղափուչուխի լեռնանցքն էր՝ 12,853 ոտք բարձրութեամբ, այն էլ վտանգւած էր Օխչի ձորի ապստամբ Թուրքերի կողմից:

Հայկական զօրքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը: Ղազարը Մովսէս Գիւլնազարեանի եւ տեղական ուժերի գործակցութեամբ կազմակերպեց չրջանի ինքնապաշտպանութիւնը — 7–800 կռւողներ, 2 թնդանօթ, 6 գնդացիր, — եւ այնուհետեւ Գողթնը ո՛չ միայն դիմացաւ Թրքական յարձակումներին, այլ եւ ինքն էլ դարձաւ նախաձեռնարկ: Նոյեմ-

բերի կէսերից սկսեցին անվերջ կռիւներ զորինեցիների եւ Թուրքերի միջեւ. Նոյմբ. 12–ին Թշնամին առաջ խաղաց Բիսոի վրա ու յետ չպրտեց. Նոյեմ. 25–ին Թուրքերն ուրիշ մեծ ուժերով, երկու զօրասիւնով, յարձակեցին Բիսոի, Ալահիի ու Մեսրոպաւանի եւ Ռամխոի վրա: Տեղի ունեցան տաք կռիւներ. Թշնամին պարտուած՝ դիմեց խուճապային փախուստի՝ հայերի ձեռքը թողնելով առատ աւար, զերիներ ու մի դրօշակ:

Իր վրէժը, սակայն, մի ամիս յետոյ լուծեց Վերին Ազուլիսից: Օթչի ձորի ու Գեղւայ ձորի աւերից յետոյ, Օրդուբաթի ու Նախիջեւանի Թրքութիւնը, կազմակերպեց Ազուլիսների թալանն ու կոտորածը: Մանրամասնութիւնները Երեւան հասցրեց Գողթնի հաշտարար դատաւոր Յ. Տէր–Անտոնեանը, որի պատմութիւնը նիւթ ծառայեց բազմաթիւ բողոքների ու հեռագրների փոխանակութեան Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնների միջեւ:

Դեկտ. 18–ին Օրդուբաթի եւ չրջանի զինուած Թուրքերը յարձակեցին ու սկսեցին թալանել Ներքին Ազուլիսը: Ազգաբնակութիւնը թողնելով իր ամբողջ ունեցուածքը՝ փախաւ Վերին Ազուլիս: Վերջինիս ներկայացուցիչները դիմեցին Օրդուբաթ, Թիւրքական հրամանատար Էդիֆ բէյին՝ խնդրելով ապահովել հայերի կեանքը: Էդիֆ բէյը անձամբ եկաւ Վ. Ազուլիս ու խոստացաւ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել Ազուլիսի պաշտպանութեան համար: Սակայն, չրջակայքում հետզհետէ սկսեցին հաւաքուել Թրքական զինուած խմբեր: Ազուլեցիների դիմումների վրա՝ Էդիֆ բէյը հանգստացնում ու երդւում էր անվերջ, թէ հայերի գլխից մի մազ անգամ չի վնասուի:

Դեկտ. 25–ին Վ. Ազուլիս եկան Օրդուբաթի չէյխն ու զաւառապետ Թայիրովը: Սրանց հասնելուց մի ժամ յետոյ, քաղաքում լսուեց հրացանաձգութիւն եւ աղմուկ. Թուրք զինուած խուժանը թալանում ու կոտորում էր հայերին: Վառուեց Սարգիս Հախնազարեանի տունը, եւ հրդեհը սկսեց տարածուել: Հայերը չէյխի առաջնորդութեամբ փոխադրուեցին Թրքական թաղը: «Գիշերը, պատմում է Տէր–Անտոնեանը, հրդեհը բռնեց ամբողջ քաղաքը, եւ քաղաքում խրախճանք էր կատարւում: Առաւօտեան զաւառապետ Թայիրովը յայտարարեց, որ ինքը գնում է Օրդուբաթ՝ դիմաւորելու համար Յալիլ փաշային, որը, իբր թէ, մեկնում է Պարսկաստան: Եւ ասաց, որ այնտեղից կը յայտնէ, թէ՝ ո՞ւր պէտք է ուղարկել հայ գաղթականներին՝ հայկական Ցղնա գի՞ւղը, թէ Պարսկաստան: Նրա գնալուց յետոյ, ժամը 12–ի մօտերը, յայտարարուեց, որ կարգադրութեան համաձայն, հայերը պիտի ուղարկուեն Ցղնա եւ որ նրանց ուղեկցելու է ինչ որ մի Սաթթար (Դռնիս գիւղացի, յայտնի աւազակ, տաժանակիր աշխատանքից փախած): Ազգաբնակութիւնը երբ որ իմացաւ, սարսափահար եղաւ. դիմեց էդիֆ բէյին, որ ինքը ուղեկցէ հայերին: Բայց էդիֆ բէյը պահւել էր սենեակում ու խուսափում էր հայերից: Եա վաղեցի ռուսիկանապետ Մունչիեւի մօտ (15 տարի առաջ եղել էր իմ դրագիրը), որը պահեց ինձ իր մօտ: Երբ բնակիչները մբոխներով դուրս գալեցին, ես լսեցի հրացանաձգութիւն, ոչ թէ անկարգ, այլ համազարկերով: Համազարկերը չարունակուեցին մօտ երկու ժամ: Ո՛չ մի կասկած չկար, որ համազարկերը տրւում էին կատարելապէս կազմա-

կերպած զօրամասերի կողմից: Երբ համազարկերը լռեցին, իմ պահած սենեակը բերին 30-ի չափ գեղեցիկ հայուհիներ՝ օրիորդներ ու տիկիններ: Սկսեցին սենեակ մտնել ոսոիկանապետ Մունչիեւը, նախկին տանուտէր վահաբ էֆէնտին, Սաթթարը եւ ուրիշներ, որոնք մէկ-մէկ երկու-երկու ընտրում ու դուրս էին տանում գեղեցիկ հայուհիներին՝ նախօրօք խլելով նրանց մօտի զարդեղէններն ու դրամը: Դուրս տարած հայուհիներին բռնաբարում էին հարեւան սենեակում: Նոյն սենեակում, մահճակալի տակ, պառկած էր թալանուած Սարգիս Մարխանեանը, որի կնոջ ու երկու պատանիներին սպանել էին հէնց իր աչքի առջեւ: Նրա խորհուրդով, մենք դուրս եկանք յետեւի դռնից — ոչ ոք չէր հսկում, ամենքը զբաղուած էին բռնաբարութիւններով — եւ այդիների միջով հասանք աւերակ Դանակերտ գիւղը ու այստեղից էլ Ցղնա ու Զանգեզուր, որտեղից ես եկայ Երեւան: Ես ինքս տեսայ, թէ ինչպէս թալանին ու սպանութիւններին մասնակցում էին տեղական թուրքերը, որոնցից կարող եմ տալ վաճառականներ Համզայի, Հիւսէյին Կուլիի, Իբրահիմի եւ ուրիշների անունները: Կոտորածն ունէր բոլորովին կազմակերպւած բնոյթ: Անկասկած, նախաձեռնութիւնը բխում էր բարձր իշխանութիւնից, իսկ թալանին ու կոտորածին մասնակցում էր տեղական պաշտօնէութիւնը: Ի հարկէ, եթէ իշխանութիւնը կամենար, ո՛չ թալան կը լինէր եւ ո՛չ կոտորած»:*)

Ագուլիսի կոտորածը մեծ հարուած էր հայ ժողովրդի համար, եւ հասկանալի է այն յուզումն ու ցասումը, որ առաջ բերից հայկական բոլոր շրջաններում: Լուրը Երեւան հասաւ դեկտ. 29-ին, Գօրիսից: Երկու օր յետոյ, դեկտ. 31-ին, հնդկաեւրոպական հեռագրագծով հեռագիր ստացուեց Թաւրիզից, թէ՝ «Քարտէսի վրա Ագուլիսն այլեւս գոյութիւն չունի. Ներսէս եպ.»: Յունւ. 4-ին Մելիք-Թանգեան եպ.-ը հաղորդեց, թէ՝ «Ամենքը կոտորուած են: Մանրամասնութիւնները թոյլ չեն տալիս»:

Նոյն օրերին Հայաստանի կառավարութիւնը Բագուից էլ տեղեկութիւն ստացաւ, որ այնտեղ արտ. գործ. նախարարի օգնական Խան Թեքինսկիի նախաձեռնութեամբ յատուկ խորհրդակցութիւն է գումարւել, որին մասնակցել էին եւ Ուսուպբէգովն ու Խան Խոյսկին եւ որտեղ մշակւել էր Հարաւային Զանգեզուրը, Գողթնը, Օրդուբաթն ու Նախիջեւանը Ադրբէջանին ու Թիւրքիային հաւատարիմ մարտական մահմեդական տարրերով բնակեցնելու եւ այդ նպատակով, առաջին հերթին, «Նախիջեւանի շրջանի հարաւային մասը հայ տարրից մաքրազործելու» ծրագիրը: Ագուլիսի կոտորածը այս ծրագրի սկզբնական քայլն էր. Ներքին Ագուլիսում կոտորւեց մօտ 400 մարդ, Վերին Ագուլիսում 1000: Ողջ մնացին միայն մի քանի տասնեակ կանայք ու օրիորդներ, որոնք նէէր տրւեցին Թիւրք սպաներին ու կոտորածի կազմակերպիչներին. այսպէս, վաճառական Փանեանի 16 ամեայ դեղեցկուհի աղջիկը բաժին հասաւ էդիբ բէյին:

Հայաստանի կառավարութիւնը ստացած տեղեկութիւնները օրը օրին

*) Տե՛ս Զանգեզուրի ու Գողթնի «Գործ»-ը Հ. Հ. Պատմական դիւանում:

հաղորդեց գնդ. Հասկելին ու դաշնակիցների ներկայացուցիչներին եւ բողքներ ուղարկեց Բագու: Ազրբէջանի կառավարութիւնը սկզբում ուրացաւ եղելութիւնը, ապա հեռագրեց, թէ՝ «լուրերը չափազանց մեծացած են» եւ, ի վերջոյ, յունւ. 23–ին միայն, Հայաստանի կառավարութեան վրճռական մերկացումների ու բողոքների տակ, ստիպուած եղաւ ընդունել փաստը, որը, սակայն, արդարացնում էր նրանով, որ կոտորածը եղել է էջմիածնի, Երեւանի ու Զանգեզուրի շրջաններից հայերի ձեռքով քշուած մահմետական գաղթականների կողմից:

Հայկական բողոքները իրական դարման չհասցրին եւ Հասկելից ու դաշնակից ներկայացուցիչներից. նրանք սահմանափակուեցին միայն ցաւակցութիւններով, պաշտօնական նկատողութիւններով, խորհուրդներով ու սաստումներով եւ գործնական միջամտութիւնից խուսափեցին. երկու գիւղ էր աւերուել, 1000—1500 մարդ էր կոտորուել — արժէ՞ր դրա համար աշխարհ իրար խառնել...

Գողթնեցիք իրենք, սակայն, այլ կերպ էին մտածում: Կոտորածի լուրն առնելուն պէս՝ Ղազարի մարտական ուժերը շարժման մէջ դրուեցին,*) եւ դեկտ. 27–ին, փոխվրէժի զայրոյթով լեցուած, յարձակուեցին Փառակայից 3 վերստ հեռու գտնուող Բլաւ աւազակաբարոյ թուրք գիւղի վրա, գիշերային դրոհով գրաւեցին ու ոչնչացրին նրան: Ու այնուհետեւ ամիսներ շարունակ, անընդհատ յարձակումներ էին գործում շրջակայ մահմետականութեան վրա՝ ահ ու սարսափի մատնելով, մանաւանդ օրդուբաթցիներին: Փոխվրէժը օրդուբաթցիներից՝ դարձաւ Գողթնի ազատ մնացած վեց գիւղերի ողեւորութեան աղբիւրը: Նոյն նպատակի համար քայլեր էին առնւում եւ Ղափանում Գ. Նժդեհի կողմից: Մի քանի ամիս յետոյ, Ագուլիսի վրէժը լուծուեց:

*) Հէնց ագուլեցիների պահանջով իմպերապաշտպանողական ուժերի ազդեցութիւնը չէր տարածւում Ագուլիսների վրա. այդ ձեւով յոյս ունէին մեղմել թուրքերին եւ արժանանալ նրանց բարեհաճութեան: Բնորոշ է, որ այստեղ էլ առաջին սպանուողը եղաւ այսպէս կոչուած «բրբասէր» հայերը:

ԳԼՈՒԽ ԻԶ.

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՃԻԳԵՐ

Որքան եւ ծանր լինէին Թիւրք–ադրբէջանեան դաւերի հետեւանքները Հայաստանում, այնուամենայնիւ, անզօր էին կանգնեցնելու երկրի կենսական ուժերի զարգացումը. հայ ժողովուրդը մի ձեռքով պայքարում էր դաւադրութիւնների դէմ, միւս ձեռքով՝ վերաշինում ու կարգաւորում իր նորաստեղծ պետութիւնը: Հերոսական ճիգ, սիզիֆեան աշխատանք թափեց նա, որ ապարդիւն չկորաւ: 1919 թ. տարւայ ընթացքում Հայաստանը ո՛չ միայն չխորտակւեց մահմետական գրոհից, այլ եւ մի շարք վայրերում տւեց չմեցնող հակահարւածներ եւ ունեցաւ աչքի ընկնող դործունէութիւն արտաքին ու ներքին կեանքի ասպարէզներում: Արտաքին ասպարէզում, հայվրացական պատերազմի դադարելուց անմիջապէս յետոյ Եւրոպա մեկնեց Հայաստանի պատւիրակութիւնը՝ հայկական խնդիրը Հաշտութեան վեհաժողովին ներկայացնելու համար: Փետրւար 4–ին Ա. Ահարոնեանը արդէն Փարիզում էր, ուր հայկական պահանջները արդէն վերջնական ձեւակերպում էին ստացել Ազգ. Պատւիրակութեան կողմից: Այդ պահանջները չէին համապատասխանում երեւանում մշակւած պայմաններին. երեւանում որոշւել էր վեհաժողովից պահանջել չորս վիլայէթների հողամասերից բաղկացած Հայաստան՝ ելքով դէպի Սեւ ծով, Ազգ. Պատւիրակութիւնը գծել էր ծովից–ծով Հայաստան՝ Մերսինից մինչեւ Շուշի: Եւ այդ էլ ոմանց քիչ էր թւում: Գաղութահայ մտաւորականութիւնը Ա. Ահարոնեանին էլ հարկադրեց տալ իր ստորագրութիւնը Ազգ. Պատւիրակութեան մշակած ծրագրին, եւ փետր. 12–ին, երկու պատւիրակութիւնների նախագահների ստորագրութեամբ, հայկական պահանջները ներկայացւեցին Հաշտութեան վեհաժողովին:

Հայերը պահանջում էին՝

1. Ճանաչումը հայկական անկախ պետութեան, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի եւ Տրապիզոնի 7 վիլայէթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարաւակողմը եւ Օրդու—Սեբաստիա գծից դէպի արեւմուտք գտնւող չրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել—Բերեքէջ եւ Ադանա՝ Ալեք-

անդրեթով հանդերձ. 3) Կովկասի Հայկական Հանրապետութիւնը՝ Երեւանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Ելիզաւետպոլի նահանգի հարաւ-արեւմտեան մասը, Կարսի նահանգը՝ բացառութեամբ Արդահանից հիւսիս գտնուող շրջանի:

2. Հայկական պետութիւնը դրւի դաշնակից պետութեանց եւ Միացեալ Նահանգների կամ Ազգերի Լիգայի հոգատարութեան տակ:

3. Հաշտութեան Վեհաժողովի կողմից պէտք է մասնաւոր մանդատ տրւի պետութիւններից մէկին, որն իր օժանդակութիւնը պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար: Այդ պաշտօնն ըստանձնող պետութեան ընտրութիւնը պիտի լինի համախորհուրդ Հայկական Համագումարի հետ, որ այժմ գումարւած է Փարիզում եւ որը ներկայացնում է ամբողջ հայ ազգը: Մանդատի տեւողութիւնը լինելու է առնւազն 20 տարով»:

4. Հատուցում ջարդերի, տարագրութեանց, յափշտակութեանց եւ աւերումների պատճառած վնասների: Հայաստանը պատրաստ է իր բաժինը ստանձնելու օսմանեան նախապատերազմական պարտքից:

5. Մանդատ առնող պետութիւնը պէտք է ստիպէ Թիւրքերին՝ պարպել հայկական հողերը, ձեռնարկէ բնակչութեան ընդհանուր դիմաթափութեան, պատժէ ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրաւութիւն գործողներին, երկրից հեռացնէ կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկէ մուհաջիրներին եւայլն: «Հայկական ծագում ունեցող իւրաքանչիւր անհատ, որ հաստատւել է կամ բնիկ դարձել օտար երկրում, պէտք է լինի ազատ հինդ տարւայ ընթացքում ընտրելու նոր հպատակութիւն թէ՛ իր եւ թէ՛ իր անչափահաս զաւակների անունով եւ դառնայ հայ քաղաքացի՝ նախապէս գրաւոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանութիւններին»:

Այս պահանջները կազմեցին հայ քաղաքական շրջանների հետապնդման եւ հայ ժողովրդի ոգեւորութեան առարկան: Գործնականօրէն հաշւի առնւեցին նրանք միայն մի տարի յետոյ, երբ Վեհաժողովի սեղանի վրա եկաւ Օսմանեան կայսրութեան հարցը: Երկու պատւիրակութիւնների դերը եղաւ մտքեր պատրաստել այդ ուղղութեամբ եւ Վեհաժողովի շրջանակներում ու պետութիւնների մօտ դիմումներ կատարել յօդուտ հայկական պահանջների:

Հայկական պատւիրակութիւնները առանձնապէս մեծ ճիգ էին թափում՝ հայկական հարցով հետաքրքրելու Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները Վեհաժողովում եւ յատկապէս ինքը, նախագահ Վիլսընը սրտին մօտիկ էր ընդունում հայերին ու տրամադրութիւն ցոյց տալիս ստանձնելու Հայաստանի մանդատը: Եթէ որեւէ մէկ մանդատ ընդունելու լինի, Ամերիկան առաջինը կընդունէ Հայաստանի մանդատը, — այս էր ամերիկացիների բանաձեւը: Եւ, անշուշտ, Վիլսընեան շրջանակը կը կամենար, որ Ամերիկան լինի Հայաստանի հոգատարը, եւ ինչո՞ւ միայն

Հայաստանի. գուցէ եւ Անդրկովկասի եւ ողջ Փոքր–Ասիայի: Հայկական «ծովածաւալ կայսերապաշտութեան» մէջ, ինչպէս կծու կերպով հեգնում էր ֆրանսական կիսապաշտօնական «Թան»–ը, քիչ տեղ չէր բռնում եւ Վիլսընեան ներշնչումը՝ ուղղակի կամ անուղղակի:

Նախագահ Վիլսընի նախաձեռնութեամբ, 1919 թ. յունե. 30–ին Վեհաժողովը վճռեց ազատել Հայաստանը եւ նշանակել հոգաստար (մանդատէր): Մարտ 20–ին զարձեալ Վիլսընի առաջարկութեամբ Վեհաժողովը որոշեց Մերձաւոր Արեւելք ուղարկել Ամերիկայի, Ֆրանսայի, Անգլիայի եւ Իտալիայի ներկայացուցիչներից բազկացած մի յանձնախումբ՝ քննելու համար օսմանեան կայսրութիւնից անջատուելիք երկրամասերի վիճակը եւ ժողովուրդների կարիքները: Փաստօրէն դնացին միայն Ամերիկայի ներկայացուցիչները՝ Քինգն ու Քրէյնը. միւս կառավարութիւնները ներկայացուցիչ չնշանակեցին: Քինգի ու Քրէյնը հարցաքննութիւն կատարեցին Պօլսում յունիս 10–ից մինչեւ յուլ. 21 եւ եկան այն եզրակացութեան, որ նախկին օսմանեան կայսրութիւնից պէտք է կազմել 3 նոր պետութիւն՝ Հայաստան, Թիւրքիա եւ Պոլիս, որոնցից իւրաքանչիւրը առանձին–առանձին եւ բոլորը միասին պէտք է յանձնուեն մի պետութեան հոգաստարութեան (մանդատ): Մասնաւորապէս դժուար էր երեւում Հայաստանի հոգաստարութիւնը, որի ստանձնումը պայմանաւորում էր նրանով, որ Պոլիսն ու Թիւրքիան էլ դրւեն միեւնոյն պետութեան հոգաստարութեան տակ: Իրենց տեղեկագրում Քինգն ու Քրէյնը առաջարկում էին, որ Հայաստանի, Թիւրքիայի եւ Պոլսի մանդատը տրւի Ամերիկային:

1919 թ. ամառը նախագահ Վիլսընը մի նոր յանձնախումբ ուղարկեց Առաջաւոր Ասիա՝ քննելու համար մանդատի պայմանները: Հմուտ մասնագէտների բազմամարդ մի առաքելութիւն էր այդ զօրաւոր Հարբորդի ղեկավարութեամբ: Առաքելութիւնը իր քննական պտոյտը սկսեց Պոլսից, անցաւ Կիլիկիա, Հիւսիսային Սիւրիա, Տիգրանակերտ, Խարբերդ, Սըվազ, Երզնկա, Կարին, Կարս: Ամէն տեղ հարցաքննեց ազգարնակութեան ներկայացուցիչներին, յարաբերութեան մէջ մտաւ տեղական իշխանութիւնների հետ, հաւաքեց պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնաչխարհագրական, մշակութային, ռազմագիտական եւ այլ կարգի տեղեկութիւններ: Սըվազում գօր. Հարբորդը տեսակցութիւն ունեցաւ Մուստաֆա Քեմալի հետ, որը նոր էր ձեռնարկում «Միլլի» շարժման: Հարբորդի ասելով՝ Քեմալը խնդրել է յայտնել Հայաստանի կառավարութեան որ այս վերջինը ձեռք քաշէ մեծ պետութիւններից եւ անմիջական համաձայնութեան գայ Թիւրքերի հետ:

Հարբորդի առաքելութիւնը, Կարսից, Կաղզուան—Կողբ—Սուրմալուի ճանապարհով հասաւ Երեւան եւ ջերմ ընդունելութիւն գտաւ կառավարութեան ու ժողովրդի կողմից: Առաջուց արդէն ուղարկւած էին ընդարձակ հարցացուցակներ, եւ կառավարութիւնը պատրաստել էր պահանջւած նիւթը: Տեղի վրա էլ Հարբորդն ու իր ընկերները կատարեցին մանրակրկիտ քննութիւն եւ նոյն ջերմութեամբ ճանապարհ դրւեցին դէպի Թիֆլիս: Այս-

տեղից անցան Բագու և սեպտ.ի վերջերին մեկնեցին Փարիզ, որտեղից զօր. Հարբորդը «Մարթա Վաշինկթըն» նաւով վերադարձաւ Ամերիկա եւ նաւի վրա էլ պատրաստեց իր տեղեկագիրը՝ ստորագրուած 16 հոկտ. 1919 թ.*):

Այդ տեղեկագրի մէջ զօրավար Հարբորդը խտացրել էր երեսուն օրւայ ճամբորդութեան ընթացքին հաւաքած տեղեկութիւններն ու հանած եզրակացութիւնները: Շատ էլ մխիթարական չէին նրանք հայերի համար: Նա պնդում էր, որ ծրագրուող Հայաստանում հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմել, իսկ այժմ՝ եւս առաւել, որ հայ ժողովուրդը օժտուած է դրական յատկութիւններով, բայց չդիտէ յարմարւել իր շրջապատին: Հայերը պէտք ունեն արտաքին հոգատարութեան, եւ Միացեալ–Նահանգները պէտք է ընդունեն հոգատարութիւնը, բայց ո՛չ միայն Հայաստանի: Հարբորդը առաջարկում էր միացնել ամբողջ Թիւրքահայաստանը, Անատոլիան, Պոլիսը, Թրակիան եւ Անդրկովկասը մէկ մանդատի տակ: Այդ դէպքում Ամերիկան կարող է ստանձնել հոգատարութիւնը: Հօդուտ մանդատն ընդունելու Հարբորդը բերում էր 14 հիմք, ընդդէմ՝ 13: Մի եզրակացութիւն, որ, ի հարկէ, ոչնչով չէր կարող ուժեղացնել Վիլսընի դիրքը եւ, ընդհակառակը, ջուր էր լեցնում վիլսընեան քաղաքականութեան թշնամիների ջրաղացին:

Եւրոպայում արւած քայլերին զուգընթաց՝ Հայաստանի կառավարութիւնը աշխատում էր հարեւանների հետ էլ համակեցութեան եթէ ոչ լաւագոյն, գէթ տանելի ձեւեր ստեղծել: Այս նպատակով կատարւում էին մասնաւոր տեսակցութիւններ, տեսակէտների դրւսւոր փոխանակութիւններ, խորհրդաժողովներ եւայլն: Այս ուղղութեամբ մասնաւորապէս եռանդուն գործունէութիւն էին ցոյց տալիս Հայաստանի Հանրապետութեան Բագուի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը եւ Թիֆլիսի ներկայացուցիչ Լ. Եւանգուլեանը՝ երկուսն էլ յարգւած, ձեռնհաս եւ ազդեցիկ գործիչներ, որոնց ներկայութիւնը Թիֆլիսում ու Բագուում, մանաւանդ Տ. Բէգզադեանի հմուտ ներկայացուցչութիւնը խոշոր օգուտներ էր բերում Հայաստանին: 1919 թւի վերջերին Լ. Եւանգուլեանը**), հիւանդութեան պատճառով, պաշտօնից հրաժարւեց, եւ նրա տեղը անցաւ Տ. Բէգզադեանը,

---

*) Այս տեղեկագիրը հրատարակւեց 1920 թւին Ամերիկեան Դեսպանոյտի կողմից: Բացի տեղեկագրից առաքելութիւնը կազմել էր եւ 12 մասնագիտական տեսութիւններ. 1) Քաղաքական գործօններն ու խնդիրները. 2) Թիւրքիայի եւ Անդրկովկասի կառավարութիւնը. 3) Թիւրքիայի եւ Անդրկովկասի պետական եւ մասնաւոր ֆինանսները. 4) Նոյն երկրների առեւտուրն ու արդիւնաբերութիւնը. 5) Հանրային առողջութիւնն ու առողջապահութիւնը. 6) Ազգաբնակութիւնը, արդիւնաբերութեան յատկութիւնները, կենցաղը. 7) Կլիման, բնական հարստութիւնները, անասնաբուծութիւնը, երկրագործութիւնը. 8) Ախարհագրութիւնը, հանքային գործը եւ սահմանները. 9) Մամուլը Թիւրքիայում եւ Անդրկովկասում. 10) Մանդատատիրոջ զինուորական անելիքները. 11) Հաղորդակցութեան ժիջոցները Փոքր–Ասիայում եւ Անդրկովկասում. 12) Կենսագրութիւններ:

**) Լ. Եւանգուլեանը վախճանւեց 1920ին: Նա Թիֆլիսի հայ բուրժուական մտաւորականութեան լաւագոյն դէմքերիցն էր՝ զարգացած ու կենցաղագէտ, որ վրացիների ու հայերի մէջ ունեցած իր ազդեցութեամբ եւ օտարների շրջանում վայելած յարգանքով՝ Հայաստանը ներկայացնում էր վայել արժանապատւութեամբ:



ՏԻԿ· ԳԵՐՃՈՒՀԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ



ՏԻԿ· Վ· ՍԱՀԱԿԵԱՆ



ՆՈՍՐՈՎ ՊԱՊԱՑԵԱՆ



ՀՄ· ՄԱՆՈՒԿԵԱՆ

իսկ վերջինիս փոխարինեց Խորհրդարանի անդամ Մարտ. Յարութիւնեանը:

Պէտք է այստեղ արձանագրել — յարդանքով ու երախտագիտութեամբ — եւ ա՛յն անգնահատելի ծառայութիւնը, որ մատուցանում էր Հայաստանին վերջին երեսնամեակի հայ ամենաինքնատիպ գործիչներից մէկը՝ Ստ. Մամիկոնեանը՝ Մոսկուայի Հայկական Կոմիտէի համբաւաւոր նախագահը: Նաեւ մի ուրիշ վաստակաւոր գործիչ՝ Սմբ. Խաչատրեանը, գրեթէ մշտական պատուիրակներն էին հայկական կառավարութեան՝ Թիֆլիսում գումարուող խորհրդաժողովներին: Նա իր պաշտօնը կատարում էր առանձին սիրով ու ձեռնհասութեամբ: Անձնէր հայրենասէր, զարգացած եւ իմացական հարուստ կարողութիւններով օժտուած գործիչ, ուժեղ ու հետեւողական կամքի տէր՝ նա կարողանում էր հայկական շահերը պաշտպանել այնպէս, ինչպէս չէր կարողանում ուրիշ ո՛չ մէկը իր միջավայրում: Ստ. Մամիկոնեանը ամբողջ կեանքում մնաց հաւատարիմ իր դաղափարներին եւ հայրենասէրի դառն բաժակը քամեց մինչեւ վերջին մրուրը: Մեռաւ Թիֆլիսում, յետին աղքատութեան մէջ՝ մերժելով նիւթական աջակցութիւնը հայ բոլշեւիկների, որոնց համարում էր, թիւրքերից յետոյ, հայ ժողովրդի վատթարագոյն թշնամին:

Հեշտ բան չէր Հայաստանի շահերի ներդաշնակումը հարեւանների հետ: Ո՛չ միայն սահմանային ու գործնական ուրիշ խնդիրներ էին բաժանում հայերին ազրբէջանցիներից ու վրացիներից, այլ եւ միջազգային քաղաքականութեան դնահատութիւնը, օրիէնտացիայի խնդիրը, Կովկասի ապագայի ըմբռնումը եւայլն: Մինչ հայերը իրենց ազգային պահանջների դոհացումը որոնում էին դաշնակիցների յաջողութեան եւ Թիւրքիայի քայքայման մէջ, կովկասեան մահմետականները դժբախտութիւն էին համարում Թիւրքիայի պարտութիւնը եւ ամէն կերպ աշխատում էին ուժեղացնել նրա ազդեցութիւնը Կովկասում: Մինչ, միւս կողմից, ազրբէջանցիներն ու վրացիները անվերապահ կռիւ էին յայտարարել հիւսիսին՝ խորհրդային թէ կամաւորական Ռուսաստանին, առհասարակ, ռուսութեան, հայերը դեռ հոգով Ռուսաստանի հետ էին, բնազդօրէն Ռուսաստան էին որոնում: Հայաստանի ներկայացուցիչները զօր. Դենիկինի ու Կոլչակի մօտ արտայայտութիւնն էին այդ վերաբերումի: Եւ, վերջապէս, վրացիները, բայց, մանաւանդ, ազրբէջանցիները իրենց համար ձեռնտու էին համարում եւ յամառօրէն առաջ էին մղում կոնֆեդերացիայի ստեղծումը կովկասեան երկրներից՝ ուղղելով միացեալ Կովկասը Ռուսաստանի դէմ, հայերը, պահելով հանդերձ արտաքին համակրական վերաբերումը դէպի կոնֆեդերացիայի գաղափարը, ըստ էութեան հակառակ էին նրան:

Կոնֆեդերացիայի խնդիրը առաջին անդամ եկաւ կովկասեան չորս հանրապետութիւնների անդրանիկ խորհրդաժողովին, որ բացուեց ապրիլ 27-ին Թիֆլիսում՝ մասնակցութեամբ Հայաստանի կողմից արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանի, արդ. նախ. Ս. Յարութիւնեանի եւ Հ. Խորհրդի անդամ Ստ. Մամիկոնեանի, Վրաստանի կողմից՝ արտ. գործ. նախարար Ե. Գեգեչկորիի, ներք. գործ. նախ. Ն. Ռամիշվիլիի, եւ Ելիզաւետական նա-

խարար Կանդելակիի. Ազրբէջանի կողմից՝ վարչապետ Խան Խոյսկիի, Թիֆլիսի դիւ. ներկ. Մ. Ջաֆարովի եւ Խաս-Մամեդովի. Լեռնականների Միութեան կողմից՝ Կանտեմիրովի, Բուդդայեւի եւ Գանդուրայեւի:

Խորհրդաժողովը տեւեց աւելի քան 3 շաբաթ, բայց եւ ո՛չ մէկ հարցի շուրջ համաձայնութեան չեկաւ: Օրակարգի հարցերն էին՝ սահմանաբաժանման խնդիրը, քոչը, զաղթականութեան վիճակի կարգադրութիւնը, հաղորդակցութեան ու ելեւմտական միջոցները, դիւանագիտական ու պաշտպանողական համագործակցութիւնը եւայլն: Բոլոր հիմնական հարցերը համարեա առաջ բերին տարաձայնութիւն, եւ խորհրդաժողովը ցրուեց առանց որեւէ որոշ դարձաւ կամաւորական բանակի սպառնալիքը կովկասին, եւ վրացիներն ու ազրբէջանցիները դրին զօրավար Դենիկինի դէմ դինակցութիւն կնքելու առաջարկը: Հայերը մերժեցին: Այն ժամանակ, վրացիներն ու ազրբէջանցիները կնքեցին առանձին դաշինք, որով կողմերը պարտաւորւում էին, ռուսական յարձակման պարագային, մէկ մէկու զինւորական աջակցութիւն ցոյց տալ: Դաշինքի կնքումից յետոյ Թիֆլիս եկաւ Ազրբէջանի զինւորական նախարար զօր. Մեխմանդարովը եւ տեղի ունեցան աղմկոտ ցոյցեր վրաց–ազրբէջանեան բարեկամութեան մասին:

Այդ առթիւ, արտ. գործ. նախ. Ս. Տիգրանեանը գրում էր իր 1919 թ. յունիս 16 զեկուցման մէջ. «Մղիմանին օրեր առաջ ասել էր, թէ՝ եթէ հայերդ չզիջէք, մենք ստիպուած կը միանանք թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցութեան անհրաժեշտութիւնը մերժել էին, իսկ մեր չէզոքութիւնը, առանց դաշնագրի ու կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բաւարար միջոցը դտել էին Հայաստանի ներսը եւ դուրսը մուսուլմաններին յարձակումներով ու սպառնալիքներով մեր ուժերը զրաղեցնելու, ջլատելու եւ չէզոքացնելու մէջ (Ղարաբաղի, Օլթիի, Կաղզուանի, Շարուրի, Նախիջեւանի դէպքերը): Եւ այն երեւաց, երբ մենք՝ Հայաստանի մինիստրներս՝ անշուք եւ անուշադիր մեկնում էինք Թիֆլիսի կայարանից, նոյն կայարանում Վրաստանի մինիստրները պատուի պահակով, երաժշտախմբով, շքով դիմաւորում էին Թիֆլիս ժամանող զօր. Մեխմանդարովին՝ Ազրբէջանի զօրական մինիստրին»:

Սեպտ. 17–ին, Թիֆլիսում, բացուեց հայ–վրացական մի նոր խորհրդաժողով՝ բաղկացած Ն. Ռամիշվիլիից, Ս. Մդիվանիից ու Կ. Սարախատրաշվիլիից (Վրաստան) եւ Ստ. Մամիկոնեանից, Ս. Խաչատրեանից ու զօրավար Քիչմիշեանից (Հայաստան): Օրակարգի հարցերն էին. 1) Քրանդիտ, 2) երկաթուղային շարժական միջոցների բաժանում, 3) անդրկովկասեան դոյքերի բաժանում, 4) հպատակութեան հարց, 5) Հայաստանի պետական վարկային գործողութիւնների կատարում Թիֆլիսում եւ 6) մաքսային արգելքների վերացում:

Նորից ու նորից չատ երկար քննութեան ու վիճաբանութեան առարկայ դարձաւ սահմանային հարցը: Այս անգամ կողմերը որոշ զիջումներ արին, բայց համաձայնութիւնը նորից մնաց անհասանելի: Վրացիները յայտ-

նեցին, որ իրենք տրամադիր են որոշ զիջումներ անել Լոռիի շրջանում, բայց Ախալքալաքի գաւառում՝ ո՛չ մի զիջում: Նրանք առաջարկեցին հետեւեալ սահմանագիծը Վրաստանի եւ Հայաստանի միջեւ.

Սկսելով Ջաթընդաղ 7378 գագաթից Թիֆլիսի եւ Գանձակի նահանգների սահմանագծից՝ սահմանը պէտք է անցնէր Բոլոր-Կոնտ 6475 լերան կատարով, ապա, Ջրաբաշխի ուղղութեամբ, Ակոռի գիւղի հարաւային կէտին, ուր ճախ կողմից թափւում է մի գետակ Դեբեթաչայի մէջ: Այստեղից, ուղիղ գծով դէպի Ակուտկայա սարը եւ ապա Ջրաբաշխով մինչեւ 7252 նշանը, այստեղից լեռնաշղթայով Կրեստովայա լերան կատարը 6488: Ցետոյ, Ջրաբաշխով, Գայլի Դրունք լեռնանցքով — Օսինովայա լեռը — Լոկ լեռը — Լոկի լեռնանցքը — 5752 բարձունքը, Սաաթի գիւղը հարաւից առնելով՝ 6132 բարձունքը: Այստեղից Ջրաբաշխով՝ Ինգանչայ գիծը, ապա կարանըխ գետով Լէյլի դաշ բարձունքը: Ապա՝ Թիֆլիսի նահանգի նախկին սահմանը, Օրկիւզդաղ 8018 լերան վրայով՝ Օրտուլդաղ 8030 լեռը, 8127 նշանը մինչեւ Ուչ-Թափալար 9783 լեռը»:

Այսպիսով, ամբողջ Լոռիի դաշտը եւ երկաթուղին մինչեւ Սանահին պիտի անցնէին Հայաստանին: Այս գիծը վրացիները համաձայնւում էին նկատել իբրեւ ժամանակաւոր սահման. եթէ Հայաստանի ակնկալութիւնները Թիւրքիայից իրականանային, սահմանագիծը պէտք է վերաքննւէր:

Հայերը համաձայնւում էին պայմանական կերպով զիջել Ախալքալաքի մեծ մասը՝ պահելով իրենց ձեռքին լճերի շրջանը: Լուրջ զիջումներ էին անում եւ Լոռիի շրջանում: Հայերն առաջարկում էին հետեւեալ սահմանագիծը. Կողր գիւղից 4 վերստ հիւսիս-արեւմուտք գտնւող Շումալ (3465) լեռը. ապա՝ 1603 բարձունքով, 3938 (Գեղիկ-Բուռուն լեռը) բարձունքի վրա գտնւող ձմեռանոցով դէպի Քէչէլ Կոնդ (4865) լեռը, Բուղաքար լեռը. ապա՝ 7364 բարձունքի վրա գտնւող ձմեռանոցից դէպի Լալւար սարը (8386), 7262 բարձունքը, որտեղից սահմանը շուռ է գալիս դէպի հիւսիս-արեւմուտք, Կրեստովայա (6488) լեռը, 5810 բարձունքով (Գայլի Դրունք լեռնանցքը) Օսինովայա սարը, Լոկ սարը (7038), ապա՝ Լոկի լեռնանցքը (5999), «Սաաթի» մակապրութեան վրայով դէպի 5752, 5334 բարձունքը, որտեղից ուղիղ գծով Աղրիքար (9765) լեռը: Եւ Ախալքալաքի գաւառով՝ Աղրիքար (9765) լեռը՝ դէպի Շիչ Թափա (8820) լեռը, 7637 (Սուրբ Յովհաննէս) բարձունքը 7168 (Պուտ-Ջանա-Թափա լեռը) բարձունքը, 6741 բարձունքը, Էչոխա գիւղի (որ պիտի մնայ Հայաստանին) վրայով Ուչ-Թափա (6254) լեռը, որտեղից ուղիղ գծով 4319 բարձունքը, որ Քուռից արեւմուտք է գտնւում (Օկամ և Ազմանա գիւղերը թողնելով Վրաստանին). ապա՝ սահմանը անցնում է դէպի հարաւ-արեւմուտք, Քուռ գետի հոսանքով, մինչեւ Արղահան:

Ինչպէս տեսնում ենք, հայ-վրացական սահմանագծի հիմնական տարբերութիւնը Լոռիում Ալլահվերդիի պղնձահանքերն էին. վրացիները պահանջում էին Ալլահվերդին իրենց, հայերը՝ իրենց: Եւ երբ վրացիները խօսք բացին այն մասին, թէ իրենք ահագին տնտեսական զիջումներ արին

այն պայմանով, որ հայերն էլ զիջեն սահմանային խնդրում, հայկական պատւիրակութեան նախագահ Ստ. Մամիկոնեանը կտրուկ կերպով ընդհատեց. «Հողային հարցը չպէտք է կապել տնտեսական հարցի հետ. հողային հարցերը քաղաքական հարցեր են եւ զիջումը այս ասպարէզում կարող է լինել միայն բարձրագոյն կարգի քաղաքական պատճառներով: Վագոնների ու չոգեշարժերի փոխարէն հող չի կարելի զիջել»:

Սահմանային հարցը այս անգամ էլ մնաց անլոյծ: Նա վէճի առարկայ էր եւ արտասահմանում հայ եւ վրացի պատւիրակութիւնների միջեւ եւ նոյն խոչընդոտներին էր հանդիպում, ինչ որ եւ Կովկասում: Յորհրդաժողովը, սակայն, մի քայլ արաւ ուրիշ հարցերում. նոյեմբ. 3-ին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ստորագրուեցին երկու դաշնագրեր, որոնք անպայման նպաստում էին հայ-վրացական մերձեցման տեսակէտից: Առաջին դաշնագիրը ասում էր.

«Վրաստանի կառավարութիւնը՝ ներկայացուած ի դէմս ներքին գործերի եւ զօրական նախարար Նոյ Վխտարիոնովիչ Ռամիշվիլու եւ Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր ժողովի փոխ-նախագահ՝ Սիմէոն Գուրգենովիչ Մդիվանու մի կողմից եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ ի դէմս Ստեփան Գրիգորեան Մամիկոնեանի եւ Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան Խաչատրեանի միւս կողմից, — ծանօթանալով լիազօրութիւնների հետ եւ, գտնելով դրանք պահանջած ձեւի և պատշաճ կարգի, կնքեցին սոյն դաշնագիրն առ այն, որ.

«1 Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները եւ վրաց երկաթուղիներով Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրող ապրանքների համար սահմանւում է ազատ փոխադրութիւն, այսինքն՝ փոխադրութիւն առանց մաքսի:

«2. Սոյն դաշնագիրը կնքւում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը իրաւունք ունի յայտարարել վերաքննել դաշնագիրը եւ այս դէպքում՝ դաշնագիրն իր ոյժի մէջ մնում է այդ յայտարարութեան օրւանից սկսած վեց ամսւայ ընթացքում: Եթէ այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննութեան մասին համաձայնութեան չգան — դաշնագիրը կորցնում է իր ոյժը:

«3. Հաստատւած դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիսում երկու շաբաթւայ ընթացքում:

«4. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ»:

Երկրորդ դաշնագիրը վերաբերում էր «Հայաստանի եւ Վրաստանի Հանրապետութիւնների՝ վիճելի խնդիրները համաձայնութեամբ կամ պարտադիր իրաւարքի միջոցով լուծելու» հարցին.

«1. Դաշնագիրը կազմող պետութիւնները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնները՝ պարտաւորւում են իրանց մէջ գոյութիւն ունեցող, այլ եւ ծագելիք հնարաւոր բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ, խոկ

եթէ դա չկայանայ, պարտադիր իրաւարքի միջոցով:

«2. Վաւերացած սոյն դաշնագրի փոխանակութիւնը կատարելու է Թիֆլիսում, երկու շաբաթայ ընթացքում:

«3. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ»:*)

Երկու դաշնագրերն էլ վաւերացուեցին Հայաստանի Խորհրդարանի նոյեմ. 11-ի նիստում եւ, փոխանակութիւնից յետոյ, մտան ոյժի մէջ:

Դրանից առաջ, օգոստ. 29—30-ին, անգլիացիների հեռանալու առթիւ, հայ ու վրացական պատւիրակութիւնների խորհրդաժողովում, զօր. Բիչի մասնակցութեամբ, մշակւել էր վարչական մի ձեւ Լոռիի չէզոք շրջանի համար: Որոշւել էր 1) Չէզոք շրջանի վարչութիւնը թողնել խառն անգլիական սպայի ղեկավարութեան ու հակակշռի տակ. 2) Անգլիական սպայի բնակութեան վայր կարող է լինել Ալլահվերդին կամ Թիֆլիսը. 3) Չէզոք շրջանի վարչութեան ծախսերը բաժանւում են Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Սեպտ. 1-ին նոյն պատւիրակութիւնները որոշեցին 1) անփոփոխ թողնել չէզոք շրջանի հայ եւ վրացի զօրամասերի քանակն ու բնակութեան վայրը. 2) կազմել զինւորական մասնագէտներից մի յանձնախումբ ստուգելու համար, թէ արդեօք 1919 թ. յունւ. 9—17-ին հաստատւած գիծը եւ զօրքերի դասաւորութիւնը պահպանւա՞ծ է:

Այս որոշումները հաստատուեցին Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւնների կողմից եւ մտան ուժի մէջ, որով անգլիացիների հեռանալուց յետոյ էլ Լոռիի չէզոք շրջանը մնաց հայ-վրացական խառն իշխանութեան ներքոյ:

Սակայն, եթէ հայ-վրացական փոխյարաբերութիւնները, արագ կամ դանդաղ, քայլ առ քայլ բարելաււում էին, Ազրբէջանն ու Հայաստանը շարունակում էին մնալ թշնամի կողմեր. պաշտօնապէս պատերազմ չկար նրանց միջեւ, բայց փաստական վիճակը պատերազմից էլ վատ էր: Հասկացողութեան գալու մի փորձ էր հայ-ազրբէջանեան խորհրդաժողովը, որ բացւեց Բագւում, 1919 թ. դեկտ. 14-ին:

Հայաստանի կողմից խորհրդաժողովի պատգամաւորներն էին նշանակւած Մ. Ծարուխիւնեանը, Տ. Բէգզադեանը եւ Վ. Փափազեանը: Վերջինիս հիւանդութեան պատճառով՝ փոխարինեց Ե. Արզումեանը, որ Բագուի վրայով Թեհրան էր գնում, իբրեւ դեսպան: Ազրբէջանեան պատգամաւորութեան կազմն էր՝ Ջաֆարլի Խան Խոյսկի, Մամէդ Հասան Գաջինսկի եւ դոկտ. Վեքիլով: Իրրեւ իրաւեկ անձ, նիստերին ներկայ էր լինում եւ Խալիլ բէգ Խասմամեդովը: Խորհրդաժողովի օրակարգն էր. 1) սահմանների հարցը, 2) երկաթուղային եւ առեւտրական պայմանագրերը, 3) գաղթականների վիճակի կարգաւորում, 4) երկու հանրապետութիւնների քաղաքացիների դաստատանական-իրաւական յարաբերութիւնների եւ 5) հիւպատոսական հարցը:

---

*) Դաշնագրերը – ռուսերէն ու հայերէն – հրատարակւած են Հայաստանի Խորհրդարանի «Օրէնքների Հաւաքածոյ»-ի 1919 թ. դեկտ. 31 № 10-ում:

Խորհրդաժողովը ունեցաւ 4 մասնաւոր խորհրդակցական եւ 2 հրապարակային նիստեր: Ազրբէջանի ղեկավար շրջաններն ու կառավարութիւնը խիստ ուշադիր էին դէպի հայ պատուիրակութիւնը, իսկ Մուսաւաթի համագումարը նոյնիսկ մի ուղերձ յանձնեց նրան, բայց հէնց սկզբից երեւան եկաւ, որ կողմերը կանգնած են անհաշտելի տեսակէտների վրա:

Սահմանների հարցի համար հայկ. պատուիրակութիւնը առաջարկում էր որոշել ժամանակաւոր սահմանագիծ, իսկ ազրբէջանցիք պնդում էին վերջնական լուծման վրա: Հայկ. պատուիրակութիւնը յարմար էր համարում սկզբից կարգադրել գործնական խնդիրները եւ որոշ նպաստաւոր մթնոլորտ ստեղծելուց յետոյ միայն անցնել սահմանային հարցին. ազրբէջանցիք, ընդհակառակը, անհրաժեշտ էին համարում սկսել հէնց սահմաններից: Երկու դէպքում էլ հայկ. պատուիրակութիւնը տեղի տուեց: Բայց այն օրը, երբ պէտք է սկսէր սահմանագծի քննութիւնը, ազրբ. պատուիրակութիւնը յայտարարեց, թէ, երկար մտածելուց յետոյ, ինքը եկել է այն եզրակացութեան, որ ներկայ պայմաններում անհնար է անցկացնել այնպիսի սահմանագիծ, որ բաւարարի երկու կողմին էլ, ուստի պէտք է բաւականանալ միայն ընդհանուր սահմանորոշումով: Իսկ դրանից առաջ հարկաւոր է բոլորովին վերացնել փոխադարձ անվստահութիւնը, տարբեր օրիէնտացիաները եւ ստեղծել կովկասեան ժողովուրդների միութիւն, կազմել կոնֆեդերացիա: Դրանով ոչ միայն կը հեշտանայ ներքին խնդիրների լուծումը, այլ եւ արտաքին ճանաչումը: Թէ թանձրացեալ կերպով ի՞նչ ձեւով էր հասկանում կոնֆեդերացիան, ազրբէջանեան պատուիրակութիւնը չպարզեց:

Հայաստանի պատուիրակութիւնը առարկեց, թէ կոնֆեդերացիայի համար պակասում են մի շարք էական պայմաններ.— մեր հանրապետութիւնների անկախութիւնը դեռ եւս չի ճանաչուած, մեր հանրապետութիւնների չէզոքութիւնը դեռ չէ ապահովուած, սահմանները որոշ չեն եւայլն: Այս պայմաններում կոնֆեդերացիան անիրագործելի բան է:

Սրա վրա խորհրդաժողովը ընդհատեց, եւ հայկ. պատուիրակութիւնը մեկնեց Երեւան՝ նոր հրահանգներ առնելու եւ խորհրդաժողովի թիֆլիսում շարունակելու որոշումով:

***

Հակառակ աննպաստ պայմանների, ներքին կեանքում էլ Հայաստանը հետզհետէ ամրանում ու բարգաւաճում էր: 1919 թ. ամառը Հայաստանը արդէն կազմակերպուած պետութիւն էր. երկիրը բաժանուած էր 10 գաւառների՝ համապատասխան վարչութեամբ ու դատաստանական իշխանութեամբ. բոլոր գաւառներում կային հաշտարար դատարաններ, որոնք, բացի Արդահանի գաւառից, դատավարութիւնը անում էին հայերէն լեզուով: Երեւանում կար շրջանային դատարան, դատաստանական պալատ, Սենատ: Մայիս 28–ին Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքիլիսա, Ջալալ–Օղլի, Դիլիջան գիւղերը վերածուեցին քաղաքի:

երկրի վարչութիւնը բարելաւելու նպատակով, մայիս 25–ին Երեւանում գումարուեց գաւառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանի նախագահութեան տակ։ Ներկայ էին Երեւանի գաւառապետ Լ. Ամիրխանեանը, Էջմիածնի՝ Սեդրակ Զալալեանը, Դարալագեազի՝ Ն. Յակոբեանը, Նոր–Բայազէտի՝ Բէնօ Նալչաջեանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարաֆիկեանը, Ղարաքիլիսայի՝ Սիդօ Տէր–Սարգսեանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանեանը, Կարսի նահանգից՝ Ստ. Ղորղանեանը, Զանգեզուրից՝ Նիկ. Յովսէփեանը, Սուրմալուից՝ Հ. Խորհրդի անդամ Իւսուֆ բէյ Թեմուրեանը (եզիդի)։ Համագումարին, մէջ ընդ մէջ, մասնակցեցին նաեւ Հայ. Խորհրդի ու կառավարութեան անդամները, նախարարութեանց ներկայացուցիչները եւայլն։ Օրակարգի մէջ դրուած էին բազմաթիւ հարցեր։ Զուտ վարչական–ոստիկանական հարցերից յիշենք 1) երկրի վարչական սահմանների սրբագրութեան հարցը, 2) մասնագէտ ոստիկանների պատրաստութիւնը եւ ոստիկանական դպրոցի բացումը, 3) պաշտօնէութեան ու ոստիկանութեան տնտեսական վիճակի բարելաւումը, 4) ոստիկանների համազգեստի խնդիրը։ Համագումարը չերմ հետաքրքրութիւն առաջ բերեց իր շուրջը։ Նրա ոգին էր Ս. Մանասեանը՝ մէկը այն անաղմուկ, բայց անճնուէր գործիչներից, որոնց, ամէն բանից առաջ, հետաքրքրում է կենդանի գործը։ Հին յեղափոխական, պատասխանատու դերակատար ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմակերպութեան շրջանում, Մանասեանը, որպէս ներքին գործոց նախարարութեան վարիչ էլ եւ եւս բերեց վարչական բարձր կարողութիւն։ Երկար ժամանակ, փաստօրէն նա էր ներքին գործոց նախարարութեան ղեկավարը, եւ Հայաստանի ներքին կազմակերպութիւնն ու զարգացումը շատ բանով նրան է պարտական։

Կառավարութիւնը աշխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկութիւնները՝ խուսափելով, սակայն, կտրուկ միջոցներից։ Այս պարագան չեզոքացնում էր հասարակութեան որոշ մասերը, մանաւանդ, արեւմտահայերին, որոնք պահանջում էին անմիջապէս հայացնել ամբողջ պետական մեքենան։ Մամուլը, մանաւանդ, անողոք քննադատութեան էր ենթարկում այն հիմնարկութիւնները, ուր ազգայնացումը ընթանում էր դանդաղ։ Ապր. 17–ին Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցաւ հայ թերթերի ներկայացուցիչների առաջին ժողովը՝ մասնակցութեամբ «Աշխատանք»–ի խմբագիր Հմ. Մանուկեանի, «Հայաստանի Աշխատաւոր»–ի խմբագիր Վ. Խորէնեի, «Հայաստանի Կօօպերացիա»–յից Զ. Կորկոտեանի եւ «Վան–Տոսպ»–ից՝ Ա. Աւետիսեանի, որ կայացրեց հետեւեալ որոշումները. 1. Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնաւոր հիմնարկութիւններին՝ խօսել ու գրել հայերէնով։ 2. Մերժել ո՛չ հայերէնով գրութիւններ, լուրեր ու յայտարարութիւններ ընդունել։ Վերջինի համար բացառութիւն համարել միայն այն պարագան, երբ անոր կընկերանայ հայերէնը եւ կամ թէ երբ ոչ հայերու կողմէ է տրուած։ 3. Պահանջել հայերէն լեզուի պաշտօնականացում, իսկ միւսների գործածութիւնը թոյլատրել միայն որպէս օժանդակ լեզուներ։ 4. Թերթերի մէջ ունենալ «հայացման» բաժին, ուր տըպ–

ւելու են լուրեր թէ դրական եւ թէ բացասական, նոյնիսկ ազիտացիոն բնաւորութիւն ունեցող՝ հայ լեզուի գործածութեան շուրջ։ 5. Կազմած հռչակել «Հայացման կոմիտէ», որի մէջ մտնելու են ներկաները, ինչպէս նաեւ հրաւիրուում են մասնակցելու բացակայ թերթերի, նախարարութիւնների ու քաղաքապետարանի ներկայացուցիչները։ Այդ կոմիտէի դուռները բաց պիտի ըլլան. վերոյիշեալներէն ցանկացողները կարող են ներկայացուցիչ ուղարկել եւ կամ ուզած ժամանակ իրենց ներկայացուցչին յետ կանչել։ Կոմիտէն պիտի գրաւուի նաեւ գործնական խնդիրներով՝ ցուցմունքներ անելով եւ օգնելով ի պահանջել հարկին զանազան հիմնարկութիւնների արագ հայացման։ Կոմիտէն ունի իր մնայուն դիւանը՝ վարելու համար ծրագրուած աշխատանքները։

Անշուշտ, որոշ չափով այս չարժման ազդեցութեան տակ էր, որ մայիս 15–ին ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանը ուղարկեց հետեւեալ շրջաբերականը.

«Առաջարկում եմ այսուհետեւ գաւառում բոլոր գրագրութիւնը գաւառական, հասարակական և դիւղական կոմիսարների և նմանապէս բոլոր հիմնարկութիւնների պաշտօնեաների հետ վարել հայերէն՝ հասկացնելով ազգարնակութեան, որ խնդիրները, բացատրութիւնները հիմնարկութիւններին եւ պաշտօնեաներին պէտք է գրել հայերէն։ Նոր պաշտօնեաներին ընդունելիս պէտք է պահանջել եւ վերաստուգութիւն տալ նրանց, որոնք տիրապետում են հայոց լեզուին։ Թէ գաւառական կոմիսարների եւ թէ բոլոր ստորագրեալ պաշտօնեաների կազմած արձանագրութիւնները պէտք է լինեն հայերէն, իսկ եթէ մեղադրուողը հայ չէ, արձանագրութիւնը կարելի է կազմել եւ ռուսերէն։ Կարգադրեցէք, որ բոլոր հայ գիւղերում համաթօսականներ, հրամաններ եւ, ընդհանրապէս, ամբողջ գործավարութիւնը կազմուեն եւ կատարուեն հայերէն»։

Տարւայ վերջը պետական եւ հանրային հիմնարկութիւնների մեծ մասը արդէն հայացուած էր. դեկտ. 26–ի օրէնքով հայերէնը յայտարարուեց պետական լեզու։

Երկրի վերաշինութեան եւ տնտեսական բարեկարգութեան համար կատարուեցին մի շարք արժէքաւոր ձեռնարկներ. ապրիլ–մայիս ամիսներին բանակցութիւններ կատարուեցին Անդրկովկասի ջրային գործի հեղինակաւոր մասնագէտ Ս. Ջաւալիշինի հետ եւ նրան յանձնուեց Հայաստանի ոռոգման ջրային ուժի եւ ոռոգման ուսումնասիրութեան աշխատանքը։ Այդ նպատակով յատկացուեց 4 միլիոն ռուբլի։ Ս. Ջաւալիշինը գործի կանչեց մի շարք առաջնակարգ մասնագէտներ — Գ. Վէյնմարն, Զվորիկին, Կոժեւնիկով եւ ուրիշներ — մօտ 70 ինժեներներ, տեխնիկներ, հանքաբաններ, հողագէտներ ու բուսաբաններ եւ աւելի քան մէկ տարի անընդհատ հետազօտութեան ենթարկեց ու ծրագրներ կազմեց Հայաստանի ջրային կարողութիւնների մասին՝ որոշելով ոռոգման դրութիւնը, ջրանցքների ուղղութիւնը, էլեկտրակայանների կազմն ու տեղը եւայլն։ Հետագային, այս հետազօտութեան արդիւնքները ընդունուեցին ակադ. Ա. Թամանեանի նախագահութեամբ կազ-



ՁԱԽԻՑ ԱՋ՝ ՆՍՏԱԾ, Ա. ԷՆՖԻԱՋԵԱՆ, ԶՕՐ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ, ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ, ՓՐՕՖ. Ա. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ:
ՈՏՔԻ՝ Յ. ՓԻՐԱԼԵԱՆ, Մ. ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ, Ս. ՄԵԼԻՔԵԱՆ, ԱՐՄԷՆ ԳԱՐՕ, ՊՕՆԱՓԱՐԹԵԱՆ: 1920 Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

մրւած յանձնախմբի կողմից եւ անգնահատելի նիւթ եղան Հայաստանի համար եւ յետագային հիմք ծառայեցին Սեւան–Զանգու ելեկտրակայանների ծրագրին:

Մայիս 1-ին պարեն. նախ. Ք. Վերմիշեանի առաջարկով եւ արդ. նախ. Ս. Ցարութիւնեանի իրաւաբանական եզրակացութեամբ կառավարութիւնը ոչնչացւած համարեց Կողբի աղահանքի կապալի պայմանները եւ աղահանքերը գրաւեց յարքունիս՝ պետական միջոցներով կազմակերպելով աղի արտադրութիւնն ու վաճառքը:

Մայիս 26-ին կառավարութիւնը որոշեց բանալ Կարս—Բաթում խճուղին եւ պարէնի փոխադրութեան գործը կազմակերպել այդ ճանապարհով: Գործի ղեկավարութիւնը յանձնեց Գ. Խատիսեանին, որին յաջողեց հաղորդակցութիւն հաստատել Բաթումի ու Կարսի միջեւ եւ որոշ քանակութեամբ ալիւր էլ տեղափոխել: Աջարիայում ծայր առած հակավրացական շարժումները, սակայն, արգելք եղան սկսած գործի շարունակութեան:

Օգոստ. 25-ին քննութեան առնեց ժողովրդական անտեսութեան նախարարութիւն հիմնելու ծրագիրը եւ որոշեց երկրի վերաշինութեան վերաբերող բովանդակ աշխատանքը կենտրոնացնել մի հիմնարկութեան մէջ:

Հոկտ. 17-ին Խորհրդարանը 5 միլիոն ռուբլի վարկ բացեց Հայաստանի Կոօպերատիւների Միութեան:

Նոյն հոկտեմբերին արդէն վերջացել էր կառուցումը Երեւանի ուժեղ ռադիօկայանի, որ գործում էր մինչեւ Բասրա, Թաշկենդ ու Հաշտարխան:

Կրթական–մշակութային պահանջների համար եւս ձեռք առնեցին լուրջ միջոցներ. մայիս 30-ին կառավարութիւնը որոշեց մինչեւ յունիս 15 պարպել բոլոր դպրոցական շէնքերը, նորոգել եւ պատրաստել ուսումնական նոր տարւայ համար եւ տարրական ու միջնակարգ դպրոցներին յուլ.–դեկտ. շրջանի համար յատկացրեց 10,970,925 ր.: Տարւայ վերջը Երեւանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Փամբակ–Լոռիի, Իջեւանի եւ Նոր–Բայազէտի ու Զանգեզուրի գաւառներում կար 431 տարրական դպրոց 1096 ուսուցչով եւ 38,015 աշակերտով: Միջնակարգ դպրոցների թիւն էր 20, որոնց մէջ կային 288 ուսուցիչ եւ 5162 աշակերտ:

Մայիս 16-ին որոշեց բանալ համալսարան: Յուլ. 15-ին հիմնեցին յուշարձանների պահպանման եւ արւեստի հովանաւորութեան բաժինները:

Մայիս 25-ին Երեւանում բացւեց Հայ Արւեստագէտների Միութեան անդրանիկ պատկերահանդէսը Հայաստանում, որ կազմակերպւած էր հանրային կրթութեան եւ արւեստի նախարարի հովանաւորութեան տակ: Ցուցադրւած էին բազմաթիւ նկարներ՝ Գ. Բաշինջաղեանի, Ե. Թադէոսեանի, Մ. Սարեանի, Ս. Խաչատրեանի, Ախիկեանի, Ս. Երկանեանի եւ շատ ուրիշների: Պատկերահանդէսը մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց հասարակութեան մէջ. կառավարութիւնը գնեց 100,000 ռ. նկարներ պետական թանգարանի համար: Պատկերների գնումներ կատարեցին եւ Հայկօօպը, Երեւանի քաղաքային ինքնավարութիւնը եւայլն:

Հայ Գրողների Միութեան նախագահ Յ. Թումանեանի դիմումի վրա,

յուլ. 9–ին կառավարութիւնը յատկացրեց 100,000 ռ., որպէս նպաստ հայ գրողներին, դիտնականներին ու հրապարակախօսներին, Հայ Գրողների Միութեան վարչութիւնը այդ դումարը բաժանեց 8 ամենից հեղինակաւոր ու կարիքաւոր գրողներին:

Սեպտ. 10–ին Նորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական–Մարդաբանական թանգարան–գրադարան, որին յանձնել ի սեփականութիւն Հայոց Ազգագրական Ընկերութեան շարժական եւ անշարժ գոյքը՝ համաձայն վերջինիս ընդհանուր ժողովի որոշման: Ազգ. Ընկերութիւնը նւիրել էր Հայաստանին իր ամբողջ գրադարանը — մօտ 10,000 գրքեր, պարբերականներ, 120 գրչագիր–ձեռագիրներ, ազգագրական նիւթեր, թերթեր եւայլն: Ընկերութեան հիմնադիր ու վարիչ ե. Լալայեանն էլ տեղափոխւում էր Հայաստան մնեւնոյն պաշտօնով:

1919 թ. վերջին Երեւանում արդէն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզւի, մանկավարժական դասընթացքներ եւ մի շարք ուրիշ կրթական նոր հիմնարկութիւններ:

Կառավարութիւնը խոշոր գումարներ ծախսեց ներգաղթի վրա. մայիս 3–ին յատկացւեց 36,200,800 ռ. կարոի ներգաղթի գործին: Այդ գումարից 15 միլիոնը պիտի դնար գաղթականների փոխադրութեան եւ մի ամսւայ ապրուստի, 17,486,800 ռ. պիտի արւէր փոխարինաբար տնտեսութեան վերականգնման համար, իսկ մնացածը պիտի գործադրուէր վարչական կազմակերպութեան, բժշկա–առողջապահական եւ այլ կարիքների: Յունիս 24–ին յատկացւեց 9,744,100 ռ. Ազրբէջանի, Նուխիի, Աբէշի, Շամախիի, Դէոքչայի եւ Ղուբայի գաւառների 20,000 հայերին Հայաստան փոխադրելու համար: Մէկ միլիոն ռուբլին պիտի ծախսւէր իբրեւ ճանապարհի վարձ, 3,600,000 ռ.՝ երկու ամսւայ ապրուստի միջոց եւ 944,000 ռ., որպէս կազմակերպական ծախս:

Այս մի քանի ոչ լրիւ տեղեկութիւնները բաւական են ցոյց տալու համար, որ ներքին լարւած աշխատանք էր կատարւում Հայաստանում: Տարւայ վերջը արդէն երկիրը դանւում էր համեմատական բարեկարգութեան մէջ եւ ոգեւորութեան ու գործունեութեան առարկայ էր ո՛չ միայն Հայաստանում, այլ եւ դուրսը ապրող բոլոր հայերի համար: Հայաստանը գրաւել էր այն յատուկ փարոսը, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը փուած հայութիւնը: Իրրեւ արտայայտութիւն նման տրամադրութեան, արձանագրենք Թիֆլիսի հայ մտաւորականութեան մղումը: Դեկտեմբերի վերջերին այնտեղ կազմւեց Հայ Կուլտուրական Հաստատութիւնների Միութիւն՝ բաղկացած Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնից, Հայոց Տեխնիկական Ընկերութիւնից, Հայ Բժիշկների Միութիւնից, Ազգագրական Ընկերութիւնից, Հայ Կանանց Միութիւնից, Հայ Իրաւաբանների Միութիւնից, Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնից եւայլն: Միութեան նպատակն էր համաձայնեցնել առանձին ընկերութիւնների աշխատանքները եւ, ըստ կարելւոյն, բազմակողմանի օգնութիւն եւ լայն աջակցութիւն ցոյց տալ Հայաստանի կառավարութեան՝ երկրի վերաշինութեան գործում: Միութեան

մէջ մտնում էին Թիֆլիսի դրեթէ բոլոր հայ մասնագէտներն ու հասարակական գործիչները, որոնք, առանց որևէ ակնկալութեան, պատրաստակամութիւն էին յայտնում ծառայելու Հայաստանին, ի հարկին, տեղափոխելով նաեւ Հայաստան:

Իրականանում էր բանաստեղծի երազը —

Եւ ամէն կողմից Հայկայ հէգ որդիք

Դիմեն դէպ իրենց սիրուն հայրենիք...

ԳԼՈՒԽ ԻԷ.

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

1920 թուականը Հայաստանի Հանրապետութեան համար սկսուեց ըստ ամենայնի բարեյաջող պայմաններում: Ներքին կեանքում եւ սահմանների վրա տիրում էր համեմատական խաղաղութիւն: Երկրի բոլոր մասերում ժողովուրդը զբաղւած էր շինարարական աշխատանքով: Վերից վար, Նոր-Հրդարանից սկսած մինչեւ վերջին գիւղական իշխանութիւն՝ ամենքը համակւած էին իրենց պարտականութեան գիտակցութեամբ. պետութիւն էին ստեղծում: Եւ պետութիւնը օր օրի վրա զարգանում ու կատարելագործւում էր: Նրանք, որ տեսել էին Հայաստանը մի տարի առաջ, այլեւս չէին ճանաչում. այնքա՜ն փոխւել էր ամէն ինչ՝ երկաթուղու կայարանից ու փողոցների տեսքից սկսած մինչեւ հասարակութեան ինքնազգացումը: Այլեւս ոչ ոք չէր կասկածում Հայաստանի ապագայի մասին. ամէն ոք աշխատում էր համբացնել նրա հիմքը, արագացնել վերաշինութիւնը:

Այս տրամադրութեան արտայայտութիւն կարելի է համարել իրար յաջորդող համագումարներն ու հասարակական հանդէսները, որոնք սկսեցին 1920 թ. առաջին օրերից: Արտակարգ ոգեւորութիւն էր տիրում այդ հաւաքոյթներում, անյողդողդ հաւատ դէպի հայ ժողովրդի ստեղծագործական հանճարը, դէպի Հայաստանի ապագան:

Յունւ. 4-ին, Երեւանում, առանձին հանդիսաւորութեամբ, Նորհրապարանի ու կառավարութեան անդամների, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների եւ խուռն բազմութեան ներկայութեամբ, բացւեց Հայաստանի քաղաքների անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին Երեւան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր-Բայազէտ, Աշտարակ եւ Վաղարշապատ քաղաքների ներկայացուցիչները:

Երեւանի քաղաքագլուխ Մ. Մուսինեանը բանալով համագումարը եւ ընդգծելով, որ «մեր կեանքը մտնում է նորմալ հունի մէջ, եւ մենք կանգնած ենք վերաշինութեան ճամբի վրա», պարզեց Հայաստանի քաղաքային ինքնավարութիւնների կատարելիք կարեւոր դերը երկրի շինարարութեան գործում: Ապա ողջոյնի ճառեր արտասանեցին վարչապետ Ա. Խատիսեանը, որ

չէչոեց քաղաքների միութիւն կազմելու անհրաժեշտութիւնը, ներք. գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանը, որ ծանրացաւ քաղաքային ինքնավարութիւնների պետական դերի վրա, Ազգ. Ժողովարանի դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչ Ա. Աբեղեանը հիացումով մատնանշեց, որ «մի տարի առաջ մահուան դատապարտուած ժողովուրդը այսօր ինքնավարութեանց համապատմար կազմակերպելու հնարաւորութիւնն ունի»: Ազգ. Ժողովի սոց.-յեղափ. ֆրակցիայի ներկայացուցիչ Վ. Մինախորեանը կանգ առաւ «ինքնավարութիւնների կատարելիք բացառիկ դերի վրա — պարզել մեր երկրի վիճակը, տալ մեզ նրա իսկական պատկերը»: Ա. Ամատունեանը խօսեց Հ. Յ. Դ. երեւանի կենտր. կոմիտէի կողմից, Գ. Շահինեանը՝ երեւանի բանւորական Ազգ. ժողովի: Գրաւոր ողջոյններ էին ուղարկել Հայ Ժողովրդ. կուսակցութեան Հայաստանի կենտր. կոմիտէն, կարսի քաղաքային ինքնավարութիւնը եւ ուրիշ հիմնարկութիւններ:

Յաջորդ, յունւ. 5-ի նիստում, Ազգ. ժողովարանին, կառավարութեան ու բանակին ուղղուած ողջոյնի բանաձեւեր քէարկելուց յետոյ, համագումարը կազմեց նախագահութիւն՝ Մ. Մուսինեան, Յ. Բուդաղեան եւ Հ. Նոհրատեան եւ 5 յանձնաժողովներ. 1) Քաղաքների Միութեան կանոնագիրը մշակող՝ Ա. Բարխուդարեան, Ա. Տիրոսեան, բժ. Նահապետեան. 2) Ելեմտական՝ Յ. Բուդաղեան, Լ. Թադէոսեան, Ա. Մարգարեան, Վ. Աֆրիկեան, Մ. Մարգարեան. 3) Պարենաւորման՝ բժ. Մելքոնեան, Աւան-Իւզբաշեան, Մ. Տէր-Աբրահամեան, Զալդրանեան. 4) Կրթական-գեղարուեստական՝ Մելիք-Շահնազարեան, Ս. Մանուկօղլեան, Վ. Շահազիզ. 5) Գաղթականական՝ Ա. Շարաֆեան, Ա. Բարխուդարեան, Ա. Մարգարեան: Որից յետոյ, անցաւ օրակարգի հարցերին՝ զեկուցումներին ու դրւած խնդիրների քննութեան:

Համագումարը զբաղուեց Հայաստանի քաղաքների կեանքին վերաբերող բազմաթիւ իրաւական, տնտեսական, ելեմտական, պարենաւորման, կրթական-մշակութային, բժշկա-առողջապահական, շինարարական խնդիրներով: Ներկայացուեցին խնամուած ու լուրջ զեկուցումներ, մասնագիտական հետազօտութիւններ, բարենորոգման հիմնական ծրագիրներ: Աշխատանքներն անցան լարուած հետաքրքրութեամբ ու ջերմ մտերմական մթնոլորտում: Ընդունեցին քաղաքային կեանքի բոլոր կողմերը չօշափող բանաձեւեր: Եւ, ի վերջոյ, հիմք դրեց Հայաստանի Քաղաքների Միութեան՝ մի կազմակերպութիւն, որին ահագին դեր էր վիճակւելու Հայաստանի կեանքում:

Երկու շաբաթ յետոյ, տեղի ունեցաւ Հայաստանի իրական (de facto) ճանաչումը, որ աննկարագրելի ցնծութեամբ ընդունեց ժողովրդի կողմից:

Յունւ. 19-ին, Գերագոյն Ազգ. ժողովուրդը հանեց հետեւեալ որոշումը.— «1. Հայկական պետութեան կառավարութիւնը ճանաչւած է (de facto) 2. Սոյն ճանաչումը չի կանխորոշում այս պետութեան ապագայ սահմանների խնդիրը»:

Յունւար 23-ին ճանաչման լուրը ստացւեց Երեւանում եւ կայծակի արագութեամբ տարածւեց հասարակութեան մէջ: Մի ժամ յետոյ ամբողջ

քաղաքն արդէն ոտքի վրա էր։ Ժամը 3-ին քաղաքի պարէտի շէնքի առջեւ խռնւեց ահագին բազմութիւն. եկաւ եւ զօրքը նւագախմբով։ Պարէտ Ա. Շահխաթունին մի ոգեւորւած ճառ խօսեց օրւայ նշանակութեան մասին եւ առաջարկեց ծունկի գալ ի յարգանս Հայաստանի ազատութեան զոհերի։ Զօրքը եւ բազմահազար բազմութիւնը մի մարդու պէս լուռ իջան ծունկի։ Ապա զօրքն ու հասարակութիւնը, նւագով, դիմեցին դէպի Խորհրդարան, ուր պատշգամբից, յուզւած խօսք ասաց նախագահ Աւ. Սահակեանը։ Այստեղից, բազմութիւնը շարժւեց դէպի կառավարութեան շէնքը եւ խանդավառ ցոյցեր արաւ։ Վարչապետ Ա. Խատիսեանի ճառի միջոցին թնդանօթները աւետեցին ժողովրդին ուրախ լուրը։

Այնուհետեւ, զօրքը — ձիաւոր ու հետեւակ — նւագախմբի ուղեկցութեամբ հանդիսաւոր շքերթով անցաւ Երեւանի փողոցներով՝ ժողովրդի ցնծագին ծափահարութիւնների տակ։ Քաղաքն ընդունել էր տօնական կերպարանք։ Տներն ու խանութները զարդարւած էին դրօշակներով ու գորգերով։ Երեկոյեան եղաւ հրավառութիւն, իսկ կայարանից «Ազատամարտ» զրահագնացքը լուսաւորում էր քաղաքը։

Ամբողջ օր, մինչեւ ուշ գիշեր, մայրաքաղաքը տենդագին վիճակի մէջ էր։ Երկրի զանազան կողմերից եւ արտասահմանից տեղում էին շնորհաւորական հեռագրեր։ Հեռագրեր ստացւեցին եւ օտար պետութեանց Անդրկովկասի ներկայացուցիչներից, Վրաստանի եւ Ադրբէջանի խորհրդարաններից ու կառավարութիւններից։ Համաժողովրդական ցոյցեր ու հանդէսներ եղան եւ գաւառում։ Մասնաւորապէս շքեղ էր հանդէսը Կարսում, յունւ. 24-ին, ուր տեղի ունեցաւ համաժողովրդական միտինգ ու զօրահանդէս։ Անկեղծ ու անբռնազբօսիկ խանդավառութեամբ էր տօնում ժողովուրդը իր անկախութեան ճանաչումը։

Յունւար 26-ին Երեւանում գումարւեց Արհեստակցական Միութեան Խորհրդի անդրանիկ նիստը, մասնակցութեամբ 13 միութեանց 38 ներկայացուցիչների—կօօպերատիւների, աւտոբաժնի, դեղագործների, ուսուցչական միութեան, փոստ-հեռագրական պաշտօնեաների, քաղաքային ինքնավարութեան ծառայողների, բանկային ծառայողների, կաշւի գործարանի աշխատաւորների, երկաթուղային բանւորների, ջուլհականոցի, տպագրական բանւորների, հացթուխների եւ որբանոցների ծառայողների միութիւնների։

Ժողովը քննեց ու վաւերացրեց Միութեան կանոնադրութիւնը եւ ընտրեց Միութեան գործադիր մարմին, որի մէջ մտան Աղաջանեան Ա., Մուշեղեան Տ., Պոպով, Արզարեան Մ., բժ. Նազարեան Բ., Վարդիկեան Ս., Տէր-Զաքարեան Գ. եւ Հախվերդեան Ա.։

Ժողովի զբաղումի առարկայ եղաւ նաեւ Հայաստանի դէ ֆակտօ ճանաչումը։ Ընդունւեց մի բանաձեւ, որի մէջ արտայայտւում էր հայ աշխատաւորութեան վերաբերումը. «Միութիւնների Միութեան անդրանիկ խորհուրդը, ասում էր բանաձեւը, ողջունում է հայ աշխատաւորութեան եւ նրա կառավարութեան այս յաղթանակի համար, որը յաղթանակի մի քայլ

է հայ քաղաքական ազատագրութեան տեսակէտից։ Միութիւնների Միութեան Կորհուրդը հաւատում է, որ Հայաստանի կառավարութիւնը թոյլ չի տայ, որ ստացած ազատութիւնը ծառայէ որեւէ իմպերիալիստական պետութեան շահերին եւ Հայաստանի պետական նաւը կը տանէ դէպի Հայաստանի աշխատաւորութեան բարօրութիւնն ու սոցիալիստական նոր յաղթանակներ եւ կը ջանայ Հայաստանի ներկայ սահմանների մէջ առնել նաեւ Տաճկահայաստանի այն մասերը, որոնք հանդիսանում են հայ աշխատաւորութեան հայրենիքը»։

Ինչ վերջ ստացաւ եւ զօրավար Դենիկինի ճանաչումը։ Հարաւային Ռուսաստանի Զինուած Ուժերի Գլխաւոր Հրամանատարի զինուորական ներկայացուցիչը Հայաստանում՝ գնդապետ Զենկեւիչը գրում էր փետր. 10–ին. «Պատիւ ունեմ տեղեկացնելու Հայաստանի կառավարութեան Մեծ Բրիտանիայի անդրկովկասեան կոմիսարի եւ Թիֆլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տօմարով յունւ. 21–ին (նոր տօմ. 3 փետր.) ինձ ուղարկուած մի հեռագրական հաղորդագրութիւնը, որով յայտնւում է, թէ Հարաւ. Ռուսաստանի զինուրական ուժերի գլխաւոր հրամանատարը ճանաչում է փաստօրէն պոյութիւն ունեցող Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի կառավարութիւնները։ Ուրախ եմ առիթից օգտւելով յիշեցնելու, որ Փարիզում դաշնակիցների կողմից ընդունուած կատարեալպէս միեւնոյն ակտը Հայաստանի վերաբերմամբ գոր. Դենիկինի կողմից իրականացուած էր դեռ 1919 թ. օգոստ. 20–ին (հին տօմ), երբ Հայաստանի կառավարութեան մօտ նշանակում էր իր զինուորական ներկայացուցչին»։

Պէտք է ասել, որ հայերի մէջ անխախտ համոզում էր տիրում, որ կամաւոր. բանակը Հայաստանի նկատմամբ ունի առանձին վերաբերում։ Այդ համոզումը ամրանում էր եւ գոր. Դենիկինի մի շարք համակրական արտայայտութիւններով ու կարդադրութիւններով։ Այսպէս, 1919 թ. նոյեմ. 9–ին նա հրատարակել էր իր ծանօթ հրամանը, որի մէջ ասում էր, թէ՝ «ի նկատի ունենալով ադրբէջանեան իշխանութիւնների թշնամական վերաբերումը դէպի ռուս բանակը եւ ի նկատի ունենալով ադրբէջանեան զօրքերի դաւադիր յարձակումը Հայաստանի հողերի վրա՝ հրամայում եմ ադրբէջանեան զօրքերի մէջ գտնուղ ռուսական ծառայութեան բոլոր սպաներին հեռանալ նրանց շարքերից»։

Քաղաքական տեսակէտից, սակայն, գոր. Դենիկինը դէպի Հայաստանը ցոյց էր տալիս նոյն վերաբերումը, ինչ որ եւ դէպի Ադրբէջանն ու Վրաստանը։ 1919 թւի յուլ. 2–ին նա այսպիսի հրահանգ էր տալիս գոր. Բաթաուվին, որը գնում էր Թիֆլիս՝ բանակցելու համար անդրկովկասեան հանրապետութիւնների հետ.

«Կատարելապէս համակրելով հայ ժողովրդի ձգտումներին՝ միանալու ազգային սահմանների մէջ եւ համարելով, որ հայերը իրենց պատմական ու տնտեսական շահերով սերտ կերպով կապած են Մէկ, Անբաժան Ռուսաստանի հետ, որի սահմանների մէջ է մտնում Հայաստանի ամենից աւելի ծաղկած մասը, Հարաւ. Ռուս. Զինւ. Ուժերի Գլխ. Հրամանատարու-

թիւնը նոյն ձեւով, ինչպէս եւ Վրաստանի ու Ադրբէջանի վերաբերմամբ, ընդունում է հայկական շրջանների անջատ ինքնուրոյն կառավարութիւնը, մինչեւ համառուսական իշխանութեան վերջնական հաստատումը, առանց ունենալու որեւէ յարձակողական դիտաւորութիւն Հայաստանի վերաբերմամբ, բայց միշտ մնալով կանգնած ռուս պետականութեան միութեան տեսակէտի վրայ»:

Նոյն միտքը մենք տեսնում ենք արտայայտուած եւ հրապարակօրէն: 1920թ. յունւ. 16-ին, Գերագոյն կրուգում արտասանած ճառում գօրավար Դենիկինը, հետեւեալ ձեւով էր բնորոշում իր վերաբերումը դէպի Ռուսաստանից անջատուած հողամասերը.

«Դաշնակիցների այն առաջարկին, որ որոշեմ իմ վերաբերումը դէպի ծայրամասերը, ես տուի որոշ եւ պարզ պատասխան:

«Առաջին՝ ես ճանաչում եմ բոլշեւիկների դէմ կռւող ծայրամասերի իրական կառավարութիւնների գոյութեան փաստը:

«Երկրորդ՝ ծայրամասերի նկատմամբ Ռուսաստանի ունենալիք ապագայ յարաբերութիւնները սահմանելու են համառուսական կառավարութեան եւ ծայրամասերի կառավարութիւնների միջեւ կնքելիք պայմանագրով. ընդ սմին թոյլ է տրւում դաշնակից պետութիւնների միջնորդութիւնը:

«Երրորդ՝ որովհետեւ յունւ. 1-ին վեհաժողովի կողմից յայտարարւած վերաբերմունքը դէպի Ադրբէջանն ու Վրաստանը առիթ տւեց կարծելու, թէ այդ նորակազմ պետութիւնների անկախութեան յայտարարութիւն է, ես դիմեցի բողոքով, բայց այսօր պաշտօնական բացատրութիւն ստացայ, թէ պետութիւնները ճանաչել են միայն փաստական կառավարութեան ինքնուրոյնութիւնը եւ ոչ ծայրամասերի ինքնուրոյնութիւնը: Այս անհամաձայնութիւն չէ. ռուս պետութեան բարձր շահերի պաշտպանութիւն է, եւ այս պատասխանը բնաւ չի ժխտում այս հիմունքներով բարի հարեւանական յարաբերութիւններ հաստատելը»:

Յարաբերութիւնները, սակայն, Հայաստանի ու կամաւորական բանակի, ինչպէս եւ Դոնի, Կուբանի ու Տերեքի կառավարութիւնների միջեւ մնաց բարեկամական:

Մարտ 7-ին երեւան հասաւ Գերագոյն կրուգի պատւիրակութիւնը՝ Կովալ (Դոն), Զողուլեա (Կուբան), Բիցայեւ (Տերեք)՝ նպատակ ունենալով սերտ համագործակցութիւն հաստատել երկու կողմերի միջեւ: Երեւանում պատւիրակութիւնը գտաւ արտագին ընդունելութիւն: Մարտ 8-ին կառավարութեան հետ ունեցաւ խորհրդակցութիւն եւ դրեց մի շարք հարցեր. 1) հակաբոլշեւիկեան մէկ ճակատի ստեղծում, 2) փոխադարձ օժանդակութիւն, 3) նահանջի դէպքում արդեօք կամաւորականները կարո՞ղ են ընդունել Հայաստանում եւ այլն: Հայաստանի աշխարհագրական դիրքը ինքնին արդէն պատասխանում էր տրւած հարցերին:

Բնորոշ ու հետաքրքրական է եւ մի ուրիշ այցելութիւն:

Կաթուղիկոսին այցելելու պատրւակով, յունւ. 1-ին երեւան եկաւ Պոնտոսի յոյն մետրոպոլիտ Յրիսանֆը, որ պոնտոսեան պատւիրակութեան

Հ. Հ. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԽՄԲ. ՀՐԱՉ



Կ. ՍԱՍՈՒՆԻ
(Շիրակի նահանգապետ)



ԵԱԳՈՆ
(Վայոց Ձորի գաւ.)



Ն. ՅԱԿՈԲԵԱՆ
(Վայոց Ձորի ա. գաւ.)



ԲԷՆՈ ՆԱԼՉԱՋԵԱՆ
(Իջեւանի գաւառապետ)



Ա. ՄԻՐԶՈՅԵԱՆ
Էջմիածնի Միլիցիապետ



Թ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
(Երեւ. գաւ. ինքն. վարչ. անդ.)



Յ. ԲԱՂՐԱՄԵԱՆ
(Ալեք–պոլի միլիցիապետ)



Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
(Երեւ. գաւ. ինք. վարչ. անդ.)

նախագահն էր Փարիզում եւ Վենիզելոսի մօտիկ գործակիցը։ Պոնտոսի յոյները պահանջում էին Պոնտոսի անջատումը Թիւրքիայից եւ առանձին յունական պետութեան ստեղծումը։ Այդ պետութեան մէջ պիտի մտնէր Ռիզա—Սինոպ ամբողջ տարածութիւնը Պոնտոսեան լեռների եւ Սեւ ծովի միջեւ՝ 1,220,000 բնակչութեամբ, որից 800,000 մահմետական, 350,000 յոյն եւ 70,000 հայ։ Խրիմեանին եկել էր որոշելու Հայաստանի եւ Պոնտոսի փոխյարաբերութիւնները եւ առաջարկում էր. կամ 1) Պոնտոսի հանրապետութիւնը կը կազմէ մէկ դաշնակից մասը Հայաստանի Հանրապետութեան, կամ 2) Պոնտոսը կը լինի ինքնուրոյն եւ Հայաստանի հետ կը միանայ համադաշնակցային հիմունքներով եւ կամ 3) անկախ եւ հաւասարազօր Պոնտոսն ու Հայաստանը իրար հետ կը կապուէն դաշնակցութեամբ կամ դինակցութեամբ։ Վերջին դէպքում, Հայաստանը կունենայ սեփական ծովային ելք Ադինէում։

Խրիմեանին երեւանում ցոյց տուին սիրալիր ընդունելութիւն, եւ մի շարք խորհրդակցութիւններից յետոյ երկուստեք ընդունեցին հետեւեալ պայմանները. 1) Պոնտոսը, վերոյիշեալ սահմաններում, մտնելու է Հայաստանի մէջ, իբրեւ նրա դաշնակցային (ֆեդերատիւ) մէկ մասը. իր ներքին գործերում Պոնտոսը կառավարուելու էր սեփական Սէյմի միջոցով. 2) Հայկական եւ Պոնտոսեան պատուիրակութիւնները Փարիզում գործելու էին համերաշխ. 3) Ի հարկին, եթէ Հայաստանի ու Պոնտոսի անկախութիւնը մերժուի, հայերն ու յոյները միասին քայլեր էին առնելու, մինչեւ ապստամբութիւն՝ հարկադրելու համար, որ ճանաչուի ընդհանուր անկախութիւնը. 4) Սոյն պայմանագրութիւնը պէտք է համաձայնեցուէր յոյն եւ հայկական պատուիրակութիւնների գործունէութեան Փարիզում, ինչպէս եւ վեհաժողովի որոշելիք սահմաններին։ (Ե.)

Սակայն, մենք չեղանք պատմութեան ընթացքից։

Յունիս. 31–ին, Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում» տեղի ունեցաւ Հայաստանի Համալսարանի հանդիսաւոր բացումը։ Երեւանից ու Թիֆլիսից, յատուկ գնացքներով, եկել էին բազմաթիւ հիւրեր՝ Խորհրդարանի նախագահ Աւ. Սահակեանը, վարչապետ Ա. Խատիսեանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուօրդրոպը, Հայաստանի գեներալ կոմիսար գնդ. Հասկելը իր կնոջ ու չքախմբի հետ, ֆրանսական ներկայացուցիչ կապ. Պուադեբարը, կամաւորական բանակի ներկայացուցիչ գնդ. Զեննկեւիչը, պարսից ընդհանուր–հիւպատոս Ասադուլլա խանը, Ադրբէջանի դիւ. ներկ. Հախվերդովը, հանր. կրթութեան եւ արուեստի նախարար Ն. Ադրալեանը, արդար. նախ. Ա. Զիլինգարեանը, ելեւմտ. նախ. Ս. Արարատեանը, խնամ. նախ. օգն. բժ. Ց. Տէր–Միքայէլեանը, Խորհրդարանի անդամներ բժ. Ց. Տէր–Դաւթեանը, Մ. Ցարուխիւնեանը, Ռ. Տէր–Մինասեանը, Վ. Մինախորեանը, Ս. Վրացեանը, Ա. Խոնդկարեանը, Ա. Սաֆրաստեանը, Տ. Շամհուրը, Ա. Ղազարեանը, զօր. Նազարբէգեանը, զօր. Հախվերդեանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարեանի դլխաւորութեամբ, բանաստեղծ Ց. Չուխաննիսեանը, պրոֆ. Ա. Խաչատրեանը եւ շատ ուրիշ պետական ու հասարակական, գրական ու գիտա–

կան դէմքեր։ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութիւնը կազմակերպել էր փայլուն ընդունելութիւն։ Կայարանում պատրաստուած էր թէյասեղան։ Համալսարանի դահլիճը զարդարուած էր կանաչով ու դրօշակներով։ Նւագում էր զինուորական խումբը։

Հանդէսը բաց արաւ համալսարանի տեսուչ վաստակաւոր պիտնական պրոֆ. Իւ. Ղամբարեանը, որից յետոյ նախարար Ն. Ադրալեանը, մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականութեան եւ մշակոյթի զարգացման գործում։ «Այն ջահը, ասաց նա, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրաւանդակի վրա, չի հանգչի երբեք եւ կը լուսաւորէ Առաջաւոր Արեւելք»։ Եւ մաղթեց, որ Հայաստանի համալսարանը լինի մատչելի ամենքի համար, — մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժուար — որ ուսումը լինի ձրի, դիտութիւնը վարւի գործնական եղանակով, որ հիմք դրւի համապատասխան գիտական աշխատանքին Հայաստանում։

Հանրային կրթութեան նախարարից յետոյ պրոֆ. Ղամբարեանը արաւ համալսարանի կազմակերպութեան պատմութիւնը, որից յետոյ խօսեցին Ա. Սահակեանը, Ուօրդրոպը, գնդ. Հասկելը, Գուադերարը, գնդ. Զենկեւիչը, Ասագուլլա խանը, Հախվերդովը, դոր. Նազարբէգեանը։

«Մի քանի օր առաջ, ասաց Ուօրդրոպը, մենք տօնեցինք մի ուրիշ մեծ դէպք՝ Հայաստանի անկախութեան դէ ֆակտօ ճանաչումը։ Ես կարծում եմ, որ առաջին համալսարանի բացումը նոյնքան կարեւոր է, որքան եւ անկախութիւնը։ Պատմութեան մէջ եղել են դէպքեր, որ պետութիւնները կարճ ապրեն, բայց չի եղել դէպք, որ մի անգամ բացւած համալսարանը կարճ կեանք ունենայ... Նմանք մեծ կարեւորութիւն էին տալիս դէ ֆակտօ բառին. Հայաստանը, յանձին Էջմիածնի ճեմարանի, Վիէննայի ու Վենետիկի վարժարանների արդէն իսկ դէ ֆակտօ դոյութիւն ունէր, եւ դուք այնքան շատ դիտնականներ եւ ուսուցչապետներ ունէք, որքան որ պէտք կը լինի ամբիոնների համար»։

Գնդ. Հասկելը.— Ես բախտաւոր եմ ներկայ լինելու այս պատմական դէպքին։ Անօգուտ է ասել, որ պատրաստ չեմ խօսելու այս նիւթի մասին, որն իմ գործունէութեան սահմանից դուրս է։ Ներկայ Հայաստանում կատարւող դէպքերը, աչքի առաջ ունենալով պետութեան հանդիպած դժուարութիւնները, շատ նշանակալից են։ Եւ մեծ գոհացում է ներշնչում, որ դոյութեան ծանր հոգսերը չեն ճնշում ժողովրդի կրթութեան ծարաւը։ Եւրոպայի եւ Ամերիկայի շատ քաղաքներում մենք հանդիպում ենք շատ հայերի, որ համալսարաններում բարձր կրթութիւն են առանում, եւ այդ տալ է իր պտուղները. մի շարք աչքի ընկնող հայեր կան, որ կարեւոր տեղ ունեն եւ որոնց անունները յայտնի են ամենքին։ Այդ համալսարաններում սովորող անձինք յաջողութիւն են ունեցել, բայց Հայաստանի համալսարանում մարդիկ պէտք է դաստիարակւեն աւելի հայրենասէր ոգով, քան արտասահմանում։ Գլխաւոր բանը, որով ես շատ շահագրգռւած եմ — որ հայ ժողովուրդը լինի անկախ քաղաքականապէս, տնտեսապէս եւ կրթութեամբ (բուռն ծափեր)։ Ես յոյս ունեմ, որ կարճ ժամանակում Հայաստանը բոլո-

բովին աղատ կը լինի եւ կախում չի ունենայ ոչ ոքից (բուռն ծափեր)։ Եթէ կայ որեւէ կարիք, որին պէտք լինի օգնել Ամերիկայի կամ իմ ներկայացրած ուրիշ պետութիւններից, ես հաճոյքով կիմացնեմ նրանց եւ կը յաջողեցնեմ նրանց օգնութիւնը։ Ձանձրացնելով այս գործի գլուխ կանգնածներին՝ ես համոզուած եմ, որ համալսարանը անպայման յաջողութիւն կունենայ»։

Հասկելի ճառը հանդիսականների կողմից ընդունուեց առանձին ոգեւորութեամբ։ Ջերմ խօսքերով արտայայտուեցին եւ միւս հեռուորները, որոնց ճառերը ընդհատւում էին որոտընդոստ ծափերով։

Ողջոյնի ճառերից յետոյ, Ս. Տիգրանեանը կարդաց արտասահմանից եւ Հայաստանի զանազան կողմերից ստացուած հարիւրաւոր հեռագիրներից մի քանիսը։ Շնորհաւորում էին Վրաստանի դիւ. ներկ. Գ. Մախարաձէն, Վրաստանի հանր. կրթ. նախարարի պաշտօնակատար Ցինցաձէն, զօրավար Կարալովը եւ ուրիշներ։

Ապա համալսարանի ուսուցչապետ Մեսրոպ եպ.–ը ակադեմական ճառ արտասանեց՝ «Հայ վանքերի նշանակութիւնը Հայաստանի կուլտուրական գործերում» նիւթի մասին, որից յետոյ խօսեցին բանաստեղծ Ց. Շուխանեանցը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ Հ. Մելքոնեանը, Երեւան քաղաքի ներկայացուցիչ Ա. Շարաֆեանը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նորհատեանը, Նոր–Բայազէտի քաղաքագլուխ Վ. Աֆրիկեանը, Ա. Յոնդկարեանը սոց.–յեղ. եւ Ա. Ղազարեանը՝ Հ. Ց. Դ. կուսակցութիւնների կողմից եւ մի շարք ուրիշ հիմնարկութիւնների ու միութիւնների ներկայացուցիչներ։ Ցայտարարուեց ցանկը համալսարանին արուած նւէրների. մէկ միլիոն ռուբլի Մայիլեան եղբայրներից, 100,000ռ. «Շիրակ» կօօպերատիւից. Ալեքսանդրապոլում սկսուել էր ժողովրդական հանգանակութիւն։ Հանդէսի օրւայ առթիւ հրատարակուել էր միօրեայ թերթ «Հայաստանի Համալսարան» անունով։

Հանդէսի ամբողջ տեւողութեան ընթացքին, դուրսը խռնուած էր մեծ բազմութիւն. շատերը եկել էին շրջակայ գիւղերից։ Հասարակութիւնը խանդավառ ցոյցերով ընդունեց հանդէսից յետոյ դուրս եկող հիւրերին։ Այստեղ ևս խօսեցին օտար պետութեանց ներկայացուցիչները, վարչապետ Յատիսեանը, Հ. Ց. Դաշնակցութեան կողմից Ս. Վրացեանը եւ ուրիշներ։ Հաւաքուած բազմութիւնը հանեց մի բանաձեւ, որով պահանջում էր դաշնակիցներից Թիւրքահայաստանի հարցի լուծումը։

Հանդէսից յետոյ, Քաղաքային Ակումբի դահլիճում տեղի ունեցաւ ճոխ հացկերոյթ քաղաքագլուխ Հ. Մելքոնեանի նախագահութեամբ, ուր նոյնպէս եղան բազմաթիւ ճառախօսութիւններ հայ եւ օտար ներկայացուցիչների կողմից։ Երեկոյեան, Առեւտրական դպրոցի սրահում, կայացաւ դրական–երաժշտական երեկոյթ եւ պարահանդէս, որ մեծ աշխուժով անցաւ եւ տեւեց մինչեւ ուշ գիշեր։ Պարահանդէսից յետոյ հիւրերը արտակարգ գնացքով վերադարձան Երեւան։

Նոյնը դէպք էր եւ Հայաստանի բժիշկների անդրանիկ համագումարը, որ բացուեց Երեւանում ապր. 18–ին։ Քաղաքային տան դահլիճը լիքն էր Հանրապետութեան բոլոր ծայրերից եկած պատգամաւոր բժիշկներով, բու-

ժակներով, դեղագործներով, անասնաբոյժներով, ունկնդիր հասարակութեամբ: Եկել էին 72 պատգամաւորներ:

Համագումարը բաց արաւ կազմակերպիչ յանձնաժողովի նախագահ բժ. Ց. Տէր-Միքայէլեանը: Ապա ողջոյնի խօսք ասացին Մորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, վարչապետ Խատիսեանը, Երեւանի քաղաքագլուխ Մուսինեանը եւ բազմաթիւ ներկայացուցիչներ զանազան հիմնարկութիւնների եւ միութիւնների կողմից:

Հանդիսաւոր մասից յետոյ համագումարը կազմեց իր նախագահութիւնը — նախագահներ՝ բժ. Տէր-Միքայէլեանը, Գասպիկեանը եւ Լազարեանը, քարտուղարներ՝ Զարիֆեան, Բազդասարեան, Աւալեան, Տէր-Գօղոսեան, Աւետիսեան, Քալանթարեան:

Ճաշորդ օրը, համագումարը բաժանուեց 5 հատուածի — 1) քաղաքական հարցերի՝ 29 բժիշկ, 2) գինուորական՝ 20, 3) դեղագործական՝ 13, 4) անասնաբուժական՝ 4 եւ 5) ատամնաբուժական՝ 3 — եւ օրակարգի հարցերը քննութեան առնուեցին այդ հատուածների նիստերում:

Համագումարն ունեցաւ յանձնաժողովական եւ ընդհանուր բազմաթիւ նիստեր, ուր քննութեան առնուեցին Հայաստանի բժշկա-առողջապահութեան վերաբերուող բոլոր սուր հարցերը: Ի վերջոյ, ընտրուեց կենտրոնական մարմին՝ Հայաստանի լաւագոյն բժիշկներից:

Անընդհատ առաջ էր գնում եւ պետական կազմակերպական աշխատանքը, ինչպէս եւ երկրի տնտեսական վերականգնումը: Կառավարութիւնը առանձին ուշադրութիւն դարձրեց ժողովրդի ապրուստի միջոցների հայթայթման գործին. յունւ. 27-ին կազմուեց «Սերմանման Յատուկ Կոմիտէն», որ մեծ եռանդով վարեց սերմահաւաքման գործը՝ ամբարելով աւելի քան 350,000 փութ սերմացու: Փետրուարին 225 միլիոն ռուբլու վարկ բացուեց սերմացու գնելու համար: Մարտ 25-ին կառավարութիւնը հաստատեց այն պայմանները, որով պետտնտեսութեան նախարարութիւնը կատարելու էր սերմացուի բաշխումը. պետական պահեստներից սերմացու պիտի տրուէր պետական համայնքներին, պետտնտեսական ընկերութիւններին, հասարակական ու պետական հիմնարկութիւններին, պետական պաշտօնեաների ընկերութիւններին ու հասարակական խմբակցութիւններին: Ստացած սերմացուն պիտի վերադարձուէր կալի ժամանակ՝ բերքով կամ դրամով:

Մինչեւ մայիսի սկիզբը կառավարութիւնը ժողովրդին բաժանեց 332,660 փութ սերմացու*), որից գարի՝ 206·580փ., ցորեն՝ 65,431փ., կորեկ՝ 15,225փ., չալթուկ (բրինձ)՝ 4,026փ., հաճար՝ 2,677փ., կտաւատ՝ 1,300փ., գետնախնձոր՝ 24,204փ., եգիպտացորեն՝ 12,368փ., բանջար՝ 534փ., գանդար՝ 315փ.: Ամենից շատ առացաւ Կարսը՝ 76,855փ., ապա՝ Շիրակը՝ 74,605փ., Երեւանի գաւառը՝ 52,372փ., Ղարաքիլիսան՝ 46,932 փութ, իսկ ամենից քիչ Դարալագեազը՝ 732փ.: Բացի այդ բաժանուեց 500 փութ բանջարանոցային սերմ, բամբակի ու ծխախոտի սերմ: Բամբակ ցան-

*) Սերմանման շրջանի վերջում բաժանուած սերմացուի գումարը հասաւ 375,000 փթի:

ւեց ընդամենը 1,517 դեսեատին, ծխախոտ՝ 61 դես.: Կառավարութիւնը հող, վարկ, գործիքներ ու սերմացու տրամադրեց դրսից՝ Սուխումի շրջանից եկած ծխախոտագործներին: 30 միլիոն ռուբլի յատկացւեց բամբակագործներին օժանդակութիւն հասցնելու համար, 15 միլիոն ռուբլի՝ այգեգործների համար:

Մարտ 1–ին Խորհրդարանը բաց արաւ 50 միլիոն ռուբլու վարկ գիւղատնտեսական գործիքներ գնելու համար: Բաթումից բերւեցին թրակտորներ, հնձելու եւ քամելու մեքենաներ, դուքաններ, սերզատներ, այգեգործական ու մեղւաբուծական գործիքներ, դերանդիներ, մանգաղ եւ այլն: Բերւեց մեծ քանակութեամբ պղնձի արջասպ՝ այգիների համար: Գիւղատնտ. նախարարութեան կենտրոնական պահեստը իր բաժանմունքների միջոցով կատարում էր մեքենաների, գործիքների եւ նիւթերի բաշխումը երկրում:

Պակաս կարեւոր դէպք չէր եւ երդւեալ ատենակալների դատարանի բացումը, մարտ 15–ին: Դատական նիստի դահլիճը զարդարւած էր եռագոյն ժապաւէններով: Ներկայ էին վարչապետ Ա. Խատիսեանը, արդարադատութեան նախարար Ա. Զիլինգարեանը, Խորհրդարանի անդամներ, դատաստանական ու հասարակական գործիչներ եւ խուռն բազմութիւն հետաքրքրւողներ: Դատական նիստի սկզբին ողջոյնի խօսք ասացին վարչապետը, արդարադատութեան նախարարը եւ դատարանի նախագահ Մակ. Մելիք–Մկրտչեանեանը: Ապա՝ բեմ բարձրացաւ դատական կազմը. նախագահ՝ Մ. Մելիք–Մկրտչեան, անդամներ՝ Զ. Գեղամեան եւ Ա. Տէր–Յակովբեան. դատախազ Ա. Մալխասեան, դատախազի օգնական՝ Վ. Ահարոնեան, քարտուղարներ՝ Ն. Տէր–Յակովբեան եւ Ս. Շմաւոնեան: Երդւեալ ատենակալներից ներկայ էին 19 հոգի եւ 1 տեղակալ — բոլորն էլ տղամարդիկ: Նիստի բացումից եւ ընթացիկ ձեւականութիւնների լրացնելուց յետոյ, ատենակալները յայտարարեցին, թէ իրենք հրաժարւում են կրօնական երդումից եւ պիտի խօսք են տալիս դատելու խղճի մտօք:

Կարճ ընդմիջումից յետոյ, վիճակահանութեամբ կատարւեց 12 ատենակալների ընտրութիւնը: Հայաստանի անդրանիկ ատենակալների ատեանի անդամ լինելու պատուին արժանացան՝ Աբշ. Տէր–Աբրահամեանը, Սարգ. Խախնազարեանը, Նշ. Ժամագործեանը, Վարդ. Մամաջանեանը, Գր. Տէր–Յակովբեանը, Սիր. Տէր–Մարտիրոսեանը, Գր. Վարդանեանը, Հմ. Սողոմոնեանը, Յովս. Աւետիսեանը, Զաւ. Կորկոտեանը, Մհր. Աթանէսեանը եւ Թադ. Դրամփեանը. տեղապահներ՝ Մովս. Գիւլխանդանեանը եւ Եր. Ծրանգեանը: Ընտրւածները մի քանի րոպէով հեռացան եւ ընտրեցին իրենց համար աւագ՝ Սիր. Տէր–Մարտիրոսեանին: Ատենակալները հասարակական տարբեր խաւերի պատկանող մարդիկ էին:

Առաջին գործը Դարալագեազի Ուլնիանորաշէն գիւղացի Ենովք Յովհաննիսեանի եւ Զանախչի գիւղացի Մանուկ Մովսէսեանի դէմ յարուցւող մեղադրանքն էր պարսկահպատակ Մամէդ Աքբար Ալի օղլուին կողոպտելու փորձի դէմ: Ամբաստանեալներին պաշտպանում էր երդ. հաւատարմատար Գ. Տէր–Գրիգորեանը: Հարցաքննութիւնից, վկաներին եւ կողմերի ճառերը

լսելուց յետոյ, երդեալատենակալները առանձնացան եւ 10 րոպէի խորհրդակցութիւնից յետոյ մեղադրեալներին յայտարարեցին անպարտ:

Երդեալ ատենակալների դատարանի առաջին նստաշրջանը տեւեց մինչեւ մարտ 26-ը:

Փորհրդարանի մարտ 1-ի օրէնքով արդարադատութեան նախարարութեան դիւանին կից կազմւեց 3 հոգինոց արեւմտահայ իրաւագիտական բաժին, որի նպատակն էր ա) մասնակցել օրինագրքերի քննութեան, մշակման եւ խմբագրման գործին, բ) ուսումնասիրել արեւմտահայ հատւածի մէջ գոյութիւն ունեցող ընտանեկան, ժառանգական եւ այլն սովորութիւններն ու իրաւական հասկացողութիւնները, նրանց հարազատ ոգին մեր նոր մշակւող օրէնքների մէջ պահպանելու համար:

Հանրային կրթութեան մասլարէզում մշակւեցին մի շարք օրէնքներ. մարտին Փորհրդարանը սկզբունքով հաստատեց դպրոցական յանձնախմբի հետեւեալ օրինագիծը եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին.

«1. Հոգեւոր եկեղեցական-ծխական դպրոցների կայքերն ու գոյքերը եւ նրանց չէնքերը պետականացւում են, եթէ նրանց դպրոցը բացած չլինի այս օրէնքի հրատարակման օրը, կամ բացւելուց յետոյ փակւի եւ կամ, եթէ նա Հայաստանի պետական զանձարանից նպաստ է առացել:

«2. Պետականացւող կայքերն ու գոյքերը եւ նրանց չէնքերը յանձնւում են հանրային կրթութեան եւ արւեստի նախարարութեան, որը ծառայեցնում է նրանց դպրոցական նպատակների համար:

«3. Որոշ պայմաններով եւ նպատակներով կտակւած կամ յատկացւած եւ այս օրէնքի ուժով պետականացւող կայքերը, գոյքերն ու չէնքերը անցնում են հանրային կրթութեան եւ արւեստի նախարարութեան այն պայմանով, որ վերջինս կատարում է կտակողների եւ յատկացնողների կամքը անշեղ»:

Ապրիլին ընդունւեց մի ուրիշ օրինագիծ տարրական կրթութեան մասին.

«1. Պետական դպրոցներում տարրական կրթութիւնը վեցամեայ տեւողութիւն ունի, որ բաժանւում է երկու եռամեակների:

«2. Տարրական դպրոցներում աւանդւում են հետեւեալ առարկաները. հայոց լեզու, թւաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնագիտութիւն, առողջապահիկ դիտելիքներ, երգեցողութիւն, նկարչութիւն, մարմնամարզ եւ ձեռքի աշխատանք ըստ հանրային կրթութեան եւ արւեստի նախարարութեան մշակած ծրագրի եւ կազմած դասաբաշխման տախտակի:

«Ծանօթութիւն. Այլազգի դպրոցներում պետական լեզուն աւանդւում է, ըստ համայնքի ցանկութեան, սկսած ուսման երրորդ տարւանից:

«3. Այն գիւղերում, որ այսօր բաւարար թւով դպրոցական հասակի մանուկներ չունեն, բացւում են եռամեայ դասընթացքով դպրոցներ:

«4. Կենտրոնական գիւղերում բացւում են վեցամեայ դասընթացքով դպրոցներ նոյն եւ մերձաւոր գիւղերի աշակերտութեան համար:

«5. Այն սաների համար, որ հնար չունեն վեցամեայ դպրոց յաճախելու կամ վեցամեան աւարտելով՝ միջնակարգ դպրոց անցնելու, համապատասխան դպրոցներում բացւում են չորրորդ եւ եօթերորդ լրացուցիչ դասարաններ»:

Մարտ 28-ին Դրամատիկական Դասընթացքները ուին իրենց անդրանիկ երեկոյթը՝ դասընթացքների վարիչ դերասան Վ. Միրզոյեանի առաջնորդութեամբ: Հանդէսը անցաւ մեծ յաջողութեամբ: Դասընթացքների մի շարք ուսանողներ աչքի ընկան իրենց շնորհալի խաղով:

Ապր. 18-ին բոյ-սկաուտների օր էր Երեւանում: Քաղաքը ստացել էր տօնական տեսք: Փողոցներում տուփերով հանգանակութիւն էր կատարւում: Բոյ-սկաուտները երաժշտութեամբ կենդանութիւն էին մտցնում ամէն կողմ: Ամառնային ակումբում տեղի ունեցաւ հրապարակային մարզանք: Բոյ-սկաուտները, իրենց վարիչ հունգարացի Ալբերտ Սեդմայի առաջնորդութեամբ, գեղեցիկ խաղեր խաղացին՝ արժանանալով խռնուած հասարակութեան խանդավառ ծափերին: Սկաուտական շարժումը հանրային կրթութեան նախարարութեան դուրգուրանքի առարկայ էր եւ չուտով լայն ծաւալ ստացաւ Հայաստանում, մանաւանդ, երբ արտասահմանից հասան փորձուած գեկավար մարզիկներ՝ Վ. Զերազ, Տ. Յոյնան եւ այլն:

Փետր. 18-ին հիմնուեց Հայաստանի կարմիր Խաչը, որի կանոնադրութիւնը հաստատուեց Գորհրդարանում մարտ 19-ին: Կենտրոնական վարչութեան անդամներ ընտրուեցին Դր. Զալխուշեանը (նախագահ), բժ. Ե. Տէր Դաւթեանը, բժ. Ս. Կամսարականը, բժ. Ե. Մելիքեանը, տիկ. Օ. Աբրահամեանը, բժ. տիկ. Զալեան-Մանուկեանը, տիկ. Քալանթարեանը, բժ. Ա. Տէր-Գէորգեանը, Վ. Բաբայեանը, Ա. Մակարեանը: Կարմիր Խաչը ճիւղեր ունեցաւ Կարսում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Աշտարակում, Ջալալ-Օղլիում, Ղարաքիլիսայում եւ Իգդիրում: Նրան յարեցին եւ Թիֆլիսի, Գոլսի, Փարիզի եւ Ամերիկայի Հայ Կարմիր Խաչերը: Կարմիր Խաչի գլխաւոր գործն էր՝ օգնութիւն հասցնել բանակին: Դրա համար նա կազմակերպեց 2 հիւանդանոց՝ ողջ սարքով, մի թռուցիկ խումբ, մի սննդատուն կռւան զինուորների համար, բաղնիք, լուացարան եւ այլն: Կարմիր Խաչի մեծ նաշնորհն էր խաղաթուղթը. յունիսից սկսած կառավարութիւնը տուրք դրեց երկաթուղու տոմսակների վրա էլ յօգուտ Կարմիր Խաչի եւ 4 միլիոն ռուբլու վարկ բացեց:

Այսպէս, կեանքի բոլոր ասպարէզներում, դրութիւնը բարելաււում էր ղալասպէս: Ապրուստի պայմաններն էլ հետզհետէ դառնում էին աւելի տանելի. հակառակ որ ժողովուրդը ապահովութեամբ ցանում էր ունեցած հացահատիկները, հացն ու կենսական միջոցները անհամեմատ աւելի առատ էին, քան 1919 թ-ին: Գաղափար տալու համար ապրուստի պայմանների մասին՝ առաջ բերենք մի քանի թւեր. փետրուար 7-ին Երեւանի չուկայում մթերքները արժէին. հացը՝ 26—28 ռուբլի փունտը, միսը՝ 70—140 ռուբլի, ալիւրը՝ 1400 ռ. փութը, ցորենը՝ 1300 ռ., գարին՝ 1300 ռ., բրինձը՝ 1400—1800 ռ., լոբին՝ 35 ռ. փունտը, սխտորը՝ 30 ռ., սոխը՝ 12 ռ., կաղամբը՝

8 ռ., բազուկը՝ 7 ռ., գազարը՝ 8 ռ., մածունը՝ 30 ռ., կաթը՝ 25 ռ., պանիրը՝ 60–100 ռ., կարագը՝ 180–200 ռ., մեղրը՝ 170–180 ռ., գետնախնձորը՝ 15 ռ., ընկոյզը՝ 40 ռ., չամիչը՝ 80–90 ռ., նաւթը՝ 40 ռ., սապոնը՝ 30 ռ., հաւկիթը՝ 13–14 ռ. հատը, լուցկին՝ 8–10 ռ. տուփը, փայտածուխը՝ 110 ռ. փութը, փայտը՝ 70 ռ. փութը: Ապր. 15–ին կօօպերատիւներում տղամարդկանց կօշիկները արժէին 3000 ռ. զոյգը, կանանց՝ 4000 ռ., երեխանեըի՝ 1200 ռ., կրկնակօշիկները՝ 1300 ռ., թէյի բաժակները՝ 120 ռ. հատը, ափսէներ թէյի՝ 120 ռ. հատը, մոմ՝ 320 ռ. ֆունտը, սուրճ՝ 360 ռ., երեսպրիչներ՝ 160 ռ. հատը, ծխախոտի թուղթ՝ 6 ռ. գրքոյկը, լուցկի՝ 5 ռ. տուփը, սապոն՝ 50 ռ. ֆունտը:

Իսկ դրամը մարտ 1–ին՝ 1 դոլարը արժէր 580 ռուբլի, 1 թիւրքական հնչուն ոսկին՝ 3000 ռ., 1 ֆունտ ստերլինգը՝ 2000 ռ.:

Պաշտօնեաների ռոճիկներն էին՝ վարչապետի՝ 8,150 ռ. ամսական, նախարարների՝ 7,450 ռ., Մորհրդարանի անդամների՝ 6,800 ռ., Սենատի նախագահի՝ 8,150 ռ., անդամների՝ 7,450 ռ., Վերջանային դատարանի անդամների՝ 6,600 ռ., հաշտարար դատաւորների՝ 6,600 ռ.: 40 կարգի ռոճիկ դոյութիւն ունէր — նւագապետինը 2000 ռ., բարձրագոյնը՝ 8,150 ռ.:

Երկրի կեանքի կայունացումը զգացւում էր եւ ժողովրդի մանաւանդ, ոչ–հայ տարրերի վերաբերումից: Այլեւս այնքան հեշտ չէր հակապետական տարրերին ոտքի հանելը: Այդ ցոյց տուին կարսի ղէպքերը:

Տարւայ սկզբին դեռ եւս կարսի մահմեդական շրջաններում նկատւում էր տատանում. մի մասը կողմնակից էր Հայաստանի իշխանութեան, միւսները՝ թիւրքերի եւ ազրբէջանցիների դրդումով դէմ էին հայերին: Յունւ. 12–ին Զարուշատի, Ազրաբայի եւ Զըլդըրի ներկայացուցիչները ժողով գումարեցին Գեղարքին դիւղում եւ որոշեցին. 1) դադարեցնել առեւտրական եւ ամէն յարաբերութիւն հայերի հետ. 2) արտաքսել հայկական իշխանութիւնը եւ կազմել տեղական իշխանութիւն՝ Ազրբէջանից ստացած դրամով. 3) 18—40 տարեկանների զօրաշարժ անել եւ մարզել թիւրք սպաների ղեկավարութեան տակ. 4) երկաթուղու շրջանում եւ Ղըզըլ–Զախչախում դնել սեփական պահակներ:

Յունւարի կէսերին Զարուշատ եկան մի քանի ազրբէջանցի սպաներ նազարալիեւի ղլխաւորութեամբ, խոշոր գումարներով, եւ սկսեցին հակահայ յարձակումները: Յունւ. 20–ին Իրիչ գիւղում սպանուեցին 8 հայեր: Յունւ. 24–ին Զարուշատից եւ միւս շրջաններից դուրս քշուեց հայ պաշտօնէութիւնն ու միլիցիան: Թուրքերը դէրքեր գրաւեցին Զուրզունայում եւ դէպի Արդահան ուղղեցին 500 ձիաւորներ: Յունւ. 27ին 400 զինւած թուրքեր գրաւեցին Շայնալար գիւղը: Զարուշատը, Ազրաբան եւ Զըլդըրը ապստամբեցին Հայաստանի դէմ: Այս շրջաններում բաւական ուժեղ էին եւ Հայաստանի կուսակիցները, բայց թիւրք–ազրբէջանցի գործակալներից ահաբեկւած՝ չէին կարող արտայայտւել:

Կառավարութիւնը ամէն միջոց ապառելուց յետոյ, հրաման տւեց զօրքին դէնքի դիմելու: Հակառակ արտակարգ ձեան ու սառնամանիքին, զօրաւար Յովսէփեանի զօրամասերը արագութեամբ անցան գիւղից գիւղ, եւ



Ս· ԵԼԻԱԶԱՐԵԱՆ
(Երեւանի վարչ· անդամ)



Հ· ՆՈՐՀԱՏԵԱՆ
(Կարսի բաղաբագլուխ)



Վ· ԱՖԻԿԵԱՆ
(Նոր – Բայազէտի բաղաբագլուխ)



Ա· ԱՍՏԻԱԾԱՏՐԵԱՆ
(Երեւան փոխ – բաղաբագլուխ)



Ց· ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(Երեւանի վարչ· անդամ)



Ա· ՇԱՐԱՖԵԱՆ
(Երեւանի վարչ· անդամ)



Բժ· Հ· ՄԵԼՔՈՆԵԱՆ
(Ալեք–պոլի բաղաբագլուխ)



Ա· ՄԱՐԳԱՐԵԱՆ
(Ալեք–պոլի վարչ· անդամ)



ջախջախիչ պարտութեան մատնելով թշնամուն՝ փետր. 15–ին գրաւեցին բոլոր ըմբոստ վայրերը: Ռուսական պարագլուխները փախան, եւ Զարուչախից, Ազրաթայից ու Զըլգըրից 25 ներկայացուցիչներ եկան յայտնելու ժողովրդի հնազանդութիւնը: Երջանը հանգստացաւ:

Հանդիստ չմնաց, սակայն, Ազրբէջանը: Այս դէպքերի առթիւ, մարտ 8–ին Ազրբէջանի Խորհրդարանում Մուսաւաթ, Էհրար եւ Իթթիհատ կուսակցութիւններին պատկանող 21 պատգամաւորներ մօտերին հարցապնդում, որի մէջ ասում էին, թէ՝ «Հայկական կառավարութիւնը, զինաթափութեան պատրւակով, քարուքանդ է անում Կարսի շրջանի մահմեդական գիւղերը եւ բնաջնջում մահմեդական խաղաղ բնակչութիւնը: Մօտ 10,000 մահմեդականներ, հակառակ որ յօժար կամքով յանձնել են զէնքերը, շրջապատուած են կանոնաւոր հայ զօրքերով եւ ենթարկւում են վերջնական կոտորածի»:

Նոյն օրը, ժամը 12–ին, նշանակուեց Խորհրդարանի արտակարգ նիստ, ուր վարչապետ Ռասուլզէդովը տուեց մանրամասն բացատրութիւններ, որից յետոյ տեղի ունեցան փոթորկայոյզ վիճաբանութիւններ: Գրեթէ անխտիր, բոլոր ճառախօսները անզուսպ յարձակումներ էին գործում Հայաստանի կառավարութեան եւ Դաշնակցութեան վրա: Խորհրդարանի դաշնակցական պատգամաւորների փորձերը՝ զգաստութեան հրաւիրելու՝ առաջ էին բերում աննկարագրելի աղմուկ ու բողոք: Բանը հասաւ այնտեղ, որ պատգամաւորներից մէկը՝ սոց.–յեղափոխական Սաֆիքբիւրդսկին առաջարկեց հեռացնել Ազրբէջանի Խորհրդարանից դաշնակցական պատգամաւորներին: Միայն երկու հոգի փորձեցին քննադատել ե'ւ Ազրբէջանի կառավարութեան պրովոկացիոն ընթացքը: Ընկերվարական Աղամալի Օղլի և Ասադ Բարայեւը բաց կերպով ամբաստանեցին կառավարութիւնը, որ Կարսի արիւնոտ դէպքերը առեղծուած են Բագուի դրդումով: «Եթէ կառավարութիւնը անմեղ է, բացականչեց Բարայեւը, այն ժամանակ ինչպէ՞ս են այն միլիոնները, որոնք ուղարկում են Հայաստան»:

Եւ մինչ Ազրբէջանում չանթ ու կայծակ էին թափում, Կարսում կեանքը արդէն խաղաղել էր: Հէնց որ ըմբոստ շրջանները յայտնեցին հպատակութիւն, զինուորական միջոցները վերջ դրան, եւ ժողովուրդը անցաւ սովորական աշխատանքի: Հայաստանի ոչ մի շրջանում հայ–մահմեդական յարաբերութիւնները այնքան լաւ չէին, որքան Կարսում: Այդ բարի–հարեւանական յարաբերութիւնների ցուցադրութիւն եղաւ Կարսի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը փետրուար 17–ին՝ մասնակցութեամբ քիւրդ եւ թուրք բնակչութեան ներկայացուցիչների:

Խորհրդի նախագահը բանալով ժողովը՝ դիմեց քիւրդ եւ թուրք ներկայացուցիչներին ողջոյնի խօսքով՝ ասելով, որ եթէ նրանք որոշել են հայերի հետ ապրել հաշտ ու խաղաղ, հայերի կողմից էլ կը գտնեն նոյն եղբայրական անկեղծ վերաբերումը: Պատասխանեց Գէոլի շրջանի ներկայացուցիչ Թալի բէյը՝ յայտարարելով, թէ պատահած ցաւալի դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է եկւոր խռովարարների վրա: Եթէ Հայաստանի կառավարութիւնը մոռանայ այդ թիւրիմացութիւնները եւ լաւ

վերաբերւի իրենց հետ, իրենք խոստանում են լինել Հայաստանի Հանրապետութեան խաղաղ եւ օրինապահ քաղաքացիները:

Ապա, ի պատասխան բանւորների եւ գիւղացիների ողջոյնների, խօսեց Մուրղանի շրջանի ներկայացուցիչ Արիֆազանը: Սա եւս պնդեց, որ բոլոր դէպքերի պատճառը դրսից եկած դրդիչներն են եւ որ տեղական ազգաբնակութիւնը ձգտում է խաղաղութեան: Առանց հայերի, ասաց նա, մահմեդականները չեն կարող ապրել. մի քանի ամիս եւս այսպիսի կեանք, եւ մահմեդական շրջանները քար ու քանդ կը լինեն ու կը փչանան սովից:

Նոյն միտքը յայտնեցին եւ Ջաբուշատի ներկայացուցիչները՝ Բաղըր աղա Մահմէդ Օղլին եւ Ջալիլ աղա Մահմէդ Օղլին: Սրանք եւս «ցաւալի դէպքերը» բացատրում էին արտաքին դրդումներով եւ խոստանում լինել հաւատարիմ Հայաստանի Հանրապետութեան՝ այն յուսով, որ «հայերն ու մահմեդականները կապրեն եղբօր պէս, ինչպէս ապրում էին Նիկոլայի ժամանակ»:

Նիստից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր հացկերոյթ, ուր նոյնպէս խօսեցին տաք ճառեր՝ երդւելով, որ այսուհետեւ երբեք չեն կրկնւի անցեալի մռայլ օրերը:

Նման հաւաստիացումներ սկսեցին հասնել եւ ուրիշ շրջաններից: Մարտի սկզբին կառավարութիւնը ստացաւ հետեւեալ դիմումը. «Մենք՝ Օրդով, Բարբար եւ այլ քրդական գիւղերի ներկայացուցիչներս այսօր ներկայանալով Իշդիրի բանակի հրամանատար Սեպուհին՝ յայտնում ենք ձեզ, որ պարտաւոր ենք ստանց ընդունել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը եւ որպէսզի այդ լինի Արաբատի ստորոտի բոլոր գիւղերի կողմից, մեզ մնում է խորհրդակցել թէ նրանց եւ թէ մեր ցեղապետների հետ: Եթէ նոյնիսկ նրանք չհամաձայնեն, մենք նորէն ենթարկւելու ենք, թէկուզ առանց նրանց համաձայնութեան: Աւդալ Մատօ Օղլի, Մատօ Խազի Կանբօ Օղլի, Հասօ Սիբաշ Օղլի, Մամադ Խազի Օղլի, Ալօ Իսմայիլ Օղլի, Դաւրիշ Արա Օղլի, Ուսուփ Սարօ Օղլի»:

Մարտ 15-ին նման բազմաստորագիր դիմում եկաւ Զըլդըրի շրջանի մահմեդականներից, իսկ ապր. 25-ին Արդահանի մահմեդականների ներկայացուցիչներից, որոնք բողոքում էին Ազրբէջանի գործակալների ապրանքների դէմ:

Նոյն օրերին կառավարութիւնը «հաւատարիմ հպատակութեան» դիմումներ ստացաւ եւ Միջագետքի եզիդիներից ու ասորիներից, որոնք ցանկութիւն էին յայտնում տեղափոխւել Հայաստան:

***

Շատ ժամանակ չանցած, չուտով պարզւեց Կարսի դէպքերի շուրջ ազրբէջանցիների հանած աղմուկի իսկական դրդապատճառը. մարդիկ նոր դէպքեր էին պատրաստում Ղարաբաղում, եւ անհրաժեշտ էր հասարակութեան ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնել:

Պէտք է նկատել, որ օգոստ. 22-ի համաձայնութիւնը էական փոփոխութիւն չմտցրեց Ղարաբաղի դրութեան մէջ, ինչպէս եւ նոյեմբեր 23-ի

համաձայնութիւնը չփոխեց Զանգեզուրի վիճակը։ Նոյեմբ. 23–ից յետոյ էր, որ, ինչպէս տեսանք, զանգեզուրցիք մաքրեցին Օխչի ու Գեղաւ ձորերը։

Նոյեմբերի վերջերին Զանգեզուրում Ա. Շահմազեանին փոխարինեց Ս. Մելիք–Եօլչեանը, որպէս քաղաքացիական մասի կոմիսար, իսկ զինուրական մասը ենթարկուեց զօր. Ղազարեանին։ Սրանց գալով՝ Զանգեզուրը ձեւականօրէն էլ կազմակերպուեց իբրեւ Հայաստանի մաս։ Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփուեց վարիչների խորհրդի ձեռքում՝ Ս. Մելիք–Եօլչեանի նախագահութեամբ։ Շրջանը բաժանուեց 2 գաւառի. 1) Բուն Զանգեզուր, Տաթեւ, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուրի գաւառ անունով, 2) Ղափան, Բաղաբերդ—Գեղաւ ձոր, Արեւիք եւ Գողթն՝ կապար Գողթ անունով։ Զինուրական տեսակէտից շրջանը բաժանուեց 3 մասի. 1) Սիսեան՝ հրամանատար Պ. Տէր–Դաւթեան, 2) Կապարդողթ՝ հրամանատար Գ. Նժդեհ եւ 3) Զանգեզուր։ Իւրաքանչիւր շրջանի հրամանատարութեան կից կազմուեց զինուրական շտաբ, որոնց ենթարկուում էին ճակատապետները ու վաշտապետները։ 20—50 տարեկան բոլոր տղամարդիկ զրուած էին զէնքի տակ, երկրապահ զինուրութեան զրութեամբ, 20—25 ընտիր սպաների զեկավարութեան տակ։ Դեկտեմբերի կէսերին Գորիս հասաւ Դրոյի էկսպեդիցիոն զօրամասը, եւ Դրօն յայտարարուեց Զանգեզուր–Ղարաբաղի ընդհանուր հրամանատար։

Այսպէս կազմակերպուած, յունու. 19–ին, զանգեզուրցիք մի զրոհով մաքրեցին Բուն Զանգեզուրի եւ Ղափանի միջեւ ընկած տարածութիւնը՝ Գոնդարլու–Շուռ–Նուխ–Ակիլուսի թրքական շրջանը, մօտ 30 գիւղ։ Մարտին զրաւուեց Աւդալար–Ալեանչու–Մուսուլմանլար–Բարդիւշատ շրջանը, ուր գոնուում էին մօտ 120 թրքական գիւղեր։ Թրքութիւնը թողեց ու հեռացաւ Ազրբէջան։

Իր հերթին, գործի վրա էր եւ Սուլթանովը։ Նոյեմբերի պարտութիւնից յետոյ, նա եռանդով պատրաստւում էր Զանգեզուրի եւ Ղարաբաղի զբաւման։ Օգոստ. 22–ի համաձայնութիւնը նրա ձեռքին ժամանակ վաստակելու միջոց էր լոկ։ Մի կողմից աշխատում էր պատակել զորաբաղցիներին, միւս կողմից զինուրական ուժեր համախմբել՝ Ղարաբաղը զէնքով ընկճելու դիտաւորութեամբ։ Փետրուարին համարեա ազրբէջանեան ամբողջ բանակը — մօտ 10,000 հոգի — հաւաքուած էր Ղարաբաղի ճակատում։ Լուրեր էին տարածուում որ ազրբէջանեան զօրամասերի ընդհանուր զեկավարն է Նուրի փաշան, օգնականը՝ զօր. Նեւրուզովը եւ նրանց տրամադրութեան տակ գտնուում են բաղմաթիւ թիւրք սպաներ։

Ղարաբաղցիք տեսնում էին այդ եւ նոյնպէս պատրաստւում վիժեցնելու համար Սուլթանովի ծրագիրները։ Գաւառում գործում էր Ինքնապաշտպանութեան Մարմինը սպայ Զ. Մեսեանի, Ա. Միքայէլեանի եւ ուրիշների մասնակցութեամբ։ Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ հաստատուած էր համագործակցութիւն, եւ Ղարաբաղը զրսից ստանում էր ռազմամթերք ու նիւթական օգնութիւն։

Երկու կողմերը՝ Սուլթանովն ու զարարաղցիք պատրաստւում էին տենղապին եւ առանց ծածկելու: Փետր. 19–ին, երբ Ազրբէջանն արդէն բաւականաչափ զօրք էր համախմբել Ղարաբաղի չուրջ, Սուլթանովը դիմեց Շուշիի Հայոց Ազգ. Ժողովին՝ պահանջելով Ղարաբաղը յայտարարել Ազրբէջանի մաս: Սուլթանովի համար այլեւս Հաշտութեան Վեհաժողով գոյութիւն չունէր, եւ «սահման քաջաց զէնն իւրեանց» սկզբունքը մնացել էր միակ հեղինակաւորը:

Այս պահանջի առթիւ, փետր. 22–ին, Շուշու գիւղում գումարուեց Ղարաբաղի 8րդ համագումարը, որին ներկայ էին 96 պատգամաւորներ Գիւլիստանից, Ջիւանշիրից, Ժաչէնից, Դիզակից ու Վարանդայից: Համագումարը որոշեց՝ մերժել Սուլթանովի պահանջը եւ շարունակել մնալ օգոստ. 22–ի համաձայնութեան դեռնի վրա: Միաժամանակ, համագումարը բուռն կերպով բողոքեց Սուլթանովի գործած կամայականութիւնների, բռնութիւնների դէմ:

Նոյն պահուն, 45—50 հոգի էլ, գլխաւորապէս քաղաքացիներ, հաւաքուեցին Շուշիում, կազմեցին առանձին համագումար եւ ընդունեցին Սուլթանովի պահանջը՝ Ղարաբաղը ճանաչել Ազրբէջանի մաս:

Երկու համագումարների բանաձեւերը ներկայացուեցին Սուլթանովին, որը, ի հարկէ, մնաց զժգոհ եւ սկսեց պատրաստուել աւելի վճռական քայլերի: Մարտի սկզբից Շուշիի երթեւեկը առնուեց հսկողութեան տակ: Մարտ 4–ին հայկական թաղում տեղաւորուեցին ազրբէջանցի սպաներ: Մարտ 5–ին ցուցակագրուեցին Շուշիի հայ սպաները: Բացուեց հատուկ նոր զօրամասեր: Մարտ 7–ին Շուշի եկաւ ազրբէջանական բանակի զեկավար պրինց Մահմէդը: Մարտ 7–ին զէպի Ժանաձոխ տանող ճանապարհի վրա սպանուեցին 5–6 հայեր: Մարտ 10–ին Եւլախ–Շուշի խճուղու վրա սպանուեցին 10 հայեր: Մարտ 10–ից Շուշի բերուեցին 150 հոլի–սամլուեցի քիւրդեր: Նոյն օրը Սուլթանովը հրամայեց զաւառի բոլոր հայ ոստիկանապետներին իրենց ձիաւորներով, մարտ 23–ին, բայրամի օրը, ներկայանալ իրեն քաղաքում: Նոյն ժամանակ, Սուլթանովը զրաւոր հրաման ուղարկեց Մուսուլմանլարի կայազօրի պետին, թէ՝ «հողի երեսից մաքրել Ջաբրէրդ, Տումի եւ Հին Թաղլար գիւղերը»:

Այս եւ նման զէպքերը կասկած չէին թողնում հայերի մէջ, որ Ազրբէջանը որոշել է հրով ու սրով ընկճել Ղարաբաղը: Եւ որոշեցին կանխել, իրենք նախայարձակ լինել. մարտ 22 լոյս 23–ի զիշերը Ղարաբաղում ծագեց ընդհանուր ապստամբութիւն Ազրբէջանի դէմ: Ակերանի կիրճի գրաւումով Շուշիում եւ Ժանքենդում մնացած թուրք զօրամասերը կարուեցին արտաքին աշխարհից: Արիւնոտ կռիւներ տեղի ունեցան Ժանքենդում, ուր ապստամբների հրամանատարներ Ալեքսան–Դային, սպայ Լալայեանը եւ ուրիշներ: Շուշին մատնուեց թուրք խուժանի եւ զօրքի յարձակման. հայ բնակչութեան մեծ մասը փախաւ, իսկ մօտ 3–4000 հոգի մնաց թուրքերի ձեռքը եւ բանտարկուեց. կանայք ենթարկուեցին զանգուածային բռնաբարութեան: Առաջնորդ Վահան եպ. գլխատուեց, եւ գլուխը պատցնում

էին քաղաքի փողոցներում:

Մարտ 26–ից Ազրբէջանի զօրքերը ամէն կողմից սկսեցին հակայարձակման: Մի քանի օր կատաղի կռիւներ տեղի ունեցան Ակերանում: Ապր. 3–ին, ազրբէջանեան բանակը, 8 թնդանօթով ու բազմաթիւ գնդացիրներով անցաւ գրոհի Ակերանի, Խաչէնի եւ Վարանդայի ուղղութեամբ: Օրհասական ճակատամարտում հերոսի մահով ապանուեց Ակերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը: Թուրքերը ճեղքեցին հայկական շղթան եւ ամէն ինչ աւերելով՝ ապր. 4–ին մտան Շուշի ու կոտորեցին քաղաքում մնացած հայերին: Հայկական տների մեծ մասը աւարի տրուեց ու հրդեհուեց: Հայկական Շուշին նստաւ մոխիրների վրա:

Դէպքերը ցոյց տուին, որ ապստամբութիւնը կազմակերպւած էր անփորձ մարդկանց ձեռքով: Հետեւանքները կարող էին լինել շատ աւելի ազէտաւոր, եթէ ապր. 13–ին Ղարաբաղ չհասնէր Դրօն իր էկսպեդիցիոն զօրամասով: Նա իր ձեռքն առաւ շրջանի իշխանութիւնը, ապր. 15–ին զօրահաւաք յայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները եւ 45 օր չարունակ մնաց Ղարաբաղում: Ապր. 22–ին Թաղավարդ գիւղում հրաւիրեց Ղարաբաղի 9րդ համագումարը, որը 44 ձայնով մէկի դէմ մի անգամ էլ որոշեց մերժել Ազրբէջանի իշխանութիւնը եւ Ղարաբաղը համարել Հայաստանի մաս:

Դրօյի հասնելուց յետոյ Ազրբէջանի բանակն այլեւս առանձին կենդանութիւն ցոյց չտուեց. մի կողմից Բագուում տեղի էին ունենում ներքին խմորումներ ու բոլշեւիկեան չարժումներ, միւս կողմից Թիֆլիսում դաշնակիցները եւ Անդրկովկասեան Կորհրդաժողովը պահանջում էին վերջ տալ արիւնհեղութեան: Զննթարկւել չէր կարելի. ազմուկն ու սպառնալիքը շատ մեծ էր:

Եւ, իրօք, Ղարաբաղի ապստամբութեան եւ Շուշիի կոտորածի լուրը Թիֆլիսում ցնցող տպաւորութիւն գործեց: Այն պահուն, երբ կարմիր բանակի առաջապահները կանգնած էին Անդրկովկասի դրանը, ընդհարումը հանրապետութիւնների միջեւ կարող էր դառնալ ճակատագրական:

Մարտ 27–ին Ղարաբաղի Հայրենակցական Միութեան ներկայացուցիչներ Գ. Բալայեանը եւ Լէօն մի յուշագիր ներկայացրեցին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի ու Ճունաստանի ներկայացուցիչներին, դնդ. Հասկելին, Հայաստանի վարչապետին եւ Վրաստանի կառավարութեան՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը Ղարաբաղի հարցում: Նրանք պահանջում էին՝ անմիջապէս հեռացնել ազրբէջանեան զօրամասերը, բանալ ճանապարհները եւ յարգել օգոստ. 22–ի համաձայնութիւնը:

Նոյն օրը Վրաստանի վարչապետ Ժորդանիան դիմեց դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը՝ մարելու համար Ղարաբաղի հրդեհը: Անգլիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի ներկայացուցիչներ Ուօրդրոպը, կոմս Մարտէլը եւ դնդ. Գաբրան, ապր. 1–ին, հաւաքական մի հեռագրով դիմեցին Բագու ու Երեւան՝ «եռանդագին հրաւիրելով» խաղաղ միջոցներով եւ անյապաղ լուծել Ղարաբաղի եւ ուրիշ գաւառների հար-

ցերը, ուր խաղաղութիւնը վտանգւած է»: «Հաշտութեան այս հանդիսաւոր կոչը եթէ չլսւի ճիշտ այն ժամին, երբ, թերեւս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռւելու վրա է, կարող է շատ ծանր հետեւանքներ ունենալ ձեր կառավարութիւնների համար»:

Հայաստանի կառավարութիւնը իսկոյն եւ եթ, ապր. 2–ին, պատասխանեց, թէ ինքը բոլորովին համամիտ է դաշնակից ներկայացուցիչների առաջարկին եւ իր պատգամաւորները ապրիլ 5–ին կը լինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասեան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղութեամբ լուծել բոլոր վիճելի խնդիրները: Ապր. 4–ին Հայաստանի Խորհրդարանն էլ դրաւեց Ղարաբաղի դէպքերով եւ հաւանութիւն տւեց կառավարութեան հետեւած քաղաքականութեան:

Ադրբէջանցիների որոշ ձգձգումից յետոյ, ապր. 9–ին, բացւեց անդրկովկասեան 3 հանրապետութիւնների խորհրդաժողովը: Հայաստանի ներկայացուցիչներն էին Հ. Օհանջանեանը, Տ. Բէդզադեանը, Ս. Մամիկոնեանը եւ Ս. Խաչատրեանը. Ադրբէջանինը՝ Հ. Աղայեւը, Ֆ. Վեքիլովը, Ս. Կրիչինսկին. Վրաստանինը՝ Ե. Գեգեչկորին, Գ. Լորդկիպանիձէն եւ Գ. Մախարաձէն:

Օրակարգին անցնելուց առաջ, Հայաստանի եւ Վրաստանի պատւիրակութիւնները առաջարկեցին, առաջին հերթին, դնել Ղարաբաղի արիւնհեղութիւնների դադարեցման խնդիրը պնդելով, որ առանց դրան անկարելի է հանդիստ եւ արդիւնաւէտ աշխատանք կատարել: Ադրբէջանի պատւիրակութիւնը սկզբունքով չառարկեց, բայց պնդեց, որ պէտք է նկատողութեան առնւեն եւ Օրդուբաթի, Նախիջեւանի, Վեդիի ու Ղազախի շրջանները: Եւ որովհետեւ ինքը լիազօրութիւն չունէր, առաջարկեց նիստը յետաձգել, մինչեւ որ Բադուից ստացւեն համապատասխան հրահանգներ:

Յաջորդ նիստում, ապր. 10–ին, կազմւեց խորհրդաժողովի նախագահութիւնը — Ս. Մամիկոնեան, Հ. Աղայեւ եւ Ե. Գեգեչկորի: Աղայեւը Ադրբէջանի պատւիրակութեան կողմից կարդաց Բադուի կառավարութեան հեռագիրը. «խորհրդաժողովի յարուցած հարցը կը քննւի վաղը, ապր. 10–ին, խորհրդարանի աւագների կողմից: Պատասխանը կը ստանաք վաղը երեկոյ»: Հայ պատւիրակները եռանդով բողոքեցին այդ ձգձգման դէմ: Որոշւեց նորից նիստը ընդհատել եւ սպասել Բադուի պատասխանին:

Պատասխան չստացւեց եւ երրորդ նիստում, որը նոյնպէս յետաձգւեց: Չորրորդ նիստին, ապր. 11–ին, վերջապէս Աղայեւը յայտնեց Ադրբէջանի կառավարութեան պատասխանը, որով նա «համաձայնւում էր խորհրդաժողովի քննութեան ենթարկել ամբողջ Անդրկովկասի տարածութեան վրա ընդհարումներն ու արիւնհեղութիւնները դադարեցնելու միջոցների հարցը: Որից յետոյ, երկար ու բարակ, քննւեց օրակարգի հարցը եւ ընդունւեց խորհրդաժողովի հետեւեալ օրակարգը. 1) արիւնահեղ ընդհարումները դադարեցնելու հարց. 2) անդրկովկասեան պետութիւնների միասին մարմնի ընտրութիւն. 3) հողային հարցեր. 4) արտաքին քաղաքականութեան համաձայնեցումը. 5) կոնֆեդերացիայի հարց. 6) տնտեսական խնդիրներ:

Ապա խորհրդաժողովը քննութեան առաւ օրակարգի առաջին կէտը, որի առթիւ սուր վիճաբանութիւններ եղան հայերի եւ ադրբէջանցիների մէջեւ: Վերջիններս պահանջում էին, որ տեղի ունեցող ընդհարումները նկատուեն իրրեւ «պատերազմ հայերի եւ մահմեդականների մէջեւ»: Ի վերջոյ ընդունեց հետեւեալ բանաձեւը, որ Աղայեւի, Մամիկոնեանի եւ Գեդեչկորիի ստորագրութեամբ անմիջապէս հեռագրուեց Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւններին. — «Ադրբէջանի, Հայաստանի եւ Վրաստանի հանրապետութիւնների խորհրդաժողովը իր աշխատանքներին ձեռնարկելով՝ որոշում է 1) անմիջապէս դադարեցնել բոլոր այն արիւնահեղ ընդհարումները, որոնք այժմ տեղի են ունենում Ղազախում, Նախիջեւանում, Օրդուբաթում եւ Ղարաբաղում. 2) Միաժամանակ, խորհրդաժողովը պնդում է, որ Հայաստանի եւ Ադրբէջանի կառավարութիւնները ամենակարուկ միջոցներ ձեռք առնեն վերացնելու համար հայ եւ մահմեդական ազգաբնակութիւնների միջեւ ընդհարման բոլոր հնարաւորութիւնները՝ համապատասխան հանրապետութիւնների սահմաններում. 3) Այս որոշման մասին չտապով տեղեկացնել Ադրբէջանի եւ Հայաստանի կառավարութիւններին, որպէսզի նրանք ձեռք առնեն համապատասխան միջոցներ»:

Յրդ նիստում, ապր. 12–ին, խորհրդաժողովը զբաղուեց արիւնհեղութիւնը դադարեցնելու պայմաններով, դարձեալ երկար վէճ ծագեց հայերի եւ ադրբէջանցիների միջեւ Ղարաբաղի մասին: Վերջիններս պնդում էին, որ Ղարաբաղը Ադրբէջանի մասն է եւ Ղարաբաղի խնդիրը՝ Ադրբէջանի ներքին խնդիր. հայերը, ընդհակառակը, համարում էին, որ Ղարաբաղը Ադրբէջանի մաս չէ: Երկու կողմերը մնացին իրենց տեսակէտին, եւ որոշուեց «անմիջապէս լուծին վերականգնել այն իրաւական վիճակը, որ գոյութիւն ունէր ընդհարումներից առաջ եւ հիմնուած էր հայ–ադրբէջանական եւ անդրկովկասեան հանրապետութիւնների խորհրդաժողովներում ձեռք բերուած համաձայնութեան վրա՝ կառավարութիւնների հետ ազգային խորհուրդների պայմանագրի հիմամբ»:

Նոյն նիստում որոշուեց ընտրել 6 հոգինոց յանձնախումբ՝ 2–ական ամէն մի պատուիրակութիւնից եւ ուղարկել Ադրբէջան ու Հայաստան խորհրդաժողովի որոշումը գործադրելու համար:

Ապա ուղարկուեց 3 յանձնախումբ. մէկը՝ Մախարաձէ, Մամիկոնեան, Աղայեւ՝ Ղազախ, ուր նոյնպէս հայ–թրքական ընդհարումներ էին պատահել. միւսը՝ Ի. Ռամիշվիլի, Ա. Արեղեան ու Զ. Սուլթանով՝ Շարուր–Նախիջեւան եւ երրորդը՝ Ղարաբաղ: Յանձնախմբերը մեկնեցին համապատասխան վայրերը, բայց յետագայ դէպքերի պատճառով չկարողացան գործ կատարեցին:

Այնուհետեւ խորհրդաժողովը երկարօրէն զբաղուեց կոնֆեդերացիայի հարցով: Ադրբէջանի պատուիրակութիւնը ներկայացրեց «Անդրկովկասեան Հանրապետութիւնների Միութիւն» նախագիծը: Առաջարկուում էր երեք հանրապետութիւնների ներկայացուցիչներից կազմել մնայուն մշտական մի խորհուրդ, որի պարտականութիւնը պիտի լինէր «1) հոգալ հանրապետութիւնների արտաքին ապահովութիւնը եւ նրանց անկախութեան

ու չէզոքութեան պահպանումը, 2) հակել, որ հանրապետութիւնների միջեւ ծագող վիճելի խնդիրների լուծումը միջնորդ դատարանի կողմից՝ դործադրւի, 3) հետեւել, որ կիրառւեն դաշնագրերը հանրապետութիւնների միջեւ, 4) մշակել միջհանրապետական դաշնագրերի նախագծեր, 5) ձգտել խաղաղութեամբ լուծելու հանրապետութիւնների միջեւ ծագող վէճերը եւ եզրակացութիւններ տալ առանձին հանրապետութեանց կառավարութիւնների առաջարկով»: Խորհուրդը պիտի կազմւէր 12 հոդւոց· իւրաքանչիւր հանրապետութիւն պիտի տար 2 ներկայացուցիչ խորհրդարանից եւ երկու՝ կառավարութիւնից, մէկ տարի ժամանակով: Խորհուրդը պիտի ունենար սովորական եւ արտակարգ նստաշրջաններ: Եւայլն:

Ի հարկէ, այս դեռ կոնֆեդերացիա չէր, բայց մի քայլ էր դէպի կոնֆեդերացիա: Ազրբէջանցիք քայլ առ քայլ հետապնդում էին իրենց հիմնական նպատակը՝ Անդրկովկասի միացումը: Վրացիք էլ դէմ չէին որոշ միութեան, պայմանով, որ Վրաստանի վերապետական իրաւունքները չտուժեն: Հայերի համար, քանի թիւրքահայկական հարցը մնում էր անորոշ, դոյավիճակի ամէն փոփոխութիւն համարւում էր վաղաժամ: Այս դէպքում էլ նրանք չմերժեցին իրենց համաձայնութիւնը, բայց այդ արւեց այնպէս, որ հաւասար էր մերժումի:

Դեռ կոնֆեդերացիայի խնդիրը չփակած, սպր· 16–ին ազրբէջանցիք բերին վինւորական դործակցութեան առաջարկը Խորհրդային Ռուսաստանի դէմ: Վրացիք չառարկելով հանդերձ՝ առաջ քաշեցին սահմանադծման հարցը: Հայերն էլ դէմ արտայայտւեցին արտաքին ճակատով զբաղւելուն: «Այժմ, երբ անդրկովկասեան հանրապետութիւնների առջեւ կանդնած է մի նոր վտանգ եւ նոր արիւնհեղութիւններ են հնարաւոր, հայկական պատւիրակութիւնը մերժում է զբաղւել արտաքին քաղաքականութեամբ», վրդովւած նկատեց ազրբէջանցի Վեքիլովը:

«Այո՛, առարկեց հայերի կողմից Տ· Բէգզադեանը, քանի հողային հարցերը չեն լուծւած, խորհրդաժողովի որոշումները ո՛չ մի արժէք չեն ունենայ: Եթէ ենթադրենք, որ խորհրդաժողովը որոշէ ընդհանուր ուժերով դուրս դալ արտաքին ոտնձգութիւնների դէմ ի պաշտպանութիւն մեր հանրապետութիւնների անկախութեան, այսինքն՝ հիւսիսի վտանգի դէմ, այն ժամանակ հայկական պատւիրակութիւնը կառաջարկէ քննել հարաւային վտանգի հարցը, որովհետեւ թիւրքերը, որքան յայտնի է, դաշնակից են բոլշեւիկների հետ: Բացի այդ, խորհրդաժողովը պէտք է առոյդ տեղեկութիւններ ունենայ այն համաձայնութեան մասին, որը, իբր թէ, գոյութիւն ունի Թիւրքիայի եւ Ազրբէջանի միջեւ: Մեզ համար անհրաժեշտ է պարզել նաեւ Ազրբէջանի կառավարութեան վերաբերումը դէպի մեր պետականութիւնը»:

Նորից հին հարցը՝ «հիւսիսի» ու «հարաւի» վտանգը: Ազրբէջանցու համար «հիւսիսն» էր սարսափելի· հայերը վախենում էին «հարաւից»· էլ ի՞նչ խորհրդաժողով, ի՞նչ կոնֆեդերացիա, ի՞նչ համաձայնութիւն: Եւ ո՛չ մի համաձայնութիւն էլ չկայացաւ:



Հ· Ց· Դ· ՅՐԴ ԸՆԴՀ· ԺՈՂՈՎ ԵՐԵՒԱՆՈՒՄ



ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Իսկ մինչ պատգամաւորութիւնները խորհրդաժողովում ճառեր էին արտասանում, մինչ Ազրբէջանն իր ամբողջ բանակը կենտրոնացրել էր Ղարաբաղի դէմ, մայր· 28–ի գիշերը, բոլշեւիկները, Թիւրքերի աջակցութեամբ եւ Ազրբէջանի Խորհրդարանի համաձայնութեամբ, առանց մի հատիկ փամփուշտ պարպելու, մտան Բագու եւ Ազրբէջանում յայտարարեցին խորհրդային իշխանութիւն: Նոր գործօն էր մտնում Անդրկովկաս, որ գալիս էր բոլորովին այլ ընթացք տալու նորաստեղծ հանրապետութիւնների կեանքին: Եւ այդ նոր գործօնի ուշադրութեան առաջին առարկան եղաւ Հայաստանը: Ցեղաշրջման յաջորդ օրը Բագուից Երեւանի կառավարութեան ուղարկուեց հետեւեալ վերջնագիրը·

«Ազրբէջանի Խորհրդային Հանրապետութեան բանւորա–գիւղացիական կառավարութիւնը, յանձինս յեղափոխական կոմիտէի, պահանջում է՝ նախ մաքրել ձեր զօրքերից Ղարաբաղի եւ Ջանգեզուրի հողամասերը· երկրորդ՝ քաշել դէպի ձեր սահմանները· երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը: Հակառակ դէպքում, Ազրբէջանեան ընկերվարական խորհրդային հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարի պատերազմական դրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հետ: Վերջնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակամիջոց: Ազրբէջանի Խորհրդային Հանրապետութեան արտաքին գործերի գործավար Հուսէյնով»:

ԳԼՈՒԽ ԻՐ.

ՄԱՑԻՍԵԱՆ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Վրաստանում, Ադրբէջանում, Հիւսիսային Կովկասում եւ ամենուրեք հայ բոլշեւիկները ենթարկւում էին անողոք հալածանքի, Հայաստանի կառավարութիւնը նրանց տուեց հնարաւորութիւն ապրելու եւ աշխատելու Հայաստանում: Հայ բոլշեւիկ գործիչներից չատերը՝ Մ. կասեան, Ա. Մռաւեան, Մ. Յանոյեան, Դ. Շահվերդեան, Մ. Սահակեան, Ե. Երզնկեան, Աւիա Նուրիջանեան եւ ուրիշներ իրենց կեանքը վերկեցին Հայաստանի կառավարութեան շնորհիւ: Նրանք Հայաստանում վարում էին զանազան պաշտօններ պետական կամ հասարակական հիմնարկութիւնների մէջ — դպրոցներում, կօօպերատիւներում, նախարարութիւնների, պետական վերահսկողութեան, ինքնավարութիւնների մէջ:

Ընդունելով Հայաստանի սահմանների մէջ՝ կառավարութիւնը մի պայման էր դրել հայ կոմունիստներին. Հայաստանում քաղաքական աշխատանք չկատարել: Եւ նրանք ամենքը պատուոյ խօսք էին տուել յարգելու այդ պայմանը: Նրանցից ոմանք իրենք հէնց անմտութիւն էին համարում բոլշեւիկեան գործօն աշխատանքը Հայաստանում: Եւ քանի պատերազմական գործերը Խորհրդային Ռուսաստանում յաջող չէին, ընդհանուր առմամբ, պահւում էր տուած խօսքը: Ճիշտ է, պատահում էին մասնակի խախտումներ, ինչպէս երիտասարդ «Սպարտակեաններիս» Թուրքիկը Բէօյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, բայց կառավարութիւնը ներողամիտ աչքով էր նայում:

Սակայն, երբ կարմիր զօրքերը սկսեցին մօտենալ Կովկասին, Հայաստանում հիւրընկալուած բոլշեւիկներն էլ չդիմացան եւ անցան հակապետական պաղանի գործունէութեան: Նրանք պրոպագանդ էին մղում զօրքի եւ բանուորութեան մէջ. բաց էին թողնում գաղտնի թուղթիկներ ու թերթեր: Իրենց կողմը քաշելով Խորհրդարանի անկուսակցական պատգամաւոր Արտաշէս Մելքոնեանին, նրա միջոցով, հրատարակում էին «Դիւղացիական Ձայն» թերթը, որ անհաշտ պայքար էր մղում տիրող վարչաձեւի դէմ եւ, առանց ծածկելու, անում էր խորհրդային իշխանութեան դովքը:

Ա. Մռաւեանը պատմում է, որ 1919—20 թուականներին բոլշեւիկեան

եռանդուն գործունէութիւն կար Հայաստանում: Գաղտնի բջիջներ էին կազմըւում, գրականութիւն էր տարածւում, ժողովներ էին գումարւում, քարոզչութիւն էր արւում զօրքի եւ բանւորութեան մէջ:

«Ընկ. Ղուկաս Ղուկասեանի եւ նրա մօտիկ ընկերներ Արմենակ Բուդաղեանի եւ Ազատ Խանջեանի միջոցով, գրում է նա, մենք Երեւանում կատարում էինք կոնսպիրատիւ (գաղտնի) մեր բոլոր գործերը: Թուղթիկներ տպել եւ կպցնել պատերին, գրականութիւն փոխադրել, ժողովատեղի գտնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային Կոմիտէ եւայլն — այս բոլորը նրանք կատարում էին արագ, ճիշտ, կոնսպիրացիայի բոլոր օրէնքներով»:

Նոյն Ղ. Ղուկասեանը «1919 թ. օգոստոսի վերջերին յատուկ յանձնարարութեամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ՝ տեղական կազմակերպութիւններին յայտնելու Երեւանում գումարելիք կուսխորհրդակցութեան, նրա օրակարգի եւ կազմակերպման հետ կապւած հարցերի մասին»:*)

Բոլշեւիկները համեմատաբար ուժեղ էին Ալեքսանդրապոլում: Այստեղ նրանց կոմիտէն մեծ գումարներ էր ստանում Թիֆլիսից ու Ռուսաստանից, գաղտնի թերթ էր հրատարակում եւ քարոզիչներ ու կազմակերպիչներ ուղարկում երկրի զանազան կողմերը: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ գտնւող չէզոք գօտին յենակէտ էր բոլշեւիկների համար, որտեղից նրանք, գաղտնի ճանապարհներով, մարդ, զրամ եւ գրականութիւն էին ներմուծում Հայաստան: 1920 թւականի սկիզբներին Հայաստանը արդէն թատերաբեմ էր բոլշեւիկեան գործօն քարոզչութեան եւ կազմակերպութեան:

Կառավարութիւնը տեղեակ էր բոլշեւիկների գործունէութեան, բայց դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնելու: Ներքին գործոց նախարարութիւնը մօտից հետեւում էր նրանց գաղտնի շարժումներին ու պարագլուխների քայլերին, ծանօթ էր նրանց ծրագիրներին եւ բանակի ու բանւորութեան մէջ մղած հակակառավարական գործունէութեան: Հայաստանի քաղաքական հետախուզութեան եւ պահեստի միլիցիայի գլուխը կանգնած էր Լեւոն Քալանթարեանի պէս մի հմուտ ու եռանդուն գործիչ, որի տեսողութիւնից խուսափելը շատ էլ հեշտ չէր: Բայց կառավարութիւնը դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնել. հոգեբանօրէն պատրաստ չէր «մեզ պէս ընկերվարական կոմունիստներին», «մեր երէկւայ ընկերներին» ձերբակալելու: Կար եւ Վրաստանի օրինակը. դեռ երէկ Հայաստանի հասարակաց կարծիքը այնպէս խիստ դատապարտում էր վրաց մենշեւիկների գործադրած դաժան միջոցները բոլշեւիկների դէմ — հիմա ի՞նչպէս անել նոյնը մեզ մօտ:

Սակայն, թէ Դաշնակցութեան մէջ եւ թէ չէզոք շրջաններում կար եւ հակառակ վերաբերում. ամէն կողմից մատնանշւում էր այն վտանգը, որ բոլշեւիկները կարող էին հասցնել Հայաստանին: Այս տրամադրութեան եւ եղած պահանջների հետեւանքով, ներքին գործոց նախարարութիւնը, յունւ.

---

*) «Ժողհրդ. Հայաստան», 14 մայիս, 1927:

31–ին Երեւանում եւ Դիլիջանում ձերբակալեց մի քանի կոմունիստներ:

Այս փաստը բոլշեւիկներն ընդունեցին իբրեւ մարտահրաւէր: Մի քանի օր անցած, սոցիալ–դեմոկրատ գործիչ Արշակ Զոհրաբեանի յուղարկաւորութեան առթիւ, նրանք կազմակերպեցին ազգային մի ցոյց, որի նպատակն էր ցուցադրել իրենց ուժերը եւ հրապարակային բնոյթ տալ պայքարին Հայաստանի իշխանութեան դէմ*):

Յունե. 31ի ձերբակալութիւնները նիւթ դարձան եւ խորհրդարանական հարցապնդման: Փետր. 20–ին սոց.–յեղափոխական պատգամաւոր Վահան Մինախորեանը կառավարութեան ուղղեց հետեւեալ հարցապնդումը.

«Յունե. 31–ին ներքին գործոց նախարարի կարգադրութեամբ Երեւանում եւ Դիլիջանում ձերբակալուել են մի քանի անձնաւորութիւններ. պատճառաբանութիւնն այն է, թէ յիշեալ անձինք ունեցել են հակապետական եւ հակակառավարչական ընթացք, սակայն, նրա կարգադրութեան մէջ չի յիշատակւում որեւէ օրէնք, ազդ կամ, նոյնիսկ բերանացի նախազգուշացում, որի հիման վրա կարելի լինէր արգելափակման ենթարկել քաղաքացիներին: Ժամ. կառավարութեան հրատարակած օրէնքը, որի վրա հիմնուած պիտի լինի յիշեալ կարգադրութիւնը, բոլորովին այլ բան է ասում, եւ հէնց այդ տեսակէտից կատարուած փաստը ապօրինութիւն է:

Մի՞ւս կողմից, պարզ պիտի լինէր, թէ քաղաքական հոսանքի դէմ՞ է ուղղուած այդ հալածանքը, թէ՞ սոսկ անհատների: Եթէ առաջինն է, ապա դա ապօրինութիւն է, որովհետեւ քաղաքական հոսանքը պիտի ազատ լինի որեւէ հետապնդումից. եթէ երկրորդն է, ապա ո՞ւր է այն կօնկրետ մեղադրանքը նրանց կատարած գործերի: Նրանց հրատարակած մէկ գիրքը, բաց թողած թռուցիկը չեն պարունակում որեւէ հակապետական կամ հակակառավարչական բովանդակութիւն, իսկ տաճիկ փաշաների հետ համաձայնութիւն կնքած լինելու լուրերը փաստացիօրէն ապացուցած չեն: Այսպէս նայելով խնդրին՝ սոցիալիստ–յեղափոխական Ֆրակցիան կատարուած ձերբակալութիւնները համարում է ապօրինի եւ առաջարկում է ազատել նրանց»:

Զուտ ձեւական–իրաւաբանական տեսակէտից սոց.–յեղափոխականների մեղադրանքը, գուցէ, եւ իրաւացի էր. այն ժամանակները պետական ո՞ր պաշտօնեան էր այնքան համառ դոյութիւն ունեցող օրէնքներին, որ կարողանար անթերի կերպով, պետական օրէնքի բոլոր պահանջներին համապատասխան ձեւակերպել իր գործերը: Սակայն, ըստ էութեան սոցիալիստ–յեղափոխականները, ի հարկէ, անարդար էին. նրանք շատ լաւ ծանօթ էին բոլշեւիզմի

*) Արշակ Զոհրաբեանը ռուսական սոցիալ–դեմոկրատիայի յայտնի դէմքերից էր եւ մտերիմ բարեկամ Ժորդանիայի ու Թամիշվիլիի: Ռուսական յեղափոխութիւնից յետոյ գործում էր կովկասում, վրաց մենշեւիկների հետ միասին, հակառակորդ էր բոլշեւիկների եւ դաշնակցականների: Վրաստանի անկախութիւնից յետոյ, անցել էր ընդդիմադիրների կողմը եւ, իբրեւ միջազգայնական, ենթադատում էր վրաց մենշեւիկների արարքները: Այս պատճառով, հալածանքի ենթարկուեց Վրաստանում եւ իր երէկուայ ընկերների ձեռքից ազատուելու համար՝ փախաւ Երեւան: Հայաստանի կառավարութիւնը խոստացել էր նրան կարեւոր մի պաշտօն, սակայն, նա վարակուեց բծաւոր տիֆով եւ յունուար 4–ին մեռաւ:

էության եւ հայ բոլշեւիկների գործունէության բնոյթին, որպէսզի կարողանային պնդել, թէ՝ «նրանց հրատարակած մէկ դիրքը, բայց թողած թուղթիկը չեն պարունակում որեւէ հակապետական կամ հակակառավարչական բովանդակութիւն»: Եւ նախարարի տուած բացատրութիւններն ու յետագայ վճռաբանութիւնները լիովին հաստատեցին այս պարագան:

Ներքին գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանը տուեց հետեւեալ բացատրութիւնները. «Նրանք, ովքեր ընդունում են Հայաստանը որպէս անկախ պետական միաւոր, այսպիսի հարցապնդում չպիտի անէին, քանի որ նորակազմ պետութիւնը ամենահասարակ վտանգներից իսկ կարող է տուժել, եւ կառավարութիւնը ամէն միջոց պիտի ձեռք առնի երկիրը զերծ պահելու որեւէ պատահարից: Հայաստանում կան բաւական թուով բոլշեւիկներ, որոնք՝ իրենց ասելով եկել են այստեղ միայն ապաստան գտնելու եւ ո՛չ մի գործունէութիւն չպիտի ունենան: Սակայն, դեռ յուլիս ամսին, Բէօյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, նրանք տպեցին մի թուղթիկ, որով կոչ էին անում զօրքին չկռնել կուի: Այնուհետեւ, տեղի ունեցան մի քանի դէպքեր Սարըղամիշ—Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա եւայլ: Հայաստանի անկախութեան տօնի օրը պատերին փակցեցին թուղթիկներ, որոնք ուղղուած էին մեր պետական կազմի դէմ:

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օրէցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր դումարներ՝ պրոպագանդայի համար: Միւս կողմից, անհերքելի փաստ է, որ ռուս մեծամասնականները դաշն են կապել երիտասարդ Թիւրքերի հետ: Այդ համաձայնութեամբ տաճկական զօրքերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Դենիկինի թիկունքին խփելու համար: Ի՞նչ դրութեան մէջ կընկնի Հայաստանը այդ պարագային, պարզ է ամենքին, բայց մեծամասնականների համար դա արժէք չունի եւ, եթէ կուզէք, հայ ժողովրդի բնաջնջման գնով նրանք կիրագործեն իրենց ծրագիրը: Ադրբէջանում եւ Անդրկասպեան երկրում բոլշեւիկեան չարժման գլուխ են անցել տաճիկ ջարդարարներ, որպիսիք են Նուրի փաշա, Քեազիմ բէյ եւայլն: Վերոյիշեալ փաստերը կառավարութիւնը նկատել է որպէս յանցանք եւ միջոցներ է ձեռք առել նրանց դէմ, որոնք ակտիւ քայլերն են անում մեր պետութեան կամ կառավարութեան դէմ»:

Նախարարի բացատրութիւններից յետոյ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ: Սոց.—յեղափոխական Ա. Խոնդկարեանը՝ ընդարձակօրէն վեր առնելով հարցապնդման նիւթը՝ յայտնեց, որ ինքը հակառակ է բոլշեւիզմին, բայց պնդում է, որ իւրաքանչիւր յանցանք պէտք է ճեւակերպւի եւ գործը յանձնւի դատարանին: Այս հողի վրա, ի հարկէ, հարցապնդման դէմ կարելի չէր առարկել, բայց հարցապնդման իսկական իմաստը այդ չէր:

Իր ճառի մէջ հետաքրքրական մերկացումներ արաւ Ա. Ջամալեանը: «Մելիք չարժման եւ բոլշեւիկների դաշինքը, ասաց նա, դժբախտաբար, ճշմարտութիւն է. դրա հետեւանքը այն է, որ մեր ժողովրդի գոյութիւնը թղթախաղի վրա է դրւում: Թիֆլիս եղած ժամանակս, բոլշեւիկների Անդրկովկասեան Գերագոյն Գործադիր Մարմնի չրջանային կոմիտէի ականաւոր

անդամներից մէկը յայտնեց ինձ, որ նոյեմբ. 27-ին Բագուում, բոլշեւիկների եւ երիտասարդ թիւրքերի միջեւ կայացել է մի համաձայնութիւն, որ տաճկական զօրքերը Հայաստանի վրայով պիտի անցնեն Դենիկինի թիկունքը բռնելու համար: Նոյն այդ անձնաւորութիւնը ասաց, որ իրենք միջոցներ պիտի ձեռք առնեն հայերի կոտորածի առաջն առնելու համար, բայց, ի հարկէ, կարող է իրենց այդ չյաջողուի. սրանք փաստեր են եւ ոչ ոք հերքել չի կարող:

Այժմ տեսնենք, ձերբակալուած բոլշեւիկները կապ ունե՞ն այս ամենի հետ. կուսակցական կարգապահութեամբ ստորին մարմինը ենթարկւում է վերին մարմնի կարգադրութիւններին. բոլշեւիկների Անդրկովկասեան կոմիտէի հրահանգները պարտադիր են Հայաստանի Կոմիտէի համար, եւ սա պէտք է ի կատար ածէ, եթէ հակառակ էլ լինի: Ահա իսկական պատկերը գործի, որ ըմբռնել է կառավարութիւնը եւ միջոցներ է ձեռք առել, բայց, ցաւօք սրտի, կիսատ: Պէտք է կուռել ամբողջ կազմակերպութեան դէմ, որպէսզի նա հնար չունենայ այժ դառնալու»:

Այս հարցապնդման առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւններից երեք խնդիր դառնում էր ակնյայտնի ու անհերքելի. նախ՝ որ հայ կոմունիստները Հայաստանի սահմաններում կատարում են գործօն աշխատանք՝ պետական յեղաշրջում առաջ բերելու նպատակով, երկրորդ՝ որ բոլշեւիկների եւ թիւրքերի միջեւ գոյութիւն ունի իրական համաձայնութիւն, որի հետեւանքով թիւրքերը պարտաւորւել են օգնել բոլշեւիկներին Դենիկինի դէմ, եւ, հետեւաբար՝ երրորդ՝ բոլշեւիկներին օգնութեան դնալիս՝ թիւրքերը պէտք է անցնեն Հայաստանի վրայով՝ նոր քայքայումների ու կոտորածի մատնելով մեր երկիրը:

Հայաստանում առանձնապէս մեծ անհանգստութիւն պատճառեց բոլշեւիկ-քեմալական գործակցութիւնը: Հայ կոմունիստները վրդովմունքով հերքում էին այդպիսի գործակցութեան գոյութիւնը, եւ մամուլի մէջ տարածուած լուրերը համարում էին «դաշնակների պրովոկացիայի» արդիւնք: Այն օրերին հայ բոլշեւիկները դեռ ամօթ էին համարում բարեկամութիւնը թիւրք ջարդարարների հետ: Յետոյ՝ ժամանակները փոխուեցին — փոխուեցին եւ բարքերը...

Հայաստանի կառավարութիւնը, ինչպէս եւ Դաշնակցութեան բարձրագոյն մարմինը մէկից աւելի անգամներ քննութեան առին բոլշեւիկ-քեմալական համաձայնութեան փաստը, ինչպէս եւ այդ փաստից բխելիք հետեւանքները: Պարզ էր, որ համաձայնութեան մէջ, ուղղակի կամ անուղղակի ձեւով որոշ տեղ պէտք է ունենար եւ՛ Հայաստանը հէնց, թէկուզ, իր աշխարհագրական դիրքի պատճառով: Իրերի առարկայական ընթացքը թելադրում էր միջոցներ ձեռք առնել, որպէսզի ապագայ իրադարձութիւնների պարագային՝ հայ ժողովուրդը ոտքի տակ չգնայ: Այս մտահոգութեամբ, Դաշնակցութեան Բիւրօն, յունուարի սկզբներին Թիֆլիս ուղարկեց իր անդամներից երեքին — Ա. Ջամալեանին, Ռ. Տէր-Մինասեանին եւ Մ. Վրացեանին, որպէսզի յարաբերութեան մէջ մտնեն Ռուսաստանի կոմունիստական կու-

ակցութեան կովկասեան բիւրոյի հետ եւ պարզեն վերոյիշեալ հարցի մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ այդ հարցից բխելիք գործնական հնարաւորութիւնները: Ցայտնի էր, որ բոլշեւիկների ղեկավարութեան կենտրոնը Թիֆլիսում էր, ուր գաղտնի ապրում էին մի շարք աչքի ընկնող կոմունիստ գործիչներ: Հ. Ց. Դ. Բիւրօի անդամները մեկնեցին Թիֆլիս՝ ունենալով իրենց հետ բոլշեւիկ-քէմալական համաձայնագրի պատճէնը»:

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ կովկասեան Բիւրօի ընդհանուր քարտուղար Հ. Նազարէթեանի հետ, եւ, վերջին հաշուով, խիստ ճնշիչ տպաւորութիւն թողեց:

Նազարէթեանին տրուեց երկու հարց: Առաջինն՝ ճի՞շտ է, որ բոլշեւիկների եւ քէմալականների միջեւ կնքուած է դաշտնի համաձայնութիւն: Երկրորդ՝ ճի՞շտ է, որ այդ համաձայնութիւնը ուղղուած է նաեւ Հայաստանի դէմ: Բոլշեւիկ-քէմալական համաձայնութեան փաստը նա չհերքեց, բայց շատ երկար խօսում էր այն մասին, որ կոմունիստական յեղափոխութիւնը պատրաստ է ճնշուած ազգերին եւ, ուրեմն, չի կարող չպաշտպանել նաեւ հայ ժողովրդին: Հ. Ց. Դ. Բիւրօի ներկայացուցիչները հետացան այն համոզումով, որ եթէ բոլշեւիկ-քէմալական բարեկամութեան շահերը պահանջեն, Հայաստանը կը զոհաբերւի յանուն բոլշեւիկների արեւելեան քաղաքականութեան: Տեսակցութեան միջոցին, յիշելով Լենինի դէկրէտը Հայաստանի անկախութեան մասին, ինչպէս նաեւ դաշնակցականներից ոմանց գործակցութիւնը Մ. Շահումեանին, Հ. Ց. Դ. Բիւրօի անդամները յայտնեցին այն մտքը, թէ հայ ժողովրդի շահը պահանջում է որոշ հասկացողութիւն բոլշեւիկների եւ Հայաստանի ղեկավար կուսակցութեան միջեւ: Պատասխանը եղաւ չոր հեղնական ժպիտ: Ինչ հասկացողութիւն, հարկաւոր է արագացնել խորհրդային իշխանութեան տարածումը նաեւ Կովկասի վրայ: Ընդառաջ գնալու, համաձայնութեան եղր գտնելու ո՛չ մի ցանկութիւն չարտայայտուեց կովկասեան բիւրօի վարիչի կողմից:

Թէ՛ նախորդ դէպքերը, թէ՛ այս փաստը եւ թէ՛ այն գաղտնի տեղեկութիւնները, որ ամէն օր ստացւում էին կառավարութեան հետախուզական բաժնում, ո՛չ մի կասկած չէին թողնում այլեւս, որ Հայաստանի դէմ նիւթւում է մի դաւ եւ որ այդ դաւի անմիջական մասնակիցներն ու դերակատարները Հայաստանում հիւրընկալուած հայ կոմունիստներն են: Դաղելն այլեւս յանցանք էր, և կառավարութիւնը ձեռք առաւ կտրուկ միջոցներ. իրար յետեւից տեղի ունեցան ձերբակալութիւններ: Բռնուեց աչքի ընկնող կոմունիստների մեծ մասը, որոնք որոշ ժամանակ բանտում պահւելուց յետոյ՝ արտաքսուեցին Հայաստանի սահմաններից: Ձերբակալուածների մէջ էր եւ Աւիս Նուրիջանեանը, որը կարողացաւ փախչել եւ յետագային դարձաւ հակապետական շարժման մոլի ղեկավարներից մէկը:

Կատարուած ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները կառավարութեան ձեռքը տւին առատ նիւթ, որից երեւաց, որ բոլշեւիկները պատրաստում էին Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն, այդ նպատակով արտասահմանից ստացել էին խոշոր գումարներ եւ ձեռնարկել էին մարտա-

կան խմբերի կազմակերպութեան: Յայտնի դարձաւ, ընդհանուր առմամբ, եւ ապստամբութեան յատակագիծը: Պարզուեց նաեւ, որ բոլշեւիկները որոշած են եղել օգտագործել Հայաստանի այլազգի տարրերի — մահմեդականների եւ ռուսների դժգոհութիւնը, ինչպէս նաեւ երկրում տիրող պարենաւորման ծանր կացութիւնը, որը սրուել էր այն պատճառով, որ կառավարութիւնը իր ունեցած հացի պաշարի մեծ մասը յատկացրել էր ցանելու, իսկ ամերիկեան ալիւրը ուշացել էր փոխադրութեան միջոցների թերութեան հետեւանքով:

Պարենաւորման հողի վրա, փետրուար եւ մարտ ամիսներին, նոյնիսկ մի քանի ցոյցեր էին տեղի ունեցել քաղաքային ինքնավարութիւնների եւ պարենաւորման նախարարութեան դէմ: Բոլշեւիկները գրգռում էին ամբոխի մութ բնազդները. խօսում էին այն անսպառ հացի, շաքարի, հագուստեղէնի ու նաւթի մասին, որ պիտի լցուի Հայաստան հէ՛նց որ հաստատուի խորհըրդային իշխանութիւն, եւ հրաւիրում էին տապալելու «դաշնակների բռնապետութիւնը»: Սոված ու տկլոր մարդիկ, ի հարկէ, հեշտութեամբ ենթարկւում էին այսպիսի քարոզչութեան եւ կոյր գործիք էին դառնում բոլշեւիկների ձեռքին: Պէտք է արձանագրել եւ այն իրողութիւնը, որ տնտեսական տագնապն ու սովը իբրեւ քաղաքական պայքարի զէնք գործ էին ածում ո՛չ միայն միջոցների մէջ խտրութիւն չդնող բոլշեւիկները, այլ եւ ուրիշ՝ աւելի չափաւոր տարրերը, ինչպէս, օրինակ, ժողովրդական կուսակցութիւնը:

*Առաջ հայ բոլշեւիկները ժխտում էին այն մեղադրանքը, թէ իրենք Հանրապետութեան օրով աշխատել են պետական յեղաշրջում առաջ բերել, թէ մայիսեան օրերին որոշել են ընդհանուր ապստամբութիւն անել: Այժմ արդէն, հէնց իրենց կողմից հրատարակուած բազմաթիւ փաստերով ու վաւերագրերով, հաստատւում է, որ 1919 եւ 1920 թուականների ընթացքում հայ կոմունիստները Հայաստանում պատրաստւելիս են եղել, ապստամբութեան միջոցով, խորտակելու Հայաստանի անկախութիւնը**) :*

Այս տեսակէտից հետաքրքրական են հայ բոլշեւիկ պարագլուխների վկայութիւնները.

*«Բոլշեւիկեան ակտիւ եւ խտացած գործունէութիւնը Հայաստանի տերիտորիայում, գրում է Ս. Կասեանը,**) իրապէս սկսուել է 1919 թւի ամառանից: Ճիշտ է, առաջ էլ եղել են այդտեղ գրուպաներ, բայց որովհետեւ մեր կուսակցութեան Երկրային Կոմիտէն կտրուած է եղել Հայաստանից, նա չի կարողացել ոչ կազմակերպչական գործ կատարել այդ գրուպաների միջոցով, ո՛չ էլ ուղղութիւն տալ նրանց գործունէութեանը: Անգլիացիների գալուց յետոյ, երբ դաշնակներն աւելի էին երես առել եւ իշխանութիւնն ամբողջապէս կենտրոնացրել իրենց ձեռքը, այդ գրուպաների գործունէութիւնը լիկւիդացիայի է ենթարկւում համարեա ամբողջապէս: Նոյն տարւայ*

---

*) Տես, ի միջի այլոց, Շ. Ամիրխանեանի «*Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում*», 1926. Մոսկւա եւ Աշ. Յովհաննիսեանի «*Հայաստանի Յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը*», Երեւան, 1925 թ:

**) «*Նոր Աշխարհ*», ամսագիր, սեպտեմբեր, 1922 թ. N° 2:



Հ· ՕՀԱՆՋԱՆԵԱՆ



Ա· ԳԻԼԱՆԴԱՆԵԱՆ



Գ· ՂԱԶԱՐԵԱՆ



Ռ· ՏԷՐ — ՄԻՆԱՍԵԱՆ



Ս· ԱՐԱՐԱՏԵԱՆ



Ա· ՋԱՄԱԼԵԱՆ



Ս· ՎՐԱՑԵԱՆ





սեպտեմբերին, նախապատրաստական աշխատանքներից յետոյ, Երկրային կոմիտէի ներկայացուցիչները կազմակերպում են Երեւանում՝ գաւառներից հրաւիրւած պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցութիւն, ուր մշակւում է այդ երկրում մեր գործունէութեան հիմնական տակտիկան եւ ստեղծւում կենտրոնական մարմին՝ «Հայաստանի Կոմիտէ»:

Այս խորհրդակցութիւնը, ըստ Կասեանի, մեկնում է այն փաստից, որ Հայաստանում «արդիւնագործական կապիտալիզմի նշոյլն անգամ գոյութիւն չունի», «առեւտրական կապիտալիզմի դէմքն էլ վաղուց մոռացւել է», «գիւղացիութեան խոշորագոյն մասը անձանօթ է լատիֆունդիական, նոյն իսկ կալւածատիրական յարաբերութիւններին, ուր ազգաբնակութեան 90% աղքատութեան եւ զրկանքի մէջ է քարշ տալիս իր խղճուկ գոյութիւնը», եւ առաջադրում է հետեւեալ նշանաբանները. «1. վճռական պայքար Անտանտի դէմ. 2. վճռական պայքար այն ներքին ուժերի դէմ, որոնց վրա յենւում է նա — դաշնակ կառավարութեան եւ արտասահմանեան հայ բուրժուազիայի ազէնտների. 3. անխնայ վարկաբեկումն ցարական եւ բուրժուական Ռուսաստանի եւ 4. որպէս դրական հակադիր այդ բացասական լօզունգների՝ միջազգային յեղափոխական պրոլետարիատի կոմունիստական պայքարի ու բանւորա-գիւղացիական Ռուսաստանի բարոյական համայքի բարձրացումը եւ խորհրդային հանրապետութեան հաստատումը Հայաստանում»:

«1920 թւի յունւարի երկրորդ կէսին Երեւանում տեղի ունեցած կուսակցական անլեգալ կոնֆերենցիան, հիմնւելով կուսակցութեան քաղաքական փորձառութեան վրա, ամբողջապէս ընդունեց եւ հաստատեց այդ վարքագիծը: Տարաձայնութիւնը վերաբերւում էր միայն այն հարցին, թէ կուսակցութիւնը մասնակցելո՞ւ է բոլոր հասարակական հաստատութիւնների գործառնութեանը, օրինակ զեմստւօների, թէ՞ միայն դասակարգային հիմնարկութիւնների՝ պրոֆմիութիւնների եւ գիւղացիական միութիւնների»:

«... Ալեքսանդրապոլի կազմակերպութիւնը, որ գլխաւորապէս բաղկացած էր համարեա բացառապէս Բագուից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանւորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր յարուցել իշխանութիւնը վերցնելու մասին, բայց կոնֆերենցիան կտրականապէս մերժեց այդ», որովհետեւ «կոնֆերենցիան կանդնեց այն տեսակէտի վրա, թէ որքան էլ հեշտ լինի բլանկիստական հարւածով գրաւել իշխանութիւնը ինքնուրոյնաբար եւ մեկուսացած, այնուամենայնիւ իշխանութիւնը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի՝ այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցութիւնը, բաղկացած լինելով ո՛չ աւելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձած ու պատրաստ ուժերով, չպիտի կարողանայ ո՛չ միայն դիմադրել այն ժամանակւայ քաղաքական եւ հոգեբանական սիտուացիայում անխուսափելիօրէն առաջ գալիք քաղաքացիական կուիւն, այլ եւ իշխանութիւն կազմակերպել կենտրոնում եւ տեղերում. 2) որ նա հնարաւորութիւն չպիտի ունենայ կազմակերպելու այնպիսի բանակ, որը կարողանայ, առանց «դրսից» օգնութեան, դիմադրել արտաքին թշնամիների — մենշեւիկեան Վրաստանի, մուսաւաթական Ազրբէջանի եւ քէմալական Տաճկաս-

տանի ամենաթեթեւ արշաւանքին անդամ. 3) որ ծայր աստիճան քայքայած եւ սովի ճիրաններում զալարուող երկրի ցուրտն ու քաղցը մի կողմից, իսկ տնտեսական անխուսափելի բլոկադան միւս կողմից՝ հէնց սաղմի մէջ պիտի խեղդեն խորհրդային իշխանութիւնը»:

«Կացութիւնը, բացատրում է Կասեանը, պահանջում էր զբաղուել ո՛չ թէ այդ տհաս մտքով, այլ կուսակցական կազմակերպութիւնների եւ սրանց ազդեցութեան ու նշանաբանների տարածմամբ ու խորացմամբ, արհեստակցական եւ դիւղացիական միութիւնների միջոցով ինքնատ մասսաների քաղաքական դաստիարակութեամբ՝ զարթեցնելով նրանց մէջ ինքնագործունէութեան եւ ինքնիշխանութեան ձգտումն: Այդպիսով, պատրաստ լինել իշխանութիւնը գրաւելու, երբ նեցուկ կունենանք մի հարեւան երկիր, որով հնարաւոր կը լինի կապւել բանւորա-դիւղացիական Թուրքստանի հետ: Միայն երկու դէպքի համար էր կոնֆերենցիան առաջադրել անպայմանօրէն բարձրացնելու ապստամբութեան դրօշը եւ ընդհանուր ճակատ ստեղծելու՝ ինչ գնով էլ ուղում է լինի. նախ՝ եթէ դաշնակ կառավարութիւնը յանդգնութիւն ունենայ անտանտի թելադրանքով եւ մենշեւիկեան Վրաստանի հետ միասին օգնել մուսաւաթական կառավարութեանը՝ խոչընդոտ հանդիսանալու կարմիր բանակին՝ Բագուն հարկադրանօք գրաւելու դէպքում. երկրորդ՝ եթէ նա Ադրբէջանի կամ Վրաստանի բանւորա-դիւղացիական ապստամբութիւնը թիկունքից խանգարել ուզենայ»:

Կասեանի այս հաւաստիացումներն, ըստ երեւոյթին, աւելի շուտ իր անձնական համոզումներից են բխում, քան իրական փաստերից: Անկարելի չէ, որ նա ինքը այդպէս էր մտածում, բայց կոնֆերենցիան, անշուշտ, աւելի համամիտ էր «Ալեքսանդրապոլի կազմակերպութեան ներկայացուցիչներին», որոնց առաջնորդ Աւիսը խիստ մարտական մի բանաձեւով առաջարկում էր անմիջապէս «վերցնել իշխանութիւնը»: Կասեանը հաւաստացնում է, որ այդ բանաձեւը ո՛չ միայն չի անցել, այլ չի էլ քննուել, մինչդեռ կոմկուսի կենտրոնական պաշտօնաթերթ «Իզվէստիա»-յի 1922 թ. 25 յունւ. N° 1-ում այդ բանաձեւը տպւած է, որպէս խորհրդակցութեան կողմից ընդունած եւ հայ կոմունիստների համար պարտադիր մի որոշում: Ճեռագայ դէպքերն էլ զարդացան Աւիսի բանաձեւի ուղղութեամբ, եւ Կասեանի հոգեչունչ խորհրդածութիւնները «զանգւածի օրիենտիւ կացութեան», «երկրի իրական պայմանների» ու «տնտեսական-դասակարգային ստրուկտուրա»-յի մասին միայն դայլի չարականներ էին «մեր դոկտրինէօրների, դիալեկտիկօրէն մտածելու չնորհքից զրկւածների եւ ձախութեան հիւանդութեամբ բռնւածների համար»:

Այդ երեւում է եւ Աչ. Ծովհաննիսեանի վկայութիւնից:

«Սովետիզացիայի խնդիրը, ասում է նա, պարտաւորիչ էր ամենից առաջ Կոմունիստական կուսակցութեան Հայաստանի Կոմիտէի — Արմկոմի — համար: Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների գաղտնի կոնֆերանսը, որ տեղի ունեցաւ Երեւանում, 1920 թւի յունւարին, ընդունել էր թէզիսներ այն իմաստով, որ կարմիր բանակի մերձեցման եւ հարեւան

հանրապետութիւնների յեղաշրջում լինելու դէպքում պէտք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը: Վերահաս դէպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղութեամբ: Հայաստանի Կոմիտէն ենթադրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպէս սահմանակից շրջաններ, յեղաշրջման յենակէտներ պէտք է դառնային Հայաստանի համար: Մինչ այդ պէտք էր խուսափել վճռական գործողութիւններից, բաւականանալ միայն կազմակերպչական աշխատանքով»:*)

Հայ կոմունիստների հակապետական շարժման դրդիչ եւ ազդանշան հանդիսացաւ Ադրբէջանի խորհրդայնացումը: Անտարակոյս, հայերը տեղեակ էին Ադրբէջանում ապստամբող դէպքերին եւ իրենք էլ պատրաստւում էին այդ ուղղութեամբ:

Հայ բոլշեւիկները որոշ յոյսեր կապում էին եւ այդ միջոցին Ղարաբաղում զարգացող պատերազմական գործողութիւնների, ինչպէս եւ ռուս ու մահմետական տարրերի դժգոհութեան հետ: Նրանց հաշիւը պարզ էր. շահագործելով սովը, տնտեսական ճգնաժամը, ռուսների ու մահմետականների կենտրոնախոյս բնազդները մի կողմից եւ միւս կողմից՝ բոլշեւիկների արտաքին ոյժն ու կարմիր բանակի հմայքը՝ պայթեցնել Հայաստանի Հանրապետութիւնը: Զինւած ապստամբութիւնն ու քաղաքացիական կռիւը այդ նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն էին:

Ադրբէջանի յեղաշրջումը զուգադիպեց մայիս մէկի տօնին: Երեւանում եւ Հայաստանի միւս վայրերում հայ աշխատաւորութիւնը պատրաստւում էր առանձին հանդիսաւորութեամբ տօնելու աշխատաւորների միջազգային համերաշխութեան օրը: Բոլշեւիկները օգտւեցին դրանից եւ աշխատեցին մայիսեան տօնը վերածել ընդհանուր հակապետական ապստամբութեան: Երեւանում այդ չյաջողւեց, բայց գաւառական մի շարք քաղաքներում նրանք ունեցան կարճատեւ յաջողութիւն:

Շարժումները զարգացան հետեւեալ ձեւով: Երեւանում Մայիսի մէկը տօնւեց աննախընթաց չքով: Ամբողջ քաղաքը զարդարւած էր կարմիր դրօշակներով, գորգերով ու ծաղիկներով: Վաղ առաւօտեանից փողոցները լեցւած էին խուռն բազմութիւններով: Հրապարակներն ու Արուէեան պողոտան բռնւած էին արհեստակցական միութիւնների անդամներով, դրօշակներով ու նշաններով: Կազմակերպւած թափօրին մասնակցում էին բոլոր հոսանքները: Քրիստափորի, Թոմասեանի ու Զաւարեանի պատկերների կողքին դրւած էին եւ Լենինի ու Շահումեանի պատկերները: Դաշնակցութեան նշանախօսքերին ու մակագրութիւններին զուգընթաց կային եւ բոլշեւիկեան ազմկաբար կարգախօսներ: Զօրահանդէսից յետոյ Խորհրդարանի առջեւ տեղի ունեցաւ հրապարակային փառահեղ ժողով, ուր ճառեր արտասանեցին Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեանը, վրաց սոց.-դեմոկրատ յայտնի գործիչ Ի. Ռամիշվիլին, Սեպուհը եւ ուրիշներ: Ապա տեղի ունեցաւ Երեւանի նոր կայարանի հանդի-

---

*) «Խորհրդ. Հայաստան», 1925 թ., մայիս 1. № 98:

մաւոր բացումը, ուր նոյնպէս արտասանեցին բազմաթիւ ճառեր: Օրւայ ճառախօսների գլխաւոր նիւթն էր կարմիր գոյն առած Ադրբէջանի վերջնագիրը, որ նոր էր ստացւած Երեւանում եւ որով պահանջւում էր երեք օրւայ ընթացքում մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից: Այդ առթիւ ընդունեց մի բանաձեւ, որի մէջ ժողովը «յայտնում էր իր բուռն զայրոյթը Թուրք գիւղացիութեան եւ բանւորութեան անունը չահագործող դահիճներին, որոնք ռուսական իշխանութեան եւ կոմունիզմի անունը օգտագործելով՝ շարունակում են նախորդ կառավարութեան արիւնոտ գործը: Հայաստանի աշխատաւորութիւնը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ադրբէջանի աշխատաւորութեան եւ պահանջում է վերջ տալ արշաւանքին դէպի Ղարաբաղ եւ Զանգեզուր՝ թոյլ տալով, որ այդ գաւառների գիւղացիութիւնն ու բանւորութիւնը ինքը ազատօրէն արտայայտէ իր կամքը: Հայաստանի աշխատաւորութիւնը խորապէս հաւատալով, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը թոյլ չի տայ Ադրբէջանին յարձակողական քաղաքականութիւն՝ միեւնոյն ժամանակ պահանջում է իր կառավարութիւնից անյողդողդ պաշտպանել Հայաստանի եւ հայ աշխատաւորութեան ազատութիւնն ու անկախութիւնը եւ առաջարկում է արհեստակցական միութիւններին միութեան այս բանաձեւը անմիջապէս յայտնել բոլոր երկրների աշխատաւորութեան եւ խորհրդարանների սոցիալիստական ֆրակցիաններին»:

Բանաձեւը, որ առաջարկւած էր արհեստակցական միութիւնների կենտրոնական վարչութեան կողմից, դնում էր տարբերութիւն Խորհրդային Ռուսաստանի եւ Ադրբէջանի քաղաքականութեան միջեւ: Թէեւ յետագայ դէպքերը ցոյց տւին, որ ո՛չ մի տարբերութիւն չկար: Նա արտայայտում էր այն նպաստաւոր տրամադրութիւնը, որ կար Երեւանի արհեստակցական միութիւնների որոշ մասերում, յատկապէս աւտօ-գարաժի ծառայողների մէջ: Եւ թափօրների ու ժողովների ընթացքում էլ փորձեր եղան տօնին տալ բոլշեւիկեան բնոյթ, նոյնիսկ արտասանեցին հակակառավարչական ճառեր, բայց, ընդհանուր առմամբ, ժողովուրդը մնաց անտարբեր հանդէպ բոլշեւիկների յարուցած աղմուկ-ժխորին: Պարզ էր, որ Երեւանը բոլշեւիկների հետ չէր, բայց անվիճելի էր նաեւ, որ բոլշեւիկեան տարրերն ու տրամադրութիւնները այնքան էլ արհամարհելի չէին:

Գաւառում դէպքերը բոլորովին ուրիշ ընթացք ստացան:

Յիշեցինք արդէն, որ Ալեքսանդրապոլը կազմում էր բոլշեւիկների գործունէութեան կենտրոնը: Ապրիլի վերջերին այստեղ էին հաւաքւած նրանց գլխաւոր գործիչներն ու մարտական ուժերը՝ յեղաշրջում առաջ բերելու որոշումով: Մայիսի մէկին տեղի ունեցան բոլշեւիկեան բուռն ցոյցեր: Ի միջի այլոց յարձակում գործւեց Դաշնակցութեան ակումբի վրա, պատերից փրցւեցին եւ ոտի տակ նետւեցին Քրիստափորի, Զաւարեանի եւ ուրիշների նկարները: Ո՛չ մի կողմից ո՛չ մի դիմադրութիւն: Տեղական իշխանութիւնը չւարած չքանում է. դաշնակցականները խուսափում են արիւնհեղութիւնից: Հրապարակը մնաց բոլշեւիկներին: Հակապետական շարժման կենտրոն էր «Վարդան Զօրավար» զրահագնացքը:

Լուրը Երեւան հասնելուն պէս՝ զինուրական նախարարը կարգադրեց, որ «Վարդան Զօրավար»-ի պետ դլխապետ Մուսայէլեանը գնացքը առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը: Մուսայէլեանը ո՛չ միայն չկատարեց իր բարձրագոյն իշխանաւորի հրամանը, այլ եւ կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապէս Ալեքսանդրապոլ մեկնի զրահապատ գնացքի մի մասը, որ պահպանում էր Հայաստանի սահմանները Վէդի-Բասարի թուրքերի դէմ:

Հրամանը կրկնուեց եւ սպարապետ զօր. Նազարբէգեանի կողմից, բայց Մուսայէլեանը նորից չենթարկուեց: Ընդհակառակը, զրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշեւիկեան դրօշը, որից յետոյ նոյն Մուսայէլեանի նախագահութեամբ կազմուեց Հայաստանի Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որը յայտարարեց իրեն երկրի գերագոյն իշխանութիւն: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ դերերը բաժանուած էին հետեւեալ ձեւով. Նախագահ եւ զինուրական կոմիսար՝ Մուսայէլեան, արտաքին գործերի կոմիսար՝ Աւիս Նուրիջանեան, ներքին գործերի կոմիսար՝ Արտաշէս Մելքոնեան: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն բռնեց Ալեքսանդրապոլի կայարանը, իր կողմը քաշեց տեղական զօրքի մի մասը եւ կտրեց երկաթուղային հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ:

Ապա՝ Մուսայէլեանը անմիջապէս ուղիղ հեռագրաթելով վերջնագիր ուղարկեց Երեւան՝ պահանջելով, որ կառավարութիւնը իրեն յանձնէ իշխանութիւնը: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի անունից հեռագրներ տուեցին Կարս, Սարըղամիշ, Ղարաքիլիսա եւ ուրիշ վայրեր, որոնցմով յայտարարուում էր Հայաստանի խորհրդայնացումը եւ զինուրական ու քաղաքացիական իշխանութիւններին հրահանգուում էր ճանաչել նոր վարչաձեւը:

Այս հեռագիրները արձագանգ գտան զլխաւորապէս զօրամասերի եւ այլազգիների մէջ: Ալեքսանդրապոլից ստացուած հրամանի վրա, մայիս 9-ին, զլխաւորապէս աւտո-զարաժի ծառայողներից, ռազմա-յեղափոխական կոմիտէ ստեղծուեց Կարսում, որ մի գրութեամբ դիմեց նահանգապետ Ղորղանեանին, բերդապետ Փիրումեանին եւ քաղաքագլուխ Նորհատեանին՝ պահանջելով 24 ժամուայ ընթացքում կտրել ամէն կապ Երեւանի հետ, ճանաչել Ալեքսանդրապոլի խորհրդային կառավարութիւնը եւ չարունակել իրենց պաշտօնավարութիւնը: Նման կարգադրութիւն հասաւ եւ Մուսայէլեանից ու Մելքոնեանից: Ըմբոստների կողմն անցան եւ բերդի զօրքերի մի մասը եւ մալական ու յոյն բնակչութիւնը: Երկու օր քաղաքը մնաց խռովարարների ձեռքը:

Կարսից չարժումը փոխադրուեց Սարըղամիշ ու Կաղզուան: Դրսից եկած բոլշեւիկների աղդեցութեան տակ Սարըղամիշի զօրքի փոքր մասը կազմեց յեղափոխական կոմիտէ եւ փորձեց ձեռքը առնել իշխանութիւնը: Զինուրների մէջ կարգապահութիւնը խանգարուեց: Յեղափոխական կոմիտէն փորձեր արաւ յարաբերութեան մէջ մտնելու եւ «եղբայրանալու» սահմանի վրա դտնուող թիւրք զինուրների հետ:

Աւելի աղմկայոյզ եղան դէպքերը Նոր-Բայազէտում: Մայիս 13-ին,

բոլշեւիկների դրդռումով Բասար–Գեչարում կանգնած Համազասպի գնդի համաւորների մի մասը ըմբոստացաւ եւ դիրքերը լքելով՝ գնաց Ղարանլուխ, որ շրջանի զինւորական կենտրոնն էր: Այստեղ խռովարարներին միացան տեղի զինւորները: Ըմբոստացած զօրքի գլուխը անցաւ ուսուցիչ Սարուխանեանը, որը գրգռիչ ճառերով դրդեց ամբոխին տապալելու կառավարութիւնը: Զինւորները ձերբակալելով զօրքերի հրամանատար զօր. Սիլիկեանին եւ ամբողջ սպայութիւնը՝ աղմուկով չարժեցին դէպի Նոր–Բայազէտ եւ փոքրիկ ընդհարումից յետոյ գրաւեցին քաղաքը մայիս 17–ին:

Այսպիսով, գրեթէ միաժամանակ եւ միեւնոյն ձեւով, Հայաստանի զանազան կողմերում բռնկուեցին ապստամբութիւններ: Ամէն տեղ ապստամբութիւնը կրում էր զինւորական բնաւորութիւն: Տեղ–տեղ միայն միացան եւ բանւորները: Պարզ էր, որ չարժումը կազմակերպւած էր նախօրօք. տեւական աշխատանք էր թափւած բանակում եւ բանւորութեան մէջ: Շարժման ղեկավարները յոյս ունէին, որ կարմիր բանակը կը հասնի իրենց օգնութեան: Ապստամբները բոլոր տեղերում միեւնոյն նշանախօսքերն էին գործածում. — Ռուսաստանի կարմիր բանակը գալիս է ժողովրդին ազատելու «դաշնակների լծից». եղբայրական Ռուսաստանը հաց է ուղարկում սովահար Հայաստանին. արդէն բազուից դէպի Հայաստան են չարժւել ալիւրով եւ նաւթով բեռնւած գնացքները եւ այլն: Շատ գրաւիչ խոստումներ, եւ բոլշեւիկները լաւ էին հաշւել ամբոխային հոգեբանութիւնը: Սակայն, դէպքերը ստացան բոլորովին տարբեր ընթացք:

Հայաստանի բոլոր կողմերից հասնող հեռագիրները խռովութիւնների եւ ապստամբութիւնների մասին մի պահ չվոթեցրին Երեւանի ղեկավար շրջանները: Ակներեւ էր, որ կառավարական մեքենան ի վիճակի չէր բռնկւած հրդեհը մարելու: Ճիշտ է, ապրիլ 3–ին կատարւել էր նախարարութեան մասնակի լրացում. կառավարութեան մէջ մտել էին Ա. Ջամալեանը, Ռ. Տէր–Մինասեանը, Ս. Վրացեանը, որով Հ. Ց. Դ. Բիւրոյի անդամների մեծ մասը դառնում էին նախարար, բայց կառավարելու եղանակը՝ խորհրդարանական դանդաղաշարժ մեքենայով՝ չէր համապատասխանում վայրկեանի պահանջին: Անհրաժեշտ էր արագաշարժ ու վճռական իշխանութիւն: Չարիւսւր էին կորուկ միջոցներ: Այդ կարող էր տալ միայն Հ. Ց. Դաշնակցութիւնը:

Մայիս 5–ին գումարւեց Խորհրդարանի արտակարգ նիստը, որը ընդունեց Ա. Խատիսեանի նախարարութեան հրաժարականը եւ նշանակեց նոր կառավարութիւնը. Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրօն իր ամբողջ կազմով անցաւ իշխանութեան գլուխը*): Փաստօրէն յայտարարւում էր Դաշնակցութեան դիկտատուրա: Խորհրդարանը մի ամսով դադարեց:

---

*) Բիւրօ–կառավարութեան կազմն էր. վարչապետ եւ արտ. գործ. նախարար Հ. Օհանջանեան, ներքին եւ զինւորական՝ Ռ. Տէր–Մինասեան, հեւմտական՝ Ա. Գիւլխանդանեան, հաղորդակցութեան՝ Ա. Ջամալեան, գիւղատնտեսութեան, պետական գոյքերի եւ աշխատանքի՝ Ս. Վրացեան, խնամատարութեան՝ Ս. Արարատեան, հանրային կրթութեան եւ արւեստի՝ Գ. Ղազարեան:

Նոր կառավարութիւնը անմիջապէս հայրենիքը յայտարարեց վտանգի մէջ եւ ժողովրդին ուղղեց հետեւեալ կոչը.

Հայաստանի Հանրապետութեան բաղաքացիներին.

Քաղաքացինե՛ր.

«Հերոսական պայքարով եւ անօրինակ զոհողութեամբ հայ աշխատաւոր ժողովուրդը տիրացել է անկախութեան եւ ազատութեան եւ միացնելով բռնաւորների կամքով դարեր շարունակ իրարից բաժանուած հայրենիքի երկու հատուածները՝ հիմք է դրել պետական յառաջադէմ շինարարութեան: Հայաստանի Պարլամենտի եւ կառավարութեան ամբողջ մտահոգութիւնն է եղել ապահովել աշխատաւոր ժողովրդի ֆիզիքական դոյութիւնը ու սոցիալական անարդել զարգացումը եւ անսասան պահել հանրապետական դեմոկրատիկ իրաւակարգը:

«Քաղաքացինե՛ր, այսօր, Հայաստանի ժողովրդի այս բախտորոշ վայրկեանին, նորից ամպեր են կուտակւում մեր երկրի գլխին: Մահւան ճիրաններում պայքարող տաճիկ փաշաները մի կողմից եւ բոլշեւիզմի կարմիր պատմուճանը հագած ազրբէջանեան խաները միւս կողմից՝ նորից սպառնում են Հայաստանի անկախութեան եւ ազատութեան: Գիտակցաբար կամ անգիտակցօրէն նրանց օգտին են գործում եւ մի շարք տարրեր երկրի ներսում, որոնք աշխատում են օգտագործել պարենաւորման ճգնաժամն ու ժողովրդի յոգնածութիւնը, որպէսզի առաջ բերեն անկարգութիւններ եւ իրենց նեղ եսական տեսչերին յագուրդ տան:

«Եւ այն ժամանակ, երբ Ազրբէջանի զօրքերն ու հրոսախմբերը շարունակում են արիւնհեղութիւնը Ղարաբաղում եւ Գանձակում, այն ժամանակ, երբ տաճիկ ասկեարները չարժումներ են անում Շարուրի եւ Նախիջեւանի շրջաններում եւ հրդեհում հայ գիւղերը, զանազան անպատասխանատու խմբակներ վերջ չեն տալիս իրենց գրգռիչ ընթացքին եւ կամենում են պատռակտում առաջ բերել երկրի մէջ, առանց հաշւի առնելու, որ ամէն մի խռովում առաջ կը բերէ անիշխանութիւն ու պարենաւորման սուր տագնապ եւ կը զրկէ ժողովուրդը ապրուստի միջոցներից:

«Քաղաքացինե՛ր, Հայաստանը կարիք ունի հանգստի եւ համերաշխութեան. ո՛չ մի յուզում, ո՛չ մի խռովում — ամէն ոք պէտք է գտնւի իր գործի եւ պաշտօնի գլխին: Զինւած պարլամենտից ստացած արտակարգ լիազօրութիւններով՝ կառավարութիւնը դիմում է ձեր քաղաքացիական դիտակցութեան եւ հրաւիրում ամենքիդ, հայ ժողովրդի դոյութեան այս ճգնաժամային վայրկեանին, համախմբւել կառավարութեան շուրջը, որի նշանաբանն է՝ Հայաստանի անկախութեան եւ ազատութեան պաշտպանութիւնն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը: Այս նպատակները իրագործելու հա-

մար կառավարութիւնը չի խնայի եւ ո՛չ մի ճիգ, եւ նա կը յաղթէ ձեզ հետ եւ ձեզ համար։*)

«Նախարարապետ եւ արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան
«Ջօրական եւ ներքին գործերի նախարար՝ Ի. Տէր-Միքայելեան
«Գիւղատնտեսութեան եւ աշխատանքի նախարար՝ Ս. Վրացեան
«Ֆինանսների եւ արդարադատութեան նախարար՝ Ա. Գիւլխանդանեան
«Հաղորդակցութեան նախարար՝ Ա. Ջամալեան
«Հանրային կրթութեան եւ արուեստի նախարար՝ Գ. Ղազարեան
«Ինամատարութեան եւ վերաշինութեան նախարար՝ Ս. Արարատեան»

Միեւնոյն ժամանակ յայտարարուեց բոլոր դաշնակցականների ընդհանուր զօրաշարժ։ Ամէն կողմ ուղարկուեցին դաշնակցական յայտնի գործիչներ լայն լիազօրութիւններով։ Ամէն տեղ սկսուեցին կազմել կամաւորական գընդեր։ Ալեքսանդրապոլը վերադրաւելու համար կազմուեց առանձին մի զօրամաս, որի գլուխ դրուեց Ժողովրդական խմբապետ Սեպուհը։ Արագութեամբ շարժման մէջ դրուեցին եւ կանոնաւոր զօրամասերը։ Հիմնուեց արտակարգ դատարան, եւ, առհասարակ, երկիրը դրուեց արտակարգ վիճակի մէջ։ Կառավարութիւնը յայտնաբերեց բացառիկ եռանդ եւ կարճ ժամանակում ստեղծեց հասարակական բարձր տրամադրութիւն։

Հասարակական կարծիքը ամբողջապէս վաւերացնում էր կառավարական քայլերը։ Քաղաքական կուսակցութիւնները, պետական եւ տեղավարական հիմնարկութիւնները, հանրային կազմակերպութիւններն ու անհատ քաղաքացիները իրենց դնում էին կառավարութեան տրամադրութեան տակ։ Նմանը չեղած ոգեւորութիւն ու եռուզեռ էր սկսւել մայրաքաղաքում ու գաւառներում։ Հայ սոցիալ-դեմոկրատների Հայաստանի բանուորներին, գիւղացիներին եւ քաղաքացիներին ուղղած մայիս 14-ի կոչը հետեւեալ ձեւով էր արտայայտում այն օրերի հասարակական տրամադրութիւնը։

«Պատահեց այն, ինչ ամենից քիչ սպասելի էր եւ ամենից շատ դատապարտելի։

«Բազուի քաղաքական կոմեդիան վերածուեց Ալեքսանդրապոլի ողբերդութեան. իսլամական խարուսիկ կոմունիզմից նւաճուեց ստրկամտօրէն հայկական բերդը, հայութեան որբանը։

«Մի խումբ ստորահոգի բախտախնդիրներ յանդգնեցին բարձրացնել քաղաքացիական կուի արիւնաշաղախ դրօշը, ապստամբել հայ ժողովրդի ինքնորոշուած կամքի դէմ եւ ճեղքել հայ դեմոկրատիայի ներքին մի ուրոյն ճակատը։

«Դաշնակցած բոլշեւիզմն ու պանիսլամիզմը, ծափ զարկեցին, որովհետեւ նրանց հոգեվաճառ ագէնտներին յաջողուել էր անգամ ծաւալած երկիրը, արիւնաքամ ժողովուրդը, որբերի ու գաղթականների տխուր հայրենիքը

*) Այս եւ մայիսեան շարժումների ընթացքին հրատարակուած կառավարական բոլոր կոչերն ու հաղորդագրութիւնները գրած եմ, կառավարութեան յանձնարարութեամբ, Ս. Վրացեանի ձեռքով։



Վ· ՓՐՄՈՅԵԱՆ
(Ներք· գործ· նախ· օգն·)



Ս· ՄԵԼԻՔ — ԵՕԼՉԵԱՆ



Լ· ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
(Երեւանի փոխ–նահանգապետ)



Լ· ՓԱԼԱՆԹԱՐԵԱՆ
(Գահեստի միլիցիայի պետ)



Ս· ՋԱԼԱԼԵԱՆ
(Երեւանի միլիցիապետ)



ԱՐՏ· ԱՏՈՎՄԵԱՆ
(Երեւանի միլիցիապետի օգն·)



Վ· ԹՈՐՈՍԵԱՆ
(Անասնաբուժ· բաժնի վարիչ)



Պ· ԿԱՆԴՈՒՐԱԼԵԱՆ
(Պետակ· գոյք· բաժնի վարիչ)



Մ· ՏԻՐ — ԳԻՈՐԳԵԱՆ
(Անդամ Ն·–Բայազ· Ցատ· Հոգ· կոմ–ի)



Մ· ՕԶԱՆԵԱՆ
(Նախ Ն·–Բայազ· Ցատ, Հոգ. կոմ–ի)



Ց· ԹԱԴԷՈՍԵԱՆ



ՕՆՆԻԿ ՄԱՃԱՌԵԱՆ
(Դատական կազմի անդամ)



Մոսկւայի եւ Լրզրումի քաղաքագէտների դէսային ծրագրներին ենթարկելու փորձեր անել։

«Բանուորնե՛ր, ընկերնե՛ր եւ քաղաքացինե՛ր։

«Զրահապատ գնացքի մէջ պատսպարուած մի խումբ անորակելի ոճրագործներ՝ պարզելով «Խորհրդային Ռուսաստանի» դրօշակը՝ ամենամեծ դաւը նիւթեցին հայ ժողովրդի դէմ այն վայրկեանին, երբ նրա ֆիզիքական գոյութիւնը մահացու չափ վտանգուած է ողջ շրջապատից եւ երբ նրա քաղաքական բախտը որոշելու վերջին օրերն ենք ապրում։ Հայ դաւաճանները իրենց խելագար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին — թէ՛ Հայաստանը օղակող թիւրք-թաթարական ապառազէն բանդաներին, եւ թէ՛ Պոլսի քաղաքագէտներին։

«Բանուորնե՛ր, ընկերնե՛ր եւ քաղաքացինե՛ր։

«Ամէն մէկիդ սրբազան պարտականութիւնն է այս ծանր օրերին ձեր ուժի ու եռանդի, չնորհքի եւ ընդունակութեան մաքսիմումը նուիրաբերել վտանգուած հայրենիքի պաշտպանութեան գործին։ Բոլոր նրանք, որոնց մէջ առկայծում է պատասխանատուութեան վառ զգացմունքը մի բուռն դժբախտ ժողովրդի գոյութեան եւ նրա ներազանցօրէն արդար դատի համար, պէ՛տք է ոտքի ելնեն, որպէս ծառացած ըմբոստութիւն, եւ աջակցեն Հայաստանի կառավարութեան՝ բնի մէջ խեղդելու համար այն հայրենադաւ ոճրագործների ապստամբութիւնը, որոնք փորձում են փորփորել մեր դեմոկրատական իրաւակարգի հիմքերը եւ մտցնել բռնապետական-տեռորիստական արդէն դատապարտուած վարչաձեւը։

«Թո՛ղ կորչեն պետական ոճրագործները եւ բոլոր հակապետական տարրերը։

«Կեցցէ՛ սոցիալիզմը եւ դեմոկրատիզմը Հայաստանում։

«Հայաստանի Սոց.-Դեմ. Բանւ. Կուսակցութեան Երեւանի Կոմիտէ»։*)

Ժողովրդին յորդոր ուղղեց եւ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը.

«Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արեւելքից եւ արեւմուտքից, նոքա, որոնք չտեսնողս են ձեւանում, որ մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարւում՝ պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագիրների քայլ առ քայլ եւ հետեւողական իրագործումը, զգո՞ւմ են, թէ ինչ պատասխանատուութիւն է ծանրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ։ Այս րոպէիս, երբ ամենքիս պարտականութիւնն է համախմբուել ո՛չ միայն հայրենիքի պահպանութեան և վերաշինութեան գործի շուրջը, այլ, նամանաւանդ, հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու գործին աշխատանքի շուրջը, ցաւալի է տեսնել ներքին երկպառակութիւնները։

«Մենք, ինչպէս եւ մեր երջանկայիշատակ նախնիքները, որ աշխատանք ենք թափել տաճկահայ դատի համար լաւ օրերի յոյսի ակնկալութեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպէներին, եւ երբ վտանգած ենք տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց, նամանաւանդ, հայ ազգի ֆիզիքական

*) Այս կոչի հեղինակն է Դաւիթ Ալամդար, Բ. Իշխանեանի աշխատակցութեամբ։

դոյութեան ճգնաժամային դրծը, իբր ընդհանրական հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական րոպէներին հայրական խրատով դիմել բոլորին եւ զգաստութեան կոչ անել — հա՛յ ժողովուրդ, համախմբուի՛ր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը: Վտանգը եւ խիստ ծանր վտանգը քո դռանն է, հայ ժողովուրդ, զգոյշ եղիր եւ պատմութեան առաջ ծանր պատասխանատուութեան բեռի տակ մի՛ ընկնիր»:

Նոյնքան վճռական են եւ Անկուսակցականների Միութեան, Հայ Ժողովրդական Կուսակցութեան եւ Հայ Ռամկավար Կուսակցութեան ու Հայաստանի Ժողհրդի կոչերը — անվերապահ դատապարտութիւն բոլշեւիկների ըսկըսած ապստամբութեան եւ ջերմ հրաւէր աջակցելու կառավարութեան՝ ճնշելու համար այդ ապստամբութիւնը: Անկուսակցականների Միութիւնը բոլշեւիկներին անուանում է «ազգի տականքներ՝ կաշառած թրքական դրամով», «հայրենիքի դաղափարը ժխտող չարագործներ», «ազգի մատնիչներ եւ դաւաճաններ»: «Մեզ՝ անկուսակցականներիս համար ո՛չ մի կասկած չկայ եւ կարող էլ չի լինել, որ Մելքոնեանները, Նուրիջանեանները, Մուսայէլեաններն եւ նրանց ընկերները հայ ազգի դաւաճաններ են»: «Անկուսակցականների Միութիւնը իր լիովին վստահութիւնն է յայտնում կառավարութեան եւ հաւատում է, որ վերջինս կանգ չի առնելու վճռական եւ կորուկ միջոցների առաջ, որպէսզի ապագայում անհնար դարձնէ մեր մեծ ու փոքր վտանգների չար դաւերը»:

Ուշագրաւ էր Ռամկավար կուսակցութեան կոչը. «Մեր աւերակ եւ քանդուած հայրենիքի մէջ, ասւած էր այնտեղ, հայ ժողովուրդը բնաջնջող, մեղ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արիւնով ներկող իթթիհատ կուսակցութիւնը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրուած էր Ազրբէջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, յանկարծ, Բագուի մէջ յայտարարեց սովետական իշխանութիւն եւ առաջին օրն իսկ իր նշանաւոր ուլտիմատումով պահանջեց հայկական հանրապետութենէն երեք օրէն յանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը եւ իր զօրախմբերն արդէն շարժման մէջ դրաւ Հայաստանի վրայէն երթալ միանալու Մուսթաֆա Քէմալ փաշայի հետ, որ մինչեւ այժմ կը շարունակէ ջարդել տասնեակ հազարաւոր հայեր Կիլիկիոյ մէջ, հակառակ մինչեւ իսկ ֆրանսական բանակի ցոյց տւած պաշտպանութեան:

«Խելագար եւ երկու աչքերով կոյրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական հանրապետութեան ընդհանրապէս եւ Թիւրքահայաստանին մասնաւորապէս սպառնացող նոր վտանգը. եւ, սակայն, դտնւեցան հայ անուն կրող մարդեր եւ հայ իրականութեան մէջ գործող, բայց հայ ոգիին ու զգայումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կողմնակից յայտարարեցին գիրենք այդ հայատւաւ շարժման եւ Ալեքսանդրապոլի ու Կարսի մէջ դիմեցին եղբայրասպան կռւի:

«Այդ խելագարները ո՛չ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող հայկական հարցին, այլ մինչեւ անգամ հոգ չըրին, որ երկրի սահմանները կը բանան եւ կը հրաւիրեն տաճիկ–ազրբէջանեան զառնազգեստ զայլերը, որպէսզի մնացեալ հայութեան դիակներու վրայէն երթան ու միանան մեր դարաւոր թշնամիին, Ենվէրի ու Թալէաթի հարազատ յաջորդ Մուսթաֆա Քէմալին:

«Տարակոյս չկայ, որ ամէն հայ մարդ, որ իր երակներու մէջ հայ արիւն կը կրէ եւ իր դլխուն մէջ փոքր ինչ խելք ունի, կը դատապարտէ այդպիսի խելագար շարժումը, եւ առաւել թիւրքահայերս, որ անոր անմիջական հետեւանքները կը կրենք: Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ, եւ մենք մասնաւորապէս պէտք է ծառանանք անոր դէմ եւ մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարութեան՝ իր բնին մէջ խեղդելու զայն եւ չեղեցնելու իր ոճրապարտ նպատակէն:

«Հայ Ռամկավար Կուսակցութիւնը, մանաւանդ, որ տոգորուած է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արիւնով դծած են նորա առաջ, ամենէն աւելի իրաւունք ունի դայրոյթով մերժելու այդ հայրենադաւ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝ միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկայ վտանգին հանդէպ:

«Բնա՛ւ չենք կասկածեր, որ այդպէս կը մտածեն նաեւ բոլոր մեր ընկերները եւ բոլոր անոնք, որ հայ անուն եւ հայ դպացում կը կրեն:

«Կորչի՛ եղբայրադաւ եւ հայրենադաւ ոճիրը:

«Կեցցէ՛ հայ ոգին:

«Կեցցէ՛ Միացեալ եւ Անկախ Հայաստանը»:

Հայ ժողովրդական Կուսակցութիւնն եւս, որ մինչեւ այդ շատ բուռն կերպով քննադատում էր կառավարութեան գործերը, մայիս 6ին մի նամակ ուղղեց նախարարապետին, որի մէջ յայտնում էր. թէ՝ «Հայ ժողովրդական Կուսակցութեան կենտր. Կոմիտէն միաձայն որոշեց հայ ժողովրդի ֆիզիքական դոյութեան եւ ազատութեան սպառնացող խոշոր վտանգի հանդէպ ցոյց տալ Հայաստանի կառավարութեան եռանդուն աջակցութիւն՝ պաշտպանելու իրաւակարգը երկրում եւ պաշտպանելու Միացեալ Հայաստանի անկախութիւնը ամէն տեսակ ոտնձգութիւններից»:

Այս ինքնաբուխ յայտարարութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի բոլոր կողմերից տեղացող հակաբոլշեւիկ հեռագիրները ցոյց էին տալիս, որ ժողովուրդն ու կառավարութիւնը ապրում ու զդում էին միեւնոյն ձեւով: Եւ կառավարութիւնը՝ յենուած երկրի բացարձակ վստահութեան վրա, անցաւ վճռական գործի:

Քաղաքացիական կռւից ու արիւնհեղութիւնից խուսափելու նպատակով՝ կառավարութիւնը փորձեց խաղաղ միջոցով կարգադրել խնդիրը: Վարչապետը մի հեռագիր ուղղեց Մուսայէլեանին եւ բացատրելով երկրի ծանր դրութիւնը ու ներքին ընդհարումներից ծագելիք աղէտը՝ առաջարկեց վերջ տալ ըմբոստութեան՝ խոստանալով միաժամանակ, որ յանցաւորները կար-

ժանանան ներման: Ռազմա–Յեղափոխական կոմիտէն, ի պատասխան այս դիմումի, ուղղեց մի հայհոյալից հեռագիր, որի մէջ ասում էր, թէ ինքն իրեն Հայաստանի կառավարութիւն յորջորջող մարմինը աւազակների եւ մարդասպանների մի խումբ է եւ որ Հայաստանի օրինաւոր կառավարութիւնը Ալեքսանդրապոլի Ռազմա–Յեղափոխական կոմիտէն է, որին արդէն ճանաչել է ամբողջ երկիրը եւ որը պահանջում է Երեւանի կառավարութիւնից էլ անյապաղ ճանաչել իր իշխանութիւնը՝ սպառնալով, հակառակ պարագային, ընդդիմացողներին պատժել յեղափոխական ժամանակի օրէնքներով:

Կառավարութիւնը տեսնելով, որ բոլոր ճիգերն անցան ապարդիւն, ապստամբների դէմ չարժեց զինուած ուժեր: Կանոնաւոր զօրամասերին միացան ամէն կողմից հասնող կամաւորական խմբեր: Մայիս 13–ի լուսաբացին Անի եւ Աղին կայարանների միջեւ, Մուսայէլեանի զրահապատ գնացքը յարձակուեց կառավարական զօրքերի վրա: Տեղի ունեցաւ տաք կռիւ, որի ընթացքում ապստամբներից վիրաւորուեց 6 հոգի, որոնց մէջ եւ Մուսայէլեանի օգնական սպայ Եւանդուլեանը: Զրահապատը չդիմացաւ եւ փախուստի դիմեց՝ ճանապարհի կամուրջները պայթեցնելու փորձեր անելով:

Այս անյաջող կռւից յետոյ Ռազմա–Յեղափոխական կոմիտէի ներքին գործոց կոմիսար Ա. Մելքոնեանը ուղիղ հեռագրաթելով դիմեց Երեւան, եւ հետեւեալ բնորոշ խօսակցութիւնը տեղի ունեցաւ նրա եւ ներքին գործոց նախարարի օգնական Մ. Թորոսեանի միջեւ.

Ա. Մելիքոնեան.— «Ես՝ բժ. Արտաշէս Մելքոնեանս առաջարկում եմ կարգադրել դադարեցնել ռազմական գործողութիւնները, որպէսզի կողմերը կարողանան խաղաղ հանդամանքներում համաձայնութեան գալ մի քանի ընդհանուր շատ կարեւոր հարցերում»:

Ս. Թորոսեան.— «Մենք ձեզ կողմ չենք ճանաչում, այլ մի խումբ աւանտիւրիստներ, որոնք դաւաճանելով հայ ժողովրդին՝ խառնակութիւններ են սերմանում: Մենք գիտենք, որ ձեզ հետ չէ նաեւ Ալեքսանդրապոլի զօրքը: Ձեզ մի խումբ բախտախնդիրներիդ հետ՝ վարւելու ենք իրրեւ խառնակիչների: Արդէն գիտենք, որ դուք ջարդւել էք ու նեղն ընկած՝ խաղաղութեան մասին էք խօսում: Դուք, պարոն Մելքոնեան, իրրեւ պարլամենտի անդամ կրկնակի դաւաճանութիւն էք գործում եւ արժանի հատուցումը կը ստանաք: Ձեզ համար փրկութեան մի միջոց կայ — անձնատուր լինել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ նրա դատութեան դիմել»:

Ա. Մելիքոնեան.— «Ես խօսում եմ իրրեւ միջնորդ*) ձեր եւ Ալեքսանդրապոլի միջեւ, ուր յայտարարւած է սովետական իշխանութիւն եւ որի կողմն են կարսի եւ Սարըղամիշի զօրքերը: Գիւղացիական դանդւածները բռնւած են քաղաքացիական կռւով, եւ ես ոյժ չունեմ, անզօր եմ անխուսափելի ա-

---

*) Ա. Մելիքոնեանը սուտ էր խօսում. «Արմենկոմը, գրում է Շ. Ամիրխանեանը իր «Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում» գրքում (109 էջ), Ալեքսանդրապոլ ուղարկեց իր երկու լիազօր անդամներին՝ ընկ. ընկ. Դ. Տէր–Սիմոնեանին եւ Ա. Մելիքոնեանին՝ ծանօթանալու իրերի դրութեանը տեղում եւ տեղեկութիւն տալու իշխանութեան գրասմանը, եթէ դա անհրաժեշտ լինի»:

բունհեղուբիւնների առաջն առնելու: Որպէսզի ընդհանուր լեզու գըտնենք եւ խուսափենք աւելորդ արիւնհեղուբիւնից, անհրաժեշտ է, որ դադարեցնեն ռազմական գործողուբիւնները եւ երկու կողմից այժ գործադրենք ելք գտնելու համար»:

Ս. Թորոսեան.— «Կարսից եւ Սարըղամիշից մի շարք հեռագիրներ ունենք. այնտեղ ամբողջ զօրքը Հայաստանի Հանրապետուբեան կառավարուբեան կողմն է եւ այդպէս էլ կը մնայ, որովհետեւ փորձած եւ իմաստուն հայ ժողովուրդը աւանտիւրիստների յետեւից չի գնայ: Ինչ վերաբերում է ձեր այն ստին, որ գիւղացիական զանգւածները բռնւած են քաղաքացիական կըռւով, պիտի ասեմ, որ հայ գիւղացին դատարկ բաներով զբաղւող չէ: Մեր կողմից ոչ ոք ձեզ չի լիազօրել միջնորդի դեր ստանձնելու, որովհետեւ մենք ո՛չ բանակցուբիւններ ենք վարում բախտախնդիր մարդկանց հետ եւ ոչ էլ ձեզ նման միջնորդի կարիք ունենք. մեր իսկական ներկայացուցիչներին շուտով կը տեսնէք Ալեքսանդրապոլում: Եթէ հայ արիւն է թափւում, մենք գիտենք, թէ ում յանցանքի պատճառով է այդ»:

Եւ, իրաւի, ապստամբների վիճակը լաւ չէր Ալեքսանդրապոլում: Շարժման սկզբին նրանց էր յարել եւ զօրքի մի մասը: Սպայուբիւնը՝ զօրքի ամբողջուբիւնը փրկելու եւ ներքին կռիւների պատճառ չտալու հաշւով՝ նոյնպէս ճանաչել էր ռազմա-յեղափոխական կոմիտէի իշխանուբիւնը: Բանակն իր կողմը գրաւելուց յետոյ՝ ռազմա-յեղափոխական կոմիտէն իր իշխանուբիւնը տարածել էր եւ քաղաքի վրա, ուր հին պաշտօնէուբիւնը յայտարարւել էր հեռացած եւ ներքին գործոց կոմիսար Մելքոնեանի կողմից նշանակւած էին նոր կոմիսարներ. անասնաբոյժ Պրիբիլսկի՝ ինքնապաշտպանուբեան չտաբի պետ. Սիկորսկի՝ թնդանօթաձիգների կոմիսար. Ամատունի (հնչականն)՝ քաղաքային միլիցիայի պետ. Լեւոն Սարգսեան՝ պարենաւորման կոմիսար. Կօշուբինսկի՝ կազակի Պոստի պետ եւայլն: Այս կոմիսարները փաստօրէն ո՛չ մի ազդեցուբիւն չունէին, որովհետեւ քաղաքի ազդաբնակուբիւնը հէնց սկզբի օրերից թշնամական դիրք բռնեց դէպի ըմբոստները: Բազմամարդ ժողովների մէջ քաղաքացիները դատապարտեցին խռովարարների ընթացքը եւ նոյնիսկ փորձեր արին դրաւելու կայարանը, բայց զրահապատի թնդանօթները արդելք եղան: Քաղաքացիների այս վերաբերումը անդրադարձաւ եւ զօրքի տրամադրուբեան վրա: Հետզհետէ ամենքը տեսան, որ ապըստամբները, իրօք, մի խումբ բախտախնդիրներ են, որոնց ոյժն ու իշխանուբիւնը զրահապատի սահմաններից դուրս չի տարածւում:

Ա. Մելքոնեանի փորձի վիժումից յետոյ ապստամբները Լ. Սարգսեանից ու Հ. Զոլախեանից կազմւած յատուկ պատւիրակուբիւն ուղարկեցին կառավարական զօրամասի հրամանատար Սեպուհի մօտ: Պատւիրակուբիւնը խնդրեց յառաջխաղացումը դադարեցնել եւ իրեն արտօնուբիւն տալ գնալու Երեւան՝ կառավարուբեան հետ բանակցելու համար: Զօրամասի պետը, կառավարուբեան հրահանգն ստանալուց յետոյ, յայտնեց, որ ինքը լիազօրուբիւն ունի հարցը տեղն ու տեղը վճռելու եւ յառաջխաղացումը չի կանգնեցնի, սակայն, պատրաստ է հարցը առանց կռւի լուծելու՝ պայմանով, որ ամենա-

ուշը մինչեւ մայիսի 14–ի առաւօտեան ժամը 6 ռազմա–յեղափոխական կոմիտէն անձնատուր լինի եւ զրահապատ գնացքը յանձնէ անվնաս:

Մայիս 13–ի գիշերը ապստամբները թողին զրահապնացքը եւ փախան՝ ոմանք դէպի Աղբաբա՝ թուրքերի մօտ, ոմանք պահեցին քաղաքում: Մայիս 14–ի առաւօտեան հանրապետական զօրքերը, առանց կռւի, մտան քաղաք եւ խանդավառ ընդունելութիւն գտան ազգաբնակութեան կողմից: «Վարդան Զօրավար»–ի վրա բարձրացաւ հանրապետական դրօշը: Բոլոր զօրամասերը միացան կառավարական զօրքերին: Ո՛չ մի անկարգութիւն չպատահեց. միայն առաջնակի մի քանի հարւածներով, փողոցում, սպանուեց զօրավար Յաչատրեանը, որ անցել էր բոլշեւիկների կողմը: Նոյն օրն եւ եւթ ձերբակալեցին փախստական կոմիսարներ՝ Մուսայէլեանը, Մելքոնեանը եւ ուրիշներ: Աւելս Նուրիջանեանին յաջողւեց ճողոպրել: Ձերբակալւածներին յանձնեցին արտակարգ դատարանին:

Աւելի կարճ տեւեց Կարսի «ռազմա–յեղափոխական կոմիտէի» կեանքը: Մայիս 10–ին Կորհրդարանի անդամ Ն. Աղբալեանը զօրքի եւ հասարակութեան խուռն բազմութեան առաջ մի կուռ դասախօսութիւն կարդաց «Ներկայ մոմենտի մասին», որ ահագին տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա: Յաջորդ օրը, ժողովուրդն ու զօրքը շրջապատեցին աւտո–զարաժը, ուր ամրացել էին բոլշեւիկները, եւ պահանջեցին վերջ տալ ապստամբութեան: Ապստամբները ապաստանեցին «Ալեքսանդր Բ.» ամրոցը, որտեղից սկսեցին թնդանօթ պարպել քաղաքի վրա: Մայիս 12–ին ստեղծւեց «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ», որ իր ձեռքն առաւ քաղաքի բովանդակ իշխանութիւնը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ղեկավարութեամբ ժողովրդական բազմահազար բազմութիւնը «Մեր Հայրենիք» երգելով շարժւեց դէպի ապստամբները, որոնք դիմաւորեցին հրացանային ու թնդանօթային կրակով: Գաղափած ամբոխը խլեց բոլշեւիկների ղնդացիրներն ու զինւած ինքնաշարժը եւ առաւ մի շարք գերիներ: Բոլշեւիկները, որոնց թիւը մի քանի տասնեակից չէր անցնում, յամառ դիմադրութիւն ցոյց տւին՝ պահանջելով իրենց յանձնել քաղաքի եւ բերդի իշխանութիւնը: Մայիս 13–ին, երբ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն պատրաստւում էր վերջնական գրոհով գրաւել ամրութիւնը, պարզւեց, որ ապստամբները գիշերը բեռնակիր ինքնաշարժով փախել են Ալեքսանդրապոլի ուղղութեամբ: Իսկոյն հետապնդում կազմակերպւեց եւ Արզինա գիւղի ջրաղացների մօտ տեղի ունեցաւ տաք կռիւ փախստականների եւ հետապնդողների միջեւ. բոլշեւիկներից սպանւեցին 10 եւ ձերբակալւեցին 7 հոգի. միւսները կարողացան փախչել: Ձերբակալւեցին նաեւ ռուս, թուրք եւ յոյն ազգային խորհուրդների անդամները, որոնք իրենց միացնալ ժողովում որոշել էին եւ արձանագրութիւն կազմել բոլշեւիկների հետ համագործակցելու մասին: Ձերբակալւածները յանձնւեցին արտակարգ դատարանին:

Ալեքսանդրապոլի եւ Կարսի դէպքերը վճռական նշանակութիւն ունեցան եւ Սարըղամիշի համար: Երբ այնտեղի ապստամբները իմացան, որ Կարսի շարժումը ճնշւած է, փորձեցին փախչել, բայց ձերբակալւեցին: Ռուս–բարների կողմը անցած զինւորները «Մեր Հայրենիք» երգելով գնացին եւ

մինցան կառավարական զօրքերին: Ձերբակալուածները յանձնուեցին արտակարգ դատարանին:

Նոյնը եղաւ վրաստանը եւ Նոր-Բայազէտի ըմբոստների: Իշխանութիւնն իրենց ձեռքը առնելուց յետոյ՝ բոլշեւիկները սկսեցին բռնութիւններ գործ դնել հակառակ նկատուած քաղաքացիների վերաբերմամբ, թալանեցին պետական գանձատունը, պահեստները եւ մասնաւոր քաղաքացիների բնակարանները: Ճեղաշրջման օրը քաղաքից հեռացած իշխանութիւնը, օգնական ուժեր ստանալով, մայիս 19-ին վերադրաւեց քաղաքը, եւ ազատ արձակեց բանտարկուածներին: Կռւի ժամանակ սպանուեցին 2 խռովարարներ եւ վիրաւորուեցին 3· կառավարական զօրքերից սպանուեց 1 հոգի եւ վիրաւորուեց 2: Բռնուեց եւ պարապլուխ Սարուխանեանը, որը միւս ձերբակալուածների հետ յանձնուեց արտակարգ դատարանի:

Այսպիսով, երկու շաբաթուայ ընթացքում կառավարութիւնը ամբողջ երկրում վերջ տուեց ապստամբական շարժման: Հայաստանից փախած բոլշեւիկները մեծ իրարանցում առաջ բերին Ազրբէջանում. դիմումներ արին 11րդ բանակին, հեռագիրներ քաշեցին Մոսկւա՝ ջանալով ամենքին հաւատացնել, որ Հայաստանում կոմունիստների կոտորած է կատարւում եւ որ արդէն սպանուած են հազարաւոր մարդիկ: Միաժամանակ, ազրբէջանեան իշխանութեան օգնութեամբ Ղազախի շրջանում հաւաքուեցին հայ ու մալական փախստականներից խմբեր եւ պատրաստւում էին յարձակուելու Հայաստանի վրա: Մայիս 21-ին, երբ ապստամբութիւնն արդէն ամէն տեղ համարւում էր ընկճուած, յանկարծ, Ղազախի կողմից, կարմիր դրօշակներով, առաջ շարժուեցին բոլշեւիկեան ուժեր եւ առանց կռւի մտան Իջեւան: Եկողներին միացան եւ որոշ քանակութեամբ տեղացիներ: Զօրքը չդիմադրեց: Բոլշեւիկները ձերբակալեցին ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասեանին, զօրքերի հրամանատար զօր. Բաղդասարեանին, Իջեւանի գաւառի ինքնավարութեան նախագահ Ն. Ջալէթեանին, Մ. Սարատիկեանին եւ ուրիշ պաշտօնեաներ ու սպաներ եւ տարին Բագու: Ապա անցան Դիլիջան եւ առանց արգելքի հանդիպելու գրաւեցին քաղաքը: Սակայն, չուտով օգնութեան հասան կառավարական զօրքեր ու կամաւորական խմբեր, որոնք, զինուած ժողովրդի հետ միասին, յարձակուեցին Թշնամու վրա, որը խուճապով դիմեց փախուստի թողնելով սպանուած իր պարապլուխ Ծակոբջանեանին: Այս առթիւ կուսակցութիւնները բաց թողին հետեւեալ հաւաքական կոչը.

«Հայաստանի քաղաքացինե՛ր, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարըղամիշի, Նոր-Բայազէտի խռովութիւններին հետեւեց Դիլիջանի գաւառը: Ներքին ոճրագործ տարրերի պետական դաւաճանութեան յաջորդեց արտաքին նոյնօրինակ տարրերի անհանդուրժելի արշաւանքը դէպի մեր երկրի խորքերը:

«Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները միացած՝ դիւային ծրագիրներ են որոճում Հայաստանի ազատութեան եւ անկախութեան դէմ: Հայ ժողովուրդը, որի ինքնորոշուած կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախութիւնը, պիտի արթուն պահապանի նման փայփայի ու պաշտպանի իր այնքա՛ն թանգ գնով նուաճած ազատութիւնն ու անկախութիւնը:

«Թո՛ղ հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդումը տայ կազմ ու պատրաստ դիմագրաւելու համար Հայաստանի անկախութիւնը բոլոր թշնամիների դէմ — ո՛վ, ո՛ր կողմից եւ ի՛նչ անուան տակ ուզում են Թող լինեն նրանք:

«Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, մի սիրտ մի հոգի դարձած պէտք է քո ոյժն ու աջակցութիւնը չխնայես մեր քաջարի բանակին եւ մեր կառավարութեանը անչեղօրէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում:

«Կեցցէ՛ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը:

«Կեցցէ՛ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը:

«Հայ ժողովրդ. կուսակց. Հայաստանի կենտր. կոմիտէ. Հայաստանի Սոց.-Դեմ. Բանւ. կուս. Երեւանի կոմիտէ. Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի խորհուրդ. Հայ. Անկուսակցականների Միութեան վարչութիւն»:

Իջեւան—Դիլիջանի դէպքերը վերջին օղակն էին բոլշեւիկների առաջ բերած ապստամբութիւնների շղթայի մէջ:

Ապստամբութեան հաշւեյարդարից յետոյ Երեւանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր-Բայազէտում եւ Դիլիջանում կազմւեցին արտակարգ դատարանները, որոնց յանձնւեց ձերբակալւածների դատը: Ընդհանուր առմամբ այս դատարանները գոնւեցին համբերատար ու ներող եւ բացառիկ դէպքերում միայն հանեցին մահապատիժներ, որոնց ընդհանուր թիւը 10 չի անցնում:

Մայիսեան խռովութիւնները վերջացան բոլշեւիկների ջախջախիչ պարտութեամբ: Այդ շարժումը Հայաստանի համար տւեց մի շարք ծանրակշիռ հետեւանքներ, որոնք ահագին նշանակութիւն ունեցան յետագայ դէպքերի վրա: Եւ առաջին ու ամենից աւելի ճակատագրական հետեւանքը պէտք է համարել հայկական բանակի բարոյալքումն ու քայքայումը: Արդէն ըմբոստութեան դէպքերի պատմութիւնից էլ երեւաց, որ շարժումը, ընդհանուր առմամբ, զինւորական էր. բոլշեւիկներին յաջողւել էր մուտք գործել զօրամասերի մէջ, իրենց կողմը քաշել զինւորների մի մասը եւ այսպիսով բաժանում ու թշնամութիւն մտցնել բանակի մէջ: Քաղաքացիական կռիւների ընթացքին զօրքը կատր-կատր եղաւ. մի մասը գործօն աջակից էր բոլշեւիկների, միւսը՝ կռւում էր նրանց դէմ. մի ահագին զանգւած էլ տատանւում եւ «չէզոքութիւն» էր պահպանում: Պետականութեան գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, աւելի եւս թուլացաւ:

Բոլշեւիկեան ապստամբութեան հաշւեյարդարը զուգադիպեց Մայիս 28-ին, անկախութեան տարեդարձին, որը տօնւեց արտակարգ հանդիսաւորութեամբ, ամբողջ Հայաստանում, բայց, մանաւանդ, Երեւանում:

Քաղաքը զարդարւած էր առանձին շքեղութեամբ: Խորհրդարանը, դիմնազիայի նոր շէնքը, քաղաքապետարանը, պետական հիմնարկութիւնները ու մասնաւոր տները թաղւած էին ծառերի ոստերի ու ծաղիկների, դրօշների ու դրօշակների մէջ: Աբովեանի վրա կանգնած էր յաղթական շքեղ կամար: Փողոցների ու շէնքերի զարդարանքը ստանձնել էր ակադ. Ա. Թամանեանը իր

օդնականներով: Կուսակցութիւնները բաց էին թողել բոլշեւիկների դաւաճանութիւնը դատափետող եւ Միացեալ ու Ազատ Հայաստանի անկախութիւնը յաւերժող թուղթիկներ:

Հայաստանի զանազան կողմերից եկել էին բազմաթիւ պատգամաւորութիւններ: Ժողովրդական կուսակցութեան կենտր. կոմիտէն Թիֆլիսից Երեւան էր ուղարկել Սամ. Ճարուխեանին եւ Լէոյին՝ անկախութեան հանդիսաւորութիւններին ներկայ գտնուելու համար: Հանդէսին մասնակցում էր եւ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը:

Արհեստակցական Միութիւնների Միութիւնը, դպրոցները, որբանոցները, անհաշիւ բազմութիւն գիւղերից ու քաղաքից՝ վաղ առաւօտեանից լեցւել էին փողոցները: Առաւօտեան հանրապետական մաղթանքից ու զօրահանդէսից յետոյ տեղի ունեցաւ զօրամասերի շքերթը. հետեւակ շարքերը, այրուձին, հրետանին՝ խլելով ներկաների ցնծագին ծափահարութիւնները: Ապա անցան արհեստակցական միութիւնները իրենց դրօշակներով ու նշաններով, բոյ-ակաուտները, աշակերտները, որբերը, գիւղացիական խմբերը: Մէջ ընդ մէջ շարժւում էին բեռնակիր ինքնաշարժներ զանազան խորհրդանշաններով, թրակտորներ, գիւղական սայլեր, դուքաններ, կենդանի պատկերներ:

Մինչեւ ուշ գիշեր քաղաքը հրճւանքի մէջ էր: Երեկոյեան՝ հրաւառութիւն: Ցերեկը գիմնազիայի նոր շէնքի ընդարձակ եւ ճաշակով զարդարւած սրահում տեղի ունեցաւ հրապարակային ժողով-հանդէս, որին հրաւիրւած էին օտար պետութեանց ներկայացուցիչները, կառավարութեան եւ խորհրդարանի անդամները, բարձր հրամանատարութիւնը, բազմաթիւ պատւիրակութիւններ ու պետական-հասարակական գործիչներ: Երեկոյեան նոյն սրահում կազմակերպւեց պրական-երաժշտական շքեղ երեկոյթ եւ պարահանդէս:

Փառահեղ հանդէսներ կատարւեցին եւ գաւառներում: Ալեքսանդրապոլում, բազմահազար ժողովուրդը, համքեարութիւնները, կազմակերպւած բանուորութիւնն ու գիւղացիութիւնը մեծ խանդավառութեամբ տօնեց անկախութեան տարեդարձը: Քաղաքը ամբողջ զարդարւած էր եռագոյն դրօշակներով, դորգերով, կանաչով ու պատշաճ նշանաբաններով: Հսկայ թափօրը կայարանից, կտրելով քաղաքը, անցաւ կանգնեց քաղաքային ինքնավարութեան շէնքի առջեւ, ապա գիմեց դէպի նահանգապետարանը, Հ. Ց. Դաշնակցութեան ակումբը: Այստեղից շարժւեց Կազաչի Պոստ, ուր սպասում էր գինուորութիւնը: Այստեղ Գարեգին եպ.-ը կատարեց հանդիսաւոր մաղթանք, որից յետոյ տեղի ունեցան զօրահանդէս և սկաուտական խաղեր: Թափօրի ժամանակ ընդհանուր ուշադրութեան եւ խանդավառ ծափերի առարկայ էր Մայր Հայաստանը խորհրդանշող ինքնաշարժը, — Հայաստանը ներկայացնող մի օրիորդ, սուրը ձեռքին կանգնած, կողքին՝ հրացանաւոր հայդուկ, մէջտեղը՝ կռանը ձեռքին մի զարբին՝ սալի առջեւ գուքանը կոփելիս: Մայր Հայաստանի յետեւից գնում էին գիւղացիներ՝ երեք լուծ եզով գուքանը առջեւից, հոովելի երգով: Ապա հետեւում էր Ջուլհականոցի սայլը՝ մանող ու գզող աշխատաւորուհիներով: Երեկոյեան քաղաքը հրաւառւած էր: Ժողովրդի համար

կազմակերպած էին ձրի դասախօսութիւններ, շարժապատկերի ներկայացումներ, ըրօսանք քաղաքային պարտէզում:

Նոյն խանդավառութիւնն ու հանդիսաւորութիւնը եւ Վաղարշապատում: Քաղաքը պճնազարդուած էր գոյնզգոյն: Քաղաքի հրապարակում եւ ճեմարանի դրան առջեւ կանգնեցուած էին ազատութեան կամարներ: Շրջակայ գիւղերից ժողովուրդը խումբ-խումբ, դրօշակներով ու երգերով, լեցուել էր քաղաք: Զօրք, ժողովուրդ, բանւորներ, աշակերտներ, հիմնարկութեանց ներկայացուցիչներ խռնւում էին էջմիածնի բակում: Հանդիսաւոր պատարագից ու հանրապետական մաղթանքից յետոյ եղան ողջոյններ ու ճառեր եւ կատարուեց զօրահանդէս: Ցետոյ քաղաքի զանազան մասերում տեղի ունեցան մխիթնդներ, չքերթ, ժողովրդական հանդէսներ ու ճաշկերոյթ: Երեկոյեան՝ հրաւառութիւն:

Համաժողովրդական հանդէսներ կատարուեցին եւ Կարսում, Նոր-Բայազէտում, Դիլիջանում, Ղարանլուխում, Փարաքարում, Արդահանում, Թզդիրում, Ջալալ-Օղլիում, Քեչիշքեանդում — ամէն տեղ: Երբե՛ք, մինչեւ այդ, Հայաստանի ժողովուրդը նման ուրախութիւն չէր յայտնաբերել, երբե՛ք «Մեր Հայրենիք»-ը չէր հնչել այնպէս անկեղծ, լիաթոք ու խրոխտ, Հայաստանի բոլոր ծայրերում, ամէնքի բերանից լսւում էր —

Մեր Հայրենիք, ազա՛տ, անկա՛խ,
Մեր թշնամուց ազատւած...

⁂

Մայիսեան խռովութիւնները վերջացան բոլշեւիկների ջախջախիչ պարտութեամբ՝ ծանր վնաս հասցնելով Հայաստանի նորաստեղծ պետականութեան:

Այնուհետեւ բոլշեւիկ պարագլուխների մէջ ծայր տւեց ինքնաքննադատութիւնը եւ փոխադարձ մեղադրանքը: Այսօր իսկ բոլշեւիկների մէջ ընդհանուր կարծիք գոյութիւն չունի մայիսեան խռովութիւնների մասին:

Հայաստանի պատմութեան համար խիստ հետաքրքրական են այն մերկացումները, որ մայիսեան խռովութիւնների հեղինակները արին՝ բացատրելու կամ արդարացնելու համար իրենց ապստամբական ձեռնարկների անյաջողութիւնը:

1932 թւին Երեւանում լոյս տեսաւ մի հատոր, «Առաջին Մասայական-Յեղափոխական չարժումները» անունով եւ որ չուտով արգելքի տակ դրւեց, իբրեւ հակայեղափոխական հրատարակութիւն: Այդ հատորում առաջ են բերւած մայիսեան բոլշեւիկեան խռովութիւններին վերաբերող վաւերական նիւթեր, նամակներ ու տեղեկագրեր, որոնք վարկաբեկիչ փաստերով ներկայացնում են այն օրերի հայ բոլշեւիկների դաւադիր գործունէութիւնը Հայաստանի Հանրապետութեան դէմ: Պատմութեան այդ սեւ էջը պատկերացնենք այստեղ հէնց իրենց՝ բոլշեւիկների խօսքերով, որոնք որեւէ արդարացման տեղ չեն թողնում:

Բոլշեւիկների պարտութեան գլխաւոր պատճառը այն անվիճելի փաստն էր, որ բոլշեւիզմը հայ ժողովրդի մէջ ոչ մի հող չունէր: Հայ ժողովուրդը չէր համակրում բոլշեւիկներին, բացի այն սակաւաթիւ հայերից եւ օտարներից, որոնք բոլշեւիկութեան մէջ Ռուսաստանն էին տեսնում: Հայաստանի առարկայական եւ ենթակայական պայմանները հակառակ էին խորհրդային իշխանութեան:

Իսկ ինչպէ՞ս են բացատրում իրենք բոլշեւիկները իրենց պարտութիւնը:

Յունիս 1-ին, Ալեքսանդրապոլի բանտից Թիֆլիսի Երկրային կոմիտէին ուղարկած մի զեկուցման մէջ, Մուսայէլեանը, ապստամբութեան դէպքերը մանրամասնօրէն պատմելուց յետոյ, անյաջողութեան պատասխանատուութիւնը ձգում է Արմէնկոմի եւ Ալեքսանդրապոլի բոլշեւիկների վրա: Նա գրում է.— «Արմէնկոմը, որի գործունէութեան մասին ես առանձին զեկուցում եմ տալու, դժբախտաբար, այդպիսի մի սուր մոմենտում բաւականաչափ գործունէութիւն չցուցադրեց: Վերջապէս, մայիսի 7-ին եւ 8-ին մեր հարցապնդման հետեւանքով, Արմէնկոմից մեզ մօտ եկան բժ. Մելքոնեանը եւ Իրաստամատ Տէր Սիմոնեանը, որոնք ծանօթանալով դրութեանը՝ վաւերացրին վճռականապէս հանդէս գալու մեր որոշումը: Զօրքերը մարտական դրութեան մէջ դնելով՝ մայի 10-ին մենք Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի անունից քաղաքը յանձնելու համար վերջնագիր ներկայացրինք իշխանութիւններին: Քաղաքը յանձնուեց առանց մի դնդակ արձակելու:

«Սրանից յետոյ է, որ մեզ մօտ սկսւում է ներքին տրաղեդիան. տեղական ընկերները ստեղծարար, օրգանական աշխատանքներին բացարձակ անընդունակ դտնուեցին: Աշխատանքը վաղօրօք բաշխած էր ընկերների մէջ, սակայն իշխանութիւնը գրաւելուց յետոյ, նրանցից ոչ մէկը դրեթէ մասը մատին չխփեց իրեն դիրքերում: Ամբողջ աշխատանքը գլխաւորապէս ինձ վրայ էր բարդուել: Ես ֆիզիքապէս ի վիճակի չէի բոլորը ինքս անելու եւ միաժամանակ, իբրեւ կարմիր զօրքերի հրամանատար, տանելու իմ յատուկ աշխատանքը: Իսկ Երեւանի կողմից արդէն Թշնամու ուժերը չարժուում էին: Արմէնկոմի անդամները համարեա ոչինչ չէին անում: Ամբողջ Հայաստանում զօրքերը դրեթէ մեր կողմն էին, բայց տեղերում ուժեղ ձեռքեր չդտնուեցին: Ամենուրեք պահանջւում էր իմ ներկայութիւնը, իսկ Ալեքսանդրապոլը թողնել՝ ինձ թոյլ չէին տալիս:

«Կառավարութիւնը մեր դէմ զինել էր դրեթէ բացառապէս տաճկահայերին, գաղթականներին, մաւզէրիստներին և կուսակցական Դաշնակներին: Մեր պաբենաւորման կոմիտէն ոչինչից ոչինչ չէր անում: Իշխանութեան ներքին ճգնաժամը, պաբենաւորման բացակայութիւնը եւ այլ բազմազան պատճառներ ստիպեցին համաձայն Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի որոշման քաղաքն առանց կուի յանձնել»:

Որքան եւ երկար լինի, մենք առաջ կը բերենք նաեւ հետեւեալ երկու վաւերագրերը.

Առաջին վաւերագիրը Ալեքսանդրապոլի Կոմիտէի հետեւեալ նամակն է Հայաստանի Կոմիտէին՝ կազմած եւ ստորագրած Ալիս Նուրիջանեանի ձեռքով.—

«Կոմունիստական կուսակցութեան Ալեքսանդրապոլի կոմիտէն մայիսի 1–ից 10–12 օր առաջ, հետեւապէս, Բագուն գրաւելուց առաջ, ընդունեց մայիս մէկեան լոզունգները. այդ թուում էին «Կեցցէ՛ Խորհրդային Հայաստանը», «Կորչի՛ կոտորածներ սարքող կառավարութիւնը» եւայլն: Ցենւելով բանւորական մեծամասնութեան, մանաւանդ, երկաթուղու վրա, կոմիտէն որոշեց առանձին երթով դուրս գալ՝ ուժերի հաշւառման համար: Ազրբէջանում տեղի ունեցած յեղաշրջումը վաղօրօք ապահովեց մեր յաջողութիւնը. չնայած ճնշումներին եւ զուսպ նախազգուշացումներին, տենդային աշխատանքը կատարւում էր: Ապրիլի 30–ին ձերբակալեցին ընկերներից մէկին, որին մի քանի ժամից ազատ արձակեցին, նախազգուշացնելով «Կորչի՛ Դաշնակների կառավարութիւնը» եւ միւս լոզունգների անթոյլատրելիութեանց մասին: Միւսներին ձերբակալելու փորձ եւս կատարուեց, սակայն նրանց չգտան: Մայիս մէկի ելոյթը մի զօրաւոր էր Ալեքսանդրապոլի պրոլետարիատի եւ զօրքի համար, որ դուրս եկաւ բոլշեւիկեան դրօշակի տակ եւ Հայաստանի պատմութեան մէջ չտեսնւած լոզունգներով: Մեր դէմ էին մի բուռը սպեկուլեանտներ Դաշնակների դրօշակների տակ՝ 200 մարդուց ոչ աւելի: Մեր մասան 5,000–ից աւելի էր: Դաշնակների տապալումը կատարեալ էր: Սկզբում ամէն ինչ ընթանում էր առանց միջադէպերի, սակայն Ալեքսանդրեան փողոցի անկիւնում մաւզերիստ Դաշնակցականներից մէկը Խորհրդային Ազրբէջանի հասցէին պրովոկացիա արեց եւ դրանով վրդովեցրեց զինւորներին եւ բանւորներին: Դրա հետեւանքն այն եղաւ, որ հէնց տեղն ու տեղը՝ Դաշնակների Բիւրոյի մուտքի առաջ զինւորները ծեծեցին Դաշնակ վարժապետ–սպեկուլեանտ Մացոյին: Դրան իբր պատասխան՝ մաւզերիստները երկու դնդակ արձակեցին եւ թեթեւ վիրաւորեցին հէնց իրենցից՝ Դաշնակներից մէկին*): Մեր կողմից նոյնպէս երկու դնդակ արձակուեց օդի մէջ:

«Շնորհիւ զինւորների եւ բանւորների դիտակից վերաբերմունքին, որով նրանք ննջարկւում էին բոլշեւիկների կոմիտէի պահանջներին, միջադէպը սպառուեց եւ մաւզերիստների պրովոկացիան չյաջողուեց: Զինւորների փորձը դիմել դէպի բանտ ձերբակալւածներին ազատելու համար՝ չիրագործուեց դարձեալ կուսակցութեան կոմիտէի պահանջի հետեւանքով, որ խուսափում էր Դաշնակների նոր պրովոկացիայից: Ցոյցը, Աւիսի եւ միւսների ճառերից յետոյ, ժամը 4–ին, կայարանի մօտ ցրուեց, մինչդեռ երթն սկսւել էր առաւօտեան ժամը 10–ին: Անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի յաջողութիւն կուսակցութիւնը չէր սպասում նոյնիսկ այդ օրն առաւօտեան: Ընդունւած էին մեր առաջարկութիւն–պահանջները՝ ձերբակալւածներին ազատ արձակելու, պատգամաւորների Խորհուրդ կազմակերպելու եւ Խորհրդային Ազրբէջանը ողջունելու մասին: Ողջոյնի հեռագիրը կազմւած էր կոմունիստական եւ շատ սուր ոգով՝ յիշատակելով հայ մուսաւաթիստների խմբապետական կառավարութեան դէմ միասնօրէն կուելու մասին, Խորհրդ. Ազրբէջանի բանւորների, գիւղացիների եւ ասկեարների պատգամաւորների Խորհուրդը ող-

*) Գնդակ արձակողը բոլշեւիկներն էին: Ս. Վ.:

ջունելու մասին եւայլն: Բանաձեւն ընդունւում էր միաձայն, բուռն եւ երկարատեւ ծափահարութիւններով, «ուռա»յի բացագանչութիւններով: Եթէ այդ օրն իշխանութիւնը գրաւած չէր, այդ ոչ թէ այն պատճառով էր, որ մենք անզօր էինք, այլ միայն զինուորական մասսայի անբաւարար կազմակերպւած լինելու եւ թալաններից երկիւղ կրելու պատճառով:

«Նոյն գիշերը ձերբակալւած է ընկերներից մէկը, մի քանիերի մօտ էլ են եղել, բայց նրանց տներում չեն գտել: Այժմ դրութիւնը այսպէս է: Այդ օրը բոլոր զինուորական մասերը կազմել են գնդի կոմիտէներ եւ ներկայացել ընկ. Մուսայէլեանի զրահապատ գնացքը՝ բանակցութիւնների համար: Հաստատւած է ամենաստոր կապը: Ամբողջ գործը Մուսայէլեանի զրահապատի հետ մեր տրամադրութեան տակ է: Աւելին. քաղաքային եւ երկաթուղային միլիցիայի մեծագոյն մասը եւս մեր ձեռքն է: Գործի մէջ կարգապահութիւնը պաշտպանւում է հէնց իրենց իսկ ղեկավարների միջոցով, ընդ որում աւելի լաւ, քան մինչեւ այժմ: Հնարաւորութիւն չկայ կանգ առնելու բոլոր այն մանրամասնութիւնների վրայ, որոնք բնորոշում են Դաշնակների կուսակցութեան կատարեալ սնանկութիւնը եւ մեր կուսակցութեան հսկայական բարոյական ոյժը եւ ֆիզիքական գօրութիւնը:

«Ամենայն դէպս իշխանութիւնը գրաւելու խնդիրը — դա մեր ցանկութեան հարցն է — ոչ թէ օրւան, այլ րոպէի խնդիր է: Դաշնակների այն պրովոկացիան, թէ իբր Խորհրդային Ադրբէջանի կողմից Հայաստանի դէմ պատերազմ է սկսւած, որ իբր թէ նպատակ ունի հայ բոլշեւիկների հետ միացած՝ ոչնչացնելու բոլոր հայերին, ոչ մի յաջողութիւն չունեցաւ եւ այժմ էլ չունի: Պրովոկատորները քիչ էր մնում ծեծի ենթարկէին կանանց եւ զինուորների ձեռքով: Այժմ Դաշնակները մտածում են զինաթափ անել զրահապատը: Վերջինս ռազմական դրութեան մէջ է գտնւում, ամբողջ օր ու գիշեր հերթապահութիւն կայ. որոշակի յայտնւած է՝ զրահապատը չենք յանձնելու: Զրահապատի զինուորներն երդւել են մինչեւ վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել:

«Գործը ամէն րոպէ կարելի էր ուժի կանդնեցնել մէկ մարդու նման: Զրահապատի զինաթափման փորձը կը լինի մի մարտակոչ, որ մենք ամէն րոպէ պատրաստ ենք ընդունելու: Հայաստանի կոմիտէի որոշումը սկսել Ղազախի գաւառից, իսկ Ալեքսանդրապոլը դեռ սպասի, մեզ դնում է անել դրութեան մէջ: Մենք ամէն ջանք գործ ենք դնում խուսափելու համար կոնֆլիկտից — ձերբակալութիւններից, զրահապատը զինաթափ անելուց, տերորներից եւայլն: Սակայն, հակառակ սպասածին, եթէ այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պէտք է ընդունւի: Այս է Ալեքսանդրապոլի կոմիտէի անշեղ որոշումը. մենք թոյլ չենք տայ գլխատել այն մասան, որի ուժի եւ կարողութեան վրայ յենւում ենք հէնց ինքներս:

«Մենք խնդրել ենք տալ մեզ հրահանգներ — ինչպէ՞ս վարւենք: Հայաստանի կոմիտէի ամէն մի որոշում մենք պատրաստ ենք կատարելու, սակայն, նախազգուշացնում ենք Հայաստանի կոմիտէին. եթէ վերջինս մեղանից պահանջելու լինի՝ ձերբակալութիւններին, գաղտագողի տերորին, զրահա-

պատի դիմաթափման եւայլն չպատասխանել իշխանութիւնը զրաւելով, ապա մենք մեզանից վերցնում ենք ամէն մի պատասխանատուութիւն այն անխուսափելի հետեւանքների նկատմամբ, որ պէտք է որ նախատեսնի եւ Հայաստանի Կոմիտէն: Հայաստանի Կոմիտէն Ռուսաստանի Մորհրդային իշխանութեան եւ պատմութեան առաջ պատասխան պիտի տայ կուսակցութեան կազմակերպութեան ջախջախման եւ իշխանութեան զրաւումը մէկ ամսով, դուցէ եւ երկու ամսով յետաձգելու համար: Մենք խնդրում ենք Հայաստանի Կոմիտէին այսօր եւ եթէ պատասխան տալ մեզ՝ համաձա՞յն է արդեօք նա մեր բռնած դիրքին, այն է՝ մենք ամէն ջանք գործ ենք դնում էսցէսները կանխելու համար, մինչեւ ձեղնից հրահանգներ ստանալը, իսկ մասսայական ձերբակալութիւնների, անկիւնից կատարուող տերորների եւ, առաւել եւս, զրահապատը զինաթափ անելու փորձերի դէպքում, մենք ընդունում ենք մարտակոչը եւ զրաւում ենք իշխանութիւնը: Եթէ Հայաստանի Կոմիտէն սրան համաձայն չէ, խնդրում ենք անյապաղ կերպով հրահանգներ տալ:

«1· Եթէ դուք լիովին համաձայն էք մեր տեսակէտին, ապա յայտնեցէք ուղիղ գծով — «Միշան առողջ է»:

«2· Եթէ դուք կարծում էք, թէ անհրաժեշտութեան դէպքում պէտք է յանձնել զրահապատը, կազմակերպութիւնը ցրել տալ և մինչև ձեր հրահանգներն ուղարկելը ելոյթ չունենալ, ապա նոյնպէս ուղիղ գծով ասացէք՝ «Միշան վախճանուեց»:

«3· Աւիսը — Գրիշան է:

«4· Զրահապատը — հիւանդանոց:

«5· Ապստամբութիւնը — դեղօրայք:

«6· Պարենաւորումը քիչ է, չի բաւականացնի իշխանութիւնը զրաւելու դէպքում, մինչեւ Ռուսաստանից ստանալը — անմիջապէս փող փոխադրի՛ր:

«7· Տասը–տասնհինգ օր լիովին կը բաւի հացը եւ այլ մթերքներ — փողը փոխադրւած է: Մնացածն ամբողջ այնպէս կազմեցէք, որ մօտաւորապէս կարելի լինի հասկանալ: Այսօր երեկոյեան ժամը 9–ից մինչեւ 10–ը դուք ուղիղ գծով կանչեցէք Ալեքսանդրապոլից այն ընկերոջը, որին դուք գիտէք, եւ խօսեցէք յիշեալ ութ կէտերի համաձայն: Եթէ ուղիղ գծով չյաջողւի, հեռագիր տուէք Ալեքսանդրապոլ՝ ընկ.·.— (անունը չկայ· Ս· Վ·) հասցէով նոյն կէտերի համաձայն:

ԱԻԻՍ»

Ալեքսանդր· Կոմիտէի կնիքը,
3–ն մայիսի, 20 թ·»

Աւիսի այս թեթեւսոլիկ ու պարծենկոտ գրութեան վրայ էր, որ Արմէնկոմը Դր· Տէր Սիմոնեանին եւ Արտ· Մելքոնեանին ուղարկեց Ալեքսանդրապոլ:

Պէտք է համաձայնւել Բորեանի հետ, որ Արմէնկոմը իսկապէս որ անջիղ եւ ղեկավարելու անընդունակ մարդկանցից էր բաղկացած: Արմէնկոմը,

1919-ի գաղտնի ժողովում կազմված էր հետեւեալ անձերից — Մ. Կասեան, Ա. Մռաւեան, Աւետ Նուրիջանեան, Մ. Ալլահվերտեան, Դան. Շահվերտեան, Դ. Տէր Սիմոնեան, Հ. Կոստանեան եւ Ղ. Ղուկասեան:

Ահա եւ Արմէնկոմի սեփական բացատրութիւնները ապստամբութեան պարտութեան մասին:

«Ընկերնե՛ր, — գրում էր Արմէնկոմը Կովկասեան երկրային կոմիտէին*), — Արմէնկոմը կամենում էր Դորայի միջոցով ուղարկել գրաւոր զեկուցում Հայաստանի դէպքերի մասին, բայց որովհետեւ բոլոր մեկնողներին հետեւում էին, այդ պատճառով այն ժամանակ չյաջողուեց այդ անել: Ուղարկում ենք հիմա:

«Ազրբէջանի դէպքերից, այլ եւ Հիւսիսային Կովկասում մերոնց տարած յաղթանակներից յետոյ, այստեղ տրամադրութիւնը խիստ փոխուել է մեր օգտին:

«Հաշուի առնելով այդ ամէնը եւ նկատի ունենալով Հայաստանի կազմակերպութիւնների կոնֆերանսի որոշումը՝ Հայաստանում, Ղորհրդային զօրքերը մօտենալիս, այլ եւ հարեւան հանրապետութիւններում յեղաշրջումներ լինելուց յետոյ իշխանութիւնը գրաւելու նպատակով ելոյթ ունենալու մասին, Արմէնկոմը սկսեց այդ ուղղութեամբ աշխատանք կատարել:

«Շարժման սկզբի համար իբրեւ բաղա նշանակուած էր Ղաղախը եւ դրա հետ միաժամանակ ելոյթները պէտք է սկսէին ամենուրեք: Արմէնկոմը կանգնեց հէնց այդ տեսակէտի վրայ, որովհետեւ նախ՝ Ղաղախը կապած էր Ղորհրդային Ազրբէջանին, իսկ միւս կողմից՝ նկատի ունենալով ղազախցիների յեղափոխականութիւնն ու տոկունութիւնը: Այդ նպատակով համապատասխան հրահանգներ ուղարկուեցին այնտեղ: Առաջարկուած էր այնտեղից եկած ընկերոջը կազմել Ռազմ. Յեղկոմիտէ, մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը եւ պատրաստուել ելոյթի՝ կապելով միաժամանակ Ազրբէջանի ընկերների եւ Ազրբէջանի միջոցով այն կողմի հետ: Նոյնը կատարուած էր եւ Ղարաբաղի վերաբերմամբ (մօտաւորապէս ապրիլի վերջին), բայց ընկերների ուղարկելու գործը ձգձգուեց:

«Մայիսի մէկի ելոյթի համար մենք պատրաստւում էինք ամենուրեք. մեզ համար այդ օրը խաղաղ ցոյցի միջոցով մեր ուժերի զօրատեսի օր պէտք է հանդիսանար:

«Մայիս մէկեան ցոյցերի յաջողութիւններն ամենուրեք ակնյայտօրէն ցոյց տուին, թէ որպիսի խոր արմատներ է ձգել կուսակցութիւնը լայն մասսաների՝ այդ թւում նաեւ գիւղատրական մասսաների մէջ: Եղել էին տեղեր, որտեղ բնակչութիւնը եւ զօրքը բացառապէս մեր դրօշակի տակ էին հաւաքւել (Ղարսքիլիսա, Սարըղամիշ):

«Այդ օրը (մայիս մէկին) իշխանութիւնը գրաւելու խնդիրը չէր դրւած մեր առաջ, սակայն, այդ օրւանից արդէն պարզ էր, որ այդ հարցը ամենամօտ ապագայի հարցն է հանդիսանում: Այդ ուղղութեամբ տեղային աշխատանք

*) Այդ երկրային կոմիտէն Կովկասի կոմունիստական բոլոր գործերը վարող վերին մարմինն էր, որ ենթարկւում էր Մոսկուային եւ որին ենթարկւում էին Հայաստանի, Վրաստանի, Ազրբէջանի եւ Կովկասի միւս մասերի համապատասխան կազմակերպութիւնները:

սկսւեց եւ այդ իսկ նպատակով կազմակերպութիւնները ռազմական դրութեան մէջ էին դրւած:

«Մայիսի երկուսին մենք Թիֆլիս ուղարկեցինք ընկ. Հ. Հայկազին, որպէսզի արտակարգ կերպով այստեղ ուղարկեն Ս. Կ. (ասեանին) եւ Ա. (սքանազ Մռաւեանին), արդէն պատրաստւելով Հայաստանում հաստատել խորհրդային իշխանութիւն, որովհետեւ, կրկնում ենք, հաւատացած էինք, որ դա ամենամօտ ապագայի խնդիր է:

«Մայիսի երկուսին մենք տեղեկութիւն ենք ստանում Ալեքսանդրապոլում կատարւած մայիս մէկեան ոճի մասին, այլ եւ ընկ. Աւիսի լրիւ անունով ստորագրած ողջոյնի մի ընդարձակ հեռագիր Բադու ընկ. Նարիմանովի անունով: Քանի որ մէկ կողմից ինքն Արմէնկոմը ողջոյնի հեռագիր էր ուղարկել Մորհրդ. Ազրբէջանին դեռ եւս մայիս մէկին եւ միւս կողմից՝ ի նկատի ունենալով Աւիսի հեռագրի իւրայատուկ տողը, որ անընդունելի էր տակտիկական տեսակէտից, Արմէնկոմը որոշեց այդպիսին չուղարկել եւ ամէն կողմից ստացւած տեղեկութիւնների հիման վրա կազմել արդէն ընդհանուր բնոյթ կրող մի ողջոյն:

«Այդ արւած է:

«Մայիս 3–ին մենք ընդարձակ զեկուցում ստացանք Ալեքսանդրապոլի դէպքերի մասին:

«Ալեքսանդրապոլի բոլոր փաստաթղթերի պատճէնները սրա հետ ուղարկում ենք: Զեկուցման մէջ մանրամասնօրէն հաղորդւում էր այնտեղ՝ Ալեքսանդրապոլում տիրող դրութեան, ղրահագնացքի մասին եւայլն: Այդ զեկուցումն, ինչպէս ինքներդ էլ կը տեսնէք, լի է հակասութիւններով եւ բաւական տարօրինակ տպաւորութիւն է թողնում:

«Ելոյթի տարերայնութիւնն ու անկազմակերպութիւնն արդէն երեւում են հէնց այն բանից, որ նրանք իրենք են գրում, թէ՝ «առաւօտեան այդպիսի յաջողութեան չէինք սպասում»: Պարզ է, որ եթէ նրանք յոյս չէին ունեցել մայիս մէկեան ցոյցի յաջողութեան վրայ, ապա եւս առաւել խօսք անգամ չէր կարող լինել արդէն իշխանութիւնը գրաւելու նպատակով յաջող եւ կազմակերպւած ելոյթ ունենալու մասին:

«Այստեղ ամբողջ բանակն ու բնակչութիւնը մէկ անգամից անցան նրբանց կողմը եւ որ Դաշնակների մօտ երկու հարիւր մարդ կար, իսկ նրանց կողմում՝ հինգ հազար: Եթէ նոյնիսկ «իշխանութիւնը չէր գրաււած, ապա ոչ այն պատճառով, որ մենք անզօր էինք, այլ զինւորական մասանների անկազմակերպութեան պատճառով եւ թալաններից երկիւղ կրելուց»: Ցանկարծ, մէկ անգամից ամբողջ «զօրքն ու ղրահապատը մեր տրամադրութեան տակ են անցնում եւ այդ պատճառով այստեղ իշխանութիւն գրաւելու հարցը մեր ցանկութեան խնդիրն է եւ ոչ թէ օրւան այլ բոպէի հարցը: Իսկոյն եւ եթէ, մի օրւան ընթացքում, կազմակերպւած զինւորներն արդէն երդւեցին մինչեւ վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել: Թէ ինչպէս նրանք այդ իրագործեցին, ձեզ, ընկերներ, արդէն յայտնի է: Այնուհետեւ, այդ բանն ընդգծում ենք, ընկերներ, որ Ալեքպոլում նրանք իշխանութիւնը ձեռք ձգե-

լու խնդիրը կապում էին ձերբակալութիւնների, անկիւնից կատարուող տեղորների հետ: Միաժամանակ հաղորդում են, թէ պարէնը շատ քիչ է, իշխանութիւնը դրաւելու դէպքում մինչեւ Ռուսաստանից ստանալը չի բաւականացնի եւայլն:

«Առաջինը, ուշադրութեան առնելով նրանց այսօրինակ հաղորդագրութիւնները, ընկեր Աւիսի մշտական յափշտակիլը, որ մինչեւ արկածախընդրութեան էր հասնում (մենք նկատի ունինք հինգ ամիս սրանից առաջ Բագուում եղած նրա ելոյթը, որով նա հանուր աշխարհին աղդարարում էր կոմունիզմի լիակատար յաղթանակը Հայաստանում եւ Դաշնակների անանկութեան մասին) եւ որ այդ բոլորը նրանք կատարում էին զրահապատի մէջ նըստած, այսինքն՝ լարուած, ներվային դրութեան մէջ, նրանց վախը ձերբակալութիւններից, ճնշումներից եւ «անկիւնից կատարուող տէրորից», — մենք հաւատացած էինք, որ այդ բոլորը չափազանցուած է, եւ որ, նոյնիսկ այնտեղ ինչ որ լինի, ելոյթի խնդիրը արդէն կաշւի խնդիր է հանդիսանում նրանց համար, սեփական կեանքը փրկելու մի հարց եւայլն:

«Դեռ աւելին. մենք հաւատացած էինք, որ նրանց յաջողութիւնը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողութիւնները, քանի որ անջատ ելոյթները փոշիացման եւ պարտութեան կը հասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ ունենալ եւայլն եւայլն:

«Ազդանշան տուողը Ղազախը պէտք է լինէր, ահա Արմէնկոմի նախագիծը: Այս որոշումն էլ տեղեկացուած էր ալեքսանդրապոլցիներին եւ առաջարկուած էր նրանց սկսած գործը անհիւանդապին կերպով լիկվիդացիայի ենթարկել ըստ կարելւոյն, կամ գոնէ ձգձգել:

«Ալեքսանդրապոլի բոլշեւիկները չցանկացան հաշւի առնել այդ: «Ինչո՞ւ Ղազախը եւ ոչ Ալեքպոլը» — ահա նրանց պատասխանը. «Մենք նոյնիսկ հակառակ ենք սկզբից կապ հաստատելուն»:

«Նրանք առաջնութեան մասին էին դրել խնդիրը, մօտենալով այն հարցին, ըստ երեւոյթին, սպորտիւ տեսակէտից:

«Նրանք սկսում են ռմբակոծել մեզ իրենց պահանջներով ելոյթին սանկցիա տալու մասին, մինչդեռ բանից դուրս եկաւ, որ այդ բանը նրանք արդէն արել են եւ այժմ այլեւս ոչ մի կասկած չկայ, որ այդ հաղորդագրութիւնները մեզ ուղարկելիս են եղել հէնց այնպէս, նոյնիսկ դիտաւորեալ, որովհետեւ բնաւ հաշւի չառնելով Արմէնկոմին եւ բացայայտօրէն նախատեսելով իրենց ելոյթի անյաջողութիւնը՝ նրանք դիտմամբ ռմբակոծում էին մեզ իրենց պահանջներով, որպէսզի հետեւանքների մեղքը մեզ վրա ձգեն:

«Եւ այսպէս ահա՝ Յորհրդային իշխանութիւն, թէպէտեւ բաւականին իւրայատուկ (ապստամբութեան պարագլուխները 12 օր նստած են զրահապատի մէջ եւ յամառօրէն չեն իջնում այնտեղից): Պարզ է, որ եթէ նրանք լուրջ տրամադրութիւններ ունենային, ապա դէպքերի բնական ընթացքով պէտք է իրենց յաջողութիւնը զարգացնէին եւ ծաւալէին մօտակայ շրջանների հետ եւ նոյնիսկ առաջխաղացման դիմէին Երեւանի ուղղութեամբ:

«Ամսի 5ին գալիս է այնտեղից նրանց կողմից ուղարկուած մի ընկեր, եր-

կաթուղային մի բանւոր, որ իր բանաւոր զեկուցման մէջ արդէն ինֆորմացիա է տալիս իրերի դրութեան մասին, որ հիմնովին հակասում է ընկ. Աւթոսի հաղորդագրութիւններին: Այդ բանի վրա ուշադրութիւն է դարձրել ամբողջ Արմէնկոմը: Ի դէպ, նա ասաց, որ «այնտեղ ընկերները չափազանց ոգեւորւած են» եւայլն: Հէնց նա էլ բերել էր ալեքսանդրապոլցիների նամակը:

«Հէնց նոյն գիշերը, այսինքն՝ մայիսի 5-ին, մենք Ա.ի եւ Մ.ի*) ստորագրութեամբ կրկին մի հեռագիր ենք ստանում դարձեալ բացու ուղարկելու համար, որ մենք պէտք է ռատիոյով հաղորդէինք ընկեր Նարիմանովի անունով:

«Նման բովանդակութեամբ հեռագիր մենք այն պահին խոպան անընդունելի համարեցինք, մի հեռագիր, որ այն ժամանակ ստեղծւած պայմաններում անպայման պրովոկացիոն դեր էր խաղալու: Դա վերջնականապէս պիտի խորտակէր մեր կազմակերպութիւնները: Մի՛ մոռանաք, ընկերներ, որ մեզ յաղթեցին նրանով, որ անտանելի ծանր մթնոլորտ ստեղծեցին Ադրբէջանի չուրջը, ազդայնական թշնամանք առաջ բերին եւ Հայաստանի սահմաններում ամենուրեք հակամուսուլմանական ելոյթներ էին նախապատրաստում (դրա մասին տես ստորեւ): Այդ օրերին դրութեան տէրերն էին հանդիսանում սասունցի, զէյթունցի, վանեցի մաւզերիստներ, գլխաւորապէս տաճկահայերը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր հարկաւոր ալեքսանդրապոլցիներին այս ամէնը: Հեռագիրը որոշ տեսակի ռէկլամայի բնոյթ էր կրում, իսկ գործին խոչոր վնաս էր հասցնում, քանի որ առանց այն էլ մեր թշնամիները խօսում էին «Ջանգի Բասար-Բոյիւքվէդեան բոլշեւիկեան ելոյթների» մասին:

«Հէնց այդ միջոցին էլ Մ.–ից հրաման ստացւեց իր օգնականի անունով՝ Ղամարլուում կանգնած զրահապատի հետ միասին չարժւել դէպի Ալեքսանդրապոլ:

«Պարզ է, որ մենք գործ ունէինք արդէն կատարւած փաստի հետ եւ որոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպւած բնոյթ տալ եւ դիմանալ, մինչեւ այլ վայրերում գործողութիւնների սկսւելը, նոյնիսկ Երեւանում:

«Ուրիշ ելք մենք այլեւս չունէինք: Այդ նպատակով մի՛ւս օրը, այսինքն՝ մայիսի 6-ին, ուղարկեցինք այնտեղ ընկերներ Դ.–ին եւ Ա.–ին*), լայն լիազօրութիւն տալով նրանց եւ պարտաւորեցնելով, որ եթէ չի կարելի կասեցնել ապստամբութիւնը, որ անհրաժեշտօրէն պէտք էր անել, ապա միաժամանակ կապւել Ղարաքիլիսայի շրջանների, Չէղոք գօտու եւ յարակից շրջանների հետ:

«Այստեղ զինւորական մասերում աենդային աշխատանք էր կատարւում: Ընկերներից մէկին՝ Արմէնկոմի անդամի միջոցով այդ զինւորականների հետ, որոնք այդ ժամանակում կազմակերպւած էին՝ չարունակարար խորհրդակցութիւններ էին կազմակերպում:

«Կապ է հաստատւած Քանաքեռում կանգնած զօրամասի հետ, եւ երբ որ մայիս 7-ին Դ.–ից եւ հանգուցեալ Ա.–ից մենք գրութիւն ստացանք, որ

---

*) Ալիս եւ Մուսայէլեան:

**) Դրաստամատ Տէր Սիմոնեան եւ Արտաշէս Մելիքոնեան:

նրանք կանգնած են կատարած փաստի առաջ եւ խնդրում են ադիտացիա մղել ուղարկելիք զինուորական մասերում, այլ եւ թիկունք տալ իրենց Նոր-Բայազէտի շրջանում, Ելենովկայի ուղղութեամբ, երկուստեք համերաշխ գործողութիւնների համար, ապա մենք այդ ուղղութեամբ ինչ որ կարելի էր, անում էինք: Համապատասխան հրահանգով մենք Նոր-Բայազէտի շրջան ուղարկեցինք այժմ հանգուցեալ ընկեր Սարուխանեանին (նա մեկնեց 9-10-ին), որ ի կատար ածեց Արմէնկոմի առաջարկութիւնը եւ սկսեց գործողութիւնները:

«Անհրաժեշտ է նշել, որ Նոր-Բայազէտի շրջանի ուժեղ կազմակերպութիւնը, որի մէջ մտնում էին նաեւ զինուորականները, ապրիլի կէսերին ջախջախուած էր եւ ընկերները ընկ. Սարուխանեանի գլխաւորութեամբ եւ մի ըսպայի հետ արտաքսուել էին Նոր-Բայազէտի շրջանի սահմաններից: 6-ի գիշերը լոյս 7-ին այստեղ սկսուեցին բռնութիւններ եւ չտեսնուած հալածանքներ: Դա կապ ունէր Ալեքսանդրապոլի հետ: Մենք անցանք անլեգալ դրութեան: Կազմակերպութեան հետ կապը չէր կորցուած:

«Հետեւեալ օրը, մայիս 8-ին, այն զինուորներին, որոնց հետ կապ էինք հաստատել, մեր կողմից շեշտակի հարց դրուեց, կարելի՞ է արդեօք այստեղ հէնց հիմա ելոյթ ունենալ: Այդ հարցին նրանք պատասխանեցին, որ առ այժմ այդ հնարաւորութիւնը չկայ, որ զօրամասերում տատանումներ կան, որ դեռ պէտք է աշխատել, սակայն Ալեքսանդրապոլի ուղղութեամբ առաջացող զինուրական մասերը խոստացան Ալեքսանդրապոլի մօտենալուց անցնել ապստամբների կողմը:

«Այսպիսի պատասխան ստացանք մենք գիշերւան ժամը մէկին, մինչդրտրը հետզհետէ խտանում էր: Թերթերում աննախընթաց ցուցադրանք ըսկըսուեց, կազմակերպուեցին արտակարգ դատարաններ, մահուան պատիժը սահմանուած, պարլամենտը արդէն ցրուած էր:

«Իշխանութիւնը իրենց ձեռքին պահելու նպատակով, Դաշնակները պրովոկացիայի ենթարկեցին թուրքերի շարժումը Զանգիբասարի, Փարաքարի եւ այլ շրջաններում. կազմակերպւում էին յարձակումներ, ջուր չէին բաց թողնում, անասունները գրաւում էին եւայլն: Թերթերում գրում էին, թէ այդ ելոյթը բոլշեւիկներն են կազմակերպել: Մինչեւ ատամները զինեցին բոլորին՝ սպեկուլանտներից սկսած մինչեւ գիմնազիստները: Մեր դէմ պայքարը Դաշնակցութիւն կուսակցութիւնը վերցրել էր իր ձեռքը: Ձերբակալումների համար բացառապէս մասզերիստներին էին ուղարկում: Մեզանից ոմանք փաստօրէն օրէնքից դուրս էին յայտարարուած: Ձերբակալում էին նոյնիսկ նրանց, ովքեր հէնց միայն հանդիպում էին մեզ:

«Այսպիսի պայմաններում աշխատանքն այնուամենայնիւ շարունակւում էր, եւ Արմէնկոմը ոչ մի րոպէ կազմակերպութիւնների հետ կապը չկորցրեց: Պէտք է նկատել, որ սկզբի օրերին աքթիւ ընկերներից քչերը ձերբակալուեցին այստեղ:

«Այդպիսի մթնոլորտում, մայիս 8-9-ին, Արմէնկոմին յաջողուեց իր ատրապրութեամբ բաց թողնել երեք օր առաջ պատրաստած թերթիկը (մինչ

այլ ժամանակ չյաջողուեց տպագրել)· այդ թերթիկով մենք ցանկանում էինք ցրել թունաւորուած այն մթնոլորտը, որ ստեղծուած էր Ազրբէջանի շուրջը: Տպարանը կնքուած էր, եւ մեզ չյաջողուեց թերթիկը բաց թողնել:

«Մայիսի 12–ին թերթերից իմանում ենք, որ Ալեքսանդրապոլը բանակցութիւններ է վարում կառավարական ներկայացուցիչների հետ: Դաշնակները պրում էին. «Ալեքսանդրապոլի դաւաճանները փրկութիւն են խնդրում»: Դա բոլորի վրայ ճնշող տպաւորութիւն թողեց: Մայիսի 13–ին Ալեքսանդրապոլի ընկերները, առանց կուի, յանձնում են քաղաքը եւ այստեղ, ի հարկէ, ամէն ինչ վճռւում է: Եւ այսպէս արագ կերպով դրաւելով իշխանութիւնը՝ նրանք նոյնպիսի արագութեամբ անձնատուր եղան:

«Ինչպէս պարզւում է, ալեքսանդրապոլցիները ամբողջ ժամանակ թերթ չեն եղել բաց թողած. եթէ նրանք մի երեք օր էլ դիմանային, բանն ուրիշ ընթացք կը ստանար, որովհետեւ Ալեքսանդրապոլի ընկնելուց սկսւեց ապստամբութիւնը Նոր–Բայազէտի շրջանում, որտեղ ղեկավարում էր ամբողջ ժամանակ դիւրքերում գտնուող ընկ. Սարուխանեանը: Այնտեղ նրանք կարծում էին, թէ Ալեքսանդրապոլը դեռ դիմանում է եւ իրենք էլ սկսում են առաջխաղացումը: Եղաւ մի մոմենտ, երբ կառավարական զօրքերը տատանուեցին եւ սկսեցին նահանջել, սակայն, վերջիններիս թւական գերակշռութիւնը (նրանց օգնելու մեկնեցին Ալեքսանդրապոլից արդէն վերադարձած մաւզերիստները), եւ մի խմբի դաւաճանութիւնն, ինչպէս ասում են, հարցն այլ կերպ վճռեց եւ 4–5 օրւան յամառ դիմադրութիւնից յետոյ, Նոր–Բայազէտցիները կուով յանձնեցին քաղաքը: Այս բոլոր դէպքերին ականատես եղած ընկերն անձամբ այս ամէնը զեկուցեց Արմէնկոմին:

«Եւ այսպէս, յամառ դիմադրութիւնից յետոյ, Նոր–Բայազէտը յանձնուեց: Ապստամբների մի մասը քաշուեց սարերը, մի մասը ձերբակալուեց եւ նրանցից մի քանիսը, ընկ. Սարուխանեանի դլխաւորութեամբ, գնդակահարուեցին: Սարսափելի կերպով վարուեցին ընկ. Սարուխանեանի հետ, ուղղակի ինկվիզիտորների նման: Այսպէս, օրինակ, երկու ձիաւոր նրա երկու ձեռքից բռնած եւ ձիերը քշելով քարշ էին տալիս նրան քաղաքի միջով: Մեր ընկերները տեսել են նրան փուրդոնի մէջ պառկած, ուշաթափ վիճակում: Ռազմադաշտային դատարանի որոշմամբ նա գնդակահարուել է: Նրա վերջին խօսքերի մասին «Ճառագ»ի գրածը ամբողջովին մտացածին է:

«Ղափանում ելոյթն սկսւեց նոյնպէս Ալեքսանդրապոլի եւ նոյնիսկ Նոր–Բայազէտի անկումից յետոյ: Մեր կողմից երեք օր առաջ Դիլիջան էր ուղարկուած մի ընկեր՝ ինֆորմացիայի համար: Գիտենք, եւ ձեզ էլ յայտնի է, որ այնտեղ մտել են խորհրդային զօրքերը եւ իրենց հետ տարել են Դաշնակներին:

«Կարսում եւ Սարըղամիշում նոյնպէս տեղի են ունեցել ապստամբութեան ելոյթներ, սակայն այդպիսիներն այնտեղ էլ են ճնշւել: Այնտեղ, ընդհարման ժամանակ ընկաւ ընկ. Ղուկասը (այսպէս են մեզ յայտնում) այլ ընկերների հետ (դեռ եւս ստուգւած չէ):

«Մենք չէինք կարող աւանտիւրայի դիմել և արդէն հաւանութիւն էինք

ուել Իգդիրի ելոյթներին, որտեղ այդ միջոցին շատ ուժեղ զինուորական կառավարութիւն կար եւ անձնուէր զօրամաս:

«Այժմ այնտեղի ամբողջ շտաբը (5-ը զինուորական եւ 5-ը քաղաքացիական) գտնւում է Երեւանի բանտում:

«Ինչպէս ինքներդ էլ տեսնում էք, հողը գրեթէ ամենուրեք լրջօրէն պատրաստւած էր. դա մի պատահական արմատազուրկ ապստամբութիւն չէր, բնաւ երբեք:

«Եթէ այդ բոլորն անյաջող վերջացաւ, դա միմիայն ալեքսանդրապոլցիների վաղաժամ ելոյթի պատճառով էր:

«Անհնար լինելով ամենուրեք արագօրէն կազմակերպել գործողութիւնները եւ անջատ գործողութիւններին ձեւաւորումն տալ, այլ եւ չնորհիւ շրջանների միջեւ երկաթուղային հաղորդակցութեան բացակայութեան, կանոնաւոր ինֆորմացիան եւ գործողութիւնների համաձայնեցումը հնարաւոր չեղաւ:

«Բնականաբար, այդպէս չէր լինի մի երկու շաբաթ յետոյ:

«Ընկ. Արտաշէսը ձերբակալելուց յետոյ խիստ ծեծի ենթարկւեց: Եւ երբ նրան էջմիածնի վրայով բերում էին Երեւան, քաղաքից 5 վերստի վրա դնդակահարւեց: Այդ բանին սանկցիա էր տւած Դաշնակների կուսակցութեան եւ կառավարութեան կողմից: Այսպէս վարւեցին ահա մեր ընկերների հետ մեր հակառակորդները, մինչդեռ այն տեղերում, որտեղ իշխանութիւնը մերոնք էին դրաւել, ոչ մի բռնութիւն չէր գործադրւած մեր հակառակորդների վերաբերմամբ: Այդ բանն իրենք էլ չեն ժխտում: Այսպէս, օրինակ, Նոր-Բայազէտում գերի առնւած զօրավար Սիլիկովը հէնց ինքը հաստատում է այդ:

«Ներկայումս ամբողջ քաղաքը (Երեւանը) զինուորական ճամբարի է վերածւած: Աննկարագրելի բաներ են կատարւում. բռնում են փողոցում ում տես, ինքը՝ ներքին գործերի մինիստրը, «ձախ» Դաշնակցական Ջամալեանը փողոցում ձերբակալում էր մեր ընկերներին: Կուսակցութեան (Դաշնակցութեան) ամէն մի անդամ օգտւում է ինչպէս փողոցներում, այնպէս էլ տներում ձերբակալութիւններ կատարելու իրաւունքից:

«Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատւել. ընկերներին ամէն օր հրահանգներ են տրւում. տասն օր առաջ հրաւիրւած էր արտակարգ քաղաքային խորհուրդ, որտեղ լսւեց Արմէնկոմի զեկուցումը: Ընտրւեց Քաղաքային Բիւրօն, որի վրայ ժամանակաւորապէս դրւած էին Քաղաքային Կոմիտէի Ֆունկցիաները: Գրեթէ ամէն օր Բիւրօն նիստեր է ունենում. կազմակերպւած էր «Կարմիր Խաչը», որ կապւած է կալանաւորների հետ: Վերականգնւում են կապերը շրջանների հետ՝ տեղերում կազմակերպութիւնները վերականգնելու նպատակով: Ներկայումս Արմէնկոմը բաղկացած է երկուսից: Մենք մեր դիրքերում ենք, բայց այս վիճակում Երեւանում երկար մնալու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Ձերբակալութիւնն այժմ անխուսափելի հաւատացմամբ է սպառնում իւրաքանչիւրին, որովհետեւ Դաշնակների կուսակցութիւնը այդ ոգով որոշում է կայացրել:

«Վրաստանում կուսակցութեան լեգալիզացիայի հետեւանքով անհրաժեշտ է այնտեղից սրանց սղմել:

«Ուղարկեցէք ընկերները: Թող Բաքւում Դաշնակցականներին չարձակեն, սրանք այդ բանից արդէն չփոթւած են:

«Երեւանում ձերբակալւած են 50 մարդ, որոնցից 14-ը ուղարկւած են Սեւանի կղզին: Սարըղամիշից բերւած են 5 (զինուորական), Իգդիրի շրջանից՝ 9 (զինուորական), 64 մնացեալներից: Աշտարակից՝ 3, Արտաշատից՝ 3 եւ Ղամարլուից՝ 4: Մի քանի ընկերներ թաղնւել են: Հաղորդում են, որ Ալեքսանդրապոլում նստած են 100ից աւելի ընկերներ: Կարիքը մեծ է: Նախահաշիւը կարող ենք ուղարկել միմիայն տեղերում կազմակերպութիւնները վերականգնելուց յետոյ: Ուղարկւած դրամը մի կաթիլ է ծովի մէջ:

«Կազմակերպութիւնը վերականգնելու նպատակով մենք ընկերներ ենք ուղարկել Դիլիջան: Ուղարկում ենք Ղարաքիլիսա: Շրջանների համար ազատ ընկերներ քիչ կան: Ահա ընդհանուր գծերով երկրի ներկայ դրութիւնը, մեր վերաբերմունքը դէպքերին եւ նրանց գնահատումը: Մենք ամէն ժամանակ պատրաստ ենք բանաւոր բացատրութիւններ եւս տալու, եթէ այդպիսին կը պահանջւի:

«Այսօր տեղեկութիւն ստացանք, որ մաւզերիստների խմբերը ուղարկւած են եւ ուղարկւում են Ղարաքաղ: Շրջապատում են նաեւ Զանգիբասարի շրջանը»:*)

Ռ. Կ. Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԷ
(ԱՐՄԷՆԿՈՄ)

1920 թ. մայիսի 31, Երեւան

Ինչ եւ լինին Արմէնկոմի եւ միւս պատասխանատու բոլշեւիկների չքմեղանքները, փաստը մնում է փաստ. — Հայաստանի քաղաքական կեանքի ամենածանրակշիռ վայրկեանին, հայ բոլշեւիկները չքաշւեցին խառնուրդներ հանել երկրի ներսը, եղբայրասպան քաղաքացիական պատերազմ առաջ բերելու, զինւած ապստամբութեան միջոցով Հայաստանի անկախութիւնը խորտակելու եւ պետական իշխանութիւնը յափշտակելու փորձ անելով: Հայ ժողովրդի կամքով այդ դաւը վիժեց, բայց անհաշիւ վնասներ հասցրեց թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին կեանքում:

*) Վաւերագրերի արժէքը բոլշեւիկների արած խոստովանութիւնների մէջ է:

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Բոլշեւիկեան խռովութիւնները ճնշելուց յետոյ, իրերի արամաբանական թելադրանքով, կառավարութեան առջեւ եկաւ Թրքաբնակ վայրերի դրաւման հարցը: Մի շարք շրջաններ՝ Զանգիբասարում, Վեդիբասարում, Ջուլ, Կողբ եւ այլն — էլ չենք խօսում Շարուր–Նախիջեւանի մասին — մնում էին Հայաստանի իշխանութեան նկատմամբ ապստամբ վիճակում. ո՛չ միայն չէին ճանաչում նրան, այլ եւ անվերջ յարձակումներով, սպանութիւններով ու թալանով դժւարացնում էին Հայաստանի կազմակերպման եւ վերաշինութեան գործը: Շարուր–Նախիջեւանում իշխանութիւնը փաստօրէն անցել էր Անգորայի զինւորական գործակալ Խալիլ–բէյի ձեռքը: Սրա ազդեցութիւնը տարածւում էր եւ Վեդիբասարի ու Զանգիբասարի վրա, որոնք ամրացած էին ոչ միայն տեղական այլ եւ թիւրք սակեարներով: Զանգիբասարում փորւած էին անառիկ դիրքեր: Իլխի–Ղորուղի գիւղում դրւած էր Թնդանօթ: Ռազմագիտական կարեւոր դիրքերը բռնւած էին զօրամասերով ու գնդացիրներով: Գլխաւոր կէտերը միացած էին իրար հետ հեռախօսով: Թիւրքիայից սատարւում էր մեծ քանակութեամբ փամփուշտ ու ռազմամթերք: Զինւորական տեսակէտից, շատ լաւ կազմակերպւած ու ամրացւած էր եւ Բէյոլիւք Վեդին: Այս բոլոր շրջանները միասին կազմում էին «Հարաւ–Արեւմտեան Ազրբէջան»ը, ուր իշխանութիւնը խառն էր՝ թիւրք–ազրբէջանեան:

Օգտւելով մայիսեան դէպքերից յետոյ ստեղծւած ռազմական ու հոգեբանական նպաստաւոր դրութիւնից՝ կառավարութիւնը անցաւ գործի. յունիս 18–ին Զանգիբասարին ներկայացրեց վերջնագիր՝ ճանաչելու Հայաստանի իշխանութիւնը, զինաթափւելու եւ հեռացնելու թիւրք–ազրբէջանեան գործակալներին: Ստանալով պատասխան՝ կառավարութիւնը հրամայեց Վաղարշապատի զօրախմբին՝ զէնքի ուժով գրաւելու Զանգիբասարը: Եւ մի քանի օրում շրջանը գրաււեց:

Զօրախմբի հրամանատար գնդ. Շահմազեանը այսպէս էր նկարագրում զինւորական գործողութիւնները.

«Ցունիս 19–ին Նորագաւիթի զօրասիւնը ճեղքեց հակառակորդի դիր–

քերը Աղջա–Ղշլաղ–425 բարձունք–411 բարձունք ճակատի վրա եւ դրաւեց Հաջի–Իլյաղ գիւղը: Այսպիսով ողջ զանգիբասարեան դիրքերի բանալին խլուեց խռովարարների ձեռքից, որով եւ Զանգիբասարի բախտը նախորոշուեց: Փարաքարի զօրասիւնը դրաւեց Դէյդիմքէթ, Քէլալի եւ Աբրաթ գիւղերը: Ղարխունի զօրասիւնը դրաւեց Թազա Ղարխուն գիւղը եւ ակտիւ գործողութիւններ վարեց Զօրան–Քեարա եւ Շոռլու–Մէխմանղար գիւղերի դէմ: Հակառակորդը մաքրեց երկաթուղագծից հիւսիս ընկած բոլոր գիւղերը, բացի Նաչափարուխ, Ղարաղշլաղ, Շոռլու–Մէխմանղար եւ Զօրան–Քեարա գիւղերից ու սկսեց փախչել դէպի հարաւ՝ երկաթուղագծի այն կողմը: Ինձ յանձնուած զօրախմբին հրամայուեց վերջնականապէս մաքրել խռովարարներին երկաթուղագծի հիւսիսային կողմը ընկած գիւղերից, իսկ յետոյ յարձակուել հարաւային գիւղերի վրա:

«Յունիս 20–ին մեր զօրամասերը չարունակեցին հետապնդել խռովարարներին: Յունիս 21–ի լուսաբացին, կարճ ու վճռական կռւից յետոյ, գրաւեց Սարաջալար գիւղը, որով եւ կատարուեց զօրախմբին յանձնարարուած խնդիրը: Սկսած յաջողութիւնն ընդլայնելով եւ եռանդուն կերպով հետապնդելով հակառակորդին՝ զօրասիւնը՝ կոտրելով թշնամու դիմադրութիւնը՝ գրաւեց Իամազան Քէնդ գիւղը եւ ցրեց թաթար խուժանը: Այսպիսով, Զանգիբասարի շրջանը միանգամայն մաքրուեց հանրապետական կառավարութեանն անհնազանդ ազգաբնակութիւնից եւ վերջնականապէս միացաւ մեր սահմաններին, չնայած որ Զանգիբասարը երկու տարուայ ընթացքում կազմակերպուեց տաճիկ սպանների եւ ենթասպանների ղեկավարութեամբ ու աչքի ընկնող զինուորական ոյժ էր ներկայացնում՝ ամենահամեստ հաշուով 4000–ից ոչ պակաս տեղական մարտիկներ եւ 600—800 ասկեար, որ տեխնիկական տեսակէտից յաղող ամրացած էր, ունէր 3 թնդանօթ, 8 գնդացիր եւ առատ փամփուշտ»:*)

Հայկական զօրքերը դրաւեցին 1 թնդանօթ, 2 գնդացիր, 40,000 փամփուշտ եւ առաջ մթերք:

Զանգիբասարի կռիւների ընթացքում սպանուածների մէջ էր եւ Ց. Քալաշնունիի սպայ որդին:

Զանգիբասարի հետ միաժամանակ, յունիս 18–ին զինուորական գործողութիւններ սկսեցին եւ կարսի նահանգում՝ ածխահանքերի գրաւման նպատակով: Հայկական զօրքերը զօր. Յովսէփեանի ընդհանուր ղեկավարութեան տակ եւ գնդ. Մխիթարեանի անմիջական հրամանատարութեամբ շարժուեցին երեք ուղղութեամբ. ա) զօրասիւնը գնդ. Մազմանեանի ղեկավարութեամբ՝ Դորա Քիլիսէից, մինչինը՝ գնդ. Շահբուդաղեանի հրամանատարութեամբ՝ Մերդենեկի մօտից եւ ա) ը՝ փոխ–գնդ. Նեստերովսկիի ղեկավարութեամբ՝ Բեկկէի դիրքերից: Յունիս 19–ին ամբողջ ճակատը դիմեց ընդհանուր յարձակման, եւ երկու օրւայ յամառ ու յաղող կռիւներից յետոյ,

*) Վաղարշապատի զօրախմբի հրամանատար գնդ. Ա. Շահմազեանի հրամանից: «Ազատ», 1920 թ. յունիս 27:



Գ· ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ
(Վաշինկթըն)



Յ· ԱՐՂՈՒԹԵԱՆ
(Թեհրան)



Մ· ՎԱՐԱՆԴԵԱՆ
(Հռոմ)



Տ· ԲԷԶԱԴԵԱՆ
(Բագու – Թիֆլիս)









ԳՐԻՆՖԻԼԴ
(Բեռլին)



Յ. ՍԱՂԱՔԵԼԵԱՆ
(Հաբաւ. Ռուսաստան)



Լ. ՆԱԶԱՐԵԱՆ
(Խորհրդ. Բնբլ. ներկ.)



Ա. ՀԱՆԷՄԵԱՆ
(Ընդհ. Քարտ. Հ. Հ. Գաւա.)



ՎԱՀԱՆ ՔԱՐՏԱՇԵԱՆ



Մ. ՂԱԶԱՐԵԱՆ
(Հ. Հ. Փարիզի հիւպատոս)

յունիս 21–ին, զօրամասերը մի քանի հանգերի արեւմտեան մասում: Հակառակորդը, Խալիլ բէյի հրամանատարութեան տակ, պարտած փախաւ՝ թողնելով հայերին 2 տրապաձիգ լեռնային թնդանօթ, 4 մաքսիմ գնդացիր, աւելի քան 100,000 մոսինի փամփուշտ, լեռնային թնդանօթ, 300 ռումբ, բազմաթիւ ձեռքի ռումբեր, փոներ, հարուստ պահեստներ՝ 1200 փութ հացահատիկ, 2000 մարդու պահածոյ միս, 50 փութ չաքար, 50փ. թխած հաց, 50 փութ պաքսիմատ, մեծ քանակութեամբ անասուններ եւ այլն եւ հարիւրաւոր սպանուածներ, որոնց մէջ նաեւ թիւրք սպաներ: Հայերի կորուստն էր՝ 5 սպանուած 22 վիրաւոր: Գրեթէ մինչեւ Օլթի, ամբողջ տարածութիւնը անցաւ հայերի ձեռքը:

Զանգիբասարից յետոյ կազմակերպուեց եւ իրականացուեց նաեւ Բէյոյիւք Վեդիի գրաւումը: Այնտեղ թշնամին ունէր մօտ 3000 կուռղ, 3 թնդանօթ, 9 գնդացիր եւ առատ փամփուշտ: Ընդհանուր հրամանատարը էր թիւրք սպայ Մուստաֆա բէյը:

Հայերը հանեցին 26 վաշտ հետեւակ, 7 հարիւրեակ ձիաւոր, 16 թնդանօթ, 1 գրահապնաց, կամաւորական խմբեր: Ընդհանուր հրամանատարն էր զօր. Շելկոնիկեանը:

Կռիւները զարգացան հետեւեալ ձեւով*).

«Յուլիս 10–ին երեկոյեան մեր զօրամասերը Ղամարլուից ու Նոր–Բայազէտից յարձակման դիմեցին Բէյոյիւք–Վեդի գիւղը գրաւելու նպատակով: Յուլիս 11–ին, Ղամարլուի ուղղութեամբ, յամառ կռիւներից յետոյ, գրաւեցին Կարայեազ, Զաթղռան, Ալի Մամեդ, Ենգիջա, Կոթուղ Աղասի, Բէղլու եւ Ներքին Կարաթաղլար գիւղերը: Բէյոյիւք–Վեդիից հիւսիս մի վերստ հեռաւորութեան վրա՝ Գեաւուր Ղալասի լերան մօտ մենք հանդիպեցինք թուրքերի կողմից յուսահատ դիմադրութեան. Նոր–Բայազէտի ուղղութեամբ, յուլ. 11–ի երեկոյեան, մենք գրաւեցինք Աղքիլիսա, Մաղիւկ, Գեոլ, Զիդին, Մոզիւղ, Զագին, Գերմանիս, Դոխնազ գիւղերը: Մութն ընկնելուց յետոյ, երեկոյեան ժամը 9–ին, Գեաւուր Ղալասի լերան կողմից թուրքերը դիմեցին հակայարձակման, բայց 2րդ գնդի հանդիպակաց դրոհով յետ շպրտուեցին: Նահանջողներին հետապնդելով՝ երկրորդ դունդը, տաք սուինամարտից յետոյ, գրաւեց Գեաւուր Ղալասի սարը, ուր թուրքերը թողեցին բազմաթիւ սպանուածներ եւ մի մաքսիմ գնդացիր:

«Յուլ. 12–ին, առաւօտեան ժամը 5–ից 25 րոպէ անցած մեր զօրամասերը մտան Բէյոյիւք–Վեդի:

«Թուրքերը փախչում են Դաւալու Զինջիրլիի վրայով»:

Բէյոյիւք–Վեդիում հայերի ձեռքը անցաւ 1 թնդանօթ, մի քանի գնդացիր, ռումբ ու փամփուշտ, ուտելիք: Նոյն օրը երեկոյեան գրաւեց Դաւալուն, ապա Գայլի Դրունքը, եւ վերականգնուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ղամարլուի հետ: Միաժամանակ գործողութիւններ էին կատարւում եւ Դարալագեազից, եւ յուլ 16ի երեկոյեան մեր զօրքերը գրաւել էին արդէն Արաքս—Ագ–Ահմեդ գիւղ—Ղուչչի—Դեմուրչի—Բաչ–Նորաշէն—Ուլիա–

*) Հայաստանի Գլխ. Սպայակոյտի յուլ. 12 եաղորդագրութիւնը:

Նորաշէն—Ախուր գիծը: Ամէն տեղ, ուր երեւում էին հայերը, թուրքերը թողնում եւ խուճապով փախչում էին:

Բէյոլիւք-Վեդիի կուսներում սպանուեցին 15 սպաներ ու զինուորներ, որոնց հանդիսաւոր թաղումը տեղի ունեցաւ Երեւանում, յուլ. 13-ին: Զանգիբասարի ու Բէյոլիւք-Վեդիի մաքրագործումը աննկարագրելի ցնծութիւն առաջ բերեց Հայաստանի բոլոր կողմերում:

Յուլ. 16-ին, հայկական զօրքերի յառաջխաղացումը կանգնեցուեց, որովհետեւ Նախիջեւանի Մահմետական Ազգային Խորհուրդը պատգամաւորութիւն էր ուղարկել Երեւան՝ հաշտութեան խնդրանքով: Կառավարութիւնը, զինուորական նախարարի միջոցով, ներկայացրեց խիստ ծանր պահանջներ. անպայման հնազանդութիւն, երկաթուղագծի ապահովութիւն, կառավարութեան յանձնել մեծ քանակութեամբ զէնք, ձի, մթերք, երկաթուղու երկու կողմը որոշ տարածութեան վրա մահմետականներ չբնակեցնել եւ այլն: Պատգամաւորութիւնը յետ դնաց՝ զեկուցանելու համար Ազգ. Խորհրդին եւ այլեւս չվերադարձաւ: Յուլ. 22-ին կուսները վերսկսեցին: Թուրքերը 3 օր յոյց տուին յուսահատ դիմադրութիւն: Յուլ. 25-ին մերոնք գրաւեցին Շահթախթը: Թուրքերը փախան դէպի Մակու ու Պարսկաստան՝ պարպելով ամբողջ շրջանը մինչեւ Նախիջեւան:

Քիչ առաջ գրաւած էր եւ Սեւանայ լճի արեւելեան եզերքը, մաքրած էր Ղարաղոյինլի ճորը: Այս կուսներում մեր կողմից տուեցին ծանր զոհեր. սպանուածների մէջ էին խմբապետ Մուրատը, ուսանող Յ. Զարիֆեանը եւ ուրիշներ:



Այսպիսով 1920 Թ. ամառը Հայաստանի Հանրապ. սահմանները փաստօրէն տարածուում էին Ղարաբաղից սկսած մինչեւ Օլթիի ածխահանքերը:

Նոյն թափով առաջ էին գնում եւ ներքին աշխատանքները՝ կազմակերպութեան եւ շինարարութեան ասպարէզում:

1920 թ. ամառը Հայաստանը բաժանւած էր 4 նահանգապետութիւնների. 1) Արարատեան՝ նահանգապետ ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսեան, օգնական՝ Լ. Ամիրխանեան, 2) Շիրակի՝ նահանգապետ Կ. Սասունի, 3) Վանանդի՝ Ստ. Ղորղանեան, 4) Սիւնեաց՝ Ս. Մելիք-Եօլչեան, իսկ նրա հրաժարուելուց յետոյ՝ Զ. Եօլեան: Նահանգները իրենց հերթին, բաժանւում էին գաւառների: Վարչութիւնը կազմակերպւած, հետզհետէ բարելաււում ու կատարելագործւում էր, թէեւ մայիսեան չարժումներն ու թրքական չրջանների դէպքերը մեծապէս դժւարացնում էին կեանքի եւ պետական մեքենայի կարգաւորումը:

Այս դէպքերը խորապէս անդրադառնում էին եւ գաւառական ինքնավարութիւնների գործունէութեան, բայց, մանաւանդ, երկրի ելեւմտական վիճակի վրա:

Ճիշտ է, Զանգիբասարի եւ Շարուրի գրաւումը մեծարժէք հարստութիւն տւեց կառավարութեան ձեռքը: Այսպէս, Շարուրի գրաւումից անմիջապէս յետոյ գիւղատնտեսական նախարարութեան վիճակագրական բաժինը այնտեղ ուղարկեց վիճակագիրներ՝ Բ. Իշխանեանի անձնական հսկողութեան տակ: Եւ թէեւ հաւաքւած տեղեկութիւնները լրիւ չէին, բայց ստացւած թւերը հարստութեան մեծ պաշար էին ցոյց տալիս:

Շարուրում կար 70 գիւղ, որոնցից 6 հայկական եւ 1 ասորական. մնացեալը՝ թուրք: Բնակիչների թիւը հաւասար էր 90 հազարի, որից հայերը, բացառութեամբ 30 ընտանիքի, սրի էին քաշւած դեռ 1919-ի նահանջի ժամանակ:

1919թ. աշնանը եւ 20-ի գարնանը Շարուրում ցանւել էր 300,000 փութ ցորեն, 150,000փ. գարի, 50,000փ. չալթուկ (բրինձ), 4000փ. վարսակ, 1000փ. եգիպտացորեն, 500փ. կորեկ, 1000փ. սիսեռ, 1000փ. սեխ ու ձմերուկ, 200փ. լոբի, 200փ. սոխ, 20փ. ոսպ, 7փ. ծխախոտ — ընդամենը՝ 507,927 փութ սերմացու:

Բերքը եղել է չափից աւելի առատ եւ մօտաւոր հաշւով սեխ ու ձմերուկ 10,000,000փ., ցորեն 3,500,000 փ., գարի 1,500,000փ., կորեկ 20,000 փութ, վարսակ 20,000փ., եգիպտացորեն 25,000փ., սոխ 50,000փ., սիսեռ 25,000փ., լոբի 10,000փ., ոսպ 1,000փ., ծխախոտ 20,000փ., ընդամենը 15,153,000 փութ: Այս թւի վրա պէտք էր աւելացնել եւ չալթուկի բերքը, որ հաւաքւած չլինելու պատճառով կարելի չէր չափորոշել, բայց որի քանակը շատ խոշոր էր: Պէտք էր աւելացնել եւ 500,000փ. տանձ, 80,000 փ. խնձոր, 60,000փ. դեղձ, 25,000փ. սալոր եւ այլն:

Նման առատութիւն էր տիրում եւ Զանգիբասարում, ուր միայն բրնձի քանակը հաշւում էր մօտ 400,000 փութ:

Բայց այս հարստութեան մեծ մասը չմտաւ պետութեան պահեստները, այլ, զանազան ձեւերով, անցաւ ժողովրդի ձեռքը, մասամբ դարձաւ չարաշահութեան առարկայ կամ փչացաւ: Կառավարութիւնը աշխատեց կազմա-

կերպել լքած հարստութիւնների օգտագործումը, դործի կանչեց հմուտ ու բարեխիղճ պաշտօնեաները, բայց, ա՛յն ժամանակւայ պայմաններում, մասամբ միայն յաջողութիւն ունեցաւ:

Պետական օր աւուր աճող ծախսերը կառավարութիւնը հոգում էր թղթադրամներով. տպադրական մեքենան գործում էր կանոնաւոր եւ արագ. ամսականն տալում էր 6—800 միլիոն րուբլի: Մինչեւ օգոստոս արդէն բաց էր թողնւած երկու միլիարդ րուբլու հայկական չէկ: Լոնդոնում պատրաստւում էին հայկական դրամանիշներ: Շրջանառութեան մէջ էին եւ անդրկովկասեան բոները:

Բնականաբար, դրամական այս հեղեղը մեծ չափով անդրադառնում էր եւ երկրի առեւտրա–արդիւնաբերական վիճակի եւ ապրուստի ադութեան վրա: Մթերքների գները բարձրանում էին խելայեղ արագութեամբ:

Կառավարութիւնը դրա դէմ պայքարում էր առեւտրա–արդիւնաբերական կեանքի կազմակերպումով, ոսկու հիմնադրամի ստեղծումով, կօօպերացիան քաջալերելով, մաքսերի ու հարկերի յաւելումով եւ փոխառութեան միջոցով: Առեւտրա–արդիւնաբերութեան գործերը կարգաւորում էր ելեւմտական նախարարի օգնական՝ յայտնի դրամատէր եւ հասարակական գործիչ Հ. Մելիքեանը, ապա՝ Մ. Շաթիրեանը: Արտաքին առեւտուրը ղեկավարում էր Ապրանքափոխութեան կոմիտէի միջոցով: Փետր. 8–ից երեւանում սկսեց գործել եւ Հայաստանի Առեւտրա–Արդիւնաբերական Պալատը, որի նպատակն էր՝ զարկ տալ երկրի առեւտրա–արդիւնաբերական գործին եւ օտար երկրների համապատասխան պալատների միջոցով կապ ստեղծել արտասահմանի շուկաների հետ: Պալատի նախագահն էր երեւանցի յայտնի առեւտրական եւ հասարակական գործիչ Ց. Մելիքեանը:

Հարկային գործի ասպարէզում պէտք է արձանագրել յառաջատուական տուրքի սահմանումը յունիս 15–ին: 1920 թ. ընթացքում մտցում էր յառաջատուական տուրք. տարեկան մինչեւ 18,000 ր. հասոյթ ունեցողները ազատւում էին տուրքից: 18,000 րուբլուց աւելի հասոյթները ենթարկւում էին տուրքերի՝ հետեւեալ համեմատութեամբ. 18,000–ից մինչեւ 19,000 ր. հասոյթ ունեցողը պիտի վճարէր 206 ր., 28,000ից մինչեւ 29,000 ր. ունեցողը՝ 556 ր., 38,000–ից մինչեւ 40,000 ր. ունեցողը՝ 1,000 ր., 58,000–ից մինչեւ 60,000 ր. ունեցողը՝ 6,600 ր., 100,000–ից մինչեւ 110,000 ր. ունեցողը՝ 22,550 ր., 200,000–ից մինչեւ 210,000 ր. ունեցողը՝ 56,550 ր., 300,000–ից մինչեւ 310,000 ր. ունեցողը՝ 94,550 ր., 390,000–ից մինչեւ 400,000 ր. ունեցողը՝ 140,000 ր., 400,000–ից աւելի հասոյթ ունեցողներից իւրաքանչիւր 10,000 րուբլուց պէտք է դանձւէր 6,100 րուբլի:

Այս թւերից երեւում է այն սկզբունքը, որը հիմք էր դրւած Հայաստանի հարկային քաղաքականութեան. ինչքան քաղաքացու հասոյթը աւելնում էր, այնքան պետութեան ստացած տոկոսը պիտի բարձրանար: Մի սկզբունք, որի համար պայքար են մղում դեռ ժամանակակից ամկավարութեան առաջաւոր շրջանները:

Հայաստանի արդիւնաբերութեան եւ ելեւմուտքի բարելաման տես-

կէտից, սակայն, վճռական դեր պիտի կատարէր Անկախութեան փոխառութիւնը, որի օրէնքը հրատարակուեց յունիս 10-ին: Օրէնքը ասում էր.

«1. Հայաստանի Հանրապետութեան արդիւնաբերական ուժերը եւ ֆինանսները վերականգնելու եւ Հանրապետութեան ֆինանսական ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն ամերիկեան դոլարի անուանական գումարի պետական փոխառութիւն 6 տոկոսով: Փոխառութեան 75 տոկոսը յատկացնել վերոյիշեալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրել պետական այլ կարիքների համար»:

Փոխառութիւնը արւելու էր 10 տարով, Հայաստանում եւ արտասահմանում: Բաց էին թողնւելու 10, 25, 50, 100, 500 եւ 1000 դոլարնոց պարտաթղթեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից: Փոխառութիւնը ապահովւում էր Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյքով: Փոխառութեան գործի ղեկավար նշանակւեց Ա. Խատիսեանը, որը այդ առաքելութեամբ ուղարկւեց արտասահման:

Անկախութեան փոխառութիւնը անօրինակ խանդավառութիւն առաջ բերեց Հայաստանի եւ արտասահմանի հայկական բոլոր խաւերի մէջ: Քաղաքական կուսակցութիւններ, հասարակական կազմակերպութիւններ, մամուլ, անհատ գործիչներ — ամենքը աջակցեցին կառավարութեան, որ փոխառութիւնը ունենայ յաջող արդիւնք: «Միջկուսակցական Մարմինը հետեւեալ կուսակցութիւնների, — հեռագրում էին յունիս 21-ին Խատիսեանին — Հայ Ժողովրդական կուսակցութեան, Հայաստանի Սոց.-Դեմոկրատ բանուորական կուսակցութեան, Հայ Ռամկավար կուսակցութեան եւ Անկուսակցականների Միութեան — դառնելով, որ Հայաստանի անկախութեան փոխառութիւնը 20 միլիոն դոլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական եւ տնտեսական դրութեան բարելաւման համար, ամէն կերպ պաշտպանում է կառավարութիւնը այդ փոխառութեան իրականացման գործում, եւ դիմում է բոլոր հայերին՝ առաջարկելով եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ նրա տարածման մէջ: Լիազօրներ Հ. ժ. կուս.՝ Տէր Խաչատեան, Ստեփանեան, Հ. Ս.-Դ. բանւ. կուս.՝ Իշխանեան, Անանուն, Հ. Ռամկ. կուս.՝ Դաւրիճեան, Շաւարշեան, Անկուս. Միութեան՝ Արէշեան, Զալխուշեան»:

Փոխառութեան բացումը Երեւանում կատարւեց մեծ հանդիսաւորութեամբ, օգոստ. 1-ին: Բազմաթիւ անհատներ, հիմնարկութիւններ, Խորհրդարանի եւ կառավարութեան անդամները տեղն ու տեղը արձանագրւեցին որոշ գումարներ: Կաթուղիկոսը էջմիածնի կողմից արձանագրւեց 1 միլիոն րուբլի: Մի քանի ժամւայ մէջ հաւաքւեց 45 միլիոն րուբլի: Նոյն ոգեւորութեամբ արձանագրութիւնը տեղի ունեցաւ և գաւառներում: Արդահանի մահմեդականութիւնը փոխառութեան մասնակցեց 50 միլիոն րուբլով, որը, սեպտ. 5-ին, գաւառապետ Կադիմովը անձամբ մոտրեց Կարսի պետական գանձարանը: Սեպտ. 5-ին արդէն Հայաստանին յատկացւածը աւելիով ծածկւած էր, եւ կառավարութիւնը փակեց բաժանորդագրութիւնը Հայաստանի սահմաններում:

Նոյն օրը, օգոստ. 1–ին, անկախութեան փոխառութեան բացումը տեղի ունեցաւ եւ Թիֆլիսում ու Բաթումում, նոյնպէս ժողովրդական խանդավառ տրամադրութեամբ: Թիֆլիսում բոլոր հայ կազմակերպութիւնները մի թռուցիկ–կոչ բաց թողին, փոխառութեան կազմակերպիչ մարմինը հրատարակեց միօրեայ թերթ՝ բաղմաթիւ հայ եւ օտար գրողների եւ գործիչների աշխատակցութեամբ — Ց. Թումանեան, Դ. Դեմիրչեան, Ա. Թադէոսեան, Ս. Կանայեան, Ս. Մալխասեան, Ս. Լիսիցեան, Ռ. Խան–Ազատ, Ա. Պապովեան, Գ. Մելիք–Ղարապէտեան, պրոֆ. Ա. Մանուելով, Օ. Գրուզենբերգ, Մ. Մանգելչտամ եւ ուրիշներ:

Ցուզիչ էր Ցովհ. Թումանեանի գրութիւնը.

«Մեր սերունդը էն սերունդն է, գրում էր նա, որ դեռ երէկ ազատ Հայաստան էր երազում:

«Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը եւ բոլոր հեռաւոր գաղութները:

«Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խաւերը, առանց սեռի ու հասակի խտրութեան:

«Ի՞նչ ասես, որ չէր տայ գրեթէ ամէն մի հայ, միայն թէ աչքով տեսնէր ազատ Հայաստանը:

«Ու յանկարծ...

«Արդէն իրականութիւն է երէկւայ մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհքի կողմից ճանաչուած ինքնուրոյն հանրապետութիւն է նա, իր եռագոյն դրօշակով կանգնած է միւս պետութիւնների չարքում»:

Թիֆլիսի բաժանորդագրութիւնը տուեց փայլուն արդիւնք:

Նոյնը եղաւ եւ Բաթումում, ուր Հայ Կանանց Միութեան կողմից հիմք դրուեց եւ Ոսկու Ֆոնդի:

Նոյն խանդավառութիւնն առաջ բերին Անկախութեան Փոխառութիւնն ու Ոսկու Ֆոնդը եւ գաղութահայութեան մէջ՝ Պոլսում, Իզմիրում, Եգիպտոսում, Բալկանեան երկրներում, Պարսկաստանում: Փոխառութեան բաժանորդագրութիւնը հանդիսացաւ գաղութահայութեան, մանաւանդ աշխատաւոր խաւերի հայրենասիրութեան արտայայտութեան մէկ առիթ: Հայաստանի Հանրապետութիւնը ամէն տեղ արդէն առարկայ էր ոգեւորութեան, պաշտամունքի ու զոհաբերութեան:

Եւ միայն փոխառութեամբ ու Ոսկու Ֆոնդով չէր արտայայտւում գաղութների եւ Հայաստանի Հանրապետութեան փոխադարձ ջերմ սիրոյ զգացումը. Հայաստանը դարձել էր ձգողական մի հզօր ոյժ, որ իրեն էր քաշում աշխարհիս բոլոր ծայրերում ապրող հայերի հոգին եւ նիւթական ու բարոյական աջակցութիւնը: Սեւ ծովի եզերքներից, Գերմանիայից, Անգլիայից, Ռումանիայից ու Բուլղարիայից, Պոլսից եւ Իզմիրից, Իտալիայից, Ֆրանսայից, Բելգիայից, Քանադայից, Միացեալ–Նահանգներից, Հարաւային Ամերիկայից, Պարսկաստանից, Միջագետքից, Ջիբուտիից, Հնդկաստանից, Ճապոնիայից, Հեռաւոր Արեւելքից, Ջաւա կղզուց — ամէն, ամէն կողմից նւէրներ էին հասնում ուղիղ Երեւան կամ Փարիզի պատւիրակու-

թեան՝ Հայաստանի համար: Եւ ինչե՛ր ասես չէին ուղարկւում — գինւորական հագուստ ու սարք, դեղօրեայք, դրենական պիտոյքներ, ինքնաշարժ, սաւառնակներ, ուտելիք, հագնելիք, ամբողջ դրադարաններ, դրամեքենաներ, ծխախոտ, քինին, բժշկական գործիքներ, նկարներ, զարդարանքներ... Սկսեցին Հայաստանին անել մեծագումար կտակներ, նոր շէնքերի շինութեան խոստումներ, կազմել արդիւնաբերական խոշոր ծրագրներ:

Արճանապրենք միայն մի քանիսը, պատահաբար քաղած յիշողութիւնից. Եդիպտոսի գործարանատէր Մելքոնեան եղբայրները ընդունեցին Հայաստանի քաղաքացիութիւնը եւ իրենց ամբողջ հարստութիւնը — մօտ 6 միլիոն դոլար — կտակեցին Հայաստանին: Հայաստանին նուիրեց իր փառահեղ տունը Թիֆլիսում — մէկ միլիոն դոլարի արժողութեամբ — յայտնի դրամատէր Ա. Մելիք-Ազարեանը*): Բադուի յայտնի դրամատէր Արշակ Ղուկասեանի թողած կտակը՝ մօտ 8 միլիոն րուբլու՝ փոխանցւեց Հայաստանին: Ստաւրոպոլի հայ դրամատէր Պոպովը իր ամբողջ հարստութիւնը — մօտ 25 միլիոն րուբլի — կտակեց Հայաստանի համալսարանին: Գ. Կիւլպէնկեանը խոստացել էր Հայաստանում կառուցել մի շարք պետական մեծ շէնքեր: Հ. Մելիքեանը պատրաստւում էր շինել Երեւանում ժողովրդական Տուն: Պոլսի «Ժող. Ձայն» թերթը օգ. 20-ին հաղորդում էր, որ Հայ Ռամկ. Կուսակցութիւնը Եդիպտոսում որոշել էր Հայաստանին մատուցանել 50 օդանաւ — «Ռամկավար Հայաստանի Օդային Տորմիղ»: Հ. Ը. Դաշնակցութիւնը Ամերիկայում ձեռնարկեց բանակի հանդանակութեան, որը տւեց աւելի քան կէս միլիոն դոլար. Երեւան, բանակի համար, ուղարկւեց մեծ քանակութեամբ պաքսիմատ ու պահածոյ: Հայաստանի համալսարանին եւ Հանրային Գրադարանին նուիրւեցին մի շարք մեծարժէք դրադարաններ — Զոհրաբի, դր. Տաղաւարեանի, Գ. Յակոբեանի, Կ. Կոստանեանի, Ը. Յակոբեանի, բանաստեղծ Ա. Ծատուրեանի եւ այլն: Կարեւոր գործ էր եւ «Մայիլեան Եղբայրների գիտական արշաւախումբը», որը մի շարք մասնագէտների միջոցով նիւթեր էր հաւաքում եւ ուսումնասիրում Հայաստանի տնտեսական հարցտութիւնները: Այսպիսի օրինակներ դեռ կարելի է շատ բերել:

Եւ այս դեռ սկիզբն էր երկանց:

Կային, ի հարկէ, եւ վատ, չարաշահ տիպեր, որոնք աշխատում էին Հայաստանը շահագործել իրենց անձնական օգտին ու երբ հանդիպում էին կառավարութեան արգելքին, ամէն տեսակ սուտ ու զրպարտութիւններ էին տարածում Հայաստանի վարիչների մասին, մանաւանդ, յաճախ, հոլովելով նրանց ընկերվարական լինելը: Դրանց մասին էր գրում Դ. Անանունը իր Թունաւոր տողերը, թէ՝

«Հայ բուժուազիան իմ աչքում դատապարտութեան արժանի տարր է նրա համար, որ նա իր սոսկ ապազգային արարքները քօղարկում է մտա-

*) Այդ տունը 1920 թ., բոլոր օրինական ձեւակերպութիւնները կատարելուց յետոյ, փոխանցւեց Հայաստանի Հանրապետութեան Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան, որը պատրաստւում էր տեղափոխել նրա մէջ: Բոլշեւիկների գալուց յետոյ, շատերի հետ այդ շէնքն էլ, բռնագրաււեց եւ այժմ Հայաստանին չի պատկանում:

ցածին պատճառաբանութիւններով վասն հայ վտանգաւոր սոցիալիստների եւ այլն: Սուտ է: Հայ Զիմզիմովի գրոշին ոչ մի վտանգ չի սպառնում Հայաստանում, որովհետեւ բոլոր հայերը մեծ ու փոքր Զիմզիմովներ են, սեփականութեան մոլի ֆանատիկոսներ: Եւ եթէ այնուամենայնիւ հայ Զիմզիմովը չի բարեհաճում թողնել Թիֆլիսն ու Բագուն եւ իր այդ տատանումը պատճառաբանում է սոցիալիզմի վտանգով — դրա մէջ պիտի տեսնել արբեցողի ծամածռութիւնները լիքը բաժակի առջեւ:

«Թող բուրժուազիան գայ եւ մասնակից դառնայ մեր պայքարին եւ ոչ թէ հեռուից հեռու պահանջ առաջադրէ, թէ՝ մաքրեցէք ասպարէզը, որ ես բարեհաճեմ ինձ՝ հայութեանը հարազատ հռչակելու եւ ոտք կոխելու նրա երկիրը: Բուրժուազիայի ո՞ր առաւելութեան համար պիտի տեղի ունենայ այդ նահանջը...

«Նորից ու նորից կրկնում ենք, որ Հայաստանը պատկանում է բոլոր նրանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են քրտնել նրա վրա եւ նպաստել նրա բարօրութեանը: Թէ որ տանջանաց կցորդ լիցիմք, ապա եւ փառաց հաղորդ լինելոց եմք — այսպէ՛ս պիտի նայի խնդրին հայ բուրժուազիան: Բայց ոչինչ չարած, պինդ փակած իր դրպանի բերանը՝ նա պատռում է իր կոկորդը լոկ փառքի եւ իշխանութեան համար: Այս վերաբերմունքի համար նոյնիսկ քարերը պիտի աղաղակեն, իսկ կենդանի մարդիկ՝ աւելի եւս»:*)

Ճիշտ էր ասում Դ. Անանունը. «Հայ Զիմզիմովի գրոշին ո՛չ մի վտանգ չէր սպառնում Հայաստանում»: Ընդհակառակը, իշխանութիւնը ամէն կերպ աջակցում էր, որ արտաքին նախաձեռնութիւնն ու դրամագլուխը մուտք գործեն Հայաստան, իրենց միջոցն ու կարողութիւնը նուիրեն երկրի վերաշինութեան գործին: Գուցէ, պահանջւածից էլ աւելի փութկոտութեամբ ու լայնախոհութեամբ ընդառաջ էր գնում մասնաւոր դրամագլխի ամէն դիմումին կամ առաջարկութեան: Այս տեսակ լայնախոհ վերաբերումի եւ չարաշահութեան մէկ օրինակ կարելի է համարել այն բազմապիսի դիւրութիւնները եւ արտօնութիւնները, որ կառավարութիւնը տրամադրեց Մայիլեան եղբայրներին Հայաստանի զանազան մասերում արդիւնաբերական ձեռնարկներ սկսելու համար: Մայիլեանները ստացան մի շարք մենաշնորհներ — ելեկտրականացման, ապակու գործարանի — բայց եւ ո՛չ մէկ փորձ արին՝ որեւէ գործ կատարելու եւ իրենց անգործութիւնը դուրսը արդարացնում էին նրանով, որ, իբր թէ, «ընկերվարական» կառավարութիւնը արգելքներ է յարուցանում մասնաւոր դրամագլխի առջեւ:

1920 թ. ամառը հայ եւ օտար դրամատէրերի կողմից եղան մի շարք տնտեսական առաջարկութիւններ, որոնց մի մասին ընթացք էլ տրւեց: Յիշենք զւիցերական եւ շւեդական մի քանի լուրջ ընկերութիւնների դիմումը Հայաստանում կաթնատնտեսական գաղութներ, երկրագործական մեքենաների պահեստներ եւ արհեստանոցներ հիմնելու մասին: Հայ եւ ճապոն դրամատէրերի մի խումբ իր ներկայացուցիչն էր ուղարկել Երեւան՝ ելեկտրաերկաթուղագծի մենաշնորհ ստանալու համար. ենթադրւում էր շինել Երե-

*) Դ. Անանուն, «Առանց Քինախնդրութեան», «Յառաջ», 14 յուն. 1920 թ.:



ՏԻԿԻՆ ՏԻԱՆԱ ԱՒԳԱՐ
(Հ· Հ· ներկայացուցիչ Ճափոնում)



ՄԱՐՏԻՐՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(Հ· Հ· դեսպան Բագուում)



Հ· Հ· ԹԻՓԼԻԶԻ ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ԿԵԴՐՈՆԸ Տ· ԲԼԳԱԶԱԴԵԱՆ

լան-Ելենովկա-Դիլիջան-Աղստաֆա եւ Ելենովկա-Նոր Բայազէտ-Քեշիշքենդ-Գորիս գիծը: Մի խումբ հայ դրամատէրեր ծրագրում էին Վեդի-Բասարի շրջանում հիմնել ցեմենտի եւ կրի գործարաններ: Մէկ ուրիշը՝ տաղձի, շէնքի փայտեղէն մասերի գործարան Սարըղամիշում:

Յունիսի վերջերին մի խումբ հայ եւ օտար դրամատէրերի կողմից Երեւան եկաւ ինժ. Կ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկը՝ խնդրելու համար Բաթում—Կարս—Սարդարապատ երկաթուղի անցկացնելու իրաւունքը: Հայերից յիշեալ խմբի մէջ մտնում էին Ռոստով-Նախիջեւանցի ու Մոսկւացի յայտնի հայ դրամատէր Ժամհարեանը, Կայեալեանը, Քիստեանը, Ծըրմաճեանը եւ ուրիշներ:

Արղութեանի ներկայացրած պայմանագրի էութիւնը հետեւեալն էր.— Ընկերութիւնը, սեփական միջոցներով, առանց կառավարական նպաստի, պէտք է կառուցանէր ելեքտրաշարժ երկաթուղի, որը պիտի սկսէր Բաթումից կամ Հայաստանին տրուելիք որեւէ նաւահանգստից, անցնելու էր Ճորոխի ձախ ափով, ապա՝ Օլթի գետի հովտով, Փեննաք գետի հովտով, Օլթիի ածխահանքերի մօտով, կտրելու էր Կարս—Սարըղամիշ երկաթուղին Սելիմ կայարանի մօտ եւ անցնելով Զարաբխանա ոսկեհանքերի ու Ջրաննիխի հանքերի եւ Կաղզւանի ու Կողբի աղահանքների մօտով՝ միանալու էր Ալեքսանդրապոլ—Երեւան երկաթուղագծին, մօտաւորապէս Սարդարապատ կայարանում:

Այսպիսով, բացւելու էր նոր ճանապարհ Սեւ ծովից դէպի Թաւրիզ, Երեւանի վրայով, որը շուրջ 250 վերստով լինելու էր աւելի կարճ, քան Բաթում-Թիֆլիս-Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղին: Տնտեսական տեսակէտից ճանապարհը պիտի ունենար ահագին նշանակութիւն. պարսկա-եւրոպական թրանզիտը ամբողջապէս Վրաստանից պիտի անցնէր Հայաստանին:

Ներկայացւած պայմանագրի համաձայն պէտք է երկու տարի ժամանակամիջոց տրւէր հետախուզական աշխատանքների եւ երկաթուղագծի ու էլեկտրակայանների նախագծեր պատրաստելու համար: Ապա, չորս տարւայ ընթացքում, պէտք է շինւէր ու շարժման մէջ դրւէր երկաթուղին իր ամբողջ սարքով: Շարժիչ ույժ ստանալու համար պէտք է օգտագործւէին Ճորոխ, Արաքս, Ախուրեան եւ Հրազդան գետերը, որոնցից ստացւելիք էլեկտրականութիւնը, երկաթուղուց զատ, պէտք է բանեցնէր ուրիշ նպատակների համար էլ:

Պայմանագրի նախագծի համաձայն երկաթուղու ամբողջ հասոյթի 10%ը պէտք է տրւէր պետութեան, ինչպէս նաեւ էլեկտրակայանների 15%ը: Ելեկտրական ույժը վաճառւելու էր կիլօւատ-ժամը 4 ոսկի կոպէկով, իսկ արդիւնաբերական, գիւղատնտեսական եւ այլ տեխնիկական կարիքների համար՝ 3 կ.: Պայմանագիրը կնքւելու էր 55 տարով: 30 տարի անցնելուց յետոյ կառավարութիւնը իրաւունք պիտի ունենար գնելու ամբողջ ձեռնարկութիւնը՝ երկաթուղին ու էլեկտրակայանները: Այդ պարագային, կառավարութիւնը պէտք է վճարէր մնացած տարիներին կոնցեսիոններների ստանալիք օգուտի միջինը: Պայմանագիրը ստորագրելիս ընկերութիւնը պէտք է մտցնէր Հայաստանի գանձարանը 3 միլիոն ոսկի րուբլի, որը պէտք է ա-

պահովէր մեննաչնորհի բարեխիղճ իրագործումը: Բացի այդ, ընկերութիւնը դնելու էր կէս միլիոն ոսկի բուբլի գրաւ. պայմանագրի կէտերի լուրջ խախտման դէպքում գրկւելու էր գրաւից:

Այս պայմանագիրը, հաղորդակցութեան նախարարութեան առաջարկութեամբ քննւեց Հայաստանի Տեխնիկական Ընկերութեան նիստերում եւ, ընդհանուր առմամբ, արժանացաւ դրական գնահատութեան: Յետոյ, խորհրդակցութեան նիւթ դարձաւ հաղորդակցութեան, ելեմտական եւ արդարադատութեան նախարարութեանց ու պետական վերահսկողութեան ներկայացուցիչների եւ մի շարք մասնագէտների խառն նիստերում, որից յետոյ, յունիս 29-ին, հաղորդակցութեան նախարարը նախագիծը ներկայացրեց նախարարների խորհրդին ի հաստատութիւն: Բաթում—կարս երկաթուղագծի մասին կային եւ օտար առաջարկութիւններ. կառավարութիւնը գերադասում էր հայկական դրամագլուխը: Բացի այդ, նա կամենում էր, որ բաժնեթղթերի կարեւոր մէկ մասը տրւի պետութեան, որով վերջինս դառնալու էր երկաթուղու սեփականատէրերից մէկը:

Հայաստանի ժողովրդական տնտեսութեան մէջ աչքառու դեր էր խաղում եւ Ինամ. Նախ. Աչխատանքի բաժանմունքը, որ ամբողջ երկիրը պատել էր արհեստանոցների, գործարանների եւ աշխատանոցների ցանցով: Ա 1 օգ. Բաժանմունքը ունէր հետեւեալ ճեռնարկութիւնները. Երեւանում՝ ջուլհականոց (կտաւ), վերանորոգումների բաժին, կարուածեւի արհեստանոց, փականագործարան, ատաղձագործարան. Սարըղամիշում՝ տախտակի սղոցարան, ջուլհականոց (կտաւ), ատաղձագործարան, փայտի չոր քորման, որ պատրաստում էր սեւ ճիւթ, ածուխ, սոսինձ եւայլն. Ալեքսանդրապոլում՝ ջուլհականոց (բրդեղէն), 2րդ ջուլհականոց (կտաւ, գուլպայ): Կարսում՝ ջուլհականոց (բրդեղէն), կաշեգործարան. Էջմիածնում՝ կօշկակարանոց, ջուլհականոց (կտաւ), Դիլիջանում՝ ջուլհականոց (բրդեղէն), չինւածանիւթերի արհեստանոց, կահկարասիքի արհեստանոց. Նոր-Բայազէտում՝ կօշկակարանոց, ջուլհականոց (բրդեղէն). մանարան Բաշ-Աբարանում, ջուլհականոց (բրդեղէն) Ջալալ-Օղլիում, կօշկակարանոց Ղամարլուում, մանարան Սարդարապատում, բրուտանոց Իւվայում եւայլն: Կտաւի, մահուդի, կօշկեղէնի մի ահագին մասը երկրում հոդացւում էր այս արհեստանոցներից. որբանոցների եւ բանակի սպիտակեղէնը, վրայի հագուստը կարւում էին հայկական կտորներից: Լուրջ յաջողութիւն ունէին, յատկապէս, կաշեգործարանները. Բաժանմունքը ճեռնարկել էր երկու մեծ գործարանների չինութեան գիտութեան վերջին յարմարութիւններով: Բաժանմունքի դեկավարն էր Ակունեանը:

Պետական կարեւոր գործօն էր եւ մայիս 8-ին հաստատւած «Գլխաւոր ճարտարապետի Վարչութիւնը» խնամատարութեան նախարարութեան կից՝ ակադ. Ալ. Թամանեանի դեկավարութեան տակ: Այս հիմնարկութիւնը լինելու էր Հայաստանի վերաչինութեան կենտրոնական աղդակը: Ա. Թամանեանի հմուտ եւ անճնւէր դեկավարութեան տակ մի շարք մասնագէտներ*) կա-

*) Սրանց շարքին էր երիտասարդ երկրաբան Այվազեանը, որ Հայաստանի շինւածաքարերի լաւագոյն մասնագէտներից մէկն էր եւ որ այնպէս անժամանակ մեռաւ 1926-ի շրջանին:

տարում էին նախապատրաստական աշխատանքներ. ուսումնասիրում էին Հայաստանի չինւածանիւթերը, հաւաքւում նախանիւթ, պատրաստւում վերաշինական ծրագրներ ու յատակագծեր: Ակադ. Թամանեանը կազմել էր Երեւան քաղաքի բարեփոխւած նոր յատակագիծը, *) պատրաստել էր տիպար դիւղերի, դպրոցների, հիւանդանոցների, ժողովրդական տների, պետական եւ հասարակական շէնքերի յատակագծեր, որոնք բոլորն էլ հիմքում ունէին հայկական ազգային ոճը: Վարչութիւնը սկսել էր կառուցանել Երեւանի մանրէաբանական հիմնարկութեան շէնքը, հիմնական վերանորոգութեան էր ենթարկել քաղաքային առաջին հիւանդանոցը, կազմակերպել էր գալ այրելու գործարան, Անիի շրջանում ձեռնարկել էր յուշարձանների հաւաքման, ցուցակագրութեան եւ պահպանման գործին:

Նոյն խնամատարութեան նախարարութեան կից գործում էր եւ Գլխաւոր Բժշկա—Առողջապահական վարչութիւնը խնամատարութեան նախարարի օգնական բժ. Ց. Տէր-Միքայէլեանի գլխաւորութեամբ: 1919 թ. սկզբին Հայաստանում կար միայն 9 հիւանդանոց 300 մահճակալով: Նոյն տարւայ վերջը արդէն դոյութիւն ունէր 30 հիւանդանոց 1,600 մահճակալով, 5 բժշկակայան, 5 բուժական կայան: 1920 թ. դրանց վրա աւելացան մի շարք ուրիշ նոր հիւանդանոցներ ու կայաններ Երեւանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ջալալ-Օղլիում եւայլն: Կային պետական դեղատներ, որտեղից դեղ էր տրւում չքաւորներին՝ ձրի, իսկ աշխատաւորներին 50%զեղչով: Երեւանում կար կենտրոնական դեղապահեստ: Մալարիայի դէմ պայքարելու նպատակով Երեւանի, Իգդիրի, Էջմիածնի, Հրազդանի, Ղամարլուի շրջաններում գործում էին բժշկական թուրքիկ խմբեր եւ այցելու հիւանդանոցներ: Սկսւել էին ջրանցքային աշխատանքներ Ղամարլուի ճահիճների չորացման համար: Երեւանում կազմւել էր յատուկ մի մարմին — «Տրոպիկ Հիւանդութիւնների Ճանճնաժողով» — որ ունէր տրոպիկական հիւանդանոց, կազմակերպեց «տրոպիկական ցուցահանդէս», հրատարակեց «Մալարիա» պարբերականը եւ նպատակ ունէր կռւել մալարիայի դէմ: Ճետագային այս «Ճանճնաժողովը» վերածւեց Տրոպիկական Ինստիտուտի:

Տնտեսական տեսակէտից կարեւոր աշխատանք էր կատարում եւ Գիւղատնտեսական ու Պետական Գոյքերի Նախարարութեան մէջ: 1920 թւի սմառը վերջացան Ս. Զաւալիշինի ջրային ընդարձակ հետազօտութիւնները: Եւ սկսւեցին հանքային լայն հետազօտութիւններ նախարարութեան հանքային բաժնի պետ Ս. Թուրեանի ղեկավարութեամբ: Հրաւիրւեցին մի շարք հեղինակաւոր մասնագէտներ՝ ինժ. Կարապետեանը, ինժ. Ն. Տէր-Միքայէլեանը, ինժ. Մ. Տէր-Դաւթեանը եւ ուրիշներ, որոնցից կազմւած յանձնախմբերը այցելեցին Կաղզւանի աղահանքներն ու Փենեաքի ածխահանքերը եւ բերին մշակւած զեկուցումներ աղի եւ ածուխի արտադրութեան եւ ածխացման մասին: Աղն էլ, ածուխն էլ չահագործւում էին կառավարութեան միջոցներով: Բացի այդ, ինժ. Կարապետեանը գիտական-հետախուզական

*) Այս յատակագիծը, Թաւրիզում կատարւած որոշ լրացումներով, յետագային ընդունւեց եւ գործադրութեան դրւեց:

ճամբորդութիւն կատարեց Շիրակում, Նոր-Բայազէտում եւ Սեւանի լճի շուրջը: Մասնաւոր ուսումնասիրութեան ենթարկուեցին ցեմենտի, չէչաքարի, հանքային ներկերի վայրերը: Պիտի հետազօտէին նաեւ Սուրմալուի ոսկեհեղերը, Կաղզուանի գունեխը, Շարուր-Դարալագեազի արծաթա-արճճային հանքերը, տորֆի շրջանները, մի շարք չինարարական քարեր եւայլն: Ցաջորդող պատերազմական գործողութիւնները արգելք եղան ծրագրի մի մասի իրագործման: Այդ գործողութիւններին նաեւ զոհ գնացին ինժ. Լ. Խատիսեանը, ինժ. Մելիք-Այվազեանը եւ տեխնիկ Միքայէլեանը, որոնք զբաղուած էին ածուխի արտադրութեամբ: Հանքերն արդէն տալիս էին օրական 5—6000 փութ ածուխ, որը կարս—Մերդենեկ ճիաքարշով փոխադրւում էր կարս՝ երկաթուղային կարիքների համար եւ մասամբ մեղմացնում վառելիքի սովը: Ազրբէջանը նաեւ չէր տալիս, եւ կառավարութիւնը դերմարդկային ճիգ էր գործ դնում երկաթուղիները կենդանի պահելու համար:

Ամառը Լեռնային բաժինը ձեռնարկեց հանքային հին օրէնքների փոփոխութեան եւ նոր օրէնքների հիմքը կազմում էր հողերի պետականացման ընդհանուր սկզբունքը: Ըստ նոր օրէնսդրութեան գետնի տակ գտնուող բոլոր հարստութիւնները համարւում էին պետական սեփականութիւն. մասնաւոր սեփականատէրերը իրաւունք ունէին օգտուելու միայն գետնի երեսից: Նախկին իշխանութեան օրով կնքւած բոլոր պայմանագրութիւնները, 6 ամսւայ ընթացքում, կորցնում էին իրենց արժէքը: Այդ անձանց իրաւունք էր տրւում կնքել նոր պայմանագրութիւններ:

Լեռնարդիւնաբերութիւնը զարգացնելու նպատակով կազմակերպւում էր յատուկ ընդունարան լեռնային բաժնի կողմից՝ հանքավայրեր գտնողների համար: Հանք գտնողներին պիտի տրւէր վարձատրութիւն հետեւեալ հաշւով. ոսկի եւ թանկագին քար գտնողներին՝ 1000—5000 րուբլի ոսկով. արծաթի, կլայեկի, նիկելի, ցինկի, արճիճի, բիսմուտի համար՝ 500—1000 ր., ուրիշ հանքերի համար՝ 100—500 ր., նաւթի, քարածուխի համար՝ 300—3000 ր. եւայլն: Օրինագիծը մտցւեց նախարարական խորհուրդ եւ ընդունւեց հիմնական գծերով:

Լեռնային բաժնին կից հիմնւելու էր Հանքային Խորհուրդ նախարարի նախագահութեան տակ: Սեպտեմբերին կազմւեց Հանքային Տեխնիկական Յանձնաժողով՝ բաղկացած Լեռնային բաժնի վարիչ ինժ. Ս. Թուրեանից, օգնական ինժ. Ա. Տէր-Գրիգորեանից, ինժ. Մ. Տէր-Դաւթեանից, ինժ. Ն. Տէր-Միքայէլեանից եւ մէկ շրջանային ինժեներից: Յանձնաժողովի նպատակն էր հանքային եւ արդիւնաբերական ուսումնասիրութիւններ կատարել երկրում: Նոյեմբերին ծրագրւում էր հրաւիրել լեռնա-արդիւնաբերողների խորհրդակցութիւն, ապա՝ համագումար եւայլն:

Հասունացած եւ կարեւոր գործ էր նաեւ Հողային Յատուկ կոմիտէների կազմութիւնը հողային հարցի արագ լուծման համար: Կոմիտէները պիտի արձանագրէին եւ, սահմանւած չափով, գիւղացիութեան պիտի բաշխէին մասնաւորական, եկեղեցական-վանական եւ լքեալ հողերը, ինչպէս նաեւ պիտի լուծէին գիւղացիների եւ գիւղերի միջեւ եղած հողային վէճերը: Եր-

լանի գաւառի հողային յատուկ կոմիտէն — նախագահ՝ Ե. Սարգսեան, անդամներ Լ. Զոհրաբեան եւ հողաչափ Յակոբջանեան — մինչեւ օգոստոսի սկիզբը վերջացրեց աշխատանքները Մաղկաճորի շրջանում, ուր պետականացրեց թրքական 12 լքած գիւղերի 16,234 դես. հողերը: Պղնձահանք (Միսխանկա) գետի ալ ափի մացառապատ հողերը միացուեցին անտառին՝ ապահովելու համար վերջինիս անվտանգ աճումը: Անտառին միացուեց ընդամենը 11,233 դես.: Մնացած 5000 դեսեատինը բաժանուեց սակաւահող Ալափարս, Գումիշ եւ Օզանլար գիւղերի միջեւ: Մաքրավանք, Բարաքչի եւ Ֆարուխ խիստ սակաւահող գիւղերը որոշեց տեղափոխել ուրիշ տեղ՝ լքեալ հողատատ գիւղերը: Լուծեց նաեւ մի շարք միջգիւղեան եւ գիւղմիջեան հողային վիճելի հարցեր եւ հաշտեցրեց հողային վէճերով պատակուած գիւղացիներին: Մաղկաճորից յետոյ մարմինը անցաւ Կոտայքի շրջանը:

Էջմիածնի հողային կոմիտէն — նախագահ՝ Ց. Արիստակէսեան, անդամներ՝ Մկ. Ստեփաննեան եւ Աւ. Պօղոսեան — գործի սկսեց յուլ. 19-ին եւ աւարտեց համարեա ամբողջ գաւառի աշխատանքները, բացի Սարդարապատի շրջանից: Կոմիտէն առանձնապէս ուշադրութիւն դարձրեց հողաղուրկ Ապարանի վրա, ուր հողը բաւական էր հազիւ 10—12,000 հոգու, մինչդեռ ապրում էր 25,000 մարդ: Կոմիտէն որոշեց Ապարանի գիւղացիութեան կէսը տեղափոխել Կարսի նահանգը, որի կլիման նման է Ապարանի կլիմային եւ ուր կային բաւական թուով լքեալ գիւղեր, մանաւանդ յոյների հեռանալուց յետոյ: Տեղափոխուող գիւղերի հողերը բաժանուելու էին մնացող գիւղերին: Փոխադրուելու ենթակայ գիւղերը տուել էին իրենց համաձայնութիւնը: Աչտարակի շրջանի Բարաքչի, Քիրաշլու, Եաթաղլու եւ Քեալաչքեանդ լքեալ գիւղերի հողերը կոմիտէն տուեց մօտակայ գիւղերին՝ պայմանով, որ Բարաքչի եւ Քիրաշլու գիւղերում Ապարանի Նորաչէն, Սաչլու եւ Ղարաբուլաղ գիւղերի հողազուրկ գիւղացիները հիմնեն նոր գիւղ: Արագածի եւ մօտակայ լքեալ արօտատեղիները տուեցին հարեւան գիւղերին: Լուծուեց եւ Եղուարդի շրջանի լքեալ գիւղերի հարցը:

Նոր-Բայազէտի հողային յատուկ կոմիտէի կազմն էր՝ Մեր. Օզանեան՝ նախագահ, Միք. Տէր-Գէորգեան եւ Ե. Նազարեան՝ անդամներ: Կոմիտէն յաջորդաբար այցելեց գաւառի բոլոր գիւղերը, տեղն ու տեղը ծանօթացաւ հողային յարաբերութիւնների վիճակին: Որոշեց գիւղացիութեան մի մասը փոխադրել ուրիշ տեղ եւ հողազուրկ գիւղացիութեան բաժանել լճի հարաւ-արեւմտեան կողմը՝ Ելենովկայի եւ Նոր-Բայազէտի միջեւ գտնուող Էֆենդիքեանդ, Հաջի-Մուխան, Աղպիրիր եւ այլ լքեալ գիւղերի հողերը, ինչպէս նաեւ Այրիջայի հարուստ արօտավայրերը եւ լճի հիւսիսային ափի լքեալ գիւղերի հողերը: Այս վերջին շրջանում հայ բնակչութիւն տեղաւորելը ունէր եւ ռազմական-քաղաքական նշանակութիւն: Ելենովկայի եւ մի շարք ուրիշ հողեր մտցուեցին պետական ֆոնդի մէջ:

Միւս գաւառներում հողային յատուկ կոմիտէները մասամբ կազմուած էին, բայց դեռ գործի չէին անցած. որոշ գաւառներում էլ չէին կազմուած: Հողային յատուկ կոմիտէների գործունէութիւնը ղեկավարում էր ինքը՝ գիւ-

գատնտեսական նախարարը պետական գոյքերի բաժնի վարիչ Պ. Կանդուրաևանի գործակցությամբ:

Գիւղատնտեսական նախարարության գործունէությունից յիշենք եւ պետական կաթնատնտեսական օրինակելի ագարակի եւ պանիր-իւղ գործարանի կազմակերպումը Կարսի շրջանի Պետրովկա գիւղում: Գործի ղեկավարությունը յանձնւած էր փորձւած կաթնատնտես Դիլանեանին: Ագարակի համար ձեռք էին բերւած 300 ընտիր կովեր եւ անհրաժեշտ շէնքերն ու գործիքները: Պատերազմը խանգարեց սկսւած գործը:

Պատերազմը թոյլ չտւեց աւարտել եւ էջմիածնի առւի կառուցումը: Այդ նպատակով 23 միլիոն րուբլու վարկ էր բացւած եւ աշխատանքներն արդէն սկսւած էին: Էջմիածնի առւի աւարտումը վիճակւեց խորհրդային իշխանութեան: Նոյն իշխանութիւնը գլուխ բերեց եւ Շիրակի առւի շինութիւնը, որ նոյնպէս ծրագրւած ու ձեռնարկւած էր Հանրապետութեան օրով:

Չի կարելի լռութեամբ անցնել եւ Հայաստանի կօօպերացիայի վրայից, որ զարգանում էր արտակարգ թափով: Յուլ. 1-ը Հայաստանի կօօպերացիայի օրն էր, որ տօնւեց շքեղ հանդիսաւորութեամբ: Այդ օր, Հայկօօպը — Հայաստանի Կօօպերատիւների Միութիւնը — իր մէջ պարփակում էր 350 կօօպերատիւ ընկերութիւններ: Հայաստանի կօօպերացիան ունէր 95,000 անդամ: Եթէ հաշւենք, որ իւրաքանչիւր անդամի ընտանիքը, միջին թւով, բաղկացած էր 4 հոգուց, ապա՝ Հայկօօպը պարենաւորում էր մօտ 400,000 մարդ: 1919 թւի ընթացքում Հայկօօպը կառավարութիւնից ստացել էր փոխառութիւն 5 միլիոն րուբլի, բայց հասարակութեան մատակարարել էր 15,844,191 րուբլու մթերք եւ ապրանք: 1920-ին կառավարութիւնը տւեց՝ վարկ ու փոխառութիւն, 30 միլիոն րուբլի: Կառավարութեան աջակցութեամբ տնտեսական մի առաքելութիւն ուղարկւեց Իտալիա, որտեղից բերւեց խոշոր քանակութեամբ հագուստեղէն եւ այլ կարգի ապրանքներ:

Աչքի առաջ ունենալով Հայկօօպի կարեւոր տնտեսական դերը երկրում՝ կառավարութիւնը որոշեց բաց թողնել նրան, իբրեւ փոխառութիւն, եւս 250 միլիոն րուբլի, մէկ տարի ժամանակով եւ տարեկան 6 տոկոսով: Այդ դրամով կատարւելու էին գնումներ ներքին շուկայում, գնելու էին հում նիւթեր արտասահմանի հետ ապրանքափոխութիւն անելու համար եւ զարգացնելու էին արդիւնաբերական ձեռնարկները:

Հայկօօպի պաշտօնաթերթ «Հայաստանի Կօօպերացիա» երկշաբաթաթերթը Ս. Վրացեանի, ապա Դ. Անանունի խմբագրութեամբ, ունէր եւ լուրջ գրական-հասարակական բաժին:

Առ 1 յուլիս Հայաստանի Վարկային Կօօպերատիւների Միութիւնը — Հայվարկը, ունէր 23 անդամ ընկերութիւններ. 12,121 անդամով, 530,640 ր. դրամագլխով. ընդունւած աւանդը հասնում էր 1,142,812 ր.: Փոխառութիւն էին կնքել 103,175 ր. եւ անդամներին մինչեւ յունիս 1 փոխառութիւն արել 815,350 ր.: Ցիշեալ 23 ընկերութիւններից 10 հին գործող ընկերութիւններ էին, 11 վերաբացւած, իսկ 2 նոր հիմնւած: Այդ 23 ընկերութիւններին Հայվարկը 10,900,000 ր. վարկ էր բաց արել, որից առ 1 յուլիս օգտւել էին 7 ընկերութիւնները՝ 1,500,000 րուբլու: Կառավարութիւնը Հայվարկին տրամա-

դրրել էր 40 միլիոն րուբլու վարկ: Հայվարկն ընդունում էր առանց սահմանափակման զանազան աւանդներ եւ ընթացիկ հաշիւներ ու անարգել վճարում էր ինչ դումար եւ պահանջէր: Իր անդամ–ընկերութիւնների համար Հայվարկը տպագրել էր կանոնադրութիւն, մատեաններ, պատրաստել բլանկներ ու դիւանական պիտոյքներ եւայլն:

Նոյն եռանդն ու կենդանութիւնը տեսնում ենք եւ կեանքի միւս ասպարէզներում: Ապրիլ 20–ի նիստում կառավարութիւնը որոշել էր կազմել միջվարչական յանձնաժողով՝ արագացնելու համար կառավարական մի շարք գործառնութիւնների փոխանցումը գաւառական ինքնավարութիւններին: Յանձնաժողովի նախագահ էր նշանակւել ներքին գործոց նախարարութեան տեղական ինքնավարութիւնների եւ քաղաքային բաժնի վարիչ Հ. Մելքումեանը, անդամներ դիւղատնտեսական նախարարութիւնից՝ Ստ. Կամսարականը, աշխատանքի՝ Վ. Բաբայեանը, խնամատարութեան՝ Ռ. Քաջբերունին, հանրային կրթութեան՝ Պ. Սոտնիկեանը, արդարադատութեան՝ Յ. Ամիրխանեանը, հաղորդակցութեան՝ ինժ. Մելիք–Շահնազարեանը, ելեւմտական՝ Պ. Զաքարեանը, Երեւանի գաւառային ինքնավարութեան նախագահ Յ. Թադէոսեանը: Միջվարչական յանձնաժողովը մի շարք նիստերում մշակել էր այն պայմանները, որոնց հիման վրա գաւառային ինքնավարութիւններին պիտի փոխանցէին կառավարական մի շարք իրաւունքներ ու հիմնարկութիւններ:

Մինչեւ յունիս 1 արդէն պետական բոլոր տարրական դպրոցները, բոլոր հիւանդանոցներն ու բժշկական կայանները, դիւղատնտեսական տեղական պահեստները, սերմանման մարմիններն ու դիւղատնտեսական կայանները, միլիցիան եւայլն փոխանցւած էին գաւառական ինքնավարութիւններին, որոնք հետզհետէ կարեւոր տեղ էին գրաւում պետութեան կեանքում: Մասնաւորապէս յաջող գործունէութիւն էին ցոյց տալիս Երեւանի եւ Էջմիածնի գաւառական ինքնավարութիւնները:

Արդարադատութիւնը գարգանում էր անկանոն պայմաններում: Սովորական դատարանները չէին վերացւած, բայց դատերի մեծ մասը տեսնւում էր արտակարգ դատարանների միջոցով: Մայիս 14–ից մինչեւ սեպտեմբերի սկիզբը Հայաստանում 234 քաղաքական բանտարկութիւններ էին կատարւել, որոնցից 120 հոգի ազատ էին արձակւել, 3 հոգի դատապարտւել մահապատժի եւ բանտերում մնում էին՝ 15 հոգի բանտարկութեան դատապարտւած, 50՝ քննութեան տակ, 61 տեղափոխւած զանազան բանտեր եւ 5՝ արտաքսւած Հայաստանից: Արտակարգ դատարանները ոմանք չփոթում են «չէկա»–յի հետ, որ բոլորովին սխալ է: Արտ. դատարանը զուտ դատաստանական ատեան էր, միայն պարզացւած գործավարութեամբ եւ մահապատժի իրաւունքով: Նրա դերն էր արագ դատավարութեամբ պայքարել պետական դաւաճանութեան եւ չարաշահութեան դէմ: Երեւանի արտ. դատարանի կազմն էր — Նախագահ՝ բժ. Յ. Տէր–Դաւթեան, անդամներ՝ Ա. Աբեղեան եւ բժ. Յ. Մելիքեան, դատախազ՝ Ի. Թիւթիւնճեան: Մինչեւ յուլ. 15 Երեւանի արտակարգ դատարանը 41 հոգի արտաքսեց Հանրապետութեան սահմաններից: Ալեքսանդրապոլի արտակարգ դատարանի նախագահն էր Գ. Վարշա-

մեանը, դատախազ՝ բժ. Ի. Բազդասարեանը: Արտակարգ դատարաններ կազմեցին եւ կարսում, Դիլիջանում, Նոր-Բայազէտում: Բոլշեւիկները անհեթեթ լուրեր էին տարածում նրանց մասին: Յուլ. 6-ին Մոսկւայի ռադիօն հեռագրում էր «ամենքին, ամենքին, ամենքին», որ Երեւանի արտակարգ դատարանում դատուած են 22 կոմունիստներ, որոնցից 2 հոգի դատապարտուած է մահուան, 4 հոգի՝ ցմահ տաժանակիր աշխատանքների եւ որ, իբր թէ, դատավարութեան օրը տպարանական, երկաթուղային եւ այլ ձեռնարկութեանց բանուորները բողոքի գործադուլ են արել: Մոսկւայի մի ուրիշ ռադիօ հաղորդում էր, որ կարսի շրջանում գնդակահարուած են 100-ից աւելի կոմունիստներ: Աւելորդ է ասել, որ երկուսն էլ չինծու էին:

Արտակարգ պայմաններում արդարադատութեան նախարարութիւնը զբաղւում էր երկրի դատաստանական գործի կարգաւորումով: Նախարարութեան կից գործում էր մասնագէտների մի յանձնաժողով օրէնքների հայցման, նոր օրէնքների մշակման, դատաստանական բառակազմ ու բառարան խմբագրելու համար: Օգոստոս ամսին Հայաստանի ամբողջ դատաստանական գործը արդէն՝ վերից վար՝ ազգայնացած էր: Օգոստոս 18-ին հանդիսաւոր կերպով բացւեց Կարսի Շրջանային Դատարանը՝ Հ. Մելքումեանի նախագահութեամբ եւ Կայեալեանի դատախազութեամբ, որով Հայաստանը ունենում էր երեք շրջանային դատարաններ — Երեւանի, Շիրակի եւ Կարսի:

Կրթական գործը առանձնապէս խոստմնալից ապագայ էր ցոյց տալիս: Որոշւել էր 1920—21 ուս. տարում բանալ 1500 տարրական դպրոց, հիմնական բարեփոխութեան ենթարկել միջնակարգ կրթութիւնը, բանալ մի շարք մասնագիտական կրթարաններ: «Թիւրքահայ», «ռուսահայ» դպրոցների դրութիւնը ջնջւած էր: Յունիս 21-ին կառավարութիւնը վճռեց Երեւան փոխադրել համալսարանը, յատկացնել նրան նախկին Ուսուցչական Սեմինարիայի շէնքը, մշակել համալսարանի կանոնադրութիւնը, հրաւիրել նոր ուսուցչապետներ եւ այլն: Այդ նպատակով կազմւեց մի յանձնախումբ վարչապետից, հանրային կրթութեան ու խնամատարութեան նախարարներից եւ ակադ. Ա. Թամանեանից: Համալսարանը պիտի բացւէր հոկտ. 16-ին, 4 բաժիններով՝ պատմա-լեզւաբանական, իրաւաբանական, բնագիտական եւ Ֆիզիք-մաթեմատիկական: Յաջորդ տարւանից պիտի բացւէր եւ բժշկական բաժինը: Մինչեւ հոկտ. 1 արձանագրւել էին 632 երկսեռ ուսանողներ, որոնցից 403 հոգին կամենում էին մտնել բնագիտական բաժինը, չատերը գիւղատնտեսական մասը:

Երեւանում բացւելու էր պետական երաժշտանոց, որի համար տեսուչ էր հրաւիրւում Մոսկւայի երաժշտանոցի նախկին տեսուչ, յայտնի երաժշտագէտ Իպոլիտով-Իվանովը, իսկ դասատուներ՝ աղատ արւեստագէտ Բարխուդարեանը, նշանաւոր երաժշտագէտ Ա. Սպենդիարեանը, Ռ. Մելիքեանը եւ ուրիշներ:

Պետական թատրոնի կազմակերպման համար, Գոլսում վախճանած դերասան Սեւումեանի առաջարկով, մտածւում էր հրաւիրել Մոսկւայի Գե-



ԱԿԱԴ· Ա· ԹԱՄԱՆԵԱՆ



ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ
(Համալսարանի դասախօս)



Յ· ՄԱՆԱՆԴԵԱՆ
(Համալսարանի դ.կան)



Ե· ՖՐԱՆԳԵԱՆ
(Համալսարանի դասախօս)



ԴԵՐԱՍԱՆ ՍԵՒՈՒՄԵԱՆ



ՆԿԱՐԻՉ ԱՐՇԱԿ ՖԻՓՎԱՃԵԱՆ

գարեւստական Թատրոնի հիմնադիրներից՝ հռչակաւոր ռեժիսոր Գ. Բուբ-
ջալեանին եւ հայ բեմի առաջնակարգ ուժերին: 1920 թ. ամառւայ ընթաց-
քում դերասանները Զարիֆեանը, Արելեանը, Մայսուրեանը, ընտիր խմբով,
Երեւանում տուին մի երկար շարք ներկայացումների եւ ունեցան բացառիկ
յաջողութիւն:

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացւելու էր ժողովրդական գե-
ղարւեստի ուսումնարան, որի նպատակն էր լինելու արտայայտել ժողովր-
դական ստեղծագործութեան արժէքները՝ գորգագործութիւնը, ազնիւ մե-
տաղների մշակոյթը, պղնձի, քարի մշակման գործը, ձեռարւեստի եւ նուրբ
գործւածքների մշակման գործը եւ այլն: Դպրոցին կից լինելու էր տնայ-
նագործական կոմիտէի գեղարւեստական–արդիւնաբերական թանգարանը,
որի համար խնամ. նախարարութեան աշխատանքի բաժինը արդէն ձեռք էր
բերել 100–ից աւելի ընտիր գորգեր, կապերտներ եւ ուրիշ գործւածքներ:
Դպրոցի կազմակերպումը յանձնւած էր խնամ. նախարարութեան աշխա-
տանքի բաժնի վարիչ Ակունեանին:

Սեպտ. 27–ին Ալեքսանդրապոլում, մեծ հանդիսաւորութեամբ, բաց-
ւեց հաղորդակցութեան նախարարութեան տեխնիկական միջնակարգ դպրոցը
ինժ. Շերմազանեանի անւոյն: Մի ամիս յետոյ, հոկտ. 25–ին, Երե-
ւանում պիտի բացւէր երկրորդ տեխնիկական դպրոցը:

Կարսում բացւելու էր Ռազմական Գիմնազը: Էջմիածնում վերաբաց-
ւելու էր ճեմարանը: Երեւանում բացւելու էր միջնակարգ բժշկական վար-
ժարան, Ուսուցչական Սեմինար եւ այլն: Բացի այդ, Երեւանում եւ ուրիշ
քաղաքներում կային բազմաթիւ մասնագիտական դպրոցներ ու դասընթաց-
ներ, ինչպէս սղագրութեան, կար ու ձեւի, գորգագործութեան, գինուորա-
կան, հաշւապահական, բժշկական, երկաթուղային, մանկավարժական,
երկրաչափական, հայերէն եւ օտար լեզուների, սկաուտական եւ այլն:

Գործում էին եւ այլազան ընկերութիւններ ու միութիւններ. Հայաս-
տանի Գրական Ընկերութիւնը, Հայաստանի Մարմնամարզական Ընդհանուր
Միութիւնը, Հայաստանի Տեխնիկական, Իրաւաբանական, Բժշկական, Ու-
սուցչական, Ուսանողական Միութիւնները, Հրատարակչական Ընկերութիւ-
նը, Զօրա–Տնտեսական Ընկերութիւնը, Հայաստանի Շախմատիստների Ըն-
կերութիւնը, «Դիւցազն» մարզական ակումբը Երեւանում, Երիտասարդ
պրոգէտների «Պանդոկ» խումբը, Երեւանի Հայուհեաց Միութիւնը, Հայաս-
տանի «Մանկապարտէզ» Ընկերութիւնը, Վասպուրականի Կանանց Միութիւ-
նը, «Ռոստոմ» գրադարանը, 20–ի չափ հայրենակցական ընկերութիւններ
եւ այլն:

Հանրային կրթութեան եւ արւեստի նախարարութեան կից ստեղծւեց
Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէ, որի նպատակն էր պա-
հել Հայաստանի հնութիւնները, թոյլ չտալ, որ փշանան մարդկանց ձեռքով
կամ բնական պատահարներից ու ժամանակի ազդեցութիւնից, փլչելու են-
թակայ շէնքերին հասցնել ճարտարապետական օգնութիւն, ոչնչացման դա-
տապարտւած հնութիւնները նկարել, քանդակել եւ այլն: Կոմիտէին էր

վերապահված նաեւ հսկողութիւնը պեղումների վրա կամ անմիջապէս պեղումներ կատարելը:

Հնութեանց Պահպանութեան Կոմիտէի կազմն էր. պրոֆեսորներ Գաբրիէլ եպ. Ցովսէփեան, ակադ. Ա. Թամանեան, Աչխարհբէգ Մելիք—Քալանթարեան: Կոմիտէի հետաքրքրութեան ու ղրաղումի առաջին առարկան եղան Անիի աւերակները: Ճարտարապետ Թ. Թորոմանեանի ղեկուցման հիման վրա պիւղատնտեսութեան նախարարութիւնը որոշեց Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին յատկացնել լքեալ Անի գիւղի հողերը, որ մաղրեց սերմացու, եւ այդ գիւղը դարձաւ Անիի հնութիւնների պահպանութեան կենտրոն: Ճարտ. Թորոմանեանը հաստատուեց այնտեղ:

1920 թ. յուլիսին, Կոմիտէն կազմակերպեց դիտական մեծ արշաւանք, որին մասնակցեցին ճարտարապետներ Թորոմանեանն ու Տէր-Միքայէլեանը, հայ արուեստին քաջածանօթ ռուս ճարտարապետ Գալկինը, նկարիչ Եղիշէ Թադէոսեանը իր աշակերտներ Մկ. Մարգարեանի եւ Ստ. Թարխարարեանի հետ, նկարիչ Տեղոյեան ամուսինները, «Գեղարուեստ»-ի խմբագիր Գ. Լեւոնեանը, լուսանկարիչ Վաղ. Ցակոբեանը եւ ուրիշներ: Արշաւախմբին մասնակցում էին եւ Կոմիտէի անդամներ Գարեգին եպ.-ը եւ Մելիք-Քալանթարեանը:

Արշաւախումբը իր աշխատանքների կենտրոն ընդունեց Անին, որտեղից աստիճանաբար պիտի տարածւէր դէպի Կարս, Ալեքսանդրապոլ եւ Արարատեան դաշտ: Այսպիսով, ամբողջ երկիրը հետազօտելուց յետոյ, պիտի կազմէր Հայաստանի հնագիտական քարտէսը: Հետազօտութիւնները կատարւում էին նախօրօք մշակւած ծրագրի համաձայն: Զուգընթացաբար հանւում էին որմանկարներ, յատակագծեր, չէնքերի եւ արժէքաւոր տեղերի, խաչքարերի, արձանագրութիւն կրող քարերի ու չէնքերի, քանդակների, պատկերների նկարները: Հաւաքւած նիւթերը պիտի կենտրոնացւէին մայրաքաղաքի պետական թանգարանում, պիտի հիմնւէին տեղական թանգարաններ: Հնագիտական հետազօտութիւնների տեսակէտից երկիրը բաժանւել էր մի քանի շրջանների, որոնք հետզհետէ պիտի ուսումնասիրւէին:

Օգոստոսի կէսերին, Անիում, նախագահութեամբ ակ. Ա. Թամանեանի, տեղի ունեցաւ խորհրդակցութիւն Կոմիտէի եւ արշաւախմբի տեղ հասած անդամների՝ կատարւելիք աշխատանքների մասին. մշակւեց հետազօտութիւնների գործադրական ծրագիրը, բաժանւեցին աշխատանքները եւ ամէն ոք անցաւ գործի: Մի խումբ՝ գլխաւորութեամբ Աչխարհբէգ Մելիք-Քալանթարեանի եւ մասնակցութեամբ ճարտ. Ա. Գալկինի, ճարտ. Լ. Ցախորեանի, լուսանկարիչ Վաղ. Ցակոբեանի, ուսանողուհիներ Ս. Մելիք-Քալանթարեանի, Վարս. Ցովհաննիսեանի ու Հեղ. Թառայեանի եւ Ե. Ամիրեանի, Գ. Ցակոբեանի ու Մ. Պապայեանի մեկնեց Տիկոր, ուր աշխատեց մի ամիս, մինչեւ սեպտ. 18, պտտեց ծրագրւած շրջանը — Անի—Արջուռ—Առիճ—Ալաման—Տիկոր—Ախկոնք (Բէչ-Քիլիսա)—Ագարակ—Ջալալ-Ծպնի—Նախճաւան—Բազարան—Մրեն, որտեղից դուրս եկաւ Արագած կայարանը: Իր գիտական ճամբորդութեան ընթացքին խումբը հաւաքեց մեծ քանակու-

թեամբ նիւթեր, կատարեց յուշարձանների մանրամասն չափագրութիւն, քաշեց բազմաթիւ լուսանկարներ, հանեց քանդակների էստամպաժներ, գրատաւ մեծ թուով անյայտ արձանագրութիւններ: Բացի քրիստոնէական հնութիւններից, գլխաւորապէս 5րդ եւ 7րդ դարերի, խումբը երեւան բերեց ընդարձակ ծաւալով եւ լաւ պահպանուած նախապատմական հնագոյն ժամանակների բնակութեանց եւ չինութեանց մնացորդներ: Միաժամանակ տեղերում ստեղծուեցին յատուկ մարմիններ՝ ապահովելու համար հնութիւնների պահպանութիւնը:

Անիում կատարուեցին եւ նկարչական աշխատանքներ՝ նկարիչներ Թարխարարեանը եւ Մարգարեանը նկարեցին բազմաթիւ արժէքաւոր որմանկարներ:

Երկրորդ խումբը՝ առաջնորդութեամբ Գարեգին եպ.-ի եւ մասնակցութեամբ ճարտ. Եղիազարեանի եւ քանդակագործ Պետրոսի մեկնեց Երեւանից յուլ. 8-ին եւ վերադարձաւ 28-ին՝ ունենալով շատ յաջող աշխատանքներ:

Պատերազմը արգելք եղաւ այս աշխատանքներին էլ:

Կառավարութեան հոգածութեան առարկայ էր եւ Սեւանայ լճի նաւարկութիւնը: Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին շոգեմակոյկը: Մի քանի շաբաթ յետոյ սկսեց գործել «Աչոտ Երկաթ» «ռազմանաւը» մի արագահարուած թնդանօթով: Հիմք դրուեց մի աւելի մեծ շոգենաւի չինութեան: Սեպտ. 3-ին Շահթախթից երեւան բերուեց «Սեւտրիցա Նիւշա» շոգենաւը, որ ռուսները տանում էին Վան եւ թողել էին կէս ճանապարհին: Նաւը վերանաւանուեց «Գեղանոյշ» եւ նոյնպէս պիտի փոխադրուէր Սեւան: Ենթադրւում էր Սեւանի բոլոր եզերքները կապել նաւային հաղորդակցութեամբ եւ հետզհետէ զարգացնել նաւագնացութիւնը:

Սեւանի նաւագնացութեան ոգին էին Մորհրդարանի անդամ Տիգրան Շամհուրը — «ծովակալ Սէյմուր» — եւ երիտասարդ ծովային սպայ Թումանեանը, որ այնպէս գաժանօրէն սպանուեց բոլշեւիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը: Հօր՝ պրոֆ. Թումանեանի հետ եկել էր Բեսարաբիայից: Հայրը վարում էր դրամների տպագրութեան գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով, նւիրուել էր «հայկական նաւատորմիղի» ստեղծագործման: Քաղաքականութեամբ չէր հետաքրքրւում, բայց, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ անմիջապէս, դարձաւ քաղաքական առաջին գոհը:

Ցուլիսին կառավարութիւնը հաստատեց ակադ. Ալ. Թամանեանի կազմած եւ նկարիչ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի (դերբի) նախագիծը: Զինանշանի կենտրոնում կար վահանաձեւ մի տարածութիւն՝ բաժանուած չորս մասի. իւրաքանչիւր մասում տեղաւորուած էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մէկի զինանշանը՝ Արտաշիսեան, Արշակունեաց, Բագրատունեաց, Ռուբինեանց: Մէջտեղը դրւած էին մեծ ու փոքր Մասիսները եւ նրանց վերեւ՝ Հ. Հ. տառերը: Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիւ եւ մի առիւծ, իսկ ներքեւը՝ սուր, դրիչ, հասկեր եւ շղթայ:

Այս զինանշանը լուրջ առարկութիւններ առաջ բերեց թէ կառավարութեան մէջ եւ թէ դուրսը: Ոմանք դժգոհ էին, ընդհանրապէս, զինանշանի գաղափարից ու ոգուց. վերարտադրում էր հին, անցած դարերի աւատապետական գաղափարները, չէր համապատասխանում նոր Հայաստանի պարզ, ոամկավար, յառաջադէմ ոգուն: Ուրիշներ գտնում էին շատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտայայտիչ: Կային մարդիկ էլ, որոնք նոյնիսկ պատմական ճշտութեան հակասող փաստեր էին գտնում զինանշանի մէջ, օրինակ, որ հայոց մէջ ընդունուած չի եղել երկ-



դլխեան արծիւը, որ Տիգրան Մեծի թագի վրայի թռչունները եղել են աղաւնիներ եւ ոչ արծիւներ եւ այլն: Եւ, վերջապէս, զինանշանը չէր գոհացնում մարդկանց դեղասիրական ճաշակին. իր մէջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարեալ գազանանոց» սրախօսում էին ամանք:

Բայց եւ այնպէս, կառավարութիւնը հաստատեց ներկայացուած նախագիծը, որովհետեւ պատմական կամ դեղագիտական ուսումնասիրութիւններ անելու ժամանակ չկար: Հաստատեց ժամանակաւոր կերպով, մինչեւ Սահմանադիր Ժողով, ինչպէս եւ պետական դրօշը, բնականաբար:

Յուլիս 5–ին հաստատուեց Հայաստանի քաղաքացիութեան հետեւեալ օրէնքը.

«1. Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է ճանաչւում ամէն մի նախկին ռուս եւ տաճկահպատակ, որը սոյն օրէնքի հրատարակման ժամանակ ապրում է Միացեալ Հայաստանի սահմաններում:

«2. Միացեալ Հայաստանի սահմաններում ապրող նախկին ռուս կամ տաճկահպատակները իրաւունք ունեն սոյն օրէնքի հրատարակման օրից երեք ամսւայ ընթացքում, հրաժարուել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնն ընդունելուց, խնդիր ներկայացնելով տեղական հաշտարար դատարանին:

«Ծանօթութիւն. 1. Հայկական ծագում ունեցող զինապարտ տղամարդիկ կարող են հրաժարուել Հ. Հանրապետութեան հպատակութիւն

ընդունելուց միայն զինուորական ծառայութիւնը աւարտելուց եւ կամ նրանից ազատուելուց յետոյ:

«3. Հպատակութիւն ընդունելուց հրաժարուող անձինք պարտաւոր են հեռանալ Հայաստանի Հանրապետութեան սահմաններից: Հեռանալու ժամանակամիջոցը, գոյքերի լիկուիդացիայի կարգը, ինչպէս նաեւ այդ անձանց Հայաստանի սահմաններում մնալու թոյլտուութեան կանոնները, կ'որոշուի յատուկ օրէնքով:

«4. Հայաստանի Հանրապետութեան հպատակ են ճանաչւում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնուած են Միացեալ Հայաստանի տերիտորիայում, բայց այժմ ապրում են Հայաստանի սահմաններից դուրս:

«Ծանօթութիւն. 1. Ներքին Գործերի Նախարարի թոյլտուութեամբ Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը կարող են ընդունել նաեւ ոչ հայ ծագում ունեցող այն անձինք, որոնց ծնողները կամ իրենք ծնուել են կամ մշտապէս ապրած են եղել Միացեալ Հայաստանի սահմաններում, բայց սոյն օրէնքի հրատարակելու ժամանակ գտնուած են եղել Հայաստանի սահմաններից դուրս, եթէ այդպիսիները սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարուայ ընթացքում Ներքին Գործերի Նախարարութեան ներկայացնեն յայտարարութիւն իրենց հպատակ արձանագրուելու մասին:

«5. Բոլոր հայ ծագում ունեցող օտար պետութեանց հպատակները եւ կամ այդ պետութեանց քաղաքացիութիւն ձեռք բերողները իրաւունք ունեն իրենց եւ կամ իրենց ոչ չափահաս երեխաների անունից սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարուայ ընթացքում յայտարարելու իրենց Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ընդունելու մասին՝ ներկայացնելով այս առթիւ համապատասխան յայտարարութիւն երկու պետութիւնների ձեռնհաս հաստատութեանց»:

Հպատակութեան հարցը երկար բանակցութիւնների նիւթ դարձաւ եւ հայ-վրացական խորհրդաժողովում, որ 1920 թ. ամառն էլ շարունակեց: Վրացիները հակառակում էին, որ Վրաստանի հայ հին բնակիչները դառնան հայահպատակ: Նոյն խորհրդաժողովում նորից քննւեց եւ չլուծւեց սահմանների խնդիրը. այս անգամ վրացիները պահանջում էին Լոռին մինչեւ Սանահին, ամբողջ Ախալքալաքի գաւառը, Արդահան եւ Օլթի գաւառների որոշ մասերը: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ կնքւեց դատական համաձայնութիւն եւ 1919 թւի թրանզիտի օրէնքը լրացւեց բացատրութեամբ, որով ռազմանիւթն էլ փոխադրուելու էր սովորական ապրանքների պայմանով: Մինչեւ այդ վրացիները արգելքներ էին յարուցանում եւ, օրինակ, Հայաստանի համար Ղրիմից «Ֆենիկս» նաւով եկած 3 միլիոն փամփուշտը բաց թողին միայն 30%ը ստանալուց յետոյ:

Օգոստ. 2 Խորհրդարանի նիստում Հայաստանի ներքին շինարար աշխատանքը նիւթ դարձաւ վարչապետի ընդարձակ զեկուցման: Այդ նիստում, Սոց.-Յեղափ. Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութիւնը յայտա—

բարեց, որ ինքն այլեւս ճանաչում է Հայաստանի անկախութիւնը: Գատդամաւոր Ա. Յոնդկարեանը արաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Մեր պատգամաւորութիւնը Եւրոպայում միշտ խօսում էր եւրոպական պետութիւնների մանդատի մասին, իսկ այսօր քաղաքական պայմաններն այնպէս են դասաւորւած, որ ժամանակ է յայտարարել, թէ մեր պետութիւնը պիտի ապրի ինքն իր ուժով: Այսօր, սակայն, ռուսական օրիէնտացիան նոյնպէս գործնական օգուտ չի տալիս մեր պետութեան՝ թէ Անդրկովկասում ստեղծւած դրութեամբ եւ թէ իր ներկայ իդէոլոգիայով: Եւ ես պարտք ունեմ յայտնելու այստեղ սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիայի կողմից, որ մենք եկած ենք այն համոզման, որ Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն անկախ: Ուրաքանչիւր ոյժ, որ դէմ կը գնայ այդ չահերին, կը դիտւի նոյնպէս թշնամի, եւ մենք դէմ պիտի գնանք նրան»:

Զգոյշ ու վարանոտ՝ հայ սոցիալիստ-յեղափոխականներն եւս գալիս էին կանգնելու Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա, եւ Յորդրդրանը բուռն ծափերով ու բացականչութիւններով ողջունեց նրանց այդ քայլը: Այսպիսով, այսուհետեւ Հայաստանի բոլոր քաղաքական հոսանքները, բացի բոլշեւիկներից, կողմնակից էին անկախութեան:

Հայաստանի բնակիչներից ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախութեամբ ոգեւորւում էին եւ Հայաստանից դուրս գտնւող հայերը, որոնցից շատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխւել Հայաստան: Կառավարութիւնը անհաչիւ համախոհականներ ու դիմումներ էր ստանում, պատգամաւորութիւններ ընդունում՝ Թուրքեստանից, Հիւսիսային Կովկասից, Դոնի շրջանից, Մոսկւայից, Սեւ ծովի եզերքներից, Բալկաններից, Միջագետքից, Պարսկաստանից, Հունգարիայից, անգամ Արժանթինից, որոնք խնդրում էին փութացնել ներգաղթը: Շատերը արտօնութեան էլ չէին սպասում. վերջացնում էին իրենց գործերը, ծախում-ծախծխում ունեցածը եւ շտապում Հայաստան: Շատերին յաջողւեց հասնել, ոմանք մնացին ճանապարհին, շատ շատերն էլ իրենց տեղերում, մեկնելու պատրաստ վիճակի մէջ: Երեւանը հետզհետէ դառնում էր համահայկական քաղաք: Մի ճամբորդ հետեւեալ ձեւով էր նկարագրում իր առաջին տպաւորութիւնները Հայաստանի մայրաքաղաքից.

«Երբ մտնում էի Երեւանի ակումբը, տեսայ, որ իմ բոլոր ծանօթները Բագուից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին: Տէր Աստուած, ո՞վ չկար այնտեղ... Կազմւել էր մի հասարակութիւն, որի անդամները հէնց նոր եկած, իրար գլխի թափւած՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչութիւն, նոր պետութեան քաղաքացիութիւն:

«Երազ է թւում այս բոլորը:

«Բայց սա իրականութիւն է: Հայաստանը կայ եւ պիտի լինի:

«Երեւան եկողը առաջին անգամ մի բան կը նկատէ, որ ոչ ոք պարապ չէ: Ամէն մարդ բանի է, ամէն ոք շտապում է Հոգածու հապճեպով: Զգւում է, Հայաստանի աւերմո՞ւնքն է շատ եւ հայ ժողովուրդը ջանում է վերաշինել, թէ՞ հարիւրաւոր տարիների խանգարիչ հանգամանքները վերա-

նալուց յետոյ հայը մի հանգիստ սրտով եկել է իր ազատ տունը եւ իրեն տւել է մի մոլութեան, որ յատուկ է հային. չինել, վերաչինել հէնց միայն, կարծես, չինելու համար...

«Ամբողջ ճամբան, որով եկայ Հայաստան եւ անցայ նրա մայրաքաղքը, աւերի հետքեր էին եւ չինող ձեռքի արդիւնքներ: Երեւանի փողոցներում տեսնում ես այդ աշխատասէր ժողովրդին: Արեւառ, խստադէմ, տրեխաւոր, կարկատնած, մտահոգ. դա հայ գիւղացին է — գործի է գնում... Այժմ հայ գիւղացին հաց եւ պաշար ունի՝ արիւն-քրտնքի գնով ձեռք բերած»:*)

Անկախութիւնը խօսք չէր այլեւս, այլ իրական փաստ, որ վաւերացւեց եւ միջազգային իրաւական ճանաչումով: Օգոստ. 10-ին ստորագրւեց Սեւրի դաշնագիրը: Հայաստանը դաշնադիր կողմ էր: Ստեղծւում էր Միացեալ Հայաստան: Հայի նւիրական երազը իրականութիւն էր դառնում:

Ա. Ահարոնեանը հետեւեալ ձեւով էր ներկայացնում «պատմական անցքի նկարագիրը», կառավարութեան ուղարկած զեկուցման մէջ**).

«Ճաշից յետոյ, ժամը 4-ին, երկու օթոմոբիլներով Փարիզից հասանք Սեւր: Ինձ ուղեկցում էին խորհրդականներ Ա. Ինֆիաջեանը, բժ. Ց. Նէվբուզը եւ 2 քարտուղարներ: Սեւրի յախճապակու յայտնի գեղարւեստական գործարանի գլխաւոր դահլիճը պատրաստւած էր Խաղաղութեան Համաժողովին ընդունելու համար: Այդ դահլիճի ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետութեանց պատւիրակները. աջ ու ձախ պատերի տակ երկու թեւերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր: Հայաստանը իր տեղն ունէր ձախ թեւում, ռումէնների եւ չեխոսլովակների կողքին, ուր եւ ես տեղ բռնեցի, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղաւորւեցին պատւիրակների թիկնաթոռների յետեւում, յատուկ պատրաստւած աթոռների վրա: Իմ առջեւ, սեղանի վրա, դրւած էր փոքրիկ քարտ, որի վրա գրւած էր Plénipotentiaire d'Arménie.

«Ժամը 4-ից անց էր, երբ գրեթէ նստած էին բոլոր պետութիւնների ներկայացուցիչները, ներս մտաւ Համաժողովի նախագահ պ. Ա. Միլլերան: Բացակայում էին միայն թիւրք պատւիրակները, որոնք սպասում էին վարի յարկում: Նախագահի նշանի վրա նրանց ներս բերին, եւ առաջնորդող սպասաւորը մուտքի առաջ կոչեց բարձրաձայն՝ «Messieurs les Plénipotentiaires de l'Empire Ottoman!»: Համաժողովը ոտքի կանգնեց ի նշան ողջոյնի: Կարմիր ֆէսերը գլուխներին, երկար բեռենգոտ հագած՝ ներս մտան երեք թիւրք պատւիրակները, գլխի թեթեւ շարժումով ողջունեցին Համաժողովը եւ իրենց տեղերը գրաւեցին, յոյներից վեր: Գրեթէ անմիջապէս յետոյ, ոտքի ելաւ պ. Ա. Միլլերան եւ ասաց հետեւեալը.

«Պարոննե՛ր, ես յայտարարում եմ, որ այս դաշնագիրը, որ պիտի

---

*) «Աշխատաւոր», 22 հոկտ. 1920.

**) Հ. Հ. Պատւիրակութեան «Գործ» N° 101, Աեւրոնեանի 19 օգ. ցամակը Հայաստանի արտ. գործոց նախարարին:

ստորագրենք, միանգամայն համապատասխան է երկու կողմերի ընդունածին»:

«Ապա հրաւիրեց Թիւրքերին ստորագրել: Ոտքի ելան Հադի փաշա, Ռիզա Թեւֆիկ բէյ եւ Խալիլ բէյ, վճռական քայլերով մօտեցան կենտրոնի սեղանին, ուր դրուած էր դաշնագիրը եւ իրար յետեւից ջղուտ շարժումներով ստորագրեցին այն եւ գրեթէ հապճեպով գնացին իրենց տեղերը: Այնուհետեւ ստորագրեցին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչները եւ նրանցից անմիջապէս վերջը հրաւիրեցին ինձ: Այսպիսով, պետութիւնների այբբենական անուանակարգի շնորհիւ Հայաստանը (Arménie) կրտսեր դաշնակիցների մէջ ստորագրեց առաջինը... Ես ստորագրեցի երեք ակտ. 1) Թիւրքական դաշնագիրը. 2) Մեր երկրի փոքրամասնութեանց վերաբերեալ դաշնագիրը Հայաստանի եւ մեծ պետութիւնների միջեւ եւ 3) Մի արձանագրութիւն Հէջազի և Իւգո–Սլաւիայի բացակայութեան մասին*):

---

*) Սեւրի դաշնագրի մէջ Հայաստանին յատկացուած էր մի ամբողջ բաժին — «բաժին VI» — 88–93 յօդուածները, որ առաջ ենք բերում ամբողջութեամբ.

«Յօդ. 88. Թիւրքիան յայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը, ինչպէս այդ արել են արդէն դաշնակից պետութիւնները, որպէս ազատ եւ անկախ պետութիւն:

Յօդ. 89. Թիւրքիան եւ Հայաստանը այլ եւ ուրիշ բարձր դաշնադիր կողմերը, համաձայնւում են Ամերիկ. Միաց. Նահանգների նախագահի իրաւարար վճռին յանձնել սահմանի որոշումը Թիւրքիայի եւ Հայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներում եւ ընդունել նրա վճիռը, այլ եւ բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրահանգել Հայաստանի դէպի ծով ելք ունենալու եւ յիշեալ սահմանին կից գտնուող օսմանեան որեւէ հողի զինաթափման մասին:

Յօդ. 90. Այն պարագային, երբ սահմանի որոշումը 89րդ յօդուածի հիման վրա ունենայ այն հետեւանքը, որ Հայաստանին յանձնուի յիշեալ նահանգների հողի ամբողջութիւնը կամ մէկ մասը, Թիւրքիան անյապաղ յայտարարում է, որ ինքը հրաժարւում է վճռի օրից սկսած բոլոր իրաւունքներից ու իրաւահիմունքներից յանձնուած հողի վրա: Սոյն դաշնագրի այն կէտերը, որոնք կիրառելի են Թիւրքիայից անջատուած հողերի վերաբերմամբ, այս վայրկեանից պիտի կիրարկուեն եւ այս հողի վերաբերմամբ:

Թիւրքիայի ելեւմտական պարտաւորութիւնների այն բաժինն ու բնոյթը, որ կրելու է Հայաստանը, ինչպէս նաեւ բաժինն ու բնոյթը այն իրաւունքների, որոնց վրա կարող է յանձնել նա՝ իր գերիշխանութեան տակ տրուած հողի կապակցութեամբ, տնօրինելու են համաձայն սոյն դաշնագրի 8րդ մաս յօդ. 241–244–ի (ելեւմտական դրութիւններ):

Յետագայ համաձայնութիւնները կը կարգաւորեն, եթէ այդ անհրաժեշտ լինի, բոլոր այն հարցերը, որոնք կարգաւորուած չեն լինի սոյն դաշնագրով եւ որոնք կարող կը լինեն առաջ գալ յիշեալ հողամասի յանձնումով:

Յօդ. 91. Եթէ 89 յօդուածի մէջ ցոյց տրուած հողի մէկ մասը յանձնուի Հայաստանին, այն ժամանակ սահմանագծող յանձնաժողովը, որի կազմը կորոշուի յետագային, կը կազմուի յընթացս երեք ամսուայ յիշեալ յօդուածում նախատեսնուած վճռից յետոյ՝ նպատակ ունենալով տեղն ու տեղը գծել սահմանը Հայաստանի եւ Թիւրքիայի միջեւ, որպիսին յայտնի կը լինի համաձայն յիշեալ վճռի:

Յօդ. 92. Հայաստանի սահմանները Ազրբէջանի եւ Վրաստանի հետ համապատասխան կերպով կորոշուեն շահագրգռուած պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ:

Եթէ այս կամ այն դէպքում, երբ արդէն 89 յօդուածում նախատեսնուած վճիռը տրուած լինի, շահագրգռուած պետութիւնները չկարողանան հասնել, ընդհանուր համաձայնութեամբ, իրենց սահմանների որոշման, վերջինս կորոշուի գլխաւոր դաշնակից պետութիւնների կողմից, որոնք միաժամանակ պէտք է հոգ տանեն անցկացնելու այն տեղում:

Յօդ. 93. Հայաստանը ընդունում է, համաձայնուելով մտցնել դաշնագրի մէջ գլխաւոր դաշնակից պետութիւնների հետ՝ այն որոշումները, որ այդ պետութիւնները անհրաժեշտ կը գտնեն՝ պաշտպանելու համար Հայաստանում շահերը այն բնակիչների, որոնք մեծամաս-

Օգոստ. 15–ին, դաշնագիրն ստորագրելու առթիւ, հանդիսաւոր մաղթանք կատարուեց Փարիզի եկեղեցում եւ ճաչից յետոյ, ժամը 4–ին, տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն մեր Պատւիրակութեան շինութեան մէջ: Շատ մեծ բազմութիւն հաւաքուեց տօնելու համար համազգային մեծ օրը՝ ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանուեցին, հայրենասիրական երգեր երգուեցին ի պատիւ Ազատ եւ Անկախ Միացեալ Հայաստանի»:

Սեւրի դաշնագրի ստորագրութեան առթիւ ժողովներ ու հանդէսներ տեղի ունեցան եւ Հայաստանում, ուր նոյնպէս «ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանուեցին» եւ «հայրենասիրական երգեր երգուեցին», բայց այնտեղ չուտով պիտի երգուէին եւ ուրիշ տեսակ երգեր: Այս նշաններն արդէն երեւում էին...

նութիւնից տարբերւում են ցեղով, լեզուով կամ կրօնով:

Հայաստանը համաձայնւում է, հաւասարապէս, մտցնել դաշնագրի մէջ գլխաւոր դաշնակից պետութիւնների հետ այն որոշումները, որ այդ պետութիւնները անհրաժեշտ կը դտնեն՝ պաշտպանելու համար Թրանզիտի ազատութիւնը եւ արդար իրաւակարգը ուրիշ ազգերի առեւտրի համար»:

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՒ ԹԻՒՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵԻ

ԳԼՈՒԽ Լ.

ՀԱՅ — ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, խորհրդայնացումից անմիջապէս վերջը, Ազրբէջանի Ցեղկոմը վերջնագիր ուղարկեց Հայաստանի կառավարութեան՝ պահանջելով դատարկել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից: Դեռ պատասխան չառած, մայիս 1-ին, Հայաստանի կառավարութիւնը ստացաւ մի ուրիշ վերջնագիր, այս անգամ 11-րդ կարմիր բանակի հրամանատարութեան կողմից: Վերջնագիրը ասում էր.

«Հայաստանի եւ մեր բարեկամ Խորհրդային Ազրբէջանի սահմաններում շարունակւում են պատերազմական գործողութիւնները Հայաստանի եւ Ազրբէջանի միջեւ: Ռուսաստանի բանուորագիւղացիական կառավարութիւնը իր սրբազան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնութեան հասնել Ազրբէջանի համայն աշխատաւորութեան անունից օգնութիւն խնդրող խորհրդային կառավարութեան, որպէսզի Ազրբէջանում վերջնականապէս հաստատւի բանուորա-գիւղացիական կառավարութիւնը: Անգլիայի եւ Դաշնակցութիւն ու Մուսաւաթ կուսակցութիւնների դրգռումով հայկական եւ ազրբէջանեան զօրքերի միջեւ ազգային հողի վրա տեղի ունեցող թշնամութիւնները չահաւէտ են միայն ճնշուած ժողովուրդներին յաղթողների եւ Հայաստանի ու Ազրբէջանի աշխատաւոր դասակարգերի չահագործողների համար: Ազրբէջանի եւ Հայաստանի միջեւ եղած սահմանային բոլոր վիճելի հարցերը կարող են լուծուել միայն աշխատաւոր եւ ինքնորոշուող ժողովուրդների կամքով: Խորհրդային Ազրբէջանը չի կարող պաշտպանել եւ ո՛չ մի չովինիստական ազգայնամոլ եւ յարձակողական գործ: Ազրբէջանում այլեւս չի կարող գոյութիւն ունենալ միջգեղային թշնամանք: Ցանուն Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնակցային Խորհրդային Հանրապետութեան առաջարկում եմ Հայաստանի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ռազմական բոլոր գործողութիւնները Խորհրդային Ազրբէջանում եւ իր զօրքերը դուրս հանել նրա սահմաններից: Այդ բանը պէտք է արւի ներկայ հեռագրի ստացումից յետոյ 24 ժամւայ ընթացքին: Սոյն պահանջի չգործադրւելը կը նկատւի իբրեւ մարտահրաւէր ուղղուած Ռ. Ս. Դ. Խ. Հ. հասցէին: Առաջարկը կիրա-

դործւի Ռուսաստանի կարմիր բանակի ուժերով, իսկ հետեւանքների պատասխանատուքիւնը կընկնի հայկական կառավարութեան վրա: Կովկասեան ճակատի Յեղափոխական Բանակի Խորհուրդ — Օրջոնիկիձէ, Առաջին Բանակի Ռազմայեղափոխական Խորհուրդ — Ֆիրով, Մէխանոշին, Լեվանդովսկի· 1 մայիս, 1920 թ.»:

Պարզ էր, ուրեմն· Խորհրդ· Ազրբէջանը Հայաստանի վերաբերմամբ անչեղ չարունակում էր մուսաւաթական Ազրբէջանի քաղաքականուքիւնը, իսկ Խորհրդային Ռուսաստանը ամէն կերպ աջակցում էր նրան: Ի՞նչ էր մնում անել Հայաստանին. — բողոքել: Եւ ահա սկսւում է հեռագրական բողոքների մի երկար չարք՝ Լենինին, Ձիչերինին, Օրջոնիկիձէին եւ «ամենքին, ամենքին, ամենքին»: Իսկ մինչ այդ Ղարաբաղի ուղղուքեամբ չարժւում էին մեծ քանակուքեամբ ռուս եւ ազրբէջանցի զօրքեր: Եւ երբ բոլշեւիկեան ուժերը Ղարաբաղի ճակատում արդէն այնքան էին, որ կարելի էր սկսել վճռական գործողուքեան, մայիս 21–ին Դրոյի մօտ եկան Օրջոնիկիձէի ներկայացուցիչներ Ս. Տէր–Գաբրիէլեանը, Կայդալովը ու Պերնանին եւ յայտարարեցին, որ խորհրդային իշխանուքիւնը որոշել է դրաւել Ղարաբաղը մինչեւ Հաքեարի գետը: Դրօն բողոքեց՝ յայտնելով, որ նման հարցերի համար պէտք է դիմել Հայաստանի կառավարութեան, բայց ստիպւած տեղի տւեց եւ, մայիս 26–ին, իր էքսպեդիցիոն զօրամասով հեռացաւ Ջանգեզուր:

Հայաստանի կառավարուքիւնը վճռական բողոք ուղարկեց Մոսկւա, բայց այս էլ, միւս բոլոր բողոքների նման, մնաց անհետեւանք:

Հետեւանք չունեցան եւ Հայաստանի ու Խորհրդային Ազրբէջանի միջեւ սկսւած բանակցուքիւնները: Յեղաշրջումից յետոյ ուրիշ ներկայացուցիչների հետ ձերբակալւել էր եւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մ. Ցարուքիւնեանը՝ ներկայացուցչուքեան բոլոր անդամների հետ միասին: Ներկայացուցչուքիւնը մատնւել էր Թալանի: Այդ, ինչպէս եւ Հայաստանի ու Ազրբէջանի միջեւ վէճի առարկայ եղող հարցերը լուծելու նպատակով՝ սկսւեցին բանակցուքիւններ Ազրբէջանի Յեղկոմի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ: Բանակցուքիւնները վարում էին Ազրբէջանի Յեղկոմի անդամ Հուսէյնովը եւ Հայաստանի Թիֆլիսի դիւանագ. ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը: Առաջարկւեց դումարել խորհրդաժողով — ազրբէջանցիք ուզում էին Բագւում, հայերը՝ Ղազախում: Հայաստանի կողմից պատւիրակուքեան անդամ նշանակւեցին Մ. Ցարուքիւնեանը*), Տ. Բէգզադեանը, Ն. Ազբալեանը եւ Կ. Ղազազեանը: Ազրբէջանի կողմից՝ նախագահ Իբրահիմ Աբալով, անդամներ՝ Լոմինաձէ եւ Միկոյեան: Խորհրդաժողովի հետ կապւած խնդիրները, ինչպէս եւ Ազրբէջանի Երեւանի ներկայացուցչուքեան վիճակը կարգաւորելու համար, օգոստոս 14–ին, Երեւան եկաւ Ազրբէջանի Յեղկոմի ներկայացուցիչ Դովլաքեանը քարտուղար Գասպարեանի եւ սուրհանդակ Մորիս Ֆաբրի հետ: Աւելի չուտ լրտեսական մի խումբ էր այդ: Ի հարկէ, այդ բանակցուքիւններից էլ բան դուրս չեկաւ. Ազրբէջանի

*) Խորհրդաժողովի առքիւ Մ. Ցարուքիւնեանը արձակւեց բանտից:

վարիչները դիտմամբ դրութիւնը թողնում էին անորոշ ու խճողւած, որպէսզի աւելի հեշտութեամբ իրականացնէին իրենց «մուսաւաթական ծրագրերը»: Նրանց չանքն էր ինչ գնով եւ լինի կցել Ազրբէջանին Ղարաբաղ—Զանգեզուր—Շարուր—Նախիջեւանը: Ազրբէջանցի բոլշեւիկները էլ, մուսաւաթականների եւ իթթիհատականների պէս, աշխատում էին Ազրբէջանը կապել «յեղափոխական» Թիւրքիային, ինչպէս եւ թիւրքերը չանք էին թափում Ազրբէջանը պահել իրենց ազդեցութեան տակ եւ օգտագործել իրենց քաղաքական նպատակներին: Հէնց Ազրբէջանի խորհրդայնացումը թիւրքերի գործն էր: «Կարմրացնելով» Ազրբէջանը, թիւրքերը առնում էին նրան բոլշեւիկ-քեմալական ազդեցութեան շրջանի մէջ եւ մի կողմից դարձնում համաթիւրքական գործունէութեան յենարան Կովկասում եւ Թուրքեստանում, միւս կողմից՝ հաղորդակցութեան ուղիղ ճանապարհ Մոսկւայի եւ Անգորայի միջեւ:

Բոլշեւիկ-քեմալական գործակցութեան ուժեղացման տեսակէտից ահագին դեր կատարեց եւ Արեւելեան ժողովուրդների Համագումարը Բագւում: Այստեղ հաւաքւեցին համիսլամական եւ համաթիւրքական չարժման ամենակարկառուն դէմքերը՝ Էնվէր, Ջալիլ փաշաները, Բիւշիւկ Թալէաթ, Բէհաէդդին Շաքիր եւ ուրիշ չատ ջարդարարներ: Արեւելեան ժողովուրդների Համագումարը ոչ միայն միջոց եղաւ յեղափոխութեան քարոզչութեան Արեւելքում, այլ եւ նրա մէջ հիմք դրւեց բոլշեւիկ-քեմալական գործնական քաղաքականութեան Առաջաւոր Ասիայում եւ, մասնաւորապէս, Հայաստանի դէմ: Կասկած չկայ, որ Բագւում գործնական ձեւ ստացաւ եւ պատերազմի խնդիրը Հայաստանի դէմ: Ըստ կայացած համաձայնութեան, Հայաստանի խորհրդայնացման նպաստելու դիտաւորութեամբ, թիւրքերը պիտի չարժւէին Հայաստանի վրա մինչեւ Սարըղամիշ:

Բոլշեւիկ—Քեմալական—ազրբէջանեան գործակցութեան մասին չատ նիւթեր կան հրատարակւած*) եւ հաղիւ թէ կարիք լինի երկար վկայութիւններ բերելու, բայց մի երկու փաստ, այնուամենայնիւ, արձանագրենք. 1920 թ. ապրիլ 15-ին, Էրզրումում, Ազրբէջանի գինւ. նախարարի օգնական գօր. Ալի Ագա Շեխլինսկիի եւ թիւրքական 15րդ բանակի հրամանատար Քեազիմ կարաբեքիր փաշայի միջեւ: Այդ համաձայնագիրը պիտի փոխարինէր 1919 թւի նոյեմբ. 29-ին, Պոլսում կնքւած, թիւրք-ազրբէջանեան գաղտնի դաշնագիրը**): Ինչպէս եւ այս վերջինը, Էրզրումի դաշնագիրն էլ իր մի մասով ուղղւած էր Հայաստանի դէմ:

Այդ դաշնագրի 5րդ կէտը բառացի կերպով ասում էր. «Ազրբէջանի կառավարութիւնը խոստանում է չարունակել նպաստել Մորհրդ. Ռուսաստանին եւ «Անատոլիայի ու Ռումելիայի իրաւունքների պաշտպանութեան

*) Հէնց Անգորայի 1926 թ. դատավարութեան արձանագրութիւնները բաւական են հաստատելու համար, որ թիւրք-բոլշեւիկեան գործակցութիւնը 1920 թ. փաստ էր:

**) «Ռազմիկ», 1920 թ. յուլ. 12 N° 9, երեւան: Տե՛ս նաեւ Ս. Վրացեանի «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թիւրքական սալի միջեւ», Պէյրութ, 1953. այլեւ Զօր. Ալի Ֆուատի յուշերը: «Moskova Hatiraları» (21-11-1920—2-6-1922) 1955, Istanbul.

կոմիտէի» միջեւ մերձեցումն իրականացնելու։ Անհրաժեշտութեան դէպքում ինքն էլ է յարում այդ միութեան»։ Դրդ յօդւածը խօսում էր Հայաստանի մասին. «Անատոլիայի ու Ռումելիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէն վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Հայաստանը յարձակում գործէ Ազրբէջանի վրա, եւ Ազրբէջանի կառավարութիւնը վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Թիւրքիայի արեւելեան շրջանները կը տրւեն եւ կը միացւեն Հայաստանին, — այս երկու դէպքում էլ համաձայնութեան եկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմիանց շահերը եւ գործելու են որպէս միացած բանակ»։

Այս համաձայնութեան առթիւ էր, որ Քեազիմ Կարաբեքիրը գրում էր իր մի նամակում. «Մեր, Ազրբէջանի եւ բոլշեւիկների միջեւ կնքւած պայմանների հիման վրա, մեծ թիւ մեր սպաների, բժիշկների եւ պաշտօնեաների գնացել են Ազրբէջան։ Բոլշեւիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատերազմական գործողութիւններ սկսել հայկական սահմանների վրա, հայերի դէմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսացիների դէմ։ Դաղստանում կազմւած կանաչ բանակը՝ Էնվէրի, Նուրիի եւ Խալիլի ղեկավարութեամբ՝ պէ՛տք է ապրիլի սկզբներին աշխատէ մտնել Բագու։ Ազրբէջանեան զօրքերը պէտք է ցոյց տան կեղծ-խաբուսիկ դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակիցների հանդէպ։ Միանալով կանաչ բանակին՝ ազրբէջանեան զօրքերը պէտք է առիթ որոնեն ընդհարւելու Հայաստանի հետ եւ Անատոլիայում գտնւող թիւրք զօրքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները ու սկսեն զինւորական գործողութիւններ Հայոց Հանրապետութեան դէմ»։

Մի ուրիշ վկայութիւն. յայտնի կոմունիստ Սուլթան Գալիեւը 1920 թւի մայիսին գրում էր «Իզվեստիա»-յում. «Միլլի կազմակերպութիւնը Դենիկինի Մոսկւայի վրա գործած յարձակման ժամանակ նրա թիկունքում առաջացրեց ապստամբութիւն եւ ստիպեց կռւի վճռական րոպէներին նրա բանակից մի քանի զօրամասեր ուղղել դէպի յետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը։ Այդ ձեւով է աշխատել «Միլլի կազմակերպութիւնը», եւ Բաթումի, Կարսի, Արդահանի շրջաններում։ Ազրբէջանի բանակում աշխատող տաճկական սպաները գաղտնի քարոզչութիւն էին անում միանալու Խորհրդային Ռուսաստանի հետ։

Քաղաքական այդ գիծը «Միլլի կազմակերպութիւնն» աւելի պարզօրէն ցուցահանեց դաշնակիցների Պոլիսը գրաւելուց եւ թրքական ազգային երեսփոխանական ժողովը ցրելուց յետոյ։ Բագուի յեղաշրջումից ամիս ու կէս առաջ այնտեղ հասաւ Մուսթաֆա Քեմալի յատուկ մի պատւիրակութիւնը յայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են յարաբերութեան մէջ մտնել Խորհրդային Ռուսաստանի հետ եւ առաջարկում նրան կամ ուղարկել Անատոլու իրենց պատւիրակներին, կամ ընդունել իրենց առաքելութիւնը»։

1926 թ. փետր. 1-ին, Անգարայի անկախութեան ատեանի առջեւ, Էրզրումի ըմբոստութեան դատավարութեան միջոցին, ամբաստանեալներից մէկը՝ Հանգստեան կոչւած հարիւրապետ գրավաճառ Իսմայիլ Էֆֆենտին հե-



Մ· ՇԱՔԻՐԵԱՆ



Հ· ՄԵԼԻՔԵԱՆ



Հ· ՄԵԼՔՈՒՄԵԱՆ
(Նախկին գործ· ներքին գործ· նախարարութ· դիւանապետ)



ՄԱՐԳԱՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ՏԻԳՐԱՆ ՇԱՄՀՈՒՐ



ԲԺ· Ս· ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
(Բժշկապետ Զին· Հիւանդանոցի)

տեւեալ ուշագրաւ ցուցումները տուեց։ Նա յայտնեց, որ «1336–ին Քեազիմ կարաբեքիր փաշայի հրամանով գնաց Բագու արեւելեան ազգերի համաժողովին մասնակցելու համար. իր հետ ուրիշ ընկերներ էլ ունէր։ Բագուում այդ միջոցին գումարուած էր նաեւ մի կոմունիստական համաժողով. իրենք այդ համաժողովին մասնակցեցին լոկ իբրեւ խորհրդատուներ—Համաժողովին մասնակցեցին նաեւ Մուստաֆա Սուբհի, Բէհաէդդին բէյերը, Էնվէր փաշան, Քիւչուք Թալէաթ բէյը»։

Իր ցուցմունքները չարունակելով Իսմայիլ Էֆ. ասաց. «Քեազիմ կարաբեքիր փաշան իր բանակով կատարելապէս դէպի համայնավարութիւն էր գնում։ Հասան կալէում զինուորներն ու սպաները միասին էին լացում բաղնիքում եւ միասին էին ճաշում։ Փորձ եղաւ համայնավարութեան նմանող մի չարժում առաջ բերելու։ Նրա գլուխն էր գտնւում Բէհաէդդին Շաքիրը։ Մի չարք ծրագրներ էին ուղարկւել Էրզրում. բայց նրանք լաւ չէին. չփոթութիւն յարուցանելու բնոյթն ունէին։ Դրա վրա տեսնւեցինք Աբիֆ եւ Շիւքրի բէյերի հետ եւ որոշեցինք մեր յարաբերութիւնները խզել նրանցից։ Այդ միջոցին Քեազիմ կարաբեքիր փաշան արդէն այնպիսի նահանջ էր արել համայնավարութիւնից, որ դուք անգամ կը զարմանայիք։ Այդ միջոցին կազմւեց Նւիրականութեանց Պահպանման Ընկերութիւնը։ Մուստաֆա Սուբհին Բագուում արդէն գլուխ էր բերել իր կազմակերպութիւնը, զինուորներին պատրաստել էր, նոյնիսկ կոմունիստներ անգամ նշանակել էր եւ մեր երկիրը պիտի գար»։*)

Այս փաստերը կասկած չեն թողնում, որ բոլշեւիկների եւ թիւրքերի միջեւ գոյութիւն ունէր չատ սերտ բարեկամութիւն եւ գործակցութիւն։ 1920 թ. ամառը Մոսկւա էր գտնւում Անդորայի մի մեծ պատւիրակութիւն՝ Բէքիր Սամիի գլխաւորութեամբ։ Բագուի «Կոմունիստ»–ը յուլիս 20–ին հաղորդում էր Արմաւիրից, թէ Մոսկւա անցաւ թիւրքական մի պատւիրակութիւն Բեքիր Սամի բէյի նախագահութեամբ։ Պատւիրակութեան ասելով թիւրքիայում մեծ յաջողութիւն ունի կոմունիստական չարժումը։ Բէքիր Սամի բէյը յայտնել է, որ իրենք գնում են Մոսկւա երրորդ Ինտերնատիոնալի երկրորդ համագումարին մասնակցելու եւ խորհրդային իշխանութեան հետ կապեր հաստատելու նպատակով։

Միւս կողմից, Բագուն դառնում էր քեմալականների գործնական աշխատանքի կենտրոն։ Յուլիս 20–ին Մոսկւայից Բագու վերադարձաւ Թալիլ փաշան եւ մեծ հանդիսաւորութեամբ ընդունւեց խորհրդային իշխանութեան կողմից։ Նա անմիջապէս ձեռնարկեց «իսլամական բանակի» կազմակերպութեան։ Այդ բանակի կենտրոն նշանակւեց Ղուսար աւանը, ուր տեղի էր ունենում կամաւորների արձանագրութիւնը, մարզանքն ու կազմակերպումը։ Խորհրդային իշխանութիւնը աջակցում էր Թալիլ փաշային. հոգում էր բանակի ծախսը, հագուստը, զէնքն ու ռազմամթերքը եւայլն։ Բանակի սպայակոյտի պետը խորհրդային գլխաւոր սպայակոյտի մի սպայ էր։ Ռուսաս-

*) Ազատոլուի Գործակալութեան հեռագիրը «Մարմարա», 1926 թ., փետր. 3.

տանի զանազան կողմերից՝ Ղրիմից, Կազանից, Ուֆայից, Թուրքեստանից խումբ–խումբ ուղարկւում էին մահմեդական երիտասարդներ եւ մտցւում բանակը: Խալիլ փաշայի տրամադրութեան տակ էին եւ Սիբիրից վերադարձող թիւրք գերիները, կարգապահութիւնը «իսլամ բանակում» շատ դաժան էր: Զօրամասերը պատրաստւում էին արագութեամբ, այդ բանակով Խալիլ փաշան, Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով, պիտի անցնէր Թիւրքիա:

Այսպէս, մինչ ադրբէջանցիներն ու թիւրքերը բացայայտ կերպով դաւեր էին լարում Հայաստանի դէմ, կոմունիստները, մանաւանդ հայ կոմունիստները, անսանձ ու մոլեգին պայքար էին մղում նոյն Հայաստանի դէմ: Անհաշիւ են եւ անորակելի այդ դաւերը: Բոլշեւիկները անվերջ գրում ու խօսում էին Հայաստանում տիրող «սպիտակ տեռորի» մասին, տարածում էին շինծու եւ զրպարիչ տեղեկութիւններ, Հայաստանը ներկայացնում էին իբրեւ մի երկիր, ուր դահիճներն են թագաւորում, ուր ամէն օր կոմունիստների զանգւածային սպանութիւններ են կատարւում:

Ադրբէջանի խորհուրդների պաշտօնաթերթ «Կոմունիստ»-ի մայիս 20-ի համարում կարդում ենք Հայաստանից Աղստաֆա հասած բոլշեւիկեան մի պատուիրակութեան դիմումը 11րդ բանակին.

«Ընկերնե՛ր, ապրիլ 28-ին ռադիօն հաղորդեց մեզ այն ուրախալի լուրը, որ ադրբէջանական բէգերի ու խաների հակայեղափոխական կառավարութիւնն ընկել է եւ իշխանութիւնը անցել է մեր կոմունիստ ընկերների ձեռքը: Այս ուրախալի լուրն իսկոյն տարածւեց ամբողջ Հայաստանում: Հէնց որ կատարւած դէպքը յայտնի դարձաւ Հայաստանի բանւորներին ու գիւղացիներին, նրանք սկսեցին պատրաստւել՝ թօթափելու դաշնակների հակայեղափոխական կառավարութեան լուծը եւ մայիս 11-ին բարձրացրին ապստամբութեան կարմիր դրօշը: Զգալով կարմիր վտանգը՝ դաշնակները դիմեցին իրենց սովորական զէնքին ու պրովոկացիային: Նրանք տարածեցին, որ նոր Ադրբէջանում իշխանութիւնը բոլշեւիկեան չէ եւ որ Բաքուի կարմիր յեղաշրջման լուրերը տարածում են տեղական հայ կոմունիստները, որը չի համապատասխանում իրականութեան: Նրանք սպառնում էին որ եթէ ազգաբնակութիւնը հետեւի բոլշեւիկներին, Ամերիկան Հայաստանին հաց չի տայ: Նրանք յօրինեցին կեղծ նոտաներ, որոնք, իբր թէ, Խորհրդային Ադրբէջանի կողմից ուղղւած են եղել Հայաստանին՝ նրա վրայով զօրք տեղափոխելու Տաճկաստանին օգնելու նպատակով: Բարեբախտաբար, այս պրովոկացիաները յաջողութիւն չունեցան եւ մայիս 12-ին Ալեքսանդրապոլի պրոլետարիատը չքաւոր գիւղացիութեան ու զինւորների հետ տապալեց Ալեքսանդրապոլում դաշնակների ատելի իշխանութիւնը եւ սկսեց առաջ շարժւել Կարսի, Սարըղամիշի, Ղարաքիլիսայի եւ Երեւանի ուղղութեամբ:

«Ի պատասխան դրան դաշնակները արտաքին պատերազմ առաջացրին բէյլիք–վեզիրների եւ Իգդիրի, Սարըղամիշի ու Կարսի քիւրդերի հետ, որով գրաւեցին կարմիր զինւորների ուշադրութիւնը, մինչեւ իրենց մաուզերիստների 3000-նոց բանդայի ու կաշառւած դենիկինեան սպաների գլուխ անցած՝ թիկունքից յարձակւեցին կարմիր Ալեքսանդրապոլի փոքրաթիւ պա-

հակախմբի վրա, կոտորելով երկու հազար անպաշտպան բանւորներ ու գիւղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակայեղափոխական իշխանութիւնը:

«Դաշնակների ահաբեկման սիստեմը սոսկալի է. ամէն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են: Շատ ընկերների վիճակը մեզ անյայտ է: Բայց դա չի ընկճել հայ պրոլետարիատի կամքը. նա պատրաստ է նորից ապստամբելու: Մենք եկել ենք ձեզ հետ կապ հաստատելու: Հայաստանը սպասում է ռուս կարմիր զօրքերին, եւ երբ նրանք ոտք կը դնեն Հայաստանի հողի վրա, ո՛չ մի հայ զինուոր, նոյնիսկ դաշնակցական չի համարձակւի կրակել նրանց դէմ:

«Դիլիջանի գաւառի ռազմա-յեղափոխական կոմիտէի անդամ Կոստեա Այվազեան. տեղական կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչ՝ Յակոբ Յակոբեան»:

Նոյն «Կոմունիստ»-ը յունիս 20-ին հրատարակում էր հետեւեալ դիմումը Հայաստանի կառավարութեան.

«Ազրբէջանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէին եւ Խորհրդային Ազրբէջանում գտնուող Ռուսաստանի կարմիր զօրքերին յայտնի է, որ ձեր կառավարութիւնը Հայաստանում այժմ խեղդում է բանւորների եւ գիւղացիների չարժումը: Կովկասեան հակայեղափոխական կառավարութիւններից ո՛չ մէկը իր բանւորների եւ գիւղացիների դէմ չի ցուցահանել այնպիսի դաժանութիւն, ինչպիսին գործադրում է ձեր կառավարութիւնը Հայաստանում կոմունիստ գիւղացիների եւ բանւորների դէմ: Ցենելով մաւզէրիստների գլխաւոր դահիճ Սեպուհի եւ դենիկինեան սպաների վրա՝ դուք Հայաստանի գիւղացիներին եւ բանւորներին օրէնքից դուրս էք յայտարարել: Զանգւածային գնդակահարութիւնները Ալէքսանդրապոլում, Կարսում, Սարըղամիշում եւ այլ վայրերում, յեղափոխական բանւորներին, գիւղացիներին եւ նրանց ղեկավարներին անխնայ ձերբակալելը, ծեծելը, թալանելը — ա՛յս ամենը վրդովում է Ազրբէջանի պրոլետարիատի եւ Խորհրդային Ռուսաստանի կարմիր զօրքերի յեղափոխական խիղճը:

«Հայաստանի եւ Ղազախի գիւղացիներն իրենց ընտանիքներով փախչում են ձեր բաշիբոզուկների ձեռքից: Ինչպէս փախչում էին մուսաւաթականների ձեռքից եւ ապաստարան են գտնում Խորհրդային Ազրբէջանի յեղափոխական գիւղացիների մօտ: Այդ ամենալաւ ապացոյցն է, որ մուսաւաթականները ձեր գաղափարական եղբայրներն են ու զինակիցները, եւ որ Հայաստանի գիւղացիներն ու բանւորները համերաշխ են Ազրբէջանի աշխատաւորների հետ դաշնակների եւ մուսաւաթականների դէմ կուելու գործում:

«Խորհրդային Ազրբէջանում ամենուրեք, Խորհրդային Ռուսաստանի կարմիր զօրքի օգնութեամբ մենք անխնայ կերպով խեղդում ենք մուսաւաթականների հակայեղափոխութիւնը, իսկ ձեր կառավարութիւնը Հայաստանում խեղդում է բանւորների եւ գիւղացիների կոմունիստական յեղափոխութիւնը: Դրանով դուք օգնում էք մուսաւաթականներին յեղափոխութեան դէմ կուելու:

«Մեզ յայտնի է, որ ձեր կառավարութիւնը կարսի շրջանում գնդակա-

հարել է 300 հոգի: Կարսում հակայեղափոխականների տրիբունալը, Խորհնու եւ Աղբալեանի գլխաւորութեամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցութեան անդամներին եւ գնդակահարել: Դուք գնդակահարել էք Խորհրդ. Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի անդամ բժ. Մելքոնեանին, Կարսի յեղափոխական կոմիտէի անդամ ընկ. Ղուկասեանին, Նոր-Բայազէտի յեղ. կոմիտէի անդամ ընկ. Սարուխանեանին եւ մի շարք մեր ամենալաւ ընկերներին: Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Հայաստանի ներկայացուցիչը եւ Հայաստանի Ռազմա-Յեղափոխական կոմիտէի բազուկ ներկայացուցիչը՝ վրդովուած այն դահճային անսրտութիւնից, որ ցուցաբանում էք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկուա, որտեղ անամօթաբար դիմել էք եւ դուք՝ ուղարկելով ձեր ներկայացուցիչներին եւ միաժամանակ Հայաստանում անխնայ կոտորելով կոմունիստներին: Մենք համոզուած ենք, որ Խորհրդային Ռուսաստանը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ վերջ տալու ձեր արիւնոտ վարմունքին:

«Առաջարկում ենք դադարել մեր ընկերներին ձերբակալել ու գնդակահարել, ազատել բոլոր ձերբակալուածներին եւ այդ մասին յայտնել մեզ մեր ընկեր Սերգէյ Արկադիեւիչ Վարդանեանի միջոցով:

«Պատասխանի համար տալիս ենք երկու օր ժամանակ: Եթէ չպատասխանեցիք, մենք կը համարենք, որ ուզում էք շարունակել նոյն քաղաքականութիւնը:

«Ազրբէջանի կոմ. կուս. կենտր. կոմիտէ՝ Նաւէշվիլի, Միկոյեան: Ռուսաստանի կոմ. կուս. ներկայացուցիչ՝ Կոստանեան: Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի ներկայացուցիչ՝ Ալիխ»:

Եւ մինչ մի կողմից Միկոյեանները սպառնալիքներ էին կարդում Հայաստանի կառավարութեան, միւս կողմից, անչուշտ, բազուի կոմունիստների ներշնչումով, Զիչերինը, յունիս 4-ին, հեռագրում էր Երեւան, թէ՝ «Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, Ալեքսանդրապոլում, Երեւանում, Սարըղամիշում, Կարսում եւ Հայաստանի այլ քաղաքներում հարիւրաւոր կոմունիստներ են ձերբակալուած: Հայաստանի կառավարութիւնը թոյլ է տալիս ինքնագլուխ եւ դաղտնի գնդակահարում է կոմունիստներին: Յատկապէս գնդակահարուած է ընկ. Միկոյեանը: Խորհրդային կառավարութիւնը մեծ վրդովմունքով իմացաւ Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների վերաբերմամբ դործադրուող կամայականութիւնների մասին»:

Մարդիկ խօսում էին հազարաւոր սպանուածների մասին, այն ինչ, ամբողջ բոլշեւիկեան շարժման ընթացքում բոլոր ձերբակալուած բոլշեւիկների թիւը Հայաստանում 234 էր, որոնցից 120 հոգին ազատ էին արձակուած եւ մահապատժի էին դատապարտուած 3 հոգի: Լուրեր էին տարածում, որ գընդակահարուած է Միկոյեանը, մինչ Միկոյեանը Հայաստանի երես անդամ չէր տեսած:

Հայ բոլշեւիկների նման ընթացքն էր, որ անյաջողութեան մատնեց

Հայաստանի Հանրապետութեան ու Խորհրդային Ռուսաստանի միջեւ սկըսած բանակցութիւնները։

Հիւսիսային Կովկասը խորհրդային իշխանութեան ձեռքը անցնելուց յետոյ Խորհրդային Ռուսաստանի պատասխանատու ներկայացուցիչներից ոմանք, Հայաստանի հիւսիսային ներկայացուցիչների միջոցով, քանիցս խորհուրդ էին տուել պաշտօնական բանակցութիւններ սկսել Մոսկւայի հետ՝ բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Հայաստանի կառավարութիւնը ինքն էլ զգում էր նման քայլի անհրաժեշտութիւնը, մանաւանդ, երբ կարմիր բանակը մօտեցաւ Ադրբէջանին։ Ապրիլի վերջերին Երեւանում կազմուեց մի պատւիրակութիւն — նախագահ՝ Լ. Շանթ, անդամներ՝ Հ. Տէրտէրեան եւ Լ. Զարաֆեան, որին յանձնարարուեց անմիջապէս մեկնել Մոսկւա խորհրդային իշխանութեան հետ, յանուն Հայաստանի, բանակցութիւններ վարելու եւ բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Պատւիրակութեան տրուեցին հետեւեալ հրահանգները. 1. Խորհրդային Ռուսաստանը պէտք է ճանաչէ Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում եւ Ղարաբաղն ու Գիւլիստանը, 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնէ սկզբունքով, պէտք է ընդունէ թիւրքահայ հողերի կցումը Հայաստանին, 3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտէ Հայաստանի ներքին գործերին. չպիտի Հայաստանում կոմունիստական գործունէութիւն ցոյց տայ, 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թոյլ տայ, որ Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում գտնուող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, եւ մի շարք ուրիշ հարցեր։

Պատւիրակութիւնն անյապաղ մեկնեց Մոսկւա։ Այդ առթիւ, մայիս 4-ին վարչապետ Օհանջանեանը Զիչերինին քաշեց հետեւեալ հեռագիրը.

«Բանւորական, գինւորական ու գիւղացիական պատգամաւորների համառուսական երրորդ համագումարի որոշման համաձայն, որ յայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը, եւ հիմնուելով ժողովրդական կոմիսարների նախագահ Լենինի 1918 թ. յունւ. 13 դեկրետի վրա՝ անկախ, միացեալ, դեմոկրատիկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն առաջարկում է Ռուսաստանի ընկերվարական կառավարութեանը բանակցութիւնների մէջ մտնել նրա հետ երկու հանրապետութիւնների միջեւ պայմանագրային յարաբերութիւններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան ճանաչման եւ ինքնիշխանութեան հիմունքների վրա։ Իմ կառավարութեան լիազօրած պատւիրակութիւնն արդէն ձեր Հանրապետութեան սահմաններում է յիշած բանակցութիւնները ձեր կառավարութեան հետ վարելու համար. № 2740»։

Մայիս 17-ին Զիչերինը պատասխանեց. «Խորհրդային կառավարութիւնը սրտով յայտնում է իր համաձայնութիւնը կնքելու Հայաստանի կառավարութեան հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջեւ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու նպատակով։ Խորհրդ. կառավարութիւնը սպասում է ձեր պատւիրակներին, որոնք արդէն ճանապարհւել են

դէպի Մոսկւա: Ձեր պատւիրակութեան Մոսկւայից Երեւան հաղորդակցութեան մէջ մտնելու տեխնիկական դժւարութիւնները վերացնելու նպատակով տրամադրեցինք մեր ուղիղ հեռագրաթելը՝ Ռոստովի եւ Թիֆլիսի վրայով: Խնդրում ենք այդ մասին նախօրօք համաձայնութեան գալ Վրաստանի կառավարութեան հետ: N° 150»:

Թէ Մոսկւայում այդ օրերին ինչ տրամադրութիւն էր տիրում հայերի եւ Հայաստանի նկատմամբ, ցոյց է տալիս Ղարաբաղի կոմիտէի ներկայացուցիչներ Ա. Երզնկեանի եւ Մ. Փիրումեանի զեկուցումը՝ տպւած Թիֆլիսի «Սլօվօ» թերթում: «Պատւիրակ Երզնկեանի ընդարձակ զեկուցումից յետոյ, գրում է թերթը, առանձնապէս ուշագրաւ էր ռուսական շրջանակներում ըստեղծւած այն բնորոշ տրամադրութիւնը, որ առաջացել էր նախքան հայկական պատւիրակութեան Մոսկւա մեկնելը, թիւրք–թաթարական պրովոկացիայի շնորհիւ՝ նպատակ ունենալով մոլորութեան մէջ պահել Ռուսաստանի հասարակական կարծիքն ու նրա ղեկավար շրջանները: Պատւիրակները Մոսկւա հասնելով՝ չւարած են մնում այն ստերից, որոնցով կերակրելիս են եղել ընթերցողներին կառավարական օրգանները — «Իզվէստիա»-ն, «Պրաւդա»-ն եւ այլ թերթեր:

«Այդ լրագրական յօդւածներում չարունակ այն միտքն է արծարծւել, թէ՝ Հայաստանը, Լեհաստանի նման, դաշնակիցների գործիքն է, թէ իմպերիալիստ դաշնակիցները համարեա թէ ամէն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, դինադործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու՝ ռազմամթերք են պատրաստում, թէ գործը փայլուն կերպով է դրւած եւ երկաթուղային ցանցի վրա աշխատանքը եռում է: Ամբողջ աշխարհի բուրժուաները հաւաքւել են Հայաստանում չահագործելու համար պրոլետարիատին եւ այնպիսի քաղաքականութիւն են մտցրել, որ ուղղւած լինի սոցիալիստական Ադրբէջանի եւ սոցիալիստական Տաճկաստանի խեղճ ու կրակ աշխատաւոր զանգւածների դէմ: Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանդիստ չունեն հակայեղափոխական հայոց կառավարութեան հսկայաթիւ զօրքերի նւաճողական յարձակումներից: Հայ հակայեղափոխականների ձեռքով ստեղծւած Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թէ հայերը, այլ խորհրդային իշխանութեան մշտական կողմնակից մուսուլման աշխատաւորութիւնը:

«Այդ անպատկառ գործունէութիւնը մերկ, քաղցից ու ցրտից մեռնող Հայաստանի դէմ վերջին տարիներս վարում էին կոմունիստական դիմակի տակ ծածկւած Յալիլ փաշաները, կազանի թաթարները, որոնք արտօնեալ դիրք ունէին Մոսկւայի ազդային գործերի ժողովրդական կոմիսարիատում, եւ իրենց կոմունիստ անւանող Բադուի թաթարները:

«Ռուս հասարակութիւնը, որ դեռ ցարական ժամանակաշրջանում անտեղեակ էր կովկասեան գործերից, յեղափոխութեան վերջին երեք տարիներում բոլորովին կտրւած լինելով Անդրկովկասից, սկսեց աւելի քիչ բան հասկանալ Անդրկովկասում տեղի ունեցած անցքերից, առաւել եւս Անդրկովկասի ծայրամաս Հայաստանից: Բացի դրանից, անհեթեթ գաղափար ունէին

կազմած եւ նրա դերի մասին, վերջին տարիներս, նոյնիսկ խորհրդային կառավարութեան պատասխանատու ներկայացուցիչները:

«Ինչ վերաբերում է հայ կոմունիստներին, դրանց մի մասը Հայաստանից կտրուած լինելու պատճառով նոյնպէս ոչ մի տեղեկութիւն չունէր Հայաստանի ու նրա աղգաբնակութեան ծանր կացութեան մասին, իսկ միւսներն էլ դէպի Դաշնակցութիւնը տածած ատելութիւնից կուրացած՝ դիտաւորեալ չափազանցրած մի տարածում էին տարածում ի վնաս հարազատ երկրի: Առանձնապէս այդ ուղղութեամբ ոյժ էին տալիս Բագուի, Վլադիկաւկազի, Ռոստովի եւ այլ գաւառական քաղաքների հայ կոմունիստները: Պատւիրակութիւնը ստիպուած էր շատ ժամանակ եւ աշխատանք վատնել, որպէսզի ցրի Հայաստանի ու հայ ժողովրդի վրա հիւսուած այդ ստերի ու բամբասանքների պատմութիւնը:

«Հայերի եւ հայ կոմունիստների մէջ կարդացած մի շարք զեկուցումներից, տեղական թերթերում տպած մի շարք յօդուածներից ու պաշտօնական զեկուցումներից յետոյ, պատւիրակութեան յայտնուեց նպատակաւոր տրամադրութիւն ստեղծել Մոսկուայի հասարակական ու կառավարական շրջաններում եւ բռնել իսկական բոյնը այն բոլոր ստերի, որ այնքան անպատկառօրէն տարածել են կոմունիստ կոչեցեալ թուրքերն ու թաթարները՝ ռուս հասարակութիւնը մոլորեցնելու համար՝ նպատակ ունենալով ռուսական կարմիր բանակի օգնութեամբ իրագործել իրենց հակահայկական ծրագրները: Այդ ծրագրները իրագործելու համար, ինչպէս յայտնի է, Բագուի թաթարները սկզբում խորհրդային իշխանութիւն մտցրին Բագուում. յայտարարելով իրենց բոլշեւիկներ՝ Մուլթանովներն ու նրանց ընկերները ռուսական կարմիր բանակի անուան տակ իրենց թաթարական ասկեարներից կազմած գնդեր մտցրին Ղարաբաղի խորքերը՝ բնաջնջելու համար հայ գիւղացիութիւնը, չարունակելով այն քաղաքականութիւնը, որ այնքան փայլուն կերպով բսկըսած էր նախ քան բոլշեւիկների գալը մուսաւաթական կառավարութեան կողմից»:*)

---

*) Իսկ թէ Մոսկուայում Երզնկեանն ու Փիրումեանը իրենի՞ց ինչպէս են ներկայացրել Հայաստանը կամ ի՞նչպէս կատարել իրենց վրա դրուած պարտականութիւնը Ղարաբաղի վերաբերմամբ, երեւում է «Մշակ»-ի N° 14 եւ 16-ում տպուած «Ի՞նչպէս պաշտպանեցին Ղարաբաղի չահերը» յօդուածից: Արտագրենի հետեւեալ կտորը. «Մի-երկու ամիս առաջ Ղարաբաղի կոմիտէն յանձնարարում է Ար. Երզնկեանին եւ Սիմ. Փիրումեանին գնալ Մոսկուա եւ պաշտպանել խորհրդային կառավարութեան առաջ Ղարաբաղի հայութեան չահերը: Թէ ի՞նչպէս են կատարել Երզնկեանը եւ Փիրումեանը իրենց տրուած յանձնարարութիւնը, ցոյց է տալիս նրանց կողմից խորհրդային իշխանութեան ներկայացած եւ թարգմանելու արժանի զեկուցագիրը: Նրա մէջ՝ Երզնկեանը եւ Փիրումեանը խեղաթիւրելով պատմական փաստերը՝ կաշկանդ դուրս են գալիս ապացուցելու, որ այս երկու-երեք տարւայ ընթացքում Ղարաբաղը կուռել է մեծամասնական գաղափարների համար, սպասել է մեծամասնականներին եւ ոչ թէ դէմառորապէս արիւն է թափել արիւնռուչտ Ազրբէջանից ազատուելու եւ Հայաստանին միանալու համար: Արտակարգ հետաքրքրութիւն եւ ուշադրութիւն է դրաւում այդ զեկուցագրի մէջ արտայայտուած այն միտքը, թէ Ղարաբաղի հայ գիւղացիութիւնը իր «հօքը համագումարներում, գէնքը ձեռքին պաշտպանել է իր հողն ու ինքնորոշման իրաւունքը՝ համարելով վտանգաւոր դէպքում աւելի ընդունելի միանալ մահր բուրժուական Հայաստանին, քան բուրժուական—կալուածատիրական Ազրբէջանին»: Դուրս է գալիս, որ Ղարաբաղի հայ գիւղացիութեան համար չարիք է իր երկիրը Հայաստանին միացնելը»...

Մոսկւա հասնելուց յետոյ, Հայաստանի պատւիրակութիւնը անմիջապէս տեսակցութիւն ունեցաւ Չիչերինի հետ, եւ խոկոյն սկսւեցին բանակցութիւնները: Մայիս 31-ին Շանթը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Երեւան, թէ բանակցութիւններն արդէն սկսւած են եւ ընթանում են յաջող: Խորհրդային Ռուսաստանի կողմից բանակցում է Կարախանը: Պատւիրակութիւնը տեսնւել է նաեւ արտաքին գործերի կոմիսար Չիչերինի հետ: Խորհրդային կառավարութիւնը շարունակ կրկնում է, թէ ինքը բնաւ ցանկութիւն չունի Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու:

Բանակցութիւններն ընթացան շատ յաջող: Խորհրդային պատւիրակութիւնն ընդունեց Հայաստանի բոլոր պայմանները, եւ յունիս 10-ին արդէն Շանթը հաղորդում էր Երեւան, որ ռուս-հայկական դաշնագիրը կազմւած է եւ մի երկու օրից կը ստորագրւի: Խորհրդային Ռուսաստանը անվերապահ պատրաստակամութիւն յայտնեց ճանաչելու Հայաստանի անկախութիւնը եւ չմիջամտելու նրա ներքին գործերին:

Բայց 20 օր անցած, յուլիս մէկին Շանթը արդէն հեռագրում էր Երեւան. «Հէնց առաջին տեսակցութիւնից պարզւեց, որ մեծ դժւարութիւնը Ադրբէջանի սահմանն է, որովհետեւ Բագուից ամէն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքումը: Խորհրդային կառավարութիւնը ընդունում է մեր պահանջների արդար լինելը եւ չի փափաքում գոհացում տալ խորհրդային Ադրբէջանի եւ հայ բոլշեւիկների բոլոր բաղձանքներին: Այնուամենայնիւ վերջիններիս յամառ պնդումի եւ սուտ տեղեկութեանց ազդեցութեան հետեւանքով դաշնագրի կնքումը դանդաղում է: Խորհրդային Ադրբէջանի կառավարիչները ցանկանում են օգտւել ռուսական հեղինակութիւնից եւ ռուս զօրքերի ներկայութիւնից՝ իրագործելու համար մուսաւաթական ծրագիրը՝ դրաւել Ղարաբաղն ու Զանգեզուրը եւ անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքը թուրք ազգաբնակութեան մէջ: Ռուսաստանը ցանկանում է ստանձնել իրաւարարի դեր հայ-թաթարական վէճը լուծելու համար: Մոսկւայի կառավարութիւնը պատրաստակամութիւն է յայտնում Թիւրքահայաստանի խնդրում հանդէս գալ միջնորդի դերում Հայաստանի եւ Մուստաֆա Քեմալի միջեւ»:

Եւ Ադրբէջանի կոմունիստները Բագուում գտնւող հայ կոմունիստների*) աջակցութեամբ յաջողեցին ազդել Մոսկւայի վրա, որ դաշնագրի ստորագրութիւնը Հայաստանի հետ յետաձգւի:

Այնուհետեւ, դէպքերն ստացան դահավէժ ընթացք: Բագուի հայ եւ ադրբէջանցի կոմունիստները պատւիրակութիւն ուղարկեցին Մոսկւա, պա-

---

*) Այդ ժամանակ Բագուն հայ կոմունիստների կենտրոնն էր. այնտեղ էին, մայիսեան ապստամբութիւնից յետոյ, Հայաստանից փախած եւ Ռուսաստանի ու Կովկասի զանազան կողմերից հաւաքւած հայ բոլշեւիկները՝ Միկոյեան, Ււխս, Ս. Կասեան, Ա. Մռաւեան եւ շատ ուրիշներ: Այստեղ էր Հայաստանի կոմ. կուսակցութեան կենտր. կոմիտէն: Բագուում եւ Ղազախում կազմւում էին հայկական զօրամասեր, որոնք պիտի ծառայեցւէին Հայաստանը խորհրդայնացնելու համար: Առհասարակ, հայ բոլշեւիկները տենդոտ աշխատանք էին կատարում ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան: Արեւելեան ժողովուրդների Համագումարին հայ կոմունիստները մասնակցեցին մի բազմամարդ պատգամաւորութեամբ:

հանջելու համար, որ խորհրդային իշխանութիւնը պայման չկնքի «դաշնակ» Հայաստանի հետ: Միւս կողմից, Ազրբէջանի Ցեղկոմը 11րդ բանակի օգնութեամբ միջոցներ ձեռք առաւ՝ կանխելու համար Նախիջեւանի դրաւումը հայերից: Յուլ. 5–ին 11րդ բանակի մասերը մտան Գորիս եւ հետզհետէ առաջ անցան մինչեւ Դարալագեազի սահմանները: Մի ձիաւոր դունդ չտապեց Նախիջեւան: Օգոս. 1–ին Գրոյի զօրամասը Դարալագեազից դիմեց հակայարձակման եւ յետ գրաւեց ամբողջ Զանգեզուրը: Բոլշեւիկները վախան խուճապահար՝ անլուր վայրագութիւններ գործելով ճանապարհին: Այդ դէպքերի ժամանակ էր, որ սպանեցին Վ. Խորէնին, Ա. Շիրինեանը, Սաքօն եւ բազմաթիւ ուրիշ տեղական գործիչներ: Նոր ուժեր ստանալով՝ բոլշեւիկները վերադարձան, նորից գրաւեցին Գորիսը եւ անցան Հանքերի կողմը, ուր, երեք շաբաթւայ յամառ կռիւներից յետոյ, գրաւեցին ամբողջ Ղափանը: Ազատ մնաց միայն Աբեւիքը: Հայաստանի զօրքերը հեռացան Զանգեզուրից: Գ. Նժդեհը միայն մի խումբ մարտիկներով մնաց լեռներում: Այսպիսով, Ղարաբաղ—Զանգեզուրը անցաւ խորհրդային իշխանութեան ձեռքը, եւ բոլշեւիկ ու հայ զօրամասերի միջեւ կռիւներ սկսուեցին Նախիջեւանի ճակատում:

Յուլ. մէկին Չիչերինը հեռագրեց Հայաստանի կառավարութեան, որ առաջարկում է բանակցութիւնները տեղափոխել Երեւան եւ այդ նպատակով Մոսկուայից մեկնում է ընկ. Լեգրանը: Վարչապետ Օհանջանեանը պատասխանեց, որ ինքը դէմ չէ այդ առաջարկին, բայց բանակցութիւնները կարող են սկսուել Շանթի պատւիրակութեան վերադարձից յետոյ:

Յուլ. 20–ին, Խալիլ փաշայի ընկերակցութեամբ, Լեգրանը հասաւ Բաքու եւ Ազրբէջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց յետոյ անցաւ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջեւանում եւ Ղազախում տեղի ունեցող հայ–բոլշեւիկեան կռիւները դադարեցնելու նպատակով դումարուեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Ջամալեանի ու Ա. Բաբալեանի եւ Լեգրանի միջեւ եւ օգոս. 10–ին ստորագրուեց հաշտութեան համաձայնագիրը, որով օգոստոս 10–ը ժամը 12–ից սկսած վերջ էին դնում պատերազմական գործողութիւնները խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ: Հայաստանի զօրքերը գրաւելու էին Շահթախթ—Խոկ—Ազնաբերդ—Սուլթանբէգ եւ ապա Քիւկիից հիւսիս եւ Բազարչայից արեւելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին յուլիս 30–ին: Խորհրդային Ռուսաստանի զօրքերը պիտի գրաւէին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջեւան շրջանները: Այս գրաւումով չէր նախորոշւում այդ գաւառների վերջնական պատկանելիութիւնը. այդ հարցը պիտի որոշէր Խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքելիք դաշնագրով: Մինչեւ այդ դաշնագրի կնքումը Շահթախթ—Զուլֆա երկաթուղին պիտի բացուէր Հայաստանի երկաթուղային վարչութեան կողմից*):

*) Բնորոշ է, որ օգ. 10–ի համաձայնութիւնը ահագին դժգոհութիւն առաջ բերեց Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչների մէջ: Անգլիայի ներկայացուցիչ կոմանդոր Լիւքը մեղադրում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշնակիցներից եւ այլեւս չպիտի կարողանայ օգտուել նրանց օգնութիւնից, իսկ Ֆրանսայի բարձր կոմիսար դը Մարտէլը գըր-

Սեպտ. 14-ին վերադարձաւ Շանթի պատուիրակութիւնը, եւ միայն Հոկտ. 11-ին Երեւան եկաւ Լեգրանը՝ պատուիրակութեան բոլոր անդամների հետ: Նրա պատուիրակութիւնը բաղկացած էր 47 հոգուց, որոնց մէջ էին եւ Սահ. Տէր-Գաբրիէլեանը, Աշ. Յովհաննիսեանը: Հայաստանի կառավարութիւնը ցոյց տուեց նրան փայլուն ընդունելութիւն: Լեգրանին կայարանում ողջունեցին զինւ. նախ. օգնական զոր. Հախվերդեանը, արտաքին գործոց նախ. օգնականը, Շանթի պատուիրակութեան անդամ Հ. Տէրտէրեանը եւ ուրիշներ: Երբ Լեգրանը դուրս եկաւ վագոնից, զինուորական երաժշտախումբը նուագեց «Ինտերնացիոնալը», եւ զօրքերը պատուի կեցան: Լեգրանը անցաւ զօրաշարքի առջեւով եւ ողջունեց զինուորներին: Ու հանդիսաւորութեամբ անցաւ քաղաք եւ նոյն օրն եւ եթ տեսակցութիւն ունեցաւ վարչապետ Հ. Օհանջանեանի հետ:

Յաջորդ օր սկսեցին բանակցութիւնները Լեգրանի եւ Շանթի միջեւ:

Հոկտ. 13-ին Լեգրանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնցից գլխաւորներն էին 1) հրաժարուել Սեւրի դաշնագրից, 2) թոյլ տալ խորհրդային զօրքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով՝ միանալու համար Մուստաֆա Քեմալի զօրքերին, դաշնակիցների հետ կռուելու նպատակով, 3) սահմանավէճը Հայաստանի եւ հարեւանների միջեւ լուծել խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ:

Հայաստանի պատուիրակութիւնը վճռականապէս մերժեց ընդունել առաջին կէտը, իսկ միւս բոլոր կէտերի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն եւ կազմուեց դաշնագրի նախագիծ, որով 1) Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը եւ ներքին անձեռնմխելիութիւնը, Հայաստանի մէջ պիտի մտնէր եւ Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի եւ Նախիջեւանի վիճակը պիտի որոշուէր իրաւարարութեամբ. 2) Խորհրդ. Ռուսաստանը իսկոյն պէտք է միջամտէր՝ կասեցնելու համար պատերազմը Հայաստանի եւ Թիւրքիայի միջեւ. 1914 թ. սահմանի վրա պէտք է ստեղծուէր չէզոք գօտի եւ հայ-թիւրքական սահմանավէճը լուծուէր Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտութեամբ. 3) Հայաստանը համաձայնում էր թոյլ տալ անցնելու իր ճանապարհներով ռուսական զօրքերին. Հայաստանի վրայով դէպի Թիւրքիա փոխադրուելիք զէնքի 30%ը պէտք է մնար Հայաստանում իբրեւ ինքնապաշտպանութեան միջոց. 4) Հայաստանն ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդութիւնը իր եւ հարեւանների հողային վէճերը լուծելու համար. 5) Խորհրդ. Ռուսաստանը պէտք է վճարէր Հայաստանին երկու եւ

նում էր, որ հայերը անցնում են դաշնակիցների թշնամիների բանակը: Դը Մարտէլի դըժգոհութիւնը մեծ էր եւ այն պատճառով, որ Հայաստանի կառավարութիւնը մերժել էր առնել Ֆրանսայի վաշխառուական պայմաններով առաջարկած զէնքերն ու ռազմամթերքը: Օգ. 31ին Երեւան գնաց կոմ. Լիւֆը, ուր ընդունուեց հանդիսաւորութեամբ, եւ կառավարութեան հետ շփուելով ու դրութեան տեղն ու տեղը ծանօթանալով՝ համոզուեց, որ իր կասկածները անհիմն են: Նոյն ժամանակ Լիւֆը Հայաստանի կառավարութեան ներկայացրեց տնտեսական պայմանագրի մի նախագիծ՝ Հայաստանի նաւահանգիստները եւ երկաթուղիները Անգլիային յանձնելու իմաստով եւ առաջարկեց երեք օրուայ ընթացքում ստորագրել: Հայաստանի կառավարութիւնը մերժեց ստորագրել:

կէս միլիոն ոսկի րուբլի, պէտք է բանար նաւթային ճանապարհը, տար երկրագործական գործիքներ, յանձնէր Մոսկւայում գտնուող էջմիածնական գոյքերը, դիւրութիւններ տար Ռուսաստանի մի քանի կենտրոններում հաւաքւած հայ գրենական եւ դեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտօնէր եւ աջակցէր հայ գաղթականների վերադարձին եւ այլն:

Համաձայնութիւնը երկուսաեք կայացաւ, եւ Լեգրանը մեկնեց Բաքու՝ ստանալու համար Մոսկւայի վերջնական հաւանութիւնը, որից յետոյ պիտի վերադառնար Երեւան, ուր եւ պիտի ստորագրէր «բարեկամութեան եւ խաղութեան դաշինքը Խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ»: Գնաց — եւ այլեւս դաշնագրի խօսքը չլսուեց:

ԳԼՈՒԽ ԼԱ.

ՄՈՒՐՃԻ ԵՒ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ - ՊԱՏԵՐԱԶՄ

Մինչ մի կողմից Թիւրքիան Ազրբէջանի եւ բոլշեւիկների միջոցով օղակում էր Հայաստանը, միւս կողմից տենդագին պատրաստութիւններ էր տեսնում, որպէսզի զէնքի ուժով վերացնէր «հայկական սեպը»: Օլթիի ածխահանքերի գրաւումից յետոյ, Անգորայի կառավարութիւնը դիմեց Հայաստանի կառավարութեան՝ պահանջելով յետ քաշել հայկական զօրքերը: Այդ առթիւ տեղի ունեցաւ գրագրութիւն Թիւրքիայի արտաքին գործոց կոմիսար Բեքիր Սամի բէյի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան միջեւ. Թիւրքիան խօսում էր Բրեստ-Լիտովսկի եւ Բաթումի դաշնագրերի լեզուով, որ անհասկանալի էր Հայաստանում:

Ածխահանքերի գրաւումը, ի հարկէ, սոսկ պատրուակ էր. Թիւրքիան միջոցներ էր փնտռում՝ ստիպելու համար հայերին, որ հրաժարւեն Եւրոպայի միջամտութիւնից եւ այն դաշնագրից, որի նախագիծը կազմած էր Սան-Րէմոյում եւ չուտով պիտի ստորագրէր Սեւրում: Ընդհակառակը, հայերը հէնց Եւրոպայի եւ այդ դաշնագրի հետ էին կապել իրենց յոյսերը և ոչ մի հաւատ չէին ընծայում անմիջական համաձայնութեանը Թիւրքիայի հետ: Այդ դիտէին Թիւրքերը եւ պատրաստւում էին՝ Սեւրին հակադրել երկաթէ բռունցք:

Այս տեսակէտից պատմական արժէքաւոր վաւերագիր է Մուստաֆա Քեմալի ճառը, որ արտասանեց Ազգային Մեծ Ժողովում՝ պատգամաւորների առած հարցապնդումի վրա. «Էֆենդիներ, ասում էր Մուստաֆա Քեմալը, մայիս 30-ին եւ յունիս 4-ին Արեւելեան բանակի հրամանատարի կողմից հեռեւալ առաջարկները էին եղած. 1) Կարինում գտնուող մեր պատւիրակութեան չուտափոյթ մեկնումը դէպի Մոսկւա՝ կարսի եւ Բաթումի ճամբով. 2) Հայաստանում տեղի ունեցող իսլամական ջարդերի դադարեցումը: Ոբովհետեւ հայերը նպատակ ունէին առաջին իսկ առթիւ գրաւել Կարինը. Բաթումի եւ Բրեստ-Լիտովսկի դաշնագրերով մեր բանակի տիրապետութիւնը հայկական բանակի դէմ արդէն ապահովւած լինելով՝ պէտք է, որ գրաւենք Սարըղամիշի եւ Սողանլուի կիրճերը: Այս առաջարկութիւններից մա-

նաւանդ վերջինը քննելով՝ գործադրութիւնը յարմար նկատուեց եւ յունիս 6–ին հրաման տրուեց, որպէսզի յարձակողականի համար պատրաստութիւն տեսնուի:

«Նոյն միջոցին Մոսկուայից վերադարձաւ մեր պատուիրակներից մէկը՝ հետը բերելով Զիչերինի նամակները՝ ուղարկուած նախարարներին եւ Ազգ. ժողովին: Այդ նամակներով յայտնւում էր, որ Պարսկաստանի, Հայաստանի եւ Թիւրքիայի սահմանների հարցը ռուս խորհրդային կառավարութեան միջամտութեամբ դիւանագիտական միջոցներով կարգադրել կարելի լինելով՝ ռուս կառավարութիւնը չէր ուզի մեր յարձակողականներով խնդիրը լուծել: Սակայն, մենք՝ նկատի ունենալով, որ երեք նահանգներում (Կարս, Օլթի եւ Արդահան) մեր գործողութիւնները Հայաստանի դէմ յարձակողական չեն նշանակում, արդէն իսկ մեր տուած որոշումի մէջ որեւէ հակասութիւն չնկատեցինք եւ հրամայեցինք մեր արեւելեան հրամանատարութեան, որ կարելի եղածին չափ չուտ եւ արագ կերպով չարունակէ յարձակողականը:

«Մի քանի օր վերջը, պաշտօնապէս հասած մի տեղեկութեան համաձայն, ռուս գործակալը կարսի ճամբով այնտեղ պիտի գար: Կարին հասնող մի ռուս գործակալ տեսակցութիւն ունեցաւ մեր պատուիրակութեան հետ. այդ տեսակցութիւնից անմիջապէս յետոյ ստիպուած եղանք արգելել մեր յարձակողականները:

«Բոլշեւիկները իրենց ծրագրները իրականացնելու համար թիւրք ժողովրդի մեծ օգտակարութիւնը գնահատելով՝ մեր աջակցութեան դիմեցին: Նրանց առաջին ձեռնարկը եղաւ 10րդ եւ 11րդ զօրաբանակները կովկասեան ճակատ ղրկել: Այս բանակները դիւրութեամբ յաջողեցին անցնել Հիւսիսային Կովկաս եւ մտան Ադրբէջան՝ չնորհիւ մեր ընծայած դիւրութիւնների եւ առաջնորդութեան: Ադրբէջանցիները մեծ հաճոյքով դիմաւորեցին այդ զօրամասերին: Այս բանակները մէկ կողմից Հայաստանի, միւս կողմից էլ Վրաստանի դէմ հարկ եղած պինւորական միջոցներին ձեռնարկեցին: Այս դէպքերը պատահեցին մայիսին, ճի՛շտ այն միջոցին, երբ բոլշեւիկները լեհական ճակատի վրա սկսեցին պարտուել եւ ստիպուած էին իրենց ուժերի մեծ մասը ղրկել լեհական ճակատ: Նուրի փաշան, որ անգլիացիներից կաշառուած էր, սկսեց բոլշեւիկների դէմ ըմբոստութիւններ կազմակերպել, այդ պատճառով բոլշեւիկները ստիպուած եղան Գանձակի ըմբոստներին բնաջնջել եւ սաստել:

«Հայերը՝ կարմիր բանակների իրենց սահմաններից քաշւելուց օգուտ քաղելով՝ յունիսին Օլթիի եւ Զանգեզուրի ուղղութեամբ պինւորական գործողութիւնների ձեռնարկեցին: Մեր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցով երեւանում ձեռնարկներ արինք. միւս կողմից ամէն վայրկեան յարձակման պատրաստ մեր բանակներով մի կարգ միջոցներ ձեռք առինք: Հայերը յաջողեցին գրաւել Օլթիի ածխահանքերը, որովհետեւ մեր ուժերը այդ կողմերը անբաւարար էին անմիջապէս այդ յարձակողականը կասեցնելու: Սրա համար մեր բանակը ձախ կողմից սահմանն անցնելով՝ աղահանքերի դիծը բռնեց եւ միւս կողմից Բայազէտից դէպի Զանգեզուր անցաւ եւ դէպի

Արաքս անցնող մեր ուժերի հետ միանալով՝ յաջողեց բոլոր կողմերից էլ յառաջխաղացումը խափանել:

«Օգոստոսի սկզբին հայերը զրահապատների միջոցով յաջողեցին գրաւել մինչեւ Ջուլֆա երկաթուղագիծը: Այդ գծի վրա մեր փոքրաքանակ զինուորները թուով մեծ բանակի առջեւ չեզմուելու համար յետ քաշուելու հրաման ստացան: Մեր ուժերը քաշուած են Արաքսի հիւսիսային կողմը»:

Այստեղից պարզ երեւում է, որ դեռ յունիսին Քիւրքերը պատրաստւում էին յարձակուել Հայաստանի վրա: Վայրկեանը շատ էր յարմար: Ցունաստանը կանգնեցրել էր արշաւանքը Իզմիրի ճակատում, եւ Վենիզելոսը փորձեր էր անում հասկացողութեան գալու քեմալականների հետ: Ֆրանսան, Ֆրանկլէն Բույոնի միջոցով, փնտռում էր քեմալականների բարեկամութիւնը՝ անգամ Կիլիկիան պարպելու գնով: Իտալիան բացայայտ կերպով օգնում էր Անատոլուի ըմբոստներին: Մեծ օգնութիւն էր ցոյց տալիս եւ Խորհրդ. Ռուսաստանը. «բոլշեւիկեան բանակը, գրում էր օգոս. 16-ին Քեազիմ կարաբեքիրը, իր թշնամիներին քայքայելու եւ բնաջնջելու չրջանում է գտնւում: Մեր ժողովուրդը վկայ պէտք է լինի եւ յունական բանակի փլուզումին: Բացի այդ, 11րդ խալամական բանակը (բոլշեւիկեան) հասել է մեզ օգնութեան. նա անցել է մեր կովկասեան սահմանը: Մեր դաշնակից բոլշեւիկները անընդհատ մատակարարում են մեզ զէնք ու ռազմամթերք: կարող ենք վստահ լինել, որ վատ օրերը մեզ համար անցել են արդէն»:

Սակայն, մասամբ բոլշեւիկների աղեեցութեան տակ եւ մասամբ յունական ճակատի դէպքերի փոփոխութեան հետեւանքով, այլ եւ այն պատճառով, որ Հայաստանի ձեռն ու ոտը փաստօրէն կապած էր Խորհրդային Ազրբէջանի եւ բոլշեւիկների կողմից, դուցէ եւ ներքին հակամարտութիւններից դրդւած՝ Մուստաֆա Քեմալը վարանում էր վճռական գործողութիւնների անցնելու: Ընդհակառակը, Քեազիմ կարաբեքիրը պահանջում էր անյապաղ պատերազմ յայտարարել Հայաստանին: Ըստ երեւոյթին, այս հողին վրա սուր տարակարծութիւն կար միլլիական երկու պետերի միջեւ: Այս տեսակէտից, չափից աւելի հետաքրքրական վաւերագիր է «էնկիւրիի ազգային կառավարութեան սպայակոյտի պետ գնդ. Քամէթի» 1336 թ. (1920) օգոս. 1 նամակը՝ ուղղւած «Նորին դերազանցութեան 15րդ զօրաբաժնի եւ հայկական ճակատի հրամանատար Քեազիմ կարաբեքիր փաշային»:

«Ձերդ դերազանցութիւն, գրում էր Քամէթը, Ներկայացուցչական ժողովը Մուստաֆա փաշայի նախագահութեան տակ, ծանօթանալով Ձեր եւ Սեյահէդդին բէյի Ազգային Մեծ ժողովին ներկայացրած հիմունքներին եւ գտնելով ամէն կասկածից դուրս ձեր հայրենասիրական զգացմունքը, որ արտայայտւած է ձեր գործերով էլ, յանձնարարեց ինձ միանգամ էլ հաղորդել ձեզ հետեւեալը:

«Ներկայացուցչական ժողովը, հակառակ մեր վիճակի թուլութեան, այլ եւ Ցունաստանի յանկարծական յարձակման, պահելով հաւատն ու պարիւնութիւնը՝ չի ընկճւում, որովհետեւ իրերի նման դրութիւնը նախա-

տեսած էր դեռ Երզրումի խորհրդաժողովից եւ համապատասխան միջոցներ էլ ձեռք էին առնւած:

«Դուք տեսնում էք դրագրութիւնից, մեր եւ բարձր հրամանատարութեան միջեւ, որ այն դէպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի եւ նոյնիսկ ամբողջ մահմետական աշխարհի եւ իսլամութեան ճակատագիրը, պիտի ունենան եւրոպական, այլ եւ կենտրոնական–ասիական նշանակութիւն: Այդ երկրներում արիւնը չարունակում է հոսել այժմ էլ: Թիւրք բանակը զոհերի գնով պէտք է ապահովէ մեր ժողովրդի ազատութիւնը, որ խոստացել է նրան:

«Իրերի այս վիճակում բոլոր հայրենասէրները, իմանալով ձեր անձնական գործունէութեան ձգտումը՝ վհատւում են: Դուք գտնւում էք ըստամենայնի մեր յարգանքի եւ վստահութեան արժանի երկու զօրաբաժինների գլուխը: Մինչդեռ մեր թշնամիները, իրենց նղովեալ բարեկամների հետ, ապատում են մեր ուժերի պատակտման եւ մեր միութեան խախտման. նրանց ուրախացնում է ամէն մի երեւոյթ այդ ուղղութեամբ:

«Մենք յոյս ունենք, որ դուք, որ անձնական եւ պաշտօնի պատւով երդւել էք հաւատարիմ լինել Անատոլուի եւ Ռումելիայի պաշտպանութեան կոմիտէին եւ Ազգ. Մեծ Ժողովին, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ այդ երկու հիմնարկութիւնների միութիւնը, թոյլ չէք տայ, որ այս դրութիւնը չարունակւի ապագայում էլ: Ինչ է հաւանական, որ Հայաստանը՝ զրաղւած լինելով մեր դաշնակից Ադրբէջանի կողմից, ընդունակ լինի յարձակւելու ձեր շրջանի վրա: Խալիլ փաշան, որ գտնւում է թիւրք–ադրբէջանցի–ռուս ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանդստացնում է Մոսկւայից՝ հաւաստիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրա յարձակւելու դէպքում ապառնական ուժ կը հանդիպի իր թիկունքում: Հետեւաբար, հարկաւոր է որ ձեր հրամանատարութեան տակ գտնւող եւ թիւրք բանակի պահեստի մասեր կազմող զօրաբաժինները, թողնելով մի դիւիզիա հնարաւոր անակնկալների համար, օգոստ. 1–ին մեկնեն յունական ուժերի դէմ եւ կենտրոնանան ձեզ յայտնի վայրերում: Ձեր չհնազանդւելը այս հրամանին չատ անբաղձալի ազդեցութիւն կունենայ յունական ուժերի դէմ վճռական կռւի պատրաստւող զինւորների վրա:

«Այն նկատումները, որոնցով Դուք հիմնաւորում էք Ձեր անջատ ձգտումները, նկատի առնւած են Ազգային Մեծ Ժողովի կողմից: Ձեր առաջարկութիւնը, թէ անհրաժեշտ է որոշ զինւորական շրջանակի մէջ մտցնել ոչ մի կարգապահութեան չենթարկւող աւազակների կազմակերպութեան դործերը, ժողովի կողմից հաւանութիւն է գտած եւ անհրաժեշտ կարգադրութիւններն այդ ուղղութեամբ արւած են յուլիս 16–ին: Մեծ Ազգային ժողովը վճռեց նոյնպէս, որ Սեյահէդդին բէյը մնայ Սըվազի զօրաբաժնի հրամանատար:

«Այս պատմական վայրկեանին, երբ մենք շրջապատւած ենք վրէժխնդիր թշնամիներով, Ձեր վրա է ընկնում դրութեան ծանրութեան պատասխանատուութիւնը: Այդ ծանրութիւնը նմանը չունի պատմութեան մէջ

եւ մեր ամբողջ յոյսը ժողովրդի ինքնապահպանութեան ղգացումի վրա է: Ձեր անջատ ձգտումների պաշտպանութեամբ, Դուք բաժան-բաժան կանէք մեր ուժերը եւ կարժանանաք ապագայ սերունդների անէծքին:

«Քանի որ, Ձեր բացատրութիւնները նկատողութեան առնուած են ժողովի կողմից եւ մատնանշուած մէջոցները կիրառուում են, ես հաւատացած եմ, որ Դուք չպիտի հրաժարէք գործելու մեզ հետ համերաշխութեամբ: Հակառակ պարագային, Ձեր անջատ քայլերը, որոնց արդարացում չկայ, կը դիտուեն իբրեւ դաւաճանութիւն: Հաղորդում եմ Ձեզ նոյնպէս, որ բարձր հրամանատարութիւնը Ձեզանից սպասում է հեռագրական պատասխան երկու օրուայ ընթացքում»:*)

Այնուհետեւ ի՞նչ անցաւ-դարձաւ Անդորայի եւ Քեազիմ կարաբեքիր փաշայի միջեւ: Այդ մասին պատմում էր Պոլսի «Ժուրնալ Դ'Օրիան» թերթի Անդորայի թղթակիցը, հոկտ. 19-ի համարում. «Զեզ հաւանօրէն յայտնի չեն, գրում էր նա, այն պատրաստութիւնները, որոնք նախորդեցին Հայաստանի վրա յարձակում գործելու որոշման:

«Էրզրումի 15րդ զօրաբաժնի հրամանատար Քեազիմ կարաբեքիրը սեպտ. 7-ին հասաւ Անդորա: Հետեւեալ օրը Մուստաֆա Քեմալի նախագահութեամբ գումարուեց ազգային գերագոյն խորհուրդ, որին մասնակցեցին Ահմէդ Ցէվզի, Մուհէդդին Ալի Ցուադ, Նիհատ, Նուրէդդին զօրավարները եւ ապագայում պետ Համէթ բէյ:

«Զօրավար Քեազիմ կարաբեքիրը զեկուցեց, թէ անհրաժեշտ է Հայաստանի դէմ ընդհանուր յարձակում գործել, քանի որ բոլշեւիկների հետ յարաբերուելու միակ գիծը հայերի կողմից թիւրքական հողերի վրա գործուղ ասպատակութիւնների պատճառով՝ սպառնում է թիւրքերին ընդմիշտ կորել բոլշեւիկներից:

«Ազգային խորհուրդը դիմեց կարաբեքիրին հետեւեալ հարցով.— ինքը ունի՞ բաւական ոյժ եւ հաւատացա՞ծ է, որ քեմալական բանակը կատարեալ յաղթութիւն կունենայ:

«Քեազիմ կարաբեքիրի տրամադրութեան տակ գտնուում է 4 դիվիզիա, որից երկուսը գտնուում է Ռէմդիի հրամանատարութեան ներքոյ: Այս դիվիզիաներից իւրաքանչիւրը կը լինի բաղկացած 8—9 հազար սակեարից, որոնց կաջակցեն նաեւ քիւրդ ու թիւրք հրոսախմբերը: Թիւրքական հրեաններ, ասում է կարաբեքիրը, չնայած որ լրիւ չէ, բայց կարող է բաւարարել արեւելեան ճակատին:

«Բայց եւ այնպէս, Մուստաֆա Քեմալի համար դեռ մնում էր մի մութ կէտ. Հայաստանի դէմ յարձակելու դէպքում պէտք էր դիտենալ, թէ ի՞նչ դիրք կը բռնէ Վրաստանը, որը իր տրամադրութեան տակ ունէր, ինչպէս յայտնի է, թէեւ փոքր, բայց լաւ կազմակերպուած բանակ: Այս առթիւ բոլորովին ապահով լինելու համար Մուստաֆա Քեմալը ծածկագիր ռադիոյով դիմեց Բագու, ուր գտնուում էր թիւրքական պատուիրակութիւնը Արե-

*) Сводка Развѣд. Отд. Штаба Ком. Войсками Арменіи, 3 сент. 1920 г. № 21 (Приложеніе).



ԶՕՐ· ՅՈՎՍԷՓԵԱՆ



ԳՆԴ· ՄԱԶՄԱՆԵԱՆ



ՓՈԽ–ԳՆԴ· Տ· ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ



ՎԱՀ· ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ



ՏԵՂԱԿԱԼ ԳԱԼՈՒՍՏ ՍԻՒՐՄԻՆԵԱՆ



ՏԵՂԱԿԱԼ ԳԱԲՐԻԷԼ ԼԱԶԵԱՆ

ւելեան Համագումարին մասնակցելու համար: Անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելուց յետոյ Բագուից Անդրա ստացւեց հետեւեալ լակոնական պատասխանը. «Ճանապարհը բաց է»: Ռէմզի փաշան, որ այնտեղ էր գտնւում, յանձն առաւ հող պատրաստել Բագւում եւ աշխատեց ազդրէջնեան-բոլշեւիկեան չրջանները այդ հարցին կողմնակից դարձնել: Միւս կողմից, համագումարի անդամ երկրագործութեան նախկին նախարար Իւսուֆ Քեմալ բէյը ստանձնեց մի գաղտնի առաքելութիւն Թիֆլիսում եւ Բագուից անցաւ Վրաստան:

«Մի քանի օր յետոյ, քեմալական պատւիրակութիւնը Իւսուֆ Քեմալ բէյի նախագահութեամբ, եկաւ Թիֆլիս եւ իջաւ «Օրիանո» հիւրանոցը, ուր նախօրօք սենեակներ էին պահւած այդ պատւիրակութեան համար: Յաջորդ օրը, Իւսուֆ Քեմալ բէյը ընդունւեց Վրաստանի նախագահ Ժորդանիայի եւ յետոյ, անմիջապէս՝ արտաքին գործոց նախարար Գեգեչկորիի կողմից: Տեսակցութիւնը տեւեց մի ժամից աւելի, որից յետոյ նրան ճաշ տրւեց Կովկասեան Ակումբում: Իւսուֆ Քեմալ բէյի պաշտօնը վերջացել էր յաջողութեամբ: Այդ պաշտօնը զուտ խորհրդակցական էր եւ շատ կարճ տեւեց: Երկու օր անց, խորհրդային դեսպան ընկ. Կիրովի հետ վերջին անգամ տեսակցելուց յետոյ, մեկնեց:

«Ռէմզին անմիջապէս իր 13 զօրաբաժնի գլուխն անցաւ եւ սեպտեմբեր 19-ին դիմեց դէպի սահման: Զօրքին յայտարարւեց, թէ պատերազմը սկսւած է: Պատերազմական գործողութիւնները յետաձգւեցին մինչեւ Քեազիմ Կարաբէքիրի ինքնաշարժով հասնելը: Վերջինս, ճանապարհ ընկնելուց առաջ, ծածկագիրը ռադիոյով Բագու հաղորդեց իր ծրագիրը:

«Բանակը պատրաստ էր գործողութիւններն սկսելու: Սեպտ. 23-ին դիմեցին յարձակման»:

Եւ իսկապէս, զարգացող դէպքերը կէտ առ կէտ արդարացրին «Ժուրնալ դ'Օրիան»-ի տեղեկութիւնները: Սեպտ. 11-ին, Հայաստանի ապարատի ապայակոյտը հաղորդում էր.

«Օլթիի ուղղութեամբ սեպտ. 9-ին, ժամը 14-ին, թիւրքերը թնդանօթային կրակ բաց արին Վօսկուտ սարի վրա. մեր հրետանին պատասխան տւեց: Սեպտ. 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մօտեցաւ 5005 բարձրութեան վրա եւ Ղարադաշ գիւղից երկու վերստի վրա գտնւող մեր պահակախմբերին, բայց հրետանիի եւ գնդացիրային կրակով յետ շպրտւեց: Սեպտ. 10-ին, առաւ. ժամը 8-ին թիւրքական երկու սաւառնակներ թռիչք գործեցին Սարըղամիշի ճակատի երկարութեամբ, եւ միաժամանակ թիւրքերը բարդուած մօտ թնդանօթային կրակ բացին մեր դիրքերի վրա: Մեր հրետանին պատասխանում էր: Նոյն օրը ժամը 15-ին կրկին երեւացին թշնամու երկու սաւառնակներ. թիւրքերը հրացաններով կրակում էին մեր իրամատների ուղղութեամբ Քիրօղլի Բաշ սարի վրա:

«Սեպտ. 9-ին, ժամը 18 եւ 45 րոպէին, երկու օրւայ կռիւներից յետոյ, մերոնք գրաւեցին կողը գիւղը եւ աղահանքերը: Առնւած է մի լեռնային թնդանօթ, երկու հեռախօսային գործիք եւ այլ ռազմական աւար: Մեր կո-

րուստները աննշան են: Փիրլու գիւղի մօտ, թշնամու հակագրոհը յետ վանելու ժամանակ, սպանուած է Սասունի ձիաւոր խմբերի պետ Մանուկը»:

Սեպտ. 13-ին թիւրքական խոշոր ուժեր, անսպասելի կերպով, յարձակւեցին Սարըղամիշի հայ զօրամասի ձախ թեւի վրա, ճեղքեցին ճակատը եւ գրաւեցին 4րդ մարտկոցի երկու լեռնային թնդանօթներ: Տեղի ունեցաւ կատաղի կռիւ հայկական 4րդ գնդի եւ թիւրքերի միջեւ, ուր առանձին յամառութիւն ու քաջութիւն ցոյց տուեց տեղակալ Գանթարջեանի գումարտակը: Տաք եւ արիւնահեղ կռիւներով մեր զօրամասերը նահանջեցին եւ սեպտ. 14-ի առաւօտեան ամրացան Բեգլի-Ահմեդի դիրքերում: Ստիպուած եղաւ նահանջել եւ Կաղզւանի զօրամասը (5րդ գունդ, գնդ. Շաղուբարեանի) եւ գրաւել Բեռնայի դիրքերը: Հեռացաւ եւ Կաղզւանի ազգաբնակութիւնը: Համանման կռիւներ տեղի ունեցան եւ ուրիշ վայրերում, որոնց հետեւանքով Կարսի ճակատը ստացաւ հետեւեալ պատկերը. Ղարախաչ լեռ—Նոր Սելիմի եւ Բեգլի Ահմեդի միջեւ գտնուող բարձունքը—Բեռնա գիւղ—Աղաղաւա լեռ:

Սեպտ. 23-ին, առանց պատերազմի յայտարարութեան, թիւրքական բանակը դիմեց ընդհանուր յարձակման Հայաստանի դէմ: Սկսւում էր հայ թիւրքական պատերազմը:

Ինչպէս էին արդարացնում թիւրքերն իրենց այդ յարձակումը: Հոկտ. 23-ին Անգորայի կառավարութիւնը հրատարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Անատոլուի գործակալութիւնը պարտք է համարում համաշխարհային հանրային կարծիքին տալ հետեւեալ լուսաբանութիւնները այն կռիւների մասին, որոնք վերջերս սկսւեցին Կովկասում՝ մեր ուժերի եւ հայ դաշնակ հրոսախմբերի միջեւ:

«Հայաստանի Հանրապետութեան կազմութիւնից ի վեր Երեւանի կառավարութիւնը նպատակ է դրել բնաջնջելու կամ ստիպելու գաղթել երկրում հաստատուած թուրքերին, որոնք հանրապետութեան ամբողջ ազգաբնակութեան կէսն են կազմում: Յամառօրէն ու կանոնաւոր ծրագրով հետապնդուած այս քաղաքականութեան նպատակն է եղել ընդարձակել ազգային հայրենիքը՝ թուրքերի մահով կամ փախուստով թափուր թողնուած տեղերում ներգաղթած հայերի հաստատումով:

«Օգտւելով այն հանգամանքից, որ մահմետական ազգաբնակութիւնը անզօր էր իր ձայնը լսելի դարձնելու արեւմտեան աշխարհին՝ դաշնակները ամբողջ երկու տարի շարունակեցին իրենց աւերման գործը: Երեւանի Մահմետական Միութեան կազմած պաշտօնական վիճակագրութիւնների համաձայն, որ հաղորդագրուած է եւ դաշնակից պետութիւնների Կովկասի եւ Պոլսի ներկայացուցիչներին, — այդ փաստաթղթերը տակաւին պիտի գտնեն նրանց «գործ»-երի մէջ — մինչեւ 1919 թ. վերջը միայն Հայաստանը կազմող գաւառներում այրւել են 199 թրքական գիւղեր եւ նրանց 135,000-ի հասնող բնակիչները բնաջնջւել են մեծ մասամբ եւ միայն մի փոքր մասին է յաջողւել ապաստան գտնել Ազրբէջանում, ուր Բաքուի մուսաւաթական խորհրդարանը 260 միլիոն ռուբլի վարկ է քւէարկել նրանց կերակրելու հա-

մար: Այդ դումարը կարող է որոշ դաղափար տալ դաշնակցական վայրագութեան գոհերի թիւի եւ թշուառութեան մասին:

«Դաշնակները չբաւականացան այդ բնաջնջումը կատարելով Հանրապետութեան սահմաններից ներս. հայկական հրոսախմբերը թափանցեցին Ադրբէջանը եւ Ղարաբաղի դաւառում այրեցին մօտ 50 թուրք գիւղեր՝ կոտորելով ամբողջ ազգաբնակչութիւնը: Այդ ոճիրները պաշտօնապէս հաղորդեցին բոլոր դաշնակից պետութիւններին՝ Ադրբէջանի կառավարութեան կողմից:

«Այդ հետեւողական բնաջնջման ծրագիրը գործադրեց նաեւ Հանրապետութիւնից հարաւ գտնուող շրջաններում: Ցայտարարելով ինքնորոշման իրաւունքը, որ դաշնակից պետութիւնները իրականութեան մէջ միայն իրենց պաշտպանեալներին են թոյլ տալիս, կարսի շրջանում ապրող թուրքերը մերժեցին ընդունել հայկական տիրապետութիւնը: Զօրավար Արամեանը(*) անցեալ տարի հրատարակել տւեց մի վերջնագիր՝ հրաւիրելով նրանց 24 ժամւայ ընթացքում ընդունել այդ տիրապետութիւնը: Այդ՝ նախքան գիւղերին մեծ մասը այդ որոշման ծանօթանալու՝ տեղեկատւութեան միջոցների պակասութեան պատճառով՝ նիւթական ժամանակ ունենալը, հայերը թնդանօթային հարւածներով հրդեհեցին ու քանդեցին այդ գիւղերից մօտ 40–ը:

«Շնորհիւ այն զէնքերի ու ռազմամթերքի, որ Ամերիկայի եւ Եւրոպայի իմպերիալիստները քրիստոնէութեան անունով առատօրէն տալիս են դաշնակներին, այս վերջինները կարողացան կոտորածներն ու թալանները ծաւալել մինչեւ օսմանեան սահմանները, եւ մեր ցեղակից ու կրօնակից եղբայրները սկսեցին հազարներով փախչել դէպի մեր երկիրը: Մեր սահմանադլխային դաւառների բնակիչները՝ յուզւած ու վրդովւած այդքան ոճիրներից՝ մի քանի ամիս առաջ արդէն որոշել էին օգնութեան հասնել իրենց եղբայրներին եւ միայն կառավարութեան ձեռք առած միջոցներն էին, որ այն ժամանակ արգելեցին թիւրք միլլի ուժերին խիստ դաս տալ հայ հրոսախմբերին: Բայց սրանք՝ իրենց գործը լրացնելով սահմանի այն կողմը՝ յանդգնութիւնը ունեցան անցնելու օսմանեան սահմանը եւ գործադրելու իրենց աւերման ձեւերը՝ այն նպատակով, որ նախազահ Վիլսընի որոշումներին ապասելով՝ առեղծեն կատարւած փաստ: Մեպտ. 24–ին մեր սահմանադլխային գիւղերը, յանկարծ, յարձակում կրեցին. մեր զօրքերը թշնամուն յաղթելուց յետոյ՝ յաղթականօրէն հետապնդեցին նրանց Սարըղամիշի շրջանում, որ բնակեցւած է բացառապէս թուրքերով: Մեր ձեռքն ընկած փաստաթղթերը ապացուցում են, որ հայկական յարձակումը նախապատրաստւած է եղել մեծ խնամքով եւ նպատակ է ունեցել էրզրումի գրաւումը:

«Սահմանի միւս կողմը մեր եղբայրներին կոտորող եւ մեր իսկ գիւղերին յուսալքում ու մահ բերող հայկական հրոսախմբերին հետապնդելը հանդիսանում է օրինական պաշտպանութեան մի հանդամանք եւ մեր ազգի համար կենսական իրաւունք: Թիւրք ժողովուրդը ո՛չ մի յարձակողական նպատակներ չի սնուցանում ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ որեւէ այլ ժողովրդի նկատմամբ: Թափւած արեան պատասխանատւութիւնը ընկնում է միմիայն

հայերի եւ նրանց իմպերիալիստ պաշտպանների վրա, որոնք հետապնդում են թիւրք ազգը քայքայելու նպատակներ»:

Դժւար չէր տեսնել, որ տրւած բացատրութիւնները չէին համապատասխանում իրականութեան եւ որ թիւրքերի իսկական նպատակը Հայաստանի քայքայումն ու Սեւրի դաշնագրի ոչնչացումն էր: Թիւրքական յարձակողականը այդպէս էլ հասկացւեց ամենքի կողմից: Հայկական բոլոր շրջաններն անխտիր, ամէն տեղ, ցասումով ընդունեցին պատերազմի լուրը: Ընդհանուր վրդովումի եւ դիմադրութեան վճռական կամքի արտայայտութիւն եղաւ կառավարութեան կոչը ժողովրդին.

Հայաստանի Քաղաքացիներին,

«Քաղաքացինե՛ր, Հայաստանը նոր փորձութիւնների առաջ է կանգնած: Տաճիկ փաշաները չեն ուզում հանդիստ թողնել մեզ. նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովուրդը:

«Սեպտեմբերի կէսերին կենտրոնանալով Մերդենեկի եւ Բարդուսի շրջաններում՝ տաճիկ զօրքերը յարձակման դիմեցին: Դաշտային աշխատանքների պատճառով մեր զինւորների մի մասը իրենց տները ցրւած լինելով՝ մեր զօրամասերը, յամառ կռւից յետոյ, ստիպւած եղան նահանջել եւ դրաւել ռազմավարական նոր գիծ, որով ածխահանքերի շրջանը անցաւ թշնամու ձեռքը:

«Սեպտ. 23-ի գիշերը տաճիկները ուժեղ յարձակման դիմեցին Փենեակի եւ Բարդուսի ճակատներում: Մեր զօրամասերը սաստիկ դիմադրութիւն ցոյց տալով՝ ամրացան Վերիչէնի բարձունքների վրա: Նոյն սեպտ. 23-ին տաճկական խոշոր ուժեր գրոհ տւին դէպի Կարաուրդան, որտեղից մեր զօրքերը քաշւեցին Սողանլուխ լեռնաշղթան: Ցայտնի է դարձել, որ տաճիկների անմիջական նպատակն է կտրել Սարըղամիշ—Կարս երկաթուղին եւ ազատութիւնից զրկել Սարըղամիշի եւ Կաղզւանի զօրքերն ու ժողովուրդը: Անակընկալներից եւ զոհերից խուսափելու եւ աւելի յարմար դիրքեր գրաւելու նպատակով՝ մեր հրամանատարութիւնը սեպտ. 29-ի գիշերը դատարկել է Սարըղամիշն ու Կաղզւանը:

«Ժողովուրդը նոյնպէս տեղափոխւել է անվնաս: Նահանջը եղել է ռազմավարական նպատակներով, կանոնաւոր եւ առանց որեւէ կորուստի: Մեր զօրքերի ոգին բարձր է: Թշնամին հանդիպում է ամենաբուռն դիմադրութեան: Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջաններում սկսւած է ուժեղ շարժում յօդուտ երկրի պաշտպանութեան: Ամէն կողմից հասնում են կամաւորներ եւ վերադառնում են դասալիքները: Դաշտային աշխատանքներով կլանւած ժողովուրդը ոտքի է կանգնում:

«Քաղաքացինե՛ր, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ Հանրապետութեան կառավարութիւնը յայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամէն միջոց՝ պետութեան անվտանգութիւնն ապահովելու համար եւ վստահ է, որ նենգ քշնամին չուտով դուրս կը շպրտւի մեր երկրից: Այն ժողովուրդը, որ կարողա-

ցաւ ձեռք բերել իր ազատութիւնը, որ դեռ նոր ճնշեց բոլշեւիկեան խռովութիւնները, թոյլ չի տայ, որ տաճկական փաշաներին յաջողուի իրագործել իրենց դիւային ծրագրները: Հայաստանի կառավարութիւնը, իր հետ ունենալով յեղափոխական ժողովրդի կամքն ու վստահութիւնը, կանէ այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկեանը: Սակայն, ժողովուրդն եւս պէտք է լարէ իր բոլոր ուժերը: Տաճիկ զօրքերի առաջ մէ՛կ աննկիլ է մնում միայն մեզ — յաղթել կամ մեռնել: Մենք պէտք է յաղթենք:

«Քաղաքացինե՛ր, որքան եւ աննպաստ լինեն պայմանները, թողէ՛ք ձեր անձնական գործերը: Ամէն ոք եւ ամէն ինչ պէ՛տք է յատկացւի Ֆրոնտին: Ո՛չ մի դասալիք չպիտի մնայ Հայաստանում: Ո՛չ մի երիտասարդ չպիտի նստի տանը: Ամէ՛ն ինչ զօրքի համար: Գիւղացի, բանւոր, մտաւորական, պաշտօնեայ, արհեստաւոր, ուսանող, կանայք — բոլորդ պէտք է նպաստէք մեր բանակին, որովհետեւ մի՛այն ամենքիս միահամուռ ջանքերով կը խորտակւի փաշաների գարշելի բռնակալութիւնը, եւ Հայաստանը բոլորովին ապատ կը լինի տաճիկ չովինիստների մղձաւանջից:

«Ոտքի՛, ժողովուրդ:

«Կեցցէ՛ Միացեալ եւ Անկախ Հայաստանը:

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն

Կառավարութեան կոչը անմիջապէս արձագանգ գտաւ բոլոր կողմերից: Հրապարակային ժողովներ, բանաձեւեր, թռուցիկներ, լրագրական յօդւածներ. — ամենքը նեցուկ կանգնեցին կառավարութեան քիկունքում: Իրրեւ նմոյշ, առաջ բերենք Սոց.-Յեղափոխ. Կուսակցութեան Հայաստանի Կոմիտէի հրատարակած կոչը հոկտ. 2-ին:

Կուռվ կը խլես ֆո իրաւունքը

«Ընկերնե՛ր: Տաճիկ փաշաները, քիւրդ ու թիւրք հորդաների գլուխն անցած, ներս են խուժել մեր երկիրը: Բազմահազար հայ գիւղացիներ կարսի չրջանից տեղահան են եղած ու կրկին գրկել են «գաղթականի» ցուպը: Հայ դեմոկրատիայի հազիւ ապաքինւած վէրքը դարձեալ նորոգւել է, եւ առատօրէն հոսում է արիւնը նրա կրծքից: Նորից մեր ֆիզիքական գոյութեան խնդիրն է դրւած պատմութեան կշռաթաթի վրա:

«Օրհասի այս ժամին Հայաստանի դեմոկրատիան մնացել է մենակ ու անօգնական: Երկու տարւայ քաղաքական անկախ կեանքի ընթացքում մենք չկարողացանք ունենալ դրսի այնպիսի բարեկամներ, որոնց օգնութեան վրա կարողանայինք յոյս դնել վտանգի ժամին: Չկան եւրոպական իմպերիալիստները, մեր այդ «հաւատարիմ բարեկամները» ... ճաշկերոյթների ժամանակ: Չկան բարեկամներ եւ մեր հարեւանների չարքերում: Հայ դեմոկրատիան այսօր իր ուժերով է, որ պէտք է ապահովէ իր գոյութիւնը եւ յետ վանէ արիւնռուչտ թշնամուն:

«Այսօրուայ յաջողութեան միակ պայմանը, ընկերներ, մեր դեմոկրատիայի բովանդակ ուժերի կազմակերպումն է հայրենիքի ինքնապաշտպանութեան գործի շուրջը:

«Հայ քաղաքական կեանքի ձեւաւորման ու նրա սոցիալական բովանդակութեան շուրջը եղել են մեծ տարաձայնութիւններ մեր եւ Հայաստանի ղեկավար հոսանքի մէջ, որի հետեւանքով ստեղծւել է ծանր ու դաղջ մըթնոլորտ միակուռ ու միակամ գործունէութեան համար:

«Բայց վտանգն այսօր սպառնում է հայ բազմատանջ դեմոկրատիայի ո՛չ միայն քաղաքական իդէալներին, այլ նաեւ նրա ֆիզիքական գոյութեան, եւ այդպիսի մոմենտում մենք պէ՛տք է մոռանանք ամէն ինչ, պէ՛տք է բովանդակազուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին եւ նւիրենք միայն եւ միայն մի գործի՝ ճակատի պաշտպանութեան:

«Մեր կեանքի այս փլուզումի օրերին իւրաքանչիւր ազնիւ գործի աշխատանքը կրկնակի արժէք ունի: Եւ այդպիսի մի մոմենտում սոցիալիստ-յեղափոխականը պէտք է գտնւի առաջին շարքերում՝ իր անկաշառ կարողութիւնները ի սպաս դնելու հայրենիքի պաշտպանութեան գործին:

«Դէպի՛ ճակատ, ընկերնե՛ր:

«Դէպի՛ մեր իրաւունքների ընձեռումը՝ յաղթական կռւում»:

Ռամկավարների Երեւանի պաշտօնաթերթ «Հայաստանի Ձայն»ը գրում էր. «Ամբողջ հայութիւնը, առանց տատանւելու ոտքի պիտի կանգնի իր կրծքով պաշտպանելու տասնեակ հազարաւոր նահատակներու արիւնով գնւած իր հայրենիքն ու ազատութիւնը: Պիտի վճռական ու վերջնական հարւած հասցնել մեր թշնամուն ու փութացնել իր օրհասականի մէջ ջղաձգօրէն գալարւող թշնամու մահը:

«Այս վախճանին հայ ժողովուրդը պիտի հասնի միայն մի ճանապարհով՝ ուժի դէմ ուժ հակադրելով: Ատոր համար մենք ունենք ազգային հաւաքական ուժ, կազմակերպւած բանակ: Պէտք է յոյս կտրել արտաքին միջոցներէ եւ միջամտութիւններէ, պէտք է յենւիլ մեր սեփական հայ քաջերի բանակի վրա: Հայ ժողովուրդը գիտակ է իր գոյութեան սպառնացող վտանգին. պէտք է գիտակցի նոյնպէս եւ վստահի իր սեփական ուժին — իր հերոս բանակին:

«Այս է միակ հնարաւոր ճանապարհը:

«Մեր վերջնական փրկութիւնը այս ճակատագրական կռւի յաջող ելքէն կախում ունի:

«Ուրեմն, յաղթութեան վստահութեամբ դէպի՛ ընդհանուր աշխատանք:

«Բոլո՛ր պիտանի ուժերու հաւաքումն ու կենտրոնացում ճակատի եւ թիկունքի համար:

«Համերաշխութիւն կուսակցական շրջաններու մէջ:

«Ժողովուրդը պետութեան հետ»:

Եւ, իրօք, համերաշխութիւնը Հայաստանում եւ հայկական բոլոր խաւերում դարձաւ կատարեալ: Ընդհանուր յուզումի եւ համերաշխութեան ար-

տայայտութիւն եղաւ եւ Թիֆլիսի բողոք-ցոյցը հոկտ. 6-ին. «Մօտաւորապէս 10,000 հոգի, հետագրում էր կառավարութեան Հայաստանի Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէդզադեանը, կազմած ազգարնակութեան բոլոր խաւերից՝ այր, կին, բանւորներ, համքեարներ եւ աշակերտներ դրօշակներով եւ մակագրութիւններով՝ եկան կանգնեցին հայոց ներկայացուցչութեան չէնքի առջեւ: Հռետորների ճառերից յետոյ, ինձ յանձնեցին միտինգի որոշումը եւ խնդրեցին հաղորդել Հայաստանի կառավարութեան, որ միտինգի մասնակիցները բոլորն էլ պատրաստ են ոտքի կանգնելու հայրենիքի պաշտպանութեան համար: Տեսարանը սրտաշարժ դարձաւ, իմ ճառի ժամանակ, երբ առաջարկեցի դէխարկները վերցնել ի յարգանս հայրենիքի պաշտպանութեան համար ընկածների յիշատակի, ցուցարարներն ինքնաբերաբար ծունկի իջան եւ դրօշակները խոնարհեցրին»...

«Բոլոր պետութիւնների ներկայացուցչութիւնների առջեւ միտինգներ կազմելուց յետոյ ծովածաւալ բազմութիւնը խռնուեց Ռուսաստանի ներկայացուցչութեան առաջ: Ցուզումը հասաւ իր դադաթնակէտին: Արտասանեցին սուր, յանդիմանական, կրակոտ ճառեր՝ ընդդէմ բոլշեւիկ-քեմալական դործակցութեան: Յօսեցին սոցիալիստ-յեղափոխական Թարխանեանը, վրահայոց Ազգ. Խորհրդի նախագահ Թումչեանը, վրաց ժողովրդական դւարդիայի պետ Ջուղելին, «Աչխատաւոր»-ի խմբագիր Կ. Ղազդեանը: Մասնաւորապէս ուժեղ ճառ արտասանեց վերջինը, որ ելեկտրականացրեց ամենքին:

«Ընկերնե՛ր, սկսեց նա, Մեծ Արեւելքի յեղափոխական աչխատաւորութեան անունից եկել ենք այստեղ հարց տալու նրանց, ովքեր յատկնութիւն ունեն յեղափոխական անուանելու իրենց, մինչդեռ փաստօրէն զաղիր հակայեղափոխականների հետ են դաշնակցել: Ի՞նչ իրաւունքով կամ ո՞ր յեղափոխական աւանդի հիման վրա դալիս են նրանք մեր՝ Արեւելքի աչխատաւորութեան դիրքերը թուլացնելու, սոցիալիստական ո՞ր հասկացողութեամբ համագործակցում են մեր երկրի տիրող դասակարգի՝ խաների, բէդերի, փաչաների հետ: Մենք այսօր այստեղից բողոքում ենք, իբրեւ յեղափոխականներ նրանց դէմ, որոնք վարկաբեկում են յեղափոխութիւնը, զաղիր դործ կատարում մեր իրականութեան մէջ եւ հարիւր հազարաւոր անմեղ կեանքերի դահիճ Ենվէր փաչաներին, Թալէաթներին ձեռք մեկնում ու յեղափոխական կարմիր դրօշակով քողարկւում:

«Դէմ առ դէմ կանգնած՝ մենք ուղղում ենք այս հարցը բոլշեւիկներին եւ սպասում ենք պատասխանի: Յեղափոխութիւնը վերածելով դիւանագիտութեան, սակարկելով սոցիալիզմը՝ այսօր նրանք Արեւելքում երեւան են գալիս իբրեւ աչխատաւորութեան թշնամիներ, իբրեւ բարեկամ տիրող դասակարգի: Սակայն, մօտ է այն օրը, երբ Արեւելքը կը բռնկւի յեղափոխական հրդեհով, բայց ո՛չ ձեր՝ Լենինի ու Թալէաթի, այլ մեր՝ տեղական յեղափոխականների ու հազարաւոր նահատակների շնորհիւ: Ազատագրական պատմութիւնը եւ ազատ աչխատանքը կասէ իր խօսքը ձեր այսօրւայ կատարած զաղիր դործի համար»:

Պատշգամբ դուրս եկաւ խորհրդային ներկայացուցիչ Ստարկը՝ շրջապատուած իւրայիններով եւ սկսեց խօսել։ Նրա ամէն մի խօսքը ծածկւում էր սուլոցներով, «կորչի»–ներով, վրդովմունքի ու բողոքի արտայայտութիւններով։

«Դուք ուզում էք գիտենալ, ասաց նա, մեր վերաբերմունքը դէպի Հայաստանի սահմաններում կատարուող դէպքերը (Ձայներ՝ «մենք գիտենք, պատասխանեցէ՛ք, թէ ի՞նչ է ձեր արածը»)։ Ես կը պատասխանեմ։ Ռուսաստանի բանուորդիւղացիական հանրապետութիւնը իր գոյութեան հէնց առաջին օրերից վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը, նոյնիսկ մինչեւ անջատում եւ անկախութիւն (Ձայներ՝ «դրանք խօսքով էին, իսկ գործո՞վ»)։ Մենք այդ իրաւունքը ճանաչեցինք ո՛չ միայն խօսքով, այլ եւ գործով (Ձայներ՝ «սո՛ւտ է, փաստեր»)։ Համեցէ՛ք փաստեր. մենք ճանաչեցինք Խստոնիայի, Լիտուայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի անկախութիւնները (Ձայներ՝ «լաւ ճանաչեցիք, երբ ձեր ստամքները ջարդեցին»)։ Ճանաչեցինք Վրաստանի անկախութիւնը. ճանաչել ենք, ճանաչում ենք եւ կը ճանաչենք Հայաստանի անկախութիւնը, քանի որ այդպէս է ցանկանում հայ աշխատաւոր ժողովուրդը (Ձայներ՝ «էնվերը կը նեղանայ», «ձեր դաշնակից Մուստաֆա Քեմալ փաշան էլ ձեզ պէս է ցանկանում եւ ճանաչում», «իսկ Ղարաբա՞ղը, Զանգեզո՞ւրը, Ղազախի դէպքե՞րը»։ Մէկը հուժկու ձայնով՝ «շատ մի խօսիր, Ղարաբա՛ղը տուր»)։ Մեր քաղաքականութիւնը եղել է խաղաղութեան քաղաքականութիւն (ծիծաղ, սուլոց, ձայներ՝ «սո՛ւտ է, սո՛ւտ է»)։ Բազմաթիւ ճակատներում մեր թափած արեան մեղքը մերը չէ (Ձայներ՝ «ձե՛ր մեղքն է, մի օր կը պատասխանէք ռուս ժողովրդին այդ արեան համար»)։ Այդ արիւնը ընկնում է Անտանտի վրա։ (Ձայներ՝ «ո՛չ ձեր վրա, բոլշեւիկներիդ վրա, աւազակնե՛ր»)։ Արեւելքում մենք օգնում ենք եւ պաշտպանում ենք ճնշւած ազգերը ընդդէմ Անտանտի։ Մեզ համար թանգ են հայ աշխատաւոր զանգւածների չահերը (Ձայներ՝ «սո՛ւտ է, մի՛ վիրաւորէք այդ ժողովրդին»)։ Թանգ են եւ Պարսկաստանի, Հնդկաստանի եւ Չաճկաստանի աշխատաւորութեան չահերը (Ձայներ՝ «ո՛չ բանգ ես ձեզ համար էնվէր փաշաների ու բէգերի շահերը»)։ Բայց Դաշնակցութիւնը իմպերիալիստների կողմն է բռնել եւ Հայաստանը դարձնում է զէնք Անտանտի ձեռքին։ (Ձայներ՝ «սո՛ւտ էք ասում, Դաշնակցութիւնը ինքը հայ աշխատաւորութիւնն է»)։ Հայ ժողովուրդը պէտք է ընտրի երկուսից մէկը՝ ցանկանում է լինել մե՞ղ հետ (ձայներ՝ «հայ ժողովուրդը էնվէր չէ»), թէ՞ չարունակել հին քաղաքականութիւնը։ Երկու ամիս առաջ մենք մեր միջնորդութիւնը առաջարկեցինք Հայաստանին եւ Չաճկաստանին։ (Ձայներ՝ «սուտ էք խօսում, ձեր միջնորդութիւնը արտայայտւեց Ղարաբաղում, Զանգեզուրում, Ղազախում, Նախիջեւանում»)։ Հայաստանը մինչեւ այսօր չի պատասխանել, իսկ Չաճկաստանը համաձայնւեց (սուլոցներ, «կորչի՛»–ներ)։ Իմ կառավարութիւնը այսօր էլ նոյն վճռի վրա է։ Ահա իմ պատասխանը»։

Սուլոցների, անվերջ «կորչի»–ների եւ սպառնական աղաղակների տարափի տակ Ստարկը թողեց պատշգամբը, իսկ միտինգը դեռ երկար չա-

բունակուում էր խորհրդային ներկայացուցչութեան պատուհանների տակ:

Նոյն անվերապահ թշնամանքով ընդունեցին պատերազմի լուրը եւ վրաց քաղաքական շրջանները, բացի ծայրայեղ ազգայնականներից, որոնք Քեմալի յարձակումը համարում էին յարմար առիթ լուծելու համար Լոռիի եւ Ախալքալաքի հարցերը. «Որ Քեմալ փաշան Հայաստանը առում է, դրում էր կառավարական կուսակցութեան «էրթօրաղ» թերթը (N° 2279), այդ ոչ ոքի համար գաղտնիք չէ: Բայց մենք չէինք կարծում, որ կոմունիստները այն աստիճան կը ստորանային, որ իրենց ձեռքը կը մեկնէին այդ մարդուն — վերջին պատերազմի ընթացքում սարսափելի մերկութեամբ հանդէս եկած իր մարդակերութեամբ եւ բռնակալութեամբ... Այսօր ռուսական իմպերիալիզմի մերկանալն ու Թիւրքիայի հետ բարեկամանալը անվիճելի փաստ է... Ինչո՞վ կարելի է արդարացնել Քեմալի յարձակումը. — միմիայն նրա վայրենի դիտաւորութիւններով: Ինչպիսի՞ դրդապատճառներ են դործի մղում նրան. — միմիայն ատելութիւնը դէպի Հայաստանը»: «Թիւրքերը նպատակ ունեն կարս—Սարըղամիշի ուղղութեամբ, դրում էր «Բորբա»-ն, ամբողջ Հայաստանի վրայով միանալ բոլշեւիկներին: Հայ ժողովրդին, Հայաստանին անմիջապէս վտանգ է սպառնում: Մենք պարտաւոր ենք հնարաւոր ձայն բարձրացնել հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան իրաւունքի համար... Եթէ Քեմալին յաջողւի իրագործել իր ծրագիրը, այն ժամանակ Վրաստանը օղակւած կը լինի քեմալական—բոլշեւիկեան ուժերով»: Նոյնն էր ասում եւ ազդ.-դեմ. «Մաքարթեւլօ»-ն. «Ընդհանուր վտանգը թելադրում է Հայաստանին ու Վրաստանին լարել բոլոր եռանդն ու պահպանել ազգային ազատութիւնը, որ մեր լաւագոյն զաւակների արիւնով է ձեռք բերւած: Դաւադիր թշնամին վռնդելու համար մենք զինւորական դաշինք պէտք է կապենք... Վրաստանի եւ Հայաստանի զինւորական դաշինքի հարցը պէտք է մեր ընթացիկ քաղաքականութեան հարցը դառնայ»: Նմանապէս եւ սոց.-ֆեդ. «Մախալխօ Սաքմէ»-ն. «Հայաստանի դժբախտութիւնը մեր՝ Վրաստանի դժբախտութիւնն է. բռնապետական բռունցքը միայն Հայաստանին հարւածելու նպատակով չէ բարձրացած, այլ եւ Վրաստանի կուրծքը ջախջախելու համար է պինդ սեղմւած: Հայաստանի դէմ ուղղւած սուրը Վրաստանի ազատութեանն էլ է մահացու հարւած սպառնում»:

Ընդհակառակը, Թիւրքերի յարձակումը Հայաստանի վրա անխառն հրճւանք առաջ բերեց բոլշեւիկների չարքերում: Վրաստանի Կոմկուսի պաշտօնաթերթ «Կոմունիստ»-ը (հոկտ. 24), Թիւրքերի յառաջխաղացման առթիւ դրում էր ցնծութեամբ. «Մնում է միայն ուրախանալ, որ դաշնակցական Հայաստանը դտնւում է այն պոզահարող կովի դրութեան մէջ, որին Աստւած եղջիւրներ չի տւել»: Բադուի «Կոմունիստ»-ը բուռն խմբագրականներ էր դրում ի նպաստ Մուստաֆա Քեմալի եւ ընդդէմ Հայաստանի: Պակաս չէին մնում եւ հայ կոմունիստները. նրանք եւս չարունակում էին կատաղի յարձակումները Հայաստանի վրա եւ աշխատում էին վարկաբեկել Հայաստանի կառավարութիւնը յաչս Խորհրդային Ռուսաստանի: Այս տեսակէտից պերճախօս մարդկային վաւերագիր է հետեւեալ կոչը՝ ամբողջ աշխարհին,

որ հրատարակուեց Բագուի «Կոմունիստ»-ի հոկտ. 8 համարում:

«Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանուորներին եւ դիւղացիներին, կոմունիստական Ինտերնասիոնալին, Արհեստակցական Միութիւնների Միջազգային Խորհրդին եւ Գործունէութեան ու Պրոպագանդի Խորհրդին.

«Ալեկոծուող Արեւելքի սրտում, Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանուորագիւղացիական լայն զանգւածների համար աննկատելի կերպով, միջազգային իմպերիալիզմի գործակալների — դաշնակների ողորմելի աւազակների կառավարութիւնը դնդակահարում է Հայաստանի լաւագոյն զաւակներին — կոմունիստական կուսակցութեան եւ արհեստակցական միութեան անդամներին: Հայաստանի բանտերը լի են կոմունիստներով եւ ապրստամբած բանուորներով ու դիւղացիներով:

«Վայն զանգւածների աչքում սնանկացած, բայց ազգայնական պատերազմների փորձով հմուտ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը՝ ժամանակաւոր յաղթութիւն տանելով ապստամբ բանուորա-դիւղացիական զանգւածների վրա, բռնութիւններ գործ դնելով մահմեդական խաղաղ զանգւածների դէմ, այժմ հաշիւ է տեսնում Հայաստանի ապստամբած բանուորների ու դիւղացիների եւ նրանց ղեկավարների՝ կոմունիստների հետ:

«Հայաստանի կառավարութիւնը հաճեց նորից ու նորից տաքանալ արիւնով՝ այս անգամ կուելով նրանց դէմ, ովքեր ուղում էին բանուորա-դիւղացիական Հայաստանը խլել նրա արիւնոտ ձեռքերից, որպէսզի հաղորդակից անեն նրան աշխատանքի եւ կապիտալի միջեւ մղւող մեծ կուին:

«Հայաստանի մռայլ ու խոնաւ բանտերը, որոնք ոչ քիչ կեանքեր խլեցին արիւնալի ցարի օրով, վերածւել են կառավարական տաճարների, ուր մաւզերիստները արիւնալի խնջոյքներ են սարքում Հայաստանի կոմունիստների նկատմամբ: Հայաստանի ներսում կոմունիստական բանուորական շարժումը յաղթահարելով միայն դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար յուսալի մի յենարանի՝ Արեւելքի յեղափոխութեան դէմ կուելու համար:

«Այն ժամանակ, երբ ամբողջ Արեւելքը բռնւած է ապստամբութեան բոցով, երբ Արեւելքի ժողովուրդների համագումարը երդւեցնում էր արեւելեան ժողովուրդներին ոտքի կանգնելու կոմունիստական Ինտերնասիոնալի դրօշակի տակ, միջազգային իմպերիալիզմի դէմ, վերջին վճռական կռիւը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ աւազակային կառավարութիւնը, հրով ու սրով չափելով ամբողջ յեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանուորական արհեստակցական կազմակերպութիւնները, անգլեւ-ամերիկեան իմպերիալիստների հետ միասին նոր Գողգոթա է պատրաստում Արեւելքի յեղափոխական զանգւածներին:

«Սակայն, ո՛չ կոմունիստական շարժումը Հայաստանում, ո՛չ էլ, մանաւանդ, Արեւելքի ժողովուրդների յեղափոխական շարժումը ոչ մի րոպէ չեն կասեցնի իրենց յաղթական արշաւը: Ընդհակառակը, արհեստով դահիճների ձեռքով ընկած ընկերներ Ալլահվերդովի, Ղարիբջանովի, Ղուկասի եւ ուրիշ շատ շատերի մահը, տասնեակ ու հարիւրաւոր ապստամբների մահացումը Հայաստանի խուլ ձորերում, լաւագոյն ապացոյցն է, որ «խաղա-

ղեցած Հայաստանը» իր մէջ թագցնում է ներքին յեղափոխական ոյժ, որ որոշ պատմական րոպէին դարձեալ կռիւ կը սկսի, որպէսզի երկրի երեսից վերացնէ պատմութեան ընթացքը հրով ու սրով կասեցնել ձգտողներին:

«Մենք ուխտել ենք տալիս Հայաստանի արիւնաքամ եղած բանւորա–դիւղացիական զանգւածներին՝ չենթարկւել աւազակային խմբերի ցածոգի պրովոկացիային, այլ յամառօրէն ու համբերութեամբ հաւաքել իրենց ցան ու ցիր եղած ուժերը իրենց դասակարգային մարմինների շուրջ, արթուն ունկընդրել կոմունիստական կուսակցութեան ձայնին, որի լաւագոյն անդամները իրենց հերոսական մահով բացին ազատագրման ճամբան:

«Մենք դիմում ենք Ռորհրդային Ազրբէջանի բոլոր բանւորական կազմակերպութիւններին, Կոմունիստական Ինտերնասիոնալին, Գործունէութեան ու Պրոպագանդի Ռորհրդին եւ Արհեստակցական Միութիւնների Միջազգային Ռորհրդին՝ մեզ հետ միասին բողոքի ձայն բարձրացնելու Հայաստանում իշխող սպիտակ տեռորի դէմ:

«Թո՛ղ իմանան դեղին Ինտերնասիոնալի սոցիալ–դաւաճանները, որոնք Թիֆլիս եկան եւ սրտագեղ ընդունելութիւն գտան իրենց բարեկամների — դաշնակների ու մենշեւիկների կողմից, որ այդ երկրների երեւութական բարօրութիւնն ու անդորրութիւնը պահւում է ահաբեկումով ու յեղափոխականների դաժան սպանումով, Հայաստանի խոնաւ բանտերում, կալանաւորւած հարիւրաւոր բանւորների ու դիւղացիների տառապանքներով ու քաղցով:

«Մա՛հ Հայաստանի բանւորների ու դիւղացիների վրա բռնութիւն կատարողներին:

«Կեցցէ՛ յեղափոխական Արեւելքը:

«Կեցցէ՛ Ինտերնասիոնալը:

«Հայաստանի Կոմունիստ. Կուսակց. Կենտր. Կոմիտէ: Ազրբէջանի Արհեստ. Միութիւնների Խորհրդին կից գտնւող Արհեստակցական Միութիւնների Արեւելեան Բիւրօ: Նախագահութիւն Ազրբէջանի Արհեստակցական Միութիւնների Խորհրդի»:

Իսկ ի՞նչ վերաբերում ունէին դէպի թիւրքական յարձակումը դաշնակիցները: Դեռ օգոստ. 8–ին, Հայաստանի կառավարութիւնը չրջաբերական յայտագիր էր ուղղել բոլոր դաշնակից պետութիւնների կովկասեան ներկայացուցիչներին՝ ցոյց տալով, որ քեմալականները ձգտում են Հայաստանի վրայով միանալ բոլշեւիկների հետ եւ նրանց օգնութեամբ չարունակել պայքարը դաշնակիցների դէմ: Հայաստանի կառավարութիւնը փաստերով հաստատել էր, որ բոլշեւիկներն ու քեմալականները Ազրբէջանն ու Պարսկաստանը դարձնում են իրենց անմիջական գործունէութեան վայր եւ որ բոլշեւիկ համիսլամական–համաթիւրքական ծովի մէջ միայն Հայաստանն է մնացել մի փոքրիկ օազիս, որը հեշտութեամբ ոտքի տակ կերթայ, եթէ դաշնակիցներից լուրջ օգնութիւն չստանայ: Ոչ մի չօշափելի օգնութիւն չստացւեց դաշնակիցներից, եթէ չհաշւենք Անգլիայի ծախած մէկ միլիոն ոսկու ռազ–

մամբերքն ու զինուորական հագուստը: Պատերազմը սկսելուց յետոյ, Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց դաշնակիցներին: Պատասխանը եղաւ նոյնը. համակրական խօսքեր եւ ոչ մի գործնական օգնութիւն:

Այսպիսի պայմաններում սկսւեց թիւրք–հայկական պատերազմը. Հայաստանը բառիս բուն նշանակութեամբ մնացել էր մենակ: Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին: Դեռ նոր էր դուրս եկել ներքին քաղաքացիական կռիւների չրջանից: Մայիսեան բոլշեւիկեան չարժումները դրեթէ կազմալուծել էին նրա բանակը. թիւրքական չրջանների նւաճման գործողութիւնները աւելի եւս թուլացրել էին երկրի մարտական ուժերը: Ազգբէչնը նաւթ չէր տալիս եւ Հայաստանի երկաթուղին հազիւ չունչ էր քաշում: Բոլշեւիկեան յարձակումները Ղազախի, Բասարդեչարի, Դարալագեազի եւ Շարուրի չրջաններում անընդհատ ջղային վիճակի մէջ էին պահում Հայաստանը եւ ստիպում, որ հայկական զօրքերը մնան ցրւած վիճակի մէջ: Բացի այդ, ժողովուրդը զրաղւած էր բերքը հաւաքելով. անձրեւոտ եղանակի պատճառով հունձքը վերջացաւ ուշ եւ ամէն ոք չտապում էր կալսել ու պատրաստել իր ձմեռւայ պաշարը: Զինուորական իշխանութիւնը թոյլ էր տւել, որ բանակի զինուորների մի մասը գնայ տուն դաշտային աշխատանքներ կատարելու համար: Թիւրքերի ընդհանուր յարձակումը յանկարծակիի բերեց հայկական բարձր հրամանատարութեան: Ամբողջ ճակատի վրա, Սուրմալուից մինչեւ Օլթի, պատերազմը սկսւելուց առաջ, հայկական ուժերի թիւը վեց հազարը չէր անցնում, որից չուրջ 2500 Սուրմալուում, մնացածը՝ կարսի ճակատի վրա:

Իսկ այդ ժամանակ ի՞նչ ոյժ ունէին թիւրքերը: Համաձայն Հայաստանի սպարապետի սպայակոյտի հետախուզական բաժնի յուլիս 6 տեղեկութեան*) թիւրքական բանակը Հայաստանի սահմանի վրա հետեւեալ կերպով էր դասաւորւած. 15րդ կորպուս՝ հրամանատար Քեազիմ կարաբեքիր փաշա: Էրզրումում գտնւում էր 17րդ դունդը եւ 9րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար՝ Թուշտի բէյ: Հասան Ղալայում գտնւում էր 28րդ գնդի կենտրոնը եւ չորս լեռնային թնդանօթ. Թորթումում՝ 28րդ գնդի երկու գումարտակ. Բարդուսում՝ 28րդ գնդի մէկ գումարտակ եւ 20րդ գնդի մասեր. Խորասանում՝ 12րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար Խալիլ բէյ. Զիւինում՝ 34րդ գունդը. Քեոփրիքէոյում՝ 35րդ գունդը. Ալաշկերտում՝ 36րդ գունդը: Օլթիի ուղղութեամբ չարժւում էր Խալիդ բէյի երրորդ դիւիզիան — 7, 8 եւ 11րդ գնդերը: Տրապիզոնի եւ Էրզրումի միջեւ նկատւած էին 31րդ դիւիզիայի մասերը: 11րդ դիւիզիայի կենտրոնը, ինչպէս եւ 18րդ գունդը՝ Բայազէտում. 32րդ գունդը՝ Վանում. 30րդ գունդը՝ Բայազէտ–Արչայում: Բացի այդ Մերզիւնեկի չրջանում կային 1200 հոգի անկանոն կըռւողներ. Օլթիում՝ 350 ժանդարմներ. Օլթիից դէպի հիւսիս՝ 1500 հոգինոց չէթա. Հասան–Ղալայում՝ 1600 կամաւորներ. Տրապիզոնում՝ 300 ժանդարմներ. Լազիստանում՝ լազ կամաւորներ:

---

*) Секретная сводка развед. отд. шт. ком войсками Армении 6 июля 1920 г. № 20

«Թան»–ի զինուրական Թղթակցի ասելով, 1920 թ. ամառայ վերջը, արեւելեան նահանգներում թիւրքերն ունէին 3րդ, 13րդ եւ 15րդ կորպուսները ընդամենը՝ 50,000 հետեւակ, 2,600 այրուձի եւ 306 հին ձեւի թնդանօթ: Ուրիշ զինուրական հեղինակութիւններ Հայաստանի դէմ գործող թիւրք բանակը ցոյց էին տալիս՝ 3րդ, 9րդ 11րդ, 12րդ եւ խառն դիւիզիաները, երկու աշխրէթական գնդեր, մի բրիգադ այրուձի, այսպէս կոչուած ազգրէյնեան ձիաւոր հարիւրեակը, թրքական եւ քրդական հրոսախմբեր եւայլն: Կանոնաւոր զօրքերի թիւը հասնում էր 28·000–ի, որից 3·000 ձիաւոր: Զօրքը պարենաւորուած էր շատ լաւ, ունէր առատ ռազմամթերք, տաք հագուստ, որ ստանում էր իտալացիներից, ֆրանսացիներից եւ Գորհրդ. Ռուսաստանից:

Նման անհաւասար պայմաններում սկսուեց պատերազմը: Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը: Սեպտ. 30–ին, կառավարութիւնը արտակարգ նիստում, երկիրը յայտարարեց պատերազմական դրութեան մէջ: Մինչեւ 35 տարեկանները զէնքի տակ առաւ: Խիստ օրէնքներ սահմանեց դասալիքների դէմ: Զինուրական նախարարութեան տուեց արտակարգ լիազօրութիւններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ռադիո–կայանները եւ փոխադրութեան միջոցները: Որոշեց, արագացնելու համար կառավարութեան գործունէութիւնը եւ շրջաններում հեղինակաւոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին եւ մի շարք գործիչներ ռազմաճակատ եւ դաւառներ ուղարկել: Ալեքսանդրապոլ ուղարկուեցին Ա. Ջամալեանը եւ Գ. Ղազարեանը, Կարս՝ Ս. Վրացեանը եւ Ա. Բաբալեանը, Սուրմալու՝ Ս. Արարատեանը, Իջեւան՝ Ա. Գիւլխանդանեանը, Նոր–Բայազէտ՝ Ս. Մելիք–Եոլչեանը, Աշտարակ՝ Գորհրդարանի անդամներ՝ Յ. Տէր–Յակովբեանը եւ Հ. Տէրտէրեանը: Կենտրոնում մնացին՝ Հ. Օհանջանեանը եւ Ռ. Տէր–Մինասեանը: Կառավարութիւնը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինուրական նախարարի հրամանով Երեւանի եւ Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղաններ: Կառավարութեան հետ միասին ամբողջ երկիրը եւս լարում էր իր ուժերը դիմադրելու համար իր թշնամուն:

Արտասահմանեան հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ թիւրքերը, առանց որեւէ արդելքի հանդիպելու, յաղթեցին հայերին, որ հայկական բանակը ոչ մի դիմադրութիւն ցոյց չտուեց: Այս կարծիքը արդիւնք է բացարձակ տգիտութեան: Ընդհակառակը, եթէ հայ բանակի մի մասը չդտնուեց իր կոչման բարձրութեան վրա, միւս մասը ցոյց տուեց անձնազոհութեան, անվեհերութեան եւ հայրենասիրութեան աքանչելի օրինակներ: Հայ–թիւրքական վերջին պատերազմի պատմութիւնը, որը դեռ իր պատմաբանին է սպասում, կը բանայ մեր առջեւը շատ ուսանելի էջեր, որոնք թուլութեան եւ անկազմակերպութեան կողքին ցոյց կը տան պետական դիտակցութեան եւ ռազմական կարողութեան շքեղ օրինակներ: Մասնաւորապէս բուռն կռիւներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատում. իրենց յարձակումը թիւրքերը սկսեցին երկու ուղղութեամբ: Քեազիմ կարաբեքիրի ուժերի մի մասը չարժւեց Կարսի ճակատում. միւս մասը՝ մի դիւիզիա հետեւակ, մօտ 2,000 քիւրդ խուժան, 8 թնդանօթ, ձիաւոր մասեր, ուղղուեցին դէպի Սուրմալու, ըստ երեւոյթին կամենալով արագ հարուածով դրաւել մինչեւ Արաքս

եւ հարւածի տակ առնել երեւանը: Իգդիրի ճակատի ընդհանուր հրամանատար նշանակւեց Դրօն, որի ձեռքի տակ կային 9րդ դունդը — 1,200 հետեւակ, 25 ձիաւոր, 16 գնդացիր, հրամանատար՝ գնդապետ Մուղարաչեան. 8րդ դունդը — 600 հետեւակ, 40 ձիաւոր, 8 գնդացիր, հրամանատար՝ Տ. Բաղդասարեան. էքսպեդիցիոն զօրամասը — 5 վաշտ — 500 հետեւակ, 16 բեռնակիր եւ 8 ձեռքի գնդացիր. կուռօ Թարխանեանի այրուձին 260 ձիաւոր, 6 գնդացիր: Հոկտեմբեր 1–ին 8րդ դունդը փոխադրւեց կարսի ճակատ, որ Սեպուհի բրիգադի մի մասն էր. դրա փոխարէն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զօրամասի թիւը հասաւ մինչեւ 2,000 հոգի: Զօրամասը շատ լաւ կազմակերպւած ու պարենաւորւած էր. բոլոր մասերը կապւած էին իրար եւ կենտրոնի հետ հեռախօսով. սերտ յարաբերութիւն էր ստեղծւած եւ զօրամասի ու ազգաբնակութեան, ինչպէս եւ էջմիածնի պատասխանատուութեան միջեւ: Այս վերջինս էր վարում Սուրմալուի զօրամասի պարենաւորման գործը. ինչպէս նաեւ շատ յաջողութեամբ կատարեց Սուրմալուի ազգաբնակութեան տեղափոխութիւնը:

Հոկտեմբեր 20–ից սկսած, թիւրքերը գործօն չարժումներ կատարեցին Սուրմալուի ճակատում: Նրանք յարձակւեցին կարաբուլաղ եւ Սոզիւթլի դիւղերի վրա: Հոկտ. 20–ի ամբողջ օրը տեղի ունեցան տաք կռիւներ. թնդանօթները երկու կողմից որոտում էին անընդհատ: Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ մերոնք նահանջեցին մինչեւ Արաքս. յաջորդ օրը դիմեցին հակայարձակման եւ յետ շպրտեցին թշնամուն ծանր կորուստներ պատճառելով նրան: Մեր զոհերն էին սպանւած եւ վիրաւոր՝ երկու սպայ եւ 60 զինւոր: Հոկտ. 24–ից կատաղի կռիւներ սկսեցին Քիւլլուկ, Կարակալա, Վերին Զարուխչի, Դաշբուռունի շրջանում: Վաղ լուսաբացին, մօտ մէկ դիւիզիա կանոնաւոր ուժեր ու բազմաթիւ քրդական խմբեր յարձակման անցան Քիւլլուկ—Վերին Զարուխչի, Սուլթանաբաղ—Իգդիր, Դաշբուռուն—Կարակոյունլու—Մարգարա ուղղութեամբ: Արիւնահեղ կռիւներ տեղի ունեցան: Թշնամին բազմաթիւ անգամներ դիմեց գրոհի եւ միշտ յետ շպրտւեց: Թիւրքերը առանց կանգ առնելու զոհերի առաջ, ձգտում էին, ինչ գնով էլ լինի, գրաւել Սուրմալուն: Հայերն էլ վճռել էին աւելի չուտ մեռնել, բայց տեղի չտալ եւ երեք օր շարունակ, առանց ընդմիջումի, ամբողջ ճակատի վրա մղւում էին արիւնահեղ կռիւներ: Տեղ–տեղ, ինչպէս Դալիգղաչի գիւղերում, որ պաշտպանում էր կուռօ Թարխանեանը, զինւորների ու սպաների յիսուն տոկոսը սպանւեց կամ վիրաւորւեց, բայց չնահանջեց: Սուլթանաբադի դիրքերում թշնամին կուտակ էր մի քանի հարիւր քայլ հեռաւորութիւնից: Սպայութիւնը՝ գնդ. Մուղաբաչեան, Մամալեանեան, Գալուստեան, Ռուսամափեան, Թարվերդեան, Թարխանեան, Մակ–Մալիցկի, Թոփչեան, Աբգարեան, Պետրոսեան, Ղամբարեան եւ ուրիշներ ցոյց տւին հերոսութեան փայլուն օրինակներ: Առաջ բերենք մի օրինակ միայն: Կռւի երկրորդ օրը, Դրօի հրամանով, Քանաքեռից, բեռնատար ինքնաշարժներով, օգնութեան է շտապում կուռօ Թարխանեանը: Մարգարայում պարզւում է, որ խճուղին բռնւած է թշնամու կողմից. առաջ գնալու հնարաւորութիւն չկայ: Առանց երկար մտածելու, կուռօն դասաւորում է զինւորներին ինքնաշարժերի վրա,

Ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ եւ չորս ինքնաշարժները, իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով: Թշնամին յանկարծակիի է գալիս եւ սարսափահար պահւում առուներում: Տալով ութ զինուոր վիրաւոր եւ գնդացիրային մասի պետ հերոս Մալիքեանին սպանուած՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան եւ հասնում օրհասական դիմադրութիւն ցոյց տուող Դալիդղաշին օգնութեան:

Հոկտ. 26-ին մեր զօրամասերն անցան հակայարձակման: Թշնամին բոլոր կէտերում, կատաղի դիմադրութիւնից յետոյ, բազմաթիւ դիակներ թողնելով, դիմեց խուճապային փախուստի: Ու հետզհետէ հեռացաւ Բարթողեան լեռների միւս կողմը: Երեւանը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող թնդանօթների որոտի տակ եւ սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ շունչ քաշեց: Թշնամին այլեւս Սուրմալուի ճակատում կենդանի գործունէութիւն ցոյց չտուեց:

Բոլորովին այլ ընթացք ստացան դէպքերը Կարսի ճակատում: Այստեղ գործում էին զօրավար Յովսէփեանի բրիգադը — առաջին գունդ՝ գնդ. Մազմանեան, 4րդ գունդ՝ գնդ. Միրիմանեան, 5րդ գունդ՝ գնդ. Շաղուբագեան. Սեպուհի բրիգադը. 7րդ գունդ՝ գնդ. Իշխանեան, 8րդ գունդ՝ փոխ. գնդ. Բաղդասարեան. Գնդ. Ղորղանեանի ձիաւոր բրիգադը եւ մի քանի կամաւորական խմբեր՝ Փիլոսի, Մուրատեանի, Սմբատի եւ այլն: Կարսի ճակատում գործում էին սաւառնակներ եւ «Ազատամարտ» զրահագնացքը: Կարսի բերդապետն էր՝ զօրավար Փիրումեանը, իսկ բերդի հրետանիի պետն էր բուլղար սպայ՝ գնդ. Բարաջանովը: Կարսի զօրախմբի ընդհանուր հրամանատարն էր՝ զօրավար Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը: Թէ բերդի եւ թէ դաշտային մասերը թոյլ էին կազմակերպուած. զինուորների մեծ մասը նոր էր հաւաքուած եւ չէր մերուած գնդերում: Սպաների եւ զինուորների փոխյարաբերութիւնը շատ մասերում մտերմական չէր: Լաւ չէին եւ զօր. Փիրումեանի ու զօր. Յովսէփեանի, ինչպէս նաեւ նահանգապետ Ղորղանեանի յարաբերութիւնները, որ անդրադառնում էին շրջապատի վրա: Զօրքերի մի մասը շտապ կերպով զինուած էր Անգլիայից նոր ստացուած Ռոս հրացաններով, որոնց վարժ չէր: Թիկունքը լաւ կազմակերպուած չէր եւ հակպետական տարրերը՝ բոլշեւիկները կարողանում էին դժուարութիւններ առաջացնել: Այսպէս, հոկտ. 2-ին, Կարսայլ կայարանից եօթ վերստ հեռու, Շահնալար գիւղի մօտ, խորտակեց ճակատը զինուորներ տանող գնացքը 14 վագոններ ջարդուեցին, սպանուեց 12 եւ վիրաւորուեց 43 հոգի: Բոլշեւիկների գործն էր այս:

Փորձելու համար մեր զօրքերի մարտունակութիւնը, այլ եւ ռազմական ոգին բարձրացնելու նպատակով, բարձր հրամանատարութիւնը որոշեց ձեռնարկել ընդհանուր յարձակման: Յաջողութեան դէպքում ենթադրւում էր առաջ շարժուել: Յարձակումը յաջողութիւն չունեցաւ: Թշնամու ուժեղ դիմադրութեան հետեւանքով մեր զօրամասերը նահանջեցին գրեթէ մինչեւ Կարս: Այնուհետեւ նախաձեռնութիւնն ամբողջապէս անցաւ թիւրքերի ձեռքը: Քայլ առ քայլ ճնշելով մերոնց, հոկտ. 28-ին, նրանք գրաւեցին Վեզեն-

քոյի բարձունքները: Ամբողջ հոկտ. 28–ին տաք կռիւներ տեղի ունեցան. Մազմանեանի զօրամասը ձգտում էր յետ խլել Վեղենքոյը: Այս կռիւներում երկու կողմերն էլ ունեցան ծանր կորուստներ. վիրաւորուեց ճակատի պետ գնդապետ Գնդունին: Հոկտ. 29ին տեղի ունեցաւ զօրամասերի վերախմբում: Համաձայն տրուած հրամանի, հոկտ. 30–ի առաւօտեան, մեր զօրքերը պիտի անցնէին հակայարձակման Վեղենքոյը գրաւելու նպատակով: Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը եւ տեղից չշարժուեց: Ցուսահատ եւ անզօր՝ գնդ. Մազմանեանը ամենքի աչքի առջեւ մաւզերի երկու գնդակից ինքնասպանութիւն գործեց: Այս եւս չազդեց զօրքի տրամադրութեան վրա: Այդ միջոցին մեծ ուժով յարձակման դիմեցին Թիւրքերը: Սկսուեց խուճապային վախուտ: Մեր զօրքերի մի մասը եւ զրահապնացքը նահանջեցին դէպի Մազրա. ժողովուրդը եւ զօրքի միւս մասը խուժեց դէպի կիրճը՝ Պրոխլադնոյէ գիւղի ուղղութեամբ: Մեր սաւառնակը թռաւ երեւան: կարան ընկաւ Թշնամու ձեռքը: Գերի մնացին զօր. Փերումեանը, զօր. Աբրահամեանը, գնդ. Շաղուրադեանը, գնդ. Վեքիլեանը, գնդ. Բարաչանովը, փոխգնդ. Տէր–Առաքելեանը, 30–ի չափ զանազան աստիճանի սպաներ եւ մօտ 3,000 զինուորներ. նախարար Ա. Բաբալեանը, Գարեգին Աբգ. Յովսէփեանցը, փոխ–նահանգապետ Չալխուշեանը, քաղաքապլուխ Նորհատեանը եւ ազգաբնակութեան մեծ մասը: Երեք օր անընդհատ Թիւրքերը թալանեցին, բռնաբարեցին, սպանեցին եւ ամէն տեսակ վայրենութիւններ գործ դրին քաղաքում:

Նախարար Ա. Բաբալեանը, իբրեւ զէպքերի ականատես, զարհուրելի գոյներով է նկարագրում Թիւրքերի գործած վայրագութիւնները: Հայերը ենթարկւում էին կոտորածի, զեղեցիկ կանայք տարւում էին հարճութեան, տղամարդիկ քշւում էին Թիւրքիայի ներսերը: Ի միջի այլոց, ցնցող տեղեկութիւններ է տալիս նա բոլշեւիկների կատարած դերի մասին: «Մեր զէբութեան հինգերորդ օրը, գրում է նա, մեզ այցելեցին չորս հայեր՝ ուղեկցութեամբ մի քանի տաճիկ սպաների, զարդարուած կարմիր լաթերով: կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պտտում էին հանրակացարանները եւ իրենց Թշնամիներին մատնում տաճիկներին: Ցեղկոմների անդամներ էին: Այնպէս էին հաւատացրել սրանց տաճիկ սպաները, որ իբր Թէ կարսը պիտի յանձնեն բոլշեւիկեան իշխանութեան: Եւ ամէն կերպ փայփայում էին կոմունիստ տականքներին. փոխարէնը սրանք մատնութիւններ էին անում եւ ցոյց տալիս պահեստների տեղերը եւ անհրաժեշտ տեղեկութիւններ էին տալիս հայ զօրքի եւ երկրի վերաբերեալ»:

Իսկ Բագուի հայերէն «Կոմունիստ»–ը (N° 42) հետեւեալ ձեւով է նկարագրում Թիւրքերի ընթացքը կարսում.

«Հոկտ. 30–ին տաճկական զօրքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրութեան հայկական զօրամասերի կողմից՝ գրաւեցին կարսը: Մինչեւ Թիւրքական զօրքերի մտնելը, հայկական զօրքերը խորը համոզուած էին, որ կարսի վրա յարձակուող զօրքերը բոլշեւիկներն են, որի պատճառով

եւ նրանք դիմադրութիւն ցոյց չտուին տաճիկներին: Այդպիսի կարծիքի էր եւ կարս քաղաքի աշխատասէր ժողովուրդը, որը բացարձակապէս համոզուած էր, որ կարմիր դրօշակի տակ, յարձակւում է կարմիր Տաճկաստանի յեղափոխական բանակը: Բայց քաղաք թափւած այդ զօրքերը չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին եւ ո՛չ էլ ծերերին: Հինգ օրւայ ընթացքին արիւնռուշտ զինուորները եւ քիւրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր դազանութիւնները, որոնք վեր են մարդու երեւակայութիւնից. Սպանում էին բացառապէս հայերին: Թալանում էին ամենքին անխտիր:

«Զէին խնայում նոյնիսկ կոմունիստների, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցանող վկայականներ էին ներկայացնում: Տաճկական դազանութիւններին զոհ գնացին կարսում միմիայն 6,000 հայեր:

«Սարսափելի կոտորածներին յաջորդեցին խմբական ձերբակալութիւններ հայերի մէջ: Ոտքից գլուխ մերկացնելով նրանց հարիւրներով ուղարկում էին կարին եւ Սարըղամիշ աշխատելու: Ուղարկւածները ցրտահար էին լինում եւ մեռնում քաղցից ու տանջանքից:

«Միեւնոյն ժամանակ սկսւել էր թուրք զաղթականների չարժումը դէպի կարսի շրջանը: Տեսնողները սարսափով պատմում էին, թէ ինչպէս բազմահազար ամբոխը՝ ծերեր, կանայք, երեխաներ, այդ ցրտին չարժւում էր դէպի Սարըղամիշ ու կարս օր առաջ տեղաւորւելու համար փախած հայերի դիւղերում եւ տներում:

«Կարսի շրջանը դատարկւած էր արդէն հայերից. կարս քաղաքը նոյնպէս: Քեմալականների համար ստեղծւել էր հնարաւորութիւն իրենց ծրագրի մի մասը իրագործելու: Տաճկական հրամանատարութիւնը աշխատում էր կարսի շրջանը թրքացնել, որպէսզի հին կառավարութեան հետ կնքած պայմանի համաձայն, կազմւելիք հանրաքւէն յօգուտ իրեն վճռւի, իսկ առաջին խորհրդաժողովին կարենայ յայտարարել, որ կարսի շրջանը թրքարնակ է»:

Կարսի դրաւման յաջորդ օրը, Քեազիմ Կարաբեքիրը մի կոչ ուղղեց քաղաքի եւ շրջանի հայ ազգաբնակութեան, որի մէջ պատերազմի ամբողջ պատասխանատուութիւնը բարդում էր «դաշնակների» վրա եւ իրեն ներկայացնում էր իբրեւ քրիստոնէութեան պաշտպան. ապա պահանջում էր, որ իշխանութեան յանձնւեն հայերի մօտ գտնւող զէնքն ու ռազմամթերքը, սպաներին եւ «ամէն տեսակ գործակալներին ու լրտեսներին»:

Այնուհետեւ զէպքերը զարգացան չատ արագ: Կարսից յետոյ մեր զօրքերը համախմբւեցին Ղզլչախչախի տակ, ուր նոյ. 4-ից սկսւեցին տաք կռիւներ վրա հասնող թիւրքերի հետ: Թշնամին աշխատում էր կտրել կիրճի բերանը եւ գերի առնել մեր զօրամասը: «Ազատամարտ» զրահագնացքի խիզախ չարժումներով եւ գնդացիրային սպանիչ կրակի ուժով թիւրքերի ծրագիրը ձախողութեան մատնեցին: Մեծ կորուստ տալով, թշնամին այլեւս չհամարձակւեց առաջ չարժւել: Ղզլչախչախի կռիւն ահագին իրարանցում եւ խուճապ առաջ բերեց Ալեքսանդրապոլում: Նահանգապետը, մխիթիան առած, հեռացաւ, անպաշտպան թողնելով քաղաքը: Քաղաքային ինքնավարութեան, երկաթուղային պաշտօնէութեան մեծ մասը փախաւ: Քա-

ղաքում դլուխ բարձրացրին անիշխանական տարրերը: Բանտից արձակուեցին բոլշեւիկները, որոնք ստեղծեցին Ցեղկոմ եւ փորձեցին իրենց ձեռքն առնել իշխանութիւնը: Նոյ. 5–ին նրանք բաց թողին մի թռուցիկ, որով կոչ էին անում ազգաբնակութեան մնալ քաղաքում: Սակայն, Ջամալեանի, Սեպուհի եւ մի չարք քաղաքացիների ձեռք առած միջոցների շնորհիւ յաջողուեց քաղաքի անդորրութիւնը վերականգնել: Լ. Սարգսեանի նախագահութեամբ կազմուեց ժամանակաւոր մի մարմին քաղաքը կառավարելու համար: Նոյ. 6–ին կառավարութիւնը Լ. Սարգսեանին հաստատեց քաղաքագլխի պաշտօնում եւ նրա տրամադրութեան տակ դրեց նիւթական միջոցներ եւ միլիցիոներներ: Միեւնոյն ժամանակ որոշեց խիստ պատասխանատուութեան ենթարկել պետական, քաղաքային եւ հասարակական այն պաշտօնեաներին, որոնք հակառակ կառավարութեան նախօրօք տրուած հրահանգի, լքել էին դիրքերը եւ թուլամորթութեամբ փախել:

Կարսի անկումից յետոյ, համարեա միաժամանակ եւ Անդորայի եւ Հայաստանի կառավարութիւնները դիմեցին միմիանց հաշտութեան առաջարկով: Նոյ. 6–ին, Քեազիմ Կարաբեքիրը առաջարկեց զինադադարի հետեւեալ պայմանները.

1. Այժմ Արփաչայից արեւմուտք գտնուող հայ զօրամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնուազն 15 կիլոմետր դէպի արեւելք պէտք է քաշուեն:

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտի զրաւուի, միայն թէ բերդը եւ կայարանը մեր կողմից զինուորական զրաւման տակ պէտք է առնուեն: Ալեքսանդրապոլում հանրային ապահովութիւնը, կարգի պահպանութեան տակ դնելը Ալեքսանդրապոլի բնակչութեան պէտք է յանձնուի:

3. Ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլն ունի մեծ նշանակութիւն, որպէս Թիֆլիս—Երեւան երկաթուղու միացման կէտ, արդելք չպէտք է լինել, որ Ալեքսանդրապոլի շրջանը, տաճիկ բանակի վստահութեան համար, զրաւուի զօրամասերի կողմից:

4. Զինադադարի տեւողութեան միջոցին՝ տաճկական զօրքերի վրա ո՛չ մի կողմից եւ ո՛չ մի պատրուակի տակ յարձակում չպէտք է արուի եւ կրակ չպէտք է բացուի:

5. Վերի յօդուածները վաղը (7 Նոյ. 1920 թ.), կէսօրից յետոյ, մինչեւ ժամը 5, ամբողջապէս գործադրել եւ Արփաչայի արեւմուտքը գտնուած հողամասը եւ Ալեքսանդրապոլը յիշուած կէսօրից առաջ մինչեւ ժամը 10 ամբողջապէս պարպել:

Հայաստանի կառավարութիւնը ընդունեց այս պայմանները, որոնք Նոյ. 7–ին իրագործուեցին: Հայկական զօրքերի մի մասը քաշուեց դէպի Ջաջուռ, միւս մասը՝ դէպի Աղին: Բայց յաջորդ օրը, Նոյ. 8–ին, Քեազիմ Կարաբեքիրը, յանուն իր կառավարութեան ներկայացրեց հետեւեալ պահանջները.

«Զինադադարի պայմանները. — Առ այժմ, 24 ժամուայ ընթացքում, յանձնել Ալեքսանդրապոլում, բոլորովին գործածելի վիճակի մէջ 2000 արա-

զինտարած հրացան, սարքով եւ կենդանիներով միասին, 20 հատ ծանր եւ 40 հատ արագահարուած զնդացիր, երեք մարտկոց թնդանօթ, 4000 ջոկի, 1000 նետուկ հրացանային ռազմամթերք, 6000 թնդանօթի ռումբ, 2 չոգեշարժ մեքենայ եւ 50 վագոն պիտի յանձնուի մեզ: Կանոնաւոր եւ անկանոն հայկական զինուորական ուժերը Արփաչայի ընթացք—Ալադեազ կայարան—Կիրմիզլի—Կոլիջան, Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արեւելք պիտի քաշուեն. այս գծից արեւմուտք գտնուող երկաթուղագիծը չքանդուած եւ անվնաս պիտի թողնուի:

«Երկրորդ՝ առ առաւելն 3 օրուայ ընթացքում զարձեալ հայկական կանոնաւոր եւ անկանոն զինուած ուժերը Սուրմալու—Արաքս կայարան—Կիզիլլի—Արէթ—Ալագեոզ լերան լանջը—Տանապերմազ—Նովո-Միխայլովկա—Լոռիքենդ—Շէրմուտ եալանդազ գծից արեւելք պիտի քաշուեն:

«Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ Սանահին կայարանի եւ Ալեքսանդրապոլի միջեւ երկաթուղագծի վրա ամէն տեսակ ռազմական պիտոյքների փոխադրութիւնը պիտի կանգ առնի: Այս փոխադրութիւնները սուուզելու համար Սանահին կայարանը եւ Ղարաքիլիսէ մէկ-մէկ յանձնախմբեր պիտի ուղարկուեն, եւ հայկական կառավարութիւնը վերոյիշեալ յանձնախմբերի անձեռնմխելիութիւնը եւ Ալեքսանդրապոլի շրջանում նրանց արեւելեան ճակատի հրամանատարութեան հետ կանոնաւորապէս եւ ապահովապէս կապ ունենալը պիտի երաշխաւորի:

«Չորրորդ՝ մինչ զինադադարի երրորդ օրը երեկոյեան, երկու կողմի պատուիրակները հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գնուեն եւ այս ժամանակի ընթացքում եթէ առաջին եւ երկրորդ պայմանների բովանդակութիւնը իրագործուած է՝ իսկոյն հաշտութեան բանակցութիւնները պիտի սկսուեն:

«Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զօրամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում յիշուած Արփաչայ հոսանք—Նալբանդ կայարան— Վարանցովկա գծից արեւելեան կողմը եւ միւս շրջաններում իրենց գտնուած գծից առաջ չպիտի անցնեն:

«Վեցերորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ երկու կողմից թշնամական գործողութիւններին վերջ պիտի տրուի:

«Սոյն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնուող հայկական առաջաւոր մասերին յանձնելու ժամից գործադրութեան մէջ են մտնում եւ պայմանաժամը, ի վերջոյ, եթէ կարիք զգացւի, երկարաձգելու պայմանով, եօթ օր է: N° 2378»:

Հայաստանի կառավարութիւնը ամենավճռական կերպով բողոքեց այս պահանջների դէմ, նկատելով այդ՝ զինադադարի խախտում եւ որոշեց մերժել նոր պայմանները: Ժօսքը նորից անցաւ զէնքին: Նոյեմբեր 11-ին վերսկսուեց պատերազմը, որը, սակայն, տեւեց շատ կարճ: Նոյեմբեր 14-ին թիւրքերը յարձակուեցին Ջաջուռի մեր զօրամասի վրա: Կռիւները սկզբում նպաստաւոր էին մեզ համար, բայց թշնամուն յաջողուեց թիկունքային շարժումով ամբակոծել Ղալթախչին, ուր գտնուում էր զօրամասի կենտրոնը, եւ

սպառնալ երկաթուղագծին: Այդ պատճառով մեր զօրքերը նահանջեցին Համամլու: Տաք կռիւներ տեղի ունեցան եւ Աղինի ճակատում, ուր ծանր վիրաւորուեցին Սմբատը եւ Նիկոլ Օզարաչեանը: Թիւրքերին յաջողուեց այստեղից էլ յետ մղել մերոնց: Վերջին կռիւներն էին սրանք:

Հայաստանի կառավարութեան դիմումի վրա կնքուեց նոր զինադադար եւ նոյ. 22-ից թիւրքերին յանձնուեց նրանց պահանջածը: Հայաստանի կառավարութիւնը միաժամանակ դիմեց եւ Մոսկուայի միջնորդութեան: Չիչերինը դրական պատասխան տուեց եւ իր կողմից նշանակեց Բոդու Մդիւանիին մասնակցելու համար հայ-թիւրքական բանակցութիւններին: Միաժամանակ, Թիֆլիս ուղարկուեց Ա. Խատիսեանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին: Խատիսեանը Երեւանից մեկնեց նոյեմբեր 18-ին եւ հետը տարաւ հետեւեալ տեղեկագիրը, որ զինուորական նախարար Ռ. Տէր-Մինասեանը պատրաստել էր պատերազմի սկզբին դաշնակիցների համար.

«Հայաստանը ունի չորս ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում — Կարս—Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջեւանի եւ Դիլիջան—Ղազախի:

«Ինչպէ՞ս են բաժանուած դրանց մէջ Հայաստանի զինուորական ուժերը: Կարս—Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետեւեալ զօրամասերը. խօսքը վերաբերւում է կանոնաւոր զօրքերին եւ, յատկապէս, հետեւակ զօրքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մազմանեան) — 1500 սուին, 4րդ գունդը (Մխիթարեան) — 2000 սուին, 5րդ գունդը (Շաղուրադեան) — 700 սուին, 6րդ գնդի մի բատալիոն — 700 սուին, 7րդ գնդի մի բատալիոն (Իշխանեան—Գնդունի) — 800 սուին եւ 8րդ գունդը (Տիգր. Բաղդասարեան) — 1500 սուին, ընդամենը՝ 7,200 սուին: Բացի դրանից կան նաեւ Սմբատի խմբերը:

«Սուրմալուի ճակատում (Դրօի մօտ) կան՝ 9րդ գունդը — 2000 սուին, 8րդ գունդը (1 բատալիոն) — 1000 սուին եւ 7րդ գունդը (մի բատալիոն) — 700 սուին, Ղարաբաղի առանձին զօրամասը (Կուռո) — 800 սուին, ընդամենը՝ 4500 սուին եւ փոքրիկ եզիդական զօրամաս:

«Նախիջեւանի ուղղութեամբ կանգնած են՝ 3րդ գունդը — 2000 սուին, 2րդ գունդը (երկու բատալիոն) — 1000 սուին, ընդամենը՝ 3000 սուին:

«Դիլիջան—Ղազախի ճակատում գտնւում է 6րդ գունդը (Մանիեւի) — 2000 սուին:

«Այս թւերի մէջ չեն մտնում հեծելազօրքը, հրետանին եւ յատուկ նպատակ ունեցող մասերը, ինչպէս սապէորներն եւ հեռագրական ջոկատները:

«Այսպիսով, բոլոր չորս ուղղութիւնների վրա մենք ունենք ընդամենը 16,700 սուին, բացի դրանից, Զանգեզուրում գտնւում է 800 սուին, ուրեմն, վերոյիշեալի հետ՝ 17,500 սուին:

«Երեւանում պահեստում մնում է 10րդ գունդը (Հալաջեանի) — 1500 սուին, ընդամենը, ուրեմն, 19,000 սուին:

«Ընդունելով եւ միւս տեսակի զէնքերը՝ 6000 հոգի — ուրեմն, գործող բանակում կանոնաւոր մարտական ուժեր կան 25,000 հոգի:

«Աւելացնելով դրանց վրա նաեւ թիկունքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակոյտը, առողջապահական սպասաւորներին — ընդհանուր թիւ 30 տոկոսը, կը ստանանք բանակի ամբողջ կազմը 34,000 հոգի, խմբերի հետ միասին — մօտ 40,000 հոգի:

«Կանոնաւոր թիւրքական ուժեր կարս—Ալեքսանդրապոլ ուղղութեան վրա պէտք է ընդունել 4 դիվիզիա, իւրաքանչիւրի մէջ 3000 հոգի, ընդամէնը 12,000: Մուրմալուի ուղղութեան վրա՝ 1 թիւրքական դիվիզիա — 3000 հոգի, որը սպառնում է Երեւանին: Նախիջեւանի ուղղութեամբ՝ բոլշեւիկեան ուժեր մօտ 2000 հոգի: Եւ Ղազախ—Դիլիջանի ուղղութեամբ՝ ազրբէջանցիք եւ բոլշեւիկներ: Այդ կանոնաւոր զօրքերի թիւը պէտք է, ընդհանուր առմամբ, հաշուել 20,000 մարդ:

«Եթէ դրանց աւելացնենք ոչ-կանոնաւոր ժողովրդական ուժերը, քրդերին եւ թշնամի դինուած ազգաբնակութիւնը, այդ դէպքում թշնամու ուժերի թիւը պէտք է որոշել բոլոր չորս ուղղութիւնների վրա ոչ պակաս 30,000 հոգուց: Ահա մրցակից կողմերի անկողմնապահ թուահամարը:

«Սրա հետ միաժամանակ պէտք է ի նկատի ունենալ Հայաստանի մեկուսացած դրութիւնը, նաւթից, նաւահանգստից զուրկ լինելը, արտաքին աշխարհից կտրուած լինելը (որովհետեւ ամբողջ հաղորդակցութիւնը Վրաստանի եւ Եւրոպայի հետ կախուած է մազից — երկաթուղային գծից, որը չուտով կտրուեց): Թնդանօթի ռումբերի պաշարը վերջանում է: Ձրտերը աւելի սաստկանում են: Հայաստանը չղթայւում է երկաթէ օղակով: Գրաւուած եւ վտանգի ենթարկուած շրջաններից ազգաբնակութիւնը հաւաքւում է Հայաստանի սրտի մէջ»:

Դաշնակիցները, սակայն, ոչինչ չունէին ասելիք: Անգլիայի ներկայացուցիչ Ստոկսը միայն որոշ պատասխան տուեց Ֆորէյն Օֆիսի կողմից. Անգլիան ոչնչով չի կարող օգնել. հայերին ոչինչ չի մնում անել, բայց եթէ իրրեւ երկու չարեաց փոքրագոյնը — հաշտուել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Հաշտուել Խորհրդային Ռուսաստանի հետ, բայց ո՞ւր էր նա՝ այդ Ռուսաստանը եւ ի՞նչ կարող էր անել տեսալ պայմաններում, երբ թիւրք բանակը կեցած էր Ախուրեանի եւ Արաքսի եզերքներին՝ ամէն վայրկեան ներխուժելու պատրաստ:

Կառավարութիւնը փութաց Ալեքսանդրապոլ ուղարկել հաշտութեան պատուիրակութիւն: Պատուիրակութեան կազմն էր՝ Ա. Խատիսեան (նախագահ), նախարար Ա. Գիւլխանդանեան, կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեան, Խորհրդարանի անդամներ Վ. Մինախորեան եւ Լ. Զարաֆեան՝ իրենց հետ ունենալով մասնագէտներ քարտուղարներ:

Պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլ մեկնեց նոյեմբ. 23-ին, եւ նոյն օրը վարչապետ Հ. Օհանջանեան խորհրդարանին ներկայացրեց կառավարութեան հրաժարականը:

ԳԼՈՒԽ ԼԲ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հ. Օհանջանեանի Բիւրօ–կառավարութիւնը իշխանութեան գլուխ եկաւ բոլշեւիկների առաջ բերած մայիսեան հակապետական խռովութիւնների հետեւանքով: Ազրբէյջանի խորհրդայնացումից անմիջապէս վերջը, երկրի զանազան կողմերում տեղի ունեցան ըմբոստացումներ եւ կառավարութիւնը տապալելու փորձեր, խորհրդային վարչաձեւ հաստատելու նպատակով: Ներքին բոլշեւիզմին ոյժ էր տալիս եւ արտաքին թշնամին, յանձին մի կողմից խորհրդային իշխանութեան եւ միւս կողմից՝ քեմալական Թուրքիայի: Երկիրը իսկապէս դատնում էր լուրջ վտանգի առջեւ: Անհրաժեշտ էր ձեռք առնել կըտրուկ միջոցներ միակամ իշխանութիւն ստեղծելով:

Այս պայմաններում էր, որ կեանքի կոչուեց Բիւրօ–կառավարութիւնը բժ. Համօ Օհանջանեանի նախագահութեամբ, որի կազմի մէջ մտան Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրոյի բոլոր անդամները: Ուրիշ խօսքով՝ հաստատուեց կուսակցական դիքտատուրա, իրրեւ ժամանակաւոր իշխանութիւն, որի նպատակը պիտի լինէր հաշտեցարդարի ենթարկել մայիսեան հակապետական շարժումները եւ ներքին բոլշեւիզմը:

Բիւրօ–կառավարութիւնը մեծ յաջողութեամբ, կարելի է ասել, վայրկեան կերպով կատարեց իր դերը: Բոլշեւիկեան խռովութիւնների ճնշումով եւ Զանգի–Բասարի մաքրագործումով նրա վրա դրւած անմիջական պարտականութիւնը իրագործւած էր: Կառավարութեան ներսը եւ դուրսը, հասարակութեան մէջ, առաջարկներ էին լինում, որ Բիւրօ–կառավարութիւնը քաշուի գործից եւ նրան յաջորդէ խորհրդարանական կառավարութիւն: Բունիսին, այս դեռնի վրա, նոյնիսկ ներքին տագնապ առաջ եկաւ կառավարութեան մէջ, նախարարներից մէկի հրաժարումով: Սակայն, կառավարութիւնը մեծամասնութեան որոշումով մնաց իշխանութեան վրա այն պատճառաբանութեամբ, որ երկրի ներքին անդորրութիւնը լրիւ կերպով ապահովւած չէ դեռ, եւ որ արտաքին պայմանները, մանաւանդ Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագրի կնքումը ի մօտոյ, պահանջում են ուժեղ իշխանութեան գոյութիւնը երկրում:

Եւ, յիրաւի, 1920 թ. օգոստոս 10-ին, Սեւրի դաշնագրի ստորագրութեամբ նոր եւ զգլխիչ հեռանկարներ բացուեցան հայ ժողովուրդի առջեւ: Մօտենում էր ժամը Միացեալ Հայաստանի իրականացման: Բիւրօ-կառավարութեան առջեւ բացառիկ կարեւորութիւն ունեցող պատմական մեծ խնդիրներ էին դրւում: Արտասահմանից, Փարիզի պատւիրակութիւնից ստացւող տեղեկութիւնները, մեծապէս յուսադրիչ էին այդ ուղղութեամբ: Կառավարութիւնը ոգեւորւած էր Թիւրքահայ նահանգների Սեւրի դաշնագրով Հայաստանին յատկացւած մասը գրաւելու հեռանկարով: Վարչապետութեան գրասենեակներում եւ զինւորական նախարարութեան մէջ, բացայայտօրէն խօսակցութեան նիւթ էր Էրզրումի եւ Վանի գրաւման հարցը: Օլթիի զինւորական ձեռնարկն էլ, յուլիսին, եթէ մի կողմից հետեւանք էր առանց վառելիքի մնացած Հայաստանի ածուխով ապահովումը, միւս կողմից կառավարական եւ զինւորական շրջաններում նկատւում էր նախաքայլ չարժման դէպի Էրզրում:

Այս լաւատեսութիւնը, սակայն, հանդիպեց անյաղթահարելի արգելքի. փոխանակ Սեւրի դաշնագրի իրագործման, Հայաստանը ունեցաւ նոր պատերազմ փաստօրէն երկու ճակատի վրա՝ Թիւրքիայի եւ Ռուսաստանի հետ: Կառավարութեան դիւանագիտական բոլոր քայլերը խուսափելու համար պատերազմից կամ արտաքին աջակցութիւն ձեռք բերելու վերջացան ձախողութեամբ: Պատերազմի հէնց սկիզբից, վարչապետի կարգադրութեամբ նախարարների մեծ մասը հեռացաւ մայրաքաղաքից դէպի առաջնակատները եւ պատերազմի համար կարեւորութիւն ներկայացնող գաւառները. պատերազմը վարելու գործը մնաց վարչապետի եւ զինւորական նախարարի ձեռքերում: Տեսանք արդէն, թէ ինչ ընթացք ու վախճան ունեցաւ այդ գործը:

Զինադադարի դաժան պայմանների կնքումով Օհանջանեանի կառավարութիւնը այլեւս հեղինակութիւնը կորցրել էր ժողովուրդի աչքին: Ամեն կողմից պահանջում էին նրա հրաժարականը: Եւ կառավարութիւնը ինքն էլ, մասնաւորապէս վարչապետը եւ զինւորական նախարարը աշխատում էին օր առաջ ազատւել իրենց ուսերի վրա ծանրացած պարտականութիւնից:

Քեազիմ Քարաբեքիրի վերջնագրի վրա հաշտարար պատւիրակութեան կպմութիւնը եւ Ալեքսանդրապոլ ուղարկելը եղաւ կառավարութեան վերջին գործը: Նոյն օրը վարչապետ Օհանջանեանը խորհրդարանի նախագահութեան ներկայացրեց կառավարութեան հրաժարականը: Փաստօրէն մի քանի օր էր արդէն որ կառավարութիւնը զգում էր իրեն հրաժարւած, եւ խորհրդարանի գաղնակցական ֆրակցիան եւ խորհրդարանի նախագահութիւնը յանձնարարել էին Ց. Քալաշնունիին կազմել նոր կառավարութիւն: Քալաշնունին մեծ դժւարութեամբ համաձայնւեց ընդունել այդ պարտականութիւնը: «Պարոններ, ասում էր նա, ես դիտակցում եմ, թէ ինչ է պահանջւում ինձանից: Դուք զոհ էք փնտռում ալէկոծութեան մատնւած նաւը փրկելու համար, եւ ուզում էք, որ ես լինեմ այդ զոհը: Եթէ այդ է Հայրենիքի փրկութեան միջոցը եւ հայ ժողովրդի կամքը, ես խոնարհւում եմ նրա առջեւ»:

Քաջազնունին սկսեց բանակցութիւնները կուսակցութիւնների հետ: Նրա ցանկութիւնն էր կազմել համաղգային կառավարութիւն՝ հայկական բոլոր հոսանքների համախմբումով: Բայց հէնց առաջին քայլից նա հանդիպեց դժւարութեան: Ժողովրդական կուսակցութիւնը, որին դիմել էր նա, մերժեց մասնակցել Քաջազնունիի կառավարութեան, այն առարկութեամբ, թէ Դաշնակցութիւնը պէտք է բոլորովին հրապարակից քաշւի եւ դաշնակցականները մաս չունենան կազմւելիք նոր կառավարութեան մէջ. իսկ թէ այդ ժամանակւայ պայմաններում, ի՞նչ տարրերից եւ ի՞նչպէս կարելի պիտի լինէր կառավարութիւն կազմել առանց Դաշնակցութեան. ժողովրդականները մի՛ջոց ցոյց չէին տալիս: Մերժումով պատասխանել էին եւ հայ սոցիալ-դեմոկրատների կողմից՝ Դաւիթ Անանունը եւ Բ. Իշխանեանը: Սոցիալիստ-յեղափոխականների կարծիքը յայտնի էր, նրանք հէնց սկիզբից բացասական վերաբերում էին ցոյց տալիս դէպի Քաջազնունիի ձեռնարկը:

Անկարող լինելով ստանձնած յանձնարարութիւնը կատարել՝ Քաջազնունին ներկայացրեց իր հրաժարականը խորհրդարանի նախագահութեան եւ դաշնակցական ֆրակցիային՝ միաժամանակ իր կողմից վարչապետութեան թեկնածու առաջարկելով Գիւղատնտեսութեան եւ Պետական Գոյքերի նախարար Ս. Վրացեանին: Ջոհ էր պէտք, եւ նրէ այդ էր հայ ժողովուրդի կամքը, որեւէ մէկը իրաւունք չունէր հրաժարւելու: Վրացեանը ստիպւած եղաւ ընդունելու այդ տարապայմանօրէն ծանր պարտականութիւնը:

Այնուհետեւ դէպքերը զարգացան ողբերգական արագութեամբ:

Նոյեմբեր 23–ին գումարւեց խորհրդարանի արտակարգ նիստը: Սրահի հասարակութեան վերապահւած մասը բերնէ բերան լեցւած էր յուզումնալից բազմութեամբ, պատգամաւորները մռայլ՝ նստած էին իրենց բաժնում՝ լուռ ու տխուր: Նախագահ Ց. Քաջազնունին կարդաց վարչապետ Հ. Օհանջանեանի նամակը կառավարութեան հրաժարականի մասին: Ապա խօսք առաւ վարչապետը ինքը.

«Հայաստանի խորհրդարանի յարգելի պատգամաւորներ, ասաց նա, խորհրդարանի վերջին նիստից յետոյ անցել էր 10–12 օր: Այդ ժամանակամիջոցում մեր կեանքում այնպիսի մեծ փոփոխութիւններ են առաջ եկել, որ կառավարութիւնը նորից դիմում է խորհրդարանին: Ցաղթող թշնամին մեզ առաջարկել էր զինադադարի այնպիսի պայմաններ, որոնց անհնար էր ընդունել եւ կռիւը չարունակւեց: Ցետագայ դրութիւնը, որ ստեղծւեց ռազմաճակատում, ցոյց տւեց, որ արիւնհեղութիւնն անխմաստ է: Եւ մենք ըստիպւած եղանք ընդունել զինադադարի պայմանները եւ անցնել հաշտութեան բանակցութիւններին: Ամսիս 18–ին իրագործւեցին զինադադարի պայմանները: Վաղն երեկոյեան Ալեքսանդրապոլում հաշտութեան բանակցութիւնները սկսւելու են պաշտօնապէս:

«Կառավարութիւնն առանց սպասելու խորհրդարանի նիստին, ընտրել եւ ուղարկել է հաշտութեան պատւիրակութիւն հետեւեալ կազմով. նախագահ՝ Ալ. Խատիսեան, անդամներ՝ Աբր. Գիւլխանդանեան եւ Ստ. Ղորղանեան. որպէս խորհրդականներ մեկնել են խորհրդարանի անդամներ՝ Լ.

Հ· Հ· ՎԵՐՋԻՆ ԴԱՀԼԻՃԸ



Ս· ՎՐԱՑԵԱՆ
(Վարչապետ)



ԴՐՕ ԿԱՆԱՑԵԱՆ
(Ջինուորական նախարար)



Ա· ԽՈՆԴԿԱՐԵԱՆ
(Արդարադատութեան նախարար)



Ա· ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(Գիւղատնտեսութեան նախարար)



Զարաֆեան եւ Վ. Մինախորեան եւ մի շարք մասնագէտներ: Պատւիրակութիւնն Ալեքսանդրապոլ մեկնեց երէկ գիշեր, ուր Թշնամու պատւիրակները սպասում են նրանց: Թէ ի՞նչ վախճան կունենայ, դժւար է ասել:

«Անցեալ անգամ ես այստեղ կարդացի մեր եւ հակառակորդի միջեւ փոխանակւած դրութիւնները, որոնց մէջ հոգատարութեան պայմաններ կային ընդհանուր դծերով: Այժմ բացւում է նոր շրջան, քաղաքական ուժերի նոր սիտուացիա, եւ որպէսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը յոյց տալու, իմ կառավարութիւնը ներկայացրեց իր հրաժարականը՝ ի նկատի ունենալով հանրապետութեան շահերը»:

Խորհրդարանական վէճն ու պայքարը այլեւս անտեղի էին: Կացութիւնը պարզ էր եւ որոշ: Հարկաւոր էր միայն վերջին խօսքը ասել: Եւ ահա, դաշնակցական ֆրակցիայի կողմից, պատգամաւոր Ս. Թորոսեանը արտայայտեց ընդհանուրի մտքերը:

«Սրանից վեց ամիս առաջ, ասաց նա, մեր հանրապետութիւնը կանգնած էր ծանր օրերի առջեւ. մենք ընտրեցինք այժմ հեռացող կառավարութիւնը: Այդ կառավարութիւնը պատուով դուրս եկաւ մայիսեան դէպքերի ծանր բեռի տակից: Նա ուղիղ դծով տարաւ հանրապետութեան պաշտպանութեան գործը՝ համախմբելով դրա համար երկրի անհրաժեշտ ոյժը: Ամառւայ վերջին դժւար սպասելի անցքեր տեղի ունեցան մեր հանրապետութեան սահմաններին վրա: Մենք գիտէինք, որ Տաճկաստանը մի օր պիտի չարժւի մեզ վրա, վերջնական մի հարւած տալու համար: Պարզ չէր սակայն, որ այդ կը կատարւի այդքան արագ եւ այդքան չուտ: Մուստաֆա Քեմալը, որ կարողացաւ իր ձեռքերում կենտրոնացնել Տաճկաստանի զինական ամբողջ ոյժը, բաւական յաջողութիւններ ունեցաւ. նա յաղթանակեց:

«Մեր զօրքերի յաղթելու պատճառն ունի հոգեբանական հիմք, եւ մենք հաւատացած ենք, որ դա չուտով եւ հեշտութեամբ կանցնի: Պէտք է լինենք աւելի զգաստ եւ վերաքննենք քաղաքական դրութիւնը: Ժողովուրդն ուղում է հաշտւել թիւրքերի հետ եւ դա կը լինի: Նա միշտ ցանկացել է հաշտւել, միշտ պաշտպանելով ինքն իրեն՝ կուել է, սակայն, ոչ երբեք նոր նւաճումներ անելու նպատակով:

«Այն կառավարութիւնը, որ վեց ամիս պայքարել է եւ կարողացել է անվնաս դուրս բերել երկիրը եւ ժողովուրդը, այսօր, քաղաքական դրութեան այլ դասաւորման պատճառով, պէտք է հեռանայ: Կառավարութեան փոփոխութիւնը անհրաժեշտաբար պէտք է կատարւի: Հ. Յ. Դաշնակցութեան ֆրակցիան կառավարութեան հրաժարականը գտնում է յարգելի եւ ընդունում է այն»:

Գրեթէ նոյն իմաստով արտայայտւում է եւ սոցիալիստ-յեղափոխական պատգամաւոր Ա. Խոնդկարեան.

«Խորհրդարանի վերջին նիստում, ասում է նա, մենք յայտնեցինք, որ կառավարութիւնը պէտք է տայ իր հրաժարականը: Այդ հրաժարականը մենք ըմբռնում ենք այն ձեւով, որ այսօրւանից կատարւում է պատմական մի փոփոխութիւն: Մենք ընդունում ենք կառավարութեան հրաժարականը: Կառավարութիւնը, անշուշտ, ունեցել է սխալներ, բայց այդ պիտի վերագրել

ոչ այնքան կառավարութեան մէջ եղած անձերին, որքան տիրող սիստեմին։ Մենք հաւատացած ենք, որ մեր քաղաքական կեանքը կը կարողանայ կարող ուժեր հրապարակ հանել մեր երկրի կառավարութեան համար»։

Այնուհետեւ, նախագահը կարդում է Դաշնակցութեան ֆրակցիայի առաջարկած բանաձեւը. «Մորհրդարանը լսելով նախարարապետի զեկուցումը կառավարութեան հրաժարականի մասին եւ պատգամաւորների ճառերը՝ յարգելի է համարում, ընդունում է հրաժարականը եւ անցնում նոր նախարարապետի ընտրութեան»։

Առաջարկւած բանաձեւն անցնում է 34 ձայնով. ընդդէմ ոչ մի ձայն, ձեռնպահ մի ձայն։

Ի վերջոյ, Մորհրդարանը կատարում է նոր նախարարապետի ընտրութիւնը։ Թերթիկներով առաջարկւում են թեկնածուներ։ Նախարարապետութեան համար թեկնածու է առաջարկւում Սիմոն Վրացեանը (նախկին գիւղատնտեսութեան, պետական գոյքերի եւ աշխատանքի նախարար)։

Նախագահը Ս. Վրացեանից քւէարկւելու համաձայնութիւն ստանալով՝ առաջարկում է խորհրդարանին քւէատուփերով անցնել գաղտնի քւէարկութեան։ Քւէարկութեան արդիւնքը լինում է հետեւեալը.— Թեկնածուն ստանում է 34 սպիտակ քւէ, ոչ մի սեւ, ձեռնպահ մէկը։

Նորընտիր վարչապետը անում է հետեւեալ յայտարարութիւնը.

«Ես գիտակցում եմ, թէ քաղաքական այս բացառիկ պայմաններում խորհրդարանն ինչպիսի ծանր բեռ է դնում իմ ուսերին։ Իմ կազմելիք կառավարութիւնը յաջողութիւն կունենայ, եթէ երկիրը եւ Հայաստանի դերագոյն օրէնսդրական մարմինը լինեն նրա հետ։ Ես հաւատացած եմ, որ ձեր եւ երկրի աջակցութեամբ կը յաջողւի մեզ տագնապալի այս վիճակից դուրս գալ պատւով։ Իմ կողմից ես խոստանում եմ թափել ամէն ճիգ եւ ոչինչ չխնայել մեր հանրապետութեան բարգաւաճման համար։ Խնդրում եմ 24 ժամ միջոց տալ՝ կառավարութեան կազմը ձեզ ներկայացնելու համար»։

Կայուն չէ ժողովրդի հոգեկան դրութիւնը, որ իրեն սպառնացող ահաւոր վտանգի դիմաց անկարող եղաւ բաւարար կամք եւ վճռականութիւն ցոյց տալ։ Եւ այսպէս, երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ, որ աւելի եւս ասստկանում է արտաքին դժւարութիւնների պատճառով։

Ճակատագրական 24 ժամւայ ընթացքում նորընտիր վարչապետը բանակցութիւններ է վարում կուսակցութիւնների եւ առանձին անհատների հետ՝ նպատակ ունենալով կազմել միատարր ընկերվարական կառավարութիւն. «ռուսական օրիանտացիա»–յին հակամէտ անձերից բաղկացած։ Որքան էլ պատգամաւոր Թորոսեանը հաւատացնէր, թէ հայ ժողովուրդը ուզում էր հաշտւել թիւրքերի հետ, իրողութիւնը այն էր, որ, պատմական այդ վայրկեանին հայութեան մեծ մասի աչքերը յառած էին դէպի հիւսիս. փրկութիւնը Ռուսաստանից էր սպասւում։ Եւ, հետեւաբար, նոր կառավարութիւնը թէ իր կազմով եւ թէ քաղաքական ուղղութեամբ պէտք է աշխատէր ընդհանուր լեզու գտնել Ռուսաստանի հետ։

Բացի դաշնակցական թեկնածուներից, վարչապետի կողմից հրաւէր

ուղղեց կազմելիք կառավարութեան մէջ մտնելու հայ սոց.–դեմոկրատների եւ Թիֆլիսի «աշխատաւորական» խմբակին, որոնք, սակայն, մերժեցին՝ վախենալով իրենց ճակատագիրը կապել այնքան մեծ պատասխանատուութեամբ բեռնաւորուած, մեծ վտանգի առջեւ կանգնած կառավարութեան հետ:

Ի պատիւ հայ սոցիալիստ–յեղափոխականների, Հայաստանի ամենատագնապալի վայրկեանին, նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին եւ, հակառակ ակներեւ դժուարութիւններին, մտան կառավարութեան մէջ:

Նոյեմբեր 24–ի երեկոյեան նոր կառավարութեան անդամների ցանկը արդէն պատրաստ էր. ներկայացուեց Ռորհրդարանի արտակարգ նիստի քննութեան:

Նախագահ Քաջազնունին ժողովը բանալով՝ յայտարարեց.

«Նախագահութիւնը նախարարապետ Ս. Վրացեանից այսօր առացել է կառավարութեան կազմի անւանացանկը: Նոր կազմը հետեւեալն է. Նախարարապետ եւ արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացեան, ներքին նախարար՝ Դրաստամատ Կանայեան, ֆինանսների՝ Համբարձում Տէրտէրեան, արդարադատութեան՝ Արշամ Ռոնդկարեան, գիւղատնտեսութեան, պետական գոյքերի եւ աշխատանքի՝ Արշակ Ջուվհաննիսեան, հանրային կրթութեան եւ արուեստի՝ Վահան Մինախորեան, ներքին, խնամատարութեան եւ հաղորդակցութեան նախարարների պօրտֆէլներն առայժմ ազատ են եւ ժամանակաւորապէս բաժանուած են հետեւեալ ձեւով. ներքին գործերի՝ ինքը նախարարապետը, խնամատարութեանը՝ ֆինանսների նախարար Հ. Տէրտէրեանը եւ հաղորդակցութեանը՝ արդարադատութեան նախարար Արշ. Ռոնդկարեան»:

Այնուհետեւ վարչապետը, կառավարութեան անունից, կարդում է հետեւեալ յայտարարութիւնը.

«Տարապայման դժուարին ժամանակներում է կեանքի կոչւում ներկայ կառավարութիւնը: Տաճիկ զինուած ուժերը գրաւել են մեր երկրի խոշոր մասը: Աղգաբնակութիւնը գրաւուած վայրերից տեղահան է եղած եւ գաղթական վիճակի մէջ անխնայ կոտորւում է ցրտից եւ սովից: Պետութեան ներսը կեանքի բնականոն ընթացքը խանգարուած է: Վարչական մեքենան թուլացած է մեծապէս, ֆինանսական եւ հաղորդակցութեան միջոցները՝ քայքայուած, արդարադատութիւնը՝ անհնարին վիճակում, պարէնի մուտքը դրսից կանգ է առել, իսկ ներսի աղբիւրները ցամաքում են արագութեամբ:

«Ինչի՞ պէտք է ձգտի այսպիսի հանգամանքներում նոր կառավարութիւնը:

«Վերջին տարիների ընթացքում անդրկովկասեան ժողովուրդներին հասած բոլոր աղէտների եւ դժբախտութիւնների պատճառը աշխարհի հզօրների վարած իմպերիալիստական քաղաքականութիւնն է, որի հետեւանքով անվերջ եւ արիւնահեղ կռիւների եւ աւերածութիւնների թատերաբեմ է դարձել նաեւ Հայաստանը: Այդ քաղաքականութիւնը սպառել է Հայաստանի դեմոկրատիայի շինարարական եռանդը: Այսպիսի քաղաքականութեան հետե-

ւանքներից մէկն է նաեւ վերջին պատերազմը իր բոլոր արհաւիրքներով: Ներկայ կառավարութեան առաջին եւ գլխաւոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այս ջրապտոյտից եւ ազատել նրան օտար ուժերի քայքայիչ ազդեցութիւնից: Նա Հայաստանի պետական կառուցւածքը խարբսխելու եւ բոլորանւիրելու է ելնելով ոչ թէ օտարների սին եւ վտանգաւոր ներշնչումներից, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական կարողութիւնից եւ հարեւան ժողովուրդների հետ խաղաղ համակեցութիւն ստեղծելու ցանկութիւնից:

«Հայաստանի կառավարութիւնն ամուր ոտք դնելով այս հողի վրա՝ յոյս ունի, որ վերջին մեր քաղաքական կեանքը վրդովող այս պատերազմը կը վերջանայ հաշտութեամբ եւ մեր հարեւան տաճիկ ժողովրդի արդարացի իրաւունքների նոյնքան արդարացի բաւխումով: Մեր գործունէութեան նպատակն է լինելու անկեղծ հաշտութիւն Տաճկաստանի հետ եւ համերաշխութիւն ու խաղաղ համակեցութիւն բոլոր հարեւանների հետ:

«Այսու հանդերձ, մենք գիտակցում ենք, որ հասարակական ներկայ կարգերում, տարաբախտաբար, իշխողը դեռ ոչ թէ արդարութիւնն է, այլ ոյժը: Եւ պետական ամէն մի կազմաւորում իր գոյութեան եւ արդար իրաւունքներն ապահովելու համար ստիպւած է ունենալ կազմակերպւած եւ ամուր ռազմական ոյժ: Ուստի եւ կառավարութեան գլխաւոր հոգսերից մէկը պիտի լինի երկրի ուժերի հաւաքումը եւ ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը: Այդ նպատակով մենք աշխատելու ենք առողջացնել զօրքի շարքերը եւ ուժեղացնել պետական գիտակցութիւնն եւ անձնազոհութեան ղեզացումը բանակի մէջ: Նոյն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակն անվարժ եւ յոգնած տարրերից՝ զօրացրումն կատարելով բարձր հասակի դինւորների, որով աւելի բնական ընթացքի մէջ կը մտնի թիկունքի կեանքը եւ զարկ կը տրւի երկրի տնտեսական զարգացմանը:

«Դաւանելով «ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդին» սկզբունքը՝ ներքին կեանքում, կառավարութիւնն ուժգնօրէն պայքարելու է պետութեան հիմքերը փորող բոլոր ուժերի եւ երեւոյթների դէմ: Նա պէտք է աշխատի հաստատել երկրի ներսում ապրող բոլոր ցեղերի իրական հաւասարութիւն. Հայաստանը նրա սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների սեփականութիւնն է կազմում: Կառավարութիւնը պիտի ձգտէ առողջացնել վարչական եւ դատաստանական խանգարւած մեքենան, բարեկարգել հաղորդակցութեան միջոցները, կուռ ֆինանսական սուր տադնապի դէմ, կրճատել պետական ծախսերը եւ նպաստելով երկրի արդիւնաբերական ուժերի զարգացման՝ ուժեղացնել տեղական ինքնավարութիւնները եւ վերացնել ամէն տեսակի արտակարգ դրութիւն եւ երկիրը կառավարելու արտակարգ ձեւերը:

«Օրէնքի գիտակցութիւնը, որ այնպէս թուլացել է մեզ մօտ, պէտք է ուժեղացւի, եւ յանցաւորները պէտք է պատժւեն անխնայ: Պատերազմի արհաւիրքների արդիւնք բազմահազար գաղթականութեան վիճակը թեթեւացնելու եւ պարենաւորման սուր ճգնաժամը մեղմացնելու խնդիրը կառավա-

րութեան լուրջ հոգսերից մէկը պէտք է լինի:

«Այն ընկերային խնդիրների մասին մենք չենք խօսում այստեղ, որովհետեւ մեր նպատակն է ընդգծել մոմենտի հարցերը: Ինչ ասել կուզէ, որ առաջին իսկ հնարաւոր դէպքում կառավարութիւնը կը զբաղւի սոցիալական լուրջ բարենորոգումներով, եւ այստեղ կարիք չկայ բացատրելու բնոյթը այդ բարենորոգումների, որովհետեւ նրանք բղխելու են սոցիալիստներից կազմված կառավարութեան աշխարհահայեացքից:

«Ապաւինելով Հայաստանի աշխատաւոր ժողովրդի ոչխալ ուժերին եւ յենելով խորհրդարանի վստահութեան եւ աջակցութեան վրա՝ կառավարութիւնը կը լարէ իր բովանդակ ոյժը, որպէսզի հեռու պահէ երկիրը արտաքին փոթորիկներից եւ տայ ժողովրդին խաղաղութիւն եւ անարգել զարգացման հնարաւորութիւններ:

«Մեր բուռն փափաքն է դարձնել ազատ եւ անկախ Հայաստանը ապահով եւ բարգաւաճ»:

Ծայտարարութիւնը ընդունւում է երկարատեւ ծափահարութեամբ:

Ապա արտայատւում են կուսակցութիւնների ներկայացուցիչներ:

Պատգամաւոր Ս. Թորոսեան.— «Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, Հայաստանի անկախութիւնը, որի համար երազել են տասնեակ տարիներ եւ զարեր շարունակ, կեանքի կոչւեց շատ ծանր օրերում, երբ աշխարհի հզօրները բաղխում էին, երբ կառավարութիւնը չէր կարող ուրոյն ճանապարհով գնալ: Նորակազմ փոքր պետութիւնների, մանաւանդ մեծ ճանապարհների վրա ապրողների դրութիւնը շատ խախուտ էր:

«Մեր ցանկութիւնները չեն իրագործւել, որովհետեւ բաղխելով ուժեղների կամքի հետ՝ ջարդւում են: Մեր հանրապետութեան նախկին կառավարութիւններն ունեցել են սխալներ: Սխալներ կունենայ նոր կառավարութիւնն եւս: Բայց այդ սխալները նման են նորածնունդի արարքներին: Մեր հանրապետութիւնը նորածնունդ է՝ երկու եւ կէս տարեկան: Նրա կեանք առնելու նախօրեակին կատարւեց ռուսական մեծ յեղափոխութիւնը, երբ ամէն ոք լցւում էր նորանոր ցանկութիւններով եւ ձգտումներով: Դեղերումների նպատակը նորը եւ լաւը գտնելն էր, որ սակայն, չէր գտնւում: Վերջին դէպքերը մեզ ապացուցեցին, որ մեր հանրապետական զօրքը որակով էլ այնքան բարձր չի եղել, ինչպէս քանակով: Կառավարութեան դեկլարացիան լսելուց յետոյ անհրաժեշտ ենք համարում ասելու, որ նախ զօրքի լաւ մարզւելը նպատակ դարձւի, աշխատելով որակը մեծապէս բարձրացնել: Լայն ուշադրութիւն դարձնել տեղական ինքնավարութիւնների զարգացման եւ ուժեղացման վրա: Արդարադատութիւնը եւ դատարաններն ուժեղացնել՝ ստեղծելով իսկական ուժեղ դատարաններ, խստիւ պատժելով բոլոր յանցաւորներին եւ չարաշահողներին: Ինամատարութիւնը, որ բարեկարգ վիճակում է եղել, աշխատել չթուլացնել: Հաղորդակցութեան վրա դարձնել ամենամեծ ուշադրութիւն. դաղտնիք չէ, որ հաղորդակցութիւնը շատ թոյլ է մեզանում: Հաղորդակցութեան կանոնաւոր միջոցներից է կախւած մեր ներքին բնականոն կեանքը: Նորմալ հաշտութիւն կնքել Ազրբէջանի հետ, որի հետ կողք կողքի վիճակ-

ւած է մեզ ապրել, պահպանելով խաղաղութիւն եւ բարեկամական յարաբերութիւններ: Հայաստանը՝ Հայաստանում ապրող ժողովուրդների հայրենիք է. պէտք է ուժեղացնել ներքին համերաշխութիւնը: Թիւրքիայի հետ պէտք է կնքել անկեղծ հաշտութիւն: Ռուս ժողովրդի հետ մենք չենք եղել թշնամի եւ չենք ուզում լինել: Նա պէտք է հաշուի մեր անկախ գոյութեան հետ, իսկ եթէ նա չարժւի մեր վրա անկախութիւնը ոչնչացնելու նպատակով՝ մենք նրան դէնքով կը դիմաւորենք: Մեզ պէտք է պատուաւոր հաշտութիւն բոլորի հետ:

«Հայաստանը ստեղծել է հայ դիւղացիութիւնը եւ նրա մէջ ապրողները դիւղացիներ ու բանւորներ են. ժողովրդական կառավարութիւնը պէտք է ըստեղծէ ընդհանուր կամք:

«Մի մեծ պարտականութիւն եւս ունի կառավարութիւնը, պայքարել տնտեսական ճգնաժամի դէմ չէզոքացնելով չահագործումը: Հ. Յ. Դաշնակցութեան Ֆրակցիան վստահութիւն է յայտնում այս կառավարութեանը»:

Սոցիալիստ-յեղափոխականների կողմից խօսում է պատգամաւոր Թումանեանը.— «Մեր վերաբերմունքը այս կառավարութեան հանդէպ բղխում է այն բանից, որ մենք տւել ենք նրան մեր երկու ներկայացուցիչները: Կառավարութեան դեկլարացիան ընդհանուր գծերով մեր Ֆրակցիային բաւարարում է:

«Մենք կուզէինք իմանալ, թէ ի՞նչ նոր գծեր է մտցնում այս կառավարութիւնը եղած քաղաքականութեան մէջ: Մեծ խոստումներ չի տալիս մեզ այս կառավարութիւնը. մենք ցանկանում ենք, որ այդ փոքր խոստումները լինէին անկեղծ:

«Սոցիալիստ-յեղափոխականների Ֆրակցիան այս կառավարութեան խոստանում է իր աջակցութիւնը»:

Ի վերջոյ, նախագահը կարդում է Հ. Յ. Դաշնակցութեան Ֆրակցիայի առաջարկած հետեւեալ բանաձեւը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի դեկլարացիան՝ հաւանութիւն է տալիս»:

Ուրիշ բանաձեւեր չկան: Բանաձեւը քւէարկւում է եւ ստանում կողմ 30 ձայն, դէմ՝ ոչ մի եւ ձեռնպահ՝ 2 ձայն:

Հայաստանի խորհրդարանի վերջին գումարումն էր այս՝ յուղումնալից, հասելու համար ողբերգական. այնուհետեւ խորհրդարանը նիստ չունեցաւ: Յետագայ դէպքերը տեղի ունեցան անմիջապէս կառավարութեան կողմից, երբեմն խորհրդարանի անդամների եւ նախագահութեան անպաշտօն խորհրդակցութեամբ:

Հայ ժողովուրդը սրտատրոփ հրաշք էր սպասում նոր կառավարութիւնից, բայց հրաշքների ժամանակը անցել էր: Քաղաղնունին իրաւունք ունէր, նոր կառավարութիւնը պիտի զոհաբերւէր հայրենիքի փրկութեան սեղանի վրա:

ԳԼՈՒԽ ԼԳ.

ԽՈՐՀՐԴԱԺՆԱԺՈՒՄԸ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ի՞նչ էր սպասում հաշտարար պատւիրակութեան Ալեքսանդրապոլում: Լաւատեսութեան ոչ մէկ հիմք կարելի չէր նախատեսել:

Պատերազմի ընթացքը եւ, մանաւանդ, զինադադարի պայմանները ցոյց տւին, թէ Քեազիմ կարաբէքիրը անողոք է դէպի հայերը: Անհաշիւ փաստեր վկայում էին նոյնպէս, որ, բոլշեւիկները իրական օգնութիւն չպիտի հասցնեն Հայաստանին հայ–թրքական յարաբերութիւնների հարցում: Հայաստանը լքւած էր իր, այսպէս կոչւած, բարեկամներից, մատնւած էր անողորմ թշնամիներին:

Երեւանից մեկնելուց առաջ, պատւիրակութեան նախագահ Ա. Խատիսեանը տեսակցութիւն է ունենում Չիչերինի ներկայացուցիչ Բուդու Մդիվանիի հետ, որ Երեւան էր եկել, իբր թէ, որպէս խորհրդային միջնորդ հայերի եւ թիւրքերի միջեւ: Խօսքը տանք իրեն՝ Խատիսեանին:

«Մեկնելուց առաջ, պատմում է նա, մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիոյ ներկայացուցիչներէն (Լեգրան եւ Բ. Մդիվանի, որոնք մի քանի օր առաջ հասել էին Երեւան: Ս. Վ.) ազդեցութիւն գործ դնել թիւրքերու վրայ մեզ համար նպաստաւոր մտքով: Մենք ծանօթացուցինք Լեգրանին եւ Մդիվանիին մեր ցանկութիւններուն եւ ի պատասխան լսեցինք խոստում օգնելու»*): Բ. Մդիվանին, Մոսկւայի լիազօրութեամբ, պիտի մեկնէր Ալեքսանդրապոլ եւ պիտի մասնակցէր բանակցութիւններին, իբրեւ միջնորդ թիւրքերի եւ հայերի միջեւ:

Մդիվանին Հայաստան էր ուղարկւել Մոսկւայի կառավարութեան կողմից, որի օգնութեան էր դիմել Հայաստանի կառավարութիւնը:

Թէ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները ինչպէս օգնեցին Հայաստանի, այդ երեւում է նոյն Խատիսեանի պատմածից: «Բանակցութիւնների ընթացքին, ասում է նա, թուրքերը մերժեցին որեւէ միջամտութիւն Խորհրդային Ռուսաստանի կողմից, ոչ էլ ընդունեցին Մդիվանիի միջնորդու-

*) Ա. Խատիսեան «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» էջ 257:

թիւնը: Խատիսեանի դիմումի վրայ՝ Մդիվանին խոստանում է դրսից աջակցութիւն ցոյց տալ, բայց, ասում է Խատիսեանը, «հարկ կը համարեմ վճռականապէս յայտարարելու, թէ ան աւելի շատ խանգարեց մեզ, քան թէ օգնեց: Խանգարեց այն բանով, որ, ինչպէս Ալեքսանդրապոլի, այնպէս եւ Կարսի մէջ, կը կազմէր միտինգներ, ճառեր կ'արտասանէր մեր դէմ, կը պախարակէր Հայաստանի կառավարութիւնը եւ պատւիրակութիւնը, կը քարոզէր բոլշեւիկեան ծրագիրներ եւ այսպիսով ցոյց կուտար թուրքերուն, թէ ան իրօք մեր դէմ է եւ ոչ թէ մեզ հետ... Ես կարող եմ հաստատել, որ Ալեքսանդրապոլի մէջ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը բացարձակապէս ոչ մէկ օգնութիւն ցոյց չտուաւ Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութեան»:*)

Տարբեր չէր եւ Լեդրանի ընթացքը. նա դնաց Բագու եւ վերադարձաւ միայն հոկտեմբերի սկիզբը: Ի՞նչ արաւ նա Բագուում կամ ի՞նչ տեղի ունեցաւ այնտեղ, մանրամասնութիւնները յայտնի չեն մեզ, բայց ինչ որ յայտնի է կասկած չի թողնում, որ Բագուում որոշուեց, օգտւելով դէպքերի նպաստաւոր դասաւորութիւնից, Հայաստանը ենթարկել խորհրդայնացման:

Այսպէս՝ նոյեմբ. 4–ին, Բագուում, տեղի է ունենում Ադրբէջանի Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի Պոլիտբիւրոյի եւ Համամիութենական կոմունիստական կուսակցութեան կենտր. կոմիտէի Կովկասեան Բիւրոյի անդամների լիագումար ժողովը, որին մասնակցում է եւ ինքը Ստալինը: Օրակարգի հարցեր են լինում՝ բանակցութիւններ վրաստանի հետ եւ կացութիւնը Հայաստանում:**)

Պաշտօնական հաղորդագրութիւն չկայ այդ ժողովի որոշումների մասին, բայց զարտուղի տեղեկութիւններից եւ դէպքերի հետագայ ընթացքից կարելի է ստոյգ կերպով ասել, թէ այնտեղ ծանրակշիռ որոշում է տրւել Հայաստանի մասին — միջոցներ ձեռք առնել ամէնից առաջ խորհրդային վարչաձեւ մտցնել Հայաստանում: Ըստ երեւոյթին, որոշուած է եղել նաեւ, արտաքին աշխարհի առջեւ «զսպիչ» չերեւալու համար, խորհրդայնացումը կատարել «խաղաղ» եղանակով, այսինքն՝ Հայաստանի կառավարութեան «յօժարութեամբ»: Դրանով են բացատրւում Լեդրանի հետագայ քայլերը:

Անկասկած, նոյեմբ. 4–ի այդ ժողովը ի նկատի ունի Տիկ. Օրջոնիկիձէն՝ այն օրերին Ստալինի ամէն բազուկ եւ նոյն Ստալինի կողմից հաշուեյարդարի ենթարկուած Սերգօ Օրջոնիկիձէի այրին, երբ իր ամուսնուն նւիրած «Մի բոլշեւիկի ուղին» իր հատորում գրում է.

«Երբ 1920–ին Կովկաս ժամանեց Ի. Վ. Ստալինը, հետեւեալ առաջադրանքը արաւ.—Օժանդակել Հայաստանի ապստամբած աշխատաւորութեան: «Դաղստանի եւ Թերեքի համագումարների աւարտումից յետոյ, Սերգօն Բագու վերադարձաւ եւ 19 նոյեմբ. 1920–ին, 11–րդ բանակի զօրամասերը ուղարկեց տապալելու համար դաշնակների տեւելի կառավարութիւնը»:

---

*) Նոյն տեղը, էջ 262–3:

**) Ի. Ստալին՝ «Ամբողջական երկեր», հատոր 4, 1947, Մոսկւա, էջ 476:



Վ· ՄԻՆԱԽՈՐԵԱՆ
(Պաբենատրմաճ նախարար)



Հ· ՏԷՐՏԷՐԵԱՆ
(Ելեւմտական նախարար)



Յ· ՏԷՎԷՃԵԱՆ
Նախարարների խորհրդի քարտուղար



Վ· ԲԱՐԱՑԵԱՆ
(Աշխատաճի նախ· վարիչ)



Թ· ՏՈՇԵԱՆ
(Գիւղ· նախ· օգն·)

Եւ Օրջոնիկիձէն ինքն էլ հաստատում է այս փաստը: Նա վկայում է, որ «Պարտիան որոշել էր Հայաստանում իշխանութիւնը գրաւելուց յետոյ ղղոյշ քաղաքականութիւն վարել: Ուստի Ռեւկոմը ստեղծեց այնպիսի ընկերներից, որոնց դիրեկտիւ տուեց չշտապեցնել Հայաստանի կոմունիզացիան, ստեղծել հայկական ժողովրդական կառավարութիւն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները եւայլն»*): Եւ մեղադրում է հայ բոլշեւիկներին, որ սրանք «պարտիայի» գծից չեղուել են, բայց ինքը, իր ընթացքով, թէ փետրուարեան ապստամբութեան օրերին, թէ դրանից առաջ համամիտ ու գործակից էր հայ բոլշեւիկներին: Ինչ վերջը կը տեսնենք, թէ ինչպէս վարուեց նա իր պիտութիւնը ողոքող Ց. Թումանեանի հետ:

Բայց այդպէս չէր Օրջոնիկիձէի վերաբերումը դէպի վրացի բոլշեւիկներն ու վրացի ժողովուրդը: Նա պահանջում էր վրացի կոմունիստներից «ճկուն» քաղաքականութիւն վարել եւ թոյլ չտալ, որ Վրաստանում դաժանութիւններ կատարուին: Երբ Հայաստանի Ցեղկոմը խելագար բռնութիւններ էր գործադրում Երեւանում եւ գաւառներում, Օրջոնիկիձէն եւ նրանից բարձր կանգնած Լենինն ու Ստալինը լուռ հանդիսատես մնացին: Երբ հերթը հասաւ Վրաստանին, լեզուները բացուեցին, եւ ահա ինչ էր հեռագրում Լենինը, Օրջոնիկիձէի միջոցով, վրաց համայնավարներին.

«Անհրաժեշտ է դիմումների յատուկ քաղաքականութիւն վարել վրացական մտաւորականութեան եւ մանր առեւտրականների նկատմամբ...

«Վիթխարիօրէն անհրաժեշտ է ընդունելի կոմպրոմիս փնտռել բլոկ կազմելու ժորդանիայի կամ նրա նման վրացական մենշեւիկների հետ:

«Ինդրում եմ յիշել, որ Վրաստանի ներքին եւ միջազգային պայմանները վրացական կոմունիստներից պահանջում են ոչ թէ կիրառել ռուսական չարլոնը, այլ համառ եւ ճկուն կերպով ստեղծել իւրայատուկ մի տակտիկա, որը հիմնուած լինի ամէն տեսակ մանր-բուրժուական տարրերին մեծ զիջողութիւններ անելու վրա»**):

Հայաստանի «ներքին եւ միջազգային պայմանները» չէին թելադրում «մեծ զիջողութիւններ» անել, այնտեղ կարելի էր «կիրառել ռուսական չարլոնը»: Եւ կիրառեցին: Եւ Օրջոնիկիձէն եղաւ դլխաւոր կիրառողներից մէկը...

Նոյեմբեր 20-ին, Մդիվանիի հետ, բազուից Երեւան վերադառնալով՝ Լեդրանը շարունակեց իր երկդիմի ընթացքը՝ մի կողմից ձեւանալով հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, միւս կողմից աշխատելով փութացնել Հայաստանի խորհրդայնացումը՝ թէ՛ անձամբ եւ թէ դեսպանութեան հայ բոլշեւիկների միջոցով:

Կարսի անկումից յետոյ, պատերազմի ընթացքը հայերի համար դարձաւ այլեւս յուսահատական: Տեղի ունեցաւ կառավարութեան փոփոխութիւն եւ նոր վարչապետ՝ Ս. Վրացեանին վիճակուեց բանակցութիւնները վարելու պարտականութիւնը Լեդրանի հետ:

---

*) Գ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 58:
**) Գ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 38:

Պաշտօնի անցնելուց անմիջապէս յետոյ, նա յարաբերութեան մէջ մտաւ Լեգրանի հետ: Կառավարութեան նպատակն էր սերտ բարեկամութիւն հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ եւ ապահովել նրա աջակցութիւնը: Ամէնքի համար պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պէտք է լինէր, կամ պէտք է դառնար Թուրքերի ձեռքին խաղալիք, եթէ չբնաջնջուէր իսպառ: Նա հարցը դնում է յստակ ու վճռական կերպով—Ռուսաստանը կարո՞ղ է Հայաստանին օգնել և, եթէ այո՝, ինչո՞վ և ի՞նչպէս: Նոյնքան պարզ ու վճռական է լինում եւ Լեգրանի պատասխանը: Նա առաջարկում է յետ կանչել Խաթիսեանի պատւիրակութիւնը Ալեքսանդրապոլից, մերժել Թուրքերի պահանջները եւ խորհրդային զօրք մտցնել Հայաստան:

Վրացեանի հարցումին, թէ ի՞նչ երաշխաւորութիւն, որ մինչեւ խորհրդային զօրքերի տեղ հասնելը Թուրքերը չեն շարժւի Երեւանի վրա ու նոր կոտորածներ առաջ չեն բերի, Լեգրանը պատասխանում է, թէ Թուրքերը այդպիսի քայլ չեն առնի:

Վրացեանը ցոյց է տալիս Լեգրանին, որ մինչեւ որ ռուսները կարողանան չօշափելի ոյժ հասցնել Երեւան, առնւազն մէկ շաբաթ պիտի պահանջւի, մինչդեռ Թուրք բանակը կանգնած էր Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի մօտ, հազիւ 20–25 մղոնի վրա Հայաստանի մայրաքաղաքից: Եթէ կառավարութիւնը խզէ բանակցութիւնները, այդ պիտի նշանակէ պատերազմի վերսկսում. ի՞նչ ոյժ կարող էր արգելել Թիւրքերին Հայաստանի մնացած մասն էլ գրաւելու: Խորհրդային իշխանութեան խօ՞սքը: Ի՞նչ երաշխիք, որ Թուրքերը կարեւորութիւն կը տան այդ խօսքին:

Մանաւանդ էր բոլշեւիկեան զօրքերի քանակն ու որակը հիւսիսային սահմանների մօտ: Նրանք ի վիճակի չէին պաշտպանելու Հայաստանը Թիւրքերի ներխուժման դէպքում:

Փորձից յայտնի էր նաեւ, որ Թուրքերը հաշւի չէին առնում բոլշեւիկեան սպառնալիքները:

Այն ժամանակւայ պայմաններում այս հարցերը խիստ ծանրակշիռ նշանակութիւն ունէին, իսկ այսօր արդէն ծանօթ է, որ բոլշեւիկները շատ աւելի մեծ կարեւորութիւն էին տալիս Թուրքերին, քան այս վերջինները՝ բոլշեւիկներին: Կասկած չկար, որ բոլշեւիկները Հայաստանի պատճառով կռիւ չէին անի Թուրքերի հետ, եթէ այս վերջինները չանսային Լեգրանի խօսքին եւ նորից յարձակւէին Հայաստանի վրա:

Լեգրանի խօսքերից պարզ էր եւ մի ուրիշ պարագայ. նրան հայ ժողովրդի ապահովութիւնից աւելի հեռաքրքրում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, բայց այդպիսի պահանջ դեռ չէր կարող դնել, որովհետեւ շատ լաւ տեսնում էր, որ հայ ժողովուրդը համակիր չէր Հայաստանի խորհրդայնացման:

Կառավարութիւնը նորից ու նորից պնդեց Խորհրդ. Ռուսաստանի դիւանագիտական արագ աջակցութեան վրա: Եթէ, համոզում էր վրացեանն Լեգրանին, Խորհրդայի իշխանութիւնը վստահ էր որ Թուրքերը խորհրդային իշխանութեան հակառակ քայլ չէր առնի, ուրեմն, նրանց խօսքն էլ բաւական

պիտի լինէր որպէսզի Թուրքերը ծայրայեղ պահանջներ չդնէին Հայաստանին: Իսկ եթէ Խորհրդային կառավարութիւնը կարծում էր, թէ Թուրքերը իրենց խօսքին ականջ չէին դնի, նշանակում էր մի քանի հարիւր ռուս զինուորների մուտքն էլ Հայաստանի սահմաններից ներս արդելք չէր լինի Թուրքերին վերջնականապէս մաքրելու իրենց հաշիւը հայերի հետ, մանաւանդ որ Թուրքերի դլխաւոր մեղադրանքը հայերի դէմ այն է, թէ նրանք դործիք են ռուսների ձեռքին: Ուրիշ խնդիր, եթէ ռուսները խոշոր բանակ ունենային Հայաստանի մօտ եւ պահանջած վայրկեանին կարողանային բաւարար ոյժ հասցընել, այն ժամանակ, հասկանալի էր, Թուրքերը չէին համարձակուի առաջ չարժուելու, բայց բոլշեւիկները այդպիսի բանակ չունէին մերձակայ վայրերում:

Վրացիանը Խորհրդային զօրքեր մտցնելու, եւ Հայաստանը խորհրդայնացնելու դէմ առաջ է բերում եւ այլ կարդի առարկութիւններ: Խորհրդայնացման դէպքում Հայաստանը բոլորովին պիտի կտրուէր Եւրոպայից ու Ամերիկայից եւ պիտի զրկուէր այն պարէնից, որ ստանում էր այնտեղից: Այդ պիտի նշանակէր սովամահութիւն հայ ժողովրդի համար, որովհետեւ Ռուսաստանը ինքն էլ սովահար՝ ի վիճակի չէր Հայաստանին ուտելիք հասցնելու:

Երկրորդ՝ Հայաստանի խորհրդայնացումը մահացու հարուած պիտի հասցնէր՝ Հայկական Հարցին եւ Հայաստանին տրուած բոլոր միջազգային յանձնառութիւններին ու դաշնագրերին: Մինչդեռ, եթէ Հայաստանը պահուէր անկախ, թէ՛ դրսի աչխարհից չէր կտրուի, թէ՛ կը մնար Հայկական Հարցի իրաւատէր: Խորհրդ. Ռուսաստանին հարկաւոր էր Հայաստանի բարեկամութի՞ւնը — հայերը այդ կ՚ապահովէին: Բոլշեւիկների համար անհրաժեչտ էին Հայաստանի ճանապարհնե՞րը — հայերը կը տային:

Լեդրանը պատասխանում է. Հայերը ընդմիչտ պէտք է հրաժարուեն Եւրոպայից եւ Ամերիկայից եւ խաչ քաչեն Սեւրի դաշնագրի վրայ: Հայերը իրենց յոյսը պէտք է կապեն միայն համաչխարհային յեղափոխութեան եւ բանուորա-գիւղացիական Ռուսաստանի հետ: Միծաղելի է խօսել ինչ որ ալիւրի մասին, որ ամերիկեան բանկիրներն ու պատուելինները, իրրեւ ողորմութիւն, չպրտում են հայերի առջեւ. ի՞նչ բան է Ռուսաստանի համար կուբանից մի քանի միլիոն փութ ալիւր հասցնելը Հայաստան:

Լեդրանը առարկում է եւ Հայաստանի սահմանների վրայ ռուս զօրքեր կեդրոնացնելու դէմ. այդ կարող էր դժդոհութիւններ առաջացնել Թուրքերի կողմից եւ առիթ դառնալ անբաղձալի հետեւանքների: Թուրքերին պէտք էր դնել կատարուած փաստի առջեւ եւ մինչեւ Ալեքսանդրապոլ դրաւել ռուսական զօրքերով:

Բանակցութիւնները դրական արդիւնք չտուին. կառավարութիւնը վախենում էր, որ եթէ կարմիր բանակը Հայաստան մտնէր հիւսիսից, Թուրքերը առաջ կը շարժէին հարաւից եւ ռուսների հասնելուց շատ առաջ կը դրաւէին Երեւանը: Այդ պատճառով, կառավարութիւնը աչխատում էր Ալեքսանդրապոլի բանակցութիւնները չխզել եւ հաչտութեան հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին: Բայց այդ էլ հեչտութեամբ լուծելիք խնդիրնե-

րից չէր. Թուրքերը անդիլող էին եւ խօսում էին վերջնագրերով:

Մինչ բանակցութիւնները Լէդրանի հետ շարունակւում էին, վերջին, նոյեմբ. 29-ին, վերջնագրի ձեւով, կառավարութեան արաւ հետեւեալ յայտարարութիւնը.— «Ռուսաստանի Կոմունիստ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի Ցեղկոմը արդէն ոտք է դրել Հայաստանի հողի վրա: Դանդաղելը յղի է ծանր հետեւանքներով: Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»: Եւ յաջորդ առաւօտ ներկայացրեց Հայաստանի խորհրդայնացման դրաւոր պահանջ:

Եւ յիրաւի, ինչպէս յետոյ իմացուեց, նոյեմբ. 29-ին Բագուից մի խումբ հայ բոլշեւիկներ մտել էին Իջեւան գիւղը, Ազրբէջանի սահմանի վրա, եւ Հայաստանի խորհրդայնացման յայտարարութիւն արել:

Այսպէս, ուրեմն, մի կողմից Թուրքերն էին սպառնալիքով եւ վերջնագրերով խօսում, միւս կողմից՝ հայ եւ ռուս բոլշեւիկները: Հայաստանը ընկել էր երկու կրակի միջեւ: Կառավարութեան ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ ընտրելով փոքրագոյն չարիքը, տեղի տալ եւ հասկացողութեան գալ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցչի հետ: Հայաստանի խորհրդայնացումը այլեւս դառնում էր անխուսափելի:

Նոյեմբ. 30-ին սկսուեցին բանակցութիւնները կառավարութեան ներկայացուցիչ Դրոյի ու Հ. Տէրտէրեանի եւ Լէդրանի միջեւ, որոնք տեւեցին երկու օր:

Եւ մինչ երեւանում տեղի էին ունենում այդ բանակցութիւնները, անդին Բագուն ցնծութեամբ տօնում էր իր դաւաճրութեան յաղթանակը:

Դեկտեմբեր 1-ին, երբ Հայաստանը դեռ խորհրդայնացած չէր, տեղի ունեցաւ Բագուի Սովետների հանդիսաւոր նիստը «Հայաստանի խորհրդայնացման առթիւ»: 11րդ բանակի ռազմակոմիսար Օրջոնիկիձէն վերամբարձ հռետորութեամբ սկսեց իր ճառը. «Ընկերներ, դժուար թէ որեւէ մի տեղ կարելի՛ է գտնել երջանիկ մի սրահ, որքան այս սրահը... Այսօր, հէնց այս սրահում, Բագուի պրոլետարիատը ողջունում է հայկական սովետական ռեսպուբլիկայի ծնունդը...»:

Նոյն նիստում Ազրբէջանի Ցեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը կարդաց Ցեղկոմի դէկլարացիան, որով հանդիսաւոր կերպով յայտարարւում էր, որ Սովետ. Ազրբէջանը զիջում է եղբայրական Հայաստանին Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը:

Օրջոնիկիձէն այդ մասին էլ բարձր հռետորութիւն արաւ.

«Ընկերներ, ասաց նա, շատ բնորոշ է ընկ. Նարիմանովի ելոյթը. նա մեզ կարդաց իր դէկլարացիան: Զանգեզուր, Նախիջեւան եւ Ղարաբաղ անունները այդ խօսքերի բովանդակութեանն անծանօթ ռուս մարդու ականջին բոլորովին ոչինչ չեն ասում: Ինչ որ Զանգեզո՛ւր — անբերրի լեռներ. ո՛չ հաց կայ, ոչ ջուր: Այնտեղ ոչինչ չկայ: Ինչ որ Նախիջեւան — ճահիճ, մալարիա եւ ուրիշ ոչինչ: Ինչ որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կայ այդ Ղարաբաղում: Ոչի՛նչ չկայ: Եւ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Դրանք ձե՛զ

վերցրէք։ Այդ անբերրի հողերը վերցրէք Հայաստանի համար»։ Կարծես թէ սովետական Ադրբէջանը ազատուում է մի աւելորդ բեռից։ Բայց ո՛չ։ Այդ գաւառներում, այդ անբերրի հողերի մէջն է կայանում այստեղ, Անդրկովկասում, այսպէս կոչուած, հայ–մուսուլմանական հարցի հանգոյցը»։

Եւ յիշելով ցարական շրջանի հայ–մուսուլմանական արիւնոտ բախումները՝ Օրջոնիկիձէն ոգեւորութեամբ ասում է.

«Եւ ահա այսօր՝ Ադրբէջանական ռեսպուբլիկայի ղեկավարը հանդէս է գալիս ու ասում. «Այդ սարսափելի հարցն այլեւս գոյութիւն չունի...» Այստեղ կարդացած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է. սա պատմական մի ակտ է, որը մարդկութեան պատմութեան մէջ իր օրինակը չունի»։*)

Վերջը յայտնի եղաւ, որ թէ Նարիմանովի, թէ Օրջոնիկիձէի ճառաբանութիւնները անկեղծ չէին, այլ նպատակ ունէին խաբել հայ բոլշեւիկներին եւ հանրային կարծիքը. Ղարաբաղն ու Նախիջեւանը մնացին եւ մինչեւ այսօր էլ մնում են Ադրբէջանի տիրապետութեան տակ։ Մի խաբէութիւն, որ «մարդկային պատմութեան մէջ իր օրինակը չունի...»։

Այդ նոյն պատմական անօրինակ դէպքի մասին իր հիացումը յայտնեց եւ Ստալինը. «Դեկտեմբեր մէկին, գրում էր նա «Պրաւդա»–յի դեկտ. 4 համարում. Խորհրդ. Ադրբէջանը յաժար կամքով հրաժարւում է վիճելի գաւառներից եւ յայտարարում է Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի յանձնումը Խորհրդ. Հայաստանին... Դարաւոր թշնամութիւնը Հայաստանի եւ նրան շրջապատող մուսուլմանների միջեւ վճռուեց մէկ հարուածով՝ եղբայրական համերաշխութեան հաստատումով աշխատաւոր Հայաստանի, Ադրբէջանի եւ Թուրքիոյ միջեւ»**)։

Դեկտ. 2–ին ստորագրուեց հետեւեալ համաձայնագիրը Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչների եւ Լեգրանի միջեւ։

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

«2 դեկտ. 1920 թ., մի կողմից Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. լիազօր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը Ռ. Կ. Կ. Կ.–ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի Խորհրդային կառավարութեան, եւ միւս կողմից ընկերներ Դրօն եւ Տէրտէրեանը ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կընքեցին համաձայնութիւն հետեւեալի մասին.—

«1.— Հայաստանը յայտարարւում է անկախ սոցիալիստական Խորհրդային հանրապետութիւն։

«2.— Մինչեւ Հայաստանի խորհուրդների համագումարի հրաւիրումը, կազմւում է ժամանակաւոր Ռազմա–Յեղափոխական Կոմիտէ, որին

*) Գ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր», երեւան, 1950, էջ 32–33։
**) Ի. Ստալին. «Երկեր». Մոսկւա, հատոր 4, էջ 414։

կ'անցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում:

«3.— Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինուորական տեսակէտից կ'ապահովէ երկաթուղու տիրապետութիւնը՝ Ջալուռ կայարանից Արաքս կայարանը, Թանճակ նահանգի Զանգեզուր գաւառը եւ Ղազախ գաւառի մի մասը օգոստոս 10-ի համաձայնութեան սահմաններում, եւ Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչեւ 1920 թ. սեպտ. 28:

«4.— Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչեւ Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը:

«5.— Դաշնակցութեան եւ ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս. Ց., Ս. Դ.) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն կուսակցութեան պատկանելու եւ Կոմունիստական կուսակցութեան դէմ մղուած կռիւներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար:

«6.— Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ Կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակուած եւ երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով Կոմունիստական կուսակցութեան հետ:

«7.— Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր:

«8.— Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչեւ Յեղափոխական Կոմիտէի գալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն: Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան կից կոմիսար է նշանակւում ընկ. Սիլինը:

«Պատրաստուած է երկու օրինակ:

«Ռ. Ս. Ֆ. Ս. Հ., լիազօր ներկայացուցիչ՝ ԼԵԳՐԱՆ:

«Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան լիազօրութեամբ՝ ԴՐՕ եւ ՏԷՐՏԷՐԵԱՆ»:*)

Միաժամանակ Լեգրանի եւ կառավարութեան միջեւ համաձայնութիւն կայացաւ, որ դեկտ. 2-ի գիշերւայ ժամը 12-ին իշխանութիւնը յանձնւի զին. նախարար Դրօյին եւ սա, խորհրդական ունենալով Լեգրանի ներկայացուցիչ Սիլինին, կառավարէ երկիրը, մինչեւ Յեղկոմի ժամանումը Ա-

*) «Ծողովածու Գործող Դաշնագրերի». ռուսերէն, 3-րդ պրակ, Մոսկուա՝ 1922 թիւ 79, էջ 14-15. հրատ. Ռուսաստանի Արտաքին Գործակատարութեան:

ղըրբէջանից։ Նոյն խմաստով խմբագրուեց ու հրատարակութեան տրուեց նաեւ հետեւեալ «ակտ»ը, որ հեռագրուեց դաշնական իշխանութիւններին ու զօրամասերի պետերին ի գործադրութիւն եւ փակցուեց Երեւանի պատերին։

Ա Կ Տ

«Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների չնորհիւ երկրում ստեղծուած կացութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իր 1920 թւի դեկտեմբեր 2–ի նիստում որոշեց՝ հրաժարուել իշխանութիւնից եւ յանձնել զինուորական եւ քաղաքացիական բովանդակ իշխանութիւնը զօրաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտօնում նշանակել Ռազմական նախարար Դրօյին։

«Նախարարների խորհրդի Նախագահ Ս. ՎՐԱՑԵԱՆ.

«Նախարարներ՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ, Հ. ՏԷՐ–ՏԷՐԵԱՆ, Դ. ԿԱՆԱՑԵԱՆ։

«Իսկականի հետ ճիշդ է՝

Դիւանապետ՝ Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ»

Այսպէսով Հայաստանը խորհրդայնանում էր բոլորովին խաղաղ կերպով, առանց ոեւէ յեղափոխութեան, առանց մէկի քիթը արիւնելու։

Բայց այս հարցի մէկ մասն էր միայն, կար եւ պատերազմի խնդիրը։ Թուրքերը հեւ ի հեւ հետեւում էին Երեւանի դէպքերին եւ չտապում էին կանխել։

Նոյեմբ. 30–ի երեկոյեան Քեազիմ Կարաբէքիր փաշան Հայաստանի պատւիրակութեան ներկայացրեց Թրքական պայմանները եւ յաջորդ առաւօտեան վերջնագրի ձեւով պահանջեց այդ պայմանների ընդունումը, հակառակ պարագային սպառնալով վերսկսել պատերազմական գործողութիւնները։

Թրքական պահանջները քննութեան առնուեցին նոյեմբեր 30–ի գիշերը, յատուկ մի ժողովում, որին մասնակցում էին Խորհրդարանի դիւանը, երեսփոխաններ, կառավարութեան անդամներ, Հ. Յ. Դ. Բիւրօն իր ամբողջ կազմով եւ մի շարք անհատ գործիչներ ու զինուորականներ։

Հաշտութեան խնդրից առաջ արդէն որոշուած էր ընդունել Լեգրանի վերջնագիրը, այժմ պէտք էր գտնել Թրքական դաժան պայմաններից խուսափելու միջոցը։ Ձեւականօրէն այդ միջոցը արդէն գտնուած էր. որոշուած էր իշխանութիւնը զիջել բոլշեւիկներին, հեշտ էր դաշնագրի ստորագրութիւնն էլ թողնել նրանց։ Բայց արդեօք ա՞յդ կը լինէր լաւագոյն ելքը։ Անձնապէս Հայաստանի ղեկավարութեան համար, ի հարկէ, այդ կը լինէր բարիք. պատմութեան առաջ նա ազատ կը լինէր Ալեքսանդրապոլի «խայտառակ» դաշնագիրը ստորագրելու պատասխանատուութիւնից, բայց դրանից հայ ժողովուրդը կը շահէ՞ր։

Այս անողոք հարցը ցցած էր նոյեմբ. 30-ի գիշերւայ ժողովին մասնակցողների առջեւ: Եթէ մերժէին դաշնագրի ստորագրութիւնը, Թուրքերը Հայաստանի մնացած մասն էլ չէի՞ն կործանի: Բոլշեւիկները կը կարողանա՞յին ազդել Թուրքերի վրայ, ընդունակ կը լինէի՞ն փրկելու երկիրը սպառնացող մահացու վտանգից:

Լուսեցաւ նախարարի եւ զինուորական մասնագէտների կարծիքը: Պատասխանը եղաւ բացասական. եթէ մերժէին Քեազիմ Կարաբէքիրի պահանջը, Թուրք բանակը, ամենայն հաւանականութեամբ, առաջ պիտի չարժէր եւ մինչեւ ուս ղօրքերի հասնելը էջմիածինն ու Երեւանն էլ պիտի գրաւէին, յարակից շրջաններով միասին: Հետագային ուսները կարող էին հեռացնել Թուրքերին, բայց սրանք արդէն աւերն ու կոտորածը գործած կը լինէին:

Նոյն էր եւ դրեթէ բոլոր ժողովականների կարծիքը: Ճանուն հայ ժողովրդի փրկութեան, պէտք էր ստանձնել պատասխանատուութիւնը պատմութեան առջեւ եւ ստորագրել դաշնագիրը: Եթէ բոլշեւիկները, իրօք, այնքան ազդեցիկ էին Թուրքերի առջեւ, նրանց համար դժւար չէր լինի մերժել «Դաշնակ»ների ստորագրութիւնը եւ Հայաստանի համար աւելի նպաստաւոր դաշնագիր կնքել: Եթէ բոլշեւիկները այդ կարողութիւնը պիտի չունենան վաղը, նշանակում է այսօր էլ նրանց խոստումները անարժէք էին:

Այս նկատումներով եւ այս գիտակցութեամբ ժողովը որոշեց լիազօրել Ալեքսանդրապոլի պատւիրակութեան ընդունելու Թրքական պայմանները եւ ստորագրելու հաշտութեան դաշնագիրը:

Կասկած չկայ, որ հայ բոլշեւիկներն էլ, Մոսկւայի ճնշումով, ստիպւած պիտի լինէին ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպէս մօտ մի տարի վերջը ստորագրեցին կարսի աւելի խայտառակ դաշնագիրը: Ազգային տեսակէտով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտութիւն էր, դժբախտ, բայց անխուսափելի:

Դեկտ. 2-ի գիշերը ստորագրուեց հայ-Թրքական հաշտութեան դաշնագիրը, որի ամփոփումը հետեւեալն է: Այս ամփոփումը արել է Պատւիրակութեան նախագահ Ա. Խատիսեանը: Դաշնագրի բնագիրը, որ ժամանակին յանձնուել է Ցեղկոմի նախագահ Ս. Կասեանին, չի հրատարակւած պաշտօնապէս:

«1.— Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը պարտաւորւում է ճանաչել Հայաստանի անկախութիւնը հետեւեալ սահմաններում.— Ախալքալաքի գաւառի հարաւային մասից Ուչ-Թափալար սարը դէպի հարաւ մինչեւ Բաշ Շորագեալ, մինչեւ Արփաչայ — Արփաչայի հոսանքը մինչեւ նրա խառնուելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչեւ Արաքս կայարանը, այստեղից դէպի Մարտիրոս մինչեւ Զայլքէնտ գիւղը:

«2.— Կարսի նահանգը եւ Սուրմալուն համարւում են վիճելի, մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքուէ՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների: Հանրաքուէի ժամանակ պէտք է մտնէ այնտեղ խառն հայ-Թրքական ժանդարմերիա:

«3·— Հայերը հրաժարուում են Սեւրի դաշնագրից· յետ են կանչում բոլոր այն կոմիտէները եւ ներկայացուցիչները, որոնք դոյութիւն ունին Եւրոպայում, չեն պահում Հայաստանում Դաշնակիցների ո՛չ մի ներկայացուցիչ, մինչեւ որ Թուրքիան հաշտութեան դաշն կնքէ նրանց հետ:

«4·— Հայաստանը իրաւունք ունի պահելու զօրաբանակ ոչ աւելի քան 1·500 սուին եւ դրան համապատասխան քանակով ապաններ, նաեւ անհրաժեշտ քանակութեամբ ժանդարմէրիա: Երկիրը պաշտպանելու համար կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են զինուել միայն պաշտպանողական ծանր թնդանօթներով: Վերացուում է պարտադիր զինուորութիւնը:

«5·— Հայաստանի վրայ յարձակման դէպքում Թուրքիան պաշտպանում է հայոց կառավարութեան պահանջմամբ եւ աջակցում է Հայաստանին զօրքով:

«6·— Թուրքիան եւ Հայաստանը փոխադարձաբար օգտուում են ազատ տրանզիտից, ինչպէս երկաթուղիներով, այնպէս և բոլոր ճանապարհներով:

«7·— Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր:

«8·— Պայմանները կնքուելուց յետոյ, սկսում են աշխատել երկաթուղիները, վերադառնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսուում են աշխատանքները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանները որոշելու համար, վերադառնում են բոլոր ռազմագերիները:

«9·— Հայաստանի կապած բոլոր պայմանները Թուրքիայի դէմ համարուում են անվաւեր:

«10·— Բոլոր գաղթականները կարող են վերադառնալ իրենց տեղերը մի տարւայ ընթացքում՝ օգտուելով բոլոր քաղաքացիական իրաւունքներից, բացի այն գաղթականներից, որոնք զինուած դիմադրութիւն են ցոյց տուել իրենց կառավարութեան դէմ:

«11·— Հայերը Թուրքիայում եւ Թուրքերը Հայաստանում վայելում են հաւասար քաղաքացիական իրաւունքներ:

«12·— Դիւանագիտական, ինչպէս եւ հիւպատոսական յարաբերութիւնները, ինչպէս եւ քաղաքացիական ազատ երթեւեկութիւնը երկու երկիրների միջեւ, սկսուում է դաշնագիրը ստորագրուելուց յետոյ, որից յետոյ վերսկսուում են փոստային եւ հեռագրական հաղորդակցութիւնները Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ:

«13·— Շարուրը եւ Նախիջեւանը ժամանակաւորապէս օժտուում են ինքնավարութեամբ՝ դնելով Թուրքիայի հովանաւորութեան տակ, մինչեւ որ որոշուի նրանց բախտը:

«14·— Այս դաշնագիրը պէտք է ենթարկուի վաւերացման Հայաստանի Հանրապետութեան եւ Ազգ· Մեծ ժողովի կողմից մի ամսուան ընթացքում:

«15·— Թուրքիան պարտաւորուում է Հայաստանի գրաւած հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կը սկսէ զօրացրում, եւ վերջնականապէս կը դատարկէ, երբ հայկական զօրքի թիւը կը հասնի պայմաններում որոշուած չափին»:

Տարիներ յետոյ, Ազգ. ժողովի մէջ արտասանած իր նշանաւոր ճառում, Մուսթաֆա Քեմալը այսպէս արտայայտուեց այդ դաշնագրի մասին. — «Հաշտութեան բանակցութիւնները, որոնք սկսել էին նոյեմբ. 26-ին, վերջացան դեկտ. 2-ին, եւ դեկտ. 2-ի լոյս 3-ի գիշերը ստորագրուեց Գիւմրիի դաշնագիրը: Պարոններ, Գիւմրիի դաշնագիրը առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է ազգային կառավարութիւնը... Արեւելքում առաջ եկած կարեւոր փոփոխութիւնների հետեւանքով, այս դաշնագիրը փոխարինուեց հետագային կնքուած դաշնագրով, այսինքն՝ 1921 թ. մարտ 16 Մոսկուայի եւ 1921 թ. հոկտ. 13 կարսի դաշնագիրներով»:*)

Ճակատագրի իրնչ հեգնանք. 1918 թ. յունիս 4-ին, Բաթումի դաշնագրով Թուրքիան եղաւ առաջին պետութիւնը, որ ճանաչեց Հայաստանի անկախութիւնը: Այժմ Հայաստանը առաջին պետութիւնն էր, որ ճանաչում էր քեմալական Թուրքիայի անկախութիւնը:

Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին խօսելիս անհրաժեշտ ենք համարում վեր առնել եւ հետեւեալ կէտը.— Ի՞նչ իրաւական հիմք ունի այդ դաշնագիրը: Բոլշեւիկները եւ ուրիշներ ասում են, որ Հայաստանի կառավարութիւնը, դեկտ. 2-ին, Լեգրանի հետ Հայաստանի խորհրդայնացման պայմանը ստորագրելուց յետոյ, այլեւս իրաւունք չունէր օտար պետութիւնների հետ դաշնագիրներ ստորագրելու: Սրան կարելի է առարկել այն փաստով, որ, ըստ Լեգրանի հետ կնքուած պայմանի, իշխանութեան փոխանցումը տեղի պիտի ունենար դեկտ. 2-ի գիշերը եւ, ուրեմն, մինչեւ այդ՝ Հայաստանի կառավարութիւնը սահմանափակուած չէր իր իրաւունքների մէջ: Դաշնագիր ստորագրելու լիազօրութիւնը Ֆաթխեանի պատւիրակութեան՝ կառավարութիւնը տուել էր դեկտ. 1-ին, հետեւաբար, միջազգային օրէնքի եւ փաստական կացութեան տեսակէտով՝ Հայաստանի կառավարութեան ընթացքը հակաօրինական հանգամանք չունէր:

Միւս կողմից, ինչպէս ասում է Մուսթաֆա Քեմալը — «դեկտեմ. 2-ի լոյս 3ի գիշերը»—եւ ինչպէս վկայում է Ա. Ֆաթխեանը, դաշնագիրը ստորագրուել է դեկտ. 2-ի գիշերուայ ժամը 12-ից յետոյ: Արդե՞օք այս պարագան բաւարար հիմք է մերժելու համար դաշնագրի օրինականութիւնը: Այս առթիւ էլ կարելի է դիտել տալ, որ Հայաստանի կառավարութեան հրաժարումից յետոյ, եկող նոր իշխանութիւնը — Դրօ եւ Սիլին — տեղեակ էր, որ դաշնագիրը պիտի ստորագրւի եւ կարող էր արգելել, բայց չի արգելել: Դեկտ. 2-ի երեկոյեան հետեւեալ խօսակցութիւնն է տեղի ունենում Ալեքսանդրապոլի պատւիրակութեան նախագահ Ա. Ֆաթխեանի եւ Հայաստանի նոր իշխանութեան ներկայացուցիչ Դրոյի միջեւ.— «Երեկոյեան ժամը 6-ին, պատմում է Ֆաթխեանը, ինձ հրաւիրեց ուղիղ հեռագրաթելի մօտ Դրօն, որ ըսաւ հետեւեալը.—

«Ցեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ ձեզ, որ դուք ազատ էք ստորագրել կամ ոչ»:

---

*) «Discours du Ghazi Moustafa Kemal», 1929, Leipzig, p. p. 390-92:

«Լաւ պիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատուութիւնը, ես երկրորդ անգամ հարցուցի. «Արդեօք կառավարութիւնը ստորագրելո՞ւ կողմն է, թէ մերժելու: Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների»:

«Դրօն պատասխանեց. «Ես ձեզ ասացի արդէն: Գործեցէ՛ք համաձայն ձեր հասկացողութեան: Ես խօսում եմ ընկեր Սիլինի եւ իմ անունից»:

«Սիլինը Մորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչն էր»:*)

Այստեղից պարզ երեւում է, որ ոչ միայն Դրօն, այլ խորհրդային իշխանութեան ներկայացուցիչն էլ առարկութիւն չունէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելու դէմ եւ, բնականաբար, Հայաստանի այն ժամանակւայ պայմաններում չէր էլ կարող ունենալ:

Մինչեւ այստեղ, թէ՛ կառավարութեան եւ թէ՛ պատւիրակութեան ածը, իրաւական տեսակէտից, անխոցելի էր: Բայց դաշնագրի մէջ կար մի կարեւոր պայման. ստորագրութիւնից յետոյ, մէկ ամսւայ ընթացքում, դաշնագիրը պէտք է վաւերացւէր Հայաստանի Մորհրդարանի եւ Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովի կողմից: Այդ վաւերացումը տեղի չունեցաւ: Հետեւաբար, եւ դաշնագիրը իր օրինական հանգամանքը կորցրեց: Միակ այս փաստը բաւական էր, որպէսզի Հայաստանի Ցեղկոմը չճանաչէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եթէ իսկապէս բոլշեւիկները ուզում էին Հայաստանի համար աւելի նպաստաւոր պայմաններ ապահովել: Բայց բոլշեւիկները չուզեցին կամ չկարողացան օգտւել այդ փաստից, որովհետեւ նրանց համար Թիւրքիան աւելի մեծ արժէք էր, քան Հայաստանը:

*) Ա. Խատիսեան՝ «Հայաստանի Հանրապետութեան Մագումն ու Զարգացումը», էջ 270:

ԳԼՈՒԽ ԼԴ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԵՂԿՈՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Այսպէս, ուրեմն, ո՛չ հայ ժողովրդի յօժար կամքով, այլ արտաքին ուժերի ճնշման տակ, 1920 թուի դեկտ. 2-ին, Հայաստանում տեղի ունեցաւ վարչաձեւի փոփոխութիւն. ժողովրդավար իրաւակարգի տեղը բերտ ուժով բռնատիրական իշխանութիւնը հաստատուեց: Խորհրդարանական կառավարութեան յաջորդեց Հայաստանի Յեղկոմը, ռուսական սուինների պաշտպանութեան տակ:

Ի՞նչ էր Հայաստանի ժողովրդի վերաբերումը դէպի նորեկ վարչաձեւն ու իշխանութիւնը:

*Մայիսեան չարժումներին եւ հայ-թիւրքական պատերազմի առաջին օրերին հայ ժողովուրդը, իր բոլոր խաւերով, երեւան բերեց միահամուռ եւ վճռական կամք պաշտպանելու հայրենիքի անկախութիւնը՝ հիւսիսից եւ հարաւից սպառնացող վտանգի դէմ: Անհաշիւ զոհերի եւ արեան գնով ձեռք բերուած անկախութեան գաղափարը այլեւս արմատներ էր ձգել, սակաւ բացառութեամբ, բոլոր հայերի գիտակցութեան մէջ:**)

Ռազմաճակատի անյաջողութիւնները; ինչպէս եւ Եւրոպայի ու Ամերիկայի Պիղատոսի դիրքը արիւնաքամ եղող Հայաստանի հանդէպ՝ աստիճանաբար բեկում առաջ բերին հայ ժողովրդի միաձոյլ կամքի մէջ. ո՞ւր ենք գնում այսպէս, ի՞նչ պիտի լինի զահավէժ դէպքերի վախճանը, ո՞վ կարող է մեզ օգնել:

«Խորհրդային Ռուսաստանը, պատասխանում էին հայ բոլշեւիկները: Կարմիր բանակը, որ մօտեցել է Հայաստանի սահմաններին, նա՛ է հայ ժողովրդի փրկիչը: Թօթափեցէ՛ք ձեր ուսերից դաշնակների լուծը, բացէ՛ք երկրի դռները ռուս զօրքի առջեւ, եւ ձեր դժբախտութիւնը վերջ կը գտնէ»:

Բոլշեւիկների խօսքերը անծանօթ չէին. հայ ժողովուրդը այլեւս պատրանքներ չունէր նրանց արժէքի մասին, բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնա-

---

*) Հետաքրքրական է հայ բաղխեցի Ռամկավար եւ ժողովրդական կուսակցութիւնների այդ օրերի դիրքը. նրանք գործով թէ մամուլով հակառակ էին արտայայտւում, անհաշտ պայքարի մէջ էին ոչ միայն բոլշեւիկութեան, այլեւ Ռուսաստանի դէմ:

ցել: Թիւրքը յառաջանում էր՝ իր հետ բերելով անխնայ աւեր ու կոտորած: «Մեր մեծ դաշնակիցները», պղատոնական խօսքերից զատ, մատը մատի չէին խփում օգնելու համար իրենց ուժասպառ «փոքր դաշնակցին»: Ո՞ւր էր վերջ-կութեան լաստը:

Եւ հետզհետէ հայութեան սրտերում — վա՛յ պարտուածներին — սկսեց նորից տեղ գրաւել «խաչապաչա ռուսը»: Նոյեմբերի կէսերին այլեւս նշմարելի էր շերտաւորումը պետական գործիչների եւ հասարակութեան զանազան խաւերի մտքերում: Հ. Օհանջանեանի կառավարութիւնը իր մեծամասնութեամբ դեռ չարունակում էր կանգնած մնալ հակառուս դիրքի վրա: Անհաշտ հակառակորդ էր խորհրդային Ռուսաստանին եւ հայ սոց.-դեմոկ. փոքրաթիւ խմբակը՝ Բաշխի Իշխանեանի եւ Դաւիթ Անանունի ղեկաւորութեամբ: Հայ սոց.-յեղափոխականների դղրդումները, դէպի բոլշեւիկները մնալով հանդերձ բացասական՝ ռուսն ու Ռուսաստանը քաղաքական դրական գործօն էին նրանց աչքում: Հայ ժողովրդական կուսակցութիւնը, քաղքենիների այդ անջիղ կազմակերպութիւնը, բերանի մէկ կողմով անկախութիւն էր հոլովում, միւս կողմով ռուսասիրութիւն քարոզում: Ամենավար կուսակցութիւնը, խորհրդային Ռուսաստանը նկատում էր Հայաստանի եւ հայ դատի մահացու թշնամի:

Պէտք է ասել նաեւ, որ կառավարական կուսակցութեան՝ Դաշնակցութեան շարքերում էլ վարանում ու չփոթ էր տիրում: Անկախութեան չուրջ ընդհանուր առմամբ վարանում չկար, բայց ստեղծած կացութիւնից ելք գտնելու համար կարծիքները տարբերւում էին: Ոմանք պնդում էին, թէ պէտք է չարունակել անհաշտ թշնամական դիրքը դէպի Ռուսաստանը, առանց սակայն կարողանալու ցոյց տալ, թէ ի՞նչ պէտք է անել վերջնական կործանումից խուսափելու համար: Ուրիշներ անհրաժեշտ էին համարում անմիջապէս «լեզու գտնել» խորհրդային Ռուսաստանի հետ: Իսկ չարքային-ները տատանւում էին յոյսի եւ վհատութեան միջեւ:

Անկուսակցական զանգւածը, մանաւանդ, քաղքենի տարրը սկսում էր օրօրւել հին յուշերով Ռուսաստանի մասին. կը գայ ռուսը, կը բերէ հետը խաղաղութիւն, «հաց ու մանուֆակտուրա», կ'առնէ երկիրը իր հովանու ներքեւ, եւ ռուս զինուորի սուինի պաշտպանութեան տակ դիւղացին, արհեստաւորն ու խանութպանը, հին տարիների նման, հանգիստ կապրեն եւ դրամ կը վաստակեն:

Աւելի հեռուն չէին մտածում: Ոչ էլ ծանօթ էին բոլշեւիզմի բնոյթին եւ Ռուսաստանի ներսերը կատարւող քաոսին:

«Խաչապաչա ռուսն» էր եկողը, վերջապէս. հո նա էլ Թիւրքի պէս մեզ չի կոտորի: Բարի՛ թող գայ:

Այսպէս էին, ընդհանուր առմամբ, Հայաստանում տիրող տրամադրութիւնները 1920 թւի նոյեմբեր ամսին, Կարսի անկումից յետոյ: Ծոռետես թէ լաւատես՝ չէին կարող պատկերացնել իրական դալիքը: Ծոռետես թէ լաւատես՝ սպասում էին որ

1. Վերջ կը դնէ երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը:

2. Վերջ կը գտնէ պատերազմը, եւ Թուրքը կը հեռանայ Հայաստանի սահմաններից։

3. Խորհրդային Ռուսաստանի միջամտութեամբ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատուին Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ. Խորհրդ. Ռուսաստանի աջակցութեամբ, այս կամ այն ձեւով կը լուծուի Թրքահայկական հարցը։

4. Կը վերականգնուի երկրի ներքին անդորրութիւնը, եւ ժողովուրդը նորից հնարաւորութիւն կը ստանայ լծուելու խաղաղ ու շինարար աշխատանքի։

Բոլշեւիկները իրենց հերթին պաշտօնական թէ անպաշտօն շռայլ խոստումներով ուժեղացնում էին այս տրամադրութիւնները։

Այսպիսի պայմաններում եւ այս տրամադրութեամբ ու յոյսերով Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն, 1920 թուի դեկտ. 2–ին։

Բոլշեւիկները առանց ծիծաղելի լինելու վախից, շարունակում են պնդել, թէ Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցաւ նոյեմբ. 29–ին՝ Հայաստանի գիւղացիութեան եւ բանւորութեան ապստամբութեան հետեւանքով։ Նոյեմբեր 29–ին, ինչպէս յայտնի է, հայ բոլշեւիկների մի փոքրաթիւ խմբակ, մտաւ Ադրբէջանին սահմանակից Իջեւան գիւղը եւ ցրւեց Բաքուից բերուած թռուցիկներ, որոնք յայտարարում էին, թէ Հայաստանում «դաշնակների» կառավարութիւնը տապալուած է եւ տեղը բռնած է խորհրդային իշխանութիւնը, մինչ նոյն այդ միջոցին Խորհրդ. Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչը Երեւանում խաղաղ բանակցութիւններ էր վարում «դաշնակների» կառավարութեան հետ։ Երեք օր վերջը, դեկտ. 2–ին միայն, Հայաստանի կառավարութեան եւ Խորհրդ. Ռուսաստանի միջեւ կնքուած համաձայնութեան հիման վրա, Հայաստանը յայտարարւեց խորհրդային։ Ինչպէս ասացինք, ո՛չ մի գնդակ չարձակւեց այդ առթիւ, ո՛չ մի ապստամբութիւն տեղի չունեցաւ, ո՛չ մէկի քիթը չարիւնեց, իսկ Հայաստանի գիւղացիութիւնն ու բանւորութիւնը լուռ էր։ Լուռ էր ու կսկիծը սրտում՝ ողբում էր հայրենիքի կործանումը։ Եւ սպասում էր «խաչապաշտ ռուսին»։

Սպասում էին որ գայ ռուսը. բայց ռուսի փոխարէն Հայաստան մուտք գործեց Ցեղկոմը եւ հետը մի քանի հարիւր քոսոտ կարմիր բանակայիններ ու հայ բոլշեւիկներ՝ շատերը ծանօթ մայիսեան խռովութիւններից իրենց զանազան արարքներով — Ս. Կասեան, Ասք. Մռաւեան, Աւիս Նուրիջանեան, Աշ. Յովհաննիսեան, արիւնկզակ Աթարբէգեան եւ ուրիշներ։ «Մուտք գործեց», որովհետեւ Ցեղկոմը իսկապէս իրեն պահում էր իբրեւ յաղթական կերպով մուտք գործող մի ոյժ, որ իր ոտքերի տակ պատրաստ էր տրորելու պարտուած թշնամուն։

Հակառակ որ ժողովուրդը եւ նախկին իշխանութեան մարդիկ խիստ բարեացակամ վերաբերում ցոյց տուին եւ պատրաստակամութիւն յայտնեցին ամէն բանով աջակցելու նոր կառավարութեան, Ցեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դէպի երկրի բոլոր ոչ–բոլշեւիկ տարրերը եւ իրեն

պահում էր ճիշդ այնպէս, ինչպէս պահում է թշնամի երկիրը մտնող նւաճող մի բարբարոս ոյժ:

Լեդրանի հետ ստորագրուած դաշնագիրը յայտարարուեց չեղեալ: Դեկտ. 6-ին կազմուեց եւ անմիջապէս գործի անցաւ Զեկան, ու սկսուեցին ձերբակալութիւններ: Իրար եռեւից բանտարկուեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանեանը, նախկին նախարար Ռ. Զիլինգարեանը (Ռ. Դարբինեան), Յորհրդարանի անդամներ բժ. Ց. Տէր Դաւթեանը, Վահ. Նաւասարդեանը, Վ. Բաբայեանը, Գ. Վարշամեանը, Երեւանի Քաղաք. Յորհրդի անդամ Ա. Աստուածատրեանը, Սոցիալ-Դեմոկրատ պարագլուխ Բ. Իշխանեանը, խմբապետ Համազասպը եւ ուրիշներ: Քիչ վերջը, բանտ նետուեցին Յորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, Առողջապահութեան եւ Գիւղատնտեսութեան նախարարների օգնականներ բժ. Ց. Տէր Միքայէլեանը եւ Թ. Տոշեանը, Յորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարեանը եւ ուրիշներ:

Դեկտեմբերի վերջերը արձանագրուեցան ենթարկուեցին հայկական բանակի բոլոր սպաները եւ 70 ընտիր զինուորականներ անմիջապէս աքսորուեցին Բագու:

Յունուար 10-ին Ռուսաստան աքսորուեց Դրօն իր զինակից սպաների հետ:

Յունուար 24-ին Ռուսաստան աքսորուեցին եւ Հայաստանի բանակի մնացած սպաները, 1200 հոգի, որոնց մէջ էին եւ սպարապետ Նազարբէգեանը, զօրավարներ Սիլիկեանը, Հախվէրտեանը, Ղամազեանը: Ձմրան անասելի ցրտին ու ձիւնին, չրջապատուած ռուսական հրացանաւոր ու գնդացիրաւոր պահակներով, հետիոտն, ժողովրդի ընդհանուր սուգի մէջ, հայկական բանակի զինուորականները քշուեցին անծանօթ ուղղութեամբ:

Երկրի բոլոր կողմերում խուզարկութիւններ եւ անվերջ ձերբակալութիւններ էին տեղի ունենում: Հայաստանի բանտերը բերնէ բերան լեցուեցին կալանաւորներով: Բացի վերոյիշեալներից՝ բանտարկուեցին եւ Լեւոն Շանթը, Յովհ. Քաջազնունին, Նիկոլ Աղբալեանը, Երեւանի քաղաքապետ Մ. Մուրինեանը, եւ ուրիշ հարիւրաւորներ: Բանտարկեալները պահւում էին անտանելի պայմաններում, գնդակահարութեան մշտական սպառնալիքի տակ:

Միեւնոյն ժամանակ, Երեւանում եւ ամբողջ երկրում կատարւում էին անկանոն եւ անհաշիւ բռնապրաւումներ: Գրաւում էին ամէն ինչ — բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տաւար, հաւ ու հաւկիթ, մինչեւ իսկ թել ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնութիւն, այժմ իրենից էր խլում հացի վերջին պատառը եւ ուղարկում Ռուսաստան: Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նւէր էր ուղարկւում պետական պահեստների եւ ժողովրդից բռնագրաւած պաշարը — սպիտակ ալիւր, խտացած կաթ, կակաո, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն եւայլն:

Թէ ինչ էր կատարւում այդ օրերին Հայաստանում, չատ ցայտուն կերպով նկարագրել է բոլշեւիկ պատմաբան Բորեանը: Աւելի լաւ է խօսքը տանք նրան:

«Ցեղկոմը, ասում է նա, ձեռնարկեց անխնայ եւ վճռական բռնագրաւումների, առանց խորութեան եւ առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշւի առնելու դիւղացիութեան ընդհանուր տնտեսական դրութիւնը եւ նրա հոգեբանական վիճակը: Բռնագրաւումը տեղի էր ունենում անկազմակերպ ձեւով, ծրագրւած ու յեղափոխական-դասակարգային բնոյթ չունէր եւ կատարւում էր անհարկի բռնութիւններով: Առանց կազմակերպւած ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստութեան եւ առանց հաշւի առնելու երկրի իւրայատուկ պայմանները, Ցեղկոմը կարգախօս է ուղղում՝ բռնագրաւել եւ պետականացնել պարէնը քաղաքներում մասնաւոր մարդկանցից եւ հացի պաշարը դիւղացիներից: Անկարդ կերպով գրաււում ու պետականացւում էր ամէն ինչ — զինւորական հագուստներ, արհեստաւորների գործիքներ, մասնաւոր եւ ամէն տեսակ բրինձի աղօրիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղւի փեթակներ, ըպիտակեղէն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց ի նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը, եւայլն... Բնական է, որ այս բոնի միջոցները եղան երկրի ապստամբութեան հիմնական պատճառները»:*) Խօսքը փետրւարեան ապստամբութեան մասին է:

Ու Բորեանը մէկիկ-մէկիկ թւում է Ցեղկոմի հանած հակաօրինական հրամանագրերը եւ կատարած ապօրինի գործերը:

Ցոյց է տալիս, որ Հայաստանի բոլշեւիկները ոտքի տակ էին տւել խորհրդային օրէնքներն ու հրամանագրերը եւ կատարել էին բազմաթիւ հակաօրինական եւ վնասակար գործեր, որոնց պատճառով ժողովուրդը, որ ըկըղբից համակրական վերաբերում ունէր դէպի խորհրդային իշխանութիւնը, ի վերջոյ, ստիպւած եղաւ ապստամբութեան դրօշ բարձրացնել նոյն այդ իշխանութեան դէմ:

Մի ուրիշ վկայութիւն, որ, կարծում ենք, նոյնպէս կարող է համարւել անկողմնակալ եւ, յամենայն դէպս, վստահութեան արժանի: Խօսքը տանք Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ վարչապետ Ց. Քաջազնունիին:

«Անցել էր մօտ երկու ամիս այն օրից, գրում է նա իր յուշերում, երբ բոլշեւիկները մտել էին Հայաստան, կազմակերպւել եւ հաստատւել էին:

«Հայկական Եռագոյն դրօշակը եւ «Մեր Հայրենիք»ը — իրրեւ հակայեղափոխական սիմբոլներ — վերացւել էին ասպարէզից. նրանց փոխարինել էին պրոլետարական կարմիրն ու պրոլետարական «Ինտերնացիոնալ»ը:

«Կարմիր բանակի զինւորները տեղաւորւել էին քաղաքացիների բնակարաններում, ուտում էին նրանց հացը եւ վատում էին նրանց վառելիքը:

«Պաշտօնեաներն ու կոմսակցական գործիչները գրաւել էին քաղաքի լաւագոյն տները, կահ-կարասին, անկողինները:

«Ցեղկոմը հրատարակում էր ամէն օր դէկրէտներ ու հրամաններ, ո-

*) Բ. Բորեան՝ «Հայաստան, Դիւանագիտութիւն եւ խորհրդ. Միութիւն», Բ. հատոր, էջ 126:



Ս· ԿԱՍՅԱՆ
Հեղկոմի նախագահ



Մ· ՄՐԱՎՅԱՆ



Ս· ՏԵՐ-ԴԱԲՐԻԵԼՅԱՆ



Ա· ԲԵԿԶԱԴՅԱՆ



Ա· ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ
(Ավիս)



Ի· ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ա. Մ. ՄԻԱՍՆԻԿԵԱՆԻ ՅԵՂԿՈՄԸ



Ա. Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ժողկոմխորհի նախագահ
1921 թ. մայիսի 9-ից,
1922 թ. դեկտ. 4-ը.



Ս. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ—ԼՈՒԿԱՇԻՆ
ժողկոմխորհի նախագահ
1922 թ. դեկտ. 4—1925 թ. հունիսի 23.



ՍԱՔՈ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
կենտգործկոմի նախագահ
1922 թ. փետ. 5—1925 թ. հունիսի 23.
ժողկոմխորհի նախագահ
1925 թ. հունիսի 23-ից.



ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ
կենտգործկոմի նախագահ
1925 թ. հունիսի 23-ից.

րոնք նպատակ ունէին ամրացնելու Հայաստանում պրոլետարական դիկտատուրան եւ միաժամանակ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ յեղափոխութիւնը:

«Չեկաները անսպառ եռանդով կատարում էին իրենց փրկարար դործը այնպիսի մեծ եռանդով, որ Հայաստանի բանտերում այլեւս ասեղ ձգելու տեղ չէր մնացել:

«Ժողովրդական (կամ յեղափոխական) տրիբունալներում (դատարաններում) ընկեր դատաւորները դատում էին ու լուծում քաղաքացիների մէջ ծագած վէճերը, դրական օրէնքի բացակայութեան պատճառով, համաձայն իրենց «յեղափոխական դիտակցութեան»:

«Գիւղերում «կոմբջիջները» հին ու նոր հաշիւներ էին մաքրում անհաճոյ դրացիների հետ:

«Քաղաքներում հաստատւել էին քաղաքային ու տնային կոմիտէները: Ամէն մի տասնեակ տան վրա կարգւած էին տասնապետներ: Տասնապետներն ու տանտէրերը հակողութիւն պիտի ունենային իրենց տների վրայ եւ եթէ նկատէին որեւէ «հակայեղափոխական» երեւոյթ, անմիջապէս պէտք է տեղեկացնէին Չեկային:

«Վարչական սիստեմը հիմնւած էր ամբողջովին փոխադարձ հակողութեան ու փոխադարձ լրտեսութեան վրայ: Հսկելու, լրտեսելու եւ տեղեկութիւններ հաղորդելու պարտականութիւնը դրւած էր ոչ միայն պաշտօնեաների, այլեւ ամէն մի քաղաքացու վրա: Քաղաքացին պարտաւորւած էր ոչ միայն ինքը բարեմիտ լինելու խորհրդային իշխանութեան հանդէպ, այլ եւ արթուն աչքով հսկելու հարեւանների բարեմտութեան վրա. եթէ չանէր, անճնապէս կը նկատւէր «հակայեղափոխական», այսինքն՝ ենթակայ Չեկայի խստամատութեան:

«Կոմունիստ»ը (կառավարական պաշտօնական օրաթերթը) չարունակ դրում էր ջարդարար յօդւածներ: Յեղափոխութեան յաղթանակը — ասում էր — ապահովւած չէ Հայաստանում, որովհետեւ այստեղ չէ եղել քաղաքացիական պատերազմ: Կռի՛ւ է հարկաւոր, որպէսզի իսկապէս բնաջինջ լինին հակայեղափոխական տարրերը. կռիւ է հարկաւոր, որպէսզի խորանայ բանւորա-գիւղացիական դասակարգային գիտակցութիւնը: Յեղափոխական պրոլետարիատը պիտի թափէ իր ձեռքով բուրժուազիի արիւնը, որպէսզի անանցանելի վիհ բաց անի իր եւ նրա միջեւ:

«Նոյն բովանդակութիւնով ճառեր էին արտասանւում եւ կոչեր արւում հրապարակային միտինգներում:

«Պատերի վրա փակցւում էին ֆուտուրիստական ոճով նկարւած ահագին պատկերներ, ուր գետերով հոսում էր «Դաշնակների» եւ ուրիշ հակայեղափոխականների պիղծ արիւնը...: Աւելնք՝ արիւնը հոսում էր ոչ միայն պատկերների վրա, այլ եւ «չեկայական» բանտերում:

«Բնակչութիւնը բաժանւած էր երկու անհաւասար մասի. բոլշեւիկներ (կամ բոլշեւիկ ձեւացողներ), որոնց տրւած էին բոլոր իրաւունքները, եւ ոչ-բոլշեւիկներ (այսինքն՝ ահագին մեծամասնութիւնը), որոնց վրա դրւած էին բոլոր պարտականութիւնները:

«Եւ առաջին հերթին՝ բոլշեւիկներին կերակրելու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտականութիւնը:

«Հոլշեւիկեան եռանդի մի կէսը ծախսւում էր Չեկայի եւ յարակից գործողութիւնների վրա, միւս կէսը՝ խուզարկութիւնների ու բռնագրաւումների վրա:

«Բռնագրաււում էր ամէն բան՝ սկսած տնից, կառքից, դրաստից, վառելիքից եւ վերջացրած երաժշտական գործիքով, լւացքի սապոնով, թել-ասեղով... Բաւակա՛ն է, որքան բուրժուաները վայելեցին կեանքի բարիքները, այժմ հերթը կարմիր բանակին է եւ յեղափոխական պրոլետարիատի:

«Սա մի սկզբունք էր, որ գործադրւում էր ամէն ուղղութեամբ, ամենայն հետեւողականութեամբ ու արտակարգ եռանդով:

«Ժողովուրդը յանկարծակիի էր բերւել, շշմել, ահաբեկւել էր: Չէր հասկանում, թէ ինչ էր կատարւում շուրջը: Չէր հասկանում, թէ ինչ են ուզում իրանից այս կարմիր աստղանի, պոպոզաւոր գլխարկներ կրող անծանօթները, այս մաւզէրներով ու նագաններով զինւած, երեսները փխ ներկած դերահաս օրիորդները, այս բազմաթիւ կոմիսարներն ու կոմընկերները, որ օտոմոբիլները նստած՝ օր ու գիշեր վեր ու վար էին անում Երեւանի փողոցներում...

«Մենակ «բուրժուան» չէր, որ շշմել էր. շշմել էին նաեւ աշխատաւոր զանգւածները, որոնք «բուրժուազիի» հետ հաւասար տուժում էին բոլշեւիկեան իրաւակարգից: Մենակ «բուրժուան» չէր, որ թալանւած էր, անարգւած, իրաւազրկւած. նոյնն էր եւ ամբողջ ժողովուրդը (բացի բոլշեւիկներից, ի հարկէ), օրւան աշխատանքով ապրող բազմութիւնները:

«Այլեւս ոչ ոք տէր չէր ո՛չ իր ունեցածի, ոչ իր աշխատանքի: Կոմունիզմը հասկացւել էր ու իրականացւում էր այն մտքով, թէ ոչ-բոլշեւիկի ունեցածը հալա՛լ է բոլշեւիկին»:

Բորեանի եւ Քալջաղնունու առաջ բերած փաստերը բաւական են հասկանալու համար այն ներքին պայմանները, որոնք առաջ բերին հակախորհրդային համաժողովրդական յեղափոխութիւնը փետրւարին: «Փաստերի այս բաւական մակերեսային թւումը, եզրակացնում է Բորեանը, բացատրում է Հայաստանի ժողովրդական ապստամբութեան պատճառները»:

Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին խորհրդային իշխանութեան դէմ: Հակառակ իրենց տւած հանդիսաւոր խոստումների եւ յանձնառութիւնների՝ բոլշեւիկները ապիկար գտնւեցին եւ արտաքին քաղաքականութեան մէջ:

Նրանք խոստանում էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապէս յետոյ, վերականգնել յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց եւ մանուֆակտուրա», կարգադրել հարեւանների հետ հողային վէճերը եւ Ռուսաստանի օգնութեամբ բարի-հարեւանական կապեր հաստատել Թուրքիայի հետ: Արդ՝ Հայաստանի Ցեղկոմը ինչպէ՞ս արդարացրեց ժողովրդի յոյսերը եւ իր խոստումները:

Նախ՝ ճանապարհների խնդիրը: Խորհրդայնացումից յետոյ էլ հա-

յաստանը կորած մնաց արտաքին աշխարհից: Բաքուի պահեստներում դիզած հայկական պարէնն ու ապրանքները տեղից չշարժուեցին, եւ Վրաստանը աւելի եւս ամուր գոցեց իր դռները հայերի առջեւ: Ցեղկոմի դիմումները, թախանձանքներն ու սպառնալիքները ո՛չ մի ազդեցութիւն չգործեցին Վրաստանի կառավարութեան վրա: Անօգուտ անցաւ եւ Մոսկուայի միջամտութիւնը:

Այսպէս, Խորհրդային Ռուսաստանի լիազօր դեսպանը 1920 թ. դեկտ. 25 դիմումնագրով, մատնանշելով, որ «սովահար Հայաստանի շրջափակումը չարունակւում է ամբողջ ծաւալով» պահանջեց բանալ երկաթուղային հաղորդակցութիւնը Հայաստանի հետ: Պատասխանը եղաւ մերժում: 1921 թ. յունուար 21–ին Մոսկուան նորից պահանջեց՝ «անմիջապէս իրականացնել տրանզիտի իրաւունքը Վրաստանի վրայով դէպի Հայաստան»: Արդիւնքը եղաւ նոյնը. վրաց կառավարութիւնը մերժեց:

Վրաստանը տեղի չտւեց եւ սահմանավէճի հարցում: Իշխանութեան գլուխ անցնելուց անմիջապէս յետոյ, Հայաստանի Ցեղկոմը, իրար յետեւից, մի շարք հեռագիրներով պահանջեց, որ վրացիները հեռանան հայկական հողերից եւ վրացական զօրքերը յետ քաշւեն Լոռիի չէզոք գօտուց: Վրացիները բնաւ կարեւորութիւն չտւին այդ պահանջներին:

Ահա մէկ նմոյշ Հայաստանի Ցեղկոմի կատարած դիմումներից:

Դեկտ. 30–ին, Խորհրդային Հայաստանի արտաքին գործավար Ա. Բէգզադեանը հետեւեալ ծանուցագիրը ուղղեց վրաց կառավարութեան:

«Երեւան, 30 դեկտ. (ռադիօ).— Վրաստանի դեմոկրատիկ հանրապետութեան արտաքին գործոց նախարարին:

«Չէզոք գօտուց ձեր զօրքերը յետ քաշելու մասին սոյն դեկտ. 7–ին եւ 10–ին ձեզ ուղղած դիմումների մէջ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը արտայայտել էր ազատագրուած ժողովրդի կամքը՝ վերադառնալու խաղաղ աշխատանքի իր երկրի այն մասում, որ թէեւ պատերազմող կողմերի թշնամական գործողութիւնների անմիջական վայր չէր, սակայն Թուրքիայի հետ վարած պատերազմի ընթացքում ձեր կառավարութեան կողմից աստիճանաբար վերածւած էր զինուորական գրաւման վայրի՝ իր բոլոր քաղաքացիների համար անտանելի ծանր հետեւանքներով:

«Նկատի ունենալով, որ ձեր կառավարութիւնը իր սոյն դեկտ. 10–ի եւ 21–ի պատասխաններով մերժում է գոհացում տալ չէզոք գօտու հայ աշխատաւոր բնակչութեան այնքան հասկանալի ցանկութեան եւ ձեր կրկնակի մատնանշումները, թէ ձեր կառավարութիւնը Դաշնակցականների հետ սոյն տարւան նոյեմբ. 13–ին համաձայնութիւն է կնքել այդ մասին, Հայաստանի Ս. Խ. Հանր. կառավարութիւնը ստիպւած է նորից մատնանշել այն հանգամանքը, թէ նա ինքը առհասարակ մերժում է ամէն մի հնարաւորութիւն ձեր կառավարութեան կողմից մատնանշելու նոյեմբ. 13–ի համաձայնագիրը, որ ձեր իսկ կառավարութեան գործողութիւններով չեղեալ է նկատւած: Ձեր կառավարութեան ձեւական պնդումը, թէ իր կողմից ճշդիւ կատարւում են նոյեմբեր 13–ի համաձայնագրի պայմանները, չի կարող ընդունւել Հայաս-

տանի Ս. Խ. Հ. կառավարութեան կողմից՝ նկատի ունենալով այն հանրածանօթ իրողութիւնները, որ ձեր զօրքերը համաձայնութեան առաջին իսկ օրերն անցել են չէզոք գօտու սահմանները, գրաւել են Քոլագերանը, Շահալին, Ջալալ Օղլին, Նիկոլայեւկան եւ Հայաստանի տէրիտորիայի ուրիշ անվիճելի կէտեր, որ այդ տեղերում նշանակւած են վրացի հրամանատարներ, արձակւած են հայ ծառայողները եւ փոխարինւած են վրացիներով. որ նոյեմբեր 19-ին բռնագրաււած է Քոլագերան կայարանի գործիքների սենեակը, ձերբակալւած են առանց պատճառների որեւէ բացատրութեան եւ հրամանի կայարանի հեռագրական պաշտօնեաները Գարեգին Տէր Ցարութիւնեանը, Համբարձում Պետրոսեանը եւ Արտաշէս Շահվերտեանը, որոնք յետոյ տարւած են Աչաղա-Սարայլ, որ, վերջապէս, պատժիչ զօրամաս է ուղարկւած Շնող գիւղի հայ գիւղացիների դէմ եւ ամբակոծւած է յիշեալ գիւղը:

«Սրանից անկախ, Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութիւնը չի կարող նոյնպէս համաձայնել ձեր կառավարութեան նոյեմբեր 13-ի համաձայնագրի վրա ունեցած հայեցակէտին, որովհետեւ այդ համաձայնագիրը չի պայմանաւորւած ոչ մի փաստացի հանգամանքով: Բացի այն, որ խնդրի այդպիսի մեկնաբանութիւնը, առհասարակ, անընդունելի է պայմանագրի փոխյարաբերութիւնների ասպարէզում, որքան վերջիններս միշտ յենւում եւ պահպանում են իրենց օրինական ոյժն ու նշանակութիւնը միայն իրենց առաջ քաշող պայմանների սահմաններում, — նոյեմբ. 13-ի համաձայնութեան բնագիրն ինքն իսկ լիովին բացառում է մի այդպիսի մեկնաբանութիւն: Այդ բնագիրը, իբրեւ կնքւած համաձայնութեան հիմունք, ճշդիւ առաջ է քաշում երկու հանգամանք—Անաստոլուի կառավարութեան զօրքերի յարձակումը Հայաստանի Հանրապետութեան վրա եւ այդ բանի հետեւանքով չէզոք գօտիի եւ բուն Վրաստանի համար ստեղծւող սպառնալիքը: Այդ երկու հանգամանքների վերացելուց յետոյ, վրաց զօրքերի մնալը չէզոք գօտում այլեւս կորցընում է ամէն արդարացում եւ չի կարող ընդունել Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութեան կողմից: Հայաստանում քաղաքական նոր իրաւակարգ եւ ընկերային նոր փոխյարաբերութիւններ հաստատւելուց յետոյ, հնացած են դառնում այն արհեստական կապերը, որոնք փաթաթւում են Անդրկովկասի հանրապետութիւնների վզին նրանց հովանաւորների կողմից: Շահագրգռւած լինելով վերջ տալու յիշեալ կացութեան չէզոք գօտու եւ Հայաստանի անվիճելի երկրամասի սահմաններում, որ գրաւել են վրաց զօրքերը, Հայաստանի Ժողհրդային կառավարութիւնը՝ ելնելով ինչպէս Ժողհրդային կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնից, այնպէս եւ նրա հռչակած սկզբունքներից՝ պատրաստ է օգտագործել ամենից առաջ վիճելի խնդիրների խաղաղ լուծման եղանակ: Իսկ յիշեալ վէճը արագօրէն լուծելու եւ այդպիսի դէպքերում սովորական ձգձգումների առաջն առնելու համար, իմ կառավարութիւնը ամենից աւելի նպատակայարմար է համարում չէզոք գօտու վիճելի խնդիրը լուծել Ռուսաստանի Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան ներկայացուցչի մասնակցութեամբ:

«Այս խնդրի վերաբերմամբ Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութիւնը սպասում է ձեր կառավարութեան չուտափոյթ պատասխանին»:

Խորհրդային Ռուսաստանի դիմումն ու վերջինիս միջնորդութիւնն էլ չօգնեցին. վրացիները մնացին անդրդուելի եւ չարունակեցին գրաւած պահել Լոռին եւ երկաթուղային հաղորդակցութիւնը չվերականգնեցին:

Աւելի փայլուն չէր վիճակը եւ «եղբայրական» Ազրբէջանի ուղղութեամբ, հակառակ որ այնտեղ իշխանութիւնը բոլշեւիկների ձեռքին էր:

Ինչպէս տեսանք, Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերին, Ազրբէջանի կառավարութեան պետ «ընկեր Նարիման Նարիմանովը» Հայաստանի Յեղկոմին ուղղած հեռագրով եւ բաւական արած հանդիսաւոր յայտարարութեամբ ծանուցեց որ այլեւս Հայաստանի եւ Ազրբէջանի միջեւ ամէն վէճ վերջացած է, եւ Խորհրդային Ազրբէջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը Հայաստանին: Այնուհետեւ այս հողամասերը պէտք է մտնէին Խորհրդային Հայաստանի սահմանների մէջ, եւ այդ հանգամանքը դոհունակութեամբ ընդունեց հայերի կողմից: Բայց յետոյ ի՞նչ անցաւ-դարձաւ, յայտնի չէ, հաւանաբար, թուրքերը ճնշում գործ դրին Մոսկւայի վրա, եւ Ղարաբաղն ու Նախիջեւանը, Հայաստանին չմիացեցին: Այդ առթիւ, հայ կոմունիստական շրջաններում տրւում էր այն բացատրութիւնը, թէ Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէր արել յայտարարութիւնը, այլ, իբրեւ պրոպագանդ, հայ բոլշեւիկների գործը դիւրացնելու նպատակով:

Ղարաբաղը մնաց Ազրբէջանի ձեռքը, Նախիջեւանն էլ՝ թուրք բոլշեւիկեան գրաւման տակ:

Ռուսաստանից պարէն ստանալու յոյսն էլ ի դերեւ ելաւ: Նախ՝ Ռուսաստանը ինքը անօթի էր: Երկրորդ, ճմրան սառնամանիքների եւ բուք ու բորանի պատճառով հաղորդակցութիւնը շատ էր դժւարացել, թէեւ, ինչպէս տեսանք վերը, հաղորդակցութեան դժւարութիւնները արդելք չէին, որ Հայաստանի պարէնն ու ապրանքները փոխադրէին Բաքու եւ Մոսկւա:

Աւելի վատ եղաւ հայ բոլշեւիկների գործը թուրքերի հետ: Նրանք հաւատացնում էին ամենքին, թէ թուրքերի թշնամութիւնը դէպի հայերը հետեւանք էր դաշնակցականների վերաբերմամբ տածած ատելութեան. բաւական է Հայաստանը յայտարարել խորհրդային եւ եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական յարաբերութիւնները կը բարելաււեն եւ թուրք բանակը անմիջապէս կը հեռանայ Ալեքսանդրապոլից եւ Կարսից:

Այս ոգիով էր ներշնչւած եւ Յեղկոմի առաջին «դէկլարացիան», ուր հետեւեալ տողերն են նւիրւած թուրքիային. — «Հայաստանի Յեղափոխական կոմիտէն լի է հաւատով, որ ինքը վայելում է թուրքիայի աշխատաւոր զանգւածների վստահութիւնն ու համակրանքը — այն ժողովուրդի, որ արդէն հասկացել է Անտանտի դարաւոր լծից ազատւելու անհրաժեշտութիւնը եւ որ կոչւած է խոշոր դեր կատարելու Արեւելքի յեղափոխականացման գործում: Հաւատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրւող հասարակական Թուրքիան, հաշւելով մեզ Թուրքիայի հետ միասին Սեւրի դաշնագրի

թշնամի, անմիջապէս եղբայրական ձեռք կը մեկնէ մեզ, երբ մենք կը տապալենք մեր թշնամուն (Դաշնակցականներին) եւ նրա հետ միասին պայքար կը մղենք Անտանտի գիշատիչների դէմ: Մենք համոզուած ենք նոյնպէս, որ յաղթողի սուրը չէ որ պիտի թելադրէ յառաջիկայ հաշտութեան դաշնագիրը Խորհրդային Հայաստանի եւ աշխատաւոր Թուրքիայի միջեւ, այլ Խորհրդ. Հայաստանի եւ աշխատաւոր Թուրքիայի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխութիւնն ու համաձայնութիւնը»:*)

Ինչպէ՞ս պատասխանեց «աշխատաւոր Թուրքիան» Ճեղկոմի պարզած «եղբայրական ձեռքին»:

«Դուրս եկաւ, ասում է Բորեանը, որ Ճեղկոմը չատ մեծ յոյսեր էր կապում «աշխատաւոր Թուրքիայի» հետ: «Հասարակական Թուրքիան» մէկից աւելի անգամներ ցոյց է տուել իր «համակրանքը» հայերին ու Հայաստանին: Նա դաշնագրով պարտաւորցրեց Խորհրդային Ռուսաստանին ճնշում գործ դնել Խորհրդային Հայաստանի վրայ»: (Բ. հատոր էջ 151):

Եւ, յիրաւի, խորհրդայնացումը ո՛չ մի նշանակութիւն չունեցաւ Թուրքերի համար. նրանք մաղաչափ անգամ չփոխեցին իրենց վերաբերումը դէպի հայերը, չպարպեցին Ալեքսանդրապոլը, վերջ չտուին հալածանքներին, բռնութիւններին, թալանին ու սպանութիւններին հայկական շրջաններում:

Հայաստանը գրաւուած էր ռուսական զօրքերով, Հայաստանում տիրում էր խորհրդային իշխանութիւն, Ալեքսանդրապոլում էլ Ճեղկոմ էր հաստատուած, Հայաստանի Ճեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում Թուրքերին եւ կաչւից դուրս գալիս ցոյց տալու համար, որ ինքը «Դաշնակներից» տարբեր բան է, Թուրքիային բարեկամ իշխանութիւն է, երեւանից բարեկամական հաւաստիացումներ էին ուղարկւում Անգորա.— այդ ամէնը չփոխեց Թուրքերի հակահայ ընթացքը: Ընդհակառակը, կարծես է՛լ աւելի գըրգռեց նրանց հայերի դէմ, որ նորից բռնել էին ռուսների փէչը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական աւանդական քաղաքականութիւնը: Երեւանից «եղբայրական» ոգով հեռագիրներ էին քաշւում Անգորա, իսկ Թուրք կառավարութիւնը պատասխանում էր, թէ ի՛նքը ոչ մի տարբերութիւն չի տեսնում «դաշնակ»ների եւ հայ բոլշեւիկների միջեւ: Եւ ռուսների աչքի առջեւ, Թուրք զօրքերը շարունակում էին դաժանօրէն ամայացնել Շիրակի հայկական գիւղերը, աւերել ու կողոպտել եւ հազարներով հայեր կոտորել:

Հայաստանի Ճեղկոմը բազմաթիւ առիթներով դիմեց Անգորա՝ աղաչանքով ու բողոքով՝ վերջ տալու համար Թուրք բանակի կողմից հայ խաղաղ բնակչութեան դէմ գործւող դաժանութիւններին, բայց ո՛չ մի յաջողութիւն չունեցաւ. Թուրքերը պարզապէս արհամարհում էին հայ բոլշեւիկներին, երեւի, վստահ, որ ռուսները չեն պաշտպանի նրանց:

Սոսկ նմոյշի համար առած բերենք Հայաստանի արտաքին գործավար Ա. Բէգզադեանի 21 յունւար հեռագիրը Թուրք կառավարութեան: Նա աւելի պերճախօս է, քան որեւէ խօսք:

---

*) Բորեանի գիրքը, Բ. հատոր, էջ 151:

«Անգարա, Տաճկաստանի Մեծ Ազգային Ժողովի կառավարութեան արտաքին գործերի կոմիսարին: Պատճէնը՝ Մոսկուա, արտ. գործ. ժող. կոմիսար Զիչէրինին, Տէր Գաբրիէլեանին: Պատճէնը՝ Բագու, արտ. գործ. ժող. կոմ. Հուսէյնովին, Աթաբէգովին.—

«Խորին վրդովմունքով հաղորդում է ձեզ Հայաստանի կառավարութիւնն այն անբնական երեւոյթների մասին, որոնք ստացել են մասայական եւ քրոնիկական բնոյթ եւ որոնք նկատւում են մեր սահմանակից շրջաններում: Խորհրդ. Հայաստանի կառավարութեան ստացած ստոյգ տեղեկութիւնների համաձայն, Կարսի, Ալեքսանդրապոլի գաւառներում եւ չէզոք գոտում ձեր զրաւման զօրքերի կողմից տեղի են ունենում խաղաղ աշխատաւոր բնակչութեան վրայ՝ անընդհատ բռնութիւններ, թալան եւ սպանութիւններ: Տաճիկ զօրքերի կողմից գրաւած բոլոր վայրերից ժողովւում են Խորհրդ. Հայաստանին պատկանող պետական գոյքերը, ապրի են ենթարկւում մասնաւոր անձերի գոյքն ու տնտեսութիւնը, քշւում են գիւղացիների անասունները եւ գրաււում է բնակչութեան վերջին պարենաւորումը: Այդպէս, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսւայ ընթացքում տարւած են գիւղատնտեսական մեքենաները, չոգեկառքերը, հեռագրի ու հեռախօսի կազմածները, օթոմոբիլները, մասնաւոր գոյքը եւայլն: Գաւառն ամայացած է, բոլոր անասունները քշւած: Նալբանդ կայարանում կենտրոնացած է հացահատիկների մեծ պաշար Տաճկաստան ուղարկելու համար, որպիսին խլւած է շրջակայ գիւղերում եւ այդպիսով գիւղացիները դատապարտւում են սովամահութեան:

«Աշխատանքի ընդունակ բոլոր 18–50 տարեկան հասակի տղամարդիկ բռնի քշւում են իրենց հայրենի տեղերից եւ խլելով նրանցից ալիւրի պարկերից կարւած ամբողջ վերնազգեստը՝ քշւում, տարւում են ձմեռւան ցրտին դէպի Սարըղամիշի եւ Էրզրումի շրջանները՝ ծանր ու բռնի աշխատանքների: Այնուհետեւ, Ղարաքիլիսայից եկող փախստականների խմբերին ձեր զրաւման զօրամասերի ներկայացուցիչները փորձում են ուղարկել Կարսի վրայով դէպի Էրզրում՝ նոյնպէս բռնի աշխատցնելու համար վերոյիշեալ պայմաններում:

«Կարսում, ձեր զօրքերի կողմից գրաււելուց յետոյ, առաջին երեք օրերը տեղի են ունեցել եւ մասայական բնոյթ են ստացել թալանը, բռնութիւններն ու սպանութիւնները, որոնք աւելի կրճատւած չափերով շարունակւում են մինչեւ օրս: Ձիչեալ գիւղերի ամբողջ վառելիքը գրաււած է, մինչեւ իսկ վառելիք չէ թողնւած նաեւ որբանոցներում: Տղամարդիկ քշւած են Սարըղամիշ եւ Էրզրում, պարենաւորումը խլւած է եւ տարւրը քշւած: Աղբուլաղի եւ Համամլուի շրջաններում, ասկեարների առանձին զինւած խմբեր ներս են խուժում հայ գիւղերը, թալանում եւ սպառնում են, իսկ կանանց բռնաբարում: Դեկտ. 13–ին Կուլինջի գիւղում տեղի ունեցաւ այդպիսի դէպք: Դեկտ. 26–ին տաճկական 36–րդ գնդի զօրամասի կողմից Քաֆթաւլի գիւղը գրաււելուց յետոյ, բանւորների թւում, նոյն գիւղացիներից ինը հոգի երիտասարդ կոմունիստներ՝ վարդ Տէր Գեւորգեան, Գեւորգ Մէ-

նասեան, Իգնատիոս Վարդանեան, Մարտին Մուրատեան, Ստեփաննոս Մուրատեան, Մանուէլ Ամանեան, Թումաս Ատոմեան, Յակոբ Կուսիկեան եւ Մանուէլ Ասլանեան, աշխատանքների վերջացնելուց յետոյ, գաղանաբար սպանուեցին նոյն գիւղի մի դարմանոցում: Նրանց դիակները դուրս բերուեցին Քաֆթառլիի բնակիչ Ստեփաննոս Բոյաճեանի սայլով, եւ ոճրագործութեան հետքերը ծածկելու համար՝ սպանուեց սայլի տէրը: Յունուար 13-ին, ասկեարների մի խումբ, առանց պատճառի, յարձակուեց Եգանեատ գիւղի վրա եւ կատաղի կրակ բացեց վրան:

«Չէզոք գօտու կից գիւղերում գիւղացի խաղաղ հայ բնակչութեան վրա կատարուած թալանը, բռնութիւնները եւ սպանութիւնները սովորական երեւոյթ են դարձել: Միայն չորրորդ կոմիսարիատի գաւառամասում ցուցակագրուած են աւելի քան երկու հարիւր այդպիսի սպանութիւններ:

«Երզնկայի բնակչութիւնը տեռորի է ենթարկուած, բնակիչների գիւղական ու տնային տնտեսութիւնն աւերուած է, անասունները՝ քշուած եւ հարկերի անուան տակ խլուած են բնակչութեան բոլոր կենսամթերքները: Զինուած զօրամասերի յարձակումները չէզոք գօտու վրա վերջերս քրոնիկական բնոյթ են ստացել եւ եթէ այդպէս չարունակուի, նոյն աւերումը տեղի կունենայ ինչ որ կատարուեց Ալեքսանդրապոլի շրջանում, ուր աւերուած են աւելի քան 50 գիւղեր:

«Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչութեան, չնայած այն հանգամանքին, որ հաղորդակցութիւնը դժուար է եւ կաշկանդուած մեր հեռագրի վրա դրուած ձեր կոնտրոլով (մինչեւ իսկ Ցեղկոմի վերաբերմամբ), այլ եւ այն հանգամանքին, որ ձեր կողմից չի թոյլատրուում մեր ընկերներին դուրս գալ Ալեքսանդրապոլից, բայց այնուամենայնիւ մեզ յաջողուեց անկասկածելիօրէն հաստատել, որ Ցեղկոմի իշխանութիւնը ձեր զօրքերով գրաւուած քաղաքում ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ֆիկցիա եւ կարող է իրական լինել այն չափով, ինչ չափով կարեւոր է զինուորական հրամանատարութեան:

«Զինուորական հրամանատարութեան կողմից յեղափոխական կոմիտէին ներկայացուած մշտական պահանջները եւ վերջնագրերը, որոնք ոչ մի առնչութիւն չունին Ցեղկոմի խնդիրների հետ, որպէս խորհրդային իշխանութեան օրգանի (ինչպէս բոնի աշխատանքների համար մարդիկ տալը, 10 հազար հրացանների պահանջը, ասկեարներ սպանողին յանձնելը, որ յայտնի չէ թէ ո՞վ է սպանել, ե՞րբ եւ կամ ո՞րտեղ եւայլն), որ ստորացրել է Ալեքսանդրապոլի յեղափոխական կոմիտէին եւ փաստօրէն դարձրել է նրան զէնք Ալեքսանդրապոլը դրաւող զօրամասերի ձեռքին,— Հայաստանի Ցեղափ. կոմիտէն ստիպուած է, այսուհետեւ, նման օրգանի գոյութիւնը բոլորովին աւելորդ համարել, քանի որ դա խորհրդային իշխանութեան վարկը ձգում է թէ՛ աշխատաւոր մասսաների եւ թէ՛ քաղաքացիների աչքում:

«Այնտեղ, ուր գոյութիւն ունի վերոյիշեալ տեսակի զինուորական գրաւում եւ ուր ստրկացում եւ աւերում են տիրում, այնտեղ չի կարող տեղի ունենալ բանուորա-գիւղացիական իշխանութիւն:

«Ցիշատակուած բոլոր փաստերի անկողմնակալ վերլուծութիւնը ակնե-

րեւ է դարձնում, որ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը չի կարող թոյլ տալ նման արարքներ այն հողամասերի վրա, որոնք իրաւամբ նա ճանաչում է իր սեփականութիւնը, որովհետեւ դրանց նպատակն է յայտնապէս երկիրը անտեսապէս աւերել եւ նրա բնակչութիւնը դատապարտել քաղցի եւ արհեստական ոչնչացման:

«Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, այդպիսով, ստիպուած է նայել ձեր հրամանատարութեան գործողութիւնների վրա այն հայեցակէտով, որ դրանք բերում են անխուսափելի արիւնաքամում եւ լիակատար անտեսական քայքայում այն շրջաններում, որպիսիները պատերազմի ժամանակ, տաճկական ղէնքի յաղողութեամբ, ընկել են եւ դտնւում են նրա ժամանակաւոր տիրապետութեան տակ եւ որոնք պէտք է անցնեն մի այլ պետութեան: Ձեր զօրքերի մէջ գտնւած կարդապահութեան հանրածանօթ փաստը եւ ասկեարների ունեցած անկասկած համակրանքը դէպի խորհրդային իշխանութիւնը ենթադրել չեն տալիս, որ վերը յիշատակւած բռնութեան դէպքերը ինքնակամ գործողութիւններ են, որով ուժեղանում է կատարուող անկարգութիւնների նշանակութիւնը:

«Խորհրդային Հայաստանի աշխատաւոր բնակչութեան անունից, որ խորհրդային իշխանութիւնն ընդունելուց յետոյ ցոյց է տւել իր ջերմ ցանկութիւնը ապրելու յեղափոխական Տաճկաստանի հետ խաղաղութեամբ եւ եղբայրաբար եւ որ միանգամ ընդմիշտ ազատւել է իր հայրենիքի նացիոնալիզմի լծից, ես ստիպւած եմ մատնանշել, որ վերոյիշեալ փաստերը, որպէս սպառնալից նշան, կարող են արգելք լինել Խորհրդային Հայաստանի եւ ազատուող Տաճկաստանի յեղափոխական խնդիրների իրականացման:

«Վիապէս հաւատացած, որ ցոյց տրւած փաստերի վերաբերութեամբ մեր մէջ տարակարծութիւններ չեն լինի, իմ կառավարութիւնը չի կասկածում, որ Տաճկաստանի կառավարութիւնը չի յապաղի արմատական միջոցներ ձեռք առնել դադարեցնելու նման փաստերը, որին ամենաշուտ կերպով կարելի է հասնել միայն հեռացնելով զօրքերը Ալեքսանդրապոլի դաւառից եւ Կարսի հիւսիսային եւ արեւելեան շրջաններից: Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը լիովին հաւատացած է, որ նրա արդարացի պահանջները չեն կարող չճանաչւել Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի բարեկամ կառավարութեան կողմից, եւ շուտափոյթ պատասխանի է սպասում ձեր կառավարութիւնից՝ այդ աննորմալ կացութեան վերջ տալու համար ձեռնարկած քայլերի մասին, որոնք պէտք է հաստատեն նրա անկեղծ մտադրութիւնների զգացմունքները դէպի իր հարեւան խորհրդային իշխանութիւնը: 21 յունւար, 1921:

«Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդ. կոմիսար՝ Ա. ԲԷԳՋԱԴԵԱՆ»:

Այս հեռագիրն էլ արժանացաւ նոյն բախտին, ինչպէս սրանից առաջ եւ յետոյ տրւած միւս հեռագիրները: Թուրքերը ո՛չ մի կարեւորութիւն չտւին նրան: Փաստօրէն մատը մատին չդարկեց եւ Մոսկուան՝ սանձահարե-

լու համար թուրքերին: Եւ հասկանալի է, թէ ինչ հիասթափութիւն եւ յուսահատութիւն առաջ եկաւ հայ ժողովրդի մէջ:

«Խորհրդային իշխանութիւնը, գրում է Բորեանը, ոչ մի գործնական քայլ չառաւ հեռացնելու համար թուրքերին Հայաստանից, այն ինչ ժողովուրդը համոզուած էր, որ խորհրդայնացումից եւ Խորհրդ. Ռուսաստանի հետ բարի դրացիական յարաբերութիւնների հաստատումից յետոյ, թուրքերը այլեւս անելիք չունէին Հայաստանում, եւ Ռուսաստանը թոյլ չի տայ թուրքերին դրաւելու Հայաստանի հողերը, որոնց վրա թուրքերը ոչ մի իրաւունք չունէին: Ժողովուրդը «համոզուած» էր, որ թուրքերը եկել են Խորհրդ. Ռուսաստանի գիտութեամբ եւ օգնութեամբ, որպէսզի տապալեն դաշնակցականների կառավարութիւնը եւ Խորհրդ. Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ: Մինչդեռ պարզուեց, որ թուրքերը եկել են իբրեւ նւաճողներ, եւ երկրի վիճակը վատթարացաւ, — մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանութեան «գալուց» Հայաստան... Թուրքերի աւանդական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ եւ հայերի պատմականօրէն հաստատուած ոչ-բարեկամական յարաբերութիւնները թուրքերի հանդէպ ստեղծեցին անտանելի ծանր մթնոլորտ հայկական զանգուածների համար, եւ նրանք ազատութիւն էին սպասում: Բայց միայն սպասում էին, որովհետեւ Քեղկոմի եւ Ռուսաստանի քաղաքականութիւնը, որ հիմնուած էր արեւելեան օրիենտացիայի վրա, ցոյց տուեց ժողովրդին, որ թուրքերը չպիտի հեռանան: Ժողովուրդը ջղայնանում էր, եւ հակայեղափոխական քարոզչութիւնը նպաստաւոր հող էր գտնում նրա մէջ»:*)

Հայ բոլշեւիկները, ի հարկէ, այնքան անխելք ու անմիտ չէին, որ չըմբռնէին իրենց վիճակի անյոյս լինելը: Նրանք գիտէին, որ այն ժամանակ, երբ Քեազիմ Կարաբէքիրի զօրքերը անպատիժ քարուքանդ էին անում հայկական գիւղերը եւ բնակչութիւնը, Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչները Չիչերինի հետ բանակցութիւններ էին վարում Մոսկուայում, որոնք յանգեցին 1921 թ. մարտ 16-ի «բարեկամութեան եւ եղբայրական դաշնագրութեան», որ Հայաստանի համար անհամեմատ աւելի ծանր պայմաններ էր պարունակում, քան նոյնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Այսպէս, Ալեքսանդրապոլի դաշնագրով «Կարսի նահանգը եւ Սուրմալուն համարւում էին վիճելի մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքւէ՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների»: Մոսկուայի դաշնագրով այդ նահանգները վերջնականապէս եւ առանց պայմանի յանձնւում էին Թուրքիային:

Ալեքսանդրապոլի դաշնագրով «Շարուրն եւ Նախիջեւանը ժամանակաւորապէս օժտւում էին ինքնավարութեամբ՝ գտնելով Թուրքիայի հովանաւորութեան տակ, մինչեւ որ որոշւի նրանց բախտը»: Մոսկուայի դաշնագրով Շարուրն ու Նախիջեւանը յանձնւում էին Ադրբէջանին, եւ այս վերջինը իրաւունք չունէր փոխանցելու մի երկրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին:

---

*) Հատոր Բ., էջ 135-136:

Մոսկւայի դաշնագիրը վերջը վաւերացուեց եւ կարսի դաշնագրով Անդրկովկասեան հանրապետութիւնների եւ Թուրքիայի մէջեւ, Խորհրդ. Ռուսաստանի խնամակալութեան ներքոյ:

Եթէ աւելացնենք, որ հետագային, Մոսլինեան սահմանադրութեամբ, Ախալքալաքն ու հայկական Լոռիի մի մասն էլ վերջնականապէս յանձնուեցին Վրաստանին եւ հայկական Ղարաբաղը՝ Ազրբէջանին, պատկերը կը լինի կատարեալ:

Ահա այս ներքին եւ արտաքին, առարկայական ու ենթակայական պատճառները, հաստատուած հէնց բոլշեւիկեան վկայութիւններով, փաստերով ու վաւերագրերով, կարճ ժամանակամիջոցում, ընդհանուր հիասթափութիւն եւ զայրոյթ առաջ բերին հայ ժողովուրդի մէջ եւ, իւ վերջոյ, յանգեցին համաժողովրդական տարերային ապստամբութեան — Փետրուար 18ին:

Բորեանը շատ ճիշդ է դատում, երբ գրում է, թէ արտաքին քաղաքականութեան եւ, մասնաւորապէս, Թուրքիայի խնդրում կրած պարտութեան եւ ներքին սխալների եւ անուժութեան հետեւանքով էր, որ Ցեղկոմը մատնեցաւ ձախողանքի: «Այդ բոլորը անմիջապէս մի չարք բախումներ առաջ բերեց բնակչութեան հետ եւ յանգեց այն բանին, որ Հայաստանի խորհրդայնացումից երկու եւ կէս ամիս յետոյ, հակայեղափոխութիւնը, օգտագործելով իրեն համար ստեղծուած չափազանց նպաստաւոր պայմանները՝ ապստամբութիւն առաջ բերեց երկրում: Ցեղկոմը հասկանալով իր անզօրութիւնը օգնութիւն խնդրեց Խորհրդային Ռուսաստանից եւ փախուստի մէջ փնտռելով իր փրկութիւնը, փոքրաթիւ զօրամասի պահպանութեան տակ, Հայաստանի փրկութեան դործը փոխանցեց կարմիր բանակին»*):

*) Բագրամ, հատոր Բ., էջ 156:

ԳԼՈՒԽ ԼԵ.

ՓԵՏՐԻԱՐ 18

Այսպէս, ուրեմն, երկու եւ կէս ամիս բաւական եղաւ, որպէսզի Ցեղկոմի իշխանութիւնը բոլորովին վարկաբեկւի ժողովրդի աչքում եւ Հայաստանում տեղի ունենայ յեղափոխութիւն:

Բոլշեւիկները յամառօրէն պնդում են, թէ այդ յեղափոխութիւնը նախապատրաստուած էր Դաշնակցութեան կողմից: Միծաղելի է: Նախորդ գլխում առաջ բերած փաստերը աւելի քան բաւական են հերքելու համար բոլշեւիկների այս պնդումը: Առողջ տրամաբանութիւնն էլ չի կարող չընդունել, որ երկու եւ կէս ամիս առաջ առանց դիմադրութեան, իշխանութիւնը բոլշեւիկներին յանձնող Դաշնակցութիւնը, այն ժամանակւայ պայմաններում, չէր կարող իշխանութիւնը վերագրաւելու նպատակ ունենալ: Եթէ, դեկտ. 2–ին իշխանութիւնը բոլշեւիկներին փոխանցելիս, Դաշնակցութիւնը մտածէր չուտով իշխանութիւնը խլել Ցեղկոմի ձեռքից, ինչ իմաստ պիտի ունենար նրա ընթացքը դեկտ. 2–ից սկսած մինչեւ փետրուար: Նա ինչո՞ւ պիտի թոյլ տար, որ իր գործօն ուժերը հեռանան կամ հեռացւեն Հայաստանից:

Դեկտ. 1–ին Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրօն որոշեց, որ քաղաքացիական բարդութիւնների առիթ չտալու համար, Բիւրոյի անդամները հեռանան երկրից, եւ Հայաստանում մնայ միայն Ս. Վրացեանը, իբրեւ կուսակցութեան ներկայացուցիչ եւ վերջին կառավարութեան նախագահ: Բիւրոյի նոյն որոշումով Հայաստանից պէտք է հեռանային նաեւ մի շարք նախկին նախարարներ եւ պատասխանատու գործիչներ, որոնց ներկայութիւնը երկրում Ցեղկոմին կարող էր հաճելի չլինել: Եւ նոյն օրը Երեւանից հեռացան, Զանգեզուրի վրայով Պարսկաստան անցնելու համար, նախկին զինուորական նախարար՝ Ռուբէն Տէր Մինասեանը, գաղտնի ոստիկանութեան պետ՝ Լեւոն Քալանթարեանը եւ ուրիշներ: Յաջորդ օր, Վրաստանի վրայով արտասահման անցնելու համար, Երեւանից մեկնեցին նախկին վարչապետ՝ Համօ Օհանջանեանը, նախկին նախարար՝ Ա. Չիլինգարեանը (Ռ. Դարբինեան), նախկին նախարար՝ Ս. Արարատեանը, Ազգային անդամ՝ բժ. Ց. Տէր-Դաւթեանը, Վ. Նաւասարդեանը, Երեւանի պարէտ Ա. Շահխաթունին եւ

ուրիշներ, որոնց մի մասին միայն յաջողուեց հասնել Թիֆլիս, իսկ միւսները՝ Համօ Օհանջանեան, Ա. Զիլինկարեան, բժ. Յ. Տէր-Դաւթեան, Վ. Նաւասարդեան եւայլն, ձերբակալուեցան, յետ բերուեցան Նաստասցուցիչ պայմաններում եւ նետուեցան Երեւանի բանտը: Եթէ Դաշնակցութիւնը իշխանութիւնը վերագրաւելու մասին մտածէր, թոյլ կուտա՞ր, որ նման դէպքեր տեղի ունենային, երբ դեռ ինք էր իշխանութիւնը:

Անհեթեթութիւն չէ՞ ենթադրել, որ իշխանութիւնը վերագրաւելու պատրաստուող Դաշնակցութիւնը, որի ձեռքին ամփոփուած էր պետական ամբողջ հարստութիւնը եւ նիւթական ու մարդկային ուժերը, անվարան կերպով, օրինական կարգով Ցեղկոմին յանձնէր այդ ամենը: Ցեղկոմի նախագահ՝ Ս. Կասեանի ձեռքով ստորագրուած ստացականները պետական գոյքերի, դրամների եւ թղթերի փոխանցման մասին, որոնք պահուած են Հայաստանի կառավարութեան արխիւներում, վկայ են այդ մասին:

Ցեղկոմի դէմ ապստամբութիւն նախապատրաստող Դաշնակցութիւնը այնքան կարճամի՞տ էր, որ թոյլ տար, որպէսզի Հայաստանի ժողովրդի պաշտամունքի առարկան՝ Դրօն իր լաւագոյն սպաների հետ, հեռացւէր Հայաստանից, իբրեւ պատանդ բոլշեւիկների ձեռքում, կամ թոյլ տար, որ հանրապետական բանակի 1200 զինուորականներ աքսորւէին երկրից: Կամ, վերջապէս, հայ մտաւորականութեան ամենալաւագոյն դէմքերը բանտարկւէին անարդել: Դաշնակցութիւնը ի վիճակի էր բոլշեւիկեան այդ արարքների մեծ մասի առաջը առնելու նոյնիսկ զէնքի ուժի դիմելով, բայց նա խուսափում էր նման քայլերից, զգուշանալով՝ որ երկիրը քաղաքացիական կռիւների ասպարէզ չդառնայ: Մէկից աւելի անգամներ Ս. Վրացեանը, կուսակցութեան ներկայացուցչի եւ նախկին վարչապետի հանդամանքով, դիմումներ արաւ Զեկայի պետ Աթարբէկեանին, Ցեղկոմի նախագահ Կասեանին, Ցեղկոմի անդամ Ա. Մռաւեանին, զինուորական կոմիսար Աւիսին՝ յորդորելու համար նրանց, որ վերջ տան հալածանքներին, այլապէս երկիրը կարող է մատնուել քաղաքացիական կռիւների քաոսի: Նման դիմում կատարեց, գրաւոր զեկուցումով, եւ Հայաստանի անդրանիկ վարչապետ՝ Ց. Քալանթարեանին: Ամէն անգամ էլ պատասխանը եղաւ նոյնը. «Հայաստանը պէտք է անցնի քաղաքացիական կռիւների բովից, պէտք է բուրժուազիայի արիւնը հոսի պրոլետարիատի վերջնական յաղթանակը ապահովելու համար»: Եւ արիւնը հոսեց: Դրօյի աքսորից, բայց մանաւանդ, Հայաստանի բանակի սպաների, տաժանելի պայմաններում, Թուրաստան տարուելուց յետոյ, երբ Հայաստանի բանտերը եւ Զեկայի զնդանները բերնէ բերան լեցւած էին բանտարկեալներով, երբ բռնագրաւումները եւ ապօրինութիւնները ծայրայեղ աստիճանի հասան, երկրի բոլոր կողմերում ժողովուրդը յուսահատութեան մատնուած՝ սկսեց վրդովումի նշաններ ցոյց տալ: Տեղի ունեցան իշխանութիւններին ընդդիմութեան դէպքեր, նոյնիսկ բռնագրաւումների կամ ձերբակալութիւնների համար եկող կառավարական գործակալների սպանութիւններ: Այստեղ եւ այնտեղ, գաւառներում, առաջ եկան գաղտնի խմբակներ, որոնց գլուխը անցան բանտարկութիւնից խուսափած տեղական գործիչներ, խմբապետներ,

կամ զինուորականներ: Մայրաքաղաքում էլ կազմւել էր նման մի մարմին Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անունով: Այդ բոլոր գաղտնի, իրարից անկախ կազմւած խմբակների նպատակն էր ժողովուրդի պաշտպանութիւնը Ցեղկոմի գործակալների բռնութիւններից: Զուտ ժողովրդական, տարերային մի շարժում էր՝ ինքնապաշտպանութեան բնազդից մղւած: Ժողովրդական ցասումի բաժակը առաւ լեցւած էր եւ առիթ էր պէտք, որպէսզի պոռթկար:

Առիթը չուշացաւ: Փետրւար 9-ի լոյս 10-ի գիշերը տեղի ունեցան զանգւածային նոր ձերբակալութիւններ: Ամբողջ գիշեր, փողոցները հսկողութեան տակ առնւեցին եւ ինքնաշարժներով ու հետիոտն, խիստ հսկողութեան տակ, Զեկայի շէնքը փոխադրւեցին աւելի քան 200 ձերբակալւածներ: Սրանց թւում էին եւ Հայաստանի անդրանիկ վարչապետ եւ խորհրդարանի փոխ-նախագահ՝ Ե. Քաջազնունին, նշանաւոր գրող եւ խորհրդարանի երկրորդ փոխ-նախագահ Լեւոն Շանթը, ականաւոր քննադատ՝ Նիկոլ Աղբալեանը եւ բազում ուրիշներ, ամէնքը քաղաքացիական պարտականութիւնները կատարող, օրինապահ մարդիկ:

Արդարացուցիչ ոչ մէկ պատճառ չկար Ցեղկոմի այս նոր վայրագութեան համար: Փետրւար 10-ի առաւօտեան Երեւանը սուգի մէջ էր: Ժողովուրդի վրդովմունքը սահման չունէր:

Ս. Վրացեանը մի անգամ եւս փորձեց զգաստութեան հրաւիրել Ցեղկոմին: Նախագահ Ս. Կասեանը, հիւանդութիւն պատրւակելով, խուսափեց տեսակցութիւնից: Նրա փոխանորդ Աբգանազ Մռաւեանը զարմանք յայտնելով, թէ գիշերը զանգւածային ձերբակալութիւններ են տեղի ունեցել եւ Շանթն ու Աղբալեանն էլ բանտարկւել են Զեկայում: Իր ասելով՝ մի քանի աննշան մարդիկ ձերբակալւած պիտի լինէին:

Ինչ վերջը, սակայն, ստոյգ աղբիւրից յայտնի դարձաւ, որ Բագւից հեռագրական հրաման է ստացւել ձերբակալելու նաեւ Ս. Վրացեանին եւ նրա կառավարութեան դաշնակցական անդամներին: Սրանով պարզւում էր եւ գիշերւայ զանգւածային բանտարկութիւնների իմաստը. Բագւի հրահանգով՝ նոր փորձութիւններ էին պատրաստւում Հայաստանի դէմքին: Ս. Վրացեան եւ իր կառավարութեան դաշնակցական անդամները չյանձնւեցին Զեկային...

Փետրւար 9-10 գիշերւայ ձերբակալութիւնները աննկարագրելի յուզում առաջ բերին մայրաքաղաքի եւ գաւառների ժողովրդի մէջ: Երկրի զանազան կողմերում, իրարից անկախ, ծայր տւին տարերային ըմբոստացումներ Ցեղկոմի իշխանութեան դէմ: Տեղական այս շարժումները հետզհետէ միացան Երեւանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի միջոցով եւ ընդհանուր բնոյթ ստացան:

Ապստամբութեան ազդանշանը տւին Արագածի փեշերի ասպնջականները, որոնք անւանի խմբապետների ղեկավարութեան տակ՝ դուրս քշեցին իրենց գիւղերից Ցեղկոմի գործակալներին եւ գրաւեցին Աշտարակը, ապա էջմիածինը: Միաժամանակ ապստամբութիւնը ծայր տւեց Բաշ-Գառնիի շրջա-

նում՝ տարածելով դէպի Կոտայք եւ Ախթա։ Ամէն տեղ ժողովուրդը, մէկ մարդու պէս ոտքի ելաւ տապալելու համար Ցեղկոմի առելի բռնակալութիւնը։

Փետրուարին, Կոտայք*) Զառ գիւղում, Երեւանի Փրկութեան կոմիտէի նախաձեռնութեամբ հաւաքել տեղի է ունենում մի խորհրդակցութիւն, ուր որոշւում է ընդհանուր ապստամբութիւն առաջ բերել։ Իրապէս ընդվզումը Ցեղկոմի դէմ արդէն սկսւած էր. Զառի ժողովը անզօր մի ճիգ էր ալեկոծւած տարերքին որոշ ուղղութիւն տալու։

Փետրար 16–17ին մայրաքաղաքը ամէն կողմից շրջապատւած էր ապստամբ ժողովուրդով։ Ցեղկոմը յուսահատական դիմադրութեան փորձեր արաւ, բայց անյաջող։ Երեւանի բանտում փետր. 16–17–ի գիշերները Զեկայի կողմից տեղի ունեցան բանտարկեալների վայրագ սպանութիւններ, որոնց զոհ պիտի երթային հայ մտաւորականութեան լաւագոյն դէմքերը, եթէ Ցեղկոմը մի քանի օր եւս կանդուն մնար։ Բայց, ժողովրդական ապստամբ ուժերի սպառնալիքի տակ ղլուխը կորցրած՝ Ցեղկոմը դիմեց փախուստի, լեցնելով Երեւանի կայարանում դտնուղ դնացքները իր տրամադրութեան տակ եղած զինուորական ուժերն ու համայնավար պաշտօնէութիւնը, պետական դանձարանից յափշտակւած գումարները եւ պետական պահեստներից հաւաքած մթերքները և դէնքն ու ռազմամթերքը, ղրահապատ երկու դնացքի պաշտպանութեան տակ փախաւ դէպի Ղամարլու միանալու համար Շարուրի բարեկամ թուրքերի հետ։

Փետրար 18–ը յարութեան օր եղաւ Հայաստանի ժողովուրդի համար։ Վաղ առաւօտեան ազատագրւած չրջաններից Երեւան իջան Ախթայի, Կոտայքի եւ Բաշ–Գառնիի ժողովրդական ապստամբ ուժերը կուռօ Թարխանեանի եւ խմբապետ Մարտիրոսի դեկավարութեան տակ։ Թաքստոցից դուրս եկան վերջին կառավարութեան անդամները։ Զեկայի ու բանտի դռները բացւեցան, եւ հազարաւոր բանտարկեալներ ազատութիւն ստացան։ Կարծես հրաշագործ մի ձեռքով Երեւանի բոլոր չէնքերը զարդարւեցին եռագոյն դրօշակներով եւ գոյնզգոյն գորգերով ու կարպետներով։ Ժողովուրդը խռնւած էր փողոցներում նմանը չտեսնւած խանդավառութեան մէջ, եւ ցնծութեամբ անվերջ «կեցցէ»–ներով եւ ծափահարութիւններով ողջունում էր օրւայ հերոսներին եւ բանտից ու Զեկայի նկուղներից ազատւածներին։ Ծանօթ եւ անծանօթ համբուրւում էին եւ չնորհաւորում ազատութեան օրը։

Մինչ այդ Երեւանը մաքրւում էր բոլշեւիկներից։ Ցեղկոմը, լուսաբացին վերջին վամփուշտները պարպելով՝ փախուստի էր դիմել Շարուրի ուղղութեամբ՝ տանելով իր հետ նաեւ զինուորական մի ռատիոկայան, որից հաղորդում էր Ազրբէյջան, իր կուսակիցներին, թէ՝

«Մի խումբ մաւզերիստներ, աւազակապետ Վրացեանի դլխաւորութեամբ, դաւադրութեամբ տիրելով Երեւանի ռադիոկայանին, չինծու լուրեր էին տարածում Հայաստանում, իբր թէ տեղի ունեցած յեղաշրջման մասին...»։

*) Տես յաւելւած։

Սա նախազգուշական միջոց էր ապագայ ինքնարդարացման համար եւ միաժամանակ պատասխան Երեւանի պետական ռադիոկայանի հաղորդագրութիւններին Հայաստանում տեղի ունեցող դէպքերի մասին:

Փետրուար 18-ի առաւօտեան Հայաստանի խորհրդարանի շէնքում, խանդավառ ցոյցերից ու ճառախօսութիւններից յետոյ, տեղի ունեցաւ Երեւանի Փրկութեան Կոմիտէի ու նախկին կառավարութեան անդամների, խորհրդարանի նախագահութեան եւ անդամների, ինչպէս եւ անհատ պատասխանատու գործիչների եւ ապստամբների շրջաններից հասած վարիչների մասնակցութեամբ մի ժողով, ուր որոշւեց կեանքի կոչել Վրացեանի կառավարութիւնը՝ լրացնելով նոր անդամներով, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անունով: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, որ դարձաւ Հայաստանի յեղափոխական շրջանի գերագոյն իշխանութիւնը, բաղկացած էր հետեւեալ անդամներից· Ս· Վրացեան՝ նախագահ եւ արտաքին գործերի ու գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի վարիչ, Ա· Յովհաննիսեան՝ զինւորական գործերի վարիչ, Կ· Սասունի՝ ներքին գործերի վարիչ, Հ· Տէրտէրեան՝ ելեւմտական գործերի վարիչ, Յ· Տէր-Յակոբեան՝ պարենաւորման վարիչ, բժ· Ս· Եղիազարեան՝ խնամատարութեան վարիչ: Յետոյ աւելացան նաեւ Ա· Խոնդկարեան՝ արդարադատութեան վարիչ, Վ· Մինախորեան՝ պարենաւորման, ռազմաճակատ մեկնած Յ· Տէր-Յակոբեանի տեղը: Աւելի ուշ երկու ներկայացուցիչներ Վասպուրականի Զինւորական Մարմնի կողմից՝ Ս· Մեսրոպեան եւ Ա· Մաքսապետեան:

Այսպիսով՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն իր մէջ մարմնացնում էր նախկին կառավարութիւնը եւ յեղափոխական իշխանութիւնը:

Բանակի ընդհանուր հրամանատար նշանակւեց Գնդ· Կուռօ Թարխանեանը—Սպարապետ Սուրէն:

Կազմակերպւելուց անմիջապէս յետոյ, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն ժողովրդին ուղղեց, թիւ 1, հետեւեալ կոչը·

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ·

«Բոլշեւիկեան իշխանութիւնը Հայաստանում վերացւած է:

«Մինչեւ կառավարութեան կազմւելը՝ ամբողջ իշխանութիւնը գտնւում է Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ձեռքը: Ամէն քաղաքացի պէտք է պաշտպանի կարգն ու Օրէնքը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կողմից հրատարակւած բոլոր կարգադրութիւնները խիստ կերպով պէտք է կատարւեն քաղաքացիների կողմից:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս· ՎՐԱՑԵԱՆ

1921 Թ· Փետր· 18
ԵՐԵՒԱՆ

Այնուհետեւ սկսւեց յեղափոխութեան ղեկավարների եւ ամբողջ երկրի փոթորկայոյզ, տենդոտ աշխատանքը հայրենիքի եւ ազատութեան պաշտպա-



Նստած ձախէն աջ՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳԻՍԻԱՆ եւ ՍՊԱՐԱՊԵՏ ԿՈՒՅՕ
Ոտքի՝ ՆԱԹԱՆ ՏԷՐ ԱՍԱՏՐԵԱՆ եւ ԼԵՒՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԲԱՇ – ԱԲԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄ

նութեան համար, որ Երեւանում տեւեց մինչեւ ապրիլ 2 եւ ամբողջ Հայաստանում՝ մինչեւ յուլիս 10:

Առաջին երկու օրերը, փետր. 18–19, անցան իշխանութեան եւ բանակի կազմակերպութեան, ուժերի դասաւորութեան եւ ընթացիկ բազմազան աշխատանքների մէջ: Անմիջապէս նշանակուեցին ճակատների հրամանատարներ եւ միջոցներ ձեռք առնուեցին հետապնդելու փախչող թշնամուն:

Ցեղկոմը, ինչպէս ասացինք փախել էր Շարուր–Նախիջեւանի ուղղութեամբ, թուրքերի մօտ, բռնութեամբ տանելով հետը երկու զրահապատ գնացքները, 2րդ եւ 3րդ հայկական գնդերը, հրետանին, քաղաքում գտնուող ռուսական զօրամասերը, բոլոր կոմունիստներին, մի ամբողջ գնացք ռազմամթերք ու պարէն, որ առաջուց լեցրել էին վագոններն ու բեռնակիր ինքնաշարժները: Ամրանալով Շարուրի գրանը եւ Արարատ կայարանի մօտ, բոլշեւիկները ճակատ բացին Երեւանի ուղղութեամբ:

Մի կողմից, հիւսիսից, տեղական ռուս եւ թուրք պինւած դիւղացիների եւ Ադրբէյջանից հասած բոլշեւիկների ու կարմիր բանակայինների զբօսին անցած, Երեւանի դէմ ճակատ էր բացել Հայաստանի Զէկայի պետ Մ. Աթաբէկեանը:

Հայրենիքի Փրկութեան կոմիտէն չտապով միջոցներ ձեռք առաւ թէ այդ ճակատների եւ թէ, առհասարակ, երկրի ընդհանուր պաշտպանութեան համար:

Միաժամանակ կարգադրութիւններ եղան մայրաքաղաքի եւ դաւառների ներքին կեանքի ապահով ընթացքը երաշխաւորելու համար: Հրամանագրուեց, որ բոլոր պաշտօնեաները մնան իրենց տեղը: Պետական եւ հասարակական բոլոր հիմնարկութիւնները անշեղ կատարեն իրենց գործը. արգիլուեց ոգելից ըմպելիների վաճառքն ու գործածութիւնը, հրաւէր ուղղուեց հասարակութեան աշխատիլ ներքին կարգի վրա և ձերբակալել ու իշխանութեան յանձնել բոլշեւիկներին ու հակապետական արարք ցոյց տուողներին, պատսպարել եւ կերակրել դրսից եկած մարտիկներին. նշանակուեցին քաղաքի նոր պաշտօնեաներ, վերակազմուեցին տնային կոմիտէները, որոնց յանձնուեց հսկողութիւնը քաղաքի ներքին կարգապահութեան վրա. արգիլուեց դիշերը, ժամը 7–ից յետոյ, առանց արտօնութեան փողոց դուրս գալը եւայլն: Մայրաքաղաքը եւ ամբողջ երկիրը յայտարարուեցին պինւորական վիճակի մէջ, յեղափոխական օրէնքի ներքեւ:

Հայրենիքի Փրկութեան կոմիտէն, առաջին օրն իսկ, մի շարք ռադիոհեռագիրներով չանաց արտաքին աշխարհի առջեւ ճշգրիտ պատկերով ներկայացնել Հայաստանում տեղի ունեցած դէպքերը: Երեւանի ռադիոկայանից, Բասրայի վրայով, քաշուած ընդարձակ հեռագրով Փարիզ, Հ. Հ. Պատւիրակութեան հաղորդուեց Փետր. 18–ի յեղաշրջման մասին: Նոյն բովանդակութեամբ հեռագիրներ ուղղուեցին մեծ պետութիւնների կառավարութիւններին՝ Փարիզ, Լոնդոն, Հռոմ, Ազգերի Դաշնակցութեան, Ժընեւ: Հեռագիրներ քաշուեցին Մոսկւա Լենինին եւ Զիչերինին՝ ներկայացնելով Հայաստանի Փետրուարեան յեղաշրջման իսկական բնոյթը, որ Ցեղկոմի բռնութիւննե-

բից յուսահատ՝ աշխատաւոր ժողովրդի տարերային պոռթկում էր եւ ուղղուած չէր Ռուսաստանի կամ ընդհանրապէս Խորհրդային իշխանութեան դէմ։ Հայր. Փրկութեան կոմիտէն խնդրում էր Լենինի եւ Չիչերինի բարեացակամ միջամտութիւնը եւ Հայաստանի անկախութեան ճանաչումը։

Ինչ վերջը, օգտւելով ստեղծած առիթից, Հայրենիքի Փրկութեան կոմիտէն ընդարձակ զեկուցում ուղարկեց Հ. Հ. Պատւիրակութեան Փարիզ*)։

Թէ այս զեկուցումն եւ թէ վերջը քաշած հեռագիրներն ու կատարած դիմումները մնացին ձայն բարբառոյ յանապատի. Հայաստանը բոլորովին կտրւած էր դրսի աշխարհից։ Պատասխանեց միայն Վրաստանի կառավարութիւնը, որ վերջին օրերն էր ապրում։

Փետր. 18–ին, Հայրենիքի Փրկութեան կոմիտէն հեռագրեց նաեւ Վրաստանի կառավարութեան նախագահ Ժորդանիային, Հայաստանում տեղի ունեցած յեղաշրջման մասին՝ խնդրելով վերահաստատել Տ. Բէգզադեանին Հայաստանի դեսպանի իրաւունքների մէջ եւ արտօնել նրան եւ մի շարք հայ դործիչներին խօսելու ռադիոյով Երեւանի հետ։

Ինչպէս վերջը յայտնի եղաւ, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Վրաստանում սկսւել էին հալածանքներ ու բռնութիւններ հայերի դէմ, որոնք յիշեցնում էին հայ–վրացական պատերազմի օրերը։ Հայրենիքի Փրկութեան կոմիտէի հեռագրին կառավարութիւնը չի հաւատացել, կարծելով, թէ բոլշեւիկ կասեանն ու դաշնակցական Վրացեանը միացած՝ դաւ են լարում Վրաստանի դէմ։ Երեք օր վերջը միայն, փետր. 21–ին, Թիֆլիսում համոզւել են, թէ իսկապէս բոլշեւիկեան իշխանութիւնը տապալւել է Հայաստանում։ Եւ դրանից յետոյ երեք օր անցած, Երեւանում ստացւեց պատասխանը, այն էլ ոչ թէ Ժորդանիայից, այլ արտաքին գործոց նախարարի օգնականի ստորագրութեամբ։

Երեւան, Թիֆլիսից, 74, Հայր. Փրկ. Կոմիտէի Նախագահ Վրացեանին.

«Ձերմ շնորհաւորութիւններ Ձեր երկրի օտար լծից ազատւելու առթիւ։ Մեզ հաճելի է իմանալ, որ հայ ժողովուրդը մասնակից չէ բոլշեւիկների մեր դէմ լարած պատերազմին եւ որ դուք հաստատ վճռել էք պաշտպանել Ձեր երկրի անկախութիւնը։ Վրաստանի կառավարութիւնը առաջարկում է Ձեզ անմիջապէս դուրս գալ մեզ հետ միասին եւ հարւածել բոլշեւիկների թիկունքին. այդ են պահանջում երկու ժողովուրդների շահերը։ Վրաց ժողովուրդը ամբողջութեամբ ոտքի է ելել պաշտպանելու իր իրաւունքները. բոլշեւիկեան զօրքերի բոլոր գրոհները երէկ եւ այս դիշեր յետ են շպրտւած մեծ կորուստներով թշնամու համար։ Ֆրանսիան վերջնականապէս բռնեց մեր կողմը եւ նրա նաւատորմը ամբակոծում էր Մէխադիրի անցքը բռնել ձգտող բոլշեւիկ զօրքերին։ Մահմեդականները ամբողջապէս հակառակ են բոլշեւիկներին եւ Անդրկովկասի շատ վայրերում, մեզ հետ միասին, ապստամբութիւն են

*) Զեկուցման բնագիրը գրւած Յ. Քաջազնունիի ձեռքով։ Գտնւում է Հ. Հ. Պատւիրակութեան թղթերում։ Տե՛ս յաւելւած։

բարձրացրել: Սկսած է կովկասեան ժողովուրդների ընդհանուր արշաւանք մոսկովեան լծից ազատուելու եւ իրենց կեանքի համերաշխ շինարարութեան համար: Ինդրում ենք անմիջապէս դիմել համապատասխան միջոցների խելքի բերելու համար բոլշեւիկների կողմից մոլորեցւած հայ դիւղերը: Ձեր ներկայացուցչութիւնը Թիֆլիսում վերականգնւած է: Ձեր ռադիոյի մէջ յիշւած անձինք այսօր կը մօտենան ռադիոյին Ձեզ հետ խօսելու համար: Անցքերի մասին յայտնեցէք ամէն օր: Փետր. 21. ի. տ. արտ. գործ. նախարարի՝ Սարախտարաշվիլի:»

Հեռագրի «թոուցիկային» ոճը լաւ տպաւորութիւն չգործեց Երեւանում: Թերահաւատութեամբ ընդունեց նաեւ, որ «Վրանսխան վերջնականապէս բռնեց մեր կողմը», ինչպէս եւ Կովկասի մահմետականների մասին հաղորդւածը:

Շուտով պիտի պարզւէր, որ վրացիները յուսահատական կուի մէջ էին բոլշեւիկների հետ: Կարմիր բանակը սպառնում էր Թիֆլիսին: Իրենց պարտութիւնները արդարացնելու եւ վրացի ժողովրդի բարոյական կորովը բարձրացնելու նպատակով, Ժորդանիան եւ իր ընկերները աններելի ճառեր էին խօսել ու յօդւածներ գրել հայերի դէմ:

Հայաստանի յեղաշրջման հետեւանքով Վրաստանի հայերի վիճակը անմիջապէս փոխւեց. բանտարկեալները ազատւեցին, հալածանքները վերջ գտան. վերաբացւեց Հայաստանի դեսպանատունը եւ ռադիոյով հաղորդակցութիւն հաստատւեց Երեւանի եւ Թիֆլիսի միջեւ, մինչեւ փետր. 25, երբ Վրաստանի մայրաքաղաքը գրաւեց Կարմիր բանակի կողմից: Վրաստանի խորհրդայնացումը ծանր հարւած էր եւ Հայաստանին: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն երկար ժամանակ հասարակութիւնից գաղտնի պահեց Թիֆլիսի անկումը:

Վրաստանի խորհրդայնացումով՝ Հայաստանը բոլորովին մեկուսանում էր հիւսիսից: Հարաւում Թուրքն էր նստած: Քէմալական Թուրքիան, այդ օրերին, բանակցում էր դաշնակիցների հետ Լոնդոնում եւ միաժամանակ Ռուսաստանի հետ Մոսկւայում: Հայաստանի վերաբերմամբ դիտողի դերը էր բռնել եւ սպասում էր դէպքերի զարգացման: Լոնդոնի բանակցութիւնների ձախողանքով եւ Մոսկւայի դաշնագրի կնքումով, մարտ 16-ին, վերջ պիտի դնէր եւ Թուրքերի «չէզոքութիւնը» Հայաստանի վերաբերմամբ. Թուրքն ու բոլշեւիկ ռուսը այժմ բարեկամներ էին եւ դինակից:

Այսպէս, ուրեմն, Գեղկոմի լծից ազատագրւած Հայաստանը բոլորովին կտրւած էր արտաքին աշխարհից. մեկուսացած էր լեռներում, բոլորովին մենակ, լքւած ամենքից, անօգնական, անհաց, անվառելիք, անդեղ, անհուն առելութեամբ դէպի բոլշեւիզմը եւ ազատ ու անկախ ապրելու վճռական կամքով:

Եւրոպան լուռ էր եւ անտարբեր: Խորհրդային Ռուսաստանը պահանջում էր անպայման անձնատուութիւն, բայց անձնատուութեան մասին մտածելն իսկ ոճիր էր համարւում Հայաստանում: Պէտք էր կուել. ազատութիւն կամ մահ. ուրիշ հեռանկար չէր երեւում հայ ժողովրդի աչքին: Եւ կռիւը չարունակւեց անընդհատ եւ յամառ բոլոր ճակատների վրա:

Ո՞վ էր կուսակցութիւնը։ Փաստօրէն գօրք չէր մնացել Հայաստանում։ Սպայութիւնը աքսորուած էր Ռուսաստան, մի քանի հոգի միայն, այս կամ այն ձեւով, մնացել էին Հայաստանում։ Զօրամասերը՝ բարոյալքուած ու կազմալուծուած։ Ռազմական արժէք ներկայացնող ամէն բան կամ փչացած էր, կամ բոլշեւիկները էին տարել։ Կուսակցութիւնը ինքը հայ ժողովուրդն է, դիւղացիներն ու քաղաքացիները, միահամուռ կամքով։ Ճակատ ու թիկունք միախառնել էին, ամբողջ երկիրը վերածուած էր ռազմաճակատի, ողջ ժողովուրդը դարձել էր բանակ։

Հակիրճ գծերով ներկայացնենք ռազմական դէպքերի ընթացքը, փետր. 18–ից յետոյ։

Փետր. 18–ին ճակատները արդէն բռնած էին մարտական ուժերը։ Երեկոյեան պարզուեց եւ բանտում կացինահարուածների եւ կուռում սպանուածների թիւն ու ինքնութիւնը։ Բանտում նախորդ երկու դիւերներ յաջորդաբար տեղի էին ունեցել տմարդի կոտորածներ։ Սպանուածների մէջ էին խմբապետ Համազասպը, դնդ. Ղորղանեանը, խմբապետ Մամիկոնը, Արտուշ խանը, բանւոր Սերգօն եւ ուրիշ մի քանի տասնեակ բանտարկեալներ։ Առաւօտեան կռիւներում սպանուել էին խորհրդարանի անդամ Տիգրան Շամհուրը, սպայ Մ. Գիւլնազարեանը եւ ուրիշներ։

Փետր. 19–20 օրերը ամբողջապէս անցան կազմակերպական աշխատանքներով։

Փետր. 19–ից սկսուեց լոյս տեսնել Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի պաշտօնաթերթ «Ազատ Հայաստան» օրաթերթը։ Մինչեւ ապրիլ 2 լոյս տեսաւ 36 թիւ։ Շուտով նրան պիտի յաջորդէին եւ ռուսերէն «Սվոբոդնայա Արմենիա»ն ու թուրքերէն «Ազատ Էրմենիստան»ը։

Փետր. 21–ից արդէն սկսեցին կանոնաւոր կերպով գործել պետական եւ քաղաքային բոլոր հիմնարկութիւններն ու վերաբացեցին դպրոցները։ Բոլշեւիկների կողմից ձերբակալուածների կամ սպանուածների աննեցուկ ընտանիքների օգնութեան համար կազմուած էր մի յանձնախումբ, Ց. Քալաշեանի նախագահութեամբ։ Խախչի Իշխանեանի ղեկավարութեան ներքեւ սկսեց գործել վիճակագրական յատուկ մի մարմին հաշուառման ենթարկելու համար բոլշեւիկների պատճառած վնասները մայրաքաղաքում եւ գաւառներում։ Կառավարութիւնը իր հսկողութեան տակ առել էր բոլշեւիկների «պետականացրած» բոլոր գոյքերը եւ կազմել մի յանձնախումբ այդ գոյքերը իրենց տէրերին վերադարձնելու համար։ Վերակազմուել էր Երեւանի քաղաքապետարանը։ Մայրաքաղաքում ընդհանուր յարգանք վայելող անձերից — Մ. Մուսինեան, Ա. Գրիգորեան եւ Ց. Տէր Մաչատրեան — նշանակուել էր յատուկ լիազօրութիւններով օժտուած մի մարմին մայրաքաղաքի պարենաւորման եւ դաղթականների խնամատարութեան գործի հակակշռման համար։ Վերսկսել էր գործել «Հայկօօպը» իր բոլոր մասնաճիւղերով։ Վերաբացուել էին պետական հաշուարանները։ Հայր. Փրկութեան Կոմիտէին կոչ էր ուղղել բոլոր նրանց, ովքեր կուռում էին Հայաստանի դէմ բոլշեւիկների հետ միասին, որ ներման

կարժանանան, եթէ վար դնեն զէնքը եւ ենթարկուեն Հայր. Փրկութեան Կոմիտէի իշխանութեան:

Մի խօսքով կեանքը սկսում էր մտնել բնականոն ընթացքի մէջ, որքան թոյլ էին տալիս յեղափոխական ժամանակի պայմանները: Ամենքը լարւած ուշադրութեամբ, հետեւում էին ռազմաճակատի գործողութիւններին:

Ռազմաճակատի յաջողութիւնը, սակայն, պայմանաւորւած էր թիկունքի ժողովրդի տրամադրութիւնից: Ժողովուրդը մէկ մարդու պէս կանգնած էր Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կողքին, բայց վերջինս, դնում էր չափազանց մեծ դժւարութիւնների առջեւ: Ամենից սուր զգացւում էր պարենաւորման տագնապը, մթերքների պակասը, ապրուստի պակասը, սղութիւնը եւ դրամական արժէքի անկումը:

Փետր. 22-ին, իր թիւ 25 հետեւեալ հրամանով, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն ջանաց կանոնաւորել շրջանառութեան մէջ գտնւող դրամանիշերը.

«Աչքի առաջ ունենալով, որ մեծամասնականներն իրենց իշխանութեան օրով բաց են թողել խոշոր գումարի «հայկական չէկեր» ու հեռանալով տարել են իրենց հետ չէկերի կլիչէների մեծ մասը, որպիսի հանգամանքը մի կողմից հնարաւորութիւն չէ տալիս շարունակել չէկերի տպագրութիւնը, իսկ միւս կողմից մեծամասնականները կարող են տպագրել եւ հեղեղել չուկան կեղծ չէկերով՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն՝ ի նկատի առնելով ժողովրդի շահերը եւ ցանկանալով սահմանել օրինակելի դրամական շրջանառութիւն՝ որոշեց.

«1.— Աստիճանաբար հանել շրջանառութիւնից բոլոր հայկական չէկերը:

«2.— Չէկերի փոխարէն բաց թողնել հայկական նոր դրամանիշերը, որոնք ապահովւած են Հայաստանի ամբողջ գոյքով եւ պետական գանձարանում ու արտասահմանում գտնւող ոսկու ֆոնդով:

«3.— Հայաստանի Պետական Բանկը եւ բոլոր գանձարանները անարգել փոխանակում են չէկերը նոր դրամներով՝ հաշւելով նոր դրամի մէկ րուբլին հաւասար հարիւր րուբլու չէկերով:

«4.— Չէկերի փոխանակումը նոր դրամներով՝ տեղի կունենայ մինչեւ սոյն տարւայ յունիսի մէկը, որպիսի ժամանակամիջոցից յետոյ չփոխանակւած չէկերը կը համարւեն ոչնչացւած:

«5.— Բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւններն եւ մասնաւոր անձինք հաշւեյարդարի ժամանակ պարտաւոր են «հայկական» նոր դրամները ընդունել հարիւր անգամի յաւելումով:

«6.— Նրանք, ովքեր, որ կը խախտեն սոյն հրամանի 5-րդ կէտը, կենթարկւեն ամենախիստ պատժի յեղափոխական ժամանակի օրէնքով:

«7.— Այս հրամանը մտնում է ուժի մէջ յայտարարութեան օրից:

ՀԱՑՐ. ՓՐԿ. ԿՈՄ.-ի ՆԱԽԱԳԱՀ. Ս. ՎՐԱՑԵԱՆ
Ֆինանս. նախար. ընդհ. վարիչ՝ Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ»

Նոր, այսպէս կոչուած, «հայկական դրամանիշները» ինչպէս եւ նամակադրոշմները պատրաստուած Լոնդոնում, Հայաստան հասել էին խորհրդայնացումից առաջ եւ շրջանառութեան դեռ չէին դրուել: Արտասահմանում միայն հրապարակ էին հանուել Հ. Հ. Պատուիրակութեան կողմից: Դրամանիշները եւ նամակադրոշմները նկարել էր նկարիչ Ա. Թեթվաճեանը:

Վերջը, ժողովրդին ուղղուած հետեւեալ կոչով, Հայրենիքի Փրկութեան կոմիտէն աշխատեց մեղմացնել նաեւ երկրի պարենաւորման սուր տագնապը:

Ջաղաքացիներ.

«Բոլշեւիկեան իշխանութիւնը Հայաստանի աշխատաւորութեան համար եղաւ տնաքանդութեան եւ սարսափի շրջան: Հայ իրականութեան հետ ոչ մի կապ չունեցող այդ ցնորամիտները մորեխի նման անցան մեր երկրի վրայով, սրբեցին–տարան ամէն ինչ: Եւ հայ գիւղացին ու բանուորը, որքն ու զինուորը, որ հազիւ մի քիչ չունչ էին քաշել եւ իրենց մի կտոր չոր հաց ապահովել, նորից մնացին ձեռնունայն ու սոված:

«Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն՝ տապալելով բոլշեւիկեան բռնապետութիւնը՝ ամենից առաջ մտահոգուած է հաց չունեցող քաղաքացիներին, զօրքին ու որբերին հաց հասցնելու գործով: Եւ որովհետեւ Հայաստանի սահմանները դեռ փակ են դրսի աշխարհից պարէն ստանալու համար, առ այժմ հացը պէտք է ստացւի միայն երկրի ներսից: Որքան էլ թալանուած լինի Հայաստանը, գիւղերում եւ քաղաքներում դեռ կայ որոշ քանակութեամբ հացի աւելցուկ, որը պէտք է տրամադրւի կառավարութեան, ի հարկէ, վարձատրութեամբ:

«Այդ նպատակով Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն յանձնարարել է տեղական Հայր Փրկ. Կոմիտէներին, պարենաւորման նախարարութեան վարչի անմիջական ղեկավարութեան ներքոյ, չտապով կազմակերպել հացի գնումը: Նմանապէս յանձնարարել է նաեւ կամաւոր նւէրներ հաւաքել ժողովրդից պետական կարիքների համար: Գնելիք հացահատիկի գներն եւ այլ պայմանները պէտք է որոշուեն տեղում Հայր. Փրկ. տեղական կոմիտէի կողմից, պարենաւորման նախարարութեան վարչի հաւանութեամբ:

«Կազմակերպելով հացի գնումն ու հաւաքումը՝ Հայր. Փրկ. Կոմիտէն խորապէս համոզուած է, որ այն ժողովուրդը, որը յանուն ազատութեան թնդանօթների դէմ դուրս եկաւ եւ ահագին զոհեր տուեց, չի խնայի եւ նիւթական միջոցը եւ կը տայ կառավարութեան իր հացի աւելորդ մասը: Հայաստանի ազատութեան ամրացումն ու ապահովութիւնը ամենից շատ կախուած է պարենաւորման հարցի լուծումից եւ առաջին հերթին՝ չունեւոր ժողովրդին հաց հասցնելուց:

«Հայր. Փրկութեան Կոմիտէն կոչ է անում բոլոր քաղաքացիներին եւ գիւղացիներին օգնելու իրեն՝ պարենաւորման ճգնաժամից էլ պատուով դուրս գալու:

«Տուէք ձեր աւելորդ հացը հայրենիքի փրկութեան կոմիտէներին:

«Կեցցէ Ազատ Հայաստանը:

Հայր. Փրկ. Կոմիտէի նախագահ՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ
Պարենաւորման գործերի վարիչ՝ Վ. ՄԻՆԱՍՈՐԵԱՆ»

Թէ այդ օրերին ինչքան դժուարին էին ապրուստի պայմանները, ցոյց են տալիս մթերքների հետեւեալ դները, որ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, մարտ 9-ին սահմանել էր Երեւանի համար. հաց՝ գրուանքան 3000 ռուբլի, լուբիա՝ 3500, բրինձ՝ 3–4000, չամիչ՝ 5–7000, դեռնախնձոր՝ 2000, տաւարի միս՝ 3500, ոչխարի միս՝ 4500, կաթ՝ 2000, մածուն՝ 2000, աղ՝ 2500 եւայլն:

Թէ՝ կառավարական մարմինները, թէ տնային կոմիտէներն ու կուսակցութեանց ներկայացուցիչները խիստ հսկողութեամբ հետեւում էին, որ առաջին հերթին ճակատների մարտիկները ուտելիք ունենային եւ չարաշահութեան չենթարկուէին:

Մթերքով համեմատաբար աւելի ապահովուած էին մահմեդական շրջանները, որոնք պարէն էին ստանում եւ Թիւրքիայից: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն առաջին օրից իսկ մտահոգուած էր մահմեդական բնակչութիւնը պետութեան հետ կապելու հարցով: Յեղաշրջումից մի քանի օր անցած, նա ժողովրդին ուղղեց հետեւեալ կոչը՝ հայերէն, թուրքերէն եւ ռուսերէն լեզուներով:

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

«Քաղաքացիներ.

Բոլշեւիզմի անարդ լուծը թօթափելով՝ Հայաստանի աշխատաւորութիւնը նպատակ ունի իր հայրենիքում հաստատել լայն ժողովրդապետական կարգեր:

«Ազգային եւ հասարակական բոլոր այն չարիքները, որոնք գոյութիւն են ունեցել անցեալում, պէտք է վերացուեն եւ ամենից առաջ պէտք է վերացուեն ազգային անհաւասարութիւնը եւ ազգային թշնամութիւնները: Հայաստանը սեփականութիւնն է բոլոր ժողովուրդների, որոնք ապրում են նրա սահմաններում: Ոչ մի խորութիւն չի կարող լինել — հայի, թուրքի, ռուսի, քրդի, ասորու, եզիդիի եւ ուրիշների միջեւ: Ամենքը հայրենիքի հարազատ զաւակներ են՝ հաւասար իրաւունքներով եւ հաւասար պարտականութիւններով:

«Դժբախտաբար, անցեալում քիչ չեն եղել դէպքեր, երբ զանազան վատ ուժեր աշխատել են կուռեցնել Հայաստանում ապրող ժողովուրդներին եւ նրանց թշւառութեան վրա կառուցանել իրենց դիրքն ու բարեկեցութիւնը: Դժբախտաբար, դեռ այսօր էլ կան անազնիւ մարդիկ, որոնք անձնական շահասիրութիւնից դրդուած կամ քաղաքական մութ հաշիւներով՝ ձգտում են թշնամութիւն սերմանել ազգերի միջեւ: Նրանք կամենում են վերակենդանացընել անցեալի ցաւալի դէպքերը եւ նորից կրակի եւ արեան թատերաբեմ դարձնել Հայաստանը:

«Քաղաքացիներ, այդպիսի մարդիկ թշնամի են Հայաստանի ազատութեան, թշնամի են Հայաստանում ապրող ժողովուրդներին: Այդպիսիների դէմ պէտք է կուռել անխնայ եւ ամենավճռական կերպով: Հայրենիքի Փրկու-

թեան կոմիտէն հանդիսաւորապէս յայտարարում է, որ ինքը թոյլ չի տայ որեւէ ազգային անհաւասարութիւն եւ ազգամիջեան ընդհարումներ Հայաստանում: Ազգային խորութիւններ յարուցանողները պէտք է պատժւեն յեղափոխական ժամանակի օրէնքներով:

«Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն առանձնապէս կոչ է անում Հայաստանի թուրք ժողովուրդին, որը հայ ժողովրդի պէս շատ տառապանքներ է տեսել անցեալում եւ դեռ տառապում է այսօր էլ — մոռացի՛ր անցեալի տառապանքները, եղբայրօրէն ձեռք մեկնիր հայ աշխատաւորութեան եւ ամուր փարիր աղատ Հայաստանին. ինչ եւ լինեն միջազգային դէպքերը, այս երկրում մենք կողք-կողքի ենք ապրելու, միասին ենք ողողելու մեր հայրենի հողը քրտինքով, միասին ենք լալու եւ ուրախանալու: Թո՛ղ այս օրւանից մոռացւեն անցեալի սխալները եւ անցեալի դառնութիւնները: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն հրաւիրում է ձեզ յայնօրէն մասնակցելու Հայաստանի պետական եւ հասարակական կեանքին:

«Կեցցէ Ազատ եւ Անկախ Հայաստանը:

«Կեցցէ Հայաստանի բոլոր ազգերի եղբայրութիւնը:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

Երեւան, 22 փետր. 1921

Մարտ 6-ին, Գէոյ Մէչիդում, Երեւանի թուրք ազգաբնակութիւնը կազմակերպեց համաժողովրդական մի մեծ ժողով, ուր ելոյթ ունեցաւ Հայր. Փրկութեան Կոմիտէի նախագահը՝ խօսելով ազգային համերաշխութեան եւ փոխադարձ վստահութեան անհրաժեշտութեան մասին: Թուրք ներկայացուցիչները խոստացան մոռանալ անցեալը, ամէն կերպ աջակցել կառավարութեան, ամրացնելու պետութեան հիմքերը եւ պաշտպանելու Հայրենիքի ազատութիւնը բոլշեւիկների դէմ:

Քիչ վերջը, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կազմի մէջ առնւեցին, օգնականների պաշտօնով, Երեւանի յայտնի թուրք գործիչներից չորս հոգի, եւ յատկացւեցին որոշ վարկեր Երեւանի եւ Էջմիածնի չրջանների թուրք բնակչութեան օժանդակելու համար: Առհասարակ, Հայր. Փրկութեան Կոմիտէն ամէն ճիգ թափեց ազգամիջեան բախումներից խուսափելու համար, որպէսզի առիթ չտրւի Արաքսի ափին կանգնած թիւրք բանակին միջամտելու Հայաստանի ներքին գործերին: Թրքական սպառնալիքը դամոկլեան սրի պէս կախւած էր հայ ժողովրդի գլխին: Այդ սպառնալիքով են բացատրւում Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի մի շարք քայլերը կամ արտաքին յարաբերութիւնները: Որոշ չափով նոյն դգացումով ներշնչւած են եւ Հ. Հ. Պատւիրակութեան եւ Զիչերինին քաշւած հեռագիրները Լոնդոնի եւ Մոսկւայի խորհրդաժողովների առթիւ, ինչպէս եւ Անգորայի կառավարութեան ուղղւած դիմումները: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, անշուշտ, լրիւ կերպով գիտակցում էր Թրքական եւ ռուսական գործօնների նշանակութիւնը Հայաստանի ճակատագրի համար: Եթէ մի կողմից թիւրքերի բարեացակամութիւնը չահելու ճիգ էր թափւում, միւս կողմից էլ, բազմաթիւ առիթներով, հա-



ԽՄԲԱՊԵՏՆԵՐ ՄՈՒՇԵՂ, ՍՄԲԱՏ ԵՒ ԱՍԼԱՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՎ



ԲԱՇ – ԳԱՌՆԵՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ



ՍՊԱՐԱՊԵՏ ՍՈՒՐԷՆ (ԿՈՒՄՕ ԹԱՐԽԱՆԵԱՆ) ԻՐ ՋԻՆԱԿԻՑՆԵՐՈՎ

ւատիքներ էին տրւում խորհրդային վարիչներին, որ փետր. 18-ի յեղափոխութիւնը ուղղւած չէր Ռուսաստանի դէմ: Այսպէս, մարտ 10-ին, Հայր. փրկութեան կոմիտէն Զիչերինին ուղղած մի ընդարձակ հեռագրով նորից ու նորից փորձում էր համոզել, թէ փետրւարեան ապստամբութիւնը թշնամական քայլ չէր Ռուսաստանի կամ ռուս ժողովրդի դէմ:

«Ռուսաստանը, ասւում էր այդ հեռագրում, չի կարող չճանաչել հայ ժողովրդի իրաւունքը եւ չի կարող հաշւի չառնել նրա անյողդողդ կամքը, ապրելու անկախ, առանց օտար ւսիննների խնամակալութեան: Հայաստանի աշխատաւոր զանգւածները հաւատ ունեն, որ ւսիններ ու դնդացիրներ ուղարկելու փոխարէն Ռորհրդ. Ռուսաստանը հայ ժողովրդին օրինակ կը տայ աւելի կուլտուրական եւ աւելի արժանավայել միջոցներով լուծելու վիճելի խնդիրները եւ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու Ռորհրդ. Մեծ Հանրապետութեան եւ փոքր, բայց ազատ կեանքի բուռն ձգտումով տոգորւած Հայաստանի միջեւ»:

«Մեծ» Ռուսաստանը, սակայն, ականջ չունէր լսելու «Փոքր» Հայաստանի ճիչերը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի բոլոր ջանքերը համաձայնութեան հող պատրաստելու՝ եւ խաղաղութեամբ դարմանելու համար Հայաստանի ցաւը անցան ապարդիւն: Ցաւի դարմանումը յանձնւած էր կարմիր բանակին, որ հետզհետէ ուժեր էր համախմբում Հայաստանի սահմանների վրա: Ցեղկոմի բոլոր փորձերը սեփական ուժերով յետ գրաւելու Երեւանը յաջողութեամբ չպսակւեցին: Ռուս բանակը պիտի դրաւէր եւ հայ բոլշեւիկներին յանձնէր Հայաստանը, հակառակ հայ ժողովուրդի կամքին:

Փետր. 18-ի առաւօտեան, Ցեղկոմը իր ուժերով նահանջելով Երեւանից՝ աշխատեց ամրանալ Ղամարլուի չրջանում, բայց ապստամբ ժողովրդի պրոհի տակ՝ ստիպւած եղաւ խուճապով փախչել դէպի Շարուր՝ անօրինակ դաժանութիւններ գործադրելով հեռանալիս: Բոլշեւիկները բռնութեամբ զինւորագրել եւ իրենց հետ էին տարել տեղական երիտասարդութիւնը, թալանել ու աւերել էին գիւղացիների այդիներն ու տները, քշել-տարել էին տաւարը եւ 60 մարդ էին սպանել գիւղերում:

Բոլշեւիկների պարտութիւնը աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց ամէն տեղ, ժողովրդի բոլոր խաւերում: Արագ կերպով կազմակերպւեցին եւ ռազմաճակատ մեկնեցին հայրենակցական ու կուսակցական մարտական խմբերը, ինչպէս Վասպուրականի, սուրմալուցիների, տարօնցիների, եղիդինների զօրամասերը: Նմանապէս գործօն մասնակցութիւն ունեցաւ եւ Ռամկավար կուսակցութեան 60 հոգինոց կամաւորական խումբը:

Շարուրի մուտքի առջեւ ամրանալուց յետոյ, երբ առաջին սարսափը անցաւ, փետր. 26-27-ին բոլշեւիկները ձեռնարկեցին ընդհանուր յարձակման մայրաքաղաքը վերադրաւելու ցանկութեամբ: Փետր. 27-ին, նրանց զրահապատը արդէն Երեւանի տակ էր եւ երկաթուղու կայարանից երկու կիլոմետր հեռւից, ռմբակոծում էր քաղաքը:

Երեւանը գերմարդկային ճիգ էր թափում յետ մղելու համար թշնամուն: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կոչի վրա ամբողջ բնակչութիւնը

զէնքի տակ մտաւ։ «Ամէն ոք դէպի ռազմաճակատ»· այս էր բոլորի խօսքն ու մխաքը։ Տնային կոմիտէները, Միջկուսակցական Խորհուրդը, ողջ պաշտօնէութիւնը, ամենքը գործի վրա էին։ Քաղաքը բերդի էր վերածւած։ Գիշերը քաղաքը անքուն անցկացրեց։

«Փետր· 28–ին վաղ լուսաբացից սկսած, ամբողջ օր, որոտում էին թնդանօթները ու գնդացիրները, արձանագրել է իր յուշատետրում Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անդամներից մէկը։ Թշնամու ուժերը ընկնում են քաղաքում՝ գերեզմանոցի եւ ամերիկեան որբանոցի վրա։ Մեր «շտաբը» ռատիոկայանի մօտ է, սպարապետը այստեղից է ղեկավարում կռիւը։ Թշնամու զրահապատը Շէնգաւիթի կողքից սպառնում է մեր առաջաւոր դիրքերին եւ անընդհատ ուժեր ուղարկում դէպի քաղաք։ Մեր «ռեզերվը» Երեւանի կայարանում է, իսկ դիրքերը՝ մերձակայ բլուրների վրա։ Թշնամին դիմում է կատաղի զրոհի կենտրոնից· մերոնք յետ են չպրտում։ Նոր զրոհ ու նոր հակահարւած։ Ժողովրդական վաշտերը երկաթէ տոկունութիւն են ցոյց տալիս։ Բոլշեւիկների բոլոր փորձերը պատռելու նրանց դիրքերը, անցնում են անյաջող։ Տեղ–տեղ կուի նախաձեռնութիւնը անցնում է մերոնց ձեռքը։ Երեւանը դարձել է պողպատէ ամրութիւն։ Կուռողը ժողովուրդն է· կանոնաւոր զօրք չկայ այստեղ։

«Մերոնք միաժամանակ իրագործում են լայն ռազմական ծրագիր· ժողովրդական վաշտերը, Հրազդանի կողմից, հետզհետէ անցնում են թշնամու թիկունքը։ Միւս կողմից սպառնում են Ազեաշի ուղղութեամբ։ Բոլշեւիկ հրամանատարութիւնը ճիգ է թափում գրաւելու մայրաքաղաքը։ Ժողովուրդը անյողդողդ դիմադրում է՝ տալով թանկագին զոհեր։ Փետր· 27–28–ի կռիւներում հերոսական մահով ընկան Շապուհը (Խնուս), Միհրդատ Միրզախանեանը (Վան), Մարգար Գալէմքարեանը (Վան), Սարգիս Բրուտեանը (Ոգմ), Աղասի Գալարթմեանը (Վան), Յովսէփ Ջաուշ (Վան), Վահան Պետրոսեանը (Վան) ,Աւետիք Օհաննեանը (Վան), գնդ· Մինաս Միհասեանը, Մանաս Պօղոսեանը (Գողթն), Հայրապետ Բարայեան (Երեւան), Աբէլ Խաչատրեան, Միհրան Աբաճեանը (Ալաշկերտ), սպայ Միհրան Հաղարապետեան (Ախալցխա), Լեւոն Շալճեան (Վան) եւ Հայկ Կարապետեանը (Վան)։

«Մարտ 1–ի օրը բացւում է խորունկ լռութեան մէջ։ Քաղաքը սպասում է թնդանօթների որոտին։ Անցնում են ժամեր, բայց լռութիւնը չի խանգարւում։ Թշնամին դիւերը փախել էր՝ կրելով ծանր կորուստներ... Ժողովրդի ոգեւորութիւնը անպատմելի է։ Քաղաքից անցնում են ճակատ դիմող կամաւորական խմբեր, որոնք ընդունւում են խանդավառութեամբ։ Շարունակւում է թշնամու հետապնդումը»։

Բոլշեւիկները նահանջեցին ճանապարհին թալանելով գիւղերը եւ ըսպանելով անմեղ մարդկանց։ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կողմից ուղարկւած քննիչ յանձնախումբը պարզեց ահռելի տեսարաններ Ղամարլուի շրջանում· բոլշեւիկները սպաննել էին մօտ 1000 գիւղացիներ, որոնց մի մասը կացինահարւած նետել էին հորերը եւ գինու մեծ կարասների մէջ, բռնագրա-

ւել էին հացն ու մթերքը, քշել-տարել էին տաւարը: Ժողովուրդը մնացել էր անհուն թշուառութեան մէջ:

Բոլշեւիկների համար աննպաստ հետեւանքներով վերջացան եւ նրանց յարձակումները միւս ճակատների վրա: Ամէն տեղ ժողովրդական վաշտից ուժեղ դիմադրութիւն ցոյց տւին: Միայն Նոր Բայազիտում նրանց յաջողւեց վերագրաւել քաղաքը եւ դիւղերի մի մասը:

Այնուհետեւ մօտ երկու շաբաթ ճակատները մնացին համեմատաբար հանդիստ: Բոլշեւիկները ջախջախիչ հարւածներ կրելուց յետոյ, չէին համարձակւում նոր արկածախնդրութիւններ փորձելու, բայց Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն տեղեկութիւն ստանում էր, որ Ադրբէջանից կարմիր բանակի նորանոր զօրամասեր էին շարժւում Հայաստանի ուղղութեամբ: Ակներեւ էր, որ բոլշեւիկները պատրաստւում էին վճռական գրոհի աւելի լայն ծաւալով: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի հեռագրական նոր դիմումներն էլ Մոսկւա եւ Թիֆլիս մնացին անպատասխան:

Իր հերթին Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն էլ շարունակում էր եռանդով պատրաստւել թշնամուն ուժեղ հակահարւած տալու:

Մարտ 15–ին 20–32 տարեկանների զօրակոչ յայտարարւեց Երեւանում, Վաղարշապատում եւ Աշտարակում: Պարտաւոր էին երեք օրւայ ուտելիքով եւ սեփական զէնքով ներկայանալ զինւորական իշխանութեան զօրամասերում դասաւորւելու համար:

Այդ առթիւ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահը այցելեց Էջմիածին, Օշական եւ Աշտարակ, ուր ազգաբնակութեան կողմից ընդունւեց ցնծութեամբ: Տեղի ունեցան հրապարակային ժողովներ եւ զօրահանդէսներ, խորհրդակցութիւններ քաղաքացիական ու զինւորական իշխանութիւնների եւ դաւառական ինքնավարութիւնների հետ, պաբենաւորման եւ ռազմաճակատի ուժեղացման հարցերի շուրջ: Ժողովուրդը ամէն տեղ անյողդողդ կեցած էր կառավարութեան կողքին:

Նոյն նպատակով միւս շրջաններն ու ռազմաճակատ մեկնեցին եւ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ուրիշ անդամներ ու հեղինակաւոր գործիչներ: Միաժամանակ ռազմաճակատ ուղարկւեցին նոր ուժեր: Օդի մէջ զգացւում էր, որ բոլշեւիկները չուտով նորից պիտի փորձեն գրաւել Երեւանը:

Եւ, իսկապէս, մարտ 15–ին, Ցեղկոմի ուժերը դիմեցին ընդհանուր, այս անգամ աւելի կատաղի յարձակման: Խօսքը դարձեալ տանք Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անդամին, որ իր յուշատետրում արձանագրել է.

«Մարտ 16.— Նոր կռիւներ: Կամօքն ժողովրդին ճակատ են մեկնում խմբերը, որոնց մէջ եւ շատ մտաւորականներ: Երեւանի փողոցները դատարկւում են, ժողովրդի տրամադրութիւնը նորից բարձր է: Տնային կոմիտէների կենտրոնական կոմիտէն արտակարգ գործունէութիւն է ցոյց տալիս. հաւաքում է կամաւորներ, զէնք, փամփուշտ, ուտելիք: Սկսւում է կատաղի կռիւ: Թշնամին գրաւում է Ղամարլուն եւ դարձեալ երեւում է մայրաքաղաքի տակ: Այս անգամ գլխաւոր գրոհները Աղբաչի ուղղութեամբ են:

«Մարտ 18–ի կռիւները տեւում են մի քանի օր: Թշնամին յառաջխա-

ղացման է դիմում նաեւ Ախտայի ճակատում եւ Արագածի կողմից: Սկիզբն է ընդհանուր յարձակման:

«Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն կոչ է ուղղում Կովկասի բոլոր ժողովուրդներին՝ հրաւիրելով նրանց համերաշխ եւ միացեալ ճակատով դուրս գալ հասարակաց թշնամու դէմ:

«Մարտ 19.— Մերոնք հինգ օրւայ յամառ կռիւներից յետոյ դիմեցին ընդհանուր յարձակման Ղամարլուի ճակատում. վերագրաւեցին Աղբաշը, առին մեծ քանակութեամբ գերիներ եւ ռազմամթերք: Թշնամին ջախջախւած՝ սկսեց նահանջել:

«Մարտ 20.— Մերոնց ընդհանուր յառաջխաղացումը զարգանում է. ժամը 1-ին մեր յառաջապահները մտան Ղամարլու եւ գրաւեցին 2 թնդանօթ, 2 գնդացիր, մի քանի հարիւր հրացան, ռումբ, փամփուշտ, 200-ից աւելի գերիներ, 2 սայլ: Թշնամին խուճապահար փախաւ եւ ամրացաւ Շիրազլու-Աւշար գծի վրա, զրահապատների պաշտպանութեան ներքոյ: Անցած բոլոր վայրերում բոլշեւիկները աւերեցին եւ թալանեցին գիւղերը:

«Նոյն օրը, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահը, Ց. Քաջազնունին եւ Հ. Օհանջանեանը այցելեցին Ղամարլու եւ առաջաւոր դիրքերը եւ խորհրդակցութիւն ունեցան զօրահրամանատարութեան հետ»:

Ղամարլուի ճակատի հրամանատարն էր խմբապետ Սմբատը՝ մի քաջ, շատ ճակատամարտներում եղած ու վէրք ստացած մարտիկ: Որքան եւ անհաւատալի կարծւի, Սմբատը եղաւ առաջիններից մէկը, որ խօսք բացեց Թիւրքերից օգնութիւն խնդրելու մասին: Այդ հարցը զբաղեցնում էր եւ ուրիշների մտքերը, նոյն իսկ Քաջազնունու նման զգաստ մարդկանց — այնքան ատելութիւն կար դէպի Ցեղկոմի իշխանութիւնն ու բոլշեւիզմը, առհասարակ:

Մարտ 20-ի երեկոյեան Երեւան եկաւ բանաստեղծ Յովհ. Թումանեանը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահին տւած զեկուցումից պարզւեց, որ Թիֆլիսում այն կարծիքն է եղել, որ իսկապէս փետրւարեան յեղաշրջումը զուտ կուսակցական գործ է եւ կարող է աղէտաբեր լինել հայ ժողովրդի համար: Թիֆլիսի հայ մտաւորականների ժողովում որոշել է Երեւան ուղարկել Թումանեանին: Ինչ առաքելութեամբ, — որոշ չէր Թումանեանի բացատրութիւնից, բայց քանի որ նա գալիս էր Օրջոնիկիձէի արտօնութեամբ, պէտք էր ենթադրել, որ որոշ յանձնարարութիւն ունէր վերջինից: Ցամենայն դէպս, նոյն օրն իսկ Թիֆլիս ուղարկւեց հետեւեալ հեռագիրը.

Թիֆլիս, Օրջոնիկիձէին.

«Այսօր Երեւան հասաւ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, որի հաղորդածներից երեւում է, որ դուք բոլորովին սխալ տեղեկութիւններ ունէք Հայաստանի դէպքերի մասին: Հայաստանի յեղաշրջումը անպատասխանատու մարդկանց գործ չէ, այլ բառացի կերպով ամբողջ ժողովրդի, որը կռւում է իր գոյութեան համար: Իմացէք, որ միայն հայ գիւղացիների եւ

բանուորների դիակների վրայով կարելի է հասնել Երեւանին: Թումանեանին տրւում է լիակատար հնարաւորութիւն ծանօթանալու իրերի իսկական դրութեան եւ տեղեկացնելու ձեզ:

«Հայրենիքի Փրկութեան կոմիտէի նախագահ՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ»:

20 մարտ

Եւ, իսկապէս, Թումանեանին տրւեց ամենալայն հնարաւորութիւն այցելելու պետական եւ հասարակական հիմնարկութիւնները, տեսնւելու ուզած մարդկանց հետ եւ ծանօթանալու իրերի կացութեան: Մի քանի օր վերջը, մարտ 24–ին Թումանեանը Օրջոնիկիձէին հեռագրեց հետեւեալը.

Թիֆլիս, Օրջոնիկիձէին.

«Հինգերորդ օրն է ես Երեւանում եմ: Ծանօթանալով գործերի դրութեան՝ բոլորովին համոզւեցի, որ մեզ մօտ, Թիֆլիսում, կազմւած համոզումը Հայաստանի դէպքերի մասին չի համապատասխանում իրականութեան: Շարժումը սկսւել է գիւղացիութեան մէջ, զանազան շրջաններում, տարածւել է մինչեւ Երեւան եւ իր յետեւից քաշել է մտաւորականութիւնը: Ստեղծւել է հետեւեալ դրութիւնը. զէնքը ձեռքերին միմեանց դէմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանուորներն ու աշխատաւոր գիւղացիները, միւս կողմից կոմունիստների զինւած խմբերը, եւ հոսում է արիւնը առանց որեւէ հիմքի թշնամութեան եւ փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թէ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակը աւելի անմիտ կռիւ չի վարել: Այդ պատճառով չերմօրէն խնդրում եմ ձեր հեղինակաւոր միջամտութիւնը, որպէսզի չուտափոյթ կերպով վերջ տրւի այս ոչ ոքի համար պէտք չեղած արիւնհեղութեան: Անհրաժեշտ եմ համարում աւելացնել, որ յեղաշրջումից յետոյ ձերբակալւած կոմունիստներից եւ ոչ մէկը եւ ոչ մի ռազմատերի այստեղ չէ դնդակահարւած: Նման հաղորդագրութիւն անում եմ եւ ռազմաճակատում գտնւող ընկեր կոմունիստներին: Եթէ կը պահանջւեն լրացուցիչ տեղեկութիւններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիոյի մօտ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ոչ Օրջոնիկիձէն, ոչ էլ «ռազմաճակատում գտնւող ընկեր կոմունիստները» չպատասխանեցին Թումանեանին: Ընդհակառակը, Հայրենիքի Փրկութեան կոմիտէն Օրջոնիկիձէից ստացաւ հեռագրական մի վերջնագիր, որով Կովկասի կարմիր փոխարքան անպայման անձնատուութիւն էր պահանջում հայերից: Եւ մարտ 25–ին կարմիր բանակը ընդհանուր յարձակման հրաման ստացաւ: Մեծ Ռուսաստանը իր վիթխարի ուժով ոտքի էր ելել ճզմելու համար փոքրիկ եւ ուժասպառ Հայաստանը:

Ի՞նչ էր ընդհանուր կացութիւնը եւ հայ–ռուսական ուժերի փոխյարաբերութիւնը 1921 թ. մարտի վերջերը:

Խորհրդային Ռուսաստանը յաջողութեամբ դուրս էր եկել 1920–21

թեականների ներքին եւ արտաքին ծանր տագնապներից: Դաժան միջոցներով ճնշված էին Քրոնշտատի, Վոլգայի եւ միւս շրջանների ապստամբութիւնները: Դրաւած էին Ազրբէջանն ու Վրաստանը: Հաշւեյարդարի էր ենթարկուած ռուս-լեհական պատերազմը: Թուրքերի հետ 1921, մարտ 16-ին կնքւել էր բարեկամութեան եւ փոխադարձ օգնութեան դաշնագիրը: Կարմիր բանակը այլեւս ի վիճակի էր ռազմական լայն գործողութիւնների դիմելու Հայաստանի դէմ եւ մարտ ամսի ընթացքին, կարեւոր ուժեր էր հաւաքել հայկական ճակատի վրա: Այդ մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում Հայաստանի դէմ կռւող կարմիր զօրամասերի հրամանատար Վելիկանովը:*) Ըստ Վելիկանովի, Ղամարլուի ճակատում, բացի երկու ղրահապատ գնացքներից, կոմունիստական խմբերից եւ բանուքեամբ տարւած հայկական մասերից, գործում էին նաեւ 60րդ բրիգադայի 178 եւ 180 գունդերը:

Մինչեւ մարտ հիւսիսային ճակատի վրայ, բացի կոմունիստներից եւ ռուս դիւղացիական խմբերից, գործում էր 18-րդ դիւիզիայի պետ Շիրմախէրի հրամանատարութեան տակ գտնւող Դիլիջանի զօրախումբը, որ բաղկացած էր 53 եւ 54 բրիգադաներից**). 179 գնդից եւ հայերի պարտիզանական խումբերից. Դիլիջանի զօրախումբը, տեղեկագրում է Վելիկանովը. «մի քանի անգամ արշաւանք սկսւեց Երեւանի ուղղութեամբ, բայց այդ գործողութիւնները յաջողութեամբ չպսակւեցին»:

Վրաստանի դրաւումից յետոյ, ըստ Վելիկանովի, Հայաստանի ճակատի վրա կային հետեւեալ զօրամասերը. 179-րդ գունդը Վարձնա եւ Սիպտակ դիւղերում, 53 ու 54-րդ բրիգադաները, 18-րդ կովկասեան գունդը եւ կամաւորական խումբեր Ախտալի ճակատում: 20-րդ դիւիզիայի մասերը — 58-րդ բրիգադան Համամլու կայարանում, 172 ու 176 գունդերը եւ 20-րդ կովկասեան գունդը՝ նոյնպէս Ախտալի ճակատում: «Այս բոլոր զօրքերից, գրում է Վելիկանովը, կազմւեց՝ այսպէս կոչւած «Երեւանեան զօրախումբը»:

Իր տեղեկագրում, Վելիկանովը մանրամասնօրէն խօսում է հայերի դէմ մղւած «յամառ կռիւների», ունեցած յաղթանակների եւ կրած պարտութիւնների մասին: Ի միջի այլոց, նա պատմում է, որ 177-րդ գունդը ծանր հարւած կրելով հայերից՝ խուճապով նահանջել է դէպի Օրդուբատ՝ տալով մօտ 150 սպանւածներ ու վիրաւորներ:

Հայերը ի՞նչ կարող էին հակադրել «զաւթիչների» այս ուժերին՝ բացի դէպի բոլշեւիզմն ու դէպի բոլշեւիկները տածած անհունատելութիւնից եւ ցասումից:

Ինչպէս յայտնի է, ապստամբութիւնը ծագել էր տարերային բնկուզով, առանց որեւէ պատրաստութեան, կամ արտաքին օգնութեան, եւ ահա

---

*) «Համառօտ տեղեկութիւններ 20-րդ դիվիզիայի 1920-21 թ. Հայաստանում ունեցած ռազմական գործողութիւնների մասին»: «Խորհրդ. Հայաստան», 1923 թ. յուլիս 15:

**) Բոլշեւիկեան բրիգադան կազմւած էր 3 գունդերից. գունդը՝ 3 գումարտակից. գումարտակը՝ 1000 զինւորից:

հինգ չաբաթ անընդհատ ժողովուրդը կռւում էր, կարելի է ասել, մերկ բազուկներով: Ոչ կանոնաւոր կազմակերպւած զօրք ու կարող զինւորական մասնագէտներ, ոչ փորձւած հրամանատարներ, ոչ պարէն, ոչ ռազմամթերք — ոչինչ, բառի բուն նշանակութեամբ ոչինչ: Այո, միայն նմանը քիչ պատահող բուռն ատելութիւն, անսահման ցասում դէպի բոլշեւիզմն ու բոլշեւիկները:

Ժողովուրդն իր մէջից դուրս բերեց քաղաքական ու զինւորական ղեկավարութիւն, ինչպէս ընդհանուր հրամանատար գնդ. կուռօ Թարխանեանը — սպարապետ Սուրէնը եւ Զանգեզուրում սպարապետ Գարեգին Նժդեհը:

Ժողովուրդի ծոցից ելան բազմաթիւ անձնւէր հերոսներ, ինչպէս Բաչ Գառնեցի Մարտիրոսը, Մնկօն, Կոռնետ Նաւասարդեանը, Գարեգին Սարգիսբէգեանը, Սասունցի Մուշեղը, ոզմցի Աւլանը, մտաւորական սպայ Յովհաննէս Լազարեանը, որ նահատակւեց Ղամարլուի ճակատում եւ շատ ուրիշներ:

Ռազմաճակատում նահատակւած հերոսների կարգին պէտք է յիշել եւ երեւանում յարգւած ծերունիներ Գէորգեանի ու Թաղիանոսի անունները: Այս վերջինի կոմունիստ որդին հեռացել էր Յեղկոմի հետ եւ կռւում էր Հայրենիքի դէմ: Հայրը երդւել էր իր ձեռքով սպանել որդուն, եւ հրացանը ուսին գնաց ռազմաճակատ, ուր եւ նահատակւեց տաք կռւում:

Հակառակ ուժերի զերազոյն լարումի, փոքրիկ Հայաստանը, ի վերջոյ, պիտի պարտւէր, առանց արտաքին օգնութեան: Հայրենիքի Փրկութեան կոմիտէի համար պարզ էր, որ Վրաստանի անկումից յետոյ Հայաստանն էլ դատապարտւած էր նոյն ճակատագրին, եթէ հրաշք չպատահէր. Թումանեանը երեւան հասնելուց յետոյ Վրաստանի անկումը խմացւեց հասարակութեան մէջ, եւ, բնականաբար, լաւ չանդրադարձաւ ժողովրդի տրամադրութեան վրա:

Սմուռ պահելով հանդերձ ճակատները՝ Հայրենիքի Փրկութեան կոմիտէն սկսեց պատրաստւել նահանջի:

Հայրենիքի Փրկութեան կոմիտէի երեւանում գտնւող անդամները, պատասխանատու գործիչների հետ միասին, խորհրդակցութիւն ունեցան նահանջի հետ կապւած խնդիրների մասին: Նախատեսւում էր երկու հնարաւորութիւն. Հայրենիքի Փրկութեան կոմիտէի անդամների մի մասը տրամադիր էր բովանդակ ուժով գրոհ տալ եւ խորտակելով Ղամարլուի ճակատի բոլշեւիկեան պատնէշը, Շարուր—Նախիջեւանի վրայով միանալ Զանգեզուրին: Ոմանք զերազոյս էին համարում բռնել Բաչ—Գառնի—Մխի ձոր—Դալալագեազ գիծը, որ թէեւ դեռ փակւած էր ձիւնով, բայց չուտով կարող էր բացւել:

Մինչ տեղի էին ունենում խորհրդակցութիւնները, Զանգեզուրից Երեւան հասաւ տարօնցի ծանօթ հայդուկ Պոլոյի Աբշակը՝ բերելով Ռուբէն Տէր-Նասեանից մի նամակ: Ռուբէնը ողջունում էր «արարատեան հերոսներին» եւ լաւատես գոյներով նկարագրում Զանգեզուրի վիճակը: Սեւիմի լեռնանցքը, Ղարաբաղ տանող կիրճը, Դարալագեազը մինչեւ Քէօմիւրլու Թրքական

գիւղը Շարուրի գլխին, ըստ Ռուբէնի, գտնւում էին Զանգեզուրի իշխանութեան տակ: Հետեւաբար, Զանգեզուրի հետ միանալը ոչ միայն պիտի անվըտանգ դարձնէր մեր նահանջի դիծը, այլ եւ պիտի դիւրացնէր Շարուր—Նախիջեւանի ծրագրի գործադրութիւնը: Հարցը լուծւեց յօդուտ Բաշ-Գառնի —Դարալագեազ գծի:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն Բաշ-Գառնիում կենտրոնացրեց որոշ քանակութեամբ ուտելիք, ռազմամթերք, ու դեղօրայք, այլեւ այնտեղ փոխադրեց մտաւորականութեան այն մասը, որի ներկայութիւնը Երեւանում անհրաժեշտ չէր: Միեւնոյն ժամանակ, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահը անձնական տեսակցութիւններով կազմեց պարսից Հիւպատոսից, ամերիկացի դոկտ. Լոշէրից, իտալական առեւտրական ներկայացուցչից եւ Ց. Թումանեանից մի յանձնախումբ, որին պիտի յանձնէր մայրաքաղաքը նահանջի դէպքում եւ յանձնախումբը պիտի ընդունէր նւաճողներին: Այնուհետեւ մնում էր սպասել դէպքերի զարգացման, թէեւ երկար սպասելու պէտք չեղաւ:

Մարտ 25-ի թշնամու ընդհանուր յարձակումը սաստիկ էր: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ուժերը թողին Ախտալի դիրքերը, եւ ամրանալով Սուխոյ Ֆոնտանի բարձունքների վրա՝ յամառ դիմադրութիւն ցոյց տւին: Սկսւեց կատաղի կռիւների մի շարք: Երեւանը ջղային վիճակ էր ապրում: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն մի կոչով հրաւիրեց ժողովուրդը հանդըստութեան եւ ճակատի պաշտպանութեան: Հայաստանի ընկերվարական կուսակցութիւնները միացեալ ռազիօ-հեռագրով դիմեցին աշխարհի բոլոր ընկերվարականներին՝ բողոքելով բոլշեւիկների յարձակման եւ գործադրած բռնութիւնների դէմ: Նորից հեռագիրներ տւեցին Մոսկւա: Բայց ականջ դնող չկար:

Հակառակ ուժերի գերազանցութեան՝ կարմիր բանակը չկարողացաւ արագ հարւածով գրաւել Երեւանը: Հայերը յուսահատական դիմադրութիւն ցոյց տւին՝ կուրծքով պաշտպանելով իւրաքանչիւր մի թիզ հող:

Ապրիլ 2-ի առաւօտեան, հայկական դիրքերը Սուխոյ Ֆոնտանից այս կողմ չդիմացան ու նահանջեցին: Սասունցիների ճիւաւոր խումբը սրարշաւ անցաւ Երեւանի փողոցներով՝ խուճապի մատնելով բնակիչներին: Բոլշեւիկեան թնդանօթը որոտաց Քանաքեռի բարձունքից:

Կէսօրին մայրաքաղաքը արդէն գրեթէ պարպւած էր: կառավարութիւն ու զօրք, պաշտօնէութիւն, մաքրելով հիմնարկութիւնները, հեռացան քաղաքից: Տասնեակ հազարներով բնակիչներ արդէն Բաշ-Գառնիի ճանապարհին էին: Քաղաքում մնացել էին միայն ծերեր, կանայք ու երեխաներ, որոնք լալով ճանապարհ էին դնում ուսանողական պահակախումբով շրջապատւած դէպի անյայտութիւն դիմող Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անդամներին: «Աստւած պահէ ձեզ: Մենք կը սպասենք ձեզ: Բարի վերադարձ» լսւում էր ամէնքի բերանից:

Երեւանի հարաւային ծայրը խռնւած բազմութիւնը մի պահ արցունքը աչքերին կեցաւ: Մէկը բարձր բռնել էր եռագոյնը: Թնդանօթաձիգները յետ



ՄՈՒՇԵՂ ԱՒԵՏԻՍԵԱՆ
(Սասունի ուժերու պետ)



ՍՊԱՐԱՊԵՏ ՍՈՒՐԷՆ
(Կուռօ Թարխանեան)



Գ. ՍԱՐԳԻՍԲԷԿԵԱՆ
(Սպարապետի շտաբի պետ)



ՑՐՕՆՔՑԻ ՄՈՒՐԱՏ
(Վիրաւոր կռիւներում)



ԽՆԿՕ
(Անվեհեր կռւող)



Ս. ՔՈԹԱՆՋԵԱՆ
(Երեւանի պարէտ)



Ս. ՏԷՐ — ԹՈՎՄԱՍԵԱՆ
(Հայր. փրկ. կոմ.–ի քարտ.)



Վ. ՏԷՐ — ԽԱՉԱՏՐԵԱՆ
(Էջմիածնի Հ. Փ. Կ.–ի նախ.)







ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ



ԿԱՑՆԱՀԱՐԻԱՑՆԵՐԸ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ ԵՐԵՒԱՆԻ ԲԱՆՏԻՄ

(Համազասպ, Գնդ. Ղորղանեան եւ ուրիշներ)

դարձին հասաքիցը: Ճամբը որոտաց Երեւանի վրայով Քանաքեռի ուղղութեամբ:

Հայաստանի արեւը փախչում էր Ալարատեան դաշտից դէպի արեւմուտք: Բազմահազար բազմութիւնն էլ խուճապահար փախչում էր հարատ երկրից: Երեւանում երիտասարդ չէր մնացել: «Ձաւթիչները» վախով, Քանաքեռի բարձունքից, մտան ամայի փողոցները, ուր նրանց, նոյնպէս վախով, դիմաւորեցին պարսից հիւպատոսը, ամերիկացի բժիշկը եւ վրացի Օրջոնիկիձէի ուղարկած հայ բանաստեղծը: Ժողովուրդը սարսափահար լուռ էր...

Երբեք եւ ոչ մի տեղ յաղթական մի բանակ այսպիսի անփառունակ մուտք չի ունեցել իր նուաճած քաղաքը...

ԳԼՈՒԽ ԼԶ.

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Երեւանի անկումով՝ Հայաստանի անկախութեան պայքարի թատերաբեմը փոխադրուում է Զանգեզուր. հետեւաբար, անհրաժեշտ է մի պահ կանգ առնել այդ շրջանի դէպքերի վրա:

Մանօթ ենք արդէն ցարական իշխանութեան վերացումից յետոյ Զանգեզուրում տեղի ունեցած դէպքերի մասին, մինչեւ 1919 թ. վերջերը, երբ Զանգեզուրի դիւղացիութեան բողոքով վերջ տրւեց Ազրբէջանի նւաճողական ախորժակներին եւ զուտ հայկական ինքնավար Զանգեզուրի կազմութեան: Զանգեզուրը Հուսաստանի Ելիզաւէտպոլ–Գանձակ նահանգի մէկ գաւառն էր, լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի միջեւ: Բարձրաբերձ լեռներով շրջապատւած, անդնդախոր ձորերով կտրատւած, անտառներով կամ արօտատվայրերով ծածկւած լեռնային զեղեցիկ մի շրջան էր, ուր, զարերից ի վեր, ապրում էր աշխատասէր, քաջ, իր հողը եւ ազատութիւնը սիրող մի ժողովուրդ, որի ապրուստի աղբիւրն էր գլխաւորապէս երկրագործութիւնն ու խաշնարածութիւնը, կամ պանդխտութիւնը, դէպի Բագուի նաւթաշխարհ:

Զանգեզուրը կազմւած էր Սիսեանի, Բուն Զանգեզուրի, Արեւիք–Գենաղի եւ պղինձի հանքերով հարուստ Ղափանի գաւառակներից:

Ինչպէս ամբողջ Անդրկովկասում, այստեղ եւս բուռն բախումներ տեղի ունեցան հայերի եւ մահմետականների միջեւ: Ի վերջոյ, Զանգեզուրը մաքրւեց մահմետական բնակչութիւնից, որ տեղափոխւեց Նախիջեւանի շրջանը կամ Ազրբէջանի հայերի լքած գիւղերը:

Խրոխտ լեռներին ապաւինած՝ արդ զանգեզուրցին իրեն միշտ զգացել է մէկ անբաժան մասնիկը Հայաստանի: Հակառակ Ազրբէջանի թափած ջանքերի, Հայաստանի անկախութեան հէնց առաջին օրից Զանգեզուրը իրեն կապւած համարեց Հայաստանի Հանրապետութեան հետ եւ իր այդ վճռական կամքը մէկից աւելի անգամներ արտայայտել է համագումարներով:

Անդրանիկին իր զօրամասով Զանգեզուրից հեռացնելուց յետոյ, անդլիացիք ջանացին զանգեզուրցիներին ենթարկել Ազրբէջանին, բայց յաջողութիւն չունեցան: Ազրբէջանի կառավարութիւնը, նուրի փաշայի առկեար–

ների օգնութեամբ փորձեց զէնքի ուժով գրաւել Զանգեզուրը, մի քանի յարձակումներ կազմակերպեց, բայց ամէն անգամ էլ պարտուած՝ նահանջեց: Զանգեզուրի ինքնապաշտպանութեան կռիւները, իրենց վիպական դրուագներով, ժողովրդի երկաթէ տոկունութեամբ, առանձին էջ են կազմում Հայ Ազատամարտի պատմութեան:

Ինչո՞վ կը վերջանար այդ հերոսական կռիւների շարքը, Զանգեզուրի դրաւումո՞վ Ազրբէջանի զէնքով, թէ՞ նաեւ Ղարաբաղի կցումով Հայաստանին, դժւար է ասել: Վրա հասաւ Ազրբէջանի խորհրդայնացումը, եւ դէպքերը նոր ընթացք ստացան:

Թէեւ Ազրբէջանի Ցեղկոմը վերջնագրով պահանջեց Հայաստանի կառավարութիւնից պարպել Ղարաբաղ—Զանգեզուրը, կռիւները մի առ ժամանակ ընդհատուեցին, եւ բոլշեւիկները փորձեցին խաղաղ միջոցով հասնել իրենց նպատակին: Միեւնոյն ժամանակ հայկական զօրամասը հեռացաւ Ղարաբաղից, որը չուտով գրաւեց բոլշեւիկների կողմից: Ժողովուրդը տեսնելով, որ մուսաւաթական իշխանութիւնը վերացած է եւ իր մօտ է գալիս ուրախ, յօժարութեամբ վար դրեց զէնքը եւ գրկաբաց ընդունեց եկւորներին:

Բոլշեւիկներն՝ մուտք գործելով Ղարաբաղ՝ առաջ դրամ եւ պրոպագանդիստներ մտցրին Զանգեզուրի գիւղերը, որպէսզի առանց կռւի կարողանան նւաճել երկիրը: Սակայն, զանգեզուրցիք հեշտութեամբ տեղի չտուին: Յունիս 29–ին բոլշեւիկները 15 հոգինոց մի պատւիրակութիւն են ուղարկում Զանգեզուրի Տեղ գիւղը՝ պահանջ դնելով, որ Զանգեզուրի ներկայացուցիչները ընդունին Խորհրդային իշխանութիւնը, բայց մերժում են ստանում: Տեսնելով զանգեզուրցիների անյողդողդ կեցւածքը եւ վախենալով ժողովրդական դատաստանից՝ պատւիրակութիւնը գիշերով փախչում է: Սակայն, բոլշեւիկներն աւելի համբերել չէին ուզում. Հայաստանի Հանրապետութեան զօրքերը Շարուրը նւաճելուց յետոյ՝ չարժւում էին դէպի Նախիջեւան: Բոլշեւիկեան 11–րդ բանակը որոշել էր Շուշի—Նախիջեւան ճանապարհն իր ձեռքը պահել քէմալականների հետ անմիջական յարաբերութեան մէջ գտնւելու համար, իսկ հայկական բանակի մուտքը Նախիջեւան կարող էր դրութիւնը կնճռոտել: Այդ պատճառով, կարմիր զօրքերը, յուլիսի 5–ի գիշերը, յանկարծ, առաջ են չարժւում Զաբուղից, ձերբակալում են մի քանի հայ սպաների եւ թալանի եւ կողոպուտի են ենթարկում Կոռնձոր գիւղը: Հայկական փոքրաթիւ զօրամասը Քարաչէնի մօտ կարճատեւ դիմադրութիւն է ցոյց տալիս թշնամու մեծ ուժերին եւ քաշւում Դարալագեազ: Յուլիսի 5–ին բոլշեւիկները մտնում են Գորիս, գրաւում են Սիսեանը մինչեւ Բազարչայի արեւմտեան բարձունքները եւ անմիջապէս Նախիջեւան ուղարկում 252–րդ զօրագունդը եւ մի հարիւրեակ ձիաւոր: Նախիջեւանցիք՝ Հայաստանի հանրապետութիւնից ազատւելու յուսով՝ ընկնում են բոլշեւիկների գիրկը:

Զանգեզուրն ու Սիսեանը գրաւելուց յետոյ բոլշեւիկները յուլիս 8–ին մի զօրամաս են ուղարկում դէպի Ղափան, սակայն Խոտանան գիւղի մօտ գիւղացիների լուրջ դիմադրութեան հանդիպելով յուլ. 13–ին քաշւում են յետ՝ խարեբայութեամբ իրենց հետ տանելով պատւիրակ եկած Ղափանի

յարգած զործիչ Սմբատ Մելիք-Ստեփանեանին: Զանգեզուր ու Սիսեան մտնելով՝ բոլշեւիկները սկսում են զործադրել քաղաքական տէրորն եւ բռնութերը լեցնում են տեղական զործիչներով:

Սակ, բռնութեան ու թալանի վրա հիմնուած իշխանութիւնն, ի հարկէ չէր կարող յարատեւել Զանգեզուրում: Գիւղացիութիւնը շատ չուտով համոզուեց, թէ ինքը խաբուած է, եւ սկսեց միջոցներ որոնել ստեղծուած զժոխային կացութիւնից դուրս գալու համար: Գիւղերի երիտասարդութիւնը համարեա ամէն տեղ հալածական՝ քաշուել էր լեռները կամ ապաստան գտել Դարալագեազում: Նա է գլուխ բարձրացնում բոլշեւիկների դէմ:

Ապստամբութիւնը միաժամանակ յղացւում է երկու տեղ՝ Ղափանում եւ Սիսեանում: Ղափանն իր յետեւն ունէր ազատ Արեւիքը, Սիսեանը՝ Դարալագեազը: Ղափանի շրջանում էր Գ. Նժդեհն իր զործակիցներով: Սիսեանի շարժման գլուխը կանգնեց Ստեփանոցի ապա Գօղոս Տէր-Դաւթեանը՝ մի անձնազոհ ու զաղափարական երիտասարդ, որ լայն ժողովրդականութիւն էր վայելում իր շրջանում: Հոկտ. 5-ին Տէր-Դաւթեանը խորհրդակցութեան է կանչում իր ընկերներին, ուր աչքի առաջ ունենալով նիւթական անելանելի վիճակը՝ որոշւում է վերջ տալ բոլշեւիկների իշխանութեան: Որոշւում է նաեւ յարաբերութեան մէջ մտնել Զանգեզուրի միւս մասերի հետ եւ շարժումը զարձնել ընդհանուր: Ապստամբութիւնը արագացւում է, որովհետեւ յայտնի է զառնում, որ Գորիսի Ցեղկոմը կարգադրել է Սիսեանից պատանդներ հաւաքել եւ կատարել մի շարք բռնագրաւումներ, որից յետոյ զինակոչի ենթարկել երիտասարդութիւնը: Հոկտ. 12-ին Տէր-Դաւթեանը 200 երիտասարդներով անցնում է Սիսեան: Նրան միանում են ամբողջ գիւղացիութիւնն ու հայ զինուորները: Բոլշեւիկների մի մասը ձերբակալւում է, միւս մասը սարսափահար՝ փախուստի է դիմում: Հոկտ. 14-ին ամբողջ Սիսեանն ազատւում է բոլշեւիկեան լծից:

Ղափանում ապստամբութիւնը բռնկում է հոկտ. 19-ին Գիւտկոմ, Վաչագան, Ճակատէն, Կաւարտ եւ Բարաբաթամ գիւղերում: Ժողովրդի ոգին այնքան բարձր էր, որ ամեն տեղ յաղթութիւնը լինում է արագ եւ կատարեալ: Բոլշեւիկների այդ շրջանում ունեցած ուժերի մեծ մասը գերի է ընկնում, քչերը միայն կարողանում են փախչել: Ժողովրդի ձեռքն է անցնում առատ ռազմամթերք եւ զնդացիրներ. ժողովուրդը ցնծութեամբ ոտնում է իր փրկութիւնը:

Այդ ապստամբութիւնների հետեւանքով ստեղծուած դրութիւնը այսպէս է բնորոշւում 28-րդ դիւիզիայի պետ Նեստէրէնկոյի 14 հոկտ. 29 մարտական հրամանում. «Համարեա ամբողջ Զանգեզուրում բռնւել է ապստամբութիւն: Ապստամբած հայերը գրաւել են Անգեղակոթ—Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը եւ Օխչի չայի ու Մեղրի չայի աւազանները: Նուազի գիւղի շրջանում գործող 252-րդ հրաց. եւ կովկասեան 2-րդ գնդի հետ ունեցած կապը խզուած է: Ղափանի աննշան զօրամասը շրջապատուած է, նրա վիճակն անյայտ է: 251-րդ հրաց. գունդը կռւում է թշնամու հետ Տանձքերից 4 վերստ դէպի հարաւ գտնուող Ինչաբէլի բարձունքներում»:

Բոլշեւիկեան հրամանատարութիւնը ձեռք է առնում դաժան միջոցներ եւ ծրագրում արիւնով ու երկաթով ճնշել Ղափանի ու Սիսեանի ըմբոստ գիւղացիութիւնը: Շտապ բերւում են նոր զօրամասեր: Զանգեզուր է գալիս հերոսի հռչակ վայելող Կուրօչկինը իր 1400 ձիաւորներով: Գործադրութեան դրւում են նաեւ Բագւից Գորիս հասած 1200 տաճիկ ասկեարները, որոնք, իբր թէ, Զանգեզուրի վրայով գնում էին Մուսթաֆա Քէմալին օգնութեան: Այսպիսով, կազմւում է մի ահարկու բանակ բաղկացած 83–րդ եւ 84–րդ բրիգադներից, Կուրօչկինի հեծելազօրից, տաճիկ դնդից եւ կոմունիստական խառն խմբերից: Այս ուժերն ունէին մեծաքանակ փամփուշտ ու գնդացիրներ, առատ թնդանօթներ, ժողովրդից խլած հարուստ պարենաւորում եւ տեղափոխութեան միջոցներ: Թիկունքն ապահովելու համար Գորիսից ու գիւղերից առնւած էին հարիւրաւոր պատանդներ: Զօրամասերի պետերին խիստ հրաման էր տրւած՝ լինել անողոք, չխնայել ոչ ոքի, գիւղերը հողին հաւասարեցնել, մեծ ու փոքր չխնայել, դերի չվերցնել:

Հոկտ. 15–ին սկսւում են ռազմական գործողութիւններ Սիսեանի եւ Ղափանի դէմ: Ամբողջ ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում իր գոյութիւնը պաշտպանելու համար: Կռւում են եւ ծերերը, եւ կանայք եւ երեխաները, կռւում են բահերով ու քարերով: Տեղի են ունենում յամառ ու յուսահատական կռիւներ: Ժողովրդին առաջնորդում են երկու սիրւած հերոսներ՝ Գ. Նժդեհն ու Պ. Տէր–Դաւթեանը եւ օգնում են՝ խստաշունչ ձմեռը, մութ գիշերները ու խոր ձորերը, որոնցից այնպէս սարսափում էին ռուս զինւորները: Մի քանի զօրամասերի զինւորներ հրաժարւում են կռւելու ժողովրդի դէմ. բոլշեւիկները ձեռք են առնում դաժան միջոցներ. Գորիսի բանտում գնդակահարւում են 20 կարմիր զինւորներ. 70 հոգի էլ հրացանաղարկ են արւում Ղարաղշլաղի ձորում:

Կռիւները տեւում են չարաթներ: Բոլշեւիկները, մանաւանդ ասկեարները գործում են աննկարագրելի բարբարոսութիւններ: Նոյեմբ. 17–ին դաւաճանութեամբ գրաւելով Աբցեւանիկը՝ նրանք հիմնայատակ աւերում են ու թալանում գիւղը՝ մնացած ամբողջ բնակչութիւնը սրի քաշելով: Սակայն, Ղափանի հանքերի մօտ, յանկարծ չրջապատւում են ապստամբներից, սարսափելի ջարդ կրում կուի դաշտում եւ հարիւրէ աւելի գնդացիրներ, մեծաքանակ ռազմամթերք եւ մօտ 500 դերի թողնելով՝ խուճապի մատնւած փախչում են՝ չատերը կորչելով ձորերի ու ձիւների մէջ կամ դերի ընկնելով ժողովրդի ձեռքը:

Սիսեանի ուղղութեամբ չարժւող բոլշեւիկ զօրքերը հոկտ. 20–21–ին հասնում են Եայջի եւ Անգեղակոթ եւ վերջնագիր են ներկայացնում: Զինւած ժողովուրդը Տէր–Դաւթեանի գլխաւորութեամբ ի պատասխան այս վերջնագրի բուռն յարձակում է գործում եւ թշնամուն դուրս քշում Անգեղակոթից եւ Ղարաքիլիսայից: Ապա ապստամբները տաք ճակատամարտից յետոյ գրաւում են Եայջին եւ Տաթեւի վրայով միանում ղափանցիներին: Բոլշեւիկները չտապում են սիսեանցիների դէմ ուղարկել տաճկական զօրամասը, որը ճանապարհին հայ գիւղերում անօրինակ գազանութիւններ է գործում:

Նոյեմբեր 5–ին, մառախուղից օգտւելով, ապստամբներն Ուզ գիւղի մօտ խելաթաւալ յարձակում են գործում իրենցից մի քանի անգամ ուժեղ թշնամու վրա: Տեղի է ունենում արիւնոտ կռիւ: Տաճիկները հարիւրի չափ զոհեր տալով՝ փախչում են դէպի Եայջի եւ սոսկալի վրէժ լուծում անպաշտպան ժողովրդից: Գիւղը թալանւում եւ այրւում է: Կատաբւում են առեւանգումներ ու բռնաբարութիւններ: Ուզի կռւում ապստամբները ունենում են անփոխարինելի մի կորուստ. դլխից մահացու վէրք է ստանում անկեղծ ժողովրդական հերոս Պ. Տէր-Դաւթեանը: Կռիւը երթալով սաստկանում է: Հետզհետէ ապըստամբներին են միանում եւ բուն Զանգեզուրի գիւղերը: Ոտքի է կանգնում Հալիճորը, որը նոյեմբեր 1–ին կատաղի յարձակման էր ենթարկւել ռուս, հայ եւ տաճիկ բոլշեւիկների կողմից: Օգնութեան են հասնում Տաթեւի ապըստամբները եւ երեք օրւայ տաք ճակատամարտներից յետոյ՝ ջարդում ու փախուստի են մատնում թշնամուն: Նոյեմբեր 20–ին ապստամբում է եւ Գորիսի ազգաբնակութիւնը: Բոլշեւիկներն ահաբեկւած՝ անհաշիւ կորուստներով՝ փախստի են դիմում: Ետեւում ունենալով հալածող ապստամբներին՝ բոլշեւիկեան քայքայւած ու բարոյալքւած զօրքերը փախչում են դէպի Զաբուղ՝ թալանելով ճանապարհի հայ գիւղերը: Նոյեմբեր 21–ին այլեւս ամբողջ Զանգեզուրը ազատ է բոլշեւիկեան անասելի մղձաւանջից: Ապստամբ ժողովուրդն անմիջապէս ընտրում է 7 հոգինոց գիւղացիական ժամանակաւոր մի խորհուրդ, որը մինչեւ դեկտեմբեր 25 հանդիսանում է երկրի բարձր իշխանութիւնը:

Բոլշեւիկեան հրամանատարութիւնը՝ պարտւած կռւի դաշտում այնուհետեւ փորձեր է անում կոչերով ու նամակներով համոզել ապստամբներին նորից ընդունելու խորհրդային իշխանութիւնը: Այդ տեսակէտից շատ հետաքրքրական է բոլշեւիկ հրամանատարութեան եւ Գ. Նժդեհի միջեւ տեղի ունեցած գրագրութիւնը:*)

Զափից աւելի աննպաստ ժամանակ կատարւեց Զանգեզուրի ազատագրութիւնը: Ազատւելով բոլշեւիկներից՝ նա մնաց բոլորովին մենակ, կտրւած ամբողջ աշխարհից, նաեւ Հայաստանից, որը այդ միջոցին պարտւած տաճիկներից՝ արագ քայլերով դիմում էր դէպի բոլշեւիզմ: Խորհրդային Ռուսաստանը՝ ազատ արտաքին եւ ներքին բոլոր ճակատներից՝ իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրել էր Մերձաւոր Արեւելքի վրա եւ պատրաստւում էր խորհրդային կարգեր մտցնելու նաեւ Անդրկովկասում: Ինչ կարող էր անել հիւսիսից՝ անհեթեթ թափով խուժող ալիքի առջեւ մենակ մնացած զանգեզուրցին...

Չնայած դրան, անխառն ոգեւորութիւն ու հաւատ է տիրում ամբողջ երկրում: Ժողովուրդը վստահ իր ուժերի վրա՝ վճռում է այլեւս ոչ մի գնով չվերադառնալ «բոլշեւիկեան դրախտ» եւ սեփական ուժերով տնօրինել իր ճակատագիրը: Այս տրամադրութիւնը բուռն թափով արտայայտւում է նաեւ համազանգեզուրեան պատմական համագումարի մէջ: Արժէ մի քիչ աւելի

*) «Արիւնոտ գիրք», Գորիս 1920 թ.:

երկար կանգ առնել այս վերին ատիճանի ուշագրաւ ժողովի եւ նրա մէջ արտայայտուած մտքերի եւ ընդունուած հետաքրքրական որոշումների վրա։*)

Համագումարը տեղի է ունենում 1920 թւի դեկտ. 25, Տաթեւի վանքում։ Ներկայ են լինում Զանգեզուրի բոլոր չրջանների պիւղերից ընտրուած 100 պատգամաւորներ, Զանգեզուրի բոլոր չրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները եւ սպարապետ Գ. Նժդեհը — ընդամենը 118 հոգի։ Նախագահ է ընտրւում տեղական գործիչ Գ. Տէր-Մինասեանը։ Ընդունւում է հետեւեալ օրակարգը.

1. Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձի մասին եւ համագումարի բռնելիք դիրքը։

2. Զեկուցումներ բոլոր չրջանային խորհուրդների գործունէութեան մասին։

3. Ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւը։

4. Իշխանութեան կազմակերպումը.

ա. Սպարապետի հրաւիրումը.

բ. Ինքնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի ընտրութիւնը։

5. Իշխանութեան կենտրոնատեղիի որոշումը։

6. Արտաքին քաղաքականութիւն։

Փոխյարաբերութիւն

ա. Հայաստանի Հանրապետութեան հետ։

բ. Ազրբէջանի Հանրապետութեան հետ։

գ. Պարսկաստանի կառավարութեան հետ։

դ. Հարեւան թուրքերի հետ։

7. Ինքնապաշտպանութեան հարց։

8. Պարենաւորում։

9. Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշում։

10. Մասնաւոր եւ խոշոր սեփականութիւնների պետականացումը։

ա. Վանքապատկան եւ եկեղեցական.

բ. Խանների, բէկերի եւ մելիքների.

գ. Արդիւնաբերութեան։

11. Ընթացիկ հարցեր.

ա. Որբանոցի.

բ. Զուլհականոցի.

գ. Նախկին կառավարութիւններից զանազան անձնաւորութիւնների մօտ մնացած գումարների պահանջման հարց.

դ. Դրամների գործադրութիւնը։

Այսպիսով ուրեմն, համագումարը հանդիսանում է մի տեսակ Սահ-

*) Ժողովի արձանագրութիւնը տե՛ս հատորիս յաւելուածում։

մանադիր ժողով, որ քննութեան է առնում մի շարք հիմնական պետական սկզբունքներ եւ որոշում երկրի պետական կառոյցը: Առաջ բերենք ընդունուած որոշումներից դլխաւորները.

«Մի շարք ներկայացուցիչների երկար ու բազմակողմանի արտայայտութիւններից յետոյ, համագումարը բուռն ծափահարութիւններով եւ «ուռա»ներով ընդունում է միաձայն հետեւեալ բանաձեւը.

«Զանգեզուրի մի բուռն տականքների եւ ազգուրացների հրաւիրանօք, առանց ազգաբնակութեան կամքն ու ցանկութիւնը հարցնելու, Զանգեզուր մտան սովետական զօրամասերը, որոնք իրենց հինգ ամսեայ տիրապետութեան ընթացքում տնտեսապէս քայքայեցին Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը:

«Սովետական հրամանատարութիւնը հէնց առաջին քայլից գաւառիս գիւղացիութեան նկատմամբ սկսեց իր աւերիչ, քայքայիչ քաղաքականութիւնը, որի առաջ նսեմանում են պատմական Լէնկ-Թիմուրեան եւ արեւելքի բարբարոսների արշաւանքներն ու գործելակերպը: Հայ աղքատ գիւղացիութեան տնտեսապէս քայքայուած շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր եւ կապիտալիստների դէմ մղելիք քաղաքականութիւնը գործադրում աղքատ, անօգնական գիւղացիների ու այրի կանանց դէմ: Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարաւ մեր աղքատ գիւղացու միակ եզը, կովը, ձին ու աւանակը, գրաւեց նրա անասունների կերը եւ թողեց մերկ ու զուրկ ամեն ինչից: Սովետական հրամանատարութիւնը՝ մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները՝ աւերեց, հողին հաւասարացրեց մեր գիւղերը եւ իր գրաւածների հանդէպ մեզ չտուաւ մի թէկ անգամ: Նա անկարող եղաւ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրւանքա նաւթ անգամ, չնայելով մեզ նաւթ, մանուֆակտուրա եւ այլ մթերքներ տալու խոստումներին:

«Այս բոլորից յետոյ, մենք համոզուեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն յափշտակելու մեր կայքն ու գոյքը, թալանելու մեզ եւ իսպառ ոչնչացնելու: Սովետական կառավարութիւնը իրեն յատուկ արեան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ եւ տասնեակներով կոտորեց նրանց՝ չխնայելով մեր գրական վաստակաւոր գործիչներ Խորենուն, Շիրինեանին եւ տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքօներին յօշոտելուց: Առանց քննութեան եւ որոշ մեղադրանքների մեր ռանչպար գիւղական երիտասարդներից տասնեակներով գլխատեցին ու փոսերը թափեցին եւ վերջում իր հայակործան յաղթանակը կամենալով առաջ տանել՝ մեր գաւառը մտցրեց հազարով տաճկական ասկեարներ, որոնք իրենց «հայի աստուած» էին անւանում:

«Սովետական կառավարութիւնը՝ մոռանալով տաճկական դարաւոր հայկինչ քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ՝ դէպի հայ գիւղերն ուղղեց տաճկական ասկեարներին, որոնք Քարահունջ, Խատ, Շինուհայր, Հալիճոր, Եայջի, Զէյվա եւ ուրիշ գիւղերում իրենց բարբարոս եւ գազանային բնազդները դործադրեցին հայ կնոջ եւ կոյս աղջիկների վրա՝ նրանց

պատիւը ոտի տակ տալով։ Կոխոտեցին, ցեխի հաւասարեցրին մեր պապենական ամեն տեսակի սրբութիւն, եկեղեցի, ընտանեկան պատիւ եւ պատկառանք։ Սովետական կառավարութիւնն իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնութիւնները կատարեալ կերպով առաջ տանելու համար՝ հարիւրաւոր անմեղ մարդիկներ բանտ ձգեց ու խեղդեց։

«Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնն այլեւս չկարողանալով տանել նման բարբարոսութիւններ՝ որոշեց դուրս վռնդել սովետական Ռուսաստանի զօրքերին եւ նրա դիմակի տակ թագնուած ազրբէջանեան վարձկաններին, որոնք աւերեցին իր երկիրը, եւ ազատել իր օջախն ու պատիւը։

«Տարւոյս Հոկտ. 10-ից սկսած զանգեզուրցին ապստամբական դրօշ պարզեց եւ իր սխատմաթիկ յարձակումներով նոյեմ. 21-ին դուրս քշեց իր սահմաններից անկոչ այն զօրամասերը, որոնք իրենց հինգ ամսւայ տիրապետութեան ընթացքում իրան կորստեան դուռը հասցրին։

«Սովետական Ռուսաստանն ու Ազրբէջանը՝ չբաւականանալով այս ամենից՝ ցանկացան գլխատել եւ իսպառ ոչնչացնել հայ ժողովուրդը, ներս հրաւիրեցին տաճկական հորդաներին, Քէմալի գլխաւորութեամբ Հայաստան, եւ Ալեքսանդրապոլի պատերի տակ սոխակեցին Հայաստանին ընդունելու, այսպէս կոչւած «խորհրդային» իրաւակարգը, մի ռէժիմ եւ ծրագիր, որոնց չէ կարող այլեւս հանդուրժել բովանդակ հայ ժողովուրդը։ Ի նկատի առնելով վերոյիշեալները եւ այլն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրոյն կեանքով եւ չարունակելու է մնալ նոյնը, համազանգեզուրեան համագումարը իր սոյն օրւայ նիստում որոշեց.—

«Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար՝ մտցնելով հանրապետական իրաւակարգ, մնալով անկախ, մինչեւ որ քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր երկրի՝ Հայաստանի հետ»։

«Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները։

«Ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւի գլխաւոր դծերն են.

«Սոյն համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին — պարլամենտ եւ վերապահել նրան Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը։

«ա. Պարլամենտը հրաւիրւում է տարեկան առնւազն երկու անգամ իր դիւանի կողմից, իսկ բացառիկ պայմաններում իր անդամների կէսի կամ դիւանի պահանջմամբ։

«բ. Պարլամենտի անդամները ընտրւում են երկրի ազգաբնակութեան կողմից հետեւեալ ձեւով. մինչեւ 100 ծուխ ունեցող գիւղական համայնքը տալիս է մէկ, 100-ից մինչեւ 200 ծուխ ունեցողները՝ երկու եւ 200-ից աւելի ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչ։ Ընտրութիւնները կատարւում են ընդհանուր ընտրական քառանդամ սիստեմով։

«գ. Պարլամենտը ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարութիւն եւ ցրւում։ Մինչեւ պարլամենտի նոր նստաշրջանը կառավարութեանն է անցնում այդ երկրի գինւորական եւ քաղաքացիական բո-

լոր գործերի ղեկավարութիւնը, որը եւ կիրառում է կեանքի մէջ պարլամենտից բղխած բոլոր օրէնքներն ու որոշումները:

Նաւօրութիւն. Պարլամենտը կառավարութեան անդամ կարող է ընտրել նաեւ ոչ պարլամենտի անդամներից:

«դ. Կառավարութեանն է վերապահւում զինուորական ընդհանուր-հրամանատարի-սպարապետի հրաւիրումը եւ արձակումը:

«ե. Կառավարութեանն է վերապահւում պատերազմ յայտարարելու եւ հաշտութեան բանակցութիւններ վարելու իրաւունքը, իսկ արտակարգ դէպքում այդ վերապահւում է նաեւ սպարապետին:

«զ. Կառավարութեանն է վերապահւում երկրի թէ քաղաքացիական եւ թէ զինուորական կառավարչական ձեւերի հաստատումը եւ օրէնսդրութիւնը:»

«է. Կառավարութիւնը բաժանւում է ըստ վարչութիւնների նախարարական կազմի ձեւով:

«ը. Զինուորական բոլոր տեսակի գործերը տարւում են սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարութեան»:

Սիւնիքը բաժանւում է 6 շրջանների. Բուն Զանգեզուր, Տաթեւի Զոր, Ղափան, Դարաբասի Զոր, Սիսեան:

Ինքնավար Սիւնիքի կառավարութիւնը գաղտնի քւէարկութեամբ ընտրւում է հետեւեալ անձերից. Գ. Տէր Մինասեան, Ն. Դորունց, Ի. Մելիք Փարսադանեան, Գ. Գրիգորեան, Ե. Յարութիւնեան, Մ. Տէր Մկրտիչեան, Տ. Մելիք Հուսէյնեան եւ Ս. Մաշուրեան:

Ընտրւում է պետական վերահսկողութիւն 3 անդամից:

Իշխանութեան կենտրոնատեղի որոշւում է Գորիսը:

Երկրի պաշտպանութեան վերաբերող բոլոր հարցերի ձեռնարկումը եւ գործադրութիւնը միաձայնութեամբ որոշւում է թողնել սպարապետին, Գարեգին Նժդեհին:

Պարլամենտը ընդունում է մասնաւոր խոշոր սեփականութիւնների, ինչպէս վանքապատկան-եկեղեցական եւ բէկական նոյնպէս եւ ուրիշ խոշոր կալւածքների պետականացում:

Հայաստանի հետ ունենալիք յարաբերութիւնների մասին անցնում է հետեւեալ բանաձեւը.

«Զանգեզուրը միշտ ձգտել է եւ ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի հանրապետութեան անբաժան մասը, բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխութիւնները, որ նա ստիպւած մի շարք քաղաքական անբարեյաջող հանգամանքներից յայտարարել է իրեն խորհրդայինի, մի իրաւակարգ, որի հետ երբէք չէ կարող հաշտւել մեր ժողովուրդը, պարլամենտը որոշեց, մինչեւ նրա այդ իրաւակարգից բաժանւելը գործել սեպարատ եւ ապրել ուրոյն կեանքով»:

Մնացած ընթացիկ հարցերի լուծումը թողնելով կառավարութեան՝ համագումարը ընդհանուր ոգեւորութեան մէջ վերջացնում է իր աշխատանքները դեկտեմբերի 27-ին:

Այնուհետեւ, մինչեւ նորից բոլշեւիկների ձեռքն անցնելը, Զանգեզու-

րըն ապրում է կատարելապէս անկախ կեանքով: Երկրի գերագոյն իշխանութիւնը փաստօրէն հանդիսանում է սպարապետ Նժդեհը: Նժդեհի անձնական յատկութիւնները եւ նրա արտակարգ ազդեցութիւնը ժողովրդի վրա ստեղծել են թողնում կառավարութիւնը:

Պարտուած եւ ամօթահար փախած բոլշեւիկները հանգիստ չեն թողնում Զանգեզուրը: Նրանք չարունակում են փորձեր անել կորցրած իշխանութիւնը վերադրաւելու, այս անգամ այլեւս ոչ թէ զէնքի ուժով, այլ խարդախ ու նենգամիտ դիւանագիտութեամբ: Ապստամբ զանգեզուրցիներին ուղղած իրենց բազմաթիւ գրութիւններով, կոչերով ու թռուցիկներով նրանք մերթ համոզում են, յորդորում ու խաբում, մերթ սպառնում են, մերթ դիմում կեղծիքի, խարէութեան ու պրովոկացիայի: Սակայն նրանց բոլոր ճիգերը կորչում են անհետեւանք. Զանգեզուրը մնում է անյողդողդ եւ յետ է շպրտում բոլոր առաջարկութիւնները: Արժէ մի քանի նմոյշներ բերել բոլշեւիկեան «դիւանագիտութիւնից» — այնքա՞ն յատկանշական էր նաեւ ընդհանուր բոլշեւիկների համար:

Զանգեզուրից քշելուց երկու օր անցած, 28-րդ դիւիզիայի զինուորական կոմիսարը Շուշուց հետեւեալ նամակն է ուղղում «Զանգեզուր գաւառի ապստամբ աղգաբնակութեան հրամանատարութեան». «Ռուսական կարմիր բանակը գտնելով Զանգեզուրում՝ բնաւ հետամուտ չէ եղել նւաճման դիմելու կամ բռնադրաւումներ կատարելու, մանաւանդ երբեք չի համարել իրեն Հայաստանի հետ պատերազմական վիճակում: Կարմիր բանակին լաւ յայտնի է, որ Զանգեզուրի ժողովուրդի ապստամբութիւնն իր դէմ արդիւնք է ձեր յերիւրած ոճրագործ պրոպագանդի, որ իրր թէ, կարմիր բանակը չէ այլ, այլ ազրբէջանեան վարձկանները եւ նաեւ չատ ուրիչ յերիւրանքներ: Կարմիր բանակին յայտնի չէ նոյնպէս, որ Զանգեզուրի ժողովրդի մեծամասնութիւնն ապստամբել է իր դէմ ինքնաբերաբար, այլ յանձին Հայաստանից եկած կանոնաւոր զօրամասերի, ձեր զանազան սպառնալիքների ազդեցութեամբ:

«Այդ հիման վրա առաջարկում եմ.

«48 ժամւայ ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած մեր հիւանդ ու վիրաւոր եւ հոկտ. 15-ից կռիւներում գերուած զինուորներին, Գորիսում մնացած ամբողջ դոյքն ու ռազմամթերքը, ինչպէս նաեւ յիշեալ ժամանակամիջոցում հեռացնել Զանգեզուրից կանոնաւոր զօրամասերը, իսկ ապստամբ ժողովրդին տեղաւորել իրենց բնակավայրերում: Միաժամանակ յայտարարում եմ. ապստամբների ստացած-քի ապահովութիւնը, անձի անձեռնմխելիութիւնը երաշխաւորւում է այն պայմանով միայն, որ նրանք յանձնեն իրենց ունեցած զէնքն ու ռազմամթերքը: Հակառակ պարագայում ռուսական խորհրդային իշխանութիւնը կը հրաժարի Հայաստանի եւ տաճիկ յեղափոխական զօրքերի միջեւ կնքւելիք հաշտութեան միջնորդելուց:

«Սպասում եմ պատասխանի մինչեւ 24 ժամ: 23 նոյեմբ. 1920 թւի ժամը 11-ին, 28»:

Նկատեցէք, որ այս տողերը գրողը այն կոմիսարն է, որ հոկտ. 14-ին իրեն ենթակայ բրիգադների պետերին հրամայում էր «խուսափել ամէն տե-

սակ մարդասիրական միջոցներից եւ լինել դաժան ապստամբ բնակչութեան հետ», «զերի չվերցնել», «կանդ չառնել ամբողջ գիւղերն աւերելու առաջ» եւ «զրաւած գիւղերը զօրամասերին ապահովել սովից ի հաշիւ ապստամբների»: Ինչքան փոխուած է երեւում այժմ նրա տրամադրութիւնը, բայց զանդեղուրցիներն, ի հարկէ, այլեւս չէին հաւատում նրա խաղաղասէր ոգուն...

Երեք օր վերջը, Ջարդուած 84–րդ բրիգադի պետ եւ մարտական զօրաճակատի հրամանատար Սիմիոնովը մի ընդարձակ գրութիւն է ուղարկում «Զանգեզուրի ապստամբ զօրամասերի հրամանատար գնդ. Նժդեհին, որի մէջ հաղորդելով, որ «Հայ աշխատաւոր ժողովուրդն արդէն ապստամբել է Հայաստանում, խորհրդային իշխանութիւն հաստատելու նպատակով» եւ որ «ներկայ րոպէին՝ Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը միջնորդի դեր է կատարում՝ բանակցութիւններ վարելով Հայաստանի եւ տաճիկ յեղափոխական զօրքի միջեւ հաշտութիւն կնքելու համար» — առաջարկում է «անմիջապէս դադարեցնել ռազմական գործողութիւնները և այդպիսի կռիւը վերջացնելու համար դիմել բանակցութեան»: Հաշտութեան մի շարք պայմանների մէջ հիմնական տեղն է բռնում, ինչպէս միշտ, ժողովրդի կատարեալ զինաթափութիւնը եւ մարտական ուժերի ցրումը, որի փոխարէն «Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կարմիր բանակի զինուորական հրամանատարութիւնն ու Ազրբէջանի խորհրդային իշխանութիւնը երաշխաւորում են կատարեալ ապահովութիւն հայ ժողովրդի խաղաղ աշխատանքի եւ ապստամբների անարգել վերադարձն իրենց բնակավայրերը»: Ինչ խօսք, որ «Սակաւ գիտակից հայ ժողովուրդը» դերադասում է սեփական միջոցներով երաշխաւորել իր «խաղաղ աշխատանքը» եւ մնում է պինդ իր որոշման վրա. թէեւ հաշտութեան բանակցութիւններից չի հրաժարւում, բայց առաջարկում է բանակցութիւններ վարել ոչ թէ Ջաբուղում, որի վրա պնդում էր բոլշեւիկ հրամանատարութիւնը, այլ Գորիսում:

Սիմիոնովի այս գրութեան մէջ ուշագրաւ էր յատկապէս այն կէտը, ուր խօսւում էր Հայաստանում ծագած ապստամբութեան մասին: Դեռ Ղարաբաղի լեռներում գտնուող բոլշեւիկ զինուորականը խօսում էր Հայաստանի ապստամբութեան մասին, մինչդեռ բոլշեւիկ զօրքերը Իջեւան խուժեցին միայն նոյ. 29–ին: Այսպիսով, ուրեմն, 11–րդ բանակի հրամանատարութեան համար Հայաստանի դրաւումը վաղուց արդէն վճռուած հարց է եղել, եւ անհիմն են այն կարծիքները, թէ, իբր, Հայաստանի բռնի բոլշեւիկացումը կատարւել է միայն հայ բոլշեւիկների սադրանքներով հակառակ կենտրոնի հրամանի: Հայաստանի, ինչպէս յետագայում եւ Վրաստանի նուաճումը կարմիր Խորհրդային Ռուսաստանի զօրքերի կողմից, անշուշտ, անմիջական հետեւանք էր վարած արեւելեան քաղաքականութեան. Հայաստանը չէր կարող սեպի պէս թողնուել «յեղափոխական տաճիկների» եւ «կարմիր բոլշեւիկների» միջեւ:

Հայաստանի խորհրդային դառնալուց յետոյ, ինչպէս արդէն տեսանք, «հակայեղափոխական Զանգեզուրը» չափազանց մեծ վախ ու մտահոգութիւն էր պատճառում Երեւանի կոմունիստներին: Ջեռք առնւեցին մի շարք միջոց-

ներ Զանգեզուրն ընկճելու համար: Դեռ նոյեմբերի վերջերին Զանգեզուրի դործերով Երեւան եկած յայտնի հասարակական դործիչ Աչոտ Մելիք Մուսեանը վերադարձել էր, Հայաստանի Ցեղկոմի յանձնարարութեամբ համոզելու զանգեզուրցիներին, որ ընդունեն Խորհրդային իշխանութիւնը: Մելիք Մուսեանի ջանքերն անցել էին ապարդիւն, եւ նա վարակուելով տիֆով՝ վերջ է տուել իր կեանքին Գորիսի հիւանդանոցում: Դեկտ. 16–ին Զանգեզուրի գիւղացիութեան եւ հրամանատարութեան ուղղուել էր հետեւեալ հեռագրական կոչը պինուորական կոմիսար Աւիսի եւ Դրոյի ստորագրութեամբ:

«Թող յայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը յայտարարած է խորհրդային յեղափոխական հանրապետութիւն: Հին կառավարութիւնը նետել էր երկիրը արեան եւ արցունքի անդունդը: Զանգեզուրի բարձունքներում կուսելով կարմիր բանակի դէմ՝ դուք այդպիսով անդիտակցաբար խորացնում էք վիշտն ու դժբախտութիւնը ձեր ժողովրդի, որի միակ փրկութիւնը կախուած է կարմիր բանակի եւ Խորհրդային Ռուսաստանի օգնութիւնից: Խորհրդային Ադրբէջանը զիջել է Խորհրդային Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջեւանը: Խորհրդային Ռուսաստանը, միմիայն նա է ընդունակ կանխելու այն վտանգը, որ սպառնում է դրսի ուժերի կողմից եւ հաշտեցնելու ձեր ժողովուրդն իր հարեւանների հետ՝ վերականգնելով նրա իրաւունքները: Հայաստանը քայքայուած է. մենք կարող ենք վերականգնել միայն այն օգնութեան միջոցով, որ ցոյց կը տան մեզ խորհրդային Ռուսաստանը եւ խորհրդային Ադրբէջանը՝ առաջինն՝ իր ուժեղ բանակով, իսկ երկրորդն իր նաւթով: Խորհրդ. Ադրբէջանը հրաժարուեց Զանգեզուրից, Լեռնային Ղարաբաղից եւ Նախիջեւանից: Այսօր նա արդէն ուղարկում է մեզ համար նաւթ, մանուֆակտուրա եւ մթերք: Մեր ժողովուրդը սուր կարիք է զգում երկաթուղագծերի բացման եւ խորհրդային իշխանութեան ամրապնդման Անդրկովկասում: Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպուած է խորհրդային իշխանութիւնը: Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդում, բացի հին կառավարութեան անդամներից, որոնք Ցեղկոմի ձեռքով ձերբակալուած եւ յանձնուած են ժողովրդական դատի: Մենք համոզուած ենք, որ մեր բոլորի հարազատ Զանգեզուրն եւս կը մտնի Խորհրդ. Հայաստանի մէջ, որպէսզի վերջ տրւի ամէն մի թշնամական դործողութեան կարմիրների դէմ, որոնք բարեկամական եւ եղբայրական յարաբերութեան մէջ են գտնուում Խորհրդ. Հայաստանի կարմիր զօրքերի հետ: Խորհրդ. Հայաստանի կառավարութիւնը դիմել է կարմիր զօրքի հրամանատարութեան, որպէսզի իր զօրքը յետ քաշէ Զանգեզուրի շրջաններից այն հաւատով, որ Զանգեզուրի գիւղացիութիւնը վերջ կը տայ թշնամական գործողութեան կարմիրների դէմ: Խորհրդ. Հայաստանի անունից մենք յայտնում ենք բոլոր կուիների մասնակցողներին ներումը՝ համարելով այդ կուիը կործանարար մեր ժողովրդի համար: Մենք կոչ ենք անում Զանգեզուրին Խորհրդ. Հայաստանի իշխանութեան դրօշակի տակ կանգնել, մերձենալ Ռուսաստանին և Խորհրդ. Ադրբէջանին: Մենք ազնուութեամբ, բաց սրտով յայտարարում ենք մեր ժողովրդին, որ կարմիր զօրքի դէմ յետագայ կուիները

ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին: Խորհրդ. Հայաստանի առնչությից մենք կոչ ենք անում Զանգեզուրին դիմել խաղաղ աշխատանքի: Պահանջում ենք անմիջապես դադարեցնել ամէն տեսակի պատերազմական գործողութիւն եւ ենթարկուել Հայաստանի խորհրդային իշխանութեան: Սոյն հրամանի խախտելը մեր կողմից կը նկատուի իբրեւ թշնամական գործողութիւն՝ ուղղուած Խորհրդ. Հայաստանի եւ նրա դաշնակից Խորհրդ. Ռուսաստանի եւ նրա կարմիր զօրքի դէմ: Խորհրդ. Հայաստանի հանրապետութեան զինուորական կոմիսար՝ Ալիխ, Խորհրդ. Հայաստանի կարմիր զօրքերի հրամանատար՝ Դրօ: 16 դեկտ. 1920 թ.»:

Դիտմամբ առաջ բերինք այստեղ այս երկար գրութիւնն ամբողջութեամբ ցոյց տալու համար բոլշեւիկների խարդախ գործելակերպի մի նմոյշ եւս: Կասկածից դուրս է, որ այս կոչի տակի Դրօյի ստորագրութիւնը կեղծուած է: Անկարելի բան է, որ Դրօն համաձայնած լինի իր ստորագրութիւնը դնել մի գրութեան տակ, որի մէջ դատապարտուում է «հին կառավարութիւնը, որը, իբր թէ, նետել էր երկիրը արեան եւ արցունքի անդունդը». այդ կառավարութեան անդամ էր եղել եւ ինքը՝ Դրօն, իբրեւ զինուորական նախարար, իսկ դրանից առաջ հրամանատար զօրքերի, որոնք կեանքի մէջ անց էին կացնում «հին կառավարութեան քաղաքականութիւնը»: Բացի այդ, Դրօն չէր կարող ստել զանգեզուրցիներին, թէ «Խորհրդ. Ադրբէջանն արդէն ուղարկում է մեզ համար նաւթ, մանուֆակտուրա եւ մթերք», որովհետեւ նա դիտէր, որ այդ ճիշտ չէ: Չէր կարող ասել նաեւ, որ «քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդւում», որովհետեւ նա տեղեակ էր որ Հայաստանի բանտերն արագ կերպով լեցւում էին: Բացի «հին կառավարութեան անդամներից»՝ բանտարկուած էին արդէն Բ. Իշխանեանը, Համազասպը, Ս. Մելիք-Եոլչեանը, Նոր Բայազիտի քաղաքագլուխ՝ Վ. Աֆրիկեանը, բժ. Ց. Տէր-Դաւթեանը, Գ. Վարշամեանը, Վ. Բաբայեանը, Ա. Աստուածատրեանը, բժ. Ց. Մելիքեանը եւ ուրիշ շատ շատերը: Ինչպէ՞ս կարող էր Դրօն այդպիսի անհեթեթ սուտ ասել զանգեզուրցիներին: Պարզ է, որ նրա ստորագրութիւնը, հակառակ իր կամքի կամ նոյնիսկ իրենից գաղտնի, դրուած էր Ալիխի անուան կողքին Զանգեզուրի վրա տպաւորութիւն գործելու հաշուով*):

Դրօն իսկապէս համոզուած էր, որ Զանգեզուրի անկախ գոյութիւնը վնասակար էր Հայաստանի համար եւ կողմնակից էր Զանգեզուրն եւս Խորհրդային Հայաստանին միացնելուն: Այդ նպատակով, 1921 թ. յունւ. 21-ին, Բագւից, 11-րդ բանակի հրամանատարի առաջարկութեամբ, նա մի պատւիրակութիւն է ուղարկել Զանգեզուր եւ Զանգեզուրի դիւղացիական կոմիտէի ու Նժդեհի անունով գրել էր մի նամակ, որի մէջ ուղում էր հաւատալ, որ «Զանգեզուրը և նրա զեկավարները վերջ կը տան իրենց բռնած քաղաքականութեանը եւ կը միանան իրենց Մայր երկրին Հայաստանին, որ

*) Ստամագայիլն, Դրօն անձամբ հաստատեց, որ այս հեռագիրը գրուած էր Ալիխի առաջարկութեամբ եւ կասեանի ու Մռաւեանի հաւանութեամբ: Զանգեզուրցիին ատելիքի մասին ընդհանուր որոշում է տուել, իսկ հեռագիրը շարադրել եւ ստորագրութիւնները դրել է Ալիխը իմքը:

Մոսկվայում տաճիկների հետ բանակցութիւնը կը դայ ապացուցանելու, որ Խորհրդ. Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատաւորութեան շահերը: Ուստի, ձեզ պէտք է անմիջապէս յայտարարել Խորհրդային եւ միանալ Խորհրդ. Հայաստանի հետ»:

Դրոյի եւ նրա պէս մտածող ուրիշ շատերի յոյսերն ու բարի տրամադրութիւնները այնպէս գոհեկօրէն ոտնահարեցին Մոսկվայում, ուր Խորհրդ. Ռուսաստանը մարտ 16 դաշնագրով ոչ միայն չպաշտպանեց հայ աշխատաւորութեան շահերը, այլ նրան ամբողջապէս յանձնեց քէմալականների քմահաճոյքին՝ զոհ դարձնելով Հայաստանը իր արեւելեան քաղաքականութեան:

Դրոյի պատգամաւորութեան հետ «ինքնավար Զանգեզուրի կառավարութեան», յունս. 22–ին, դրութիւններ էին ուղարկել նաեւ Շուշի քաղաքի ու շրջակայքի կայազօրի պետ Վայցեխովսկին եւ 84–րդ բրիգադի պետ Սիմէոնովը: Առաջինը վկայելով, որ «Ղարաբաղի աղքատ ժողովուրդը զանազան տեսակի թիւրիմացութիւնների ազդեցութեան տակ... առաջացնում է ապստամբութիւններ»՝ յայտնում է, որ ինքը դերազոյն զինուորական հրամանատարութեան կողմից լիազօրուած է — Զանգեզուրի կառավարութեան հետ — մտքերի փոխանակութիւն ունենալու»: Երկրորդը հաստատելով, թէ «ոտք դնելով Հայաստանի հողին վրա՝ կարմիր բանակն ունեցել է միայն մի նպատակ — Հայաստանի աշխատաւորութեան ազատագրումը կապիտալիզմի չարանենգ ճնշումից», նոյնպէս առաջարկում էր «դադարեցնել ամէն տեսակի պատերազմական գործողութիւններ, կապ հաստատել մեզ հետ եւ փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու»:

Այս բոլոր դիմումներին Զանգեզուրի ազգաբնակութեան անունից յունուար 25–ին, պատասխանել է Գ. Նժդեհը 11–րդ բանակի հրամանատարին: Մերկացնելով բոլշեւիկ բարձր հրամանատարութեան վարած կործանարար քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ եւ կոմունիստների գործած վայրագութիւնները Երեւանում ու գաւառներում՝ Նժդեհը, իրրեւ նախապայման բանակցութիւնների, յայտնում է հետեւեալ ցանկութիւնները.

«1. Երբ դուք ազատէք բանտերից Հայաստանի յեղափոխական–սոցիալիստական կուսակցութիւնների անդամներին.

«2. Մաքրէք քէմալականներից այն հողամասերը, որոնք գրաւած են նրանց կողմից.

«3. Հրաժարուէք Զանգեզուրում գաղտնի, ստորերկրեայ աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական յարաբերութիւններ ինքնավար Սիւնիքի եւ Խորհրդային իշխանութեան միջեւ»:

Այս պատասխանը առիթ է դարձել մի նոր ընդարձակ գրութեան, որ 11–րդ բանակի ռազմա–յեղափոխական խորհրդի լիազօրութեամբ, նրա մէկ անդամը, փետր. 15–ին ուղղուած է «քաղաքացի Նժդեհին եւ քաղաքացի Տէր–Մինասեանին»: Ըստ այդ նամակի, «Ռազմա–յեղափոխական կոմիտէի մէկ

անդամը» յայտնում էր, որ դալիս է պարզելու մի քանի «թիւրիմացութիւններ»: Ի միջի այլոց, «ռազմա-յեղափոխական կոմիտէի անդամը» գրում էր. «Մեր զօրքերի մուտքը Հայաստան նպատակ է ունեցել պաշտպանել Ղորհրդ. Հայաստանը վերջնական անկումից եւ առաջն առնել տաճիկների յետագայ յառաջխաղացման, եւ դուք տեսնում էք, որ այդ գործում մենք յաջողութիւն ունեցանք. կարմիր զօրամասերի ներկայութիւնը միայն ստիպեց տաճիկներին կանգ առնել ներկայ սահմանագծի վրա, որ աւելի բարւօք է, քան, որ գծել էին տեղի տուող դաշնակները»:

Տաճիկ զօրամասի խժդժութիւնները Զանգեզուրում «Ռազմա-յեղափոխական կոմիտէի անդամի» նամակում բացատրւած են այսպէս. «Զանգեզուրում, յիրաւի, տեղի է ունեցել մի ամօթալի դէպք, որի նկատմամբ մենք չենք գովում... խօսքս տաճկական զնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քէմալի մօտ: Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար: Զնդին կարգադրւած է եղել անցնել Նախիջեւան. ամէն մէկի համար ակնբախ է, որ այդ զնդի ներկայութիւնը տաճկական զօրամասերի մէջ անհրաժեշտ է եղել նրանց նւազագոյն յեղափոխական լինելը հաստատելու համար: Ո՞վ կարող էր ենթադրել, որ կարող են տեղի ունենալ դժբախտ դէպքեր կամ թիւրիմացութիւններ, որ թէ ազգաբնակութիւնը եւ թէ այդ զունդը միմեանց դէմ զէնք բարձրացնեն, այն էլ կարմիր զօրքի անւան տակ»:

Հայաստանում կատարւած հալածանքների առթիւ գրում էր.

«Դուք տգեղ կերպով չափազանցում էք: Ինձ յայտնի չէ զնդակահարութեան և ոչ մի դէպք. ընդհակառակը, երէկ ուղիղ հեռագրաթելով Բագւի հետ խօսելու ժամանակ ինձ յայտնեցին, որ Ղորհրդ. Հայաստանի կառավարութիւնը յայտարարել է կատարեալ քաղաքական ամնիստիա: Ես կարող էի Ձեզ յիշել նաև նախկին կառավարութեան մի շարք պարագլուխների, որոնց, Ղորհրդ. Հայաստանի կառավարութեան որոշմամբ, մեր զօրամասերի կողմից թոյլ է տրւել անցնել արտասահման: Վերջապէս ինչ վերաբերւում է Զանգեզուրի չրջանի ներկայ գործիչներին, ես լիազօրւած եմ յայտնելու Ձեզ, որ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը եւ բարձր հրամանատարութիւնն երաշխաւորում են Ձեզ կատարեալ եւ անպայման անձեռնմխելիութիւն»:

Կարո՞ղ էր զանգեզուրցին հաւատալ 11-րդ բանակի խոստումներին այն ժամանակ, երբ նրա լիազօր ներկայացուցիչը օրը-ցերեկով խաբում էր. փետր. 15-ին նա խօսում էր Հայաստանում յայտարարւած քաղաքական ամնիստիայի մասին, այն ինչ նոյն ժամին հայ ամբողջ մտաւորականութիւնը բանտերում էր փակւած, ամբողջ Հայաստանում իշխում էր սարսափն ու տէռորը, եւ գիւղացիութիւնը ստիպւած էր զէնքի դիմելու 20-րդ դարի հոների ձեռքից ազատութիւնն ու աշխատանքը փրկելու համար:

Երեք օր վերջը, փետր. 18-ին, Հայաստանում տեղի է ունենում յեղաշրջում: Վերջ են դնում եւ բոլշեւիկների «դիւանագիտական» խաղերը Զանգեզուրի նկատմամբ: Հայաստանում կատարւած փոփոխութիւնը չատ

ուշ է իմացում Զանգեզուրում: Հայաստանի դէպքերից անկախ, իր ռազմավարական սահմաններն ապահովելու նպատակով, փետր. 17-ին զանգեզուրեան հրամանատարութիւնը, ընդառաջ գնալով Դարալագեազի ժողովրդի ցանկութեան, գրաւում է ամբողջ Դարալագեազը եւ միացնում ինքնավար Սիւնիքին՝ վերջինս վերակոչելով ինքնավար Լեռնահայաստան: Ինքնավար Լեռնահայաստանին կարեւոր տեղ էր վիճակւած իր ազատութեան համար մաքառող հայ ժողովրդի կեանքում:

ԳԼՈՒԽ ԼԷ.

ՎԵՐՋԻՆ ԷՋ

1921 Թ. Ապրիլ 2 չարաշուք օր եղաւ Հայաստանի ժողովրդի համար: Կարմիր բանակի մօտենալու լուրը Երեւանին կայծակի արագութեամբ տարածուեց երկրում՝ չփոթ ու խուճապ առաջ բերելով ամէն կողմ:

Նահանջները Երեւան մտան երկու ուղղութեամբ. Ռուսաստանից եկած կարմիր բանակը, Վելիկանովի հրամանատարութեան տակ, իջաւ Քանաքեռից: Լուռ զինուորների սրինների պաշտպանութեան տակ, Ղամարլուի վրայով ամօթահար՝ մայրաքաղաք վերադարձաւ Ցեղկոմը, որով Հայաստանը կորւեց երկու մասի:

Հրազդան գետից դէպի հարաւ ընկած ժողովուրդն ու ռազմական ուժերը, անակնկալի եկած, խուժեցին Մարգարայի կամուրջին ուղղութեամբ, Արաքսի վրայով Թիւրքիա անցնելու ցանկութեամբ: Կարելի՞ է երեւակայել բոլշեւիկեան սարսափը, որ մարդիկ ապաստան էին խնդրում Թիւրքից. կամուրջի վրայի ասկեարները մերժեցին ճանապարհ տալ, եւ բազմութիւնը խուժեց դէպի Արագածի փէշերը եւ կամ դէպի Էջմիածին եւ Աշտարակ, ուր աներեւութացաւ ինչպէս կարող էր՝ Ցեղկոմի իշխանութեան աչքին սառնալով «օրինապահ» կերպարանք:

Հրազդանից դէպի հիւսիս, Երեւանից, Կոտայքից, Ախտայից, Ղամարլուի շրջանից աւելի քան 30,000 բազմութիւն, զինուած եւ անզէն, խուժեց դէպի Բաշ Գառնի, որտեղից ճանապարհ պիտի բացուէր Մէյլի Զորի ու Դարալագեազի վրայով, Զանգեզուրի եւ Պարսկաստանի ուղղութեամբ: Բաշ Գառնին եւ յարակից շրջանները լեցուած զօրամասերով, վերածուեցին ռազմակայանի, բերդի ու միաժամանակ գաղթականական ճամբարի:

Անհնարին պայմաններում Հայր. Փրկութեան Կոմիտէին յաջողուեց փախստական ժողովրդին յետ ուղարկել եւ մնացեալ բազմահազար բազմութիւնը — Չէկայից ազատուած մտաւորականութիւն, պետական պաշտօնաներ, մարտիկներ եւ այլն — պարենաւորել եւ Մէյլի Զորի ամայի, դժւարանցանելի շրջանից ճանապարհ դնել դէպի Դարալագեազ՝ այնտեղից Զանգեզուր եւ, ի վերջոյ, Պարսկաստան անցնելու համար:

Դարալագեազը մաս էր կազմում ինքնավար Լեռնահայաստանի Գորիս մայրաքաղաքով, ուր նստում էր Տաթեւի համագումարում ընտրած կառավարութիւնը: Փաստօրէն իշխանութիւնը գտնւում էր ազարատեան Գ. Նըժդեհի ձեռքը: Այն վարդապոյն տեղեկութիւնները, որոնք սասցւել էին Երեւանում ու Բաչ Գառնիում Լեռնահայաստանի ռազմական յաջողութեան մասին, տեղում չարդարացան: Երեւանի անկման լուրը և տարագրութեան հոսանքը բնական կերպով աննպաստ ազդեցութիւն պիտի ունենար նաեւ Դարալագեազի դիւղացիութեան վրա, եւ Հայրենիքի Փրկութեան ուժերի անցնելուց յետոյ, չուտով Դարալագեազը պիտի ընկնէր բոլշեւիկների ձեռքը:

Զանգեզուրը ի վիճակի չէր երկար ժամանակ պահել ու պաբենաւորել Երեւանից եկած հազարաւոր տարագրութիւնը, որ հետզհետէ, կտրելով Աբաքսը, անցաւ Ատրպատական: Հայրենիքի Փրկութեան կոմիտէի ռազմական եւ քաղաքացիական գործօն ուժերը դրեցին Լեռնահայաստանի կառավարութեան տրամադրութեան տակ: Ապրիլի վերջերը Տաթեւում հրաւիրուեց Լեռնահայաստանի նոր համագումար, որ կազմեց նոր կառավարութիւն Գ. Նժդեհի նախագահութեամբ: Համագումարը որոշեց վճռական կերպով չարունակել պայքարը Լեռնահայաստանի անկախութեան համար, մինչեւ Հայաստանի վերջնական ազատագրումը բոլշեւիկեան տիրապետութիւնից:

Այս ոգեշունչ ոգին համապատասխանում էր եւ Երեւանից եկած քաղաքական ու զինուորական ուժերի տրամադրութեան: Հայաստանի բանակը, որ բռնած էր Գնդեւազ—Բաղարջայի բարձունքները Դարալագեազի սահմանի վրա երազում էր վերագրաւել Դարալագեազը եւ վերադառնալ Երեւան:

Բոլշեւիկները փորձեցին խաղաղ միջոցներով դրաւել Զանգեզուրը: Այդ նպատակով Զանգեզուր եկաւ Ցեղկոմի կողմից Արա. Կարինեանը 11-րդ կարմիր բանակի ներկայացուցիչ Մելնիկովի ընկերակցութեամբ՝ բանակցելու համար Լեռնահայաստանի կառավարութեան հետ, բայց բանակցութիւնները դրական հետեւանք չունեցան. բոլշեւիկները պահանջում էին անպայման անձնատուութիւն. զանգեզուրցիք պնդում էին Լեռնահայաստանի անկախութեան վրա: Երեւանի ներկայացուցիչները պահանջում էին վերականգնել դաշտաբնակ ազրբէջանցիների ճոչի դրութիւնը դէպի Ղարաբաղ—Զանգեզուրի լեռնային արօտավայրերը, զանգեզուրցիք լսել անգամ չէին ուզում այդ մասին:

Բանակցութիւններին յաջորդեց Դարալագեազի վերագրաւումը Լեռնահայաստանի եւ Հայր. Փրկութեան ուժերի կողմից: Այս վերջինները ձըգտում էին յառաջանալ դէպի Երեւան, վերադառնալ իրենց մայրենի տեղերը: Սակայն, յառաջանալն այլեւս անկարելի էր: Շուտով պէտք եղաւ, կարմիր բանակի ճնշման տակ, նորից հեռանալ Դարալագեազից՝ այս անգամ հոգեբանական աւելի աննպաստ պայմաններում:

Զանգեզուրը դեռ բաւական ժամանակ դիմադրեց բոլշեւիկեան յարձակումներին ամէն կողմից: Որեւէ տեղից օգնութեան յոյս չէր մնացել: Բոլոր փորձերը, Պարսկաստանի վրայով, կապուելու արտաստամանի հետ եւ

այնտեղից նիւթական կամ քաղաքական օգնութիւն ստանալու, անցան անյաջող: «Արտասահմանը» իր հոգերով էր զբաղած եւ հայերին լսելու ականջ չունէր: Ինչպէս վերջը յայտնի եղաւ, Լոնդոնի բանակցութիւնները քէմալական թիւրքերի հետ ձախողել էին. թիւրքերը Մարտ 16-ին բարեկամական դաշինք էին կնքել Մոսկւայում Մորհրդ. Ռուսաստանի հետ, որի միջազդային դերքը ամրացել էր: Ի՞նչ կարող էր անել փոքրիկ Լեռնահայաստանը ռուսական ահարկու ուժի հանդէպ: Եւ հերոսական ազատամարտը անխուսափելիօրէն պիտի վերջանար կամ անպայման անձնատուութեամբ եւ կամ կուով մինչեւ վերջին փամփուշտն ու պարտուութեամբ:

Վերջին փամփուշտը պարպելով՝ Հայաստանի մարտիկները, կառավարութիւն ու պաշտօնէութիւն, բոլոր նրանք, որոնք մերժեցին ենթարկուել ստրկութեան անարդ լուծին՝ հաշտուելով հայրենիքի անկախութեան կորստի հետ, յուլիս 10-ին ճեղքեցին կամուրջները հանդուրժող կատաղի Արաքսը եւ անցան Պարսկաստան՝ տանելով իրենց հետ անկախ Հայաստանի դրօշը՝ շարունակելու համար զաղափարական պայքարը հայրենիքի ազատութեան համար:*)

***

Ռուսական կարմիր բանակի ուժով վերագրաւելով Երեւանը՝ Կասեանի Ճեղկոմը իրեն դատաւ ամայութեան մէջ. երկրի բոլոր կենդանի ուժերը կամ հեռացել էին Զանգեզուր ու Պարսկաստան, կամ պահուել էին Ձէկայի վրէժխնդրութեան վախից: Իսուիս բուն նշանակութեամբ Ճեղկոմը պէտք է իշխէր «ի վերա աւերակաց»:

Ժողովրդի վստահութիւնը ձեռք բերելու փորձերը յաջողութիւն չունեցան. անցեալի դասից խրատուած ժողովուրդը կասկածով ու վախով էր նայում իշխանութեան վրա: Ներման հրամանագիրն էլ ազդեցութիւն չունեցաւ: Կասեանի Ճեղկոմը հեղինակութիւնը կորցրել էր եւ կոմունիստական բարձր իշխանութեանց մօտ: Անհրաժեշտ էր նոր իշխանութիւն Հայաստանի համար, մանաւանդ որ Ռուսաստանում էլ, ռազմական կոմունիզմի հաշեյարդարով եւ տնտեսական նոր քաղաքականութեան — ՆԷՊի — յայտարարութեամբ, բացւում էր ներքին քաղաքականութեան նոր՝ համեմատաբար աւելի տանելի շրջան:

Եւ ահա, վարկաբեկուած, ժողովրդի եւ կոմունիստական բարձր իշխանութեան աչքին ամէն համակրանք ու վստահութիւն կորցրած Կասեանի Ճեղկոմին յաջորդում է Ալ. Միասնիկեանի կառավարութիւնը՝ բաղկացած աւելի հասուն ու լուրջ, աւելի հայ մարդկանցից:

---

*) Լեռնահայաստանի պայքարը իր վիպական դրուագներով արժանի էր բազմակողմանի եւ լրիւ ներկայացման: Դժբախտաբար, հեղինակը ի վիճակի չեղաւ այդ աշխատանքը կատարելու: Թերի է մնում եւ յաջորդ շրջանի աշխատանքը արտասահմանում մինչեւ Լոզան: Այդ մասին կարելի է ծանօթութիւն ստանալ Վահ. Փափազեանի «Իմ ցուշերը» երրորդ հատորից եւ Ալ. Խատիսեանի «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» գրքից:

Հայաստանը վերանաճելուց յետոյ, Մոսկայից, յատուկ լիազօրութիւններով, Կովկաս ուղարկուց Բէլոռուսիայում իր վարչական գործունէութեամբ աչքի ընկած բոլշեւիկ Ա. Միասնիկեանը: Լենինը նրա միջոցով Կովկասի կոմունիստներին ուղարկեց հետեւեալ նամակը, որով այնուհետեւ պէտք է ղեկավարուէին կովկասեան իշխանութիւնները:

«Ազրբէյջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի եւ Լեռնական Հանրապետութեանց ընկեր կոմունիստներին.—

«Ձեռնամուխ ողջունելով Կովկասի Խորհրդային Հանրապետութիւնները՝ թոյլ եմ տալիս ինձ յայտնելու այն յոյսը, որ նրանց սերտ միութիւնը կը ստեղծէ հաշտութեան այնպիսի մի օրինակ, որ չի տեսնուած բուրժուազիայի օրով եւ հնարաւոր չէ բուրժուական կարգերում:

«Բայց որքան էլ ազգային հաշտութիւնը կարեւոր լինի Կովկասի ազգութեանց, բանուորների եւ գիւղացիների միջեւ, աւելի կարեւոր է պահպանել ու զարգացնել խորհրդային իշխանութիւնը, որպէս ընկերվարական փոխանցման շրջան: Դժուար է այդ խնդիրը, բայց կատարելապէս իրագործելի: Նրա յաջող լուծման համար ամենից կարեւորը այն է, որ Անդրկովկասեան կոմունիստները հասկանան իրենց կացութեան իւրատեսակութիւնը, իրենց հանրապետութիւնների կարգ ու սարքը, որ տարբեր է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան կացութիւնից եւ պայմաններից, հասկանան, որ անհրաժեշտ է ոչ թէ ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածած կերպով ձեւափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերութեան կիրառելի եղանակով:

«Ռուսաստանում խորհրդային իշխանութիւնը ունեցել է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան քաղաքական եւ փոքր չափով էլ զինուորական աջակցութիւնը: Այդ արմատական տարբերութիւն է:

«Երկրորդ.— Այժմ Դաշնակիցներից վախենալու հարց չկայ արշաւանքների տեսակէտից, ոչ էլ վրացական, ազրբէյջանեան, հայկական, Դաղստանի, Լեռնական սպիտակ գվարդիականների աջակցութիւնից:

«Երրորդ.— Ռուսաստանը տնտեսապէս կտրուած է եղել եւ մեծ չափով մնում է կտրուած առաջաւոր դրամատիրական երկիրներից: Կովկասը կարող է աւելի շուտ եւ աւելի հեշտ «համակեցութիւն» եւ ապրանքային փոխանակութիւն հաստատել դրամատիրական Արեւմուտքի հետ:

«Ամբողջ տարբերութիւնը այդ չէ՛: Բայց մատնանշուած տարբերութիւններն էլ բաւական են՝ հասկանալու համար, որ անհրաժեշտ է այլ գործելակերպ:

«Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն դէպի մանր բուրժուազիան, մտաւորականութիւնն ու, յատկապէս գիւղացիութիւնը: Տնտեսական մեծ թափով եւ չուտափոյթ օգտագործել դրամատիրական Արեւմուտքը՝ մենաշնորհների եւ ապրանքային փոխանակութեան քաղաքականութեամբ: Նաւթը, մանգանէզը, ածուխը, Տկվարչելեան հանքերը, պղինձը — ա՛յս է հանքային ահագին հարստութիւնների ոչ լրիւ ցուցակը: Լիակատար հնարաւորութիւն կայ լայն չափով զարգացնելու մենաշնորհների եւ ապրանքային փոխանակութեան քաղաքականութիւնը արտասահմանի հետ:

«Այդ պէտք է անել լայն չափով, հաստատակամօրէն, հնարամտութեամբ՝ ամէն կերպ օգտագործելով այդ՝ բարելաւելու բանւորների եւ գիւղացիների վիճակը եւ հրաւիրելու մասնաւորականութիւնը տնտեսական շինարարութեան գործին: Օգտագործելով ապրանքային փոխանակութիւնը Իտալիայի, Ամերիկայի եւ այլ երկիրների հետ՝ բոլոր ուժով զարգացնել հարստ երկրի արտադրական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը: Ոռոգումը առանձնապէս կարեւոր է, որպէսզի ամէն դնով բարձրացւի հողագործութիւնն ու անասնապահութիւնը:

«Աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր, աւելի սիստեմատիկ փոխանցում դէպի ընկերվարութիւնը, ահա՛ թէ ինչ է հնարաւոր եւ անհրաժեշտ: Կովկասի հանրապետութիւնների համար, ի գանազանութիւն Ռ. Մ. Ֆ. Խ. Հանրապետութիւնից, ահա՛ թէ ինչ պէտք է հասկնալ եւ կարողանալ իրագործել՝ տարբերելով մեր գործելակերպից:

«Մենք բացինք առաջին ճեղքը համաշխարհային դրամատիրութեան մէջ: Ճեղքը բացուած է: Մենք պաշտպանեցինք մեզ բոլոր Դաշնակիցներից: Նրանց պաշարման աջակցութիւնը, նրանց դինւորական օգնութիւնը վայելող սպիտակների՝ էս-էրների, մենշեւիկների դէմ՝ կատաղի, դերբնական, ծանր ու դժուարին, դաժանօրէն դահավէժ պատերազմում:

«Ձեզ, Կովկասի կոմունիստ ընկերներ, հարկաւոր չէ ճեղքեր բանալ. պէտք է դիտենալ մեծ զգուշաւորութեամբ ու սիստեմատիկօրէն ստեղծել նորը՝ օգտագործելով 1921 թուականի ձեզ համար նպաստաւոր միջազգային կացութիւնը: 1921-ին Եւրոպան և՛ ամբողջ աշխարհը այն չեն՝ ինչ որ էին 1917 եւ 1918 թուականներին:

«Ո՛չ թէ պէտք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախօրէն խորհրդածել նոր իւրատեսակութեան, պայմանների եւ արդիւնքների պատճառների մասին. ձեզ մօտ պէտք է իրագործել 1917-1921 թուականների փորձի ոչ թէ տառը, այլ ոգին, միտքը, դասերը:

«Տնտեսապէս՝ միանգամից պէտք է յենուել դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակութեան վրայ, ժլատ չլինել. թո՛ղ նա տանայ տասնեակ միլիոնաւոր հանքային ամենաթանկագին արտադրութիւններ:

«Աչխատել միանգամայն բարելաւել գիւղացիների վիճակը եւ ձեռնարկել էլեկտրականացման, ոռոգման խոշոր աշխատանքների: Ոռոգումը ամէնից շատ է հարկաւոր եւ ամէնից աւելի կը կերպարանափոխէ երկիրը, կը վերածնէ այն, կը թաղէ անցեալը, կ'ամրապնդէ ընկերվարութեան փոխանցումը:

«Ներողութիւն նամակիս անխնամութեան համար, որ պէտք է գրէի հապճեպով՝ ընկեր Միասնիկեանի հետ ուղարկելու համար: Կրկին անգամ ուղարկում եմ ամենաջերմ ողջոյններս եւ բարեմաղթութիւններս Կովկասի խորհրդային հանրապետութեանց բանւորներին եւ գիւղացիներին:

Վ. ԼԵՆԻՆ

Մոսկւա, 14 ապրիլ 1921

Այս նամակը որքան եւ արդիւնք էր այն ժամանակւայ Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերող մասում, անկասկած մեծապէս թելադրւած էր Հայաստանի փետրուարեան ապստամբութեան թողած տպաւորութիւնից: Այս տեսակէտից կարելի չէ չընդունել, որ Հայաստանի փետրուարեան յարժման աղդեցութիւնը շատ աւելի լայն էր, քան Հայաստանի սահմանները:

Ինչ վերաբերւում է Հայաստանին, փետրուարեան ապստամբութիւնը ցնցող ու դղաստացնող տպաւորութիւն թողեց խորհրդային իշխանութեան վրա:

Թիֆլիսում եւ ապա, ապրիլ 19-ին Երեւանում, արտասանած իր ճառերի մէջ, Կոմկուսի Անդրկովկասեան կոմիտէի քարտուղար Ս. Օրջոնիկիձէն ամենախիստ խօսքերով դատապարտեց հայ կոմունիստներին, որոնք պատճառ էին դարձել փետրուարեան ապստամբութեան եւ քաղաքացիական աւերիչ կռիւների՝ միաժամանակ զղաստութեան, աչալրջութեան եւ խոհեմութեան հրաւէր կարդալով Հայաստանի բոլշեւիկ իշխանաւորներին: Մի ամիս առաջ ,սակայն, նոյն Օրջոնիկիձէն թոյլ էր տալիս, որ քաղաքացիական կռիւը չարունակւի Հայաստանում:

Ալ. Միասնիկեանը ստանձնելով Հայաստանի Ճեղկոմի նախագահութիւնը, ՆԷՊ-ի չրջանին յատուկ համեմատաբար աւելի մեղմ եւ չինաբար քաղաքականութեան հետեւեց երկրում՝ իրեն գործակից ունենալով Ս. Սրապիոնեան—Լուկաչինի և Ս. Տէր Գաբրիէլեանի նման աւելի լուսամիտ և անպայման հայրենասէր բոլշեւիկներ: Հայաստանի ժողովուրդը մի պահ ազատ չունչ քաշեց եւ նւիրւեց չինարարութեան: Պարսկաստանից վերադարձաւ եւ տարագրւած մտաւորականութեան մի մասը Ակադ. Ա. Թամանեանի գլխաւորութեամբ:

Ազգային քաղաքականութեան տեսակէտից, սակայն, Միասնիկեանի իշխանութեան չրջանում էլ հիմնական փոփոխութիւն տեղի չունեցաւ, մասնաւորապէս Հայկական Հարցի հետապնդման եւ ի սիրուս աշխարհի ցրւած հայութեան պաշտպանութեան գործում: Հայկական Սփիւռքը Երեւանի համար չարունակեց մնալ խորթ, միջազգային յեղափոխութեան ծառայեցնելու նիւթ: «Մենք ամենայն հայոց կառավարութիւն չենք»... Մշակոյթով էլ Սփիւռքը կտրւեց Մայր-Հայրենիքից, մանաւանդ նոր ուղղագրութեան հետեւանքով, որ անհաշտ մնաց արտասահմանի հայերի համար:

Քաղաքական տեսակէտով Միասնիկեանի օրով աւելի եւս չեչտւեց ռուսական կենտրոնացման ձգտումը, մասամբ իբրեւ հետեւանք Կովկասի հայ տարրի տկարացման դիտակցութեան եւ ընդհանրապէս հայ բոլշեւիկների սկզբունքային դաւանանքի պատճառով:

Հայաստանի խորհրդայնացումը տեղի էր ունեցել աշխարհաքաղաքական պայմանով. Հայաստանի Հանրապետութեան տեղը պիտի բռնէր Հայաստանի աշխատաւորական խորհրդային հանրապետութիւնը: Զեւականօրէն այդ սկզբունքը որոշ ժամանակ պահւեց, բայց փաստօրէն անկախութիւնից ոչինչ չմնաց: Ռուսական քաղաքականութիւնն էր միացնել Անդրկովկասեան երեք

հանրապետութիւնները մէկ միութեան մէջ: Հայ բոլշեւիկները եւ, մասնաւորապէս, Ալ. Միասնիկեանը ամենաջերմ պաշտպանն էին այդ քաղաքականութեան:

Անկախութեան կորուստը առանձնապէս ղգացուեց Կարսի Խորհրդաժողովում, 1921 թ. սեպտ. 26 — հոկտ. 13-ին, որ կոչուած էր, Թիւրքերի պահանջով, վաւերացնել տալու համար Մոսկուայի մարտ 16-ի ռուս-թիւրքական դաշնագիրը: Այդ խորհրդաժողովում, որի արձանագրութիւնը բերւած է ներկայ հատորի «Ցաւելուած»-ում, Թիւրքիան իր կամքը թելադրեց ոչ միայն Հայաստանին, այլեւ Ռուսաստանին, որի ներկայացուցիչը կովկասեան հանրապետութիւնների խնամակալի դերն էր կատարում:

Կարսի դաշնագիրը եղաւ վերջին միջազգային դործը, որ կատարուեց անկախ Հայաստանի անունով: Երկու ամիս անցած, Թիֆլիսում դումարուեց Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի խորհրդային «անկախ» հանրապետութիւնների ներկայացուցիչների ժողովը, որ հիմնեց Անդրկովկասեան դաշնակցութիւնը, իբրեւ մաս Խորհր. Ռուսաստանի, որով Հայաստանի ճեւական անկախութիւնն էլ վերջ դտաւ:

Այնուհետեւ եկաւ Լոզանի անարդ դաշնագիրը, որով Թիւրքիան, Խորհրդային Ռուսաստանի օդնութեամբ, իր կամքը պարտադրեց եւ դաշնակից պետութիւններին: Լոզանի դաշնագրում ոչ մի խօսք չկայ Հայաստանի եւ հայերի մասին...

Դաշնագրում խօսք չկայ, բայց հայ ժողովրդի սրտում Հայաստանի անկախութեան դաղափարը միշտ մնում է, անշէջ վարոսի պէս, վառ: Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում ու հայրենիքից դուրս չարունակում է երազել ու պայքարել եւ հաւատում է իր ազգային դատի արդար լուծման: Բրոնատիրութիւնները յաւիտենական չեն: Վերջ կ'ունենայ եւ նրանց չար դործը...:

*
**

1921—22 մոայլ, դաժան տարիներին, երբ հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում, ճզմւած Քէմալական Թիւրքիայի եւ Խորհրդ. Ռուսաստանի միջեւ, օրհասական պայքար էր մղում իր ազատ եւ անկախ գոյութեան համար, երբ Թիւրքական բանակները «դեղեցիկ» Ֆրանսայի հովանաւորութեամբ ամայացնում էին հայկական Կիլիկիան եւ կրակի ճարակ դարձնում Զմիւռնիան, Պոլսից փախստական էթթիհատական ջարդարարները, Բերլինից ու Մոսկուայից, այսպէս կոչւած, «քաղաքակիրթ» աշխարհի աչքի առջեւ, չարունակում էին դաւեր լարել Հայաստանի ու հայ ժողովրդի դէմ:

Անգլիա եւ Ֆրանսա մոռացել էին իրենց հանդիսաւոր սպառնալիքը, որ համաշխարհային պատերազմի սկզբին ուղղել էին Թիւրքիայի կառավարութեան՝ խիստ պատժի ենթարկելու հայերի դէմ խժդժութիւններ գործադրողներին: Այժմ հայկական ջարդերի հեղինակ էթթիհատական պարագլուխները ոչ միայն պատասխանատուութեան չէին ենթարկւում, այլեւ յաճոյապէս վայելում էին նոյն այդ մեծ պետութիւնների պաշտպանութիւնը:



ՍՏԵՓԱՆ ՇԱՊԻԿԵԱՆ



ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ



ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ



ՄԻՍԱԷԼ ԹՈՐԼԱՔԵԱՆ



ԱՐՇԱԻԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Հայ ժողովուրդն ի զուր սպասեց արդարադատութեան «մեծ դաշնակիցների» կողմից, որոնք մոռացել էին հայերի մատուցած ծառայութիւնները եւ հայերին տւած հանդիսաւոր խոստումները: Այժմ ամէն մէկը աշխատում էր իր շահը ապահովել հայերի անունը չահագործելով. եւ ի վերա պատմուճանի հայոց վիճակս արկանէին...

Եւ ահա, ինչ որ ղացաւ անել քաղաքակիրթ աշխարհը, հայ ժողովուրդը ինքը կատարեց «իր քաջ որդւոց» խիզախ բաղուկով նոյն այդ քաղաքակիրթ աշխարհի աչքի առջեւ:

1921 թ. մարտ 16–ին, երբ Մոսկւայում ստորագրւում էր «բարեկամութեան» դաշնագիրը Խորհրդ. Ռուսաստանի եւ Թիւրքիայի միջեւ, Բերլինում, մի անճնւէր երիտասարդի՝ Սողոմոն Թէհլիրեանի յանդուգն գնդակից չանսատակ ընկաւ մեծ եղեռնի գլխաւոր պատասխանատու՝ Թալէաթ փաշան:

Հազիւ մի քանի ամիս անցած, յուլիս 19–ին Պոլսում, մի ուրիշ երիտասարդի՝ Միսաք Թորլաքեանի վրիժառու գնդակով սպանւեց Բաքւի հայերի Լարդարար Ջիւանչիրը:

Դեկտ. 6–ին, Հռոմում, գրեթէ պատանի մի երիտասարդի՝ Արշաւիր Շիրակեանի ձեռքով մահապատիժ ստացաւ Թիւրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, որի օրով տեղի էր ունեցել հայերի բնաջնջումը:

1922 թ. ապրիլ 17–ին, Բերլինում, նոյն Արշաւիրի և Արամ Երկանեանի ձեռքով իրենց արժանի պատիժը կրեցին հայկական տեղահանութիւնների եւ Լարդերի կազմակերպիչ իթթիհատական բորենիները Բէհաէդդին Շաքիրը եւ Ջէմալ Ազմին:

Երեք ամիս վերջը, Թիֆլիսում, Ստեփան Տաղիկեանի ձեռքով, բացառիկ յանդգնութեամբ ահաբեկւեց իթթիհատական եռապետութեան անդամ՝ Ջէմալ փաշան, որ գործակցում էր բոլշեւիկներին Ռուսաստանում: Քիչ վերջը նոյն պատժին պիտի արժանանար եւ Թալէաթի ու Ջէմալի եղբայրակից Էնվէր փաշան՝ ամէնէն արկածախնդիրը իթթիհատականներից:

Թալէաթի եւ Ջիւանչիրի ահաբեկիչները ձերբակալւելով՝ գերման եւ անգլիական ոճրագործ դատարաններին յանձնւեցան Բերլինում ու Պոլսում: Հրապարակային դատավարութիւնը, գրաւեց ամբողջ աշխարհի ուշադրութիւնը: Սողոմոն Թէհլիրեանն ու Միսաք Թորլաքեանը անպարտ արձակւեցին՝ բարոյական մեծ գոհացում պատճառելով հայ ժողովուրդին:

Ջէմալ փաշայի սպանութեան առթիւ բազմահարիւր ձերբակալութիւններ տեղի ունեցան Ռուսաստանում. Դաշնակցական երիտասարդութիւնը լճցւեց բանտերն ու Ջէկայի նկուղները եւ չատերը, առանց դատ ու դատաստանի, աքսորւեցին Սիբիրի ամուլ վայրերը:

Քառորդ դար անցած, երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ, համանման պայմաններում, նացի Լարդարարների համար միջազգային դատ կազմակերպւեց Նիւրեմբերգում, նացի պարագլուխները մահապատժի ենթարկւեցան եւ գերման ժողովրդի վրա տուգանք դրւեց, իբրեւ հատուցում հրէաներին, հանգստացնելու համար «քաղաքակիրթ մարդկութեան» վրր–

դուքան խիղճը: Տարբեր եղաւ նոյն այդ «քաղաքակիրթ մարդկութեան» վերաբերումը հայերի հանդէպ: Թիւրքիայի հայութեան կէսը կոտորուեց ամենատմարդի միջոցներով, միւս կէսը հողմացրիւ եղաւ: Հայերի ստացուածքը յափշտակուեց: Գիւղեր ու քաղաքներ ամայացան: Եւ երբ հասաւ հատուցման ժամը, «քաղաքակիրթ մարդկութիւնն» մնաց անտարբեր: Հայ ժողովուրդը ինքը, իր «քալ որդւոց սուրբ արիւնով»... կազմակերպեց հայկական Նիւրէմբէրգ՝ Թիւրք դահիճների համար:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Քառասուն տարի է անցել Հայաստանի Հանրապետութեան ծնունդի օրից — 1918, մայիս 28 — 1958, մայիս 28 — բայց հայութեան գիտակցութեան մէջ դեռ եւս համազգային ընդհանուր ըմբռնում չէ դարձած անկախութեան գաղափարը: Կան հայեր, որոնք ուրանում են Հանրապետութեան գոյութիւնն անգամ: Եւ, սակայն, փաստը մնում է փաստ. ուրացումով պատմութիւնը կարելի չէ ջնջել:

Մեծ եղելութիւնները մեծ ժամանակի են կարօտ ազգերի գիտակցութիւնը յեղաշրջելու համար: Այսօր, օրինակ, Վարդանանց պատմութեան շուրջ հայ ժողովրդի հանրային մտքի մէջ տարակարծութիւն չկայ. ամենքի համար Վարդանանց պատերազմը նուիրական է եւ 1036 նահատակները՝ սուրբեր: Բայց պատերազմի օրերին, առաջ եւ վերջը, ամենքը համախոհուրդ եւ համերաշխ էին, մի՞ւնոյն գիտակցութեամբ տոգորուած: Վարդանանց եւ Վահանեանց հակամարտութիւնները ու թշնամանքը, կուսակցական բախումները ու կատաղի հակամարտութիւնները չե՞ն վրդովել ժամանակի հայ հասարակութիւնը: Հէնց Եղիշէի պատմութիւնը չի՞ վկայում, որ մոլեգին հակամարտութիւններ են եղել ազգային քաղաքականութեան շուրջ, որոնք շատ կողմերով յիշեցնում են մեր օրերը: Բայց եւ այնպէս ժամանակը արժէքաւորել է պատմական իրողութիւնները, մոռացնել է տալ ինչ որ պէտք է մոռացուէր և կենդանի ու անմահ է պահել ճշմարիտն ու իրաւը, որպէս ընդհանրական սեփականութիւն ազգի բոլոր հատուածների մտքում ու սրտում:

Նման եղելութիւն է եւ Մայիս 28–ը: Հայ ժողովուրդը երկար դարեր երազեց այդ օրը, եւ երբ օրը եկաւ, անպատրաստ գտնուեց ազգովին տեսնելու եւ ընդունելու իրողութիւնը, «յիւրսն եկ և իւրքն զնա ոչ ընկալան»... Գաղափարական բաժանումը եւ պայքարը անկախութեան շուրջ ընդհանրապէս եւ Հայաստանի Հանրապետութեան առթիւ ի մասնաւորի շարունակւում է անընդհատ:

Եւ զարմանալի չէ բնաւ, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը դեռ պատմութիւն չէ դարձած, այլ ներկայ է: Դեռ կենդանի են այն բոլոր գաղափարները ու դէպքերի յուշերը, որոնց շուրջ բաժանուած էր հայութիւնը

Հանրապետութեան օրերին, դեռ ողջ է ժամանակի դերակատարների մի մասը, եւ վառ են կիրքերն ու հակամարտութիւնները:

Ժամանակը վճռական գործօն է պատմական դէպքերի գնահատութեան համար եւ ժամանակի հետ նաեւ սերունդների փոփոխութիւնը: Սակայն, քառասուն տարին բաւական չեղաւ, որպէսզի Հայաստանի Հանրապետութեան շուրջ հրահրուած կիրքերը մարէին, եւ անկախութեան գաղափարը իր արժանաւոր տեղը գրաւէր հայ ժողովրդի ընդհանուր գիտակցութեան մէջ:

Բայց, որքան եւ կարճ, ժամանակը իր դերը կատարում է արդէն: Երեւանի պատմագրութիւնը — վարանումով, անշուշտ — սկսել է արդէն դրական վերաբերում ցոյց տալ դէպի Հանրապետութեան հետ կապուած որոշ դէպքերը: Ճիշատակւում է Սարտարապատի ճակատամարտը, Բաշ-Ապարանը, իբրեւ հերոսական դրւագ հայ ժողովրդի նորագոյն պատմութեան, փոյթ չէ թէ կոմունիստ կուսակցութեան վերապրւի այդ դէպքը: Բնաւ պիտի չզարմանանք, եթէ վաղը Մայիս 28 էլ իւրացւի բոլշեւիկների կողմից: Թող իւրացնեն. կարեւորը այն չէ, թէ ով է հեղինակը պատմական դէպքերի, կարեւորը դէպքերն են:

Ով եւ ինչպէս ուրանայ, անհերքելի է, որ երէկւայ ուրացողները այսօր ստիպւած են ընդունելու Հայաստանի Հանրապետութեան եղելութիւնը: Ընդ հուր եւ ընդ սուր անցնելով, անհաչիւ զոհերի գնով, հայ ժողովուրդը 1918 թ. Մայիս 28-ին հիմք դրեց ազգային անկախ պետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան: Այս իրողութիւնը կարելի չէ ուրանալ եւ ո՛չ մի ուրացումով:

Որեւէ ուրացումով կամ փաստերի խեղաթիւրումով կարելի չէ հերքել եւ այն փաստը, որ 1920 թ. դեկտ. 2-ին, կամ, եթէ հաճելի է, նոյեմբ. 29-ին տեղի ունեցաւ ոչ թէ Հայաստանի նոր պետութեան ստեղծումը, այլ դոյութիւն ունեցող Հանրապետութեան վարչաձեւի փոփոխութիւն. ժողովրդավար անկախ Հանրապետութեան տեղ հաստատւեց խորհրդային անկախ հանրապետութիւն: Մի տարի անցած, ոչ հայ ժողովրդի կամքով, այլ զրսից եկած հրամանով և օտար սուինների սպառնալիքի տակ, Խորհրդային Հայաստանը զրկւեց անկախութիւնից՝ դառնալով Անդրկովկասեան Դաշնակցութեան անդամ:

Այսպիսով՝ պատմական իրողութիւն է, որ ներկայ Խորհրդ. Հայաստանը չարունակութիւնն է Հայաստանի Հանրապետութեան: Եթէ տեղի չունենային այն մաքառումները, որոնք յանդեցին հայկական անկախ պետութեան ստեղծման 1918 թ. Մայիս 28-ին, եթէ դոյութիւն չունենար Հայաստանի Հանրապետութիւնը իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր դոյութիւն չէր ունենայ եւ Խորհրդ. Հայաստանը ազգային կազմով ու դիմագծով:

Հայաստանի խորհրդային վարչաձեւը չատ ճիգ թափեց, որպէսզի ապատագրւի հայ ժողովրդի քաղաքական ժառանգութիւնից. մերժեց ընդունել «ամենայն հայոց կառավարութեան» դերը, հրաժարւեց Հայկական Հար-

ցի հետապնդումից, ուրացաւ Հայկական Սփիւռքի գոյութիւնը: Ի զո՞ւր, ժամանակը պարտադրեց նրան ճանաչել եւ Հայկական Հարցը, եւ Հայկական Սփիւռքը, եւ անբնական չի լինի, եթէ վաղը իր վրա առնէ եւ «ամենայն հայոց կառավարութեան» պատմուճանն էլ: Ժամանակը ունի իր խորհուրդը: Հայաստանի Հանրապետութեան անբունդը եւ իր յաջորդները այդ օրւան են ապաւում եւ պայքարում են այդ օրւայ համար:

Վարչաձեւերը ժամանակաւոր երեւոյթ են: Ժամանակաւոր են եւ վարիչները: Յաւերժական են ազգերն ու հայրենիքները — հայրենի հողի վրա նստած ժողովուրդները: Յաւերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահամերձ մահը կոխելով՝ կերտեց հայրենիքի անկախութիւնը:

Ժամանակները յղի են դէպքերով: Պատմութիւնը վերջացած չէ: Մենք հաւատում ենք, որ Հայաստանը նորից կը լինի ազատ եւ անկախ, աւելի լայն ազգային սահմաններով: Ընդունակ տեղ տալու իր ծոցում ի սփիւռս աշխարհի հողմացրիւ եղած բոլոր զաւակներին:

Հայաստանի Հանրապետութիւնը չարունակում է ապրել հայ ժողովրդի սրտում, որպէս մշտավառ յուշ անցեալի եւ իբրեւ կենդանի յոյս ապագայի:

ՅԱԻԵԼԻԱԾ



ՀԱՅԱՍՏԱՆ
(ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ)
Ջափ
0 25 50 75 100
մղոն
ՆՇԱՆՆԵՐ.
Ուիլսընի գծած սահմանները:
Նախապատերազմեան սահմանները.
Հայաստանի Հանրապետութեան սահմանները 1920 թ.
Երկաթուղի
ՍԵՒ ԾՈՎ
ՏՐԱՊԻԶՈՆ
ԲԱԹՈՒՄ
ԹԻՖԼԻՍ
ԵՐԵՒԱՆ
ԿԱՐԻՆ
ԽԱՐԲԵՐԴ
ԲԻԹԼԻՍ
ՎԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ԿԻԼԻԿԻԱ
ԱԴԱՆԱ
ԹԱՒՐԻԶ
ՄՈՍՈՒԼ
ՀԱԼԵՊ
ԱՆՏԻՈՔ
ՊԱՂԵՍՏԻՆ
ԱՆԳՈՐԱ
ԿԱՍՏԱՄՈՒՆԻ
ԳԱՆՁԱԿ
ԲԱԳՈՒ



Ա.

Հ. Յ. Դ. ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆ. ԺՈՂՈՎ

(1914, սպտ. 21–23)

Ռայոնական ժողովը տեղի ունեցաւ Սեպ. 21–23–ին (1914), մասնակցութեամբ 20 ձայնի իրաւունքով եւ 12 խորհրդատու ընկերների: Ձայնի իրաւունքով ժողովին ներկայացուցիչներ ունէին հետեւեալ մարմինները. Արեւել. Բիւրօ 1 ձայն, Հայաստանի Բիւրօ 1, կեդր. Կոմիտէն 1, Տեղական Կոմիտէն 1, կեդր. կոմ. 2, կեդր. կոմ. 1, Շուշի 1, Ախալքալաք 1, Շահաստան 1, Ջինւոր Շտաբ 1, Ուսանողութիւն 1, այլեւ չորս գործիչ-ընկերները:

Նախքան զբաղմունքներին անցնելը՝ ժողովը յոտնկայս յարգեց հանգուցեալ ընկ. Ս. Զաւարեանի յիշատակը: Ժողովի օրակարգն էին կազմում հետեւեալ հարցերը.

1. Զեկուցում ուղեորդ ընդհ. ժողովի.

2. Զեկուցում Արեւել. Բիւրոյի միամեայ գործունէութեան.

3. Զեկուցում հայ կամաւորների կազմակերպման եւ յարակից խնդիրների մասին.

4. Կուսակցական վերակազմութեան հարց.

5. Արեւելեան Բիւրոյի երկու անդամի ընտրութիւն:

Ար. Բիւրոյի եւ միւս մարմինների ներկայացուցիչների զեկուցումներից երեւում է, որ կուսակցութիւնը, մանաւանդ վերջին ժամանակներս, արագ կերպով վերակազմւում է. կազմակերպւում են նոր խմբեր ու մարմիններ, վերանորոգւում են հները: Հրապարակ են գալիս նոր ուժեր, հներն էլ նոր թափ են ստանում: Հասարակական համակրանքը ընդհանրապէս կուսակցութեան կողմն է: Բանւորական կեդրոններում աճում է գործաւորական խմբերի թիւը: Տնտեսական պայքարների ժամանակ մերոնք բերում են իրենց բուռն մասնակցութիւնը: Շատ տեղեր գործը վարողները դեռ նշանակովի մարմիններ են, բայց չուառով յոյս կայ, որ ամեն ինչ կը կանոնաւորւի եւ կարելի կը լինի կիրարկել ընտրական սիստեմը: Ծարաբերութիւնները կեդրոնական եւ գաւառական մարմինների միջեւ համեմատաբար թոյլ են ե-

զել: Բաւարար չափով չեն եղել նաեւ պրօպագանդիստ ու կազմակերպիչ ուժեր: Չի մատակարարուել նաեւ պէտք եղած չափով գրականութիւն, այդ պատճառով խմբական պարապմունքների համար շատ դժուարութիւններ են առաջ եկել: Բոլոր ներկայացուցիչների զեկուցումների մէջ տիրող էր լաւատեսութեան շեշտը, ամենքն էլ յոյս էին յայտնում որ շուտով կուսակցութիւնը կգրաւի իր նախկին դիրքի վրա:

Զեկուցումներից յետոյ տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն կուսակցութեան վերակազմակերպման մասին: Մի քանի ընկերներ մոմենտը անյարմար են գտնում, եւ առաջարկում են ուժեր չջլատելու համար առ այժմ մի կողմ թողնել կուսակցութեան գործը եւ ամբողջապէս տալուել կամաւորների եւ ինքնապաշտպանութեան հարցով: Մեծամասնութիւնը, սակայն, դրա հակառակ է եւ գտնում է, որ պայմանները շատ յարմար են վերակազմութեան գործը շարունակելու, անհրաժեշտ է օգտագործել համեմատական ազատութիւնն ու պատերազմի՝ պրօպագանդի առարկայ ընդունելով մոմենտը առաջ մղել քաղաքական տնտեսական հարցերը եւ կուսակցութեան շուրջ համախմբելով հասարակական կենդանի ուժերը: Այս առթիւ ընդունեց հետեւեալը·

«Շարունակում ենք սկսած վերակազմութեան գործը՝ օգտուելով ներկայ յարմար մոմենտից եւ տրամադրութիւնից: Պրօպագանդի գործում գըլխաւորաբար պէտք է ծանրանալ մոմենտի ստեղծած, կուսակցական ծրագրից բղխած խնդիրների վրա: Ուշք պէտք է դարձնել տագնապի ժամանակ գիւղերում փոխադարձ օգնութեան գործը կազմակերպելու:

«Նախքան հայ կամաւորների կազմակերպութեան անցնելը՝ զեկուցում է տրւում վերջին ընդհանուր ժողովի մասին, որի որոշումները առանձին տետրակով կուղարկուեն ձեզ: Ապա զեկուցում է Հայաստանի Բիւրոյի ընկերը Պոլսի ընկերների կարծիքների մասին, որից երեւում է, որ այնտեղի ընկերները «որոշել են լարել բոլոր ուժերը, կենտրոնացնել բոլոր տարրերը հայ ինքնապաշտպանութեան համար եւ առաջարկել Կովկասի մարմիններին, որպէսզի ոյժեր կենտրոնացնեն սահմանագլուխներում եւ անկախօրէն գործեն նոյն ինքնապաշտպանութեան հողի վրա: Այդ նպատակի համար անհրաժեշտ են գտնում ղեկավար ոյժերին Կովկաս հրաւիրել»:

Հայ կամաւորների կազմակերպման զեկուցումից երեւում է որ այդ գործը արդիւնք է կուսակցութեան եւ զանազան պետութիւնների հետ վարած բանակցութիւնների ինչպէս նաեւ Թուրք կառավարութեան յամառ չկամութեան բարենորոգումներ մտցնելու: Բարենորոգումների ծրագիրը, որ ռուս կառավարութիւնն առաջարկեց, Տաճկաստանի եւ Գերմանիայի կողմից մերժուեց: Ռուս կառավարութեան հետ ունեցած մտքերի փոխանակութիւնից երեւում էր, որ նա, զանազան քաղաքական նկատումներով, վճռել է տաճկահայերի դրութիւնը բարելաւել, որ նրա քաղաքական կուրսը ներկայումս նպաստաւոր է տաճկահայերի համար, բայց նրան խանգարում է Գերմանիան, որ արգելք է հանդիսանում հայկական ռէֆորմների:

Համաեւրոպական պատերազմի հէնց սկզբից ռուս կառավարութիւնը

ցանկացաւ իմանալ, թէ ինչ է լինելու հայերի դիրքը ռուս-տաճկական պատերազմի դէպքում: Միւս կողմից հայ շրջաններին շատ էին մտահոգում պատերազմի դէպքում ծագելիք արհաւիրքները: Այս հողի վրա սկսեցին բանակցութիւնները Հայերի եւ ռուս կառավարութեան միջեւ: Հայերի պահպանման հաստատութիւնների, միութիւնների եւ ընկերութիւնների ներկայացուցիչներից կազմուեց մի մարմին, որ կոչուեց Ազգային Բիւրօ. սա ընտրեց մի գործադիր մարմին, որը բանակցութիւններ սկսեց կովկասեան կառավարութեան հետ: Կառավարութիւնը խոստանում էր իրագործել բէֆորմների սկզբնական ծրագիրը եւ ցանկութիւն էր յայտնում, որ հայերը իրենց համակրութեամբ աջակցին ռուս զօրքին պատերազմի դէպքում: Այդ աջակցութիւնը պիտի կայանայ զօրքին թեթեւ ծառայութիւններ մատուցանելու, մանաւանդ հետախուզումների ժամանակ, եւ ժողովրդական ինքնապաշտպանութեան մէջ: Այսպէս առաջ է գալիս կամաւորներ կազմելու միտքը: Այս կամաւոր խմբերը զէնքաւորուէս պէտք է ծառայեն հայ գիւղերի ինքնապաշտպանութեան եւ հարկաւոր դէպքում պէտք է աջակցին ռուս զօրքին: Կառավարութիւնը իր վրա է վերցնում դրանց պինելու եւ ապրեցնելու հոգը: Ազգային Բիւրօն որոշում է կամաւորների կազմակերպութիւնը, վարժութիւնը եւ ամբողջ պինուորական գործը յանձնել մեր կուսակցութեան: Թէ Ազգային Բիւրօն եւ թէ մեր ընկերները որոշում են գործին համազգային բնոյթ տալ, ի հարկէ, աշխատելով մեր տեսակէտները անցկացնել գործի մէջ:

Այս զեկուցման առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւնների ընթացքում, որ երբեակ համաձայնութեան յաղթութիւնը մեզ համար նպաստաւոր է, որ ռուս-թրքական պատերազմը անցանկանալի է, բայց թէ նա ծագի, մեր բոլորիս ուշը պէտք է լինի Իուսաստանի յաղթութիւնը, մեր ակտիւ մասնակցութեան պատերազմին, ընկերների մի մասը հակառակ էր եւ պահանջում էր զբաղուել միայն ինքնապաշտպանութեամբ, բայց ժողովականների խոշոր մասը՝ ընդունելով հանդերձ, որ մեր գործը պէտք է լինի զէնքաւորապէս ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, անհրաժեշտ է համարում, հարկը պահանջած դէպքում, աջակցել ռուս զօրքին: Ի վերջոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը:

Ռայոն. ժողովը՝ կանգ առնելով ներկայ քաղաքական միջազգային մօմենտի վրա եւ ղեկավարուելով իր կուսակցութեան հիմնական սկզբունքներով եւ միջազգային համերաշխութեան գաղափարով, իր խորին ցաւն է յայտնում այն սարսափելի պատերազմի համար, որ սպանդանոց է դարձրել ամբողջ Եւրոպան:

Վերյիշելով պատերազմի դրդապատճառները, կուռզ կողմերի նպատակները, աշխատաւոր դասակարգի, մանր ազգութիւնների, մասնաւորապէս հայ ժողովրդի ապագան, Ռայոն. ժողովը աւելի բաղձալի կը համարէր, եթէ այս պատերազմը վերջանար չուտով եւ այն էլ երբեակ համաձայնութեան յաղթանակով:

Գալով սպասելիք ռուս-տաճկական պատերազմին՝ Ռայոն. ժողովը

այդ համարում է անցանկալի եւ աղէտաբեր, քանի որ նրա ընթացքում ժողովուրդը պէտք է ենթարկւի կոտորածների, իսկ նրա անտեսութիւնը՝ աւերմունքի:

Այդպիսի պատերազմ բռնկելու դէպքում ժողովը որոշում է կովկասում կազմակերպել թուրքիկ խմբեր, որոնց նպատակն է լինելու, ռուսաց բանակի առաջխաղացութեան դէպքում, պաշտպանել հայկական վայրերի ազգաբնակութիւնը աւերածութիւններից ու կոտորածներից եւ պկակցել ռուս բանակին:

Ժողովը ի նկատի ունենալով այն, որ ընդհանուր ժողովի որոշման համաձայն ռուս-տաճկական պատերազմի դէպքում մեր բռնելիք դիրքը որոշող կուսակցութեան օրգան հանդիսանում է Տաճկաստանում գոյութիւն ունեցող յատուկ մարմինը՝ ընտրւած ընդհանուր ժողովի կողմից՝ եւ երկրորդ՝ մտնելով Արեւելեան Բիւրոյի դրութեան մէջ, որ ամէն բոպէ սպասում էր ռուս-տաճկական պատերազմի բռնկումին, իսկ այդ մարմնի մասին տեղեկութիւն չունէր, ստիպւած է եղել որոշ քայլերի դիմել, խոստումներ անել. եւ արդէն փաստօրէն տեղի է ունեցել ոյժերի մօբիլիզացիան, ժողովը թէեւ իր իրաւասութիւնից դուրս է գտնում կամաւորներ կազմակերպելու հարցի վճիռը, բայց եւ չունենալով այդ խնդրի վերաբերեալ աւելի բարձր եւ իրաւասու մարմինների որոշումը հաստատում է Բիւրոյի որոշումները եւ նպաստում է դրանց լաւագոյն իրագործման:

Ինչպէս. ժողովը ցանկութիւն է յայտնում՝ որ Բիւրօն, ըստ հնարաւորութեան, յարաբերութեան մէջ մտնէ Հայաստանի մարմնի հետ այս առթիւ: Նոյնպէս չարունակէ սկսւած բանակցութիւնները երբեմն համաձայնութեան պատկանող միւս պետութիւնների հետ եւ նրանցից որոշ խոստումներ ստանայ:

Նոյնպէս վճռում է չտալ այս գործին նեղ կուսակցական բնոյթ եւ վարել ըստ կարելւոյն ղեդրէ, առանց հրապարակային բնոյթ տալու:

Ապա երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան Ազգային Բիւրոյի շուրջը: Ամենք գտնում էին այդ Բիւրօն ապօրէն, ոչ ազգային, այլ մի քանի հասատատութիւնների ներկայացուցչութիւն: Սեծամասնութիւնը՝ ի նկատի ունենալով քաղաքական պայմանները՝ հնարաւոր չէր համարում լայն, ընդհանուր ընտրութեան սկզբունքով ազգային մի ժողով գումարել, գործնական նկատումներով օգտակար էր համարում ներկայ Ազգ. Բիւրոյի գոյութիւնը, նրա գործադիր մարմինը ընթանում է համերաշխօրէն մեր ընկերների հետ: Ժողովը որոշեց այս մասին բանաձեւ չգւէարկել եւ հաւանութիւն տւեց ընկերների բռնած դիրքին:

Առաջարկւեց նաեւ կազմել երկու մարմին, մէկը զուտ գինւորական, որ լինելու է մեր ընկերների ձեռքը, եւ միւսը՝ Ֆինանսական եւ այլ խնդիրների համար, ուր պիտի մասնակցեն Ազգային Բիւրոյի կողմից ընտրւած մարդիկ մեր ընկերների հետ միասին հաւասար թւով: Ցանկալի է, որ գինւորականից զատ, բոլոր յանձնաժողովներում մասնակցեն Ազգային Բիւրոյի ներկայացուցիչները:

Ընկերներից ոմանք բողոքում են, որ Ազգային Բիւրօն ամբողջ գործը իր ձեռքն է առել եւ յետ է մղում կուսակցութիւնը: Առաջարկւում է աւելի չհշտել կուսակցութեան մասնակցութիւնը բոլոր ձեռնարկներում: Այս առթիւ բուռն վիճաբանութիւն է տեղի ունենում: Առաջ է բերւում Ազգային Բիւրոյի կազմութեան, նրա գործունէութեան, իրաւասութեան, կազմի հարց: Երաշխաւորւում է, որ մեր կուսակցութեան անկախ դիրքը ապահովւած է եւ չեչտւում է համերաշխ գործունէութեան անհրաժեշտութիւնը:

Տեղի է ունենում Արեւելեան Բիւրոյի երկու անդամների ընտրութիւնը եւ ժողովը վակւում է ոգեւորւած տրամադրութեան տակ:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Բ.

ԿԱՄԱԽՕՐԱԿԱՆ ԽՕՒՄԲԵՐ

ՀԱՑ ԿԱՄԱԽՕՐԱԿԱՆ ԽՕՒՄԲԵՐԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ ՍԻՄՕՆ ՎՐԱՑԵԱՆԻ ԶԵԿՕՒՑՕՒՄԸ ԱԶԳ. ԽՕՐՀՐԴԱԺՕՂՈՎԻՆ

(1914 թ. դեկտեմբեր 27)

Ազգային Բիւրոյի նախագահի զեկուցումից ժողովականները իմացան, թէ ի՞նչ պայմաններում առաջացաւ հայ կամաւոր խմբերի կազմակերպման միտքը, կառավարութիւնը որոշ խոստումներ արաւ տաճկահայոց ապագայի նկատմամբ, եւ Ազգ. Բիւրօն յանձն առաւ կազմակերպել կամաւոր խմբեր, օգնելու համար ռուս զէնքի յաջողութեան: Այնուհետեւ ստեղծւեց զինւորական մի մարմին՝ Հայ կամաւոր խմբերի կարգադրիչ մարմին կամ ինչպէս սովորաբար կոչում են, շտաբ անունով՝ բաղկացած զինւորական հմտութիւն, անուն ու փորձառութիւն ունեցող անձնաւորութիւններից, որոնց եւ յանձնւեց խմբերի կազմակերպման եւ ղեկավարման գործը:

Սկզբում շարժումը կրում էր անլէգալ բնաւորութիւն. կառավարութիւնը խուսափում էր աղմուկից եւ չէր ուզում հրապարակային ձեւ տալ: Այդ պատճառով ամէն բան արւում էր գաղտնի կերպով: Զինւորական Մարմինը որոշեց խմբերի գործունէութեան վայրը, նրանց թիւը, հրամանատարների կազմը եւ կազմելով զօրաշարժի ծրագիրը՝ ամէն կողմ ուղարկւեցին մարդիկ ու հեռագիրներ՝ կամաւորներ արձանագրելու համար:

Որոշւեց խմբերի գործունէութեան չորս կէտեր ընդունել, Սալմաստից պիտի շարժւէր Անդրանիկի Գունդը 1500 հոգուց բաղկացած եւ պիտի արշաւէր դէպի Վան, Իգդիրից պիտի դուրս գար Դրօյի խումբը 500 հոգուց կազմւած՝ նոյնպէս դէպի Վան արշաւելու նպատակով: Կաղզւանից շարժւելու էր Համազասպի գունդը, իսկ Սարըղամիշից՝ Քեռիի գունդը:

Կառավարութիւնը առաջարկում էր նաեւ Օլթիի, Խոյի դիծերը առնել, բայց զինւորական մարմինը մերժեց՝ աչքի առաջ ունենալով, որ այդ

դծերը հայաբնակ չրջանում չեն դանուում: Գործը կազմակերպողների մէջ այն տրամադրութիւնը կար, որ բաւական ժամանակ պէտք պիտի լինի մոբիլիզացիան լրացնելու համար, բայց հասարակութիւնը այնպիսի խանդավառութեամբ ընդ առաջ դնաց, որ շատ կարճ ժամանակում ոչ միայն ստացուեց պահանջւած թիւը, այլեւ շատերին ստիպւած եղանք մերժելու: Հայաբնակ բոլոր վայրերից ինքնաբերաբար գալիս էին կամաւորներ, հակառակ մամուլի եւ զինուորական մարմնի ազդարարութիւնների՝ հոսանքը երթալով աւելի լայն ծաւալ ստացաւ. խմբեր եկան Բուլղարիայից, Ռումանիայից, Օդէսայից, Ղրիմից, Ռոստովից, Եկատերինոդարից, Աստրախանից, Անդրկասպեան երկրից եւ ուրիշ հեռաւոր տեղերից: Այդ հոսանքը շարունակւում է եւ այսօր՝ չնայած մեր կողմից եղած մերժումների:

Կամաւոր խմբերի կազմակերպումը, ինչպէս յայտնի է, սկսւեց սեպտեմբերի սկզբներին, երբ ռուս-տաճկական յարաբերութիւնները խիստ լարւած էին եւ ամէն րոպէ սպասւում էր պատերազմի յայտարարութեան: Այդ տրամադրութեան ազդեցութեան տակ մոբիլիզացիան կատարւեց շատ արագ. կարելի չեղաւ ոչ խիստ բժշկական քննութիւն կատարել, ոչ էլ լաւ ընտրութիւն անել զինուորական և այլ տեսակէտներով: Այդ պատճառով խմբերի մէջ մտան բաւական թւով եւ տկար ու կասկածելի տարրեր, որոնք անպօր դտնւեցին դիմանալու այն բոլոր դժւարութիւններին, որոնք վիճակւեցին մեր խմբերին: Այդ յուղւած տրամադրութիւնը տեղի տւեց հանդստութեան, եւ արդէն հոկտեմբերի կէսերին կառավարութիւնը մեզ յայտնեց, որ պատերազմը յետաձգւում է մինչեւ գարուն: Ապահով, որ դեռ ժամանակ կայ խմբերի պակասը լրացնելու եւ զինավարժութեամբ պարապելու, զինուորական մարմինը, համեմատաբար, թեթեւ պատրաստութեամբ նշանակւած կէտերն ուղարկեց կամաւորներին: Կամաւորների համար որոշւեց առանձին, միանդման համազգեստ, որ մշակեցին խմբերի հրամանատարները: Հագուստի եւ այլ պէտքերի համար ի նկատի էր առնւում անցեալ փորձը — բուլղարական պատերազմի, հայդուկային կռիւների եւայլն օրերից: Դժբախտաբար, շատ բան կարելի չեղաւ նախատեսել, եւ խմբերը բաւական նեղութիւններ կրեցին՝ սկիզբներում տաք ու յարմարաւոր հագուստներ չունենալու պատճառով:

Չնայած կառավարութեան հաւաստիացումներին, յանկարծ, պայթեց պատերազմը, որ յանկարծակիի բերեց եւ մեզ: Սկսւեց մի տենդային աշխատանք եղած պակասութիւնները լրացնելու մասին, բայց սպասելու ժամանակ չկար: Խմբերը առանց կանոնաւոր վարժութեան ստիպւած էին կուի վայր մեկնել: Հրամանատարները դիմեցին իրենց տեղերը: Բոլոր խմբերը հագեցով պատրաստւեցին եւ հազար ու մի պակասութիւններով հանդերձ, սկսեցին դործի: Ամենամեծ պակասութիւնը, ինչպէս յիշեցինք, տաք հագուստի չլինելն էր, այլեւ խոհանոցի, բժշկական մասի պակասը: Մեր բոլոր ճիգերը խմբերի համար բժիշկներ կամ ֆէլտշէրներ գտնելու անցան ապարդիւն: Նոյն իսկ 200 եւ աւելի րուբլի ամսական նշանակւեց, թերթերում յայտարարութիւն տպւեց, բայց բժիշկներ չգտնւեցին:

Խմբերի գործունէութիւնը ամփոփ կերպով հետեւեալն է եղել. Անդրանիկի խումբը շարժուել է Սալմաստից մօտ 1200 հոգով: Ապա այդ խումբը ուժեղացաւ մօտ 200 հոգով: Խումբը ունէր ձիաւոր մօտ 200 հոգի: Զինուած էր մոսիններով: Խումբը առաջին կռիւը ունեցաւ Բուրուշխուրան լեռնանցքի վրա: Կռիւը անցաւ շատ յաջող: Խումբը ռուս զօրքերի հետ գրաւում է Ղոթուրը, ուր Բաղի գիւղի մօտ լինում է տաք կռիւ: Այստեղ մերոնց անձնատուր են լինում չորս քիւրտ բէգեր — բինբաշիներ: Ապա խումբը առանց դիմադրութեան գրաւում է Սարայը: Մի խմբակ Աւոյի ղեկավարութեամբ ջարդում է քրտերին Բարթողիմէոս առաքեալի վանքի մօտ եւ գրաւում վանքը: Ապա 14 հոգով գրաւում է Բաշկալան եւ գալիս միանում Անդրանիկի գնդին: Անդրանիկի գունդը՝ եղած հրամանի վրա թողնում է Սարայը եւ գալիս Ղօթուրի մօտ դիրքեր բռնում: Դեկտ. 4-ին նոր հրաման է հասնում առաջ շարժուելու, խումբը նորից գրաւում է Սարայը, բայց վերջին ընդհանուր նահանջի ժամանակ՝ մեր խումբն էլ յետ է քաշւում: Մինչեւ վերջին արշաւանքը ամբողջ գնդից սպանւում են 12 հոգի եւ վիրաւորւում 18 հոգի: Գնդի գործունէութեան մասին ամենանպաստաւոր զեկուցումներ են տրւում Ատրպատականի ռուս բանակի հրամանատարների կողմից: Ի նշան յատուկ ուշադրութեան Անդրանիկը վարձատրւում է բարձր պատւանշաններով, իսկ խմբից շատ մարտիկներ ներկայացւում են Գէորգեան խաչերի:

Երկրորդ գունդը շարժւեց Իգտիրից 380 հոգուց բաղկացած, որոնց 50ը ձիաւոր: Դրոյի ղեկավար խմբի առաջին գործը եղաւ Կաւռէ Շամի գիւղի կռիւը, ուր վիրաւորուեց Դրօն. եւ խմբի հրամանատարութիւնը անցաւ Արմէն Գարոյին, նրա օգնականն էր Խէչօն: Գնդի յաջորդ գործերն եղան Նոյ. 23-ի եւ 28-ի, ապա դեկտ. 7-ի, 11-ի, 12-ի, 13-ի խիզախ կռիւները, որոնց մասին հիացումով են խօսում ռուս սպաները, անւանելով մեր տղաների յանդուգն յարձակումները «Աքաֆա սումաշէքշիխ» («Խենդերի յարձակում»): Գունդը գործել է շատ աննպաստ պայմաններում եւ գտնուել է հայատեաց Գեներալ Աբացիեւի հրամանատարութեան տակ եւ պատուաւոր կերպով տարել է իր գործը: Այնքան յաջող, որ Կորպուսի կոմանտիր Գեն՝ Օգանովսկին ինքնաբերաբար առաջարկում է խումբը մեծացնել եւ հայ խմբերի համար սպաներ պատրաստել: Այդ նպատակով Իգտիրում հիմնեցին հայ սպաների համար դասընթացքներ, ուր շտաբի սպաների դասախօսութեամբ պիտի պատրաստէին մեզ համար վարիչ ուժեր. երկրորդ գունդն էլ ընդհանուր նահանջի հետեւանքով քաշուել է Իգտիր:

Երրորդ խումբը շարժւեց Կաղզւանից Համազասպի հրամանատարութեամբ, նոյնպէս ունեցաւ մի շարք փայլուն գործեր, որոնց մասին գրւեց թերթերում: Դեկտ. 8-ին խումբը ենթարկւեց գիշերային յարձակման եւ տւեց զոհեր՝ սպանւած ու վիրաւորներ: Խումբը այժմ սահմանի վրա է՝ Սըթահան գիւղում:

Ամենամեծ փորձութիւնների ենթարկւեց չորրորդ գունդը՝ Քեռիի հրամանատարութեամբ: Գունդը շարժւեց Սարըղամիշից մօտ 480 հոգով, առաջին յաջող ճակատամարտը ունեցաւ Գըլար Կալա գիւղի մօտ: Կորպուսի

հրամանատար Բէրխմանը առանձին ուշադրութիւն դարձրեց դէպի խումբը՝ կարեւոր նշանակութիւն տալով նրան: Վերջին պանիկայի ժամանակ Քեռին ամենածանր պայմանների մէջ ընկաւ՝ հանդիպելով անհամեմատ աւելի մեծ ոյժերի: Նարիմանի մօտ խումբը ցրուեց եւ մօտ 80 հոգի կորուստ ունեցաւ: Ցրուած խմբակները այժմ հաւաքւել են Ղարսում, եւ Քեռին պատրաստւում է նորից չարժւելու: Բոլորովին թալանւած է մեր պահեստը Սարըղամիշում, որով Քեռու եւ Համազասպի խմբերը մնացել են առանց հագուստի եւ պարէնի:

Բոլոր դնդերի մօտ մենք ունեցել ենք մեր քաղաքացիական ներկայացուցիչները — Պարսկաստանում բժ. Զաւրիեւը, Սամսոնը եւայլն, Իգդիրում Ս. Տիգրանեանը, Ս. Մատենեանը, Կաղզւանում Վալադեանը, Սարըղամիշում՝ Նիկ. Աղբալեանը, որոնք ամենապատասխանատու կերպով տարել են իրենց ծանր պարտականութիւնները: Օգտւում ենք առիթից յայտնելու համար մեր խորին յարգանքը թէ հրամանատարներին ու քաղաքացիական ներկայացուցիչներին եւ թէ բոլոր կամաւորներին, որոնք ոչ միայն արդարացրին իրենց վրա դրւած յոյսերը, այլեւ մեծապէս բարձրացրին հայ ժողովուրդը յաչս պետական ու զինուորական մարդկանց, ինչպէս եւ թշնամիների:

Կամաւոր խմբերի փայլուն գործունէութիւնը պատճառ եղաւ, որ կառավարութիւնը համաձայնէր խմբերի կազմը կրկնապատկել՝ խոստանալով 3000 հրացան էլ տալ եւ համաձայնելով սպայ ու ենթասպայ մարզիչներ 1000 հոգինոց բէզէրվ պատրաստելու համար: Այդ նպատակով արդէն 500 հոգի ուղարկւեց Ալեքսանդրապոլ, 500 հոգի էլ այս օրերս կ'ուղարկւին: Բէզէրվի պատրաստութեան գործը յանձնւեց Վարդանին, որի հմտութիւնը երաշխիք է այդ գործի յաջողութեան: Աստիճանաբար պէտք է մեծացւին եւ գործող խմբերը, ուժեղացնելով նրանց ձիաւոր մասերը, բէզէրվից պատրաստ նիւթ պիտի հայթայթւի, որով պիտի լրացւի այն պակասը, որ խմբերը ունենում են սպանուղների, վիրաւորների եւ զանազան առիթներով հեռացողների պատճառով:

Զինուորական մարմինը անհրաժեշտ է գտնում կենտրոնացնել բէզէրվի գործը, որպէսզի կարելի լինի մեր պայմաններին համապատասխան մարդանք տալ, տեսցիպլինի միանմանութիւն մտցնել, բաշխման գործը կանոնաւորել եւ միանման հագուստ հագցնել: Բէզէրվի կենտրոնացումը զգալի չափով կը կրճատէ եւ ծախսերը, որոնք այսօր բաւական անկանոն կերպով են տեղի ունենում ուժերի ցրւածութեան պատճառով:

Այսպէս, ուրեմն, հիմա մենք ունինք երկու, համեմատաբար, լրիւ խմբեր՝ Պարսկաստանում եւ Իգդիրում, Համազասպի խումբը առանց օգօղի եւ Քեռու խումբը դրեթէ նոր կազմած: Վերջին երկու խմբերի վրա շատ խոշոր ծախսեր պէտք է անել՝ նրանց դէթ նախկին վիճակին հասցնելու համար: Ալեքսանդրապոլում ունինք բէզէրվի 500 հոգի, նոյնքան էլ Թիֆլիսում, որ մի քանի օրից պիտի ուղարկւի Ալեքսանդրապոլ: Իգդիրում ունինք սպանների դպրոց, որ նոր է կազմակերպւում:

Խմբերի պէտքերը հոգալու համար թէ տեղերում եւ թէ Թիֆլիսում

ունինք պահեստներ: Թիֆլիսի կենտրոնական պահեստում են հայթայթում բոլոր հարկաւոր իրերը եւ կենտրոնացնում են նէյերները: Պահեստը պէտք եղած իրերը կամ պատրաստ է գնում, կամ ապսպրում դրսի քաղաքներում:

Ինչպէս ասացինք, խմբերը կազմելու եւ նրանց գործերը վարելու համար գոյութիւն ունի կարգադրիչ Մարմինը կամ Շտաբը, որ գործակցում է Ազգային Բիւրոյի Գործադիր մարմնին: Վերջինս հոգում է գործի նիւթական մասը: Առաջինը տանում է զինուորական մարտական գործը: Ընդհանուր գործի համար լինում են խառն ժողովներ:

Զինուորական Մարմինը գործի կազմակերպման հէնց առաջին օրից, որոշեց գործը դնել անպայման Համազգային անկուսակցական հողի վրա: Եւ այս հանդիսացաւ գործի առաջին պայմաններից մէկը: Այս եղաւ նաեւ ամենալաւ միջոցը ամրացնելու այն համերաշխութիւնը, որ վերջերս տիրում էր հայ ժողովրդի բոլոր խաւերում եւ բոլոր վայրերում:

Ահա այս ամփոփ տեղեկութիւնները, որ կարելի եղաւ հապճեպ կերպով պատրաստել: Դժբախտաբար ժամանակ չկար աւելի մանրամասնօրէն թւերով ու փաստերով ներկայացնելու կամաւորների կազմակերպման գործը իր ամբողջ բարդութեամբ: Աւելի նպաստաւոր պայմաններում կարելի կը լինի այդ թերին էլ լրացնել:

Գործը չատ նոր էր, չափազանց բարդ ու պատասխանատու: Գործի կազմակերպման մէջ սխալներ չատ կան, որոնք հետզհետէ պէտք է ուղղուին, մանաւանդ որ դեռ չատ փորձեր սպասում են մեզ ապագայում: Մենք համոզուած ենք, որ այս գործին հաւատացող բոլոր ուժերը ոչ մի ջանք չպիտի խնայեն պատուաւոր կերպով դուրս գալու բոլորիս ստանձնած պարտականութեան տակից:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Գ.

ԷՆՎԷՐԻ ԱՐԱՇԱՆԴՐՈՒԹԻՒՆԸ

(ՆԱՄԱԿ՝ Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՑԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ)

(1915 թ. Յունիս. 1/14 Թիֆլիս)

Սիրելի ընկերներ,

Վերջին նամակը ձեզ գրել էինք մօտ մի ամիս առաջ. ապահով չէինք, ստանո՞ւմ էիք արդեօք եւ նրա համար զգուշանում էինք գրել. ընկեր Վարանդեանի վերջին հեռագրից իմացանք, որ մեր նամակը տեղ է հասել, ուստի չարունակում ենք գրել: Այս նամակը, աւրիթից օգտուելով, մարդու ձեռքով ուղարկում ենք մինչեւ Ռումանիա, իսկ այնտեղից պոստով: Գրում ենք վերջին ամառւայ ընթացքում անցած-դարձածը եւ խնդրում ենք, որ դուք էլ

յայտնէք ձեզ հետ կապ պահող վայրերին, մասնաւորապէս Եղիպտոս եւ Ամերիկա:

Կովկասը եւ հայ ժողովուրդը հէնց նոր ազատուեց մի սոսկալի կատաստրոֆից: Ռուս-տաճկական պատերազմը, որի վրա ռուսերը շատ անհոդութեամբ էին նայում, յանկարծ ստացաւ անսպասելի կերպարանք. թուրքերը հաւաքելով իրենց ոյժերը Էրզրումի գծի վրա, դեկտ. 10-ից գրաւում են Օլթին՝ տրորելով ու յետ մղելով ռուսներին. ապա արագ վազքով հասնում են Արտահան, գրաւում եւ հասնում՝ դէպի Ախալքալաք, որից մօտ 25 վերստ հեռաւորութեան վրա՝ կուի բռնւում ռուսների հետ: Միւս թեւը աւելի ուժեղ, գրոհ է տալիս Սարըղամիշի վրա, կատաղի ռմբակոծում կայարանն ու երկաթուղին, արագ չարժումով տոպրակի մէջ դնում է Բերխմանի կօրպուսը եւ յաջող մի չարժումով անցնում Սարըղամիշի եռեւը եւ կտրում կարս-Սարըղամիշի երկաթուղին՝ Զաթախ կայարանի մօտ: Օլթիի, Արտահանի եւ Սարըղամիշի տեղացի թուրքերը միանում են տաճկական զօրքին եւ թուրք կօրպուսները չչմեցնելով ռուսներին՝ սպառնում Թիֆլիսին, որից 3-4 օրւայ հեռաւորութեան վրա էին գտնւում: Ռուսները շատ քիչ զօրք ունէին այդ կողմերում: Գլխաւոր բանակը՝ Բերխմանի կօրպուսը մէշօկի մէջ էր, իսկ նոր զօրք անկարելի էր հասցնել: Սկսւեց մի աննկարագրելի խուճապ, առաջաւոր դիրքերից սկսւեց մի խելակորոյս նահանջ, որի ժամանակ թողնւում էր ամէն ինչ եւ զէնք եւ ռազմամթերք եւ պաշարեղէն, միլիոնների հարստութիւնը անցաւ թուրք խուժանի ձեռքը, թալանւեց կամ այրւեց: Այն չրջանների հայութիւնը թողած ամէն ինչ՝ փախաւ. ահագին գաղթականութիւն սկսւեց: Պատերազմի բեմից լուրերը աւելի չափազանցւած էին հասնում Թիֆլիս, ուր ամէն ոք իր գլուխը կորցրել, կարծւում էր, որ թուրքերը առանց դիմադրութեան 3-4 օրէն Թիֆլիսում կը լինին, կարգազրութիւն եղաւ էվակուացիայի. որոշւեց հեռացնել բանկերը, պաշտօնական հիմնարկութիւնները եւայլն. որոշւեց փոխարքային փոխադրել Եկատերինոդար, իսկ գինւոր. չտարը՝ Տաւրօպոլ. Պետերբուրգ ուղարկւած անվերջ հեռագիրներին զօրքի պահանջքով՝ նկատ մերժումի պատասխան: Բերխմանին հրաման ուղարկւեց ինչ գնով էլ լինի ճեղքել թուրք զօրքը եւ Սարըղամիշ օդնութեան հասնիլ: Փոխարքայի գինւոր. մասի օգնական Միշլայէվսկի, որ թուրքերի գրոհի պահուն Սարըղամիշ էր, փախաւ Ալէքսանդրապոլ եւ այնտեղ սկսեց կազմակերպել օպօլչենիա եւ ժողովրդին զէնք բաժանել, Ղարսից, Ալէքսանդրապոլից, մանաւանդ Թիֆլիսից, ժողովուրդը սկսաւ փախչել. կայարանում կուռվ էին տեղ ճարում. մի սոսկալի պանիկա— ահաբեկում — էր տիրում ամէն տեղ, եւ ամէն ազդ իր գիրքն էր աշխատում որոշել: Վրաց ազնւականութիւնը ժողով գումարելով, փոխարքային գիմում է անում, որ Թիֆլիսը առանց կուի յանձնեն թշնամուն: Նման գիմում են անում եւ քաղաքային Դուման ու ժուրնալիստների ժողովը: Քաղաքական բոլոր կուսակցութիւնների մի ժողով է գումարւում, որի մէջ վրացիները նոյնպէս առաջարկում են Թիֆլիսը առանց կուի յանձնել: Մերոնք միայն հակառակ կարծիք են ունենում: Առհասարակ այդ օրերին թէ կառավա-

բական չրջաններում եւ թէ մասսայի մէջ այն կարծիքն էր տիրում թէ ամբողջ Անդրկովկասը պիտի անցնի թուրքերի ձեռքը: Օր օրի վրա սպառնում էր կովկասեան թաթարների ընդհանուր չարժում, արդէն նշաններ էլ կային: Ադմինիստրացիան — վարչութիւն — էլ կարծես հաշուել էր այդ մարդի հետ՝ արագօրէն հեռացնում էին իրենց ընտանիքները եւ արժէքաւոր իրերը: Սոսկալի էր հայ ժողովրդի վիճակը, նրա համար սպառում չկար, «ազգի երեւելիները» ինչպէս ազգային Բիւրոյի նախագահ Սամսոն Յարութիւնեանը, Դումայի անդամ Պապաջանեանը եւ ուրիշները զանազան պատրուակներով փախան Թիֆլիսից, մնացինք մենք ու մեր բոլորիս մտահոգութիւնն էր փրկել ժողովուրդը վերահաս վտանգից եւ պաշտպանել նրան: Այս գործի համար մտածում էինք օգտուել մեր խմբերից. դիմում եղաւ կառավարութեան եւ մի քանի տեղ — Ղարս, Ալէքսանդրապոլ եւ այլն, տրուեցին բերդաններ: Մտածւում էր նաեւ դիւրութիւններ ստեղծել փախչող ժողովրդին օդնելու:

Այս միջոցին կառավարութիւնը դիմեց մեզ խոստանալով եւ զէնք եւ պատներ, միայն թէ նոր խմբեր ուղարկենք, մենք անմիջապէս կազմեցինք 500 հոգինոց մի խումբ եւ վարդանի հետ ուղարկեցինք Ալէքսանդրապոլ, ուր մտածւում էր հաւաքել ռուսների դիմադրական ոյժը: Այսպէս անցնում է մի քանի ծանր օր, երբ դեկտ. 20-ին, լուր է հասնում որ Բերխմանի կօրպուսը — զօրաբանակ — դուրս է եկել Թակարդից եւ միւս ուժերի հետ կանգնեցնում է Թուրքերի գրոհը. ապա մեծ յաղթանակ է տարում Թուրքերի վրա, որի մէջ ջարդւում են Թուրքերի 10-րդ եւ 9-րդ կօրպուսը վերջինիս հրամանատար Իհսան փաշա եւ չտարը դերի են ընկնում. դերւում են եւ մօտ 10 հազար Թուրք գինուորներ, Արտահանը յետ է առնւում, Թուրքերը ստիպւած են լինում յետ քաշւել եւ այժմ կռիւներ տեղի են ունենում Կարակուրգանի մօտ: Թուրքերը չատ լաւ են կռւում, ծրագիրը չատ յաջող էր կազմած միայն ցուրտը եւ պաշարի պակասը պատճառ եղան որ նրանք յաղթուեցին, եթէ ոչ Թիֆլիսը ձեռքից գնացել էր:

Այդ պանիկայի միջոցին հրաման տրւում է Պարսկաստանի եւ Ալաշկերտի զօրամասերին յետ քաշւել, սկսւում է յետ դալ եւ Աւրպատականի ռուս զօրքը, որի հետ գաղթում են Ադրակի եւ Սալմաստի հայերը: Կարիք կա՞յ ասելու թէ ինչ ահռելի կացութեան մէջ ընկել է այդ ժողովուրդը այս ցրտին:

Գաղթում են եւ Թաւրիզից, որը անցել է Թուրքերի ձեռքը: Ալաշկերտից, որի բոլոր գիւղերը այրել են ռուսները հեռանալուց առաջ: Շահ Աբասի ժամանակներն են եկել մեր ժողովրդի վրա: Ռուսները առ այժմ, ուղում են ամրանալ Խոյ—Բայազիտ—Կարաւուրդան գծով պաշտպանողական դիրքով մինչեւ որ նոր ուժեր դան:

Ռուսաստանից հիմա գալիս են նոր կօրպուսներ, ըստ երեւոյթին զարնան տեղի կունենան վճռական դէպքեր: Գաղթող հայերին օդնելու համար սկսւում է հանդանակութիւն, կարիքը անհաշւելի է, Կովկասի հայերը մեծ կարեկցանքով են ընդունում եկողներին: Այս նոր տարին առ այժմ բերեց մեզ մի քանի տասնեակ հազար տնաւեր եղած ժողովրդի լաց ու սուգ: Թուր-

քական գրոհի վտանգը թեւում է անցած, թէեւ յայտնի չէ թէ կարաւըզանի մօտ տեղի ունեցող թրքական նոր յարձակումների յետեւ նրանք որքան ոյժ ունին:

Համաւոր խմբերն էլ մասնակցեցին վերջին դէպքերին: Անդրանիկի դունդը, որ հիմա ունի մօտ 1200 հոգի յետ է գալիս. Սարայի կողմից դէպի Ֆոյ ուղս զօրքերի հետ, խումբը շատ յաջող գործունէութիւն ունեցաւ ու արժանացաւ բարձր գնահատման, ուղս պինւորականների եւ շտաբի կողմից: Արմէն Գարոյի խումբը այժմ Իգտիրումն է: Նա էլ ունեցաւ մի շարք յաջող կռիւներ իսկ վերջին նահանջի ժամանակ անգնահատելի օգնութիւն հասցրեց գաղթող հայ պիւղացիութեան: Ֆումբը կապւած էր Գէնէրալ Ապացիեւի — Օսետին — Օտրեադի հետ. վերջինս հայատեաց եւ քրդասէր մի մարդ էր, այդ պատճառով տեղի են ունեցել նրա եւ Կարոյի մէջ մի շարք անախորժութիւններ, Ապացիեւը վատ է տրամադրւած եղել դէպի խումբը, եւ ամենավտանգաւոր տեղերն է ուղարկել նրան: Ի գնահատութիւն խմբի գործունէութեան՝ չորրորդ կօրպուսի հրամանատար Օգանովսկին որոշել է խումբը կապել մի ուրիշ Օտրեադի հետ: Օգանովսկին շատ լաւ է վերաբերւում դէպի մեր խումբը. նրա առաջարկութեամբ եւ հովանաւորութեամբ հիմնւում է Քանաֆեռում մի յիսուն հոգինոց դասընթացք, հայ խմբերի համար հայ սպաներ պատրաստելու համար. նրա պնդումով նոյնպէս Քանաքեռում հիմնւում է 1000 հոգինոց բէզէրվ, որ պիտի մարզւի ուս սպաների ղեկավարութեան տակ: Որոշել է Գարոյի խումբը մեծացնել, Վարդանի խումբն էլ այստեղ փոխադրել եւ ստեղծել 1200–1500 հոգինոց հայկական մի դիվիզիոն. ցանկութիւն կայ մեր ոյժերը կենդրոնացնել հայաբնակ վայրերում, Օգանովսկու կօրպուսի սահմաններում, նա շատ է ոգեւորւած մեր խմբերով, մեր չահն էլ պահանջում է ոյժերի կենդրոնացում, թէ Գարօ–Վարդանի եւ թէ Անդրանիկի խմբերը, պրաւելու են միեւնոյն Ռայոնում:

Համազասպի խումբը այժմ կաղզւանում է. ունեցել է մօտ 30 սպանւած, 40 վիրաւոր եւ բաւական պաշարեղէնի կորուստ: Ունեցել է մօտ 13 կռիւ եւ միշտ յաջող, նրանից էլ շատ զոհ են, ստացւել է Գէորգեւսկի մէդալ երկրորդ աստիճանի: Ամենից ծանր կորուստ է ունեցել Քեռին, որ թուրքերի գրոհին է ենթարկւել Նարմանի չրջանում, մօտ 7 սպանւած է տւել Նարմանի մօտ: Նրա խումբը թուրքերի յաղթական արշաւի օրերին ընկնում է մէշօկի մէջ Նարմանի մօտ եւ չնորհիւ Քեռու ճարպիկութեան ազատւում է, խումբը ցրւում է եւ նրա բեկորները հետզհետէ հաւաքւում են Ղարսում: Այժմ խումբը վերականգնւել է եւ պատրաստ է արշաւելու: Այս օրերս Գարօն ու Համազասպը Թիֆլիսումն են, հեռագրւեց որ Վարդանն ու Քեռին էլ գան մի ընդհանուր խորհրդակցութիւն կատարելու համար: Հարցեր շատ կան եւ ամենից առաջ պէտք է համաձայնեցնենք մեր գործունէութիւնը: Ռուս զօրքի նոր տակտիկի հետ, ի նկատի ունենալ հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, այլ եւ ոյժերի բաշխումն կատարել, որովհետեւ կառավարութիւնը կամենում է մեր խմբերը մեծացնել կամաւորների թիւը կրկնապատկելով:

Վերջին պահիկան առ ժամանակ մոռացնել տւեց ամէն բան, բայց մին-

չեւ այդ որոշ աշխատանք կատարուած էր թէ մամուլով եւ թէ դիւանագիտական ճանապարհով՝ հայկական հարցի նպաստաւոր լուծման համար: Մեր լօզունգն է «Աւտոնոմիա վեց վիլայէթների եւ Կիլիկիայի, ռուսական պրոտեկտորատի ներքեւ», այս մտքով հող է պատրաստւում, Պետերբուրգում, Սազոնօֆը եւ միւս շրջանները ըստ երեւոյթին հակառակ չեն այս ծրագրին: Այս մտքով դիմում եղաւ եւ կաթողիկոսի կողմից փոխարքային գրաւոր՝ իսկ բերանացի՝ Ցարին. աուդէնցիայի միջոցին վերջին տեսակցութեան ժամանակ, փոխարքան ասել է «կը մտածենք» իսկ ցարն ասել է, «Ձերդ սրբութեան ցանկութիւնները կիրագործուին, պատերազմից յետոյ հայերի ապագան շատ լաւ պիտի լինի»: Ցարը հետաքրքրուել է ապագայ Հայաստանով. նրա ժողովուրդներով եւ հայերի թւով: Կաթողիկոսը տեղեկութիւններ է տուել: Այդ աուդէնցիայի, ինչպէս եւ այցելութեան միջոցին դէպի հայերը ցոյց տուած ցարի բացառիկ ուշադրութեամբ, հայկական բուրժուական շրջանները բաւական ոգեւորուած էին, բայց իրապէս մէջտեղը ոչ մի շօշափելի երաշխիք չկա, ընդհակառակը ռուս ինտէլիգէնցիայի — Միլիւկով — եւ մամուլի — «Ռէչ», «Ուտրօ–Ռասսի»ի եւ այլն — որոշ մասը շատ պարզ եւ կատեգորիկ կերպով դնում են Հայաստանի անէկսիայի խնդիրը: Մեր շարքերում այս խնդրի մասին մի վճռական կարծիք չկա, թէեւ բոլորս էլ վախենում ենք «անէկցիայի» ուրւականից: Կառավարութեան վերաբերմունքը այժմ դէպի հայերը շատ լաւ է — գլխաւորաբար զինուորականների եւ բարձր ադմինիստրացիայի, տեղական պաշտօնէութիւնը՝ մեծ մասամբ վրացի, թուրք, գերմանացի, միշտ էլ հակահայ են:

Քաղաքական պատճառներով փախչողները վերադարձել եւ ազատ ապրում են: Մի ընդարձակ ցանկ անունների փոխարքայի կողմից ներկայացուած է Պետրոգրադ, բայց դեռ ամնիստիա չկա: Արտասահման գտնուողներն էլ անվտանգ կարող են վերադառնալ եւ մինչեւ պատերազմի վերջը առանց բռնուելու կապրեն. իսկ պատերազմից յետոյ յոյս կայ ընդհանուր լիկւիդացիա անել նրանց մեղքերի:

Ինչպէս գիտէք կամաւորների գործի նիւթական մասը վարում է Ազգ. Բիւրօն, իսկ զինուորականը Զինուորական Մարմինը: Ազգային Բիւրոյում վերջերս տեղի են ունենում խլրտումներ եւ պայքար, երեւի մօտ օրերս կը պայթի, Ս. Յարութիւնեանի հրաժարումով նախագահ ընտրուեց Պապաջանեանը, որը նոյնպէս հրաժարուեց, որովհետեւ իմացաւ որ մեր վստահութիւնը չի վայելում: Մենք աշխատում ենք կացութիւնը փրկել եւ մինչեւ ընդհանուր ժողովը եօլա տանել, իսկ ընդհ. ժողովի մէջ ընտրել մի ձեռնհաս մարմին: Ուզում ենք բժ. Զաւրեանին, Անդրանիկի բանակից այստեղ բերել, բայց նա էլ պայման է դնում որ ինքը կը հեռանայ, եթէ իր տեղը գայ մի կարող ընկ. օր. Ռոստոմը: Ռոստոմի բացակայութիւնը այստեղ առհասարակ շատ ենք զգում, եւ լաւ կը լինէր եթէ նա գար, մինչեւ այժմ շատ ենք մտածել, հեռագրել ու խնդրել որ գայ, բայց ի նկատի ունենալով դիւանագիտական քայլերի կարեւորութիւնը՝ չենք արել:

Խնդրում ենք առանձնապէս ջանք թափել մեզ համար նպաստաւոր վե-

բաբերում ստեղծելու Փարիզի եւ Լոնդոնի դիպլոմատիայի մէջ, որովհետեւ վերջի վերջոյ ամէն բան այնտեղից կախուած պիտի լինի:

Այստեղ չատ է մտածւում, այդ մասին, բայց զգուշացւում է պաշտօնական քայլեր առնելուց. դուք այդ ուղղութեամբ խոշոր գործ կարող էք անել:

Ձինւորական մասը վարում ենք մենք, ստեղծել ենք կարգապրիչ մարմին — Աբրահամ, Իչխան, Վրացեան — որոնք տանում են գործի ընթացիկ մասը, իսկ ընդհ. գործ՝ Աբբօն:

Տրամադրութիւնը դեռ չատ բարձր է, կամաւորների հոսանքը չարունակւում է, պէտք է առ այժմ վերջացնել, որովհետեւ տեղումս էլ չատ մարդ կայ:

Բոլոր ընկերները առողջ են:

Ընկերների կողմից ջերմ բարեւներով՝

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Դ.

Հ. Յ. Դ. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՒԵՐԸ

(1917 թ. ապրիլ)

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԴԷՊԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1.

Հ. Յ. Դ. կովկասեան ռայոնական ժողովը սրտի կսկիծով արձանագրում է այն փաստը, որ ազատագրուած ժողովուրդը ստիպուած է իր ազատութիւնը եւ ազգակայ նորմալ զարգացումը ապահովելու համար հսկայական պայքար մղել ոչ միայն հին կարգի մնացորդների, այլ եւ Եւրոպայի կենտրոնական պետութիւնների ահարկու զօրութեան դէմ:

1. Կասկածից դուրս է, որ անհատապար պայմաններում հաշտութիւն կապելը ծանրագոյս կը վնասի երիտասարդ Ռուսաստանին, կը խոչընդոտի նրա սոցիալ-տնտեսական զարգացումը եւ կը զրկէ մեր ամբողջ պետութիւնը ժողովրդի անհամար կարիքներին գոհացում տալու հնարաւորութիւնից եւ այսպիսով կը վարկաբեկէ նրան լայն մասսաների առաջ իր գոյութեան սկզբի օրերից:

2. Կասկածից դուրս է նոյնպէս, որ ներքին կայսրութեան յաղթութեան դէպքում՝ Ռուսաստանի քաղաքական կարգերը չեն կարող արագութեամբ ընթանալ ամբողջացման այն ճամբով, որով դնում են այսօր: Ցաղթական Գերմանիայի թէ արքայական տունը, թէ պահպանողական հոգեբանութեան տէր տիրող դասակարգերը չեն կարող իրենց սահմանին կից մի մեծ ամբողջ հանրապետութիւն հանդուրժել եւ հնար եղածին չափ այժ կը տան ռուս յեղափոխ տարրերին եւ տապալած արքայական տան վե-

բականգնումի գործին, որի իրականացումը կաշկանդելով Ռուսաստանի զարգացումը՝ կը հասցնի նրան նախկին կախնալ վիճակին:

3. Ռուս դեմոկրատիայի առաջադրած սոցիալ-անտեսական մեծ ծրագիրը — օր. հողային — նոյնպէս քննամական վերաբերում առաջ կը բերեն կենտրոնական միապետականների կողմից, որովհետեւ այդ ռէֆորմները այնքան արմատական են, որ ստանում են համաշխարհային բնոյթ եւ կարող են մեծ սոցիալական շարժումներ առաջ բերել եւրոպական մասսաների, յատկապէս դիւղացիութեան մէջ, այդ պատճառով Գերմանիան եւ նրա դաշնակիցները յաղթելու դէպքում կ'օգտուեն իրենց բոնի ուժից՝ ռուս դեմոկրատիայի վերանորոգչական եռանդը զսպելու համար»:

Այս ծանրակշիռ հանգամանքները նկատի առնելով՝ Ռայ. ժողովը գտնում է, թէ որեւէ հաշտութիւն Գերմանիայի եւ ազատ Ռուսաստանի միջեւ վերջինիս համար աննպաստ եւ անհաւասար պայմաններում անընդունելի է դեմոկրատիայի տեսակէտից»:

Եւ նկատելով, որ հաշտութեան նպաստաւոր պայմաններ ստեղծել, ինչպէս եւ ազատ եւ ամկախ կարգերն ապահովել, հնարաւոր է միմիայն ստւար, կարգապահ եւ լաւ պաշտպանուած բանակներով՝ Ռայ. ժողովը կոչ է անում բոլոր զինուորներին կրկնապատիկ եռանդով կատարել իրենց պարտքը, դասալիքներին — անմիջապէս վերադառնալ իրենց զօրամասերը եւ թիկունքի բոլոր գործօն ուժերին — աջակցել զօրքի պաշտպանման գործին:

Գալով հաշտութեան հիմնական պայմաններին՝ Ռայոնական ժողովը յայտարարում է, որ անընդունելի են թէ անեկսիոնիստական եւ հակաանեկսիոնիստական լողունգները, եթէ նրանք չունին կօնկրէտ բովանդակութիւն: Մեր կարծիքով հակադէմոկրատական է ոչ միայն գրաւած երկիրների բռնի միացումը, այլ եւ նրանց բռնի վերադարձը հին տէրերին: Այն հարցերը, որ նախքան պատերազմը միջազգային բնոյթ ունէին — ինչպէս օր. հայոց հարցը, — ինչպէս նաեւ այն ազգային հարցերը, որ ծագեցին պատերազմի ընթացքում, պէտք է լուծուն ազատագրուող ազգերի ինքնորոշման իրաւունքով»:

2.

Հ. Ց. Դ. Ռայ. ժողովը Սահմ. ժողովի համար որոշեց՝—

«Ռայ. ժողովը միանգամայն հնարաւոր է համարում Սահմ. ժողովում առաջադրել կուսակցութեան նւազագոյն ծրագիրը Ռուսաստանի եւ Անդրկովկասի վերաբերմամբ իր բովանդակ ծաւալով՝ թէ քաղաքական, թէ հողային եւ թէ բանւորական»:

Իսկ մինչեւ Սահմ. ժողով՝—

«Ռայ. ժողովը հրահանգում է ծրագրային բոլոր հարցերը դարձնել գրաւոր եւ բանաւոր պրօպագանդի առարկայ:

«Իրականացնել այն պահանջները, որ չեն կարող սուր պայքար յարու-

ցանել ազգերի եւ հասարակութեան տարբեր խաւերի մէջ: Այդպիսի պահանջներ Հայ. Ժողովը ճանաչում է.

1. Անդրկովկասի վարչական բաժանումների փոփոխութիւնը, որն իրականացնելու համար Արեւելեան Բիւրոն եւ Կենտր. Կոմիտէները ոչ մի ջանք պիտի չխնայեն:

2. Բանւոր դասակարգի դրութիւնը բարւոքելու համար ուր հնարաւոր է, ստեղծել հաշտարար կոմիտէներ, իսկ ուր հնարաւոր չէ, դիմել մասնակի բանակցութիւնների:

3. Գիւղացիների դրութիւնը բարւոքել նման միջնորդ մարմինների օգնութեամբ՝ իջեցնելով կալւածատիրական հողերի կապալագինը եւ ստեղծելով գիւղացիների համար ուրիշ նպաստաւոր պայմաններ — անտառներից, արօտներից, ջրերից եւայլն օգտւելու համար:

4. Ընդունելով, որ հայկական շրջաններում ամենամեծ կալւածատէրը եղած է պետութիւնը՝ Հայ. Ժող.ը հրահանգում է կուսակցական մարմիններին եւ ընկերներին՝ միջոցներ ձեռք առնել, որ այսուհետեւ պետական հողերը տրւին ոչ մասնաւոր անձանց, այլ միմիայն տեղական գիւղական համայնքներին, որոնք եւ պիտի որոշեն այդ կարգի հողերից օգտւելու եղանակը:

5. Դպրոցները մնալով պետական՝ պիտի ազգայնանան վարչութեան եւ դասաւանդութեան տեսակէտով: Կուսակցական մարմինները եւ մամուլը պէտք է կոչ անեն բոլոր ուսուցիչներին եւ վարժուհիներին, որ հին ոչխմի հետեւանքով ցրւած են Թուրքաստանում, վերադառնալ հայրենիք:

6. Բոլոր վարչական եւ դատական հիմնարկութիւնների մէջ պէտք է գործածական դարձնել տեղական լեզուները: Իրաւաբան ընկերները եւ այս սկզբունքին համակրողները պէտք է աշխատեն հայրենիք կանչել Անդրկովկասից դուրս ցրւած հայ իրաւաբաններին եւ պիտի պատրաստեն ամենակարեւոր օրէնսգրքերի եւ կանոնադրքերի թարգմանութիւնը հայերէն:

3.

ԲԱՆԱԶԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՕՄԵՆՏԻ ՄԱՍԻՆ

ՄՕՄԵՆՏԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Ա. Թուրքաստանում.

Վերլուծելով յեղափոխական վերջին անցուդարձը, Հ. Յ. Դ. Հայ. Ժողովը գալիս է այն եզրակացութեան, որ՝

1. Թուրքստանի մեծ յեղափոխութիւնը հետեւանք է.

ա. Այն խոշոր քաղաքական եւ սոցիալ-տնտեսական պահանջների, որ 1905 թուին դոհացում չստացան.

բ. Այն խելակորոյս քաղաքականութեան, որ հին կառավարութիւնը վարեց յատկապէս վերջին տասնամեակի ընթացքում.

գ· Այն դուռ դիւնաստիական եւ դասաճան քաղաքականութեան, որ նկատուեց այս մեծ պատերազմի ընթացքում·

դ· Իշխանութեան եւ ժողովրդական տնտեսութեան քայքայման:

ե· Այն երկարամեայ յեղափոխական դաստիարակութեան, որ ստացել էր աշխատաւորութիւնը:

2· Յեղափոխութեան մասնակցեցին·

ա· Զինւած դիւղացիութիւնը, որ նոյն է թէ զօրքը, մի զօրք, որ մեծ մոբիլիզացիաների շնորհիւ՝ կորցնելով իր կաստայական բնոյթը դարձեր էր ժողովրդական բանակ եւ ապրում էր նոյն տրամադրութիւնները, ինչ որ ժողովրդի մեծամասնութիւնը:

բ· Բանւորութիւնը, որ 1905 թւի չարժումներից յետոյ աւելի փորձառութիւն էր ձեռք բերել եւ պատերազմի սկզբից մասնակցելով երկրի պաշտպանութեան դործին՝ քաղաքական շատ կարեւոր աղդակ էր դարձել:

գ· Ցառաջդիմական եւ չափաւոր տարրերը, որ հասան այն վերջնական համոզման, թէ հին ռէժիմը լիովին անընդունակ է հասցնելու պատերազմը նպատակաւոր վախճանի:

3· Հակայական թուիչքը ցարիզմից մինչեւ ռամկավար հանրապետութիւն՝ պէտք է բացատրել·

ա· Այն կատարեալ վարկաբեկումով, որին հասան միապետական դաղափարները վերջին շրջանում·

բ· Այն յարաբերական թուլութեամբ, որ ունէին չափաւոր սահմանադրական տարրերը Ռուսաստանում եւ այն զօրութեամբ, որ ունէին սոցիալ-քաղաքական արմատական դաղափարները·

գ· Եւրոպական երկիրների քաղաքական դանդաղ անցեալը եւ փորձը չկրկնելու ցանկութեամբ·

դ· Այն դասակարդային կապով եւ հոդեբանական մերձեցմամբ, որ ստեղծուեց բանւորութեան եւ զօրքի միջեւ:

4· Զգտելով բնորոշել պետութեան քաղաքական կացութիւնը ներկայ մոմենտում, ասաց· ժողովը նկատում էր, որ ուժերի դերակշռութիւնն այսօր անցած է բանւորութեան եւ զօրքի ներկայացուցիչներին, որոնք դտնւում են առաւելապէս սոցիալիստական, քան թէ բուրժուական կուսակցութեան ազդեցութեան տակ: Ցառաջդիմական տարրերը ստիպւած են հետ ի հետէ ւել աշխատաւորութեան վազքին: Չի կարելի ուրանալ այն վճռականութիւնը, որով լիբերալ՝ կադէտ եւ այլ տարրերը, յանուն պատերազմի յաջողութեան, ընդառաջում են դերիշխող աշխատաւորութեան պահանջներին:

Զմոռանալ ամէն տեղ դոյութիւն ունեցող դասակարդային հակոտնեայ չահերը՝ պէտք է ասել, որ հասարակական խաւերի դործակցութիւնը ընդհանրապէս բաւարար է համերաշխութեան տեսակէտից:

Ներքին դժգոհութիւնները ու քննադատութիւնները դրեթէ հակամարտ դործողութիւններ առաջ չեն բերում: Նկատելով բանւորական եւ զինւորական խորհուրդների ազդեցութիւնը պետական կեանքի ընթացքի վրա՝

կարելի է ընդունել, որ կառավարութիւնը ներկայացնում է համարեա բոլոր հոսանքները ու խաւերը եւ չնայած իր այլատարը կազմութեան՝ նա մինչեւ այժմ ընթանում է դեմոկրատիկ ճամբով: Պէտք է նկատել սակայն, որ բանւորական եւ գիւղական խորհուրդներին կից՝ անհրաժեշտ է կազմել գիւղացիական խորհուրդներ, որոնք իրրեւ աշխատաւորական ոչնչ ուժ ի վիճակի են երկրի բախտի տնօրինութեան մէջ իրենց մասն ունենալու, որովհետեւ մեծ է գիւղացիութեան դերը Թուրքաստանի ապագայ սոցիալական յեղաշրջումների ժամանակ:

Գալով ամբողջ Թուրքաստանի կենտրոնական եւ զաւառական կառավարութեան վերակազմութեանը եւ հաշւի առնելով հասարակութեան անփորձութիւնը քաղաքական-վարչական գործերում՝ ուրախութեամբ պէտք է արձանագրել ինքնագործունէութեան այն թափը, որ երեւան բերեց հասարակութիւնը՝ թոյլ չտալով անիշխանութիւն՝ հին կառավարութեան եւ վարչութիւնների կործանման շրջանում: Ազգերն ու դասակարգերը առանց մոռանալու իրենց ուրոյն շահերը՝ ընդհանուր առմամբ ներշնչուած են այն պիտակցութեամբ, թէ ժողովրդի ազատութիւնը կարելի է ապահովել միմիայն միահամուռ գործակցութեամբ: Քաղաքական կուսակցութիւնների փոխադարձ վերաբերումը համեմատած 1905 թւի շրջանի հետ՝ շատ աւելի մխիթարական է, իսկ գործելակերպը՝ շրջահայեաց:

Այս բոլորը նկատի առնելով՝ Հ. Յ. Դ. Հայ. ժողովը գտնում է, որ՝

1. Մինչեւ սահմանադիր ժողովը պէտք է ընթանալ նոյն ճամբով եւ պահպանել նոյն փոխադարձ վերաբերումն ու տրամադրութիւնները:

2. Պէտք է պահպանել այն զօրութիւնը, որ ձեռք են բերել բանւորական եւ զինւորական խորհուրդները, համամասն կշիռ տալով ապագայում կազմելիք գիւղացիական խորհուրդներին եւ չթանալով հակադրութեան մէջ դնել նրանց թէ զէպի կենտրոնական կառավարութիւնը, եւ թէ զէպի երկրի յառաջդիմական տարրերը, որովհետեւ այդ աշխատաւորական կազմակերպութիւնների վերացումով, ինչպէս եւ հակամարտութեամբ կը վտանգւի ազատութիւնը եւ կը առեղծւի երկրում անիշխանութիւն:

3. Պէտք է չարունակել աջակցել ժամանակաւոր կառավարութեանը, քանի նրա գործունէութիւնը համապատասխան կլինի դեմոկրատիայի շահերին:

4. Պէտք է հրապարակ հանել երկրի թաղնուած կենսական ուժերը վարչական նոր կազմակերպութիւնը ապահովելու համար:

Բ. Անդրկովկասում

Քննելով երկրի դրութիւնը Անդրկովկասում՝ Հայ. ժողովը նկատում է, որ այդ այլատարը ու բռնակալ կառավարութեան պրովոկացիոն գործունէութեան ասպարէզ դարձած երկրում եւս ազատութեան օրերին երեւան եկաւ շատ աւելի համերաշխ եւ խելացի գործունէութիւն, քան կարելի էր սպասել:

Մի երկրում, ուր դասակարգային եւ դասային հակամարտութիւննե-

րը բարդանում են ցեղամիջեան յարաբերութիւններով, չգտնուեց որեւէ խոշոր հասարակական տարր, որ թէկուզ ներքուստ՝ ափսոսար հին կարգերի անկումը: Ապատ, իրենց կամքին թողնուած ազգերը չղնացին փոխարքաների պատրաստած ճամբով, այլ կարողացան համախմբուել մի ընդհանուր գործի շուրջ եւ ըմբռնել օրւայ հրամայականները: Ընայած կուլտուրական խոշոր տարբերութիւններին, ընայած դասակարգային եւ ազգային հարցերի խառնակ դրութեան՝ հնարաւոր է եղել առ ժամանակ ստեղծել մի կենսաձեւ — Modus Vivendi — մինչեւ Սահմանադիր ժողովը, որը մեր երկրի համար եւս պիտի լուծի մի շարք սոցիալական եւ ազգային հարցեր:

Մեկնելով այս մխիթարական փաստերից եւ մեր իրականութեան ոչխալ պայմանների ճշգրիտ ըմբռնումից՝ Հ. Յ. Դ. Բիւր. ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին կատարեալ համերաշխութիւն պահպանել կովկասում ցեղամիջեան յարաբերութիւնների ժամանակ եւ միջդասակարգային ու ազգամիջեան խնդիրները լուծելիս միշտ աչքի առաջ ունենալ կուսակցութեան օրւայ լոզունգները:)

*) Այս բանաձեւի հեղինակն էր Ա. Շահխաթունեան, որ գեկուցանողն էր խաղաքական մոմենտի մասին:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Մէկ կողմէն Օսմանեան կայսերական կառավարութիւնը եւ միւս կողմէն Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, որ ինքզինք անկախ հռչակած է, համաձայնած ըլլալով բարի դրացնութեան եւ բարեկամական յարաբերութեանց հաստատման իրենց երկիրներու միջեւ՝ քաղաքական, իրաւական, տնտեսական եւ մշակոյթային հողի վրա, նշանակած են իրենց լիազօրները.

Օսմանեան կայսրութիւն

Ն. Վ. ԽԱԼԻԼ ՊԷՑ, նրնտիրան, արդարութեան նախարար, նախադահ պետական խորհուրդի եւ զինուոր պատուիրակ:

Ն. Վ. տեղակալ զօրավար ՎԵՀԻՊ ՄԷՀՄԷՏ ՓԱՇԱ, կովկասեան ճակատի Օսմանեան բանակներու ընդհանուր հրամանատար, զինուորական պատուիրակ:

Հայաստանի հանրապետութիւն

Պ. Աղեքսանդր Խատիսօֆ, նախադահ պատուիրակութեան.

Պ. Իուրէն Խալազնունի, պատուիրակ.

Պ. Միքայէլ Պապաջանօֆ, պատուիրակ.

որոնց լիազօրագիրները քննուած եւ դտնուած են օրինական: Երկու պատուիրակութիւնները համաձայնած են հետեւեալ տրամադրութեանց շուրջ.

Յօդ. 1.— Օսմանեան կայսերական կառավարութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան միջեւ պիտի դոյանայ տեւական խաղաղութիւն եւ մնայուն բարեկամութիւն:

Յօդ. 2.— Հետեւեալ սահմանագծումը ունեցող սահմանագլուխը կը բաժնէ Օսմանեան կայսրութիւնը Վրաստանի Հանրապետութենէն, Հայաստանի Հանրապետութենէն եւ Ադրբէջանի Հանրապետութենէն:

Սահմանը կը մեկնի այն կէտէն, ուր ՁՈՂԱՓ գետակը Սեւ Ծով կը թափի եւ կը համապատասխանէ Օսմանեան կայսրութեան եւ Ռուսիոյ 1877ի պատերազմէն առաջուայ սահմանագլուխին, մինչեւ ՇԱՎՇԱՓԱՐ լեռը եւ, անցնելով բարձունքներու գծով, կը հասնի ՀԱՂՀԱՄԱ եւ ՄԵՓԻՍՔԱՐՕ լեռներուն (1856ի սահմանին համաձայն). յետոյ կը դառնայ դէպի հարաւ,

կ'անցնի ՓԻՐՍԱԿԱՏ լերան գագաթէն եւ, ԱԲԱՍ ԹՈՒՄԱՆԷՆ երկու քիլօմեթր հարաւ, եւ դառնալով դէպի հիւսիս–արեւելք, կը հասնի ՔՍԲՀՈՒԼ–ՏԱՂԻ գագաթը. այնտեղէն, նախ ուղղուելով հինգ քիլօմեթր դէպի հիւսիս–արեւելք եւ ապա դէպի հարաւ–արեւելք, կը հասնի ԿՈՒՐԴԵԼ աւանը, կ'անցնի ՔՈՒՐԱ գետը ԱՔՍԽՈՒՐԻՆ երկու քիլօմեթր հարաւէն, եւ, ԳԱՑԱՊԱՇԻ, ՕՐԹԱԹԱՎԻ եւ ԳԱՐԱԳԱՑԱ լեռներու գագաթներու գծով անցնելով՝ կը հասնի ԹԱՓԻՍՓՕՐՍՓԱ լիճը, Մոլիթայի վանքէն անմիջապէս հարաւ. այս գիծը կանցնի այնպիսի ձեւով, որ Օսմանեան հողամասին կը ձգուի լիճին ա՛յն մասը որ հարաւը կը մնայ ուղիղ գծի մը որ Մոլիթա վանքին անմիջական հարաւէն կը մեկնի հակադիր եզերքի կէտի մը, ուր կը դանուի մէկ եւ կէս քիլօմեթր հարաւ–արեւելք՝ լճի հիւսիսային ծայրամասէն եւ կը հասնի ԹԱՎՓՕԹԵԼԻ լերան. յետոյ կիջնէ դէպի հարաւ եւ կանցնի ՇԱՎՆԱՊԱՏ, ՔԱՐԱԳՈՒՋՈՒ եւ ՍԱՄՍԱՐ լեռներու գագաթներէն եւ արեւելք դառնալով կանցնի ՏԵՎԵՓԻՐԱՆ լեռնաշղթայի գագաթներէն. յետոյ կուղղուի դէպի հարաւ, անցնելով ԱՂՐԻՓԱՐ, ՊԱՇՓԻՐԱՆ եւ ՆՈՒՐԱՀՄԱՆ լեռներու գագաթներէն: ՆՈՒՐԱՀՄԱՆ լեռնէն յետոյ, կը շարունակէ հարաւի ուղղութեամբ եւ միշտ անցնելով գագաթներու գծով, կը հանդիպի ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ—ԹԻՖԼԻՍ երկաթուղիին, ԱՓՊՈՒԼԱՓ աւանէն հինգ քիլօմեթր դէպի Արեւմուտք: Այնտեղէն, գագաթներու գծով կը հասնի ԽԱՆՎԱԼԻ աւանին, ուրկէ, դրեթէ ուղիղ գծով, կը հասնի ԱԼԱԿԻՕԶԻ ամենէն բարձր գագաթին. եւ, դարձեալ ուղիղ գծով մը չարունակելով կը կտրէ ԷՋՄԻԱՃԻՆ–ՍԱՐԴԱՐԱՊԱՏ խճուղին, ԷՋՄԻԱՃՆԷՆ եօթը քիլօմեթր արեւմուտք գտնուող կէտի մը վրա. յետոյ, այս վերջին քաղաքը եօթը քիլօմեթր հեռաւորութենէն դառնալով, կը հետեւի ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ–ՋՈՒԼՖԱ երկաթուղիին հորիզոնական ուղղութեան մը, մօտաւորապէս վեց քիլօմեթր հետու այդ երկաթուղիէն, ԲԱՇՓԻԱՐԱՆ աւանէն տասնըվեց քիլօմեթր հարաւ–արեւմուտքէն կանցնի այն ճամբայէն որ այս վերջին աւանը կը միացնէ երկաթուղիին. յետոյ կը դառնայ դէպի հարաւ–արեւելք, կանցնի ԱՇԱՂԻ–ԳԱՐԱՊԱՓԼԱՐ գիւղէն մէկ քիլօմեթր արեւմուտքէն եւ ՇԱԿԱՊԼՈՒ, ԳԱՐԱԽԱՉ եւ ԱՇԱՂԻ–ՋԱՆԱՓՃԻ աւաններէն եւ կը հասնի ԷԼՓԻՆՋԱՑ, որուն կը հետեւի մինչեւ ԱՐՓԱ աւանը. այս վերջին աւանէն սկսեալ, կը միանայ ԱՐՓԱՋԱՑԻ ձորուղիին, կը հասնի ՔԱՑԱԼՈՒ աւանը եւ հետեւելով ԳԱՅՏ գետակին կը հասնի ԱՓԹԱՓԱՆ լերան գագաթը. յետոյ կանցնի ՔԱՐԱԹՈՒՐՆԱ, ԱՐԱՃԻՆ եւ ԳԱՐԱՆԼԻՓ լեռներու գագաթներէն, կը հասնի ՔԵԼԻՄԱՆՋԱՑԻ զառիվարը, կը հետեւի անոր ձորուղիին հասնելու համար ԱՋԱՑԻ աւանին հարաւէն ԱԼԻՃԻՆԻ աւանը, որ կը գտնուի ռուս–պարսկական նախկին սահմանին վրա: Սահմանագլուխի վերջնական ճշտումը պիտի կատարուի տեղւոյն վրա, յանձնախումբի մը կողմէ, կազմուած՝ երկու կողմերու անդամներէն:

Յօդ. 3.— Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ազրբէջանի Հանրապետութեան կառավարութեան միջեւ կնքուած համաձայնագիրը՝ իրենց հասարակաց սահմաններու ճշտումին համար, պիտի հաղորդուի Օսմանեան կայսերական կառավարութեան:

Յօդ· 4·— Օսմանեան կայսերական կառավարութիւնը, յանձն կառնէ օգնութիւն ցուցնել, զէնքի ուժով, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան, այն պարագային երբ այս վերջինը պահանջէ, երկրին մէջ կարգն ու անդորրութիւնը ապահովելու համար:

Յօդ· 5·— Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը յանձն կառնէ աղդու կերպով հակառակիլ, որպէսզի իր հողամասի սահմաններուն վրա որեւէ հրոսախումբ չպատրաստուի եւ չդինուի, ինչպէս նաեւ՝ զինաթափել եւ ցրուել բոլոր այն հրոսախումբերը, որոնք պիտի դային ապաստանիլ հոն:

Յօդ· 6·— Հայաստանի Հանրապետութեան իսլամ բնակիչներուն կրօնքն ու սովորութիւնները պիտի յարգուին: Նորին կայսերական վեհափառութեան անունը պիտի յիշուի իսլամներու Հանրային պաշտամունքի ընթացքին: Անոնք պիտի վայելեն, տարբեր դաւանանքի պատկանող քաղաքացիներու իրաւական եւ քաղաքական իրաւունքները: Անոնք պիտի կարողանան իրենց ցեղին եւ կրօնքին յատուկ լեզուով դաստիարակիլ:

Ապահովելու համար պաշտամունքի եւ բարեգործութեան կիրարկումը, պիտի կազմակերպուին բարոյական անձնաւորութեամբ իսլամ համայնքներ, հիմնելու համար մզկիթներ, հիւանդանոցներ եւ դպրոցներ: Կրօնական եւ բարեսիրական հաստատութիւններու մատակարարումին համար պիտի ունենան անշարժ եւ չարժուն հասութաբեր ստացուածքներ, որոնք պիտի յանձանձուին հոգաբարձուներու կողմէ:

Մուֆթի մը կամ պետ մը պիտի հաստատուի Երեւան քաղաքին մէջ, որ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքն է, եւ այլ մուֆթիներ պիտի հաստատուին Հանրապետութեան այլ կենտրոններուն մէջ, հոն՝ ուր անոնց ներկայութիւնը անհրաժեշտ նկատուած է:

Այս մուֆթիներուն յարաբերութիւնները Շէյխ-Իւլ-Իսլամութեան հետ, ինչպէս նաեւ անոնց իրաւունքները եւ առանձնաշնորհումները ճշուած են այս դաշնագրին կցուած Թիւ 3 Համաձայնագրին մէջ:*)

Յօդ· 7·— Նկատի ունենալով, որ Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ որեւէ դաշնագիր, պայմանագրութիւն, համաձայնագիր, պաշտօնագիր, համաձայնութիւն կամ միջազգային այլ վաւերագիր գոյութիւն չունի, բանակցող երկու կողմերը կը համաձայնին կնքելու հիւպատոսային համաձայնութիւն մը, առեւտրական դաշնագիր մը եւ անհրաժեշտ նկատուած այլ վաւերագիրներ, իրենց իրաւական եւ տնտեսական յարաբերութիւնները կարգաւորելու համար: Հիւպատոսային համաձայնութիւնը պիտի կնքուի, ներկայ Դաշնագրի վաւերացման թուականէն երկու տարուայ ընթացքին: Փոխանցման այս շրջանին, իւրաքանչիւր կողմի ընդհանուր հիւպատոսները, հիւպատոսները եւ դեր-հիւպատոսները իրենց առանձնաշնորհումներուն եւ պաշտօններուն մէջ պիտի վայելեն, Միջազգային Ընդհանուր Իրաւանց հիմունքով, նախապատիւ ազգի վերաբերումը,

---

*) Դաշնագրի յաւելուածները չենք հրատարակեր:

փոխադարձութեան պայմանով: Միջազգային Ընդհանուր Իրաւանց հիմունքներով կնքելի առեւտրական դաշնագրի բանակցութիւնները պիտի սկսին անմիջապէս որ կնքւի Ընդհանուր Խաղաղութիւնը մէկ կողմէ՝ Թիւրքիոյ, եւ միւս կողմէ, այս վերջինին հետ պատերազմական վիճակի մէջ եղող ազգերու հետ: Մինչ այդ, եւ մինչեւ 31 դեկտ. 1919 բոլոր պարագաներու տակ, ներկայ Դաշնագրի թիւ 1 Ցուցակաձով հաստատած առժամեայ դրութիւնը պիտի գործադրւի երկուստեք. կարելի է չեղեալ նկատել 30 յունիս 1919էն սկսեալ եւ արդիւնքը վեց ամիս վերջ գործադրելի է:

Երկաթուղիով հաղորդակցութիւնները պիտի սկսին, ներկայ Դաշնագրի վաւերացած օրինակներու փոխանակումէն վերջ:

Յօդ. 8.— Համաձայնող կողմերը յանձն կառնեն իրարու կարելի ամէն դիւրութիւն ընծայել, երկաթուղիով փոխադրութեանց համար, հաստատելով եւ կիրարկելով դեղչեալ սակեր: Մասնաւորաբար, երկաթուղիներու եւ հանրօգուտ այլ չինութեանց յատուկ կառուցման, շահագործման կամ յանձնման նիւթերու փոխադրութեան համար դեղչեալ մասնաւոր սակեր պիտի կիրարկուին: Համաձայնող կողմերու երկաթուղիներուն վրայ վակոններու եւ վայրաշարժներու փոխանակութիւնը պիտի կատարուի այս մասին հաստատած միջազգային սկզբունքներու հիման վրա:

Համաձայնող կողմերը անմիջապէս խօսակցութեանց պիտի սկսին, նախորդ տրամադրութեանց մանրամասնութիւնները ճշտելու համար:

Յօդ. 9.— Մինչեւ Հայաստանի Հանրապետութեան մասնակցութիւնը միջազգային Թղթատարական եւ Հեռագրական Միութեան, Թղթատարական եւ հեռագրական յարաբերութիւնները, Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ պիտի վերահաստատուին, ներկայ Դաշնագրի վաւերացած օրինակներու փոխանակումէն յետոյ, Միջազգային Միութեան Թղթատարական եւ հեռագրական օրէնքներու համաձայնութեանց եւ հասկացողութեանց հիման վրա:

Յօդ. 10.— Համաձայնող կողմերու բնակիչները եւ համայնքները որոնք, սահմանին միւս կողմը գտնուղ կալւածներու վրա սեփականատիրութեան եւ օգտագործումի իրաւունքներ ունին, պիտի կարողանան օգտագործել, շահագործել կամ վարձու տալ, յանձնանձել կամ ծախել, իրենք՝ եւ կամ իրենց փոխանորդները: Բացի այն պարագայէն, երբ խնդրոյ առարկայ է հանրօգուտ ձեռնարկ մը, ոչ ոք պիտի զրկւի իր սեփականատիրութեան իրաւունքէն, վերոյիշեալ կալւածներու վրա. այդ պարագային, պիտի ստանայ համապատասխան հատուցում:

Ոչ մէկ արգելք պիտի դրւի վերոյիշեալ բնակիչներուն եւ համայնքներու ներկայացուցիչներուն, անցնելու սահմանը, երբ ներկայացնեն ազատ անցքի թուղթը, որ իրենց պիտի տրւի, իրենց բնակավայրի իրաւասու իշխանութեանց կողմէ եւ պիտի վաւերացւի՝ միւս կողմի համապատասխան իշխանութեանց կողմէ:

Սահմանէն անցքին եւ սահմանամերձ շրջաններու երթեւեկին համար դիւրութիւններ եւ մասնաւոր առանձնաշնորհումներ պիտի ընծայւին:

Նախորդ տրամադրութեանց մանրամասնութիւնները կը կարգաւորին ներկայ Դաշնագրի թիւ 2 Յաւելուածով:

Յօդ. 11.— Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը յանձն կառնէ, ամէն ճիգ ի գործ դնել, պարպելու համար ԲԱՔՈՒԻ քաղաքը դանուող հայկական ուժերը, ներկայ Դաշնագրի ստորագրութենէն անմիջապէս յետոյ եւ ապահովել՝ որ այս պարպումը որեւէ բախումի տեղի չտայ:

Յօդ. 12.— ԲՐԷՍԹ-ԼԻԹՈՎՍԿԻ մէջ, Օսմանեան կայսրութեան ու իր դաշնակիցներուն եւ Ռուսիոյ միջեւ կնքուած Խաղաղութեան հաւաքական եւ յաւելուածական Դաշնագիրներու տրամադրութիւնները, որոնք չեն հակասեր ներկայ Դաշնագրին, ի զօրու են համաձայնող Կողմերու համար:

Յօդ. 13.— Ներկայ Դաշնագրով ճշտուած սահմաններէն դուրս եղող հողամասերու վրա գտնուղ երկու երկիրներու բանակները պիտի քաշուին, անմիջապէս որ դաշնագիրը ստորագրուի:

Յօդ. 14.— Ներկայ դաշնագիրը պիտի վաւերացուի եւ վաւերացուած օրինակները պիտի փոխանակուին Կոստանդնուպոլսոյ մէջ, մէկ ամսուայ ժամանակամիջոցին եւ կամ, եթէ կարելի է աւելի շուտ. ի զօրու պիտի դառնայ փոխանակութեան օրը:

Վերոգրեալ տրամադրութիւններու հիման վրա, լիազօրները ստորագրեցին Խաղաղութեան եւ Բարեկամութեան ներկայ Դաշնագիրը եւ կնքեցին իրենց կնիքով:

Պատրաստուած՝ երկու օրինակով, Բաթում 4 յունիս 1918:

Ստորագրած՝

ԽԱԼԻԼ ԱԼ. ԽԱՏԻՍՈՖ
ՎԵՀԻՊ ՔԱԶԱԶՆՈՒՆԻ
ՊԱՊԱՋԱՆՈՖ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

կնքուած՝ մէկ կողմէ Ամերիկեան Օգնութեան Վարչութեան եւ միւս կողմէ՝

Ա.— Հայ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին

Բ.— Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահին միջեւ:

Նկատելով որ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը դիմած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիոյ, խնդրելով աննդական արտադրութիւններ՝ խափանելու համար սովը որ աւեր կը գործէ Թրքահայաստանի եւ ռուսական Հայաստանի բնակչութեան մէջ, եւ նաեւ՝ սատարելու հայ կառավարութիւններուն կարգի պահպանման եւ անիշխանութեան տարածումը արգիլելու համար:

Նկատելով որ Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը կը փափաքի աննդական այս արտադրութեանց մէկ մասը հայթայթել եւ հետեւաբար ծը-

բագրուած է նաեւ միջոցով ղրկել հինգ հազար թոն ալիւր, որ ապրիլ ամսուան ընթացքին պիտի յանձնուի, եւ, եթէ կարելի է, չարունակել նման յանձնումներ կատարել մայիս, յունիս եւ յուլիս ամիսներուն ընթացքին, եւ

Նկատելով որ Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը, եթէ անհրաժեշտ է, կրնայ ընդարձակել վարկը նման պէտքերու դնման համար, եւ, նկատելով որ նման վարկեր կը տրուին այնպիսի պայմաններով, որոնք Ամերիկեան Օգնութեան Վարչութեան հաւանութեան արժանանան.

ՀԵՏԵՒԱԲԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԱՑԱՑԱՒ.

1.— Որ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ. Ազգ. Պատուիրակութիւնը իրենք, եւ իրենց յաջորդներուն համար ղորս կրնան ունենալ Հայաստանի Կառավարութեան եւ Հայաստանի որեւէ մէկ մասին համար, պիտի ընդունին ստանձնել նաւահանգիստներու մէջ, Ամերիկեան Օգնութեան Վարչութեան կողմէ ղրկուած այն բոլոր պէտքերը, որոնք պիտի ղրկուին Հայաստան. այս արտադրութեանց համար Նիւ-Եորքի մէջ պիտի վճարուին տոլարով, իսկ եթէ չկարողանան՝ Ամերիկեան Օգնութեան Վարչութեան պիտի տան կառավարական յանձնառութիւններ, որոնք Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը գոհացնող բնոյթ պէտք է ունենան: Այն պարագային երբ Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը կարողանայ օգտագործել տեղական դրամանիշը ծախքերու վճարման համար, կամ այլապէս, կառավարական յանձնառութեամբ կատարելիք որեւէ ձեւի վճարման փոխարէն, Հայաստանի Հանրապետութիւնը կամ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը, պիտի կարգադրեն վերոյիշեալ արտադրութիւններու վճարումը տեղական դրամանիշով:

2.— Ամերիկեան Օգնութեան Վարչութեան գործակալները Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ Ազգ. Պատուիրակութեան հաշուեկշիռներ պիտի ներկայացնեն, որոնք վերջնական եւ եղրափակիչ պիտի նկատուին ինչ որ կը վերաբերի անոնց դումարին, դինին եւ յանձնումին այն բոլոր արտադրութեանց որոնք հայթայթուած են ներկայ պայմանագրութեան հիման վրա: Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը պիտի վճարեն յանձնումի հետ կապուած բոլոր ծախքերը, ներառեալ՝ նաւահանգստի եւ ցամաքահանումի ծախքերը: Հայթայթուած արտադրութիւնները պիտի յանձնուին դինով մը որ կը ներկայացնէ Միացեալ Նահանգներու մէջ գնման դինը, յաւելեալ՝ փոխադրութեան եւ այլ բոլոր ծախքերը, բաւարար յաւելումով մը՝ ապահովելու համար Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը կորուստներու դէմ:

3.— Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը կ'ընդունին որ եթէ կարողանան արտածումի դիւրութիւններ եւ կամ միջազգային փոխանակութեան այլ ձեւ մը գտնել, զանոնք պիտի հայթայթեն Ամերիկեան Օգնութեան Վարչութեան, այս վարկէն զեղչելու պայմանով: Ընդհանրապէս, Ամերիկեան Օգնութեան Վարչութիւնը իրաւունք պիտի ունենայ պահանջելու, վարկերու չուրջ, նոյն այն պայմանները, որոնք կրնան

ուրիշներու տրուիլ, սննդեղէններու ներածման համար, կանխիկ կամ արժեթուղթերու փոխանակութեամբ:

4.— Այս ձեւով հայթայթուած սննդեղէնի արտադրութեանց բաժանումը պէտք է կատարուի արդարութեամբ եւ ենթակայ՝ Ամերիկեան Օժանդակութեան Վարչութեան ընդհանուր հսկողութեան:

8 ապրիլ 1919

Վկաներու առջեւ կողմերը ստորագրեցին ստորեւ.

Ամերիկեան Օգնութեան Վարչութեան կողմէ՝
ՀԵՐՊԸՐԹ ՀՈՒՎԸՐ
Ընդհանուր տնօրէն
Հայ Ազգ. Պատուիրակութեան
Լիազօրուած ներկայացուցիչ՝
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ
Հայաստանի Հանրապետութեան
Լիազօրուած ներկայացուցիչ՝
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Վկայ՝
ՐԱՊԸՐԹ Ա. ԹԱՖԹ

ԶՕՐ. ՀԱՐԲՈՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՑ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ)

Երեւան.— 29 Սեպտ. ժամը 3-ին էջմիածնից օթոմոբիլով Երեւան ժամանեց Գեն. Հարբորդը: Գեներալին ընդունեցին Վարչապետը, նախարարական ամբողջ կազմով, Վրաստանի, Ազրբէջանի դիպլոմատիական, Ամերիկեան, Անգլիական, Ֆրանսիական դիւանագիտական ներկայացուցիչները: Ներկայ էին նոյնպէս քաղաքագլուխը, քաղաքապետը, բարձր դիւանագիտականութիւնը եւ հայ ու թաթար ազգաբնակութեան ներկայացուցիչները: Չհասած Զանգիի կամրջի մօտ չինած կամարին, Գեն. Հարբորդը իջաւ օթոմոբիլից: Նրան դիմաւորելու առաջացաւ Ամերիկեան դիւանագիտական ներկայացուցիչը, որը կարճ ճառով ողջունեց Գեն. Հարբորդին: Ճետոյ նրանք մտան կամար, նրանց դիմաւորեց վարչապետ Ա. Խատիսեանը, որը ողջունեց նրա գալուստը, շնորհակալութիւն յայտնեց Ամերիկային նրա՝ հայ ժողովրդին ցոյց տուած օգնութեան առթիւ եւ յայտնելով կառավարութեան կատարեալ պատրաստակամութիւնը աջակցելու նրա միսիան իրագործելու գործում, արտայայտեց հայ ժողովրդի բաղձանքը տեսնել անկախ եւ միացեալ Հայաստանը Ամերիկեան մանդատի տակ:

Պատասխան ճառով Գեն. Հարբորդը շնորհակալութիւն յայտնեց Հայաստանին, նրա ցոյց տուած ընդունելութեան համար եւ աւելացրեց, որ

«Ամերիկան հետաքրքրւում է Հայաստանով եւ նրա ճակատագրով, ասացոյց՝ իմ Հայաստան գալս: Ես եկել եմ ոչ թէ հաճոյքի այլ իմ վրա դրւած պարտքը կատարելու:

Իմ միսիայի բոլոր անդամները իւրաքանչիւրն առանձին ունի իր պարտականութիւնները եւ պիտի աշխատի այդ շրջանակում: Ես նոյնպէս իմ երկու օրեայ ներկայութեան աշխատանքները պարտաւոր եմ զեկուցել նախարարներին անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար»:

Ճառից յետոյ վարչապետը ներկայացրեց Գեն. Հարբորդին ներկայ եղող անձանց: Յետոյ երկուսով օթոմոբիլ նստելով ուղղւեցին դէպի մայրաքաղաք:

Քաղաքը զարդարւած էր հայկական, ամերիկեան դրօշակներով, գորգերով եւ կանանչներով: Սկսած Զանդիի կամրջից ժողովուրդը խռնւել էր ամբողջ ճանապարհին: Աստաֆեան փողոցում կանգնած էին զօրախմբերն ու որբերը: Առջևից գնում էր քաղաքապետը ազգային տարազով եւ 4 ամերիկեան դրօշակ ունեցող ձիաւորներով: Նրանց յետեւում էին օթոմոբիլով Գեն. Հարբորդն ու վարչապետը, ապա հետեւակ ու հեծնալ զօրքը, նրանցից յետոյ դիմաւորելու եկած բոլոր պաշտօնական ներկայացուցիչները:

Գեն. Հարբորդի օթոմոբիլը երեւալուն պէս, որբերի եւ փողոցի երկու կողմերում հաւաքւած խուռներամ ժողովրդի կողմից պայթեցին «կեցցէ»-ները: Նրա համար պատրաստած բնակարանը հասնելիս, զինւորական երաժշտախումբը նւագեց հայկական հիմնը, որից յետոյ գեներալը ընդունեց՝ զօրանոց, շնորհակալութիւն յայտնեց իր պատւին եղած ընդունելութեան եւ գոհունակութիւնը զօրքերի կարգապահութեան համար եւ մօտեցաւ ու նայեց դիմաւորող որբերին:

Երեւան 29 Սեպտ.— Այսօր առաւօտեան 7 օթոմոբիլներով Սարիղամիշ հասաւ գեներալ Հարբորդը, մի գեներալի, 7 սպաների եւ 100 հոգուց բաղկացած զինւորական պահակախմբի ուղեկցութեամբ:

Գեն. Հարբորդը իջեւանեց սպայական ժողովատեղին, ուր ընդունւեց զինւորական զօրանոց եւ տեղական ազգաբնակութեան ողջոյնները: Ընդունելութիւնից դոհ երկաթուղով մեկնեց Կարս:

Գեն. Հարբորդի դնացքը, առաւօտեան ժամի 8-ին հասաւ Կարսի երկաթուղային կայարանը: Դնացքը դիմաւորւեց, բոլոր ամրոցներից եղած 21 թնդանօթահարւածներով:

Գեներալը ընդունեց ողջոյններ եւ բարեմաղթութիւններ քաղաքապետի կողմից:

Տեղական ազգաբնակութեան եւ վարչութիւնների ներկայացուցիչներին ընդունելուց յետոյ, Գեն. Հարբորդը օթոմոբիլով մեկնեց զօրահրամանատարի մօտ, ուր ճաշի էր հրաւիրւած:

Խուռներամ բազմութեան թափօրը Գեներալին մեծ ովացիաներ էր անում, իսկ զօրքը «Ուրա»-ներով ընդունում:

Գեներալին ուղեկցում էին պետական ներկայացուցիչներ:

Հայ. հեռ. գործ.

Օ Ր Է Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հաստատուած է 1920 թ· Յունիսի 10–ին,
համաձայն Հայաստանի Պարլամէնտի
1920 թ· Յունիսի 5–ի օրէնքի:

1· *Հայաստանի Հանրապետութեան արդիւնաբերական ոյժերը եւ տընտեսութիւնը վերականդնելու եւ Հանրապետութեան թղթադրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն Ամերիկեան դոլլարի անուանական դումարի Պետական փոխառութեան 6 տոկոսով: Փոխառութեան 75 տոկոսը յատկացնել վերոյիշեալ նպատակին· իսկ 25 տոկոսը դործադրել Պետական կարիքներին համար:*

2· *Սոյն փոխառութիւնը մտցնել Հանրապետութեան պարտքերի մատեանը Հայաստանի Անկախութեան փոխառութեան անունով:*

3· *Փոխառութեան պարտաթղթերը (օբլիգացիաները) բաց թողնել 10, 25, 50, 100, 500, 1000 դոլլար արժողութեամբ ներկայացնողին վճարելու պայմանով:*

4· *Պարտաթղթերի տարեկան եկամուտը սահմանել 6 տոկոս, հաշուելով 1920 թ· Յուլիսի 2–ից, իսկ վճարումն սկսել 1921 թ· Յունուար 2–ից եւ վճարել կէս տարին մի անդամ:*

5· *Ամբողջ փոխառութիւնը աստիճանաբար մարել ոչ ուշ քան մինչեւ 1930 թ· Յուլիս 2–ը, սկսելով 1925 թ· Յունուար 2–ից եւ ամէն տարի վիճակ հանելով Յուլիսի 1–ին եւ Յունուարի 2–ին: Վիճակով ելած պարտաթղթերի արժէքը վճարել ելած օրից 6 ամիս յետոյ: Փոխառութիւնը մարելու նպատակով, սկսած 1925 թ· Յունուար 2–ից, յատկացնել փոխառութեան անուանական դումարի 8,3 տոկոսը առաջին 11 կիսամեակներից ամէն մէկի ընթացքում եւ 8,7 տոկոսը 12–րդ կիսամեակում:*

6· *Կտրոնների եւ վիճակով ելած պարտաթղթերի դրամագլխի վճարումը Հայաստանում կատարել Պետական Բանկում եւ նրա բաժանմունքներում դոլլարներով կամ րուբլիներով ըստ օրւայ կուրսի, իսկ Եւրոպական, Ամերիկեան եւ Ասիական պետութեանց մէջ, վճարել ֆինանսների նախարարի մատնանշած հիմնարկութիւններում տեղական վալիւտայով եւ նոյնպէս ըստ օրւայ կուրսի:*

7· *Պարտաթղթերի արժէքը դոլլարներով չի վճարելու դէպքում, տեղական վալիւտայի եւ դոլլարի փոխյարաբերութիւնը որոշւում է օրւայ կուրսով փոխառութեան բաժնեգրութիւնը սկսելու ժամանակ:*

8· *Մինչեւ 1930 թ· Յուլիսի 2–ը կառավարութիւնը սոյն փոխառութեան ամբողջական կամ մասնակի վերադնում չպէտք է կատարէ· ինչպէս նաեւ պէտք չէ որ եւ է փոփոխութեան ենթարկէ նրան:*

9· Սոյն փոխառութեան պարտաթղթերի կտրոնները, ինչպէս նաեւ մարելու ենթակայ պարտաթղթերը իրենց վճարման ոյժը պահում են 10 տարեայ ընթացքում սկսած սոյն օրէնքի նախատեսած հատուցման օրից:

10· Հայաստանի Հանրապետութեան սահմաններում սոյն փոխառութեան կտրոնները ընդ միշտ ազատ են ամէն տեսակի տուրքերից:

11· Ներկայ փոխառութեան պարտաթղթերը տեղաւորել Ֆինանսների նախարարի մատնանշած բանկային տներին, վարկային եւ այլ հիմնարկութիւնների միջոցով Նախարարի մշակած եւ Նախարարների Խորհրդի կողմից հաստատուած պայմաններով:

12· Ֆինանսների Նախարարը փոխառութիւնը բաց թողնելու պէս որոշում է ներկայ փոխառութեան պարտաթղթերի եւ կտրոնների վայելած իրաւունքներն ու առաւելութիւնները զանազան վճարումների (օրինակ մաքսային, պետական եւ այլ տուրքերի) ժամանակ:

13· Ներկայ փոխառութեան պարտաթղթերի տոկոսները, ինչպէս եւ նրա կնքման հետ կապուած սոյն տարեայ ծախսերը հոգալ փոխառութեան դումարից, իսկ յետագայ տարիների ընթացքում սոյն փոխառութեան ամորտիզացիոն մարումը եւ տոկոսների հատուցումը կատարել Պետական ելեւմտացոյցի մասին գոյութիւն ունեցող կանոնների հիման վրա:

14· Ներկայ փոխառութիւնը ապահովել Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյքով:

Նախարարապետ
ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Ֆինանսների Նախարար
Ա· ԳԻԻԼԽԱՆԴԱՆԵԱՆ

Նախարարների Խորհրդի
Կործերի Կառավարիչ

Դիւանի Վարիչ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ՝ ԴԷՊԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՃԷՆ ՀԵՌԱԳՐԻ

Ստացած Պ. Ա. Խատիսեանի անուամբ Բաթումում

Յունիսի 21–ի 1920 թ.ի

Միջկուսակցական Մարմինը հետեւեալ կուսակցութիւնների, Հայ ժողովրդական կուսակցութիւն, Հայաստանի Սոցիալ–Դեմոկրատ Բանուորական կուսակցութիւն, Հայ Ռամկավար կուսակցութիւն եւ Անկուսակցականների Միութիւն, գտնելով որ Հայաստանի անկախութեան փոխառութիւնը, 20 միլիոն ղօլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական եւ տնտեսական դրութեան բարելաւման համար, ամէն կերպ պաշտպանում է կառավարութիւնը այդ փոխառութեան իրականացման գործում, եւ դիմում է բոլոր Հայերին առաջարկելով եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ նրա տարածման մէջ։

Լիազօրներ

Հայ ժողովրդական կուսակցութեան

ՏԷՐ–ԽԱՉԱՏՐԵԱՆ, ՍՏԵՓԱՆԵԱՆ

Հայաստանի Ս. Դեմոկրատ Բանուոր. կուսակցութեան

ԻՇԽԱՆԵԱՆ, ԱՆԱՆՈՒՆ

Հայ Ռամկավար կուսակցութեան

ԴԱՐԲԻՆԵԱՆ, ՇԱՏԻՈՐԵԱՆ

Անկուսակցականների Միութեան

ԱՒԵՇԵԱՆ, ՋԱԼԽՈՒՇԵԱՆ



Անկախութեան փոխառութեան պարտատոմսի օրինակը

Լ. ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՄՈՍԿՒԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Այս հատորի առաջին տպագրութիւնը պատրաստելիս, դրանից առաջ եւ վերջը, բաւիղս խնդրել եմ Լեւոն Շանթին, որ գրի առնէ իր յուշերը Մոսկուայի բանակցութիւնների մասին: Միշտ խոստանում էր, բայց մինչեւ մահն էլ խոստումը չկատարեց: Ինչ որ կարողացայ «պոկել»՝ յետագայ երկու նամակներն են, որոնց մէջ յստակ կերպով արտայայտուած է Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութեան նախագահի վերաբերումը դէպի բոլշեւիզմը եւ դէպի յարաբերութիւնները բոլշեւիկների հետ:

Բուն նիւթի հետ առնչութիւն չունեցող կէտեր կան նամակներում, որոնք հետաքրքրական են Շանթի կենսագրութեան տեսակէտից, ուստի տուինք առանց յապաւումի:

Ա.

Սիմոն Ջան, ահա քանի օր է ուշացուցի նամակիդ պատասխանը յուսալով որ կերպ մը արամադրեմ ինծի եւ դոնէ համառօտ բան մը գրեմ քեզի քու ուզած հարցի մասին. բայց վերջապէս ակա այն տխուր եզրակացութեան, որ անկարող եմ, այս վայրկեանին բոլշեւիկներով ու բոլշեւիկեան տխմարութիւններով զբաղելու բնաւ պէտք չունիմ. հիմա ես իմ գլխիս մէջ ունիմ իմ սեփական բոլշեւիզմը. այնպէս խրւեր եմ պարտքերու, անվտանգութեան, վիճակի անորոշութեան եւ օրւան ապրուստի դժւարութիւններու մէջ, որ չդիտեմ ինչպէս եմ տակէն դուրս գալու. մեր դպրոցի վիճակը խախուտ է, վճարածը չնչին ու անկանոն. իսկ իմ բոլոր ձեռնարկներէս ու ծրագիրներէս ոչինչ դուրս չեկաւ, ուած յայտարարութիւնս իմ անպէտք աշխատանքներուս վրայ նոր անպէտք աշխատանք մը աւելցուց՝ տեղեկատու եւ խորհրդատու Բիւրօ: Երբ օր մը գալու ըլլայ այն երջանիկ ժամանակը, երբ հնար ունենամ քիչիկ մը աղատ գլուխ ունենալու, եւ ուտելու հացէն ու դպրոցի վճարէն դուրս ուրիշ բաներու մասին ալ մտածելու, կը նստիմ ու կը գրեմ մեր դէպի Մոսկւա առաքելութիւնը եւ իմ տպաւորութիւններս, ի հարկէ, ոչ իբրեւ պատասխան ատոնց ու ցած Զիչերիններու ու Զիչերինիկներու, այլ անկախ աշխատանք մը ինքն իրեն համար, իբրեւ յուշեր:

Հիմա քու հարցերուդ պատասխանեմ մէյ-մէկ նախադասութեամբ: 1. Մեր պատւիրակութիւնը ուղարկւեցաւ, որովհետեւ բոլշեւիկները արդէն տէր էին Աղրբէջանին եւ անոնց հետ լեզու մը գտնելը դարձեր էր անհրաժեշտ թէ վրացիներուն համար եւ թէ մեզի. ռուսը նորէն եկեր էր Կովկաս: 2. Մենք Մոսկւա հասանք այն ժամանակւա հաղորդակցութեան միջոցներու հնարաւոր արագութեամբ: 3. Կարախանի հետ համաձայնութեան եկանք բոլոր կէտերու վրա. պաշինքը չստորագրւեցաւ, որովհետեւ Բաքւի հայ, վրացի եւ թաթար կոմունիստները բոլոր միջոցներով սկսան ճնշում բանեցնել Մոսկւայի վրա, պահանջելով որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը թուրքական հողեր են, անվիճելի թուրքական եւ Հայաստանի հետ միացնելու խօսք անգամ լինել չի կրնար: Մոսկւան 1–2 ամիս ժամանակ գործ

դրաւ իր Բագւի ընկերներու հետ համաձայնութեան մը գալու եւ տեսնելով որ անկարելի է, որոշեց բանակցութիւնները տեղափոխել Կովկաս եւ ուղարկեց Լեզրանը Բագու եւ Հոնկէ Երեւան: Մենք ո՛չ թէ ուշացուցած կամ խանդարած ենք, այլ շարունակ դիմած ու պահանջած ենք, որ չտապեն, որ վերջապէս պատասխան մը տան, որ մենք գործ ունինք եւ այդքան երկար Մոսկւա նստիլ չենք կրնար: 3· Այդ է մեր ուշացման պատճառը. մեր ետ գալն ալ կատարւած է այն ժամանակւա հնարաւոր արագութեամբ. կրնայինք Բագուով շատ աւելի արագ տեղ հասնիլ, բայց մենք չուզեցանք: 4· Լեզրանը անձնապէս ոչ մէկ դեր չունի, հոն ներսը իրենց մէջ չդիտեմ, թէեւ ներսն ալ կարծեմ կարեւորութիւն ունեցող դէմք մը չէր. մեզի հանդէպ խողովակ մըն էր, որ կը կատարէր կենտրոնէն եկած հրահանգները. հարցերու ըմբռնման մէջ նոյն դիրքը ունէր, ինչ որ ունէր Մոսկւան մեզի դէմ. համաձայնութեան գալու ջանք մը, Հայաստանէն Թուրքիա անցքը բանալու ջանք մը: 5· Լրգրանի հետ բանակցողը եղեր է մեր պատւիրակութիւնը, որը սակայն միշտ խորհրդակցութիւններ է ունեցեր կառավարութեան հետ, իսկ հիմնական պայմանները ստորագրելէս առաջ կառավարական խորհուրդին ներկա են եղած եւ իրենց հաւանութիւնն են տւած բոլոր կուսակցութիւններու ներկայացուցիչները: Սխա՛լ է թէ համաձայնութեան չեկանք: Լրգրանի հետ լրիւ համաձայնութիւն գոյացած է. եւ երկու կողմէն բոլոր ձեւականութիւններով ստորագրւած է ե՛ւ հիմնական համաձայնագիրը ե՛ւ երկու դաշնի յաւելւածները. դեռ քէֆ ալ ենք կատարեր երկու պատւիրակութիւններս միասին մեր աշխատանքներու յաջող աւարտման առիթով: Լեզրանը առաւ մեր համաձայնագիրը եւ գնաց Բագու «Ամէն ջանք ի գործ դնելու» որ ընդունիլ տայ իրենց Բագւի ընկերներուն մեր փոխադարձաբար ընդունած կէտերը. ուրկէ ետքը մեր դաշնագրութիւնը պէտք է ստանար մեր կառավարութիւններու վաւերացումը եւ պէտք է յայտարարւէր: Եւ այդ բոլորը դարձաւ աւելորդ կարսի անկումով: 6· Ո՞վ է այդ Ա. Կարինեանը. պրսական հետաքրքրութիւններով եւ «Հարուստ» Մոսկւայի մօտերը ապրող երիտասա՞րդ մըն էր. եթէ ան է, բարեկամ էր մեզի, իր կողմէն վատ ոչինչ չեմ նկատած. արդէն վատ ի՞նչ կրնար ընել. խօսք տանի՞լ-բերել. մենք դիտմամբ մեր բոլոր քարտերը բաց էինք պահած. իսկ այն քարտերը որ բանալ չէինք կրնար, չէինք բացած եւ ոչ մէկուն: Այդ անունը կայ յիշողութեանս մէջ, բայց չեմ յիշեր թէ ով է: Եթէ Բագւի խումբին կը պատկանէր՝ կրնայ իրենց ժողովներուն մէջ իր դերը ունեցած ըլլալ: Ահա՛, սիրելի՛ս, քու հարցարանիդ կարճ պատասխանները, չդիտեմ բանի մը պիտի ծառայեն թէ ոչ այդ հում վիճակին մէջ. ապահով եմ սակայն որ մնացածը դուն կ'եփես:

Մէջընդմէջ դրէ՛ ինծի, ի՞նչ աստիճանի լրջութիւն ունի Փարիզի մէջ օրաթերթ մը հրատարակելու Բիւրոյի մտադրութիւնը, քանի մը կողմերէ լսեցի:

Այլ եւ պիտի խնդրէի քեզմէ անգամ մը Յատխանէն տեղեկանայիր ի՞նչ եղաւ Մարկոսեանի կտակի հարցը. արժէ՞ որ դեռ յոյս կապեմ այդ խնդրին, թէ ապարդիւն աշխատանք է. կա՞ն այդ կտակի գործադրութիւնը,

որեւէ մէկը մինչեւ հիմա ուսե՞ր է այդ հաշուով. 1924–25 թուին որեւէ մէկը ընդունե՞ր է, իրրեւ նոր սան. եւ վերջապէս առաջիկայ տարուան համար ընդունելութիւն կա՞. խելքի մօ՞տիկ է, որ իմ տղաս ընդունին ըլլա Սուրէնը, — բժշկութիւն — ըլլա Վիդէնը — էլեքտրական էնժինիօր —: Ասէ՛ անպամ մը Յատիսեանի հետ եւ գրէ՛ ինձի քու մտածումը: Ես արդէն յոյս կարեր էի մեր անցած տարուան ըրած դիմումէն, երբ Յատիսեանը Մարսէյլ եղած միջոցին նորէն յոյս ձգեց մէջս. եւ հիմա չգիտեմ ինչ մտածեմ:

Շատ ու շատ բարեւներ քեզի, տիկնոջդ ու մեր ընկերներուն:

Համբոյրներով՝ ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

1925 Մայիս 20, Մարսէյլ

Ց. Գ. Աչոտը հոսկէ անցնելու ժամանակ ըսեր է, որ դուն մեզի ուղարկելու ես իմ լուսանկարը՝ եթէ ունիս ձեռքդ՝ ղրկէ՛. տղաքս կը խնդրեն:

Բ.

Սիրելի՛ Սիմոն, ամենէն առաջ կէտ–կէտ պատասխանեմ տուած հարցերուդ, թէեւ ատոնցմէ մէկ քանիին կարծեմ անցած նամակիս մէջ պատասխանած էի:

1. Մենք Վլատիկաւկաս հասանք թէ չէ ներկայացանք տեղի բոլշեւիկեան բարձր իշխանութեան, հասկցուցինք մեր ով եւ ինչացու ըլլալը եւ խնդրեցինք որ մեզի վագոն տրամադրուի. որովհետեւ այդ երկանիկ օրերուն բոլշեւըկեան թաւաւորութեան մէջ մեր արդի ըմաստով ո՛չ պասպորտներ կային կանոնաւոր երթեւեկով, ո՛չ ամբորդի իր ազատ կամքի ոչ ալ գնովի տոմսակով, ոչ ալ երթեւեկով գնացքներուն մէջ տեղ ու վագոն. տեղ ունենալու համար կառավարութենէն պէտք էր յատուկ իրաւունք եւ կարգադրութիւն. մինչեւ Մոսկուա հեռագրուեց, մինչեւ պատասխան եկաւ, մինչեւ վագոնի կարգադրութիւն եղաւ անցան քանի մը օրեր. եթէ մենք ալ մեր քէֆի համար կըրակի օր մը աւելի մնացինք կամ պակաս ան ալ արդէն չեմ յիշեր: Նոյն պատմութիւնը նաեւ Լոստով. հոն մէկ–երկու օր գուցէ կարողանայինք աւելի արագ շարժուիլ. Տէրտէրեանի եղբայրը նոր մեռեր էր թիֆլիս եւ ընկերս պէտք է անպամ մը իրենց գիւղը երթար ու գար: Բայց այդպէս օր մը աւելի շուտ կամ օր մը աւելի ուշի հարցը չկար մեր առջեւը դրած. մենք ո՛չ վայրկեան մը աւելի շուտ հասնելու տենդն ենք ունեցեր, ո՛չ ալ աւելորդ ժամանակ ենք վատներ, եւ ընդհանուր առումով մեր դանդաղ կամ արագ շարժիլը մեզմէ կախուած չէ եղեր, այլ բոլշեւիկեան կարգերէն: Պէտք չէ մոռնաս, որ Հիւսիսային Կովկասը այդ օրերուն Մոսկուայի հետ սօլիտ կերպով կապուած երկրամաս մը չէր: Այս բոլորը ես գրեցի քեզի՛ համար. իմ կարծիքով բոլշեւիկեան այդ կարգի «ամբաստանութիւններուն» պատասխանելը զուր ժամավաճառութիւն է: Ի՞նչ կարեւորութիւն ունի, դիցուք չա-

բաթ մը աւելի չուտ հասած ըլլայինք, ի՞նչ էր փոխելու. չէ՞ որ մեր հասնելէն եաքը ամբողջ երկու ամիս պարապ նստեցուցին մեզի այդ մեծապատիւ բոլշեւիկները իրենց աւերակ Մոսկուային մէջ. չարաթ մը աւելի պիտի նստած ըլլայինք ահա՛ բոլոր տարբերութիւնը:

2. Մեր կառավարութիւնը մեզի իբրեւ տիրէքթիւ տւած էր երեք որոշում. ա. ռուսները պէտք է ճանչնան մեր անկախութիւնը եւ գոնէ սկզբունքով հակառակ ոչինչ չունենան Թուրքական մասերու միացմանը մեր հողին. բ. Բացարձակապէս պէտք է յարգեն մեր ազատութիւնը եւ մեր ներքին գործերուն չի պիտի խառնուին, ուրիշ խօսքով կոմունիզմի պահանջ պէտք չէ ըլլա եւ գ. Զանգեզուրն ու Ղարաբաղը պէտք է մտնէ հայկական սահմաններուն մէջ. ծայրագոյն պարագային համաձայնիլ Ղարաբաղի խնդիրը հանրահարցի միջոցով վճռելուն: Այս երեք կէտերն ալ ռուսները անմիջապէս ընդունեցին չատ թեթեւ առարկութիւններով. անոնց համար Թուրքն ու ատորագրութիւնը երբեք կարեւորութիւն չէ ունեցած. նոր էին ատորագրեր վրացիներու հետ դաշինքը եւ մեր խսկ ներկայութեան կը խնդային այդ դաշինքին վրա, «այո՛, ամուսան մը համար» ինչպէս կ'ըսէին կէս կատակ, կէս լուրջ: Եւ մենք արդէն դիտէինք, որ 9–րդ թէ՞ 11–րդ — լաւ չեմ յիշեր — բանակը չարժման մէջ էր դէպի Վրաստան. լեհական պատերազմն էր, որ յետաձգեց Վրաստանի վրա յարձակումը:

3. Ռուսներու կողմէն մեզի առաջարկ չէ եղած Լըզրանի հետ ճամբորդելու մասին: Եթէ ըլլար ալ մենք չէինք ընդուներ. մենք միշտ պահեր ենք մեզի իբրեւ անկախ երկրի մը անկախ դեսպանութիւն եւ ո՛չ մէկ պայմանով Լըզրանի մը թեւարկութեան տակը չէինք մտներ: Իսկ ետ դառնալու որեւէ հապճեպ չունէինք այդ աստիճանի. մենք մեր դերը արդէն աւարտած կը համարէինք, բոլոր էական խնդիրներու չուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարութեան եւ կը կարծէինք որ Լըզրանի հետ մեր կառավարութիւնը ինքը կը խօսի Հայաստանի մէջ՝ մեր արտաքին գործերու նախարարը, կամ անոր փոխանորդը: Ատկէ զատ Նախիջեւանով անցնիլ կը ցանկայինք մեր կառավարութեան համար քանի մը միլիոն բերելու հաշիւներ ունէինք այլ եւ ընկերներ ունէինք սահմանը անցնելու. կային նոյնպէս ուրիշ մանր հարցեր: Նորէն այս բոլորը կը դրեմ միայն քեզի՛ համար. թէ չէ՝ դէպի դուրս տալիք պատասխանս մէկ է. Ռուս կառավարութեան կողմէ մեզի առաջարկ եղած չէ, եւ եթէ այդ առաջարկը եղած ալ ըլլար՝ չէինք ընդունելու, պէտք չունէինք ենթարկելու ինքզինքնիս այդ կարգի տիպլոմատիկ խաղերու: Իրբեւ ի՞նչ պիտի մտնէինք Լըզրանի վագոնները, իբրեւ դաշնակի՞ց — չէինք —, իբրեւ գերի՞, իբրեւ պատա՞նդ: Սիրելիս, այս «նրբութիւնները» ի հարկէ չեն կրնար հասկնալ մեր բոլշեւիկ աղբարները, որոնք անկախութիւնը ո՛չ ճաշակած են եւ ո՛չ ցանկացած. բայց մեր մէջ չատ ուժեղ էր այդ դիտակցութիւնը եւ այդ քաղաքացիական հպարտութիւնն ու քաղաքականութիւնը:

4. Թիֆլիսէն մինչեւ Մոսկուա մեզի հետ էին Երզնկեանն ու Փիրումեանը, մեր «դելեկացիոնը» վագոնին մէջ, ընկերներու նման, քանի մը

դաշնակցական շատ մեղմացուցած քննադատութիւններէ դուրս իբրեւ մեզի դաղափարակից. կուգային յատկապէս Ղարաբաղը Հայաստանին կցելու համար աշխատելու. իբրեւ թէ. պարզ էր, որ կուգային բոլշեւիկներու հետ լեզու դտնելու, այն ժամանակ կը մտածէի իբրենց ղրկող մարմիններու կողմէն. իսկ հիմա կը մտածեմ պարզապէս իբրենց անձնական կարծին: Մոսկւա հասնելնուս պէս իրարմէ զատուեցանք. սկիզբները մէկ-երկու անգամ կուգային մեր դեսպանատունը եւ կը հաղորդէին մեզի «բոլշեւիկեան տրամադրութիւնները», շատ երկրորդական ու անմեղ հաղորդագրութիւններ, քիչ-քիչ ատ ալ կտրեցաւ. եւ անոնք սահեցան վերջնականապէս բոլշեւիկեան ծովին մէջ. ձուկը գտեր էր իր տարրը. եւ մեզի հետ այլեւս ոչ մէկ կապ. վերադարձեր են չգիտեմ երբ եւ ինչպէս:

5. Ես Լըզրանի հետ ո՛չ մէկ կապ չեմ ունեցած Մոսկւայի մէջ, երեսն ալ չեմ տեսած. անգամ մը միայն Տէրտէրեանը գնաց մասնաւոր ատեն մը մէջ մասնաւոր կերպով հանդիպելու, իբրեւ պատահական տեսակցութիւն, դաղափարները չօչափելու համար: Մեզի հետ խօսողը արտաքին գործերու նախարարութիւնն էր, եւ անիկա մեզի Լըզրանի հետ բնաւ յարաբերութեան մէջ չէ դրած պաշտօնապէս. ուրեմն պաշտօնապէս մենք չէինք ճանչնար Լըզրանը. մեր վերջին կամ վերջընթեր տեսակցութիւններու միջոցին էր, որ Կարախանը յայտնեց մեզի պաշտօնապէս, որ իրենք Լըզրանը ուղարկած են Հայաստան հոն չարունակելու մեր «ընդհատած» խորհրդակցութիւնը: Նպատակն էր անգամ մը մուտք ունենալու Հայաստան, հետները «ցրւելու» ապրանք էին տարած ժողովուրդը զրաւելու համար, ինչպէս եւ ատոնցմէ «զրահանութիւն» եւ պերսոնել. այսինքն ներսէն քայքայելու ծրագիրը: Երբ մենք Թիֆլիս հասանք, Լըզրանը անգամ մը Թիֆլիս եկած եւ վերադարձած էր. ես հոն ալ իրեն չեմ հանդիպած. եւ եթէ Թիֆլիս ալ ըլլար՝ ի հարկէ իրեն չէի հանդիպելու, առանց մեր կառավարութեան նոր հրահանգին այլեւս իրաւունք ալ չունէինք: Ես Լըզրանին առաջին անգամ տեսած ու խօսած եմ Երեւանի մէջ արտաքին գործերու նախարարութեան յարկին տակ, երբ մեր կառավարութիւնը որոշեց, որ Մոսկւա եղող կազմը չարունակէ բանակցութիւնը Լըզրանի հետ:

6 եւ 7 հարցերուդ պատասխանելը դժւար է առանց մեր ընդարձակ համաձայնագրերը աչքի տակ ունենալու, մանաւանդ որ ես մեծ վստահութիւն չունիմ իմ յիշողութեանս վրա: Կրնամ պատասխանել միայն խոշոր գիծերով: Լըզրանի պահանջքներն էին. ա. բացարձակ հրաժարիլ Վերսայլէն, Եւրոպայէն. բ. ազատ անցք տալ մեր հողերուն վրայով զօրք ու ռազմամթերք անցնելու Ազրբէջանէն Թուրքիա եւ գ. թէ մէկի, թէ միւսի եւ թէ վրացիներու հետ մեր ունեցած վէճերը հարթել իրաւարարութեամբ ռուսներու արբիտրաժին տակ: Այլ եւ քանի մը մանր պահանջքներ, ինչպէս օրինակ Կարսի մէջ գտնուող նեղ-գիծ երկաթուղային վագոնները յանձնել իրենց, — որպէսզի տան Թուրքերուն, Ազրբէջանի եւ Թուրքիայի մէջ մեր հարաւով երկաթուղային կապ հաստատելու համար:

Մենք ա. կէտը կտրուկ մերժած ենք. անոնք քանի մը անգամ փոխե-

ցին, փոփոխեցին եւ մնաց տակը անորոշ ու վերացական ոչինչ չբսող յայտարարութիւն մը: բ· կէտի դէմ առարկեցինք, որ կը վախնանք ռուսներէն ըստացած զէնքերը մեր դէմ գործածեն Թուրքերը, ինչպէս եւ Թուրք բազմութիւններու մեր հողերուն վրա դանելը: Վերջ ի վերջոյ համաձայնեցանք մեր զինուորական մարմիններու քննութիւնն ու վաւերացումն ստանալէ ետքը, որ 1· զօրք կրնան անցնել երկաթուղիով որոշ ճոկւած պայմաններու տակ, անզէն եւ փոքր–փոքր քանակութեամբ· 2· իսկ զալով զէնքին ռուսները ընդունեցին, որ ինչքան զէնք որ անցնի մեր հողերուն վրայէն, անոր — լաւ չեմ յիշեր — 25 թէ° 30 տոկոսը պէտք է մնա մեզի, իրրեւ ինքնապաշտպանութեան միջոց: Այդ երկու թիւերուն վրա դիտեմ որ սակարկութիւն եղաւ, վերջը որը մնաց չգիտեմ, կարծեմ 30ը: դ· կէտը, այսինքն մեր 3 դրացիներուն հետ վէճերը կարգադրելու համար ռուսներու արբիտրաժը ընդունեցինք:

Փոխարէնը անոնք կ'ընդունէին մեր անկախութիւնը, մեր ներքին գործերուն չխառնուելը, արեւելեան սահմանի մէջ պէտք է մտնէր Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի համար իրաւարարութիւն, ինչպէս եւ Նախիջեւանի համար, իրրեւ բալանս: Իսկոյն պէտք է միջամտէին Թուրքերու հետ մեր պատերազմը կասեցնելու եւ իրրեւ առաջին պահանջ պէտք է ստեղծէին չէզոք գօտի մը մեր ու Թուրքերուն մէջ հին ռուսական սահմանին վրա· եւ այս բոլորը իրրեւ մեր ու Թուրքերու ընդհանուր բարեկամ: Մեզի անմիջապէս պէտք է վճարէին 2 1/2 միլիոն ոսկի, բադուի նաւթային ճամբան պիտի բացէր, պէտք է տային երկրագործական գործիքներ, պէտք է յանձնէին Մոսկւայի մէջ մեր էջմիածնական եւ այլ ինչքերը, դիւրութիւններ պիտի տային ռուսական քանի մը կենտրոններու մէջ հաւաքւած հայ գրենական եւ գեղարւեստական երկերը Հայաստան փոխադրելու: Ահա՛ խոշոր գծերով եւ ինչ որ հիմա կրնամ յիշեր, ինչ որ երկու կողմէն ստորագրած ենք:

8· Լըդրանը սաստիկ կը չտապէր մեր բանակցութիւններու միջոցին, մենք քիչ մը ծանր կը շարժէինք, ականջնիս կարսի կողմը: Ստորագրելուն պէս Լըդրանը դնաց ինքը, մեր կողմէն ոչ մէկ առաջարկ, համոզելու բադուի ընկերները, որ ընդունին մեր եկած համաձայնութիւնը· նոյնը նաեւ պիտի աշխատէր Թուրքերուն հետ: Բայց թէ մեր կառավարութիւնը, թէ մեր զինուորականները, թէ անգլիական ներկայացուցիչը կը զարմանային բոլշեւիկնեբու այդ տեսակ պայմաններ ստորագրած ըլլալուն·կա՛մ Թուրքերը չէին ճանչնար ինչպէս հարկ է, կամ մեզի օրօրել կուզէին, կամ վստահ էին որ անգամ մը Հայաստանի մէջ ոտքերնին դնելէն ետքը, ամէն ինչ կը պայթեցնէին· դուցէ եւ այս երեքը միասին: Եւ վերջապէս եղածը Թուղթի կտոր մըն էր եւ դատարկ ստորագրութիւն մը, ի՞նչ կարեւորութիւն:

9· Լըդրանի դիրքը երկդիմի էր· մեզի, այսինքն մեր կառավարութեան հանդէպ լիազօր բանագնաց մըն էր, մօտաւորապէս ինչպէս մենք էինք Մոսկւա· բայց անտարակոյս է, որ բոլշեւիկեան մարմիններու հանդէպ անիկա ունէր մասնաւոր իրաւունքներ ու հրահանգներ թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Հայաստանէն դուրս Հայաստանի հետ կապւած գործերու վերաբերմամբ,

որ ըսել է դրեթէ ամէն հարցի վերաբերմամբ Կովկասի մէջ։

10· Իր Թուրքերու հետ ունեցած կապի մասին ոչինչ ըսել չեմ կրնար, կը յիշեմ, որ Երեւանի մէջ շատերը — կամ գոնէ քիչերը — կային, որ անոր վրա կը նայէին իբրեւ պատերազմական լրտեսի վրա մեր շարքերու թիկունքին։ Ես բոլշեւիկ մարդոց խօսքին ու կեցուածքին մեծ հաւատք ունեցող մարդ չեմ. եւ վերջապէս քաղաքականութիւնը սուտի ու խաբէութեան հիւսուածք մըն է. չեմ զարմանար, որ Լէդրանը Թուրքերու առաջխաղացումը դիւրացընելու եւ մեզի ճզմել տալու քաղաքականութիւնը վարած ըլլա, կա՛մ իր, կա՛մ Բագուի կա՛մ Մոսկուայի թելադրանքով. բայց անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ, որ ես այդ աչքով չեմ նայած անոր վրա. կարելի է իմ տիպլոմատիկ հոտառութիւնն թոյլ է եղած — մանաւանդ կեղտոտ դործերու մէջ. իմ տպաւորութիւնս այն էր, որ ան կը ջանար իրօք որ հաշտութեան բերէր մեզի ու Բագուն, մեզի ու Թուրքերը։ Ինծի կը թւի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նոյնիսկ ո՛չ բոլշեւիկեան. ինծի կը թւի, որ Կարախանը նմանապէս այդ ուղղութեամբ կաշխատէր. ինծի կը թւի որ ներքին կապ կար Լէդրանի ու Կարախանի մէջ։ Լենին–Կարախան–Լէդրանեան քաղաքականութիւնը պարտեցաւ մեր Կարսի առջեւ ունեցած պարտութեամբ. յաղթանակեց բագուեան քաղաքականութիւնը, «բոլշեւիկ Հայաստան անմիջապէս» զէնքով, և Հայաստանի կառավարութիւնը իրե՛նց ձեռքը հայ բոլշեւիկներու։ Ինծի կը թւի, որ Ա. Յովհաննէսեան ու Սահակ Տէր-Գաբրիէլեանը կարախան–Լէդրանեան խելքի մարդիկներէն էին եւ ճիշտ ատոր համար ալ դրւած էին Լէդրանին հետ։ Վերջը ատոնք բնականաբար բոլորն ալ փոխեցան, երբ Բագուի բոլշեւիզմը տարաւ յաղթանակը։ Ատոնք կամ պէտք է սկսէին ջուրին տակ կամ պէտք է բագուցիներու յանկերգը պոռային։ Մէկ երկուքը, որ աւելի խոր հոդի ունէին, լռեցին ու անցան երկրորդական շարքերը. միւսները նետուեցան առաջ, Ա. Յովհաննէսեանին պէս, խոշոր պատառներ խածնելու համար։ Մեր Կարսի կռիւներուն ժամանակը դիտեմ որ — բոլորովին կողմնակի ու մասնաւոր ճամբով — թէ Ա.ը եւ թէ Սահակը կը ցանկային Կարսի առաջ մեր պինակաան յաջողութեանը. դեռ հայ էին։

Եթէ Կարինեանը Փափազեանի քեռորդին է, իմ անցած օրւան դրածներս անոր չի վերաբերիր։ Ան ուրիշ մարդ է։ Փափազեանի քեռորդին դիտեմ, թէեւ դէմքը չեմ յիշեր. ոչ ալ հոդին կը ճանչնամ։

Սիմոն Ջան, վերջացնելէս առաջ երկու խօսք ալ իմ մասին։ Գիտցած եղի՛ր, որ Մարսիլիա մնալու չեմ։ Ո՛չ մարդ կա հոս մարդավարի, ո՛չ ալ դրամ. եթէ մէկը ըլլար՝ կըլլար եւ միւսը. այնպէս որ ո՛չ իմ ծրագիրներս ո՛չ ալ իմ ապրուստս ուրքի հանել չեմ կրնար հոս։ Վերջին ամիսները շատ դըժուար կը վճարեն եւ շատ ողորմելի մարդիկ են. չգիտեմ ամառւան ամիսներու վճարը ինչ պիտի ընեն. կրնաս երեւակայել դրամական վիճակս։ Մտադիր եմ Եգիպտոս անցնելու, դեռ պաշտօնական հրաւէր չունիմ, բայց մասնաւոր

նամակներու յենած յոյս ունիմ, որ յաջողի: Ընտանիքս պէտք է փոխադրեմ Փարիզ. այդ մասին արդէն դրած եմ Տիգրանին, որ բնակարանի հոգը քաշէ: Եթէ հնար ունենայ եւ եթէ չուտով բնակարան ճարի մէկ–երկու շաբաթ ես ալ կուգամ Փարիզ եգիպտոս մեկնելէս առաջ. եւ այն ժամանակ կը խօսինք մանրամասն, եթէ դալ չկարողանամ, քեզի իրաղեկ կը պահեմ:

Սրտագին բարեւներով ու ջերմ համբոյրներով՝

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

1925 յունիս 18, Մարսէյլ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԶԵԿՈՒՑՈՒՄ-ՆԱՄԱԿԸ՝

Հ. Հ. ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ, ՓԱՐԻԶ (1921, մարտ)

«Անցեալ տարւայ նոյեմբերի վերջերին մեր պատերազմը Թուրքիայի հետ վերջացաւ մեր պարտութիւնով: Կարսը եւ Ալեքսանդրապոլը դրաւել էր արդէն մեր հակառակորդը եւ սպառնում էր Արարատեան դաշտին, այսինքն Հայաստանի դոյութեան: Մեր կառավարութիւնը ուրիշ ելք չունէր. ստիպւած էր հաշտութեան բանակցութիւններ սկսել եւ դաշն կապել, որքան էլ ծանր լինէին յաղթողի թելադրած պայմանները: Բանակցութիւնները տեղի ունեցան Ալեքսանդրապոլում. այնտեղ էլ ստորագրուեց խաղաղութեան դաշնը: Թուրքերի պահանջները շատ ծանր էին, բայց քանի որ մենք յաղթւած էինք եւ պատերազմը շարունակելու ոչ մի հնարաւորութիւն չունէինք, խոնարհւեցանք յաղթողի կամքի առաջ:

«Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որքան էլ ծանր էր մեզ համար, այնուամենայնիւ ապահովում էր Հանրապետութեան դոյութիւնը. ապա հնարաւորութիւն էր տալիս ժողովրդին մի քիչ շունչ քաշել, ուժերը հաւաքել եւ վերաշինել երկիրը — թէեւ շատ նեղ սահմաններում — ու վերականգնել աւերւած տնտեսութիւնը: Կառավարութեան որոշումն էր՝ կատարել ամենայն ճշտութեամբ հաշտութեան դաշնը, առիթ չտալ Թուրքերին նորից յարձակւել մեր վրա, հաստատել Թուրքիայի հետ բարի դրացիական, նոյնիսկ բարեկամական կապեր, վերսկսել առեւտրական յարաբերութիւնները եւ խոյս տալ ամէն տեսակի նոր բարդութիւններից:

«Դժբախտաբար, այս ծրագիրը չիրագործւեց:

«Նոյն ժամին, երբ մեր լիազօր պատւիրակները ստորագրում էին Ալեքսանդրապոլում խաղաղութեան դաշնը, — նոյն ժամին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը Երեւանում՝ պ. Լեգրանը՝ յայտնեց մեր կառավարութեան, որ Ազրբէջանի սահմաններից, Ղազախ եւ Դիլիջանի վրայով, մտել է Հայաստան ռուսական կարմիր բանակը՝ հետը ունենալով Հայաստանի Յեղկոմը — Յեղափոխական կոմիտէն —, կազմւած դրսից եկած հայ բոլշեւիկներից: Պ. Լեգրանը հարցնում էր, թէ ի՞նչ դիրք մտադիր է բռնելու մեր կառավարութիւնը այս փաստի հանդէպ:

«Հայաստանին սպասում էր մի նոր պատերազմ, այս անգամ Սովետական Ռուսաստանի հետ:

«Այդպիսի պատերազմ վարելու կամ, առհասարակ, որևէ ընդդիմութիւն ցոյց տալու ոչ մի հնարաւորութիւն չունէր մեր կառավարութիւնը, ուստի պատասխանեց, որ հաշւի է առնում իր դէմ ելած դերազանցօրէն մեծ ոյժը եւ խուսափելով անիմաստ արիւնհեղութիւններից՝ տալիս է իր տեղը նոր եկուորներին:

«Այսպիսի որոշման չատ նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ պ. Լեդրանը, Ռուսաստանի անունից, պրաւոր կերպով տւեց մի շարք կարեւոր խոստումներ: Դրանցից գլխաւորներն էին. Ա. Հայաստանի Հանրապետութեան լիակատար անկախութիւնը կը յարգւի եւ կը պաշտպանւի ամէն կերպ. Բ. Ռուսաստանը տնտեսական խոշոր օգնութիւններ կանի Հայաստանին, այն է. կը վերահաստատէ երկաթուղային հաղորդակցութիւնը Հայաստանի եւ հարեւան Վրաստանի, Ազրբէջանի ու Պարսկաստանի միջեւ. ալառելիք ու կերոսին — քարիւղ լուսաւորութեան համար — կը բերի Բաղուից, Ռուսաստանից կը բերի հաց, մանուֆակտուրա եւ այլ ապրանքներ եւայլն. Գ. Զի ենթարկի որեւէ հալածանքի ոչ-կոմունիստական քաղաքական կուսակցութիւններին պատկանող անդամներին իրանց անցեալ գործունէութեան համար:

«Այսպիսով, հաստատւեց Հայաստանում, խաղաղ ճանապարհով, առանց դիմադրութեան, բոլշեւիկեան սովետական իշխանութիւնը:

«Երկու ու կէս ամսւայ կեանք ունեցաւ այդ իշխանութիւնը մեզանում — դեկտեմբեր 2-ից մինչեւ փետրւար 18:

«Այդ կարճ ժամանակամիջոցում պարզւեց լիովին բոլշեւիկեան ռէժիմի իսկական բնոյթն ու էութիւնը:

«Վերեւ յիշած խոստումներից ոչ մէկը չկատարւեց: Հայաստանի անկախութիւնը մնաց մեռած տառ: Մեր երկիրը դարձաւ պարզապէս Մեծ Ռուսաստանի նահանգներից մէկը: Հայաստանի կառավարութիւնը ստանում էր հրամաններ կամ Բաղուից — ուր նստած էր կոմունիստական կուսակցութեան բիւրօն — կամ Մոսկւայից: Հայաստանի զօրքը ենթարկւած էր ռուս հրամանատարութեան եւ կազմում էր ռուսական բանակի մի մասը: Գերագոյն Դատական Մարմինը, այսպէս անւանւած Արտակարգ Յանձնախումբը — Չէկա —, որը մահւան դատավճիռներ էր հանում եւ կատարում, ենթարկւում էր ոչ Հայաստանի կառավարութեան, այլ Ռուսաստանի կենտրոնական Չէ-կային: Ոչ մի տնտեսական օգնութիւն Ռուսաստանից չստացւեց. ոչ մի ֆունտ ապրանք Հայաստան չներմուծւեց: Ընդհակառակը, սովից մեռնող Հայաստանից դուրս տարւեց Ազրբէջան այն ամէնը, ինչ որ յաջողւեց խլել ժողովրդի ձեռքից — նոյն իսկ որբանոցներում մնացած խտացրած կաթի վերջին մնացորդները եւ հիւանդանոցներից՝ վերջին դեղերը: Բռնագրաւումները դարձան պետական տնտեսութեան միակ ձեւն ու միջոցը: Զանազան անուն կրող զինւած խմբակներ օր ու գիշեր վխտում էին քաղաքներում եւ գիւղերում, խուզարկում էին տներն ու մառանները, դոմերն ու բակերը եւ

բռնագրաւում ամէն մի արժէքաւոր բան: Մի չտեսնւած թալան էր, որ կատարւում էր ամենուրեք: Եւ որովհետեւ քաղաքացիները այսօր համարեա ոչինչ չունէին, թալանի դէմ ուժգին ծանրութիւնը ընկնում էր գիւղացու վրա: Գիւղացուց խլում էին անխնայօրէն եւ օրւայ պաշար հացը, եւ սերմացուն, եւ լծկանը: Երկիրը աւերւում էր վերջնականապէս ու զրկւում էր վերաշինման վերջին միջոցներից: Երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեց վերջնականապէս: Ոչ վառելիք — նաւթ —, ոչ կերոսին, ոչ հաց, ոչ մանուֆակտուրա Հայաստան չբերւեց: Աղքատութիւնը, մերկութիւնը, անօթութիւնը աճում էին օր օրի վրա: Սրա հետ զուգընթացաբար, աճում էին նաեւ ամէն տեսակի բռնութիւններ: Բոլշեւիկեան իշխանութիւնը ասպարէզ հանեց բռնակալութեան այնպիսի ձեւեր ու չափեր, որոնց նմանը հազիւ թէ տեսած լինի պատմութիւնը: Ժողովուրդը բաժանւած էր երկու անհաւասար մասի. մի կողմից իրանք բոլշեւիկները եւ իրանց արբանեակները — մի քանի հազար մարդ — կարմիր բանակի հետ միասին, միւս կողմից՝ բոլոր մնացածները: Առաջիններին պատկանում էր բոլոր իշխանութիւնը, բոլոր իրաւունքները, վայելելու եղած բոլոր հնարաւորութիւնները: Վերջիններին՝ բոլոր պարտականութիւնները, թալանւելու բոլոր ծանրութիւնը եւ հլու, անխօս հպատակւելու դառն արժանութիւնը: Քաղաքացիական բոլոր ազատութիւնները արմատախիլ էին արւած լիովին: Գրել, դատել, խօսել, հաւաքւել, կազմակերպւել կարող էին միայն բոլշեւիկները: Միւսները ծպտուն հանելու, կեանքի նշոյլ ցոյց տալու իրաւունք չունէին: Լրտեսութիւնը դարձել էր վարչական սիստեմի հիմքը: Բանտերը թէ Երեւանում, թէ գաւառներում լեփ լեցուն էին հազարաւոր մարդկանցով: Ոչ ոք չէր զգում իրան ապահով լրտեսի մատնութիւնից: Հալածանքները եւ ձերբակալութիւնները կրում էին թէ անհատական եւ թէ խմբային բնոյթ: Բոլշեւիկները նպատակ էին դրել մաքրել երկիրը բոլոր անհաճոյ տարրերից — առաջին հերթին քաղաքական կուսակցութիւններից, ապա մտաւորականներից եւ, առհասարակ, բոլոր ղեկավար, ազդեցիկ, մտածող ու գործող տարրերից: Ջօրքի կողմից ապահով լինելու համար հաւաքեցին խարէութեամբ բոլոր հայ սպաներին — մօտ հազար երկու հարիւր մարդ — դինաթափ արին ու խումբ-խումբ աքսորեցին Բագու — մասամբ էլ Թուրքստանի խորքերը: Նրանց տեղ դրին ռուս սպաներ եւ բոլշեւիկ կոմիսարներ ու այսպիսով դէմ առին հայ բանակը: Ինչ վերաբերւում է ոչ-զինւորական մտաւորականութեան, սկզբից բաւականացան բանտարկութիւնով, բայց վերջը սկսեցին զնդակահարել եւ կացիններով կոտորել բանտերում, առանց դատի ու դատավճռի, նոյնիսկ առանց քննութեան:

«Կացութիւնը դարձաւ միանգամայն անհանդուրժելի, ապստամբութիւնը բռնկւեց: Ապստամբողը գիւղացիութիւնն էր, միաժամանակ զանազան վայրերում, բայց առանց կանխամտածւած ծրագրի, առանց համաձայնեցրած գործողութիւնների: Շարժումը ունէր գերազանցօրէն ժողովրդական բնոյթ, մասսային ու տարրերային — եւ այնքան ուժգին էր, որ 3–4 օրւայ ընթացքում ապստամբ գիւղացիների զինւած խմբերը խորտակելով

ճամբին տեղական սովետական իշխանութիւնները՝ փետրուարի 18-ին առաւօտ վաղ հասան Երեւան ու դուրս վռնտեցին այնտեղից կենտրոնական կառավարութիւնը կարմիր զօրքերի հետ միասին:

«Այդ օրից հաստատուեց Երեւանում, փոխարէն տապալուած Սովետական կառավարութեան, մի առանձին մարմին՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անուան տակ, որի նպատակն է ազատել վերջնականապէս Հայաստանը բոլշեւիկներից ու ապա իր տեղը տալ համաժողովրդական կառավարութեան:

«Կռիւները դեռ չեն վերջացած: Երեւանից փախած բոլշեւիկեան կառավարութիւնը՝ իր հետը ունենալով այստեղի կարմիր բանակային ուժերը, ամբողջ հրամանատարութիւնը, երկու զրահակիր երկաթուղային գնացքները, երկաթուղային բոլոր շոգեմեքենաները ու վագոնները, մեր թնդանօթները, առատ կենսապաշար, զէնք ու զինամթերք — ապաստանել է Շարուրի մէջ եւ կռւում է յամառօրէն: Բոլշեւիկների մի ուրիշ մասը, թիկունքում ունենալով Սովետական Ադրբէջանը՝ ամրացել է եւ կռւում է Սեւանայ լճի հարաւ-արեւմտեան ափերում: Երրորդ մասը՝ թիկունքում ունենալով Սովետական Վրաստանը՝ կռւում է Փամբակի-Կարաքիլիսէի շրջանում: Կենտրոնական Հայաստանը ամբողջովին մեզ հետ է: Մեզ հետ է նաեւ մեզանից արեւելք գտնուող ամբողջ Լեռնային Հայաստանը — Դարալագեազ, Զանգեզուր, Հայկական Ղարաբաղ—, բայց հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով, ունի իր տեղական ինքնավար կառավարութիւնը, որ նստում է Գորիս քաղաքում:

«Այս կռւում մենք չունինք ոչ կանոնաւոր զօրք, ոչ հրամանատարական կապ եւ ոչ ռազմական տեխնիկական միջոցներ: Կռւողը ինքը զինած ժողովուրդն է, գիւղացիներ ու քաղաքացիներ, ծերեր ու երիտասարդները, որոնք յօժարակամ, առանց որեւէ ստիպողական միջոցների, յաճախ իրանց սեփական զէնքերով ու պաշարով, կազմում են խմբեր ու վազում կռւի դաշտ: Հրամանատարութեան բացակայութիւնը եւ կանոնաւոր կազմակերպութեան խոչոր պակասը մեզանում լրացւում է մեծ ու ընդհանուր ոգեւորութիւնով, յաղթելու կամքով եւ անվերջ ատելութիւնով դէպի բոլշեւիկների բռնակալութիւնը:

«Այս է մեր այսօրւայ դրութիւնը:

«Ինչ է սպասում մեզ ապագայում — նոյնիսկ մօտիկ ապագայում — դժւարանում ենք դուշակել: Մի բան գիտենք հաստատապէս. կամովին այլեւս չենք ենթարկւի բոլշեւիկեան լուծին: ՄԻԱՑՆ ՄԵՐ ԴԻՄԱԿՆԵՐԻ ՎՐԱՑՈՎ ԲՈԼՇԵՒԻԶՄԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՈՏՔ ԿՈԽԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ: Գիտենք եւ մի ուրիշ բան. եթէ բոլշեւիկները չստանան դրսից նոր օգնութիւն, եղածներից մենք կը մաքրենք մեր երկիրը մեր սեփական ուժերով: Բայց որովհետեւ բոլշեւիկների դրսից — Վրաստանից, Ադրբէջանից, Թուրքիայից — օգնութիւն ստանալը աւելի քան հաւանական է, ահա այստեղ է մեր դրութեան ամբողջ տրագիզմը: Այս օրհասական կռւի մէջ մենք լարել ենք մեր վերջին ուժերը: Երկար ժամանակ չենք կարող մնալ այսպիսի լարւած դրութեան մէջ: Ժողովուրդը ուժասպառ է, արնաքամ: Եթէ բոլշեւիկ-

ները ուժեղանան արտաքին օժանդակութիւնով, իսկ մենք մնանք մենակ, պարտութիւնը անկասկած է եւ անխուսափելի: Իսկ մեր այս օրւայ պարտութիւնը կը լինէր ամենամեծը այն բոլոր պղտձներից, որ տեսել է հայութիւնը 15 թւականից դէսը, որովհետեւ այսօր ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉՈՒՆԻՆ ԱՒԵԼԻ ՄԵԾ ԹՇՆԱՄԻ ՔԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈԼՇԵՒԻԶՄԸ:

«Այսքան երկար դրեցի այն նպատակով, որ դուք իրազեկ լինէք մեր իրականութեան: Մեր արտաքին գործոնները յաճախ խոշոր սխալներ են անում՝ անտեղեակ լինելով կամ հաշւի չառնելով մեր իրական դրութիւնը:

«Բոլշեւիզմի դէմ կռւելու եւ — ընդհանրապէս — մեր երկրում խաղաղ կեանք վերսկսելու համար մենք մեծապէս պէտք ունինք հարեւան Թուրքիայի բարեկամութեանը, նոյնիսկ աջակցութեանը: Ամէն մի քայլ — թէ այստեղ, թէ արտաքին գործերում —, որ հակառակ է մեր եւ Թուրքերի մէջ բարեացակամ կապեր հաստատելուն, կարող է ճակատագրական լինել մեզ համար: Այսօր մենք երկու իրական ուժ ունինք մեր կողքին. մէկը Սովետական Ռուսաստանն է, միւսը՝ Թուրքիան: Միւս ուժերը մեզանից շատ հեռու են: ԱՌԱՋԻՆԻ ՀԵՏ, ԻՆՉՊԷՍ ՑՈՑՑ ՏԻԵՑ ԴԱՒՌ ՓՈՐՁԸ ՀԱՇՏԻԵԼ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ. ՄՆՈՒՄ Է, ՈՐ ՀԱՇՏԻԵՆՔ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԱՆԱՆՔ ՄԻՒՍԻ ՀԵՏ: Այդ անհնարին չէ, որովհետեւ մենք եւ Թուրքերը ունինք ընդհանուր շահեր, որ ամենայն համերաշխութեամբ կարող ենք պաշտպանել ընդհանուր ուժերով: Բոլշեւիկների վերաղարձը նոյնքան անցանկալի է Թուրքերի համար, որքան եւ մեզ համար: Բոլշեւիկների վերադարձը կը նշանակէ ոչ այլ ինչ, քան Հայաստանի կցումը Ռուսաստանին: Այդ դէպքում Թուրքիան իրան սահմանակից կունենայ դարձեալ իր դարեւոր թշնամին, մեծ եւ ազդեցիկ Ռուսաստանը — ասում եմ ազդեցիկ, որովհետեւ ամէնքի համար պարզ է որ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՆՈՑՆՔԱՆ ԻՄՊԷՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ Է, ՈՐՔԱՆ ԵՂԵԼ Է ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՐԱԿԱՆԸ: Պահած ունենալով իր ձեռին Ազրբէջանը, ամրանալով Վրաստանում եւ նւաճելով Հայաստանը՝ Սովետական Ռուսաստանը հետեւեալ հերթին պիտի յարձակւի Թուրքիայի վրա: Հասկանալի է, թէ Թուրքիայի համար, որքան ձեռնտու է ունենալ իր եւ Ռուսաստանի միջեւ այնպիսի անկախ պետութիւններ, ինչպիսի են Ազրբէջանը, Վրաստանը եւ Հայաստանը: Այս նորակազմ, փոքր ու անզօր պետութիւնները ոչ մի սպառնալիք չեն կարող ներկայացնել իրան՝ Թուրքիային, բայց միեւնոյն ժամանակը բաւականին ապահովութիւն են Ռուսաստանի ոտնձգութիւնների դէմ: ԵԹԷ Թուրքիայի եւ Ռուսիայի միջեւ ծագին անհամաձայնութիւններ,— որ անխուսափելի են, — ՀԱԿԱԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՀԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԹՈՒՐՔԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻՑ ՄԷԿԸ: ԱՑՍ ՀՈՂԻ ՎՐԱ ՄԵՆՔ ՀԵՇՏՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՈՂ ԷԻՆՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԳԱԼ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ՝ նրա եւ մեր օգտի համար:

«Բայց սրա համար անհրաժեշտ է, որ արտաքին գործօնները անհնարին չդարձնեն հայ–թիւրքական մերձեցումը: Ամենամեծ քաղաքական գործօնը այսօր Լոնդոնի կոնֆերանսն է եւ նրա որոշումները Մերձաւոր Արե-

ւելքի վերաբերմամբ: Ստացել ենք Ամ.— հեռագիրը Պոլսից, բայց եւ այնպէս չգիտենք հաստատ, թէ արդեօք ձեւակերպւե՞լ է վերջնականապէս մեր եւ Թուրքերի մէջ եղած դատի որոշումը, եւ եթէ ձեւակերպւել է, ի՞նչ է այդ ձեւակերպումը: Բայց մենք գիտենք մի ուրիշ բան եւ շատ ենք ցանկանում — պահանջում ենք ամենակտրուկ կերպով — որ դուք եւս գիտենաք այդ ուրիշ բանը, այն է, որ այդ որոշումները փոխանակ մեր յօնքը չինելու աչքը չփճացնեն: Մեր իրական դրութիւնը պահանջում է հաչտ եւ բարեկամական կենակցութիւն մեր հարեւան Թուրքիայի հետ: Ուրեմն, մեր արտաքսմանի բարեկամները — եթէ նրանք, իրօք, բարեկամ են մեզ — չպիտի դնեն Թուրքիան այնպիսի դրութեան մէջ, որ նա նկատի մեզ իբրեւ իրա դժբախտութեան պատճառը ու լցւի ատելութեան եւ վրիժառութեան զգացմունքներով հանդէպ մեզ: Կոնֆերանսի որոշումները մեր վերաբերմամբ ընդունելի պիտի լինին Թուրքիայի համար — ահա մեր պահանջը»:

ՀԱԳՐ. ՓՐԿ. ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՄԱԶԱՆԳԵԶՈՒՐԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1920 Թ. դեկտեմբերի 25–ին Զանգեզուրի հայ ժողովրդի ցանկութեամբ Տաթեւի պատմական վանքում կայացաւ համազանգեզուրեան համագումարը, ուր ներկայ էին Զանգեզուրի բոլոր չրջանների 69 գիւղօրայքից ընտրւած եւ ուղարկած 100 պատգամաւորները, Զանգեզուր–Գողթանի Սպարապետ Նժդէհը, Զանգեզուրի բոլոր չրջանային խորհրդների 15 ներկայացուցիչները, ընդամենը 118 հոգի: Կէսօրւայ ժամը 2–ին ժողովը բացում է Բուն Զանգեզուրի Գիւղական ժամանակաւոր Խորհրդի նախագահ Տ. Մելիք Ծուսէյինեանը եւ առաջարկում է ընտրել համագումարի դիւանը: Ձայների մեծամասնութեամբ ընտրւում են — Նախագահ՝ Գեղէոն Տէր–Մինասեան, փոխ–նախագահներ՝ Եղոր Յարութիւնեան եւ Տիգրան Մելիք–Ծուսէյինեան, Քարտուղարներ՝ Սամուէլ Մաշուրեան եւ Նիկալայ Դօրոնց: Նախագահը նիստը բաց յայտարարելուց յետոյ, համառօտ կերպով բացատրում է համագումարի պատմական նշանակութեան եւ նրա անելիքի մասին եւ առաջարկում է անցնել օրակարգի հետեւեալ հարցերի քննութեանը:

ՕՐԱԿԱՐԳ

1) Զեկուցում Հայաստանի քաղաքական անց ու դարձերի մասին եւ համագումարի բռնելիք դիրքը:

2) Զեկուցումներ բոլոր չրջանային խորհուրդների, իրենց գործունէութեան մասին:

3) Ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւը կոնստիտուցիա (սահմանադրութիւն)

4) Իշխանութեան կազմակերպումն:

ա) Սպարապետի հրաւիրումն:
բ) Ինճնավար Սիւնիքի պարլամենտի դիւանի ընտրութիւնը:
գ) Ինճնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի ընտրութիւնը:
5) *Իշխանութեան կենտրոնատեղի որոշումը:*
6) *Արտաքին քաղաքականութիւն:*

Փոխ յարաբերութիւն:

ա) Հայաստանի հանրապետութեան հետ:
բ) Ադրբէջանի հանրապետութեան հետ:
գ) Պարսկաստանի կառավարութեան հետ:
դ) Հարեւան թուրքերի հետ:
7) *Ինքնապաշտպանութեան հարց:*
8) *Պարենաւորման հարց:*
9) *Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշման հարց:*
10) *Մասնաւոր խոշոր սեպհականութիւնների պետականացումը:*
ա) Վանքապատկան եւ եկեղեցական:
բ) Խաների, Բէկերի եւ մելիքների:
գ) Արդիւնաբերութեան:
11) *Ընթացիկ հարցեր:*
ա) Որբանոցի հարց:
բ) Զուլհականոցի հարց:
գ) Նախկին կառավարութիւններից զանազան անձնաւորութիւնների մօտ մնացած գումարների պահանջման հարց:
դ) Դրամների գործադրութիւնը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1) *Մի չարք ներկայացուցիչների երկար ու բազմակողմանի արտայայտութիւններից յետոյ համազումարը երկար ծափահարութիւններով եւ ուռաներով ընդունում է միաձայն հետեւեալ բանաձեւը:*

«Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը, չնորհիւ իր մի չարք տականքների ու ազգուրացների, որոնց հրաւիրանօք առանց ազգաբնակութեան կամքը եւ ցանկութիւնը հարցնելու Զանգեզուր մտան սովետական զօրամասերը, մօտ 5 ամսւայ ընթացքում դատարկեց դառնութեան բաժակը մինչեւ նրա վերջին կաթիլը: Սովետական հրամանատարութիւնը հէնց առաջին քայլից գաւառիս գիւղացիութեան նկատմամբ սկսեց իր աւերիչ, քայքայիչ քաղաքականութիւնը, որի առաջ նեմմանում են պատմական Լենկթեմուրեան եւ արեւելքի բարբարոսների արշաւանքներն ու գործելակերպը: Հայ աղքատ գիւղացիութեան տնտեսապէս քայքայուած շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր եւ կապիտալիստների դէմ մղելիք քաղաքականութիւնը գործադրում աղքատ, անօգնական գիւղացիների ու պ այրի կանանց դէմ: Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարաւ մեր աղքատ գիւղացու միակ եզը, կովը, ձին ու աւանակը, գրաւեց մեր անասունների կէսը եւ թողեց մեզ մերկ եւ զուրկ ամեն ինչից: Սովետական հրամանատարութիւնը

մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները աւերեց, հողին հաւասարեցրեց մեր գիւղերը եւ իր դրաւածների հանդէպ մեզ չուաւ մի թել անգամ: Նա անկարող եղաւ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրանքայ նաւթ անգամ չնայելով, մեզ նաւթ, մանուֆակտուրա եւ այլ մթերքներ տալու խոստումներին: Այս բոլորից յետոյ մենք համոզուեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն յափշտակելու մեր կայք ու ղոյքը, թալանելու մեզ եւ խոպան ոչնչացնելու: Սովետական կառավարութիւնը իրեն յատուկ արեան բաղանիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ եւ տասնեակներով կոտորեց նրանց չխնայելով մեր գրական վաստակաւոր գործիչներ Մորէնուն, Շիրինեանին եւ տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին յօշոտելուց: Առանց քննութեան եւ որոշ մեղադրանքների մեր ռաչպար գիւղական երիտասարդներից տասնեակները գլխատուեցան ու փոսերը թափուեցան եւ վերջերում իր հայակործան յաղթանակը կամենալով առաջ տանել, մեր գաւառը մոցրեց 1000ով տաճկական ասկեարներ, որոնք իրենց հայու Աստուած էին անւանում: Սովետական կառավարութիւնը մոռանալով տաճկական դարաւոր հայասիրական քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ դէպի հայ գիւղերը ուղղեց տաճկական ասկեարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիճոր, Եայջի, Զէյվայ եւ ուրիշ գիւղերում իրենց բարբարոս եւ գազանային ինստինքտները գործադրեցին հայ կնոջ եւ կոյս աղջիկների վրա, նրանց պատիւը ոտի տակ տալով: Կոխոտեցին, ցեխի հաւասարեցրին մեր պապենական ամէն տեսակի սրբութիւն, եկեղեցի, ընտանեկան պատկառանք եւ պատիւ: Սովետական կառավարութիւնը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնութիւնները եւ տարածած սիֆիլիսը կատարեալ կերպով առաջ տանելու համար եւ վախենալով ժողովրդական բունկումներից, նա հարիւրաւոր անմեղ մարդիկներ բանտ ձգեց ու խեղդեց, սպառնալով ազգաբնակութեան իր տերրորներով որեւէ ցոյցի եւ ապստամբութեան դէպքում կոտորելու նրանց: Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը չկարողանալով տանել նման բարբարոսութիւնները, որոշեց դուրս վռնդել Սովետական Ռուսաստանի զօրքերին եւ նրա դիմակի տակ թաղնուած Ազրբէջանեան վարձկաններին, որոնք աւերեցին իր երկիրը եւ ազատեց իր օջախն ու պատիւը. տարւոյս հոկտեմբերի 10-ից սկսած ապստամբական դրօշ պարզելով իր սիստեմատիկ բունկումներով մինչեւ տարւոյս նոյեմբերի լոյս 21-ի գիշերը դուրս քշեց իր սահմաններից անկոչ այն զօրամասերը, որոնք իրանց հինգ ամսւայ ներկայութեամբ նրան կոտորեան դուրը հասցրին. Սովետական Ռուսաստանն ու Ազրբէջանը չբաւականանալով այս ամէնից, ցանկացան գլխատել ու խոպան ոչնչացնել հայ ժողովուրդը եւ ներս հրաւիրեցին տաճկական հորդաներին ֆեմալի գլխաւորութեամբ Հայաստան եւ Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպէս կոչուած «խորհրդային» իրաւակարգը մի ռեժիմ եւ ծրագիր, որոնց չէ կարող այլեւս հանդուրժել թէ մեր երկրի եւ թէ բովանդակ հայ ժողովուրդը: Ի նկատի առնելով վերոյիշեալները եւ այն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրոյն կեանքով եւ չարունակելու

մնալ նոյնը, Համազանգեզուրեան Համագումարը իր սոյն օրւայ նիստում որոշեց·

1· Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար, մըտցընելով հանրապետական իրաւակարգ, լինելով անկախ մինչեւ քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

2· Համագումարը լսում է շրջանային խորհրդների համառօտ զեկուցումները եւ դիտողութիւնները իրենց գործունէութեան մասին եւ առնում է ի գիտութիւն:

3· Մտքերի փոխանակութիւնից յետոյ Համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւի հետեւեալ գլխաւոր գծերը:

Սոյն Համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին–պարլամենտ, որին վերապահել Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը:

ա) Պարլամենտը հրաւիրւում է տարեկան առնւազն երկու անգամ, իրա դիւանի պրեզիդիումի կողմից, իսկ բացառիկ պայմաններում իրա անդամների կէսի կամ պրեզիդիումի պահանջմամբ:

բ) Պարլամենտի–խորհրդարանի անդամները ընտրւում են երկրի ազգաբնակութեան կողմից հետեւեալ ձեւով: Մինչեւ 100 ծուխ ունեցող գիւղական համայնքը տալիս է մէկ, 100–ից մինչեւ 200 ծուխ ունեցողները երկու, եւ 200–ից աւելի ծուխ ունեցողները երեք ներկայացուցիչներ: Ընտրութիւնները կատարւում են ընդհանուր սկզբունքներով եւ ընտրողական քառանդամ սիստեմով:

գ) Խորհրդարանը իր միջից եւ դրսից ընտրում է 6 ամսւայ ժամանակով իրա պրեզիդիումը–դիւանը բաղկացած 9 հոգուց, որին է անցնում այդ երկրի զինւորական եւ քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարութիւնը, որը եւ կիրառում է կեանքի մէջ խորհրդարանից–պարլամենտից բղխած բոլոր որոշումներն ու օրէնքները:

դ) Խորհրդարանին է վերապահւում զինւորական ընդհանուր հրամանատարի սպարապետի հրաւիրումը ու նրա արձակումը:

ե) Խորհրդարանին է վերապահւում պատերազմ յայտարարելու եւ հաշտութեան բանակցութիւններ վարելու իրաւունքը իսկ արտակարգ դէպքում այդ վերապահւում է նաեւ Սպարապետին:

զ) Երկրի թէ քաղաքացիական եւ թէ զինւորական կառավարչական ձեւերի հաստատումը եւ օրէնսդրութիւնը:

է) Խորհրդարանի–պարլամենտի պրեզիդիումը ունենում է հետեւեալ վարչութիւնները: 1) Ներքին–գործերի, 2) Արտաքին–գործերի, 3) Պարենաւորման, 4) Արդարադատութեան, 5) Ֆինանսական, 6) Լուսաւորութեան, 7) Առեւտրա–Արդիւնաբերութեան, 8) Հողային, 9) Ճանապարհների հաղորդակցութեան (պոստ, հեռագիր, հեռախօս եւ խճուղի) եւ 10) Խնամատարութեան:

ը) Բոլոր խոշոր կարեւոր խնդիրները՝ մասնաւորապէս ներքին ու արտաքին քաղաքականութեանը վերաբերող, իրենց լուծումն ստանում են ոչ թէ այս կամ այն վարիչի այլ պրեզիդիումի կոլլեկտիւի կողմից:

թ) Բոլոր պատասխանատու պաշտօնեաները հաստատւում են պրեզիդիումի կողմից վարիչների առաջարկութեամբ:

ժ) Զինւորական բոլոր տեսակի գործերը տարւում են սպարապետի ղեկավարութեամբ որը այդ մասին իրազեկ է դարձնում պրեզիդիումին:

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹԻՆԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

ա) Սիւնիքը բաժանւում է 6 շրջանների այն է: Բուն–Զանգեզուր, Տաթեւի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան եւ Գենուազ: Իւրաքանչիւր շրջաններում կազմւում է շրջանային գործադիր մարմին՝ բաղկացած մեծ շրջաններում հինգ, իսկ փոքր շրջաններում 3 հոգուց, որի անդամները ընտրւում են պարլամենտի նոյն շրջանից ուղարկւած անդամների կողմից: Շրջանային գործադիր մարմնի կազմը ընտրւում է 6 ամսով:

բ) Շրջանային գործադիր մարմինները իրենց գործունէութեան մասին միշտ զեկուցում են պարլամենտի–խորհրդարանի դիւանին եւ ներկայացնում նրանց իրենց հաշւետւութիւնը ի հաւանութիւն եւ ի հաստատութիւն:

գ) Շրջանային գործադիր մարմիններին է վերապահւում իրենց շրջանի ներքին այս կամ այն հարցի լուծումն, որոնք համապետական բնոյթ չեն կրում:

դ) Շրջանային գործադիր մարմինները ունենում են իրենց հետեւեալ մասնաճիւղերը: 1· Ներքին–գործերի, 2· Պաբենաւորման եւ 3· Զինւորական: Շրջանային մարմիններին կից բացւում է նաեւ ագիտացիոն բիւրօ:

Ծանօթութիւն: Շրջանային գործադիր մարմինները իրենց շրջանի գիւղերում կազմակերպում են գիւղական զինւորական վաշտեր եւ գիւղացիական ինքնապաշտպանութեան կոմիտէներ:

ե) Շրջաններին վերաբերող բոլոր խոշոր ու կարեւոր հարցերը վճռւում են խորհրդարանի դիւանի կողմից:

ԳԱՒԱՌԱԿԱՊԵՏՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՑԻՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Իւրաքանչիւր շրջան կամ գաւառակ ունենում է իր գաւառակապետը եւ շրջանային կոմիսարները, որոնց ընտրում է շրջանային գործադիր մարմինը իր միջից եւ նրա առաջարկութեամբ հաստատւում խորհրդարանի դիւանի կողմից:

ա) Ղափանի շրջանն ունենում է	1	գաւառակապետ եւ	3 շրջ· կոմիսարներ
բ) Սիսեանի	1		1
գ) Բուն–Զանգեզուրի	1		1
դ) Տաթեւի ձորի	1		
ե) Դարաբասի ձորի	1		
զ) Գենուազի	1		









Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԿ. ՍԷՅՄԻ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐԸ

ԳԻՂԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Իւրաքանչիւր գիւղ կամ համայնք ունենում է իր գիւղական կոմիսարը: 100-ից բարձր ծուխ ունեցող գիւղերը ունենում են նաեւ կոմիսարի օգնական, թէ առաջինը եւ թէ վերջինը ընտրւում են գիւղական հասարակութեան եւ համայնքի կողմից ընդհանուր սկզբունքներով եւ հաստատւում են տեղւոյ գիւղի չրջանային գործադիր մարմնի կողմից:

ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՒՆԻՔԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Սիւնեաց ինքնավարութեան վերահսկիչ մարմինը լիազօր է կոնտրոլի ենթարկել պետական բոլոր հիմնարկութիւնների, որոնց թւում նաեւ բոլոր վարիչների հաշիւտուութիւնները ու գործողութիւնները:

4. ա. Համագումարը միաձայն որոշում է՝ հրաւիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպէս Սիւնեաց Սպարապետ եւ բուռն ծափահարութիւններով իր կատարեալ վստահութեան քւէն տալով նրան իր բաղդն է յանձնում նրան:

բ. Ինքնավար Սիւնիքի պարլամենտի դիւանի համար առաջարկւած 15 թեկնածուներից ձայների մեծամասնութեամբ գաղտնի քւէարկութեամբ ընտրւում են հետեւեալ 8 անձնաւորութիւնները, Գեղէոն Տէր-Մինասեան, Նիկողայոս Դօրոնց, Իսրայէլ Մելիք-Փարսադանեան, Գէորգ Գրիգորեան, Եղոր Յարութիւնեան, Մկրտիչ Տէր-Մկրտիչեան, Տիգրան Մելիք-Հիւսէյնեան եւ Սամուէլ Մաշուրեան եւ դրանց անձնափոխանորդ Մինաս Մինասեան: Գենւազի չրջանին իրաւունք է տրւում ընտրել մի ներկայացուցիչ եւ ուղարկել դիւանի կազմը լրացնելու համար:

գ. Ինքնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի անդամներ ընտրւում են հետեւեալ 3 անձնաւորութիւնները՝ Գասպար Յակոբեան, Մուշեղ Ոսկանեան եւ Գէորգ Գէորգեան. իսկ դրանց անձնափոխանորդները՝ Տիգրան Սաղանդարեան եւ Շերին Շերինեան:

5. Մոքերի երկար փոխանակութիւններից յետոյ որոշւում է՝ էչխանութեան կենտրոնատեղին ընտրել Գորիսը:

6. Համագումարը մոքերի երկար փոխանակութիւնից յետոյ միաձայն ընդունում է հետեւեալ բանաձեւերը մեր վերաբերմունքի մասին դէպի հարեւան պետութիւնները:

ա) Զանգեզուրը միշտ ձգտել է եւ ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի հանրապետութեան անբաժան մասը, բայց ի նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխութիւնները, որ նա ստիպւած մի շարք քաղաքական անբարեյաջող հանգամանքներից յայտարարել է իրեն խորհրդային, մի իրաւակարգ որի հետ երբեք չէ կարող հաշտուել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց մինչեւ նրա այդ իրաւակարգից բաժանւելը գործել սեպարատ եւ ապրել ուրոյն կեանքով:

բ) Զանգեզուրի վերաբերմունքը դէպի Ադրբէջանի կառավարութիւնը լինելու է բարեկամական, բայց նա առ այժմ չէ կարող սերտ յարաբերութիւնների եւ երթեւեկութեան մէջ մտնել Ադրբէջանի հետ, մինչեւ երկու հարե-

ան ժողովրդների փոխադարձ վստահութիւնը կատարեալ չլինի:

գ) Զանգեզուրի փոխ–յարաբերութիւնը Պարսկաստանի հետ եղել է միանգամայն սերտ եւ բարեկամական եւ կը մնայ: Նա Պարսկաստանում ունենալու է իր ներկայացուցիչը, որը աւելի քան սերտ յարաբերութիւնների մէջ պէտք է մտնի այդ կառավարութեան հետ առեւտրական եւ հաղորդակցութեան տեսակէտներից:

դ) Զանգեզուրի փոխ–յարաբերութիւնները իր հարեւան թուրքերի հետ 3 տարուց իվեր, չնորհիւ արտաքին պրովոկացիաների եւ քաղաքական միջամտութիւններու եղել է թշնամական, այսօրւանից համաձայնութիւնը լիայոյս է, որ այդ անտեղի թշնամանքը կը դադարի երկու դարեւոր հարեւանների միջեւ տեղի տալով սերտ բարեկամութեան:

7. Համաձայնութիւնը միաձայն որոշում է՝ ինքնապաշտպանութեան հարցի վերաբերմամբ բոլոր միջոցների ձեռնարկումը եւ գործողութիւնը թողնել սպարապետի կարգադրութեանը:

8. Մի շարք թեր ու դէմ կարծիքներից յետոյ համաձայնութիւնը ձայների մեծամասնութեամբ ընդունում է Գ. Գրիգորեանի հետեւեալ բանաձեւը. որովհետեւ մեր երկրում դրսի ուժ չկայ եւ տեղական ուժերը մնալու են տեղերում (շրջաններում) ուստի տեղերի զօրքը դիրքապահութեան եւ այլ նպատակների պահելու համար շրջաններում կամաւոր հանգանակութիւն կատարել եւ կենսաոնացնել խորհրդի չտեմպարաններում: Իսկ կռիւների ընթացքում շրջանները կը մատակարարեն իրենց ուժերի պարենը: Պետական հիմնարկութիւնների համար շրջանների պահեստներից բաժին հանել համապատասխան քանակութեամբ բասկլադկայի ձեւով եւ մեծամասնականներից մնացած իրերը եւ պետական գոյքերը փոխանակելով հացահատիկների հետ:

9. Համաձայնութիւնը ռոճիկների նորմաների որոշման հարցը թողնում է սպարապետին:

10. Համաձայնութիւնը ընդունում է մասնաւոր խոշոր սեփականութիւնների պետականացումը ինչպէս վանքապատկան, եկեղեցական եւ բէգական նոյնպէս եւ ուրիշ խոշոր կալւածատէրերի:

11. Համաձայնութիւնը օրակարգի ընթացիկ հարցերում դեռեղւած 4 հարցերի որոշումները թողնում է պարլամենտի ընտրւած պրեզեդիումին:

Օրակարգի հարցերը վերջացնելուց յետոյ կարդացւում է Աբեւիքի շրջանից ստացւած հետեւեալ հեռախօսագիրը:

Տաթեւ, Զանգեզուրի սպարապետ պ. Նժդեհին:

«Ձեր կարգադրութիւնը՝ ուղարկել ներկայացուցիչներ Տաթեւի համաձայնութեան–Աբեւիքի Փրկութեան Կոմիտէն ստացաւ 20–ին երեկոյեան: Զգալով որ կուշանանք, հրաւիրեցինք ամսոյս 22–ին շրջանային համաժողով, որտեղ ներկայ էին Աբեւիքի 12 գիւղերի ներկայացուցիչները թիւով 68 հոգի, բացակայում էին Կարճեւանի եւ Ապկէզի ներկայացուցիչները: Աբեւիքի գիւղացիական պատգամաւորների ժողովի օրակարգի հարցերն էին՝

ա) Հայաստանում տեղի ունեցած յեղաշրջումը եւ Արեւիքի ժողովրդի բռնելիք դիրքը:

բ) Համաղանգեղուրեան համագումարը ներկայացուցիչներ ուղարկելու հարցը:

Կարգադրւած էր բոլոր գիւղերում հասարակական ժողով գումարել, քննել այդ հարցերը եւ ուղարկել ներկայացուցիչներին մանդատով:

Համագումարը որոշեց Տաթեւի համագումարի շրջանի կողմից ներկայացուցիչներ ուղարկել Դաւիթ Դաւթեանին եւ Մաչատուր Դանիէլեանին: Պատգամաւորները դուրս եկան Մեղրիից ամսոյս 23–ին Լիճք–Տաչտոնի սարը կապ լինելու պատճառով յետ դառան անցան հանքերը կալերով: Առաջին հարցին ժողովը պատասխանեց հետեւեալ բանաձեւով՝ որը ամբողջովին հետախօսագրում ենք Զեզ: «Արեւիքի տասն եւ երկու գիւղերի ներկայացուցիչներս թւով վաթսունութ հոգի դեկտեմբերի 22–ին համագումարում քննութեան առնելով ներկայ քաղաքական դրութիւնը ստեղծւած Հայաստանում՝ հետեւեալ որոշումը արձակեց: Բոլշեւիկական իշխանութիւնը բռնի կերպով է վաթսաթւած հայ ժողովրդի վզին, Հայաստանը Սովետական է յայտարարւած տաճկական եւ ռուսական զօրքերի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայմաններում երբեք նման քաղաքական յեղաշրջում չէր կարող կատարւել Հայաստանում, ընդհակառակը բաղմից անգամ հայ ժողովուրդը ցայտուն կերպով արտայայտւել է, որ ինքը ազատ եւ անկախ հայրենիք է ցանկանում, եւ որովհետեւ բռնակալական ստոր միջոցներով մի ժողովրդի վզից փաթաթւած իշխանութիւնը տեւական լինել չէ կարող, ինչպէս նաեւ այդ իշխանութիւնը վայելել չի կարող ժողովրդի մեծամասնութեան հաւատը ու վստահութիւնը, Արեւիքի ժողովրդի ներկայացուցիչներս այն ամուր համոզման մէջ ենք, որ չուտով Հայաստանի հայութիւնը ոտքի կը կանգնի եւ զըզւանքով դէն կը շպրտի այն լուծը, որը այսօր ակամայից ընդունել է իր վրա: Ոտքի կը կանգնի նոր ցասումով, ջարդ ու փշուր կանի այն երկաթէ կապանքները, որոնցով Սովետական իշխանութիւնը կապկպել է իրեն եւ նորից Արարատեան սրբազան դաշտերում կը ծածանեցնի ազատ եւ անկախ կեանքի կարմիր դրօշակը: Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս այն համոզման ենք, որ այս ապստամբութիւնը աւելի արագ կը կատարւի, եթէ Զանգեզուրը կանգուն մնայ իր սահմաններում. իսկ ժողովրդի հոգին եւ կամքը անընկճելի իր հերոսական որոշման մէջ, այն է՝ ապրել ազատ եւ այդ իսկ նկատումներով Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 22–ի համագումարում դատանք, որ մեր հորիզոնների վրա դեռ փրկութեան ճառագայթները ընդմիշտ չեն մարել, որ կայ փրկութեան ճանապարհներ, ուստի որոշեցինք պաշտպանւել մինչեւ վերջին հնարաւորութիւնը:

Թոյլ չտալով ոչ մի օտար զօրքի եւ օտար մարդկանց ներս խուժելու մեր երկրի սահմանները եւ խառնւել մեր ներքին գործերի մէջ»:

Ներկայացուցիչներ՝ 1, Դաւիթ Դաւթեան եւ 2, Մաչատուր Դանիէլեան 26 12 1920 թւի երեկ. ժամը 8–ին, հանքերից:

Համագումարը բուռն ծափահարութիւններով լսում է Արեւիքի ներ-

կայացուցիչների հեռախօսագիրը եւ առնում է ի գիտութիւն: Համագումարի նիստերը երեք օր տեւելուց յետոյ փակւում է դեկտեմբերի 27–ին, երեկոյեան ժամը 3–ին:

Համագումարի նախագահ
ԳԵՂԱՄ ՏԷՐ–ՄԻՆԱՍԵԱՆ

Փոխ–նախագահներ
ԵԳ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԼԻՔ–ՅԻՍՓԻՆԵԱՆ

Քարտուղարներ
ՍԱՄՈՒԷԼ ՄԱՇՈՒՐԵԱՆ
ՆԻԿ. ԴՕՐՈՆՑ

Ստորագրած են արձանագրութեանը մէջ հարիւր վեց (106) ներկայացուցիչներ:

Սոյն պատճէնը իսկականի հետ համեմատ է:

Ինքնավար Սիւնիքի Մօրհրդարանի Դիւանն:

3ին յունուարի 1921 թ.

ՀԱՇԻԵՏՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄՆԵՐԻ ԵՒ ՎԱԼԻՒՏԱՑԻ

(28 յուլիս 1921 թ.)

Փետր. 16–17–ին, ցերեկ ու գիշեր, Ցեղկոմը մի կողմից դաժան միջոցներով աշխատում էր գաւառներում ծագած ապստամբութիւնը ճնշել, միւս կողմից արագ պատրաստւում էր փախուստի: Ի միջի այլոց անդուկներում լեցրել էր տալ պետական դանձը, բայց փետր. 18–ին խուճապահար փախուստի միջոցին անտուկների մէկ մասը միայն տարել էր հետը: Մնացեալ մասը ընկաւ Հայր. Փրկութեան Կոմիտէի ձեռքը:

Բոլշեւիկների իւրացրած դանձի մասին երբեք եւ ոչ մի տեղ չխօսւեց. այնքա՞ն բնական էր բոլորի համար, որ բոլշեւիկը պիտի իւրացնէր: Հայր. Փրկութեան Կոմիտէի ձեռքը ընկած անտուկները մնացին չբացւած, պետական դանձարանում: Եւ դէպի Զանգեզուր նահանջելիս, Հայաստանի Փրկութեան Կոմիտէն տարաւ իր հետ, յատուկ յանձնախումբի միջոցով, դինւորական ջոկատի հսկողութեան ներքեւ:

Որեւէ հաշւետւոյց չկայ, թէ Հայաստանի պետական դանձի ո՞ր մասն Ցեղկոմն է տարել եւ ո՞ր մասն Հայր. Փրկութեան Կոմիտէն: Ցամենայն դէպս մեծ մասը բաժին ընկաւ Ցեղկոմին, որը, սակայն, որեւէ հաշիւ չներկայացրեց հասարակութեան: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի տարած դումարները ծախսւեցան կառավարական ընթացիկ պէտքերու եւ բազմահազար

տարադիրների պարենաւորման համար եւ այդ մասին, 1921 թ. վերջերը, Հայ. կառավարութիւնը հաշիւ ներկայացրեց Հանրութեան: Այստեղ առաջ ենք բերում այդ հաշւետուութիւնը.

«Հայաստանի կառավարութիւնը միայն այժմ է հնարաւորութիւն ստանում ի մի ամփոփելու իր տրամադրութեան տակ գտնւած դրամական եւ վալիւտային արժէքների մուտքն ու ելքը եւ հանդէս գալու հասարակութեան առաջ մի համառօտ հաշւետուութեամբ՝ թողնելով ուրիշ անգամւայ տալու սպառող հաշիւ դրամական բովանդակ շրջանառութեան մասին:

Նահանջից առաջ, Հայբենիքի Փրկութեան Կոմիտէի որոշումով, Երեւանից դուրս հանւած եւ յետագայում կառավարութեան տրամադրութեան տակ են ընկած երեք տեսակի դրամներ. ա) հայկական դրամանիշներ ու չէկեր, բ) սովետական դրամներ եւ գ) վալիւտային արժէքներ: Այսպիսի կարգով էլ կտանք մուտքի եւ ելքի հաշիւները:

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐ

1921 թ. Մարտի 25-ին Երեւանից Բաշ-Գեաուռնի են տարւել տասն եւ հինգ արկղներ հայկական դրամներով, հետեւեալ համարներով՝ 18, 19, 20, 28, 30, 31, 32, 34, 36, 38, 40, 44, 46, 48 եւ 50: Այդ արկղների ընդհանուր պարունակութիւնն է կազմում իննը միլիարդ չորս հարիւր միլիոն (9,400,000,000) բուբլի, չէկերի հաշւով:

Բաշ-Գեաուռնիում պետական ծախքերի համար բացւել են N° 19, 32 եւ 34 արկղները, որի համար կազմւել են համապատասխան ակտեր. (տե՛ս Ֆին. նախ. գործ N° 1): Այդ երեք արկղի մէջ եղել է մէկ միլիարդ իննը հարիւր միլիոն (1,900,000,000) բուբլի: Բացի այդ, երկու ուրիշ արկղներ (N° 18 եւ 31), մէկ միլիարդ եօթ հարիւր յիսուն միլիոն (1,750,000,000) բ. գումարով յանձնւել է Բաշ-Գաուռնիի ճակատի հրամանատարին (տե՛ս Ֆին. նախ. գործ N° 1 փաստաթղթեր N° 9, 24 եւ 25) ճակատի կարիքների համար:

Բաշ-Գեաուռնիում բացւած դրամները ծախսւել են եւ տրւել են ւաւանների հետեւեալ փաստաթղթերով, որ կան Ֆին. նախարարի N° 1 գործում՝ N° 1-23: Ծախսերի եւ տրւած ւաւանների ընդհանուր գումարն է երկու միլիարդ վեց հարիւր յիսուն միլիոն (2,650,000,000) բուբլի, որոնց մէջ մըտնում է եւ ճակատի հրամանատարին տրւած մէկ միլիարդ եօթ հարիւր յիսուն միլիոն (1,750,000,000) բուբլին:

Մնացած տասն արկղները՝ հինգ միլիարդ եօթ հարիւր յիսուն միլիոն (5,750,000,000) բուբլու պարունակութեամբ եւ վերոյիշեալ երեք բացւած արկղներից չծախսւած մէկ միլիարդ (1,000,000,000) բուբլին տեղափոխւել են Զանգեզուր:

Դէպի Զանգեզուր տարւած վեց միլիարդ եօթ հարիւր յիսուն միլիոն (6,750,000,000) բուբլուց Ղաթարի հանքեր են հասել եւ պետական կենտրոնական դարձարկղ մտել հինգ միլիարդ ուէթ հարիւր ուէթսուն երկու միլիոն ուէթ հարիւր երեսուն ուէը հազար (5,882,838,000) բուբլի հայկական դրամանիշներով: Պակաս ուէթ հարիւր վաթսուն եօթ միլիոն հարիւր վաթսուն

երկու հազար (867,162,000) րուբլին ծախսուել է ճանապարհին եւ կամ իբրեւ առհաշիւ գումարներ մնացել զանազան անձանց վրա:

Ղաթարի հանքեր հասած հինգ միլիարդ ութ հարիւր ութսուն երկու միլիոն ութ հարիւր երեսուն ութ հազար (5,882,838,000) րուբլուց Ֆինանս. նախ. N° 2 եւ 3 գործերի մէջ ամփոփուած փաստաթղթերով ծախսուել եւ ստանողներ են տրուել եօթ հարիւր քսան ինն միլիոն երեսուն մէկ հազար (729,031,000) րուբլի:

Ղաթարի հանքերը թողնելիս, մնացած հինգ միլիարդ հարիւր յիսուն երեք միլիոն ութ հարիւր եօթ հազար (5,153,807,000) րուբլուց, վեց միլիոն ութ հարիւր եօթ հազար (6,807,000) րուբլին բերուել է կառավարութեան հետ, իսկ հինգ միլիարդ հարիւր քառասուն եօթ միլիոն (5,147,000,000) րուբլին մնացել է Ղաթարի հանքերում:

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Պետական բանկից երեք նուագում, այն է 1921 Թ. Մարտի 25-ին, 27-ին եւ 30-ին հանուել է վեց հարիւր յիսուն միլիոն (650,000,000) րուբլի սովետական դրամ: Այդ դրամից Բաշ-Գեառնի է տարուել հինգ հարիւր ութսուն եօթ միլիոն (587,000,000) րուբլի:

Բաշ Գեառնի բերուած հինգ հարիւր ութսուն եօթ միլիոն (587,000,000) րուբլուց իննսուն հինգ միլիոն հինգ հարիւր հազար (95,500,000) րուբլին յանձնուել է ճակատի հրամանատարին ճակատի կարիքների համար. (տե՛ս ֆին. նախ. գործ. N° 1 փաստաթուղթ N° 9): Մնացած չորս հարիւր իննսուն մէկ միլիոն հինգ հարիւր հազար (491,500,000) րուբլին փոխադրուել է Զանգեզուր: Ցիշեալ գումարից Ղաթարի հանքեր է հասել չորս հարիւր քսան եօթ միլիոն եօթ հարիւր վաթսուն երեք հազար (427,763,000) րուբլի. մնացորդ վաթսուն երեք միլիոն եօթ հարիւր երեսուն եօթ հազար (63,737,000) րուբլին ծախսուել է եւ կամ իբրեւ առ. հաշիւ գումարներ մնացել զանազան անձանց վրա: Այդ գումարից մինչեւ 1921 Թ. Յուլիս 6-ը (Ղաթարի հանքերը թողնելու օրը) գործում գտնուող փաստաթղթերով եղել է ծախս եւ տրուած են ստանողներ երկու հարիւր քառասուն ինն միլիոն վեց հարիւր ութսուն չորս հազար եօթ հարիւր յիսուն (249,684,750) րուբլի: Այսպիսով, Ղաթարի հանքերը թողնելու ժամանակ գանձարանում եղել է հարիւր եօթանասուն ութ միլիոն եօթանասուն ութ հազար երկու հարիւր յիսուն րուբլի (178,078,250), որից տասն եւ չորս միլիոն հինգ հարիւր եօթանասուն ութ հազար երկու հարիւր յիսուն (14,578,250) րուբլի դուրս է հանուել կառավարութեան հետ, իսկ մնացած հարիւր վաթսուն երեք միլիոն հինգ հարիւր հազար (163,500,000) րուբլին մնացել է Ղաթարի հանքերում:

3. ՎԱԼԻՒՏԱ

Համաձայն յատուկ յանձնաժողովի 1921 Թ. Մարտի 25-ի կազմած ակտի, պետական բանկից դուրս են հանել եւ Բաշ-Գեառնի են տարել հետեւեալ վալիւտային արժէքները:

Ռուսական դրամներ

Ոսկի	3110 ր· կ·
Բանկային արծաթ դրամ	1234 » —
Մանր արծաթ	4143 » 95
Պղնձադրամ	14 » 38
Նիկոլայեան թղթադրամներ	138243 » —
Մարկաներ	150 » 05
Ընդամենը	146,895 ր· 38 կ·

(Հարիւր քառասուն վեց հազար ութը հարիւր իննսուն հինգ ռուբլի երեսուն ութ կոպ·)

Ամերիկական դոլարներ

Ոսկի	125 դոլար
Բանկնոտ	1980 »
Չէկ	21250 »
Ընդամենը	23,355 դոլար

(Քսան երեք հազար երեք հարիւր յիսուն հինգ դոլար)։

Անգլիական փունտ ստերլինգ

Ոսկի	349
Բանկնոտ	3108,10
Չէկ	5053,12,5
Ընդամենը	8511,2,5

(Ութ հազար հինգ հարիւր տասն եւ մէկ ֆ· երկու շիլինգ հինգ պէնս)։

Ֆրանսիական Ֆրանկներ

Ոսկի	1315 Ֆրանկ
Բանկնոտ	7025 »
Ընդամենը	8340 Ֆրանկ

(Ութ հազար երեք հարիւր քառասուն Ֆրանկ)

Տաճկական լիրաներ

Ոսկի	1639 լիրա
Արծաթ	84 մէջիտ
Բանկնոտ	7654 լիրա 1 պիաստր
Ընդամենը	9293 լ· 84 մ· 1 պ·

(Ինն հազար երկու հարիւր իննսուն երեք լիրա ութսուն չորս մէջիդ մէկ պստ)

Պարսկական դռաններ

Արծաթ	1960 դռան

(Հազար ինն հարիւր վաթսուն դռան)

Գերմանական մարկեր

Ոսկի	60 մարկ

(Վաթսուն մարկ)

Զանազան երկրների փրանկներ

Ոսկի 260 *ֆրանկ*

(*Երկու հարիւր վաթսուն ֆրանկ*)

Իտալական լիրաներ

Բանկնոտ 1266 *լիրա*

(*Հազար երկու հարիւր վաթսուն վեց լիրա*)

Դանիական կրօններ

Բանկնոտ 530 *կրօն*

(*Հինգ հարիւր երեսուն կրօն*)

Զուիցերական փրանկներ

Ոսկի 200 *ֆրանկ*

(*Երկու հարիւր ֆրանկ*)

Ռումինական լէյիներ

Արծաթ 5 *լէյի*

Բանկնոտ 111 »

Ընդամենը 116 *լէյի*

(*Հարիւր տասն վեց լէյի*)

Բուլգարական լեւաներ

Բանկնոտ 31,605 *լեւա*

(*Երեսուն մէկ հազար վեց հարիւր հինգ լեւա*)

Մէկ կնճռած արկղիկ

(*օղեր, խաչեր, ականջի օղեր*)

Ոսկէ իրեր *մէկ ֆունտ, յիսուն մէկ մսխալ, յիսուն չորս դօլեա*

Երկու աւստրիական մէդալներ

Անյայտ մէտաղ *տասն եւ ութ դօլեա*

Կեղծ մարջան *տասն եւ իննը հատ*

Անդրկովկասեան բօներ 28510 *բուբլի*

(*Քսան ութ հազար հինգ հարիւր տասը բուբլի*)

Բացի վերոյիշեալ վալիւտային արժէքներից, երեւանից դուրս է բերուած զանազան ժամանակներում պետական բանկից եւ դանձարանից հանուած, հետեւեալ վալիւտային արժէքները.

Տաճկական ոսկի 451 *լիրա*

Ամերիկական ոսկի 70 *դոլար*

Ամերիկական թղթադրամ դոլար չէկ 1250 »

Ռուսական ոսկի 110 *բուբլի*

Ռուսական Նիկոլայեան թղթադրամ 15000 »



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՆԵՐԸ

Կովկասեան քոներ	33700 րուբլի
Ամերիկական արծաթ	1 դոլար
Հնդկական արծաթ	1 ռուփի
Ռուսական արծաթ	85 կոպ.
Պարսկական արծաթ	5 դռան

Ոչ մեծաքանակ դումարներ, որոնց չափը ստուգւում է, հանւած են բանկից կամ գանձարանից եւ յանկարծակի տեղի ունեցած նահանջի պատճառով մնացել են Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի դրամարկղում կամ սեղանի արկղներում:

Գաղթի ճանապարհին եւ Թաւրիզում վալիւտային ընդհանուր ֆոնդի վրա աւելացել են հետեւեալ արժէքները:

Քէշիշ-Քէնդում ստացւել են Նոր Բայազէտի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէից հետեւեալ արժէքները.—

Կանացի արծաթեայ գօտի	7 հատ
Տղամարդու արծաթեայ գօտի	7 »
Կօշակի արծաթեայ գօտի	2 »
Ապարանջան արծաթեայ	7 »
Կաթնաման արծաթեայ	1 »
Դաչոյն արծաթապատ	1 »
Վազմաններ արծաթէ չղթայով	12 »
Ժամացոյց արծաթեայ	3 »
Ժամացոյց հասարակ	1 »
Օղիի բաժակ արծաթեայ	1 »
Արծաթի մանր կտորներ	13 »
Նապոլէօն	21 »
Ադիլիէ ոսկի	10 »
Կէս մէջիտ ոսկի	29 »
Ոսկիէ մանր օղակներ	28 »
Ոսկիէ մատանի	1 »
Կերենսկու թղթադրամ	580 րուբլի
Անդրկովկասեան բոներ	883 րուբլի
Նիկօլայեան թղթադրամներ	2067 րուբլի
Տաճկական մէջիտիէ արծաթ	6 հատ
Տաճկական կէս մէջիտիէ արծաթ	4 »
Ռուսական արծաթ դրամ	76 րուբլի 35 կ.
Գերմանական մարկ արծաթ	1 հատ:

Քէշիշ Քէնդում եւ Մալիչկայում եղբ. Մակարեաններից ստացւել են՝ տասն եւ մէկ հատ մեծ եւ չորս հատ փոքր տաճկական ոսկէ դրամ զարդեր:

Թաւրիզում Վահէ Արծրունուց ստացւել է.

Ռուսական ոսկի	35 րուբլի
Ռուսական արծաթ	60 կոպէկ

Մահմուդիէ	2 հատ
Նապոլէօն	1 հատ

Գորխի գանձարանից վերցւել եւ մուծւել է վալիւտային ընդհանուր ֆոնդ հարիւր ինն (109) բուբլի յիսուն կոպ (50) ռուսական արծաթ դրամ:

Ստացած է չորս նեաղում թէհրանից (Պարիզի պատւիրակութեան ուղարկած) հինգ հարիւր երկու հազար հինգ հարիւր (502,500) դրան:

Պետական բանկից դուրս բերւած վալիւտային արժէքները, որոնց ցանկը տրւեց վերեւում, ամփոփւած չորս կնքւած արկղների մէջ բերւել են Զանզեզուր:

Արկղներից մէկը, արծաթեայ դրամներով եւ իրերով թաղւած է Երեւանի եւ Մեղրիի ճանապարհին, իսկ մնացած երեք արկղները Մեղրիում բացւել են եւ վերստուգութեան են ենթարկւել յատուկ յանձնաժողովի կողմից՝ բաղկացած Երեւանից եկած եւ տեղական հասարակական գործիչներից: Ցիշեալ վերստուգութիւնից պարզւել է:

1· Արկղում ռուսական ոսկի պակաս է եղել· 60 բուբլի

2· Չիլցերական երկու հարիւր ֆրանկ ոսկու փոխարէն արկղում եղել է երկու հարիւր ֆրանկ ղւիցերական թղթադրամ:

3· Ռուսական պղնձադրամից եւ մարկաներից պակաս է եղել տասն եւ երեք բուբլի 83 կոպէկ:

4· Հարիւր քսան եւ հինգ ոսկէ դոլարի փոխարէն դուրս է եկել հարիւր քսան դոլար:

5· Տասն եւ ինն կեղծ մարջաններըը բնաւ երեւան չեն եկել:

6· Նիկոլայեան թղթադրամ Մեղրիում երեւան է եկել երեք հազար հինգ հարիւր բուբլով աւելի:

Բացի վաթսուն (60) բուբլի ոսկին, որի տեղը յայտնի է կառավարութեան, մնացած անկարեւոր անհամեմատութիւնները համարւելու են հաշւական թիւրիմացութեան եւ սխալանքի արդիւնք:

Վերջին յանկարծակի նահանջի ժամանակ վալիւտային վերոյիշեալ ընդհանուր ֆոնդից Ղաթարի հանքերում մնացել եւ էվակուացիայի չեն ենթարկւել հետեւեալ արժէքները.—

Ռուսական զանազան թղթադրամ	143,557 բուբլի *)
Անդրկովկասեան բօներ	28,510 բուբլի
Դանիական թղթադրամ	530 կրօն
Իտալական թղթադրամ բանկնօտ	1266 լիրա
Չիլցերական թղթադրամ	200 ֆրանկ
Բոլգարական թղթադրամ	35 լեւա
Ռումինական թղթադրամ բանկնօտ	111 լէյի
Տանկական թղթադրամ բանկնօտ	1 պիաստր

*) Ծանօթութիւն.— Համաձայն 1921 թ· մարտի 25-ին յատուկ յանձնաժողովի կազմած ակտի Նիկոլայեան թղթադրամների գումարն է 138,243 թ·, սակայն փաստական ստուգումից պարզւել է, որ գումարն է ոչ թէ 138,243 թ· այլ 143,557 բուբլի:

Ֆրանսիական թղթադրամ բանկնոտ	2,025 ֆրանկ
Ռուսակ. մանր փող (մարկաներ եւ պղնձադրամ)	150 ր. 61կ.
Ոսկէ ձուլածք	62 մսխալ 82 դօլ
Ոսկէ մատանի կորած ակով	1 հատ
Կերենսկու թղթադրամ	580 րուբլի
Հայկական չէկեր	1185 րուբլի
Կանացի արծաթեայ գօտիներ	7 հատ
Տղամարդու արծաթեայ գօտիներ	7 »
Կօղակի արծաթեայ գօտիներ	2 »
Ապարանջան արծաթեայ	5 »
Կաթնաման արծաթեայ	1 »
Վագմաներ արծաթեայ չղթայով	12 »
Արծաթի մանր կտորներ	13 »

Մնացած վալիւտային արժէքները դանազան ժամանակներում դուրս են հանւել եւ, կազմելով կառավարութեան վալիւտային միջոցները, ծախսւել ու ծախսւում են գլխաւորապէս պաղեստինեան կարիքների համար:

Ամփոփելով վալիւտային բոլոր արժէքները՝ տեսնում ենք, որ կառավարութեան գանձարկղն են մտել հետեւեալ վալիւտային արժէքները.—

1. Ռուսական ոսկի	3255 րուբլի
2. Ռուսական արծաթ	187 րուբլի 30կ.
3. Տաճկական ոսկի	2090 լիրա
4. Տաճկական թղթադրամ	7654 լիրա
5. Ամերիկական ոսկի	190 դոլար
6. Ամերիկական արծաթ	1 դոլար
7. Ամերիկական բանկնոտ	1980 դոլար
8. Ամերիկական չէկ	22500 դոլար
9. Անգլիական ֆունտ ստերլինգ ոսկի	349 ֆ. ստ.
10. Անգլիական ֆունտ ստերլինգ բանկնոտ	3,108,10
11. Անգլիական ֆունտ ստերլինգ չէկ	5,053,12,5
12. Ֆրանսիական ոսկի	1,575 ֆրանկ
13. Ֆրանսիական ոսկի բանկնոտ	5,000 ֆրանկ
14. Բոլգարական թղթադրամ	31,570 լեւա
15. Գերմանական ոսկի	60 մարկ
16. Աւստրիական ոսկի	21 կրօն
17. Հնդկական արծաթ	1 ռուփի
18. Պարսկական արծաթ	502,505 ղրան
19. Աւստրիական Նապօլէօն	33 հատ
20. Տաճկական ոսկէ դրամ զարդարանքներ	64 հատ
21. Բէլգիական ոսկէ դրամ զարդարանքներ	3 հատ
22. Ոսկի մատանիներ	9 հատ
23. Տաճկական մէջիտիէներ	10 հատ

24. Բոլղարական ոսկի	10 լեւա
25. Ոսկէ օղակներ	28 հատ
26. Այլ եւ այլ զարդարանքներ	26 մսխալ
27. Գերմանական արծաթ մարկ	1 հատ
28. Զարդարանքի վերածած ոսկէ դրամներ եւ երկու խաչ	16 մսխալ
29. Արաբական ոսկէ դրամ	76 դոլեա
30. Ապարանջան արծաթեայ	2 հատ
31. Դաշոյն արծաթապատ	1 (թալանւ. ճանապարհ.)
32. Ժամացոյց արծաթեայ	4 հատ
33. Օղիի բաժակ արծաթեայ	1 հատ
34. Նիկոլայեան դրամ	15000 րուբլի
35. Անդրկովկասեան բօն	33700 րուբլի

Գաղթականութեան համար եւ այլ նպատակներով վալիւտային արժէքները ծախսել են թէ իրանց իրական արժէքով եւ թէ վերածելով ղրանների: Գաղափար տալու համար, թէ ինչպիսի ծախսեր են եղել, բերենք վալիւտային ելքի կատեգօրիաները ընդհանուր առմամբ:

No	ՄԱԽՍԵՐԻ ՑՈԴԻԱԾՆԵՐԸ	Պարսկական դրամ		Տաճկակ. ոսկի լիրա	Տաճկակ. Թղթադ. լիրա	Ամերիկ. Թղթադ. դոլարչէկ
		Ղրան	Մ.			
1	Նպաստներ գաղթականութեան	19925	20	28	—	—
2	Գաղթ. փոխադրութեան	33	—	678	—	—
3	Գնուած պետակ. գոյք. արժէքը	5530	—	25	—	—
4	Կառավ. անդամներու եւ այլոց ռոճիկ ու օրապահիկ	4477	—	2	—	—
5	Ծsար դրամներու գնումներ	85035	—	—	—	—
6	Ծախած դրամներ	—	—	25	6255	14000
7	Կուլտուրակ. ձեռնարկներ — (դասընթացքներ եւ սեմինարիա)	320	—	—	—	—
8	Հակահետախուզութիւն	5609	—	5	—	—
9	Ճանապարհածախս, սուրհանդակ. փոստ հեռագրական ծախսեր	4903	10	5	—	—
10	Դիւանական ծախսեր	2313	60	1	—	—
11	Առ հաշիւ տրուած գումարներ*)	550298	35	2549	—	3000
12	Փոխարինաբար տրուած գումարներ	26400	—	—	—	—
	Գումարը	704844	25	3318	6255	17000

*) *Այս գումարը տրուած է Առաջնորդարանի հսկողութեան տակ գործող գաղթական. նական մարմնին տարագիրներուն օժանդակելու համար: Արուած ծախսերը կենթարկուին քննութեան յատուկ յանձնաժողովի կողմէ եւ փաստաթղթերը կը ներկայացուին Հայաստանի պետական վերահսկութեան:*

Ամերիկ. ոսկի դոլ. բանկնոտ	Ամերիկ. ոսկի դոլ.	Անգլիական ֆունտ ստրլ. չէկ	Սովետական թղթադրամ	Ռուսակ. ոսկի րուբլի	Ռուսակ. արծաթ րուբլի	Անգլիական ֆունտ ստր. ոսկի	Ֆրանս. ոսկի ֆր.	ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
—	—	—	—	—	— —	—	—	
—	—	—	—	—	105 40	185	1160	
—	—	—	—	—	— —	—	—	
—	—	—	—	—	— —	—	—	
—	—	—	—	—	— —	—	—	
560	35	250	—	—	— —	—	—	
—	—	—	—	—	— —	—	—	
—	—	—	2800000	—	— —	—	—	
—	—	—	—	—	— —	—	—	
—	—	—	—	—	— —	—	—	
—	40	—	—	4160	376 35	147,5	310	
—	—	1000	—	—	— —	—	—	
560	75	1250	2800000	4160	481 75	332,5	1470	

Տալով մուտքի և ելքի հաշուեկշիռը՝ մենք կստանանք հետեւեալ պատկերը.

ԴՐԱՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Հանուած է երեւանից եւ ստացուած է Թէհրանից	Գնուած է	Մախաւաճէ	Մախսուած է եւ տրուած է աւանսով	Թողնուած է եւ Թաղուած գաղթի ճանապարհին	Մնում է դրամարկղում առ 28-ն յուլիսի 1921 Թուին	ԿԵՒՐ
Հայկական չեկեր	9400000000	—	—	4,246,193,000	5,147,000,000	6,807,000	9,400,000,000
Սովետական դրամներ	650000000	—	—	420,921,750	228,027,000	1,051,250	650,000,000
Տաճկական ոսկի լիրա	2090	1612	25	3293	—	384	3702
Ամերիկեան ոսկի դոլար	190	—	35	40	—	115	190
Ռուսական ոսկի ռուբլի	3255	1000	—	4160	—	95	4,255
Ամերիկեան արծաթ դոլար	1	—	—	—	—	1	1
Հնդկական արծաթ ռուփի	1	—	—	—	—	1	1
Ռուսական » ռուբլի	5565 ր. 25 կ.	300 ր.	—	481 ր. 75 կ.	5377 ր. 95 կ.	5 ր. 56 կ.	5865 ր. 25 կ.
Պարսկական » դրամ	504465	207,170	—	704,844,25 ս.	1960	4830,75 ս.	711,635
Տաճկական թղթադրամ լիրա	7654 լ. 1 պ.	—	6255 լ.	—	1 պիաստր	1399 լ.	7654 լ. 1 պ.
Ֆրանս. Ֆրանկ բանկնոտ	7025	—	—	—	2025	5000	7025
Անգլ. Ֆ. ստերլինգ բանկնոտ	3108,10	—	—	—	—	3108,10	3,108,10
Անգլ. Ֆ. ստերլինգ չեկ	5053,12,5	—	250	1000	—	3803,12,5	5,053,12,5
Անգլ. Ֆ. ստերլինգ ոսկի	349	—	—	332,5	—	16,5	349
Ամերիկ. դոլար բանկնոտ	1980	—	560	—	—	1,420	1980
Ամերիկ. դոլար չեկ	22500	—	14,000	3000	—	5,500	22,500
Ֆրանսիակ. Ֆրանկ ոսկի	1575	—	—	1470	—	105	1,575
Բոլգար. թղթադրամ լեւա	31,605	—	—	—	35	31,570	31,605
Գերմանական մարկ ոսկի	60	—	—	—	—	60	60
Աւստրիական կրօն ոսկի	21	—	—	—	—	21	21
Աւստրիակ. Նապօլէօն ոսկի	33	—	—	—	—	33	33
Տաճկական ոսկէ զարդեր	64	—	—	—	—	64	64
Բելգիակ. ոսկէ զարդեր	3	—	—	—	—	3	3
Ոսկէ մասանիներ	9	—	—	—	—	9	9
Թրքական մէջիդիներ	10	—	—	—	—	10	10
Գերմանակ. մարկ արծաթ	1	—	—	—	—	1	1
Բոլգար ոսկի լեւա	10	—	—	—	—	10	10
Արաբական ոսկէ դրամ	76 դօլար	—	—	—	—	76 դ.	76 դ.

Ոսկէ օղեր	28 ճ.	—	—	—	—	28 հատ	28 հատ
Այլ եւ այլ ոսկէ զարդեր	26 մախ.	—	—	—	—	26 մախ.	26 մախ.
Զարդ. վերած. ոսկիներ եւ ոսկի խաչ	16 »	—	—	—	—	16 մախ.	16 »
Ապարանջան արծաթեայ	2 հատ	—	—	—	—	2	2 ճ.
Արծաթապատ դաշոյն	1 »	—	—	—	—	—	1 ճ. *)
Արծաթեայ ժամացոյց	4 »	—	—	—	—	4 հատ	4 ճ.
Արծաթեայ օղիի բաժակ	1 »	—	—	—	—	1 »	1 ճ.
Նիկոլայեան թղթադրամ	158,557	—	—	—	143557	15000	158,557
Անդրկովկ. (թղթադ.) բոներ	62,210	—	—	—	28510	33700	62,210
Դաշնակ. կրօններ բանկնոտ	530	—	—	—	530	—	530
Իտալական թղթադրամ լիրա	1266	—	—	—	1266	—	1266
Զւիցերակ. թղթադր. ֆրանկ	200	—	—	—	200	—	200
Ռումինակ. թղթ. բանկ լէյի	111	—	—	—	111	—	111
» արծաթ լէյի	5	—	—	—	5	—	5
Ռուսական մանր փող՝ մարկաներ եւ պղինձ	150 r. 61 կ.	—	—	—	150 r. 61 կ.	—	150 r. 61 կ.
Ոսկէ ձուլուածք	62 մախ. 82 դ.	—	—	—	62 մս. 82 դ.	—	62 մախ. 82 դ.
Ոսկէ մատանի կորած ակով	1	—	—	—	1	—	1
Կերենսկու թղթադրամ	580 r.	—	—	—	580	—	580
Հայկական չէկեր	1185 r.	—	—	—	1185	—	1185
Կանացի արծաթեայ գօտիներ	7 ճ.	—	—	—	7 ճ.	—	7
Տղամարդու » »	7	—	—	—	7 »	—	7
Կոզակի » »	2	—	—	—	2 »	—	2
Ապարանջան արծաթեայ	5	—	—	—	5 »	—	5
Կաքնաման »	1	—	—	—	1 »	—	1
Վազմաներ արծաթ. շղթայով	12	—	—	—	12 »	—	12
Արծաթի մանր կտորներ	13	—	—	—	13 »	—	13
Նիկոլայեան թղթադրամ	2,067	—	—	—	2067	—	2067
Անդրկովկասեան բոներ	883	—	—	—	883	—	883
Տանկական արծաթ մէջիդի	84	—	—	—	84	—	84
Կեղծ մարջան	19 ճ.	—	—	—	19 ճ.	—	19 ճ.

*) Թալանուած Դուզ. Թաւրիզ ճանապարհին։

Վերջացնելով այս ամփոփ տեղեկագիրը՝ հարկ ենք համարում աւելացնելու, որ յատուկ մի յանձնաժողովի ձեռքով, ինչքան ներում են պայմանները, ի մի են հաւաքւում եւ ամբողջացւում բոլոր հաշիւները, ինչպէս նաեւ ըստ էութեան քննութեան են ենթարկւում կատարւած ծախսերը եւ սոուդւում փաստաթղթերը: Բացի հրապարակային հաշւետուութիւնից, Հայաստանի կառավարութիւնը իրեն պարտաւոր է համարում հաշիւ ներկայացընել նաեւ Հայաստանի ապագայ օրինական իշխանութեան: Կառավարութեան գրամական գործառնութիւնների մասին եղած ամբողջ նիւթը կը պահւի եւ ապագայում կը յանձնւի Հայաստանի Պետական վերահսկողութեան):*

Հայաստանի կառավարութեան Նախագահ
Ս. ՎՐԱՑԵԱՆ

Ֆինանս. Նախարար
Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Հաշւեքննիչ մարմնի անդամներ
Գ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ,
ԱՐՇ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ԱՐՇ. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

---

*) Յուլիսի 28-ից մինչեւ սեպտ. 1 ծախսւել են գաղթականութեան եւ այլ կարիքների համար հետեւեալ գումարները.

1) Տաճկական ոսկի	5 լիրա
2) Պարսկական դրամ	212,527 ղր. 45 սր.
3) Սովետական դրամ	1,700,000 ռուբլի

ԿԱՐՍԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Ինչպէս յայտնի է, Հայաստանի կառավարութեան եւ Մոսկուայի ներկայացուցիչ Լեդրանի միջեւ, 1920 թ. դեկտ. 2–ին, կնքուած համաձայնութեամբ, Հայաստանը պիտի լինէր խորհրդային անկախ հանրապետութիւն: Այդ անունով էլ մնաց մինչեւ Անդրկովկասեան Դաշնակցութեան կազմութիւնը 1921 թ. դեկտեմբերին, երբ Կովկասի երեք հանրապետութիւնները դրկեցին իրենց անկախութիւնից եւ Անդրկովկասեան Դաշնակցութեան միջոցով դարձան Խորհրդային Ռուսաստանի մէկ մասը:

Մինչեւ Անդրկովկասեան Դաշնակցութեան ստեղծումը Խորհրդային Հայաստանը անուանապէս պահեց դերիշխան պետութեան ձեւական բոլոր յատկանիշները, որոնց մէջ եւ արտաքին միջ–պետական յարաբերութիւնները, նոյն իսկ դեսպան եւ հիւպատոսներ ունենալ որոշ երկրներում:

Խորհրդային Հայաստանի «անկախ» դործերից մէկը եղաւ եւ կարսի Խորհրդաժողովը, ուր 1921 թ. հոկտ. 13–ին Խորհրդային Հայաստանի եւ Թիւրքիայի միջեւ ստորագրուեց կարսի դաշնագիրը:

Կարսի Խորհրդաժողովը նախորոշուած էր Մոսկուայում 1921 թ. մարտ 16–ի ռուս–Թրքական դաշնագրով, որի Անդրկովկասին վերաբերող մասերը պէտք է վաւերացնէին նաեւ Անդրկովկասեան հանրապետութիւնների կողմից: Հետեւաբար, Կարսի Խորհրդաժողովը հրաւիրուած էր վաւերացնելու համար Մոսկուայի մարտ 16–ի դաշնագիրը:

Խորհրդաժողովը բացուեց սեպտ. 26–ին, Թիւրքիայի ներկայացուցիչ Ֆեաղիմ Կարաբէքիրը փաշայի նախագահութեամբ: Հայաստանի ներկայացուցիչն էր Ասք. Մռաւեանը, Ադրբէջանի՝ Բէկզատա Շահթախտինսկի, Վրաստանի՝ Շալվա Էլիաւա: Սրանց, իրրեւ դայեակ, Խորհրդային Ռուսաստանի կողմից ընկ. Գանեցկի:

Խորհրդաժողովի առաջին իսկ նիստում առաջ եկաւ տարակարծութիւն Թիւրքիա եւ Խորհրդային պատւիրակութիւնների միջեւ թէ խորհրդաժողովի կազմի, թէ իրաւասութեան եւ թէ մի շարք ուրիշ հարցերի շուրջ: Բոլոր հարցերում Խորհրդային ներկայացուցիչները դիջեցին: Փաստօրէն Գանեցկին եւ իր ընկերները ստիպուած եղան ընդունելու Ֆեաղիմ Կարաբէքիրը փաշայի վերջնագրի բնոյթ կրող պահանջները:

Կարսի դաշնագրով փաստօրէն հայ բոլշեւիկներն էլ իրենց կնիքը դրին Թրքական զէնքի ուժով խլուած Ալեքսանդրապոլի դաշնագրի տակ: Որոշ կէտերում Կարսի դաշնագիրը նոյն իսկ աւելի ի վնաս էր Հայաստանի, քան Ալեքսանդրապոլինը:

Թիւրք–Խորհրդային յարաբերութիւնների և Հայաստանի կառավարութիւն դարձած հայ բոլշեւիկների քաղաքական տկարութեան եւ անճարակութեան բնորոշման տեսակէտից էլ հետաքրքրական է Կարսի Խորհրդաժողովը: Այստեղ առաջ կը բերենք այդ ժողովի ամփոփ արձանագրութիւնները այնպէս, ինչպէս տրուած են «Խորհրդային Հայաստան» պաշտօնաթերթի 1921 թ. հոկտեմբերի համարներում:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

«Առաջին նիստը տեղի ունեցաւ Խորհրդաժողովի բացումից անմիջապէս յետոյ, Սեպտ. 26–ին: Նախագահում էր կարաբէքիր Բեազիմ փաշան: Թիւրք պատւիրակութեան կողմից կարաբէքիրը արաւ հետեւեալ երկու առաջարկները:

1. Նիստերի արձանագրութիւնները կատարել Ֆրանսերէն լեզուով, որից յետոյ թարգմանուի թիւրքերէն, ռուսերէն, հայերէն եւ վրացերէն լեզուներով:

2. Դաշնագրութիւնները կնքել երեք հանրապետութիւնների հետ առանձին–առանձին պայմանագրերով:

Անդրկովկասի հանրապետութեանց պատւիրակութիւններից կարաբէքիրի առաջին առաջարկը ընդունուեց, բայց եւ կտրուկ կերպով մերժուեց նրա երկրորդ առաջարկը:

Թիւրք պատւիրակութեան նախագահը յայտնեց, որ իրենք իրաւասութիւն չունենալով հաւաքական դաշնագիր կնքելու առանձին–առանձին դաշնագրերի տեղ՝ այս հարցի մասին չեն կարող վճիռ տալ, որով ստիպւած են հեռագրով տրամանդ ստանալ Անգարայից:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Երկրորդ նիստը տեղի ունեցաւ Սեպտ. 27–ին: Նիստի սկզբին կարաբէքիրը յայտարարեց հետեւեալ երկու առաջարկները, որոնք ընդունուեցին.

1. Մոսկւայի դաշնագրի անվտանգ ընդունումը, հակառակ պարագային դադարեցնել Խորհրդաժողովի աշխատանքները, մինչեւ որ նոր հրահանգներ ստացուին Անգորայից:

2. Մանր եւ զուտ տեղային նշանակութիւն ունեցող սահմանային հարցերի համար կազմել տեղւոյն վրայ ճշդող յանձնաժողովներ:

Անդրկովկասեան հանրապետութիւնների կողմից ընկեր Գանէցկին ներկայացրեց հետեւեալ երկու սահմանագծային պահանջները, որոնց առաջինը վերաբերում էր Անիի աւերակներին, եւ ասաց. «Դա հայերի համար ունի պատմական եւ գիտական մեծ արժէք»: Երկրորդը՝ Կողբի պահանջն էր, որ իր ազահանքերով ներկայացնում է համակովկասեան նշանակութիւն:

Թիւրք պատւիրակութեան նախագահը յայտնեց, որ իրենք ոչ մի իրաւասութիւն չունին Մոսկւայի դաշնագրով գծուած սահմանի մէջ փոփոխութիւն կատարելու, եւ դրա համար Անգորայից հրահանգ պէտք է ուղել:

Վերոգրեալ հարցերի վիճաբանութիւնից յետոյ, ընկեր Գանէցկին ժողովին ներկայացրեց մի շարք գիւղերի անուններ՝ հարց դնելով, թէ ո՞ւմ պէտք է պատկանին:

Գարաբէքիրը չեշտեց, որ վերոյիշեալ հարցերը սահմանափակ, զուտ տեղական նշանակութիւն ունին, որով առաջարկեց նրանց ճշդումը թողնել տեղւոյն վրայ գործող յանձնաժողովներին, առաջարկեց սահմանագծումների համար մէկ–քանի ընդունուած կանոններ, որ ընդունեցին նաեւ անդրկովկասեան պատւիրակութիւնները:

Ըստ այդ կանոնների, սահմանադիծ կարելի չէ ընտրել այն գիւղը, որից կարող են գիւղի բնակիչների համար տեղական նշանակութիւն ունեցող դժուարութիւններ ծագել: Եթէ սահմանի վրայ ձոր կայ, այդ ժամանակ ձորը կը լինի սահմանը, եթէ բլուրներ կան, բլուրները բարձրագագաթից երկուսի կը կիսուին, իսկ եթէ տափարակ դաշտ է, կամ բլրակները անկանոն են, իրրեւ սահման կ'ընդունուի մի ուղիղ գիծ, որ երկուսի կը բաժանէ դաշտը:

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Երրորդ նիստը գումարուեց Սեպտ. 28-ին: Նիստի սկզբին ընկ. Գանէցկին հարց տրեց նիստերին նախագահելու խնդիրը եւ առաջարկեց, որ «ընդունուած կանոն է մէջ ընդ մէջ նախագահել»: Այս առաջարկութիւնը առանց վիճաբանութեան ընդունուեց Թիւրք պատւիրակութեան կողմից:

Կարաբէքիրը յայտնեց ժողովին, որ ստացել է պատասխան Անդորայից՝ դաշինքը ստորագրելու ձեւի մասին եւ թէ Թիւրք կառավարութիւնը մնում է իր նախկին տեսակէտի վրայ՝ առաջարկելով կնքել դաշնագրութիւնը երեք հանրապետութիւնների հետ առանձին-առանձին:

Ընկ. Գանէցկին կրկնեց իր առարկութիւնները եւ ասաց, թէ իրենք հաստատ են մնում իրենց տեսակէտի վրայ:

Այս խնդիրը անորոշ կերպով փակուելուց յետոյ, Թիւրք պատւիրակութիւնը կարդաց Բաթումի մասին իրենց ունեցած պահանջները:

Բաթումի մասին Թիւրք պատւիրակութեան արած առաջարկը մանրամասն քննադատութեան ենթարկուեցաւ Գանէցկիի կողմից, որ առաջարկեց մի մասնաւոր յանձնաժողով ընտրել այս խնդրով զբաղուելու համար: Նա չեշտեց, որ Թիւրքիան պէտք է ունենայ ազատօրէն օգտուելու իրաւունք Բաթումի նաւահանգստից, բայց Թիւրք պատւիրակութեան առաջարկների մէջ գտաւ որոշ հակասութիւն Մոսկւայի դաշնագրի հետ, որ հիմք է կազմում Կարսում կատարուած բանակցութեանց:

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Չորրորդ նիստը ամբողջապէս յատկացուեց դաշնագիրը ստորագրելու ձեւի մասին առաջ եկած անհամաձայնութիւնը հարթելու խնդրին, որ տեղի տուեց երկար վիճաբանութիւնների:

Թիւրք պատւիրակութիւնը յայտնեց, որ իրենք կը համաձայնին դաշնագիրը ստորագրել այն պայմանով, որ դաշնագրի մէջ առանձին-առանձին բաժանուած լինեն Ադրբէյջանին, Վրաստանին և Հայաստանին վերաբերող խնդիրները:

Այս առաջարկն էլ վճռաբար մերժելով՝ Անդրկովկասի հանրապետութեանց պատւիրակները առաջարկ ներկայացրին ուղղակի Անդորայի հետ յարաբերութեան մէջ մտնել՝ մի բացատրողական հեռագիր ուղարկելով, ուր դրւած լինին այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են իրենց դաշնագիրը կնքել հաւաքաբար, առանց առանձին բաժանումների եւ պայմանագրութիւն-

ներէ։ Թիւրք պատւիրակութիւնը եւս խոստացաւ իր կողմէ մի նոր հեռագիր ուղարկել Անդորա, եւ այս խնդիրը փակւած նկատեց։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Հինգերորդ նիստը բացւեց երկուշաբթի օր, Հոկտ. 10–ին, ժամը 3–ին։ Այս նիստում կարդացւեցին դաշնագրի յօդւածները, որոնք փոքրիկ փոփոխութիւնների ենթարկւելուց յետոյ, վերջնականապէս ընդունւեցին երկու կողմերից էլ։ Այս յօդւածները մշակւած էին պատւիրակութիւնների անպաշտօն նիստերում։ Այս տեսակ ինը նիստեր տեղի ունեցան։

Այս նիստում Թիւրքերի եւ անդրկովկասեան հանրապետութիւնների պատւիրակութիւնների կողմից եղան պաշտօնական յայտարարութիւններ՝ համապատասխան յօդւածների ընթերցումից յետոյ։ Յայտարարութիւնները արձանագրւում էին քարտուղարների կողմից, նկատի առնուելու համար երկուստեք իրենց յառաջիկայ փոխ յարաբերութիւնների ընթացքին։

Այս յայտարարութիւնները վերաբերւում էին կէտերին, որոնց շուրջ երկու կողմի պատւիրակութիւնները չէին համաձայնած եւ կամ համաձայնւելով հանդերձ՝ ընդդիմացել էին դաշնագրերների մէջ իրրեւ յօդւած մտցնելու։

Սահմանագծումի խնդիրներին վերաբերող յօդւածի ընթերցումից յետոյ, Անդրկովկասի պատւիրակութիւնների կողմից ընկ. Գանէցկին արաւ հետեւեալ յայտարարութիւնները, որոնք, խորը լռութեան մէջ, աղդու տպաւորութիւն թողին։

Առաջինը Անիի եւ երկրորդը Կողբի մասին էր։

Մենք այն յոյսը ունէինք, որ Թիւրք պատւիրակութիւնը դրական պատասխան պիտի տայ Անիի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամէն տեսակ զինւորական, տնտեսական եւ աշխարհագրական նկատումներից եւ մեզ համար ունի զուտ գիտական կուլտուրական արժէք։ Վերջին պահուն, ինչպէս Կողբի, նոյնպէս եւ Անիի մասին Թիւրք պատւիրակութիւնը մերժողական պատասխան տւեց, առարկելով, թէ Անին Ախուրեանի արեւմտեան եղերքին է գտնւում, ուստի հայերին տրւելով՝ կը խախտւի Մոսկւայի դաշնագրի սկզբունքը։

Ահա այս առթիւ Գանէցկիի յայտարարութիւնները.— «Անդրկովկասեան հանրապետութիւնների պատւիրակութիւնները ամենախորունկ ցաւով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը։ Անին ներկայացնում է հայերի համար ազգային–պատմական և գեղարուեստական արժէք։ Աւելացնում ենք նաեւ, թէ Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունին ճշմարիտ ցաւով։

Կողբի պահանջները ունենալով համակովկասեան նշանակութիւն, որովհետեւ տարիներով նրանք հայթայթել էին Անդրկովկասի ողջ պահանջը, մենք նախապէս ներկայացրել էինք Կողբի պահանջները Հայաստանին թողնելու մի առաջարկ։ Բայց նկատելով այս մասին Թիւրք պատւիրակութեան առարկութիւնները՝ մեր այս առաջարկը փոխել էինք՝ վերածելով այն կող-

բի աղահանքերը Հայաստանի կառավարութեան մենաշնորհ տալու առաջարկին:

Թիւրք պատւիրակութիւնը ներկայումս մերժում է նաեւ այս առաջարկը. մենք արձանագրում ենք նշանակութիւն ունեցող այս խնդրի մասին եւ անցնում ենք ուրիշ յօդւածների քննութեան»:

Թիւրք պատւիրակութեան նախագահ Քեազիմ Կարաբէքիր փաշան ի պատասխան Գանէցկուն, յայտնագէս նեղւած եղանակով, հետեւեալ յայտարարութիւնները արաւ.—

«Անիի մասին մեր մերժումը Մոսկւայի դաշնագիրը չխախտելու սկըզբունքի մէջ է կայանում: Այսուհանդերձ ամէն ապահովութիւն կը տրուի այնտեղ ապրողների եւ գիտական աշխատանքներ կատարողների համար»:

Մերժելով Կողբի մասին եղած առաջարկները՝ Քեազիմ Կարաբէքիր փաշան յայտարարեց, թէ Կողբը առաջւայ պէս պիտի գոհացնէ Անդրկովկասի պահանջը:

Նախիջեւանի անկախութեան վերաբերեալ յօդւածի ընթերցումից յետոյ, Քեազիմ Կարաբէքիր փաշան մի քանի հարցումներ արաւ Նախիջեւանի ինքնավարութեան վերաբերուող մի շարք խնդիրների շուրջ:

Ադրբէյջանի ներկայացուցիչ Բէհրուտ Շահթախտինսկին պատասխանեց այդ հարցումներին: Մոսկւայի դաշնագրի տրամադրութեան համաձայն, Նախիջեւանը ինքնավարութիւն է ստանում Ադրբէյջանի հովանաւորութեան տակ:

Քեազիմ Կարաբէքիր փաշայի հարցումները հետեւեալ կէտերի շուրջ էին.— պաշտօնական լեզուի, կրթական, ամուսնական, դերինների, կրօնական ազատութեան եւ այլ խնդիրների:

Թրքական նաւերին եւ ապրանքներին տրւելիք մի քանի առաւելութիւնների վերաբերեալ յօդւածները անդրկովկասեան պատւիրակութիւնների կողմից երկրորդ անգամ փոփոխութեան ենթարկւեցին եւ յետոյ ընդունւեցին: Այդ յօդւածների համաձայն, Թիւրքիան իրաւունք պիտի ունենայ առանց Թրանզիտի իր ապրանքները անցկացնել Վրաստանից Թիւրքիա: Թիւրք նաւերը պիտի վայելեն մասնաւոր առաւելութիւններ:

Թիւրք պատւիրակութիւնը հետաքրքրւեց նաեւ Աջարիայի ինքնավարութեամբ. Վրաստանի պատւիրակ Շալվա Էլիաւան յոյց տւեց այդ մասին հրատարակւած դէկրէտը:

Գերինների վերադարձին եւ 1918–ից ի վեր Թիւրքիայի դէմ գործող Թրքահպատակների վերաբերեալ յօդւածի առթիւ Գանէցկին դիտողութիւն արաւ պայմանաժամի մասին:

Քեազիմ Կարաբէքիր փաշան յայտարարեց, թէ առանց պայմանաժամին սպասելու արդէն իսկ գերինները ազատ պիտի արձակւին եւ համապատասխան հրամանագիրն էլ իր ժամանակին պիտի յայտարարուի:

Գանէցկին Անդրկովկասի պատւիրակութեան կողմից չնորհակալութիւն յայտնեց:

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Վեցերորդ եւ վերջին նիստը տեղի ունեցաւ Հոկտ. 13–ին, ժամը 12–ին:

Նիստը բացեց Գանէցկին, որ առաջարկեց ստորագրել պատրաստուած դաշնագիրը:

Ստորագրութեան արարողութիւնը կատարուեց հանդիսաւոր կերպով: Պատուիրակութիւններից զատ, ներկայ էին քաղաքային եւ զինուորական իշխանութեանց ներկայացուցիչները, որոնք ոտքի կեցած էին: Ներկայ էին նոյնպէս թիւրք սկաուտներից մի տասնեակ պատանիներ:

Ֆոր լուսթեան մէջ կարդացուեց Ֆրանսերէն բնագիրը, որից յետոյ ստորագրուեցին նիստերի արձանագրութիւնները:

Ժամը մէկուկէսին կատարուեց դաշնագրի ստորագրումը: Կարսի բերդից, ստորագրութեան պահուն, արձակուեցին թնդանօթի չորս հարուածներ, եւ թրքական նաւատորմիղը նաւագեց Ինտէրնացիոնալը եւ թիւրք ազգային քայլերգը:

Այրուբենի կարգով ստորագրեցին Հայաստանի, Ադրբէջանի, Վրաստանի, Թիւրքիայի եւ Ռուսաստանի ներկայացուցիչները:

Ստորագրելուց յետոյ, ճառեր արտասանեցին Քեազիմ Կարաբէքիր փաշան եւ Գանէցկին, եւ յետոյ Ֆորհրդաժողովը փակուած յայտարարուեց:

Առաջ բերենք նաեւ Կարսի դաշնագրի հիմնական յօդուածների բովանդակութիւնը:

1· Առաջին յօդուածով չեղեալ են յայտարարուում Թիւրքիային վերաբերող բոլոր դաշնագիրները, որոնք ստորագրուած են Թիւրքիայի և Ռուսաստանի ու Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների միջեւ, բացի 1921 թ. մարտ 16–ի Մոսկուայի դաշնագրից: Ասել է, թէ չեղեալ են յայտարարուած եւ Ալեքսանդրապոլի, Բաթումի ու Սեւրի դաշնագիրները:

Երկրորդ յօդուածով Ռուսաստան եւ Անդրկ· հանրապետութիւնները պարտաւորութիւն են ստանձնում չճանաչելու Թիւրքիային վերաբերուող որեւէ միջազգային համաձայնութիւն, որ ճանաչուած չէ Ազգ· Մեծ ժողովի Թիւրքիայի կառավարութեան կողմից: Այս վերջինս էլ, իր հերթին, պարտաւորւում է չճանաչել որեւէ դաշինք, որ չի ճանաչւում Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի կառավարութիւնների կողմից:

Չորրորդ յօդուածով դծւում է Թիւրքիայի եւ Անդրկովկ· հանրապետութիւնների սահմանը — բառացի կերպով կրկնութիւնը Մոսկուայի մարտ 16 — դաշնագրի համապատասխան յօդուածի:

Հինգերորդ յօդուածով Նախիջեւանը վեր է ածւում ինքնավար շրջանի Ադրբէջանի հովանաւորութեան տակ:

Հ· Ս· Խ· Հ· ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԿՐԵՏԸ՝ ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժողովրդական լայն խաւերի համար հայերէնի գրագիտութեան ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթութիւնը բարձրացնելու եւ դպրոցը՝ ուղղագրութիւն սովորելիս գործ դրած անպէտք եւ ապարդիւն ժամավաճառութիւնից եւ աշխատանքից ազատելու նպատակով՝ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը որոշեց·

1· *Մտցնել հայերէն ուղղագրութեան մէջ ներքեւում դրւած փոփոխութիւնները·*

ա) Օ հնչիւնը գրութեան մէջ ամէն դէպքում արտայայտել այսուհետեւ Ո տառով, ըստ այսմ՝ Օ տառի փոխանակ Ո տառը գրել Օ տառ գրւող բոլոր բառերի մէջ, օրինակ՝ ախոռ, ամոթ, արտոնել, բոթ, Մարո, Մկո, կառնո, ոգնել, ոգուտ, ող, ոժանդակ, ոսար, որորել:

Ծանօթ.— Ո տառի անունն արտասանել եւ սովորեցնել այսուհետեւ ոչ թէ իբրեւ երկտառ ՎՈ, այլ իբրեւ պարզ Օ ձայնաւոր:

բ) Է (լատ· e) հնչիւնը գրութեան մէջ ամէն դէպքում արտայայտել այսուհետեւ միայն Ե տառով· ըստ այսմ Է տառի փոխանակ Ե տառը գրել Է տառով գրւող բոլոր բառերի մէջ, օրինակ՝ աղետ, անեծք, զմբեթ, պատճեն, բոպե, կը բերե, կը գրե, եզ, եզուց, ել, եզ, եջ:

Ծանօթութիւն.— Ե տառի անունն արտասանել (սովորեցնել ոչ թէ իբրեւ երկտառ ՑԵ (գերմ· je), այլ իբրեւ պարզ Է (լատ e) ձայնաւոր:

գ) Ւ տառի փոխանակ Վ տառը գրել Ւ տառով գրւող բոլոր բառերի մէջ, օրինակ՝ կավ, անասավ, ավազ, տեւել, տերեվ, թիվ, հիվանդ:

Ծանօթութիւն.— «և» նշանագիրը, իբրեւ աղագրութեան նշան, պահել, ինչպէս՝ տերեւ, տեւել, բայց տողադարձի ժամանակ գրել ԵՎ՝ տերե-վի, տե-վել:

դ) ՈՒ երկտառի փոխանակ Վ տառը գրել ՈՒ (Վ) երկտառով գրւող բոլոր բառերի մէջ, օրինակ՝ դվարթ, նվեր, գրվել, գործված:

Ծանօթութիւն.— Երբ ՈՒ երկտառը պահում է պարզ ՈՒ (լատ· u) ձայնաւոր հնչիւնը, թողնել անփոփոխ ՈՒ ձեւով, ինչպէս վերարկուի, եթէ չէ արտասանւում իբրեւ վերարկվի:

ե) Ո տառից առաջ բառերի սկզբում, երբ արտասանութեամբ աւելանում է Վ հնչիւնը, գրութեան մէջ աւելացնել Վ տառը, օրինակ՝ վոտք, վոճ, վոճիր, վորդի, վոգի:

Ծանօթութիւն.— Երբ բառասկզբում Ո տառից առաջ չի աւելանում Վ հնչիւնը, այլ Ո տառը արտասանւում է իբրեւ Օ, պահել լոկ Ո տառով գրութիւնը, ինչպէս՝ վողջունել, բայց ԿԸ եւ ՉԸ մասնիկներից յետոյ՝ առանց Վ տառի՝ կողջունեն, չողջունել, նոյնպէս բառակազմութեան ժամանակ՝ անորոշ, բնորոշ, անողորմ եւայլն, այլ եւ այն դաւառական բառերը (ոլորան, ոքմին, ոչով, ողորմակոթ եւայլն), որոնց սկզբի Ո տառն արտասանւում է իբրեւ Օ:

ղ) Բառերի վերջում, Ա եւ Ո ձայնաւորից յետոյ գրւող անձայն Ց տառը չգրել, օրինակ՝ ծառա, կը դնա, մոռենա, ներքո:

է) Բառերի սկզբում Ց (յ) հազագային տառի փոխանակ գրել Հ տառը, օրինակ՝ հիսուն, հաճախ, հոչոտել, հոխորտալ:

ը) ՈՑ կապակցութիւնը պահել միայն ՕՑ արտասանութեան համար, ինչպէս՝ ԽՈՑ բառի մէջ է, իսկ երբ ՈՑ արտասանւում է իբրեւ ՈԻՑ, ՈՑ ձեւի փոխանակ գրել ՈԻՑ, օրինակ՝ լույս, բույս, կույս:

թ) Կիսաձայն կամ բաղաձայնական Ի հնչիւնը (գերմ. j) գրութեան մէջ ամէն դէպքում արտայայտել միայն Յ տառով, ըստ այնմ ԵԱ, ԵՕ, ԻԻ երկբարբառները գրել միայն ՑԱ, ՑՈ, ՑՈՒ ձեւերով, օրինակ՝ սենյակ, մեծութեան, յուղ, գյուղ, արյուն:

Ծանօթութիւն.— Յ տառի անունն արտասանել եւ սովորեցնել այսուհետեւ ոչ իբրեւ ՀԻ (Հ հազագով), այլ իբրեւ կիսաձայն ի (գերմ. j), ինչպէս այս Յ տառն արտասանւում է ծառաՑական, ծառաՑով, ծառաՑութիւն եւ նման բառերի մէջ, կազմելով ՑԱ, ՑՈ, ՑՈՒ երկբարբառներ:

ժ) Ե (լատ. e) տառից առաջ, բառերի սկզբում, երբ արտասանութեամբ աւելանում է կիսաձայն Յ (գերմ. j) հնչիւնը, գրութեան մէջ աւելացնել Յ տառը, օրինակ՝ յելնել, յեկ, յեզ, յերկ, յեղանակ:

Ծանօթութիւն.— Երբ բառասկզբում Ե տառից առաջ չի աւելանում Յ հնչիւնը, այլ Ե տառը արտասանւում է իբրեւ է, պահել լոկ Ե տառով գրութիւնը, ինչպէս՝ յերդ, յերդել, բայց ԿԸ եւ ԶԸ մասնիկներից յետոյ առանց Յ տառի՝ կերդեն, չերդել, նոյնպէս բառակազմութեան ժամանակ՝ աներկիւղ, աննեկ եւայլն, այլ եւ այն գաւառական բառերը — երինջ (խաղողի մաս), երկու հոգիս, երինջնակ եւայլն —, որոնց բառասկզբի Ե տառը արտասանւում է իբրեւ է:

ժա) Բառամիջում Ե տառից յետոյ, երբ այս տառի ետեւից մի ձայնաւոր է գալիս եւ երկուսի մէջ արտասանւում է կիսաձայն Յ հնչիւնը, գրել Յ տառը, օրինակ՝ գրեյի, գրեյիր, քրիստոնեյութիւն, բոպեյական, բոպեյով, եյակ, եյանալ, եյութիւն:

ժբ) ԵՄ բայի միավանկ ձեւերը՝ եմ, ես, է, ենք, եք, են, եր, երբ իբրեւ վերջացած բառ միանում են ձայնաւորով վերջացած նախորդ բառին, գրել արտասանութեան համեմատ սկզրից աւելացած կիսաձայն Յ տառով՝ յեմ, յես, յե, եւայլն, օրինակ՝ ես եմ, մենք ենք, դուք եք, բայց՝ դու յես, նայե, ծառա յեմ, գիւղացի յես, գնալու յեմ, գնալու յես, գնալու յե, գնալու յենք, գնալու յեք, գնալու յեն:

2. Յանձնարարել Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարին հրատարակել հրահանգ սոյն դեկրետը կիրառելու համար՝ սահմանելով մասնակի եւ ամբողջական կիրառման ժամանակակէտերը:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝
Ա. ՄԻԱՄԱՆԻԿԵԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Քարտուղար՝
Դ. ՏԷՐ-ՍԻՄՈՆԵԱՆ

4 մարտի, 1922 թ. Երեւան.

Մարտ 12-ի «Հրահանգ»-ով Լուսժողկոմի տեղակալ Յակոբ Յովհաննիսեանը հրամայեց «դեկրետով ընդունուած ուղղագրական ռէֆորմը ամբողջովին պարտադիր դարձնել դպրոցներում առաջիկայ 1922-23 ուսումնական տարւոյ սկզբից, մինչեւ 1923 յունուար ամիսը, սակայն, համաբելով նախապատրաստական վարժութիւնների և անցման չրջան»: Լրագրութեան համար ապրիլ 1-ից, իսկ հիմնարկութիւնների պաշտօնական գրութիւնների համար՝ մայիս 1-ից սկսած:

ՑԱՆԿ ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաճեան Մ· 538·
Աբաշիմէ 18, 41, 79·
Աբացիեւ 583, 588·
Աբգարեան Մ· 358·
Աբեղեան Ա· 357, 375, 431·
Աբելեան 433·
Աբովեան 218, 219·
Աբոյեան Բ· 26, 256·
Աբրամեան Յովի· 322·
Աբրահամեան Հ· 255·
Աբբօ 590·
Ադանց Ն· պրոֆ· 13·
Ազատեան Հ· 180, 190, 197, 220·
Աթաբէգեան Մ· 197, 198, 199·
Աթաճէսեան Միհր· 315·
Աթաբէգեան Լ· 34, 36, 38, 40, 43, 157, 159, 162, 163, 165·
Աթաբէգեան Նատալիա 316·
Աթաբէգեան 510, 519, 525·
Ալիքէգեան Մ· 251·
Ալթունեան դոկտ· 269·
Ալեքսանեանց (վատման) 236·
Ալեքսանեան Ե· 255·
Ալի Մարդա Բէգ Թոփչիբաշեւ 21, 159·
Ալլահվէրտեան Ս· 407·
Ալօ Իսմայիլ Օղլի 370·
Ախիկեան 353·
Ահարոնեան Աւ· 34, 47, 102, 103, 122, 152, 179, 186, 200, 205, 207, 269, 275, 279, 341, 439, 602·
Ահարոնեան Վ· 264, 365·
Աղայեւ 71, 74, 75, 77, 374, 375·
Աղամալեան Տ· 26·
Աղաթօն Ե· 269·
Աղամալի Օղլի 369·
Աղաբաբէգով 128·
Աղաջանեան Բժ· 37, 358·
Աղբալեան Ն· 13, 40, 41, 44, 47, 103, 122, 280, 361, 362, 398, 446, 452, 511, 526, 584·
Ամատունի 397·
Ամիրխանեան Ց· 431·
Ամանեան Մանուէլ 520·
Ամիրխանեան Լ· 351, 419·
Ամիրեան Ե· 434·
Ամիրեան Թագ· 165·
Ամիրեան Իվ· 13·
Այվազեան Բժ· 34·
Այվազեան Կոստիա 451·
Այգենման 180·
Անանուն Դ· 36, 164, 317, 421, 423, 424, 430, 488, 509, 606·
Անդրանիկ 4, 10, 11, 28, 30, 34, 60, 92, 115, 116, 254, 256, 311, 329, 331, 581, 583, 588, 589·
Անդրէասեան Բժ· Զ· 239·
Անիեան Տ· 58·
Աշոտ 610, 614·
Աջէմեան Մ· 13·
Ապրեսեան Գնդ· 297, 298·
Առաբելեան Վ· 256, 263·
Առաբելեան Հ· 37, 40, 41·
Առաբելեան Գաճիէլ 322·

Առաքելեան Ալ· 170·
Աստուածատրեան Ա· 120, 121, 136, 357, 511, 558·
Աստուրեան Աւ· 331·
Ասադուլլախան 361, 362·
Ասադ Քաբայեւ 369·
Ասըր Վ· Զօր· 312·
Ասլանեան Փոխ–Գլխապետ 223·
Ասլանեան Մանուէլ 520·
Ասլանեան Գ· 256·
Ասլան (Ոզմցի) 543·
Ասլան Բէգ Սաֆիխիւրդսկի 57·
Ասրիքէգեան 13, 125·
Ատոմեան Թումաս 520·
Արարատեան Ս· 37, 40, 157, 163, 171, 200, 264, 279, 280, 361, 392, 477, 480, 524·
Արարատեան Քր· Զօր· 252, 261, 263, 280·
Արարատեան Տիկ· Օ· 367·
Արղուբեան Յովսէփ 10, 280, 300, 330, 349, 590·
Արղուբեան Կ· Ս· 425·
Արիստակէսեան Յ· 429·
Արիփազան 370·
Արիփ Պէյ 449·
Արմէն Գաբօ 583, 588·
Արզումանեան Մ· 112, 314·
Արմէնկոմ, 403, 406, 409, 410, 411, 412, 413·
Արտուշ (խան) 532·
Զօր· Արեշեան 60, 94, 421·
Արշաւիր 569·
Արզումանեան Մ· 72, 89·
Արծրունի 13·
Արսենիձէ 104·
Արսէն – Կիտուր· 256, 259, 263·
Ախս 452, 525, 557, 558·
Աւետիսեան Տ· 72·
Աւետիսեան Գնդ· 167·
Աւետիսեան Յովսէփ 365·
Աւետիսեան Ա· 255, 332, 351, 364·
Աւերիանով Զօր· 25·
Աւդալ Մատօ Օզլի 370·
Աւալեան 364·
Աւալով Զ· 113, 146, 147·
Աւօ 583·
Ափրիկեան Վ· 357, 363, 558·

Բարաջանով Գնդ· 479, 480·
Բաբայեան Վ· 367, 431, 511, 558·
Բաբայեան Հ· (Երեւան) 538·
Բաբալեան Ա· Բժ· 47, 152, 180, 457, 477, 480·
Բաբայեւ 159·
Բաբաէէոխվեանց Բենիամին 322·
Բագրատ եպս· 157·
Բագրատունի 172, 227·
Բագունց Արս· 331, 332·
Բագունց Եր· 331, 332·
Բալայեանց Սմբատ 322, 373·
Բալայեան Գ· 164, 167, 264, 313, 314, 331·
Բալասանեան Յակոբ 322·
Բաղդասարեան Տ· 59, 364, 399, 478, 479, 484·
Բաղդասարեան Բ· Բժ· 432·
Բաղըր Ադա Մահմէդ Օզլի 370·
Բաղրամեան Յ· Զօր· 252·
Բաշինջաղեան Գ· 353·
Բախտամեան Գնդ· 161·
Բասենցեան Շ· 255·
Բարխուդարեան Ա· 357, 432·
Բարսեղեան Ա· 269·
Բերխման 586, 587·
Բեժան Բէգ Զօր· 141·
Բերուբով Լ· 54·
Բերբերեան Միհ· 196, 198, 239·
Բէհաէտտին Շահիր 8, 447, 449, 569·
Բէգզատեան Տ· 47, 71, 102, 152, 251, 344, 349, 374, 376, 446, 471, 515, 518, 530·

Բէգզատեան Ա· 521·
Բէֆիր Սամի 449, 460·
Բիչերախով Գնդ· 168·
Բիչ Զօր· 349·
Բունիաթեան Մ· 113·
Բուռնուրթեան Ն· 256·
Բուրջալեան Գ· 433·
Բուդաղեան Յ· 357·
Բուդաղեան Արմենակ 379·
Բուղդարացի Գ· 59, 256, 259·
Բուգտայեւ 346·
Բոյաճեան Ստեփաննոս 520·
Բորեան 406, 511, 514, 523·
Բրուտեան Ս· (Ոզմ) 538·
Բօրոյեան Սմբատ 30, 259·

Գաբայեւ 109·
Գաբրան Գնդ· 373·
Գազանջեան Ա· 256·
Գալէմբարեան Մ· (Վան) 538·
Գալարթմեան Ա· (Վան) 538·
Գալիկեան Հրանտ 30·
Գալստեան Ս· 255, 478·
Գալկինի 434·
Գալիցին 14·
Գանեցկի 643, 644, 645, 646, 647, 648·
Գանթարջեան 466·
Գաջինսկի 79, 107, 113, 159, 349·
Գասպարեան Մելիք Տիգրան 322·
Գասպարեան Աւանէս 322·
Գասպարեան 446·
Գեգեչկորի 54, 71, 98, 100, 106, 108, 237, 345, 374, 375, 465·
Գեդեւանով Զօր· 237·
Գեսիրէգեան Աբ· 322·
Գեղամեան Զ· 365·
Գելէյշվիլի Պ· 54·
Գէորգ Լէֆան 236·
Գէորգ Ե· Կաթուղիկոս 264·
Գէորգեան 543, 625·
Գէորգաձէ 104, 107, 133, 208·
Գիբն· Սպայ 329·
Գիւլնազարեան Մ· 335, 337, 532·
Գիւլիէէոխվեանց Իզրայէլ 322·
Գիւլխանդանեան Աբր· 157, 163, 166, 173, 280, 357, 381, 392, 477, 485, 488·
Գիւլխանդանեան Մովս· 365, 605·
Գլատերբերգ 318·
Գնդունի 480, 484·
Գորեչեան 54·
Գոգուաձէ 207, 208, 211, 215·
Գոճինսկի 166·
Գուլկեւիչ 5, 6·
Գուրգէնովիչ Ս· 348·
Գուլիեւ Սուլթան 448·
Գվազաւա 79, 97·
Գվոզդեով 55·
Գրին (Սպայ) 218·
Գրուչենբերգ Օ· 422·
Գրիգորեան Մ· 256·
Գրիգորեան Խ· 532·
Գրիգորեան Ստ· 348·
Գրիգորեան Գ· 554·
Գրէյսին 250·

Դալիգտաշ 479·
Դալի Ղազար 140, 180, 373·
Դանիէլեան Խ· 331, 332, 627·
Դարբինեան Արտակ 30·
Դարբինեան 421, 606·
Դարմանեան Մ· 26, 256·
Դաստակեան Աբր· 157·
Դաւիթեան Դաւիթ 627·
Դաւիթեան Պօղոս Տէր 331·
Դաւիթ Բէկ Մ· Ս· 269·
Դաւիթխանեան Գ· 251·
Դաւրիշ Արա Օղլի 370·
Դեւ Զօր· 248, 262·
Դենիկին 345, 346, 359, 360, 381, 382, 448·

Դեմիրչեան Դ· 422·
Դէյեւ Զօր· 89, 110, 112·
Դիլանեան 430·
Դիտիմով Գնդ· 201·
Դընստերվիլ Զօր· 172, 173·
Դոլուխանեան Գնդ· 128·
Դոկուչայեւ Զօր· 172·
Դոնսկոյ Դ· 54·
Դովլաթեան Արամ 171, 446·
Դոնսկո 58·
Դորայ 407·
Դորոնց Ն· 554, 620, 628·
Դրամբեան Թադ· 365·
Դրամբեան Ռ· 256, 259·
Էրօ 10, 58, 94, 103, 116, 120, 121, 122, 126, 129, 135, 136, 140, 142, 194, 195, 207, 209, 220, 222, 228, 229, 230, 248, 252, 264, 317, 371, 373, 446, 457, 478, 484, 491, 500, 501, 502, 503, 506, 507, 511, 525, 557, 558, 559, 581, 583·
Դուրեան Եղ· Արք· 269·

Եաղջեան Հ· 72·
Եարալեան 181·
Եղիազարեան Խ· 122, 123, 126, 128·
Եղիազարեան Ճարտ· 435·
Եղիազարեան Բժ· Ս· 528·
Եղո 328·
Ենգիբարեան Գ· 127·
Եսայեան Զապէլ 30, 157·
Եսայեան Մելիք 331·
Երզնկեան Ա· 43, 44, 47, 103, 107, 152, 218, 219, 454, 611·
Երզնկեան Ե· 378·
Երկանեան Արամ 569·
Երկանեան Ս· 353·
Եուսուփ Քեմալ Բէյ 465·
Եւանգուլեան Լ· 238, 251, 344, 396·
Եւանգուլեան Գ· 87·
Եօլեան Զ· 419·

Զալինեան Գնդ· 123·
Զալեան — Մանուկեան Բժ· Տիկ· 367·
Զաւրեան Յ· Բժ· 25, 33, 59, 60, 71, 584, 589·
Զաւարեան Ս· 37, 387, 388, 577·
Զարափեան Լ· 220, 313, 314, 453, 465, 489·
Զարիփեան 364, 418, 433·
Զահարեան Պ· 47, 180, 187, 190·
Զահարեան Մ· 330, 331, 332, 431·
Զաւալիշին Ա· 352·
Զենկեւիչ Գնդ· 59, 60, 359, 361, 362·
Զեմլիակ 142·
Զիաթխանով 294·
Զոհրաբեան Լ· 429·
Զոհրաբեան Ա· 34, 71, 145, 149, 380·
Զորին Ա· 190·
Զուրեան Դ· 120, 187, 197·
Զվորիկ 352·
Զօրեան Ա· 26, 264, 589·
Զօրեան Ռոստոմ 33, 52, 71, 157, 161, 170, 171, 173, 387·

Էդմոնդ Լ· Դէյլին Գնդ· 308·
Էդիփ Բէյ 338, 339·
Էլդըր 264·
Էյուբ Փաշա 302·
Էնփիաջեան Ա· 197, 198, 242, 267, 439·
Էնվէր 11, 63, 69, 115, 116, 173, 177, 257, 317, 395, 447, 448, 449, 472, 569·

Ըսմէք 462, 464·

Թադէոսեան Ա· 112, 422·
Թադէոսեան Ե· 353, 434·
Թադէոսեան Լ· 300, 357·
Թադէոսեան Յ· 13, 26, 431·
Թադէոսեան Ս· 112·
Թալաճեան 351·
Թալի Բէգ 369·
Թալէաթ 173, 257, 317, 395, 471, 569·
Թալէաթ Փիւչիւկ 447, 449·
Թաղիաճոս 543·
Թաղիեւ 162·
Թաղիաճոսեան Ստ· 157·
Թամամեան Ա· 352, 400, 426, 427, 432, 434, 435, 567·
Թամամշեան 144·
Թայիրով 338·
Թառայեան Հեղ· 434·
Թարխանեան Կուռո 128, 195, 223, 478, 527, 528, 543·
Թարխաթարեան Ստ· 434, 435, 471·
Թարվերդեան Գ· 130, 221·
Թեհլիրեան Սողոմոն 569·
Թեմբըրլէյ Գնդ· 247·
Թեմուրեան (Եզիտի Իսուփ Բէգ) 351·
Թերլեմեզեան Ի· 255·
Թերլեմեզեան Տ· 255·
Թեւզայա 62·
Թեֆիճսկի Խան 250, 293, 294, 295, 296, 298, 299, 339·
Թէրզիպաշեան Ա· 13, 30, 34, 59, 269·
Թէյմուր Աղա 255·
Թէյմուր Բէկ 255·
Թէֆէեան վահան 269, 270, 272, 282, 283, 286, 288, 289, 290·
Թիւթիւնճեան Խ· 431·
Թորոսեան Սահ· 119, 121, 125, 127, 136, 261, 263, 267, 396, 397, 419, 490, 493·
Թորոսեան Յովհաննէս Վրդ· 269·
Թորոմանեան Թ· 434·
Թոմսըն Զօր· 200, 218, 243, 250, 312, 330·
Թոռլաճեան Միսաճ 569·
Թոփչեան 471·
Թոփալեան Ս· 256, 257·
Թոփչիբաշեւ 71·
Թոշեանը Թ· 127·
Թումանեան Մ· 238, 435, 494·
Թումանեան Կ· Փրոֆ· 269, 435·
Թումանեան Լ· 104·
Թումանեան Հ· 503·
Թումանեան Յ· 315, 318, 353, 422, 497, 540, 541, 543, 544·
Թուրեան Ս· 427, 428·

Ժամհարեան 425·
Ժամագործեան Նշան 365·
Ժորդանիա 19, 23, 71, 74, 75, 76, 77, 99, 100, 102, 113, 146, 147, 148, 149, 151, 205, 206, 207, 209, 210, 224, 225, 373, 465, 497, 530·

Իբրահիմ Աբալով 446·
Իշխանեան Բ· 173, 174, 226, 419, 421, 479, 484, 488, 509, 511, 532, 558, 606·
Իշխանեան Աբրամ Բէգ 322·
Իշխանեան Եղիշէ 315, 331
Իպոլիտով – Իվանով 432·
Իսակ 171·
Իսախանեան Բժ· 40, 157, 159, 163, 236·
Իսմայըլ Էֆէնտի 448, 449·
Իւզբաշեան – Աւան 357·

Լազարեան 364, 543·
Լալայեան Ե· 354·
Լասխիշվիլի 79·
Լարշէ Գնդ·· 89·
Լեբեդինսկի Զօր· 59, 85, 93, 109·
Լեգրան 457, 458, 459, 495, 496, 497, 498, 499, 500, 502, 506, 511, 609, 611, 612, 613, 614, 615, 616, 643·
Լեվանդովսկի 446·
Լեւոնեան Պ· 54, 60, 72·
Լեւոնեան Գ· 434·
Լենին 83, 159, 289, 383, 387, 446, 453, 471, 497, 529, 530, 565, 614·
Լէյլի 264·
Լէօ 79, 217, 373, 401·
Լիսիցեան Ս· 422·
Լոբանով – Ռոստովսկի 14·
Լոյտ Ճորճ 273·
Լոսով Զօր· Ֆոն 114, 115, 145, 149·
Լոշէրից Դոկտ· 544·
Լոմինաձէ 446·
Լվով 25·
Լօտէն 245·

Խալոյեան Ս· 256·
Խալիլ Փաշա 114, 150, 152, 186, 194, 209, 338, 394, 417, 440, 447, 448, 449, 450, 454, 457, 463, 476, 596, 600·
Խալիլ – Բէյ 298, 299, 301, 415·
Խան – Ազատ Ռ· 422·
Խանջեան Ազատ 379·
Խանոյեան Ս· 378·
Խանլար Բէգ 327·
Խան – Խոյսկի 54, 71, 76, 107, 113, 146, 147, 294, 295, 299, 339, 346, 349·
Խաչատրեան Պ· 236, 319, 320, 625·
Խաչատրեան Ս· 72, 119, 189, 218, 345, 346, 353, 374·
Խաչատրեան Արէլ 538·
Խաչատրեան Ա· Փրոֆ· 269, 361·
Խաչատրեան Զօր· 398·
Խաչատուր 240·
Խաչիկեան Ա· 256, 257·
Խասմամեդով 68, 79, 147, 346, 349·
Խատիսեան Ա· 34, 55, 72, 79, 97, 103, 107, 113, 153, 178, 179, 186, 197, 200, 206, 207, 242, 248, 261, 262, 263, 278, 279, 280, 289, 290, 303, 307, 356, 358, 361, 364, 365, 390, 420, 484, 485, 488, 495, 496, 498, 504, 506, 596, 600, 602, 606, 609, 610·
Խատիսեան Գ· 22, 46, 72, 206, 263, 353·
Խատիսեան Լ· Ինժ· 428·
Խարլամով 18, 41, 65, 66·
Խեչո 10, 11, 583·
Խըրմաճեան 425·
Խրիսանֆ (Մետրոպոլիտ) 360, 361·
Խնկո 543·
Խոմերիկի 107·
Խոյեցեան 201, 367·
Ա· Խոնդկարեան 37, 46, 180, 189, 218, 282, 317, 361, 363, 381, 437, 489, 491, 503, 528, 642·
Խոսրով Բէգ Սուլթանով 312·
Խորէն Եպսկ· 120·
Խոջայեան 256·
Խոջահանսկի Մ· Հ· 327·
Խորէնի Վ· 72, 264, 278, 317, 351, 452, 457, 552, 622·
Խուդաբաշեան Գնդ· 478·
Խուճուճց 13·
Խուճիա 214·

Ծաղիկեան Ստեփան 569·
Ծամհուր Տիգրան 361, 435, 532·
Ծերեթելի 71, 98, 99, 102, 107, 113, 150, 151, 205, 206, 217·

Կադիմով 421·
Կազիեւ 127·
Կամսարական Ս· 22, 45, 46, 136, 367, 431·
Կամսարական Գ· 239·
Կայտալով 446·
Կայեալեան 425·
Կանդեմիրով 346·
Կանդելակի 346·
Կանայեան Ս· 422·
Կանդուրալեան 430·
Կասեան Ս· 378, 384, 385, 386, 407, 504, 510, 525, 526, 530·
Կարախան 456, 612, 614·
Կարապետեան Իճժ· 427·
Կարապետեան Հ· 538·
Կարինեան Հ· 255·
Կարինեան Արտ· 13, 170, 609, 614·
Կարալով 363·
Կարնիկեան Խ· 13, 26, 44, 47, 54, 72, 100, 107, 108, 113, 130, 152, 178, 180, 198, 199, 206·
Կիպանիձէ Լորդ 99, 108, 374·
Կիրով (դեսպան) 465·
Կիւլպէնկեան Գ· 423·
Կիւլպէնկեան Սերովբէ 30·
Կոժեւնիկով 352·
Կոլչակ Զօր· 345·
Կոստանեան Հ· 407, 452·
Կոսոյեան Հ· 255, 263·
Կորկոտեան Զ· 255, 263, 351, 365·
Կորկանեան Մ· 166·
Կոջոյեան 435·
Կորոլկով Գնդ· 195, 220, 221, 222 – 224, 227, 228, 229, 230·
Կորխանիդի 87·
Կորիւն Վրդ· 257·
Կորոլով Գնդ· 123·
Կուսիկեան Խաչատուր 520·
Կուրոչկին 549·
Կուռո 479·
Կրիչինսկի 374·
Կօչուբինսկի 397·

Հազարապետեան Մ· Սպայ 538·
Հալապեան 484·
Հախնազարեան Ս· 338, 365·
Հախվերդով 299, 361·
Հախվէրդեան Յ· 178, 180, 197, 248, 252, 361, 458, 511·
Համազասպ 10, 158, 164, 166, 167, 172, 390, 511, 532, 558, 581, 583, 584, 588·
Համասփիւռ Խ· 72, 87·
Համբարձումեան Վ· 255·
Համբարձումեան Կ· 26, 33, 71, 95·
Համբարձումեան Մ· 269·
Համտի Փաշա 440·
Հայկազ Հ· 408·
Հայկունի Գ· 30·
Հայդար Բեկ Բամմատ 114·
Հայդարով 79, 107, 159·
Հայրապետեան Հ· 255, 263·
Հանըմեան Ա· 269·
Հաջի Ռիզայ 127·
Հասօ Սիրաշ Օղլի 370·
Հասկել Գնդ· 305, 306, 307, 334, 340, 361, 362, 363, 373·
Հարբօրտ Զօր· 305, 343, 344, 602, 603·
Հերպերթ Հուվբր 602·
Հինդլեան Ս· 269·
Հոփ 6, 7, 8·
Հուվէր 242·
Հուսէյնով 377, 446, 519·

Հիւսէյին Դր· Զատէ Ալի Բէյ 52·
Հիւսէյնեան Մ· 331·

Ջամոյեան 72, 180·

Ղազգեան Կ· 33, 72, 446, 471·
Ղազարեան Գնդ· 161, 167, 361, 392, 477·
Ղազարեան Ա· 363, 511·
Ղամագեան 511·
Ղամբարեան Պրոփ· 361, 362·
Ղարաճեշիշեան 215·
Ղարաքէգեան Մ· 37, 47·
Ղեւոնդ Երէց 140·
Ղիմոյեան Տ· 255·
Ղորղանեան Ստ· 247, 351, 419, 485, 488·
Ղորղանեան Գնդ· 60, 113, 115, 167, 122, 170, 195, 206, 237, 479, 532·
Ղորղանեան Օ· 255, 389·
Ղուկասեան Ա· 255, 423, 452·
Ղուլեան Լ· 197, 199, 251·
Ղուկաս Ղուկասեան 379, 407, 412·

Ճեմալի 257·
Ճիվէլէկեան Պրոփ· 13·

Մազմանեան Գնդ· 416, 479, 480, 484·
Մազալով Զօր· 57·
Մազնիեւ Զօր· 226, 228, 230
Մազլիա Ն· Էֆ· 52·
Մաթիկեան Զ· 269·
Մալինցեան Խ· 331·
Մալխասեան Ա· 212, 365·
Մալխասեանց Ս· 34, 180, 183, 422·
Մալիցկի 479·
Մալոմ Ճ· 269·
Մալոյեան Մ· 255·
Մախարաձէ Գեր· 87, 363, 374, 375·
Մակարեան Հ· 26·
Մակարեան Ա· 367·
Մակայեւ Զօր· 216·
Մակինսկի 294·
Մահմէտ Բէյ 301·
Մահմէտ Էմին Ռաուլ Զադէ 21·
Մամաջանեան Վ· 365, 478·
Մամադ Խազի Օղլի 370·
Մամիկոն (Խմբապետ) 532·
Մամիկոնեան Ստ· 12, 13, 34, 47, 58, 102, 103, 113, 122, 152, 218, 345, 346, 348, 374, 375·
Մամիկոնեան Վարդան 141·
Մայսուրեան 433·
Մայիլեան Եղբայրներ 423, 424·
Մանասեան Ս· 58, 103, 110, 112, 195, 261, 263, 351, 352, 399·
Մանանդեան Ց· 40, 45, 87·
Մանդելշտամ Մ· 422·
Մանդալեան Գ· 72·
Մանեան Փոխ–Գնդ· 222, 223·
Մանուչարեան Սերգօ 166, 172·
Մանուկ Մասունցի 26, 59, 328, 466·
Մանուէլեան Մ· 264·
Մանուկօղլեան Ս· 357·
Մանուկեան Աբամ 13, 28, 47, 103, 120, 121, 122, 126, 127, 128, 135, 136, 137, 178, 181, 197, 199, 239, 240, 255, 264, 329·
Մանուկեան Հ· Մ· 30, 263, 300, 351·
Մանուկեան Մ· 255·
Մանուելով Ա· Պրոփ· 422·
Մաշուրեան Ս· 554, 620, 628·

Մատէնեան Ս· 584·
Մատվէյեւ Փոխ· Գնդ· 247·
Մատօ Խազի Կանբօ Օղլի 370·
Մասեհեան Ց· Խան 269·
Մարգարեան Ա· 357·
Մարգարեան Մ· 357, 434·
Մարգարեան Սմբ· 170·
Մարխասեան Ս· 339·
Մարկոսեան 609·
Մարտիրոս (Բաշգառնեցի) 122, 123, 126, 527, 543·
Մարտին Մուրատեան 520·
Մարտէլ Գոմս 373·
Մացոյ 404·
Մաֆ Մեզեն 312, 313, 314, 315, 316·
Մաֆասպետեան Ա· 263, 528·
Մդիվանի Ս· 215, 219, 346, 348·
Մդիվանի Բ· 495, 496, 497·
Մելէոնեան Արտ· 378, 382, 394, 396, 398, 406·
Մելէոնեան Բժ· 357, 452·
Մելէոնեան Հ· 363·
Մելէոնեան եղբայրներ (Եգիպտոսի) 423·
Մելէումեան Հ· 431, 432·
Մելիքեան Ռ· 432·
Մելիքեան Հ· 420, 423·
Մելիքեան Ց· Բժ· 119, 129, 136, 144, 367, 403, 420, 431, 558·
Մելիքեան Ա· 190, 242·
Մելիք – Ազարեան Ա· 423·
Մելիք – Այվազեան Ինժ· 428·
Մելիք – Ասլանով 54, 71, 107·
Մելիք – Թանգեան Ներսէս Արք· 200, 339·
Մելիք – Եոլչեան Ս· 170, 371, 419, 477, 558·
Մելիք – Ղարագէօզեան 197, 199, 251, 252, 261, 262, 263, 267, 422·
Մելիք – Միրզախանեան 365·
Մելիք – Մուրատեան Գնդ· 122·
Մելիք – Մուսեան Աշոտ 336, 557·
Մելիք Ցուսէյնեան Տ· 554, 620, 628·
Մելիք Ստեփանեան Սմբատ 548·
Մելիք – Փալանքարեան Աշխարհբէգ 434·
Մելիք Փարսադանեան Ի· 554·
Միլըրան Ա· 439·
Մեխմանդարով Զօր· 346·
Մեհմէտ Ալի Փաշա 192, 200, 202·
Մեհքիեւ 79·
Մեսեան Զ· 371·
Մեսրոպեան Ս· 528·
Մէխանոշին 446·
Միասնիկեան Ա· 564, 565, 566, 650·
Միլիւկով Պ· 25, 589·
Միլն Զօր· 250·
Մխիթարեան Յ· 256·
Մխիթարեան Ա· 180, 190, 255, 290·
Միշլայեւսկի 586·
Միկոյեան 446, 452·
Մինասեան Պետրոս 520·
Մինասեան Մ· Գնդ· 538·
Մինախորեան Վ· 357, 361, 380, 485, 489, 491, 528·
Միսաէեան Շաւարշ 282·
Միրզա Հիւսէին Զատէ 127·
Միրզախանեան Ժ· 59·
Միրզոյեան Վ· 367·
Միրզախանեան Մ· (Վան) 538·
Միրզոյեան Ա· 255, 263·
Միրիմանեան Գնդ· 195, 220, 416, 479, 484·
Միհայէլեան Քրիս· 37, 387, 388·
Միհայէլեան (Տեխնիկ) 428·
Միհայէլեան Ա· 264, 269, 371·
Մնացականեան Թ· 195, 223·

Մովսէսեան Մանուկ 365·
Մոմսեն Թոն 180·
Մորել Գնդ· 110, 111, 112·
Մոնիկ 116·
Մորիս Ֆարրի 446·
Մոստիչեան Ց· 269·
Մուշեղ Սասունցի 26, 59, 248, 328, 543·
Մուրադեան Բաշխի 322, 479·
Մուճիհեւ 338, 339·
Մուշեղեան Լ· 135, 358·
Մուսայէլեան 389, 394, 395, 396, 398, 403, 405·
Մուսինեան Մ· 120, 121, 136, 144, 511·
Մուդոյեան Ց· 255·
Մուրատեան Ս· 236, 256, 520·
Մուսինեան Մ· 264, 356, 357, 364, 532·
Մուհէտտին Ալի Թուաղ 464·
Մուսթաֆա Սուրհի 449·
Մուրսել Փաշա 168, 171·
Մուրատ 59, 89, 90, 92, 140, 171, 418·
Մուսթաֆա Քեմալ 343, 394, 395, 417, 448, 456, 458, 460, 462, 464, 472, 473, 489, 506, 522, 553, 560·
Մոուեան Ա· 378, 407, 510, 525, 643·

Յակոբեան Գ· 269, 434·
Յակոբեան Լ· 434·
Յակոբեան Ց· 451·
Յակոբեան Ն· 351·
Յակոբեան Սիմ· 158, 227·
Յակոբեան վաղ· 434·
Յակոբեան Փառնակ 239·
Յակոբջանեան 399, 429·
Յարութիւնեան Ե· 256, 257, 554, 620, 628·
Յարութիւնեան Մ· 44, 47, 72, 99, 103, 120, 218, 282, 345, 349, 401, 446·
Յարութիւնեան Յ· 239·
Յարութիւնեան Ս· 13, 152, 196, 197, 198, 199, 200, 251, 252, 266, 267, 282, 290, 291, 345, 348, 353, 361, 587, 589·
Յովհաննիսեան Արսէն 322·
Յովհաննիսեան Աշ· 170, 386, 458, 491, 503, 510, 528, 614, 642·
Յովհաննիսեան Ենովք 365·
Յովհաննիսեան Յ· 361, 363, 651·
Յովհաննիսեան վ· 434·
Յովհաննիսեան (վարանդեան) Միքայէլ 33, 71·
Յովսէփեան Գարեգին եպսկ· 139, 140, 401, 434, 480·
Յովսէփեան զօր· 368, 416, 479·
Յովսէփեան գնդ· 122, 247·
Յովսէփեան Ղ· 256·
Յովսէփեան Ն· 330, 331· 351·
Յովասափեան 478, 479·
Յովսէփ Ջաւուշ (վաճ) 538·
Յոխիկեան վ· 256, 259, 263·
Յովւեան Ս· 34·

Նազարեան Ե· 429·
Նազարէթեան Հ· 383·
Նազարբէգեան զօր· 56, 58, 60, 89, 93, 103, 109, 110, 111, 112, 113, 115, 116, 122, 143, 144, 181, 185, 187, 252, 262, 264, 361, 389, 511·
Նազըմ 257·
Նազարալիեւ 368·
Նազարեան Լիպ· 158, 358·
Նալչաջեան Բէնօ 351·
Նալչաճեան Ա· 72·
Նալբանդեան 13·
Նախիջեւանսկի 294·

Նահապետեան բժ· 357·
Նանէշվիլի 452·
Նայի Բէյ 8·
Նարիման Նարիմանով 500, 517·
Նարիմանով 408, 410·
Նաւասարդեան Վ· 37, 511, 524, 526·
Նաւասարդեան Կոմիտ 543·
Ներուչեւ 54·
Նեւրուզով զօր· 371·
Նեստերովսկի գնդ· 201, 220, 221, 416·
Նեվրուզ դոկտ· 269, 272, 439·
Ներկարարեան եզնիկ վարդ· 255·
Ներսէս եպսկ· 339·
Ներսէսեան խան 269·
Նժդեհ Գ· 335, 337, 340, 371, 457, 543, 548, 549, 550, 551, 553, 555, 558, 559, 563, 620·
Նիհատ 464·
Նիկոլայ Նիկոլայեւիչ 14, 17, 27·
Նիկողոսեան Թ· 120·
Նիկոլաձէ Ն· 113, 147, 148, 149·
Նորհատեան Գ· 112, 357, 389, 480·
Նորատունկեան Գ· 269, 270·
Նուսրէթ բէյ 114·
Նուրիջանեան Աւիս 378, 383, 386, 389, 394, 398, 403, 407, 408, 409, 510·
Նուրի փաշա 167, 310, 394, 448·

Շագալով 86·
Շաքիրեան Մարտին 87, 172, 420·
Շալճեան Լեւոն 538·
Շալվա Էլիաւա 643, 647·
Շահազիզ Վ· 357·
Շահ Աբաս 587·
Շահրուդաղեան Գնդ· 416·
Շահրազեան Յ· 255, 331·
Շահթախտինսկի 87, 643, 647·
Շահինեան Գ· 357·
Շահխաթունի Ա· 135, 358·
Շահխաթունեան Աւ· 22, 31, 33, 37, 46, 54, 71, 152, 303, 524·
Շահմազեան Ա· 58, 314, 331, 371, 415·
Շահնազարեան Գեր· 87, 311·
Շահնազարեան Ր· 319·
Շահնազարեան Մ· 357, 431·
Շաղոյեան Լեւոն 59·
Շամոյեան 236·
Շանթ Լեւոն 30, 269, 279, 453, 456, 457, 458, 511, 526, 608, 610, 615·
Շահումեան Ս· 54, 159, 161, 166, 167, 169, 170, 383, 387·
Շապուհ (Խնուս) 538·
Շատելվորտ գնդ· 313, 314, 315, 318, 330·
Շատուրեան Ր· 255, 421, 606·
Շարաբիէյեան Շ· 255·
Շարափեան Ա· 357, 363·
Շարդինի գնդ· 224, 225·
Շահվերտեան Ա· 516·
Շահվերտեան Գ· 378, 407·
Շաւարշեան 122·
Շելվոնիկեան զօր· 417·
Շերմազանեան 433·
Շիրինեան Արշ· 327, 330, 331, 457·
Շիրինեան 551, 622, 625·
Շիտմախէր 542·
Շիխլինսկի Ալի Ազա 333, 447·
Շիւրի բէյ 449·
Շիւրի փաշա 247·
Շէյխ-Իլ-Իսլամով 79·
Շմաւոնեան Ս· 365·
Շուլենբուրգ Կոմս 114, 148·
Շուլավեր 223–224, 225, 226, 227,
Շուրլաձէ 214·
Շաղուբարեան Գնդ· 466, 479, 480, 484·

Ուիլսըն 63, 244, 273, 342, 343, 344, 467·
Ուիլիըմ Հասկել 302, 303·
Ումանսկի Լ· 170·
Ոսկանեան Մուշեղ 625·
Ոսկերիչեան Գ· 255·
Ուսուֆ Սաբօ Օղլի 370·
Ուսուպբէգով 71, 107, 146, 147, 305, 307, 334, 339·
Ուօրդրոպ Օ· 306, 335· 361, 362, 373·

Չալդրաճեան 357·
Չալխուշեան Գր· 367, 421, 480, 606·
Չարուխճեան Լ· գնդ· 138·
Չերազ Վ· 367·
Չէորէֆչեան Գ· եպս· 256·
Չիկալին 79·
Չիլինկիրեան Արտ· 45, 72, 158, 159, 163, 361, 365, 511, 524, 525·
Չիչերին 446, 452, 453, 456, 457, 461, 484, 495, 519, 522, 529, 530, 536, 537, 608·
Չմշկեան Ց· 261, 263, 267·
Չխենկելի Ս· 18, 41, 71, 79, 82, 83, 84, 96, 97, 102, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 112, 113, 114, 146, 147, 148, 149, 151·
Չոպանեան Արշ· 269, 270, 272·
Չոլօ 328·
Չոլախեան Հ· 397·
Չուբար Պ· 318·

Պանգուրայեւ 346·
Պապիկեան վարդ· 30, 364·
Պապովեան 236·
Պապովեան Ա· 422·
Պապայեան Մ· 434·
Պապաջանեան Մ· 13, 18, 40, 41, 43, 44, 45, 47, 103, 153, 178, 179, 186, 200, 587, 589, 596, 600·
Պարսնակեան Կ· 157·
Պարոնեան Մ· 330·
Պեպինով 147·
Պերեկրեոստով գնդ· (փոխ) 123·
Պետրին 435·
Պերճանին 446·
Պետրոսեան Գ· 182, 222·
Պետրոսեան Հ· 516·
Պետրոսեան Վ· (վաճ) 538·
Պէհաէտտին – Շահիր 257·
Պիչիկեան Արշ· 251·
Պրժեւալսկի զօր· 89·
Պրեզիրով 65·
Պրիբիլսկի (Անասնաբոյժ) 397·
Պոնափարթեան զօր· 30, 256, 257·
Պոպով Տ· 358, 423·
Պոլոյի Արշակ 543·
Պոնափարթեան խաչ· 259·
Պուանկարէ 244·
Պուատեբար 250, 361, 362·
Պօղոսեան Աւ· 429·
Պօղոսեան Ս· բժ· 26·
Պօղոսեան (Սիմոն) 322·
Պօղոսեան Մ· (Գողթն) 538
Պօղոս Բէյ Մսրլը 269·
Պօղոս Նուպար 4, 15, 25, 200, 254, 258, 260, 266, 268, 269, 270, 271, 275, 276, 277, 286, 287, 288, 289, 290, 291, 602·

Ջաղէքեան 399·
Ջաղէքեան Գ· 263, 267·
Ջալալեան Սեդրակ 351·
Ջալիլ աղա Մահմէտ Օղլի 370·
Ջամալեան Ա· 62, 179, 180, 183, 184, 206, 207, 208, 209, 210,

213, 224, 225, 278, 299, 381, 382, 390, 392, 413, 457, 477, 482·
Ջամփոլադեան 10·
Ջաւիդ բէյ 202·
Ջափարիձէ 161·
Ջաֆարով Մ· 18, 41, 43, 71, 130, 147, 295, 346·
Ջեմալ փաշա 569·
Ջեմալ Ազմի 569·
Ջէյմս Ռէյ 307, 334, 335·
Ջէմիլ Ջահիդ բէյ 310·
Ջիւանշիր Բեհբութ 87, 159·
Ջոլախեան Հ· 72·
Ջորջ Լոյդ 244·
Ջուղելի 57, 99, 471·

Ռայկրօֆտ զօր· 224, 225·
Ռամշվիլի 23, 54, 57, 78, 100, 107, 151, 205, 206, 207, 210, 211, 212, 213, 237, 345, 346, 348, 375, 387·
Ռամազով գնդ· 214·
Ռաուփ բէյ 80, 81, 82, 83, 96, 97·
Ռասուլ – Ջատէ 71, 105, 107, 108, 113, 146, 323·
Ռափիեւ Բժ· 87·
Ռիզա Թեւֆիկ բէյ 440·
Ռէմզի 464, 465·
Ռուստամբէգով 99, 319·

Սաբախտարաշվիլի Կ· 237, 346, 531·
Սազանով 14, 15, 589·
Սազանդարեան Տ· 330, 625·
Սաթթար 339·
Սալարիձէ 86·
Սահակեան Ա· 72, 87, 103, 107, 113, 180, 181, 185, 186, 187, 242, 264, 278, 280, 300, 358, 361, 362, 364, 387, 511·
Սահակեան Սպայ 123·
Սահակեան Կորիւն վարդ· 256·
Սահակեան Մ· 378·
Սաղաթելեան Ց· 180, 251·
Սամարցեան գնդ· 181·
Սամսոն 584·
Սայեան դոկտ· 269·
Սայիտ Հալիմ փաշա 55, 569·
Սասունի Ա· 256, 259, 263·
Սասունի Կ· 26, 30, 419, 528·
Սարգսեան Լեւոն 397, 482·
Սարգսեան Ե· 187, 429·
Սարգիսբէգեան Գ· 543·
Սարեան Մ· 353·
Սարտիկեան Մեսրոպ Բէգ 327, 331, 399·
Սարատիկեան Մեսրոպ 351·
Սարուխանեան 399, 410, 412, 452·
Սաֆո 331, 457, 552, 622·
Սաֆրաստեան Արամ 279, 361,
Սափարեան Արշակ 30·
Սաֆիֆիւրդսկի 113, 147, 369·
Սեդմա (Ալբերդ) 367·
Սելահէտտին բէյ 462, 463·
Սիլիճ 502, 506, 507·
Սեմեոնով 76, 99, 104, 105, 556, 559·
Սեպուհ 30, 59, 89, 90, 171, 370, 387, 392, 397, 478, 479, 482·
Սերգօ 496, 532·
Սերգէյ Արկադիեւիչ վարդանեան 452·
Սեւումեան 432·
Սիլիկեան զօր· 60, 103, 110, 121, 122, 128, 136, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 185, 390, 413, 479, 511·
Սիճապեան Գ· 269·
Սիկորսկի 397·
Սկոբլեւ 71·
Սմբատ 59, 140, 256, 479, 484,

546·
Սմիրնով 62·
Սմկոյ 296·
Սողոմոնեան Հմ· 365·
Սոտնիկեան 431·
Սուլթանով Դր· 71, 146, 306, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 322, 325, 333, 371, 372, 375·
Սուլթանով Ջալիլ Բէգ 327·
Սուլթանով (Նազարբէգ) 327·
Սուրգուլաձէ 147, 148·
Սպարապետ Սուրէն 528, 543·
Սպենդիարեան Ալ· 432·
Սպերանսկի 68·
Սրապիոնեան Սարգիս (Լուկաշին) 13·
Ստարցեւ 119·
Ստարկ 472·
Ստալին 169, 496, 497·
Ստամբոլցեան Ա· 47·
Ստեփանեան Ց· 34, 606·
Ստեփանեան Ստեփան 322, 330, 332, 421·
Ստեփանեան Մկ· 429·
Ստոկս գնդ· 171, 485·
Սոկրատ Բէգ Մելիք-Շահնազարեան 311·

Վաչեան Աս· 157·
Վալադեան 584·
Վահան Եպս· 320, 372·
Վահաբ էֆ· 339·
Վայցեխովսկի 559·
Վան-Փուշ 256, 263·
Վարանդեան Մ· 269·
Վարդան 10, 157, 161, 388, 389, 584, 587, 588·
Վարդանեան Լեւոն 322·
Վարդանեան պրոֆ· 13·
Վարդանեան Իգնատիոս 520·
Վարդապետեան Յ· 256·
Վարդիկ Բ· 358·
Վարշամեան Գէորգ 248, 336, 431, 511, 558·
Վեզենդոկ Ֆոն Օ· 114, 148·
Վելիկանով 542, 561·
Վելուչց 170·
Վեհիբ 62, 63, 64, 69, 71, 85, 86, 88, 89, 90, 92, 99, 108, 109, 110, 111, 114, 116, 180, 186, 596, 600·
Վենիզելոս 361, 462·
Վեստենենկ 6·
Վեսելովսկի Բ· 22·
Վեֆիլեան գնդ· 144, 479, 480·
Վեֆիլով 124, 349, 374, 376·
Վէզիրով Ա· Ի· 159·
Վէյնմարն Պ· 352·
Վերմիշեան Քրիստ· 37, 40, 46, 252, 261, 263, 267, 353·
Վեշապելի 97·
Վիշինսկի Զօր· 58, 60, 91, 110·
Վիցերս Դըգլէզ 225·
Վիսարիոնովիչ 348·
Վլադ Նարօկով 25·
Վորոնցով – Դաշկով 10·
Վրացեան Սիմոն 13, 35, 36, 37, 40, 47, 72, 103, 112, 113, 152, 180, 256, 257, 278, 282, 290, 361, 363, 382, 390, 392, 430, 477, 488, 490, 491, 497, 498, 503, 524, 525, 526, 527, 528, 530, 533, 541, 585, 590, 608, 619, 642·

Տադեան 215·
Տամատեան Մ· 269·
Տեզոյեան 434·
Տէր – Աբրահամեան Արշ· 365·
Տէր – Աբրահամեան Մ· 357·

Տէր – Անտոնեան Յ· 338·
Տէր – Առաքելեան Գնդ· 480·
Տէր – Աստուածատրեան Ա· 315·
Տէր – Գաբրիէլեան Ս· 170, 446, 458, 519, 567, 614·
Տէր – Գրիգորեան Ա· Իճժ· 428·
Տէր – Գրիգորեան Գ· 365·
Տէր – Գրիգորեան Մ· 26, 224·
Տէր – Գէորգեան Միխ· 429·
Տէր – Դանիէլեան Աբրամայիս 319·
Տէր – Դաւթեան Մ· 427, 428, 511·
Տէր – Դաւթեան Պ· 371, 548, 549, 550·
Տէր – Դաւթեան Յ· Բժ· 300, 361, 367, 431, 524, 525, 558·
Տէր – Թովմասեան Ա· 264·
Տէր – Ջաֆարեան Յակ· 30, 34, 59, 279, 358, 477, 528·
Տէր – Հայրապետեան Սահակ 331·
Տէր – Ղազարեան Ղ· 34, 46, 47, 71, 103, 157·
Տէր – Ղազարեան Ն· 163, 166·
Տէր – Ղազարեան Ս· 157, 159, 236·
Տէր – Մարտիրոսեան 223, 365·
Տէր – Մինասեան Ռ· 26, 47, 79, 103, 122, 152, 172, 180, 307, 361, 382, 390, 392, 477, 484, 524, 543, 544·
Տէր – Մինասեան Ե· 199·
Տէր – Մինասեան Գ· 551, 554, 559, 620, 628, 642·
Տէր – Միքայէլեան Ա· 279, 434·
Տէր – Միքայէլեան Յ· Բժ· (Օվիճ) 136, 361, 364, 427, 511·
Տէր – Միքայէլեան Հայկ 87, 157, 159, 163, 364·
Տէր – Միքայէլեան Ն· Իճժ· 427, 428·
Տէր – Մկրտիչեան Գ· 330·
Տէր – Մկրտիչեան Մ· 554·
Տէր – Մովսէսեան 116·
Տէր – Յակոբեան Ա· 257, 269·
Տէր – Յակոբեան Յ· 34, 279, 365, 477, 528·
Տէր – Յակոբեան Գր· Բժ· 120, 365·
Տէր – Յակոբեան Զօր· 144·
Տէր – Յակոբեան Փրոֆ· 270, 272·
Տէր – Յարութիւնեան Գ· 72, 120, 365, 516·
Տէր – Յովհաննիսեան Մկուչ 221·
Տէր – Նիկողոսեան Գնդ· 220, 221, 227, 228·
Տէր – Խաչատրեան Յ· 532, 606·
Տէր – Խաչատրեան Գր· 120, 187, 218, 421·
Տէրոյեան Վ· 256, 257, 259·
Տէր – Պետրոսեան Յ· 331·
Տէր – Պետրոսեան Վարդ· 519·
Տէրունի Յ· 327, 328, 331, 332·
Տէրվիշեան Ե· 269·
Տէրպէտէրեան Մ· 269·
Տէր – Պօղոսեան Ա· Բժ· 367·
Տէր – Պօղոսեան Մ· 167, 170, 364·
Տէր – Սարգսեան Սիզօ 351·
Տէր – Սարգիսեան Գնդ· 128·
Տէր – Սարգիսեան Լ· Օրդ· 264·
Տէր – Սիմոնեան Դրաստամատ 403, 406, 407, 650·
Տէր – Ստեփանեան Ն· Դոկտ· 269, 270, 282·
Տէրտէրեան Հ· 453, 458, 477, 491, 500, 501, 503, 528, 533, 642·
Տէր – Օհաննեան Գ· 58, 218·
Տէր – Օհաննեան Յ· 40, 47, 157, 166·
Տիգրան – Մեծ 436·
Տիգրաններ Սիրական 26, 33, 46, 71, 180, 197, 215, 217, 218, 238, 243, 244, 267, 312, 345, 346, 363, 584·
Տիլիչէյեւ 227·

Տիմչենկո 227, 228·
Տոշեան Թ· 511·
Տիրոսեան Ա· 357·

Բապըրք Ա· Թափք 602·

Ցինցադէ 363·
Ցիցիանով Զօր· 208·
Ցուլուկիձէ Զօր· 210, 214, 219, 221, 222, 224·

Փանեան 339·
Փաշայեան (Հասան) 90·
Փասդրմաճեան Գ· 269, 272·
Փափազեան վահան 13, 26, 28, 30, 34, 59, 103, 269, 349·
Փեշկով Զօր· 15·
Փիլոս 479·
Փիրալեան Ց· 22, 242·
Փիրումեան Դանիէլ Բէգ 122, 140·
Փիրումեան Բ· 251·
Փիրումեան Զօր· 262, 264, 389, 479, 480, 611·
Փիրումեան Սիմ· 43, 71, 123, 126, 129, 135, 136, 454·

Քալանթարեան Տիկ· 367, 434·
Քալանթարեան Լ· 164, 364, 379, 524·
Քաջազնունի Ց· 33, 34, 37, 71, 72, 75, 77, 79, 83, 97, 103, 105, 107, 113, 153, 157, 159, 178, 180, 182, 183, 186, 187, 189, 197, 206, 207, 209, 210, 241, 242, 256, 328, 416, 487, 488, 491, 494, 511, 512, 514, 525, 526, 532, 540·
Քաջազնունի Ռուբէն 596, 600·
Քաջբերունի Ռ· 157, 431·
Քաջունի Եղնիկ 30·
Քարամեան Ս· Մ· 330·
Քեազիմ Բէյ 111, 381·
Քեազիմ Գարաբէքիր 144, 447, 448, 449, 462, 464, 476, 477, 481, 482, 487, 495, 503, 504, 522, 643, 644, 645, 647, 648·
Քեազումով Սէյիդ 127·
Քեամիլ Բէյ Բժ· 203·
Քելէկեան Տ· խան 269·
Քեռի 10, 11, 581, 584, 588·
Քերենսքի Ա· 25·
Քէօսապապեան Արտուշ 234·
Քինգի 343·
Քիշմիշեան Գնդ· 144, 346·
Քիստեան 425·
Քիրով 446·
Քլէմանսոյ 273, 304·
Քոչարեան Ղ· 337, 340·
Քոչարեան Ա· 218, 219·
Քորի Զօր· 316·
Քվինիքաձէ Զօր· 148·
Քրես Ֆոն 179, 180, 183, 184, 195, 208, 211·
Քրմոյեան վ· 26, 256, 257, 259, 263, 264·
Քրէյն 343·

Օգանէզեան Միխայէլ 251·
Օգանովսկի 583, 588·
Օդիշելիձէ Զօր· 63, 69, 86, 89, 109, 110, 111, 112, 113, 115, 148·
Օգանեան Մեր· 429·
Օհանեան Ա· (վան) 538·
Օհանջանեան Համօ 33, 34, 54, 71, 116, 145, 149, 200, 269, 374, 387, 392, 453, 458, 477, 485, 486, 487, 488, 509, 511, 524, 525, 605·
Օհանջանեան Սարգ· 121, 239·

Օնիաշվիլի 104, 105·
Օդաբաշեան Ն· 484·
Օտրեադ 588·
Օլանստոյ 273·
Օխսան Բէյ 114·
Օրջոնիկիձէ Ս· 446, 496, 497, 500, 501, 540, 541, 545·
Օրջոնիկիձէ Տիկին 496·
Ֆիզուլլաբէգով 128·
Ֆիյէրկօվսկի Փոխ· Գնդապետ 222·
Ֆէվզի Ահմէտ 464·
Ֆնտխլեան Գ· 269, 270·
Ֆորեստիէ – Ուօկեր Զօր· 243, 245, 312·
Ֆրանգեան Երւ· 365·
Ֆրանկլէն Բույոն 462·
Ֆրանկել – Շտէյն 183, 184·

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Գէոլ 301·
Աբխազաւա 57·
Ագարակ 301·
Ագուլիս 248, 335, 337, 338, 339, 340·
Ագա 155·
Ալբաբայ 369·
Ազրբէջան 74, 76,77,147,149,153, 167, 173, 174, 181, 189, 206· 211, 245, 250, 262, 264, 292, 293, 294, 295, 296, 298, 299, 303, 305, 306, 307, 308, 309, 310, 312, 313, 314, 315, 317, 318, 319, 320, 321, 322, 326, 330, 331, 332, 333, 334, 335, 338, 339, 340, 346, 349, 350, 354, 358, 359, 360, 361, 367, 369, 370, 371, 372, 373, 375, 376, 377, 378, 381, 385, 386, 387, 388, 391, 394, 404, 407, 410, 445, 446, 447, 448, 450, 453, 456, 457, 463, 466, 467, 475, 476, 486, 496, 500, 510, 517, 522, 523, 527, 539, 542, 546, 547, 553, 557, 558, 565, 568, 596, 608, 612, 615, 616, 618, 621, 622, 625, 626, 643, 645, 647, 648·
Ալաշկերտ 12, 14, 26, 55, 59, 94, 95, 122, 138, 296, 476·
Ալագեազ 128, 142, 154, 526·
Ալեքսանդրապոլ 22, 31, 55, 65, 86, 89, 102, 103, 104, 111, 112, 114, 115, 119, 124, 125, 128, 136, 138, 139, 142, 143, 144, 145, 147, 154, 155, 180, 192, 201, 202, 203, 216, 241, 243, 244, 251, 256, 351, 353, 356, 361, 362, 363, 367, 379, 381, 385, 388, 389, 397, 398, 400, 403, 405, 406, 408, 410, 412, 431, 433, 434, 450, 452, 468, 477, 482, 483, 485, 489, 495, 496, 498, 499, 504, 507, 518, 519, 520, 522, 553, 584, 586, 587, 615, 643, 648·
Ալեաք 299·
Ալիզըզլ 123, 126, 128·
Ալիջին 155·
Ալլահվերդի 207, 215, 221, 347, 349·
Ալեքսանդրէտ 200, 341·
Ախալխալաք 22, 23, 60, 114, 115, 142, 205, 206, 214, 216, 217, 218, 224, 225, 242, 245, 251, 347, 437, 504, 523, 586·
Ախալցխա 60, 67, 102, 114, 142, 147, 150, 243, 245, 292·
Ակորի 215, 347·
Աղհամզալու 129, 144·
Աղստաֆա 181·
Աղբուլաղ 154·
Ամերիկայի Միացեալ Նահանգներ 3, 15, 195, 200, 241, 242, 268, 269, 286, 342, 343, 362, 363, 367, 450, 422, 499, 508, 566, 600·
Այնթապ 269·

Անատոլիա 78, 79, 83, 105, 344, 447, 448, 463, 516·
Անգորա 415, 447, 448, 449, 460, 464, 482, 518, 536, 644, 645, 646·
Անդրկովկաս 15, 17, 21, 22, 23, 32, 33, 35, 38, 39, 40, 41, 43, 46, 53, 54, 63, 64, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 78, 80, 81, 82, 83, 84, 85, 96, 97, 98, 100, 101, 102, 104, 105, 106, 107, 108, 109, 113, 114, 115, 117, 118, 131, 132, 134, 135, 146, 147, 151, 153, 160, 185, 188, 211, 238, 243, 244, 245, 246, 247, 263, 285, 297, 306, 310, 336 343, 344, 352, 358, 373, 374, 377, 381, 382, 438, 454, 474, 516, 523, 530, 546, 550, 592, 594, 644, 645, 646, 647, 648·
Անի 142, 427, 434, 644, 646·
Անգլիա 3, 76, 200, 245, 246, 250, 269, 270, 343, 373, 422, 440, 475, 485·
Անդրկասպեան 381·
Արդահան 80, 83, 85, 86, 87, 96, 100, 244, 297, 342, 347, 370, 402, 421, 437, 448, 586·
Աշաղի – Ջանախչի 155·
Աշտարակ 122, 154, 255, 350, 356, 367, 429, 477, 539·
Աջարիա 102, 292, 647·
Ապարան 429·
Ասկերան 373·
Աստրախան 169, 582·
Ատանա 4, 272, 341·
Ատրպատական 563, 583, 587·
Արաքս 128, 138, 139, 297, 301, 324, 335, 485, 504·
Արագած 65, 114, 138, 429, 526·
Արծափ 65·
Արարատեան դաշտ 119, 136, 137, 138, 139·
Արալըխ 128·
Արդւին 97·
Արարատ 258, 268·
Արաջան 298·
Աղջա – Կալա 142·
Արփաչայ 482·
Արհաջ 65, 138·
Արէշ 161, 354·
Արփա 155·
Աւստրիա 186·
Աւստրօ – Հունգարիա 3, 179, 195·
Աւդանիստան 169, 293·

Բաբերդ 90·
Բաթում 80, 82, 83, 85, 93, 97, 98, 100, 102, 109,113, 114, 143, 144, 145, 146, 147, 149, 151, 153, 154, 155, 156, 178, 179, 185, 190, 242, 243, 244, 245, 254, 302, 353, 365, 422, 448, 460, 506, 515, 645, 648·
Բալկաններ 15, 286·
Բագու 21, 33, 67, 82, 87, 104, 108, 114, 122, 139, 146, 149, 155, 157, 158, 159, 160, 161, 162, 164, 165, 166, 167, 168, 171, 172, 173, 174, 191, 192, 194, 213, 251, 293, 294, 295, 296, 299, 305, 306, 310, 313, 315, 319, 334, 339, 340, 344, 349, 369, 372, 373, 374, 376, 377, 382, 385, 386, 394, 399, 404,408,410, 448, 449,450,452, 455, 456, 457, 459, 464, 465, 466, 473, 474, 496, 500, 510, 517, 518, 526, 546, 600, 609, 614, 616·
Բալթիկ Ծով 53·
Բայազէտ 26, 65, 123, 128, 136·

Բաշ – Աբաբաճ 116, 140, 142, 182, 195, 572·
Բաշ – Գեաուճի 256, 630·
Բաշկենդ 128·
Բաշ – Նորաշէն 298·
Բաշխեաբաճ 155·
Բասբա 353, 529·
Բասէն 26, 65, 68·
Բորչալու 130, 147, 206, 207, 208, 216, 218, 225, 226, 332, 336·
Բարգուշատ 22·
Բարդուս 297·
Բերլին 80, 149, 158, 569·
Բեսարաբիա 435·
Բերլինի վեհաժողով 5, 200·
Բելգիայ 305, 422·
Բէոյիւֆ – վէդի 297, 298, 299, 300, 301: 378, 381, 415, 416, 417, 418·
Բիքլիս 5, 14, 341·
Մեծն – Բրիտանիա 14, 317, 600·
Բուլգարիա 179, 186, 195, 269, 422, 582·
Բուլանըֆ – Մանազկերտ 26·

Գաւրէշամի 65·
Գայլի Դրունֆ 305·
Գանձակ 22, 45, 57, 65, 68, 82, 87, 88, 122, 123, 146, 147, 158, 159, 160, 161, 166, 167, 309, 310, 326, 327, 347, 391, 501·
Գերմանիա 3, 5, 6, 9, 104, 145, 147, 148, 149, 179, 184, 186, 208, 245, 422, 578·
Գէռլ 86, 369·
Գիջա 300·
Գիւմրի 506·
Գիւլիստան 309, 372, 453·
Գողթն 335, 336, 337, 339, 340·
Գորիս 328, 330, 331, 333, 339, 371, 457, 547, 554, 618, 625·
Գուրիա 102·

Դաւալու 123, 128, 129, 132, 134, 135, 244, 245, 248, 297, 299·
Դաղստան 82, 107, 496·
Դարալագեազ 128, 256, 298, 305, 326, 328, 351, 364, 365, 457, 476, 543, 547, 561, 563, 618·
Դերջան 26, 116·
Դիատին 26·
Դիզակ 311, 372, 373·
Դիլիջան 88,122,139, 180,181,194, 195, 209, 210, 220, 222, 356, 294, 350, 351, 379, 380, 399, 400, 402, 412, 414, 432, 450, 484, 542, 615·
Դիւշէք 118·
Դաշքուռուն 127·
Դսեղ 116, 195, 225·

Եգիպտոս 269, 270, 286, 422, 586, 614, 615·
Երեւան 22, 28, 31, 34, 45, 55, 67, 82, 88, 89, 91, 103, 115, 116, 119, 120, 121: 122, 124, 125, 126, 128, 129, 130, 131, 135, 136, 137, 138, 139, 141, 144, 146, 166, 178, 179, 180, 182, 184, 191, 192, 194, 196, 198, 200, 202, 205, 208, 215, 219, 224, 238, 239, 240, 241, 242, 244, 245, 248, 250, 251, 252, 255, 256, 261, 263, 264, 266, 267, 268, 273, 275, 276, 282, 285, 286, 289, 290, 293, 294, 295, 299, 300, 302, 305, 306, 307, 310, 312, 317, 330, 337, 338, 339, 340, 342, 350, 351, 353, 354, 356, 357, 358,

360, 361, 363, 364, 367, 373, 377, 379, 380, 385, 386, 387, 388, 389, 390, 396, 397, 400, 401, 409, 413, 418, 421, 422, 424, 425, 427, 431, 432, 433, 435, 438, 446, 450, 452, 453, 454, 456, 457, 458, 459, 466, 470, 477, 478, 479, 480, 482, 484, 485, 495, 497, 499, 500, 503, 504, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 536, 537, 539, 540, 542, 544, 545, 546, 556, 561, 563, 602, 609, 615, 616, 618, 629, 650·

Ելենովկա 181, 411·

Եկատերինոդար 245·

Երզնկա 26, 54, 55, 60, 62, 65, 68, 69, 89, 90, 91, 92, 93, 140·

Երուսաղէմ 272, 273·

Եւրոպա 242, 267, 437, 460, 485, 499, 505, 508, 511, 531, 612·

Զարուշատ 369, 370·

Զանգի 292·

Զաքաթալա 82, 147·

Զանգիբասար 301, 411, 414, 415, 416, 417, 418, 419, 486·

Զարուղ 313, 331, 333, 556·

Զանգեզուր 22, 146, 243, 254, 292, 296, 228, 299, 305, 306, 307, 310, 311, 312, 314, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 337, 339, 340, 351, 353, 371, 388, 394, 445, 446, 447, 450, 456, 457, 458, 461, 472, 484, 500, 502, 517, 543, 544, 546, 547, 548, 551, 552, 553, 554, 555, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 608, 611, 613, 618, 619, 620, 621, 622, 624, 625, 626, 628, 629, 634·

Զինջիրլու 298·

Զիւին 298·

Զէյվա 140, 144·

Զէյթուն 60, 140·

Զուիցերիա 269·

Էլփինչայ 155, 298·

Էնզելի 170·

Էջմիածին 6, 114, 122, 123, 131, 139, 140, 142, 144, 146, 154, 183, 198, 202, 249, 250, 253, 255, 262, 293, 299, 301, 307, 316, 329, 340, 351, 353, 362, 402, 413, 427, 430, 431, 478, 504, 526, 539·

Էրզրում 5, 7, 8, 11, 14, 26, 33, 60, 65, 85, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 102, 122, 136, 202, 203, 247, 393, 447, 448, 449, 463, 476, 487, 519·

Թաւրիզ 251, 298, 339·

Թաշկենդ 353·

Թաթարստան 52·

Թաղաքենդ 144·

Թերեք 496·

Թեհրան 200, 349·

Թիմար 27·

Թիփլիս 10, 12, 13, 17, 18, 19, 20, 23, 27, 33, 34, 45, 46, 47, 52, 53, 54, 58, 59, 63, 65, 68, 71, 72, 79, 82, 83, 85, 88, 91, 93, 96, 97, 100, 102, 103, 104, 109, 110, 111, 112, 113, 117, 120, 123, 124, 125, 129, 130, 136, 137, 139, 145, 146, 147, 148, 150, 152, 153, 154, 157, 158, 160, 161, 167, 177, 178, 179, 180, 181, 182, 184, 195,

196, 198, 199, 200, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 213, 215, 216, 219, 221, 222, 223, 224, 225, 231, 232, 233, 234, 236, 237, 238, 242, 251, 252, 266, 268, 293, 304, 305, 306, 307, 318, 329, 334, 342, 343, 344, 345, 346, 347, 349, 350, 354, 355, 359, 361, 367, 373, 374, 379, 381, 382, 383, 385, 401, 403, 408, 422, 423, 446, 454, 465, 471, 475, 482, 484, 491, 502, 525, 530, 531, 539, 540, 541, 567, 584, 585, 586, 587, 588, 611, 612·
Թիւրքիա 3, 4, 5, 6, 8, 9, 12, 14, 15, 33, 53, 55, 58, 64, 67, 70, 76, 77, 78, 79, 80, 83, 84, 88, 97, 98, 99, 100, 101, 105, 106, 114, 145, 147, 149, 154, 179, 184, 192, 206, 231, 234, 243, 246, 247, 271, 272, 285, 292, 297, 303, 317, 339, 343, 347, 348, 361, 376, 415, 447, 450, 458, 460, 461, 473, 487, 504, 505, 506, 507, 514, 515, 517, 518, 522, 523, 535, 609, 612, 615, 619, 643, 645, 647, 648·
Թիւրքահայաստան 274, 285, 456·
Թուրքեստան 450·
Թրակիա 344·
Թոմիս 80·

Ժըննէ 529·

Իգդիր 60, 65, 138, 139, 253, 350, 367, 370, 402, 427, 450, 581, 583, 584, 588·
Իզմիր 296, 422, 462·
Իլիջա 91, 92·
Իջեւան 353, 399, 400, 477, 500, 510·
Իսկէնտէրուն 272·
Իտալիա 3, 4, 250, 269, 270, 343, 373, 422, 440, 462·
Իւվայ 127·

Լահէ 24·
Լարս 117·
Լեհաստան 454·
Լեռնականներ 264·
Լիբանան 5·
Լոնդոն 14, 80, 420, 529, 536, 564, 590, 619·
Լոռի 22, 23, 60, 178, 194, 195, 201, 202, 204, 205, 206, 207, 208, 209, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 222, 226, 347, 349, 353, 437, 515, 517, 523·
Լոզան 568·

Խանդուխլար 124·
Խանուալ 154·
Խաչէն 372, 373·
Խալֆալու – Սուլթանապատ 138·
Խաթունարխ 144·
Խաչմազ 160, 161·
Խանիճենդ 325·
Խարբերդ 5, 14, 341, 343·
Խանասօր 60·
Խերթվիս 147·
Խորոսան – Ջիւիճ 297·
Խոյ 581·
Խնձորեսկ 331·
Խնուս 26, 59, 60, 88, 91, 93, 328·

Ծալկա 22·
Ծաղկաձոր 255·

Կարս 22, 31, 33, 45, 56, 65, 67, 80, 82, 83, 86, 89, 94, 96, 97, 100, 103, 108, 110, 111, 112, 113, 139, 142, 155, 181, 202, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 277, 286, 292, 293, 294, 295, 297, 298, 301, 310, 329, 342, 351, 353, 354, 356, 358, 363, 364, 367, 368, 369, 370, 389, 398, 402, 412, 430, 432, 434, 448, 450, 452, 460, 467, 468, 476, 477, 478, 479, 480, 481, 496, 497, 504, 519, 522, 584, 587, 588, 609, 612, 614, 615, 643, 645, 648·
Կարին 26, 341, 460, 481·
Կարաուրգան 103·
Կաղզուան 96, 248, 250, 297, 301, 346, 389, 466, 468, 581, 583, 584·
Կարեագին 22·
Կազան 450·
Կարալար 300·
Կայալու 155·
Կիլիկիա 4, 6, 10, 14, 15, 16, 52, 200, 268, 272, 286, 343, 448, 462, 589·
Կողբ 138, 240, 250, 301, 347, 350, 415, 465, 644, 646, 647·
Կովկաս 8, 9, 10, 11, 13, 14, 16, 23, 24, 26, 28, 37, 43, 44, 45, 47, 51, 58, 63, 64, 65, 67, 68, 69, 75, 76, 87, 88, 90, 106, 107, 114, 118, 122, 123, 149, 150, 158, 160, 179, 181, 199, 206, 211, 269, 271, 272, 280, 293, 296, 310, 316, 342, 345, 348, 378, 447, 453, 540, 565, 566, 578, 587, 610, 643, 644·
Կոտայք 255, 562·
Կոքուզ 300·
Կրկըժան 316·
Հայաստան 5, 11, 14, 15, 16, 26, 104, 114, 116, 137, 144, 146, 149, 152, 153, 154, 155, 156, 157, 172, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 189, 190, 191, 192, 193, 194, 196, 198, 199, 200, 201, 202, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 216, 217, 218, 219, 220, 225, 231, 232, 234, 237, 238, 239, 241, 242, 243, 244, 246, 247, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 258, 260, 261, 262, 263, 264, 265, 267, 268, 269, 272, 274, 275, 276, 277, 280, 281, 282, 284, 285, 286, 287, 289, 290, 292, 293, 294, 295, 296, 297, 299, 303, 305, 306, 308, 312, 313, 320, 323, 324, 325, 328, 331, 334, 336, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 361, 362, 363, 365, 367, 368, 369, 370, 373, 374, 375, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 387, 389, 390, 391, 393, 394, 397, 399, 400, 402, 405, 406, 410, 414, 415, 418, 420, 421, 422, 423, 425, 432, 433, 436, 437, 438, 439, 440, 445, 446, 447, 450, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 464, 465, 466, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 482, 485, 487, 489, 491, 492, 494, 495, 497, 498, 499, 500, 501, 503, 505, 507, 508, 510, 512, 513, 514, 516, 517, 518, 521, 522, 525, 526, 527, 529, 530,

531, 532, 535, 537, 540, 543, 545, 546, 553, 554, 555, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 572, 573, 578, 596, 598, 604, 608, 609, 611, 612, 613, 614, 615, 616, 618, 619, 621, 622, 623, 625, 627, 628, 629, 643, 645, 646, 647, 648·
Հալիճոր 550·
Հասան - Ղալա 68, 92·
Հալէպ 269, 272·
Համամլու 116, 154, 203, 483, 519·
Հայոց - Ձոր 65·
Հաշտարխան 353·
Հնդկաստան 269, 270, 293, 422, 472·
Հռոմ 80, 529·
Հրազդան 427, 562·

Ղարանլուխ 402·
Ղափան - Միգրէ 327, 328, 330, 331, 457, 547, 554, 624·
Ղարախանլու 140·
Ղարախաչ 155, 298, 307·
Ղալթախչի 201·
Լայբալիքենդ 316, 318, 319·
Ղարաբաղ 122, 146, 147, 158, 184, 243, 245, 264, 292, 295, 300, 306, 307, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 330, 331, 334, 346, 370, 371, 372, 373, 374, 375, 377, 387, 388, 391, 394, 407, 414, 418, 445, 446, 447, 450, 454, 455, 456, 458, 467, 472, 484, 500, 517, 523, 543, 546, 547, 556, 557, 559, 608, 611, 612, 613, 618·
Ղազախ 22, 60, 181, 195, 206, 222, 374, 375, 387, 407, 451, 472, 476, 484, 615·
Ղարխուն 301·
Ղամըշլու 301·
Ղարաքիլիսա 55, 60, 88, 116, 117, 144, 181, 195, 201, 202, 203, 215, 218, 219, 225, 237, 256, 302, 350, 351, 364, 367, 379, 389, 414, 450, 483, 519, 549·
Ղամարլու 125, 127, 128, 129, 133, 134, 143, 144, 256, 299, 350, 356, 389, 417, 427, 527, 537, 539, 540, 542, 543, 562·
Ղըզըլ Ջախչախ 368, 481·
Ղրմըզլու 142·
Ղրիմ 105, 450, 582·

Ճաւտ 269·
Ճապոն 422, 440·
Ճորոխ 26·

Մասիս 137·
Մամախաթուն 65, 90·
Մազրա 112·
Մակու 55, 140, 418·
Մարաշ 341·
Մարսէյլ 610, 614·
Մալթա 247·
Մալայեան կղզի 293·
Մեղրի 634·
Մերդենեք 86, 87, 416·
Միլի 292·
Միլիտան 306·
Միլլի Ձոր 255·
Միջագետք 269, 422·
Մոսու 65·
Մուշ 26, 59·
Մոսկուա 12, 13, 26, 30, 34, 35, 67, 158, 393, 399, 432, 446,

447, 448, 449, 452, 453, 454, 456, 457, 459, 460, 463, 484, 495, 504, 506, 515, 517, 518, 522, 529, 531, 536, 539, 544, 559, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 643, 644, 645, 646, 647, 648·
Մցխեթ 118·

Յունաստան 269, 296, 373, 462·

Նախիջեւան 125, 132, 136, 150, 222, 240, 244, 245, 247, 292, 293, 294, 295, 296, 298, 305, 307, 308, 323, 324, 326, 336, 338, 339, 346, 374, 375, 418, 447, 457, 458, 485, 500, 505, 517, 522, 546, 557, 560, 608, 611, 613, 647, 648·
Նէջերլու 144·
Նիկոլայեւկա 516·
Նոր – Նախիջեւան 13·
Նոր – Բայազէտ 240, 241, 256, 307, 351, 353, 356, 363, 389, 400, 402, 411, 412, 429, 432, 452, 477, 558·
Նորաշէն 124, 248·
Նուխի 60, 159, 160, 354·

Շարուր 128, 243, 244, 245, 248, 305, 333, 346, 419, 447, 476, 505, 522, 547·
Շարուր – Նախիջեւան, 139, 146, 277, 292, 293, 295, 297, 298, 299, 300, 301, 305, 306, 309, 329, 375, 415, 529, 543, 544, 547·
Շաղաբլու 155, 307·
Շահալին 516·
Շահթախթ 132, 298, 299·
Շամախ 159, 161, 165, 354·
Շիրակ 114, 142, 181, 203, 204, 248, 430, 432, 518·
Շիրազլու 300·
Շուշի 22, 60, 88, 126, 247, 305, 309, 310, 314, 321, 333, 341, 372, 373, 547, 559·

Ուաշինկթոն 80·
Ուզունլար 214 ,215·
Ուլուխանլու 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 202, 298·
Ուփայ 450·

Չաճախչի 298·
Չըլդըր 369, 370·
Չինգիլ 138, 139·
Չոլոֆ 102·
Չորաճիեարա 144·
Չրախլու 115·

Պաղեստին 16·
Պարսկաստան 8, 29, 95, 122, 128, 139, 158, 160, 168, 169, 170, 171, 173, 194, 202, 222, 234, 250, 251, 262, 264, 269, 299, 326, 336, 338, 418, 422, 461, 472, 475, 524, 562, 563, 564, 584, 616, 621, 626·
Պոլիս 5, 7, 80, 179, 200, 269, 273, 286, 290, 335, 343, 344, 367, 393, 422, 447, 448, 619·
Պետրոգրադ 12, 13, 14, 22, 41, 51, 52, 58, 80, 586, 589·

Քաթղռաճ 300·
Քալալ Օղլի 115, 116, 195, 218,

225, 350, 367, 402, 516·
Զըլդըր 86·
Զիբուդի 422·
Զիբրայիլ 309, 321·
Զիւանշիր 22, 309, 321, 372·
Զուլ 415·
Զուլֆա 298, 299, 305, 324·

Ռեհանլու 124, 129, 300·
Ռոստով 454, 455, 582, 610·
Ռուսահայաստան 274, 287, 288·
Ռումանիա 269, 270, 305, 422, 582, 585·
Ռումելիա 447, 448, 463·
Ռուսաստան 3, 5, 6, 8, 10, 11, 12, 14, 15, 16, 19, 20, 21, 22, 24, 27, 29, 31, 32, 35, 36, 39, 40, 51, 52, 53, 54, 63, 67, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 85, 86, 89, 98, 100, 101, 104, 105, 106, 107, 108, 158, 159, 160, 169, 189, 191, 200, 245, 246, 250, 309, 345, 360, 376, 378, 382, 385, 386, 388, 403, 406, 409, 445, 446, 450, 452, 453, 456, 458, 459, 477, 485, 487, 490, 498, 499, 507, 511, 514, 516, 517, 522, 525, 537, 541, 553, 564, 565, 567, 569, 590, 591, 592, 594, 616, 617, 618, 619, 622, 648·

Սալմաստ 581, 583, 587·
Սասուն 248, 307, 328·
Սարըղամիշ 11, 55, 91, 92, 93, 94, 95, 96, 103, 247, 297, 301, 381, 389, 398, 412, 450, 452, 467, 481, 519, 581, 583, 584, 586·
Սարդարապատ 115, 119, 126, 138, 140, 155, 181, 192, 202, 250, 429·
Սադախլու 227, 228, 229·
Սաճահին 437·
Սադարակ 128·
Սաճ – Բէմոյ 460·
Սեմեոնովկա 181·
Սեւաճ 114·
Սեւր 439, 460, 487, 499, 505, 517, 648·
Սըվազ 5, 341, 343, 463·
Սթոկհոլմ 52·
Սիսիաճ 256, 327, 328, 330, 331, 547, 554·
Սիբիր 180, 450·
Սիւրիա 14, 272, 343·
Սիւնիք 553, 554, 561, 621, 623·
Սիս 341·
Սզնախ 147·
Սուխում 82, 104, 108, 365·
Սովնարկոմ 80·
Սուրմալի 65, 114, 125, 126, 127, 192, 202, 204, 245, 250, 252, 255, 292, 299, 301, 306, 307, 351, 476, 477, 478, 484, 504, 522·
Սուլուխ 91·
Ստալին 158, 159·

Վասպուրական 12, 26, 121, 537·
Վան 5, 7, 8, 10, 11, 14, 26, 27, 59, 60, 62, 65, 88, 91, 94, 95, 138, 140, 328, 341, 487, 581·
Վարանդայ 311, 372, 373·
Վաղարշապատ 350, 367, 402, 539·
Վերսայլ 612·
Վենետիկ 269, 362·
Վեդի Ձայ 307·
Վեդի Բասար 128, 250, 292, 306, 415·
Վիէննա 80, 362·

Վլադիկաւկաս 117, 455, 610, 611·
Վոլգա 105·
Վրաստան 20, 22, 23, 32, 42, 52, 75, 76, 102, 114, 146, 147, 148, 149, 151, 152, 153, 178, 179, 180, 183, 185, 189, 194, 205, 206, 207, 208, 210, 211, 212, 213, 215, 216, 218, 219, 222, 224, 225, 231, 234, 238, 250, 262, 264, 292, 303, 304, 345, 346, 347, 348, 375, 376, 378, 349, 358, 359, 360, 363, 373, 374, 379, 385, 386, 413, 425, 437, 454, 464, 465, 472, 473, 485, 492, 515, 516, 523, 524, 530, 531, 542, 543, 556, 565, 568, 596, 615, 617, 618, 619, 645, 647, 648·

Տաթօն – Տուրուբերան 26·
Տաճկաստան 186, 287, 288, 386, 450, 454, 473, 481, 489, 492, 518, 519, 521·
Տաթեւ 331, 550, 554, 563, 620, 626, 627·
Տիկոր 434·
Տիգրանակերտ 5, 341, 343·
Տրիպոլի 4·
Տրապիզոն 5, 14, 26, 64, 69, 80, 82, 84, 85, 86, 89, 91, 96, 97, 98, 100, 102, 103, 104, 105, 108, 109, 114, 200, 247, 341, 476·

Ցարսկիկոլոդցի 57·
Ցղնա 338, 339·

Փամբակ 178, 194, 195, 201, 202, 203, 204, 206, 207, 209, 353·
Փարիզ 6, 16, 80, 244, 254, 258, 267, 268, 269, 275, 276, 279, 283, 286, 287, 288, 290, 296, 300, 303, 304, 305, 306, 341, 342, 344, 359, 361, 367, 439, 441, 487, 529, 530, 590, 609, 615·
Փարախար 402, 411, 416·

Քանաքեռ 123, 181, 410, 478, 544, 545, 588·
Քանաւտայ 422·
Քեալբիքրում 89·
Քեորփալու 140, 144·
Քեշիշբեանդ 402·
Քիրմանշահ 53·
Քիւր 80·
Քութայիս 82, 236·

Օդեսա 80, 582·
Օզուրգետին 102·
Օլթի 96, 248, 296, 297, 302, 346, 417, 418, 437, 460, 461, 476, 487, 581, 586·
Օշական 539·
Օվշար 129·
Օրգով 138·
Օրդուբաթ 136, 295, 297, 298, 306, 335, 338, 339, 341, 374, 375, 542·

Ֆրանսա 3, 14, 76, 200, 269, 343, 373, 422, 440, 568, 600·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Երկու խօսք երկրորդ տպագրութեան առթիւ	ե
ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ	
Գլուխ Ա.— Համաշխարհային Պատերազմը եւ հայ ժողովուրդը	3
Գլուխ Բ.— Օգակոմի օրերը	17
Գլուխ Գ.— Արեւմտահայոց գործերը	24
Գլուխ Դ.— Արեւելահայոց գործերը	31
ԵՐԿՈՒՆՔ	
Գլուխ Ե.— Պատերազմի ու խաղաղութեան հարցը եւ ռազմաճակատը Խորհրդային յեղաշրջումից յետոյ	51
Գլուխ Զ.— Զինադադարը եւ «մուք ձեռքի» աշխատանքը կովկասում	62
Գլուխ Է.— Անդրկովկասեան Սէյմը և ներքին անհամաձայնութիւնները	70
Գլուխ Ը.— Տրապիզոնի խորհրդաժողովը	77
Գլուխ Թ.— Հայ – թրքական պատերազմը	85
Գլուխ Ժ.— Տրապիզոնի բանակցութիւնների խզում. Անդրկովկասը անկախ	96
Գլուխ ԺԱ.— Կարսից — Ղարաբիլիսա	107
Գլուխ ԺԲ.— Արարատի հովանու ներքեւ	119
Գլուխ ԺԳ.— Սարդարապատ — Բաշ – Աբարան	138
Գլուխ ԺԴ.— Անդրկովկասի խայխայումը.— Անկախութիւններ	145
Գլուխ ԺԵ.— Բագուի հերոսամարտը	157
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ	
Գլուխ ԺԶ.— Առաջին քայլեր	177
Գլուխ ԺԷ.— «Անձեւ քաոս»ի միջից	191
Գլուխ ԺԸ.— Հայ – վրացական սահմանավէճը	205
Գլուխ ԺԹ.— Պատերազմ եւ հաշտութիւն	220
Գլուխ Ի .— Սահմանների ընդարձակում	239
Գլուխ ԻԱ.— Արեւմտահայոց երկրորդ համագումարը	254

էջ

ԳԼՈՒԽ ԻԲ.— Ազգային համագումար. Կօալիցիայի խզումը 266
ԳԼՈՒԽ ԻԳ.— Մահմետական շարժումները.
Գնդապետ Հասկելը Հայաստանում 292
ԳԼՈՒԽ ԻԴ.— Ղարաբաղի հարցը 309
ԳԼՈՒԽ ԻԵ.— Զանգեզուր — Գողթն 325
ԳԼՈՒԽ ԻԶ.— Արտաքին եւ ներքին ճիգեր 341
ԳԼՈՒԽ ԻԷ.— Շինարարական վերելք 356
ԳԼՈՒԽ ԻԸ.— Մայիսեան խռովութիւնները 378
ԳԼՈՒԽ ԻԹ.— Պետութեան կառուցումը. Սեւրի դաշնագիր 415

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՒ ԹԻՒՐՔԱԿԱՆ ՍԱՂԻ ՄԻՋԵՒ

ԳԼՈՒԽ Լ.— Հայ – բոլշեւիկեան յարաբերութիւնները 445
ԳԼՈՒԽ ԼԱ.— Մուրճի եւ սաղի միջեւ. Պատերազմ 460
ԳԼՈՒԽ ԼԲ.— Կառավարութեան փոփոխութիւնը 486
ԳԼՈՒԽ ԼԳ.— Խորհրդայնացումը եւ Ալեքսանդրապոլի դաշնագիրը 495
ԳԼՈՒԽ ԼԴ.— Հայաստանը Ցեղկոմի իշխանութեան տակ 508
ԳԼՈՒԽ ԼԵ.— Փետրուար 18 524
ԳԼՈՒԽ ԼԶ.— Զանգեզուրի լեռներում 546
ԳԼՈՒԽ ԼԷ.— Վերջին էջ 562
Վերջին խօսք 571

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.— Հ. Յ. Դ. Կովկասի Ռայոն. ժողով (1914, Սեպտ. 21 – 23) 577
Բ.— Կամաւորական խումբեր 581
Գ.— Էնվէրի արկածախնդրութիւնը 585
Դ.— Հ. Յ. Դ. Ռայոնական ժողովի բանաձեւերը (1917 Ապրիլ) 590
Ե.— Խաղաղութեան եւ բարեկամութեան դաշնագիր
Օսմանեան կայսերական կառավարութեան եւ
Հայաստանի Հանրապետութեան միջեւ 596
Զ.— Պայմանագրութիւն 600
Է.— Զօր. Հարբորդը Հայաստանում 602
Ը.— Օրէնք Հայաստանի անկախութեան փոխառութեան մասին 604
Թ.— Լ. Շանթի ճամակները 608
Ժ.— Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի զեկուցում – ճամակը 615
ԺԱ.— Համազանգեզուրեան համագումարի որոշումները 620
ԺԲ.— Հաշուետուութիւն Հայաստանի կառավարութեան 628
ԺԳ.— Կարսի խորհրդաժողովը 643
ԺԴ.— Հ. Ս. Խ. Հ. ժողովրդական կոմիսարների խորհրդի
դեկրետը՝ ճոր ուղղագրութիւն մտցնելու մասին 649

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ա. ԱՌԱՆՋԻՆ ՀԱՏՈՐՆԵՐ

1. Անկախ եւ Միացեալ Հայաստան. 1920, երեւան.
2. Անկախ եւ Միացեալ Հայաստան. 1920, Պոսթըն.
3. Բանակցութիւններ Ազգ. Պատւիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, 1920, Պոսթըն.
4. Խարխափումներ, 1924, Պոսթըն.
5. Հայաստանի Հանրապետութիւն, 1928, Փարիզ.
6. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատոր, 1934, Պոսթըն.
7. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Բ. հատոր, Պոսթըն, 1938.
8. Հայաստանը բոլշեւիկեան լուծի և քրիստոնեական սալի միջեւ, Պոսթըն, 1941.
9. Armenia and the Armenian Question. Boston, 1943
10. Armenia y la Cuestion Armenio. Buenos Aires, 1944
11. Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ քրիստոնեական սալի միջեւ, Պէյրութ, 1953.
12. կեանքի ուղիներով, Գահիրէ, 1955.
13. Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1958.

Բ. ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. «Պատկ ժողովածու», Մոսկուա, 1910.
2. «Հայրենիք» բացառիկ, Սասունի համար, Պոսթըն, 1912.
3. «Հայրենիք» բացառիկ, «Նոր Սասնոսարեանց»ի համար, Պոսթըն, 1914.
4. «Մայիս 28», Փարիզ, 1928.
5. «Մշակոյթի Օր», Փարիզ, 1932.
6. «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1943.
7. «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1944.
8. «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1945.
9. «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1946.
10. «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1947.

11· «Հայրենիք» Տարեգիրք, Պոսթըն, 1948·
12· «Վաթսունամեակ» ժողովածու, Պոսթըն, 1950·
13· Ցուշապատում Հ· Ց· Դաշնակցութեան, Պոսթըն, 1950·

Գ· ԽՄԲԱԳՐԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1· «Նոր Կեանք», Նոր Նախիջեւան, 1907·
2· «Ցառաջ», շաբաթաթերք, Կարին, 1910—11·
3· «Հայրենիք», շաբաթաթերք ապա երկօրեայ, Պոսթըն, 1912—14·
4· «Հորիզոն», օրաթերք, Թիֆլիս, 1917—18·
5· «Զանգ», շաբաթաթերք, Երեւան, 1918—19·
6· «Մուրհանդակ», Թիֆլիս, 1918·
7· «Հայաստանի Կօօպերացիա», Երեւան, 1918—19·
8· «Ցառաջ», օրաթերք, Երեւան, 1919—20·
9· «Դիրբեռում», շաբաթաթերք, Կարս, 1920·
10· «Հայաստանի Ձայն», Փարիզ, 1922—23·
11· «Դրօշակ», ամսագիր, Փարիզ, 1927—33·
12· «Վէմ», երկամսեայ հանդէս, Փարիզ, 1933—1939 — Ա — ԽԴ·

Տպաճաճակ 3500

Տպագրութիւնը աւարտած 28 Մայիս 1958

Գրքի եւ նկարներու տպգ. Տպ. «ՄՇԱԿ»

Կազմատուն «ԼՈՅՍ»